ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

3(124)2026




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

3(124)2026



ISSN 1829-1155

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ, Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Հ. ՆԱՁԱՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

«Սահմանադրական դատարան. Տեղեկագիր» պարբերականում տպագրվող գիտական հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Սահմանադրական դատարանի պաշտոնական դիրքորոշումների հետ: Սահմանադրական դատարանը պատասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար:

Տեղեկագիրը հրատարակվում է միայն էլեկտրոնային տարբերակով: Պարբերականի բոլոր համարները հասանելի են ՍԴ պաշտոնական կայքում՝ հետևյալ հղումով՝ https://concourt.am/constitutional-court/bulletin-of-the-constitutional-court

© ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ՝ ԻՆՔՆ ԻՐ ԴԵՄ ՉՎԿԱՅԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՐՁԸ – ***Ա. ՂԱՄԲԱՐՅԱՆ, Ս. ԲԵՐԲԵՐՅԱՆ, Գ. ՉԱՊԱՆՅԱՆ***.....9

- ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ՏԵՍԱԻՐԱՎԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ – ***Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ***.....57

- ԳՈՐԾԱՐԱՐ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ – ***Կ. ԱՄԻՐՅԱՆ, Հ. ՉՈԼԱՔՅԱՆ***.....70

- ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՁԻ ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ԵՎ ԴՐԱՆ ՈՒՂԵԿՑՈՂ ԱՆՁՆԱԿԱՆ ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ – ***Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***.....85

- ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՆԿԱԼՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ – ***Կ. ԹՈՒՄԱՆՅԱՆ***.....99

- ПРИЗНАКИ СОУЧАСТИЯ В ПРЕСТУПЛЕНИИ СОГЛАСНО НОВОМУ УГОЛОВНОМУ КОДЕКСУ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ – ***А. РАШИДЯН*** (ՀԱՆՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ – ***Ա. ՌԱՇԻԴՅԱՆ***).....121

- ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՎԱՐՈՒՅԹԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՒՄ ՆՐԱՆՑ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ – ***Հ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ***.....141

- ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԵՆՍԱԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ – ***Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ***.....156

- ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ. ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ – ***Ն. ԱՋԱՐՅԱՆ***.....178

- ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՅԱՑՐԱԾ՝ ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՅԱՑՐԱԾ ՈՐՈՇՄԱՆ ՎՃՌԱԲԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ՝ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ – ***Լ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ***.....202

- ОБЩЕЕ ОСНОВАНИЕ ПЕРЕСМОТРА СУДЕБНОГО АКТА ПО ВНОВЬ ОТКРЫВШИМСЯ ОБСТОЯТЕЛЬСТВАМ – ***Л. СИСАКЯН*** (ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՔԸ – ***Լ. ՍԻՍԱԿՅԱՆ)***.....217

- ԱՆՁԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ – ***Հ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ***.....231

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ – ***Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ***.....242

- ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱՋՈՐՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈԼԻՋԻԱՆԵՐԸ ԵՎ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ – ***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***.....263

- «ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ՝ ՈՐՊԵՍ ՀԱՏՈՒԿ ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ – ***Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ***.....282

- ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ – ***Բ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ***.....294

- ՆԵՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ – ***Տ. ՄՈՒՐԱԴՅԱՆ***.....317

II. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1827-1841)

- ԱՐՄԻՆԵ ՏԵՐ-ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 22-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՆԱԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ԴՐԱՆ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1827, 6 մայիսի 2026թ.) 331

- ՍԵՐԺ ՅՈՎՆԱՆՆԵԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 361-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1828, 19 մայիսի 2026թ.).....353

- «ՍՏՈՐՋՐՅԱ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՅՈՒՆԵՍԿՕ-Ի 2001 ԹՎԱԿԱՆԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1829, 26 մայիսի 2026թ.) 376

- ԱՐՄԱՆՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 237-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ

ՎԵՐՋԻՆԻՍ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1830, 26 մայիսի 2026թ.).....382

- «ԱՍԻԱՅՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ» ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1831, 16 հունիսի 2026թ.).....412

- 1996 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՅԻ 11-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1832, 16 հունիսի 2026թ.).....416

- 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1833, 16 հունիսի 2026թ.).....420

- ՔՆԱՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 123-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍՆ ԱՅՆՔԱՆՈՎ, ՈՐՔԱՆՈՎ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՏԱՐԲԵՐ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԳՈՐԾԵՐԸ ՄԵԿ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՄԻԱՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1834, 16 հունիսի 2026թ.).....425

- «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ, «ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՕՐԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԵՎ «ՆՈՐ ՈՒԺ» ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 259-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1835, 4 հուլիսի 2026թ.).....447

- 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ՔԱՂԱՔ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1836, 7 հուլիսի 2026թ.).....599

- 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԴՈՒՇԱՆԲԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿԵԼԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1837, 28 հուլիսի 2026թ.).....619

- 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» 1994 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1838, 15 սեպտեմբերի 2026թ.).....626

- 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1839, 15 սեպտեմբերի 2026թ.).....631

- 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՆ ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ԹՐԱՄՓԻ ՈՒՂԻ՝ ՀԱՆՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԳԱՎԱՃՄԱՆ» ՆԱԽԱԳԾԻ (ԹՐԻՓՓ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1840, 15 սեպտեմբերի 2026թ.).....641

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1841, 15 սեպտեմբերի 2026թ.).....651

III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

<u>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ</u>

- ՍԴ ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՄԻԵԴ-Ի՝ ԲԱՐՁՐ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՑԱՆՑԻ ԽՈՐՀՐԴԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ.....660


DOI: 10.59560/18291155-2026.3-9



ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ
Ռուս-հայկական համալսարանի
իրավունքի տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի վարիչ,
ՀՀ կառավարման ակադեմիայի
իրավունքի ամբիոնի պրոֆեսոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան
ORCID: *https://orcid.org/0000-0002-6322-4664*



ՍԵՐԳԵՅ ԲԵՐԲԵՐՅԱՆ
Միջազգային իրավական հարցերով
ՀՀ ներկայացուցչի գրասենյակի հետազոտությունների և
զարգացման վարչության ավագ մասնագետ
ORCID: *https://orcid.org/0009-0008-4752-7877*



ԳՐԻԳՈՐ ՉԱՊԱՆՅԱՆ
Ռուս-հայկական համալսարանի
քրեական իրավունքի և քրեական
դատավարության ամբիոնի հայցորդ,
ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան
ORCID: *https://orcid.org/0009-0008-8719-4253*

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ՝ ԻՆՔՆ ԻՐ ԴԵՄ ՉՎԿԱՅԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՐՁԸ[1]

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է 2021 թվականին ներդրված իրավաբանական անձի քրեական պատասխանատվության ինստիտուտի համատեքստում ծագած հիմնարար իրավական խնդրի քննարկմանը. արդյո՞ք քրեական հետապնդման

[1] Սույն հետազոտությունն իրականացվել է ՌՀՀ Զարգացման ծրագրի շրջանակներում ԳՀՓԿ մրցույթի կանոնակարգի համաձայն:

ենթարկվող իրավաբանական անձը կարող է օգտվել ինքն իր դեմ չվկայելու (լռելու) և ինքն իր դեմ չգործելու (նյութեր չտրամադրելու) սահմանադրական իրավունքից:

Հեղինակները մեթոդաբանորեն տարանջատում են այս իրավունքի երկու հիմնական բաղադրիչները՝ *accusare* (նոր բանավոր կամ գրավոր ցուցմունք գեներացնելու արգելք) և *prodere* (օբյեկտիվորեն գոյություն ունեցող փաստաթղթեր ու նյութեր տրամադրելուց հրաժարվելու իրավունք): Վերլուծելով իրավունքի ծագումնաբանությունը՝ հեղինակները հանգում են այն եզրակացության, որ ինքն իր դեմ չվկայելու իրավունքով պաշտպանվող առանցքային և ինստիտուցիոնալ բարիքը ոչ թե մարդու արժանապատվությունն է (որը վերաբերում է միայն ֆիզիկական անձին), այլ դատաքննության արդարացիությունն է, ինչն այն կիրառելի է դարձնում նաև իրավաբանական անձի նկատմամբ:

Աշխատությունում քննարկվում են արևմտյան առաջատար իրավական համակարգերի (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Եվրոպական միություն, Բելգիա) մոտեցումները՝ ցույց տալով, որ այս հարցով չկա միասնական համընդհանուր ստանդարտ:

Հատուկ ուշադրություն է դարձվում ՀՀ իրավական կարգավորմանը: Ելնելով ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածից (հիմնական իրավունքները տարածվում են իրավաբանական անձանց վրա՝ իրենց էությամբ կիրառելիության չափով) և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 441-րդ հոդվածի «գործառութային վերագրելիության» չափանիշից՝ հիմնավորվում է, որ իրավաբանական անձը համարվում է ինքն իր դեմ չվկայելու իրավունքի կրող: Միաժամանակ, հեղինակները մշակում են իրավաբանական անձի կողմից այդ իրավունքից հրաժարվելու (խոստովանական ցուցմունք տալու) իրավաչափության պայմանները՝ պարտադիր համարելով մասնակիցների ընդհանուր ժողովի բացահայտ որոշումը (բացառելով միայն տնօրենի կամայականությունը)՝ համապատասխան ՄԻԵԴ-ի կողմից մշակված «գիտակցված և կամավոր ընտրության» չափանիշներին:

Հիմնաբառեր. իրավաբանական անձ, ինքն իր դեմ չվկայելու իրավունք, լռելու իրավունք, ինքնամեղադրման արտոնություն, Accusare, Prodere, իրավաբանական անձի քրեական պատասխանատվություն, իրավունքից կամավոր հրաժարում:

1. Խնդրի էությունը

ՀՀ-ում 2021 թվականին ընդունված Քրեական օրենսգրքով (ՀՀ ՔրՕ) և Քրեական դատավարության օրենսգրքով (ՀՀ ՔրԴՕ) առաջին անգամ ներդրվել է իրավաբանական անձի քրեական պատասխանատվության և նրա վերաբերյալ քրեական վարույթ նախաձեռնելու և քրեական հետապնդման ենթարկելու ինստիտուտները: Թեև ՀՀ-ի կողմից որդեգրված այս քրեական քաղաքականությունը

խիստ վիճելի է, սակայն իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը և քրեական հետապնդումը այլևս նորմատիվ իրավական իրողություն է:

Իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե հանցանքը կատարվել է նրա անունից և ի շահ նրա գործելով, կամ եթե իրավաբանական անձի կողմից չի ապահովվել օրենքով նախատեսված պարտականությունների կատարումը, որը հանգեցրել է հանցանքի (ՀՀ ՔրՕ 123-րդ հոդված): Իրավաբանական անձի վերաբերյալ վարույթ կարող է նախաձեռնվել միայն, եթե ՀՀ ՔրՕ 123-րդ հոդվածի 1-ին մասում նշված հանցանքի կապակցությամբ առկա է՝

1) օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ.

2) ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշում (ՀՀ ՔրԴՕ 438-րդ հոդվածի 1-ին մաս):

Նման համակարգային փոփոխությունը ՀՀ իրավական համակարգի համար ունի հիմնարար նշանակություն, քանի որ ստիպում է քրեաիրավական և դատավարական մի շարք ավանդական հարցեր դիտարկել նորովի: Այն առաջացնում է բազմաթիվ իրավական հարցադրումներ, որոնցից մեկը վերաբերում է այն հարցին, թե քրեական հետապնդման ենթարկվող իրավաբանական անձն արդյոք հանդիսանում է ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածով սահմանված ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքի կրող, արդյոք իրավաբանական անձը, որպես պաշտպանության միջոց, ունի ցուցմունք տալու դատավարական իրավունք:

Սույն հոդվածի հետազոտության գլխավոր հարցն այն է, թե իրավաբանական անձը, որի վերաբերյալ նախաձեռնվել է քրեական վարույթ և որի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, արդյոք օգտվում է իր վերաբերյալ տվյալներ չհայտնելու իրավունքից (ինքն իր դեմ չվկայելու իրավունք կամ լռելու իրավունք) և իր վերաբերյալ նյութեր (փաստաթղթեր) չտրամադրելու իրավունքից (ինքն իր դեմ չգործելու իրավունք կամ ինքնամեղադրման արտոնություն): Այս հարցին պատասխանելու համար պետք է պարզել ինքն իր դեմ չվկայելու իրավունքի էությունը՝ դրա ծագումնաբանությունը և այդ իրավունքով պաշտպանվող բարիքը (օբյեկտները, արժեքները), այնուհետև հստակեցնել, թե արդյոք այս իրավունքն իր էությամբ կիրառելի է իրավաբանական անձանց նկատմամբ»:

2. Ինքն իր դեմ չվկայելու իրավունքի էությունը և ծագումնաբանությունը

2.1. Ինքն իր դեմ չվկայելու իրավունքի և ինքն իր դեմ չգործելու իրավունքի գործողության սահմանները

Ինքն իր դեմ չվկայելու և ինքն իր դեմ չգործելու իրավունքի (*nemo tenetur*) կապակցությամբ առկա են երկու լատիներեն ձևակերպումներ՝ *nemo tenetur se ipsum accusare* (այսուհետ՝ «*accusare*») և *nemo tenetur se ipsum prodere* (այսուհետ՝

«*prodere*»), որոնց միջոցով հնարավոր է նկարագրել այս իրավունքի գործողության սահմանները:

Nemo tenetur se ipsum accusare-ն թարգմանաբար նշանակում է՝ *«ոչ ոք պարտավոր չէ մեղադրել ինքն իրեն»*: *Accusare* բայը նշանակում է հայտարարել մեղավորության մասին, ինչը կատարվում է հիմնականում խոսքի միջոցով: Իր դեմ չվկայելու իրավունքն անգլոսաքսոնական իրավական համակարգում անվանում են լռելու իրավունք (*right to silence*): ՀՀ ՔրԴՕ-ում օգտագործվում է «լռություն պահպանելու իրավունք» (ՀՀ ՔրԴՕ 43-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ) կամ «տեղեկություններ հայտնելուց հրաժարվելու իրավունք» (ՀՀ ՔրԴՕ 26-րդ հոդվածի 2-րդ մաս) ձևակերպումները: Սույն աշխատության մեջ *accusare*-ն նկարագրելու համար կօգտագործվի « ինքն իր դեմ չվկայելու իրավունք» հասկացությունը:

Accusare-ի հիմքում ընկած է այն գաղափարը, որ պետությունը չի կարող անձին օգտագործել որպես ինքն իր դեմ ապացույցի աղբյուր՝ նոր տվյալներ ստեղծելու միջոց: Ինքն իր դեմ չվկայելու իրավունքն ունի դրսևորման երեք հիմնական ձև.

1) Բանավոր խոսք գեներացնելուց հրաժարվելը. Անձի իրավունքը՝ հրաժարվել բանավոր ցուցմունք կամ բացատրություն տալուց, հարցման ենթարկվելուց կամ որևէ այլ կերպ վարույթն իրականացնող մարմնի բանավոր հարցերին պատասխանելուց,

2) Գրավոր տեքստեր կազմելուց հրաժարվելը. Անձի իրավունքը՝ հրաժարվել քննիչի գրավոր պահանջով որևէ գրավոր փաստաթղթեր կազմելուց, կամ քննիչի գրավոր հարցերին գրավոր պատասխանելուց (չշփոթել արդեն իսկ առկա փաստաթղթերը տրամադրելուց հրաժարվելու հետ): Օրինակ՝ անձն իրավունք ունի հրաժարվել ՀՀ ՔրԴՕ-ով նախատեսված «տեղեկատվության պահանջ» քննչական գործողության պահանջները կատարելուց և գրավոր տեղեկություններ հանձնելուց, եթե քննիչի պահանջած տեղեկությունը կարող է օգտագործվել կամ մեկնաբանվել քրեական հետապնդման ենթարկվող անձի դեմ,

3) Ժեստերի կամ նշանների լեզվով միտք արտահայտելուց հրաժարվելը. Խոսքի և լսողության խանգարումներ ունեցող անձանց իրավունքը՝ հրաժարվել ժեստերի լեզվի (սուրդոթարգմանչի մասնակցությամբ) կամ հաղորդակցության այլ նշանների միջոցով վարույթն իրականացնող մարմնին իրադարձությունների վերաբերյալ տեղեկություններ հայտնելուց կամ հարցերին պատասխանելուց:

Երկրորդը *nemo tenetur se ipsum prodere*-ն է, որը թարգմանաբար նշանակում է՝ *«ոչ ոք պարտավոր չէ մատնել (բացահայտել) ինքն իրեն»*: *Prodere* բայը նշանակում է ի հայտ բերել, հանձնել, թշնամուն կամ դատարանին բացահայտել այն, ինչը թաքնված է: Իր դեմ ակտիվորեն չգործելու իրավունքն անգլոսաքսոնական համակարգում անվանում են ինքնամեղադրման արտոնություն (*privilege against self-incrimination*): ՀՀ ՔրԴՕ-ում օգտագործվում է *«նյութեր տրամադրելուց հրաժարվելու իրավունք» (ՀՀ ՔրԴՕ 26-րդ հոդվածի 2-րդ մաս) ձևակերպումը:* Սույն աշխատության

մեջ *prodere*-ն նկարագրելու համար կօգտագործվի «իր դեմ չգործելու իրավունք» հասկացությունը:

Prodere-ն իր գործողության ոլորտով ավելի լայն է, քանի որ ներառում է ինչպես *accusare*-ն (ինքն իր դեմ չվկայելու իրավունքը), այնպես էլ օբյեկտիվորեն գոյություն ունեցող և անձի տիրապետման ներքո գտնվող նյութերը տրամադրելուց հրաժարվելը: Անձը իր դեմ *վկայելով* անկասկած *գործում* է իր դեմ, սակայն իր դեմ գործելն ունի այնպիսի դրսևորումներ, որոնք չեն առնչվում վկայությունների հետ: Այն ունի դրսևորման երկու հիմնական ձև.

1) Առարկաներ և փաստաթղթեր (նյութեր) տրամադրելուց հրաժարվելը. Անձի իրավունքը հրաժարվել վարույթն իրականացնող մարմնին տրամադրել նյութեր, որոնք կարող են օգտագործվել իր դեմ:

Լամբերիգտսը, անդրադառնալով փաստաթղթերի ներկայացման պարտադրանքի և ինքն իր դեմ չգործելու իրավունքի հարաբերակցությանը, առաջարկում է տարբերակել փաստաթղթերի ձեռքբերման և դրանց հետագա օգտագործման նպատակները, որի վերաբերյալ նշում է.

> «*Անհրաժեշտ է տարբերակել փաստաթղթերի վերահսկողական և պատժիչ նպատակներով օգտագործելը: Պետական մարմինները կարող են օրենքով սահմանված դեպքերում պահանջել փաստաթղթեր վերահսկողական նպատակներով, օրինակ՝ հարկային վերահսկողություն իրականացնելու համար, սակայն այդ եղանակով ձեռք բերված փաստաթղթերը հետագայում չպետք է օգտագործվեն նույն իրավաբանական անձի դեմ քրեական կամ այլ պատժիչ բնույթի վարույթներում*»[1]:

Այս դիրքորոշման հիմքում ընկած է փաստաթղթերի ներկայացման ու դրանց հետագա օգտագործման նպատակների միջև տարբերակման գաղափարը: Ինքն իր դեմ չգործելու իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես իրավաբանական անձի կողմից իրեն վերաբերող փաստաթղթի տրամադրումից հրաժարվելու բացարձակ հնարավորություն: Այդպիսի մոտեցումը կարող է խոչընդոտել պետական մարմինների բնականոն գործունեությանը: Սակայն, խնդիրը ծագում է այն ժամանակ, երբ վերահսկողական նպատակով ձեռք բերված փաստաթղթերը հետագայում օգտագործվում են նույն իրավաբանական անձի դեմ՝ որպես քրեական մեղադրանքի հիմնավորում: Հետևաբար, Լամբերիգտսն առաջարկում է

[1] **Stijn Lamberigts,** Corporations and the Privilege against Self-Incrimination. Oxford; New York: Hart Publishing, 2022. P. 223-225.

սահմանազատել փաստաթղթերի ձեռքբերման նպատակը և դրանց հետագա օգտագործման հնարավորությունը՝ թույլատրելով դրանց պարտադրանքը վերահսկողական նպատակներով, սակայն սահմանափակելով դրանց կիրառումը քրեական (պատժիչ) բնույթի վարույթներում:

2) Կենսաբանական նմուշներ հանձնելուց հրաժարվելը. Անձի իրավունքը հրաժարվել վարույթն իրականացնող մարմնին հանձնել իր օրգանիզմից անջատված կամ անջատման ենթակա նյութեր (օրինակ՝ արյուն, մազ, թուք, ԴՆԹ), որոնք օբյեկտիվորեն գոյություն ունեն անկախ անձի կամքից: Նախապես նշենք, որ ՀՀ իրավակարգում կենսաբանական նմուշներ հանձնելուց հրաժարվելը չի ճանաչվում որպես ինքն իր դեմ չգործելու իրավունք: Հակառակը՝ փորձաքննության համար անհրաժեշտ նմուշներ հանձնելը ամրագրված է որպես մեղադրյալի, տուժողի և վկայի դատավարական պարտականություն (ՀՀ ՔրԴՕ 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ, 50-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ, 58-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ):

Առանձին պետք է դիտարկել թվային տվյալներին հասանելիություն տրամադրելուց հրաժարվելու դեպքը: Թվային տվյալների հասանելիության հարցը գտնվում է *accusare*-ի (ինքն իր դեմ չվկայելու իրավունք) և *prodere*-ի (ինքն իր դեմ չգործելու իրավունք) սահմանագծին՝ առաջացնելով իրավական բարդ հարցադրումներ: Այն ներառում է երկու տարբեր ասպեկտներ. մի կողմից՝ անձի իրավունքը չբացահայտել իր հիշողության մեջ պահվող թվային գաղտնաբառերը (PIN/Password), ինչը էությամբ մտքի պարունակության բացահայտում է (accusare), մյուս կողմից՝ անձի իրավունքը հրաժարվել տրամադրել թվային կենսաչափական տվյալները (FaceID/TouchID), որոնց միջոցով կարող են բացահայտվել սարքերում (հեռախոս, համակարգիչ և այլն) պահվող իր դեմ ուղղված տվյալները (prodere):

Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունի թվային գաղտնաբառով (PIN/Password) և կենսաչափական տվյալներով (FaceID/TouchID) սարքերի բացման եղանակների տարբերակումը:

Թվային գաղտնաբառը համարվում է բացառապես անձի մտքի և հիշողության պարունակություն, հետևաբար այն պահանջելը գտնվում է *accusare*-ի տիրույթում և միջամտում է ինքն իր դեմ չվկայելու իրավունքին:

Թեև թվային գաղտնաբառը համարվում է մտքի և հիշողության պարունակություն, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) «Մինթեն ընդդեմ Ֆրանսիայի» (*Minteh v. France*) գործով 19.05.2026 թ. կայացրել է խիստ վիճելի, նույնիսկ ոչ ընկալելի որոշում: Դիմումատուն նշել է, որ իր հեռախոսների գաղտնաբառերը տրամադրելուց հրաժարվելու համար իր նկատմամբ դատավճիռ կայացնելը խախտում է լռելու իր իրավունքը և սեփական անձի դեմ չվկայելու իրավունքը: Դատարանը միաձայն բողոքը ճանաչել է անընդունելի (declared inadmissible)՝ գտնելով, որ այն «ակնհայտորեն անհիմն է»: Դատարանը, թեև խուսափել է գաղտնաբառը պահանջելու իրավաչափության մասին էքսպլիցիտ

դիրքորոշում հայտնելուց, սակայն դիմումն ակնհայտ անհիմն որակելով ստացվում է, որ համաձայնվել է, որ հեռախոսի գաղտնաբառը չհանձնելու համար քրեական պատասխանատվության ենթարկելը չի խախտում ինքն իր դեմ չվկայելու իրավունքը: Ըստ ՄԻԵԴ-ի՝ ոստիկանության կողմից որոնվող ապացույցը ոչ թե գաղտնաբառն էր, այլ հեռախոսում պարունակվող տվյալները, որոնք արդեն իսկ օբյեկտիվորեն գոյություն ունեին անկախ դիմումատուի կամքից (քանի որ հեռախոսներն արդեն առգրավված էին և գտնվում էին ոստիկանության տիրապետման տակ): Ըստ էության ՄԻԵԴ-ը գաղտնաբառը դիտարկել է որպես հասանելիության ապահովման «չեզոք» (*neutral*) տվյալ, որը չի կարող ինքնին համարվել ինքնամեղադրող:

Բացի այս, դատարանը նշել է, որ դիմումատուն այլևս միակը չէր, ով կարող էր հասանելիություն ունենալ հեռախոսների տվյալներին, քանի որ իշխանությունները տեսականորեն կարող էին տեխնիկական մեթոդներով (օրինակ՝ փորձաքննության շրջանակում) շրջանցել նրա մերժումը և ծանոթանալ սարքերում պահպանված տվյալներին[1]:

Կենսաչափական տվյալները, այսինքն՝ մատնահետքը կամ դեմքի պատկերը, ի տարբերություն գաղտնաբառի, համարվում են օբյեկտիվորեն գոյություն ունեցող ֆիզիկական նյութեր, հետևաբար դրանց օգտագործմամբ սարքը բացելը գտնվում է prodere-ի տիրույթում և միջամտում է ինքն իր դեմ չգործելու իրավունքին: Այս պատճառով միջազգային պրակտիկայում հաճախ թույլատրելի է համարվում անձի մատը կամ դեմքը ստիպողաբար մոտեցնելը հեռախոսին (որպես ֆիզիկական ակտ):

Եթե իրավական համակարգում ճանաչվում է միայն *accusare*-ն, ապա անձը պաշտպանված է իր դեմ խոսք գեներացնելու հարկադրանքից, սակայն ոչ նյութեր տրամադրելու հարկադրանքից: Իսկ երբ համակարգում ճանաչվում է նաև *prodere*-ն, անձը ստանում է ամբողջական պաշտպանություն:

Պետությունների մեծ մասը ճանաչում են առավելապես իր դեմ չվկայելու իրավունքը (*accusare*), իսկ իր դեմ չգործելու իրավունքը (*prodere*) չեն ճանաչում: Այս հարցով ՀՀ-ի մոտեցումն այլ է: 1998 թ. ՀՀ ՔրԴՕ-ով և 2021 թ. ՀՀ ՔրԴՕ-ով ճանաչվել է անձի՝ ոչ միայն ինքն իր դեմ չվկայելու իրավունքը, այլ նաև ինքն իր դեմ չգործելու իրավունքը: Նշված օրենքներով սահմանված է, որ անձը իրավունք ունի հրաժարվելու

[1] ՄԻԵԴ-ի այս որոշումը, որում չեն տարբերակվել սարքերը բացելու վերը նշված եղանակները, իրավաբանական հանրույթի կողմից արժանանում է արդարացի քննադատության: Գաղտնաբառը որպես «չեզոք» ծածկագիր դիտարկելը տրամաբանորեն խոցելի է: Թեև ինքնին 4 կամ 6 նիշը հանցագործության մասին ապացույց չէ, սակայն այն միակ կամ հիմնական «մտավոր բանալին է», որը պետությանը հասանելիություն է տալիս անձի ողջ անձնական կյանքին և ինքնամեղադրող տվյալներին: Տե՛ս **Escobar Veas J.**, Compelled Decryption of a Mobile Phone: The Right Against Self-Incrimination in Minteh v. France // Verfassungsblog: On Matters Constitutional. 2026. URL: https://verfassungsblog.de/compelled-decryption-of-phone/ (accessed: 28.07.2026), Fair Trials. Fair Trials intervenes at the ECHR in *Lamin MINTEH v France* // Fair Trials International. 2022. URL: https://www.fairtrials.org/articles/strategic-litigation/fair-trials-intervenes-at-the-echr-in-lamin-minteh-v-france/ (accessed 28.07.2026):

տեղեկություններ հայտնելուց (*accusare*) կամ նյութեր տրամադրելուց (*prodere*), եթե ողջամտորեն ենթադրում է, որ դրանք հետագայում կարող են օգտագործվել իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների դեմ (այս մասին հաջորդիվ):

Ինքն իր դեմ չգործելու (նյութեր տրամադրելուց հրաժարվելու) իրավունքի պետական ճանաչումը գործնականում ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ: Եթե պետությունը ճանաչում է իր դեմ չգործելու իրավունքը, ապա նա ինքն իրեն զրկում է նյութեր տրամադրելուց հրաժարվելու համար անձին իրավաբանական պատասխանատվության մասին դրույթներ նախատեսելու հնարավորությունից: Եթե նյութեր չտրամադրելը դա սուբյեկտիվ իրավունք է, ապա դրա իրականացումը չի կարող հանգեցնել պատասխանատվության:

Միևնույն ժամանակ, ինքն իր դեմ չգործելու իրավունքի ճանաչումը չի զրկում պետությանը խուզարկության կամ առգրավման միջոցով նյութերը վերցնելու հնարավորությունից: Նյութեր տրամադրելուց հրաժարվելու իրավունքը անձի օրինական հնարավորությունն է չենթարկվել նյութեր հանձնելու պետության պահանջին: Խուզարկությունն ու առգրավումը պետության ակտիվ գործողություններն են, որոնց ժամանակ անձի դերը պասիվ է. նա պարտավոր չէ աջակցել քննությանը, սակայն պարտավոր է պասիվորեն հանդուրժել իր տարածքում օրինական քննչական գործողությունների կատարումը:

Այլ կերպ ասած՝ քանի որ նյութերը գոյություն ունեն անձի կամքից անկախ, պետությունը, զերծ մնալով անձին դրանք «սեփական ձեռքով» հանձնելու հարկադրելուց, միևնույն ժամանակ օրինական ընթացակարգերով ինքն է հայտնաբերում և վերցնում այդ առարկաները: Նյութերը նման եղանակով վերցնելը չի խախտում անձի կամքի ազատությունը:

Այսպիսով, իրավաբանական անձի՝ իր դեմ չվկայելու իրավունքի կրող համարվելու հարցը քննարկելիս պետք է հստակ տարանջատել ինքն իր դեմ չվկայելու իրավունքը և ինքն իր դեմ չգործելու իրավունքը:

2.2. Ինքն իր դեմ չվկայելու իրավունքի ծագումնաբանությունը

Ինքն իր դեմ չվկայելու իրավունքը պատմականորեն առաջացել է որպես մարդու արժանապատվության, ֆիզիկական անձեռնմխելիության, մարդասիրության և խոշտանգումների դեմ պայքարի երաշխիք:

Միջնադարյան և վաղ ժամանակակից Եվրոպայի (12–18-րդ դարեր) *ius commune* (ընդհանուր իրավունք) ավանդույթում ամրագրվել է, որ ոչ ոք չպետք է ցուցմունք տա ինքն իր դեմ, քանի որ ոչ ոք պարտավոր չէ բացահայտել իր ամոթը. «տղամարդիկ և կանայք պետք է իրենց մեղքերը խոստովանեն Աստծուն, բայց նրանց չի կարելի հարկադրել իրենց հանցագործությունները հայտնի դարձնել ուրիշներին»[1]: Այս

[1] **Helmholz R.H.,** Origins of the Privilege against Self-Incrimination: The Role of the European Ius Commune // New York University Law Review. 1990. Vol. 65, № 5. P. 981-982.

սկզբունքն ամրապնդվում էր ինքնապահպանման պարտականությամբ, ըստ որի՝ անձը, ինքն իր դեմ մեղադրական հայտարարություն (ցուցմունք) տալով, չպետք է նպաստի սեփական ոչնչացմանը՝ իրեն դաժան պատժի ենթարկելով[1]:

Միջնադարում, հատկապես ինկվիզիցիոն դատավարության զարգացման հետ մեկտեղ (13-րդ դարից սկսած), այս իրավունքը ձեռք է բերում խիստ բացասական բովանդակություն. մեղադրյալի ինքնախոստովանությունը դառնում է «ապացույցների թագուհի», որին հասնելու համար լայնորեն կիրառվում էին բռնության և խոշտանգման մեթոդները:

16-17-րդ դարերի անգլիական եկեղեցական և դատական պրակտիկայում ձևավորվեց հարկադրանքի այնպիսի կառուցակարգ, որով անձը հայտնվում էր անելանելի վիճակում, քանի որ համակարգը նրան դնում էր երեք անընդունելի տարբերակների առջև՝ ասել ճշմարտությունը (այսինքն՝ ինքն իրեն մեղադրել), ստել (այն համարվում էր ծանր հանցանք), կամ լռել (այն համարվում էր դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք): Մեղադրյալը «ստելու - ինքնամեղադրելու - լռելու» միջև ընտրություն կատարելիս հայտնվում էր իրավական և բարոյական առումով ծանր իրավիճակում, որը իրավաբանական գրականության մեջ ստացավ «դաժան եռընտրանք» (cruel trilemma) անվանումը[2]:

1764 թվականին Չեզարե Բեկարիան «Հանցագործությունների և պատիժների մասին» աշխատությունում քննադատեց այս համակարգի դաժանությունը՝ հիմք դնելով հումանիստական քրեական իրավունքի զարգացմանը: 1791 թվականին ԱՄՆ Սահմանադրության Հինգերորդ փոփոխությամբ ամրագրվեց, որ ոչ ոք չի կարող հարկադրվել ցուցմունք տալ ինքն իր դեմ[3]: Ժամանակակից իրավունքն ընդունում է, որ պետությունը չունի բարոյական և իրավական իրավունք մարդուն դնելու «դաժան եռընտրանքի» մեջ՝ պարտադրելով ընտրել կեղծ երդման, ինքնախոստովանության կամ լռության համար պատժվելու միջև: Ինքն իր դեմ չվկայելու իրավունքը վերացրեց հենց այս եռընտրանքի վերջին՝ լռելու համար պատժվելու բաղադրիչը:

Այս իրավունքի ծագումնաբանությունը վկայում է, որ այն ի սկզբանե կոչված էր պաշտպանելու բացառապես ֆիզիկական անձի արժանապատվությունն ու կամքի ազատությունը: Այնուամենայնիվ, պատմական այս համատեքստը չպետք է

[1] **Stijn Lamberigts,** Corporations and the Privilege against Self-Incrimination. Oxford ; New York : Hart Publishing, 2022. P. 15.

[2] **Rubenfeld J.,** Revolution by Judiciary: The Structure of American Constitutional Law. Cambridge: Harvard University Press, 2005. P. 33–35.

[3] **Criado Enguix J**., El derecho a no autoincriminarse de las personas jurídicas // Compliance y persona jurídica: Cuestiones sustantivas y procesales en la lucha contra el crimen organizado / coord. por J. L. González Cussac, A. Lluch Corell. – Valencia: Tirant lo Blanch, 2023. Cap. X. P. 261–319.

Կրիադո Էնգիքս Խ., Իրավաբանական անձանց ինքնամեղադրումից ազատ լինելու իրավունքը: Համապատասխանությունը և իրավաբանական անձը. կազմակերպված հանցավորության դեմ պայքարի նյութական և դատավարական հարցերը: Խմբ.՝ Խ.Լ. Գոնսալես Կուսակ, Ա. Լյուչ Կորել. – Վալենսիա: Tirant lo Blanch, 2023, Գլ. X, Էջ 261–319:

կանխորոշի իրավունքի կիրառելիությունը ժամանակակից իրավաբանական անձանց նկատմամբ: Պատճառն այն է, որ ինքն իր դեմ չվկայելու իրավունքի ձևավորման դարաշրջանում իրավաբանական անձը՝ որպես տնտեսական ու իրավական կյանքի ինքնուրույն և լիարժեք սուբյեկտ, դեռևս գոյություն չուներ: «Իրավաբանական անձի» (գերմաներեն՝ *juristische Person*) ժամանակակից հայեցակարգը համակարգված ձևով զարգացրել են գերմանացի պանդեկտիստները միայն 19-րդ դարի սկզբին, ինչից հետո միայն արդյունաբերական երկրներն սկսեցին օրենսդրորեն ամրագրել կորպորացիաների անկախ իրավասուբյեկտությունը (օրինակ՝ Մեծ Բրիտանիայի 1844թ. Ընկերությունների գրանցման ակտը)[1]: Ուստի, պատմական փաստարկներին կուրորեն կառչելու փոխարեն, հարցը պետք է դիտարկել ժամանակակից իրավական իրականության և ֆունկցիոնալ նպատակահարմարության տեսանկյունից:

Այս համատեքստում է արդիական դառնում Ջոն Դյուիի (John Dewey) իրավափիլիսոփայական ժառանգությունը: Անդրադառնալով իրավաբանական անձի կարգավիճակի էվոլյուցիային՝ հեղինակը 1926 թ. իր հայտնի հոդվածում ներկայացրել է չափազանց կարևոր քննադատական դիտարկում: Նա ցույց է տվել, թե ինչպես են դատարանները, չնայած կորպորացիաների «արհեստական» և «ֆիկտիվ» բնույթին, բառախաղերի միջոցով նրանց վերագրել ֆիզիկական անձանց բնական իրավունքները: Նա նշել է.

> ««Բնական» և «արհեստական» անձանց հակադրությունն իր իմաստը ստանում էր այն փաստից, որ «բնական»-ը ենթադրում էր բնածին և անձեռնմխելի իրավունքների տիրապետում: Դատարանների դիալեկտիկան, հասարակական փաստերի ճնշման ներքո, պատրաստ եղավ հայտարարելու, որ կորպորացիաները, թեև արհեստական ու ֆիկտիվ են, այնուամենայնիվ ունեն անհատի բոլոր բնական իրավունքները, քանի որ, ի վերջո, նրանք իրավաբանական անձինք (legal persons) են»[2]:

Այս դիտարկմամբ Դյուին ոչ թե արդարացնում, այլ քննադատում է դատարանների ձևապաշտական ու մեխանիկական մոտեցումը: Որպես պրագմատիկ փիլիսոփա՝ նա պնդում է, որ «անձ» հասկացությունն իրավունքում զուտ իրավաբանական կառուցակարգ է, մինչդեռ դատարանները, ցանկալի եզրահանգումներն ու տեսություններն արդարացնելու համար, հաճախ խճճել ու

[1] **Dewey J.,** The Historic Background of Corporate Legal Personality // Yale Law Journal. 1926. Vol. 35, No. 6. P. 665, **Koessler M.,** The Person in Imagination or Persona Ficta of the Corporation // Louisiana Law Review. 1949. Vol. 9, No. 4. P. 436-438.

[2] **Dewey J.,** The Historic Background of Corporate Legal Personality // Yale Law Journal. 1926. Vol. 35, No. 6. P. 668-669.

ծանրաբեռնել են իրավական տրամաբանությունն արտաիրավական՝ քաղաքական, բարոյական, պատմական, աստվածաբանական կամ մետաֆիզիկական նկատառումներով:

19-րդ և 20-րդ դարերի տնտեսական իրականությունը ստիպեց դատարաններին առերեսվել այն փաստի հետ, որ խոշոր կորպորացիաները, որոնք տնօրինում են հսկայական կապիտալ և տնտեսական ու սոցիալական կյանքի կարևորագույն մասնակիցներ են, եթե չունենան տարրական պաշտպանվածություն (օրինակ՝ սեփականության իրավունք կամ դատական պաշտպանության իրավունք), ապա տնտեսական կյանքը կխաթարվի: Դատարանները կանգնած էին այն փաստի առաջ, որ կորպորացիաները գործնականում ունեն նույն շահերը, ինչ անհատները և այդ շահերը պետք է պաշտպանվեն:

Փոխանակ այդ գործնական անհրաժեշտությունը բացահայտ խոստովանելու, դատարանները կառուցեցին հետևյալ տրամաբանական սխալով սիլլոգիզմը, որն ըստ Դյուիի՝ հասկացությունների կեղծ նույնացում է.

Մեծ նախադրյալ. Բնական անձինք ունեն բնական իրավունքներ, քանի որ նրանք իրավունքի սուբյեկտներ են:

Փոքր նախադրյալ. Իրավաբանական անձինք նույնպես ճանաչված են որպես իրավունքի սուբյեկտներ:

Եզրակացություն. Հետևաբար, իրավաբանական անձինք նույնպես պետք է ունենան անհատի իրավունքները:

Դյուին ցույց է տալիս, որ այս կառույցը խոցելի է, քանի որ նույնացնում է կենսաբանական մարդուն և իրավական ֆիկցիան (կորպորացիան): Սակայն Դյուիի այս քննադատությունը չպետք է ընկալել որպես կորպորացիաների իրավունքների ընդհանուր մերժում: Ըստ էության, նա մերժում է ոչ թե իրավունքների գոյությունը, այլ դրանց հիմնավորումը բնական իրավունքների հայեցակարգով կամ մետաֆիզիկական «իրական անձ» լինելու տեսությամբ: Իր պրագմատիկ փիլիսոփայության համաձայն՝ Դյուին պնդում է, որ կորպորացիաներին իրավունքներ կարող են և պետք է վերագրվեն, սակայն այդ իրավունքները պետք է հիմնավորվեն օրենսդրական և գործնական նպատակահարմարությամբ, այլ ոչ թե վերացական «անձ» լինելու հանգամանքով:

Պատմականորեն դատարանները պատրաստ են եղել իրավաբանական անձանց վերագրելու իրավունքներ, որոնք ի սկզբանե վերապահված էին միայն ֆիզիկական անձանց (օրինակ՝ սեփականության կամ արդար դատաքննության իրավունքը): Այսօր, երբ օրենքով նախատեսված է կազմակերպությանը քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորություն, նույն մեխանիկական տրամաբանությամբ քննարկվում է նաև իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքի ճանաչման հարցը: Այնուամենայնիվ, հենց Դյուիի պրագմատիկ մեթոդը հուշում է, որ ինքն իր դեմ չվկայելու իրավունքը իրավաբանական անձանց

մեխանիկորեն վերագրելու փոխարեն, անհրաժեշտ է պարզել, թե այս իրավունքն իրականում ինչ բարիքներ է պաշտպանում (օրինակ՝ մարդկային արժանապատվություն, ֆիզիկական կամ հոգեբանական անձեռնմխելիություն), և դրանք իրենց էությամբ արդյոք վերագրելի են իրավաբանական անձանց:

2.3. Ինքն իր դեմ չվկայելու իրավունքով պաշտպանվող բարիքները

Ինքն իր դեմ չվկայելու իրավունքով պաշտպանվող բարիքների սահմանազատումը կարևոր է իրավաբանական անձին այս իրավունքի կրող ճանաչելու հարցի տեսանկյունից: Եթե, օրինակ, պաշտոնապես ընդունվում է այն մոտեցումը, որ քննարկվող իրավունքով պաշտպանվող օբյեկտը մասնավոր կյանքն է կամ մարդու ներաշխարհի անձեռնմխելիությունն ու հոգեբանական տառապանքի կանխումը, ապա իրավաբանական անձը՝ որպես հոգեկան և ֆիզիկական զգայարաններից զուրկ իրավական կոնստրուկցիա, չի կարող հավակնել այդ բարիքից օգտվելուն, հետևաբար իրավաբանական անձը չի կարող համարվել այդ իրավունքի կրող: Ուստի, պաշտպանվող արժեքի ընտրությունից է կախված իրավաբանական անձանց նկատմամբ այդ իրավունքի կիրառելիության ողջ փիլիսոփայությունը:

Նախ պետք է ընդունել, որ ինքն իր դեմ չվկայելու իրավունքը բազմաօբյեկտ սահմանադրական իրավունք է, քանի որ դրանով պաշտպանվում են տարաբնույթ արժեքներ՝ մարդու արժանապատվությունը, անձնական ինքնավարությունը, ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությունը, դատաքննության արդարացիությունը, մասնավոր և ընտանեկան կյանքը:

Քննարկվող իրավունքի բազմաօբյեկտության մասին է վկայում դրա կապը մարդու այլ հիմնական իրավունքների հետ: Օրինակ՝ այս իրավունքը կապված է մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի հետ: Ինքն իր դեմ չվկայելու իրավունքը պաշտպանում է նաև մարդու մասնավոր կյանքը, քանի որ անձին հնարավորություն է տալիս չաջակցել պետությանը իր կյանքի մասին տեղեկություններ հավաքելու համար: Այս իրավունքը պաշտպանում է նաև ներընտանեկան հարաբերությունների բարոյահոգեբանական տեսանկյունը: Ինքն իր դեմ չվկայելու իրավունքի հիմքում ընկած է բարոյական գնահատականը, որի համաձայն՝ քրեական դատավարության պասիվ սուբյեկտը չպետք է մտնի էթիկական կոնֆլիկտի մեջ՝ ընտրություն կատարելով ճշմարտությունն ասելու պարտականության և մերձավոր մարդկանց հանդեպ իր հավատարմության կամ պարտականությունների միջև[1]:

[1] Научно-практический комментарий к главе 2 Конституции Российской Федерации “Права и свободы человека и гражданина” / Под ред. К.А. Экштайна. Авторы: Ю.И. Лейбо, Г.П. Толстопятенко, К.А. Экштайн. - М.: ЭКОМ, 2000. - С. 340, Комментарий к Конституции Российской Федерации. В 2-х томах. Том I / Под ред. Бернда Визера. Пер. с нем. - М.: Инфотропик Медиа, 2018. - С. 689.

Այնուամենայնիվ, մեթոդաբանորեն սխալ է ինքն իր դեմ չվկայելու իրավունքն ամբողջ ծավալով դիտարկել զուտ որպես մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիության սկզբունքից բխող տարր: Այդ արժեքները քննարկվող իրավունքի միակ կամ առանցքային օբյեկտները չեն: Ինքն իր դեմ չվկայելու իրավունքն ունի ինքնուրույն արժեք, քանի որ այն կոչված է պաշտպանելու նաև արդարադատության համակարգային շահերը: Ի դեպ, նման սխալ մոտեցում ցուցաբերել է ՀՀ օրենսդիրը՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքի մասին նորմը տեխնիկապես ամրագրելով մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիության սկզբունքին նվիրված ՀՀ ՔրԴՕ 26-րդ հոդվածում (այս մասին՝ հաջորդիվ): Եթե ինքն իր դեմ չվկայելու իրավունքը համարվի մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիության սկզբունքի համեմատությամբ հատուկ նորմ և ամբողջ ծավալով կլանվի այս սկզբունքի կողմից, ապա դրանով իսկ մեխանիկորեն կբացառվի այս իրավունքի վերագրելիությունը իրավաբանական անձանց, քանի որ մասնավոր և ընտանեկան կյանքի մարդկային (ֆիզիոլոգիական) բաղադրիչն իր բնույթով կիրառելի չէ իրավաբանական անձանց նկատմամբ[1]:

Մարդու արժանապատվությունը, անձնական ինքնավարությունը, ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությունը, մասնավոր և ընտանեկան կյանքը թեև համարվում են ինքն իր դեմ չվկայելու իրավունքով պաշտպանվող կարևոր բարիքներ, սակայն դրանք այս իրավունքի առանցքային և ինստիտուցիոնալ օբյեկտը չեն: Ինքն իր դեմ չվկայելու իրավունքի կենտրոնական նպատակն ու համակարգային բաղադրիչը մրցակցային դատաքննության արդարացիության ապահովումն է:

ԱՄՆ սահմանադրական իրավունքի պատմության հեղինակավոր մասնագետներից Լեոնարդ Լևին պնդում էր, որ ինքն իր դեմ չվկայելու իրավունքի առանցքային օբյեկտը մրցակցային (adversarial) դատավարական համակարգի պահպանումն է: Այս իրավունքը վկայում է պետության և անհատի միջև արդար հավասարակշռություն պահպանելու հիմնարար հանձնառության մասին: Այն պահանջում է, որ պետությունո իր ուսերին վերցնի մեղադրանքն ապացուցելու ողջ բեռը: Առանց այս իրավունքի, մրցակցային դատավարությունը վերածվում է ինկվիզիցիոն համակարգի, որտեղ անձը դառնում է սեփական կործանման գործիքը:

[1] ՄԻԵԴ-ը նախադեպային իրավունքով սահմանել է, որ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով պաշտպանվող «մասնավոր կյանքի» հասկացությունը չի սահմանափակվում միայն անձի ոչ մասնագիտական կյանքով: Դեռևս «Նիմիտցն ընդդեմ Գերմանիայի» *(Niemietz v. Germany)* գործով 19.12.1992 թ. վճռով Դատարանն արձանագրեց, որ չկա սկզբունքային պատճառ, թե ինչու «մասնավոր կյանք» հասկացությունը պետք է բացառի մասնագիտական կամ գործարար գործունեությունը, և որ «տուն» (home) հասկացության նեղ մեկնաբանությունը կարող է հանգեցնել անհավասար վերաբերմունքի: Այնուհետև, «Սոսիետե Կոլաս Էստ»-ը և այլք ընդդեմ Ֆրանսիայի» *(Société Colas Est and Others v. France)* 16.04.2002 թ. վճռով Դատարանն այս մոտեցումն ուղղակիորեն տարածեց իրավաբանական անձանց նկատմամբ՝ արձանագրելով, որ ընկերությունների գրասենյակների ու արտադրական տարածքների անօրինական խուզարկությունները կարող են խախտել Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը:

Անհատի նկատմամբ հարգանքի վրա հիմնված հասարակությունում մեղադրանքի կողմը պարտավոր է հանդես գալ ինքնուրույն հավաքված ապացույցներով, այլ ոչ թե հարկադրանքի միջոցով ստիպի մեղադրյալին նպաստել սեփական դատապարտմանը[1]: Հենց այս մրցակցային տրամաբանությունն է արտացոլում լատինական հայտնի իմաստությունը, որի համաձայն՝ ոչ ոք պարտավոր չէ զինել իր հակառակորդին իր դեմ (*nemo tenētur armāre adversārium suum contra se*)[2]:

Նման դատավարությունում անմեղության կանխավարկածի պահանջներից մեկն այն է, որ դատախազը, որպես մեղադրական գործառույթ իրականացնող սուբյեկտ, կրում է մեղադրյալի մեղավորությունն ապացուցելու բեռը: Ինքն իր դեմ չվկայելու իրավունքը փոխլրացնում է անմեղության կանխավարկածի այս պահանջին, քանի որ ինքն իր դեմ չվկայելու իրավունքը սահմանափակում է այն աղբյուրների շրջանակը, որոնք մեղադրողը իրավասու է օգտագործել ապացուցման այդ բեռը կրելու համար: Մեղադրյալն ինքը չի կարող հանդիսանալ ապացույցի այդպիսի աղբյուր: Այսինքն՝ անմեղության կանխավարկածը սահմանում է, թե ով պետք է ապացուցի մեղադրյալի մեղավորությունը, իսկ ինքն իր դեմ չվկայելու իրավունքն ավելացնում է, թե ինչպես չի կարելի ապացուցել մեղադրյալի մեղավորությունը: Այսինքն՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքն ունի հավելյալ արժեք[3]:

Այն, որ ինքն իր դեմ չվկայելու իրավունքով պաշտպանվող առանցքային և ինստիտուցիոնալ բարիքը դատաքննության արդարացիությունն է, ընդունել է նաև ՄԻԵԴ-ը, որն ինքն իրեն մեղադրելուց հրաժարվելու արտոնությունը (*privilege against self-incrimination*) և լռության իրավունքը (*right to silence*) կապում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի (արդար դատաքննության իրավունք) հետ: Թեև Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի տեքստում այս իրավունքներն ուղղակիորեն ամրագրված չեն, ՄԻԵԴ-ը Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի *(Funke v. France*) գործով 25.02.1993 թ. վճռում առաջին անգամ հստակ ճանաչեց և արձանագրեց, որ ինքն իր դեմ չվկայելու և լռելու իրավունքներն ընկած են Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի հենց սրտում: Դատարանն իր հետագա նախադեպերում նաև նշել է, որ այս իրավունքի նպատակն է պաշտպանել մեղադրյալին պետական մարմինների կողմից անօրինական ճնշումներից ու հարկադրանքից, ինչը նպաստում է դատական սխալների կանխմանը (տե՛ս Ջոն Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (*John Murray v. the United Kingdom*) գործով 08.02.1996 թ. վճիռը, Սանդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Saunders v. the United Kingdom*) գործով 17.12.1996 թ. վճիռը):

[1] **Levy L. W.,** Origins of the Fifth Amendment: The Right Against Self-Incrimination. New York: Oxford University Press, 1968. Preface. P. vii–viii; Chapter 1 («Rival systems of criminal procedure»). P. 3–30.

[2] Латинская юридическая фразеология / Сост. проф. Б. С. Никифоров. - М.: Юрид. лит., 1979. - С. 171.

[3] **Stijn Lamberigts** Corporations and the Privilege against Self-Incrimination. Oxford; New York: Hart Publishing, 2022. P. 60- 61.

«Քրեական վարույթում անմեղության կանխավարկածի որոշակի ասպեկտների և դատաքննությանը ներկա լինելու իրավունքի ամրապնդման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2016 թվականի մարտի 9-ի (ԵՄ) 2016/343 դիրեկտիվում լռելու իրավունքը (24-րդ կետ) և ինքնամեղադրման արտոնությունը (25-րդ կետ) ուղղակիորեն բխեցվում են անմեղության կանխավարկածից և դիտարկվում որպես դրա անկյունաքարային ասպեկտ[1]:

Եթե ինքն իր դեմ չվկայելու իրավունքով պաշտպանվող առանցքային և ինստիտուցիոնալ բարիքը դատավարության արդարացիությունն է, ապա պետությունը չպետք է իրավունք ունենա քրեական հետապնդման ենթարկվող սուբյեկտին հարկադրել ինքն իրեն մեղադրել, անկախ նրանից՝ այդ սուբյեկտը ֆիզիկական, թե իրավաբանական անձ է: Դատավարական համակարգի արդարությունը և մրցակցային հավասարակշռությունը նույնքան կարևոր են, երբ քրեական վարույթը նախաձեռնվել է իրավաբանական անձի վերաբերյալ:

3. Իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքի ճանաչման հիմնախնդիրը արևմտյան իրավական համակարգերում

3.1 Իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու և ինքն իր դեմ չգործելու իրավունքի կիրառելիության դոկտրինալ մոտեցումները

Իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքի կրող ճանաչելու վերաբերյալ դոկտրինալ մոտեցումները կարելի է խմբավորել մի քանի փաստարկների շուրջ:

1. Օրենքի առջև հավասարության սկզբունքը որպես իրավաբանական անձին ինքն իր դեմ չվկայելու իրավունքը վերագրելու հիմք:

Օրենքի առջև հավասարության սկզբունքը պահանջում է, որ նույն իրավական կարգավիճակում գտնվող սուբյեկտները օժտված լինեն նույն դատավարական երաշխիքներով: Այս սկզբունքի լույսի ներքո, իրավաբանական անձին ինքն իր դեմ չվկայելու իրավունքը վերագրելու անհրաժեշտությունը հիմնավորվում է երկու համեմատական հարթություններում.

ա) Համեմատությունը ֆիզիկական անձի հետ (հորիզոնական հավասարություն). Ռումինացի իրավաբան գիտնական Միհեշն իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքի ճանաչումը փորձում է հիմնավորել անհատի ունեցած կարգավիճակի համանմանությամբ: Նա նշում է.

> «Եթե իրավաբանական անձին դիտարկենք որպես իրավական ֆիկցիա, ապա կարող ենք հարցին նայել այլ տեսանկյունից. իրավական ֆիկցիան օրենքով սահմանված կարգով ունի

[1] Դիրեկտիվը կիրառվում է բացառապես ֆիզիկական անձանց նկատմամբ (հոդված 2), ինչը նշանակում է, որ այն ուղղակիորեն չի տարածվում իրավաբանական անձանց վրա:

> իրավունքներ և պարտականություններ, այսինքն՝ օրենքը ճանաչում է դրանք: Մի՞թե մենք նույն իրավիճակում չենք, ինչ ցանկացած անհատի դեպքում»[1]:

Այս փաստարկն ընդգծում է, որ թեև իրավաբանական անձը չունի ֆիզիկական անձին բնորոշ կենսաբանական գոյություն կամ հոգեբանական հատկանիշներ, այնուամենայնիվ, իրավակարգը նրան ճանաչում է որպես ինքնուրույն սուբյեկտ՝ օժտելով իրավունքներով և պարտականություններով: Եվ եթե իրավաբանական անձը քրեական իրավունքի շրջանակում ճանաչվում է որպես պատասխանատվության ինքնուրույն սուբյեկտ, ապա օրենքի առջև հավասարության սկզբունքի պահանջներից բխում է, որ նրա նկատմամբ ևս պետք է ապահովվեն ֆիզիկական անձանց համար նախատեսված համարժեք դատավարական երաշխիքներ: Հակառակ դեպքում կստեղծվի իրավիճակ, երբ իրավաբանական անձը կարող է համարվել «սուբյեկտ» պատասխանատվություն կրելու համար, սակայն ոչ լիարժեք «սուբյեկտ»՝ իր պաշտպանության հիմնարար միջոցներից օգտվելու համար:

բ) Համեմատությունը իրավաբանական անձի մասնակից ֆիզիկական անձանց հետ (ներքին հավասարություն). Նույն սկզբունքի շարունակությունն է այն փաստարկը, որ իրավաբանական անձին ինքն իր դեմ չվկայելու իրավունքից զրկելը կարող է հանգեցնել նրա և այն ֆիզիկական անձանց միջև անհավասարության, որոնք ձևավորում և արտահայտում են նրա կամքը: Այս կապակցությամբ Միհեշն ընդգծում է.

> «Այսպիսով, մենք հանգում ենք այնպիսի իրավիճակի, երբ միայն իրավաբանական անձը կենթարկվի քրեական պատասխանատվության՝ որպես ապացույց օգտագործելով իր իսկ հայտարարությունները, մինչդեռ այն անձինք, որոնք կազմում են նրա կառուցվածքը, կկարողանան օգտվել լռելու իրավունքից»[2]:

Այս մեջբերումը կարելի է բնութագրել որպես «դատավարական անհավասարության պարադոքս»: Դրա հիմքում ընկած է այն հակասությունը, համաձայն որի՝ իրավաբանական անձի կամքը և գործողությունները ձևավորվում ու արտահայտվում են այն ֆիզիկական անձանց միջոցով, որոնք իրավական առումով կարող են օգտվել ինքն իր դեմ չվկայելու և ինքն իր դեմ չգործելու իրավունքի պաշտպանվող բարիքից, մինչդեռ իրավաբանական անձը՝ որպես այդ գործողությունների կրող և քրեական պատասխանատվության ինքնուրույն սուբյեկտ, զրկվում է նույն պաշտպանական երաշխիքից: Վկայակոչված տեսակետի համաձայն՝

[1] **Miheş C.D.,** Corporate compliance versus the right to silence of legal entities in Romania: The case of certain tax evasion offences // Central European Academy Law Review. 2023. Vol. 1, № 2. P. 22-23.

[2] Տե՛ս նույն տեղում, Էջ 22:

իրավաբանական անձի նկատմամբ նշված իրավունքի կիրառելիության բացառումը կարող է ստեղծել մի իրավիճակ, երբ կազմակերպությունը հայտնվում է ավելի անբարենպաստ դատավարական վիճակում, քան այն ֆիզիկական անձինք, որոնք մասնակցում են նրա կամքի ձևավորմանը և արտահայտմանը:

Այսպիսով, օրենքի առջև հավասարության սկզբունքը գործում է երկու ուղղությամբ՝ և՛ ապահովելով իրավաբանական անձի հավասար պաշտպանությունը ֆիզիկական անձի նկատմամբ, և՛ կանխելով դատավարական անհավասարությունը իրավաբանական անձի և նրա մասնակիցների միջև:

2. Արժանապատվության ինստիտուցիոնալ մեկնաբանությունը որպես իրավաբանական անձին ինքն իր դեմ չվկայելու իրավունքը վերագրելու հիմք: Իսպանացի իրավաբան Էնգիքսը, վերլուծելով իրավաբանական անձի նկատմամբ ինքն իր դեմ չվկայելու իրավունքի կիրառելիության հնարավորությունը, առաջ է քաշում այն մոտեցումը, համաձայն որի՝

> «Թեև իրավաբանական անձի պարագայում, stricto sensu, հնարավոր չէ խոսել արժանապատվության մասին, այնուամենայնիվ, մենք գտնում ենք, որ երբ սահմանադիրն օգտագործում է «բոլորը» եզրույթը՝ մատնանշելու «accusare» մաքսիմի կրող սուբյեկտներին, այդ ձևակերպումը տարածվում է նաև իրավաբանական անձանց վրա՝ որոշակի իմաստով ապահովելու այդ «արժանապատվության» հարգումը: Այստեղ խոսքը վերաբերում է ընկերության՝ իր տնտեսական գործունեությունն ազատորեն զարգացնելու իրավունքին»[1]:

Վերոնշյալ դիրքորոշումից հետևում է, որ ինքն իր դեմ չվկայելու իրավունքի հիմքում ընկած մարդու արժանապատվությունը՝ իր դասական սահմանադրահիրավական ընկալմամբ, չի կարող ուղղակիորեն վերագրվել իրավաբանական անձին, քանի որ այն անքակտելիորեն կապված է մարդու անհատական ինքնավարության, ֆիզիկական և հոգևոր ամբողջականության ու անձնական ազատության հետ: Սակայն, Էնգիքսն առաջարկում է *accusare-ի* արժեքային հիմքի ընդլայնված մեկնաբանություն՝ այն տեղափոխելով իրավաբանական անձի ինստիտուցիոնալ ինքնավարության և տնտեսական գործունեության ազատության պաշտպանության հարթություն: Այլ կերպ ասած՝

[1] **Criado Enguix J.,** Consideraciones procesales en torno al derecho a no autoincriminarse de la persona jurídica investigada en el proceso penal. Propuestas al derecho interno a la luz de la jurisprudencia europea // Revista de Estudios Europeos. 2026. №. 87. P. 707.

Կրիադո Էնգիքս Խ., Քրեական վարույթում հետաքննվող իրավաբանական անձի՝ իր դեմ չվկայելու իրավունքի վերաբերյալ դատավարական հարցեր. եվրոպական դատական պրակտիկայի լույսի ներքո ներպետական իրավունքի կատարելագործման առաջարկներ: Եվրոպական ուսումնասիրությունների հանդես, 2026, №. 87, Էջ 707-708:

«արժանապատվություն» հասկացությունը տվյալ համատեքստում վերաիմաստավորվում է՝ հանդես գալով որպես իրավական կոնստրուկցիայի՝ իր ինքնուրույնությունը պահպանելու, տնտեսական գործունեությունն առանց անհիմն միջամտության իրականացնելու հնարավորության երաշխիք: Նման մոտեցումը հաղթահարում է այն տեսական հակասությունը, որի համաձայն՝ իրավաբանական անձին վերագրվում է այնպիսի հիմնական իրավունք, որի հիմքում ընկած արժեքը՝ մարդու արժանապատվությունը, իրեն բնորոշ չէ:

Ըստ էության, Էնգիքսի մոտեցումը ցույց է տալիս, որ սահմանադրական իրավունքները չեն կարող դիտարկվել որպես մեկ անփոփոխ արժեքային հիմքի վրա հիմնված մոնոլիտ կառույցներ. դրանք փոխակերպվող բնույթ ունեն՝ հարմարվելով իրավունքի տարբեր սուբյեկտների առանձնահատկություններին՝ պահպանելով իրենց հիմնական գործառույթը՝ պաշտպանելու սուբյեկտի ինքնավարությունը և արդարադատության համակարգային հավասարակշռությունը:

Իրավաբանական անձի այս իրավունքի ճանաչումը չի նշանակում դրա անսահմանափակ կիրառություն: Էնգիքսն ահազանգում է ինքն իր դեմ չվկայելու իրավունքի բացարձակ և չսահմանափակված կիրառման հնարավոր բացասական հետևանքների մասին՝ ընդգծելով.

> «Իրավաբանական անձանց նկատմամբ «accusare» մաքսիմի չմտածված տարածումը կարող է բացասական ազդեցություն ունենալ հանցանքի քննության վրա, քանի որ այդ դեպքում կորպորացիաները կդառնան անանցանելի պատնեշ: Կարելի է ընդունելի համարել այնպիսի տեղեկատվության կամ փաստաթղթերի հարկադիր տրամադրումը, որոնք գոյություն ունեն անկախ մեղադրյալի կամքից և պարզապես ենթակա են ներկայացման իրավասու մարմիններին»[1]:

Այսինքն, ինքն իր դեմ չվկայելու և ինքն իր դեմ չգործելու իրավունքի կիրառման համար առաջարկվում է հավասարակշռված մոտեցում՝ հաշվի առնելով պահանջվող տեղեկատվության բնույթը և դրա կապը անձի կամքի հետ:

3.2. Իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու և ինքն իր դեմ չգործելու իրավունքի կիրառելիությունը արևմտյան երկրների դատական պրակտիկայում

3.2.1. Եվրոպական միություն

Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) իրավական համակարգում իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու և ինքն իր դեմ չգործելու իրավունքի բովանդակությունը ձևավորվել է հիմնականում Եվրոպական միության արդարադատության դատարանի (այսուհետ՝ ԵՄԱԴ) մրցակցային իրավունքի վերաբերյալ նախադեպային պրակտիկայի շրջանակներում: Այս առումով

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 710-714:

առանձնակի նշանակություն ունի 1989 թվականի Օրկեմն ընդդեմ Հանձնաժողովի գործը *(Orkem v Commission)*, որով ԵՄԱԴ-ն առաջին անգամ արտահայտեց իր մոտեցումը տվյալ հարցի վերաբերյալ: Գործը վերաբերում էր Եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից իրականացվող հակամենաշնորհային վարույթին, որն իրականացվում էր Եվրոպական տնտեսական համայնքի խորհրդի կողմից ընդունված 1962 թվականի փետրվարի 6-ի թիվ 17 կանոնակարգի համաձայն: Վերջինս Հանձնաժողովին լիազորում էր իրավաբանական անձից պահանջել մրցակցային իրավունքի ենթադրյալ խախտումների քննության համար անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր[1]: Այդ լիազորության շրջանակում «Օրկեմ» ընկերությունից պահանջվել էր ներկայացնել գրավոր տեղեկություններ ենթադրյալ հակամրցակցային վարքագծի վերաբերյալ, ինչն էլ դարձավ իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքի կիրառելիության վերաբերյալ վեճի առարկա[2]: ԵՄԱԴ-ը սկզբում արձանագրեց, որ տվյալ ժամանակահատվածում ո՛չ ՄԻԵԿ-ը, ո՛չ էլ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը դեռևս չէին ճանաչում ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը որպես հստակ ձևակերպված հիմնարար իրավունք, իսկ անդամ պետությունների իրավակարգերի համեմատական վերլուծությունը ցույց էր տալիս, որ այդ երաշխիքը հիմնականում վերապահված էր ֆիզիկական անձանց նկատմամբ իրականացվող քրեական վարույթներին[3]: Այնուհետև, ԵՄԱԴ-ն, անդրադառնալով հանձնաժողովի լիազորություններին, նշել է.

> «Համապատասխանաբար, թեև Հանձնաժողովն իրավասու է թիվ 17 կանոնակարգի 11-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով ամրագրված դրույթների կիրառումն ապահովելու նպատակով պարտավորեցնել ձեռնարկությանը տրամադրել իրեն հայտնի բոլոր անհրաժեշտ տեղեկությունները (անգլ.՝ *require the information*) և անհրաժեշտության դեպքում ներկայացնել իր տիրապետման տակ գտնվող համապատասխան փաստաթղթերը, նույնիսկ եթե դրանք կարող են օգտագործվել տվյալ կամ այլ ձեռնարկության կողմից հակամրցակցային վարքագծի առկայությունն ապացուցելու համար, այնուամենայնիվ, Հանձնաժողովն այդ որոշմամբ չի կարող խախտել տվյալ ձեռնարկության պաշտպանության իրավունքները: Հետևաբար, Հանձնաժողովը չի կարող պարտադրել ձեռնարկությանը տրամադրել այնպիսի պատասխաններ (անգլ.՝

[1] Council Regulation No 17: First Regulation Implementing Articles 85 and 86 of the Treaty // Official Journal of the European Communities, 1962, № 13. Art. 11(5), 14(3).

[2] Court of Justice of the European Communities. *Orkem v Commission*: Report for the Hearing delivered in Case 374/87. Luxembourg, 1989. Paras. 1–6.

[3] Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ՝ 27–31:

answers)[1], որոնք կպարունակեն իր կողմից իրավախախտման առկայության ընդունում, քանի որ այդ իրավախախտման ապացուցման պարտականությունը դրված է հենց Հանձնաժողովի վրա [2]:

Նախ, թիվ 17 կանոնակարգի 11-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը սահմանում են Հանձնաժողովի՝ իրավաբանական անձից տեղեկություն պահանջելու (անգլ.՝ *require the information*) և փաստաթղթեր պահանջելու լիազորությունը[3]: Նշված դրույթները, ըստ էության, բացառում են ինչպես *accusare*-ի, այնպես էլ *prodere*-ի կիրառումը իրավաբանական անձի նկատմամբ: Այս համատեքստում ԵՄԱԴ-ի արտահայտած դիրքորոշումը հակասական է: Մի կողմից, ԵՄԱԴ-ը կանոնակարգի տեքստից բխեցնում է Հանձնաժողովի իրավասությունը՝ պարտավորեցնելու իրավաբանական անձին տրամադրել իրեն հայտնի բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և անհրաժեշտության դեպքում ներկայացնել իր տիրապետման տակ գտնվող համապատասխան փաստաթղթերը, նույնիսկ եթե դրանք կարող են օգտագործվել տվյալ իրավաբանական անձի կողմից հակամրցակցային վարքագծի առկայությունն ապացուցելու համար, իսկ մյուս կողմից՝ նույն որոշմամբ սահմանափակում է Հանձնաժողովին վերապահված լիազորությունների շրջանակը՝ վկայակոչելով իրավաբանական անձի պաշտպանության իրավունքների առկայությունը և բացառելով կանոնակարգի 11-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի կիրառումը: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ ԵՄԱԴ-ն այս գործով առաջին անգամ ամրագրել է իրավաբանական անձի պաշտպանության իրավունքների կիրառելիության հնարավորությունը:

Հետագայում՝ 1996 թվականին, Հանձնաժողովն ընդունեց պատժի մեղմացման մասին ենթաօրենսդրական ակտը, որի համաձայն՝ մրցակցային իրավունքի խախտման վերաբերյալ ինքնամեղադրող տեղեկություններ կամ ապացույցներ Հանձնաժողովին ներկայացնող իրավաբանական անձը կարող է օգտվել իր նկատմամբ կիրառելի պատժի մեղմացման հնարավորությունից[4]: Այդպիսով Հանձնաժողովն առաջին անգամ նախատեսեց իրավաբանական անձի կողմից ինքն իր դեմ չվկայելու իրավունքից կամավոր հրաժարվելու հնարավորությունը՝ սահմանելով դրա դիմաց պատասխանատվության մեղմացման կիրառման մեխանիզմ:

[1] ԵՄԱԴ-ի կողմից օգտագործված «պատասխաններ» եզրույթից միանշանակ չի հետևում՝ այդ եզրույթը վերաբերում է բացառապես բանավոր պատասխաններին, թե ներառում է նաև գրավոր պատասխանները:

[2] Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ՝ 32-35:

[3] Council Regulation No 17: First Regulation Implementing Articles 85 and 86 of the Treaty // Official Journal of the European Communities, 1962, № 13. Art. 11(5),14(3).

[4] Commission Notice on the non-imposition or reduction of fines in cartel cases. Brussels, 1996. Vol. 39. C 207.

Ավելի ուշ՝ 2004 թվականին, Տոկայ Քարբոնն ընդդեմ Հանձնաժողովի գործով (*Tokai Carbon v Commission)* ԵՄԱԴ-ն սահմանեց.

> «Լռելու իրավունքը ճանաչվում է միայն այն չափով, որքանով ձեռնարկությունը կհարկադրվի տրամադրել իրավախախտման ընդունում պարունակող պատասխաններ, մինչդեռ իրավախախտման ապացուցման պարտականությունը կրում է Հանձնաժողովը: Հանձնաժողովն իրավասու է պարտավորեցնել ձեռնարկություններին տրամադրել իրենց տիրապետության ներքո գտնվող փաստաթղթերը, նույնիսկ եթե վերջիններս կարող են օգտագործվել իրենց հակամրցակցային վարքագծի առկայությունը հաստատելու համար»[1]:

Ստացվում է, որ սույն գործի շրջանակներում ԵՄԱԴ-ը վերացրեց *Orkem*-ի գործում առկա անորոշությունը՝ հստակեցնելով, որ իրավաբանական անձը նույնպես կարող է օգտվել լռելու (ինքն իր դեմ չվկայելու) իրավունքից, այսինքն՝ իրավաբանական անձն իրավունք ունի հրաժարվել բանավոր ցուցմունք կամ բացատրություն տալուց, հարցման ենթարկվելուց կամ որևէ այլ կերպ բանավոր հարցերին պատասխանելուց (*accusare*), սակայն դատարանը չճանացել *prodere*-ն:

Tokai Carbon-ի գործով ձևավորված դիրքորոշումից հետո ԵՄԱԴ-ը 2005 թվականի Դանսք Ռորինդուստրին և այլքն ընդդեմ Հանձնաժողովի գործում (*Dansk Rørindustri and Others v Commission)* անդրադարձավ իրավաբանական անձի կողմից ինքն իր դեմ չվկայելու իրավունքից հրաժարվելու, իր իրավախախտումը հաստատող բանավոր տեղեկությունները Հանձնաժողովին կամավոր ներկայացնելու և դրա արդյունքում պատժի մեղմացում ստանալու պայմաններին: ԵՄԱԴ-ն ընդգծեց, որ նման հնարավորությունը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ իրավաբանական անձը դրսևորում է կամավոր, լիարժեք և բարեխիղճ համագործակցություն[2]: Այսինքն, ԵՄԱԴ-ը հաստատեց, որ իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքից հրաժարումը կարող է հիմնված լինել ազատ կամարտահայտության վրա: Իրավաբանական անձն ինքնուրույն է որոշում՝ արդյոք հրաժարվել ինքն իր դեմ չվկայելու իրավունքի պաշտպանվող բարիքից՝ փոխարենը ստանալով պատասխանատվության մեղմացման հնարավորություն, թե ոչ:

[1] *Tokai Carbon Co. Ltd and Others v Commission of the European Communities*, Joined Cases T-236/01, T-239/01, T-244/01 to T-246/01, T-251/01 and T-252/01, Judgment of the Court of First Instance (Second Chamber). 29 April 2004. Paras 402-403.

[2] Court of Justice of the European Communities. *Dansk Rørindustri and Others v Commission of the European Communities*, Joined Cases C-189/02 P, C-202/02 P, C-205/02 P to C-208/02 P and C-213/02 P: Judgment of the Court (Grand Chamber). Luxembourg, 28 June 2005. Paras. 388–403.

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ *Orkem*-ի գործով ԵՄԱԴ-ն առաջին անգամ ճանաչեց իրավաբանական անձի պաշտպանության իրավունքների կիրառելիության հնարավորությունը, *Tokai Carbon*-ի գործով հստակեցրեց այդ պաշտպանության շրջանակը՝ ճանաչելով իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքը (accusare), իսկ *Dansk Rørindustri*-ի գործով սահմանեց այդ իրավունքից կամավոր հրաժարվելու պայմանները:

Ի հակադրումն վերոնշյալ դիրքորոշումների՝ անհրաժեշտ է նշել, որ «Քրեական վարույթում անմեղության կանխավարկածի որոշակի ասպեկտների և դատաքննությանը ներկա լինելու իրավունքի ամրապնդման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2016 թվականի մարտի 9-ի (ԵՄ) 2016/343 դիրեկտիվում ԵՄ-ն, մեր գնահատմամբ, նախատեսել է ԵՄԱԴ նախադեպային իրավունքի տրամաբանությանը հակասող իրավակարգավորում: Մասնավորապես, դիրեկտիվի նախաբանում նշվում է.

> «Իրավաբանական անձանց նկատմամբ անմեղության կանխավարկածի վերաբերյալ ԵՄ մակարդակով կարգավորում սահմանելը դեռևս վաղաժամ է՝ հաշվի առնելով ազգային օրենսդրության և դատական պրակտիկայի զարգացման փուլը: Այդ պատճառով դիրեկտիվը չի կիրառվում իրավաբանական անձանց նկատմամբ: Միաժամանակ, այն չի բացառում իրավաբանական անձանց նկատմամբ անմեղության կանխավարկածի կիրառումը, ինչպես այն բխում է, մասնավորապես, ՄԻԵԿ-ից և ՄԻԵԴ-ի ու ԵՄԱԴ-ի նախադեպային իրավունքից»[1]:

Ինչպես արդեն նշվել է, դիրեկտիվում լռելու իրավունքը (24-րդ կետ) և ինքնամեղադրման արտոնությունը (25-րդ կետ) ուղղակիորեն բխեցվում են անմեղության կանխավարկածից և դիտարկվում որպես դրա անկյունաքարային տեսանկյուն: Հետևաբար, Դիրեկտիվը չի կիրառվում իրավաբանական անձանց նկատմամբ, ապա դրանից հետևում է, որ նրանց նկատմամբ չի տարածվում նաև անմեղության կանխավարկածի սկզբունքը և դրանից բխող ինքն իր դեմ չվկայելու իրավունքը: ԵՄ օրենսդրական այս կարգավորումը հարցեր է առաջացնում, քանի որ անմեղության կանխավարկածի նշանակությունը չի սահմանափակվում միայն ֆիզիկական անձի պաշտպանության գործառույթով: Այն քրեական արդարադատության համակարգի հիմնարար սկզբունքներից է, առանց որի արդար դատաքննության հիմնարար իրավունքի ապահովումը հնարավոր չէ: Նույն տրամաբանությամբ, ինքն իր դեմ չվկայելու իրավունքի հիմքում ընկած առանցքային

[1] Decision (EU) 2016/344 of the European Parliament and of the Council of 9 March 2016 on establishing a European Platform to enhance cooperation in tackling undeclared work (Preamble) // Official Journal of the European Union. 2016, Brussels. Paras. 11–13.

և ինստիտուցիոնալ արժեքը դատաքննության արդարացիության ապահովումն է: Այս տեսանկյունից պետությունը իրավասու չէ որևէ սուբյեկտի հարկադրել տրամադրելու իր մեղավորությունը հաստատող տեղեկություն կամ օգտագործել տվյալ սուբյեկտին որպես իր դեմ իրականացվող վարույթի ապացուցման աղբյուր:

Դիրեկտիվում առկա մոտեցումը առերևույթ ներդաշնակ չէ նաև ԵՄԱԴ-ի նախադեպային պրակտիկայի հետ, քանի որ, ինչպես նշվեց, ԵՄԱԴ-ը փաստացի ճանաչել է, որ իրավաբանական անձը կարող է օգտվել ինքն իր դեմ չվկայելու իրավունքից: Հետևաբար, եթե ԵՄԱԴ-ը արդեն իսկ ճանաչել է իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքը, ապա դժվար է հիմնավորել, որ իրավաբանական անձի նկատմամբ անմեղության կանխավարկածի և դրանից բխեցվող ինքն իր դեմ չվկայելու իրավունքի վերաբերյալ ԵՄ օրենսդրական կարգավորումը դեռևս գտնվում է այնպիսի նախնական փուլում, որը կբացառեր դրա ամրագրումը ԵՄ իրավունքի մակարդակում:

3.2.2. Անգլիա

Անգլիական իրավունքում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը ձևավորվել է 19-րդ դարի կեսերից, երբ դատարանները սկսեցին կորպորացիաներին պատասխանատվության ենթարկել իրենց պարտականությունների խախտման և հանրային վտանգավոր հետևանքներ առաջացնող գործողությունների համար[1]: Անգլիական իրավունքում իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու և ինքն իր դեմ չգործելու իրավունքի կիրառելիության հարցի վերաբերյալ հիմնարար նշանակություն ունի 1934 թվականի Տրիպլեքս Սեյֆթի Գլաս Քոմփանի Լիմիթեդն ընդդեմ Լենսգեյ Սեյֆթի Գլասի գործը *(Triplex Safety Glass Company Ltd v. Lancegaye Safety Glass)*, որտեղ առաջին անգամ ուղղակիորեն քննարկվեց իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքից օգտվելու հնարավորությունը: Գործով քննարկման առարկան այն էր, թե արդյոք ընկերությունը կարող է հղում կատարել ինքն իր դեմ չվկայելու իրավունքին և հրաժարվել պատասխանել հարցաթերթին: Այս կապակցությամբ Վերաքննիչ դատարանը նշել է.

> «Ըստ էության, հնարավոր չէ գտնել որևէ ողջամիտ հիմք, համաձայն որի՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքը պետք է սահմանափակվի ֆիզիկական անձանցով և դրանից չի կարող օգտվել իրավաբանական անձը»[2]:

[1] **Кичигина О.Ю.** Уголовная ответственность юридических лиц в законодательстве Великобритании, США и Российской Федерации // Ученые записки. 2021. - С. 84–85.

[2] *Triplex Safety Glass Co., Ltd. v. Lancegaye Safety Glass*, Ltd. [1939] 2 K.B. 395 (C.A.), Judgment of the Court of Appeal.2 May 1939. Paras. 400-409.

Ավելի ուշ Վերաքննիչ դատարանն անդրադարձ է կատարել նաև իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չգործելու իրավունքին: 1991 թվականի Թեյթ Էքսես Ֆլորս Ինկ. ընդդեմ Բոսուելի գործում (*Tate Access Floors Inc v Boswell)* դատարանը մերժեց ընկերության այն պնդումը, որ պահանջվող գրավոր տեղեկությունների տրամադրումը կարող է հանգեցնել իր տնօրենների և բաժնետերերի՝ իրենց դեմ գործելուն: Վերաքննիչ դատարանն արձանագրել է.

> «Ինքն իր դեմ չգործելու իրավունքը կրում է բացառապես անձնական բնույթ և կարող է վկայակոչվել միայն այն անձի կողմից, որի նկատմամբ գոյություն ունի ինքն իր դեմ գործելու իրական վտանգ: Եթե անձինք ընտրում են իրենց գործունեությունն իրականացնել կորպորացիաների միջոցով, ապա նրանք օգտվում են այն իրավական հանգամանքից, որ այդ կորպորացիաները, ըստ օրենքի՝ առանձին իրավաբանական անձինք են, որոնց գույքն իրավաբանորեն չի համարվում դրանց հիմնադիրների կամ վերահսկող բաժնետերերի գույքը կամ գործողությունները[1]:

Տվյալ համատեքստում «անձնական» բնույթը ենթադրում է դրա կապը միայն ֆիզիկական անձի հետ: Իրավաբանական անձը, որպես իրավական ֆիկցիա, չունի ինքնուրույն ֆիզիկական կամային գոյություն, իսկ նրա կամքը ձևավորվում և արտահայտվում է ֆիզիկական անձանց միջոցով: Հետևաբար, երբ դատարանը գույքային առանձնացվածության հիման վրա բացառում է իրավաբանական անձի և նրա կամքն արտահայտող ֆիզիկական անձանց նույնացումը, փաստացի բացառվում է նաև այն սուբյեկտի գոյությունը, որի միջոցով իրավաբանական անձը կարող էր իրացնել իր դատավարական իրավունքները: Այլ կերպ ասած՝ անգլիական իրավունքում մի կողմից ընդունվում է այն փաստը, որ իրավաբանական անձը կարող է գործել միայն ֆիզիկական անձանց միջոցով, և այդ ֆիզիկական անձինք կարող են իրավաբանական անձի կամքն արտահայտել ու իրավաբանական անձի նկատմամբ օգտվել ինքն իր դեմ չվկայելու իրավունքի պաշտպանվող բարիքից, իսկ մյուս կողմից՝ այդ նույն անձանց դատարանը զրկում է իրավաբանական անձի անունից դատավարական երաշխիք վկայակոչելու հնարավորությունից՝ նրանց չնույնացնելով իրավաբանական անձի հետ:

3.2.3. Բելգիա

Իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունն առաջին անգամ Բելգիայի օրենսդրությամբ ամրագրվել է 1999 թվականի հուլիսի 2-ին[2]: Ինչ

[1] *Tate Access Floors Inc. and Another v. Boswell and Others*, Ch. 512, Judgment of the High Court of Justice (Chancery Division), 13 June 1990 // The Law Reports, Chancery Division. London, 1991. Para. 532.

[2] **Karel De Smet, Elke Janssens** Criminal Liability of Legal Entities under Belgian Law: A High-Level Overview // Compliance Elliance Journal, 2019, Vol. 5, №. 2. P. 49.

վերաբերում է իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու և ինքն իր դեմ չգործելու իրավունքի կիրառելիությանը, ապա այս հարցի վերաբերյալ առանձնահատուկ նշանակություն ունեն Բելգիայի վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների կողմից Սիթիբանկ *(Citibank)* գործով 2012 և 2013 թվականներին կայացված որոշումները: Գործի շրջանակում իրավաբանական անձից պահանջվում էր տրամադրել բանավոր և գրավոր տեղեկություններ, որոնց չտրամադրումը կարող էր հանգեցնել ինչպես ընկերության, այնպես էլ նրա աշխատակիցների նկատմամբ պատժամիջոցների կիրառման: Բելգիայի վերաքննիչ դատարանը 2012 թվականի որոշմամբ ընդունեց, որ հարկադրանքի սպառնալիքով ձեռք բերված «ինքնամեղադրող» փաստաթղթերը չեն կարող օգտագործվել նրա դեմ որպես ապացույց[1]: 2013 թվականին Բելգիայի Վճռաբեկ դատարանը վերահաստատեց այս մոտեցումը՝ ընդգծելով.

> «Քրեական պատժամիջոցների կիրառման մշտական սպառնալիքը լուրջ միջամտություն է մեղադրյալի լռելու իրավունքին, և հարկադրանքի միջոցով ձեռք բերված փաստաթղթերը չեն կարող հաշվի առնվել, եթե դրանց ստացումը խախտել է այդ իրավունքը»[2]:

Թեև Վճռաբեկ դատարանն ուղղակիորեն չի նշել, որ ինքն իր դեմ չգործելու իրավունքը բխում է լռելու իրավունքից, այնուամենայնիվ, դատարանի արտահայտած դիրքորոշումից կարելի է եզրակացնել նման փոխկապակցվածության առկայությունը: Դատարանն ընդունել է, որ քրեական պատժամիջոցների կիրառման սպառնալիքի ներքո ապացույցների տրամադրումը նույնպես ներառվում է լռելու իրավունքով պաշտպանվող բարիքների մեջ: Դատարանի գնահատմամբ լռելու իրավունքը տարածվում է նաև այնպիսի գործողությունների վրա, որոնց կատարումը հարկադրանքի պայմաններում կարող է հանգեցնել անձի կողմից իր դեմ գործող փաստաթղթային ապացույցների ձեռքբերմանը: Հետևաբար, դատարանի դիրքորոշումը վկայում է, որ ինքն իր դեմ չգործելու իրավունքը դիտարկվում է որպես լռելու իրավունքի բաղադրիչներից մեկը: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ բելգիական իրավունքում ճանաչվել է իրավաբանական անձի ոչ միայն ինքն իր դեմ չվկայելու իրավունքը, այլև ինքն իր դեմ չգործելու իրավունքը՝ ամրագրելով իրավաբանական անձի՝ պետական հարկադրանքից ամբողջությամբ պաշտպանվելու իրավունքը:

[1] Procureur général près la cour d'appel de Bruxelles et crts c. s.a. Citibank Belgium et crts, arrêt de la Cour de cassation de Belgique du 19 juin 2013 // Pasicrisie belge. Bruxelles, 2012. №.380. P. 1405–1406

[2] Arrêt de la Cour de cassation de Belgique du 19 juin 2013, P.12.1150.F // pasicrisie belge. Bruxelles, 2013. P. 380.

3.2.4. Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԱՄՆ-ում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության օրենսդրական հիմքերը առաջին անգամ հստակ ամրագրվեցին 1903 թվականի «Էլկինսի օրենքով», որով նախատեսվեց երկաթուղային կորպորացիաների քրեական պատասխանատվությունը[1]: Միաժամանակ, ԱՄՆ-ում իրավաբանական անձինք չեն համարվում ԱՄՆ Սահմանադրության Հինգերորդ փոփոխությամբ երաշխավորված՝ *«accusare»* մաքսիմի կրողներ[2]: Այս մոտեցումը ձևավորվել և հետևողականորեն զարգացել է նաև ԱՄՆ Գերագույն դատարանի (այսուհետ՝ Գերագույն դատարան) նախադեպային իրավունքի միջոցով: Այսպես, 1906 թվականի Հեյլն ընդդեմ Հենկելի գործում *(Hale v. Henkel)*, որը վերաբերում էր հակամենաշնորհային քննության շրջանակներում ընկերության փաստաթղթերի ներկայացման պահանջին, Գերագույն դատարանը մերժեց Հինգերորդ փոփոխության կիրառելիությունը իրավաբանական անձի նկատմամբ՝ ընդգծելով, որ այդ իրավունքը կարող է պաշտպանել միայն ֆիզիկական անձի անձնական կամքը և չի կարող օգտագործվել իրավաբանական անձի կողմից՝ ընկերությանը պատկանող տեղեկություններ կամ փաստաթղթեր տրամադրելուց հրաժարվելու համար[3]: Հետագայում, 1911 թվականի Վիլսոնն ընդդեմ Միացյալ Նահանգների (*Wilson v. United States*[4]*)* և 1988 թվականի Բրեյսվելն ընդդեմ Միացյալ Նահանգների (*Braswell v. United States*[5]*)* գործերով Գերագույն դատարանը վճռեց, որ իրավաբանական անձի ներկայացուցիչը, նույնիսկ եթե հանդիսանում է ընկերության միակ բաժնետերը, տնօրենը և աշխատակիցը, չի կարող հրաժարվել ներկայացնելու ընկերությանը պատկանող փաստաթղթերը՝ հղում կատարելով ինքն իր դեմ չգործելու իրավունքին: Այսպիսով, ԱՄՆ նախադեպային իրավունքի և ԱՄՆ Սահմանադրության Հինգերորդ փոփոխության համաձայն՝ իրավաբանական անձն ինքն իր դեմ չվկայելու և ինքն իր դեմ չգործելու իրավունքի կրող չէ:

4. Իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքը ՀՀ քրեադատավարական համակարգում

4.1. Իրավունքի սահմանադրական և քրեադատավարական ամրագրումը

ՀՀ իրավական համակարգում ճանաչվել է ինչպես իր դեմ չվկայելու իրավունքը (accusare), այնպես էլ իր դեմ չգործելու իրավունքը (prodere), սակայն այս իրավունքները ճանաչվել են տարբեր հարթություններում: ՀՀ Սահմանադրությամբ

[1] **Beale, Sara Sun**. The Development and Evolution of the U.S. Law of Corporate Criminal Liability. Draft, December 2013. P. 3-8.

[2] Fifth Amendment to the Constitution of the United States of America, 1791. Privilege Against Self-Incrimination Clause // Constitution Annotated, Library of Congress. Washington, D.C., 2025.

[3] *Hale v. Henkel*, 201 U.S. 43 // United States Supreme Court. 1906. Paras. 66–75, 86.

[4] *Wilson v. United States*, 221 U.S. 361 // United States Supreme Court. 1911. Paras. 367–369, 382–386.

[5] *Braswell v. United States*, 487 U.S. 99 // United States Supreme Court. 1988. Paras. 101, 110, 115–118.

ուղղակիորեն ճանաչվել է միայն ինքն իր դեմ չվկայելու իրավունքը: ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածի համաձայն.

> «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ»:

Ինչ վերաբերում է իր դեմ չգործելու իրավունքին, ապա սահմանադրական հարթությունում այն էքսպլիցիտ չի ճանաչվել: Իր դեմ չգործելու իրավունքը դատարանների կողմից կարող է բխեցվել անմեղության կանխավարկածից (ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդված):

Ինչպես նշվեց, 1998 թ. ՀՀ ՔրԴՕ-ով և 2021 թ. ՀՀ ՔրԴՕ-ով ճանաչվել է անձի՝ ոչ միայն իր դեմ չվկայելու, այլ նաև իր դեմ չգործելու իրավունքը: Այսպես՝ ՀՀ ՔրԴՕ 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

> «Անձը, որին վարույթն իրականացնող մարմինն առաջարկում է հայտնել այնպիսի տեղեկություններ կամ տրամադրել այնպիսի նյութեր, որոնք հետագայում ողջամտորեն կարող են օգտագործվել կամ մեկնաբանվել ի վնաս իրեն, իր ամուսնու կամ մերձավոր ազգականի, իրավունք ունի հրաժարվելու նման տեղեկություններ հայտնելուց կամ նյութեր տրամադրելուց»:

Նյութեր տրամադրելուց հրաժարվելու իրավունքը չի տարածվում միայն ֆիզիկական անձանց կենսաբանական նմուշների վրա, քանի որ մեղադրյալի պարագայում նախատեսված է փորձաքննության համար նմուշներ հանձնելու պարտականություն (ՀՀ ՔրԴՕ 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ):

Մեղադրյալի կողմից նյութեր տրամադրելուց հրաժարվելը, որը դատավարական իրավունք է, չի կարող միաժամանակ որակվել որպես իրավախախտում և դրա համար չի կարող նախատեսվել իրավաբանական պատասխանատվություն, այդ թվում՝ դատավարական սանկցիա: Մինչդեռ, փորձաքննության համար կենսաբանական նմուշներ հանձնելը պարտականություն է, ուստի այն չկատարելը պետք է որակվի որպես իրավախախտում և առաջացնի իրավաբանական պատասխանատվություն: Ի դեպ, կենսաբանական նմուշներ հանձնելու պարտականությունը չկատարելու դեպքում օրենքով ուղղակիորեն նախատեսվել է ֆիզիկական հարկադրանք կիրառելու հնարավորություն (ՀՀ ՔրԴՕ 18-րդ հոդվածի 7-րդ մաս):

4.2. Իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքի ճանաչման նախադրյալները

ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածում ամրագրված՝ անձի ինքն իր դեմ չվկայելու (ցուցմունք չտալու) իրավունքն արդյոք կիրառելի է քրեական հետապնդման

ենթարկվող իրավաբանական անձանց նկատմամբ: ՀՀ իրավական համակարգում նախատեսված չէ որևէ նորմատիվ դրույթ, որն ուղղակիորեն (էքսպլիցիտ) կսահմանի, որ իրավաբանական անձն ունի ինքն իր դեմ չվկայելու (ցուցմունք տալուց հրաժարվելու) իրավունք կամ ցուցմունք տալու իրավունք: Սակայն ՀՀ օրենսդրությունում առկա են իրավաբանական անձին որպես ինքն իր դեմ չվկայելու իրավունքի կրող ճանաչելու անհրաժեշտ նախադրյալներ: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածի համաձայն.

> «Հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ»:

Մարդու այս կամ այն հիմնական իրավունքը իրավաբանական անձանց վրա տարածելու համար պետք է ցույց տալ, որ այդ իրավունքն իր էությամբ կիրառելի (վերագրելի) է իրավաբանական անձի նկատմամբ: Մարդու հիմնական իրավունքի կիրառելիությունը որոշելու համար առաջնային է այն հարցը, թե այդ իրավունքով պաշտպանվող բարիքը (արժեքը) արդյոք վերագրելի է իրավաբանական անձին, թե ոչ: Ինքն իր դեմ չվկայելու իրավունքով պաշտպանվող առանցքային և ինստիտուցիոնալ բարիքը դատաքննության արդարացիությունն է, որը վերագրելի է նաև իրավաբանական անձի նկատմամբ: Պատահական չէ, որ իրավաբանական անձը համարվում է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածում ամրագրված արդար դատաքննության իրավունքի կրող: Իսկ ինքն իր դեմ չվկայելու իրավունքը (ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդված) հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի հատուկ դրսևորումը, հետևաբար՝ իրավական բարիքի մակարդակում այս հիմնական իրավունքը լիովին կիրառելի է իրավաբանական անձի նկատմամբ:

Այս արժեքային հենքի վրա է կառուցված նաև քրեադատավարական օրենսդրության «գործառութային վերագրելիության» տրամաբանությունը, որի համաձայն՝ վարույթի ընթացքում իրավաբանական անձն օժտված է մեղադրյալի իրավունքներով և կրում է նրա պարտականություններն այնքանով, որքանով դրանք վերագրելի կարող են լինել իրավաբանական անձին (ՀՀ ՔրԴՕ 441-րդ հոդվածի 1-ին մաս): Իրավաբանական անձի օրինական ներկայացուցիչը, որի միջոցով կազմակերպությունը մասնակցում է վարույթին, ունի մեղադրյալի բոլոր իրավունքները և կրում է նրա պարտականություններն այնքանով, որքանով դրանք կարող են կիրառելի լինել իրավաբանական անձի նկատմամբ (ՀՀ ՔրԴՕ 442-րդ հոդվածի 6-րդ մաս):

«Գործառութային վերագրելիության» չափանիշի ուժով իրավաբանական անձը կարող է օժտվել միայն այն իրավունքներով, որոնք իրենց էությամբ կապված չեն ֆիզիկական անձին բնորոշ կենսաբանական-ֆիզիոլոգիական հատկանիշների

(մարմնական գոյության, ֆիզիկական ազատության կամ առողջական վիճակի) հետ: Այդ պատճառով իրավաբանական անձին վերագրելի չեն մեղադրյալի այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են, օրինակ, բժշկական զննության ենթարկվելու կամ ձերբակալման կամ կալանավորման վայրում պաշտպանի հետ տեսակցելու իրավունքները:

Ինքն իր դեմ չվկայելու իրավունքն իր բովանդակությամբ կենսաբանական կամ ֆիզիոլոգիական բնույթ չունի: Այս իրավունքի հիմքում ընկած չէ խոսելու ֆիզիկական-կենսաբանական ունակությունը, այլ այն վերաբերում է քրեական վարույթում տեղեկություն տրամադրելու կամ չտրամադրելու կամքին: Ցուցմունք տալը կամ լռելը դատաքննության արդարացիության բարիքի պաշտպանության իրավական գործիքներ են, որոնք լիովին վերագրելի են իրավաբանական անձին:

ՀՀ ՔրԴՕ-ում նախատեսված են նաև այլ նորմեր, որոնք ստեղծում են իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքի ճանաչման համար անհրաժեշտ նախադրյալներ: Խոսքը քննչական գործողությունների համակարգում առաջին անգամ նախատեսված «տեղեկատվության պահանջ» քննչական գործողության մասին է: Տեղեկատվության պահանջի (քննիչի գրավոր դիմումի) հիման վրա դրա հասցեատեր իրավաբանական անձը կազմում է նոր գրավոր տեքստ, ոչ թե ներկայացնում է օբյեկտիվորեն գոյություն ունեցող առարկաներ կամ փաստաթղթեր (ՀՀ ՔրԴՕ 232-րդ հոդվածի 1-ին մաս): ՀՀ ՔրԴՕ 232-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը պարունակում է դրույթ, որի համաձայն՝ իրավաբանական անձին հասցեագրված տեղեկատվության պահանջը պարտադիր չէ կատարման համար, եթե «անձը ենթադրում է, որ դա հետագայում ողջամտորեն կարող է օգտագործվել կամ մեկնաբանվել ի վնաս իրեն, իր ամուսնու կամ մերձավոր ազգականի»: Այս կանոնը վերաբերում է նաև քրեական հետապնդման ենթարկվող իրավաբանական անձին և թույլ է տալիս տեղեկատվության պահանջի հասցեատեր իրավաբանական անձին չվկայել ինքն իր դեմ, այսինքն՝ քննիչի դիմումի հիման վրա չկազմել գրավոր փաստաթղթեր, չպատասխանել քննիչի ներկայացրած գրավոր հարցերին, որոնք կարող են օգտագործվել կամ մեկնաբանվել ի վնաս կազմակերպության (այս մասին՝ հաջորդիվ):

Իրավաբանական անձին որպես իր դեմ չվկայելու իրավունքի կրող ճանաչելու սահմանադրական հաջորդ նախադրյալը օրենքի առջև ընդհանուր հավասարության սահմանադրական սկզբունքն է (ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդված): Այս սկզբունքի պահանջն է նույն դատավարական կարգավիճակ ունեցող անձանց (էականորեն հավասարների) նկատմամբ ցուցաբերել հավասար վերաբերմունք: Եթե քրեական հետապնդման ենթարկվող ֆիզիկական անձն օժտված է ինքն իր դեմ չվկայելու իրավունքով, ապա քրեական հետապնդման ենթարկվող իրավաբանական անձը ևս պետք է օժտված լինի ինքն իր դեմ չվկայելու իրավունքով (որպես արդար դատաքննության իրավունքի հատուկ դրսևորում):

Անդրադառնանք նաև իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքի ճանաչման հիմնական խոչընդոտին, որը գտնվում է բացառապես քրեադատավարական տիրույթում և ունի առավելապես իրավատեխնիկական բնույթ: Ինչպես արդեն նշվեց, ինքն իր դեմ չվկայելու իրավունքի մասին նորմը տեխնիկապես ամրագրվել է ՀՀ ՔրԴՕ 26-րդ հոդվածի 2-րդ մասում, որը վերաբերում է մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիության սկզբունքին: Այս հանգամանքը կարող է ունենալ մոլորեցնող ազդեցություն, քանի որ ինքն իր դեմ չվկայելու իրավունքը կարող է համարվել մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիության սկզբունքի հատուկ դրսևորում, իսկ մասնավոր և ընտանեկան կյանքը հիմնականում կիրառելի չէ իրավաբանական անձանց նկատմամբ:

Թեև այս հանգամանքը կարող է իրավակիրառողի մոտ ձևավորել այն կեղծ պատկերացումը, թե ինքն իր դեմ չվկայելու իրավունքը սահմանափակվում է բացառապես ֆիզիկական անձի մասնավոր կյանքի պաշտպանությամբ, այնուամենայնիվ, իրավունքի բովանդակությունը որոշվում է ոչ թե դրա տեխնիկական ամրագրման ձևով, այլ պաշտպանվող բարիքով: Ինչպես արդեն հիմնավորվեց, ինքն իր դեմ չվկայելու իրավունքով պաշտպանվող առանցքային և ինստիտուցիոնալ բարիքը դատաքննության արդարացիությունն է, որը կիրառելի է իրավաբանական անձի նկատմամբ: Ինքն իր դեմ չվկայելու իրավունքի ամրագրումը ՔրԴՕ 26-րդ հոդվածում համարվում է օրենսդրական տեխնիկայի անկատարություն և չի կարող նեղացնել դրա սահմանադրական բովանդակությունը:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածով երաշխավորված՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքն իր էությամբ վերագրելի է իրավաբանական անձանց, քանի որ այն պաշտպանում է վերջինիս՝ որպես քրեական հետապնդման ենթարկվող սուբյեկտի արդար դատաքննության շահը:

4.3. Իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու և ցուցմունք տալու իրավունքների իրականացման կառուցակարգերը

ՀՀ ՔրԴՕ 43-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է մեղադրյալի իրավունքը՝ «պահպանելու լռություն կամ տալ ցուցմունք, այդ թվում՝ պաշտպանի ներկայությամբ»: Իրավաբանական անձի՝ լռելու և ցուցմունք տալու իրավունքի գործնական իրացման հարցն անխզելիորեն կապված է իրավաբանական անձի էության վերաբերյալ տեսական պատկերացումների հետ: ՀՀ ՔրԴՕ 441-րդ, 442-րդ հոդվածների տրամաբանությունը, մեր պատկերացմամբ, հիմնված է Օտտո ֆոն Գիրկեի կողմից մշակված իրավաբանական անձանց օրգանական (Organic Theory / Real Entity Theory) տեսության վրա[1], որի համաձայն՝ իրավաբանական անձը ոչ թե

[1] **Gierke O**. Political Theories of the Middle Age / transl. with an introduction by F. W. Maitland. Cambridge: Cambridge University Press, 1900.

զուտ իրավական ֆիկցիա է (*persona ficta*), այլ իրական սոցիալական օրգանիզմ, որն ունի կոլեկտիվ (հավաքական) կամք: Իրավաբանական անձի օրինական ներկայացուցիչը (տնօրենը) հանդիսանում է իրավաբանական անձի «մարմինը» (օրգանը), այլ ոչ թե «փոխարինողը»: Համարվում է, որ օրինական ներկայացուցիչը, լինելով իրավաբանական անձի կառուցվածքային տարրը, իր գործողություններով ձևավորում և արտահայտում է իրավաբանական անձի հավաքական կամքը:

Մինչդեռ, Սավինյիի անվան հետ կապվող իրավական ֆիկցիայի տեսությունը (Fiction Theory)[1] իրավաբանական անձը համարում է զուտ օրենքով արհեստական ստեղծված «հորինվածք», որը չի կարող օժտվել կամքով: Այս պրիզմայով ցուցմունք տվող սուբյեկտը կդիտարկվեր բացառապես օրինական ներկայացուցիչը՝ որպես ընկերությունից անջատ ֆիզիկական անձ: Սակայն հայաստանյան օրենսդիրը կանխատեսել է այս վտանգը և ՀՀ ՔրԴՕ 442-րդ հոդվածի 7-րդ մասում ուղղակիորեն սահմանել, որ. «Իրավաբանական անձի օրինական ներկայացուցիչը սույն վարույթի ընթացքում չի կարող հարցաքննվել որպես վկա»:

Քանի որ օրգանական տեսության համատեքստում իրավաբանական անձն օժտված է հավաքական կամքով, հարցաքննության ժամանակ օրինական ներկայացուցչի ֆիզիկական խոսքը կամ լռությունը ոչ թե պարզապես անհատի վարքագիծ են, այլ հանդիսանում են հենց այդ իրավաբանական անձի դատավարական կամքի անմիջական արտահայտումը:

Իրավաբանական անձի և նրա մարմնի (օրինական ներկայացուցչի) անխզելի կապով ապահովվում է քրեական հետապնդման ենթարկվող իրավաբանական անձի արդար դատաքննության իրավունքը: Դրա շնորհիվ ընկերությունը կարողանում է արդյունավետորեն իրացնել ցուցմունք տալու կամ ինքն իր դեմ չվկայելու իրավունքը՝ ինքնուրույն ընտրելով իր պաշտպանական մարտավարությունը:

Թեև ընդդիմախոսները կարող են պնդել, որ քրեական հետապնդման ենթարկվող իրավաբանական անձը իր պաշտպանության նպատակով կարող է քննիչին տվյալներ փոխանցել «տեղեկատվության պահանջ» քննչական գործողության միջոցով, սակայն այդ գործիքի առկայությունն ամենևին չի բացառում ցուցմունք տալու անհրաժեշտությունը: Տեղեկատվության պահանջը կրավորական (պասիվ) գործընթաց է, որտեղ ընկերությունը միայն պատասխանում է քննիչի կողմից կանխորոշված հարցերին: Մինչդեռ ցուցմունք տալու իրավունքը հնարավորություն է տալիս իրավաբանական անձին չսահմանափակվել քննիչի տեսադաշտով, այլ նախաձեռնողաբար հերքել մեղադրանքը՝ ինքնուրույն որոշելով սեփական պաշտպանության մարտավարությունը: Ուստի, տեղեկատվության

[1] **Савиньи Ф.К**. фон. Система современного римского права. В 8 т. Т. II / Под ред. О. Кутателадзе, В. Зубаря. Пер. с нем. Г. Жигулина. - М.: Статут; Одесса: Центр исследования права им. Савиньи, 2012. - С. 131-205.

պահանջը, լինելով ապացույցների հավաքման միջոց, չի կարող փոխարինել հետապնդվող անձի հարցաքննությանը և նրա ցուցմունք տալու իրավունքին:

Հիմնվելով իրավաբանական անձի օրգանական տեսության և հարցաքննության դատավարական կարգը սահմանող ՀՀ ՔրԴՕ-ի նորմերի վրա՝ քրեական հետապնդման ենթարկվող իրավաբանական անձի հարցաքննության դատավարական ձևակերպումը պետք է արտացոլի հետևյալ սկզբունքային առանձնահատկությունները.

1) Մեղադրյալի ֆունկցիոնալ կարգավիճակի արձանագրումը. Քանի որ ՀՀ ՔրԴՕ 444-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպության նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվում «իրավաբանական անձին մեղադրանք ներկայացնելու մասին որոշմամբ», վարույթի այս սուբյեկտը ձեռք է բերում մեղադրյալի *ֆունկցիոնալ կարգավիճակ*: Հաշվի առնելով, որ օրենքով որպես ապացույցի տեսակ ճանաչվում է միայն «մեղադրյալի ցուցմունքը», քննչական գործողությունը պետք է ձևակերպվի օրենքով նախատեսված «Մեղադրյալի հարցաքննության արձանագրություն» պաշտոնական ձևաթղթով: Սակայն դրանում, որպես հետապնդվող անձ, պետք է ուղղակիորեն նշվի իրավաբանական անձը, այլ ոչ թե նրա ներկայացուցիչը:

2) Իրավաբանական անձի և նրա մարմնի միասնական արձանագրումը. Արձանագրության ներածական մասում պետք է արտացոլվի իրավաբանական անձի և նրա օրինական ներկայացուցչի գործառութային միասնությունը: Այսինքն՝ որպես հարցաքննվող սուբյեկտ նշվում է իրավաբանական անձը՝ ի դեմս իր օրինական ներկայացուցչի (օրինակ՝ *«Հարցաքննվում է քրեական հետապնդման ենթարկվող «Х» ՍՊ ընկերությունը, ի դեմս օրինական ներկայացուցիչ (տնօրեն) Ա. Ա.-ի»*):

3) Կորպորատիվ կամքի առաջին դեմքով շարադրումը. Արձանագրության բովանդակային մասում դիրքորոշումը շարադրվում է առաջին դեմքով, ինչն ընդգծում է, որ ներկայացուցիչը հանդես է գալիս ոչ թե որպես ինքնուրույն վկա, այլ որպես ընկերության «ձայնը»: Իր դեմ չվկայելու իրավունքի իրացումը ձևակերպվում է հետևյալ կերպ.

> «Որպես հետապնդվող «Х» ՍՊ ընկերության օրինական ներկայացուցիչ՝ հայտնում եմ, որ ընկերությունն իրեն առաջադրված մեղադրանքում մեղավոր չի ճանաչում և, օգտվելով ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածով երաշխավորված իրավունքից, հրաժարվում է ցուցմունք տալուց»:

Այսպիսով, դատավարական տեխնիկայի և օրենսդրական կարգավորումների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ ցուցմունք տվող (կամ լռող) սուբյեկտը իրավաբանական անձն է, որն այդ գործողությունը գործառութային առումով իրականացնում է իր մարմնի (օրինական ներկայացուցչի) միջոցով:

4.4. Ինքն իր դեմ չվկայելու իրավունքից հրաժարվելը և խոստովանական ցուցմունք տալը

Իրավաբանական անձի ցուցմունք տալը նրա պաշտպանության միջոցներից մեկն է: Սակայն ցուցմունքը կարող է լինել նաև խոստովանական (մեղադրական): Կարո՞ղ է արդյոք իրավաբանական անձը հրաժարվել իր դեմ չվկայելու իրավունքից և տալ ցուցմունք, այդ թվում՝ խոստովանական: Այս հարցին պատասխանելու համար նախ պետք է պարզել, թե իր դեմ չվկայելու իրավունքից հրաժարվելը և խոստովանական ցուցմունք տալը արդյոք չի համարվի իրավաբանական շահերին վնասող գործողություն, թե այն որոշ դեպքերում կարող է բխել իրավաբանական անձի շահերից, այնուհետև՝ քննարկել իրավաբանական անձի կողմից ինքն իր դեմ չվկայելու իրավունքից հրաժարվելու և խոստովանական ցուցմունք տալու իրավաչափության պայմանների հարցը:

4.4.1. Իրավաբանական անձի կողմից խոստովանական ցուցմունք տալու դատավարական հնարավորությունը

ՀՀ ՔրԴՕ 43-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը նախատեսում է մեղադրյալի իրավունքը՝ հայտարարելու իր մեղավորության կամ անմեղության մասին: Ընդհանուր առմամբ մեղադրանքն ընդունելու մասին հայտարարելու իրավունքը վերագրելի է իրավաբանական անձին, քանի որ այն կարող է իրականացվել ներկայացուցչի միջոցով՝ խոստովանական ցուցմունք տալու կառուցակարգով:

Խոստովանական ցուցմունքն իրավաբանական անձի համար ինքնամեղադրման գործողություն է, այն կարող է ի վերջո հանգեցնել բացասական քրեաիրավական այնպիսի հետևանքների, որոնք կանխորոշում են կազմակերպության ճակատագիրը: Մասնավորապես, ՀՀ ՔրՕ 126-րդ հոդվածում նախատեսված է, որ իրավաբանական անձի նկատմամբ կարող են կիրառվել քրեաիրավական ներգործության այնպիսի միջոցներ, ինչպիսիք են՝ գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը, հարկադիր լուծարումը, ՀՀ տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը: Այս համատեքստում խոստովանական ցուցմունք տալու հարցը կազմակերպության համար ունի ռազմավարական նշանակություն:

Իրավաբանական անձի խոստովանական ցուցմունքը թեև կազմակերպության համար կարող է առաջացնել ճակատագրական հետևանքներ, սակայն այն կարող է թույլատրելի համարվել, եթե դրանով կարող են մեղմվել իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական և քրեադատավարական բացասական հետևանքները: Օրինակ՝ ՀՀ ՔրՕ 125-րդ հոդվածը նախատեսում է, որ իրավաբանական անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե վերացրել է հանցանքի կատարմանը նպաստող պատճառները և պայմանները, հատուցել է պատճառած վնասը և հարթել է ենթադրյալ հանցագործության այլ հետևանքները, վերադարձրել է հանցանքի կատարման արդյունքում ձեռք բերված

գույքը, այդ թվում՝ ստացված եկամուտը: Խոստովանական ցուցմունքը կարող է դիտարկվել որպես այդ պայմանների կատարման ուղղությամբ ձեռնարկված քայլ, ինչը կարող է համարվել պատասխանատվությունից ազատելու հիմք:

ՀՀ ՔրՕ 127-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձի նկատմամբ նշանակվող քրեաիրավական ներգործության միջոցի տեսակն ու չափը որոշելիս հաշվի են առնվում հանցագործությանը նպաստող պատճառներն ու պայմանները, հանցագործության հետևանքների չեզոքացմանն ուղղված իրավաբանական անձի ձեռնարկած միջոցները և այլն: Քրեական վարույթի հանրային մասնակիցների հետ համագործակցությունը և խոստովանական ցուցմունք տալը կարող է հանգեցնել ավելի մեղմ պատժամիջոցների (տուգանքի) կիրառմանը (ՀՀ ՔրՕ 128-րդ հոդված), ինչպես նաև իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող ապահովման առավել մեղմ միջոցների կիրառմանը (ՀՀ ՔրԴՕ 445-րդ հոդված): Նման դեպքերում խոստովանական ցուցմունքը չի համարվի իրավաբանական անձի շահերին հակասող գործողություն:

Այսպիսով, խոստովանական ցուցմունք տալը որոշ դեպքերում կարող է մեղմել քրեաիրավական և քրեադատավարական բացասական հետևանքները, որի պարագայում նման խոստովանական ցուցմունք տալու որոշումը կարող է համարվել թույլատրելի:

4.4.2. Հրաժարման իրավաչափության պայմանները իրավաբանական անձի համար

4.4.2.1. Իրավունքից հրաժարվելու որոշման կայացման կարգը

Ի տարբերություն իրավաբանական անձի՝ ընթացիկ կառավարման հարցերի, ինքն իր դեմ չվկայելու իրավունքից հրաժարվելու և խոստովանական ցուցմունք տալու մասին որոշումը, որը կազմակերպության համար կարող է առաջացնել ճակատագրական հետևանքներ, չի կարող կայացվել մեկ կառավարչի (օրինական ներկայացուցչի) կողմից, նույնիսկ եթե ընդունված է համարել, որ այդ կառավարիչը ձևավորում և արտահայտում է իրավաբանական անձի հավաքական կամքը: Այդ որոշումը պետք է արտացոլի իրավաբանական անձի էքսպլիցիտ հավաքական կամքը, այսինքն՝ այս որոշումը պետք է կայացվի ոչ թե իրավաբանական անձի ենթադրյալ կորպորատիվ կամքի, այլ տվյալ հարցով իրավաբանական անձի պոզիտիվ կամքի հիման վրա:

Նման մոտեցումը լիովին համահունչ է կորպորատիվ իրավունքի ընդհանուր տրամաբանությանը: Այսպես՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված է, որ ընկերության զուտ ակտիվների արժեքի 25 տոկոսից ավելին կազմող խոշոր գործարքները չեն կարող կայացվել միանձնյա գործադիր մարմնի կողմից և պահանջում են մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումը: Թեև քրեական դատավարությունը, հանդիսանալով հանրային իրավունքի տիրույթ, չի նախատեսում

ցուցմունք տալու կամ մեղադրանքն ընդունելու համար կորպորատիվ ընթացակարգերի (ժողովների) կիրառման իմպերատիվ պահանջ, այնուամենայնիվ, այս երկու ինստիտուտների միջև առկա է ակնհայտ տրամաբանական զուգահեռ: Եթե օրենսդրությամբ ընկերության զուտ ակտիվների 25 տոկոսից ավելիի տնօրինումը դիտարկվում է որպես ընթացիկ կառավարման շրջանակներից դուրս եկող գործողություն և տնօրենին արգելում է այն կատարել միանձնյա, ապա ընկերության գործունեության շարունակականությունը վտանգող՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքից հրաժարվելու և խոստովանական ցուցմունք տալու որոշումը առավել ևս պետք է արտացոլի ընկերության էքսպլիցիտ հավաքական կամքը:

Այսպիսով՝ իրավաբանական անձի համար կենսական ռիսկեր պարունակող քայլերը չեն կարող հիմնվել ներկայացուցչի կողմից արտահայտվող ենթադրյալ կամքի վրա, այլ պահանջում են մասնակիցների անմիջական (ուղղակի) կամարտահայտություն:

Գործնականում իրավաբանական անձի՝ իր դեմ չվկայելու իրավունքից հրաժարվելու և խոստովանական ցուցմունք տալու մասնակիցների բացահայտ հավաքական կամքը պետք է դրսևորվի օրինական ներկայացուցչին ռազմավարական մանդատի (սահմանաչափերի) տրամադրմամբ: Ընդհանուր ժողովը, հիմնվելով ներքին կամ արտաքին իրավական գնահատականների վրա, իրավասու է սահմանել այն իրավական և ֆինանսական սահմանները, որոնց շրջանակներում ներկայացուցչին թույլատրվում է արտահայտել ընկերության դիրքորոշումը:

Մասնակիցների այդ որոշումը չպետք է պարունակի ցուցմունքի կոնկրետ տեքստային ծավալի կամ բովանդակության անմիջական ձևակերպումներ: Մյուս կողմից՝ նման լիազորությունը չի կարող կրել վերացական կամ անորոշ բնույթ: Այն պետք է սահմանի իրավունքից հրաժարվելու հստակ և չափելի սահմաններ, որպեսզի օրինական ներկայացուցիչը դուրս չգա ընկերության կողմից գծված շրջանակներից:

Այդ ռազմավարական մանդատը կարող է ներառել ՀՀ ՔրՕ-ի կոնկրետ հոդվածների կամ ընկերության համար թույլատրելի նյութական վնասի առավելագույն շեմերի հստակեցում, ինչն ապահովում է կազմակերպության հետագա գոյության պահպանումը: Լիազորության որոշակիությունն այն հիմնարար նախապայմանն է, որով կանխորոշվում է իրավաբանական անձի կողմից իրավունքից հրաժարվելու քայլի լիարժեք գիտակցվածությունն ու իրազեկվածությունը:

4.4.2.2. Իրավունքից հրաժարվելու իրավաչափության պայմանները

ՄԻԵԴ-ի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության երաշխիքներից, այդ թվում՝ լռություն պահպանելու իրավունքից հրաժարվելու իրավաչափությունը գնահատվում է մի շարք կումուլյատիվ չափանիշների լույսի ներքո:

Նախ՝ իրավունքից հրաժարումը պետք է արտահայտվի միանշանակ և հստակ եղանակով (unequivocal manner)՝ զուրկ լինելով որևէ երկիմաստությունից (*Dvorski v. Croatia* [GC], 2015, §§ 100–102):

Երկրորդ՝ այն պետք է ուղեկցվի դրա կարևորությանը համաչափ նվազագույն ընթացակարգային երաշխիքներով (*Simeonovi v. Bulgaria* [GC], 2017, § 115):

Երրորդ՝ հրաժարումը պետք է կրի բացառապես կամավոր բնույթ (voluntary), ինչը բացառում է վարույթն իրականացնող մարմինների կողմից ցանկացած թաքնված կամ ուղղակի ճնշում կամ խաբեություն (*Pishchalnikov v. Russia*, 2009, § 77):

Չորրորդ՝ անձը պետք է կատարի իրազեկված ընտրություն (knowing and intelligent relinquishment), ինչը ենթադրում է, որ նա նախապես տեղեկացված է եղել իր իրավունքների էության և դրանցից հրաժարվելու դատավարական հետևանքների մասին, իսկ այդ հետևանքները պետք է լինեն ողջամտորեն կանխատեսելի (*Ibrahim and Others v. the United Kingdom* [GC], 2016, § 272):

Վերջապես՝ իրավունքից հրաժարումը ոչ մի պարագայում չպետք է հակասի որևէ կարևոր հանրային շահի (*Håkansson and Sturesson v. Sweden*, 21 February 1990, § 66; *Sejdovic v. Italy* [GC], 2006, § 86)[1]:

Իրավաբանական անձի պարագայում ՄԻԵԴ-ի այս չափանիշները ստանում են նոր բովանդակություն: Մասնավորապես՝ «գիտակցված և կամավոր հրաժարման» (*knowing and intelligent waiver*) պահանջը պետք է դիտարկվի կազմակերպության կառուցվածքի և հավաքական կամքի ձևավորման առանձնահատկությունների համատեքստում: Ֆիզիկական անձանց համար մշակված սկզբունքների կիրառումը իրավաբանական անձի նկատմամբ թույլ է տալիս առանձնացնել հետևյալ պայմանները.

1) Իրազեկվածության և գիտակցվածության ապահովումը (informed/knowing and intelligent choice). Իրավաբանական անձի կողմից իրավունքից հրաժարումը իրավաչափ ճանաչելու առաջնային նախապայմանն այդ քայլի լիարժեք տեղեկացվածությունն ու դրա հետևանքների ընկալումն է: Անհրաժեշտ է, որ կազմակերպության մասնակիցները նախապես և ամբողջական տեղեկացված լինեն՝

- ինքն իր դեմ չվկայելու իրավունքի գոյության և էության մասին,
- ինքն իր դեմ վկայություն չտալու իրավունքից հրաժարվելու դատավարական հետևանքների մասին,
- խոստովանական ցուցմունքի հնարավոր իրավական, ինչպես նաև ֆինանսական հետևանքների և գործարար համբավի վրա ազդեցության մասին:

[1] European Court of Human Rights. Waiver of the Guarantees of a Fair Trial (Article 6, criminal limb) // ECHR Knowledge Sharing Platform. Strasbourg, 2026. P. 1.

Մասնակիցները պետք է հնարավորություն ունենան ողջամտորեն կանխատեսելու իրենց որոշման պատճառահետևանքային կապը (տե՛ս, *mutatis mutandis*, *Ibrahim and Others v. the United Kingdom* [GC], 2016, § 272):

Ի տարբերություն ֆիզիկական անձի հոգեկան-գիտակցական ընկալման՝ իրավաբանական անձի դեպքում իրազեկվածությունն ու գիտակցվածությունը ձեռք են բերվում որոշման կայացման ինստիտուցիոնալ կառուցակարգի միջոցով, որը ներառում է իրավական, ֆինանսական և գործառնական ռիսկերի անկախ գնահատում (ներքին կամ արտաքին աուդիտ) և ընկերության երկարաժամկետ շահերի համակողմանի հաշվարկ:

2) Կամավորության ապահովումը (voluntary). Հրաժարումը պետք է զերծ լինի արտաքին ճնշումից, հարկադրանքից կամ խաբեությունից (տե՛ս, *mutatis mutandis*, *Pishchalnikov v. Russia*, 2009, § 77): Իրավաբանական անձի դեպքում կամավորությունը նշանակում է, որ.

- որոշումը կայացվում է առանց վարույթն իրականացնող մարմնի կողմից ճնշում առաջացնող անհամաչափ հարկադրանքի կամ խաբեության,
- որոշումը կայացվում է առանց ներքին կառավարման մարմինների կամ այլ շահագրգիռ անձանց կողմից ազդեցության չարաշահման, հարկադրանքի կամ խաբեության,
- որոշումը կայացվում է ընկերության ինքնավար կամարտահայտման արդյունքում, որտեղ մասնակիցների ընտրության ազատությունը կաշկանդված չէ ներքին շահերի բախմամբ կամ առանձին անձանց սուբյեկտիվ նպատակների գերակայությամբ:

3) Միանշանակության ապահովումը (unequivocal manner). Հրաժարումը պետք է լինի հստակ և զուրկ որևէ երկիմաստությունից (տե՛ս, *mutatis mutandis*, *Dvorski v. Croatia* [GC], 2015, §§ 100–102): Իրավաբանական անձի պարագայում դա ենթադրում է, որ.

- իրավունքից հրաժարվելու դիրքորոշումը պետք է ուղղակիորեն արտահայտված լինի մասնակիցների ընդհանուր ժողովի որոշման մեջ,
- այդ որոշումը պետք է պարունակի հստակ դրույթներ՝ օրինական ներկայացուցչին տրամադրվող ռազմավարական մանդատի և դրա սահմանների վերաբերյալ,
- իրավաբանական անձի կողմից իրավունքից հրաժարվելը չի կարող ենթադրվել կազմակերպության կամ նրա մասնակիցների պասիվ վարքագծից, լռությունից կամ անգործությունից[1]:

[1] **Гамбарян А.С**. Отказ от субъективного права молчанием (tacit waiver) // Теория и практика общественного развития. 2018. № 4. - С. 67–71; **Гамбарян А.С.** Отказ от процессуальных субъективных прав молчанием // Трансформация и цифровизация правового регулирования общественных отношений в современных реалиях и условиях пандемии: Коллективная монография / Под ред. И. В.

4) Նվազագույն ընթացակարգային երաշխիքների ապահովումը (minimum safeguards). Հրաժարումը պետք է ուղեկցվի դրա կարևորությանը համաչափ երաշխիքներով (տե՛ս, *mutatis mutandis*, *Simeonovi v. Bulgaria* [GC], 2017, § 115): Իրավաբանական անձի դեպքում դրանք ներառում են.

- մասնակիցների՝ տնօրենից կամ կառավարման մարմիններից անկախ փաստաբանի հետ խորհրդակցելու իրական հնարավորությունը,
- որոշման իրավական ու ֆինանսական ռիսկերը գնահատելու համար բավարար ժամանակի տրամադրումը, որը ողջամտության սահմաններում պետք է համադրելի լինի քրեադատավարական ժամկետների և դատավարական հարկադրանքի միջոցների օպերատիվության հետ,
- որոշման կայացման օրենսդրական և կանոնադրական ընթացակարգերի պահպանումը, ներառյալ՝ ընդհանուր ժողովի պատշաճ գումարումը, քվորումը և քվեարկության արդյունքները:

Հարկ է ընդգծել, որ իրավաբանական անձի կողմից ինքն իր դեմ չվկայելու իրավունքից հրաժարվելը չի կարող դիտարկվել որպես դատավարական իրավունքից պարզապես պասիվ հրաժարում: Այն իրենից ներկայացնում է դատավարական յուրօրինակ երկվություն (դուալիզմ). հրաժարվելով ինքն իր դեմ չվկայելու իրավունքն իրականացնելուց՝ իրավաբանական անձն իրականում ակտիվորեն իրականացնում է մեկ այլ իրավունք՝ ցուցմունք տալու և դիրքորոշումը ներկայացնելու իրավունքը: Ստացվում է, որ մեկ իրավունքի իրականացումից հրաժարվելը միաժամանակ հանդիսանում է մեկ այլ իրավունքի իրականացման անհրաժեշտ ձև: Ուստի, ինքն իր դեմ չվկայելու իրավունքից հրաժարվելու վերը շարադրված իրավաչափության պայմանների (իրազեկվածության, կամավորության, միանշանակության և ընթացակարգային երաշխիքների) ցանկացած խախտում խաթարում է ցուցմունք տալու իրավունքի իրականացման օրինականությունը: Նման պայմաններում տրված խոստովանական ցուցմունքը կարող է ճանաչվել անթույլատրելի ապացույց[1]:

4.4.2.3. Օրինական ներկայացուցչի շահերի հակասության դեպքում իրավունքից հրաժարվելու իրավական հետևանքները

Ինչպես կենսաբանական իմունային համակարգը երբեմն սկսում է հարձակվել սեփական օրգանիզմի դեմ (աուտոիմուն հիվանդություն), այնպես էլ իրավունքում

Воронцовой. – Казань: Отечество, 2020. - С. 270–277; **Гамбарян А.С.** Правовые режимы молчания и фиктивных выводов, вытекающих из него // Журнал российского права. 2019. № 12. - С. 19–29; **Гамбарян А.С.** Молчание и молчаливое согласие в публичном праве Армении: правовая фикция, презумпция или субституция? // Вестник Санкт-Петербургского университета. Право. 2021. Т. 12. № 3. - С. 728–751, **Гамбарян А.С., Айрапетян Ю.В.** Признание вины и иска молчанием в уголовном и гражданском процессах // Вестник Пермского университета. Юридические науки. 2021. Вып. 54. - С. 754–765.

[1] **Гамбарян А.С.** Отказ от права и вопросы уголовно-процессуального вмешательства: Монография. - М.: Юрлитинформ, 2018.

օրինական ներկայացուցիչը (տնօրենը) կարող է գործել ընդդեմ կազմակերպության: Եթե տնօրենը հրաժարվում է իրավաբանական անձի՝ իր դեմ չվկայելու իրավունքից առանց մասնակիցների ուղղակի կամարտահայտության, ապա դա վկայում է ներկայացուցչի և իրավաբանական անձի շահերի բախման (պոտենցիալ հակասության) մասին:

Կորպորատիվ իրավունքում տնօրեններին սովորաբար տրամադրվում է ընկերությունը կառավարելու լայն հայեցողություն, սակայն պայմանով, որ նրանք հավատարիմ մնան ընկերության և դրա մասնակիցների հանդեպ իրենց ֆիդուցիար պարտականություններին: Այդ շրջանակը ներառում է հոգատարության պարտականությունը (Duty of Care), հավատարմության պարտականությունը (Duty of Loyalty), ինչպես նաև դրա օժանդակ բաղադրիչը՝ բարեխղճության պարտականությունը (Duty of Good Faith)[1]:

Այս ընդհանուր սկզբունքն արտացոլված է նաև քրեական դատավարությունում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ օրինական ներկայացուցիչն իրավունք չունի կատարելու մեղադրյալի շահերին վնասող որևէ գործողություն: Նույն տրամաբանությունն է դրված նաև Օրենսգրքի 442-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքում, որն արգելում է իրավաբանական անձի ներկայացուցիչ ճանաչել այն անձին, որի ենթադրյալ արարքի պատճառով հարուցվել է տվյալ քրեական հետապնդումը:

Չնայած այս իրավական արգելքներին՝ տնօրենը, նույնիսկ անձամբ կապ չունենալով ենթադրյալ հանցանքի հետ, գործնականում կարող է խախտել իր ֆիդուցիար պարտականությունները և կատարել իրավաբանական անձի շահերին հակասող հետևյալ քայլերը՝

1) տալ խոստովանական ցուցմունք՝ առանց մասնակիցների ընդհանուր ժողովի համապատասխան որոշման.

2) դուրս գալ մասնակիցների կողմից տրամադրված ռազմավարական մանդատի սահմաններից.

3) ընդունել իրավաբանական անձի շահերին վնասող դատավարական այլ դիրքորոշում:

Երբ տնօրենը խախտում է իր ֆիդուցիար պարտականությունները, նա իրավականորեն դադարում է գործել որպես կազմակերպության մարմին (օրգան): Այդ պահից սկսած՝ նա հանդես է գալիս որպես սեփական լիազորությունները չարաշահած ֆիզիկական անձ, ում վարքագիծն այլևս վերագրելի չէ իրավաբանական անձի հավաքական կամքին: Ինչպես աուտոիմուն հիվանդության դեպքում օրգանիզմը փորձում է «չեզոքացնել» իր դեմ ուղղված բջիջները, այնպես էլ

[1] **Koehler M.** Foreign Corrupt Practices Act Ripples // American University Business Law Review. 2014. Vol. 3, № 3. P. 333.

իրավական համակարգը «հեռացնում» է այն անձին, ով այլևս չի ներկայացնում կազմակերպության շահերը:

Այս տեսական հենքի վրա է կառուցված ՀՀ ՔրԴՕ 69-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 442-րդ հոդվածի 5-րդ մասը, որոնց համաձայն՝ օրինական ներկայացուցիչը չի կարող մասնակցել վարույթին, եթե իր վարքագծով ակնհայտորեն վնասում է ներկայացվողի շահերին: Եթե ներկայացուցիչը, չնայած իր պաշտոնական կարգավիճակին, փաստացի զբաղեցնում է կազմակերպության շահերին վնասող դատավարական դիրքորոշում, ապա նման վարքագիծն ինքնին բացառում է վարույթին նրա հետագա մասնակցությունը:

Ուստի, իրավաբանական անձի կողմից իր դեմ չվկայելու իրավունքից հրաժարվելը, որը կատարվել է վերը նշված պայմանների խախտմամբ, հանգեցնում է հետևյալ իրավական հետևանքներին՝

1) ապացույցի անթույլատրելիություն. առանց մասնակիցների բացահայտ կոլեկտիվ կամքի տրված խոստովանական ցուցմունքը պետք է ճանաչվի անթույլատրելի ապացույց,

2) ներկայացուցչի հեռացում վարույթից. իրավաբանական անձի՝ իր դեմ չվկայելու իրավունքից ոչ իրավաչափորեն հրաժարված օրինական ներկայացուցիչը ենթակա է վարույթից անհապաղ հեռացման՝ վերը նշված դատավարական հիմքերով:

4.5. ՀՀ ՔրԴՕ 232-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի կիրառելիությունը իրավաբանական անձի նկատմամբ

Ինչպես նշվեց, տեղեկատվության պահանջը քննիչի գրավոր դիմումն է վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկությունների տիրապետող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական անձին կամ ցանկացած այլ կազմակերպությանը (ՀՀ ՔրԴՕ 232-րդ հոդվածի 1-ին մաս): Տեղեկատվության պահանջի հասցեատերերն են բացառապես պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձը կամ ցանկացած այլ կազմակերպությունը, ոչ թե ֆիզիկական անձը:

Հայցվող տեղեկությունը քննիչի սահմանած ժամկետում տրամադրվում է տեղեկանքի ձևով, որը, որպես հավելված, կցվում է տեղեկատվության պահանջի արձանագրությանը (ՀՀ ՔրԴՕ 232-րդ հոդվածի 5-րդ մաս), ինչը վկայում է այն մասին, որ այս քննչական գործողությամբ ձեռք են բերվում ոչ թե օբյեկտիվորեն գոյություն ունեցող նյութեր, այլ, ի պատասխան քննիչի պահանջի, գեներացվում է նոր տեղեկություն: Ուստի այս քննչական գործողությունը միջամտում է ոչ թե ինքն իր դեմ չգործելու իրավունքին (*prodere*-ին), այլ ինքն իր դեմ չվկայելու իրավունքին (*accusare*-ին):

ՀՀ ՔրԴՕ 232-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ տեղեկատվության պահանջը պարտադիր չէ հասցեատիրոջ համար, եթե՝

> «անձը ենթադրում է, որ դա հետագայում ողջամտորեն կարող է օգտագործվել կամ մեկնաբանվել ի վնաս իրեն, իր ամուսնու կամ մերձավոր ազգականի»:

Եթե ՀՀ ՔրԴՕ 232-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի տեքստում օգտագործվող «իրեն», «ամուսին» և «մերձավոր ազգական» ստորակետով (առանց շաղկապի) կատարված թվարկմանը տրվի տառացի նշանակություն, ապա կարող է ստեղծվել այնպիսի տպավորություն, որ այս նորմը հասցեագրված է բացառապես ֆիզիկական անձին: Սակայն նման մոտեցումն ընդունելի չէ:

ՀՀ ՔրԴՕ 232-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում սահմանվում են երեք ինքնուրույն պայմաններ, որոնցից յուրաքանչյուրի առկայության դեպքում անձը կարող է օգտվել ինքն իր դեմ չվկայելու իրավունքից: Այս երեք պայմաններն են.

1) անձը ենթադրում է, որ տեղեկատվությունը կարող է օգտագործվել կամ մեկնաբանվել ի վնաս իրեն.

2) անձը ենթադրում է, որ տեղեկատվությունը կարող է օգտագործվել կամ մեկնաբանվել ի վնաս իր ամուսնու.

3) անձը ենթադրում է, որ տեղեկատվությունը կարող է օգտագործվել կամ մեկնաբանվել ի վնաս իր մերձավոր ազգականի:

Թեև այս պայմանները թվարկված են մեկ նախադասության մեջ և առանձնացված են ստորակետերով, դրանք չի կարելի համարել քննարկվող իրավունքի ծագման համար անհրաժեշտ համակցված (կումուլյատիվ) պայմաններ: Հիշյալ նորմը սահմանում է երեք ինքնուրույն, միմյանցից անկախ պայմաններ: Դրանցից առաջինը՝ տեղեկատվության՝ «ի վնաս իրեն» օգտագործվելու ողջամիտ ենթադրությունն է, որն ունի ինքնուրույն իրավական նշանակություն և կախվածության մեջ չէ ամուսնու կամ մերձավոր ազգականի առկայությունից: Այլ կերպ ասած՝ անձը կարող է օգտվել իրավունքից, եթե տեղեկատվությունը կարող է օգտագործվել կամ մեկնաբանվել ի վնաս իրեն, նույնիսկ եթե նա չունի կամ չի կարող ունենալ ամուսին կամ մերձավոր ազգական:

«Իր դեմ» պայմանը, լինելով ինքնավար, կիրառելի է ցանկացած սուբյեկտի, այդ թվում՝ իրավաբանական անձի նկատմամբ: Ուստի, իրավաբանական անձը, որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, լիովին իրավասու է օգտվել ՀՀ ՔրԴՕ 232-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված երաշխիքից, եթե տրամադրվող տեղեկատվությունը կարող է օգտագործվել հենց իր՝ կազմակերպության դեմ:

Եթե տեղեկատվության պահանջը հասցեագրվում է միայն կազմակերպությանը, ապա արդյոք դա բացառում է, որ ՀՀ ՔրԴՕ 232-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում ամրագրված իրավունքը կարող է կիրառվել նաև ֆիզիկական անձի նկատմամբ:

Պատասխանը կախված է նրանից, թե տեղեկատվությունը որ անձի վերաբերյալ նախաձեռնված քրեական վարույթով է պահանջվել: Հաշվի առնելով, որ իրավաբանական անձի վերաբերյալ քրեական վարույթը (ՀՀ ՔրԴՕ 438-րդ հոդված) կարող է նախաձեռնվել միայն այն դեպքում, երբ առկա է օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ (ֆիզիկական անձի նկատմամբ) կամ ոչ ռեաբիլիտացնող հիմքով որոշում, ինչպես նաև հաշվի առնելով, որ իրավաբանական անձի օրինական ներկայացուցիչ չի կարող ճանաչվել այն անձը, որի կատարած հանցանքի համար քրեական հետապնդում է հարուցվել իրավաբանական անձի նկատմամբ (ՀՀ ՔրԴՕ 442-րդ հոդվածի 4-րդ մաս), առաջանում են հետևյալ երկու իրավիճակները.

Իրավիճակ 1. Քրեական վարույթը նախաձեռնվել է կազմակերպության տնօրենի գործողությունների վերաբերյալ (ֆիզիկական անձի նկատմամբ)

Եթե քրեական վարույթը նախաձեռնվել է (քրեական հետապնդումը հարուցվել է) իրավաբանական անձի տնօրենի (որպես ֆիզիկական անձի) գործողությունների վերաբերյալ, ապա այս դեպքում տնօրենը, ստանալով կազմակերպությանը հասցեագրված տեղեկատվության պահանջ, կարող է օգտվել ինքն իր դեմ չվկայելու իրավունքից: Թեև նա քաղաքացիաիրավական իմաստով հանդիսանում է իրավաբանական անձի ներկայացուցիչը, սակայն, իր անձնական շահերը պաշտպանելու նպատակով, իրավունք ունի հրաժարվել տեղեկություններ տրամադրելուց, եթե ողջամտորեն ենթադրում է, որ դրանք հետագայում կարող են օգտագործվել ի վնաս իրեն, իր ամուսնու կամ մերձավոր ազգականի: Այս դեպքում ինքն իր դեմ չվկայելու իրավունքի կրողը ֆիզիկական անձն է:

Իրավիճակ 2. Քրեական վարույթը նախաձեռնվել է իրավաբանական անձի վերաբերյալ

Եթե քրեական վարույթն արդեն իսկ նախաձեռնվել է հենց իրավաբանական անձի վերաբերյալ (ՀՀ ՔրԴՕ 438-րդ հոդվածի հիմքով), ապա կազմակերպության նոր տնօրենը (կամ օրինական ներկայացուցիչը), ստանալով տեղեկատվության պահանջը, կարող է հիմնվել ՀՀ ՔրԴՕ 232-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի վրա և մերժել տեղեկությունների տրամադրումը, եթե դրանք կարող են օգտագործվել կամ մեկնաբանվել իրավաբանական անձի դեմ: Այս իրավիճակում իր դեմ չվկայելու իրավունքի կրողը հենց իրավաբանական անձն է, իսկ օրինական ներկայացուցիչը հանդես է գալիս ոչ թե որպես ինքնուրույն վկա, այլ որպես ընկերության կամքն արտահայտող ինստիտուցիոնալ «մարմին»:

Այսպիսով, ՀՀ ՔրԴՕ 232-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը կիրառելի է թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձանց նկատմամբ՝ կախված տվյալ պահին իրականացվող քրեական վարույթի բնույթից և շոշափվող իրավական շահերից:

5. Եզրակացություններ

1) Թեև պատմականորեն ինքն իր դեմ չվկայելու իրավունքը ձևավորվել է որպես խոշտանգումների դեմ պայքարի և մարդու ներաշխարհի անձեռնմխելիության երաշխիք, սակայն ինքն իր դեմ չվկայելու իրավունքով պաշտպանվող առանցքային և ինստիտուցիոնալ բարիքը դատաքննության արդարացիությունն է. պետությունը պետք է կրի ապացուցման բեռը՝ առանց մեղադրյալին ստիպելու զինել իր դեմ փաստարկներով: Այս տեսակետից իրավունքը վերաբերում է ցանկացած սուբյեկտի, որը կարող է ենթարկվել քրեական հետապնդման, այլ ոչ միայն ֆիզիկական անձին:

2) Իրավաբանական անձին հիմնական իրավունքներ վերագրելիս անհրաժեշտ է հրաժարվել «բնական անձ»-«ֆիկտիվ անձ» մետաֆիզիկական հակադրությունից և կիրառել գործառական (պրագմատիկ) մոտեցում: Ջոն Դյուիի տրամաբանությամբ՝ կորպորացիաներին պաշտպանական երաշխիքներ տալը պետք է հիմնավորվի օրենսդրական նպատակահարմարությամբ և սոցիալ-տնտեսական անհրաժեշտությամբ, այլ ոչ թե «արհեստական անձ» լինելու կամ չլինելու վերացական կատեգորիաներով: Այս մոտեցումը թույլ է տալիս իրավաբանական անձին վերագրել այն իրավունքները, որոնք իրենց բովանդակությամբ կապված չեն ֆիզիկական գոյության հետ (օրինակ՝ լռելու իրավունքը), և միաժամանակ չտարածել նրա վրա անվերապահորեն ֆիզիոլոգիական բնույթի իրավունքները (օրինակ՝ ձերբակալության վայրում պաշտպանի հետ տեսակցությունը):

3) «Accusare»-ի (ինքն իր դեմ չվկայելու իրավունքի) և «prodere»-ի (ինքն իր դեմ չգործելու իրավունքի) տարանջատումը հնարավորություն է տալիս ճշգրիտ սահմանել իրավունքի գործողության սահմանները կորպորացիաների նկատմամբ: Accusare-ն արգելում է անձին հարկադրել ստեղծել նոր տեղեկություն, մինչդեռ prodere-ն վերաբերում է արդեն գոյություն ունեցող փաստաթղթերի, առարկաների կամ կենսանմուշների տրամադրմանը: Տարբեր իրավական համակարգեր դրանք տարբեր կերպ են կիրառում. որոշները ճանաչում են միայն accusare-ն, ոմանք՝ երկուսն էլ, ինչն ազդում է իրավաբանական անձին տրվող երաշխիքների ծավալի վրա:

4) Միջազգային և համեմատական իրավունքում առկա տարբերությունները ցույց են տալիս, որ իրավաբանական անձի՝ ինքն իր դեմ չվկայելու իրավունքի ճանաչումը պայմանավորված է ոչ թե համընդհանուր սկզբունքով, այլ տվյալ համակարգի դատավարական ավանդույթներով և քրեական քաղաքականությամբ:

5) Իրավաբանական անձի կողմից ինքն իր դեմ չվկայելու իրավունքից հրաժարվելը պետք է համապատասխանի «գիտակցված և կամավոր ընտրության» չափանիշներին, որը կորպորատիվ համատեքստում ձեռք է բերվում ինստիտուցիոնալ ընթացակարգերի միջոցով: Ֆիզիկական անձանց համար մշակված ՄԻԵԴ-ի չափանիշները (միանշանակություն, կամավորություն,

իրազեկվածություն, նվազագույն ընթացակարգային երաշխիքներ) իրավաբանական անձի պարագայում ենթադրում են, որ հրաժարումը պետք է կայացվի մասնակիցների ընդհանուր ժողովի բացահայտ որոշմամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Гамбарян А.С.** Отказ от субъективного права молчанием (tacit waiver) // Теория и практика общественного развития. 2018. № 4.
2. **Гамбарян А.С.** Отказ от процессуальных субъективных прав молчанием // Трансформация и цифровизация правового регулирования общественных отношений в современных реалиях и условиях пандемии: Коллективная монография / Под ред. И. В. Воронцовой. – Казань: Отечество, 2020.
3. **Гамбарян А.С.** Правовые режимы молчания и фиктивных выводов, вытекающих из него // Журнал российского права. 2019. № 12.
4. **Гамбарян А.С.** Молчание и молчаливое согласие в публичном праве Армении: правовая фикция, презумпция или субституция? // Вестник Санкт-Петербургского университета. Право. 2021. Т. 12. № 3.
5. **Гамбарян А.С., Айрапетян Ю.В.** Признание вины и иска молчанием в уголовном и гражданском процессах // Вестник Пермского университета. Юридические науки. 2021. Вып. 54.
6. **Гамбарян А.С.** Отказ от права и вопросы уголовно-процессуального вмешательства: Монография. - М.: Юрлитинформ, 2018.
7. Научно-практический комментарий к главе 2 Конституции Российской Федерации “Права и свободы человека и гражданина” / Под ред. К.А. Экштайна. Авторы: Ю.И. Лейбо, Г.П. Толстопятенко, К.А. Экштайн. - М.: ЭКОМ, 2000.
8. Комментарий к Конституции Российской Федерации. В 2-х томах. Том I / Под ред. Бернда Визера. Пер. с нем. - М.: Инфотропик Медиа, 2018.
9. **Кичигина О.Ю.** Уголовная ответственность юридических лиц в законодательстве Великобритании, США и Российской Федерации // Ученые записки. 2021.
10. Латинская юридическая фразеология / Сост. проф. Б. С. Никифоров. - М.: Юрид. лит., 1979.
11. **Lamberigts S.** Corporations and the Privilege against Self-Incrimination. Oxford; New York: Hart Publishing, 2022. P. 223-225.
12. **Helmholz R.H.** Origins of the Privilege against Self-Incrimination: The Role of the European Ius Commune // New York University Law Review. 1990. Vol. 65, № 5.

13. **Rubenfeld J.** Revolution by Judiciary: The Structure of American Constitutional Law. Cambridge: Harvard University Press, 2005. P. 33–35.

14. **Escobar Veas J.** Compelled Decryption of a Mobile Phone: The Right Against Self-Incrimination in Minteh v. France // Verfassungsblog: On Matters Constitutional. 2026. URL:https://verfassungsblog.de/compelled-decryption-of-phone/ (accessed 28.07.2026).

15. **Criado Enguix J.** El derecho a no autoincriminarse de las personas jurídicas // Compliance y persona jurídica: Cuestiones sustantivas y procesales en la lucha contra el crimen organizado / coord. por J. L. González Cussac, A. Lluch Corell. – Valencia: Tirant lo Blanch, 2023. Cap. X. P.

Կրիադո Էնգիքս Խ. Իրավաբանական անձանց ինքնամեղադրումից ազատ լինելու իրավունքը. Համապատասխանությունը և իրավաբանական անձը. կազմակերպված հանցավորության դեմ պայքարի նյութական և դատավարական հարցերը: Խմբ.՝ Խ.Լ. Գոնսալես Կուսակ, Ա. Լյուչ Կորել, Վալենսիա: Tirant lo Blanch, 2023, Գլ. X:

16. **Dewey J.** The Historic Background of Corporate Legal Personality // Yale Law Journal. 1926. Vol. 35, No. 6.

17. **Koessler M.** The Person in Imagination or Persona Ficta of the Corporation // Louisiana Law Review. 1949. Vol. 9, No. 4.

18. **Levy L.W.** Origins of the Fifth Amendment: The Right Against Self-Incrimination. New York: Oxford University Press, 1968. Preface. P. vii–viii; Chapter 1 («Rival systems of criminal procedure»).

19. **Miheş C.D.** Corporate compliance versus the right to silence of legal entities in Romania: The case of certain tax evasion offences // Central European Academy Law Review. 2023. Vol. 1, № 2.

20. **Criado Enguix J.** Consideraciones procesales en torno al derecho a no autoincriminarse de la persona jurídica investigada en el proceso penal. Propuestas al derecho interno a la luz de la jurisprudencia europea // Revista de Estudios Europeos. 2026. №. 87.

Կրիադո Էնգիքս Խ. Քրեական վարույթում հետաքննվող իրավաբանական անձի՝ իր դեմ չվկայելու իրավունքի վերաբերյալ դատավարական հարցեր. եվրոպական դատական պրակտիկայի լույսի ներքո ներպետական իրավունքի կատարելագործման առաջարկներ: Եվրոպական ուսումնասիրությունների հանդես, 2026, №. 87:

21. **Karel De Smet, Elke Janssens** Criminal Liability of Legal Entities under Belgian Law: A High-Level Overview // Compliance Elliance Journal, 2019, Vol. 5, №. 2.

22. **Beale, Sara Sun.** The Development and Evolution of the U.S. Law of Corporate Criminal Liability. Draft, December 2013.

23. **Gierke O.** Political Theories of the Middle Age / transl. with an introduction by F. W. Maitland. Cambridge: Cambridge University Press, 1900.

24. **Савиньи Ф.К. фон.** Система современного римского права. В 8 т. Т. II / Под ред. О. Кутателадзе, В. Зубаря. Пер. с нем. Г. Жигулина - М.: Статут; Одесса: Центр исследования права им. Савиньи, 2012.

25. **Koehler M.** Foreign Corrupt Practices Act Ripples // American University Business Law Review. 2014. Vol. 3, № 3.

ПРАВО ЮРИДИЧЕСКОГО ЛИЦА НЕ СВИДЕТЕЛЬСТВОВАТЬ ПРОТИВ СЕБЯ В УГОЛОВНОМ ПРОИЗВОДСТВЕ: ЗАПАДНЫЕ ТРАДИЦИИ И АРМЯНСКИЙ ОПЫТ

Аннотация

Статья посвящена обсуждению фундаментальной правовой проблемы, возникшей в контексте введенного в 2021 году института уголовной ответственности юридических лиц. Может ли юридическое лицо, в отношении которого осуществляется уголовное преследование, пользоваться конституционным правом не свидетельствовать против самого себя (правом на молчание) и не содействовать собственному обвинению (правом не предоставлять материалы)?

Авторы методологически разграничивают два основных компонента данного права: accusare (запрет принуждения к созданию новых устных или письменных показаний) и prodere (право отказаться от предоставления объективно существующих документов и иных материалов). Анализируя происхождение данного права, авторы приходят к выводу, что ключевым и институционально охраняемым благом, лежащим в основе права не свидетельствовать против самого себя, является не человеческое достоинство (которое относится исключительно к физическим лицам), а справедливость судебного разбирательства, что делает данное право применимым и к юридическим лицам.

В работе рассматриваются подходы ведущих западных правовых систем (США, Великобритании, Европейского союза и Бельгии), демонстрирующие отсутствие единого универсального стандарта по данному вопросу.

Особое внимание уделяется правовому регулированию Республики Армения. Исходя из статьи 74 Конституции Республики Армения (основные права распространяются на юридических лиц в той мере, в какой они применимы по своей природе) и критерия «функциональной вменимости», закрепленного в статье 441 Уголовно-процессуального кодекса Республики Армения, обосновывается, что юридическое лицо является носителем права не свидетельствовать против самого себя. Одновременно авторы разрабатывают условия правомерного отказа юридического лица

от данного права (дачи признательных показаний), признавая обязательным принятие соответствующего открытого решения общим собранием участников (исключая возможность единоличного усмотрения директора), что соответствует сформулированным ЕСПЧ критериям «осознанного и добровольного выбора».

Ключевые слова: юридическое лицо, право не свидетельствовать против самого себя, право на молчание, привилегия против самообвинения, *Accusare*, *Prodere*, уголовная ответственность юридических лиц, добровольный отказ от права.

THE RIGHT OF A LEGAL PERSON NOT TO TESTIFY AGAINST ITSELF IN CRIMINAL PROCEEDINGS: WESTERN TRADITIONS AND THE ARMENIAN EXPERIENCE

Annotation

The article examines a fundamental legal issue that has arisen in the context of the institution of criminal liability of legal persons introduced in 2021: whether a legal person subject to criminal prosecution may invoke the constitutional right against self-incrimination, namely, the right to remain silent (the right not to testify against itself) and the right not to contribute to its own prosecution (the right not to produce incriminating materials).

The authors methodologically distinguish between two principal components of this right: *accusare* (the prohibition against compelling the creation of new oral or written testimonial evidence) and *prodere* (the right to refuse to produce objectively existing documents and other materials). By examining the historical development of the privilege against self-incrimination, the authors conclude that the fundamental and institutional value protected by the right not to testify against oneself is not human dignity (which pertains exclusively to natural persons), but rather the fairness of criminal proceedings, thereby rendering the right equally applicable to legal persons.

The article further examines the approaches adopted by leading Western legal systems, including those of the United States, the United Kingdom, the European Union, and Belgium, demonstrating that no universally accepted standard currently exists on this issue.

Particular attention is devoted to the legal framework of the Republic of Armenia. Relying on Article 74 of the Constitution of the Republic of Armenia (which extends fundamental rights to legal persons insofar as they are applicable by their nature) and the criterion of "functional attribution" established in Article 441 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia, the authors argue that a legal person is entitled to invoke the privilege against self-incrimination.

At the same time, they develop the conditions under which a legal person may validly waive that right by giving an incriminating statement, arguing that such a waiver should require an express resolution of the general meeting of participants (thereby excluding the unilateral

discretion of the director), in accordance with the European Court of Human Rights' requirement of a "knowing and voluntary choice."

Keywords: legal person, right against self-incrimination, right to remain silent, privilege against self-incrimination, *Accusare*, *Prodere*, criminal liability of legal persons, voluntary waiver of rights.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 07.08.2026 թ., տրվել է գրախոսության 08.08.2026 թ., ընդունվել է տպագրության 28.08.2026 թ.:

DOI: 10.59560/18291155-2026.3-57

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
իրավաբանական վարչության պետի տեղակալ,
Հայաստանի եվրոպական համալսարանի հայցորդ

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ՏԵՍԱՀԻՐԱՎԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՀԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության ձևերի տեսահիրավական հիմնահարցերը սահմանադրահիրավական կարգավորումների համատեքստում:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրության առարկա են դարձել պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության ձևերի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ ներկայացված տեսական մոտեցումները, վեր են հանվել հարցի առնչությամբ առաջարկված դասակարգումների հիմնական թերությունները, որոնց համադրման և սահմանադրահիրավական կարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում ձևավորվել և ներկայացվել է պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության ձևերի նոր տեսահիրավական ընկալումը:

Սույն հոդվածի նպատակը պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխգործակցության ձևերի տեսահիրավական ընկալման ուսումնասիրությունը, դրանց դասակարգման վերաբերյալ առկա տեսական մոտեցումների վերլուծությունը, ինչպես նաև սահմանադրահիրավական կարգավորումների հիման վրա փոխգործակցության ձևերի նոր դասակարգման հիմնավորումն է:

Հոդվածում քննարկվում են այնպիսի հարցեր, որոնք այս կամ այն չափով իրենց արտացոլումն են ստացել տարբեր հեղինակների աշխատություններում, սակայն, դրան զուգահեռ, անդրադարձ է կատարվում նաև այնպիսի հիմնահարցերի, որոնք

առանձին համալիր գիտական քննարկման և սահմանադրաիրավական հետազոտության առարկա չեն հանդիսացել:

Կատարված տեսաիրավական և սահմանադրաիրավական վերլուծությունների հիման վրա հոդվածում առաջարկվում է պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության ձևերի նոր դասակարգում՝ ըստ դրանց իրավական պարտադիրության աստիճանի՝ առանձնացնելով փոխգործակցության «պարտադիր» և «լրացուցիչ» ձևերը:

Հիմնաբառեր. պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններ, փոխգործակցության ձևեր:

Ներածություն

Չնայած այն հանգամանքին, որ մասնագիտական գրականության մեջ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխգործակցության հիմնախնդիրները լայնորեն ուսումնասիրվել են, այդ փոխգործակցության բովանդակության, բնույթի և դրսևորման ձևերի վերաբերյալ միասնական մոտեցում դեռևս ձևավորված չէ: Այս հանգամանքը դժվարացնում է պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության ձևերի վերաբերյալ միասնական տեսական ընկալման ձևավորումն ու դրանց համակարգումը:

Համայնքային նշանակության հանրային հարցերն անբաժանելիորեն կապված են պետական շահերի հետ, ուստի, տեղական ինքնակառավարումը չի կարող զերծ մնալ պետական իշխանության ազդեցությունից: Տեղական ինքնակառավարման գոյությունն ու զարգացումն անհնար է պատկերացնել պետությունից մեկուսացված:

Թեև տեղական ինքնակառավարման բնույթն ինքնին ենթադրում է պետական իշխանության հետ որոշակի հակադրության և մրցակցության առկայություն, այնուամենայնիվ, միավորված լինելով գործունեության մեկ ընդհանուր նպատակով՝ պետական իշխանությունն ու տեղական ինքնակառավարումը չեն կարող գործել միմյանցից անկախ՝ իրենց գործառույթներն իրականացնելիս:

Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ՝ «կենտրոնական և տեղական իշխանությունների միջև հարաբերությունները բնութագրվում են ինչպես անկախության, այնպես էլ փոխկախվածության որոշակի աստիճանով և որոշվում են կողմերի իրական իշխանական ներուժով, նրանց տրամադրության տակ գտնվող ռեսուրսներով (հատկապես ֆինանսական) և ներգործության միջոցներով[1]»:

[1] Տե՛ս **Rhodes R.A.W.** Control and Power in Central-Local Government Relations. Farnborough, 1981, P. 97–108:

Վերոգրյալի համատեքստում, ակնհայտ է, որ հանրային իշխանության այս մարմինների փոխհարաբերություններն իրենց բնույթով բարդ, բազմաշերտ և երբեմն հակասական են: Մի կողմից դրանք հանդես են գալիս որպես հակադրվող, իսկ մյուս կողմից՝ որպես փոխկապակցված և փոխազդող երևույթներ:

Այս իմաստով արդարացի է այն պնդումը, որ տեղական ինքնակառավարման համակարգի առկայության պայմաններում պետությունը և համայնքը գոյակցում են իրավական փոխհամաձայնության սկզբունքով[1]:

Իրավագիտության մեջ «փոխգործակցություն» տերմինը հանդիպում է իշխանության որոշակի մարմինների միջև հարաբերությունների բնույթը, փոխադարձ համագործակցության մեջ նրանց լիազորությունների իրականացումը սահմանելիս:

Մասնագիտական գրականության մեջ առկա տեսական մոտեցումների համաձայն՝ «փոխգործակցությունը» սահմանվում է որպես իրավահարաբերության երկու կամ ավելի սուբյեկտների ակտիվ, համակարգված գործունեություն, որն արտահայտվում է որոշումների կայացման և գործողությունների կատարման մեջ, ուղղված է մեկ միասնական նպատակին հասնելուն[2] և բնորոշվում է հետևյալ հատկանիշներով՝ 1) իրավահարաբերության երկու կամ ավելի սուբյեկտների առկայություն, 2) իրավահարաբերության սուբյեկտների ակտիվ գործունեություն (որոշումների ընդունում կամ գործողությունների կատարում, որոնք ազդում են իրավահարաբերության մեկ այլ սուբյեկտի վրա), 3) իրավահարաբերության սուբյեկտների համակարգված գործունեություն (այնպիսի որոշումների ընդունում և գործողությունների կատարում, որոնք իրավահարաբերության այլ սուբյեկտներին հայտնի են օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա), 4) մեկ միասնական նպատակի առկայություն, որին ուղղված է իրավահարաբերության սուբյեկտների գործունեությունը[3]:

Պետության և իրավունքի տեսության շրջանակներում ցանկացած իրավական երևույթ ունի ոչ միայն ձև (արտաքին դրսևորում), այլև բովանդակություն՝ տարրերի, գործընթացների, կապերի ամբողջություն: Ցանկացած փոխգործակցություն ակտիվ գործընթաց է, որը ենթադրում է դրա տարրերի միջև ուղղակի և հետադարձ կապեր:

Տեսական գրականության մեջ «փոխգործակցության ձևերը» ընդհանուր առմամբ հասկացվում են որպես փոխգործակցության մասնակիցների միջև կապի տեսակ՝

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2026 թվականի մարտի 24-ի թիվ ՍԴՈ-1822 որոշումը:

[2] Տե՛ս **Карташов В.Г.** Взаимодействие органов государственной власти субъекта Российской Федерации и органов местного самоуправления // Конституционное и муниципальное право. 2007. № 19. - С. 34:

[3] Տե՛ս **Нуркин М.Г.** Теоретико-правовые основы взаимодействия государственных органов власти и органов власти местного самоуправления // Право и государство: теория и практика. 2009. № 8. - С. 26:

հիմնված ընդհանուր նպատակին հասնելուն ուղղված որոշումներ կայացնելու և գործողություններ կատարելու վրա[1]:

Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության ձևերի վերաբերյալ տեսական մոտեցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա դասակարգումները կրում են հարաբերական և պայմանական բնույթ: Այդ մարմինների փոխհարաբերությունների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ նրանց միջև փոխգործակցության ձևերի ամբողջությունը չի կարող դիտարկվել որպես միասնական և հավասարազոր կառուցակարգերի պարզ համախումբ: Դրանք ունեն տարբեր գործառութային նշանակություն և տարբեր աստիճանի իրավական ազդեցություն հանրային իշխանության համակարգի կայունության վրա:

Թեև առկա տեսական դասակարգումների հիմքում դրված են տարբեր չափորոշիչներ, տեսական գրականության մեջ բավարար չափով չի առանձնացվում փոխգործակցության այն նվազագույն պարտադիր շեմը, որը հանդես է գալիս որպես պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև կայուն և արդյունավետ փոխգործակցության անհրաժեշտ նախապայման:

Օրինակ՝ կախված նրանից, թե ում նախաձեռնությամբ է իրականացվում փոխգործակցությունը՝ Ն.Ի. Սոլոմկան փոխգործակցության ձևերը տարբերակում է երեք հիմնական խմբերի՝ 1) իրականացվում է պետական մարմինների նախաձեռնությամբ (տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նորմատիվ կարգավորում, վերահսկողություն, տեղական ինքնակառավարման մարմիններին որոշակի պետական լիազորություններով օժտում և այլն), 2) իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ (օրենսդրական նախաձեռնություն, պետական մարմիններին ուղղած դիմումներ և այլն), 3) նախաձեռնվում և իրականացվում է պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից (համաձայնագրերի և պայմանագրերի կնքում, խորհրդատվական և համակարգող մարմինների ստեղծում և այլն)[2]:

Իր հերթին, Է.Ս. Շուգրինան առանձնացնում է պետական-մունիցիպալ փոխգործակցության հետևյալ ձևերը՝ 1) տեղական ինքնակառավարման մարմիններին որոշակի պետական լիազորություններ տրամադրելը, 2) պայմանագրերի և համաձայնագրերի կնքումը, 3) համակարգող և խորհրդատվական մարմինների, համատեղ աշխատանքային խմբերի ստեղծումը, 4) պետական

[1] Տե՛ս **Корсун К.И.** Государственная власть и местное самоуправление: конституционно-правовое регулирование содержания и взаимодействия: Дис. … канд. юрид. наук. — Екатеринбург, 2022. - С. 106:

[2] Տե՛ս **Соломка Н.И.** Взаимоотношения органов государственной власти субъектов Российской Федерации и органов местного самоуправления: Дис. … канд. юрид. наук. — Екатеринбург, 1998. - С. 89:

իշխանության ներկայացուցչական մարմնում օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրականացումը, 5) տեղական ինքնակառավարման մարմիններից առաջարկություններ և դիմումներ ուղարկելը պետական մարմիններին[1]:

Միաժամանակ, Օ.Ա. Սոմովան տարբերակում է միայն փոխգործակցության իրավական և ոչ իրավական ձևերը, որոնց միջև հիմնական տարբերությունը կայանում է իրավական հետևանքների առաջացման կամ բացակայության մեջ: Հեղինակը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության ոչ իրավական ձևերի շարքին դասում է հետևյալը տեսակները՝ 1) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ իրենց փոխգործակցության իրականացման ընթացքում գործավարության հետ կապված նյութատեխնիկական միջոցառումները, 2) կազմակերպական գործողությունները. ա) խորհրդակցությունների, քննարկումների կազմակերպում, պետական կառավարման մարմինների ներկայացուցիչների և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց համատեղ մամլո ասուլիսների անցկացում, բ) տեղական ինքնակառավարմանը վերաբերող հարցերով պետական կառավարման խորհրդատվական և համակարգող մարմինների աշխատանք, գ) փորձի տարածում, մեթոդական ցուցումների մշակում, դ) օրենսդրության կատարման ուղղությամբ գործերի իրական վիճակի պարզաբանման համար մունիցիպալ կազմավորումներում պետական կառավարման գործադիր մարմինների կողմից անցկացվող ստուգում և զարգացման միտումների սահմանում, ե) գործող օրենսդրությանը տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերի համապատասխանության ուղղությամբ ընտրովի փորձագիտական ստուգում[2]:

Հետաքրքիր տեսակետ է արտահայտում Ի.Ի. Գուսենբեկովը, ում կարծիքով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցությունը կարելի է ներկայացնել հետևյալ ձևերի միջոցով՝ համակարգում և պետական հսկողություն: Եթե համակարգումը ենթադրում է այդ հարաբերությունների երկու մասնակիցների միջև փոխադարձ հարաբերություններ, ապա պետական հսկողությունը տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ պետական իրավասու մարմինների միակողմանի գործողությունների իրականացում է[3]:

Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերություններում պետությունն ունի իր առաջնային ազդեցության

[1] Տե՛ս **Шугрина Е.С.** Муниципальное право Российской Федерации: Учебник. — М., 2007. - С. 333:

[2] Տե՛ս **Сомова О.А.** Правовые основы взаимодействия органов государственной власти субъектов Российской Федерации и органов местного самоуправления: Дис. … канд. юрид. наук: 12.00.02. - Саратов, 2003. - С. 55-56:

[3] Տե՛ս **Гусенбеков И.И.** Некоторые аспекты взаимодействия органов местного самоуправления с органами государственной власти субъектов РФ // Журнал российского права. 2006. № 6. - С. 38–40:

լծակները, իսկ տեղական ինքնակառավարումն իր հերթին ունի պետության նկատմամբ իր ազդեցության ինքնատիպ ձևերը:

Որպես պետության կողմից տեղական ինքնակառավարման նկատմամբ առաջնային ազդեցության լծակներ տեսական գրականության մեջ առանձնացվում են հետևյալը. 1) պետությունը օրենսդրորեն սահմանում է համայնքային նշանակության հանրային հարցերի շրջանակը, 2) տեղական հարցերի լուծման ժամանակ տեղական ինքնակառավարման մարմիններին պետական օժանդակության ցուցաբերում, 3) համայնքի տարածքում օրինականության պահպանմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ հսկողության իրականացում, 4) տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային ծառայողների համար սոցիալական երաշխիքների ապահովում, 5) տեղական ինքնակառավարման մարմիններին մեթոդաբանական օգնության տրամադրում և այլն: Միաժամանակ, որպես տեղական ինքնակառավարման պետության նկատմամբ ազդեցության ինքնատիպ ձևեր առանձնացվում են՝ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների պարտադիր լինելը համայնքի տարածքի բոլոր անձանց ու կազմակերպությունների համար՝ անկախ դրանց կարգավիճակից ու կազմակերպաիրավական ձևից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ մասնակցությամբ որոշակի հարցերի լուծումը, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությունը ընտրությունների և հանրաքվեների կազմակերպմանը, պետական մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին որոշակի լիազորությունների պատվիրակում և այլն[1]:

Ինչպես նկատելի է, վերոնշյալ հեղինակների առաջարկած դասակարգումները հիմնված են տարբեր չափանիշների վրա (նախաձեռնողականություն, իրավական հետևանքներ և այլն): Ներկայացված դասակարգումների հիմնական թերությունն այն է, որ դրանք, հիմնված լինելով դասակարգման տարբեր չափանիշների վրա, ներկայացնում են փոխգործակցության հնարավոր ձևերի ցանկ, սակայն չեն առանձնացնում այն նվազագույն պարտադիր ձևերը, որոնք օբյեկտիվորեն անհրաժեշտ են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև կայուն և արդյունավետ փոխգործակցության ապահովման համար: Արդյունքում, փոխգործակցության բոլոր ձևերը դիտարկվում են գրեթե նույն հարթության վրա՝ որպես հավասարազոր տարրերի ամբողջություն՝ չտարբերակելով փոխգործակցության հիմնարար (պարտադիր) և օժանդակ (լրացուցիչ) ձևերը, ըստ այդմ նաև՝ փոխգործակցության այն նվազագույն պարտադիր ձևերի շրջանակը, առանց որի պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխգործակցությունն անհնար է:

Մասնավորապես՝ Ն.Ի. Սոլոմկան փոխգործակցության ձևերը դասակարգում է ըստ փոխգործակցության նախաձեռնող սուբյեկտի: Այս մոտեցումը թեև պարզաբանում է, թե ով է նախաձեռնում փոխգործակցությունը, սակայն չի

[1] Տե՛ս **Մարգարյան Տ.Կ.**, Տեղական ինքնակառավարման սահմանադրականացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում: Եր., «Գիտություն», 2016, էջ 49-50:

բացահայտում առանձին ձևերի իրավական բնույթն ու բովանդակությունը: Արդյունքում փոխգործակցության մի շարք ձևեր հայտնվում են նույն խմբում միայն այն պատճառով, որ նախաձեռնվում են պետական իշխանության կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, մինչդեռ դրանք էապես տարբերվում են իրենց իրավական նշանակությամբ ու հետևանքներով:

Իսկ Է.Ս. Շուգրինան թվարկում է փոխգործակցության ձևերը, սակայն դրանք չի դասակարգում որևէ միասնական չափանիշի հիման վրա՝ սահմանափակվելով դրանց պարզ թվարկմամբ: Արդյունքում, հեղինակը չի բացահայտում այդ ձևերի սահմանադրաիրավական նշանակությունը, ինչպես նաև պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհարաբերությունների կառուցակարգում դրանց գործառութային դերը:

Միաժամանակ, Օ.Ա. Սոմովան տարբերակում է փոխգործակցության իրավական և ոչ իրավական ձևերը՝ որպես դասակարգման հիմք ընդունելով դրանց իրավական հետևանքների առաջացման կամ բացակայության հանգամանքը: Թեև այս մոտեցումը հնարավորություն է տալիս իրավական հետևանքների տեսանկյունից տարբերակել փոխգործակցության ձևերը, այնուամենայնիվ, այն չի պարզաբանում, թե դրանցից որոնք են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխգործակցության ապահովմանն ուղղված պարտադիր ձևեր, իսկ որոնք՝ փոխգործակցության արդյունավետության բարձրացմանը նպաստող լրացուցիչ, օժանդակ միջոցներ: Մինչդեռ միայն այդպիսի դասակարգումից հետո է հնարավոր գնահատել յուրաքանչյուր ձևի իրավական բնույթը և դրա առաջացրած իրավական հետևանքների նշանակությունը պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերություններում:

Քննարկման առարկա դարձնելով նաև Ի.Ի. Գուսենբեկովի առաջարկած դասակարգումը՝ հարկ է նկատել, որ հեղինակը հանրային իշխանության մարմինների փոխգործակցության ձևերը չափազանց նեղ է ներկայացնում (համակարգում և պետական հսկողություն): Նման մոտեցումը չի ընդգրկում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների ողջ համակարգը:

Հանրային իշխանության այս մարմինների փոխհարաբերությունները կարգավորող սահմանադրաիրավական նորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության բոլոր ձևերը չունեն միևնույն իրավական նշանակությունը: Դրանցից մի մասը հանդիսանում է հանրային իշխանության միասնական համակարգի գործունեության նախապայման, իսկ մյուս մասն ուղղված է այդ փոխգործակցության արդյունավետության բարձրացմանը, կատարելագործմանն ու զարգացմանը:

Նշված տեսական եզրահանգումների համադրման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն)[1] 2-րդ, 3-րդ, 6-րդ, 9-րդ, 87-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարումը» վերտառությամբ 9-րդ գլխում ամրագրված սահմանադրաիրավական կարգավորումների և այլ նորմերի համակարգային վերլուծության արդյունքում առաջարկվում է պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության ձևերը դասակարգել ըստ դրանց իրավական պարտադիրության աստիճանի՝ առանձնացնելով փոխգործակցության «պարտադիր» և «լրացուցիչ» ձևերը: Նման դասակարգումը հնարավորություն է տալիս տարբերակել այն կառուցակարգերը, որոնք հանրային իշխանության համակարգի գործունեության անհրաժեշտ իրավական նախապայման են, այն ձևերից, որոնք թեև նպաստում են փոխգործակցության արդյունավետության բարձրացմանը, սակայն չեն հանդիսանում դրա գոյության պարտադիր պայման:

Առաջարկվող դասակարգումն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն, քանի որ հնարավորություն է տալիս հստակ սահմանազատել պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխգործակցության հիմնարար և օժանդակ կառուցակարգերը, գնահատել դրանց դերն ու նշանակությունը հանրային իշխանության միասնական համակարգի արդյունավետ գործունեության ապահովման համատեքստում, ինչպես նաև կիրառել այն որպես փոխգործակցության արդյունավետության գնահատման գործիք:

Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ստանում փոխգործակցության «պարտադիր» ձևերի առանձնացումը, քանի որ հենց դրանք են ապահովում հանրային իշխանության համակարգի կայունության նվազագույն մակարդակը:

Փոխգործակցության «պարտադիր» ձևերը կրում են իմպերատիվ բնույթ, և դրանց իրականացումն ու ապահովումը չեն կարող պայմանավորվել կողմերի հայեցողությամբ: Հանրային իշխանության մարմինների միջև հարաբերություններում դրանք՝

1. կանխորոշում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև անհրաժեշտ փոխգործակցության նվազագույն շրջանակը,
2. ապահովում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև ինստիտուցիոնալ կապի շարունակականությունը,
3. ձևավորում են փոխգործակցության կայուն իրավական հիմքը,

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի փոփոխություններով)՝ ընդունված 06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

4. կանխում են հանրային կառավարման համակարգի մասնատվածությունը և նպաստում են հանրային իշխանության միասնական համակարգի բնականոն գործունեությանը:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է արձանագրել, որ հանրային իշխանության մարմինների միջև փոխգործակցության «պարտադիր» ձևերը կազմում են փոխգործակցության այն «նվազագույն անհրաժեշտ շրջանակը», առանց որի անհնար է ապահովել սահմանադրական կարգի կայունությունը, հանրային իշխանության համակարգի միասնականությունը և դրա բնականոն գործունեությունը:

Ընդ որում, «նվազագույն անհրաժեշտ շրջանակ» հասկացությունն այս դեպքում ներառում է օրենսդրությամբ ամրագրված այն պարտադիր պայմանների ամբողջությունը, որոնք անհրաժեշտ են հանրային իշխանության համակարգի գործունեության ապահովման համար: Այդ շրջանակը չի արտահայտում փոխգործակցության առավելագույն կամ ցանկալի մակարդակը, այլ սահմանում է այն նվազագույն իրավական հիմքը, որի բացակայության պայմաններում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև կապը կարող է կորցնել իր համակարգային բնույթը և չապահովել հանրային իշխանության միասնական համակարգի գործունեությունը:

Իսկ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության «լրացուցիչ» ձևերը կարելի է բնորոշել որպես «պարտադիր» փոխգործակցության շրջանակը լրացնող, կողմերի նախաձեռնությամբ և հայեցողությամբ իրականացվող օժանդակ փոխգործակցային մեխանիզմներ, որոնք ուղղված են հանրային իշխանության համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխգործակցությունը կարգավորող սահմանադրաիրավական կարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում անհրաժեշտ է առանձնացնել այդ մարմինների միջև փոխգործակցության հետևյալ պարտադիր ձևերը. 1) տեղական ինքնակառավարման երաշխիքների ապահովման նպատակով անհրաժեշտ պայմանների ստեղծումը (Սահմանադրության 9-րդ, 75-րդ և 179-րդ հոդվածներ), 2) համայնքային նշանակության հանրային հարցերի շրջանակի և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների սահմանումը (Սահմանադրության 179-րդ և 182-րդ հոդվածներ), 3) պետական բյուջեից համայնքներին ֆինանսական աջակցության տրամադրումը (Սահմանադրության 186-րդ հոդված), 4) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը (Սահմանադրության 182-րդ հոդված, 2-րդ մաս), 5) պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորումը (Սահմանադրության 186-րդ

հոդված, 2-րդ մաս), 6) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում պետության քաղաքականության հիմնական նպատակների իրականացումը (Սահմանադրության 87-րդ հոդված), 7) պետության կողմից համայնքային ինքնուրույնության սկզբունքի պահպանմամբ օրենքով սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինականության ապահովումը (Սահմանադրության 6-րդ, 188-րդ հոդված և այլն) և այլն:

Միաժամանակ, որպես պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխգործակցության «լրացուցիչ» ձևեր հարկ է առանձնացնել հետևյալը. 1) պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով առանձին պետական լիազորությունների՝ օրենքով տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակումը, 2) համատեղ ծրագրերի և ռազմավարությունների մշակումը և իրականացումը, 3) պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ աշխատանքային խմբերի ստեղծումը, խորհրդակցությունների և քննարկումների կազմակերպումը, 4) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետական մարմիններին առաջարկությունների և նախաձեռնությունների ներկայացումը և այլն:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության ձևերի վերաբերյալ իրականացված վերլուծության արդյունքները՝ հանգում ենք հետևյալ եզրահանգումներին.

1. Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության վերաբերյալ տեսական մոտեցումների համադրման, ինչպես նաև սահմանադրաիրավական կարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում հիմնավոր է այդ փոխգործակցության ձևերը դասակարգել ըստ դրանց իրավական պարտադիրության աստիճանի՝ առանձնացնելով փոխգործակցության «պարտադիր» և «լրացուցիչ» ձևերը:

2. Փոխգործակցության «պարտադիր» ձևերը պետք է դիտարկել որպես հանրային իշխանության համակարգի կայունության ապահովման «նվազագույն անհրաժեշտ շրջանակ»:

Ընդ որում, վերոգրյալի համատեքստում «պարտադիր» փոխգործակցությունը պետք է ընկալել ոչ թե որպես փոխգործակցության առավելագույն կամ ցանկալի մակարդակ, այլ որպես այն նվազագույն անհրաժեշտ իրավական հիմքը, որի բացակայության պայմաններում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև կապը կարող է կորցնել իր համակարգային

բնույթը և չապահովել հանրային իշխանության համակարգի միասնականությունն ու սահմանադրական կայունությունը:

3. Փոխգործակցության «լրացուցիչ» ձևերը պետք է դիտարկել որպես «պարտադիր» փոխգործակցության շրջանակը լրացնող՝ կողմերի նախաձեռնությամբ և հայեցողությամբ իրականացվող օժանդակ փոխգործակցային մեխանիզմներ, որոնք ուղղված են հանրային իշխանության համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը և զարգացմանը:

4. Փոխգործակցության «պարտադիր» ձևերն ապահովում են հանրային իշխանության համակարգի սահմանադրական կայունության և միասնականության անհրաժեշտ հիմքերը, իսկ «լրացուցիչ» ձևերը նպաստում են դրա արդյունավետության բարձրացմանը և հետագա զարգացմանը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի փոփոխություններով)՝ ընդունված 06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2026 թվականի մարտի 24-ի թիվ ՍԴՈ-1822 որոշում:

3. **Մարգարյան Տ.Կ.**, Տեղական ինքնակառավարման սահմանադրականացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Գիտություն», 2016, 124 էջ:

4. **Гусенбеков И.И.** Некоторые аспекты взаимодействия органов местного самоуправления с органами государственной власти субъектов РФ // Журнал российского права. 2006. № 6.

5. **Карташов В.Г.** Взаимодействие органов государственной власти субъекта Российской Федерации и органов местного самоуправления // Конституционное и муниципальное право, 2007, № 19.

6. **Корсун К.И.** Государственная власть и местное самоуправление: конституционно-правовое регулирование содержания и взаимодействия: Дис. … канд. юрид. наук. — Екатеринбург, 2022. - 243 с.

7. **Нуркин М.Г.** Теоретико-правовые основы взаимодействия государственных органов власти и органов власти местного самоуправления // Право и государство: теория и практика. 2009. № 8.

8. **Соломка Н.И.** Взаимоотношения органов государственной власти субъектов Российской Федерации и органов местного самоуправления: Дис. … канд. юрид. наук. — Екатеринбург, 1998. - 169 с.

9. **Сомова О.А.** Правовые основы взаимодействия органов государственной власти субъектов Российской Федерации и органов местного самоуправления: Дис. … канд. юрид. наук: 12.00.02. - Саратов, 2003. - 199 с.

10. **Шугрина Е.С.** Муниципальное право Российской Федерации: Учебник. - М., 2007. - 672 с.

11. **Rhodes R.A.W.** Control and Power in Central-Local Government Relations. Farnborough, 1981, 194 pp.

ТЕОРЕТИКО-ПРАВОВОЕ ПОНИМАНИЕ ФОРМ ВЗАИМОДЕЙСТВИЯ МЕЖДУ ОРГАНАМИ ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ И ОРГАНАМИ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННЫХ НОРМ

Аннотация

В статье рассматриваются теоретико-правовые вопросы форм взаимодействия государственных органов и органов местного самоуправления в контексте конституционно-правовых норм.

В рамках исследования предметом изучения стали представленные в профессиональной литературе теоретические подходы относительно форм взаимодействия государственных органов и органов местного самоуправления, выявлены основные недостатки предложенных классификаций, а также на основе их сравнительного анализа и системного анализа конституционно-правовых регулирований сформировалось и представлено новое теоретико-правовое понимание форм взаимодействия государственных органов и органов местного самоуправления.

Цель данной статьи – изучение теоретико-правового понимания форм взаимодействия государственных органов и органов местного самоуправления, анализ существующих теоретических подходов к их классификации, а также обоснование новой классификации форм взаимодействия на основе конституционно-правовых норм.

В статье рассматриваются вопросы, в той или иной степени отраженные в работах различных авторов, но параллельно затрагиваются и вопросы, не являюшиеся предметом отдельного комплексного научного обсуждения и конституционно-правового исследования.

На основе проведенного теоретико-правового и конституционно-правового анализа в статье предлагается новая классификация форм взаимодействия между государственными органами и органами местного самоуправления в зависимости от степени их юридической обязательности, с разграничением «обязательных» и «дополнительных» форм взаимодействия.

Ключевые слова: органы государственной власти и органы местного самоуправления, формы взаимодействия.

THEORETICAL AND LEGAL PERCEPTION OF THE FORMS OF INTERACTION BETWEEN STATE AUTHORITIES AND LOCAL SELF-GOVERNMENT BODIES IN THE CONTEXT OF CONSTITUTIONAL REGULATIONS

Annotation

The article discusses the theoretical and legal issues of the forms of interaction between state authorities and local self-government bodies in the context of constitutional and legal regulations.

Within the framework of the research, the theoretical approaches presented in professional literature to the forms of interaction between state authorities and local self-government bodies became the subject of study; the main shortcomings of the classifications proposed in this regard were highlighted, and as a result of their comparison and systematic analysis of constitutional and legal regulations, a new theoretical and legal perception of the forms of interaction between state authorities and local self-government bodies was formed and presented.

The purpose of this article is to study the theoretical and legal perception of the forms of interaction between state authorities and local self-government bodies, analyze existing theoretical approaches to their classification, as well as substantiate a new classification of the forms of interaction based on constitutional and legal regulations.


The article discusses issues that have been reflected to one degree or another in the works of various authors; while, in parallel, it also addresses issues that have not been the subject of a separate complex scientific discussion and constitutional-legal research.

Based on the conducted theoretical and legal and constitutional-legal analyses, the article proposes a new classification of the forms of interaction between state authorities and local self-government bodies according to their degree of legal obligation, distinguishing between “mandatory” and “additional” forms of interaction.


Keywords: state authorities, local self-government bodies, forms of interaction.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 08.07.2026 թ., տրվել է գրախոսության 07.08.2026 թ., ընդունվել է տպագրության 28.08.2026 թ.:

DOI: 10.59560/18291155-2026.3-70



ԿԱՐԵՆ ԱՄԻՐՅԱՆ
ՀՀ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր,
ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու



ՀԱԿՈԲ ՉՈՒԼՔՅԱՆ
«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի փորձագետ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանող

ԳՈՐԾԱՐԱՐ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում են գործարար ոլորտում հակակոռուցպիոն համապատասխանության կառուցակարգերը և այդ կառուցակարգերի կատարելագործման հիմնախնդիրները՝ Հայաստանի Հանրապետության 2019-2022 և 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունների համատեքստում:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրության առարկա են դարձել Հայաստանի Հանրապետության՝ մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր ունենալու կապակցությամբ միջազգային իրավական փաստաթղթերով ստանձնած պարտավորությունները, միջազգային կազմակերպությունների կողմից հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի Հանրապետության կատարողականին տրված գնահատականները, ինչպես նաև արտասահմանյան երկրներում հակակոռուպցիոն համապատասխանության մոդելները, Հայաստանի Հանրապետության 2019-2022 և 2023-2026 թվականների

հակակոռուպցիոն ռազմավարություններն ու դրանցից բխող գործողությունների ծրագիրը և Հայաստանի Հանրապետությունում արդեն իսկ առկա հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերը:

Հոդվածի նպատակն է վերլուծել գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի էությունը, ներդրման և կատարելագործման հիմնախնդիրները: Հոդվածում անդրադարձ է կատարվում ՀՀ 2019-2022 և 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարություններով նախատեսված հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի ներդրման նպատակներին, որոնց ներդրումն իրավական նորություն է և դեռևս ընթացքի մեջ է: Այսինքն, հոդվածը նպատակ է հետապնդում ներկայացնել այս կառուցակարգերի ներդրման անհրաժեշտությունը՝ որպես համապարփակ հակակոռուպցիոն պայքարի բաղադրիչ:

Այս առումով հոդվածը նաև արդիական է, հաշվի առնելով այն, որ վերլուծվում են ոչ միայն ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները, դրանց կատարման ընթացիկ վիճակը, որոշակի միջազգային փորձ, այլև ներառում է կոնկրետ առաջարկություններ, որոնց ընդունման դեպքում մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն քաղաքականությունը կլինի առավել թիրախային և արդյունավետ:

Հիմնաբառեր. գործարար ոլորտ, հակակոռուպցիոն ռազմավարություն, հակակոռուպցիոն համապատասխանություն, կորպորատիվ կառավարում, կոռուպցիայի դեմ պայքար, կոռուպցիայի կանխարգելում:

Ներածություն

Սույն աշխատանքի արդիականությունը կայանում է նրանում, որ Հայաստանի Հանրապետության 2019-2022 և 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարություններով, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններով նշվում է կորպորատիվ կառավարման ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի ներդրման անհրաժեշտության մասին, սակայն դեռևս առկա չեն հստակ և միասնական օրենսդրական կարգավորումներ: Հիշյալ պայմաններում սույն աշխատանքի խնդիրն է վեր հանել նշված ոլորտում առկա մարտահրավերները, առկա համապատասխանության կառուցակարգերը և առաջարկել օրենսդրական փոփոխություններ:

Նշյալ հարցերի շրջանակն էլ կազմում է սույն աշխատանքի առարկան, որի մեթոդաբանական հիմքն են կազմում այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են անալիզը, սինթեզը, ինդուկցիան, դեդուկցիան, անալոգիան, իրավահամեմատականն ու իրավավերլուծականը:

Հիմնական վերլուծություն

Կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում պետության կողմից իրականացվող փոփոխությունների և ռազմավարության կարևոր ուղղություն մատնանշվում էր նաև մասնավոր ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպություններում կոռուպցիայի կանխարգելումն ու հակազդումը: Այդպիսի փոփոխությունների թիրախ էին համարվում հանրային գնումներին մասնակցող կազմակերպություններն ու մեծ կորպորացիաները: Ընդ որում՝ մասնավոր ոլորտում կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման արդյունավետ միջոց է համարվում կազմակերպություններում հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգի ներդրումը: Համապատասխանությունը դուրս է գալիս օրենսդրական պահանջների շրջանակից, քանի որ դա արտացոլում է ընկերության կորպորատիվ մշակույթը՝ ընդունելի արժեքների, հարաբերությունների, նպատակների և գործելաոճի ամբողջությունը, որը խթանում է էթիկական վարքագիծը ընկերության նպատակների իրագործմանն ուղղված գործունեությունն իրականացնելիս[1]:

Կառավարությունները միայն սեփական ջանքերով չեն կարող իրագործել համակարգային փոփոխություններ, իսկ մասնավոր հատվածն ունի բիզնես հետաքրքրություն երկրում թափանցիկության բարձրացման և կոռուպցիայի պատճառով ձևավորվող անարդյունավետության կրճատման հարցում[2]:

Կոռուպցիայի դեմ պայքարը 20-րդ դարի վերջին և 21-րդ դարասկզբին նոր թափ ստացավ և վավերացվեցին մի շարք միջազգային պայմանագրեր՝ ինչպիսիք են Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի» կոնվենցիան և «Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի» կոնվենցիան: 2003 թվականին կնքված Միացյալ ազգերի կազմակերպության «Կոռուպցիայի դեմ պայքարի» կոնվենցիայի (այլ կերպ՝ Վիեննայի կոնվենցիա)[3] 12-րդ հոդվածն անդամ պետությունների համար պարունակում է պարտավորություն՝ իրավական համակարգի սկզբունքներին համահունչ կանխարգելելու կոռուպցիան մասնավոր ոլորտում, բարձրացնելու հաշվապահական հաշվառման և աուդիտորական ստանդարտները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ստեղծելու արդյունավետ և համաչափ քաղաքացիական, վարչական կամ քրեական հակազդման միջոցներ

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Լ որոշման Հավելված N 1 (այսուհետ՝ 2023-2026 Հակակոռուպցիոն ռազմավարություն), Նպատակ 4, էջ 60:

[2] Տե՛ս Report of the Expert Advisory Group on Anti-Corruption, Transparency, and Integrity in Latin America and the Caribbean. Authors: Eduardo Engel, Delia Ferreira Rubio, Daniel Kaufmann, Armando Lara Yaffar, Jorge Londoño Saldarriaga, Beth Simone Noveck, Mark Pieth, and Susan Rose-Ackerman. 2018 Inter-American Development Bank, էջ 22:

[3] Տե՛ս «Կոռուպցիայի դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա՝ ընդունված Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի կողմից 2003 թվականի հոկտեմբերի 31-ին, A/RES/58/4, վավերացված 2006 թվականի հոկտեմբերի 23-ին, ՀՀԱԳՆՊՏ 2008.02.11/9(17):

կիրառելու հնարավորություն՝ օրենքով սահմանված չափանիշների չպահպանման կամ պահանջների խախտման համար: Նույն հոդվածի երկրորդ մասի մեկնաբանությամբ, ի թիվս այլնի, խրախուսվում է հակակոռուպցիոն համապատասխանության մեխանիզմների ներդրումը, ինչպիսիք են կազմակերպության աշխատակիցների և ղեկավար կազմի էթիկայի և վարքագծի կանոնները, թափանցիկության ապահովման և ներքին վերահսկողության ու աուդիտի համակարգերի ստեղծումը, որի միջոցով կարելի է հասնել կոռուպցիոն ռիսկերի կանխման և բացահայտման նպատակին:

Անդրադառնալով միջազգային փորձին՝ Ֆրանսիայում ընդունված «Թափանցիկության, հակակոռուպցիոն և տնտեսական արդիականացման» մասին օրենքով (առավել հայտնի որպես SAPIN II օրենք)[1] մասնավոր կազմակերպությունների համար նախատեսվում են որոշ պարտականություններ, ի թիվս այլնի՝ հակակոռուպցիոն համապատասխանության մեխանիզմներ ներդնելուն ուղղված: Այդ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով Ֆրանսիայի Հակակոռուպցիոն գործակալության կողմից կազմված ուղեցույցի (*այսուհետ՝ Ուղեցույց*) նպատակն է և՛ պետական, և՛ մասնավոր ոլորտում կոռուպցիայի կանխարգելման և հայտնաբերման ծրագրերի իրականացման համար կարգի սահմանումը: Այդ ուղեցույցում տեղ գտած մեթոդաբանությունը հասցեատերերի համար պարտադիր է այնքանով, որ սահմանվածից դուրս ընտրված մեթոդները պետք է համապատասխանեն օրենքով սահմանված չափանիշներին[2]: Այդ օրենքով որոշ ֆրանսիական ընկերություններ պարտավոր են ներդնել և պահպանել հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրեր, որոնք ուղղված են կոռուպցիայի կանխարգելմանն ու բացահայտմանը: Այդ նպատակով կազմակերպությունները, այդ թվում վերջիններիս դուստր ընկերությունները, պետք է իրականացնեն մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ ընդունեն վարքագծի կանոններ, ներդնեն ներքին ազդարարման համակարգեր, իրականացնեն կոռուպցիոն ռիսկերի գնահատում և գործընկերների պատշաճ ուսումնասիրություն (due diligence), ապահովեն հաշվապահական վերահսկողություն, կազմակերպեն աշխատակիցների ուսուցում, սահմանեն կարգապահական պատասխանատվության մեխանիզմներ և իրականացնեն համապատասխանության համակարգի ներքին վերահսկողություն ու գնահատում[3]: Ընդ որում, Ուղեցույցով առաջարկվում է նաև,

[1] Տե՛ս French Republic Law on Transparency, Anti-Corruption and Economic Modernisation Act 2016-1691 of 9 December 2016:

[2] Տե՛ս French Anti-Corruption Agency, Notice on the French Anti-Corruption Agency Guidelines to help Public and Private Sector Entities to Prevent and Detect Bribery, Influence Peddling, Extortion by Public Officials, Illegal Taking of Interest, Misappropriation of Public Funds and Favouritism, ECOZ2035293V, Version dated 4 December 2020 (այսուհետ՝ Ուղեցույց); 6-րդ և 8-րդ կետեր:

[3] Gan Intergrity, An introduction to the French Anti-Corruption Law ("SAPIN II"), հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ganintegrity.com/reference/sapin-ii/, վերջին մուտք՝ 15.08.2026թ.:

ըստ նպատակահարմարության՝ հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերի նկատմամբ վերահսկողության լիազորությունը պատվիրակել հակակոռուպցիոն համապատասխանության ապահովման գործառույթն իրականացնող անձի, որի լիազորություններն ու պարտականությունները սահմանված են[1]: Ավելին՝ նախատեսված են նաև զգալի ներգործություն պարունակող սանկցիաներ, որոնք վրա են հասնում այդպիսի համապատասխանության բացակայության պայմաններում[2]:

Գերմանիայում, համեմատած Ֆրանսիայի հետ, առավել քիչ է կարգավորված հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի վերաբերյալ օրենսդրությունը: Չնայած այն հանգամանքին, որ իրավաբանական անձինք ենթակա չեն քրեական պատասխանատվության միայն այն բանի համար, որ չունեն հակակոռուպցիոն համապատասխանության մեխանիզմներ, սակայն կարող են ենթարկվել պատասխանատվության իրենց աշխատողների հակաիրավական գործողությունների նկատմամբ վերահսկողության արդյունավետ մեխանիզմների բացակայության հանգամանքներում[3]:

«Թրանսփարենսի ինթերնեշնլ Միացյալ Թագավորություններ»-ը հրապարակել է առանձին ուղեցույց, որն ուղղված է կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում կորպորատիվ թափանցիկության ապահովմանը, այդ թվում՝ հակակոռուպցիոն ծրագրերի թափանցիկության[4]:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության կատարողականին տրված միջազգային կազմակերպությունների գնահատականներին՝ պետք է առանձնացնել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) 5-րդ գնահատման փուլի արդյունքները, որով Հայաստանի «գործարար բարեվարքության» կատարողականը 10% է: Զեկույցով մանրամասնեցվում է, որ գոյություն չունի որևէ կառուցակարգ մասնավոր ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում, չկան առանձնացված լիազոր մարմիններ: Ավելին՝ նույնիսկ պետության մասնակցությամբ կազմակերպություններում, այդ թվում՝ ուսումնասիրված ամենամեծ 5 կազմակերպություններում հակակոռուպցիոն

[1] Տե՛ս Ուղեցույց, 97-րդ, 103-112-րդ կետեր:

[2] Տե՛ս **Aurélien Chardeau**, Sapin II Law: The new French legal framework for the fight against corruption, Dentons, February 2017, էջ 4:

[3] Տե՛ս **Dr. Andreas Lohner**, **Dr Nicolai Behr**, Anti-Corruption in Germany, Global Compliance News, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.globalcompliancenews.com/anti-corruption/handbook/anti-corruption-in-germany/, վերջին մուտք՝ 15.08.2026 թ.:

[4] Տե՛ս Transparency International UK, Open Business, Summary of principles and guidance for anti-corruption corporate transparency, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.transparency.org.uk/sites/default/files/2025-02/Open%20Business%20Executive%20Summary.pdf, վերջին մուտք՝ 15.08.2026 թ.:

համապատասխանության մեխանիզմներ ներդրված չեն[1]: Հիմնական առաջընթացը, ըստ երևույթին, վերաբերում էր իրական շահառուների կողմից հայտարարագրեր ներկայացնելուն, պատասխանատվությանը և ղեկավարման խորհուրդներին այդ մասով հսկողություն իրականացնելու, որը սահմանվում էր 2010 թվականի կորպորատիվ կառավարման կանոնագրքով[2]:

Հայաստանում մասնավոր ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարը տեղ է գտել ռազմավարական փաստաթղթերում: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսվող մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն քաղաքականության ուղղության մեջ առաջնային է դիտարկվել մասնավոր ընկերությունների իրական շահառուների բացահայտման գործընթացը[3], և որոշակի անդրադարձ է կատարվել կազմակերպություններում հակակոռուպցիոն համապատասխանության ներդրման անհրաժեշտությանը[4]: Ընդհանուր առմամբ 2019-2022 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրում ներառվեցին մասնավոր հատվածում հակակոռուպցիոն կառուցակարգերի և մեխանիզմների ներդրման որոշ միջոցառումներ, որոնք առավելապես վերաբերում էին գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանմանը, գնումների ոլորտի կատարելագործմանը, իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրմանը, տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի վերաբերյալ օրենսդրության կատարելագործմանը[5]:

Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության մեջ նկատվում է առավել մանրամասնեցված մոտեցում. ռազմավարությամբ առանձնացված է առանձին նպատակ, որն ամրագրում է պետության քաղաքական առաջնահերթությունը՝ նվազեցնելու կոռուպցիան նաև մասնավոր ոլորտում[6]: Ռազմավարության մեջ նշված է, որ «Բիզնեսի

[1] Տե՛ս Organisation for Economic Co-operation and Development, Armenia Fifth Round of Anti-Corruption Monitoring Follow-Up Report, The Istanbul Anti-Corruption Action Plan (Այսուհետ՝ ՏՀԶԿ գնահատման արդյունքներ), 68-83 էջեր:

[2] Տե՛ս ՏՀԶԿ գնահատման արդյունքներ, էջ 70:

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշման Հավելված N 1 (այսուհետ՝ 2019-2022 Հակակոռուպցիոն ռազմավարություն), 113-115 կետեր:

[4] Տե՛ս 2019-2022 Հակակոռուպցիոն ռազմավարություն, 117-րդ կետ:

[5] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշման Հավելված N 2 (Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիր), «2.1. Կոռուպցիայի կանխարգելում (բարեվարքություն)» գլխի 22-24-րդ կետեր:

[6] Տե՛ս 2023-2026 Հակակոռուպցիոն ռազմավարություն, Նպատակ 4, էջ 56:

բարեվարքության ակումբի» շնորհիվ 22 ընկերություններում ընդունվել են հակակոռուպցիոն համապատասխանության մեխանիզմներ, սակայն այդ գործընթացը մնացել է անավարտ կամ ոչ բավարար է՝ հաշվի առնելով, որ չի ընդունվել «Կորպորատիվ կառավարման կանոնագրքի» նախագիծը[1]: Ընդ որում՝ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրով սահմանված է, որ գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի ներդրման վերաբերյալ գործողությունը պետք է ամբողջությամբ կատարվի մինչև 2026 թվականը[2], իսկ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններում հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի ներդրումը՝ մինչև 2025 թվականը ներառյալ[3]:

Պետք է նկատի ունենալ, որ արդեն 2024 թվականին Էկոնոմիկայի նախարարն ընդունել է «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրքը հաստատելու մասին» հրամանը[4]: «Կորպորատիվ կառավարման կանոնագրքի» (այսուհետ՝ Կանոնագիրք) գործողությունը պայմանավորված է կազմակերպության կողմից սեփական դիմումի հիման վրա միանալով, և միայն միանալուց հետո կազմակերպությունը պարտավորվում է ներկայացնել տարեկան հաշվետվություն՝ մինչև հաջորդ տարվա հունիսի 30-ը: Հետաքրքիրն այն է, որ այդ Կանոնագրքում սահմանված է «Հետևի՛ր կամ բացատրի՛ր սկզբունքը», ըստ որի՝ կազմակերպությունը պարտավոր է կա՛մ հետևել Կանոնագրքով սահմանված չափանիշներին, կա՛մ բացատրել, թե ինչ պատճառներով չեն պահպանվել Կանոնագրքով սահմանված պահանջները՝ այն ներկայացնելով տարեկան հաշվետվության մեջ: Այս մոտեցումը բացատրվում է առկա պրակտիկ խնդիրների բացահայտման կարևորությամբ: Ըստ Կանոնագրքի՝ համապատասխանությունը սահմանվում է որպես «նորմատիվ իրավական ակտերի, կարգավորումների, հանձնարարականների, ներքին քաղաքականությունների, ընթացակարգերի և

[1] Տե՛ս 2023-2026 Հակակոռուպցիոն ռազմավարություն, էջեր 57-58: Պետք է նկատի ունենալ, որ «Բիզնեսի բարեվարքության ակումբին» մասնակցությունը վճարովի է: Վերջին տվյալներով՝ անդամակցում են 36 կազմակերպություններ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://corpgov.am/hy/projects/2021/08/09/business-integrity-club/, վերջին մուտքը՝ 15.08.2026 թ.:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Լ որոշման Հավելված N 2 (այսուհետ՝ 2023-2026 Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագիր), գործողություն 4.1:

[3] Տե՛ս 2023-2026 Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագիր, գործողություն 4.2:

[4] Տե՛ս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրքը հաստատելու մասին» N 1955-Ն հրամանը:

պայմանագրերի պահանջներին, կորպորատիվ վարքականոններին համապատասխան գործելու կազմակերպության պարտականություն»:

Վերոնշյալ կարգավորման հիմնական խնդիրն այն է, որ այս կանոնագրքի գործողությունը, ինչպես սահմանված է հենց կանոնագրքով՝ պայմանավորված է վերոնշյալ «Հետևի՛ր կամ բացատրի՛ր» սկզբունքով՝ չունենալով որևէ իրավական ուժ և դրանից բխող բացասական իրավական հետևանքներ: Ավելին՝ Կանոնագրքի թիրախային հասցեատերերն են կորպորատիվ կառավարման սեփական համակարգը կամովին բարելավելու հանձնառություն ստանձնած կազմակերպությունները: Նշված են նաև օրենքների ուժով Կանոնագրքին հետևելու պարտականություն ունեցող կազմակերպությունները, սակայն մինչ այժմ գոյություն չունեն նման իրավական պարտադիր ուժ ունեցող նորմեր՝ առնվազն հակակոռուպցիոն համապատասխանության մեխանիզմների առնչությամբ:

Ըստ Կանոնագրքի II.8 սկզբունքի՝ կազմակերպության խորհրդի էթիկական հանձնառությունը ենթադրում է, որ խորհուրդը պետք է ստանձնի կազմակերպության էթիկական ու հակակոռուպցիոն համապատասխանությունն ապահովելու հանձնառություն էթիկայի (վարքագծի կանոնների) և համապատասխանության ծրագրի ներդրման և դրա իրագործման նկատմամբ հսկողություն ապահովելու միջոցով՝ հաստատելով կազմակերպության կորպորատիվ վարքագծի կանոնները և կազմակերպության էթիկական ու հակակոռուպցիոն համապատասխանությունը խթանող կորպորատիվ քաղաքականությունները: Ավելին, III.3 կազմակերպության համապատասխանության ապահովման սկզբունքը ենթադրում է, որ համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձի գիտելիքն ու հմտությունները պետք է համապատասխանեն իր զբաղեցրած պաշտոնին, իրավասու անձը պետք է ըմբռնի իր դերը կորպորատիվ համակարգում, և, ի թիվս այլնի՝ նպաստի կազմակերպությունում էթիկայի և հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի ներդրմանը և ապահովի դրա իրականացումը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձի ինստիտուտը արդեն ներդրված է որոշ գործունեության բնագավառները կարգավորող իրավական ակտերում: Որպես հատուկ օրինակ կարող ենք մեջբերել բանկային գործունեության ոլորտը կարգավորող «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքը[1], որի 21.14-րդ հոդվածով սահմանված են բանկերի համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձի լիազորությունները: Այդպիսի լիազորություններից են՝

[1] Տե՛ս «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենք՝ ընդունված 1996 թվականի հունիսի 30-ին, ՀՕ-68:

բանկի (որպես իրավաբանական անձի) և բանկի աշխատակիցների գործունեության համապատասխանության ապահովումը իրավական ակտերի, այդ թվում՝ բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին, բանկում պատասխանատու վարվելակերպի ձևավորման և պահպանման գործառույթները: Այլ օրինակ են «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 60-րդ հոդվածով սահմանված կարգավորումները, որով նախատեսված են ներդրումային ընկերությունների՝ ներքին հսկողության համակարգ ունենալու պարտավորություն և ներքին աուդիտորի հաստիքի պարտադիր առկայություն, որը ստուգում է ներդրումային ընկերության գործունեության համապատասխանությունը նորմատիվ իրավական ակտերով, կարգավորվող շուկայի և ընկերության գործունեության կանոններով սահմանված պահանջներին[1]: Ավելին, որպես ավելի ընդհանրական օրինակ՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 91-րդ հոդվածով սահմանվում է ընկերության վերստուգող հանձնաժողովի ինստիտուտը (այլ կերպ՝ վերստուգողի կամ 92-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության աուդիտն իրականացնող անձի ինստիտուտը), որը նույն հոդվածի 1-ին մասով և 93-րդ հոդվածի ուժով ունի, ի թիվս այլնի՝ ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը հետևելու, ընկերության փաստաթղթերի՝ որոշումների, հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և այլ հաշվետվության համապատասխանությունն իրավական ակտերին, այդ թվում՝ կանոնադրության համապատասխանությունն ստուգելու լիազորություն[2]:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ՀՀ օրենսդրությամբ՝ ընդհանուր կամ հատուկ ոլորտային կարգավորումներով արդեն իսկ սահմանված են առանձին ինստիտուտներ՝ իրավասու անձանց կամ հանձնաժողովների տեսքով, որոնք իրականացնում են կոնկրետ ընկերությունների ֆինանսական և իրավական նշանակություն ունեցող գործունեություն՝ իրավական ակտերին, այդ թվում՝ ներքին (լոկալ) իրավական ակտերին համապատասխանության ստուգում:

Որպես հակակոռուպցիոն համապատասխանության մաս՝ 2023-2026 թվականների Հակակոռուպցիոն ռազմավարությամբ անդրադարձ է կատարվել նաև «Ազդարարման համակարգի մասին» օրենքին, որով սահմանված ներքին ազդարարումն ու ներքին ազդարարման վարույթը բացառում է մասնավոր ոլորտի կազմակերպության աշխատակցի կողմից կատարված ենթադրյալ հանցագործության վերաբերյալ ներքին ազդարարումը: Ռազմավարության մեջ որպես խնդիր է նշված նաև այն, որ չնայած «Ազդարարման համակարգի մասին» օրենքում այդ ժամանակ կատարված փոփոխություններին՝ հստակ չեն մասնավոր

[1] Տե՛ս «Արժեթղթերի շուկայի մասին» օրենք՝ ընդունված 11.10.2007 թվականին, ՀՕ-195-Ն:

[2] Տե՛ս «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենք՝ ընդունված 25.09.2001 թվականին, ՀՕ-232:

կազմակերպությունների հետ կապված հաղորդումների ներկայացման, դրանց ընթացք տալու առանձնահատկությունները[1]:

Այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ ազդարարման համակարգի ներդրումը խոշոր կազմակերպություններում կարող է հիմնավորվել իր բարձր արդյունավետությամբ՝ անորոշ շրջանակի անձանց հետ կազմակերպության աշխատակիցների կողմից վարվող հարաբերություններում կոռուպցիոն դեպքերի բացահայտման կապակցությամբ: Հարկ է նշել, որ ի կատարումն 2023-2026 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրի՝ 2026 թվականի հուլիսին ընդունված «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով արդեն իսկ օրենքի շրջանակները ընդլայնվել են և ներդրվել է մասնավոր ոլորտի կազմակերպություններում ներքին ազդարարման համակարգ ունենալու օրենսդրական պահանջ, որը վերաբերում է այն կազմակերպություններին, որոնց նախորդ տարվա աշխատողների միջին տարեկան թիվը գերազանցել է 50-ը: Այս փոփոխությունը գնահատում ենք որպես 2023-2026 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված գործողության կատարման ուղղությամբ բարեհաջող քայլ[2]:

Ընդհանրացնելով սույն աշխատանքում կատարած վերլուծությունները՝ գտնում ենք, որ մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի նախատեսումն ու կատարելագործումը կարևոր նշանակություն ունեն կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման համար, որի վերաբերյալ առկա են մի շարք առաջարկներ: Մասնավորապես.

1. Պետական և համայնքային առևտրային կազմակերպություններում հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր ներդնելու, վերջիններիս համար նոր կորպորատիվ կառավարման կանոնագրքի կիրառումը որպես պարտադիր պահանջ սահմանելու՝ գործող հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված մոտեցումն անհրաժեշտ է ընդլայնել և այդպիսի պահանջները պարտադիր համարել նաև.

1) պետական և համայնքային առևտրային կազմակերպություն չհանդիսացող այն կազմակերպությունների համար, որոնք ունեն մեծաքանակ աշխատակիցներ և

[1] Տե՛ս 2023-2026 Հակակոռուպցիոն ռազմավարություն, էջ 46:

[2] Տե՛ս «Ազդարարման համակարգի մասին» օրենք՝ ընդունված 09.06.2017 թվականին, ՀՕ-97-Ն: «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենք՝ ընդունված 03.07.2026 թվականին, ՀՕ-346-Ն: Հարկ է նկատի ունենալ, որ ՀՕ-346-Ն օրենքն արդեն իսկ ուժի մեջ է մտել, սակայն այն ուժի մեջ է մտել այն մասնավոր ոլորտի կազմակերպությունների համար, որոնց նախորդ տարվա միջին աշխատողների թիվը գերազանցել է 250-ը, իսկ օրենքը մասնավոր ոլորտի այն կազմակերպությունների համար, որոնք արդեն տարվա ընթացքում կունենան միջին 50-ից ավելի աշխատողներ՝ ուժի մեջ է մտնում 2028 թվականի հունվարի 1-ից:

ֆինանսական բավական մեծ շրջանառություն (*այդ քանակի և շրջանառության թվի որոշումը պետք է կրի օբյեկտիվ բնույթ և հիմնված լինի առկա մեծ տվյալների համակարգային գնահատման ու վերլուծության վրա*),

2) ՀՀ համար ռազմավարական և անվտանգային նշանակություն ունեցող ոլորտները կառավարող մասնավոր ընկերությունների համար,

3) ընդերքօգտագործման և ջրային ռեսուրսների օգտագործման ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունների համար:

2. Առաջարկվում է վերոնշյալ մասնավոր ոլորտի կազմակերպություններին օրենքի ուժով պարտավորեցնել սահմանել իրենց աշխատակիցների վարքագծի կանոններ, որոնք ուղղված են կոռուպցիոն դեպքերի կանխարգելմանն ու բացահայտմանը (նվերների ընդունման սահմանափակումները, պետական մարմինների, այլ իրավաբանական անձանց ներկայացուցիչների, հաճախորդների, ինչպես նաև նույն կազմակերպության այլ աշխատակիցների հետ հարաբերվելու վարքագծի կանոնները), ինչպես նաև ունենալ ներքին ազդարարման համակարգ, նախատեսել ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվողականության և թափանցիկության, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգեր ունենալու, տարեկան արտաքին աուդիտի ենթարկվելու և այն հրապարակելու պահանջներ:

3. Ստեղծել կամ արդեն իսկ ստեղծված պետական մարմնին տալ մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության՝ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմանը հետևելու լիազորություն, ինչպես նաև օրենքով սահմանել պահանջները խախտելու դեպքում անբարենպաստ հետևանքներ, որոնք կարող են վրա հասնել այդ պահանջների հասցեատեր կազմակերպությունների կամ կազմակերպության լիազոր անձանց նկատմամբ:

Եզրակացություն

Կոռուպցիան կանխարգելելը չի կարող արդյունավետ լինել առանց գործարար ոլորտում կոռուպցիայի կանխարգելման: Այսինքն, հանրային և մասնավոր ոլորտում կառուպցիայի դեմ պայքարը չի կարող լինել իրարից անջատ, մեկուսի, քանի որ դրանք միմյանց փոխլրացնող են և միայն համընդգրկուն և ընդհանուր պայքարի միջոցով է հնարավոր այդ ոլորտում գրանցել իրական հաջողություններ:

Այս առումով վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում կատարվել են մի շարք քայլեր՝ ուղղված մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն պայքարին, որոնք հիմնականում բխել են ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից: Ընդ որում, գործարար ոլորտում կոռուպցիայի կանխարգելումը բազմաշերտ է, և այդ մեծ համակարգի կարևոր բաղադրիչ է հանդիսանում գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանությունը, որի ուղղությամբ պետությունը միայն վերջին մի քանի տարիներին է, ինչ սկսել է որոշակի գործուն միջոցներ ձեռնարկել:

2023-2026 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրում ներառվել են մասնավոր հատվածում հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի ներդրման որոշ միջոցառումներ, որոնք, իրենց կարևորությամբ հանդերձ, ամբողջական չեն և առկա են մի շարք առանցքային հարցեր, որոնք չեն ներառվել գործող հակակոռուպցիոն ռազմավարության մեջ:

Ըստ այդմ, սույն աշխատանքը ոչ միայն ներկայացնում է ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները, դրանց կատարման ընթացիկ վիճակը, որոշակի միջազգային փորձ, այլև ներառում է կոնկրետ առաջարկություններ, որոնց ընդունման դեպքում մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն քաղաքականությունը կլինի առավել թիրախային և արդյունավետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Կոռուպցիայի դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա՝ ընդունված Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի կողմից 2003 թվականի հոկտեմբերի 31-ին, A/RES/58/4, վավերացված 2006 թվականի հոկտեմբերի 23-ին, սկզբնաղբյուր՝ ՀՀԱԳՆՊՏ 2008.02.11/9(17):

2. «Ազդարարման համակարգի մասին» ՀՕ-97-Ն օրենք՝ ընդունված 09.06.2017 թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 01.01.2018 թ., սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2017.06.30/42(1317) Հոդ.661:

3. «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-346-Ն օրենք՝ ընդունված 03.07.2026 թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 03.08.2026 թ., սկզբնաղբյուր՝ Միասնական կայք 2026.07.20-2026.08.02:

4. «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՕ-68 օրենք՝ ընդունված 30.06.1996 թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 29.08.1996 թ., սկզբնաղբյուր՝ ՀՀԱԺՏ 1996/12(1112) 30 հունիս, հոդ.153, 30 հունիսի 1996:

5. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՕ-232 օրենք՝ ընդունված 25.09.2001 թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 06.12.2001 թ., սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2001.11.06/34(166) Հոդ.831:

6. Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Լ որոշում՝ ընդունված 26.10.2023 թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 03.11.2023 թ.:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման

2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշում՝ ընդունված 03.10.2019 թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 10.10.2019 թ., սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2019.10.09/70(1523).1 Հոդ.915.11:

8. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրքը հաստատելու մասին» N 1955-Ն հրաման՝ ընդունված՝ 30.07.2024 թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 30.08.2024 թ., սկզբնաղբյուր՝ Միասնական կայք 2024.08.05-2024.08.18:

9. French Republic Law on Transparency, Anti-Corruption and Economic Modernisation Act, 2016-1691 of 9 December 2016.

10. French Anti-Corruption Agency, Notice on the French Anti-Corruption Agency Guidelines to help Public and Private Sector Entities to Prevent and Detect Bribery, Influence Peddling, Extortion by Public Officials, Illegal Taking of Interest, Misappropriation of Public Funds and Favouritism, ECOZ2035293V, Version dated 4 December 2020.

11. Organisation for Economic Co-operation and Development, Armenia Fifth Round of Anti-Corruption Monitoring, Follow-Up Report, The Istanbul Anti-Corruption Action Plan, 18.09.2025 թ.:

12. Transparency International UK, Open Business, Summary of principles and guidance for anti-corruption corporate transparency, 12.03.2020 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.transparency.org.uk/sites/default/files/2025-02/Open%20Business%20Executive%20Summary.pdf, վերջին մուտք՝ 15.08.2026 թ.:

13. **Chardeau A.,** Sapin II Law: The new French legal framework for the fight against corruption, Dentons, February 2017.

14. **Engel E.**, **Noveck B.S.**, **Delia F.R.**, **Kaufmann D.**, **Armando L.Y.**, **Jorge L.S.**, **Pieth M., Rose-Ackerman S.**, Report of the Expert Advisory Group on Anti-Corruption, Transparency, and Integrity in Latin America and the Caribbean, November 2018, Inter-American Development Bank, DOI՝ https://doi.org/10.18235/00001419.

15. **Lohner A., Behr N.,** Anti-Corruption in Germany, Global Compliance News, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.globalcompliancenews.com/anti-corruption/handbook/anti-corruption-in-germany/, վերջին մուտք՝ 15.08.2026 թ.:

16. Gan Intergrity, An introduction to the French Anti-Corruption Law (“SAPIN II”), Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ganintegrity.com/reference/sapin-ii/, վերջին մուտք՝ 15.08.2026 թ.:

ПРОБЛЕМЫ ВНЕДРЕНИЯ И СОВЕРШЕНСТВОВАНИЯ МЕХАНИЗМОВ АНТИКОРРУПЦИОННОГО КОМПЛАЕНСА В БИЗНЕС-СЕКТОРЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Аннотация

В статье рассматриваются механизмы антикоррупционного комплаенса в сфере предпринимательской деятельности, а также проблемы их совершенствования в контексте Антикоррупционных стратегий Республики Армения на 2019-2022 и 2023-2026 годы.

В рамках исследования предметом изучения стали обязательства, принятые Республикой Армения в соответствии с международно-правовыми документами в связи с необходимостью наличия механизмов антикоррупционного комплаенса в частном секторе; оценка деятельности Республики Армения в сфере противодействия коррупции, данная международными организациями; модели антикоррупционного комплаенса, применяемые в зарубежных странах; Антикоррупционные стратегии Республики Армения на 2019-2022 и 2023-2026 годы и вытекающий из них План действий, а также уже действующие в Республике Армения механизмы антикоррупционного комплаенса.

Целью настоящей статьи является анализ сущности механизмов антикоррупционного комплаенса в деловом секторе, а также проблем их внедрения и совершенствования. Особое внимание уделяется целям и задачам внедрения механизмов антикоррупционного комплаенса, предусмотренным Антикоррупционными стратегиями Республики Армения на 2019-2022 и 2023-2026 годы. Поскольку внедрение таких механизмов представляет собой относительно новое направление развития антикоррупционной политики и данный процесс все еще продолжается, статья направлена также на обоснование необходимости их внедрения в качестве неотъемлемой составляющей комплексной системы противодействия коррупции.

Актуальность исследования обусловлена тем, что в статье анализируются не только международные обязательства, принятые Республикой Армения, текущее состояние их выполнения и отдельные аспекты международного опыта, но и предлагаются конкретные рекомендации, реализация которых будет способствовать формированию более целенаправленной и эффективной антикоррупционной политики в частном секторе.

Ключевые слова: бизнес-сектор, антикоррупционная стратегия, антикоррупционный комплаенс, корпоративное управление, борьба с коррупцией, предотвращение коррупции.

FUNDAMENTAL CHALLENGES IN IMPLEMENTING AND ENHANCING ANTI-CORRUPTION COMPLIANCE FRAMEWORKS IN THE BUSINESS SECTOR OF THE REPUBLIC OF ARMENIA

Annotation

The article examines anti-corruption compliance mechanisms in the business sector and issues related to their improvement in the context of the Anti-Corruption Strategies of the Republic of Armenia for 2019–2022 and 2023–2026.

The subject matter of the research encompasses the obligations undertaken by the Republic of Armenia under international legal instruments concerning the establishment of anti-corruption compliance mechanisms in the private sector; assessments by international organizations of the Republic of Armenia's performance in the field of combating corruption; anti-corruption compliance models implemented in foreign jurisdictions; the Anti-Corruption Strategies of the Republic of Armenia for 2019–2022 and 2023–2026 and the Action Plan arising therefrom, as well as the anti-corruption compliance mechanisms already in place in the Republic of Armenia.

The purpose of this article is to analyze the nature of anti-corruption compliance mechanisms in the business sector, as well as the challenges related to their implementation and further development. The article addresses the objectives set forth in the Anti-Corruption Strategies of the Republic of Armenia for 2019–2022 and 2023–2026 concerning the introduction of anti-corruption compliance mechanisms, the implementation of which constitutes a legal novelty and remains ongoing. In this regard, the article aims to demonstrate the necessity of introducing such mechanisms as an integral component of a comprehensive anti-corruption framework.

The article is also timely, as it examines not only the international obligations undertaken by the Republic of Armenia, the current state of their implementation, and certain aspects of international practice, but also puts forward specific recommendations. The adoption of these recommendations would contribute to making anti-corruption policy in the private sector more targeted and effective.

Keywords: business sector, anti-corruption strategy, anti-corruption compliance, corporate governance, combating corruption, prevention of corruption.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 20.08.2026 թ., տրվել է գրախոսության 24.08.2026 թ., ընդունվել է տպագրության 28.08.2026 թ.:

DOI: 10.59560/18291155-2026.3-85



ԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի
ոստիկանական ուսումնական ստորաբաժանման
քրեական իրավունքի և քրեական
դատավարության ամբիոնի պետ,
ի.գ.թ., դոցենտ



ԱՂԱՎՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի
ոստիկանական ուսումնական ստորաբաժանման
վարչական իրավունքի և ոստիկանության
վարչական գործունեության ամբիոնի ավագ դասախոս

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՁԻ ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ԵՎ ԴՐԱՆ ՈՒՂԵԿՑՈՂ ԱՆՁՆԱԿԱՆ ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է ոստիկանության կողմից անձի ձերբակալման և դրան ուղեկցող անձնական խուզարկության քրեադատավարական հիմնահարցերին: Հետազոտության առարկան ձերբակալման բնույթն է, ինչպես նաև ձերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկության էությունը, կատարման ժամանակը, սուբյեկտային կազմը, նպատակը և արդյունքների արձանագրման եղանակը: Նպատակն է պարզաբանել՝ արդյոք այդ խուզարկությունը քննչական գործողություն է, թե ձերբակալման իմանենտ մասնիկ:

Հիմնական դրույթներ. ձերբակալումը դիտվում է որպես միասնական, սակայն երկփուլ գործընթաց, ձերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկությունը տարբերվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված քննչական գործողություն-անձնական խուզարկությունից, անձնական խուզարկության առանձին արձանագրումը հանգեցնում է իրավական ռեժիմների

արհեստական նույնականացման, «plain view», «encounter», Terry stop, «stop and search» դոկտրինների վերաբերյալ օտարերկրյա իրավական զարգացումները կարող են օգտակար լինել հայրենական օրենսդրությունում ոստիկանական գործողությունների իրավաչափության երաշխիքների հստակեցման համար:

Հիմնաբառեր. ձերբակալում, անձնական խուզարկություն, ոստիկանական գործունեություն, քրեական դատավարություն, օպերատիվ-պրոֆիլակտիկ միջոցառում, ողջամիտ կասկած, մարդու իրավունքներ:

1. Նախաբան

Հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման տեսանկյունից հարկադրանքի միջոցների կիրառումը քրեական դատավարության իրավունքի առավել զգայուն ինստիտուտներից է:

Հանցավորության դեմ պայքարի պրակտիկայի դիրքերից իր նշանակությամբ առանձնանում է հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալումը (այսուհետ՝ ձերբակալում) և դրան ուղեկցող անձնական խուզարկությունը՝ որպես քրեական դատավարությունում ոստիկանության մասնակցության (նախաքննությանն ցուցաբերվող օժանդակության) առավել տարածված ձևեր:

Քրեական դատավարության տեսությունում ձերբակալումն ավանդաբար տարանջատվել է հարկադրանքի մյուս միջոցներից, դիտարկվել որպես հարկադրանքի ինքնուրույն միջոց: Այս մոտեցումը, կարծում ենք, հիմնավոր է, քանի որ ձերբակալումը, որպես կանոն, մեկնարկում է ոստիկանական գործունեության արդյունքում՝ մինչև քրեական վարույթի նախաձեռնումը, ոստիկանական ձերբակալմամբ հաճախ լուծվում է ապացուցողական նախնական ինֆորմացիայի հայթայթման խնդիրը[1], և այն, ի տարբերություն հարկադրանքի մյուս միջոցների, դիտարկվում է ոչ թե իրավաբանական (դատավարական) պատասխանատվության (ռեպրեսիայի), այլ կանխարգելման (պրեվենցիայի) դիրքերից[2]:

Պատմականորեն ձերբակալման հասկացության սահմանման տարբեր մոտեցումներում արտացոլված են այս երևույթի երկու ասպեկտները՝ ոստիկանական (փաստական-մարտավարական) և դատավարական: Ոստիկանական (փաստական-մարտավարական) ասպեկտն արտահայտվում է անձին փաստացի ազատությունից

[1] Տե՛ս, օրինակ, **Харзинова В.М.** Понятие и виды мер процессуального принуждения // Пробелы в российском законодательстве. 2018. № 5, էջ 222:

[2] Տե՛ս **Канокова Л.Ю.** Задержание, как мера процессуального принуждения, и сложности, связанные с заключением под стражу подозреваемого (обвиняемого) // Пробелы в российском законодательстве. 2020. Т. XIII. № 4, էջ 282-283:

զրկելով (բռնելով), իսկ դատավարականը՝ այդ փաստին դատավարական ձև տալով (դատավարական որոշում կայացնելով):

Այս առնչությամբ հետաքրքրական է, որ եվրոպական մի շարք երկրներում օրենսդիրնy ձերբակալման այդ երկու ձևերն ինքնուրույն կարգավորման է ենթարկել: Այսպես, Շվեյցարիայի 2007 թ.-ի քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է ոստիկանական կամ նախնական ձերբակալումը (die polizeiliche Anhaltung, Art. 215-216) և քրեադատավարական ձերբակալումը (die vorläufige Festnahme, Art. 217-219)[1]:

Ձերբակալման՝ որպես դատավարական հարկադրանքի միջոցի վերը նկարագրված երկակիությունը կարգավորվեց ՀՀ քրեադատավարական նոր օրենսգրքի (այսուհետ՝ ՔրԴՕ) ընդունմամբ, որտեղ ձերբակալման այդ երկու ասպեկտներն ստացան ինքնուրույն փաստաթղթավորում՝ արձանագրությամբ և որոշմամբ, «(…) Ընդ որում, *արձանագրությունը ոչ թե արտահայտում է պետաիշխանական կամք, այլ միայն բովանդակում է փաստեր* (ընդգծված է իմ կողմից – Ա.Հ.): Պետաիշխանական կամքն արտահայտվում է այդ նպատակին առավել հարմար փաստաթղթում՝ *որոշման* (ընդգծված է իմ կողմից – Ա.Հ.) մեջ»[2]:

Ձերբակալման էության հետ կապված քրեական դատավարության գիտության մեջ արտահայտվել է նաև այլ տեսակետ: Այսպես, որոշ հեղինակներ ձերբակալումը դիտարկում են որպես քննչական գործողություն՝ դրա ճանաչողական գործառույթի դրսևորում մատնացույց անելով նաև դրան ուղեկցող անձնական խուզարկությունը:

Հայտնի դատավարագետներ Ա.Ա. Տարասովը և Ս.Ա. Շեյֆերը, քննարկման առարկա դարձնելով ձերբակալման կոգնիտիվ ասպեկտը, նշում են՝ «(…) Ձերբակալմամբ ոչ միայն ամրագրվում է անձի՝ կոնկրետ ժամին և վայրում գտնվելու փաստը, այլ նաև հնարավորություն է ստեղծվում կատարել անձնական խուզարկություն և վերջինիս արդյունքներն ամրագրել արձանագրության մեջ»[3]:

Այս տեսակետն արդի պայմաններում մեծ թվով կողմնակիցներ չունի: Այսպես, Ս.Բ. Ռոսսինսկին գտնում է, որ ձերբակալումը պետք է դիտարկվի միայն որպես

[1] Տե՛ս Շվեյցարիայի Համադաշնության քրեական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է Դաշնային Ժողովի կողմից 05.10.2007 թ. https://www.wipo.int/wipolex/ru/legislation/details/19997

[2] Տե՛ս **Ղուկասյան Հ., Մելքոնյան Դ., Նիկողոսյան Ա.**, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: Էջ 185: URL: https://aoj.am/storage/criminal-procedure-codes/oXoktuUmkYtOJwPnzhgWKNSgUHEFwtWAa1wGpxwV.pdf

[3] Տե՛ս **Тарасов А.А. Шейфер С.А.** О познавательной сущности задержания подозреваемого // Юридический вестник Самарского университета. 2017. № 4, էջ 63-64: Տես նաև՝ Пидусов Е.А. Задержание лица, заподозренного в совершении преступления, как система деятельности // Вестник Воронежского института МВД России. 2010. № 1, էջ 37:

մարդու պատշաճ վարքագծի ապահովմանը ու քրեական դատավարության խնդիրների լուծման համար պայմանների ստեղծմանը նպաստող միջոց[1]:

Ձերբակալումը քննչական գործողությունների շարքին դասելու դիրքորոշումը որոշակիորեն աղերսվում էր Հայաստանի 1961 թ. և 1998 թ. քրեադատավարական օրենքներում որդեգրված մոտեցումներին: Այսպես, նշված օրենսգրքերում անձի ձերբակալումը դասվում էր անհետաձգելի քննչական գործողությունների շարքին, ինչը մեր կարծիքով խեղաթյուրում էր ձերբակալման էությունը և դատավարական նշանակությունը:

Գործող ՔրԴՕ-ի ընդունմամբ Օրենսդիրը հրաժարվեց քննչական գործունեության՝ իր բնույթով կրիմինալիստիկական-մարտավարական տարրի, այն է՝ անհետաձգելի քննչական գործողությունների օրենսդրական ամրագրումից:

2. Հիմնական հետազոտություն

2.1. Ձերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկության հիմնահարցը

Ոստիկանական ձերբակալման համատեքստում, կարծում ենք, անհրաժեշտություն կա քննարկելու ձերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկության հիմնահարցը:

Հայկական քրեադատավարական օրենսդրությունում անձնական խուզարկությունը՝ որպես խուզարկության ինքնուրույն տեսակ, առաջին անգամ ամրագրվել է ՀԽՍՀ 1961 թ. քրեադատավարական օրենքի 163-րդ հոդվածում, որի 2-րդ մասը նույնպես թույլ էր տալիս բացառիկ դեպքերում կատարել անձնական խուզարկությունը՝ առանց այդ մասին առանձին որոշման կայացման:

Այս նորմը՝ իր ընդհանուր իմաստով գրեթե նույնությամբ վերարտադրվեց ՀՀ 1998 թ.-ի օրենսգրքում (տես՝ 229-րդ հոդված) և գործող ՔրԴՕ-ում (237-րդ հոդվածի 2-րդ մաս):

ՔրԴՕ-ում ամրագրված ընդհանուր կանոնի համաձայն՝ խուզարկությունը կատարվում է կա՛մ քննիչի, կա՛մ դատարանի որոշման հիման վրա (տես՝ ՔրԴՕ 209-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ, 4-րդ մասի 1-ին և 3-րդ կետեր):

Այս կանոնից բացառություն են կազմում որոշ իրավիճակներ, որոնցում Օրենսդիրը չի տեսել առանձին որոշման կայացման դատավարական անհրաժեշտություն (ՔրԴՕ 237-րդ հոդվածի 2-րդ մաս): Վերը նշված ոչ ստանդարտ իրավիճակներից է հանցագործության մեջ կասկածվող անձի ձերբակալումը, որին ուղեկցող անձնական խուզարկության մասին ոչ միայն ինքնուրույն որոշում չի կայացվում, այլ նաև դրա կատարման փաստն ինքնուրույն չի արձանագրվում:

[1] Տե՛ս **Россинский С.Б.** Задержание подозреваемого как объект уголовно-процессуального регулирования // Журнал юридических исследований. Т. 2. № 2. – 2017, էջ 177-178:

Ձերբակալվածի անձնական խուզարկության նշանակությունը ոստիկանական պրակտիկայի համար դժվար է գերագնահատել[1], և դրա ընթացքում ստացված արդյունքներն իրենց էությամբ հաճախ անկրկնելի են և սկզբունքորեն չեն կարող կրկին ստացվել քրեական վարույթով հետագա քննության ընթացքում[2]:

Այս ամենի հետ մեկտեղ դեռ անորոշ է մնում ձերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկության էության հիմնահարցը. անձնական խուզարկությունը վերաբերում է ձերբակալման ոստիկանակա՞ն (փաստական-մարտավարական), թե՞ դատավարական ասպեկտին:

Նշված հիմնահարցի հետ կապված դիրքորոշում ձևավորելու համար նախ պետք է պատասխանել այն անցկացնող անձի կարգավիճակի հարցին:

Խնդիրն այն է, որ մարդուն ազատությունից փաստացի զրկելու պահին դեռ քրեական վարույթը չի մեկնարկել, և, հետևաբար, ձերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկությունը կատարող պաշտոնատար անձը (օպերատիվ աշխատակիցը, պարեկը, համայնքային ոստիկանը) դեռ չունի դատավարական կարգավիճակ: Այս ելակետային դրույթներից բխում է տրամաբանական հետևություն առ այն, որ նրա կողմից կատարվող գործողությունը չի կարող դիտարկվել որպես դատավարական:

Ավելին՝ քրեադատավարական օրենքում հետաքննության մարմնի լիազորությունների ցանկում բացակայում է քննչական գործողությունների կատարման իրավասությունը (ՔրԴՕ 42-րդ հոդված):

Պատահական չէ, որ փաստացի ձերբակալման պահից անձի մոտ ծագում են իրավունքներ, որոնք իրենց բնույթով ոչ այնքան քրեադատավարական են, որքան սահմանադրական և միջազգային-իրավական:

Եվ եթե ելնենք այն հանգամանքից, որ ձերբակալման արձանագրությունը ոչ թե արտահայտում է պետահիշխանական կամք, այլ միայն բովանդակում է փաստեր (այդ թվում՝ անձի խուզարկության արդյունքում ինչ-որ բան հայտնաբերելու փաստը), ապա կարող ենք գալ այն հետևության, որ Օրենսդիրն առնվազն անուղղակիորեն ձերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկությունը դիտարկում է ոչ թե որպես քննչական գործողություն, այլ ձերբակալման իմանենտ հատկանիշ, դրա մի մասնիկ:

Այս մոտեցումները բխում են հետաքննության՝ նախաքննությանն օժանդակող գործունեության դերից և լիովին արդարացված են:

Ձերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկության էությունը հասկանալու տեսանկյունից կարևոր է նաև դրա կատարման ժամանակի պարզաբանումը:

[1] Տե՛ս **Корнуков В.М., Валиев Р.Ш.** Личный обыск и его роль в уголовно-процессуальном доказывании. - Саратов, 2007, էջ 84:

[2] Տե՛ս **Россинский С.Б.** Что такое личный обыск при задержании подозреваемого: следственное действие, непроцессуальное мероприятие или пустая формальность? // Судебная власть и уголовный процесс. 2017. № 1, էջ 89:

Վարութային ակտերի կայացման մեխանիզմը և պարզապես ողջամտությունը մեզ հուշում են, որ անձնական խուզարկությունը պետք է կատարվի նախքան ձերբակալման արձանագրությունը կազմելը: Այսպես, ձերբակալման արձանագրությունը կազմելու պահին անձնական խուզարկության արդյունքներն արդեն պետք է հայտնի լինեն, ինչն էլ կանխորոշում է դրա նախնական բնույթը:

Ի վերջո, մինչ անձի նկատմամբ դատավարական հարկադրանքի այդ միջոցը կիրառելը քննիչը պետք է համոզվի ձերբակալման փաստական հիմքերի առկայության մեջ, այդ թվում՝ անձնական խուզարկությամբ անձից վերցված առարկաների կամ փաստաթղթերի օգնությամբ (ՔրԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մաս, 3-րդ մասի 4-րդ կետ):

Այստեղ ցանկանում ենք ընթերցողի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ, ի տարբերություն քննչական գործողություն-անձնական խուզարկության, ձերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկության կատարման փաստը արձանագրության մեջ ամրագրվում է միայն դրա արդյունքների տեսքով՝ առանց ընթացքի արտացոլման (ՔրԴՕ 109-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետ):

Ըստ այդմ՝ ձերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկության ժամանակ առաջնային պլան են մղվում ապացույցների հնարավոր ոչնչացումը (վնասումը, կորուստը) կանխելու և անձի՝ հետաքննության մարմնի վարչական շենք տեղափոխման անվտանգությունն ապահովելու նպատակները, այլ ոչ թե դրա ճանաչողական-կրիմինալիստիկական ասպեկտը, որը բնորոշ է քննչական գործողություն-անձնական խուզարկությանը:

Հետևաբար, ոչ իրավաչափ պետք է համարել նաև ոստիկանական գործունեությունում տարածված այն պրակտիկան, երբ ձերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկության փաստն արձանագրվում է կրկնակի՝ բուն ձերբակալման արձանագրությունում (անձնական խուզարկության արդյունքների տեսքով) և դրան զուգահեռ կազմվող անձնական խուզարկության արձանագրությունում:

2.2. Օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումների ժամանակ անձնական ազատության սահմանափակմանն ուղեկցող ոստիկանական խուզարկության (զննության) հիմնահարցը

Անձի ազատության, նրա մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունը պայմանավորված է լինում նաև օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումների պատշաճ կատարման հանգամանքով: Մասնավորապես, նշված միջոցառումների նպատակից ելնելով հաճախ կարիք է առաջանում սահմանափակել մարդու ազատ տեղաշարժման իրավունքը, կատարել վարչական զննություն, որը, նախորդելով քրեադատավարական ձերբակալմանը, ոչ միայն վերածվում է հիմնավոր կասկածը գեներացնող գործողության, այլև ինքը երբեմն ըստ էության վերաճում է խուզարկության:

Այս տեսանկյունից արժեքավոր է ԱՄՆ Գերագույն դատարանի՝ ԱՄՆ Սահմանադրության 4-րդ փոփոխության մեկնաբանության արդյունքում ձևավորած նախադեպային իրավունքի ուսումնասիրումը:

Այսպես, վերը նշված իրավիճակներում ոստիկանության գործողությունների իրավաչափության գնահատումը տեղի է ունենում Գերագույն դատարանի՝ մի շարք գործերով կայացրած որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա ձևավորված «plain» («ակնհայտ», «ակներև») մոդելում (դոկտրինում):

Այս դոկտրինի հիմքում ընկած է այն գաղափարը, որ եթե ոստիկանն առանց հատուկ որոնողական գործողությունների կամ ջանքերի՝ միայն իր զգայարաններով (plain view, plain feel, plain smell, plain hearing) ընկալում է որոշակի առարկաներ կամ փաստեր, ապա դա չի կարող դիտարկվել որպես հատուկ թույլտվություն պահանջող խուզարկություն, և այս իրավիճակները չեն ընկնում ԱՄՆ Սահմանադրության 4-րդ փոփոխության գործողության տակ:

Ընդ որում՝ դրանք կարող են լինել իրավիճակներ, երբ անձն իր գործողություններով է այդ առարկան տեղադրել բոլորի աչքի առջև կամ այդ առարկան հայտնաբերվում է իր յուրահատուկ կառուցվածքի, հոտի, ձայնի կամ այլ հատկանիշի շնորհիվ (օր.՝ թմրանյութի բնորոշ հոտը կամ ատրճանակը շոշափելը):

Սակայն նման հետևության համար ոստիկանը տվյալ վայրում պետք է գտնվի իր ծառայողական պարտականությունները կատարելու կապակցությամբ, և ոստիկանի մոտ պետք է լինի բավարար հիմքեր կարծելու, որ տվյալ առարկան ապօրինի գործունեության հետ կապված օբյեկտ է:

«Plain» մոդելը ելնում է նրանից, որ եթե անձը առարկան թողնում է բոլորի աչքի առջև, ապա դրանով նա կորցնում է դրա նկատմամբ «գաղտնիության ակնկալիք» ունենալու իր իրավունքը[1]:

ԱՄՆ Գերագույն դատարանը մշակել է նաև ոստիկանության կողմից հասարակական կարգի պահպանության ուղղությամբ պարտականությունների կատարման ընթացքում անձի ազատության սահմանափակման իրավաչափությունը գնահատելու ինքնուրույն չափանիշ, այն է՝ «կոնտակտներ (շփումներ) ոստիկանության հետ (encounters)», որի տակ հասկացվում են ոստիկանության և քաղաքացիների միջև ոչ բռնի կամավոր շփումներ, որոնք չեն գտնվում ԱՄՆ Սահմանադրության IV փոփոխության կարգավորման տիրույթում:

«Plain view» դոկտրինը պաշտոնապես ճանաչվել է ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից 1968 թվականին՝ «Հարիսն ընդդեմ Միացյալ Նահանգների» գործով: Այս գործում դատարանը նշել է, որ իրավապահը պետք է գտնվի «իրավաչափ» դիրքում, երբ պատահաբար տեսնում է ակնհայտ ապացուցողական արժեք ունեցող

[1] Տե՛ս *Arizona v. Hicks,* 480 U. S. 321. 1987. URL: http://caselaw. findlaw.com/us-supreme-court/: Bunch v. Commonwealth, 658 S. E. 2d 724 [Va. Ct. App. 2008. URL: http://caselaw.findlaw.com/us-supreme-court: United States v. Ceballos, 385 F.3d 1120. 7th Cir. 2004. URL: http://caselaw.findlaw.com/us-supreme-court/:

առարկան[1]: Ընդ որում, «plain view» դոկտրինը վերաբերում է ապացույցը վերցնելուն, այլ ոչ թե որոնելուն, որը «խուզարկություն» գործողության տարր է:

«Plain view» մոդելը ելնում է նրանից, որ եթե անձը առարկան թողնում է բոլորի աչքի առջև, ապա դրանով նա կորցնում է դրա նկատմամբ «գաղտնիության ակնկալիք» ունենալու իր իրավունքը: Ընդ որում՝ դրանք կարող են լինել իրավիճակներ, երբ անձն իր գործողություններով է այդ առարկան տեղադրել բոլորի աչքի առջև կամ այդ առարկան հայտնաբերվում է իր յուրահատուկ կառուցվածքի, հոտի, ձայնի կամ այլ հատկանիշի շնորհիվ (օր.՝ թմրանյութի բնորոշ հոտը կամ ատրճանակը շոշափելը): Սակայն նման հետևության համար ոստիկանը տվյալ վայրում պետք է գտնվի իր ծառայողական պարտականությունները կատարելու կապակցությամբ, և ոստիկանի մոտ պետք է լինեն բավարար հիմքեր կարծելու, որ տվյալ առարկան ապօրինի գործունեության հետ կապված օբյեկտ է:

ԱՄՆ Գերագույն դատարանը մշակել է նաև ոստիկանության կողմից հասարակական կարգի պահպանության ուղղությամբ պարտականությունների կատարման ընթացքում անձի ազատության սահմանափակման իրավաչափությունը գնահատելու ինքնուրույն չափանիշ, այն է՝ «կոնտակտներ (շփումներ) ոստիկանության հետ (encounters)», որի տակ հասկացվում են ոստիկանության և քաղաքացիների միջև ոչ բռնի կամավոր շփումներ, որոնք չեն գտնվում ԱՄՆ Սահմանադրության IV փոփոխության կարգավորման տիրույթում:

Այսպես, «Թերրին ընդդեմ Օհայո նահանգի» հայտնի գործում Գերագույն դատարանը առաջ քաշեց վերը նշված չափանիշի հետ օրգանական կապի մեջ գտնվող ևս մեկ կանոն, որի էությունը կայանում է նրանում, որ ոստիկանն իրավունք ունի ողջամիտ կասկածների դեպքում կարճաժամկետ կանգնեցնել առանձին անձանց՝ դեպքի հանգամանքների պարզաբանման համար: Խոսքը հատկապես «փողոցային» հանցագործությունների հայտնաբերման և քննության մասին է: Այդ հարցումները պետք է տարբերել ձերբակալումից. դրանք մարդու անձնական ազատությանը չեն միջամտում, հետևաբար՝ դրանք կարող են հիմնվել ապացուցողական ավելի ցածր շեմ ունեցող «ողջամիտ կասկածներ» (reasonable suspicion) չափանիշի վրա (ի տարբերություն «բավարար հիմքեր» չափանիշի, որն առավել բարձր ապացուցողական շեմ է ենթադրում)[2]:

Այս առումով հատկանշական է «Մենդենհոլլն ընդդեմ Միացյալ Նահանգների» գործով ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից արված հետևությանը՝ «(...) Եթե քաղաքացու և ոստիկանի յուրաքանչյուր հանդիպումը որակվի որպես հետագա ձերբակալման համար անհրաժեշտ, ապա դա կհանգեցնի լայն սպեկտրի օրինական իրավապահ գործընթացների՝ ոչնչով չարդարացված սահմանափակումների»:

[1] Տե՛ս *Harris v. United States*, 390 U.S. 234 (1968)
URL: https://supreme.justia.com/cases/federal/us/390/234/

[2] Տե՛ս *Terry v. Ohio,* 392 U. S. 1 (1968), Warren, J. URL: https://supreme.justia.com/cases/federal/us/

Նշված գործի շրջանակներում քննվող դեպքով Սիլվիա Մենդենհոլլին, ով գտնվում էր Դեթրոյդի օդանավակայանում, մոտենում են թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի դաշնային գործակալության երկու աշխատակիցներ, որոնք նրան առաջարկում են ներկայացնել վարորդական իրավունքի վկայականը և ավիատոմսը: Վերջինս տրված էր «Անետ Ֆորդ» անունով ուղևորին: Սեփական կամքով, ունենալով ոստիկաններից հեռանալու հնարավորություն, Սիլվիա Մենդենհոլլը համաձայնվել էր նրանց հետ գնալ ոստիկանական բաժանմունք, որտեղ նրա թույլտվությամբ կատարվել էր անձնական խուզարկություն, ինչի արդյունքում հայտնաբերվել էր հերոին տեսակի թմրամիջոցը:

Ինչպես նշել էր Գերագույն դատարանը, տվյալ դեպքում անձին ձերբակալելու փաստի կամ նման մտադրության մասին կարող էին վկայել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ ոստիկանության մի քանի սպաների սպառնալի ներկայությունը, ոստիկանության սպայի կողմից զենքի ցուցադրումը, ֆիզիկապես անձին բռնելը կամ այնպիսի խոսքի կամ ձայնի տոնի օգտագործումը, որոնք հարկադրական վարքագիծ են մատնացույց անում: Մինչդեռ այդ գործով նման վարքագիծ չի ցուցադրվել, և բացի այդ՝ իրավիճակի վերլուծությունում կենտրոնական փաստարկի դեր է կատարել այն փաստը, որ ոստիկանները, մինչև Մենդենհոլլին ոստիկանական գրասենյակ ուղեկցելը, վերադարձրել են նրա վարորդական իրավունքի վկայականը և տոմսը[1]:

Մեկ այլ հայտնի՝ Միչիգանն ընդդեմ Սիտցի գործով ԱՄՆ Գերագույն դատարանը իրավաչափ է ճանաչել ոստիկանության կողմից մի քանի անձանց՝ մի քանի րոպեով ազատության սահմանափակումը՝ ավտոմայրուղու վրա անցկացված ընտրովի ստուգման ընթացքում՝ ինտոքսիկացիայի կամ հարբածության վիճակում մեքենաներ վարելու դեպքերը բացահայտելու համար[2]:

Ըստ այդմ՝ Գերագույն դատարանը գտնում է, որ պետք է տարբերել ձերբակալումը (ազատության էական սահմանափակումը) հանգամանքների պարզման նպատակով շփումից:

Խնդրո առարկայի տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում նաև բրիտանական «stop and search» դոկտրինը, որը էական փոփոխությունների ենթարկվեց ՄԻԵԴ նախադեպային որոշումների ազդեցության տակ:

Այսպես, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն արձանագրեց, որ Միացյալ Թագավորության 2000 թ. «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» ակտի (օրենքի)[3] 44-րդ հոդվածի հիման վրա՝ առանց ողջամիտ կասկածի կատարվող ոստիկանական խուզարկությունները խախտում են Եվրոպական կոնվենցիայի 8-րդ

[1] Տե՛ս *United States v. Mendenhall,* 446 U.S. 544 (1980) URL: https://www.loc.gov/resource/usrep.usrep446544/

[2] Տե՛ս *Michigan Dept. of State Police v. Sitz,* 496 U.S. 444 (1990):

[3] URL: https://www.legislation.gov.uk/ukpga/2000/11/contents/data.pdf

հոդվածով ճանաչված անձնական կյանքը հարգելու իրավունքը, ոստիկանության՝ օրենքով վերապահված լիազորությունները չափազանց անորոշ են ձևակերպված և չեն ուղեկցվել չարաշահումների դեմ համարժեք երաշխիքներով, ինչի արդյունքում անձնական կյանք միջամտությունը եղել է ոչ համաչափ[1]:

Վերը նշված գործով ՄԻԵԴ որոշման ազդեցության ներքո վերանայվեցին «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» օրենքում ամրագրված «stop and search» լիազորությունները, ինչի արդյունքում ձերբակալման և անձնական խուզարկության համար արդեն պահանջվում է կոնկրետ սպառնալիքի առկայություն և նախատեսվեցին մարդու իրավունքների ավելի հստակ երաշխիքներ: Մասնավորապես, ոստիկանությունը պետք է ունենա «ողջամիտ հիմքեր կասկածելու» (reasonable grounds for suspicion), որ անձը կատարել է, կատարում է կամ պատրաստվում է կատարել կոնկրետ հանցագործություն կամ ունի արգելված առարկա (տես՝ Միացյալ Թագավորության «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» 2000 թ.-ի օրենքի 47A հոդվածը): Այս չափանիշը նման է ամերիկյան «ողջամիտ կասկածի» (reasonable suspicion) չափանիշին, սակայն բրիտանական իրավական համակարգում այն կիրառվում է ավելի լայն համատեքստում՝ ներառելով նաև ահաբեկչության դեմ պայքարի լիազորությունները:

3. Եզրահանգումներ

1) Ոստիկանության կողմից իրականացվող ձերբակալումն անհրաժեշտ է դիտարկել որպես մեկ միասնական, սակայն երկբաղադրիչ գործընթաց, որում տարբերակվում են անձի փաստացի ազատությունից զրկելու ոստիկանական-մարտավարական փուլը և այդ փաստին դատավարական ձև հաղորդող փուլը: Այդ տարբերակումը հնարավորություն է տալիս առավել ճշգրիտ որոշելու իրավական երաշխիքների գործարկման պահը և ոստիկանության ու նախաքննության մարմնի լիազորությունների սահմանները:

2) Ձերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկությունը, հաշվի առնելով դրա կատարման ժամանակը, սուբյեկտային կազմը, նպատակը և արդյունքների արձանագրման եղանակը, պետք է տարբերակել ՔրԴՕ-ով նախատեսված քննչական գործողություն-անձնական խուզարկությունից: Այն առավել հիմնավոր է դիտարկել որպես ձերբակալման մարտավարական-անվտանգային բաղադրիչ, որի հիմնական գործառույթը ոչ թե նոր ապացույցի նպատակային որոնումն է, այլ վտանգավոր առարկաների, հնարավոր ապացույցների ոչնչացման կամ կորստի կանխումը և ձերբակալված անձի անվտանգ տեղափոխումը:

[1] Տե՛ս *Գիլանը և Քուինթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության* (Gillan and Quinton v United Kingdom) գործով 2010 թ. հունվարի 12-ի որոշումը: URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-96585

3) Զերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկության արդյունքների և դրա կատարման ընթացքի միջև տարբերակումը պետք է պահպանել նաև փաստաթղթավորման մակարդակում: Գործող իրավակարգավորումների տրամաբանությունից բխում է, որ ձերբակալման արձանագրությունում պետք է արտացոլվեն համապատասխան արդյունքները, և միևնույն գործողությունը որպես ինքնուրույն դատավարական խուզարկություն կրկնակի արձանագրելը կարող է հանգեցնել տարբեր իրավական ռեժիմների արհեստական նույնականացման:

4) Օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումների ընթացքում անձի ազատության սահմանափակումը, ինչպես նաև դրան ուղեկցող զննությունը կամ խուզարկությանը փաստացի մոտեցող գործողությունները պետք է գնահատվեն համաչափության, անհրաժեշտության և իրավական կանխատեսելիության պահանջների տեսանկյունից: Ոստիկանության կողմից անձի ազատության սահմանափակման տևողությունը, ինտենսիվությունը և կիրառվող միջոցների բնույթը պետք է համապատասխանեն հետապնդվող օրինական նպատակին և չվերածվեն ապացուցողական գործողության քողարկված կատարման:

5) Համեմատական իրավական նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոստիկանության և քաղաքացու շփումների, կարճատև կանգնեցման, անձի նկատմամբ զննության կամ խուզարկության և ձերբակալման միջև հստակ տարբերակումը կարևոր նախապայման է իրավաչափության գնահատման համար: «Plain», «encounter» և «stop and search» դոկտրինների վերաբերյալ օտարերկրյա իրավական զարգացումները կարող են օգտակար լինել հայրենական օրենսդրությունում ոստիկանական գործողությունների իրավաչափության երաշխիքների հստակեցման համար:

6) Ձերբակալման և դրան ուղեկցող անձնական խուզարկության իրավական կարգավորման արդյունավետությունը պետք է գնահատել ոչ միայն հանցավորության դեմ պայքարի արդյունավետության, այլև ազատությունից զրկված անձի իրավունքների պաշտպանության, իրավական որոշակիության և ոստիկանության գործողությունների վերահսկելիության համակցության տեսանկյուններից:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

Նորմատիվ իրավական ակտեր և դատական նախադեպեր

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ՀՕ-306-Ն, ընդունվել է 30.06.2021 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022 թ., սկզբնաղբյուր՝ Միասնական կայք 2021.07.26-2021.08.08

2. Շվեյցարիայի Համադաշնության քրեական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է Շվեյցարիայի Դաշնային Ժողովի (պառլամենտի) կողմից 05.10.2007 թ.: URL: https://www.wipo.int/wipolex/ru/legislation/details/19997

3. Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության ակտը (օրենքը) «Ահաբեկչության դեմ պայքարի, Հյուսիսային Իռլանդիայում դատական հետապնդման հարցերի ժամանակավոր կարգավորման և որոշակի իրավախախտումների համար պատժի, խաղաղության ամրապնդման և հասարակական կարգի պահպանության մասին»: Ընդունվել է Միացյալ Թագավորության Պառլամենտի կողմից 21.07.2000 թ.: URL: https://www.legislation.gov.uk/ukpga/2000/11/contents/data.pdf

4. Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ Գիլանը և Քուինթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության (Gillan and Quinton v United Kingdom) գործով 2010 թ. հունվարի 12-ի որոշումը: URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-96585

5. *Arizona v. Hicks,* 480 U. S. 321. 1987. URL: http://caselaw. findlaw.com/us-supreme-court/

6. *Bunch v. Commonwealth*, 658 S. E. 2d 724 [Va. Ct. App. 2008. URL: http://caselaw.findlaw.com/us-supreme-court

7. *United States v. Ceballos,* 385 F.3d 1120. 7th Cir. 2004. URL: http://caselaw.findlaw.com/us-supreme-court/

8. *United States v. Harris,* 390 U.S. 234 (1968) URL: https://supreme.justia.com/cases/federal/us/390/234/

9. *Terry v. Ohio,* 392 U. S. 1 (1968), Warren, J. URL: https://supreme.justia.com/cases/federal/us/

10. *United States v. Mendenhall,* 446 U.S. 544 (1980) URL: https://www.loc.gov/resource/usrep.usrep446544/

11. *Michigan Dept. of State Police v. Sitz*, 496 U.S. 444 (1990):

Տեսական գրականություն

1. **Ղուկասյան Հ., Մելքոնյան Դ., Նիկողոսյան Ա.**, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: Երևան, Եվրոպայի խորհուրդ, 2022, 613 էջ:

URL: https://aoj.am/storage/criminal-procedure-codes/oXoktuUmkYtOJwPnzhgWKNSgUHEFwtWAa1wGpxwV.pdf

2. **Канокова Л.Ю.** Задержание, как мера процессуального принуждения, и сложности, связанные с заключением под стражу подозреваемого (обвиняемого) // Пробелы в российском законодательстве. Т. XIII. 2020. № 4.

3. **Корнуков В.М., Валиев Р.Ш.** Личный обыск и его роль в уголовно-процессуальном доказывании. - Саратов: ГОУ ВПО «Саратовская государственная академия права», 2007. - 206 с.

4. **Пидусов Е.А.** Задержание лица, заподозренного в совершении преступления, как система деятельности // Вестник Воронежского института МВД России. 2010. № 1.

5. **Россинский С.Б.** Задержание подозреваемого как объект уголовно-процессуального регулирования // Журнал юридических исследований. Том 2. № 2. 2017.

6. **Россинский С.Б.** Что такое личный обыск при задержании подозреваемого: следственное действие, непроцессуальное мероприятие или пустая формальность? // Судебная власть и уголовный процесс. 2017. № 1.

7. **Тарасов А.А. Шейфер С.А.** О познавательной сущности задержания подозреваемого // Юридический вестник Самарского университета. 2017. № 4.

8. **Харзинова В.М.** Понятие и виды мер процессуального принуждения // Пробелы в российском законодательстве. 2018. № 5.

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЗАДЕРЖАНИЯ ЛИЦА ПОЛИЦИЕЙ И ПРОВЕДЕНИЯ СОПРОВОЖДАЮЩЕГО ЕГО ЛИЧНОГО ОБЫСКА

Аннотация

Статья посвящена уголовно-процессуальным аспектам задержания лица полицией и проведения сопровождающего его личного обыска. Предметом исследования являются правовая природа задержания, а также сущность, время проведения, субъектный состав, цели и способы фиксации результатов личного обыска, осуществляемого в связи с задержанием. Цель исследования заключается в определении правовой природы такого обыска и выяснении того, является ли он самостоятельным следственным действием или неотъемлемой частью процедуры задержания.

В статье обосновываются следующие основные положения: задержание представляет собой единый, но состоящий из двух этапов процесс; личный обыск, проводимый в связи с задержанием, по своей правовой природе отличается от предусмотренного уголовно-процессуальным законодательством следственного

действия — личного обыска; составление отдельного протокола по результатам такого обыска может приводить к искусственному разграничению правовых режимов задержания и личного обыска. Помимо этого, рассматривается возможность использования зарубежного правового опыта, в частности доктрин «plain view», «encounter», Terry stop и «stop and search», для совершенствования правовых гарантий законности действий полиции в национальном законодательстве.

Ключевые слова: задержание, личный обыск, полицейская деятельность, уголовный процесс, оперативно-профилактическое мероприятие, разумное подозрение, права человека.

SOME ISSUES RELATED TO THE DETENTION OF A PERSON BY THE POLICE AND THE ACCOMPANYING PERSONAL SEARCH

Annotation

The article is devoted to criminal procedure issues of the detention/arrest of a person by the police and the accompanying personal search. The subject of the study is the nature of detention/arrest, as well as the essence, time of performance, subject composition, purpose, and method of recording the results of the personal search accompanying detention/arrest. The aim is to clarify whether this search is an investigative action or an inherent component of detention/arrest.

Main provisions: detention/arrest is viewed as a unified but two-stage process; the personal search accompanying detention/arrest differs from the investigative action – personal search – provided for by the criminal procedure code; separate recording of the personal search leads to artificial identification of legal regimes; foreign legal developments concerning the doctrines of "plain view", "encounter", Terry stop, and "stop and search" may be useful for clarifying guarantees of the legality of police actions in domestic legislation.

Keywords: detention/arrest, personal search, police activity, criminal procedure, operational-preventive measure, reasonable suspicion, human rights.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 25.09.2026 թ., տրվել է գրախոսության 25.09.2026 թ., ընդունվել է տպագրության 28.09.2026 թ.:

DOI: 10.59560/18291155-2026.3-99



ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ
Բարձրագույն դատական խորհրդի անդամ,
Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարանի
իրավագիտության դասախոս

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՆԿԱԼՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

Ամփոփագիր

Հոդվածում շրջակա միջավայրի իրավունքը քննվում է ոչ թե որպես ոլորտային, բնապահպանական օրենսդրությամբ պայմանավորված սուբյեկտիվ իրավունք, այլ որպես իրավական պետության ժամանակակից ընկալման կառուցվածքային բաղադրիչ: Հեղինակը հիմնավորում է, որ ոչ իրավական պետությունում շրջակա միջավայրի իրավունքը կարող է հռչակվել, սակայն չի կարող գոյություն ունենալ որպես իրավունք բառի իրավադոգմատիկ իմաստով, քանի որ զրկված է իր կոռելատիվ պարտականությունից և հարկադրելիությունից: Ցույց է տրվում, որ էկոլոգիական ճգնաժամը բացահայտում է դասական՝ վնասակենտրոն, երկկողմ և ռետրոսպեկտիվ իրավական պետության մոդելի կառուցվածքային սահմանափակումները և պահանջում է անցում ռիսկերի կառավարման վրա հենված մոդելի: Հոդվածի եզրափակիչ մասում առաջարկվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի մեկնաբանման վրա հենված չորսփուլ թեստ՝ ճգնաժամային իրավիճակներում մրցակցող սահմանադրական արժեքների առաջնահերթությունը որոշելու համար:

Հիմնաբառեր. իրավական պետություն, շրջակա միջավայրի իրավունք, մարդու արժանապատվություն, էկոլոգիական նվազագույն գոյավիճակ, միջժամանակային ազատության ապահովում, մարդակենտրոն մոտեցում, կանխարգելման սկզբունք, ռիսկերի իրավունք, Սահմանադրության 3-րդ հոդված:

Ներածություն

Շրջակա միջավայրի իրավունքի սահմանադրաիրավական հետազոտությունները, որպես կանոն, զարգացել են երկու հիմնական ուղղություններով՝ մի կողմից՝ քննարկելով այդ իրավունքի ինքնուրույն

սահմանադրական կարգավիճակի հարցը, մյուս կողմից՝ բացահայտելով դրա նյութական և ընթացակարգային բովանդակությունը: Այդ մոտեցումները նշանակալիորեն նպաստել են շրջակա միջավայրի իրավունքի սահմանադրականացմանը, սակայն բավարար չափով չեն բացահայտել հակառակ կապը՝ ինչպես է շրջակա միջավայրի իրավունքի ճանաչումն ու էկոլոգիական ճգնաժամին արձագանքելու անհրաժեշտությունը վերափոխում հենց իրավական պետության ժամանակակից հայեցակարգը:

Սույն հոդվածի հետազոտական վարկածն այն է, որ շրջակա միջավայրի իրավունքը պետք է դիտարկել ոչ միայն որպես իրավական պետության շրջանակում երաշխավորվող հիմնարար իրավունք, այլև որպես իրավական պետության ժամանակակից բովանդակությունը պայմանավորող սահմանադրաիրավական բաղադրիչ: Այս տեսանկյունից հետազոտական հարցը ձևակերպվում է հակառակ ուղղությամբ. ոչ թե միայն ի՞նչ երաշխիքներ է իրավական պետությունը տրամադրում շրջակա միջավայրի իրավունքին, այլ նաև՝ **ինչպե՞ս է փոխվում իրավական պետության բովանդակությունը, երբ էկոլոգիական անվտանգությունը և շրջակա միջավայրի պահպանությունը վերածվում են պետության սահմանադրական պատասխանատվության առանցքային ոլորտներից մեկի**:

Այս հիմնախնդրից բխում են երեք փոխկապակցված հետազոտական հարցեր: **Առաջին՝** արդյո՞ք շրջակա միջավայրի իրավունքի նորմատիվ ճանաչումն ինքնին բավարար է դրա իրական գոյության համար այնպիսի պետությունում, որտեղ բացակայում են իրավական պետությանը բնորոշ արդյունավետ ինստիտուցիոնալ և դատական երաշխիքները: **Երկրորդ՝** որքանո՞վ է իրավական պետության դասական՝ XIX–XX դարերում ձևավորված մոդելը կառուցվածքային առումով ընդունակ արձագանքելու էկոլոգիական ճգնաժամի այնպիսի առանձնահատկություններին, ինչպիսիք են վնասի անդառնալիությունը և կուտակային բնույթը, գիտական անորոշությունը և դրա հետևանքների միջսերնդային բաշխվածությունը: **Երրորդ՝** ինչպիսի՞ սահմանադրաիրավական հավասարակշռում է պահանջվում այն իրավիճակներում, երբ շրջակա միջավայրի պահպանության հանրային շահը մրցակցում է անհատի հիմնարար իրավունքների հետ՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով մարդու՝ որպես բարձրագույն արժեքի և արժանապատվության՝ որպես իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմքի սահմանադրական կարգավիճակը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմում են իրավափիլիսոփայական, իրավադոգմատիկ և համեմատական իրավական մեթոդները, ինչպես նաև դատական պրակտիկայի վերլուծությունը: Իրավափիլիսոփայական մեթոդը կիրառվել է իրավական պետության ձևական և նյութական հայեցակարգերի քննության և համադրման, իրավադոգմատիկ մեթոդը՝ ՀՀ Սահմանադրության համապատասխան դրույթների համակարգային

մեկնաբանման, իսկ համեմատական իրավական մեթոդը՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Հարավային Աֆրիկայի և Էկվադորի սահմանադրաիրավական կարգավորումների համեմատական ուսումնասիրության նպատակով: Վերլուծվել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հետազոտության առարկային առնչվող նախադեպային իրավունքը:

Հոդվածի գիտական ներդրումն իրավական պետության և շրջակա միջավայրի իրավունքի փոխհարաբերության երկկողմանի հայեցակարգման առաջարկն է. շրջակա միջավայրի իրավունքը դիտարկվում է ոչ միայն որպես իրավական պետության կողմից պաշտպանության ենթակա իրավունք, այլև որպես ժամանակակից իրավական պետության նյութական բովանդակության և դրա պոզիտիվ պարտավորությունների շրջանակի վերափոխման գործոն:

1. Իրավական պետության գաղափարը. իրավափիլիսոփայական և իրավադոգմատիկ հենքը

Ձևական և նյութական ընկալումների հակադրությունը: Իրավական պետության գաղափարը իրավական մտքի պատմության մեջ ձևավորվել է որպես կամայականության ժխտում: Կանտյան ավանդույթում պետությունը սահմանվում է որպես մարդկանց միավորում իրավական օրենքների ներքո, իսկ պետական հարկադրանքի իրավաչափությունը պայմանավորվում է անհատի՝ որպես ինքնանպատակի (և ոչ երբեք միայն որպես միջոցի) ճանաչմամբ[1]: Հենց այս փիլիսոփայական միջուկից է ծնունդ առել գերմանական իրավական պետություն (Rechtsstaat) դասական հայեցակարգը, որը XIX դարի ընթացքում մշակվել է Ռ. ֆոն Մոլի և նրա հետևորդների աշխատություններում որպես վարչական կամայականությունը օրենքով կապելու ծրագիր[2]:

Անգլոսաքսոնական ավանդույթում իրավունքի գերակայության *(rule of law*) դասական ձևակերպումը՝ Ա. Դայսիի մոտ, ընդգրկում է կամայական իշխանության բացակայությունը, օրենքի առջև հավասարությունը և իրավունքների դատական ծագումնաբանությունը[3]: Երկու ավանդույթներն էլ, սակայն, մեկնարկային փուլում ունեն ընդգծված **ձևական** բնույթ. նրանք պատասխանում են այն հարցին, թե ինչպես պետք է իշխանությունն իրականացվի, և ոչ թե՝ ինչ բովանդակություն պետք է ունենա իրավական կարգավորումը:

[1] Տե՛ս **Կանտ Ի.,** Բարքերի մետաֆիզիկա (Kant I., Die Metaphysik der Sitten), 1797, Իրավունքի ուսմունքի ընդհանուր մաս: § 45–49:

[2] Տե՛ս **ֆոն Մոլ Ռ.,** Ոստիկանական գիտությունը իրավական պետության սկզբունքների համաձայն (von Mohl R., Die Polizeiwissenschaft nach den Grundsätzen des Rechtsstaates), Թյուբինգեն, 1832–1834:

[3] Տե՛ս **Դայսի Ա.Վ.,** Ներածություն սահմանադրական իրավունքի ուսումնասիրությանը (Dicey A. V., Introduction to the Study of the Law of the Constitution), Լոնդոն, 1885, գլ. IV:

Ձևական ընկալման առավել ամբողջական տարբերակը Լ. Ֆուլլերի «իրավունքի ներքին բարոյականությունն» է՝ ընդհանրականություն, հրապարակայնություն, հետադարձ ուժի արգելք, հասկանալիություն և հակասությունների բացակայություն, կատարելիություն, կայունություն և հռչակված նորմի ու իրական պրակտիկայի համընկնում[1]: Ջ. Ռազը, զարգացնելով այս մոտեցումը, ուղղակիորեն նշում է, որ իրավական պետությունն ինքնին բարոյական ամբողջականության երաշխիք չէ. այն իրավական համակարգի «գործիքային առաքինություն» է, ինչպես դանակի սրությունը՝ դանակի համար[2]: Այս տրամաբանությամբ բնապահպանական ծանր հետևանքներ առաջացնող, սակայն ձևականորեն անթերի իրավական համակարգը ձևական չափանիշներով կմնա «իրավական»:

Հենց այս եզրահանգումն է ցույց տալիս ձևական մոտեցման սահմանը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ Գ. Ռադբրուխի հայտնի բանաձևից սկսած[3], եվրոպական սահմանադրական ավանդույթը հաստատուն կերպով անցում կատարեց իրավական պետության **նյութական** ընկալմանը, որի կենտրոնում ոչ թե օրենքի ձևն է, այլ մարդու արժանապատվության և հիմնարար իրավունքների անխախտելիությունը: Այս ընկալումն է ամրագրված նաև Վենետիկի հանձնաժողովի «Իրավական պետության գնահատման չափանիշներում», որտեղ իրավական պետության բաղադրիչներ են համարվում ոչ միայն օրինականությունն ու իրավական որոշակիությունը, այլև կամայականության արգելքը, արդարադատության մատչելիությունը, մարդու իրավունքների հարգումը և ոչ խտրական վերաբերմունքը[4]:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետությունը հռչակվում է ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն: Այս ձևակերպումը զուտ նկարագրական չէ. Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասով հանրային իշխանությունը սահմանափակված է անմիջականորեն գործող հիմնական իրավունքներով և ազատություններով, ինչը վկայում է հայկական սահմանադրական մոդելում իրավական պետության նյութական ընկալման ամրագրման մասին:

Այս համատեքստում հարց է առաջանում՝ կարո՞ղ է արդյոք շրջակա միջավայրի իրավունքը գոյություն ունենալ ոչ իրավական պետությունում: Պատասխանը կախված է նրանից, թե իրավունքի «գոյությունը» որ իմաստով է դիտարկվում: Այս

[1] Տե՛ս **Ֆուլլեր Լ.Լ.,** Իրավունքի բարոյականությունը (Fuller L. L., The Morality of Law), Նյու Հեյվեն, 1964, էջ 33–94:

[2] Տե՛ս **Ռազ Ջ.,** Իրավական պետությունը և դրա առաքինությունը (Raz J., The Rule of Law and its Virtue), Law Quarterly Review, 1977, h. 93, էջ 195–202:

[3] Տե՛ս **Ռադբրուխ Գ.,** Օրենսդրական անօրինականություն և վերօրենսդրական իրավունք (Radbruch G., Gesetzliches Unrecht und übergesetzliches Recht), Süddeutsche Juristen-Zeitung, 1946, № 5, էջ 105–108:

[4] Տե՛ս Վենետիկի հանձնաժողով, Իրավական պետության ստուգաթերթ (Venice Commission, Rule of Law Checklist), CDL-AD(2016)007, 18.03.2016 թ., կետեր 44–115:

առումով անհրաժեշտ է տարբերակել երեք հարթություն՝ բարոյափիլիսոփայական (իրավունքը՝ որպես բարոյապես հիմնավորված պահանջ), նորմատիվ-դրական (իրավունքը՝ որպես գործող իրավունքի նորմ) և իրավադոգմատիկ-գործառական (իրավունքը՝ որպես կոռելատիվ պարտականությամբ և հարկադրելիությամբ ապահովված իրավական դիրք):

Առաջին հարթությունում պատասխանը դրական է. մարդու՝ իր կյանքի և առողջության համար անվտանգ միջավայրում ապրելու պահանջը բարոյապես հիմնավորված է անկախ պետական կարգից և բխում է անձի արժանապատվության ճանաչումից: Այս իմաստով շրջակա միջավայրի իրավունքը **պետությանը նախորդող բնույթ ունի**. այն ոչ թե ստեղծվում է պետության կողմից, այլ ճանաչվում և իրավական պաշտպանության է արժանանում պետության կողմից: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասի՝ մարդու **անօտարելի** արժանապատվության մասին ձևակերպումը հենց այս՝ ճանաչողական, այլ ոչ թե իրավաստեղծ տրամաբանության արտահայտությունն է:

Երկրորդ՝ **նորմատիվ-դրական հարթությունում**, շրջակա միջավայրի իրավունքը կարող է ամրագրված լինել գործող իրավունքում նաև ոչ իրավական պետությունում, և հենց այստեղ է ի հայտ գալիս հետազոտական հիմնական խնդիրը: Ոչ իրավական պետություններում հաճախ հանդիպում են շրջակա միջավայրի իրավունքի ընդարձակ և արտահայտիչ սահմանադրական ձևակերպումներ: Իրավաբանական գրականության մեջ այս երևույթը բնութագրվում է որպես «հռչակագրային սահմանադրականություն», որի պայմաններում իրավունքի հռչակումը կատարում է առավելապես լեգիտիմացնող, այլ ոչ թե պաշտպանական գործառույթ: Նման պայմաններում իրավունքների հռչակագրային ամրագրումը ոչ միայն չի ապահովում դրանց արդյունավետ պաշտպանությունը, այլև կարող է ստեղծել այդպիսի պաշտպանության առկայության ձևական տպավորություն:

Երրորդ՝ **իրավադոգմատիկ-գործառական հարթությունում**, որտեղ իրավունքը դիտարկվում է որպես իրեն համապատասխանող պարտականությամբ և իրավական պաշտպանության հնարավորությամբ ապահովված իրավական դիրք, պատասխանը բացասական է: Այսինքն, իրավունքը՝ որպես իրավադոգմատիկ կատեգորիա, ենթադրում է համապատասխան պարտականություն կրող սուբյեկտի առկայություն, այդ պարտականության բովանդակության որոշակիություն և դրա չկատարման դեպքում անկախ մարմնի միջոցով իրավական պաշտպանության ապահովման հնարավորություն:

Այս տարրերի արդյունավետությունը պայմանավորված է իրավական պետության հիմնարար կառուցակարգերով՝ իշխանությունների բաժանմամբ, դատական իշխանության անկախությամբ, հանրային տեղեկատվության մատչելիությամբ և վարչարարության՝ իրավունքով սահմանափակվածությամբ: Հետևաբար, ոչ իրավական պետությունում շրջակա միջավայրի իրավունքը կարող է ձևականորեն

ամրագրված լինել, սակայն չգործել որպես **արդյունավետ իրացվող և պաշտպանվող սուբյեկտիվ իրավունք**:

Այս եզրահանգումը շրջակա միջավայրի իրավունքին տալիս է առանձնահատուկ ախտորոշիչ արժեք: Ի տարբերություն դասական ազատությունների, որոնց նվազագույն պաշտպանությունը կարող է ապահովվել նույնիսկ պետության պասիվ վարքագծով (չմիջամտելով), շրջակա միջավայրի իրավունքն սկզբունքորեն անհնար է իրացնել պետության բացասական պարտականության միջոցով: Այն պահանջում է մշտական մոնիթորինգ, թույլտվությունների համակարգ, վերահսկողություն, պատժամիջոցներ, տեղեկատվության հրապարակում և դատական վիճարկումներ և որոշումների վերանայում, այսինքն՝ գործող ինստիտուցիոնալ ամբողջություն: Այդ իսկ պատճառով շրջակա միջավայրի իրավունքի իրական վիճակը հանդիսանում է իրավական պետության **փորձաքար**, քանի որ դրա իրական պաշտպանվածությունը չի կարող ապահովվել միայն հռչակագրային ամրագրմամբ:

Այս դատողությունը հաստատվում է նաև Եվրոպական դատարանի պրակտիկայի կառուցվածքով: Բնապահպանական գործերի գերակշիռ մասում խախտումն արձանագրվում է ոչ թե նյութական չափորոշիչի բացակայության, այլ **ընթացակարգային-ինստիտուցիոնալ** ձախողման հիմքով՝ չկատարված վերահսկողություն, չհրապարակված տեղեկատվություն, չկատարված դատական ակտ, չիրականացված ազդեցության գնահատում[1]: Այլ կերպ՝ Եվրոպական դատարանը փաստացի գնահատում է ոչ թե պետության էկոլոգիական քաղաքականության բովանդակությունը, այլ այն, թե որքանով է տվյալ պետությունը շրջակա միջավայրի պահպանության ոլորտում համապատասխանում իրավական պետության չափանիշներին:

Այստեղից բխում է սույն հոդվածի առաջին հիմնական դրույթը. շրջակա միջավայրի իրավունքի արդյունավետությունը չի որոշվում միայն բնապահպանական օրենսդրության որակով, այլ էապես պայմանավորված է իրավական պետության ինստիտուտների և երաշխիքների արդյունավետությամբ:

Հակառակ դրան՝ ոչ իրավական պետության պայմաններում բնապահպանական օրենսդրության խստացումն ինքնին չի հանգեցնում շրջակա միջավայրի պաշտպանության մակարդակի բարձրացման և կարող է մեծացնել դրա ընտրողական կիրառման ու կոռուպցիոն դրսևորումների ռիսկը:

[1] Տե՛ս, ի թիվս այլնի, ՄԻԵԴ, *Թասքընը և այլք ընդդեմ Թուրքիայի (Taşkin and Others v. Turkey),* գանգատ թիվ 46117/99, 10.11.2004 թ. վճիռ, կետեր 118–125, որտեղ Դատարանը 8-րդ հոդվածի խախտումը կապել է ներպետական դատական ակտերի չկատարման հետ:

2. Շրջակա միջավայրի իրավունքը և մարդու արժանապատվությունը

Արժանապատվության օբյեկտիվ-իրավական չափումը: Մարդու արժանապատվությունը ՀՀ Սահմանադրության համակարգում ունի կրկնակի ամրագրում՝ 3-րդ հոդվածի 1-ին մասով՝ որպես իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք և դրանց սահմանադրաիրավական բովանդակության ձևավորման հիմնարար արժեքային աղբյուր, և 23-րդ հոդվածով՝ որպես անխախտելի ինքնուրույն իրավունք: Այս կրկնակիությունը պատահական չէ. այն արտահայտում է արժանապատվության երկակի իրավական բնույթը՝ որպես սուբյեկտիվ իրավունքի և որպես ամբողջ սահմանադրական կարգի օբյեկտիվ-իրավական սկզբունքի:

Մարդու արժանապատվության օբյեկտիվ-իրավական բովանդակության բացահայտման կարևոր դոկտրինալ չափանիշներից է գերմանական իրավագիտությունում Գ. Դյուրիգի մշակած «օբյեկտի բանաձևը», ըստ որի՝ արժանապատվությունը խախտվում է, երբ մարդը վերածվում է պետական իշխանության գործողության սոսկ օբյեկտի[1]: Բնապահպանական համատեքստում այս մոտեցումը կարող է դրսևորվել այն դեպքերում, երբ բնակչության կյանքն ու առողջությունը փաստացի ստորադասվում են տնտեսական նպատակներին, իսկ շրջակա միջավայրի վնասակար ազդեցությունը դիտարկվում է որպես տնտեսական գործունեության ընդունելի հետևանք: Նման պայմաններում մարդը պետական քաղաքականության մեջ կարող է վերածվել նպատակին հասնելու միջոցի, ինչը հակասում է մարդու արժանապատվության՝ որպես ինքնուրույն արժեքի ընկալմանը:

Այս մոտեցումն էապես փոխում է բնապահպանական գործերի իրավական գնահատման տրամաբանությունը: Եթե շրջակա միջավայրին պատճառված վնասը դիտարկվում է միայն դրա գույքային կամ առողջական հետևանքների տեսանկյունից, իրավական պաշտպանությունը հիմնականում կենտրոնանում է պատճառված վնասի վերականգնման կամ փոխհատուցման վրա: Մինչդեռ մարդու արժանապատվության հարթությունում խնդիրը ձեռք է բերում այլ սահմանադրաիրավական բովանդակություն. խոսքն արդեն վերաբերում է մարդու արժանապատիվ գոյության այն նվազագույն պայմաններին, որոնց խախտումը չի կարող արդարացվել միայն տնտեսական շահերով կամ փոխհատուցման հնարավորությամբ: Այս մոտեցումը համահունչ է ՀՀ Սահմանադրության 80-րդ հոդվածին, ըստ որի՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սահմանափակումների էությունը պետք է մնա անխախտ:

Էկոլոգիական նվազագույն գոյավիճակի հայեցակարգը: Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանը 2010 թ. որոշմամբ մարդու արժանապատվության և սոցիալական պետության սկզբունքի համակցությունից

[1] Տե՛ս **Դյուրիգ Գ.,** Մարդու արժանապատվության անձեռնմխելիությունը (Dürig G., Der Grundrechtssatz von der Menschenwürde), Archiv des öffentlichen Rechts, 1956, h. 81, էջ 117 և հաջորդները:

բխեցրեց **արժանապատիվ գոյության նվազագույնի** (*menschenwürdiges Existenzminimum*) սահմանադրական իրավունքը՝ դրա բովանդակության մեջ ներառելով ինչպես ֆիզիկական գոյության ապահովման, այնպես էլ հասարակական կյանքին մասնակցության համար անհրաժեշտ նվազագույն նյութական պայմանները[1]: Այս կառուցվածքի տրամաբանական տարածումը բնապահպանական ոլորտում հանգեցնում է **արժանապատիվ գոյության էկոլոգիական նվազագույնի հայեցակարգին**:

Այս հայեցակարգի բովանդակությունը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. գոյություն ունի շրջակա միջավայրի որակի այնպիսի շեմ, որից ցածր մարդու արժանապատիվ գոյությունն օբյեկտիվորեն անհնար է՝ անկախ նրանից, թե ինչ դրամական փոխհատուցում է տրամադրվում: Այս շեմը ներառում է շնչելի օդը, խմելու ջրի հասանելիությունը, բնակավայրի՝ քրոնիկ թունավոր ազդեցությունից զերծ լինելը և բնակարանի՝ որպես անձնական կյանքի կենտրոնի, օգտագործելիությունը: Այս շեմից ցածր իջնելն արժանապատվության միջուկի խախտում է և, հետևաբար, ենթակա չէ արդարացման ո՛չ տնտեսական նպատակահարմարությամբ, ո՛չ էլ համաչափության թեստի կիրառմամբ, քանի որ Սահմանադրության 80-րդ հոդվածի ուժով հիմնական իրավունքի այդ անխախտելի միջուկը չի կարող սահմանափակվել՝ որևէ այլ սահմանադրական արժեքների հետ կշռադատման արդյունքում:

Այս կառուցվածքն արտացոլված է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայում, թեև այն արտահայտվում է այլ իրավական հասկացությունների և չափանիշների միջոցով:

Դուբեցկան և այլք ընդդեմ Ուկրաինայի գործով Դատարանն արձանագրել է 8-րդ հոդվածի խախտում՝ հաշվի առնելով, որ պետությունը երկար ժամանակ չի ձեռնարկել անհրաժեշտ և արդյունավետ միջոցներ բնակիչներին արդյունաբերական աղտոտման վնասակար ազդեցությունից պաշտպանելու համար՝ չապահովելով ո՛չ աղտոտման պատշաճ նվազեցումը, ո՛չ էլ նրանց վերաբնակեցումը[2]:

Կորդելլան և այլք ընդդեմ Իտալիայի գործում Դատարանը գնաց ավելի հեռու՝ արձանագրելով խախտում այն դեպքում, երբ պետությունը շարունակում էր օրենսդրորեն երկարաձգել «Իլվա» մետալուրգիական գործարանի գործունեությունը՝ չնայած հաստատված առողջական ռիսկերին[3]: Երկու գործում էլ խախտման հիմքում ընկած է ոչ թե անհատական վնասի չափը, այլ կենսապայմանների որակի իջեցումը ընդունելիության շեմից ցածր:

[1] Տե՛ս Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի 09.02.2010 թ. որոշումը (BVerfGE 125, 175 – Hartz IV), կետեր 133–139:

[2] Տե՛ս ՄԻԵԴ, *Դուբեցկան և այլք ընդդեմ Ուկրաինայի (Dubetska and Others v. Ukraine),* գանգատ թիվ 30499/03, 10.02.2011 թ. վճիռ, կետեր 145–156:

[3] Տե՛ս ՄԻԵԴ, *Կորդելլան և այլք ընդդեմ Իտալիայի (Cordella and Others v. Italy),* գանգատներ թիվ 54414/13 և 54264/15, 24.01.2019 թ. վճիռ, կետեր 158–174:

Այս վերլուծությունը թույլ է տալիս ձևակերպել սույն հոդվածի երրորդ հիմնական դրույթը. **շրջակա միջավայրի իրավունքի սահմանադրական հենքը ոչ թե ինքնուրույն «էկոլոգիական իրավունքն» է, այլ մարդու արժանապատվության նյութական բովանդակությունը**: Այս մոտեցումը գործնական երկու առավելություն ունի. այն ազատում է իրավակիրառողին շրջակա միջավայրի իրավունքի ինքնուրույն ամրագրման բացակայությունը հաղթահարելու անհրաժեշտությունից և բնապահպանական պահանջին տալիս է այն նորմատիվ ծանրությունը, որը բնորոշ է արժանապատվության պաշտպանությանը:

Միաժամանակ անհրաժեշտ է խուսափել այս մոտեցման չափազանց լայն մեկնաբանությունից: Ոչ յուրաքանչյուր բնապահպանական խախտում է հասնում այնպիսի ծանրության, որ վտանգի մարդու արժանապատիվ գոյության նվազագույն պայմանները: Հետևաբար, արժանապատվության փաստարկի կիրառումը պետք է սահմանափակվի այն դեպքերով, երբ շրջակա միջավայրի վնասակար ազդեցությունն իր բնույթով, տևողությամբ և ինտենսիվությամբ էականորեն խաթարում է մարդու արժանապատիվ կյանքի համար անհրաժեշտ պայմանները: Այդ շեմը գնահատելիս կարող են հաշվի առնվել ազդեցության երկարատև կամ քրոնիկ բնույթը, անձի կամ խմբի խոցելիությունը, վնասակար ազդեցությունից խուսափելու իրական հնարավորության բացակայությունը և կյանքի կամ առողջության համար առկա վտանգի աստիճանը:

3. Մարդակենտրոն և էկոկենտրոն մոտեցումների հարաբերակցությունը

Շրջակա միջավայրի իրավունքի տեսության առանցքային հայեցակարգային հակադրություններից է **մարդակենտրոն (անտրոպոցենտրիկ)** և **էկոկենտրոն** մոտեցումների տարբերակումը: Մարդակենտրոն մոտեցման շրջանակում շրջակա միջավայրի պաշտպանությունը հիմնավորվում է նախևառաջ մարդու կյանքի, առողջության, արժանապատվության և այլ հիմնարար իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ, իսկ բնությանը վերագրվում է առավելապես գործիքային արժեք: Էկոկենտրոն մոտեցումը, ընդհակառակը, ելնում է բնության՝ մարդուց անկախ **ներհատուկ արժեքի** ճանաչումից, որը որոշ իրավական համակարգերում զարգացել է մինչև բնության կամ դրա առանձին տարրերի ինքնուրույն իրավունքների և իրավասուբյեկտության ճանաչում:

Էկոցենտրիկ մոդելի ամենահետևողական սահմանադրական մարմնավորումը Էկվադորի 2008 թ. Սահմանադրությունն է, որի 71–74-րդ հոդվածներով բնությունը (Pachamama) ճանաչվում է իրավունքների կրող, իսկ ցանկացած անձ իրավասու է դատարանում պահանջել այդ իրավունքների պաշտպանությունը[1]: Այս մոդելի

[1] Տե՛ս Էկվադորի Հանրապետության 2008 թ. Սահմանադրություն 71–74-րդ հոդվածներ: Բնության իրավունքների դոկտրինի զարգացման այլ օրինակներ են Կոլումբիայի Սահմանադրական դատարանի 2016 թ. որոշումը Ատրատո գետի վերաբերյալ (T-622/16) և Նոր Զելանդիայի 2017 թ.

տեսական արժանիքն այն է, որ այն վերացնում է անհատական տուժողի պահանջը և թույլ է տալիս պաշտպանել այն էկոհամակարգերը, որոնց ոչնչացումն ուղղակիորեն չի ազդում որևէ մարդու իրավունքի վրա:

Այս մոդելը, սակայն, առաջացնում է նաև մի շարք իրավադոգմատիկ խնդիրներ: **Առաջին՝** ոչ մարդկային սուբյեկտին իրավասուբյեկտության ճանաչումը պահանջում է նրա իրավունքների ներկայացուցչության և պաշտպանության համապատասխան կառուցակարգ, որի պայմաններում բնության շահերի բովանդակությունը և դրանց պաշտպանության եղանակները, ի վերջո, որոշվում են մարդու կամ մարդկային ինստիտուտների միջոցով: **Երկրորդ՝** բնության և մարդու իրավունքների հնարավոր բախման դեպքում անհրաժեշտ է դրանց հարաբերակցության և կշռադատման հստակ իրավական չափանիշների ձևավորում, որոնց բացակայությունը կարող է հանգեցնել իրավական անորոշության: **Երրորդ՝** իրավունքի սուբյեկտների շրջանակի ընդլայնումն ինքնին չի ապահովում շրջակա միջավայրի պաշտպանության արդյունավետության բարձրացում, եթե այն չի ուղեկցվում դատական պաշտպանության, վերահսկողության և դատական ակտերի արդյունավետ կատարման համապատասխան կառուցակարգերով:

Եվրոպական մարդու իրավունքների պաշտպանության համակարգում գերակշռում է մարդակենտրոն մոտեցումը: Մասնավորապես, ***«Կիրտատոսն ընդդեմ Հունաստանի»*** գործով[1] Մարդու իրավունքների եվրոպական դատարանը շրջակա միջավայրի պաշտպանությունը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակում կապեց մարդու մասնավոր և ընտանեկան կյանքի վրա բնապահպանական վնասի անմիջական ազդեցության հետ՝ չճանաչելով բնության՝ որպես այդպիսին, ինքնուրույն պաշտպանությունը: Մարդակենտրոն մոտեցումն արտահայտված է նաև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2022 թ. բանաձևում, որով ճանաչվել է յուրաքանչյուր մարդու՝ մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայրի իրավունքը[2]:

Սույն հետազոտության շրջանակում առաջադրվում է այն դիրքորոշումը, որ մարդակենտրոն և էկոկենտրոն մոտեցումների հակադրությունը բացարձակ չէ և մեծապես պայմանավորված է մարդակենտրոնության նեղ՝ **շահագործող ընկալմամբ**: Այս առումով անհրաժեշտ է տարբերակել շահագործող մարդակենտրոնությունը, որի շրջանակում բնությունը դիտարկվում է առավելապես որպես մարդու կարիքների բավարարման ռեսուրս, և **էկոլոգիական պատասխանատվության վրա հիմնված մարդակենտրոնությունը**, որի ելակետը

օրենքը Ուանգանուի գետին իրավաբանական անձի կարգավիճակ շնորհելու մասին (Te Awa Tupua Act 2017):

[1] Տե՛ս ՄԻԵԴ, *Կիրտատոսն ընդդեմ Հունաստանի (Kyrtatos v. Greece)*, գանգատ թիվ 41666/98, 22.05.2003 թ., կետեր 52–54:

[2] Տե՛ս ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 28.07.2022 թ. A/RES/76/300 բանաձևը Մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայրի՝ որպես մարդու իրավունքի մասին: Տե՛ս նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 08.10.2021 թ. 48/13 բանաձևը:

շարունակում է մնալ մարդը, սակայն՝ որպես էկոհամակարգից կախված և ապագա սերունդների հետ փոխկապակցված էակ: Այս ընկալման շրջանակում էկոհամակարգերի ամբողջականության և կենսունակության պահպանումը դառնում է մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության անհրաժեշտ պայման, այլ ոչ թե դրանց հակադրվող ինքնուրույն արժեք:

Այս մոտեցումը ՀՀ իրավակարգում ունի նաև սահմանադրական հիմք: Սահմանադրության 3-րդ հոդվածով մարդը ճանաչվում է բարձրագույն արժեք, ինչն արտահայտում է սահմանադրական կարգի մարդակենտրոն արժեքային ելակետը: Միաժամանակ Սահմանադրության 12-րդ հոդվածը շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումն ամրագրում է սահմանադրական կարգի հիմունքների համակարգում՝ նախատեսելով նաև պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Այս դրույթների համակարգային մեկնաբանությունը հնարավորություն է տալիս հիմնավորելու **էկոլոգիական պատասխանատվության վրա հիմնված մարդակենտրոն մոտեցումը**, որի շրջանակում մարդու՝ որպես բարձրագույն արժեքի պաշտպանությունն անբաժանելի է նրա գոյության բնական միջավայրի և ապագա սերունդների կենսական պայմանների պահպանությունից:

4. Սահմանադրական արժեքների հարաբերակցությունը ճգնաժամային իրավիճակներում՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ և 12-րդ հոդվածների համակարգային մեկնաբանմամբ

Սահմանադրական արժեքների հարաբերակցության վերահմաստավորումը: Բնապահպանական որոշումների ընդունման համատեքստում առաջնահերթությունների հարցը հաճախ ներկայացվում է որպես ընտրություն «մարդու իրավունքների» և «շրջակա միջավայրի» միջև: Այդ հակադրությունը, սակայն, բավարար չափով չի արտացոլում ՀՀ Սահմանադրության արժեքային կառուցվածքը: Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասով բարձրագույն արժեք է ճանաչվում մարդը, իսկ 2-րդ մասը հանրային իշխանության վրա դնում է նրա հիմնական իրավունքներն ու ազատությունները հարգելու և պաշտպանելու պարտականություն: Միաժամանակ, 12-րդ հոդվածը շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը, կայուն զարգացումն ու պատասխանատվությունն ապագա սերունդների առջև ամրագրում է հենց սահմանադրական կարգի հիմունքների համակարգում [ՀՀ Սահմանադրություն, հոդ. 3, 12]:

Ուստի սահմանադրաիրավական խնդիրը նպատակահարմար է ձևակերպել ոչ թե որպես «մարդ ընդդեմ բնության» ընտրություն, այլ որպես **տարբեր անձանց, խմբերի և սերունդների իրավունքների, շահերի ու բնապահպանական ռիսկերի բաշխման խնդիր**: Բախումը կարող է դրսևորվել ընթացիկ տնտեսական գործունեության ու զբաղվածության շահերի և կյանքի, առողջության ու

արժանապատիվ գոյության պայմանների պաշտպանության, տնտեսական գործունեություն իրականացնող անձանց և վնասակար ազդեցությանը ենթարկվող, հաճախ՝ առավել խոցելի համայնքների, ինչպես նաև ներկա սերնդի ազատությունների և ապագա սերունդների ազատությունների իրականացման բնական նախադրյալների միջև:

Այս վերաձևակերպումը թույլ է տալիս խնդիրը տեղափոխել սահմանադրական իրավունքի համար կառավարելի հարթություն՝ կիրառելով հիմնական իրավունքների պաշտպանական պարտականությունների, համաչափության, իրավական որոշակիության և ընթացակարգային երաշխիքների գործիքակազմը [ՀՀ Սահմանադրություն, հոդ. 3, 78–81]:

Սահմանադրորեն պաշտպանվող արժեքների և շահերի միջև նման բախման հնարավոր առաջացման դեպքում, ՀՀ Սահմանադրության 3-րդ, 12-րդ, 23-րդ և 78–81-րդ հոդվածների համակարգային մեկնաբանության հիման վրա, սույն հետազոտության շրջանակում առաջարկվում է բնապահպանական որոշումների սահմանադրաիրավական գնահատման հետևյալ հաջորդական թեստը:

Պաշտոնապես հայտարարված արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում սահմանադրաիրավական գնահատման շրջանակը լրացվում է ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածով, որը սահմանում է հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման հատուկ ռեժիմը: Միաժամանակ, մարդու արժանապատվության՝ Սահմանադրության 23-րդ հոդվածով ամրագրված երաշխիքը դասվում է այն սահմանադրական իրավունքների և արժեքների շարքին, որոնց նկատմամբ արտակարգ կամ ռազմական դրությամբ պայմանավորված շեղումներ չեն թույլատրվում:

Առաջարկվող թեստը հիմնված է հաջորդական սահմանադրաիրավական գնահատման վրա և նպատակ ունի ապահովելու որոշման հիմքում ընկած սահմանադրական արժեքների, իրավունքների ու հանրային շահերի փոխկապակցված և հիմնավորված գնահատումը: Թեստի կիրառումն իրականացվում է հետևյալ փուլերով:

Փուլ 1. Արժանապատիվ գոյության նվազագույն պայմանների գնահատում: Նախ գնահատվում է՝ արդյոք պետական մարմնի որոշումը կամ անգործությունը ստեղծում է լուրջ և կոնկրետ բնապահպանական վտանգ, որը կարող է խաթարել մարդու արժանապատիվ գոյության համար անհրաժեշտ նվազագույն պայմանները: Գնահատման ժամանակ հաշվի են առնվում վտանգի ինտենսիվությունն ու տևողությունը, կյանքի և առողջության համար հնարավոր ռիսկը, անձանց խոցելիությունը, ինչպես նաև վնասակար ազդեցությունից խուսափելու իրական հնարավորությունը: Եթե վտանգը հասնում է այդ շեմին, տնտեսական նպատակները չեն կարող ինքնին արդարացնել արժանապատիվ գոյության նվազագույն պայմանների խաթարումը: Այս դեպքում առաջնային նշանակություն է ստանում

Սահմանադրության 3-րդ և 23-րդ հոդվածներով երաշխավորված արժանապատվության պաշտպանությունը՝ հաշվի առնելով նաև հիմնական իրավունքների էության անխախտելիության՝ 80-րդ հոդվածով սահմանված պահանջը:

Փուլ 2. Անդառնալիության և կանխարգելման գնահատում: Եթե առաջին փուլում սահմանված շեմը չի հաղթահարվում, գնահատվում է հնարավոր հետևանքների բնույթը և դրանց վերականգնելիությունը: Գիտական տվյալներով հիմնավորված՝ լուրջ կամ անդառնալի բնապահպանական վնասի վտանգի առկայության դեպքում կիրառվում է վնասի կանխման օգտին հաղթահարելի կանխավարկած: Այն չի ենթադրում շրջակա միջավայրի պաշտպանության ինքնաբերական գերակայություն, այլ պահանջում է բնապահպանական ռիսկը համադրել որոշման հնարավոր տնտեսական և սոցիալական հետևանքների ծանրության, վերականգնելիության և փոխհատուցելիության հետ: Գիտական անորոշության պայմաններում, հատկապես երբ առկա է ծանր կամ անդառնալի վնասի հավանականություն, ուժեղանում է հանրային մարմնի՝ ռիսկը պատշաճ ուսումնասիրելու և ընդունված որոշումը հիմնավորելու պարտականությունը՝ առանց ապացուցման ընդհանուր կանոնները բացառելու:

Փուլ 3. Միջժամանակային բեռի գնահատում: Այս փուլում գնահատվում է՝ արդյոք ընդունվող որոշումը բնապահպանական ռիսկերի կամ ապագայում անհրաժեշտ սահմանափակումների անհամաչափ բեռ չի տեղափոխում հաջորդ սերունդների վրա: Նման գնահատման ներպետական սահմանադրական հիմքը ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածով ամրագրված՝ ապագա սերունդների առջև պատասխանատվության պահանջն է: Համեմատական կարևոր ուղենիշ է Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի 2021 թ. կլիմայական որոշումը, որով հիմնական իրավունքների պաշտպանությունը դիտարկվեց նաև միջժամանակային հարթությունում՝ ապագայում ազատությունների իրականացման վրա անհամաչափ սահմանափակումների կենտրոնացումը կանխելու նպատակով [BVerfG, 24.03.2021, 1 BvR 2656/18 և այլք, §§ 183, 192–193]: Այս մոտեցումը զարգացնում է հիմնական իրավունքների ժամանակային պաշտպանության և միջսերնդային արդարության սահմանադրահիրավական փոխկապակցվածությունը:

Փուլ 4. Համաչափության և ընթացակարգային հիմնավորվածության գնահատում: Որոշումը գնահատվում է Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածների պահանջներին համապատասխան՝ ստուգելով դրա համաչափությունն ու իրավական որոշակիությունը: Բնապահպանական հարցերում հիմնավորումը պետք է ներառի գիտական տվյալների, ողջամիտ այլընտրանքների և երկարաժամկետ ու կուտակային ազդեցությունների պատշաճ գնահատում: *In dubio pro natura* սկզբունքը կարող է կիրառվել որպես մեկնաբանական կողմնորոշիչ, այլ ոչ որպես շրջակա միջավայրի անվերապահ գերակայության կանոն:

Այս փուլում գնահատվում է նաև ՇՄԱԳ-ի, տեղեկատվության մատչելիության և հանրության մասնակցության ընթացակարգային պահանջների պահպանումը: Դրանց էական խախտումը կարող է կասկածի տակ դնել ընդունված որոշման իրավաչափությունը:

Առաջարկվող մոդելն ունի երեք կարևոր սահմանափակում: Նախ՝ ՀՀ Սահմանադրությունը համընդհանուր ձևով չի ամրագրում առանձին «էկոլոգիական արժանապատիվ գոյության նվազագույնի» սուբյեկտիվ իրավունք. ավելին, 84-րդ հոդվածը «արժանապատիվ գոյության իրավունքը» տեքստային առումով վերապահում է յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդու: Հետևաբար, այստեղ առաջարկվող **«արժանապատիվ գոյության նվազագույն պայմանները»** պետք է ներկայացվեն որպես 3-րդ, 12-րդ և 23-րդ հոդվածների համակարգային մեկնաբանությունից բխող դոկտրինալ կառուցակարգ, այլ ոչ որպես Սահմանադրության մեջ բառացիորեն ամրագրված ինքնուրույն իրավունք: Երկրորդ՝ անդառնալիության չափանիշը չպետք է վերածվի բնապահպանական պահանջի ավտոմատ գերակայության. դրա կիրառումը պահանջում է վստահելի գիտական հիմք և հակադիր սոցիալական ու տնտեսական հետևանքների համեմատական գնահատում: Երրորդ՝ Գերմանիայի կլիմայական որոշման «ածխածնային բյուջեի» տրամաբանությունը ձևավորվել է կլիմայի փոփոխության առանձնահատուկ համատեքստում և հայկական այլ բնապահպանական վեճերի նկատմամբ կարող է կիրառվել միայն որպես համեմատական, ոչ պարտադիր ուղենիշ: ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածով անմիջական մեկնաբանական նշանակություն ունի Հայաստանի վավերացրած մարդու իրավունքների պայմանագրերի հիման վրա գործող մարմինների, այդ թվում՝ ՄԻԵԴ-ի պրակտիկան, մինչդեռ Գերմանիայի Սահմանադրական դատարանի որոշումը նման կարգավիճակ չունի:

Առաջարկվող թեստի հիմքում ընկած է մարդու արժանապատիվ գոյության համար անհրաժեշտ պայմանների պաշտպանության և լուրջ ու անդառնալի բնապահպանական վնասի կանխման պահանջը՝ համաչափության, իրավական որոշակիության, գիտական հիմնավորվածության և արդար ընթացակարգի սկզբունքների պահպանմամբ: Այս մոտեցմամբ էկոլոգիական պատասխանատվության վրա հիմնված մարդակենտրոնությունը ձևավորում է մրցակցող սահմանադրական արժեքների հարաբերակցության գնահատման գործնական չափորոշիչ:

5. Իրավական պետության ավանդական մոդելը բնապահպանական մարտահրավերների պայմաններում

Իրավական պետության դասական մոդելը ձևավորվել է որոշակի պատմական խնդրի լուծման համար՝ պաշտպանել անհատին պետության կամայական միջամտությունից: Այդ խնդիրը կանխորոշել է մոդելի կառուցվածքային բոլոր

հատկանիշները. այն **երկկողմ** է (պետություն–անհատ), **ռետրոսպեկտիվ** է (արձագանքում է արդեն կատարված գործողությանը), **անհատականացված** է (ենթադրում է կոնկրետ տուժող և կոնկրետ խախտող) և **տարածաժամանակային առումով սահմանափակ** է (գործում է իրավախախտման վայրում և պահին): Էկոլոգիական ճգնաժամի բնութագրերը հակադրվում են այս չորս հատկանիշներից յուրաքանչյուրին:

Վնասակենտրոն կառուցվածքի սահմանափակումը: Դասական իրավական պատասխանատվության մոդելը հենվում է կատարված վնասի փաստի վրա: Էկոլոգիական վնասի դեպքում, սակայն, վնասի արձանագրման պահը հաճախ համընկնում է իրավական պաշտպանության իմաստազրկման պահի հետ. կենսաբազմազանության կորուստը, ստորերկրյա ջրերի աղտոտումը կամ լանդշաֆտի ոչնչացումը անդառնալի են: Այն իրավական համակարգը, որը միջամտում է միայն վնասի փաստից հետո, էկոլոգիական ոլորտում ապահովում է ոչ թե պաշտպանություն, այլ վնասի արձանագրում և, լավագույն դեպքում, փոխհատուցում:

Այս սահմանափակման հաղթահարումը իրավական մտքում կապվում է **կանխարգելման** (prevention) և **նախազգուշական** (precaution, *Vorsorgeprinzip*) սկզբունքների տարանջատման հետ: Առաջինը կիրառվում է հայտնի և չափելի վտանգի դեպքում, երկրորդը՝ գիտականորեն հավանական, սակայն դեռևս չհաստատված վտանգի պայմաններում: Հենց երկրորդ սկզբունքն է դասական իրավական պետության համար խնդրահարույց, քանի որ այն թույլ է տալիս իրավական միջամտություն **փաստական անորոշության** պայմաններում: Եվրոպական դատարանը այս սկզբունքի կիրառելիությունը կոնվենցիոն համակարգում բացահայտորեն ճանաչել է Տատարն ընդդեմ Ռումինիայի գործով՝ արձանագրելով, որ գիտական անորոշությունը չի ազատում պետությանը գործելու պարտականությունից[1]:

Կանխարգելիչ մոդելի ամրագրումը պահանջում է ապացուցման բեռի վերաբաշխում: Այս ուղղությամբ սկզբունքային նշանակություն ունի Եվրոպական դատարանի Մեծ պալատի 2024 թ. վճիռը Կլիմայի ավագ կանանց միությունն ընդդեմ Շվեյցարիայի գործով, որտեղ Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում՝ պետության՝ կլիմայի փոփոխության մեղմման կարգավորող շրջանակը ժամանակին և բավարար կերպով չմշակելու պատճառով, ինչպես նաև 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ ներպետական դատարանների կողմից գործի ըստ էության քննության մերժման հիմքով[2]: Այս վճիռը ցույց է տալիս, որ ժամանակակից

[1] Տե՛ս ՄԻԵԴ, *Տատարն ընդդեմ Ռումինիայի (Tătar c. Roumanie),* գանգատ թիվ 67021/01, 27.01.2009 թ. վճիռ, կետեր 109, 120:

[2] Տե՛ս ՄԻԵԴ [ՄՊ], *Կլիմայի ավագ կանանց միությունը և այլք ընդդեմ Շվեյցարիայի (Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland),* գանգատ թիվ 53600/20, 09.04.2024 թ. վճիռ,

իրավական պետությունում հանրային իշխանությունը կրում է ոչ միայն վնաս չպատճառելու, այլև ռիսկը ողջամիտ ժամկետում **կառավարելիության մեջ պահելու** ապացուցելի պարտականություն:

Անհատականացված սուբյեկտի և հավաքական բարիքի հակասությունը: Դասական մոդելը իրավական պաշտպանությունը կապում է անհատական տուժողի հետ: Էկոլոգիական վնասը, սակայն, բնութագրվում է անորոշ շրջանակի անձանց վրա ցրված ազդեցությամբ. այն, ինչ իրավաբանորեն նշանակալի է հանրության համար, հաճախ չափազանց փոքր է անհատի համար՝ դատական պաշտպանության համար պահանջվող «զոհի կարգավիճակ» ձեռք բերելու համար: Այս անհամապատասխանությունը գրականությունում բնութագրվում է որպես բնապահպանական վնասի «բաշխված վնաս – կենտրոնացված շահ» կառուցվածք:

Եվրոպական դատարանն այս խնդիրը լուծել է **ծանրության շեմի** (minimum level of severity) չափանիշի միջոցով՝ պահանջելով, որ էկոլոգիական ազդեցությունը հասնի որոշակի ինտենսիվության և ուղղակիորեն վերաբերի դիմումատուի մասնավոր կյանքին[1]: Միաժամանակ, Դատարանը հետևողականորեն մերժել է Կոնվենցիայից բնության՝ որպես այդպիսին, պաշտպանության ինքնուրույն իրավունք բխեցնելը՝ Կիրտատոսն ընդդեմ Հունաստանի գործով ուղղակիորեն նշելով, որ Կոնվենցիան չի երաշխավորում շրջակա միջավայրի պահպանությունն *ինքնին*[2]: Այս երկու դիրքորոշման համադրությունը բացահայտում է կոնվենցիոն համակարգի **մարդակենտրոն սահմանը**, որի մասին մանրամասն կխոսվի ստորև:

Ազգային իրավակարգերում այս սահմանափակման հաղթահարման ուղին անցնում է դատարան դիմելու իրավունքի ընդլայնման միջոցով՝ հանրային շահի պաշտպանության հայցերի, բնապահպանական կազմակերպությունների հատուկ իրավասուբյեկտության և Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածով նախատեսված արդարադատության մատչելիության երաշխիքների ճանապարհով[3]: Կարևոր է ընդգծել, որ այս ընդլայնումը իրավական պետության շեղում չէ, այլ նրա տրամաբանական զարգացումն է: Եթե ճանաչված իրավունքի խախտման դեպքում ապահովված չէ արդյունավետ դատական պաշտպանության իրական

կետեր 546–574, 638–639: Հարկ է ընդգծել, որ Դատարանը 6-րդ հոդվածի խախտումն արձանագրել է դատարան դիմելու իրավունքի (access to court), և ոչ թե «արդյունավետ քննության բացակայության» հիմքով. այս երկու հիմքերի շփոթումը հանգեցնում է վճռի իրավական նշանակության սխալ վերարտադրման:

[1] Տե՛ս ՄԻԵԴ, *Ֆադեևան ընդդեմ Ռուսաստանի (Fadeyeva v. Russia),* գանգատ թիվ 55723/00, 09.06.2005 թ. վճիռ, կետեր 68–70:

[2] Տե՛ս ՄԻԵԴ, *Կիրտատոսն ընդդեմ Հունաստանի (Kyrtatos v. Greece),* գանգատ թիվ 41666/98, 22.05.2003 թ. վճիռ, կետ 52:

[3] Տե՛ս Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա (Օրհուս, 25.06.1998 թ.), հոդված 9, կետեր 2–4. Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիան վավերացրել է 2001 թ.:

հնարավորություն, ապա այդ իրավունքը զրկվում է գործնական պաշտպանելիությունից՝ հակասելով իրավական պետության հիմնարար սկզբունքին՝ *ubi ius, ibi remedium* («որտեղ կա իրավունք, այնտեղ պետք է լինի նաև դրա պաշտպանության միջոց»):

Իրավական որոշակիությունը գիտական անորոշության պայմաններում: Իրավական որոշակիությունը իրավական պետության հիմնարար բաղադրիչներից է և ամրագրված է ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով: Էկոլոգիական կարգավորումը, սակայն, կառուցվում է փոփոխական գիտական գիտելիքի վրա. թույլատրելի սահմանային կոնցենտրացիաները, ռիսկի գնահատման մեթոդաբանությունը և վտանգավորության դասակարգումները ենթակա են պարբերական վերանայման: Առաջանում է լարվածություն երկու սահմանադրական պահանջների միջև՝ նորմի կանխատեսելիությունը և գիտականորեն հիմնավորված պաշտպանության մակարդակի ապահովումը:

Այս լարվածության հանգուցալուծումը հնարավոր չէ որոշակիությունից հրաժարվելու միջոցով: Առաջարկվող լուծումը որոշակիության **տեղափոխումն** է նյութական չափորոշիչից դեպի ընթացակարգ. եթե անհնար է կանխատեսելիորեն սահմանել վնասակարության շեմը, ապա պետք է կանխատեսելիորեն սահմանվեն շեմի վերանայման հիմքերը, պարբերականությունը, դրան մասնակցող մարմինները, օգտագործվող տվյալները և վերանայման դեմ բողոքարկման կարգը: Այս իմաստով բնապահպանական ոլորտում իրավական որոշակիությունը ձեռք է բերում **ընթացակարգային որոշակիության** բնույթ: ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածը, որով հիմնական իրավունքները կարգավորելիս օրենսդիրը պարտավոր է սահմանել դրանց արդյունավետ իրացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, տալիս է այս մոտեցման ուղղակի սահմանադրական հենքը:

Ժամանակային հորիզոնը և միջժամանակային ազատության ապահովումը: Դասական իրավական պետությունը գործում է ներկա ժամանակում. նրա սուբյեկտները ապրող մարդիկ են, նրա որոշումների լեգիտիմությունը՝ ընթացիկ ընտրական ցիկլի արդյունք: Էկոլոգիական որոշումների հետևանքները, ընդհակառակը, դրսևորվում են տասնամյակների ընթացքում: Այս անհամապատասխանությունը ստեղծում է կառուցվածքային շեղում՝ ընթացիկ սերնդի օգտին:

Այս խնդրի ամենամշակված սահմանադրաիրավական պատասխանը տրվել է Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի 2021 թ. մարտի 24-ի կլիմայական որոշմամբ: Դատարանը, մեկնաբանելով Հիմնական օրենքի 20a հոդվածը հիմնարար իրավունքների հետ համակցությամբ, ձևակերպեց **միջժամանակային ազատության ապահովման** (*intertemporale Freiheitssicherung*) դոկտրինը. արտանետումների կրճատման բեռի անհամաչափ տեղափոխումը

ապագա ժամանակահատված այսօր արդեն իսկ միջամտում է ապագայում ազատությունն իրացնելու հնարավորությանը, հետևաբար՝ ենթակա է սահմանադրական վերահսկողության **ներկա** պահին[1]:

Այս դոկտրինի իրավատեսական նշանակությունը դժվար է գերագնահատել. այն ապագա սերունդների շահը վերածում է ոչ թե բարոյական կոչի, այլ **ներկա ժամանակում դատական կարգով պաշտպանելի** սահմանադրական դիրքի՝ առանց ապագա սերունդներին իրավասուբյեկտություն վերագրելու: Հենց այս կառուցվածքն է ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի՝ «հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև» ձևակերպմանը տալիս նորմատիվ, և ոչ թե ծրագրային-հռչակագրային բովանդակություն:

Հոլանդիայի Գերագույն դատարանի Ուրգենդայի գործով 2019 թ. վճիռը լրացնում է այս պատկերը այլ կողմից՝ ցույց տալով, որ դատարանը կարող է պետությանը պարտավորեցնել կոնկրետ քանակական էկոլոգիական ցուցանիշի, առանց իշխանությունների բաժանման սկզբունքի խախտման, եթե այդ ցուցանիշը բխում է պետության իսկ ստանձնած պարտավորություններից և գիտական համաձայնեցված դիրքորոշումից[2]:

Վերոգրյալ չորս սահմանափակումների համադրումը թույլ է տալիս ձևակերպել հետևյալ հիմնական եզրահանգումը. **էկոլոգիական ճգնաժամը իրավական պետության ժխտում չէ, այլ նրա ձևական մոդելի սպառման վկայություն**: Պատասխանը ոչ թե իրավական պետության երաշխիքների թուլացումն է «էկոլոգիական արտակարգության» անվան տակ, այլ նրա հասկացության ընդլայնումը՝ ռետրոսպեկտիվ վնասի իրավունքից դեպի կանխարգելիչ ռիսկի իրավունք: Ընդ որում այս ընդլայնումը չի վերացնում համաչափության և որոշակիության պահանջները, այլ դրանք տեղափոխում է ընթացակարգային հարթություն:

6. Եզրահանգումներ և առաջարկություններ Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական համակարգի շրջանակներում

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական համակարգի համար մի շարք հետևություններ:

Առաջին: ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի նորմատիվ ներուժը կարող է առավել ամբողջական բացահայտվել դրա համակարգային մեկնաբանության

[1] Տե՛ս Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանի 24.03.2021 թ. որոշումը (BVerfG, Beschluss des Ersten Senats vom 24. März 2021 – 1 BvR 2656/18 u.a., «Klimabeschluss»), կետեր 183–192, 243–248:

[2] Տե՛ս Նիդերլանդների Գերագույն դատարանի 20.12.2019 թ. վճիռը Ուրգենդայի գործով *(Hoge Raad, Urgenda Foundation v. State of the Netherlands)*, ECLI:NL:HR:2019:2007, կետեր 5.4.1–8.3.4:

միջոցով: Դրույթի տեղակայումը Սահմանադրության 1-ին՝ «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխում վկայում է, որ շրջակա միջավայրի պահպանությունը, կայուն զարգացումը և ապագա սերունդների առջև պատասխանատվությունը սահմանադրական նշանակություն ունեցող սկզբունքներ են: Հետևաբար, 12-րդ հոդվածը կարող է կատարել ոչ միայն ծրագրային, այլև մեկնաբանական գործառույթ՝ հաշվի առնվելով, մասնավորապես, սեփականության իրավունքի, տնտեսական գործունեության ազատության և դրանց սահմանափակումների վերաբերյալ սահմանադրական դրույթների համակարգային մեկնաբանության ընթացքում:

Երկրորդ: Բնապահպանական ռիսկերի համատեքստում անհրաժեշտ է հստակ տարբերակել ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի և առողջության պահպանության իրավունքի սահմանադրական հիմքերը: Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքն ամրագրված է Սահմանադրության 25-րդ հոդվածով, իսկ առողջության պահպանման իրավունքը՝ 85-րդ հոդվածով: Դրանց տարբեր իրավական բնույթը պայմանավորում է նաև պաշտպանության տարբեր կառուցակարգեր: Ուստի այն բնապահպանական ազդեցությունները, որոնք իրենց բնույթով և ինտենսիվությամբ անմիջականորեն առնչվում են անձի ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիությանը, կարող են գնահատվել 25-րդ հոդվածի շրջանակում՝ համապատասխան դեպքերում այն մեկնաբանելով Սահմանադրության 3-րդ և 23-րդ հոդվածների հետ համակարգային կապի մեջ:

Երրորդ: Բնապահպանական տեղեկատվության մատչելիության սահմանադրական հիմքերը պահանջում են համակարգային մեկնաբանություն: Սահմանադրության 42-րդ հոդվածով երաշխավորված կարծիքի արտահայտման ազատությունը ներառում է տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատությունը, իսկ 51-րդ հոդվածը երաշխավորում է հանրային մարմինների գործունեության մասին տեղեկություններ ստանալու իրավունքը: Հետևաբար, հանրային մարմինների տիրապետման ներքո գտնվող բնապահպանական տեղեկատվության մատչելիության հարցում այս դրույթները կարող են գործել փոխկապակցված՝ հաշվի առնելով նաև համապատասխան միջազգային չափորոշիչները: Այս մոտեցման համար կարևոր ուղենիշ են Եվրոպական դատարանի Մեծ պալատի՝ *Magyar Helsinki Bizottság v. Hungary* գործով ձևակերպված չափորոշիչները, որոնց համաձայն տեղեկատվության մատչելիությունը Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պաշտպանության ոլորտ կարող է մտնել՝ հաշվի առնելով տեղեկատվության հայցման նպատակը, հայցվող տեղեկատվության բնույթը, հայցողի դերը և տեղեկատվության պատրաստ ու հասանելի լինելը:

Չորրորդ: ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածը կարևոր մեկնաբանական հիմք է բնապահպանական հարցերում մարդու իրավունքների միջազգային չափորոշիչների կիրառման համար: Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սահմանադրական դրույթները մեկնաբանելիս պետք է հաշվի առնվի

Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Հետևաբար, Եվրոպական դատարանի բնապահպանական գործերով ձևավորված՝ ծանրության շեմի, պետության պոզիտիվ պարտավորությունների, ընթացակարգային երաշխիքների և կանխարգելիչ պաշտպանության վերաբերյալ չափորոշիչները պետք է հաշվի առնվեն համապատասխան սահմանադրական իրավունքների բովանդակությունը բացահայտելիս՝ Սահմանադրության 81-րդ հոդվածով նախատեսված շրջանակում:

Հինգերորդ: Բնապահպանական ռիսկերի կանխարգելումը և դրանց երկարաժամկետ ու միջսերնդային հետևանքների գնահատումը առաջադրում են նաև ինստիտուցիոնալ պահանջներ: Դրանց արդյունավետ իրականացումը ենթադրում է մասնագիտական կարողությունների, շարունակական մոնիթորինգի, գիտական տվյալների գնահատման և երկարաժամկետ հետևանքների հաշվառման այնպիսի կառուցակարգերի առկայություն, որոնք հնարավորություն են տալիս բնապահպանական որոշումներ ընդունել ոչ միայն ընթացիկ, այլև ապագա սերունդների շահերը հաշվի առնելով: Այդ պահանջների ապահովման կոնկրետ ինստիտուցիոնալ մոդելի ընտրությունը, ներառյալ համապատասխան մարմինների անկախության և մասնագիտացման աստիճանը, կարող է կազմել առանձին հետազոտության առարկա:

Օգտագործված աղբյուրների ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թ. խմբագրությամբ), հոդվածներ 1, 3, 12, 23, 25, 31, 42, 51, 60, 75, 78–81, 85:

2. Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա (Օրհուս, 25.06.1998 թ.):

3. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 28.07.2022 թ. A/RES/76/300 բանաձև:

4. Վենետիկի հանձնաժողով, Իրավական պետության ստուգաթերթ (Rule of Law Checklist), CDL-AD(2016)007, 2016 թ.:

5. **Դայսի Ա.Վ. (Dicey A. V.),** Introduction to the Study of the Law of the Constitution, Լոնդոն, 1885:

6. **Դյուրիգ Գ. (Dürig G.),** Der Grundrechtssatz von der Menschenwürde, AöR, 1956, h. 81:

7. **Կանտ Ի. (Kant I.),** Die Metaphysik der Sitten, 1797:

8. **Ռադբրուխ Գ. (Radbruch G.),** Gesetzliches Unrecht und übergesetzliches Recht, SJZ, 1946, № 5:

9. **Ռազ Ջ. (Raz J.),** The Rule of Law and its Virtue, Law Quarterly Review, 1977, h. 93:

10. **Ֆուլլեր L. L. (Fuller L.L.),** The Morality of Law, Նյու Հեյվեն, 1964:

11. **Ֆոն Մոլ Ռ. (von Mohl R.),** Die Polizeiwissenschaft nach den Grundsätzen des Rechtsstaates, Թյուբինգեն, 1832–1834:

12. BVerfG, Beschluss vom 24.03.2021 – 1 BvR 2656/18 u.a. (Klimabeschluss):

13. BVerfGE 125, 175 (09.02.2010, Hartz IV):

14. Hoge Raad, Urgenda, 20.12.2019, ECLI:NL:HR:2019:2007:

15. ՄԻԵԴ, *López Ostra v. Spain*, թիվ 16798/90, 09.12.1994:

16. ՄԻԵԴ, *Kyrtatos v. Greece*, թիվ 41666/98, 22.05.2003:

17. ՄԻԵԴ, *Taşkin and Others v. Turkey*, թիվ 46117/99, 10.11.2004:

18. ՄԻԵԴ, *Fadeyeva v. Russia,* թիվ 55723/00, 09.06.2005:

19. ՄԻԵԴ, *Tătar c. Roumanie,* թիվ 67021/01, 27.01.2009:

20. ՄԻԵԴ, *Társaság a Szabadságjogokért v. Hungary,* թիվ 37374/05, 14.04.2009:

21. ՄԻԵԴ, *Dubetska and Others v. Ukraine*, թիվ 30499/03, 10.02.2011:

22. ՄԻԵԴ [ՄՊ], *Magyar Helsinki Bizottság v. Hungary*, թիվ 18030/11, 08.11.2016:

23. ՄԻԵԴ, *Cordella and Others v. Italy,* թիվ 54414/13 և 54264/15, 24.01.2019:

24. ՄԻԵԴ [ՄՊ], *Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland*, թիվ 53600/20, 09.04.2024:

25. Էկվադորի Հանրապետության Սահմանադրություն (2008 թ.), հոդվածներ 71–74:

ПРАВО НА БЛАГОПРИЯТНУЮ ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ КАК ЭЛЕМЕНТ СОВРЕМЕННОГО ПОНИМАНИЯ ПРАВОВОГО ГОСУДАРСТВА

Аннотация

В статье право на благоприятную окружающую среду рассматривается не как отраслевое субъективное право, обусловленное экологическим законодательством, а как структурный элемент современного понимания правового государства. Автор обосновывает, что в неправовом государстве право на благоприятную окружающую среду может быть провозглашено, однако не может существовать в качестве права в праводогматическом смысле, поскольку отсутствует корреспондирующая ему обязанность и возможность принудительного обеспечения его реализации. Показано, что экологический кризис выявляет структурные ограничения двусторонней и ретроспективной классической модели правового государства, ориентированной на реагирование на уже причиненный вред, и обусловливает необходимость перехода к модели, основанной на управлении рисками. В заключительной части статьи

предлагается четырехэтапный тест, разработанный на основе толкования статьи 3 Конституции Республики Армения и предназначенный для определения приоритетности конкурирующих конституционных ценностей в кризисных ситуациях.

Ключевые слова: правовое государство, право на благоприятную окружающую среду, человеческое достоинство, экологический минимум существования, обеспечение межвременной свободы, антропоцентрический подход, принцип предотвращения, право рисков, статья 3 Конституции Республики Армения.

THE RIGHT TO A HEALTHY ENVIRONMENT AS AN ELEMENT OF THE CONTEMPORARY UNDERSTANDING OF THE RULE OF LAW

Annotation

The article examines the right to a healthy environment not as a sector-specific subjective right derived from environmental legislation, but as a structural element of the contemporary understanding of the rule of law. The author argues that, in a state not governed by the rule of law, the right to a healthy environment may be formally proclaimed but cannot exist as a right in the legal-dogmatic sense, since it lacks a correlative obligation and enforceability. It is demonstrated that the ecological crisis exposes the structural limitations of the classical model of the rule of law—damage-centred, bilateral, and retrospective—and necessitates a transition towards a model based on risk management. In its concluding part, the article proposes a four-stage test, based on the interpretation of Article 3 of the Constitution of the Republic of Armenia, for determining the priority of competing constitutional values in crisis situations.

Keywords: rule of law, right to a healthy environment, human dignity, ecological minimum of existence, intertemporal protection of freedom, anthropocentric approach, prevention principle, law of risk, Article 3 of the Constitution of the Republic of Armenia.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 07.09.2026 թ., տրվել է գրախոսության 09.09.2026 թ., ընդունվել է տպագրության 18.09.2026 թ.:

DOI: 10.59560/18291155-2026.3-121



АНДРАНИК РАШИДЯН

Начальник отдела мониторинга и анализа юридического управления Аппарата Президента Республики Армения, преподаватель кафедры уголовного права и уголовно-процессуального права института права Российско-Армянского университета, кандидат юридических наук

ПРИЗНАКИ СОУЧАСТИЯ В ПРЕСТУПЛЕНИИ СОГЛАСНО НОВОМУ УГОЛОВНОМУ КОДЕКСУ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Аннотация

В статье исследуются объективные и субъективные признаки соучастия в преступлении в соответствии с Уголовным кодексом Республики Армения 2021 года. Обосновывается, что законодательное определение соучастия следует толковать во взаимосвязи с принципом личной ответственности и принципом вины, нормами о видах соучастников, пределах их ответственности, соучастии в преступлении со специальным субъектом, эксцессе соучастника и групповом совершении преступления. Предлагается четырехэлементная модель признаков соучастия, включающая субъектную множественность, функциональную совместность, осознание совместного характера участия и умышленную направленность поведения на совершение единого умышленного преступления. Показано, что причинная связь с последствием не является универсальным признаком соучастия: для юридической оценки определяющее значение имеет функциональная включенность вклада каждого лица в механизм совершения преступления. Сформулированы критерии разграничения соучастия, посредственного исполнения преступления, одностороннего содействия, неосторожного сопричинения и прикосновенности к преступлению. Автор приходит к выводу, что совместность представляет собой интегративный признак соучастия, соединяющий индивидуальные деяния и умысел участников в юридически единое преступление, но не устраняющий необходимость самостоятельного установления оснований и пределов ответственности каждого из них.

Ключевые слова: соучастие в преступлении, совместность, умышленное преступление, множественность субъектов, исполнитель, уголовная ответственность.

Введение

Соучастие относится к числу наиболее сложных институтов Общей части уголовного права. Его назначение не исчерпывается регулированием случаев совместного совершения одного преступления несколькими лицами. Нормы о соучастии, в частности, определяют условия и пределы уголовной ответственности лиц, которые, не осуществляя непосредственного исполнения преступления, умышленно участвуют в его совместном совершении в качестве организатора, подстрекателя или пособника. Тем самым институт соучастия позволяет дать уголовно-правовую оценку вкладу каждого участника в совместно совершаемое преступление, одновременно ограничивая его ответственность характером совершенного им деяния и пределами его вины.

Принятый 5 мая 2021 г. и вступивший в силу 1 июля 2022 г. Уголовный кодекс Республики Армения (далее — УК РА) сохранил традиционное определение соучастия как умышленного совместного участия двух или более лиц в умышленном преступлении. Вместе с тем правовое регулирование данного института было существенно детализировано. В части 1 ст. 45 УК РА прямо уточнено, что соучастниками могут быть только лица, подлежащие уголовной ответственности. Кодекс исключает соисполнительство в случае использования лица, которое в силу закона не подлежит уголовной ответственности вообще либо за соответствующее преступление в качестве исполнителя; детализирует правила совершения преступления посредством другого лица, а также положения об организаторе, подстрекателе и пособнике; отдельно регулирует соучастие в преступлениях со специальным субъектом и дифференцирует уголовно-правовые последствия различных вариантов эксцесса соучастника[1].

Указанные новеллы обусловливают необходимость уточнения содержания объективных и субъективных признаков соучастия. Простого указания на участие двух или более лиц, совместность и умышленность недостаточно для раскрытия характера связи между поведением участников и отграничения соучастия от внешне сходных форм множественного поведения. Наиболее сложны ситуации, когда действия нескольких лиц объективно взаимосвязаны с совершением одного преступления, однако между ними отсутствует необходимая субъективная связь; когда содействие преступлению оказывается без ведома исполнителя; когда для совершения преступления используется лицо, которое не достигло возраста уголовной

[1] Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք [Уголовный кодекс Республики Армения]: принят 5 мая 2021 г. № ՀՕ-199-Ն, вступил в силу 1 июля 2022 г. (в действующей редакции); **Габузян А., Маргарян А., Симонян Т.** ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց [Руководство по толкованию концептуальных подходов и новых институтов, закреплённых в новом УК РА]. Совет Европы, 2022. - С. 105–111.

ответственности за соответствующее преступление, действовало в состоянии невменяемости либо по неосторожности; а также когда поведение лица лишь создает общие условия, которыми исполнитель впоследствии самостоятельно пользуется.

Цель настоящей статьи состоит в разработке системной модели признаков соучастия на основе положений УК РА 2021 г. и раскрытии их содержания с учетом принципов личной ответственности и ответственности по вине. Для достижения указанной цели необходимо определить уголовно-правовое значение участия двух или более лиц, подлежащих уголовной ответственности; раскрыть объективное и субъективное содержание совместности; установить содержание и направленность умысла соучастников; определить значение направленности действий соучастников на совершение единого преступления; отграничить соучастие от посредственного исполнения преступления, неосторожного сопричинения вреда и прикосновенности к преступлению.

Исследование основано на анализе положений УК РА, современных армянских исследований института соучастия, актуальной уголовно-правовой доктрины, а также правовых позиций Кассационного суда Республики Армения.

1. Системное значение законодательного определения соучастия

Согласно ч. 1 ст. 45 УК РА соучастием признается умышленное совместное участие двух или более лиц, подлежащих уголовной ответственности, в умышленном преступлении. Из этой формулы традиционно выводятся объективные и субъективные признаки соучастия. Однако нормативное содержание каждого из них определяется не изолированно, а во взаимосвязи с иными положениями Кодекса.

Во-первых, ст. 5 УК РА закрепляет принцип личной ответственности, согласно которому физическое лицо подлежит уголовной ответственности только за совершенное им преступление. Поэтому участие в общем преступлении не создает коллективной ответственности: в отношении каждого соучастника необходимо установить собственное деяние, выполняемую им роль и индивидуальные пределы умысла. Во-вторых, ст. 6 УК РА исключает ответственность без вины. Следовательно, тот факт, что поведение одного лица объективно облегчило совершение преступления другим лицом, еще не позволяет признать первое лицо соучастником. В-третьих, ст. 46 УК РА закрепляет исчерпывающий перечень видов соучастников применительно к совместному совершению конкретного преступления: исполнитель, организатор, подстрекатель и пособник. Действия лица должны соответствовать признакам хотя бы одного из указанных видов соучастников. В-четвертых, ст. 47-49 УК РА связывают ответственность каждого соучастника с выполняемой им ролью и содержанием его умысла, исключая вменение ему эксцесса другого соучастника.

Судебное толкование подтверждает системообразующее значение названных признаков. В решении от 27 декабря 2022 г. по делу № ԵԱՆԴ/0046/01/16 Кассационный

суд РА воспроизвел ранее сформулированную им правовую позицию[1], согласно которой соучастию присущи три признака: совершение преступления двумя или более субъектами, совместность действий и умышленный характер участия. Раскрывая содержание совместности, Суд указал на взаимодополняемость действий участников, их направленность на совершение конкретного преступления, стремление к единому результату и наличие вклада каждого участника в общее дело. Хотя данная правовая позиция была сформулирована применительно к ст. 37 УК РА 2003 г., она сохраняет методологическое значение, поскольку ч. 1 ст. 45 нового УК РА воспроизводит базовую конструкцию умышленного совместного участия и дополнительно уточняет уголовно-правовой статус участников.

Предлагаемая ниже четырехэлементная модель не противоречит позиции Кассационного суда, а аналитически конкретизирует ее: умышленный характер соучастия раскрывается через осознание совместности и волевую направленность поведения лица на совершение единого умышленного преступления. Подобная детализация соответствует направлению современных армянских исследований, в которых новеллы института соучастия рассматриваются во взаимосвязи с видами соучастников, правилами группового совершения преступления и индивидуализацией уголовной ответственности[2].

Представляется, что признаки соучастия целесообразно объединить в четырехэлементную систему:

1) **Субъектная множественность** — участие не менее двух лиц, каждое из которых подлежит уголовной ответственности за собственное участие в преступлении.

2) **Функциональная совместность** — включенность вклада каждого соучастника в единый механизм подготовки или совершения преступления.

3) **Осознание совместности** — понимание лицом того, что его поведение функционально связано с умышленным преступным поведением другого лица.

4) **Умышленная направленность на единое умышленное преступление** — сознательное и волевое включение лицом собственного поведения в совместную преступную деятельность в пределах конкретного преступления и обстоятельств, охватываемых его умыслом.

[1] Решение Кассационного суда Республики Армения от 27 декабря 2022 г. по уголовному делу № ԵԱՆԴ/0046/01/16. П. 15; Решение Кассационного суда Республики Армения от 25 июля 2008 г. по уголовному делу № ՎԲ-48/08. Пп. 28-29.

[2] **Аветисян С.С.** Тенденции развития института соучастия в преступлении по новому Уголовному кодексу Республики Армения // Актуальные проблемы уголовного законодательства и правоприменительной практики стран – участниц СНГ. - Ереван: РАУ, 2022. - С. 4-15; **Зограбян Н.Ю.** Некоторые вопросы института соучастия в контексте нового Уголовного кодекса Республики Армения // Российское право на современном этапе. - Ростов н/Д: РГЭУ (РИНХ), 2022. - С. 131-134.

Первые два элемента относятся преимущественно к объективным признакам соучастия, а последние два раскрывают его субъективное содержание. Такое разграничение носит условный характер, поскольку совместность имеет одновременно объективное и субъективное измерение[1]. Объективная взаимосвязанность действий сама по себе не образует соучастия со стороны лица, которое не осознавало включенности собственного поведения в совместную преступную деятельность. В свою очередь намерение действовать совместно, не получившее внешнего выражения в конкретном деянии, уголовно-правового значения не имеет. Если действия, направленные на организацию преступления, подстрекательство к нему или пособничество, не удаются по не зависящим от воли лица обстоятельствам, оно в соответствии с ч. 4 ст. 47 УК РА несет ответственность за приготовление к преступлению, охватывавшемуся его умыслом, а при выполнении части объективной стороны этого преступления — за покушение на него.

2. Субъектная множественность как признак соучастия

Первым элементом предлагаемой системы признаков соучастия является субъектная множественность — участие двух или более лиц, подлежащих уголовной ответственности. Уточнение, содержащееся в ч. 1 ст. 45 УК РА, придает множественности не только количественное, но и качественное содержание. Для признания соучастия недостаточно фактического участия нескольких лиц: как минимум два участника должны обладать предусмотренными законом признаками субъекта и подлежать уголовной ответственности за собственную форму умышленного участия в соответствующем преступлении.

Применительно к физическому лицу признаки общего субъекта уголовной ответственности определяются ст. 19 УК РА[2], а содержание вменяемости и невменяемости раскрывается соответственно в ст. 21 и 29 УК РА. Если преступление совершается посредством использования лица, которое вследствие недостижения возраста уголовной ответственности за соответствующее преступление или невменяемости не подлежит уголовной ответственности, то использовавшее его лицо

[1] **Рашидян А.А.** К вопросу о признаках соучастия и их регламентации в проекте нового Уголовного кодекса РА // Судебная власть. 2016. № 1 (199). - С. 67.

[2] Часть 1 ст. 19 УК РА относит к субъектам уголовной ответственности также юридическое лицо. Вместе с тем уголовная ответственность юридического лица основывается на самостоятельной нормативной конструкции, предусмотренной ст. 122-125 УК РА, и связывается с совершением преступления указанным в ст. 123 физическим лицом, действующим от имени, в интересах юридического лица или с его использованием, либо с необеспечением юридическим лицом установленных обязанностей. Нормы ст. 122-125 УК РА не наделяют юридическое лицо самостоятельной ролью исполнителя, организатора, подстрекателя или пособника. Поэтому в настоящей статье признаки соучастия рассматриваются применительно к ролевому взаимодействию физических лиц.

при наличии предусмотренных законом условий признается исполнителем преступления, совершенного посредством другого лица, то есть посредственным исполнителем. Соучастие между ним и использованным лицом отсутствует. Часть 2 ст. 45 УК РА прямо исключает соисполнительство в случае использования лица, которое в силу закона не подлежит уголовной ответственности вообще либо не подлежит уголовной ответственности за соответствующее преступление в качестве исполнителя. В свою очередь ч. 2 ст. 46 УК РА признает исполнителем также лицо, совершившее преступление посредством использования лица, действовавшего по неосторожности.

Значение данной конструкции состоит в недопустимости признания соучастия между лицом, использующим другое лицо для реализации своего преступного умысла, и использованным лицом, которое не подлежит уголовной ответственности за умышленное участие в соответствующем преступлении.

В подобной ситуации отсутствует необходимая субъектная множественность. Наличие у использованного лица фактического понимания действий посредственного исполнителя само по себе не образует соучастия, если это лицо не подлежит уголовной ответственности за умышленное участие в соответствующем преступлении. Его поведение выступает способом реализации умысла посредственного исполнителя. При этом вопрос о самостоятельной уголовной ответственности использованного лица, в том числе за неосторожное преступление, разрешается отдельно при наличии предусмотренных законом оснований.

Формула “лица, подлежащие уголовной ответственности” не означает, что каждый соучастник обязательно должен быть фактически привлечен к уголовной ответственности или осужден. Смерть одного из участников после совершения преступления, последующее истечение срока давности, освобождение от уголовной ответственности по нереабилитирующему основанию либо иные препятствия для процессуальной реализации ответственности сами по себе не устраняют соучастия. Определяющим является наличие у каждого участника признаков субъекта уголовной ответственности в момент совершения деяния. Иной подход означал бы смешение материально-правовых оснований соучастия с последующей процессуальной реализацией уголовной ответственности.

Особого рассмотрения требует соучастие в преступлениях со специальным субъектом. Согласно ч. 1 ст. 48 УК РА лицо, не обладающее предусмотренным законом специальным признаком, не может нести ответственность в качестве исполнителя соответствующего преступления, однако может отвечать как организатор, подстрекатель или пособник. Если такое лицо по подстрекательству специального субъекта выполняет объективную сторону преступления либо участвует в ее выполнении совместно со специальным субъектом, оно при отсутствии в его деянии признаков другого состава преступления несет ответственность за пособничество.

При наличии в его деянии признаков другого состава преступления квалификация осуществляется по правилам ч. 3-6 ст. 48 УК РА с учетом характера соответствующих составов и соотношения предусмотренных за них наказаний. Следовательно, отсутствие у одного из участников признака специального субъекта не исключает субъектной множественности как таковой, но определяет возможную роль этого лица и юридическую квалификацию совершенного им деяния.

Представляется, что для установления субъектной множественности необходимо проверять не абстрактную способность каждого лица быть субъектом преступления вообще, а его способность нести уголовную ответственность именно за вменяемую ему форму участия. Лицо, не обладающее признаком специального субъекта, не может быть исполнителем соответствующего преступления, но при наличии необходимого умысла может организовать его совершение, склонить к нему специального субъекта либо оказать ему содействие. Напротив, лицо, не достигшее возраста уголовной ответственности за соответствующее преступление, не приобретает статуса пособника лишь потому, что его поведение объективно способствовало действиям взрослого исполнителя. Поэтому установление субъектной множественности требует проверки возраста, вменяемости и способности каждого участника нести уголовную ответственность за выполняемую им роль в конкретном преступлении[1].

3. Функциональная совместность поведения участников

Центральным объективным признаком соучастия выступает совместность. Закон не содержит ее общего определения, однако содержание данного признака может быть раскрыто на основе системного толкования ст. 45-47 УК РА. Совместность означает не простое совпадение действий нескольких лиц во времени и пространстве, а функциональное объединение их индивидуальных вкладов в подготовку или совершение одного преступления.

В уголовно-правовой доктрине совместность раскрывается через единый преступный результат, причинную или иную функциональную обусловленность поведения исполнителя действиями остальных участников, а также создание необходимых либо благоприятствующих совершению преступления условий[2]. Такой подход сохраняет объяснительную ценность применительно к преступлениям с материальным составом, но не может рассматриваться как универсальный. Во-первых, соучастие возможно и в преступлениях с формальным составом, для окончания которых наступление отдельного общественно опасного последствия не требуется. Во-вторых, организатор, подстрекатель или интеллектуальный пособник воздействуют прежде

[1] **Габузян А., Маргарян А., Симонян Т.** Указ. соч. - С. 105–111.

[2] **Новоселов Г.П.** Понятие соучастия и признак совместности участия // Российский юридический журнал. 2012. № 6. - С. 103-109; **Янина И.Ю.** Причинение как уголовно-правовая категория // Российское правосудие. 2024. № 1. - С. 89-97.

всего на решение и деятельность исполнителя, поэтому их вклад не всегда может быть описан как непосредственная причина причиненного вреда в естественно-научном смысле.

Более точным представляется критерий **функциональной включенности.** Поведение лица является совместным, если оно в соответствии с характером выполняемой роли формирует преступное решение другого лица; организует совершение преступления или руководит им; обеспечивает исполнителя советами, указаниями, информацией, средствами либо орудиями; устраняет препятствия; укрепляет решимость исполнителя посредством заранее согласованного присутствия либо иным образом выполняет предусмотренную ст. 46 УК РА роль в механизме конкретного преступления.

Функциональная совместность предполагает совокупность трех обстоятельств.

Первое — **предметная определенность вклада.** Содействие должно относиться к конкретному преступлению. Предоставление обычного товара, оказание услуги или передача информации общего характера сами по себе не образуют пособничества лишь потому, что другое лицо впоследствии использовало их при совершении преступления.

Второе — **объективная пригодность вклада** для содействия преступлению. В зависимости от выполняемой роли деяние должно быть объективно способно содействовать формированию преступного решения, организации, подготовке, совершению преступления либо заранее обещанному сокрытию преступника, средств или орудий преступления, его следов или предметов, приобретенных преступным путем, а также заранее обещанному приобретению или сбыту таких предметов. Мнимое содействие, объективно не способное повлиять на преступную деятельность и фактически не включенное в нее, не образует соучастия в оконченном преступлении. При этом вклад соучастника не обязательно должен быть незаменимым: требование доказать, что без него преступление вообще не могло бы быть совершено, чрезмерно сужало бы пределы института соучастия.

Третье — **реализация функциональной связи** между вкладом соучастника и деятельностью исполнителя. Предоставленные средства или орудия должны быть использованы либо иным образом включены в механизм преступления; советы, указания или информация должны быть восприняты исполнителем и реально содействовать его преступной деятельности; организационные действия должны объективно обеспечивать организацию совершения преступления или руководство его совершением. Если предполагаемый исполнитель отверг склонение к преступлению либо предложенное содействие не было принято и не включилось в механизм преступления, соучастие в оконченном преступлении отсутствует. Вопрос об ответственности лица разрешается по ч. 4 ст. 47 УК РА: за приготовление к преступлению, охватывавшемуся его умыслом, а при выполнении части объективной стороны этого преступления — за покушение на него. Следует учитывать, что в

приведенных в настоящей статье правовых позициях Кассационного суда РА вопрос о допустимости одностороннего физического пособничества прямо не разрешен; изложенный вывод представляет собой авторское толкование положений ч. 1 ст. 45 и ч. 6 ст. 46 УК РА.

Важной новеллой является признание пособником лица, которое заранее согласилось участвовать в преступлении в качестве соисполнителя, однако во время совершения преступления, непосредственно не участвуя в нем, своим присутствием укрепило решимость исполнителя совершить преступление (п. 2 ч. 7 ст. 46 УК РА). Данная норма показывает, что совместность может выражаться в психическом содействии. Вместе с тем законодатель связывает ответственность по указанному основанию с совокупностью условий: предварительным согласием участвовать в преступлении в качестве соисполнителя, присутствием во время его совершения и фактическим укреплением решимости исполнителя. Само по себе нахождение на месте преступления или пассивное одобрение совершаемых действий при отсутствии перечисленных условий не образует пособничества по п. 2 ч. 7 ст. 46 УК РА. Наличие иных предусмотренных законом форм содействия должно устанавливаться самостоятельно. При разграничении соисполнительства и иных форм участия принципиальное значение имеет правовая позиция Кассационного суда РА по делу № ԵԱՆԴ/0046/01/16. Суд указал, что убийство признается совершенным группой лиц, когда два или более лица, действуя с совместным умыслом на убийство, непосредственно участвуют в процессе лишения потерпевшего жизни посредством применения к нему насилия. При этом не требуется, чтобы смертельные повреждения были причинены каждым участником[1]. Следовательно, распределение между участниками действий, входящих в объективную сторону преступления, не исключает соисполнительства. Вместе с тем данное положение не позволяет автоматически признавать соисполнителем организатора, подстрекателя или пособника, не участвовавшего в выполнении объективной стороны преступления. В сравнительно-правовом плане современная российская дискуссия о квалификации действий членов организованной группы также подтверждает необходимость разграничения фактически выполняемой лицом роли и специальных правил вменения группового признака, хотя конкретные положения российского законодательства не могут механически переноситься на толкование УК РА[2].

[1] Решение Кассационного суда Республики Армения от 27 декабря 2022 г. по уголовному делу № ԵԱՆԴ/0046/01/16. П. 16.

[2] **Бакрадзе А.А.** Вопросы квалификации соучастия всех членов организованной группы как соисполнителей преступления // Юридические исследования. 2024. № 8. - С. 13-23; **Куфелкина И.Ю.** Проявления форм соучастия в преступлении в Особенной части Уголовного кодекса Российской Федерации // Вестник Казанского юридического института МВД России. 2023. Т. 14. № 2 (52). - С. 78-83; **Ситникова А.И.** Проблемы квалификации убийства, совершенного групповыми способами (п. “ж” ч. 2 ст. 105 УК РФ) // Вестник Югорского государственного университета. 2023. Т. 19. № 1. - С. 23-28.

Совместность не тождественна одновременности действий. Организатор и подстрекатель могут выполнить свою роль задолго до начала выполнения объективной стороны преступления, а заранее обещанное укрывательство может быть осуществлено после его окончания. Объединяющим фактором выступает не время совершения соответствующих действий, а их функциональная направленность на одно преступление и наличие у лица в момент совершения собственного деяния умысла на участие в этом преступлении.

4. Осознание совместного характера участия

Объективное содействие приобретает значение соучастия лишь при наличии соответствующей субъективной связи. Лицо должно осознавать не только фактический характер собственного деяния, но и то, что оно включается в умышленное преступное поведение другого лица.

Минимальное интеллектуальное содержание умысла соучастника охватывает: фактические обстоятельства собственного вклада; основные признаки преступления, совершению которого он содействует; наличие исполнителя или иного участника, с деятельностью которого соединяется его поведение; функциональное значение своего вклада для совместного преступления. Не требуется знание всех участников, подробностей распределения ролей или каждого способа исполнения, если эти обстоятельства не имеют значения для квалификации и не определяют пределы умысла.

Дискуссионным является вопрос о так называемой односторонней субъективной связи, когда пособник тайно содействует исполнителю, а последний не осознает факта помощи. Статья 45 УК РА требует, чтобы предполагаемый соучастник осознавал совместный характер собственного участия, однако прямо не устанавливает осведомленность исполнителя о любом оказываемом ему содействии в качестве самостоятельного обязательного условия соучастия. При подстрекательстве склонение по своей природе должно быть воспринято другим лицом; организационная деятельность предполагает реальное воздействие на подготовку или совершение преступления; советы, указания и информация приобретают значение пособничества только при их восприятии исполнителем. При физическом пособничестве возможны иные ситуации.

Исполнитель не обязательно должен знать личность пособника или источник оказанной ему помощи. Отсутствие у исполнителя осведомленности о физическом содействии само по себе не исключает пособничества, если вклад пособника был объективно включен в механизм преступления, а сам пособник осознавал преступное назначение своего поведения и желал содействовать совершению конкретного преступления. Если же созданные лицом условия фактически не были использованы и не оказали влияния на преступную деятельность исполнителя, соучастие в оконченном

преступлении отсутствует; вопрос об ответственности лица разрешается по правилам ч. 4 ст. 47 УК РА.

Субъективная связь не обязательно возникает до начала преступной деятельности. Часть 1 ст. 50 УК РА прямо предусматривает возможность совершения преступления группой лиц без предварительного соглашения между соисполнителями. Присоединение к уже начатому преступлению возможно, если лицо осознает характер совершаемого преступления, намеренно включается в него и до момента его юридического окончания выполняет роль, предусмотренную ст. 46 УК РА и объективно осуществимую на соответствующей стадии. После юридического окончания преступления присоединение к нему в качестве соучастника невозможно. Этому не противоречит последующее осуществление заранее обещанного укрывательства, приобретения или сбыта предметов: пособническое значение таких действий обусловлено обещанием, данным до окончания преступления.

5. Умышленный характер участия и единое умышленное преступление

Статья 45 УК РА дважды использует указание на умышленность: совместное участие должно быть умышленным и преступление — умышленным. Эти элементы нельзя считать повторением одного требования.

Первое указание характеризует психическое отношение каждого соучастника к собственному участию. Неосторожное оказание помощи умышленному преступнику не образует соучастия. Например, если лицо вследствие небрежности оставило доступным средство, которым другое лицо умышленно воспользовалось для совершения преступления, ответственность первого возможна только за самостоятельное неосторожное преступление при наличии всех его признаков и при условии, что ответственность за его неосторожное совершение предусмотрена Особенной частью УК РА (ч. 2 ст. 24).

Второе указание ограничивает круг основных преступлений: соучастие возможно только в умышленном преступлении. Совместное неосторожное причинение вреда несколькими лицами может образовывать неосторожное сопричинение, но не соучастие в смысле ст. 45 УК РА. Каждый причинитель в такой ситуации отвечает за собственное нарушение обязанности предосторожности и причиненный им либо совместно обусловленный результат при самостоятельном установлении признаков неосторожности.

Волевое содержание умысла соучастника применительно к собственному участию состоит в желании совместно участвовать в совершении конкретного преступления и функционально включить в него свое поведение. Для организатора и подстрекателя соответствующие действия — организация преступления, руководство его совершением или формирование у другого лица решимости совершить преступление — выступают целью их поведения либо средством достижения иной цели. Пособник осознанно

оказывает содействие, понимая преступное назначение своего вклада и желая облегчить совершение преступления исполнителем. При этом психическое отношение соучастника к опасным последствиям преступления, совершенного исполнителем, определяется с учетом положений ст. 25 УК РА и особенностей соответствующего состава: применительно к последствиям материального состава возможен как прямой, так и косвенный умысел. Само по себе осознание возможности последующего преступного использования нейтрального действия, равно как и безразличное отношение к такой возможности, не образует соучастия, если не установлено, что лицо осознавало конкретную преступную направленность своего содействия и желало совместно участвовать в совершении преступления[1].

Это положение особенно важно для разграничения пособничества и профессионально нейтрального поведения. Продажа товара, юридическая консультация, перевозка, предоставление помещения или цифровой услуги могут объективно облегчить преступление, но одновременно оставаться обычными социально допустимыми действиями. Для признания соучастия необходимо доказать, что лицо осознавало конкретное преступление и предоставляло свой вклад именно как содействие ему. Чем более нейтральным является действие, тем выше значение доказательств его предметной связи с преступным планом: необычных условий сделки, адаптации средства под преступную цель, согласования времени и способа использования, сокрытия следов либо иных обстоятельств.

Практическое значение данного требования иллюстрируют обстоятельства дела № ՍԴ3/0007/01/22. В решении от 20 марта 2024 г. Кассационный суд РА оставил в силе квалификацию заранее обещанного приобретения наркотического средства, незаконно перемещённого через государственную границу, как пособничества контрабанде[2]. Применённые положения УК РА 2003 г. Суд соотнёс со ст. 46 и п. 2 ч. 3 ст. 399 действующего УК РА. В конкретных обстоятельствах дела неустановление в полном объёме личности непосредственного исполнителя и непривлечение его к уголовной ответственности не были признаны обстоятельствами, исключающими ответственность пособника, поскольку суды сочли доказанными совершение основного умышленного преступления и заранее согласованное содействие ему. Следовательно, данное решение не освобождает от доказывания основного преступления, умысла пособника и функциональной связи его поведения с преступлением исполнителя, но подтверждает, что отсутствие обвинительного приговора в отношении непосредственного исполнителя само по себе не исключает ответственности пособника.

[1] Решение Кассационного суда Республики Армения от 26 мая 2023 г. по уголовному делу № ԵՇԴ/0088/01/17. Пп. 18.1, 19.1.

[2] Решение Кассационного суда Республики Армения от 20 марта 2024 г. по уголовному делу № ՍԴ3/0007/01/22. Пп. 7, 11–13, 18.

Единство умышленного преступления означает, что поведение участников должно быть направлено на совершение одного юридически определенного преступления. Это не требует полного совпадения мотивов и целей. Исполнитель может действовать из мести, пособник — из корысти, организатор — стремиться к достижению иного конечного результата. Различие личных мотивов не исключает соучастия, если участники осознают основные фактические признаки общего преступления и намеренно объединяют свои действия для его совершения. Однако специальный мотив или цель, являющиеся обязательными признаками состава либо квалифицирующими обстоятельствами, могут быть вменены конкретному соучастнику только в пределах правил ст. 47 УК РА и содержания его умысла.

Часть 5 ст. 47 УК РА закрепляет правило об индивидуальном вменении отягчающих и смягчающих обстоятельств: соучастники отвечают только за те из них, которые были ими осознаны. Если отягчающим обстоятельством умышленного преступления выступает неосторожное причинение опасного последствия, оно вменяется соучастнику только при наличии его собственной неосторожности в отношении этого последствия. Эта норма последовательно реализует принцип ответственности по вине и препятствует механическому переносу всего объема содеянного исполнителем на остальных участников.

6. Соучастие и пределы индивидуальной ответственности

Соучастие создает юридическое единство преступления, но не растворяет индивидуальную ответственность. Деяние каждого участника получает самостоятельную уголовно-правовую оценку в соответствии с его фактической ролью. Исполнитель отвечает за совершение преступления в одной из форм, предусмотренных ч. 2 ст. 46 УК РА, а организатор, подстрекатель и пособник — за выполненную ими форму участия с учетом правил ст. 47 УК РА. Акцессорная связь проявляется в том, что ответственность организатора, подстрекателя и пособника соотносится с преступлением исполнителя. Однако эта зависимость не является абсолютной; современные исследования справедливо связывают развитие института соучастия с более точным разграничением коллективной преступной деятельности и личных оснований ответственности каждого участника[1].

Новый УК РА сочетает акцессорность с самостоятельностью ответственности соучастников. Если исполнитель не доводит преступление до конца по независящим от него обстоятельствам, остальные участники отвечают за соучастие в приготовлении или покушении. Если же действия, направленные на организацию, подстрекательство или пособничество, не достигают цели по обстоятельствам, не зависящим от действующего

[1] **Аветисян С.С.** Указ. соч. - С. 4-15; **Зограбян Н.Ю.** Указ. соч. - С. 131-134; **Габузян А., Маргарян А., Симонян Т.** Указ. соч. - С. 105-111.

лица, применяется ч. 4 ст. 47 УК РА. Тем самым отсутствие оконченного преступления исполнителя не всегда исключает ответственность лица, уже проявившего преступную направленность в юридически значимых действиях.

Пределы общего преступления определяются пересечением умысла участников, а не максимальным объемом фактически совершенного одним из них. Наиболее наглядно это выражено в ст. 49 УК РА об эксцессе соучастника. Эксцессом признается преступление, не охватывавшееся умыслом других участников; они за него не отвечают. Кодекс подробно регулирует случаи причинения более тяжкого вреда согласованному объекту, совершения преступления с неохваченным отягчающим обстоятельством, замены согласованного преступления менее опасным либо причинения вреда другому объекту.

Эти правила подтверждают, что общий умысел не следует понимать как фикцию единой коллективной воли. У каждого участника существует индивидуальный умысел, а юридическое единство возникает лишь в совпадающей части. Поэтому при квалификации необходимо последовательно установить: какое преступление охватывалось умыслом конкретного лица; какие фактические обстоятельства были им осознаны; к какому объему преступного поведения он присоединился; не вышел ли другой участник за эти пределы.

С учетом изложенного нельзя вменять организатору все преступления, совершенные лицами, которых он когда-либо объединил или которыми руководил. Ответственность требует установления его отношения к конкретному преступлению в соответствии с нормами Общей и Особенной частей. Аналогично предварительное предоставление средства не делает пособника ответственным за любой способ его дальнейшего использования, если фактически совершенное преступление не охватывалось его умыслом.

7. Разграничение соучастия и смежных форм множественного поведения

Практическое значение признаков соучастия наиболее полно проявляется при его разграничении со смежными конструкциями.

Соучастие и посредственное исполнение преступления. При соучастии как минимум два лица являются юридически способными участниками умышленного преступления и осознанно объединяют вклад. При посредственном исполнении лицо совершает преступление посредством использования другого лица, которое в силу закона не подлежит уголовной ответственности, не подлежит уголовной ответственности за соответствующее преступление в качестве исполнителя либо совершает преступление по неосторожности. Здесь отсутствует горизонтальная связь соучастников; имеет место одностороннее использование другого человека как фактического инструмента. Именно поэтому ч. 2 ст. 45 исключает соисполнительство, а ч. 2 ст. 46 признает использующее лицо исполнителем.

Соучастие и неосторожное сопричинение. Общность последствия и взаимная обусловленность нарушений нескольких лиц не создают соучастия, если отсутствует умышленное объединение поведения для совершения умышленного преступления. При неосторожном сопричинении каждый отвечает в пределах собственной обязанности и возможности предвидения; при соучастии участник сознательно присоединяет вклад к умышленному преступлению.

Соучастие и прикосновенность к преступлению. Заранее обещанное укрывательство преступника, средств, орудий, следов или преступно приобретенных предметов, а также обещание приобрести или реализовать такие предметы образуют пособничество, поскольку обещание, данное до окончания преступления, укрепляет условия его совершения. Те же действия без предварительного обещания не образуют соучастия и могут повлечь ответственность лишь при наличии самостоятельного состава Особенной части. Разграничительным критерием является не только время фактического укрывательства, но момент возникновения обещания и его функциональная связь с решимостью и деятельностью исполнителя.

Соучастие и простая осведомленность. Знание о готовящемся или совершаемом преступлении без предусмотренного законом вклада не является соучастием. Моральное одобрение, молчаливое присутствие и недонесение сами по себе не образуют пособничества. Бездействие может получить значение умышленного содействия только при наличии у лица обязанности действовать и остальных объективных и субъективных признаков пособничества. Особый случай предусмотрен п. 2 ч. 7 ст. 46 УК РА: пособником признается лицо, которое заранее согласилось участвовать в преступлении в качестве соисполнителя, но, непосредственно не участвуя в его совершении, своим присутствием укрепило решимость исполнителя.

Соучастие и заранее не обещанное использование результатов преступления. Приобретение или сбыт предметов, приобретенных преступным путем, после совершения преступления без предварительной договоренности не включаются в механизм первоначального преступления. Ответственность в этом случае должна определяться по самостоятельной норме Особенной части, если лицо осознавало преступное происхождение предмета и присутствуют остальные признаки соответствующего состава.

Таким образом, внешняя полезность поведения для преступника не является достаточной. Разграничение требует одновременной проверки субъектной множественности, функциональной включенности, осознания совместности и умышленной направленности на конкретное преступление.

8. Предлагаемый алгоритм установления признаков соучастия

Для обеспечения единообразной уголовно-правовой оценки представляется целесообразным использовать последовательный алгоритм.

На первом этапе определяется основное умышленное преступление: его объект, объективная сторона, момент начала и окончания, обязательные признаки субъекта, последствия, мотив и цель, если они входят в состав. Без такой конкретизации невозможно установить предмет умысла предполагаемого соучастника.

На втором этапе индивидуализируется вклад каждого лица. Необходимо установить конкретные действия, время их совершения и соответствие одной или нескольким ролям, предусмотренным ст. 46 УК РА. Указание лишь на “совместные действия” без описания индивидуального вклада противоречит принципу личной ответственности.

На третьем этапе проверяется субъектная множественность: возраст, вменяемость, возможность отвечать за соответствующую роль и наличие специального признака исполнителя. Если фактический причинитель не может отвечать как исполнитель, следует проверить конструкцию посредственного исполнения и специальные правила ст. 48 УК РА.

На четвертом этапе устанавливается функциональная совместность. Выясняется, был ли вклад предметно связан с преступлением, объективно пригоден для содействия и включен в механизм его совершения. Для материального состава дополнительно оценивается связь совместной деятельности с последствием; для формального состава — связь вклада с выполнением запрещенного деяния.

На пятом этапе исследуется субъективная связь: осознавал ли участник преступный характер основного деяния, роль другого лица и содействующее значение собственного поведения; желал ли он такого включения; было ли содействие в соответствии с его характером воспринято исполнителем либо иным образом фактически включено в механизм преступления.

На шестом этапе определяются индивидуальные пределы умысла. Устанавливается, какие способы, последствия и квалифицирующие обстоятельства охватывались виной лица, а какие составляют эксцесс другого участника либо требуют самостоятельной оценки по правилам о неосторожности.

Предлагаемый алгоритм не создает новых оснований ответственности. Его функция заключается в последовательном применении действующих норм и предотвращении двух противоположных ошибок: необоснованного расширения соучастия за счет объективно полезного, но неумышленного или одностороннего поведения и чрезмерного сужения соучастия требованием формального соглашения либо незаменимости вклада.

Заключение

Новый УК Республики Армения сохранил традиционную формулу соучастия, но существенно конкретизировал ее нормативное содержание. Положения ст. 45 должны применяться системно — во взаимосвязи с принципами личной ответственности и ответственности по вине, видами соучастников, правилами их ответственности,

соучастием в преступлениях со специальным субъектом, эксцессом и групповым совершением преступления.

Проведенный анализ позволяет выделить четыре обязательных элемента соучастия: субъектную множественность; функциональную совместность; осознание совместного характера участия; умышленную направленность поведения на совершение единого умышленного преступления. Отсутствие любого из них исключает квалификацию поведения как соучастия, хотя не препятствует ответственности за самостоятельное преступление при наличии его состава.

Субъектная множественность имеет количественно-качественный характер: необходимо участие как минимум двух лиц, способных нести ответственность за соответствующую форму участия. Использование лица, не подлежащего уголовной ответственности либо действующего по неосторожности, образует не соучастие с ним, а посредственное исполнение преступления.

Совместность представляет собой интегративный признак института. Ее объективное содержание состоит в функциональной включенности индивидуального вклада в механизм конкретного преступления, а субъективное — в осознании и волевом принятии такой связи. Причинная связь с общественно опасным последствием имеет значение для материальных составов, но не является универсальным критерием соучастия.

Единство преступления не означает коллективной вины. Ответственность каждого участника сохраняет личный характер и ограничивается его деянием, ролью и умыслом. Поэтому общий объем вменения определяется совпадающей частью умысла соучастников, а не всем фактически совершенным исполнителем. Такой подход позволяет одновременно обеспечить ответственность лиц, действительно включенных в совместную преступную деятельность, и исключить объективное вменение действий и последствий, не охватывавшихся индивидуальной виной.

Список использованной литературы

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք [Уголовный кодекс Республики Армения]: принят 5 мая 2021 г. № ՀՕ-199-Ն, вступил в силу 1 июля 2022 г. (в действующей редакции).

[Электронный ресурс]. URL: https://www.arlis.am/hy/acts/153080/latest (дата обращения: 24.08.2026).

2. **Գաբուզյան Ա., Մարգարյան Ա., Սիմոնյան Տ.,** ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց (**Габузян А., Маргарян А., Симонян Т.** Руководство по толкованию концептуальных подходов и новых институтов, закреплённых в новом УК РА). - Եվրոպայի խորհուրդ (Совет Европы), 2022. - 497 с.

3. **Аветисян С.С.** Тенденции развития института соучастия в преступлении по новому Уголовному кодексу Республики Армения // Сборник научных трудов Международной научно-практической конференции “Актуальные проблемы уголовного законодательства и правоприменительной практики стран-участниц СНГ”. - Ереван: РАУ, 2022. – С. 12.

4. **Зограбян Н.Ю.** Некоторые вопросы института соучастия в контексте нового Уголовного кодекса Республики Армения // Российское право на современном этапе: Сборник научных статей по материалам XVI Международной научно-практической конференции (27 апреля 2022 г.) / Отв. ред. А. Н. Позднышов. – Ростов-на-Дону: РГЭУ (РИНХ), 2022. – С. 4.

5. **Рашидян А.А.** К вопросу о признаках соучастия и их регламентации в проекте нового Уголовного кодекса РА // Судебная власть. 2016. № 1 (199). – С. 8.

6. **Новоселов Г.П.** Понятие соучастия и признак совместности участия // Российский юридический журнал. 2012. № 6. – С. 7.

7. **Янина И.Ю.** Причинение как уголовно-правовая категория // Российское правосудие. 2024. № 1. – С. 9.

8. **Бакрадзе А.А.** Вопросы квалификации соучастия всех членов организованной группы как соисполнителей преступления // Юридические исследования. 2024. № 8. – С. 11.

9. **Куфелкина И.Ю.** Проявления форм соучастия в преступлении в Особенной части Уголовного кодекса Российской Федерации // Вестник Казанского юридического института МВД России. 2023. Т. 14. № 2 (52). – С. 6.

10. **Ситникова А.И.** Проблемы квалификации убийства, совершенного групповыми способами (п. “ж” ч. 2 ст. 105 УК РФ) // Вестник Югорского государственного университета. 2023. Т. 19. № 1. – С. 6.

11. Решение Кассационного суда Республики Армения от 27 декабря 2022 г. по уголовному делу ԵԱՆԴ/0046/01/16. [Электронный ресурс]. URL: https:// https://www.cassationcourt.am/precedent/precedent-single-decision/criminal case/1874.

12. Решение Кассационного суда Республики Армения от 25 июля 2008 г. по уголовному делу ՎԲ-48/08. [Электронный ресурс]. URL: https:// https://old.arlis.am/DocumentView.aspx?docID=47328.

13. Решение Кассационного суда Республики Армения от 26 мая 2023 г. по уголовному делу № ԵՇԴ/0088/01/17. [Электронный ресурс]. URL: https:// https://www.cassationcourt.am/precedent/precedent-single-decision/criminal-case/2051.

14. Решение Кассационного суда Республики Армения от 20 марта 2024 г. по уголовному делу № ՍԴ3/0007/01/22. [Электронный ресурс]. URL: https://cassationcourt.am/precedent/precedent-single-decision/criminal-case/2307.

ՀԱՆՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ

Ամփոփագիր

Հոդվածում ուսումնասիրվում են Հայաստանի Հանրապետության 2021 թվականի քրեական օրենսգրքով նախատեսված հանցակցության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները: Հիմնավորվում է, որ հանցակցության օրենսդրական հասկացությունը պետք է մեկնաբանվի անձնական պատասխանատվության և ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքների, հանցակիցների տեսակների, նրանց պատասխանատվության սահմանների, հատուկ սուբյեկտով հանցագործություններին հանցակցության, հանցակցի սահմանազանցման և խմբային հանցագործության վերաբերյալ նորմերի համակարգային փոխկապակցվածությամբ: Առաջարկվում է հանցակցության հատկանիշների քառատարր մոդել, որը ներառում է սուբյեկտային բազմությունը, գործառութային համատեղությունը, մասնակցության համատեղ բնույթի գիտակցումը և վարքագծի դիտավորյալ ուղղվածությունը միասնական դիտավորյալ հանցագործության կատարմանը: Հիմնավորվում են հանցակցությունը միջնորդավորված կատարումից, միակողմանի օժանդակությունից, անզգույշ համատեղ վնաս պատճառելուց և հանցագործությանն առնչությունից սահմանազատելու չափանիշները: Հիմնավորվում է, որ հետևանքի հետ պատճառական կապը հանցակցության համընդհանուր հատկանիշ չէ. քրեաիրավական գնահատման համար որոշիչ նշանակություն ունի յուրաքանչյուր անձի ներդրման գործառութային ներառվածությունը հանցագործության կատարման մեխանիզմում: Եզրակացություն է արվում, որ համատեղությունը հանցակցության ինտեգրող հատկանիշն է, որը

մասնակիցների անհատական արարքներն ու դիտավորությունը միավորում է իրավաբանորեն միասնական հանցագործության մեջ՝ չվերացնելով նրանցից յուրաքանչյուրի պատասխանատվության հիմքերն ու սահմաններն ինքնուրույն որոշելու անհրաժեշտությունը:

Հիմնաբառեր. հանցակցություն, համատեղություն, դիտավորյալ հանցագործություն, սուբյեկտների բազմություն, կատարող, քրեական պատասխանատվություն:

ELEMENTS OF COMPLICITY IN A CRIME UNDER THE NEW CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

Annotation

The article examines the objective and subjective elements of complicity under the 2021 Criminal Code of the Republic of Armenia. It argues that the statutory definition of complicity must be interpreted systematically, in conjunction with the principles of personal and culpable responsibility and the provisions governing the types of accomplices, the limits of liability, offences requiring a special subject, excess by an accomplice, and group criminality. The author proposes a four-element model comprising a plurality of criminally liable persons, functional jointness, awareness of the joint nature of participation, and intentional orientation toward a single intentional crime. It is demonstrated that causation of a harmful consequence is not a universal element of complicity; the decisive criterion is whether each contribution is functionally integrated into the mechanism of the offence. The article formulates criteria for distinguishing complicity from indirect perpetration, unilateral assistance, negligent co-causation, and post-crime involvement. It concludes that jointness is the integrative element that unites individual acts and intentions into one legally relevant offence while preserving the need to establish the grounds and limits of each participant's personal liability.

Keywords: complicity, joint participation, intentional crime, plurality of offenders, perpetrator, criminal liability.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 28.08.2026 թ., տրվել է գրախոսության 29.08.2026 թ., ընդունվել է տպագրության 08.09.2026 թ.:



DOI: 10.59560/18291155-2026.3-141

ՀՐԱՅՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀՀ Պաշտպանության նախարարության մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնի ղեկավար, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս

ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՎԱՐՈՒՅԹԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՒՄ ՆՐԱՆՑ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

Ամփոփագիր

Քրեական դատավարության շրջանակում հանրային մասնակիցների կողմից իրենց լիազորությունների պատշաճ և անաչառ իրականացումը կարևոր նշանակություն ունի վարույթի օրինականության և արդյունավետության ապահովման համար: Այդ համատեքստում հոդվածում ուսումնասիրվում են քրեական վարույթի հանրային մասնակիցներին վարույթից հեռացնելու հետ կապված իրավական կառուցակարգերը և դրանց շրջանակում ձևավորվող փոխհարաբերությունները: Վերլուծվում են հսկող դատախազի, քննիչի, հետաքննիչի և հետաքննության մարմնի պետի՝ վարույթին հետագա մասնակցությունը դադարեցնելու հիմքերն ու ընթացակարգերը, ինչպես նաև այդ լիազորությունների ազդեցությունը հանրային մասնակիցների դատավարական ինքնուրույնության վրա: Համեմատական ուսումնասիրության են ենթարկվում նախկին և գործող քրեական դատավարության օրենսգրքերի կարգավորումները, բացահայտվում են դատախազական հսկողության և քննչական մարմնի կազմակերպական ղեկավարման սահմանազատման հիմնախնդիրները: Առանձին անդրադարձ է կատարվում քննիչին վարույթից հեռացնելու իրավական բնույթին՝ այն գնահատելով պատասխանատվության և կանխարգելիչ դատավարական միջոցի հարաբերակցության համատեքստում: Պաշտոնական վիճակագրական տվյալների ուսումնասիրության միջոցով ներկայացվում են տվյալ լիազորության գործնական կիրառման դինամիկան և դրա հնարավոր ազդեցությունը քննիչի դատավարական ինքնուրույնության վրա: Հիմնավորվում է վարույթից հեռացնելու հիմքերի և ընթացակարգային երաշխիքների առավել միասնական ու որոշակի քրեադատավարական կարգավորման անհրաժեշտությունը, ինչպես նաև քննիչին

վարույթից հեռացնելու վերաբերյալ որոշման նկատմամբ անկախ դատական վերահսկողության ապահովման նպատակահարմարությունը:

Հիմնաբառեր. քրեական վարույթ, հանրային մասնակիցներ, վարույթից հեռացում, դատավարական ինքնուրույնություն, դատախազական հսկողություն, դատավարական պատասխանատվություն, դատական վերահսկողություն:

Քրեական վարույթի հանրային մասնակիցների միջև ձևավորվող փոխհարաբերությունները էական նշանակություն ունեն վարույթի օրինականության, արդյունավետության և դատավարական ինքնուրույնության պատշաճ ապահովման տեսանկյունից: Այս առումով առանձնակի արդիականություն ունի հանրային մասնակցին վարույթից հեռացնելու ինստիտուտի ուսումնասիրությունը, քանի որ դրա կիրառմամբ անմիջականորեն սահմանափակվում կամ դադարեցվում է տվյալ մասնակցի կողմից իր դատավարական գործառույթի իրականացումը, իսկ առանձին դեպքերում կարող է ազդել նաև հանրային մասնակիցների միջև լիազորությունների հավասարակշռության վրա: Հետազոտության նպատակն է բացահայտել քրեական վարույթի հանրային մասնակիցներին վարույթից հեռացնելու իրավական բնույթը, դրա հիմքերը, կիրառման առանձնահատկությունները և ազդեցությունը հանրային մասնակիցների դատավարական ինքնուրույնության վրա: Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ վերլուծել նախկին և գործող քրեադատավարական կարգավորումները, սահմանազատել դատախազական հսկողության և քննչական մարմնի կազմակերպական ղեկավարման շրջանակները, գնահատել քննիչին վարույթից հեռացնելու ինստիտուտի պատասխանատվական և կանխարգելիչ բնույթը, ուսումնասիրել դրա գործնական կիրառման միտումները և ձևակերպել իրավակարգավորման կատարելագործման հնարավոր ուղղությունները:

Քրեական վարույթի հանրային մասնակիցների միջև ձևավորվող փոխհարաբերությունները առավել ընդգծված դրսևորում են ստանում այն դեպքերում, երբ դրանցից մեկին վերապահվում է մյուսի հետագա մասնակցությունը տվյալ վարույթին դադարեցնելու կամ վարույթի իրականացումը մեկ այլ հանրային մասնակցի հանձնելու իրավասություն: Նման լիազորությունները դուրս են հանրային մասնակիցների միջև սովորական գործառութային համագործակցության շրջանակից, քանի որ դրանց իրականացմամբ անմիջականորեն փոփոխվում է վարույթն իրականացնող կամ դրան մասնակցող սուբյեկտների կազմը և, որպես հետևանք, ազդեցություն է գործադրվում ինչպես նախաքննության կազմակերպման, այնպես էլ տվյալ հանրային մասնակցի դատավարական ինքնուրույնության վրա:

Հանրային մասնակցին վարույթից հեռացնելու իրավասությունն իր բնույթով առանձնահատուկ է նաև այն պատճառով, որ այն չի բխում պարզապես պաշտոնեական կամ վարչական ենթակայությունից: Քրեական դատավարության

օրենսդրությունը նման միջամտության հնարավորությունը վերապահում է կոնկրետ հանրային մասնակցի՝ որոշակի իրավական հիմքերի և ընթացակարգային պայմանների առկայության դեպքում: Այս իմաստով վարույթից հեռացնելը հանդես է գալիս որպես հանրային մասնակիցների միջև քրեադատավարական փոխհարաբերությունների հատուկ ձև, որի շրջանակում մի մասնակցի լիազորության իրականացումն ուղղակիորեն սահմանափակում կամ դադարեցնում է մյուս մասնակցի՝ տվյալ վարույթով իր գործառույթն իրականացնելու հնարավորությունը:

Հատկանշական է, որ օրենսդիրը տարբեր իրավական կառուցակարգեր է նախատեսել՝ վերադաս դատախազի կողմից հսկող դատախազին վարույթից հեռացնելու, հսկող դատախազի կողմից քննիչին, հետաքննիչին կամ հետաքննության մարմնի պետին տվյալ վարույթին մասնակցելուց հեռացնելու, ինչպես նաև քննչական մարմնի ղեկավարի կողմից վարույթը մի քննիչից մյուսին հանձնելու համար: Թեև նշված լիազորությունների կիրառման արդյունքում կարող է առաջանալ արտաքին առումով համանման հետևանք՝ կոնկրետ հանրային մասնակցի կողմից տվյալ վարույթի հետագա իրականացումը կամ մասնակցությունը դադարեցնելը, դրանց իրավական հիմքերը, նպատակները և գործառութային նշանակությունը նույնական չեն: Հետևաբար, դրանց ուսումնասիրությունը պահանջում է ոչ միայն համապատասխան լիազորությունների առանձին վերլուծություն, այլև դրանց համադրություն՝ պարզելու համար հանրային մասնակիցների դատավարական ինքնուրույնության, փոխադարձ վերահսկողության, պատասխանատվության և կազմակերպական վերադասության միջև առկա հարաբերակցությունը:

Քրեական վարույթի հանրային մասնակիցներին վարույթից հեռացնելու իրավակարգավորման համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Նախկին քրեական դատավարության օրենսգրքից[1] (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) քրեական դատավարության օրենսգրքին[2] (այսուհետ՝ Օրենսգիրք) անցմամբ էականորեն վերանայվել են ինչպես տվյալ լիազորության իրականացման հիմքերը, այնպես էլ դրա սուբյեկտային շրջանակը: Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով դատախազն իրավասու էր հետաքննության մարմնի աշխատակցին կամ քննիչին հեռացնել տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցելուց, եթե վերջիններս գործի քննության ընթացքում թույլ էին տվել օրենքի խախտում: Ընդ որում, օրենսդիրը չէր տարբերակում խախտման բնույթն ու ծանրության աստիճանը, ինչի պայմաններում «օրենքի խախտում» ձևակերպումը

[1] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգիրք, ընդունված՝ 01.07.1998 թ., ՀՕ-248, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://old.arlis.am/DocumentView.aspx?docid=31647 (10.09.2026 թ.), չի գործում:

[2] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված՝ 30.06.2021 թ., ՀՕ-306-Ն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.arlis.am/hy/acts/225856/print/act (10.09.2026 թ.), գործում է:

դատախազին տրամադրում էր բավական լայն գնահատողական հայեցողություն: Նախկին օրենսգիրքը, սակայն, հսկողություն իրականացնող դատախազին վարույթից հեռացնելու ինքնուրույն դատավարական կառուցակարգ չէր նախատեսում[1]:

Օրենսգրքով քննիչին և հետաքննության սուբյեկտներին վարույթից հեռացնելու իրավական հիմքը էապես նեղացվել է: Օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ հսկող դատախազը կարող է հետաքննության մարմնի պետին, հետաքննիչին կամ քննիչին հեռացնել կոնկրետ վարույթին մասնակցելուց միայն օրենքի կոպիտ խախտման դեպքում: Միաժամանակ օրենսդիրը որոշակիացրել է «օրենքի կոպիտ խախտում» հասկացության բովանդակությունը՝ այն կապելով Սահմանադրությամբ ամրագրված մարդու հիմնական իրավունքի կամ ազատության խախտման, նախաքննության բնականոն ընթացքը խաթարող խախտման կամ հսկող դատախազի հանձնարարությունները պարբերաբար չկատարելու հետ[2]: Այսպիսով, Նախկին օրենսգրքի համեմատությամբ բարձրացվել է քննիչի դատավարական ինքնուրույնությանը միջամտելու իրավական շեմը և սահմանափակվել հսկող դատախազի հայեցողության շրջանակը: Նման մոտեցում է արտահայտված նաև մասնագիտական գրականության մեջ, որտեղ քննիչին վարույթից հեռացնելու հիմք է դիտարկվում ոչ թե ցանկացած խախտում, այլ հատկապես այնպիսի կոպիտ խախտումը, որը կարող է հանգեցնել մարդու իրավունքների խախտման կամ ապացույցների կորստի[3]: Գրեթե նույնական միտք են արտահայտել նաև այլ տեսաբաններ[4]:

Էական փոփոխություն է կատարվել նաև հեռացման և վարույթի հետագա կազմակերպման լիազորությունների հարաբերակցության մասով: Օրենսգիրքը հսկող դատախազին ուղղակիորեն արգելում է հեռացված անձի փոխարեն այլ անձ նշանակել, մինչդեռ վարույթից հեռացված քննիչին այլ քննիչով փոխարինելու իրավասությունը վերապահում է քննչական մարմնի ղեկավարին[5]: Նման տարանջատումը հնարավորություն է տալիս սահմանազատելու դատախազական հսկողության և քննչական մարմնի կազմակերպական ղեկավարման ոլորտները. հսկող դատախազը գնահատում է քննիչի հետագա մասնակցությունը բացառելու իրավական հիմքի առկայությունը, իսկ կոնկրետ վարույթի հետագա իրականացումը կազմակերպելու հարցը լուծում է քննչական մարմնի ղեկավարը:

[1] Տե՛ս Նախկին օրենսգիրք, հոդված 53-րդ, մաս 2-րդ, կետ 10-րդ:

[2] Տե՛ս Օրենսգրքի 38-րդ հոդվածը:

[3] Տե՛ս Уголовно-процессуальное право Российской Федерации. Учебник / Отв. ред. П.А. Лупинская, Л.А. Воскобитова. 3-е изд., перераб. и доп. - М., 2013, էջ 123:

[4] Տե՛ս **Смирнов А.В., Калиновский К.Б.** Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. Постатейный / Под общ. ред. А.В. Смирнова. 2-е изд., доп. и перераб. - СПб.: Питер, 2004, էջ 124-129:

[5] Տե՛ս նույն տեղում, 40-րդ հոդված:

Վերջապես, Օրենսգրքով ինքնուրույն կարգավորում է ստացել նաև հսկող դատախազին վարույթից հեռացնելու հարցը: Օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով վերադաս դատախազին վերապահվել է հսկող դատախազին վարույթից հեռացնելու և հսկողության իրականացումը այլ դատախազի հանձնարարելու կամ անձամբ իրականացնելու լիազորություն[1]: Ընդ որում, ի տարբերություն քննիչի, հետաքննիչի և հետաքննության մարմնի պետի հեռացման դեպքերի՝ հսկող դատախազին վարույթից հեռացնելու համար Օրենսգիրքը որևէ կոնկրետ նյութական հիմք չի սահմանում: Հետևաբար գործող իրավակարգավորումը, մի կողմից, առավել հստակ և սահմանափակ է քննիչի նկատմամբ դատախազական ներգործության մասով, իսկ մյուս կողմից՝ հսկող դատախազի հեռացման դեպքում պահպանվում է վերադաս դատախազի առավել լայն հայեցողություն, ինչը հանրային մասնակիցների դատավարական ինքնուրույնության և փոխհարաբերությունների տեսանկյունից ենթակա է առանձին գնահատման: Թեև Օրենսգիրքն այս լիազորության նյութական հիմքերը չի կոնկրետացնում, դրանք որոշակիացվում են «Դատախազության մասին» օրենքի 32-րդ հոդվածով, որը վարույթից հեռացումը կապում է, մասնավորապես, դատախազի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքի առկայության դեպքում ինքնաբացարկ չհայտնելու, ինչպես նաև վերադաս դատախազի հանձնարարության իրավաչափության շուրջ առաջացած տարաձայնության հետ[2]:

Մեր դիտարկմամբ՝ իրավակարգավորման նման կառուցվածքը լիովին հիմնավորված չէ: Եթե Օրենսգիրքը քննիչին, հետաքննիչին և հետաքննության մարմնի պետին վարույթից հեռացնելու հիմքերն ու կարգը սահմանում է անմիջապես քրեադատավարական նորմերով, ապա հսկող դատախազի վարույթից հեռացման նյութական հիմքերը փաստացի տեղափոխված են «Դատախազության մասին» օրենք, ընդ որում՝ ձևակերպված են այլ տրամաբանությամբ և այլ հիմքերով: Մինչդեռ «Դատախազության մասին» օրենքն իր բնույթով առավելապես կարգավորում է դատախազության կազմակերպման, ծառայության անցման, ենթակայության և ծառայողական հարաբերությունների հարցերը, իսկ կոնկրետ քրեական վարույթում հանրային մասնակցի մասնակցությունը շարունակելու կամ դադարեցնելու հարցը կրում է ակնհայտ քրեադատավարական բնույթ: Հետևաբար, առավել համակարգային և իրավական որոշակիության պահանջներին համապատասխան լուծում կլիներ քննիչի, հետաքննիչի, հետաքննության մարմնի պետի և հսկող դատախազի վարույթից հեռացման հիմքերն ու հիմնական ընթացակարգային երաշխիքները միասնականացնել և ամրագրել հենց Օրենսգրքում՝ բացառելով

[1] Տե՛ս նույն տեղում, 37-րդ հոդված:

[2] Տե՛ս «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 32-րդ հոդված :

նույնաբնույթ դատավարական ինստիտուտի մասնատված կարգավորումը տարբեր իրավական ակտերում:

Անդրադառնալով քննիչին վարույթից հեռացնելու գործընթացի ստատուսին՝ կարելի է մեջբերել պրոֆեսոր Ղամբարյանի տեսակետը, ով, հղում կատարելով Դ.Ա. Լիպինսկու մոտեցմանը, նշում է, որ վերջինս քննիչին վարույթից հեռացնելը չի դիտարկում որպես դատավարական պատասխանատվության միջոց՝ պատճառաբանելով, որ այդպիսի միջոցում բացակայում են դատապարտումն ու իրական անբարենպաստ հետևանքները: Լիպինսկու պատկերավոր գնահատմամբ՝ եթե քննիչի վարույթում միաժամանակ գտնվում է 15–20 քրեական գործ, ապա դրանցից մեկի վարույթից նրան հեռացնելը կարող է ընկալվել նույնիսկ որպես «պարգև», այլ ոչ թե պարսավանք: Ղամբարյանը, սակայն, քննադատում է այդ մոտեցումը՝ այն համարելով առավելապես հուզական գնահատական և նշելով, որ դրանով բավարար չափով չի հիմնավորվում քննիչին վարույթից հեռացնելու դեպքում հանրային պարսավանքի բացակայությունը[1]:

Կիսելով պրոֆեսոր Ղամբարյանի վերոնշյալ մոտեցումը՝ այդուհանդերձ կարծում ենք, որ քննիչին վարույթից հեռացնելն իր բնույթով երկակի նշանակություն ունի. մի կողմից այն կարող է դիտարկվել որպես դատավարական պատասխանատվության միջոց, քանի որ կիրառվում է քննիչի կողմից թույլ տրված խախտման առնչությամբ և արտահայտում է վերջինիս գործունեության բացասական գնահատական, մյուս կողմից՝ ունի ընդգծված կանխարգելիչ նշանակություն: Ընդ որում, մեր գնահատմամբ, տվյալ ինստիտուտի կանխարգելիչ բնույթն առավել արտահայտված է, քանի որ քննիչին վարույթից հեռացնելն ինքնին չի առաջացնում այնպիսի կոնկրետ իրավական անբարենպաստ հետևանքներ, որոնք բնորոշ են պատասխանատվության դասական միջոցներին: Դրա հիմնական նպատակն առավելապես ոչ պատշաճ կամ ոչ բարեխիղճ կերպով իր դատավարական լիազորություններն իրականացնող քննիչին տվյալ վարույթի հետագա իրականացումից հեռացնելն է՝ դրանով կանխելով հնարավոր նոր խախտումները և ապահովելով վարույթի պատշաճ ու օրինական շարունակությունը: Այս իմաստով քննիչին վարույթից հեռացնելը, թեև կարող է պարունակել պատասխանատվության տարրեր, գործառութային առումով առավելապես հանդես է գալիս որպես կանխարգելիչ դատավարական միջոց:

Դատավարագետ Ա. Մարտիրոսյանը, անդրադառնալով քննիչին վարույթից հեռացնելու հիմքերի կիրառման պրակտիկային, արձանագրում է, որ առանձին դեպքերում օրենքի՝ ինչպես նյութական, այնպես էլ դատավարական, նույնիսկ ոչ էական խախտումները կարող են հիմք հանդիսանալ քննիչին տվյալ քրեական

[1] Տե՛ս **Гамбарян А.С.** Отстранение следователя от производства: ответственность или прокурорская «расправа»? // Расследование преступлений: проблемы и пути их решения. 2018. № 4 (22), էջ 83:

վարույթից հեռացնելու համար[1]: Հեղինակի այս դիտարկումը ցույց է տալիս, որ նախկին իրավակարգավորման պայմաններում քննիչին վարույթից հեռացնելու լիազորության կիրառման շրջանակը գործնականում կարող էր բավական լայն մեկնաբանվել, հատկապես այն պարագայում, երբ օրենքը չէր սահմանում խախտման էականության կամ ծանրության հստակ չափանիշներ:

Այդուհանդերձ, միայն առանձին գործնական դեպքերի վկայակոչումը, մեր կարծիքով, դեռևս ամբողջական պատկերացում չի տալիս քննարկվող լիազորության կիրառման իրական ծավալների և միտումների վերաբերյալ: Հետևաբար, Մարտիրոսյանի մատնանշած խնդրի գործնական նշանակությունը և տարածվածության աստիճանը առավել հիմնավորված գնահատելու համար անհրաժեշտ է այն համադրել համապատասխան վիճակագրական տվյալների հետ: Այդ նպատակով ստորև կներկայացնենք մեր կողմից ուսումնասիրված տվյալները՝ պարզելու համար, թե քննիչին վարույթից հեռացնելու լիազորությունը համապատասխան ժամանակահատվածում ինչ հաճախականությամբ է կիրառվել և դրա կիրառման դինամիկան ինչպիսի միտումներ է արձանագրել:

Քննիչին վարույթից հեռացնելու լիազորության կիրառման սահմանների հստակեցմանն ուղղված մոտեցումներ են ձևավորվել նաև ՀՀ գլխավոր դատախազի և ՀՀ դատախազության կոլեգիայի ակտերով: Մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 10-ի N 27 հրամանի հավելվածի 17-րդ կետով սահմանվել է, որ քննիչին քրեական գործով դատավարությանը մասնակցելուց հեռացնելու մասին որոշում կայացնելիս դատախազը պետք է առաջնորդվի գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ապահովելու անհրաժեշտությամբ՝ բացառելով անձնական համակրանքով կամ հակակրանքով պայմանավորված որոշումների կայացումը[2]: 2022 թվականի մարտի 11-ի ՀՀ դատախազության կոլեգիայի նիստում մոտեցումն առավել հստակեցվել է՝ արձանագրելով, որ քննիչին վարույթից հեռացնելու որոշումը պետք է կայացվի այն դեպքում, երբ վերջինիս վարքագիծը ողջամտորեն հիմք է տալիս կասկածի տակ դնելու իրականացվող նախաքննության օբյեկտիվությունն ու անաչառությունը[3]:

Նշված մոտեցումները վկայում են, որ քննիչին վարույթից հեռացնելը չպետք է դիտարկվի որպես օրենքի յուրաքանչյուր խախտմանը հաջորդող սովորական ներգործության միջոց: Ընդ որում, թեև Օրենսգրքով այս լիազորության կիրառման շեմը բարձրացվել է՝ որպես հիմք նախատեսելով արդեն օրենքի կոպիտ խախտումը,

[1] Տե՛ս **Մարտիրոսյան Ա.,** «Քննիչին վարույթից հեռացնելու քրեադատավարական կարգավորումները՝ ըստ ՀՀ քրեական դատավարության գործող և նոր օրենսգրքերի»: Պետություն և իրավունք, N 1 (92), 2022, էջ 89:

[2] Տե՛ս ՀՀ գլխավոր դատախազի 10.04.2018 թ. N 27 հրամանի հավելված, «Դատախազի վարքագծի կանոններից բխող պահանջները», կետ 17: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ (08.09.2026):

[3] Տե՛ս ՀՀ դատախազության կոլեգիայի 11.03.2022 թ. նիստի արձանագրություն և որոշումներ, էջեր 17-18: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ (08.09.2026):

խնդիրը շարունակում է պահպանել իր առանձնահատուկ կարևորությունը: Այս լիազորության կիրառումը կարող է ազդեցություն ունենալ ինչպես քննիչի դատավարական ինքնուրույնության, այնպես էլ վարույթի բնականոն ընթացքի և ժամկետների վրա: Հետևաբար, դրա գործնական կիրառման իրական ծավալն ու ձևավորված միտումները գնահատելու նպատակով ստորև կներկայացվի երկար ժամանակահատված ընդգրկող վիճակագրական ուսումնասիրություն[1]:

Ստորև աղյուսակը.[2]

Քննիչին վարույթից հեռացնելու դեպքերը (տարեթիվ/քննիչ)	
2014	5
2015	12
2016	77
2017	189

Հետաքննություն և նախաքննություն իրականացնող անձանց վարույթից հեռացման ընդհանուր ցուցանիշները (տարեթիվ/քննիչ/հետաքննիչ/հետաքննության մարմնի պետ)	
2013	57
2014	90
2015	86
2020	294
2021	692
2022	387
2023	253
2024	201
2025	426

Քննիչին վարույթից հեռացնելու դատախազական լիազորության գործնական կիրառության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանձին

[1] Պետք է հատուկ արձանագրել, որ այս մասով մեր կողմից իրականացված հարցումների արդյունքներն էականորեն տարբերվում են վիճակագրական տվյալներից, քանի որ դրանք ըստ էության բացակայում են: Հարցումներն ու դրանց պատասխանները կից ներկայացվում են:

[2] Տե՛ս ՀՀ գլխավոր դատախազության 2013-2025 թթ. հաղորդումները ՀՀ Ազգային ժողովին հետևյալ հղմամբ՝ https://prosecutor.am/%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D5%AB%D5%B6 (04.09.2026 թ.):

ժամանակահատվածներում այն կիրառվել է բավականին ինտենսիվ, ինչը հնարավորություն է տալիս գնահատելու ոչ միայն այդ լիազորության նշանակությունը, այլև դրա ազդեցությունը քննիչի դատավարական ինքնուրույնության վրա:

Այս առումով առավել համադրելի են 2016 և 2017 թվականների՝ ՀՀ քննչական կոմիտեի քննիչներին վերաբերող տվյալները: 2016 թվականին դատախազների կողմից կայացվել է քննիչներին քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնելու 77 որոշում, իսկ 2017 թվականին՝ 189: Այսինքն՝ մեկ տարվա ընթացքում դեպքերի թիվն ավելացել է 112-ով կամ շուրջ 145,5 տոկոսով՝ փաստացի աճելով մոտ 2,5 անգամ: 2017 թվականի 189 որոշումներից 45-ը վերաբերել է զինվորական քննչական գլխավոր վարչությանը, 63-ը՝ Երևանին, իսկ 81-ը՝ մարզերին, ինչը ցույց է տալիս, որ նման պրակտիկան տարածված է եղել քննչական համակարգի տարբեր ստորաբաժանումներում:

Առավել էական է այն, որ քննիչներին վարույթից հեռացնելու հիմնական պատճառների շարքում նշվել են անհամաչափ քննությունը, նախաքննության ձգձգումները և հսկող դատախազի ցուցումները ժամանակին չկատարելը[1]: Հետևաբար, այս լիազորությունը գործնականում կիրառվել է ոչ միայն այն դեպքերում, երբ քննիչի հետագա մասնակցությունն անհնարին կամ անթույլատրելի է եղել, այլև որպես քննության ընթացքի և քննիչի գործունեության նկատմամբ դատախազական ներգործության միջոց: Սա անմիջականորեն առնչվում է քննիչի դատավարական ինքնուրույնության և դատախազական հսկողության հարաբերակցության խնդրին:

2014–2015 թվականների տվյալները պետք է գնահատել որոշակի վերապահումով: 2014 թվականի հաղորդման առանձին հատվածում նշվել է 5, իսկ 2015 թվականին՝ 3 քննիչի վարույթից հեռացման մասին: 2015 թվականի մեկ այլ հատվածում արձանագրվել է նաև քրեադատավարական խախտումներ թույլ տալու համար 8 քննիչի վարույթից հեռացում: Սակայն դրանց սուբյեկտային և կազմակերպական ընդգրկումը նույնական չէ 2016–2017 թվականների՝ ՀՀ քննչական կոմիտեի քննիչների վերաբերյալ տվյալների հետ, հետևաբար դրանք մեկ միասնական վիճակագրական շարքի մեջ ներառելը մեթոդաբանորեն հիմնավորված չէ:

Միաժամանակ ՀՀ դատախազության՝ Ազգային ժողով ներկայացված հաղորդումներում կիրառվում է նաև առավել ընդհանուր՝ «հետաքննություն և նախաքննություն իրականացնող անձանց» վարույթից հեռացման ձևակերպումը: Այս

[1] Պետք է նշել, որ Նախկին օրենսգրքում նման իրավական հիմքեր որպես այդպիսին նախատեսված չէին, ավելին՝ հայտնի չէ, թե տվյալ գործիքը կարող էր կիրառել վերադաս դատախազը, թե՝ հսկողը, քանի որ Նախկին օրենսգիրքը չէր առանձնացնում նրանց՝ օգտագործելով միայն դատախազ հասկացությունը:

ձևակերպումը իրավական և վիճակագրական առումով որոշակի անորոշություն է առաջացնում, քանի որ անհրաժեշտ է պարզել, թե յուրաքանչյուր ժամանակահատվածում կոնկրետ որ դատավարական սուբյեկտներն են ընդգրկվել այդ հասկացության ներքո: Եթե համապատասխան ժամանակահատվածում տվյալ վարույթն իրականացնող պաշտոնատար անձը քննիչն է եղել, ապա այդ տվյալները կարող են դիտարկվել որպես քննիչներին վերաբերող՝ միաժամանակ պահպանելով պաշտոնական աղբյուրի ձևակերպման վերաբերյալ վերապահումը:

Այսպես, 2013 թվականին նշված ձևակերպմամբ վարույթից հեռացվել է 57 անձ, 2014 թվականին՝ 90, իսկ 2015 թվականին՝ 86: 2014 թվականին 26, իսկ 2015 թվականին 16 անձ վարույթից հեռացվել է նախաքննության ժամկետների խախտման պատճառով: Այս տվյալները ցույց են տալիս, որ վարույթից հեռացնելու լիազորությունը նույնիսկ այդ ժամանակահատվածում չի ունեցել բացառապես եզակի կիրառություն:

Առավել արտահայտիչ է 2020–2025 թվականների դինամիկան: 2020 թվականին վարույթից հեռացվել է 294 անձ, իսկ 2021 թվականին՝ 692՝ աճելով 398-ով կամ շուրջ 135,4 տոկոսով: Այնուհետև ցուցանիշը հաջորդաբար նվազել է՝ 2022 թվականին կազմելով 387, 2023 թվականին՝ 253, իսկ 2024 թվականին՝ 201: Այսինքն՝ 2021 թվականի առավելագույն ցուցանիշից մինչև 2024 թվականը դեպքերի թիվը նվազել է շուրջ 71 տոկոսով: Սակայն 2025 թվականին այն կրկին աճել է մինչև 426՝ մեկ տարում ավելանալով շուրջ 111,9 տոկոսով:

Այսպիսով, 2020–2025 թվականների պատկերը՝ 294 → 692 → 387 → 253 → 201 → 426, ցույց է տալիս վարույթից հեռացնելու լիազորության կիրառման զգալի տատանումներ: Դրանք ինքնին չեն բացահայտում փոփոխությունների պատճառները, սակայն հիմք են տալիս քննարկելու կիրառման չափանիշների միատեսակության, կանխատեսելիության և համաչափության հարցերը:

Ընդհանուր առմամբ, ներկայացված վիճակագրությունը ցույց է տալիս, որ քննիչին վարույթից հեռացնելը գործնականում կարող է հանդես գալ որպես բավականին ինտենսիվ դատախազական ներգործության միջոց: Հետևաբար, դրա կիրառման հիմքերը պետք է լինեն հնարավորինս հստակ և կապված այնպիսի խախտումների հետ, որոնց բնույթն ու ծանրությունը հիմնավորում են քննիչի հետագա մասնակցության անհնարինությունը կամ աննպատակահարմարությունը տվյալ վարույթին: Հակառակ դեպքում վարույթից հեռացնելու լիազորության լայն կիրառումը կարող է վերածվել քննիչի դատավարական ինքնուրույնության նկատմամբ ազդեցության գործիքի՝ խախտելով դատախազական հսկողության և քննիչի ինքնուրույնության միջև անհրաժեշտ հավասարակշռությունը: Վիճակագրական տվյալները նաև ցույց են տալիս, որ Օրենսգրքում համապատասխան հիմքերի ամրագրումն ինքնին դեռևս չի երաշխավորում դրանց արդյունավետ և միատեսակ կիրարկումը:

Քննիչին վարույթից հեռացնելու մասին դատախազի որոշման դատական վիճարկման հնարավորության տեսանկյունից առանձնակի ուշադրության է արժանի Էդգար Վարդապետյանի գործը: Վերջինս, հանդիսանալով ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, փորձել է դատական կարգով վիճարկել իրեն քրեական վարույթից հեռացնելու որոշման իրավաչափությունը: Գործն սկզբնապես քննության է առնվել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում, այնուհետև համապատասխան դատական ակտը բողոքարկվել է վերադաս դատական ատյանում, իսկ հետագայում Վարդապետյանը դիմել է նաև ՀՀ Սահմանադրական դատարան[1]: Սահմանադրական դատարանը, սակայն, դիմումը քննության ընդունելու հարցում արձանագրել է, որ դիմողի բարձրացրած խնդիրը պայմանավորված է բացառապես նրա՝ ՀՀ քննչական կոմիտեի ավագ քննիչ հանդիսանալու հանգամանքով, և այդպիսի իրավիճակում նա Սահմանադրության 101-րդ հոդվածի իմաստով ՍԴ դիմելու իրավասու սուբյեկտ չէ: ՍԴ-ն նաև ընդգծել է, որ «յուրաքանչյուր ոք» հասկացությունը չի ներառում այն սուբյեկտին, որը օրենքի դրույթի սահմանադրականության հարց է բարձրացնում իր նկատմամբ այդ դրույթի կիրառման կապակցությամբ՝ պայմանավորված իր զբաղեցրած պաշտոնով[2]: Այս մոտեցումը փաստացի հանգեցրել է նրան, որ քննիչին վարույթից հեռացնելու որոշման իրավաչափությունը նաև սահմանադրական արդարադատության շրջանակում ըստ էության գնահատման առարկա չի դարձել:

Մեր գնահատմամբ՝ հիմնավորված չէ այն մոտեցումը, երբ քննիչին վարույթից հեռացնելու հարցը վերջնականապես լուծվում է դատախազական համակարգի ներսում՝ վերադաս դատախազի կողմից: Նման կառուցակարգը բավարար չափով չի ապահովում քննիչի դատավարական ինքնուրույնության պաշտպանությունը, առավել ևս այն պայմաններում, երբ քննիչին վարույթից հեռացնելու հարցը գործնականում հաճախ վերաճում է ոչ միայն դատավարական, այլև միջգերատեսչական տարաձայնության՝ քննչական մարմնի և դատախազության միջև[3], նման տեսակետ է արտահայտվել նաև դատավարական գրականության մեջ[4]: Բացի այդ, քննիչին վարույթից հեռացնելու որոշումն իր հետևանքներով չի սահմանափակվում միայն կոնկրետ վարույթին նրա հետագա մասնակցությունը

[1] Գործը բավականին աղմուկ էր բարձրացրել, քանի որ նաև առաջին անգամ էր նման պրակտիկա ձևավորվում: Տե՛ս, համապատասխանաբար, հետևյալ հղումով՝ https://armlur.am/368403/?utm_source=chatgpt.com, (09.09.2026):

[2] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմի 14.12.2015 թ. որոշումը՝ Էդգար Վարդապետյանի անհատական դիմումը քննության ընդունելու հարցի վերաբերյալ:

[3] Տե՛ս հանրային հնչեղություն ստացած դեպքերը հետևյալ հղումներով՝ https://www.armtimes.com/hy/article/238113, https://civic.am/news/29143-dataxazi-voroshumy-hamarum-enq-aportini, https://www.azatutyun.am/a/31788763.html (09.09.2026):

[4] Տե՛ս Участники современного российского уголовного судопроизводства: Монография / Науч. ред. И.В. Смолькова. - М.: Юрлитинформ, 2017, էջ 152:

դադարեցնելով. այն կարող է բացասաբար անդրադառնալ քննիչի մասնագիտական հեղինակության վրա, հիմք հանդիսանալ նրա նկատմամբ կարգապահական վարույթ նախաձեռնելու համար և, ըստ էության, զրկել նրան իր հիմնական դատավարական գործառույթը՝ նախաքննություն իրականացնելու լիազորությունը տվյալ վարույթով շարունակելու հնարավորությունից: Հետևաբար, նման ինտենսիվ միջամտության վերաբերյալ վերջնական որոշումը նպատակահարմար է վերապահել ոչ թե դատավարական հակադիր դիրքորոշում ունեցող համակարգի ներսում գործող վերադաս պաշտոնատար անձին, այլ՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող անկախ և անաչառ սուբյեկտին՝ դատարանին[1]: Նման լուծումը մի կողմից կբացառի գերատեսչական շահի հնարավոր ազդեցությունը, մյուս կողմից՝ քննիչին վարույթից հեռացնելու ինստիտուտին կհաղորդի իրական բացառիկության բնույթ՝ ապահովելով այդ միջոցի կիրառման անհրաժեշտության, հիմնավորվածության և համաչափության արտաքին վերահսկողություն:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. **Մարտիրոսյան Ա.,** «Քննիչին վարույթից հեռացնելու քրեադատավարական կարգավորումները՝ ըստ ՀՀ քրեական դատավարության գործող և նոր օրենսգրքերի»: Պետություն և իրավունք, N 1 (92), 2022:
2. ՀՀ գլխավոր դատախազության 2013-2025 թթ. հաղորդումները ՀՀ Ազգային Ժողովին՝ հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://prosecutor.am/%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D5%AB%D5%B6 (04.09.2026թ.):
3. Հղումներ լրատվականներին՝ https://armlur.am/368403/?utm_source=chatgpt.com, https://www.armtimes.com/hy/article/238113, https://civic.am/news/29143-dataxazi-voroshumy-hamarum-enq-aportini, https://www.azatutyun.am/a/31788763.html, (09.09.2026):

[1] Այս տեսակետն ինտենսիվորեն քննարկվում է տեսությունում. տե՛ս, համապատասխանաբար, **Химичева Г.П.** Досудебное производство по уголовным делам: концепция совершенствования уголовно-процессуальной деятельности: Монография. - М.: Экзамен, 2003, էջ 300: **Цветков Ю.А.** Отказоустойчивость уголовного судопроизводства на досудебной стадии // Уголовное судопроизводство, 2017, № 2, էջեր 27-31: **Попова Т.Ю.** Уголовно-процессуальный статус руководителя следственного органа. - М.: Юрлитинформ, 2013, էջ 107: **Химичева О.В.** Концептуальные основы процессуального контроля и надзора на досудебных стадиях уголовного судопроизводства. Монография. - М.: ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2004, էջ 173:

4. ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգիրք, ընդունված՝ 01.07.1998 թ., ՀՕ-248, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://old.arlis.am/DocumentView.aspx?docid=31647 (10.09.2026 թ.):

5. ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմի 14.12.2015 թ. որոշում՝ Էդգար Վարդապետյանի անհատական դիմումը քննության ընդունելու հարցի վերաբերյալ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.concourt.am/decision/decisions/2015-hy-sddkv-12.14-1.pdf (10.09.2026 թ.):

6. «Դատախազության մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 17.11.2017 թ., ՀՕ-198-Ն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.arlis.am/hy/acts/156912 (10.09.2026 թ.):

7. ՀՀ գլխավոր դատախազի 10.04.2018 թ. N 27 հրամանի հավելված, «Դատախազի վարքագծի կանոններից բխող պահանջները», կետ 17: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://prosecutor.am/articles/%D5%A3%D5%AC%D5%AD%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A6%D5%AB-%D5%B0%D6%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/doc-f1daac

8. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված՝ 30.06.2021 թ., ՀՕ-306-Ն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.arlis.am/hy/acts/225856/print/act (10.09.2026 թ.):

9. ՀՀ դատախազության կոլեգիայի 11.03.2022 թ. նիստի արձանագրություն և որոշումներ, էջեր 17-18: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://prosecutor.am/articles/%D5%AF%D5%B8%D5%AC%D5%A5%D5%A3%D5%AB%D5%A1%D5%B5%D5%AB-%D5%B8%D6%80%D5%B8%D5%B7%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80/doc-4a5d9133-hy (08.09.2026):

10. **Гамбарян А.С.** Отстранение следователя от производства: ответственность или прокурорская «расправа»? // Расследование преступлений: проблемы и пути их решения. 2018. № 4 (22).

11. **Попова Т.Ю.** Уголовно-процессуальный статус руководителя следственного органа. - М.: Юрлитинформ, 2013.

12. **Смирнов А.В., Калиновский К.Б.** Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. Постатейный / Под общ. ред. А.В. Смирнова. 2-е изд., доп. и перераб. - СПб.: Питер, 2004.

13. Уголовно-процессуальное право Российской Федерации: Учебник / Отв. ред. П.А. Лупинская, Л.А. Воскобитова. 3-е изд., перераб. и доп. - М., 2013.

14. Участники современного российского уголовного судопроизводства: Монография / Науч. ред. И.В. Смолькова. - М.: Юрлитинформ, 2017.

15. **Химичева Г.П.** Досудебное производство по уголовным делам: концепция совершенствования уголовно-процессуальной деятельности: Монография. - М.: Экзамен, 2003.

16. **Химичева О.В.** Концептуальные основы процессуального контроля и надзора на досудебных стадиях уголовного судопроизводства: Монография. - М.: ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2004.

17. **Цветков Ю.А.** Отказоустойчивость уголовного судопроизводства на досудебной стадии // Уголовное судопроизводство. 2017. № 2.

ВЗАИМООТНОШЕНИЯ ПУБЛИЧНЫХ УЧАСТНИКОВ В ПРОЦЕДУРЕ ИХ ОТСТРАНЕНИЯ ОТ УЧАСТИЯ В УГОЛОВНОМ ПРОИЗВОДСТВЕ КАК ПРОЯВЛЕНИЕ ОТДЕЛЬНОГО И СПЕЦИАЛЬНОГО ПОЛНОМОЧИЯ

Аннотация

Надлежащее и беспристрастное осуществление публичными участниками своих полномочий в рамках уголовного производства имеет важное значение для обеспечения законности и эффективности производства. В этом контексте в статье исследуются правовые механизмы отстранения публичных участников от участия в уголовном производстве, а также формирующиеся в связи с реализацией соответствующих полномочий взаимоотношения между ними. Анализируются основания и процедуры прекращения дальнейшего участия в производстве надзирающего прокурора, следователя, дознавателя и начальника органа дознания, а также влияние указанных полномочий на процессуальную самостоятельность публичных участников. В сравнительном аспекте исследуются положения прежнего и действующего уголовно-процессуального законодательства, выявляются проблемы разграничения прокурорского надзора и организационного руководства со стороны руководителя следственного органа. Особое внимание уделяется правовой природе отстранения следователя от участия в производстве, которая рассматривается в контексте соотношения процессуальной ответственности и превентивной процессуальной меры. На основе анализа официальных статистических данных раскрывается динамика практического применения данного полномочия и его возможное влияние на процессуальную самостоятельность следователя. Обосновывается необходимость более системного и определенного уголовно-процессуального регулирования оснований отстранения от участия в производстве и соответствующих процессуальных гарантий, а также целесообразность обеспечения независимого судебного контроля за решением об отстранении следователя от участия в уголовном производстве.

Ключевые слова: уголовное производство, публичные участники, отстранение от участия в производстве, процессуальная самостоятельность, прокурорский надзор, процессуальная ответственность, судебный контроль.

RELATIONS BETWEEN PUBLIC PARTICIPANTS IN THE PROCEDURE FOR THEIR REMOVAL FROM CRIMINAL PROCEEDINGS AS A MANIFESTATION OF A DISTINCT AND SPECIAL POWER

Annotation

Within criminal proceedings, the proper and impartial exercise of powers by public participants is essential for ensuring the lawfulness and effectiveness of the proceedings. In this context, the article examines the legal mechanisms governing the removal of public participants from criminal proceedings and the relationships arising between them in connection with the exercise of such powers. The article analyzes the grounds and procedures for terminating the further participation of the supervising prosecutor, investigator, inquiry officer, and head of the inquiry body in the proceedings, as well as the impact of these powers on the procedural independence of public participants. The regulatory frameworks established by the former and current Criminal Procedure Codes are examined comparatively, with particular emphasis on the issues concerning the delimitation of prosecutorial supervision and the organizational management exercised by the head of an investigative body. Special attention is given to the legal nature of the removal of an investigator from proceedings, assessed in the context of the relationship between procedural liability and preventive procedural measures. Based on an analysis of official statistical data, the article presents the dynamics of the practical application of this power and its potential impact on the procedural independence of investigators. The article substantiates the need for more coherent and precise regulation of the grounds and procedural safeguards for removal from proceedings within criminal procedure legislation and argues for the expediency of ensuring independent judicial review of decisions concerning the removal of an investigator from criminal proceedings.

Keywords: criminal proceedings, public participants, removal from proceedings, procedural independence, prosecutorial supervision, procedural liability, judicial review.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 11.09.2026 թ., տրվել է գրախոսության 15.09.2026 թ., ընդունվել է տպագրության 28.09.2026 թ.:

DOI: 10.59560/18291155-2026.3-156



ԱՆՆԱ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
Հայաստանի Հանրապետության
Միասնական սոցիալական ծառայության
պետի առաջին տեղակալ,
Երևանի պետական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԵՆՍԱԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ամփոփագիր

Սույն հոդվածի հետազոտության առարկան կենսաբժշկության համատեքստում ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի տեղն ու դերն է հիմնարար իրավունքների համակարգում, ինչպես նաև դրա հարաբերակցությունը մարդկային արժանապատվության, անձնական ինքնավարության, առողջության իրավունքի, մասնավոր կյանքի, անձնական ինքնության և մտքի ազատության հետ:

Հետազոտության նպատակն է բացահայտել ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության ինքնուրույն նորմատիվ բովանդակությունն ու գործառույթը և սահմանազատել այն հարակից հիմնարար իրավունքների պաշտպանության ոլորտներից՝ միաժամանակ հաշվի առնելով դրանց փոխկապակցվածությունը կենսաբժշկական միջամտությունների պայմաններում:

Հոդվածում հիմնավորվում է, որ մարդկային արժանապատվությունը ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության արժեքաբանական հիմքն է, իսկ անձեռնմխելիությունն առավել որոշակիորեն սահմանում է անձի ֆիզիկական, հոգեկան և նյարդաճանաչողական ոլորտների նկատմամբ իրավաբանորեն նշանակալի միջամտության թույլատրելիության սահմանները: Անձնական ինքնավարությունը դիտարկվում է որպես անձի նկատմամբ միջամտությունների վերաբերյալ ինքնուրույն որոշումներ կայացնելու իրավական հնարավորություն, մինչդեռ առողջության իրավունքը հիմնականում առնչվում է առողջության պահպանման համար անհրաժեշտ պայմանների և երաշխիքների ապահովմանը: Հիմնավորվում է նաև հոգեկան անձեռնմխելիությունը հոգեկան առողջության հետ չնույնացնելու անհրաժեշտությունը: Հատուկ ուշադրություն է դարձվում նյարդատեխնոլոգիաների զարգացման պայմաններում մասնավոր կյանքի, հոգեկան

անձեռնմխելիության, անձնական ինքնության և մտքի ազատության հարաբերակցությանը: Հետազոտության արդյունքում առաջարկվում է ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության տեղը հիմնարար իրավունքների համակարգում գնահատել ինքնուրույնության և փոխկապակցվածության համակցման հիման վրա՝ յուրաքանչյուր հիմնարար իրավունքի համար պահպանելով դրա առանձնահատուկ նորմատիվ գործառույթը:

Հիմնաբառեր. կենսաբժշկություն, ֆիզիկական անձեռնմխելիություն, հոգեկան անձեռնմխելիություն, արժանապատվություն, անձնական ինքնավարություն, մասնավոր կյանքի գաղտնիություն, անձի ինքնություն, հոգեբանական շարունակականություն, մտքի ազատություն:

Ներածություն

Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի՝ որպես կենսաբժշկության մեջ ինքնուրույն իրավական պաշտպանության օբյեկտների սահմանումն անխուսափելիորեն առաջադրում է հիմնարար իրավունքների համակարգում դրանց տեղի, ինչպես նաև հարակից իրավունքների հետ հարաբերակցության հարցը:

Այս հարցն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն:

Կենսաբժշկության ոլորտում միևնույն միջամտությունը կարող է միաժամանակ առնչվել անձի արժանապատվությանը, ինքնավարությանը, առողջության իրավունքին, մասնավոր կյանքի իրավունքին, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիությանը, անձնական ինքնությանը և մտքի ազատությանը: Եթե նշված իրավական կատեգորիաների բովանդակությունն ու գործառույթները հստակ չտարբերակվեն, առաջանում է, մի կողմից՝ դրանց անհարկի կրկնօրինակման, մյուս կողմից՝ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի՝ առավել լայն իրավական կառուցակարգերում տարրալուծման վտանգ:

Միաժամանակ մարդու իրավունքների ժամանակակից համակարգը չի ենթադրում պաշտպանվող բարիքների բացարձակ և կոշտ տարանջատում: Միևնույն փաստական իրավիճակը կարող է ընդգրկվել մի քանի հիմնարար իրավունքների պաշտպանության ոլորտում, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում է իր առանձնահատուկ նորմատիվ գործառույթը: Այսպես՝ առանց համաձայնության բժշկական միջամտությունը կարող է միաժամանակ առնչվել անձնական ինքնավարությանը և ֆիզիկական անձեռնմխելիությանը, գենետիկական տեղեկատվության ստացումն ու օգտագործումը՝ մասնավոր կյանքի իրավունքին, անձնական ինքնությանը և որոշ դեպքերում՝ արժանապատվությանը, իսկ համոզմունքների ձևավորման գործընթացների նկատմամբ նյարդատեխնոլոգիական ներգործությունը՝ հոգեկան անձեռնմխելիությանը և մտքի ազատությանը:

Հետևաբար, այստեղ խնդիրը յուրաքանչյուր իրավունքի համար բացառիկ և մյուսներից ամբողջությամբ մեկուսացված պաշտպանության ոլորտ սահմանելը չէ, այլ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի ինքնուրույն նորմատիվ գործառույթը բացահայտելը և հարակից հիմնարար իրավունքների համակարգում դրա տեղը որոշելը:

Անձեռնմխելիություն ու արժանապատվություն

Առաջին հիմնարար իրավունքը, որի հետ անհրաժեշտ է հարաբերակցել ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, մարդկային արժանապատվությունն է:

Արժանապատվությունը ժամանակակից կենսաբժշկության համատեքստում հիմնարար արժեք է: Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին» կոնվենցիայի (Օվիեդոյի կոնվենցիա) ամբողջական անվանումն արդեն իսկ կենսաբանության և բժշկության կիրառումը կապում է մարդու իրավունքների և մարդկային արժանապատվության պաշտպանության հետ:

Կոնվենցիայի 1-ին հոդվածը պետություններին պարտավորեցնում է պաշտպանել մարդու արժանապատվությունն ու ինքնությունը և առանց խտրականության երաշխավորել յուրաքանչյուրի անձեռնմխելիությունն ու այլ իրավունքներն ու հիմնարար ազատությունները կենսաբանության և բժշկության կիրառման ոլորտում[1]: Կոնվենցիայի Բացատրական զեկույցը արժանապատվությունը բնութագրում է որպես Կոնվենցիայի հիմքում ընկած հիմնարար արժեք[2]:

Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիայի կառուցվածքը ևս հաստատում է արժանապատվության և անձեռնմխելիության սերտ կապը:

Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքն ամրագրված է Խարտիայի 3-րդ հոդվածում, որը ներառված է «Արժանապատվություն» վերտառությամբ 1-ին բաժնում: Միաժամանակ, 3-րդ հոդվածը բժշկության և կենսաբանության ոլորտում անձեռնմխելիության պաշտպանությունը կապում է ազատ և իրազեկված համաձայնության, եվգենիկական փորձերի, մարդու մարմնի և դրա մասերի՝ որպես այդպիսին ֆինանսական շահույթի աղբյուր դարձնելու, ինչպես նաև մարդու վերարտադրողական կլոնավորման արգելքների հետ[3]:

Այսպիսով, Եվրոպական միության իրավունքում արժանապատվությունն ու անձեռնմխելիությունը սերտորեն փոխկապակցված են, սակայն անձեռնմխելիությունը միաժամանակ ձևակերպված է որպես ինքնուրույն սուբյեկտիվ իրավունք:

[1] Տե՛ս Convention for the Protection of Human Rights and Dignity of the Human Being with regard to the Application of Biology and Medicine: Convention on Human Rights and Biomedicine, Oviedo, 4 April 1997, ETS No. 164, Art. 1:

[2] Տե՛ս Explanatory Report to the Convention on Human Rights and Biomedicine, ETS No. 164, para. 9:

[3] Տե՛ս Charter of Fundamental Rights of the European Union // OJ C 202, 7.6.2016. P. 394, Art. 3:

Այստեղից հետևում է, որ արժանապատվությունը անձեռնմխելիության արժեքաբանական հիմքն է, բայց նույնական չէ դրան: Արժանապատվությունը հիմնականում պատասխանում է այն հարցին, թե ինչու են մարդու ֆիզիկական և հոգեկան ոլորտները արժանի հատուկ իրավական պաշտպանության և ինչու անձը չպետք է դիտարկվի բացառապես որպես բժշկական, գիտական, առևտրային կամ այլ նպատակների իրականացման միջոց: Անձեռնմխելիությունը, իր հերթին, հստակեցնում է այդ պահանջը՝ սահմանելով մարմնի և հոգեկան ու նյարդաճանաչողական գործընթացների նկատմամբ իրավաբանորեն նշանակալի հասանելիության և ներգործության թույլատրելիության սահմանները:

Նման տարբերակումը կարևոր նշանակություն է ձեռք բերում կենսաբժշկության մեջ: Եթե մենք սահմանափակվենք միայն արժանապատվության կատեգորիայով, իրավական վերլուծությունը կարող է դառնալ չափազանց վերացական: Մարդու իրավունքների գրեթե ցանկացած էական խախտում կարող է բնութագրվել որպես արժանապատվության ոտնահարում, սակայն դա թույլ չի տա մեզ որոշել, թե արդյոք տվյալ միջամտությունը պահանջել է անձի ազատ և իրազեկված համաձայնությունը, ինչպիսի բնույթ և ինտենսիվություն է ունեցել այն, ինչ իրավական հիմքով է իրականացվել և արդյոք պահպանվել են անձի ֆիզիկական կամ հոգեկան ոլորտի նկատմամբ միջամտության թույլատրելի սահմանները:

Անձեռնմխելիությունը արժանապատվության հարգման ընդհանուր արժեքաբանական պահանջը տեղափոխում է ավելի կոնկրետ իրավական ռեժիմ:

Միաժամանակ, անընդունելի է նաև հակառակ ծայրահեղությունը՝ արժանապատվությունը անձեռնմխելիության վերլուծությունից ամբողջությամբ հեռացնելու փորձը:

Ք. Բուբլիցը, վերլուծելով նյարդատեխնոլոգիաների և մարդու իրավունքների հարաբերակցությունը, ցույց է տալիս, որ արժանապատվությունը, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը, մասնավոր կյանքը և մտքի ազատությունը կարող են գործել որպես անձի փոխկապակցված, բազմաշերտ պաշտպանություններ: Նրա մոտեցմամբ՝ արժանապատվությունը հատուկ նշանակություն է ստանում այն դեպքերում, երբ տեխնոլոգիական ներգործությունը ստեղծում է անձին արտաքին վերահսկողության ենթարկելու, նրա ինքնավարությունը սահմանափակելու կամ նրան այլոց նպատակների իրականացման միջոցի վերածելու վտանգ[1]:

Հետևաբար, արժանապատվության և անձեռնմխելիության ֆունկցիոնալ տարբերությունը կարելի է ձևակերպվել հետևյալ բովանդակությամբ.

«Արժանապատվությունը բացատրում է, թե ինչու անձի ֆիզիկական և հոգեկան ոլորտը պետք է լինի հատուկ իրավական պաշտպանության ներքո, իսկ

[1] Տե՛ս Bublitz C. Neurotechnologies and human rights: restating and reaffirming the multi-layered protection of the person // The International Journal of Human Rights. 2024. Vol. 28, No. 5. P. 782–807. DOI: 10.1080/13642987.2024.2310830:

անձեռնմխելիությունը սահմանում է այս ոլորտներ մուտք գործելու և դրանց վրա ազդելու իրավական սահմանները»:

Անձեռնմխելիություն և անձնական ինքնավարություն

Անձեռնմխելիությունն առավել սերտորեն կապված է անձնական ինքնավարության հետ: Կենսաբժշկության ոլորտում ինքնավարության իրավական նշանակությունը հատկապես արտահայտվում է անձի՝ իր մարմնի և բուժման վերաբերյալ որոշումներին մասնակցելու հնարավորության մեջ: Օվիեդոյի կոնվենցիայի 5-րդ հոդվածը ազատ և իրազեկված համաձայնությունը սահմանում է որպես առողջապահական միջամտության ընդհանուր պայման, իսկ Բացատրական զեկույցը շեշտում է անձի ազատ որոշման և համաձայնությունը ցանկացած ժամանակ հետ վերցնելու հնարավորության նշանակությունը[1]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ինքնավարությունը համարվում է նաև մասնավոր կյանքի հարգման իրավունքի հիմքում ընկած սկզբունքներից մեկը: «Փրիթին ընդդեմ Միացյալ Թագավորության» դատական գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը շեշտեց անձնական ինքնավարության կարևորությունը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի մեկնաբանման համար և նշեց, որ գործունակ չափահասի նկատմամբ՝ առանց նրա համաձայնության, պարտադրվող բուժում նշանակելը հանդիսանում է ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ միջամտություն, որը կարող է ազդել ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի երաշխիքների վրա[2]: «Գլասն ընդդեմ Միացյալ Թագավորության» դատական գործով, օրինական ներկայացուցչի համաձայնության և դատական թույլտվության բացակայության պայմաններում բուժման կիրառումը համարվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում: Դատարանը հատուկ նշել է ազատ արտահայտված և իրազեկված համաձայնության բացակայությունը[3]:

Այստեղ հարկ է նշել, որ ինքնավարությունը և անձեռնմխելիությունը չպետք է օգտագործվեն որպես հոմանիշներ: Ինքնավարությունը առաջին հերթին կապված է սուբյեկտի սեփական որոշումներ կայացնելու ունակության և իրավունքի հետ, մինչդեռ անձեռնմխելիությունը սահմանում է այն ոլորտը, որտեղ նման որոշումն ունի հատուկ իրավական նշանակություն:

Այլ կերպ ասած՝ ինքնավարությունը պատասխանում է այն հարցին, թե ով ունի որոշումներ կայացնելու սկզբնական լիազորություն, իսկ անձեռնմխելիությունը պատասխանում է այն հարցին, թե որ օբյեկտի և ինչ ազդեցության նկատմամբ է պահանջվում պաշտպանություն:

[1] Տե՛ս Convention on Human Rights and Biomedicine, Art. 5; Explanatory Report, paras. 34–36.
[2] Տե՛ս *Pretty v. the United Kingdom*, no. 2346/02, ECHR 2002-III, §§ 61, 65–67.
[3] Տե՛ս *Glass v. the United Kingdom*, no. 61827/00, ECHR 2004-II, §§ 82–83.

Այս տարբերությունը հատկապես ակնհայտ է ժամանակակից նյարդատեխնոլոգիաների կիրառման դեպքում: Օրինակ՝ ուղեղի խորը խթանման (DBS) իմպլանտացիային համաձայնություն տալով՝ անձը իրացնում է ինքնավարությունը, սակայն հոգեկան անձեռնմխելիության տեսանկյունից հետագա գնահատման ենթակա են նաև ներգործության բնույթը, դրա էական ազդեցությունը հոգեկան կամ նյարդաճանաչողական գործընթացների վրա, հետևանքների շրջելիությունը, միջամտությունը դադարեցնելու հնարավորությունը և այն հարցը, թե արդյոք բուժման էական փոփոխությունները պահանջում են նորացված համաձայնություն:

Հետևաբար, սկզբնական վավեր համաձայնությունը հետագա ցանկացած ներգործություն ինքնաբերաբար չի դարձնում իրավաչափ: Համաձայնությունը միջամտության իրավաչափության առանցքային երաշխիք է, սակայն այն չի կարող մեկնաբանվել որպես ֆիզիկական կամ հոգեկան ոլորտի նկատմամբ անսահմանափակ ներգործության թույլտվություն:

Միևնույն ժամանակ, անձեռնմխելիության իրավունքը չպետք է մեկնաբանվի անձի ինքնավարությանը հակառակ: Անձը կարող է ազատորեն համաձայնել վիրահատության, փոխպատվաստման, նյարդախթանման, վերականգնողական կամ այլ կենսաբժշկական միջամտության: Հետևաբար, անձեռնմխելիությունը չի ստեղծում մարմնի կամ հոգեկան վիճակի անփոփոխության իրավունք, այլ պահանջում է, որ դրանց նկատմամբ միջամտությունը ունենա պատշաճ իրավական հիմք և իրականացվի համապատասխան երաշխիքների պահպանմամբ:

Այտեղից հետևում է անձեռնմխելիության և ինքնավարության հիմնարար տարբերությունը:

Այսպիսով, ինքնավարությունը վերաբերում է անձի՝ իր նկատմամբ միջամտության վերաբերյալ որոշումների կայացմանը մասնակցելու և դրանք վերահսկելու իրավական հնարավորությանը, իսկ անձեռնմխելիությունը՝ պաշտպանվող ֆիզիկական և հոգեկան ոլորտներին և դրանց նկատմամբ ներգործության իրավական սահմաններին:

Անձեռնմխելիություն և առողջության իրավունք

Հատկապես կարևոր է տարբերակել անձեռնմխելիությունը և առողջության իրավունքը, քանի որ հենց բուժման նպատակն է ամենից հաճախ օգտագործվում բժշկական միջամտությունը արդարացնելու համար:

Միջազգային իրավունքում առողջության իրավունքը չի ենթադրում անձի առողջական որոշակի վիճակի կամ առողջության որոշակի մակարդակի երաշխավորում պետության կողմից: ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն իր թիվ 14 ընդհանուր մեկնաբանության մեջ հստակորեն նշել է, որ առողջության իրավունքը չպետք է ընկալվի որպես «առողջ լինելու իրավունք»: Այն ներառում է ինչպես առողջապահությանը հասանելիության

իրավունքը, այնպես էլ ազատությունները, մասնավորապես՝ սեփական առողջությունն ու մարմինը վերահսկելու և հարկադիր բուժումից ու փորձարկումներից զերծ լինելու իրավունքը[1]:

Այս դրույթը թույլ է տալիս հիմնարար տարբերակում կատարել առողջության և անձեռնմխելիության միջև:

Առողջության իրավունքը հիմնականում ուղղված է այն պայմանների և երաշխիքների ապահովմանը, որոնք անհրաժեշտ են ֆիզիկական և հոգեկան առողջության հնարավոր ամենաբարձր մակարդակին հասնելու համար: Այն ներառում է առողջապահական ծառայությունների հասանելիության, մատչելիության, ընդունելիության և որակի պահանջները, ինչպես նաև ազատություններ՝ կապված սեփական մարմնի և առողջության նկատմամբ վերահսկողության հետ:

Անձեռնմխելիության իրավունքը կատարում է այլ, թեև փոխկապակցված գործառույթ՝ սահմանելով անձի ֆիզիկական և հոգեկան ոլորտների նկատմամբ միջամտության իրավական սահմանները:

Հետևաբար, կենսաբժշկական միջամտության թերապևտիկ օգտակարությունն ինքնին դեռևս չի կանխորոշում դրա իրավական թույլատրելիությունը:

Վիրաբուժական միջամտությունը կարող է արդյունավետ լինել և նույնիսկ կյանք փրկել, բայց եթե այն կատարվում է առանց անհրաժեշտ համաձայնության և օրենքով նախատեսված բացառություններից դուրս, դրա օգտակար արդյունքը չի վերացնում ֆիզիկական անձեռնմխելիությանը միջամտությունը: Նույն կերպ, հիվանդության ախտանիշները օբյեկտիվորեն նվազեցնող հոգեբուժական կամ նյարդատեխնոլոգիական միջամտությունները չպետք է ավտոմատ կերպով համարվեն օրինական, եթե հիվանդը դրանց ենթարկվել է հարկադրանքի միջոցով:

Այս դիրքորոշումը համապատասխանում է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին: Փրեթթիի գործով դատարանն ընդգծել է, որ առանց գործունակ չափահասի համաձայնության բուժումը համարվում է ֆիզիկական անձեռնմխելիության խախտում, նույնիսկ այն դեպքում, երբ բուժումից հրաժարվելը կարող է հանգեցնել մահվան[2]: «Ա.Պ., Գարսոնը և Նիկոտն ընդդեմ Ֆրանսիայի» գործով դատարանը վերահաստատեց, որ չափահասի նկատմամբ հարկադիր բժշկական միջամտությունը ազդում է ֆիզիկական անձեռնմխելիության վրա և պետք է գնահատվի Միեի 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների լույսի ներքո[3]:

Առողջության իրավունքի և անձեռնմխելիության այս ընդհանուր տարբերակումը հոգեկան ոլորտում պահանջում է առավել մանրամասն պարզաբանում, քանի որ

[1] Տե՛ս Committee on Economic, Social and Cultural Rights. General Comment No. 14 (2000): The right to the highest attainable standard of health (art. 12), E/C.12/2000/4, para. 8.

[2] Տե՛ս *Pretty v. the United Kingdom*, cited above, § 67.

[3] Տե՛ս A.P., *Garçon and Nicot v. France* [GC], nos. 79885/12, 52471/13 and 52596/13, Judgment of 6 April 2017, §§ 128–130.

հենց այստեղ է առավել մեծ հոգեկան առողջության և հոգեկան անձեռնմխելիության հասկացությունների նույնացման վտանգը:

Այս համատեքստում կարելի է ձևակերպել հետևյալ ընդհանուր տարբերակումը.

«Առողջության իրավունքը վերաբերում է անձի առողջության պահպանման և հնարավոր ամենաբարձր մակարդակի հասնելու համար անհրաժեշտ պայմաններին ու երաշխիքներին, մինչդեռ անձեռնմխելիության իրավունքը սահմանում է նրա ֆիզիկական և հոգեկան ոլորտների նկատմամբ միջամտության իրավական սահմանները»:

Այս տարբերակումը չի ենթադրում համապատասխան իրավունքների մեկուսացում: Ընդհակառակը, առողջության իրավունքն ինքնին ներառում է հարկադիր բժշկական միջամտությունից ազատության տարրեր, իսկ անձեռնմխելիության պաշտպանությունը կարող է նպաստել առողջության պահպանմանը: Սակայն դրանց ֆունկցիոնալ սահմանազատումն անհրաժեշտ է, որպեսզի բժշկական օգուտը կամ բուժական նպատակը չդիտարկվեն որպես անձի ֆիզիկական կամ հոգեկան ոլորտին միջամտելու ինքնուրույն և բավարար իրավական հիմք:

Հոգեկան անձեռնմխելիություն և հոգեկան առողջություն

Հոգեկան անձեռնմխելիության և հոգեկան առողջության հարաբերակցությունը պահանջում է առանձին վերլուծություն, քանի որ դրանց սերտ կապը կարող է հանգեցնել հասկացությունների անհարկի նույնացման:

«Բենսաիդն ընդդեմ Միացյալ Թագավորության» դատական գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ հոգեկան առողջությունը մասնավոր կյանքի կարևոր բաղադրիչ է՝ կապված անձի բարոյական անձեռնմխելիության (moral integrity) հետ, իսկ հոգեկան կայունության պահպանումը կարող է լինել մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի արդյունավետ իրականացման անհրաժեշտ նախապայման[1]: Այս մոտեցումը ցույց է տալիս հոգեկան առողջության, հոգեկան կայունության, բարոյական անձեռնմխելիության և մասնավոր կյանքի սերտ փոխկապակցվածությունը, սակայն հիմք չի տալիս դրանք նույնացնելու հոգեկան անձեռնմխելիության ժամանակակից հասկացության հետ:

Հոգեկան անձեռնմխելիության իրավունքի վերաբերյալ իր ուսումնասիրության մեջ Շ. Լիխտարտը հիմնավորում է, որ դրա պաշտպանական ծավալը չպետք է սահմանափակվի միայն հոգեկան առողջությանը հասցված ախտորոշելի վնասով: Նա առաջարկում է հոգեկան անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության շրջանակը որոշել նշանակալի հոգեկան միջամտության (Significant Mental Interference) չափանիշի հիման վրա՝ միջամտության ուղղակիությունը և

[1] Տե՛ս *Bensaid v. the United Kingdom*, no. 44599/98, ECHR 2001-I, §§ 46–47.

հոգեբանական վնասի առկայությունը չդիտարկելով որպես այդ իրավունքի պաշտպանության շրջանակը սահմանող պարտադիր պայմաններ: Միաժամանակ, ըստ հեղինակի, այդ հանգամանքները կարող են նշանակություն ունենալ արդեն իրավունքի նկատմամբ միջամտության հնարավոր արդարացվածությունը գնահատելիս[1]:

Այս հասկացությունը հատկապես կարևոր է կենսաբժշկության համատեքստում: Տեսականորեն հնարավոր է միջամտություն, որը չի առաջացնում հոգեկան խանգարում և նույնիսկ սուբյեկտիվորեն ընկալվում է որպես չեզոք, բայց իրականացվում է գաղտնի և ուղղված է մոտիվացիայի, հուզական ռեակցիաների կամ որոշումների կայացման փոփոխությանը: Հոգեկան անձեռնմխելիությունը հոգեկան առողջությանը հավասարեցնելը կնշանակեր, որ մինչև բժշկության կողմից գրանցված վնասի առաջացումը, հոգեկան ոլորտը չունի անկախ իրավական պաշտպանություն, ինչն անընդունելի է:

Հետևաբար, հոգեկան անձեռնմխելիությունը նպատակահարմար է դիտարկել ոչ միայն որպես անձի հոգեկան վիճակի պաշտպանության երաշխիք, այլև որպես նրա հոգեկան և նյարդաճանաչողական գործընթացների նկատմամբ էական և ոչ իրավաչափ ներգործությունից պաշտպանություն:

Այս կապակցությամբ նպատակահարմար է կատարել հետևյալ տարբերակումը.

Հոգեկան առողջության իրավունքը վերաբերում է հոգեկան բարեկեցության պահպանման պայմաններին և համապատասխան առողջապահական երաշխիքներին, իսկ հոգեկան անձեռնմխելիությունը՝ անձի հոգեկան և նյարդաճանաչողական ոլորտների նկատմամբ էական ներգործության իրավական սահմաններին:

Անձեռնմխելիություն և մանավոր կյանքի գաղտնիության իրավունք

Մասնավոր կյանքի իրավունքն անձեռնմխելիությանը առավել մոտ իրավական երաշխիքներից է: Եվրոպական իրավունքում ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության բազմաթիվ հարցեր զարգացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակում, որի պաշտպանական ծավալը ՄԻԵԴ-ի մեկնաբանությամբ չի սահմանափակվում գաղտնիության նեղ իմաստով:

[1] Տե՛ս **Ligthart S.** The right to mental integrity in the age of neurotechnology: constructing scope and exploring permissible limitations // Journal of Law and the Biosciences. 2025. Vol. 12, No. 1. Art. lsaf010. DOI: 10.1093/jlb/lsaf010:

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքում «մասնավոր կյանք» հասկացությունը լայն է և կարող է ընդգրկել անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը, անձնական ինքնությունը, ինքնավարությունն ու անձնական զարգացումը[1],[2]:

Բենսաիդի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ֆիզիկական կամ բարոյական անձեռնմխելիության վրա յուրաքանչյուր բացասական ազդեցություն չէ, որ հանգեցնում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին միջամտության, իսկ Փրեթթիի գործով անձնական ինքնավարությունն ու ֆիզիկական անձեռնմխելիությունը դիտարկվել են մասնավոր կյանքի պաշտպանության համատեքստում:

Սակայն սա չի նշանակում, որ գաղտնիությունը և անձեռնմխելիությունը փոխարինելի կատեգորիաներ են:

Այդ պատճառով մասնավոր կյանքի իրավունքն ու անձեռնմխելիությունը չեն կարող սահմանազատվել միայն «տեղեկատվություն–ներգործություն» պարզ հակադրությամբ: Մասնավոր կյանքի իրավունքը լայնորեն պաշտպանում է անձի անձնական ոլորտը, այդ թվում՝ իր մարմնի, ինքնության, հարաբերությունների և իր մասին տեղեկատվության նկատմամբ վերահսկողության շահերը, մինչդեռ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունն առավել հատուկ կերպով սահմանում է անձի մարմնի և հոգեկան ու նյարդաճանաչողական գործընթացների նկատմամբ միջամտության թույլատրելիության սահմանները:

Այս տարբերակումը ակնհայտ է դառնում կենսաբժշկության ոլորտում:

Եթե առողջապահական կազմակերպությունը գենետիկական տեղեկատվություն է կիսում երրորդ կողմի հետ առանց իրավական հիմքի, հիմնական մտահոգությունը գաղտնիությունն ու մասնավոր կյանքի անձեռնմխելիությունն է, չնայած որոշակի հանգամանքներում կարող են առաջանալ նաև ինքնության կամ արժանապատվության հարցեր, իսկ եթե բժիշկը վիրահատություն է կատարում առանց հիվանդի համաձայնության, հիմնական հարցը ֆիզիկական անձեռնմխելիությունն է: Եթե նյարդատեխնոլոգիական համակարգը գրանցում է ուղեղի տվյալները և դրանց հիման վրա եզրակացություններ է անում օգտատիրոջ հուզական կամ ճանաչողական վիճակի մասին, ապա առաջին հերթին առաջանում է հոգեկան գաղտնիության հարցը, սակայն, եթե նույն համակարգը ոչ միայն ստանում է տեղեկատվություն, այլև ավտոմատ կերպով փոխում է նյարդախթանումն այնպես, որ էականորեն ազդում է տրամադրության կամ որոշումների կայացման վրա, ապա

[1] Տե՛ս *Pretty v. the United Kingdom*, §§ 61, 65–67; *Bensaid v. the United Kingdom*, §§ 46–47:

[2] Տե՛ս European Court of Human Rights. Guide on Article 8 of the European Convention on Human Rights: Right to Respect for Private and Family Life, Home and Correspondence. Strasbourg: Council of Europe / European Court of Human Rights, updated edition:

խնդիրը գերազանցում է գաղտնիության սահմանները և ուղղակիորեն ազդում է հոգեկան անձեռնմխելիության վրա:

Նշված տարբերակումը հատկապես կարևոր է նյարդատեխնոլոգիաների կիրառման պայմաններում, քանի որ միևնույն տեխնոլոգիական գործընթացը կարող է հաջորդաբար առնչվել ինչպես մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանությանը, այնպես էլ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությանը: Իրավական գնահատման տեսանկյունից այստեղ կարելի է պայմանականորեն առանձնացնել երեք փոխկապակցված փուլ՝

նյարդային կամ այլ կենսաբժշկական տվյալների ստացում → այդ տվյալների հիման վրա անձի հոգեկան վիճակի, հատկանիշների կամ գործընթացների վերաբերյալ եզրահանգումների կատարում → անձի ֆիզիկական, հոգեկան կամ նյարդաճանաչողական գործընթացների նկատմամբ ներգործություն:

Առաջին երկու փուլերում իրավական պաշտպանության առանցքում հիմնականում գտնվում են մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության երաշխիքները, քանի որ խնդիրը նախևառաջ վերաբերում է անձի մասին տեղեկությունների ստացմանը, մշակմանը և դրանց հիման վրա եզրահանգումների կատարմանը: Սակայն այն դեպքում, երբ տեղեկատվական հասանելիությանը հաջորդում է անձի ֆիզիկական, հոգեկան կամ նյարդաճանաչողական գործընթացների նկատմամբ ներգործությունը, իրավական գնահատումը չի կարող սահմանափակվել միայն տվյալների պաշտպանության կանոններով: Այդ փուլում անմիջական նշանակություն են ստանում նաև ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության երաշխիքները, իսկ ներգործության բնույթից և նպատակից կախված՝ նաև անձնական ինքնավարության, անձնական ինքնության կամ մտքի ազատության պաշտպանությունը: Այսպիսով, մասնավոր կյանքի և անձեռնմխելիության իրավունքները տվյալ հարաբերություններում ոչ թե փոխարինում, այլ լրացնում են միմյանց՝ պաշտպանելով անձին համապատասխանաբար նրա մասին տեղեկատվության նկատմամբ հասանելիության և նրա ֆիզիկական ու հոգեկան ոլորտների նկատմամբ ներգործության տարբեր ձևերից:

Օվիեդոյի կոնվենցիայի 10-րդ հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի իրավունքը՝ հարգելու իրենց մասնավոր կյանքը առողջապահական տեղեկատվության վերաբերյալ և իմանալու իրենց սեփական առողջության մասին հավաքված տեղեկատվությունը[1]: Ժամանակակից նյարդաբանական տվյալների հետ կապված այս սկզբունքը նոր նշանակություն է ստանում, քանի որ կենսաբժշկական տվյալները կարող են օգտագործվել ոչ միայն հիվանդությունները գրանցելու, այլև ալգորիթմերի

[1] Տե՛ս Convention on Human Rights and Biomedicine, Art. 10:

կիրառմամբ հավանական հոգեկան վիճակներն ու վարքային բնութագրերը վեր հանելու համար:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի նյարդատեխնոլոգիաների վերաբերյալ փաստաթղթերում հոգեկան կամ ուղեղային անձեռնմխելիությունը, մարդկային արժանապատվությունը, անձնական ինքնությունը, ինքնավարությունը, մտքի ազատությունը, հոգեկան գաղտնիությունն ու ուղեղային տվյալների գաղտնիությունը ներկայացվում են որպես փոխկապակցված, բայց տարբեր էթիկական և մարդու իրավունքների խնդիրներ[1],[2]: 2024 թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի Խորհրդատվական կոմիտեի զեկույցը ևս նյարդատեխնոլոգիաների ազդեցությունը քննարկում է միաժամանակ մասնավոր կյանքի, ինքնավարության, անձեռնմխելիության, մտքի ազատության և այլ իրավունքների համատեքստում[3]:

Հետևաբար, երրորդ կարևոր տարբերությունը կարող է ձևակերպվել հետևյալ բովանդակությամբ.

«Մասնավոր կյանքի և անձեռնմխելիության հարաբերակցությունը նպատակահարմար է կառուցել ոչ թե դրանց փոխադարձ բացառման, այլ ֆունկցիոնալ տարբերակման հիման վրա: Մասնավոր կյանքի իրավունքը լայնորեն պաշտպանում է անձնական ոլորտը և դրա նկատմամբ վերահսկողությունը, իսկ անձեռնմխելիությունը հատուկ նշանակություն է ստանում, երբ առկա է անձի ֆիզիկական կամ հոգեկան ոլորտի նկատմամբ ներգործություն»:

Նյարդատեխնոլոգիաների դեպքում երկու երաշխիքները կարող են կիրառվել միաժամանակ:

Հոգեկան անձեռնմխելիություն, անձի ինքնություն և հոգեբանական շարունակականություն

Նյարդային ակտիվությունը փոփոխելու ունակ տեխնոլոգիաների զարգացումը իրավունքի առջև դնում է ավելի բարդ հարց՝ ինչպիսի՞ պայմաններում կարող է անձի հոգեբանական կամ վարքային փոփոխությունը ձեռք բերել անձնական ինքնության և հոգեկան անձեռնմխելիության պաշտպանության համար իրավական նշանակություն:

Այդ հարցին չի կարելի պատասխանել՝ յուրաքանչյուր փոփոխություն ինքնաբերաբար նույնացնելով իրավունքի խախտման հետ:

[1] Տե՛ս UNESCO. Recommendation on the Ethics of Neurotechnology. Adopted by the General Conference of UNESCO at its 43rd session, November 2025:

[2] Տե՛ս **Lavazza A.** Freedom of Thought and Mental Integrity: The Moral Requirements for Any Neural Prosthesis // Frontiers in Neuroscience. 2018. Vol. 12. Art. 82. DOI: 10.3389/fnins.2018.00082:

[3] Տե՛ս Human Rights Council Advisory Committee. Impact, opportunities and challenges of neurotechnology with regard to the promotion and protection of all human rights. A/HRC/57/61, 8 August 2024:

Անձի համոզմունքները, բնավորությունը, հուզական արձագանքները, կյանքի նպատակներն ու նախասիրությունները կարող են փոփոխվել կրթության, հարաբերությունների, հիվանդության, հոգեթերապիայի, դեղորայքային բուժման, բժշկական միջամտության կամ սովորական կենսափորձի արդյունքում: Հետևաբար, անձնական ինքնության պաշտպանությունը չի կարող կառուցվել «անհատականության անփոփոխելիության» իրավունքի վրա: Նյարդատեխնոլոգիաների վերաբերյալ դոկտրինալ քննարկումներում հոգեբանական շարունակականությունը ևս առաջարկվել է որպես հատուկ պաշտպանվող շահ, սակայն դրա բովանդակությունը պետք է համադրվի անձի ինքնավարության և փոփոխվելու ազատության հետ[1]:

Խնդիրն ինքնին փոփոխությունը չէ, այլ փոփոխության բնույթն ու հետևանքը:

Ուղեղի խորը խթանման վերաբերյալ գրականության մեջ այս խնդիրը հատկապես մանրամասն ուսումնասիրվել է: Կ. Վիտը, Ջ. Կունը, Լ. Թիմերմանը, Մ. Զուրովսկին և Ք. Վուփենը վերլուծում են այն հարցը, թե ինչ պայմաններում հիմնական համոզմունքների, ցանկությունների և վերաբերմունքի (core attitudes) փոփոխությունը կարող է համարվել անհատական ինքնության էական փոփոխություն[2]:

Ֆ. Կրեյմերը, վերլուծելով ուղեղի խորը խթանում ստացած հիվանդների փորձը, ցույց է տալիս ավելի բարդ պատկեր: Որոշ հիվանդներ խթանումից հետո հայտնում են օտարացման և այն զգացողության մասին, որ իրենք «այլևս իրենք չեն», մինչդեռ մյուսները, ընդհակառակը, բուժումն ընկալում են որպես վերադարձ ավելի իրական վիճակի[3]:

Հետևաբար, չի կարելի ենթադրել, որ նյարդատեխնոլոգիայի ազդեցությամբ առաջացած անհատականության որևէ փոփոխություն վնասակար կամ խաթարող է:

Ա. Ուորդրոփը, քննարկելով ուղեղի խորը խթանման համատեքստում իսկության և ինքնավարության հարաբերակցությունը, ցույց է տալիս, որ որոշում կայացնելու ձևական կոմպետենտությունը միշտ չէ, որ սպառում է ինքնավարության ամբողջ բովանդակությունը, և որ իսկության հարցը կարող է նշանակություն ունենալ ինքնավարության գնահատման համար[4]:

[1] Տե՛ս **Ienca M., Andorno R.** Towards new human rights in the age of neuroscience and neurotechnology // Life Sciences, Society and Policy. 2017. Vol. 13. Art. 5. DOI: 10.1186/s40504-017-0050-1:

[2] Տե՛ս **Witt K., Kuhn J., Timmermann L., Zurowski M., Woopen C.** Deep Brain Stimulation and the Search for Identity // Neuroethics. 2013. Vol. 6, No. 3. P. 499–511. DOI: 10.1007/s12152-011-9100-1:

[3] Տե՛ս **Kraemer F.** Me, Myself and My Brain Implant: Deep Brain Stimulation Raises Questions of Personal Authenticity and Alienation // Neuroethics. 2013. Vol. 6, No. 3. P. 483–497. DOI: 10.1007/s12152-011-9115-7:

[4] Տե՛ս **Wardrope A.** Authenticity and autonomy in deep-brain stimulation // Journal of Medical Ethics. 2014. Vol. 40, No. 8. P. 563–566. DOI: 10.1136/medethics-2013-101419:

Այս վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ անձնական ինքնությունն ու հոգեբանական շարունակականությունը չպետք է մեկնաբանվեն որպես ցանկացած փոփոխությունից պաշտպանություն: Դրանց իրավական նշանակությունն առավելապես դրսևորվում է այն դեպքերում, երբ կենսաբժշկական ներգործությունն էականորեն առնչվում է անձի ինքնաընկալմանը, նրա հիմնարար արժեքներին ու համոզմունքներին կամ սեփական կյանքի վերաբերյալ ինքնավար որոշումներ կայացնելու հնարավորությանը:

Հետևաբար, կենտրոնական հարցը ոչ թե պարզապես այն է, թե «փոխվե՞լ է անձը», այլ այն, թե արդյոք փոփոխությունը տեղի է ունեցել իրավաչափ պայմաններում, և արդյոք անձը պահպանում է այդ փոփոխության նկատմամբ ինքնավար վերահսկողությունը՝ այն ընդունելու, մերժելու, շարունակելու կամ հնարավորության դեպքում դադարեցնելու առումով:

Հենց այստեղ է հոգեկան անձեռնմխելիությունը հատվում ինքնության հետ: Անօրինական միջամտությունը կարող է խաթարել հոգեկան անձեռմխելիությունը՝ առանց անհատականության ակնհայտ փոփոխության: Սակայն, եթե միջամտությունը հանգեցնում է հիմնական համոզմունքների խորը և հարկադիր փոփոխության, այն կարող է միաժամանակ ազդել հոգեկան անձեռնմխելիության և անձնական ինքնության վրա:

Այս հիմքով առաջարկվում է ելնել այն մոտեցումից, որ իրավական պաշտպանության առանցքում պետք է լինի ոչ թե անձի հոգեբանական անփոփոխությունը, այլ նրա ինքնավարության պահպանումը սեփական անձի էական փոփոխությունների նկատմամբ:

Այս ձևակերպումը թույլ է տալիս հավասարակշռություն պահպանել երկու հակադիր ռիսկերի միջև: Մի կողմից՝ այն կանխում է տեխնոլոգիայով պայմանավորված փոփոխությունների պարտադրումը, մյուս կողմից՝ այն իրավունքը չի վերածում կամավոր բուժումը, ինքնազարգացումը կամ բուժման մեթոդների կատարելագործումը արգելող միջոցի:

Մտքի ազատություն և հոգեկան անձեռնմխելիություն

Ամենաբարդ փոխհարաբերությունը հոգեկան անձեռնմխելիության և մտքի ազատության միջև է:

Մտքի ազատությունը մարդու իրավունքների համակարգում առանձնահատուկ պաշտպանություն ունեցող իրավունքներից է: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 18-րդ հոդվածն ամրագրում է մտքի, խղճի և կրոնի ազատությունը, իսկ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 22 ընդհանուր մեկնաբանությունը շեշտում է այդ ազատությունների հիմնարար բնույթը

և forum internum-ի՝ անձի ներքին համոզմունքների և մտքի ներքին ոլորտի նկատմամբ հարկադրանքի անթույլատրելիությունը[1]:

Պատմականորեն forum internum-ի պաշտպանությունը ձևավորվել է այն պայմաններում, երբ անձի ներքին մտածողության գործընթացների նկատմամբ տեխնոլոգիական անմիջական հասանելիության և ներգործության հնարավորությունները խիստ սահմանափակ էին: Նյարդատեխնոլոգիաների զարգացումը նոր հարցեր է առաջացնում այդ պաշտպանության կիրառման վերաբերյալ, քանի որ որոշ տեխնոլոգիաներ կարող են գրանցել, վերլուծել կամ փոփոխել նյարդային ակտիվությունը:

Ներկայում նյարդատեխնոլոգիան կասկածի տակ է դնում այս ենթադրությունը:

Սա չի նշանակում, որ ժամանակակից նյարդատեխնոլոգիաները հնարավորություն են տալիս համընդհանուր «մտքեր կարդալ» կամ կամայականորեն ստեղծել համոզմունքներ: Իրավական նշանակություն ունի ավելի սահմանափակ, բայց իրական միտումը՝ ուղեղային ակտիվության գրանցման, որոշ հոգեկան վիճակների վերաբերյալ եզրահանգումների և նյարդային գործընթացների վրա ներգործության հնարավորությունների ընդլայնումը:

Ա. Լավացան իր «Մտքի ազատությունը և հոգեկան անձեռնմխելիությունը, ցանկացած նյարդային պրոթեզի նկատմամբ բարոյական պահանջները» աշխատությունում վերլուծում է մտքի ազատության և հոգեկան անձեռնմխելիության փոխկապակցվածությունը նյարդային պրոթեզների կիրառման համատեքստում՝ հատուկ ուշադրություն դարձնելով նաև անձի ներքին հոգեկան ոլորտի պաշտպանության խնդրին[2]: Նույն խնդիրները հետագայում արտացոլվել են նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՄԱԿ-ի փաստաթղթերում՝ արժանապատվության, ինքնավարության, հոգեկան անձեռնմխելիության, հոգեկան գաղտնիության և մտքի ազատության փոխադարձ կապի տեսանկյունից:

Սակայն հոգեկան անձեռնմխելիությունը չի կարող տարրալուծվել մտքի ազատության մեջ և դրանց միջև հարաբերակցությունը նպատակահարմար չէ կառուցել նաև «ավելի լայն–ավելի նեղ» հիերարխիայի հիման վրա:

Հոգեկան անձեռնմխելիության և մտքի ազատության պաշտպանության ոլորտները մասամբ համընկնում են, սակայն դրանց նորմատիվ գործառույթները նույնական չեն: Օրինակ՝ հուզական վիճակի կամ իմպուլսիվության էական և ոչ իրավաչափ փոփոխությունը կարող է առնչվել հոգեկան անձեռնմխելիությանը

[1] Տե՛ս Human Rights Committee. General Comment No. 22: Article 18 (Freedom of Thought, Conscience or Religion), CCPR/C/21/Rev.1/Add.4, 1993, paras. 1, 3:

[2] Տե՛ս UNESCO International Bioethics Committee. Ethical Issues of Neurotechnology. Paris: UNESCO, 2021. SHS/BIO/IBC28/2021/3Rev:

նույնիսկ այն դեպքում, երբ հնարավոր չէ հաստատել կոնկրետ մտքի կամ համոզմունքի ձևավորման նկատմամբ ներգործություն:

Մտքի ազատությունը հատուկ նշանակություն է ստանում այն դեպքերում, երբ ներգործությունն առնչվում է անձի մտքերի կամ համոզմունքների ձևավորմանը, պահպանմանը, փոփոխմանը կամ դրանց նկատմամբ հարկադրանքին: Նյարդատեխնոլոգիաների կիրառման պայմաններում այս հարցի մեկնաբանությունը դեռ զարգացող դոկտրինալ և միջազգային-իրավական քննարկման առարկա է:

Այս առումով Ք. Բուբլիցի մոտեցումը կարևոր է նրանով, որ գոյություն ունեցող իրավունքները դիտարկում է որպես բազմաշերտ պաշտպանական համակարգ, որտեղ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը, մասնավոր կյանքը, մտքի ազատությունն ու արժանապատվությունը տարբեր, բայց փոխլրացնող պաշտպանական գործառույթներ են իրականացնում: Եվրոպայի խորհրդի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) փաստաթղթերում քննարկումների մեջ ևս շեշտվել է մարդու գործող իրավունքների հարմարեցված մեկնաբանության և կառավարման նոր գործիքների անհրաժեշտությունը՝ առանց յուրաքանչյուր նոր տեխնոլոգիական ռիսկի համար անպայման նոր իրավունք ստեղծելու[1]:

Ուստի նյարդատեխնոլոգիաների զարգացման պայմաններում դոկտրինալ մակարդակում հիմնավորվում է մտքի ազատության այնպիսի մեկնաբանության անհրաժեշտությունը, որը հաշվի է առնում ոչ միայն արդեն ձևավորված մտքեր կամ համոզմունքներ ունենալու ազատությունը, այլև դրանց ձևավորման ներքին գործընթացների նկատմամբ նպատակային տեխնոլոգիական ներգործության հնարավորությունը:

Այստեղ կարող ենք առաջարկել հետևյալ ձևակերպումը.

«Հոգեկան անձեռնմխելիությունն ապահովում է հոգեկան և նյարդաճանաչողական գործընթացների ընդհանուր պաշտպանությունը էական և ոչ իրավաչափ միջամտությունից, մինչդեռ մտքի ազատությունը լրացուցիչ և առավել հատուկ նշանակություն է ստանում այն դեպքերում, երբ ներգործությունն առնչվում է ներքին մտքերի ու համոզմունքների ձևավորմանը, պահպանմանը կամ փոփոխմանը»:

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության տեղը հիմնարար իրավունքների համակարգում ներկայացնել փոխկապակցված երաշխիքների ֆունկցիոնալ տարբերակման միջոցով: Այս համակարգում մարդկային արժանապատվությունը հանդես է գալիս որպես արժեքաբանական հիմք, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը սահմանում

[1] Տե՛ս Council of Europe, OECD. Neurotechnologies and Human Rights Framework: Do We Need New Rights? Report of the Round Table, Strasbourg, 9 November 2021, published December 2022:

են անձի համապատասխան ոլորտների նկատմամբ միջամտության իրավական սահմանները, անձնական ինքնավարությունը պաշտպանում է այդ միջամտությունների վերաբերյալ ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորությունը, մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության երաշխիքները՝ անձի մասնավոր ու տեղեկատվական ոլորտը, անձնական ինքնությունը՝ ինքնընկալման և հոգեբանական շարունակականության իրավական նշանակություն ունեցող կողմերը, իսկ մտքի ազատությունը՝ անձի ներքին մտավոր ոլորտը: Առողջության իրավունքը դրանց հետ փոխկապակցված է իր առանձնահատուկ՝ առողջության պահպանման և առողջապահական ծառայությունների հասանելիության դրական չափմամբ: Նշված իրավունքները չեն կազմում հիերարխիկ համակարգ և չեն փոխարինում միմյանց. կենսաբժշկական նույն միջամտությունը կարող է միաժամանակ ներգրավել դրանցից մի քանիսը՝ յուրաքանչյուրի ինքնուրույն նորմատիվ գործառույթին համապատասխան:

Եզրակացություն

Վերոգրյալի ամփոփումը ցույց է տալիս, որ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը հիմնարար իրավունքների համակարգում ունեն ինքնուրույն նորմատիվ գործառույթ՝ միաժամանակ սերտորեն փոխկապակցված լինելով մարդկային արժանապատվության, անձնական ինքնավարության, առողջության իրավունքի, մասնավոր կյանքի, անձնական տվյալների պաշտպանության, անձնական ինքնության և մտքի ազատության հետ: Դրանց ինքնուրույնությունը պայմանավորված է նրանով, որ անձեռնմխելիությունը սահմանում է անձի ֆիզիկական, հոգեկան և նյարդաճանաչողական ոլորտների նկատմամբ իրավաբանորեն նշանակալի հասանելիության և ներգործության թույլատրելիության սահմանները:

Մարդկային արժանապատվությունն այս համակարգում հանդես է գալիս որպես անձեռնմխելիության արժեքաբանական հիմք, իսկ անձնական ինքնավարությունը՝ որպես անձի նկատմամբ միջամտությունների վերաբերյալ ինքնուրույն որոշումներ կայացնելու իրավական հնարավորություն: Առողջության իրավունքը, իր հերթին, ուղղված է առողջության պահպանման համար անհրաժեշտ պայմանների և երաշխիքների ապահովմանը, մինչդեռ անձեռնմխելիությունը վերաբերում է ֆիզիկական և հոգեկան ոլորտների նկատմամբ միջամտության իրավական սահմաններին: Հետևաբար, կենսաբժշկական միջամտության բուժական նպատակը կամ օգտակարությունն ինքնին բավարար չէ դրա իրավաչափությունը հիմնավորելու համար:

Հոգեկան անձեռնմխելիությունը չի կարող նույնացվել հոգեկան առողջության հետ կամ սահմանափակվել միայն ախտորոշելի վնասից պաշտպանությամբ: Այն վերաբերում է նաև անձի հոգեկան և նյարդաճանաչողական գործընթացների

նկատմամբ էական ներգործությունների իրավական սահմաններին: Միաժամանակ այն չի փոխարինում մասնավոր կյանքի, անձնական ինքնության կամ մտքի ազատության պաշտպանությանը: Այս իրավունքների պաշտպանության ոլորտները կարող են համընկնել, սակայն դրանց նորմատիվ գործառույթները տարբեր են: Նույն տրամաբանությամբ անձնական ինքնության և հոգեբանական շարունակականության պաշտպանությունը չի ենթադրում անհատականության անփոփոխության իրավունք. իրավական նշանակություն ունի հատկապես անձի ինքնավարության պահպանումը սեփական անձի էական փոփոխությունների նկատմամբ:

Այս հիմքով առաջարկվում է կենսաբժշկության ոլորտում անձի պաշտպանության ֆունկցիոնալ բազմաբաղադրիչ մոտեցում, որի շրջանակում արժանապատվությունը հանդես է գալիս որպես արժեքաբանական հիմք, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը՝ որպես միջամտության սահմանները որոշող երաշխիք, անձնական ինքնավարությունը՝ որպես որոշումների ինքնուրույնությունն ապահովող սկզբունք, մասնավոր կյանքն ու անձնական տվյալների պաշտպանությունը՝ որպես անձնական և տեղեկատվական ոլորտի երաշխիքներ, անձնական ինքնությունը՝ որպես ինքնընկալման և էական փոփոխությունների նկատմամբ ինքնավար վերահսկողության հետ կապված պաշտպանություն, իսկ մտքի ազատությունը՝ որպես ներքին մտավոր ոլորտի հատուկ երաշխիք:

Այսպիսով, կենսաբժշկության համատեքստում ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության տեղը հիմնարար իրավունքների համակարգում նպատակահարմար է բնութագրել ինքնուրույնության և փոխկապակցվածության համակցմամբ: Դրանք չեն տարրալուծվում հարակից իրավունքների մեջ և միաժամանակ չեն գործում դրանցից մեկուսացված: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս կենսաբժշկական միջամտությունները գնահատել մի քանի փոխկապակցված հիմնարար իրավունքների տեսանկյունից՝ պահպանելով յուրաքանչյուրի ինքնուրույն նորմատիվ գործառույթը և ապահովելով անձի ֆիզիկական ու հոգեկան ոլորտների համակողմանի իրավական պաշտպանությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Convention for the Protection of Human Rights and Dignity of the Human Being with regard to the Application of Biology and Medicine: Convention on Human Rights and Biomedicine, Oviedo, 4 April 1997, ETS No. 164, Art. 1.

2. Explanatory Report to the Convention on Human Rights and Biomedicine, ETS No. 164, para. 9.

3. Charter of Fundamental Rights of the European Union // OJ C 202, 7.6.2016. P. 394, Art. 3.

4. **Bublitz C.** Neurotechnologies and human rights: restating and reaffirming the multi-layered protection of the person // The International Journal of Human Rights. 2024. Vol. 28, No. 5. P. 782–807. DOI: 10.1080/13642987.2024.2310830.

5. Convention on Human Rights and Biomedicine, Art. 5; Explanatory Report, paras. 34–36.

6. *Pretty v. the United Kingdom*, no. 2346/02, ECHR 2002-III, §§ 61, 65–67.

7. *Glass v. the United Kingdom*, no. 61827/00, ECHR 2004-II, §§ 82–83.

8. Committee on Economic, Social and Cultural Rights. General Comment No. 14 (2000): The right to the highest attainable standard of health (art. 12), E/C.12/2000/4, para. 8.

9. *A.P., Garçon and Nicot v. France* [GC], nos. 79885/12, 52471/13 and 52596/13, Judgment of 6 April 2017, §§ 128–130.

10. *Bensaid v. the United Kingdom*, no. 44599/98, ECHR 2001-I, §§ 46–47.

11. **Ligthart S.** The right to mental integrity in the age of neurotechnology: constructing scope and exploring permissible limitations // Journal of Law and the Biosciences. 2025. Vol. 12, No. 1. Art. lsaf010. DOI: 10.1093/jlb/lsaf010;

12. *Bensaid v. the United Kingdom*, cited above, § 46.

13. Convention on Human Rights and Biomedicine, Art. 10.

14. UNESCO. Recommendation on the Ethics of Neurotechnology. Adopted by the General Conference of UNESCO at its 43rd session, November 2025.

15. Human Rights Council Advisory Committee. Impact, opportunities and challenges of neurotechnology with regard to the promotion and protection of all human rights. A/HRC/57/61, 8 August 2024.

16. **Ienca M., Andorno R.** Towards new human rights in the age of neuroscience and neurotechnology // Life Sciences, Society and Policy. 2017. Vol. 13. Art. 5. DOI: 10.1186/s40504-017-0050-1.

17. **Witt K., Kuhn J., Timmermann L., Zurowski M., Woopen C.** Deep Brain Stimulation and the Search for Identity // Neuroethics. 2013. Vol. 6, No. 3. P. 499–511. DOI: 10.1007/s12152-011-9100-1.

18. **Kraemer F.** Me, Myself and My Brain Implant: Deep Brain Stimulation Raises Questions of Personal Authenticity and Alienation // Neuroethics. 2013. Vol. 6, No. 3. P. 483–497. DOI: 10.1007/s12152-011-9115-7.

19. **Wardrope A.** Authenticity and autonomy in deep-brain stimulation // Journal of Medical Ethics. 2014. Vol. 40, No. 8. P. 563–566. DOI: 10.1136/medethics-2013-101419.

20. Human Rights Committee. General Comment No. 22: Article 18 (Freedom of Thought, Conscience or Religion), CCPR/C/21/Rev.1/Add.4, 1993, paras. 1, 3.

21. **Lavazza A.** Freedom of Thought and Mental Integrity: The Moral Requirements for Any Neural Prosthesis // Frontiers in Neuroscience. 2018. Vol. 12. Art. 82. DOI: 10.3389/fnins.2018.00082.

22. UNESCO International Bioethics Committee. Ethical Issues of Neurotechnology. Paris: UNESCO, 2021. SHS/BIO/IBC28/2021/3Rev.

23. Council of Europe, OECD. Neurotechnologies and Human Rights Framework: Do We Need New Rights? Report of the Round Table, Strasbourg, 9 November 2021, published December 2022.

24. European Court of Human Rights. Guide on Article 8 of the European Convention on Human Rights: Right to Respect for Private and Family Life, Home and Correspondence. Strasbourg: Council of Europe / European Court of Human Rights, updated edition.

ПРАВО НА ФИЗИЧЕСКУЮ И ПСИХИЧЕСКУЮ НЕПРИКОСНОВЕННОСТЬ В СИСТЕМЕ ОСНОВНЫХ ПРАВ В КОНТЕКСТЕ БИОМЕДИЦИНЫ

Аннотация

Предметом данной статьи является место и роль права на физическую и психическую неприкосновенность в системе основных прав в контексте биомедицины, а также его взаимосвязь с человеческим достоинством, личной автономией, правом на здоровье, неприкосновенностью частной жизни, личной идентичностью и свободой мысли. Цель исследования – выявить независимое нормативное содержание и функцию физической и психической неприкосновенности и разграничить ее от областей защиты соответствующих основных прав, одновременно учитывая их взаимозависимость в контексте биомедицинских вмешательств.

В статье обосновывается, что человеческое достоинство выступает аксиологической основой физической и психической неприкосновенности, тогда как неприкосновенность более конкретно определяет пределы допустимости юридически значимого вмешательства в физическую, психическую и нейрокогнитивную сферы человека. Личная автономия рассматривается как юридически обеспеченная возможность лица самостоятельно принимать решения относительно вмешательства в его физическую и психическую сферы, тогда как право на здоровье преимущественно

связано с обеспечением условий и гарантий, необходимых для сохранения здоровья. Обосновывается также необходимость разграничения психической неприкосновенности и психического здоровья и недопустимость их отождествления. Особое внимание уделяется соотношению права на частную жизнь, психической неприкосновенности, личной идентичности и свободы мысли в условиях развития нейротехнологий. По результатам исследования предлагается определить место физической и психической неприкосновенности в системе основных прав, исходя из сочетания их самостоятельности и взаимосвязанности с другими основными правами, при сохранении за каждой из них присущей ей особой нормативной функции.

Ключевые слова: биомедицина, физическая неприкосновенность, психическая неприкосновенность, человеческое достоинство, личная автономия, неприкосновенность частной жизни, личная идентичность, психологическая непрерывность, свобода мысли.

THE RIGHT TO PHYSICAL AND MENTAL INTEGRITY WITHIN THE SYSTEM OF FUNDAMENTAL RIGHTS IN THE CONTEXT OF BIOMEDICINE

Annotation

This article examines the place and role of the right to physical and mental integrity within the system of fundamental rights in the context of biomedicine, as well as its relationship with human dignity, personal autonomy, the right to health, the right to respect for private life, personal identity, and freedom of thought. The purpose of the study is to identify the autonomous normative content and function of physical and mental integrity and to distinguish its scope of protection from those of related fundamental rights, while simultaneously taking into account their interdependence in the context of biomedical interventions.

The article argues that human dignity constitutes the axiological foundation of physical and mental integrity, whereas the right to integrity more specifically determines the limits of permissible legally significant interference with a person's physical, mental, and neurocognitive spheres. Personal autonomy is understood as the legally protected ability of an individual to make independent decisions concerning interventions in their physical and mental spheres, whereas the right to health is primarily concerned with ensuring the conditions and guarantees necessary for the protection of health. The article further substantiates the need to distinguish mental integrity from mental health and to avoid conflating the two concepts. Particular attention is paid to the relationship between the right to respect for private life, mental integrity, personal identity, and freedom of thought in the context of advances in neurotechnology. Based on the findings of the study, it is proposed that the place of physical and mental integrity within the system of fundamental rights should be

understood through a combination of its autonomous character and its interrelationship with other fundamental rights, while preserving the distinct normative function of each right.

Keywords: biomedicine, physical integrity, mental integrity, human dignity, personal autonomy, right to respect for private life, personal identity, psychological continuity, freedom of thought.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 22.09.2026 թ., փրվել է գրախոսության 25.09.2026 թ., ընդունվել է տպագրության 28.09.2026 թ.:

DOI: 10.59560/18291155-2026.3-178



ՆԱՐԻՆԵ ԱԶԱՐՅԱՆ

Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության, քաղաքագիտության և
միջազգային հարաբերությունների
ամբիոնի հայցորդ,
ՀՀ աշխատանքի և բարեկեցության նախարարության
Միասնական սոցիալական ծառայության
իրավաբանական վարչության պետ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ. ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ամփոփագիր

Հոդվածում հետազոտվում են կոռուպցիայի կանխարգելման սահմանադրական հիմունքները՝ որպես ճյուղային հակակոռուպցիոն նորմերի իրավական ուժի և լեգիտիմության աղբյուր: Հետազոտության նպատակն է բացահայտել «կոռուպցիայի կանխարգելման սահմանադրական հիմունքներ» հասկացության բովանդակությունը, առանձնացնել դրա կառուցվածքային տարրերը և գնահատել ՀՀ Սահմանադրության բովանդակությունը: Հիմնավորվում է, որ սահմանադրական հիմունքները կրում են երկակի բնույթ. դրանք միաժամանակ հիմնավորում են կանխարգելման պետական պարտականությունը և սահմանում դրա իրականացման իրավական սահմանները: Վերլուծվում են նաև ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայից բխող պահանջները սահմանադրական կարգավորման նկատմամբ: Առաջարկվում է հիմունքների մի քանի բաղադրիչ դասակարգում, իսկ սահմանադրահիրավական մեխանիզմները վերլուծվում են Ռ. Կլիտգարդի բանաձևի տրամաբանությամբ: Ցույց է տրվում, որ, չնայած «կոռուպցիա» եզրույթի բացակայությանը, ՀՀ Սահմանադրությունն ունի զգալի հակակոռուպցիոն ներուժ, սակայն դրա վերահսկողական համակարգը կառուցված է միայն հետագա վերահսկողության վրա, իսկ կոռուպցիայի կանխարգելման մարմինները զուրկ են սահմանադրական կարգավիճակից, ինչը ձևավորում է ինստիտուցիոնալ անհամաչափություն: ՍԴՈ-1776 որոշման, ուկրաինական փորձի, ինչպես նաև Թաիլանդի, Քենիայի, Բութանի և Բրազիլիայի սահմանադրական մոդելների համեմատական վերլուծության հիման վրա ընթացող սահմանադրական բարեփոխումների համատեքստում առաջարկվում են հանրային իշխանության բարեվարքության սկզբունքի և հայտարարագրման պարտականության

սահմանադրական ամրագրում, կանխարգելիչ մարմնի կարգավիճակի սահմանադրական երաշխավորում և նորմաստեղծ գործընթացում նախնական հակակոռուպցիոն վերահսկողության ներդրում:

Հիմնաբառեր. կոռուպցիայի կանխարգելում, սահմանադրական հիմունքներ, իշխանության յուրացման արգելք, օրինականության սկզբունք, համաչափության սկզբունք, հակակոռուպցիոն փորձաքննություն, սահմանադրական բարեփոխումներ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի կանխարգելման իրավական մեխանիզմները իրավագիտական գրականության մեջ սովորաբար ուսումնասիրվում են ճյուղային մակարդակում՝ քրեական և վարչական իրավունքի նորմերի, հանցակազմերի, հայտարարագրման և ստուգման ընթացակարգերի տեսանկյունից: Սակայն այդ մեխանիզմները հենվում են սահմանադրական հիմքի վրա, որից էլ ածանցում են իրենց իրավական ուժն ու լեգիտիմությունը: Հենց սահմանադրական մակարդակն է որոշում, թե ինչու է պետությունը պարտավոր կանխարգելել կոռուպցիան, ինչ սահմաններում կարող է դա անել և ինչ պայմաններում է կանխարգելիչ միջոցը համարվում իրավաչափ: Այլ կերպ ասած՝ ճյուղային հակակոռուպցիոն նորմը միշտ էլ սահմանադրական նորմի մանրամասնում է:

Սահմանադրական մակարդակի նշանակությունը դրսևորվում է երկու փոխլրացնող ուղղությամբ: Նախ՝ Սահմանադրությունը սահմանում է այն արժեքները, որոնց դեմ ուղղված է կոռուպցիան, և այդպիսով ձևավորում է կանխարգելման նպատակային կողմնորոշումը: Ապա՝ այն սահմանում է այն սահմանները, որոնցից դուրս չեն կարող գործել հակակոռուպցիոն միջոցները, որքան էլ դրանք արդյունավետ թվան: Այս երկրորդ ուղղությունը հաճախ թերագնահատվում է, մինչդեռ հակակոռուպցիոն օրենսդրությունը տարբեր երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, պարբերաբար դառնում է սահմանադրական վերահսկողության առարկա:

Սույն հոդվածի նպատակն է բացահայտել «կոռուպցիայի կանխարգելման սահմանադրական հիմունքներ» հասկացության բովանդակությունը, առանձնացնել դրա կառուցվածքային տարրերը և գնահատել, թե որքանով է ՀՀ Սահմանադրության գործող տեքստն ապահովում կոռուպցիայի կանխարգելման բավարար սահմանադրական խարիսխ: Այդ նպատակով լուծվում են հետևյալ խնդիրները՝ ձևակերպել հասկացության աշխատանքային սահմանումը, վերլուծել Սահմանադրության հակակոռուպցիոն ներուժ ունեցող նորմերն ու դրանց իրացման մեխանիզմները, բացահայտել կարգավորման բացերը և ձևակերպել առաջարկություններ: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև

նոր Սահմանադրության մշակման ընթացող գործընթացով: Կիրառվել են ձևական-իրավաբանական, համակարգային և համեմատական-իրավական մեթոդները:

1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

«Սահմանադրական հիմունքներ» եզրույթը միանշանակ չի ընկալվում: Նեղ իմաստով դրանով հասկացվում են Սահմանադրության միայն այն նորմերը, որոնք ուղղակիորեն հիշատակում են համապատասխան երևույթը, լայն իմաստով՝ տվյալ ոլորտի վրա ազդող բոլոր սահմանադրական նորմերի ու սկզբունքների համակարգը: Կոռուպցիայի կանխարգելման պարագայում կիրառելի է լայն մոտեցումը, քանի որ սահմանադրությունների մեծ մասը, ներառյալ ՀՀ Սահմանադրությունը, կոռուպցիայի մասին ուղղակիորեն չի խոսում, և կանխարգելման սահմանադրական հիմքը ձևավորվում է իշխանության կազմակերպման, դրա սահմանափակման և հանրային վերահսկողության նորմերի համակցությամբ:

Ռուսական իրավագիտության մեջ նշվում է, որ կոռուպցիայի դեմ պայքարի խնդրահարույց լինելը թափանցում է սահմանադրական իրավունքի առարկան կազմող գրեթե բոլոր հարաբերությունների մեջ, իսկ հակակոռուպցիոն նորմերը դասակարգվում են երեք խմբի՝ անհատի և պետության հարաբերություններ, հանրային իշխանության կազմակերպում, պետության ինքնիշխանություն և անվտանգություն[1]: Այս մոտեցմամբ կոռուպցիան ներկայանում է ոչ միայն որպես պաշտոնեական իրավախախտում, այլև որպես սահմանադրական կարգի դեմ ուղղված համակարգային սպառնալիք: Նույն ուղղությամբ է զարգացվել Ս.Ա. Ավագյանի խմբագրությամբ կոլեկտիվ մենագրությունը, որտեղ կոռուպցիայի դեմ պայքարը դիտարկվում է որպես իշխանության կազմակերպման և իրականացման սկզբունքների երաշխավորման խնդիր[2]: Ս.Ն. Շևերդյաևը, իր հերթին, ցույց է տալիս, որ ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիան ուղղակի պահանջներ է ձևակերպում հենց սահմանադրական օրենսդրության համար[3], ուստի Կոնվենցիայի իրականացման աստիճանը պետք է գնահատել նաև սահմանադրական մակարդակում:

Կոնվենցիայի տեքստն ինքնին հիմք է տալիս այդպիսի եզրակացության: 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան մշակում և իրականացնում

[1]Конституционно-правовые ориентиры противодействия коррупции. Противодействие коррупции как национальный приоритет в практике, науке и образовании: Материалы X и XI Евразийских антикоррупционных форумов / Отв. ред. Т.Я. Хабриева. - М.: ИЗиСП; ИД «Юриспруденция», 2023. - С. 20–21.

[2] Противодействие коррупции: конституционно-правовые подходы: Коллективная монография / Отв. ред. С.А. Авакьян. - М.: Юстицинформ, 2016.

[3] **Шевердяев С.Н.** Актуальные задачи для конституционного законодательства в Конвенции ООН против коррупции 2003 г. // Конституционное и муниципальное право. 2025. № 1. - С. 26–29.

կամ պահպանում է կոռուպցիայի դեմ ուղղված արդյունավետ և համակարգված քաղաքականություն, որը խթանում է հասարակության մասնակցությունը և արտացոլում է օրենքի գերակայության, հանրային գործերի և հանրային սեփականության պատշաճ կառավարման, բարեվարքության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքները»[1]*:*

Կոնվենցիան պահանջում է ոչ թե առանձին միջոցառումներ, այլ «համակարգված քաղաքականություն», որը կարող է համակարգված լինել միայն ընդհանուր՝ սահմանադրական հենքի առկայությամբ, իսկ թվարկված սկզբունքներն ըստ էության սահմանադրական իրավունքի կատեգորիաներ են: «Իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան» ձևակերպումը կրկնվում է նաև 6-րդ հոդվածի 2-րդ մասում, որը պահանջում է կանխարգելիչ մարմնին տրամադրել «անհրաժեշտ անկախություն», որպեսզի այն կարողանա գործել «արդյունավետ և առանց որևէ անպատշաճ ազդեցության»: Քանի որ ներպետական իրավունքում «հիմնարար սկզբունքներն» առաջին հերթին սահմանադրական սկզբունքներն են, Կոնվենցիան ենթադրում է, որ կանխարգելիչ մարմնի անկախությունը պետք է երաշխավորված լինի դրանց համարժեք մակարդակում: Այս հանգամանքը վճռորոշ է ստորև քննարկվող ինստիտուցիոնալ անհամաչափության հարցում:

Վերոշարադրյալի հիման վրա առաջարկվում է հետևյալ աշխատանքային սահմանումը. կոռուպցիայի կանխարգելման սահմանադրական հիմունքները Սահմանադրությամբ ամրագրված արժեքների, սկզբունքների, ինստիտուտների և իրավունքների համակարգն է, որը միաժամանակ հիմնավորում է կոռուպցիայի կանխարգելման պետական պարտականությունը և սահմանում է այդ պարտականության իրականացման իրավական սահմանները: Սահմանման մեջ էական է հենց այս երկակիությունը. Սահմանադրությունը ոչ միայն լիազորում է պետությանը գործել, այլև զսպում է նրան՝ թույլ չտալով, որ կոռուպցիայի դեմ պայքարի նպատակն արդարացնի հիմնական իրավունքների անհամաչափ սահմանափակումը:

Ըստ գործառութային նշանակության՝ սահմանադրական հիմունքները կարող են ներկայացվել որպես հետևյալ բաղադրիչից բաղկացած կառուցվածք.

1) արժեքային-նպատակային բաղադրիչ՝ ժողովրդաիշխանության, մարդու արժանապատվության և իշխանության յուրացման արգելքի նորմերը (2-րդ և 3-րդ հոդվածներ).

2) իրավաստեղծ բաղադրիչ՝ օրինականության և լիազորող նորմի որոշակիության պահանջները (6-րդ հոդված).

[1] Կոռուպցիայի դեմ Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա, ընդունվել է 31.10.2003, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 07.04.2007, հոդվածներ 5 և 6: Կոնվենցիայի դրույթները մեջբերվում են ըստ անգլերեն իսկական տեքստի՝ հեղինակի թարգմանությամբ:

3) սահմանափակող սկզբունքների բաղադրիչ՝ իրավահավասարության, համաչափության և որոշակիության սկզբունքները (28-րդ, 29-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներ).

4) իրավունքի բաղադրիչ՝ հանրային ծառայության անցնելու, պատշաճ վարչարարության և տեղեկություններ ստանալու իրավունքները (49–51-րդ հոդվածներ).

5) անհամատեղելիության բաղադրիչ՝ պատգամավորի, Կառավարության անդամի և դատավորի անհամատեղելիության պահանջները (95-րդ, 148-րդ և 164-րդ հոդվածներ).

6) կազմակերպական-ինստիտուցիոնալ բաղադրիչ՝ իշխանությունների բաժանման, դատական անկախության և տեղական ինքնակառավարման նորմերը (4-րդ, 9-րդ, 162–164-րդ և 179-րդ հոդվածներ).

7) վերահսկողական բաղադրիչ՝ խորհրդարանական, ֆինանսական, դատախազական, դատական և սահմանադրական վերահսկողության, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի նորմերը (88-րդ, 168-րդ, 176-րդ, 191-րդ և 198-րդ հոդվածներ).

8) հանրային մասնակցության բաղադրիչ՝ միավորումների ազատության, կուսակցությունների ֆինանսական թափանցիկության և տեղեկատվության մատչելիության նորմերը (45-րդ, 46-րդ և 51-րդ հոդվածներ):

Դասակարգումը ցույց է տալիս, որ Սահմանադրության հակակոռուպցիոն ներուժը ցրված է ամբողջ տեքստով, թույլ է տալիս առանձնացնել համեմատաբար թույլ բաղադրիչները և տարանջատում է նորմատիվ նախադրյալները (արժեքային-նպատակային և իրավաստեղծ բաղադրիչներ), որոնք պատասխանում են «ինչ» և «ինչու» հարցերին, գործող մեխանիզմներից (վերահսկողական և հանրային մասնակցության բաղադրիչներ), որոնք պատասխանում են «ինչպես» հարցին: Ինչպես կերևա հետագա շարադրանքից, ՀՀ Սահմանադրության պարագայում ամենաթույլ օղակը կազմակերպական-ինստիտուցիոնալ բաղադրիչն է, որտեղ բացակայում է կոռուպցիայի կանխարգելման մասնագիտացված մարմնի սահմանադրական կարգավիճակը, իսկ վերահսկողական բաղադրիչում բացակայում է նախնական վերահսկողության օղակը:

2. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՆԵՐՈՒԺԸ

ՀՀ Սահմանադրության վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած «կոռուպցիա» եզրույթի բացակայությանը, նրա հակակոռուպցիոն ներուժը զգալի է[1]: Այդ ներուժը կենտրոնացած է մի քանի հանգույցում:

[1]Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով: Այսուհետ հոդվածները մեջբերվում են ըստ գործող խմբագրության: Հոդվածները մեջբերվում են ըստ ARLIS իրավական տեղեկատվական համակարգում

Արժեքային հանգույցի ելակետը Սահմանադրության 2-րդ հոդվածն է.

«Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է»:

Հոդվածի առաջին նախադասությունը սահմանում է իշխանության աղբյուրը, երկրորդը՝ դրա իրականացման իրավաչափ ձևերը, իսկ երրորդը՝ այդ ձևերից դուրս իշխանության տիրապետման արգելքը: Հետևաբար, պաշտոնատար անձինք իշխանության սեփականատերեր չեն, այլ ժողովրդի կողմից վստահված իշխանության իրականացնողներ: Իշխանության յուրացման արգելքը սովորաբար մեկնաբանվում է իշխանության բռնի զավթման համատեքստում, սակայն համակարգային ընթերցումը թույլ է տալիս ավելի լայն մեկնաբանություն. պաշտոնատար անձի կողմից հանրային լիազորության օգտագործումը մասնավոր շահի համար նույնպես իշխանության, թեկուզ դրա մի մասնիկի, յուրացում է: Այս տեսանկյունից կոռուպցիան հանրային իշխանության թաքնված և մասնատված յուրացումն է, որը զավթումից տարբերվում է ոչ թե բնույթով, այլ մասշտաբով ու ձևով: Նման ընթերցումը համահունչ է կոռուպցիայի ինստիտուցիոնալ տեսությանը, որի համաձայն՝ կոռուպցիայի հիմնական վնասը հանրային ինստիտուտի շեղումն է իր նպատակից, և թույլ է տալիս շահերի բախման կարգավորումը, հայտարարագրումը և բարեվարքության ստուգումը դիտարկել ոչ թե որպես իրավունքների սահմանափակման «արտակարգ» միջոցներ, այլ որպես ժողովրդաիշխանության սկզբունքի պաշտպանության բնական գործիքներ:

Արժեքային հանգույցի երկրորդ տարրը 3-րդ հոդվածն է, որի 2-րդ մասի համաձայն՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են», իսկ 3-րդ մասի համաձայն՝ «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Քանի որ կոռուպցիան անմիջականորեն խաթարում է արդար դատաքննության, պատշաճ վարչարարության, հանրային ծառայությունների հավասար հասանելիության և սեփականության իրավունքները, 2-րդ մասից բխում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ կանխարգելել պաշտոնեական չարաշահումը: Միաժամանակ 3-րդ մասն արգելում է այնպիսի հակակոռուպցիոն միջոցներ, որոնք անհամաչափորեն սահմանափակում են

հրապարակված պաշտոնական տեքստի (ընդունվել է 06.12.2015, ուժի մեջ է մտել 22.12.2015): URL՝ https://www.arlis.am/hy/acts/143723/latest

անձնական կյանքի գաղտնիության, սեփականության կամ անմեղության կանխավարկածի երաշխիքները: Այսպիսով՝ նույն հոդվածը և՛ պահանջում է կանխարգելում, և՛ սահմանում է դրա սահմանը:

Կարևորագույն նշանակություն ունի Սահմանադրության 6-րդ հոդվածը՝ «Օրինականության սկզբունքը».

> *«1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: 2. […] Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին»:*

1-ին մասն ամրագրում է հանրային իրավունքի դասական սկզբունքը՝ թույլատրված է միայն այն, ինչ նախատեսված է օրենքով: Սա կոռուպցիայի կանխարգելման ամենաուղղակի սահմանադրական գործիքն է, քանի որ կոռուպցիոն գործարքի «ապրանքը» պաշտոնատար անձի լիազորությունն է, և որքան նեղ ու հստակ են դրա սահմանները, այնքան սահմանափակ է դրա «վաճառքի» հնարավորությունը: Ինչպես ցույց է տվել Ռ. Կլիտգարդը, կոռուպցիայի ռիսկն աճում է մենաշնորհի և հայեցողության մեծացմանը զուգընթաց և նվազում է հաշվետվողականության ուժեղացմամբ[1]: 6-րդ հոդվածի 1-ին մասը ներգործում է հենց հայեցողության վրա՝ այն դարձնելով օրենքից բխող, սահմանափակ և դատական ստուգման ենթակա:

2-րդ մասը բացահայտում է սկզբունքի նորմաստեղծ հարթությունը. օրենսդիրը չի կարող գործադիր իշխանությանը փոխանցել «դատարկ» կամ անորոշ լիազորություն, որի բովանդակությունն ամբողջությամբ կորոշվի ենթաօրենսդրական մակարդակում: Քանի որ անորոշ լիազորող նորմը հայեցողության ընդլայնման և, հետևաբար, կոռուպցիոն ռիսկի աղբյուր է, 6-րդ հոդվածի 2-րդ մասը կարող է դիտարկվել որպես իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության ինստիտուտի ուղղակի սահմանադրական խարիսխ. փորձաքննությունը հենց այդ անորոշությունը նախագծի փուլում վեր հանելու գործիք է:

Սահմանափակող սկզբունքների հանգույցի կենտրոնում են 78-րդ և 79-րդ հոդվածները: 78-րդ հոդվածի համաձայն՝ սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է «պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար» և «համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը», իսկ 79-րդ հոդվածի համաձայն՝ օրենքները պետք է «լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն

[1] **Klitgaard R.** Controlling Corruption. Berkeley: University of California Press, 1988. P. 75.

դրսևորելու համապատասխան վարքագիծ»: 79-րդ հոդվածն ուշագրավ է նրանով, որ որոշակիության պահանջը կապում է նաև «հասցեատիրոջ»՝ նորմը կիրառող պաշտոնատար անձի հետ, որը չպետք է կարողանա նորմը կամայականորեն մեկնաբանել:

Հակակոռուպցիոն համատեքստում այս սկզբունքները գործում են տարբեր ուղղություններով: Որոշակիության սկզբունքը կանխարգելման «դաշնակիցն» է. որտեղ օրենքը չի պատասխանում «ինչ հիմքով» և «ինչ ծավալով» հարցերին, այնտեղ պատասխանը տալիս է պաշտոնատար անձը, և հենց այդ պատասխանն էլ կարող է դառնալ կոռուպցիոն գործարքի առարկա: Համաչափության սկզբունքը, ընդհակառակը, զսպում է հակակոռուպցիոն միջոցները՝ պահանջելով, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը, հայտարարագրման պարտականությունը կամ բարեվարքության ստուգումները չգերազանցեն իրենց նպատակին հասնելու համար անհրաժեշտ չափը:

Սահմանափակող սկզբունքների շարքին է դասվում նաև իրավահավասարությունը (28-րդ հոդված) և խտրականության արգելքը (29-րդ հոդված), այդ թվում՝ «գույքային վիճակից» և «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից» կախված: Կոռուպցիան ինքնին խտրականության ձև է, քանի որ հանրային ծառայությունների հասանելիությունը պայմանավորում է կաշառք տալու կարողությամբ կամ անձնական կապերով, ուստի այս հոդվածները ոչ միայն զսպում, այլև հիմնավորում են կանխարգելումը: Միաժամանակ հակակոռուպցիոն գործիքները պետք է կիրառվեն ընդհանուր և կանխատեսելի հիմունքներով և չեն կարող ընտրողաբար ուղղվել առանձին անձանց, օրինակ՝ քաղաքական ընդդիմության դեմ. հակառակ դեպքում դրանք վերածվում են ընտրողական ճնշման միջոցի, ինչն ինքնին իշխանության՝ իր նպատակից շեղման դրսևորում է:

Այստեղից բխում է կարևոր եզրահանգում. հակակոռուպցիոն միջոցառումների սահմանադրականությունը գնահատվում է չորս սկզբունքի միաժամանակյա ստուգմամբ՝ օրինականություն (6-րդ հոդված), համաչափություն (78-րդ հոդված), որոշակիություն (79-րդ հոդված) և հավասարություն (28-րդ և 29-րդ հոդվածներ): Այս չորս սկզբունքները կազմում են այն սահմանադրական «զտիչը», որով պետք է անցնի յուրաքանչյուր հակակոռուպցիոն սահմանափակում, և միջոցը, որը չի անցնում դրանցից որևէ մեկով, նույնիսկ բարձր արդյունավետության դեպքում սահմանադրորեն իրավաչափ չէ:

Իրավական և անհամատեղելիության հանգույցները: 49-րդ հոդվածը երաշխավորում է «ընդհանուր հիմունքներով» հանրային ծառայության անցնելու իրավունքը, 50-րդ հոդվածը՝ վարչական մարմինների կողմից գործերի «անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում» քննության և միջամտող ակտի ընդունումից առաջ լսված լինելու իրավունքը, իսկ 51-րդ հոդվածը՝ պետական մարմինների գործունեության մասին տեղեկություններ ստանալու իրավունքը: Այս հոդվածները

կազմում են կանխարգելման անհատակենտրոն շերտը, որը գործում է ոչ թե պատժի, այլ հսկողության ու մրցակցության միջոցով: «Ընդհանուր հիմունքներով» արտահայտությունը հակադրվում է նեպոտիզմին և պաշտոնների «վաճառքին», անաչառության պահանջը շահերի բախման արգելքի սահմանադրական արտահայտությունն է, իսկ 51-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է պաշտոնատար անձանց պատասխանատվություն տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար: Այսպիսով՝ գաղտնիությունը, որը կոռուպցիայի բնական միջավայրն է, Սահմանադրությամբ դիտարկվում է որպես բացառություն, իսկ բացառությունը՝ որպես կանոն: Առանձին նշանակություն ունի 46-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ կուսակցությունները տարեկան հաշվետվություններ են հրապարակում իրենց ֆինանսական միջոցների աղբյուրների, ծախսերի և գույքի մասին: Սա Սահմանադրության թերևս միակ ուղղակի ֆինանսական թափանցիկության նորմն է, սակայն նմանատիպ պահանջ չի նախատեսված ո՛չ պաշտոնատար անձանց, ո՛չ էլ ընտրությունների թեկնածուների համար:

Սահմանադրության 95-րդ հոդվածի համաձայն՝

> *«Պատգամավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից»:*

Նույն պահանջները 148-րդ հոդվածի 2-րդ մասով տարածվում են Կառավարության անդամի վրա, իսկ դատավորի համար նույնաբովանդակ պահանջ է սահմանում 164-րդ հոդվածի 6-րդ մասը: Անհամատեղելիության կանոնները շահերի բախման կանխարգելման սահմանադրական նախատիպն են. պաշտոնատար անձը չպետք է միաժամանակ լինի և՛ հանրային որոշում կայացնող, և՛ դրա մասնավոր շահառու: Սակայն այս կանոնները վերաբերում են միայն բարձրագույն պաշտոնատար անձանց երեք խմբի և չեն կարգավորում պաշտոնավարումից հետո ընկած ժամանակահատվածը: Հենց այս բացն է նշել ԳՐԵԿՕ-ն Հայաստանի վերաբերյալ հինգերորդ գնահատման փուլի զեկույցում՝ արձանագրելով, որ պաշտոնավարումից հետո գործունեության կանոնները թերի են թե՛ շրջանակի, թե՛ մոնիտորինգի և կիրառման առումով[1]:

Կազմակերպական հանգույցը: 4-րդ հոդվածն ամրագրում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, որը կոնկրետացվում է Ազգային

[1]Group of States against Corruption (GRECO). Fifth Evaluation Round. Preventing Corruption and Promoting Integrity in Top Executive Functions and Law Enforcement Agencies. Evaluation Report: Armenia, GrecoEval5Rep(2024)ARM, հրապարակվել է 18.04.2024, 22 հանձնարարական:

ժողովի վերահսկողական (88-րդ հոդված), Հաշվեքննիչ պալատի (198-րդ հոդված) և Մարդու իրավունքների պաշտպանի (191-րդ հոդված) նորմերով: Առանձին նշանակություն ունի 163-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ «Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ»: Հենց այս դրույթի վրա է հենվում Հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը, որը մնում է ընդհանուր դատական համակարգի մաս և օգտվում է 164-րդ հոդվածով սահմանված անկախության բոլոր երաշխիքներից: Սակայն կոռուպցիայի կանխարգելման մարմնի համար նմանատիպ սահմանադրական կարգավիճակ նախատեսված չէ: Հետևաբար Սահմանադրությունը հակակոռուպցիոն համակարգի պատժողական (դատական) օղակին ավելի ուժեղ պաշտպանություն է տալիս, քան կանխարգելիչ օղակին, ինչը հակասում է միջազգային իրավունքում ընդունված՝ կանխարգելման առաջնայնության մոտեցմանը:

3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՀԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Սահմանադրական հիմունքները և սահմանադրահիրավական մեխանիզմները նույնական հասկացություններ չեն: Հիմունքները նորմատիվ նախադրյալներ են, որոնք սահմանում են, թե ինչ պետք է ապահովվի, իսկ մեխանիզմներն այն կառուցակարգերն են՝ մարմիններ, ընթացակարգեր, վերահսկողական լիազորություններ, որոնց միջոցով այդ նախադրյալները փաստացի գործում են: Մեխանիզմները կարելի է բաժանել երեք խմբի՝ ինստիտուցիոնալ, վերահսկողական և հանրային մասնակցության: Կլիտգարդի բանաձևի համաձայն՝ կոռուպցիան հավասար է մենաշնորհին գումարած հայեցողությունը՝ հանած հաշվետվողականությունը (C = M + D – A): Ինստիտուցիոնալ մեխանիզմները գործում են մենաշնորհի վրա՝ իշխանությունը բաշխելով տարբեր կենտրոնների միջև, իրավաստեղծ և սահմանափակող նորմերը՝ հայեցողության վրա, իսկ վերահսկողական և հանրային մեխանիզմները՝ հաշվետվողականության վրա: Հետևաբար ՀՀ Սահմանադրությունը ձևականորեն ծածկում է բանաձևի բոլոր երեք փոփոխականները, և խնդիրը ոչ թե ծածկույթի բացակայությունն է, այլ առանձին օղակների թուլությունը:

Ինստիտուցիոնալ մեխանիզմները: Իշխանությունների բաժանման սկզբունքը լրացնում են 164-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ «Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան», 162-րդ հոդվածի 2-րդ մասը («Արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է»), ինչպես նաև տեղական ինքնակառավարումը երաշխավորող 9-րդ և 179-րդ հոդվածները: Այս նորմերի հակակոռուպցիոն գործառույթը կառուցվածքային է. որքան շատ են միմյանց զսպող կենտրոնները, այնքան փոքր է մեկ կետում կենտրոնացած

մենաշնորհային լիազորությունը, և այնքան դժվար է «գնել» որոշումը, որը պահանջում է մի քանի անկախ դերակատարների համաձայնություն: Դատական անկախությունն առանձնահատուկ դեր ունի, քանի որ ոչ անկախ դատարանն ինքն է դառնում կոռուպցիայի պաշտպանության գործիք: Միաժամանակ ապակենտրոնացումը ստեղծում է համայնքային մակարդակի կոռուպցիայի ռիսկ, որտեղ հանրային վերահսկողությունը հաճախ ավելի թույլ է, ուստի լիազորությունների բաշխումն ինքնին բավարար չէ և պահանջում է վերահսկողական օղակի լրացում:

Վերահսկողական մեխանիզմները: ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է վերահսկողության հինգ ուղի՝ խորհրդարանական (88-րդ հոդվածի 3-րդ մաս), ֆինանսական, որն իրականացնում է «անկախ պետական մարմին» հանդիսացող Հաշվեքննիչ պալատը (198-րդ հոդված), դատախազական (176-րդ հոդվածի 2-րդ մաս), դատական (162–164-րդ հոդվածներ) և սահմանադրական (168-րդ հոդված): Այս ուղիների ընդհանուր հատկանիշն այն է, որ դրանք հետագա (ex post) վերահսկողության ձևեր են, այսինքն՝ իրականացվում են արդեն կատարված գործունեության, ծախսված միջոցների, կատարված արարքի կամ ընդունված ակտի նկատմամբ: Նույնիսկ նախնական սահմանադրական վերահսկողությունը (168-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետեր) սահմանափակված է Սահմանադրության փոփոխությունների, հանրաքվեի դրվող ակտերի նախագծերի և միջազգային պայմանագրերի շրջանակով: Արդյունքում ՀՀ Սահմանադրության վերահսկողական համակարգում բացակայում է օրենքների և այլ նորմատիվ ակտերի նախնական վերահսկողության օղակը՝ մեխանիզմ, որը կվերհաներ իրավական նորմի կոռուպցիոն ռիսկը դեռևս դրա ընդունումից առաջ: 6-րդ հոդվածի 2-րդ մասը ձևակերպում է լիազորող նորմի որոշակիության պահանջ, սակայն չի նախատեսում դրա ստուգման ընթացակարգ և պատասխանատու սուբյեկտ, ուստի անորոշ նորմը կարող է գործել տարիներ շարունակ, մինչև Սահմանադրական դատարանը այն ճանաչի հակասահմանադրական: Հենց այս բացն է լրացնում հակակոռուպցիոն փորձաքննության ինստիտուտը:

Հանրային մասնակցության մեխանիզմները: Սահմանադրական իրավագիտության մեջ հանրային մասնակցությունը հաճախ դիտարկվում է որպես լրացուցիչ մեխանիզմ: Այս մոտեցումը վերանայման կարիք ունի: Ավանդական «տնօրինող–գործակալ» (principal–agent) մոդելը ենթադրում է բարեխիղճ տնօրինողի առկայություն, որը շահագրգռված է վերահսկել պաշտոնյային: Ա. Պերսոնը, Բ. Ռոթստեյնը և Յ. Տեորելը ցույց են տվել, որ համակարգային կոռուպցիայի պայմաններում այդ ենթադրությունը չի գործում, քանի որ վերահսկող մարմիններն իրենք են ներգրավված կոռուպցիայի մեջ, և դրա հաղթահարումը կախված է

հասարակության մեջ փոխադարձ ակնկալիքների փոփոխությունից[1]: Այստեղից բխում է սահմանադրաիրավական հետևանք. եթե պետական վերահսկողության բոլոր օղակները կարող են չեզոքացվել, ապա մնում է միակ արտաքին վերահսկողը, որը չի կարող ամբողջությամբ «գնվել»՝ հասարակությունը: Հետևաբար հանրային վերահսկողությունը կառուցվածքային անհրաժեշտ մեխանիզմ է, որի սահմանադրական երաշխավորումն անհրաժեշտ է, քանի որ օրենքով սահմանված մասնակցության ձևերը կարող են սահմանափակվել հենց այն մեծամասնության կողմից, որի գործունեությունը ենթակա է վերահսկողության:

Միջազգային իրավունքն այս մոտեցումն արդեն ամրագրել է: Կոնվենցիայի 13-րդ հոդվածի 1-ին մասը պետություններից պահանջում է խթանել քաղաքացիական հասարակության «ակտիվ մասնակցությունը կոռուպցիայի կանխարգելմանը և դրա դեմ պայքարին», այդ թվում՝ որոշումների կայացման գործընթացների թափանցիկության բարձրացման և դրանցում հանրության ներդրման խթանման («ա» կետ), տեղեկատվության նկատմամբ արդյունավետ մատչելիության («բ» կետ) և կոռուպցիայի վերաբերյալ տեղեկություններ փնտրելու, ստանալու, հրապարակելու և տարածելու ազատության հարգման, խթանման և պաշտպանության («դ» կետ) միջոցով[2]: Հասարակությունն այստեղ դիտարկվում է որպես կանխարգելման սուբյեկտ, իսկ «պաշտպանության» պահանջը պետության վրա դնում է պոզիտիվ պարտականություն՝ պաշտպանելու ազդարարողներին, լրագրողներին և քաղաքացիական ակտիվիստներին:

ՀՀ Սահմանադրությունն այս ուղղությունների համար ունի համապատասխան նորմեր: 45-րդ հոդվածը երաշխավորում է միավորումների ազատությունը, և դրա 4-րդ մասի համաձայն՝ միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել «միայն դատարանի որոշմամբ», ինչը կարևոր է հակակոռուպցիոն ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների համար: 51-րդ հոդվածը կոնկրետացվում է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով[3], իսկ ընթացակարգային մակարդակում գործում է իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման e-draft.am կայքը: Ձևականորեն, հետևաբար, մասնակցության շղթան ամբողջական է:

Գործնականում, սակայն, պատկերն այլ է: 2023–2026 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի հանրային քննարկման ընթացքում հասարակական կազմակերպության ներկայացուցիչը հիշեցրել էր, որ կարգավորման ազդեցության

[1] **Persson A., Rothstein B., Teorell J.** Why Anticorruption Reforms Fail – Systemic Corruption as a Collective Action Problem // Governance. 2013. Vol. 26, No. 3. P. 449–471.

[2] Կոռուպցիայի դեմ Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա, հոդված 13, մաս 1, կետեր «a»–«d»: Մեջբերումը՝ հեղինակի թարգմանությամբ:

[3] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-11-Ն, ընդունվել է 23.09.2003: URL՝ https://www.arlis.am/hy/acts/1372

գնահատման համակարգը հնարավորություն չի տալիս վերհանել իրավական ակտերի կոռուպցիոն ռիսկերը, սակայն ամփոփաթերթում արձանագրվել է, որ նա իր առաջարկություններին պատասխան չի ստացել[1]: Այս դեպքը բացահայտում է կառուցվածքային բաց. 50-րդ հոդվածի 3-րդ մասով երաշխավորված լսված լինելու իրավունքը վերաբերում է միայն «անձի համար միջամտող անհատական ակտին» և չի տարածվում նորմատիվ ակտերի ընդունման վրա, իսկ հանրային առաջարկությանը պատճառաբանված պատասխան ստանալու իրավունք Սահմանադրությունը չի ամրագրում: Առանց նման պարտականության հանրային քննարկումը մնում է տեղեկացման, այլ ոչ թե վերահսկողության ձև:

4. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՆՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ

ՀՀ Սահմանադրության տեքստում բացակայում են «կոռուպցիա» եզրույթը, պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման սահմանադրական հիմքը և հակակոռուպցիոն որևէ մարմնի սահմանադրական ամրագրումը: Այս լռությունն ինքնին թերություն չէ, քանի որ կանխարգելման սահմանադրական հիմքը կարող է ձևավորվել ընդհանուր սկզբունքների համակցությամբ: Խնդիրն առաջանում է ինստիտուցիոնալ անհամաչափության մեջ:

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է ինքնավար և անկախ մարմինների որոշակի շրջանակ՝ Մարդու իրավունքների պաշտպան, Կենտրոնական ընտրական հանձնաժողով, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով, Հաշվեքննիչ պալատ, Կենտրոնական բանկ, որոնց կարգավիճակը և անկախության երաշխիքները չեն կարող փոփոխվել սովորական օրենքով: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն այդ շարքում չէ. այն ստեղծվել է 2017 թվականի հունիսի 9-ին ընդունված օրենքով[2] որպես ինքնավար պետական մարմին, և դրա ամբողջ կառուցվածքը, ներառյալ ինքնավարության կարգավիճակը, կարող է փոփոխվել Ազգային ժողովի պարզ մեծամասնությամբ: Նույնը վերաբերում է 2021 թվականի մարտի 24-ի օրենքով[3] ստեղծված Հակակոռուպցիոն կոմիտեին, որի անկախության և քաղաքական չեզոքության երաշխիքները ևս սահմանադրական պաշտպանություն չունեն: Ստացվում է, որ լրատվական ոլորտի կարգավորիչ մարմինն ունի սահմանադրական կարգավիճակ, իսկ կոռուպցիայի կանխարգելմամբ

[1] «Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023–2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հանրային քննարկման ամփոփաթերթ, կետեր 11 և 15: URL՝ https://www.e-draft.am/projects/5986/digest

[2] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 09.06.2017: URL՝ https://www.arlis.am/hy/acts/114355

[3] «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 24.03.2021: URL՝ https://www.arlis.am/hy/acts/151799

զբաղվող մարմինը, որն անմիջականորեն առնչվում է ժողովրդաիշխանության և օրինականության սկզբունքներին, չունի: Սա խնդրահարույց է նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի տեսանկյունից. երբ մարմնի կարգավիճակը կարող է փոփոխվել խորհրդարանական պարզ մեծամասնությամբ, անկախության երաշխիքը դառնում է ձևական:

Սահմանադրականացման հարցը, սակայն, միակողմանի չէ: Մասնագիտացված հակակոռուպցիոն մարմիններն իրենց ձեռքում կենտրոնացնում են զգալի լիազորություններ, ինչն ինքնին մենաշնորհային ռիսկ է ստեղծում Կլիտգարդի բանաձևի առաջին փոփոխականի իմաստով. կոռուպցիայի դեմ ստեղծված մարմինը կարող է դառնալ իշխանության չարաշահման նոր կենտրոն կամ քաղաքական մրցակիցների դեմ ընտրողաբար կիրառվող գործիք: Հետևաբար սահմանադրական ամրագրումը միաժամանակ երաշխիք է թե՛ մարմնի համար, թե՛ մարմնի դեմ. այն մարմնի լիազորությունների սահմանները դարձնում է սահմանադրական վերահսկողության առարկա (այդ թվում՝ 168-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված՝ լիազորությունների վերաբերյալ վեճերի լուծման կարգով) և նրա գործունեությունն ուղղակիորեն կապում է 78-րդ և 79-րդ հոդվածների հետ:

Օրենսդրական մակարդակի խոցելիությունը վերացական վտանգ չէ: 2020 թվականի հոկտեմբերի 27-ին Ուկրաինայի Սահմանադրական դատարանը թիվ 13-p/2020 որոշմամբ հակասահմանադրական ճանաչեց էլեկտրոնային հայտարարագրման համակարգի հիմնական դրույթները և կեղծ հայտարարագրման համար պատասխանատվությունը[1], ինչի արդյունքում փաստացի կազմալուծվեց երկրի հակակոռուպցիոն կանխարգելիչ համակարգը և առաջացավ սահմանադրական ճգնաժամ: Այս փորձը ցույց է տալիս, որ ուղղակի սահմանադրական խարիսխ չունեցող հակակոռուպցիոն համակարգը խոցելի է, քանի որ սահմանադրական վերահսկողության ընթացքում դրա իրավաչափությունը գնահատվում է բացառապես անհատական իրավունքների լույսի ներքո՝ առանց հակակշռող, ուղղակիորեն ամրագրված սահմանադրական արժեքի:

Հայաստանում սահմանադրական վերահսկողությունն այս ոլորտում գործել է առավել հավասարակշռված: 2025 թվականի ապրիլի 16-ին ՀՀ Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1776 որոշմամբ, Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա, քննել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի սահմանադրականության հարցը[2]:

[1] Рішення Конституційного Суду України від 27.10.2020 № 13-p/2020. URL՝ https://zakon.rada.gov.ua/go/v013p710-20

[2] ՀՀ Սահմանադրական դատարանի 16.04.2025 թվականի ՍԴՈ-1776 որոշումը՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով: URL՝ https://www.concourt.am

Դատարանն արձանագրել է, որ գույքի բռնագանձման միջոցով սեփականության իրավունքին միջամտությամբ օրենսդրի հետապնդած նպատակներն են «կոռուպցիայի դեմ պայքարը» և «հանցավորության դեմ պայքարը» (կետ 101), ընդ որում՝ կոռուպցիայի դեմ պայքարը «ոչ միայն պետք է արդյունավետորեն իրականացվի, այլ պետք է համոզիչ կերպով տեսանելի լինի նաև ողջ հանրության համար» (կետ 108): Միաժամանակ, եզրափակիչ մասում Դատարանը օրենքի վիճարկվող դրույթները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող այն մեկնաբանությամբ, որ բռնագանձման ենթակա է այն գույքը, «որը ձեռք է բերվել համապատասխան պաշտոնատար անձի՝ պաշտոնն ստանձնելու պահից հետո» (եզրափակիչ մասի 1-ին կետ), իսկ հանցավորության դեմ պայքարի հիմքերով՝ այն գույքը, «որը կապ ունի համապատասխան հանցանքի հետ» (2-րդ կետ): Վաղեմության հարցում Դատարանը գտել է, որ «օրենսդիրը պարտավոր է համաչափ և կանխատեսելի կարգավորումներով» որոշակիացնել ընթացակարգերի կիրառման ժամանակահատվածը՝ վաղեմություն սահմանելու նպատակով (կետ 170): Համանման դիրքորոշում է արտահայտել նաև Վենետիկի հանձնաժողովը, որի amicus curiae եզրակացության մեջ ընդգծվել է, որ բռնագանձման ժամկետային շրջանակը պետք է լինի ողջամիտ և կիրառվի հավասարապես բոլոր դեպքերում[1]:

Այսպիսով՝ Դատարանը միաժամանակ հաստատել է հակակոռուպցիոն նպատակի սահմանադրական լեգիտիմությունը և կիրառել համաչափության (պաշտոնավարման ժամանակահատվածով և հանցանքի հետ կապով սահմանափակում) ու որոշակիության (վաղեմության պահանջ) սկզբունքները, ինչը գործնականում համընկնում է վերը նկարագրված սահմանադրական «զտիչի» տրամաբանությանը: Գործը ցույց է տալիս նաև, որ որքան հստակ է սահմանադրական խարիսխը, այնքան փոքր է հակակոռուպցիոն համակարգի կախվածությունը քաղաքական կոնյունկտուրայից և սահմանադրական վերահսկողության արդյունքների անկանխատեսելիությունից:

5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՆՈՐՄԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ

Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ հակակոռուպցիոն նորմերի սահմանադրականացումը գնալով ընդլայնվում է, հատկապես համակարգային կոռուպցիայի փորձով անցած երկրներում: Համեմատության համար ընտրվել են Թաիլանդի, Քենիայի, Բութանի և Բրազիլիայի սահմանադրությունները, քանի որ դրանք պատկանում են տարբեր իրավական ավանդույթների ու տարածաշրջանների, ընդունվել են կոռուպցիայի հաղթահարման հրամայականի պայմաններում և միասին

[1] European Commission for Democracy through Law (Venice Commission). Armenia – Amicus Curiae Brief on Certain Questions Related to the Law on Confiscation of Property of Illicit Origin, CDL-AD(2022)048: Տե՛ս նաև՝ Information on the Follow-up, CDL-PI(2025)008, 16.06.2025:

ներկայացնում են սահմանադրականացման բոլոր հիմնական տարբերակները: Ընտրության չափանիշը, հետևաբար, տիպաբանական ներկայացուցչականությունն է, այլ ոչ թե աշխարհագրական կամ իրավահամակարգային մերձությունը: Դրա հիման վրա կարելի է առանձնացնել երեք հիմնական մոդել:

Առաջին մոդելը՝ պարտականության սահմանադրականացում: Սահմանադրությունը կոռուպցիայի կանխարգելումը ձևակերպում է որպես պետության պարտականություն՝ առանց առանձին մարմին ստեղծելու: Օրինակ է Թաիլանդի 2017 թվականի Սահմանադրության 63-րդ բաժինը, որի համաձայն՝ պետությունը «տրամադրում է արդյունավետ միջոցներ և մեխանիզմներ՝ անազնվությունն ու չարաշահումները խստորեն և արդյունավետ կերպով կանխելու և վերացնելու համար», ներառյալ մարդկանց մասնակցությունը խրախուսող մեխանիզմներ[1]: Մոդելը կանխարգելումն ամրագրում է որպես սահմանադրական վերահսկողության ընթացքում գնահատելի պարտականություն և պահանջում է սահմանադրական միջամտության նվազագույն աստիճան:

Երկրորդ մոդելը՝ վարքագծի ստանդարտների սահմանադրականացում: Դասական օրինակ է Քենիայի 2010 թվականի Սահմանադրության «Ղեկավարում և բարեվարքություն» վեցերորդ գլուխը (73–80-րդ հոդվածներ): 73-րդ հոդվածի համաձայն՝ պետական պաշտոնատար անձին վերապահված իշխանությունը «հանրային վստահություն է» և նրա վրա դնում է «ժողովրդին ծառայելու պատասխանատվություն, այլ ոչ թե նրանց կառավարելու իշխանություն»: 75-րդ հոդվածը պահանջում է խուսափել անձնական շահերի և պաշտոնական պարտականությունների միջև ցանկացած բախումից, իսկ 76-րդ հոդվածը սահմանում է, որ պաշտոնական առիթով տրված նվերը «նվեր կամ նվիրատվություն է Հանրապետությանը»[2]: «Հանրային վստահության» կատեգորիան համահունչ է ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի վերևում առաջարկված ընթերցմանը, սակայն Քենիայում այն ձևակերպված է ուղղակիորեն: Քենիական մոդելի առանձնահատկությունը 79-րդ հոդվածն է, որը խորհրդարանին պարտավորեցնում է օրենքով ստեղծել անկախ էթիկայի և հակակոռուպցիոն հանձնաժողով՝ սահմանադրական հանձնաժողովների կարգավիճակով: Մարմինն ստեղծվում է օրենքով, բայց նրա կարգավիճակի և անկախության հիմքը սահմանադրական է, ինչը թույլ է տալիս պահպանել օրենսդրական ճկունությունը՝ միաժամանակ ապահովելով սահմանադրական կայունություն:

Երրորդ մոդելը՝ մարմնի ուղղակի սահմանադրականացում: Բութանի 2008 թվականի Սահմանադրության 27-րդ հոդվածն ինքն է ստեղծում Հակակոռուպցիոն

[1] Constitution of the Kingdom of Thailand, B.E. 2560 (2017), Section 63. Մեջբերումը՝ պաշտոնական անգլերեն թարգմանությունից, հեղինակի թարգմանությամբ:

[2] Constitution of Kenya, 2010, Chapter Six «Leadership and Integrity», Articles 73–80. Մեջբերումները՝ հեղինակի թարգմանությամբ:

հանձնաժողովը՝ որպես անկախ մարմին[1], որի անդամներին նշանակում է թագավորը վարչապետի, գլխավոր դատավորի, Ազգային ասամբլեայի խոսնակի, Ազգային խորհրդի նախագահի և ընդդիմադիր կուսակցության առաջնորդի կողմից համատեղ առաջարկված ցանկից: Նշանակման գործընթացում իշխանության բոլոր ճյուղերի և ընդդիմության ներգրավումը մարմնի կազմավորումը դուրս է բերում մեկ քաղաքական ուժի վերահսկողությունից, սակայն մոդելի թերությունը ճկունության նվազումն է:

Առանձին հիշատակման է արժանի Բրազիլիայի 1988 թվականի Սահմանադրության 37-րդ հոդվածը, որը հանրային կառավարումը ենթարկում է «օրինականության, անաչառության, բարոյականության, հրապարակայնության և արդյունավետության սկզբունքներին», իսկ դրա 4-րդ պարագրաֆը վարչական անբարեխղճության համար նախատեսում է քաղաքական իրավունքների կասեցում, պաշտոնի կորուստ, գույքի սառեցում և վնասի հատուցում[2]: «Բարոյականությունը» (moralidade) այստեղ դառնում է սահմանադրաիրավական կատեգորիա, իսկ «անաչառությունը» (impessoalidade)՝ շահերի բախման և ֆավորիտիզմի սահմանադրական արգելք: Բրազիլական մոդելը համատեղում է պարտականության և վարքագծի ստանդարտների մոդելների տարրերը:

Այս համեմատությունից բխում է, որ հակակոռուպցիոն նորմերի սահմանադրականացումը պարտադիր չի նշանակում նոր մարմնի ստեղծում կամ իշխանության կառուցվածքի վերանայում: Հնարավոր են ավելի զուսպ լուծումներ՝ պետության պարտականության ձևակերպում, պաշտոնյայի վարքագծի հիմնական ստանդարտների ամրագրում կամ օրենքով ստեղծվող մարմնի կարգավիճակի սահմանադրական երաշխավորում, որոնց ընտրությունը պետք է կատարվի՝ հաշվի առնելով տվյալ երկրի սահմանադրական ավանդույթը:

6. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Բարձրացված հարցն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական արդիականություն: ՀՀ վարչապետի 2022 թվականի հունվարի 27-ի N 111-Ա որոշմամբ ձևավորված Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը[3] շարունակում է աշխատանքը նոր Սահմանադրության տեքստի ուղղությամբ, և 2026 թվականի

[1] The Constitution of the Kingdom of Bhutan, 2008, Article 27. Մեջբերումը՝ հեղինակի թարգմանությամբ:

[2] Constituição da República Federativa do Brasil de 1988, art. 37, § 4. Մեջբերումները՝ հեղինակի թարգմանությամբ:

[3] ՀՀ վարչապետի 27.01.2022 թվականի N 111-Ա որոշում՝ Սահմանադրական բարեփոխումների խորհուրդ ձևավորելու, խորհրդի անհատական կազմը և գործունեության կարգը հաստատելու մասին: URL՝ https://e-gov.am/decrees/item/24389

փետրվարին անցկացրել է հանրային քննարկումներ հասարակական կազմակերպությունների ու բուհերի ներկայացուցիչների հետ[1]: Վերլուծության արդյունքում բացահայտված բացերը թույլ են տալիս ձևակերպել առաջարկությունների երեք խումբ, որոնք դասավորված են ըստ սահմանադրական միջամտության աստիճանի՝ նվազագույնից առավելագույնը:

Առաջին խումբը վերաբերում է արժեքային մակարդակին: Նպատակահարմար է Սահմանադրության առաջին գլխում («Սահմանադրական կարգի հիմունքները») ամրագրել հանրային իշխանության բարեվարքության սկզբունքը, իսկ պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականության համար սահմանել սկզբունքային սահմանադրական հիմք: Սուբյեկտների շրջանակը, հայտարարագրերի բովանդակությունն ու հրապարակայնության աստիճանը կմնան օրենքի կարգավորման ոլորտում՝ 78-րդ և 79-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ:

Թաիլանդական մոդելին մոտ այս լուծումը նոր մարմին չի ստեղծում և չի փոխում իշխանության կառուցվածքը, սակայն բացահայտ է դարձնում այն, ինչ այժմ կարելի է բխեցնել միայն 2-րդ և 6-րդ հոդվածների մեկնաբանությամբ: Ուկրաինական փորձի լույսի ներքո դրա հիմնական արժեքն այն է, որ սահմանադրական վերահսկողության ընթացքում հակակոռուպցիոն միջոցների կողքին դրվում է ինքնուրույն սահմանադրական արժեք, որը կարող է հակակշռել անձնական կյանքի գաղտնիության և սեփականության իրավունքների սահմանափակման վերաբերյալ փաստարկներին:

Երկրորդ խումբը վերաբերում է ինստիտուցիոնալ մակարդակին: Քենիական մոդելին համապատասխան՝ Սահմանադրությունը կարող է սահմանել, որ կոռուպցիայի կանխարգելման ինքնավար մարմինը ստեղծվում է օրենքով, իսկ նրա անկախության հիմնական երաշխիքները՝ անդամների նշանակման կարգը, պաշտոնավարման ժամկետը, պաշտոնից ազատման սպառիչ հիմքերը և ֆինանսական ինքնուրույնությունը, ամրագրվում են Սահմանադրությամբ: Այս լուծումը կվերացնի ինստիտուցիոնալ անհամաչափությունը, կհամապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին և միաժամանակ մարմնի լիազորությունները կդնի սահմանադրական վերահսկողության ներքո՝ թույլ չտալով, որ այն ինքը դառնա մենաշնորհային ռիսկի աղբյուր:

Երրորդ խումբը վերաբերում է նորմաստեղծ գործընթացին և ուղղված է նախնական վերահսկողության բացի լրացմանը: Այն ներառում է երկու փոխլրացնող տարր՝ 6-րդ հոդվածում կամ նորմատիվ իրավական ակտերին վերաբերող կարգավորումներում իրավական ակտերի նախագծերի կոռուպցիոն ռիսկերի

[1] Սահմանադրական բարեփոխումների խորհրդի արտագնա նիստից առաջ տեղի է ունեցել քննարկում ՀԿ-ների և բուհերի ներկայացուցիչների հետ // «Առավոտ», 25.02.2026: URL՝ https://www.aravot.am/2026/02/25/1540883/

գնահատման պահանջի ամրագրումը և 50-րդ հոդվածով երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքի լրացումը հանրային քննարկման ընթացքում ներկայացված առաջարկությանը պատճառաբանված պատասխան ստանալու իրավունքով: Առաջին տարրը 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշակիության պահանջին տալիս է ընթացակարգային դրսևորում և պատասխանատու սուբյեկտ, երկրորդը՝ արդեն գործող հանրային քննարկման մեխանիզմը (e-draft.am) ձևականից վերածում է գործունի և ծառայում է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի նպատակին: Միասին դրանք թե՛ փորձագիտական, թե՛ հանրային վերահսկողությունը տեղափոխում են նորմի ընդունմանը նախորդող փուլ:

Առաջարկությունները փոխբացառող չեն և կարող են իրականացվել ինչպես առանձին, այնպես էլ համակցված: Նվազագույն տարբերակն արժեքային մակարդակի ամրագրումն է, որն արդեն իսկ զգալիորեն կուժեղացներ կանխարգելման սահմանադրական խարիսխը՝ առանց սահմանադրական կառուցվածքի էական վերանայման, իսկ առավել ամբողջական տարբերակը երեք խմբերի համակցումն է, որը միաժամանակ կլրացնի արժեքային, ինստիտուցիոնալ և նախնական վերահսկողության բացերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտությունը թույլ է տալիս անել հետևյալ եզրահանգումները: Կոռուպցիայի կանխարգելման սահմանադրական հիմունքները Սահմանադրությամբ ամրագրված արժեքների, սկզբունքների, ինստիտուտների և իրավունքների համակարգն են, որը միաժամանակ հիմնավորում է կանխարգելման պետական պարտականությունը և սահմանում դրա իրականացման սահմանները. Սահմանադրությունն այս ոլորտում և՛ լիազորում է, և՛ զսպում: Այդ հիմունքները միատարր չեն և կարող են ներկայացվել ութ բաղադրիչով, որոնցից արժեքային-նպատակային և իրավաստեղծ բաղադրիչները նորմատիվ նախադրյալներ են, իսկ վերահսկողական և հանրային մասնակցության բաղադրիչները՝ գործող մեխանիզմներ:

ՀՀ Սահմանադրությունը «կոռուպցիա» եզրույթը չի օգտագործում, սակայն ունի զգալի հակակոռուպցիոն ներուժ, որը բացահայտվում է ոչ թե տառացի, այլ համակարգային մեկնաբանությամբ: Մասնավորապես՝ 2-րդ հոդվածում ամրագրված իշխանության յուրացման արգելքը կարող է ընթերցվել որպես կոռուպցիայի՝ իբրև իշխանության թաքնված և մասնատված յուրացման արգելք, իսկ 6-րդ հոդվածը, սահմանափակելով պաշտոնատար անձի հայեցողությունը և պահանջելով լիազորող նորմի որոշակիություն, իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության սահմանադրական խարիսխն է: Սահմանադրաիրավական մեխանիզմները Կլիտգարդի բանաձևի տրամաբանությամբ ներգործում են

մենաշնորհի, հայեցողության և հաշվետվողականության վրա, իսկ հակակոռուպցիոն միջոցների սահմանադրականությունը գնահատվում է օրինականության, համաչափության, որոշակիության և հավասարության սկզբունքների միաժամանակյա ստուգմամբ, ինչի հետ համահունչ է ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1776 որոշումը:

Միաժամանակ բացահայտվել են երեք կառուցվածքային բացեր: Նախ՝ վերահսկողական համակարգի բոլոր հինգ ուղիներն իրականացնում են միայն հետագա վերահսկողություն, և բացակայում է նորմի կոռուպցիոն ռիսկը մինչև դրա ընդունումը վերհանող նախնական վերահսկողության օղակը: Ապա՝ հանրային մասնակցության ձևական շղթան ամբողջական է, սակայն բացակայում է հանրային առաջարկությանը պատճառաբանված պատասխան ստանալու իրավունքը, մինչդեռ համակարգային կոռուպցիայի պայմաններում հասարակությունը մնում է միակ արտաքին վերահսկողը: Վերջապես՝ առկա է ինստիտուցիոնալ անհամաչափություն. կոռուպցիայի կանխարգելմամբ զբաղվող մարմիններն ունեն միայն օրենսդրական կարգավիճակ, մինչդեռ ավելի նեղ ոլորտներ կարգավորող մարմիններն ամրագրված են Սահմանադրությամբ, ընդ որում՝ սահմանադրական ամրագրումը երաշխիք է թե՛ մարմնի համար, թե՛ մարմնի դեմ:

Համեմատական փորձը ցույց է տալիս սահմանադրականացման երեք մոդել՝ պարտականության (Թաիլանդ), վարքագծի ստանդարտների (Քենիա, Բրազիլիա) և մարմնի ուղղակի ամրագրման (Բութան): Հայաստանի համար առավել կիրառելի է քենիական խառը մոդելը, որը համատեղում է սահմանադրական կարգավիճակը և օրենսդրական ճկունությունը: Ընթացող սահմանադրական բարեփոխումների համատեքստում առաջարկվող լուծումները՝ բարեվարքության սկզբունքի և հայտարարագրման պարտականության ամրագրումը, կանխարգելիչ մարմնի կարգավիճակի սահմանադրական երաշխավորումը և նորմաստեղծ գործընթացում նախնական վերահսկողության ներդրումը, կարող են ապահովել կոռուպցիայի կանխարգելման առավել կայուն և կանխատեսելի սահմանադրական հենք:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

Նորմատիվ իրավական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով), ընդունվել է 06.12.2015, ուժի մեջ է մտել 22.12.2015: URL՝ https://www.arlis.am/hy/acts/143723/latest

2. Կոռուպցիայի դեմ Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա, ընդունվել է 31.10.2003, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 07.04.2007:

3. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-11-Ն, ընդունվել է 23.09.2003, ուժի մեջ է մտել 15.11.2003, ՀՀՊՏ 2003.11.05/55(290): URL՝ https://www.arlis.am/hy/acts/1372

4. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 09.06.2017, ուժի մեջ է մտել Ազգային ժողովի կողմից Հանձնաժողովի առնվազն երեք անդամի նշանակումից հետո: URL՝ https://www.arlis.am/hy/acts/114355

5. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 24.03.2021, ուժի մեջ է մտել օրենքի 48-րդ հոդվածի 12-րդ մասով նախատեսված պայմանի վրա հասնելուն հաջորդող օրը: URL՝ https://www.arlis.am/hy/acts/151799

6. ՀՀ վարչապետի 27.01.2022 թվականի «Սահմանադրական բարեփոխումների խորհուրդ ձևավորելու, խորհրդի անհատական կազմը և գործունեության կարգը հաստատելու մասին» N 111-Ա որոշում: URL՝ https://e-gov.am/decrees/item/24389

Դատական ակտեր

7. ՀՀ Սահմանադրական դատարանի 16.04.2025 թվականի ՍԴՈ-1776 որոշում՝ «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով: URL՝ https://www.concourt.am

8. Рішення Конституційного Суду України від 27.10.2020 № 13-р/2020. URL: https://zakon.rada.gov.ua/go/v013p710-20

Օտարերկրյա պետությունների սահմանադրություններ

9. Constitution of the Kingdom of Thailand, B.E. 2560 (2017).

10. Constitution of Kenya, 2010.

11. The Constitution of the Kingdom of Bhutan, 2008.

12. Constituição da República Federativa do Brasil de 1988.

Միջազգային կազմակերպությունների փաստաթղթեր

13. European Commission for Democracy through Law (Venice Commission). Armenia – Amicus Curiae Brief on Certain Questions Related to the Law on Confiscation of Property of Illicit Origin, CDL-AD(2022)048.

14. European Commission for Democracy through Law (Venice Commission). Information on the Follow-up, CDL-PI(2025)008, 16.06.2025.

15. Group of States against Corruption (GRECO). Fifth Evaluation Round. Preventing Corruption and Promoting Integrity in Top Executive Functions and Law Enforcement Agencies. Evaluation Report: Armenia, GrecoEval5Rep(2024)ARM, 18.04.2024.

Գրականություն և այլ աղբյուրներ

16. «Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023–2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հանրային քննարկման ամփոփաթերթ: URL՝ https://www.e-draft.am/projects/5986/digest

17. Սահմանադրական բարեփոխումների խորհրդի արտագնա նիստից առաջ տեղի է ունեցել քննարկում ՀԿ-ների և բուհերի ներկայացուցիչների հետ // «Առավոտ», 25.02.2026: URL՝ https://www.aravot.am/2026/02/25/1540883/

18. Противодействие коррупции: конституционно-правовые подходы: Коллективная монография / Отв. ред. С.А. Авакьян. - М.: Юстицинформ, 2016.

19. Противодействие коррупции как национальный приоритет в практике, науке и образовании: Материалы X и XI Евразийских антикоррупционных форумов / Отв. ред. Т.Я. Хабриева. - М.: ИЗиСП; ИД «Юриспруденция», 2023.

20. **Шевердяев С.Н.** Актуальные задачи для конституционного законодательства в Конвенции ООН против коррупции 2003 г. // Конституционное и муниципальное право. 2025. № 1. - С. 26–29.

21. **Klitgaard R.** Controlling Corruption. Berkeley: University of California Press, 1988.

22. **Persson A., Rothstein B., Teorell J.** Why Anticorruption Reforms Fail – Systemic Corruption as a Collective Action Problem. DOI: 10.1111/j.1468-0491.2012.01604.x // Governance. 2013. Vol. 26, No. 3. P. 449–471.

КОНСТИТУЦИОННЫЕ ОСНОВЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ КОРРУПЦИИ: ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА И ПРАКТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННЫХ РЕФОРМ

Аннотация

В статье исследуются конституционные основы предупреждения коррупции как источник юридической силы и легитимности отраслевых антикоррупционных норм. Цель исследования – раскрыть содержание понятия «конституционные основы предупреждения коррупции», выделить его структурные элементы и оценить достаточность действующего текста Конституции Республики Армения в редакции 2015 года. Обосновывается двойственная природа конституционных основ: они

одновременно обосновывают обязанность государства предупреждать коррупцию и устанавливают правовые пределы ее осуществления. Анализируются также требования Конвенции ООН против коррупции к конституционному регулированию. Предлагается восьмикомпонентная классификация конституционных основ, а конституционно-правовые механизмы анализируются в логике формулы Р. Клитгаарда. Показано, что, несмотря на отсутствие термина «коррупция», Конституция РА обладает значительным антикоррупционным потенциалом, однако ее система контроля носит исключительно последующий (ex post) характер, а органы по предупреждению коррупции лишены конституционного статуса, что порождает институциональную асимметрию. На основе Постановления Конституционного Суда РА ПКС-1776, украинского опыта, а также сравнительного анализа конституционных моделей Таиланда, Кении, Бутана и Бразилии в контексте текущих конституционных реформ предлагаются конституционное закрепление принципа добросовестности публичной власти и обязанности декларирования, конституционные гарантии статуса превентивного органа и введение упреждающего антикоррупционного контроля в нормотворческом процессе.

Ключевые слова: предупреждение коррупции, конституционные основы, запрет присвоения власти, принцип законности, принцип соразмерности, антикоррупционная экспертиза, конституционные реформы.

CONSTITUTIONAL FOUNDATIONS OF CORRUPTION PREVENTION: LEGAL CHARACTERISTICS AND PRACTICAL SIGNIFICANCE IN THE CONTEXT OF CONSTITUTIONAL REFORMS

Annotation

The article examines the constitutional foundations of corruption prevention as the source of legal force and legitimacy of sectoral anti-corruption norms. The aim of the study is to reveal the content of the concept of “constitutional foundations of corruption prevention”, to identify its structural elements and to assess the adequacy of the current text of the Constitution of the Republic of Armenia as amended in 2015. The article substantiates the dual nature of these foundations: they simultaneously ground the state’s duty to prevent corruption and set the legal limits of its fulfilment. The requirements of the UN Convention against Corruption for constitutional regulation are also analysed. An eight-component classification of the constitutional foundations is proposed, and the constitutional-legal mechanisms are analysed through the logic of R. Klitgaard’s formula. It is shown that, despite the absence of the term “corruption”, the Constitution of Armenia has considerable anti-corruption potential; however, its system of control operates exclusively ex post, while the corruption prevention bodies lack constitutional status, which creates an institutional asymmetry. Drawing on Constitutional Court Decision DCC-1776, the Ukrainian experience

and a comparative analysis of the constitutional models of Thailand, Kenya, Bhutan and Brazil, the article proposes, in the context of the ongoing constitutional reform, the constitutional entrenchment of the principle of integrity of public power and of the duty to declare assets, constitutional guarantees for the status of the prevention body, and the introduction of ex ante anti-corruption review in the law-making process.

Keywords: corruption prevention, constitutional foundations, prohibition of usurpation of power, principle of legality, principle of proportionality, anti-corruption expertise, constitutional reform.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 25.09.2026 թ., տրվել է գրախոսության 25.09.2026 թ., ընդունվել է տպագրության 05.10.2026 թ.:

DOI: 10.59560/18291155-2026.3-202



ԼՈՒՍԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Հայաստանի Հանրապետության
Սահմանադրական դատարանի աշխատակազմի
իրավախորհրդատվական վարչության
փորձագիտական-վերլուծական բաժնի
գլխավոր մասնագետ,
Ռուս-հայկական համալսարանի
3-րդ կուրսի ասպիրանտ

ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՅԱՑՐԱԾ՝ ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՅԱՑՐԱԾ ՈՐՈՇՄԱՆ ՎՃՌԱԲԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ՝ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ամփոփագիր

Սույն հոդվածում քննարկվում է Հայաստանի Հանրապետությունում ներկայիս օրենսդրական կարգավորումների պայմաններում՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված վերաքննիչ դատարանի որոշման վճռաբեկության կարգով բողոքարկման անհնարինության հարցը՝ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր հանդիսացող բողոքարկման իրավունքի լույսի ներքո:

Սույն հետազոտության նպատակն է գործող իրավակարգավորումների համալիր ուսումնասիրության արդյունքում հիմնավորել հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված վերաքննիչ դատարանի որոշման վճռաբեկության կարգով բողոքարկման իրավական հնարավորության անհրաժեշտությունը:

Ուսումնասիրության արդյունքում հեղինակի կողմից անդրադարձ է կատարվում Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի տարր հանդիսացող բողոքարկման իրավունքի էության բացահայտմանը, վճռաբեկ բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտերի վերանայմանն ու դրա նշանակությանը՝ նշյալ սահմանադրական իրավունքի ապահովման համատեքստում, հայցադիմումի

ընդունումը մերժելու մասին որոշման քաղաքացիադատավարական էությանն ու դրա արդյունքում՝ անձի համար վրա հասնող հետևանքներին, ինչպես նաև հեղինակի կողմից առաջին ատյանի դատարանի կայացրած՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած որոշման վճռաբեկության կարգով բողոքարկման անհնարինության հարցը քննարկվում է նաև Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված՝ հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգերի և ընթացակարգերի առկայության սահմանադրաիրավական հրամայականի լույսի ներքո:

Հիմնաբառեր. հայցադիմում, վճռաբեկ բողոք, արդյունավետ դատական պաշտպանություն, բողոքարկման իրավունք:

1.1. Ընդհանուր դրույթներ

Սահմանադրության՝ **«Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը»** վերտառությամբ 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք[1]:

Արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի արժեբանական հիմքում ընկած է մարդու իրավունքների և ազատությունների՝ դատական կարգով պաշտպանության սահմանադրահեն գաղափարը, ուստի՝ խնդրո առարկա սահմանադրական իրավունքը հանդես է գալիս իբրև այլ հիմնական իրավունքների

[1] Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը՝ այդ առնչությամբ, մասնավորապես, արտահայտելով ներքոնշյալ իրավական դիրքորոշումները.

- «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից» ***(2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշում):***

- «(...) դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ» ***(2015 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-1249 որոշում):***

- «Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման երաշխավորումն իրավական առաջնահերթ նախապայման է անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու համար» ***(2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշում):***

և ազատությունների պաշտպանությանը միտված ուրույն սահմանադրական իրավունք-երաշխիք: Այլ խոսքով՝ **արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը երաշխավորում է անկախ և անաչառ դատական համակարգի միջոցով մարդու իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը՝ թույլ չտալով դրանք վերածել երևութական արժեքների:**

Այսպիսով՝ Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտի բողոքարկման իրավունքն է[1]: *Դատական բողոքարկման ինստիտուտն այն առանցքային իրավական գործիքակազմն է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը, որպիսի պայմաններում դատավարության կողմը կարող է ակնկալել իր իրավունքներին և օրինական շահերին առնչվող դատական ակտի վերանայում վերադաս դատարանի անկախ դատավորի կամ դատավորների կազմի կողմից:* Այս իմաստով՝ դատական բողոքարկման իրավունքի առանցքային գործառույթը հանգում է, ի թիվս այլնի, նաև նրան, որ դատական բողոքարկմամբ համապատասխան սխալները շտկելու

[1] Արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր՝ դատական բողոքարկման հնարավորության վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումները հանգում են հետևյալին.

- «(...) Բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունը՝ ընդհանրապես, և արդարադատության համակարգի ներսում՝ մասնավորապես, հանգում է նրան, որ մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս ատյանին: Այս տրամաբանությամբ է կառուցված ՀՀ արդարադատական համակարգի ներսում բողոքարկման ողջ մեխանիզմը» ***(2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշում):***

- «(...) սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է (դատական բողոքարկումը (...)): Վերջինս նաև անձի իրավունքների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականություն է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում՝ դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործումը» ***(2011 թվականի փետրվարի 8-ի ՍԴՈ-936 որոշում):***

- «(...) Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է: Այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից» ***(2012 թվականի հուլիսի 18-ի ՍԴՈ-1037 որոշում):***

հնարավորություն ընձեռելը նպաստում է նաև արդարադատության համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացմանն այն հաշվառմամբ, որ անձը ձեռք է բերում վերադաս դատարանում իր նկատմամբ կայացված դատական ակտի վերաքննության իրական հնարավորություն՝ վերջնարդյունքում ակնկալելով ստանալ օրինական և հիմնավորված դատական ակտ:

Անդրադառնալով միջանկյալ դատական ակտերի բողոքարկմանը՝ որպես անձի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր, Սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի նոյեմբերի 2-ի ՍԴՈ-922 որոշմամբ նշել է. *«(…) օրենսդիրը տարբերակում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու հիմնական կարգ, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում՝ «հետաձգված բողոքարկում», և միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկում: **Եթե վարույթի հետագա ընթացքը կասեցնող միջանկյալ դատական ակտի դեմ իրավական պաշտպանության միակ հնարավոր միջոցը դրա անմիջական բողոքարկումն է և ըստ այդմ օրենսդրից պահանջվում է նախատեսել տվյալ ակտի անմիջական բողոքարկման կարգ,** ապա չկասեցված և շարունակվող վարույթի ընթացքում ընդունված միջանկյալ դատական ակտի բողոքարկման նշված երկու կարգերի միջև ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակում է»* **(ընդգծումը՝ հեղ.):**

Այս համատեքստում՝ գտնում ենք, որ *թեև օրենսդրի հայեցողությունն է սահմանել վերաքննության և/կամ վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի շրջանակը, այնուամենայնիվ, դրանց բողոքարկելիության կարգի հիմքում պետք է դրվեն ինչպես դրանց **վարույթային առանձնահատկությունները (վարույթի ընթացքը կասեցնող կամ խոչընդոտող բնույթ ունենալը),** այնպես էլ դրանցով **վրա հասնող հետևանքները**՝* իբրև գերնպատակ ունենալով մարդու հիմնական իրավունքների և ազատությունների անխախտելիությունը, ներառյալ՝ դատական պաշտպանության արդյունավետության երաշխավորումը:

1.2. Վճռաբեկ բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտերի վերանայումը

Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը բացահայտվում է Սահմանադրության՝ **«Վճռաբեկ դատարանը»** վերտառությամբ 171-րդ հոդվածում, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է, որը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, ինչպես նաև վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանի հիմնարար սահմանադրաիրավական առաքելությունն է ապահովել օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, որն ուղղված է, ի թիվս այլնի, ապահովելու դատական ակտերի արդարացիությունը, կանխատեսելիությունը և որոշակիությունը: Վճռաբեկության կարգով բողոքարկումը բնութագրվում է որոշակի նպատակային նշանակությամբ, որից և բխում են վերջինիս համապատասխան գործառութային առանձնահատկությունները: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով.

(1) *ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը,*

(2) *վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:*

Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի, վերջինով պայմանավորված՝ գործառութային լիազորությունների և բողոքաբերների և ողջ իրավակիրառ պրակտիկայի համար Վճռաբեկ դատարանի դատական ակտերի կարևորության բացահայտման տեսանկյունից հատկանշական է Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշումը, որի շրջանակներում Սահմանադրական դատարանն արձանագրել է. *«(...) ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության՝ օրենքով նախանշված նպատակները պայմանավորված են այդ մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակով: Օրենքի միատեսակ կիրառությունը, ճիշտ մեկնաբանությունն ապահովելը՝ որպես նաև իրավունքի զարգացմանը նպաստելու միջոցներ, կառուցակարգային փոխկապակցված գործառույթներ են, հետապնդում են իրավաչափ նպատակներ և երաշխիք են վճռաբեկ դատարանի կողմից սփորադաս դատարանների դատական ակտերը վերանայելու ընթացակարգային լիազորությունների իրականացման համար:* ***Այդպիսի երաշխիք է նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորմամբ, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացում»***[1] (ընդգծումը՝ հեղ.):

Այսպիսով՝ հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական առաքելությունը՝ գտնում ենք, որ վերջինիս վրա է դրված, ի թիվս այլնի, նաև ստորադաս դատարանների համար *ուղղորդող և կանխորոշիչ նշանակություն ունեցող մեկնաբանություններ տալու սահմանադրաիրավական գործառույթը, որի*՝

[1] Տե՛ս նաև Սահմանադրական դատարանի 2015 թվականի մարտի 3-ի ՍԴՈ-1192 որոշումը:

*Սահմանադրությանը համահունչ կենսագործումը **մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման գրավականն է:***

Վերադաս դատարանների կողմից գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման հարցի վերաբերյալ առանցքային նշանակություն ունեցող դիրքորոշումներ են արտահայտվել Սահմանադրական դատարանի 2019 թվականի մայիսի 7-ի ՍԴՈ-1459 որոշման շրջանակներում, որում, մասնավորապես, Սահմանադրական դատարանը, համադրելով Վճռաբեկ դատարանի գործառույթների վերաբերյալ սահմանադրական կարգավորումը վերաքննիչ դատարանների գործառույթն ամրագրող՝ Սահմանադրության 172-րդ հոդվածի հետ, համաձայն որի՝ վերաքննիչ դատարաններն առաջին ատյանի դատարանների դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող դատական ատյան են, արձանագրել է, որ.

«(…)

1) վերընթաց վերանայման սահմանափակման սկզբունքն ածանցվում է Սահմանադրության հիշյալ պահանջներից՝ համակցված Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի հետ, և ենթադրում է վերանայման ծավալի սահմանափակում՝ առաջին ատյանի դատարաններից մինչև Վճռաբեկ դատարան՝ «որքան ավելի բարձր է դատական ատյանը, այնքան ավելի սահմանափակ է վերանայման ծավալը» կանոնի համաձայն,

2) ըստ էության դատական ակտերի վերանայումը վերադաս դատարանների հիմնական գործառույթն է՝ արդարադատության էությունը, իսկ նրանց այլ լիազորությունների շրջանակն օրենսդրի կողմից՝ Սահմանադրությամբ կանխորոշված դեպքերից բացի, կարող է էլ ավելի սահմանափակվել՝ ելնելով արդյունավետ դատական պաշտպանության հիմնական իրավունքի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր ապահովելու անհրաժեշտությունից,

(…)»:

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է. *«(…) օրենքով թույլատրվելու դեպքում **գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վիճարկումը վճռաբեկ ատյանում պետք է լինի բացառություն, այլ ոչ թե կանոն**՝ այնպես, ինչպես վերաքննիչ ատյանում չեն կարող վիճարկվել առաջին ատյանի դատարանի բոլոր միջանկյալ դատական ակտերը»:*

Վերոգրյալի հաշվառմամբ՝ արձանագրում ենք, որ սահմանադրական վերաբերելի կարգավորումները չեն պահանջում, որպեսզի քաղաքացիական գործով առաջին ատյանի դատարանի կայացրած բոլոր միջանկյալ դատական ակտերն անվերապահորեն ենթակա լինեն բողոքարկման վերաքննության կարգով, այն չի ենթադրում նաև քաղաքացիական գործով առաջին ատյանի դատարանի կայացրած՝ բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ

բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կողմից կայացված բոլոր որոշումների բողոքարկման հնարավորություն վճռաբեկության կարգով: Այսպես.

Սահմանադրությամբ երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր հանդիսացող բողոքարկման իրավունքի իրականացման կարգը, **այդ թվում նաև՝ վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերը,** սահմանում է օրենսդիրը, որի նպատակն արդարադատության պատշաճ իրականացման ապահովումն է:

Օրենսգրքի՝ **«Վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերը»** վերտառությամբ 388-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիման վրա սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով քննում է վերաքննիչ դատարանի եզրափակիչ և միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքները:

Փաստորեն՝ օրենսդիրը վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքները Վճռաբեկ դատարանի կողմից քննվելու իրավական հնարավորությունը պայմանավորել է համապատասխան դատական ակտի՝ վճռաբեկության կարգով բողոքարկելի լինելու՝ Օրենսգրքով ուղղակի նախատեսված լինելու հանգամանքի հետ: Այսինքն՝ *վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը վճռաբեկության կարգով ենթակա են բողոքարկման միայն այն դեպքում, երբ նման բողոքարկման հնարավորությունը նախատեսված է Օրենսգրքով:*

Օրենսգրքի վիճարկվող՝ **«Վերաքննիչ դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը»** վերտառությամբ 387-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո: Այլ եզրափակիչ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից 15 օր հետո, բացառությամբ գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին, ինչպես նաև վերաքննիչ բողոքից հրաժարվելու հիմքով վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշումների: Վերաքննիչ դատարանի կայացրած որոշումը բացառիկ դեպքերում կարող է հրապարակման պահից հայտարարվել օրինական ուժի մեջ մտած, եթե դա չանելն անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետևանքներ գործին մասնակցող անձի համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ պարտատերերի պահանջների հաստատման կապակցությամբ կայացված որոշումների դեմ բերված, ինչպես նաև գնումների հետ կապված վեճերով կայացված վճիռների դեմ բերված բողոքների քննության արդյունքով, ինչպես նաև բողոքից հրաժարվելու և գործը հաշտության

համաձայնությամբ ավարտելու կապակցությամբ վերաքննիչ դատարանի կայացրած որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանի՝ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում չնշված որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, բացառությամբ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման, որն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից 15 օր հետո:

Վերոհիշյալ իրավակարգավորումների համակարգային ուսումնասիրությունը վկայում է, որ վերաքննիչ դատարանի՝ *վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի շրջանակից դուրս են մնացել քաղաքացիական գործով առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերի,* ***այդ թվում՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումների դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումները,*** *քանի որ առաջին ատյանի դատարանի կայացրած՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումների դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումները օրինական ուժի մեջ են մտնում* ***կայացման պահից:***

Այլ խոսքով՝ քաղաքացիական գործով առաջին ատյանի դատարանի կայացրած՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումների համար օրենսդրի կողմից սահմանվել է **միաստիճան բողոքարկման համակարգ**, այն է՝ այդ դատական ակտերի վերանայում վերաքննության կարգով, որից հետո Վճռաբեկ դատարան դիմելու իրավական հնարավորություն նախատեսված չէ:

1.3. Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման քաղաքացիադատավարական էությունն ու դրա արդյունքում՝ անձի համար վրա հասնող հետևանքները՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման համատեքստում

Օրենսգրքով նախատեսված են իրավական կառուցակարգեր, որոնց շրջանակներում առաջին ատյանի դատարանն իրավասու է գնահատել հայցադիմումի ընդունելիությանն առնչվող պահանջների և պայմանների պահպանվածությունը: Այդ իրավական կառուցակարգերի շարքին է դասվում նաև **հայցադիմումի ընդունման մերժումը, որը, որոշակի իրավական հիմքերի առկայության դեպքում, խոչընդոտում է դատարանում գործի (վարույթի) հարուցմանը՝ բացառելով արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացումը:**

Օրենսգրքի՝ **«Հայցադիմումի ընդունումը մերժելը»** վերտառությամբ 126-րդ հոդվածի 1-ին մասով սպառիչ կերպով թվարկած են առաջին ատյանի դատարանի կողմից հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը: Այսպես՝ առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝

- գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով.

- նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտ, բացառությամբ հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին որոշման.

- նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է արբիտրաժի վճիռ, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշում կամ նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրություն, բացառությամբ դատարանի կողմից արբիտրաժի վճիռը կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը հարկադիր կատարման ներկայացնելը կամ նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակվելը մերժելու դեպքի.

- նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում.

- հայցը ներկայացվել է Օրենսգրքի 140-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների խախտմամբ.

- հայցադիմումում ձևակերպված հայցապահանջն ակնհայտորեն ոչ իրավաչափ է (հայցն ակնհայտորեն ենթակա է լինելու մերժման՝ անկախ դրա հիմքում դրված փաստերից).

- հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը:

Այսպիսով՝ ***հայցադիմումի ընդունումը մերժելու դատավարական հիմք են այնպիսի խոչընդոտները, որոնց շրկումն անհնար է և որոնց առկայությունը բացառում է վարույթ (քաղաքացիական գործ) հարուցելու հնարավորությունը***՝ հանգեցնելով անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման անհնարինության:

Նշյալից ածանցյալ՝ հայցադիմումի ընդունումը մերժելու իրավական հետևանք է այդ որոշման նախադատելիությունը, որը բացառում է հետագայում նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով նոր վարույթի (քաղաքացիական գործի) հարուցումը, քանի որ նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման առկայությունը հայցադիմումի ընդունումը մերժելու ինքնուրույն հիմք է (Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ):

Միևնույն ժամանակ, հայցադիմումի ընդունումը մերժելու իրավական կառուցակարգն ունի նաև *«կանխարգելիչ» բնույթ*, քանի որ վերջինս բացառում է անհիմն քաղաքացիական գործերի հարուցումը՝ դրանով իսկ նպաստելով դատական խնայողության սկզբունքի ապահովմանն ու դատարանների ծանրաբեռնվածության նվազեցմանը:

Այսպիսով՝ **հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը, թեև Օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, չի համարվում**

եզրափակիչ դատական ակտ և, ըստ այդմ՝ դասվում է միջանկյալ դատական ակտերի ցանկին, սակայն, առհասարակ, բացառելով գործի ըստ էության քննությունը («եզրափակելով» դեռևս չսկսված վարույթը), ունի ուրույն իրավական բնույթ, որով պայմանավորված էլ այն առանձնանում է մյուս միջանկյալ դատական ակտերի շրջանակից[1]**:**

Ամփոփելով վերոգրյալը՝ փաստում ենք, որ **հայցադիմումի ընդունումը մերժելու իրավական հետևանքներն արտահայտվում են երեք տարրերի համադրությամբ.**

(1) *հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման ընդունման արդյունքում՝ վարույթի հարուցման անհնարինությամբ և, ըստ այդմ՝ անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման անիրագործելիությամբ,*

(2) *հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման առկայության պայմաններում՝ նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով նոր հայցադիմումը վարույթ ընդունելու անհնարինությամբ, այն է՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման նախադատելիությամբ,*

(3) *հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ արդյունավետ դատական պաշտպանության որոշ երաշխիքների պահպանմամբ՝ վերադաս դատական ատյաններում համապատասխան դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացմամբ:*

Ողջ վերոշարադրյալի լույսի ներքո՝ հիմք ընդունելով հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման վարութային առանձնահատկությունները, ինչպես նաև այդ որոշման հետևանքային ազդեցությունը՝ գտնում ենք, որ **օրենսդրի կողմից խնդրո առարկա որոշման համար միաստիճան բողոքարկման համակարգի նախատեսումը (այն է՝ բացառապես վերաքննության կարգով) այն պարագայում, երբ սույն որոշումը խոչընդոտում է վարույթի հետագա ընթացքը՝ բացառելով նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով նոր հայցադիմումի վարույթ ընդունումը, չի ապահովում Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը:** Այլ կերպ՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կողմից կայացված **որոշումը պետք է հանդիսանա վճռաբեկության կարգով անմիջական բողոքարկման առարկա՝ ապահովելով անձի արդյունավետ դատական**

[1] Հարկ է նկատի ունենալ, որ միջանկյալ դատական ակտերի ցանկն Օրենսգրքում սպառիչ կերպով թվարկված չէ, այլ նախատեսված է «մնացորդային» սկզբունքով: Մասնավորապես՝ Օրենսգրքի՝ **«Քաղաքացիական գործերով դատական ակտերը և դրանց պարտադիր լինելը»** վերտառությամբ 5-րդ հոդվածի 2-րդ մասում սպառիչ կերպով թվարկված են եզրափակիչ դատական ակտերը, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտեր են սույն հոդվածի 2-րդ մասում չնշված որոշումները, որոնք կայացվում են առանձին ակտի ձևով կամ արձանագրային որոշմամբ: Այսինքն՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը համարվում է միջանկյալ դատական ակտ, քանի որ վերջինս թվարկված չէ եզրափակիչ դատական ակտերի սպառիչ ցանկում:

պաշտպանության և վերջինիս բաղադրատարր հանդիսացող՝ բողոքարկման իրավունքի իրացումը:

Այս համատեքստում կարևոր է կրկին ընդգծել, որ Վճռաբեկ դատարանի հիմնարար սահմանադրաիրավական առաքելությունն է ապահովել օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը՝ ուղղված, ի թիվս այլնի, դատական ակտերի արդարացիության, կանխատեսելիության և որոշակիության ապահովմանը, **ինչպիսի առաքելության պատշաճ իրագործումը հնարավոր չէ առանց անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացմանը խոչընդոտող դատական ակտերի վճռաբեկության կարգով բողոքարկման իրավունքի իրացման ռեալ կառուցակարգերի առկայության:**

1.4. Առաջին ատյանի դատարանի կայացրած՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած որոշման վճռաբեկության կարգով բողոքարկման անհնարինությունը՝ Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված՝ հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգերի և ընթացակարգերի առկայության սահմանադրաիրավական հրամայականի լույսի ներքո

Սահմանադրության՝ **«Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը»** վերտառությամբ 75-րդ հոդվածի համաձայն՝ իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր[1]:

Սահմանադրության վերոնշյալ պահանջն ուղղված է Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ և

[1] Սահմանադրական դատարանը, 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշման մեջ անդրադառնալով Սահմանադրության 75-րդ հոդվածի բովանդակությանը, արձանագրել է, որ *«(…) ցանկացած օրենսդրական կարգավորում, այլ ոչ թե միայն որևէ հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակում, պետք է նպատակ ունենա և ապահովի բոլոր հիմնական իրավունքների (1) արդյունավետ իրականացման համար (2) անհրաժեշտ (3) կազմակերպական (4) կառուցակարգեր և (5) ընթացակարգեր: Միայն բոլոր այս պայմանների միաժամանակյա առկայությունը ցանկացած օրենսդրական կարգավորման մեջ, առավել ևս որևէ հիմնական իրավունք կամ ազատություն սահմանափակող օրենսդրական կարգավորման մեջ, կարող է ապահովել դրա համապատասխանությունը Սահմանադրությանը»:*

2020 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1571 որոշման շրջանակներում Սահմանադրական դատարանն արձանագրել է. *«Պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած խախտումներ, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները»:*

իրական կենսագործմանը, քանի որ իրավունքի կամ ազատության սոսկ ամրագրումը բավարար չէ տրված իրավական հնարավորության լիարժեք իրացման համար, **ուստի՝ համապատասխան կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական ամրագրումն անհրաժեշտ երաշխիք է հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացումն ապահովելու հարցում:**

Հանրային իշխանությունը պետք է երաշխավորի մարդու իրավունքների և ազատությունների ամբողջական և լիարժեք պաշտպանությունը, ի թիվս այլնի, նաև արդարադատության իրականացման բացառիկ առաքելություն ունեցող դատական համակարգի միջոցով՝ ապահովելով արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի կենսագործման համար անհրաժեշտ կառուցակարգեր:

Այս համատեքստում՝ արձանագրում ենք, որ օրենսդիրը, ի միտն ունենալով անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետ կառուցակարգերի առկայության անհրաժեշտությունը, նախատեսել է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման բողոքարկման իրավական հնարավորություն՝ սահմանափակվելով բացառապես վերաքննության կարգով բողոք ներկայացնելու ընթացակարգերի սահմանմամբ, այլ խոսքով՝ նախատեսել է միաստիճան բողոքարկման համակարգ:

Մինչդեռ, վերոգրյալի լույսի ներքո՝ հիմք ընդունելով հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման հետևանքային ազդեցությունն անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման հարցում, գնահատման առարկա դարձնելով օրենսդրի կողմից նախատեսված այն իրավակարգավորումը, որի ուժով՝ առաջին ատյանի դատարանի կայացրած՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումը ուժի մեջ է մտնում **կայացման պահից,** ըստ այդմ՝ հանգեցնելով նշյալ որոշման վճռաբեկության կարգով բողոքարկման անհնարինության, գտնում ենք, որ **խնդրո առարկա օրենսդրական կարգավորումը չի ապահովում Սահմանադրության 75-րդ հոդվածով սահմանված պահանջների արդյունավետ կենսագործումը՝ որպես հետևանք հանգեցնելով անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի խախտման:**

Վերոգրյալի առնչությամբ փաստում ենք, որ **օրենսդիրը, առաջին հերթին, պետք է սահմանի անհրաժեշտ կազմակերպական այնպիսի կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք կապահովեն կոնկրետ անձի կողմից՝** հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշման վճռաբեկության կարգով բողոքարկման հնարավորությունը, **քանզի նման օրենսդրական հնարավորություն չնախատեսելը խաթարում է Սահմանադրությամբ**

երաշխավորված՝ անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի էությունը:

2. Եզրակացություններ

Այսպիսով՝ ներկայիս օրենսդրական կարգավորումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածն այնքանով, որքանով նախատեսում է, որ առաջին ատյանի դատարանի կայացրած՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից, **չի ապահովում Սահմանադրության 75-րդ հոդվածով սահմանված պահանջների արդյունավետ կենսագործումը՝ որպես հետևանք հանգեցնելով Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի խախտման:**

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված վերաքննիչ դատարանի որոշման վճռաբեկության կարգով բողոքարկումը **չպետք է բացառվի՝ հիմք ընդունելով նշյալ որոշման հետևանքային ազդեցությունն անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման հարցում:** Օրենսդիրը, ի միտն ունենալով անձի դատական պաշտպանության իրավունքի, այդ թվում՝ դրա բաղադրատարր կազմող՝ բողոքարկման իրավունքի իրացման արդյունավետ կառուցակարգերի առկայության անհրաժեշտության սահմանադրահեն գաղափարը, պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, համաձայն որի՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է վճռաբեկության կարգով բողոքարկման:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով, ՀՀՊՏ 2015.12.21/ հատուկ թողարկում, հոդ. 1118):

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ.208):

3. **Лебедев М.Ю.** Гражданский процесс: Краткий курс лекций / М.Ю. Лебедев, Ю.В. Францифоров, А.Н. Балашов. - М.: Юрайт. – 232 с.

4. **Борисова Е.А.** Апелляция, кассация, надзор по гражданским делам: Учебное пособие. 4-е изд., перераб. и доп. – М.: Изд.: Норма: ИНФРА-М, 2024. – 376 с.

ВОПРОС НЕВОЗМОЖНОСТИ ОБЖАЛОВАНИЯ В КАССАЦИОННОМ ПОРЯДКЕ РЕШЕНИЯ АПЕЛЛЯЦИОННОГО СУДА, ВЫНЕСЕННОГО ПО РЕЗУЛЬТАТАМ РАССМОТРЕНИЯ АПЕЛЛЯЦИОННОЙ ЖАЛОБЫ НА ОПРЕДЕЛЕНИЕ СУДА ПЕРВОЙ ИНСТАНЦИИ ОБ ОТКАЗЕ В ПРИНЯТИИ ИСКОВОГО ЗАЯВЛЕНИЯ, В КОНТЕКСТЕ ПРАВА НА ОБЖАЛОВАНИЕ, ЯВЛЯЮЩЕГОСЯ НЕОТЪЕМЛЕМЫМ ЭЛЕМЕНТОМ ПРАВА НА ЭФФЕКТИВНУЮ СУДЕБНУЮ ЗАЩИТУ

Аннотация

В данной статье рассматривается вопрос о невозможности обжалования в кассационном порядке решения апелляционного суда, вынесенного по результатам рассмотрения апелляционной жалобы на определение об отказе в принятии искового заявления, в условиях действующего правового регулирования Республики Армения — в свете права на обжалование как неотъемлемого элемента права на эффективную судебную защиту, гарантированного Конституцией.

Целью настоящего исследования является обоснование необходимости правовой возможности обжалования в кассационном порядке решения апелляционного суда, вынесенного по результатам рассмотрения апелляционной жалобы на определение об отказе в принятии искового заявления, на основе комплексного анализа действующих правовых норм.

В ходе исследования автор раскрывает сущность права на обжалование судебного акта как элемента права на эффективную судебную защиту, закрепленного в части 1 статьи 61 Конституции, автор обращается к пересмотру судебных актов Кассационным судом на основании кассационной жалобы и его значению в контексте обеспечения указанного конституционного права, к гражданско-процессуальной сущности определения об отказе в принятии искового заявления и вытекающим из него последствиям для лица, а вопрос о невозможности обжалования в кассационном порядке решения апелляционного суда, вынесенного по результатам рассмотрения апелляционной жалобы на определение суда первой инстанции об отказе в принятии искового заявления, рассматривается автором также в свете конституционно-правового императива, закрепленного в статье 75 Конституции, о наличии необходимых механизмов и процедур для эффективной реализации основных прав и свобод.

Ключевые слова: исковое заявление, кассационная жалоба, эффективная судебная защита, право на обжалование.

THE ISSUE OF THE IMPOSSIBILITY OF CASSATION APPEAL OF THE DECISION RENDERED BY THE COURT OF APPEAL FOLLOWING THE EXAMINATION OF THE APPEAL AGAINST THE RULING OF THE COURT OF FIRST INSTANCE ON REFUSAL TO ACCEPT A STATEMENT OF CLAIM, IN THE CONTEXT OF THE RIGHT TO APPEAL AS A CONSTITUENT ELEMENT OF THE RIGHT TO EFFECTIVE JUDICIAL PROTECTION

Annotation

This article discusses the issue of the impossibility of appealing in cassation proceedings the decision rendered by the court of appeal following the examination of the appeal against the ruling on refusal to accept a statement of claim, under the current legal regulations of the Republic of Armenia, in the light of the right to appeal as a constituent element of the right to effective judicial protection guaranteed by the Constitution.

The aim of this research is to substantiate the necessity of the legal possibility of appealing in cassation proceedings the decision rendered by the court of appeal following the examination of the appeal against the ruling on refusal to accept a statement of claim, based on a comprehensive study of the current legal regulations.

In the course of the research, the author addresses the essence of the right to appeal a judicial act as an element of the right to effective judicial protection enshrined in Part 1 of Article 61 of the Constitution, the review of judicial acts by the Court of Cassation on the basis of a cassation appeal and its significance in the context of ensuring the said constitutional right, the civil procedural nature of the ruling on refusal to accept a statement of claim and the consequences arising therefrom for the person, as well as the issue of the impossibility of cassation appeal of the decision rendered by the court of appeal following the examination of the appeal against the ruling of the court of first instance on refusal to accept a statement of claim, is examined by the author in the light of the constitutional-legal imperative enshrined in Article 75 of the Constitution on the existence of necessary institutions and procedures for the effective realization of fundamental rights and freedoms.

Keywords: statement of claim, cassation appeal, effective judicial protection, right to appeal.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 02.09.2026 թ., տրվել է գրախոսության 05.09.2026 թ., ընդունվել է տպագրության 28.09.2026 թ.:

DOI: 10.59560/18291155-2026.3-217



ЛИЛИАНА СИСАКЯН

Главный специалист службы правовой экспертизы аппарата Кассационного суда Республики Армения, ассистент кафедры гражданского права и гражданско-процессуального права Российско-Армянского университета

ОБЩЕЕ ОСНОВАНИЕ ПЕРЕСМОТРА СУДЕБНОГО АКТА ПО ВНОВЬ ОТКРЫВШИМСЯ ОБСТОЯТЕЛЬСТВАМ

Аннотация

В статье исследуется общее (родовое) основание пересмотра вступившего в законную силу судебного акта по вновь открывшимся обстоятельствам, закрепленное пунктом 1 части 1 статьи 418 Гражданского процессуального кодекса Республики Армения. Задача состояла не в описании перечня оснований, а в построении операционального инструментария их применения. На основе анализа конститутивных условий общего основания — темпорального, эпистемического и условия существенности, а также новейшей практики Кассационного суда Республики Армения конструируется четырехэлементный тест квалификации обстоятельства в качестве вновь открывшегося. Обосновывается необходимость кодификации принципа субсидиарности, законодательно связывающего исследуемое производство с инстанционной системой проверки судебных актов, а разграничение вновь открывшихся обстоятельств и новых доказательств предлагается проводить по критерию новизны факта, а не носителя информации. По результатам исследования формулируются авторские предложения по совершенствованию статьи 418 Кодекса.

Ключевые слова: пересмотр судебного акта, вновь открывшиеся обстоятельства, должная осмотрительность, принцип субсидиарности, существенность обстоятельства, замаскированное обжалование, правовая определенность.

1. Введение

Основания пересмотра по вновь открывшимся обстоятельствам изучены в процессуальной науке подробнее иных элементов института, однако преимущественно в описательном ключе: перечень статьи 418 Гражданского процессуального кодекса

Республики Армения[1] комментируется поэлементно, а конститутивные условия общего основания перечисляются, но не выстраиваются в проверяемый правоприменителем порядок. Между тем именно на этом участке практика испытывает наибольшие затруднения, о чем свидетельствуют устойчивые попытки использовать производство для восполнения собственных процессуальных упущений стороны и для повторной оценки уже исследованных доказательств. Поэтому задача настоящей статьи состоит не в описании общего основания, а в построении операционального инструментария его применения и в выявлении тех ситуаций, в которых действующая редакция статьи 418 Кодекса лишает добросовестного заявителя судебной защиты по не зависящим от него причинам. Исследование строится на гипотезе, согласно которой один из системных недостатков действующего регулирования порожден отсутствием нормативно выраженной связи между исследуемым производством и инстанционной системой проверки судебных актов; если гипотеза верна, средством устранения недостатка служит не изменение объема перечня оснований, а достройка статьи 418 Кодекса правилами, задающими условия допустимости пересмотра.

Юридическая конструкция статьи 418 Кодекса объединяет разнородные по своей функциональной природе элементы: пункт 1 части 1 закрепляет общее (родовое) основание, выполняющее одновременно дефинитивную функцию, поскольку он описывает конститутивные признаки самого вновь открывшегося обстоятельства, тогда как пункты 2 и 3 той же части устанавливают специальные составы, связанные с преступными посягательствами на правосудие. Указанная двухуровневая структура предопределяет логику исследования: настоящая статья посвящена общему основанию с его конститутивными условиями, а анализ специальных составов с присущими им особыми условиями применения составляет предмет отдельной работы. При этом принципиально, что условия общего основания — существование обстоятельства на момент разрешения дела, его неизвестность и существенность — подлежат установлению и при применении специальных составов, поскольку образуют родовые признаки вновь открывшегося обстоятельства как такового; специальные составы добавляют к ним, но не заменяют собой, квалифицированное средство доказывания и особую природу факта-основания.

2. Основная часть

Из содержания пункта 1 части 1 статьи 418 Кодекса следует, что вновь открывшиеся обстоятельства на момент рассмотрения дела существовали в объективной действительности, однако не получили юридической и фактической оценки в силу того, что были неизвестны лицу, участвующему в деле, и суду. Темпоральный признак —

[1] Гражданский процессуальный кодекс Республики Армения № ՀՕ-110-Ն (вступил в силу 09.04.2018), статья 418.

существование обстоятельства до вступления судебного акта в законную силу — обстоятельно раскрыт в практике высших судебных инстанций: как констатировала уголовная палата Кассационного суда Республики Армения, сама формулировка “вновь открывшийся” (в международных документах — *newly discovered*) свидетельствует о том, что обстоятельство должно было существовать в объективной действительности до вступления судебного акта в законную силу, а после его вынесения — лишь обнаружиться[1]; соотносимую позицию занимает и Европейский суд по правам человека, указавший в деле Mihalache v. Romania, что обстоятельства, имевшиеся на момент разбирательства, но не представленные суду и ставшие известными после него, считаются “вновь открывшимися”[2]. Именно темпоральный признак проводит границу между сферами действия статей 418 и 419 Кодекса: обстоятельство, возникшее после вступления акта в законную силу, ни при каких условиях не может квалифицироваться как вновь открывшееся.

Вместе с тем для квалификации обстоятельства как вновь открывшегося недостаточно установления одной лишь фактической неизвестности: необходимо установить, что обстоятельство *не могло быть известно* подавшему жалобу лицу, участвующему в деле, и суду. Категория “не могло быть известно” имеет эпистемический характер и подразумевает, что в каждом конкретном случае пересматривающий суд обязан оценить, в какой степени лицу было объективно невозможно узнать о соответствующем обстоятельстве при рассмотрении дела. Принципиально, что объективная невозможность подлежит установлению не абстрактно — применительно к некоему усредненному участнику оборота, — а конкретно: масштабом оценки служит поведение разумного и заботливого участника процесса, добросовестно осуществляющего свои процессуальные права и исполняющего процессуальные обязанности, с учетом реальных информационных возможностей, которыми располагал данный заявитель в данном деле. Двойная адресация нормы (“лицу, участвующему в деле, и суду”) означает, что неизвестность должна быть одновременной: обстоятельство, известное суду, но не заявителю (например, отраженное в материалах дела, с которыми заявитель не ознакомился), равно как известное заявителю, но не суду (сознательно или небрежно не представленное), вновь открывшимся не является.

Именно такой подход воспринят новейшей практикой Кассационного суда Республики Армения, заслуживающей развернутого воспроизведения. В деле № ԵԴ/28729/02/19, разрешенном Постановлением от 19 июля 2024 года, заявитель ссылался в качестве вновь открывшегося обстоятельства на данные в рамках уголовного

[1] Постановление уголовной палаты Кассационного суда Республики Армения по делу № ԱՐԱԴ1/0025/01/15.

[2] Решение Европейского суда по правам человека (Большая Палата) от 08.07.2019 по делу *Mihalache v. Romania*, жалоба № 54012/10.

производства показания лица, работавшего кассиром на предприятии, которые, по утверждению заявителя, подтверждали оплату поставленного товара наличными денежными средствами и тем самым опровергали основание удовлетворенного против него требования. Отклоняя жалобу, Кассационный суд констатировал: заявитель, будучи надлежаще извещенным о рассмотрении дела в порядке упрощенного производства и получив все процессуальные документы, не был лишен возможности высказать свою позицию по соответствующим обстоятельствам при рассмотрении дела и заявить ходатайство о допросе кассира в качестве свидетеля, чего он не сделал; следовательно, обстоятельства, на которые он ссылается, могли быть известны ему и суду при рассмотрении дела, если бы он проявил достаточную осмотрительность; при этом заявитель не представил ни обоснований того, что по не зависящим от него причинам не сообщил суду соответствующие факты, ни подтверждающих их доказательств, что являлось его обязанностью. Одновременно суд сформулировал позитивный стандарт: обстоятельство соответствует критерию вновь открывшегося в том случае, когда лицо, подавшее жалобу, проявило достаточную заботливость и осмотрительность для раскрытия фактических обстоятельств при рассмотрении дела, однако они остались неизвестными по не зависящим от него причинам[1]. Тем самым эпистемический критерий пункта 1 части 1 статьи 418 Кодекса дополнен стандартом должной осмотрительности (*due diligence*), а бремя доказывания как самого обстоятельства, так и объективной невозможности узнать о нем возложено на заявителя. Значение данной правовой позиции трудно переоценить: она переводит оценку “непознаваемости” из области умозрительных предположений в область проверки конкретного процессуального поведения заявителя — использовал ли он доступные ему процессуальные инструменты (ознакомление с материалами, ходатайства об истребовании доказательств и допросе свидетелей, возражения в упрощенном производстве), и одновременно предупреждает превращение производства в средство восполнения собственных процессуальных упущений стороны, риск последствий которых, по общему правилу, несет сама сторона.

Выработанный Кассационным судом стандарт, однако, нуждается в завершающем шаге — установлении нормативной связи между производством по пересмотру и инстанционной системой проверки судебных актов. Ориентиром здесь служит опыт ведущих зарубежных правопорядков, в которых соответствующая связь получила прямое законодательное закрепление в форме принципа субсидиарности. Согласно § 582 Гражданского процессуального уложения Германии реституционный иск допустим лишь постольку, поскольку сторона без своей вины была лишена возможности заявить об основании реституции в прежнем производстве, в частности посредством

[1] Постановление Кассационного суда Республики Армения от 19.07.2024 по гражданскому делу № ԵԴ/28729/02/19.

обжалования[1]. Функционально тождественное правило выработано английской практикой: первое из трех кумулятивных условий принятия нового доказательства по прецеденту Ladd v Marshall состоит в том, что доказательство не могло быть получено к моменту процесса при проявлении разумной заботливости[2], а в праве США устойчиво подчеркивается, что ходатайство об освобождении от окончательного решения не является заменой апелляции (*substitute for appeal*)[3]. Конвергенция названных моделей отражает общую закономерность: пересмотр допустим лишь там, где инстанционные средства защиты были объективно недоступны, — в противном случае производство вырождается в средство обхода пропущенных сроков обжалования, то есть в "замаскированное обжалование". Полагаем, именно поэтому необходимо **кодифицировать принцип субсидиарности**, дополнив статью 418 Кодекса частью следующего содержания: **"Жалоба о пересмотре не подлежит удовлетворению в той мере, в какой лицо, подавшее жалобу, при проявлении достаточной заботливости и осмотрительности объективно имело возможность сослаться на соответствующее обстоятельство при рассмотрении дела либо посредством предусмотренного законом обжалования судебного акта".** Предлагаемая норма, во-первых, придает выработанному практикой стандарту должной осмотрительности свойство формальной определенности в его наиболее практически значимом измерении — соотношении с инстанционным контролем; во-вторых, реализует тезис о том, что разграничительным критерием процессуальных форм служит не только природа дефекта судебного акта, но и объективная доступность инстанционных средств его устранения.

Предвидим возражение, согласно которому предлагаемая норма избыточна: если обстоятельство по определению не могло быть известно заявителю, то он тем более не мог сослаться на него при обжаловании, вследствие чего принцип субсидиарности якобы поглощается эпистемическим признаком. Возражение не учитывает, что эпистемический признак и субсидиарность обращены к различным моментам времени. Эпистемический признак относится к периоду рассмотрения дела судом, вынесшим акт; субсидиарность — к периоду, в течение которого сохранялась возможность инстанционного обжалования. Между этими моментами лежит промежуток, в котором обстоятельство уже могло стать известным заявителю: узнав о нем после вынесения решения, но до истечения срока апелляционного обжалования, лицо обязано использовать инстанционное средство защиты, а не резервировать обстоятельство для исключительного производства. Именно этот промежуток действующая редакция статьи 418 Кодекса оставляет неурегулированным, и именно его закрывает предлагаемая норма.

[1] Zivilprozessordnung (ZPO) vom 30. Januar 1877 (в действующей редакции), § 582; **Rosenberg L., Schwab K. H., Gottwald P.** Zivilprozessrecht. 18. Aufl. München: C. H. Beck, 2018. § 161.

[2] *Ladd v Marshall* [1954] EWCA Civ 1; [1954] 1 WLR 1489.

[3] Federal Rules of Civil Procedure, Rule 60(b); Ackermann v. United States, 340 U.S. 193 (1950).

Третьим конститутивным условием общего основания выступает существенность обстоятельства для разрешения дела. Существенным является обстоятельство, обладающее правовой и фактической способностью предопределить полностью или частично иной исход дела. Кассационный суд Республики Армения требует при этом конкретно-казуальной оценки: каждое дело уникально по своим фактическим обстоятельствам, вследствие чего суды обязаны в каждом деле выяснять, влияет ли соответствующее обстоятельство по своему характеру на исход именно данного дела[1]. Существенность подлежит констатации исключительно мотивированным выводом суда, учитывающим факт вторжения пересмотра в окончательность вступившего в законную силу акта и, следовательно, принцип правовой определенности.

Обобщение нормативных условий и выработанных практикой стандартов позволяет предложить операциональный тест квалификации обстоятельства в качестве вновь открывшегося, состоящий из четырех последовательно разрешаемых вопросов. Первый — темпоральный: существовало ли обстоятельство в объективной действительности на момент разрешения дела? Отрицательный ответ переводит анализ в плоскость статьи 419 Кодекса (если обстоятельство типизировано законодателем как новое) либо предъявления нового иска (если возникший после разрешения дела факт порождает новое правоотношение, а не подрывает основание состоявшегося акта). Второй — вопрос фактической неизвестности: было ли обстоятельство действительно неизвестно заявителю и суду? Отрицательный ответ означает, что заявитель добивается переоценки известных суду фактов, то есть скрытого обжалования. Третий — вопрос объективной непознаваемости: могло ли обстоятельство стать известным заявителю при проявлении им должной заботливости и осмотрительности, а суду — при надлежащем осуществлении правосудия? Утвердительный ответ, как показывает дело № ԵԴ/28729/02/19, исключает пересмотр: упущения стороны не создают основания для дестабилизации вступившего в законную силу акта. Четвертый — вопрос существенности: способно ли обстоятельство юридически и фактически предопределить иной исход дела? Лишь утвердительные ответы на первый, второй и четвертый вопросы и отрицательный ответ на третий вопрос в совокупности дают квалификацию обстоятельства как вновь открывшегося. Практическая ценность теста состоит в дисциплинирующем воздействии на правоприменение: он задает единый, воспроизводимый алгоритм проверки жалоб, обеспечивает мотивированность судебных актов по результатам их рассмотрения и препятствует размыванию исключительного характера производства.

Применение второго и третьего элементов теста закономерно ставит вопрос, поднятый в отечественной доктрине Т. А. Маркосяном: могут ли общеизвестные или

[1] Постановление Кассационного суда Республики Армения по гражданскому делу № ԵԱԴԴ/0056/02/08.

общедоступные в объективной действительности факты считаться вновь открывшимися обстоятельствами в любое время и в рамках любого дела[1]? Разделяя подход автора, полагаем, что общеизвестные факты не могут квалифицироваться как вновь открывшиеся, причем данный вывод имеет строго логическое основание: коль скоро процессуальный закон освобождает общеизвестные факты от доказывания именно в силу их известности неопределенному кругу лиц, включая суд, утверждение об их одновременной неизвестности заявителю и суду внутренне противоречиво — оно опровергает само условие общеизвестности. Применительно к общедоступным фактам вывод в принципе аналогичен: опубликование информации способом, обеспечивающим возможность ознакомления с ней при разумных усилиях — в официальных изданиях, публичных реестрах (например, реестрах прав на недвижимость, юридических лиц), общедоступных источниках, — само по себе исключает объективную невозможность узнать о них, вследствие чего заявитель, не воспользовавшийся такой возможностью, не проходит проверку третьим элементом теста — стандартом должной осмотрительности. Вместе с тем общедоступность, в отличие от общеизвестности, есть категория степени, а не абсолюта: если доступ к формально опубликованной информации был сопряжен с непреодолимыми для конкретного заявителя препятствиями — отнесением сведений к государственной или иной охраняемой законом тайне, ограниченным режимом архивных фондов, физической недоступностью источника в юридически значимый период, — объективная непознаваемость не исключается и подлежит оценке судом *in concreto*. Таким образом, общеизвестность исключает квалификацию обстоятельства как вновь открывшегося *per se*, тогда как общедоступность создает опровержимую презумпцию познаваемости.

Центральное догматическое значение для применения общего основания имеет разграничение категорий “вновь открывшееся обстоятельство” и “новое доказательство” — вопрос, породивший в теории полярные подходы. В контексте соотношения терминов “обстоятельство” и “доказательств” следует исходить из того, что обстоятельство — это определенное явление объективной действительности, наличие или отсутствие которого подлежит доказыванию или опровержению в рамках конкретного дела; суть же доказательства — предусмотренные законом данные (сведения), посредством которых подтверждается или опровергается наличие либо отсутствие обстоятельства и которые в зависимости от способа и формы получения квалифицируются по видам, определяемым процессуальным законодательством. Четкое разграничение проводит И. А. Петрова, отмечающая, что для определения понятия вновь открывшихся обстоятельств принципиально соотношение категорий факта, сведений о факте и доказательства: факт объективно существует; сведения о факте — это информация; вновь

[1] **Маркосян Т. А.** Производство по пересмотру судебных актов в гражданском судопроизводстве по новым обстоятельствам. - Ереван, 2013.

открывшиеся обстоятельства — это не сведения о фактах, а сами факты[1]. Поэтому мы не разделяем встречающийся в литературе подход, согласно которому четкое разграничение новых доказательств и вновь открывшихся обстоятельств не имеет ни теоретического, ни практического значения[2]: ход исследуемого производства объективно не может быть обеспечен без доказывания вновь открывшегося обстоятельства, а доказывание, в свою очередь, осуществляется представлением данных, квалифицируемых в качестве доказательств с процессуальной точки зрения, то есть категории соотносятся как предмет и средство установления, смешение которых разрушает саму конструкцию основания пересмотра.

Практическая значимость разграничения подтверждается устойчивой и последовательной позицией высших судебных инстанций Российской Федерации, представляющей значительный сравнительно-правовой интерес. Пленум Высшего Арбитражного Суда разъяснил: при рассмотрении заявления о пересмотре суд должен установить, свидетельствуют ли факты, приведенные заявителем, о наличии существенных для дела обстоятельств, которые не были предметом судебного разбирательства по данному делу; если существенные обстоятельства возникли после принятия судебного акта, они не отвечают требованию закона об открытии обстоятельств, которые хотя объективно и существовали, но не могли быть учтены, так как не были и не могли быть известны заявителю; в связи с этим суду следует проверить, не свидетельствуют ли факты, на которые ссылается заявитель, о представлении новых доказательств, имеющих отношение к уже исследовавшимся ранее судом обстоятельствам, — представление новых доказательств не может служить основанием для пересмотра судебного акта по вновь открывшимся обстоятельствам[3]. Показательно, что дословно аналогичное разъяснение содержалось и в прежнем Постановлении Пленума Высшего Арбитражного Суда от 12 марта 2007 года № 17[4], то есть позиция высшего судебного органа является сложившейся и преемственной; аналогичной рекомендации придерживается и Верховный Суд Российской Федерации[5].

[1] **Петрова И.А.** Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам в гражданском и арбитражном процессах: сравнительно-правовой аспект: Дис. … канд. юрид. наук. - М., 2010.

[2] См. критикуемую позицию: **Громов Н.А.** О совершенствовании процессуального законодательства о пересмотре судебных решений по вновь открывшимся обстоятельствам.

[3] Пункт 4 Постановления Пленума Высшего Арбитражного Суда Российской Федерации от 30.06.2011 № 52 “О применении положений Арбитражного процессуального кодекса Российской Федерации при пересмотре судебных актов по новым или вновь открывшимся обстоятельствам”.

[4] Пункт 4 Постановления Пленума Высшего Арбитражного Суда Российской Федерации от 12.03.2007 № 17 (утратило силу).

[5] Пункт 9 Постановления Пленума Верховного Суда Российской Федерации от 11.12.2012 № 31 “О применении норм Гражданского процессуального кодекса Российской Федерации при рассмотрении судами заявлений, представлений о пересмотре по вновь открывшимся или новым обстоятельствам вступивших в законную силу судебных постановлений”.

Вместе с тем позиция Европейского суда по правам человека, определившего в деле Mihalache v. Romania вновь открывшиеся обстоятельства через “новые доказательства, относящиеся к ранее существовавшим фактам”, на первый взгляд, размывает изложенное разграничение. Полагаем, что противоречие здесь мнимое и снимается предлагаемым нами критерием **новизны факта, а не носителя информации**. Существо критерия таково: если новое доказательство лишь по-иному — с большей убедительностью, из другого источника, в другой процессуальной форме — подтверждает обстоятельство, которое уже было предметом исследования и оценки суда, основание пересмотра отсутствует, ибо заявитель добивается переоценки доказательственной базы разрешенного дела; если же посредством нового доказательства *впервые открывается сам факт*, ранее неизвестный заявителю и суду, то вновь открывшимся является именно этот факт, а доказательство выступает лишь процессуальным средством его установления. Проиллюстрируем: повторное экспертное заключение, иначе оценивающее уже исследованный судом объект, — новое доказательство известного обстоятельства, пересмотра не влекущее; обнаруженный после вступления акта в силу подлинник завещания, о существовании которого стороны и суд не знали и не могли знать, — вновь открывшееся обстоятельство (факт иного распоряжения наследодателя), устанавливаемое посредством нового доказательства. Иными словами, новое доказательство никогда не является основанием пересмотра само по себе, но может сопровождать вновь открывшееся обстоятельство в качестве средства его доказывания; формула же Европейского суда описывает именно вторую ситуацию — доказательства, впервые открывающие ранее существовавшие, но неизвестные факты, — и потому не противоречит национальному подходу.

В контексте изложенного сохраняет непреходящее значение правовая позиция Европейского суда по правам человека, сформулированная в деле Pravednaya v. Russia: процедура пересмотра судебного акта по вновь открывшимся обстоятельствам сама по себе не противоречит принципу правовой определенности в той мере, в какой она используется для исправления ошибок правосудия, однако ее применение с целью проведения повторного слушания и получения нового решения по делу представляет собой “замаскированное обжалование” (*appeal in disguise*) и влечет нарушение статьи 6 Конвенции[1]. Приведенная позиция имеет непосредственное практическое значение для армянской правоприменительной практики: она ориентирует пересматривающие суды на строгую проверку соответствия заявленных обстоятельств критериям вновь открывшихся, в том числе посредством предложенного выше четырехэлементного теста, каждая ступень которого как раз и отсеивает разновидности “замаскированного обжалования” (переоценку известных фактов, восполнение упущений стороны,

[1] Решение Европейского суда по правам человека от 18.11.2004 по делу *Pravednaya v. Russia*, жалоба № 69529/01.

повторную оценку доказательств), — и исключает использование производства в качестве скрытой формы обжалования. Показательно, что Пленум Верховного Суда Российской Федерации специально разъяснил исчерпывающий характер перечня оснований пересмотра, не подлежащего расширительному толкованию[1], что может быть воспринято в качестве ориентира также отечественной судебной практикой.

Объединение сформулированных предложений позволяет представить авторскую редакцию тех положений статьи 418 Кодекса, которые относятся к общему основанию. Дефинитивную функцию предлагается выразить нормой следующего содержания: **“Вновь открывшиеся обстоятельства являются основаниями для пересмотра вступившего в законную силу судебного акта, если лицо, подавшее жалобу, доказывает, что эти обстоятельства существовали на момент разрешения дела, не были известны и — при проявлении должной заботливости и осмотрительности — не могли быть известными подавшему жалобу лицу, участвующему в деле, и суду, и эти обстоятельства имеют существенное значение для разрешения дела”.** Регулятивную функцию — связь производства с инстанционной системой — выражает приведенная выше норма о принципе субсидиарности. Обе нормы образуют часть предлагаемой автором консолидированной редакции статьи 418 Кодекса, полный текст которой, включающий также условия применения специальных составов, представлен в отдельной работе автора (готовится к публикации). Существенно, что предлагаемая конструкция не расширяет перечня оснований пересмотра — он остается исчерпывающим, — а изменяет условия доступа к производству, что соответствует общему тезису о недопустимости разрешения проблем института средствами изменения объема перечня оснований.

3. Заключение

Подводя итог исследованию общего основания пересмотра, сформулируем следующие выводы.

Во-первых, общее (родовое) основание пункта 1 части 1 статьи 418 Кодекса выполняет одновременно дефинитивную функцию и объединяет три конститутивных условия: существование обстоятельства на момент разрешения дела, его одновременную неизвестность заявителю и суду и существенность; эти условия подлежат установлению и при применении специальных составов, образуя родовые признаки вновь открывшегося обстоятельства как такового.

Во-вторых, предложен операциональный четырехэлементный тест квалификации обстоятельства в качестве вновь открывшегося (темпоральный вопрос — фактическая неизвестность — объективная непознаваемость при должной осмотрительности — существенность), обобщающий нормативные условия пункта 1 части 1 статьи 418

[1] Пункт 8 Постановления Пленума Верховного Суда Российской Федерации от 11.12.2012 № 31.

Кодекса и стандарт *due diligence*, выработанный практикой Кассационного суда в Постановлении по делу № ԵԴ/28729/02/19; каждая ступень теста функционально отсеивает соответствующую разновидность “замаскированного обжалования” в смысле правовой позиции Европейского суда по делу Pravednaya v. Russia.

В-третьих, по образцу § 582 Гражданского процессуального уложения Германии и функционально тождественных решений английского (Ladd v Marshall) и американского права предложено кодифицировать принцип субсидиарности производства по пересмотру: жалоба не подлежит удовлетворению в той мере, в какой заявитель при должной осмотрительности объективно имел возможность сослаться на обстоятельство при рассмотрении дела либо посредством обжалования судебного акта, — что придает выработанному практикой стандарту нормативную определенность и законодательно связывает исследуемое производство с инстанционной системой.

В-четвертых, обосновано, что общеизвестные факты не могут квалифицироваться как вновь открывшиеся обстоятельства *per se* — в силу внутренней противоречивости утверждения об их неизвестности, — тогда как общедоступность фактов создает опровержимую презумпцию познаваемости, преодолимую доказыванием непреодолимых препятствий доступа к информации, подлежащих оценке судом *in concreto*.

В-пятых, разграничение вновь открывшихся обстоятельств и новых доказательств предложено проводить по критерию новизны факта, а не носителя информации: новое доказательство само по себе основанием пересмотра не является, однако может выступать процессуальным средством установления впервые открывшегося факта; данный критерий снимает мнимое противоречие между устойчивой позицией национальных правопорядков и формулой Европейского суда в деле Mihalache v. Romania.

Список использованных источников

I. Нормативные правовые акты

1. Гражданский процессуальный кодекс Республики Армения № ՀՕ-110-Ն (вступил в силу 09.04.2018).

2. Federal Rules of Civil Procedure, Rule 60(b). URL: https://www.uscourts.gov/forms-rules/current-rules-practice-procedure/federal-rules-civil-procedure (дата обращения: 01.08.2026).

3. Zivilprozessordnung (ZPO) vom 30. Januar 1877 (в действующей редакции), § 582. URL: https://www.gesetze-im-internet.de/zpo/__582.html (дата обращения: 01.08.2026).

II. Материалы судебной практики

4. Постановление Кассационного суда Республики Армения от 19.07.2024 по гражданскому делу № ԵԴ/28729/02/19.

5. Постановление Кассационного суда Республики Армения по гражданскому делу № ԵԱԴԴ/0056/02/08.

6. Постановление уголовной палаты Кассационного суда Республики Армения по делу № ԱՐԱԴ1/0025/01/15.

7. Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 11.12.2012 № 31 “О применении норм Гражданского процессуального кодекса Российской Федерации при рассмотрении судами заявлений, представлений о пересмотре по вновь открывшимся или новым обстоятельствам вступивших в законную силу судебных постановлений”.

8. Постановление Пленума Высшего Арбитражного Суда Российской Федерации от 30.06.2011 № 52 “О применении положений Арбитражного процессуального кодекса Российской Федерации при пересмотре судебных актов по новым или вновь открывшимся обстоятельствам”.

9. Постановление Пленума Высшего Арбитражного Суда Российской Федерации от 12.03.2007 № 17 (утратило силу).

10. *Ackermann v. United States*, 340 U.S. 193 (1950). URL: https://supreme.justia.com/cases/federal/us/340/193/ (дата обращения: 01.08.2026).

11. *Ladd v Marshall* [1954] EWCA Civ 1; [1954] 1 WLR 1489. URL: https://www.uniset.ca/other/cs2/19541WLR1489.html (дата обращения: 01.08.2026).

12. *Mihalache v. Romania* [GC], no. 54012/10, ECtHR, judgment of 08.07.2019.

13. *Pravednaya v. Russia,* no. 69529/01, ECtHR, judgment of 18.11.2004.

III. Научная и учебная литература

14. **Громов Н.А.** О совершенствовании процессуального законодательства о пересмотре судебных решений по вновь открывшимся обстоятельствам (Выходные данные подлежат уточнению; ср.: **Громов Н.А., Цыбулевская О.И., Францифоров Ю.В.** О совершенствовании процессуальной регламентации института рассмотрения арбитражных дел по вновь открывшимся обстоятельствам // Вестник ВАС РФ. 2000. № 6. - С. 125).

15. **Маркосян Т.А.** Производство по пересмотру судебных актов в гражданском судопроизводстве по новым обстоятельствам. - Ереван, 2013.

16. **Петрова И.А.** Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам в гражданском и арбитражном процессах: сравнительно-правовой аспект: Дис. … канд. юрид. наук. - М., 2010.

17. **Rosenberg L., Schwab K. H., Gottwald P.** Zivilprozessrecht. 18. Aufl. München: C. H. Beck, 2018.

ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՔԸ

Ամփոփագիր

Սույն հոդվածում հետազոտվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ամրագրված՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի՝ նոր երևան եկած հանգամանքներով վերանայման ընդհանուր (տեսակային) հիմքը: Հեղինակը նպատակ է դնում ոչ թե նկարագրել վերանայման հիմքերի ցանկը, այլ ձևավորել դրանց կիրառման գործնական մեխանիզմը: Ընդհանուր հիմքի կառուցողական պայմանների՝ ժամանակային, էպիստեմիկ և էականության չափանիշների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի արդի դատական պրակտիկայի վերլուծության հիման վրա առաջարկվում է նոր երևան եկած հանգամանքի իրավական որակավորման քառատարր թեստ: Հիմնավորվում է սուբսիդիարության սկզբունքի օրենսդրական ամրագրման անհրաժեշտությունը՝ վերանայման վարույթը դատական ակտերի ատյանային ստուգման համակարգի հետ կապելու նպատակով, ինչպես նաև առաջարկվում է նոր երևան եկած հանգամանքներն ու նոր ապացույցները տարբերակել ոչ թե տեղեկատվության կրիչի, այլ փաստի նորության չափանիշով: Հետազոտության արդյունքներով ձևակերպվում են հեղինակի առաջարկությունները՝ ուղղված Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի կատարելագործմանը:

Հիմնաբառեր. դատական ակտի վերանայում, նոր երևան եկած հանգամանքներ, պատշաճ զգուշավորություն, սուբսիդիարության սկզբունք, հանգամանքի էականություն, քողարկված բողոքարկում, իրավական որոշակիություն:

GENERAL GROUND FOR THE REVIEW OF A JUDICIAL ACT BASED ON NEWLY DISCOVERED CIRCUMSTANCES

Annotation

This article examines the general (generic) ground for the review of a judicial act that has entered into legal force based on newly discovered circumstances, as provided for in Article 418(1)(1) of the Civil Procedure Code of the Republic of Armenia. Rather than merely describing the statutory list of grounds for review, the article aims to develop an operational framework for their application. Based on an analysis of the constitutive elements of the general ground—namely, the temporal, epistemic, and materiality requirements—as well as the recent case law of the Cassation Court of the Republic of Armenia, the author proposes a four-element test for determining whether a circumstance qualifies as a newly discovered

circumstance. The article substantiates the need to codify the principle of subsidiarity, thereby establishing a legislative link between this review procedure and the system of appellate review of judicial acts. It also argues that newly discovered circumstances should be distinguished from new evidence on the basis of the novelty of the fact rather than the novelty of the evidentiary source. Finally, the article formulates the author's proposals for improving Article 418 of the Civil Procedure Code of the Republic of Armenia.

Keywords: review of a judicial act, newly discovered circumstances, due diligence, principle of subsidiarity, materiality of a circumstance, disguised appeal, legal certainty.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 05.08.2026 թ., տրվել է գրախոսության 08.08.2026 թ., ընդունվել է տպագրության 28.08.2026 թ.:



DOI: 10.59560/18291155-2026.3-231

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Եվրոպական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի հայցորդ,
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

ԱՆՁԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ամփոփագիր

Հոդվածում ուսումնասիրվում է անձի հանձնման իրավական հիմքերի առկայության և հանձնման սահմանադրական թույլատրելիության հարաբերակցության խնդիրը: Հետազոտության նպատակը պարզելն է, թե որքանով կարող է միջազգային պայմանագրից կամ փոխադարձությունից բխող հանձնման հնարավորությունը համարվել բավարար՝ անձի փաստացի փոխանցումը թույլատրելու համար: Վերլուծվում են ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածը, «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» օրենքի գործող կարգավորումները, «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիան և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առանցքային նախադեպերը: Հոդվածի մեթոդաբանական հիմքն են նորմատիվ, համեմատական և նախադեպային վերլուծությունը, ինչպես նաև իրավական կարգավորումների համակարգային մեկնաբանությունը: Հիմնավորվում է, որ հանձնման իրավական հիմքը և հանձնման սահմանադրական թույլատրելիությունը նույնական կատեգորիաներ չեն. առաջինը որոշում է պետությունների համագործակցության հնարավորությունը, իսկ երկրորդը՝ այդ հնարավորության իրականացման թույլատրելի սահմանները կոնկրետ անձի նկատմամբ: Առաջարկվում է հանձնման որոշումների գնահատման եռաստիճան մոտեցում՝ իրավական հիմքի ստուգում, անձնավորված վտանգների գնահատում և պաշտպանության ընթացակարգային արդյունավետության ապահովում: Առանձին ուշադրություն է դարձվում դիվանագիտական երաշխիքների ապացուցողական արժեքին և որոշումների դատական վերանայմանը: Եզրակացվում է, որ հիմնարար իրավունքների իրական պաշտպանության համար անհրաժեշտ է որոշման պատճառաբանության միասնական չափանիշների ձևավորում: Հոդվածի արդյունքները չեն նույնացվում օրենքով արդեն նախատեսված երաշխիքների հետ. ներկայացվում են դրանց կիրառման միասնականացմանն ուղղված մեկնաբանական

և օրենսդրական առաջարկություններ՝ հատուկ ընդգծելով դատական վերանայման առարկայի հստակեցումը:

Հիմնաբառեր. անձի հանձնում, սահմանադրական երաշխիքներ, իրական վտանգ, դիվանագիտական երաշխիքներ, դատական վերահսկողություն:

Ներածություն

Միջազգային քրեաիրավական համագործակցությունը կոչված է կանխելու, որ անձը քրեական հետապնդումից կամ դատավճռի կատարումից խուսափի՝ հայտնվելով մեկ այլ պետությունում: Սակայն հանձնումն ընդամենը միջպետական հարցման կատարման տեխնիկական ընթացակարգ չէ[1]: Դրա արդյունքում անձն անցնում է մեկ այլ պետության իրավազորության ներքո, ինչը կարող է ազդեցություն ունենալ նրա ազատության, անվտանգության և դատական պաշտպանության վրա: Այդ պատճառով անհրաժեշտ է տարանջատել հանձնման իրավական հիմքի առկայությունը և տվյալ անձի նկատմամբ հանձնման սահմանադրական թույլատրելիությունը: Այս հարցերը հատկապես սրվում են, երբ անձը վկայակոչում է խոշտանգման կամ այլ արգելված վերաբերմունքի իրական սպառնալիք:

Հետազոտության նպատակն է ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի, «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի և ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համադրությամբ բացահայտել իրավական հիմքի ու սահմանադրական թույլատրելիության հարաբերակցությունը: Խնդիրներն են՝ ա) սահմանազատել հանձնման պարտավորությունն ու սահմանադրական արգելքները, բ) վերլուծել ընդունող պետությունում վտանգների և երաշխիքների գնահատման չափանիշները, գ) գնահատել հանձնման որոշումների դատական վերանայման բովանդակությունը, դ) առաջարկել օրենքի կիրառման որոշակիությունն ուժեղացնող մեթոդաբանական և օրենսդրական լուծում: Կիրառվել են իրավական նորմերի համակարգային, համեմատական և նախադեպային վերլուծության մեթոդները[2]:

Անձի հանձնումը (էքստրադիցիան) պետությունների միջև քրեական գործերով համագործակցության հատուկ ձև է, որով մի պետությունում գտնվող անձը համապատասխան հիմքերի առկայությամբ փոխանցվում է մյուս պետությանը՝ քրեական հետապնդման կամ դատավճռի կատարման նպատակով: Այն պետք է տարբերակել ապացույցների ստացման և քրեական վարույթի փոխանցման այլ ընթացակարգերից, որովհետև հանձնման դեպքում անմիջապես փոխվում է անձի

[1] Հմմտ. **Bassiouni M.C.** International Extradition: United States Law and Practice. 6th ed. New York: Oxford University Press, 2014, գլուխ I, էջ 1–60 (հանձնման միջպետական և անհատական-իրավական բաղադրիչները):

[2] ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995 թ. (2015 թ. փոփոխություններով), հոդվ. 55: Պաշտոնական բնագիր՝ https://www.concourt.am/normative-legal-bases/constitution-of-ra

փաստացի իրավազորական միջավայրը: ՀՀ օրենքի 1-ին և 6-րդ հոդվածներն այս ինստիտուտին տալիս են ինքնուրույն կարգավորում[1]:

«Հանձնման մասին» 1957 թվականի եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածը սահմանում է հանձնման միջազգային պարտավորությունը՝ պայմանագրով նախատեսված պայմանների շրջանակում: Կոնվենցիայի 3-րդ հոդվածի բացառությունները փաստում են, որ համագործակցությունը չի իրականացվում ցանկացած գնով. հանձնման նպատակն ինքնին չի վերացնում անհատի նկատմամբ պաշտպանության որոշակի սահմանները[2]:

Մասնագիտական գրականության մեջ էքստրադիցիան դիտարկվում է միջազգային համագործակցության և անհատի իրավունքների հատման ոլորտում: Մ. Չ. Բասիունին քննարկում է դրա պայմանագրային, փոխադարձության և ներպետական հիմքերը, սակայն պետության համագործակցության իրավասությունը պետք է վերլուծվի անհատի պաշտպանության երաշխիքների հետ համատեղ[3]:

ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածը նախատեսում է երկու ինքնուրույն երաշխիք. առաջին մասը յուրաքանչյուր անձի համար արգելում է հանձնումը կամ արտաքսումը, երբ առկա է մահապատժի, խոշտանգման կամ այլ արգելված վերաբերմունքի իրական սպառնալիք, իսկ երկրորդ մասը վերաբերում է ՀՀ քաղաքացու հանձնման ընդհանուր արգելքին՝ բացառությամբ վավերացված միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի: Այս տարբերակումը կարևոր է, քանի որ քաղաքացիության հիմքով բացառությունը չի վերացնում 55-րդ հոդվածի առաջին մասի համընդհանուր պաշտպանությունը: «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասը նույնպես նախատեսում է հանձնումը մերժելու հիմքեր, այդ թվում՝ լուրջ վտանգ՝ խոշտանգման կամ անմարդկային վերաբերմունքի առնչությամբ[4]:

Քաղաքացիության կարգավիճակն անձի հանձնման թույլատրելիությունը որոշող ինքնուրույն հանգամանք է[5]: Եթե վիճարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելը, անհրաժեշտ է պարզել քաղաքացիության ձեռքբերման հիմքերը,

[1] «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենք, 15.11.2024 թ., ՀՕ-464-Ն, հոդվ. 6, մաս 1, կետ 6 (գործող խմբագրություն): ՀՀ իրավական տեղեկատվական համակարգ (ARLIS)՝ https://www.arlis.am/hy/acts/230452

[2] «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիա, Փարիզ, 13.12.1957 թ., ETS No. 024, հոդվ. 1 և 3: Եվրոպայի խորհրդի պայմանագրերի գրասենյակ՝ https://www.coe.int/en/web/conventions/full-list?module=treaty-detail&treatynum=024

[3] **Bassiouni M.C.** International Extradition: United States Law and Practice. 6th ed. New York: Oxford University Press, 2014, գլուխ I՝ «The Legal Framework of Extradition in International Law and Practice», էջ 1–60. DOI: 10.1093/law/9780199917891.003.0001:

[4] ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 55, մասեր 1 և 2: «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 33, մաս 2, կետ 2:

[5] ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 55, մաս 2: Տե՛ս նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի 07.02.2025 թ. որոշումը, քրեական գործ թիվ 21/32-559-23, կետեր 17–21:

համապատասխան ժամանակահատվածում գործող օրենսդրությունը և դրա կիրառման համար էական փաստերը: Քաղաքացիություն հաստատող փաստաթղթի բացակայությունը չի փոխարինում իրավական գնահատմանը, ինչպես և փաստաթղթի առկայությունը չի վերացնում դրա իրավական հիմքերի ստուգման անհրաժեշտությունը[1]:

ՀՀ Վճռաբեկ դատարանի 2025 թվականի փետրվարի 7-ի՝ թիվ 21/32-55923 գործով որոշումը տվյալ խնդրի գործնական օրինակ է: Էմիլ Թորոսյանի հանձնման վերաբերյալ գործով բողոքաբերը պնդել էր, որ անձը ծննդով կամ օրենքի ուժով Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, և այդ պատճառով չի կարող հանձնվել օտարերկրյա պետությանը: Վճռաբեկ դատարանը գնահատել է ծնողների քաղաքացիությանը, քաղաքացիության ձեռքբերման ժամանակին և կիրառելի իրավական նորմերին վերաբերող հանգամանքները և եզրահանգել, որ տվյալ գործում անձը Հայաստանի Հանրապետության քաղաքացի չի հանդիսանում: Դատարանն անփոփոխ է թողել հանձնման որոշման վերաբերյալ վերաքննիչ դատարանի դատական ակտը: Նշված գործը ցույց է տալիս, որ քաղաքացիության վերաբերյալ առարկությունը պետք է քննարկվի կոնկրետ նորմերի և ապացույցների հիման վրա, ոչ թե վերացական ենթադրությամբ[2]:

Վճռաբեկ դատարանի նշված որոշման կիրառման ժամանակ պետք է հաշվի առնել անցումային իրավակարգավորումը: Հանձնման ընթացակարգը սկսվել էր մինչև «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» 2024 թվականի օրենքի ուժի մեջ մտնելը, և Վճռաբեկ դատարանը հղում է կատարել նախկին քրեական դատավարական կարգավորման կիրառելիությանը: Հետևաբար որոշումը կարևոր է քաղաքացիության կարգավիճակի բացահայտման և սահմանադրական երաշխիքների կիրառման մեթոդաբանության համար, բայց չի կարող ներկայացվել որպես նոր օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի անմիջական կիրառության օրինակ[3]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հանձնման և արտաքսման իրավաչափությունը կապված է հանձնող պետության որոշման կանխատեսելի հետևանքների հետ: Soering v. the United Kingdom գործով Դատարանը բացատրեց, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման հարց կարող է առաջանալ, եթե հանձնման պահին բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ընդունող պետությունում անձին սպառնում է արգելված վերաբերմունքի իրական վտանգ: Այլ պետության տարածքում ապագայում հնարավոր խախտման մասին խոսելն ինքնին չի ազատում հանձնող պետությանը իր որոշման հետևանքները գնահատելուց:

[1] ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 55, մաս 2: ՀՀ Վճռաբեկ դատարան, 07.02.2025 թ. որոշում, քրեական գործ թիվ 21/32-559-23, կետեր 18–20. https://arlis.am/hy/acts/206763:

[2] ՀՀ Վճռաբեկ դատարան, 07.02.2025 թ. որոշում, քրեական գործ թիվ 21/32-559-23, կետեր 17–21, պաշտոնական հրապարակում՝ 13.05.2025 թ.:

[3] ՀՀ Վճռաբեկ դատարան, նշվ. որոշում, քրեական գործ թիվ 21/32-559-23, կետ 16: «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 95, մաս 2 (անցումային կարգավորում):

Միաժամանակ պահանջվում է կոնկրետ հանգամանքների ուսումնասիրություն, ոչ թե ընդհանրական մտահոգության մեխանիկական ընդունում[1]:

Հանձնման գործընթացի սահմանադրական չափանիշները չեն սպառվում խոշտանգման արգելքով: Othman (Abu Qatada) v. the United Kingdom գործի կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ ՄԻԵԴ-ը նաև ուսումնասիրեց ընդունող պետությունում արդար դատաքննության հիմնարար երաշխիքների հնարավոր խախտումը՝ մասնավորապես խոշտանգման միջոցով ձեռք բերված ապացույցների օգտագործման վտանգը: Հետևաբար անձի իրավունքների գնահատման փուլում պետք է տարբերակել 3-րդ հոդվածի բացարձակ արգելքը և 6-րդ հոդվածի շրջանակներում առաջացող՝ արդար դատաքննության էության բացառիկ ծանր խախտման չափանիշը: Դրանք չեն կարող ներկայացվել միևնույն ապացուցողական շեմով կամ նույն հետևանքներով[2]:

Վտանգների գնահատումը պետք է իրականացվի ապացույցների երկու փոխկապակցված մակարդակով: Առաջինն ընդունող պետության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններն են՝ ազատությունից զրկման վայրերի պայմանները, միջազգային դիտարկումների արդյունքները և իրավապահ մարմինների գործելակերպը: Երկրորդը հանձնման ենթակա անձի անհատական հատկանիշներն ու կենսագրական հանգամանքներն են՝ նախկին հետապնդումները, գործի հրապարակայնությունը, կոնկրետ սպառնալիքները և խոցելիության հնարավոր գործոնները[3]: Soering-ի մոտեցումը կարևորում է կանխատեսելի հետևանքների գնահատումը, սակայն չի ենթադրում, թե երկրի ընդհանուր վիճակի մասին ցանկացած բացասական տվյալ ինքնաբերաբար բացառում է հանձնումը[4]:

Այս խնդրի հաջորդ հարթությունը դիվանագիտական երաշխիքների որակն է: Othman (Abu Qatada) v. the United Kingdom գործով ՄԻԵԴ-ը երաշխիքը գնահատեց ոչ թե միայն դրա գրավոր առկայությամբ, այլ նաև բովանդակության որոշակիությամբ, երաշխիք տրամադրող մարմնի իրավասությամբ, ստանձնած պարտավորությունների կատարման հավանականությամբ և դրանց ստուգման գործնական մեխանիզմներով: Այստեղից հետևում է, որ գրավոր խոստումն անհրաժեշտության դեպքում պետք է համադրվի արտաքին անկախ տեղեկությունների հետ. այլապես հանձնող պետությունը փաստորեն կհրաժարվի

[1] ՄԻԵԴ, *Soering v. the United Kingdom*, դիմում թիվ 14038/88, 07.07.1989 թ. վճիռ, §§ 85– 91, հատկապես՝ § 91. HUDOC՝ https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57619

[2] ՄԻԵԴ, *Othman (Abu Qatada) v. the United Kingdom*, դիմում թիվ 8139/09, 17.01.2012 թ. վճիռ, §§ 258–285. HUDOC՝ https://hudoc.echr.coe.int/eng?i=001-108629

[3] ՄԻԵԴ, *Saadi v. Italy* [GC], դիմում թիվ 37201/06, 28.02.2008 թ. վճիռ, §§ 125–133 : Տե՛ս նաև *Soering v. the United Kingdom,* 07.07.1989 թ. վճիռ, §§ 90–91:

[4] ՄԻԵԴ, *Soering v. the United Kingdom,* նշվ. վճիռ, §§ 90–91: Հմմտ. *Saadi v. Italy* [GC], դիմում թիվ 37201/06, 28.02.2008 թ. վճիռ, §§ 125–133:

անձի նկատմամբ վտանգների սեփական գնահատումից[1]:

ՀՀ իրավակարգավորումն ունի փոխկապակցված, բայց տարբեր գործառույթներ կատարող մի քանի նորմեր: Օրենքի 32-րդ հոդվածը սահմանում է հանձնման թույլտվության կամ մերժման վերաբերյալ որոշում ընդունող մարմիններին, 33-րդ հոդվածը՝ հանձնման մերժման հիմքերը, 34-րդը՝ ընդունված որոշման դատական վերանայման կարգը, իսկ 37-րդը՝ հայցող պետությունից հնարավոր երաշխիքներ պահանջելու կառուցակարգը: Այս դրույթներն անհրաժեշտ է կիրառել համատեղ[2]: Մերժման սահմանադրական հիմքը չի վերանում միայն այն պատճառով, որ հարցումը ներկայացրել է իրավասու մարմինը կամ որ երաշխիքի փաստաթուղթ է ստացվել[3]:

Օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասը նախատեսում է, որ վերանայման ընթացքում դատարանը չի քննարկում հանձնման ենթակա անձի մեղավորության կամ հայցող պետության մարմնի որոշումների օրինականության և հիմնավորվածության հարցերը: Դատարանը ստուգում է հանձնման թույլտվության կամ մերժման որոշման համապատասխանությունն օրենքին և միջազգային պայմանագրերին: Այս սահմանը պետք է հասկանալ որպես օտարերկրյա քրեական գործի ըստ էության քննությունից զերծ մնալու կանոն: Սակայն այն չի կարող նշանակել, թե դատարանն ազատված է հայկական մարմնի որոշման նկատմամբ կիրառելի սահմանադրական երաշխիքների ստուգումից: Դրան հակառակ մեկնաբանությունը հակասության մեջ կմտներ Սահմանադրության գերակայության սկզբունքի հետ[4]:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերն առնչվում են համապատասխանաբար մահապատիժ չնշանակելու կամ չկիրառելու, ինչպես նաև խոշտանգումից և արգելված վերաբերմունքից պաշտպանելու երաշխիքներին: Դրանք միևնույն իրավական խնդրի հավասարազոր լուծումներ չեն. մահապատժի առնչությամբ կարևոր է նաև դրա կիրառումը բացառող իրական և վստահելի պայմանավորվածության առկայությունը, մինչդեռ խոշտանգման վտանգի դեպքում անհրաժեշտ է խիստ անհատական և գործնական գնահատում: Օրենսդրությունը երաշխիք պահանջելու հնարավորություն է նախատեսում, բայց միայն այդ հնարավորության օգտագործման փաստը չի ապացուցում՝ վտանգը վերացվել է, թե ոչ[5]:

[1] ՄԻԵԴ, *Othman (Abu Qatada) v. the United Kingdom*, նշվ. վճիռ, §§ 187–189 (տրամադրված երաշխիքների արժանահավատության չափանիշներ):

[2] «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 32–34 և 37, համակցված մեկնաբանություն: ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 55:

[3] «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 32 (որոշում ընդունող մարմիններ), 33 (մերժման հիմքեր), 34 (դատական վերանայում) և 37 (երաշխիքներ):

[4] «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 34, մաս 7: ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 5 և 55:

[5] «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 37, մաս 1, կետեր 4 և 5 (մահապատժի և արգելված վերաբերմունքի վերաբերյալ երաշխիքներ):

Դատական վերանայման արդյունավետությունը կախված է ոչ միայն ստուգման առարկայից, այլ նաև ընթացակարգից: Օրենքի 34-րդ հոդվածը նախատեսում է հանձնումը թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ որոշումների բողոքարկում առաջին ատյանի, վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում՝ կարճ ժամկետներով: Առաջին և վերաքննիչ ատյաններում գործի քննությունը տեղի է ունենում բանավոր կարգով՝ դռնփակ նիստում, օրենքով նախատեսված մասնակիցների մասնակցությամբ: Այդ կարգավորումներն ուղղված են արագ և կազմակերպված վերանայմանը, սակայն չեն նվազեցնում դատարանի պարտավորությունը՝ գնահատելու բողոքով բարձրացված էական սահմանադրական առարկությունները[1]:

Եթե բողոքաբերը պնդում է Սահմանադրության 55-րդ հոդվածով արգելված վերաբերմունքի իրական սպառնալիք, դատական ստուգման շրջանակում անհրաժեշտ է առնվազն պարզել՝ ներկայացվե՞լ են փաստական հիմնավորումներ, իրավասու մարմինն ուսումնասիրե՞լ է համապատասխան տեղեկությունները, և արդյո՞ք պատճառաբանված է այդ տեղեկություններից բխող եզրահանգումը: Դատարանի այդպիսի վերահսկողությունը չի վերածվում օտարերկրյա մեղադրանքի ապացուցվածության վերագնահատման[2]: Դրա առարկան հայկական մարմնի ընդունած հանձնման որոշման իրավաչափությունն է[3]:

Ընթացակարգի գործնական արդյունավետության երաշխիքներ կան նաև օրենքի 41-րդ հոդվածում: Դրանց թվում են փաստաբանի օգնությունից օգտվելը, որոշումները բողոքարկելը, դատարանում առարկություններ ներկայացնելը, անհրաժեշտ պայմաններում թարգմանչի օգնությամբ իրավունքներն իրացնելը և որոշումների օրինակներն ստանալը: Այդ իրավունքների կիրառությունը պետք է ապահովի, որ անձը հասկանա քննվող հարցը և կարողանա հիմնավորված վիճարկել հանձնման վերաբերյալ որոշումը: Պաշտպանության միջոցը չի կարելի գնահատել արդյունավետ միայն այն պատճառով, որ այն անվանապես նախատեսված է օրենքով[4]:

Հանձնման որոշման պատճառաբանության միատեսակությունը ապահովելու համար առաջարկվում է եռաստիճան վերլուծական սխեմա[5]: Առաջին փուլում ստուգվում են հանձնման պայմանագրային կամ օրենսդրական հիմքը, իրավասու մարմնի մասնակցությունը և հարցման անհրաժեշտ նախադրյալները: Երկրորդ

[1] «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 34, մասեր 1–8 (բողոքարկման ժամկետներ և դատական քննության կարգ):

[2] «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 34, մաս 7 (դատական վերանայման առարկայի սահմանները): ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 55 և 61:

[3] «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 34, մասեր 1, 4 և 7: ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 55 և 61:

[4] «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 41, մաս 1, կետեր 1–6 (անձի դատավարական իրավունքներ):

[5] Առաջարկվող հեղինակային համակարգման նորմատիվ հիմքերը՝ ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 55 և 75. «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 33, 34, 37 և 41:

փուլում պարզվում են հանձնման մերժման հիմքերը, ներառյալ անձի քաղաքացիության կարգավիճակը և ընդունող պետությունում նրան սպառնացող իրական վտանգները՝ հաշվի առնելով ընդհանուր և անհատական ապացույցները: Երրորդ փուլում գնահատվում են որոշման պատճառաբանության բավարարությունը, անձի մասնակցության և պաշտպանության միջոցները, տրամադրված երաշխիքների գործնական արժանահավատությունը և դատարան դիմելու իրական հնարավորությունը: Այս փուլերը փոխկապակցված են, բայց մեկը մյուսով չեն փոխարինվում:

Օրենսդրական հստակեցման նպատակով կարելի է առաջարկել «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասում ավելացնել հետևյալ նախադասությունը. «Հանձնման թույլտվության կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշման վերանայման ընթացքում դատարանն ստուգում է նաև այդ որոշմամբ անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների և ազատությունների պաշտպանության պահանջների պահպանումը, ներառյալ Սահմանադրության 55-րդ հոդվածով նախատեսված հանձնման արգելքի կիրառման համար նշանակություն ունեցող հանգամանքների գնահատման ամբողջականությունն ու հիմնավորվածությունը»: Առաջարկը չի ենթադրում դատարանին նոր՝ օտարերկրյա մեղադրանքի քննության իրավասություն վերապահել, այլ ուղղակիորեն հստակեցնում է գործող վերահսկողության սահմանադրաիրավական չափումը[1]:

Առաջարկվող եռաստիճան սխեման կարելի է կիրառել նաև որոշման պատճառաբանության գործնական կառուցվածքում: Օրինակ՝ հանձնման մասին հարցումը ներկայացվել է գործող պայմանագրի հիման վրա, սակայն անձը մատնանշում է նախկինում իր նկատմամբ կիրառված խոշտանգման դեպք և նույն պետության բանտային պայմանների վերաբերյալ հրապարակված զեկույց: Առաջին փուլում դրական եզրակացությունը դեռ չի նշանակում հանձնման թույլատրելիություն: Երկրորդ փուլում ստուգվում են անձի ներկայացրած փաստերը և ընդունող պետության հետ կապված տվյալները, իսկ երրորդում՝ դրանց վերաբերյալ որոշման բացատրության որակն ու հնարավոր երաշխիքների արդյունավետությունը: Այս օրինակը փաստացի դատական գործ չէ, այլ առաջարկվող մեթոդի կիրառման պայմանական պատկերացում[2]:

[1] «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 34, մաս 7: ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 55 և 75:

[2] «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 33, 34 և 37. https://www.arlis.am/hy/acts/230452

Եզրակացություն

Հետազոտությունը ցույց է տալիս, որ հանձնման իրավական հիմքի առկայությունը և դրա սահմանադրական թույլատրելիությունը տարբեր, թեև փոխկապակցված հարցեր են: Առաջինը վերաբերում է միջպետական համագործակցության նախադրյալներին, երկրորդը՝ կոնկրետ անձի իրավունքներից բխող սահմաններին: ՄԻԵԴ նախադեպային իրավունքը պահանջում է անհատական և կանխատեսելի վտանգի գնահատում, իսկ դիվանագիտական երաշխիքները՝ դրանց իրականացման արժանահավատության ստուգում: ՀՀ Վճռաբեկ դատարանի քննարկված որոշումն ընդգծում է քաղաքացիության իրավական կարգավիճակի պատշաճ պարզման նշանակությունը՝ հաշվի առնելով այդ գործով կիրառված նախկին դատավարական կարգավորումը: Առաջարկված եռաստիճան մեթոդաբանությունն առանձնացնում է իրավական հիմքի ստուգումը, նյութական սահմանադրական արգելքների կիրառումը և պաշտպանության միջոցների արդյունավետությունը: Օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի հստակեցման առաջարկությունն ուղղված է դատարանի արդեն գործող վերահսկողության սահմանադրական բովանդակությունն ընդգծելուն:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 05.07.1995 թ. (06.12.2015 թ. փոփոխություններով), հոդվ. 5, 55, 61, 75 և 81: Պաշտոնական բնագիր՝ concourt.am, «Նորմատիվ իրավական ակտեր» բաժին:

2. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, Հռոմ, 4 նոյեմբերի 1950 թ., հոդվածներ 3, 6 և 13: https://www.echr.coe.int/

3. «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիա, Փարիզ, 13.12.1957 թ., ETS No. 024, ուժի մեջ՝ 18.04.1960 թ. (ՀՀ-ի համար՝ 25.04.2002 թ.), հոդվ. 1–3:

4. Աղբյուր՝ Եվրոպայի խորհրդի պայմանագրերի գրասենյակ (ETS 024):

5. «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-464-Ն, ընդունված՝ 15.11.2024 թ., հրապարակված՝ 02.12.2024 թ., ուժի մեջ՝ 12.12.2024 թ., 01.09.2026 թ. գործող խմբագրությամբ: ARLIS՝ https://www.arlis.am/hy/acts/230452

6. ՀՀ Վճռաբեկ դատարան, քրեական գործ թիվ 21/32-559-23, որոշում՝ 07.02.2025 թ., պաշտոնական հրապարակում՝ 13.05.2025 թ., կետեր 16–23. https://arlis.am/hy/acts/206763

7. European Court of Human Rights. *Soering v. the United Kingdom*, app. no. 14038/88, judgment, 07.07.1989, §§ 85–91. HUDOC: 001-57619.

8. European Court of Human Rights. *Saadi v. Italy* [GC], app. no. 37201/06,

judgment, 28.02.2008, §§ 125–133, 138–139. HUDOC: 001-85276.

9. European Court of Human Rights. *Othman (Abu Qatada) v. the United Kingdom*, app. no. 8139/09, judgment, 17.01.2012, §§ 187–189, 258–285. HUDOC: 001-108629.

10. **Bassiouni M.C.** International Extradition: United States Law and Practice. 6th ed., Oxford University Press, New York, 2014, Part I, pp. 1–60. DOI: 10.1093/law/9780199917891.001.0001.

СООТНОШЕНИЕ ПРАВОВЫХ ОСНОВАНИЙ ЭКСТРАДИЦИИ И ЕЕ КОНСТИТУЦИОННОЙ ДОПУСТИМОСТИ

Аннотация

В статье рассматривается соотношение правового основания экстрадиции и конституционной допустимости фактической передачи лица иностранному государству. Цель исследования состоит в выяснении того, достаточно ли наличия международного договора либо механизма взаимности для принятия положительного решения о выдаче. На основе системного анализа статьи 55 Конституции Республики Армения, действующего Закона “О правовой помощи по уголовным производствам”, Европейской конвенции о выдаче и практики Европейского суда по правам человека проводится разграничение между возможностью межгосударственного сотрудничества и пределами его осуществления в отношении конкретного лица. Особое внимание уделяется критериям реального риска пыток или бесчеловечного обращения, значению дипломатических гарантий и эффективности судебного пересмотра решений об экстрадиции. Предлагается трехступенчатая модель проверки, включающая установление надлежащего правового основания, индивидуальную оценку угроз основным правам и проверку эффективности процедурных средств защиты. Обосновывается вывод о том, что соблюдение формальных требований запроса само по себе не подтверждает конституционную допустимость экстрадиции. Система мотивировки решения должна позволять проследить связь между представленными доказательствами, оценкой рисков, полученными гарантиями и итоговым выводом компетентного органа.

Ключевые слова: экстрадиция, конституционные гарантии, реальный риск, дипломатические заверения, судебный контроль.

THE RELATIONSHIP BETWEEN THE LEGAL BASIS FOR EXTRADITION AND ITS CONSTITUTIONAL PERMISSIBILITY

Annotation

This article examines the distinction between the legal basis for extradition and its constitutional permissibility under Armenian law. A treaty obligation or a request satisfying statutory requirements does not, by itself, resolve whether a person may be surrendered. The analysis focuses on Article 55 of the Constitution of Armenia, the Law on Legal Assistance in Criminal Proceedings and the case law of the European Court of Human Rights. Particular attention is given to the individual assessment of foreseeable ill-treatment, the practical reliability of diplomatic assurances and the scope of judicial review. The article proposes a three-stage analytical framework: verification of the legal basis, an individualised assessment of serious risks and examination of procedural safeguards. It also identifies a need to clarify the statutory scope of judicial review so that courts can assess constitutional objections without determining the merits of foreign criminal charges. The proposed framework aims to make extradition decisions more transparent, consistent and capable of effective scrutiny.

Keywords: extradition, constitutional safeguards, real risk, diplomatic assurances, judicial review.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 25.09.2026 թ., տրվել է գրախոսության 25.09.2026 թ., ընդունվել է տպագրության 09.10.2026 թ.:



DOI: 10.59560/18291155-2026.3-242

ԳԵՎՈՐԳ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուս-հայկական համալսարանի
իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի
ամբիոնի հայցորդ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ամփոփագիր

Հոդվածում իրականացվել է սահմանադրական իրավունքի նորմերի և միջազգային պայմանագրերի իրավունքի նորմերի հարաբերակցության համակարգային պատմաիրավական, տեսական և համեմատական-իրավական վերլուծություն: Հետազոտության **առարկան** ներպետական սահմանադրական կարգավորումների և միջազգային պայմանագրային պարտավորությունների փոխգործակցության կառուցակարգերն են, իսկ **նպատակը**՝ ազգային իրավական համակարգում, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համատեքստում, դրանց արդյունավետ ու օպտիմալ փոխհարաբերության մոդելի բացահայտումը:

Աշխատանքում մանրամասն քննության են ենթարկվել դուալիստական և մոնիստական տեսությունների պատմական էվոլյուցիան, Եվրոպական միության իրավունքի յուրահատուկ բնույթը, ինչպես նաև միջազգային պայմանագրերի նորմերի գերակայության դրսևորումները արտասահմանյան մի շարք երկրների (Գերմանիա, Հունաստան, Բուլղարիա, Իսպանիա) սահմանադրական պրակտիկայում:

Հետազոտության արդյունքում հիմնավորվել է, որ ժամանակակից ինտեգրացիոն գործընթացների պայմաններում իշխող հարաբերակցությունը դուրս է եկել «դուալիզմ ընդդեմ մոնիզմի» ավանդական դիխոտոմիայից և հենվում է փոխլրացման, համակարգային ներդաշնակության ու համադրելիության կանխավարկածի վրա: Հոդվածում ցույց է տրված, որ ներպետական օրենքների նկատմամբ վավերացված միջազգային պայմանագրերի նախապատվությունը չի նվազեցնում Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը, քանի որ հենց

Սահմանադրությունն է հանդիսանում պետության ինքնիշխանությունը երաշխավորող նախնական իրավական «զտիչը»:

Միաժամանակ, վերլուծվել է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային մարմինների (մասնավորապես՝ ՄԻԵԴ-ի) պրակտիկայի ինկորպորացիայի դերը, որը հանգեցնում է սահմանադրական նորմերի դինամիկ զարգացմանն ու «բաց սահմանադրականության» ձևավորմանը՝ միաժամանակ պահպանելով ազգային իրավական ինքնությունը:

Հիմնաբառեր. սահմանադրական իրավունք, միջազգային պայմանագրեր, իրավական համակարգերի հարաբերակցություն, դուալիզմ և մոնիզմ, Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժ, համադրելիության կանխավարկած, բաց սահմանադրականություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականության հիմնավորումը: Ժամանակակից աշխարհաքաղաքական զարգացումների, ինտեգրացիոն գործընթացների խորացման և մարդու իրավունքների համընդհանուր պաշտպանության անհրաժեշտության պայմաններում առանցքային նշանակություն է ստանում ներպետական և միջազգային իրավունքի նորմերի փոխգործակցության ապահովումը: Սահմանադրական իրավունքի և միջազգային պայմանագրերի իրավունքի նորմերի հարաբերակցության հիմնախնդիրը յուրաքանչյուր ինքնիշխան պետության իրավական համակարգի կայունության և իրավունքի գերակայության երաշխավորման ողնաշարն է:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում այս հարցադրումն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական-իրավակիրառական առաջնահերթություն: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված դրույթը, ըստ որի՝ վավերացված միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը, պահանջում է համակարգային վերլուծություն: Այդպիսի կարգավորումը չպետք է ընկալվի լոկ որպես կոլիզիոն տեխնիկական կանոն. այն սահմանադրական կարգի հիմունք է, որը սահմանում է պետության ինքնիշխանության, Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժի և ստանձնած միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման (*pacta sunt servanda*) փոխհարաբերակցության սահմանները:

Միևնույն ժամանակ, «դուալիզմ ընդդեմ մոնիզմի» ավանդական տեսական դիխոտոմիան ժամանակակից սահմանադրական արդարադատության պրակտիկայում տեղի է տալիս «բաց սահմանադրականության» և համադրելիության կանխավարկածի հայեցակարգերին: Միջազգային մարմինների (մասնավորապես՝

ՄԻԵԴ-ի) պրակտիկայի ինկորպորացիան (ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդված) ազգային իրավակիրառ պրակտիկայում առաջացնում է սահմանադրական նորմերի դինամիկ մեկնաբանման անհրաժեշտություն՝ չխաթարելով ազգային իրավական ինքնությունը: Այս ամենը պայմանավորում է թեմայի համալիր պատմահրավական, տեսական և համեմատական-իրավական հետազոտության անհրաժեշտությունն ու բարձր արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Աշխատանքի հիմնական նպատակն է սահմանադրական իրավունքի նորմերի և միջազգային պայմանագրերի իրավունքի նորմերի հարաբերակցության պատմական էվոլյուցիայի, տեսական հայեցակարգերի և արտասահմանյան առաջադեմ փորձի համեմատական վերլուծության հիման վրա բացահայտել դրանց օպտիմալ փոխգործակցության մոդելը Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավակարգում:

Հետազոտության խնդիրները: Նշված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ կոնկրետ խնդիրները.

1. Ուսումնասիրել սահմանադրական և միջազգային իրավունքի նորմերի հարաբերակցության պատմահրավական զարգացումն ու ակունքները նախակապիտալիստական և միջնադարյան ժամանակաշրջաններից մինչև ժամանակակից փուլ:

2. Բացահայտել դուալիստական և մոնիստական (արմատական ու չափավոր) տեսությունների էությունը, դրանց գործառնական նշանակությունը, ինչպես նաև «ռեալիստական դուալիզմի» ու «համադրելիության կանխավարկածի» ժամանակակից ընկալումները:

3. Կատարել համեմատական-իրավական վերլուծություն՝ քննության ենթարկելով միջազգային պայմանագրերի և ներպետական իրավունքի հարաբերակցության սահմանադրական կարգավորումները արտասահմանյան երկրներում (Գերմանիա, Հունաստան, Բուլղարիա, Իսպանիա), ինչպես նաև Եվրոպական միության իրավունքի առանձնահատուկ բնույթը:

4. Վերլուծել ՀՀ Սահմանադրության 5-րդ, 81-րդ և 116-րդ հոդվածների իրավական բովանդակությունը՝ բացահայտելով Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժի (որպես իրավական «զտիչի») և օրենքների նկատմամբ վավերացված միջազգային պայմանագրերի նախապատվության հավասարակշռումը:

5. Հետազոտել նախնական սահմանադրական վերահսկողության դերն ու միջազգային մարմինների պրակտիկայի ազդեցությունը ազգային սահմանադրական արդարադատության և «բաց սահմանադրականության» ձևավորման վրա:

Սահմանադրական իրավունքի նորմերի և միջազգային պայմանագրերի նորմերի հարաբերակցությունը յուրաքանչյուր պետության իրավական համակարգի առանցքային հիմնախնդիրներից է: Անշուշտ, պատմության ժամանակակից փուլում նկատվող միջազգային և ներպետական իրավունքի նորմերի մերձեցման միտումները պայմանավորված են աշխարհաքաղաքական ինտեգրացիոն գործընթացներով և մարդու իրավունքների համընդհանուր պաշտպանության անհրաժեշտությամբ: Հետևաբար, այս փոխգործակցության համատեքստում վճռորոշ է սահմանադրական կարգավորումների դերը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»:

Ակնհայտ է, որ սահմանադրական իրավունքի համակարգում նման դրույթի ամրագրումն ինքնին անհրաժեշտ է ընկալել ո՛չ միայն որպես համընդհանուր իրավական սկզբունք և ո՛չ միայն որպես կոլիզիոն տեխնիկական կանոն, այլև՝ սահմանադրական կարգի հիմունք:

Ուստի, հիշատակված հարցի համակարգային հետազոտությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն իր ծագումնաբանության, այդ թվում՝ պատմաիրավական զարգացման համատեքստում, այլև կատարելով համեմատական-իրավական վերլուծություն՝ դրանով կարևորել ներպետական իրավունքի և միջազգային պայմանագրերի իրավունքի փոխհարաբերությունների կարգավորման միջազգային փորձի նշանակությունը:

Որպես կանոն, միջազգային պարտավորությունների կամավոր կատարման սկզբունքը չափազանց ընդհանուր բնույթ ուներ ոչ վաղ անցյալում և այն չէր արտահայտում ներպետական իրավունքի ու միջազգային պայմանագրերի իրավունքի փոխհարաբերությունների ամբողջական հայեցակարգը: Եվ այդ առումով բաց էր մնում այն հարցի պատասխանը, թե միջազգային պայմանագրերի իրավունքի և ներպետական իրավունքի փոխհարաբերության որ մոդելը կարող է առավել ընդունելի դիտարկվել Հայաստանի Հանրապետության համար: Անշուշտ, տարբեր հետազոտողների կարծիքներն ու մոտեցումները տվյալ խնդրի վերաբերյալ միանշանակ չեն:

Անդրադարձ կատարելով միջազգային պայմանագրերի և ներպետական իրավունքի փոխհարաբերության բնույթի ու նշանակության հիմնախնդրին՝ անհրաժեշտ է այն դիտարկել պատմաիրավական վերլուծությունների պրիզմայի համատեքստում:

Այսպես, հիշատակված իրավական երկու համակարգերի իրավունքի փոխհարաբերության հարցը ծագել է միջազգային իրավունքի ձևավորմանը զուգահեռ: Սակայն նախակապիտալիստական ժամանակաշրջանում այն լուրջ

գիտական վեճերի առարկա չէր դառնում, ինչը հիմնականում պայմանավորված էր նրանով, որ պետության գլուխը (միապետը) իր ձեռքում էր կենտրոնացնում ինչպես օրենսդիր իշխանությունը, այնպես էլ միջազգային պայմանագրեր կնքելու իրավասությունը, ինչը նվազեցնում էր օրենքի և պայմանագրի միջև կոլիզիաների հավանականությունը[1]:

Այդուհանդերձ, պատմությանը հայտնի են վիճահարույց իրավիճակներ: Օրինակ՝ XIV դարում Լիտվայի Մեծ Իշխանության ներպետական իրավունքի և Ռուսաստանի հետ կնքված պայմանագրի միջև առաջացավ հակասություն. Լիտվայի իշխանը հրաժարվեց իր կնոջ՝ Մոսկվայի մեծ իշխան Իվան III-ի դստեր (Ելենայի) համար ուղղափառ եկեղեցի կառուցել՝ վկայակոչելով ներպետական արգելքը:

Պրոֆեսոր Վ.Է. Գրաբարի դիտարկմամբ՝ Իվան III-ը պնդում էր պայմանագրային պարտավորության գերակայությունը՝ նշելով, որ կողմերը համաձայնել են դստեր՝ իր հավատքը պահպանելու իրավունքին[2]: Այս օրինակը վկայում է, որ նույնիսկ միջնադարում ձևավորվում էր միջազգային պայմանագրերի բարեխիղճ կատարման (pacta sunt servanda) սկզբունքի գերակայության ընկալումը:

Հիմնախնդիրը համակարգված հետազոտման առարկա դարձավ XIX դարի երկրորդ կեսից, երբ ամրապնդվեց պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքը և ակտիվացավ միջպետական համագործակցությունը:

Այնուհետև, միջազգային պայմանագրերի իրավունքի և ներպետական իրավունքի փոխհարաբերության հարցի հետազոտության արդյունքում կարևորվեց դուալիստական և մոնիստական հայեցակարգերի առկայությունն ու դրանց գործառնական նշանակությունը:

Ընդ որում, մասնագիտական գրականության մեջ այս հայեցակարգերի հարաբերակցության շրջանակում մոնիստականն իր հերթին դրսևորվում է հետևյալ հիմնական տեսական մոտեցումներով. ա) երբ ներպետական իրավունքն ունի գերակայություն միջազգային պայմանագրերի իրավունքի նկատմամբ, և բ) երբ միջազգային պայմանագրերի իրավունքն ունի գերակայություն ներպետական իրավունքի նկատմամբ[3]:

[1] Տե՛ս **Миронов Н.В.** Соотношение международного договора и внутригосударственного закона // Советский ежегодник международного права, 1965; **Пастухова Л. В.** Право международных договоров. – Симферополь, 2020, էջ 68:

[2] Տե՛ս **Грабарь В.Э.** Материалы по истории литературы международного права в России. - М., 1958, էջ 2: **Стародубцев Г.С.** Международно-правовая наука на постсоветском пространстве // Энциклопедия права. Том 2. № 1. 2014:

[3] Տե՛ս **Батычко В.Т.** Международное право: Соотношение внутригосударственного и международного права: Конспект лекций. - Таганрог, 2011. http://www.aup.ru/books/m232/2_3.htm

Նախ, անհրաժեշտ է նկատել, որ XIX դարի վերջին ձևավորված այս հայեցակարգի հիմնադիրները (Գ. Տրիպել, Դ. Անցիլոտտի, Լ. Օպպենհայմ) միջազգային և ներպետական իրավունքը դիտարկում էին որպես երկու ինքնուրույն իրավական համակարգեր, որոնք չեն գտնվում որևէ ձևով մեկը մյուսի նկատմամբ ենթակայության ներքո[1]:

Սկզբնական շրջանում դուալիստական տեսության կողմնակիցները ընդգծում էին այս համակարգերի ոչ այնքան փոխկապակցվածությունը, որքան դրանց տարբերությունն ու ինքնուրույն լինելը: Այս տեսության հիմքում ընկած էր այն թեզը, ըստ որի՝ միջազգային պայմանագրերի և ներպետական իրավունքը շոշափելիորեն տարբերվում են միմյանցից, նախ և առաջ՝ իրենց կարգավորման առարկայով (համապատասխանաբար՝ միջպետական և ներպետական հարաբերություններ) և աղբյուրներով (միջազգային պայմանագիր/սովորույթ և ներպետական ակտեր):

Այսպես, եթե ներպետական իրավունքը որոշվում էր պետության իրավական համակարգով, սահմանափակվում էր պետության տարածքով և ուղղված էր ընդհանուր բնույթի իրավական հարաբերությունների կարգավորմանը, որոնք ծագում են պետության քաղաքացիների միջև կամ պետության և իր քաղաքացիների միջև:

Բացի դրանից, միջազգային պայմանագրերի և ներպետական իրավունքը տարբերվում են նաև իրավունքի իրենց աղբյուրներով, մասնավորապես, եթե միջազգային պայմանագրերի իրավունքի աղբյուրներն են՝ միջազգային սովորույթը, միջազգային պայմանագրերը, ապա ներպետական իրավունքի աղբյուր են դիտարկվում տվյալ պետության սահմաններում ընդունված իրավական ակտերը:

Այսինքն, դուալիստական տեսությունը միջազգային իրավական նորմերի ձևավորումը բացատրում է պետությունների համընդհանուր այն կամքի արտահայտմամբ, որը դրսևորվում է միջպետական հարաբերություններում իրավաստեղծ համաձայնագրերում: Հետևաբար, դուալիստական տեսության ներկայացուցիչները, ըստ էության, գտնում են, որ միջազգային պայմանագրերի իրավունքը ո՛չ ամբողջությամբ, ո՛չ մասնակի չի կարող լինել ներպետական իրավունքի մաս:

Իր հերթին, ներպետական իրավունքի շրջանակում նույն պետությունը չի կարող իրեն վերապահել իրավասություն փոփոխելու կամ ստեղծելու միջազգային պայմանագրերի իրավունքի նորմեր: Այս առումով, արդարացի է պրոֆեսոր Լ.Ա. Կամարովսկու այն պնդումը, որ. «(...) անհրաժեշտ է խիստ տարանջատել

[1] Տե՛ս **Степкин Е.Ю.** Соотношение норм конституционного права России и международного права при обеспечении личных прав человека и гражданина. Дисс. д-ра юрид. наук. – М., 2004, էջ 77:

ներպետական իրավունքը միջազգային պայմանագրերի իրավունքից՝ պայմանավորված դրանց շփման տարբեր ոլորտներով, ինչպես նաև անթույլատրելի է ոչ միայն պետական սկզբունքները տեղափոխել միջազգային իրավական հարթակ՝ դրանով փորձելով լեգիտիմացնել, այնպես էլ՝ միջազգային պայմանագրերի իրավունքի միջոցներով աջակցել պետական որևէ կարգերի»[1]:

Դուալիստական այս տեսության ժամանակակից կողմնակիցները նաև կարծում են, որ միջազգային պայմանագրերի իրավունքը և ներպետական իրավունքը որպես իրավական համակարգեր, երբեք չեն կարող միմյանց հակասել կամ մտնել հակասության մեջ: Անշուշտ, չպետք է բացառել այնպիսի իրավիճակներ, երբ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին հակասելու կամ այդ պարտավորությունների կատարման «անկարողության» պարագայում՝ պետությունները վարվեն այնպես, ինչպես պահանջում է միջազգային պայմանագրերի իրավունքը[2]:

Ի սկզբանե, դուալիստական տեսությունն արտացոլում է միջազգային պայմանագրերի իրավունքի և ներպետական իրավունքի հարաբերակցության շրջանակները՝ առանց թերագնահատելու երկու համակարգերի փոխկապակցվածության առկայության հանգամանքը: Պատահական չէ, որ այս հայեցակարգի կողմնակիցները հաճախ փնտրում են միջոցներ՝ վերացնելու այդ համակարգերի միջև առաջացած հակասությունները: Այս առումով հայեցակարգային և գործառնական նշանակություն ունի պրոֆեսոր Պ. Ռադոյովի՝ այսպես կոչված «ռեալիստական դուալիզմի» տեսությունը, ըստ որի անհրաժեշտ է ընդունել ոչ միայն այդ համակարգերի միջև հնարավոր հակասությունների առկայությունը, այլև՝ ի վերջո, դրանք լուծել բացառապես միջազգային իրավունքի օգտին, այնքանով, որքանով հակառակ մոտեցումը կնշանակեր դրա ժխտումը[3]:

Անհրաժեշտ է նաև նկատել, որ առանձին իրավաբաններ դուալիստական տեսության շրջանակում դիտարկում են այնպիսի մոտեցումներ, որոնք «հենվում են պետությունների ինքնիշխանության երաշխավորման վրա և արտացոլում միջազգային հարաբերությունների համընդհանուր-ժողովրդավարական բնույթը»[4]:

Մյուս կողմից՝ այս տեսության մեկ այլ խումբ կողմնակիցներ թեև միջազգային պայմանագրերի իրավունքը և ներպետական իրավունքը դիտարկում են որպես

[1] Տե՛ս **Камаровский Л.А.** Основные вопросы науки международного права. - М., 1892, էջ 142. https://studfile.net/preview/16829739/

[2] Այդպիսի տեսակետ է արտահայտել բրիտանացի Ջ. Ֆիցմորիսը, մանրամասն տե՛ս. **Futzmaurice J.** The general principles of International Law // Pdc, 1957-11:

[3] Տե՛ս **Радойнов П.** Международно-правовые проблемы экономической интеграции. - София, 2-е изд., 2018, էջ 59:

[4] Այս տեսակետին համակարծիք են նաև Է. Ամետիսովը, Վ. Բուտկևիչը, Ա. Գավերդովսկին, Ռ. Մյուլլերսոնը, Ե. Ուսենկոն, Ս. Չերնիչենկոն և այլոք:

ինքնուրույն իրավական համակարգեր, այդուհանդերձ գտնում են, որ այդ համակարգերը իրար հետ սերտ կապված են և անմիջական ազդեցություն կամ ներգործություն ունեն միմյանց նկատմամբ:

Այս առումով, ուշադրության է արժանի պրոֆեսոր Ե.Տ. Ուսենկոյի տեսակետը, ըստ որի՝ «(...) իրավական այդ երկու համակարգերի միջև կապը գերակայության և ենթակայության բնույթ չունի, և բնութագրվում է խիստ համակարգված, համատեղ գործողության ոլորտում դիտարկվող օբյեկտների միջև փոխհամաձայնեցված և փոխլրացնող հատկությամբ»[1]:

Միաժամանակ, դուալիստական տեսության առանձին ներկայացուցիչներ պնդում են, որ իրավական այս համակարգերի նորմերի միջև կարող են առաջանալ հակասություններ, սակայն դրանք կարող են լուծվել պետությունների միջև խաղաղ միջոցներով միջազգային վեճերի կարգավորման կամ միջազգային իրավական պատասխանատվության ինստիտուտի շրջանակում: Այսպես, միջազգային իրավունքի պրոֆեսոր Ք. Ռայթը նշում է. «Պետք է ընդունել դուալիստական տեսակետի առկայությունը, քանի որ միջազգային դատարանները կիրառում են միջազգային պայմանագրերի իրավունքի նորմեր, իսկ ազգային դատարանները՝ ազգային իրավունքի նորմեր»[2]:

Միջազգային պայմանագրերի իրավունքի և ներպետական իրավունքի հարաբերակցության հաջորդ կարևոր տեսությունը «մոնիստականն» է, որը մի դեպքում, դրսևորվում է միջազգային պայմանագրերի իրավունքի նկատմամբ ներպետական իրավունքի գերակայությամբ, մեկ այլ դեպքում՝ ներպետական իրավունքի նկատմամբ միջազգային պայմանագրերի իրավունքի գերակայության վերաբերյալ մոտեցումներով:

Միաժամանակ, մասնագիտական գրականության մեջ շրջանառվող այսպես կոչված՝ «արմատական» մոնիստական տեսության ներկայացուցիչները ղեկավարվում են այն կանխավարկածով, որ գոյություն ունեն «բարձրագույն իրավակարգով» օժտված միջազգային պայմանագրերի իրավունքի համակարգեր և այսպես կոչված՝ «ստորադաս իրավակարգով» օժտված ազգային իրավական համակարգեր[3]: Այս տեսության կողմնակիցները գտնում են, որ չնայած դրանք գտնվում են մեկ միասնական համակարգում, այնուամենայնիվ ունեն աստիճանակարգված ենթակայություն, ընդ որում, եթե այդ աստիճանակարգվածության ստորին մասում են վարչական ակտերը և դատական

[1] Տե՛ս **Усенко Е.Т.** Соотношение и взаимодействие международного и национального права и Российская Конституция // МЖМП. 1995. № 2, էջ 14:

[2] Цит. по: Каланда В.А. О трансформации норм международного права в правовую систему РФ // МЖМП, 1994, №3, էջ 48:

[3] Տե՛ս **Kelsen.** General Theory of Law. Cambrigde, 1945; Principles of International Law. - New York, 1967, վերահրատարկված, 2011, էջ 158:

մարմինների որոշումները՝ միջազգային նորմերի հետ պարտադիր համապատասխանության պայմանով, ապա վերևի մասում իրենց առանցքային դերն ունեն միջազգային իրավական նորմերը՝ չգտնվելով իրավական որևէ նորմի հետ պարտադիր համապատասխանության մեջ[1]:

Ինչ վերաբերում է այսպես կոչված՝ «չափավոր» մոնիստական տեսության ներկայացուցիչների մոտեցումներին, ապա վերջիններս դիտարկում են միջազգային պայմանագրերի նորմերի առաջնահերթությունը այն պայմանով, որ միջազգային իրավունքի նորմերին հակասող ազգային օրենսդրության նորմերը ինքնաբերաբար անվավեր են ճանաչվում, և այդ առումով նրանք պետության դերը տեսնում են միջազգային պայմանագրերի իրավունքի նորմերի՝ ազգային իրավական համակարգում փոխակերպելու գործընթացին նպաստելը[2]:

Ժամանակակից սահմանադրական և միջազգային պայմանագրային հարաբերություններում ներպետական իրավունքի նկատմամբ միջազգային պայմանագրերի իրավունքի գերակայության ճանաչումը առանձին հեղինակների կողմից ընկալվում կամ փոխկապակցվում է որպես պետության ինքնիշխանության սահմանափակում կամ այդ ինքնիշխանությունից ամբողջական հրաժարում՝ այսպիսով հանգեցնելով «համաշխարհային պետության» և «համաշխարհային իրավունքի» ստեղծման գաղափարի առաջմղմանը: Այսպես, ամերիկացի իրավագետներ Մ. Մակդուգալը և Մ. Ռայզմանը նշում են, որ «գիտատեխնիկական առաջընթացը մարդկությանը մղում է ավելի սերտ կապերի հաստատմանը, որի արդյունքում պետությունները դեռևս մնում են միջազգային պայմանագրերի ասպարեզում, սակայն այդ ասպարեզում մեծանում է ֆիզիկական անձանց դերակատարումը, և այդ հանգամանքով պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում ստեղծել «համաշխարհային պետություն», որը կծառայի երկակի նպատակին, այն է՝ մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված համընդհանուր իրավական համակարգի հաստատում և համաշխարհային տոտալիտար պետության ստեղծման փորձերի կանխում»[3]:

Պետք է նշել, որ հիշյալ գիտնականներն ընդհանուր առմամբ մատնանշում են համաշխարհային համայնքի ձևավորման որոշ միտումներ, սակայն ներկայիս միջազգային հարաբերությունների պայմաններում «համաշխարհային պետության» և «համաշխարհային իրավունքի» ստեղծման գաղափարը կարծես թե ուտոպիստական բնույթ է կրում:

[1] Տե՛ս **Буткевич В.Г.** Соотношение внутригосударственного и международного права. - Киев, 1981, էջ 25:

[2] Տե՛ս **Scelle G.** Cours de droit international public. Paris. 1948. P. 104:

[3] Մեջբերումը կատարված է գրքից՝ **Карташкин В.А.** Права человека в международном и внутригосударственном праве. - М., 2005, էջ 18.:

Անհրաժեշտ է կարևորել նաև պրոֆեսոր Պ.Ե. Կազանսկու հետևյալ մոտեցումը, ըստ որի «Ներպետական իրավունքը չի կարող հակասել միջազգային իրավունքին, թերևս, եթե այդպիսի հակասություններ ինչ-ինչ պատճառով առաջացել են, ապա պետությունը պարտավոր է և՛ բարոյական, և՛ իրավական առումներով իր ներքին կարգավորումները համապատասխանեցնել իր իսկ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին»[1]:

1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԵՎ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ)

Անդրադառնալով առանձին երկրների սահմանադրական կարգավորումների համակարգային վերլուծությանը՝ մասնավորապես անհրաժեշտ է նկատել, որ ժամանակակից սահմանադրություն ունեցող երկրների սահմանադրական նորմերում գերակա նշանակություն է ստացել այն գաղափարը, համաձայն որի՝ միջազգային պայմանագրերի նորմերը կազմում են պետության իրավական համակարգի բաղկացուցիչ մաս, իսկ դրանց կիրառման դեպքում այդ նորմերի և ներպետական իրավունքի նորմերի միջև հնարավոր հակասություն առաջանալու ժամանակ նախապատվությունը տրվում է միջազգային պայմանագրերի նորմերին[2]:

Այսպես, օրինակ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրության (Հիմնական օրենքի) 25-րդ հոդվածով ամրագրված է հետևյալը. «Միջազգային իրավունքի ընդհանուր նորմերը հանդիսանում են դաշնության իրավունքի բաղկացուցիչ մասը: Նրանք գերակայություն ունեն օրենքների նկատմամբ և ուղղակիորեն ստեղծում են իրավունքներ և պարտականություններ դաշնային տարածքի բնակիչների համար» (հոդվ. 25)[3]: Կամ, Հունաստանի Սահմանադրության 28-րդ հոդվածի 1-ին կետով ճանաչված միջազգային պայմանագրերի իրավունքի նորմերը, ինչպես նաև միջազգային պայմանագրերը դրանց վավերացումից և ուժի մեջ մտնելուց հետո «դառնում են հունական ներքին իրավունքի բաղկացուցիչ մաս»[4]:

Իսկ Բուլղարիայի Սահմանադրության 5-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ սահմանադրական կարգով վավերացված, հրապարակված և ուժի մեջ մտած

[1] Տե՛ս **Камаровский Л.А.** Основные вопросы науки международного права. - М., 1892, էջ 45:

[2] Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասը գրեթե նույնաբնույթ ամրագրում է բովանդակում:

[3] Տե՛ս Конституции зарубежных государств. - М., 2003, էջ 123:

[4] Տե՛ս Constitution of Greece // https://books.4minsk.by/normativnyj-pravovoj-akt/konstituciya/konstituciya-grecii.

միջազգային պայմանագրերը «դառնում են երկրի ներքին իրավունքի մաս»[1]: Գրեթե նույնաբովանդակ է Իսպանիայի Սահմանադրության 96/1 հոդվածի կարգավորումը, ըստ որի՝ Իսպանիայի կողմից օրինական կերպով կնքված և պաշտոնապես հրապարակված միջազգային պայմանագրերը կազմում են նրա ներքին օրենսդրության մի մասը, իսկ այդ պայմանագրերի դրույթները կարող են չեղարկվել, փոփոխվել կամ կասեցվել միայն միջազգային պայմանագրերում սահմանված կարգով կամ միջազգային իրավունքի ընդհանուր նորմերի համաձայն[2]:

Այսպիսի ընդհանրական և նմանատիպ դրույթներ պարունակում են նաև մի շարք այլ պետությունների սահմանադրություններում:

Անհրաժեշտ է նկատել, որ միջազգային պայմանագրերի նորմերի գերակա դերի ճանաչումը չնայած իր արտահայտումն է գտել բազմաթիվ պետությունների սահմանադրություններում, սակայն, դա չի նշանակում, որ ներպետական իրավական համակարգը փոխարինվում է միասնական համաշխարհային իրավական համակարգով:

Միջազգային պայմանագրի նորմերի գերակայությունը պետք է բխի այն տրամաբանության անհրաժեշտությունից, որ ազգային իրավական նորմերը համահունչ լինեն պետության համար պարտադիր կատարման ենթակա միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին, հետևաբար դրանք պետք է ներդաշնակեցվեն միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքների և նորմերի հետ[3]: Տվյալ դեպքում, գերակայությունն անհրաժեշտ է ընկալել ոչ թե որպես մեկ իրավական համակարգի ենթակայություն մյուսի նկատմամբ, այլև՝ այդ գերակայության միջոցով կանխորոշել երկու իրավական համակարգերի հարաբերությունների բնույթը:

Անվիճելի է մնում այն սկզբունքի նշանակությունը, ըստ որի՝ պետությունը, իր ինքնիշխանությունից ելնելով, ազատ է ընտրելու իր քաղաքական, սոցիալական և մշակութային համակարգերը, ինչպես նաև սահմանելու իր օրենսդրությունը: Պետության ինքնիշխանությունը արտահայտվում է նաև Սահմանադրությամբ հռչակված առանձնահատուկ կարգավիճակում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, օրենքները պետք է համապատասխանեն

[1] Տե՛ս Constitution of the Republic of Bulgaria https://unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/Communications/Bulgaria_NGO_DEN/Annex_3_Constitution_of_the_Republic_of_Bulgaria.pdf

[2] Տե՛ս Конституции зарубежных государств. - М., 2003, էջ 214:

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդ. խմբ. Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի: Երևան, «Իրավունք», 2010, էջ 107-108:

սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին:

Այս կարգավորումների բովանդակությունից հետևում է, որ՝ իրավական որևէ նորմ, այդ թվում նաև միջազգային պարտավորություններից բխող, չպետք է հակասի Սահմանադրությանը: Այս համընդհանուր նշանակություն ունեցող կանոնը բնորոշ է գրեթե բոլոր սահմանադրություններին:

Ապահովելով պետության իրավունքը՝ ինքնուրույն սահմանելու իր իրավական համակարգը՝ միջազգային պայմանագրերի իրավունքը միևնույն ժամանակ սահմանում է, որ ինքնիշխան իրավունքների իրացման ժամանակ, այդ թվում՝ օրենքներ սահմանելու իրավունքի շրջանակներում, պետությունները հաշվի են առնում իրենց պարտավորությունների ծավալները, որոնք բխում են միջազգային պայմանագրերի իրավունքի նորմերի բովանդակությունից:

Այստեղից, ընդհանրացնելով, անհրաժեշտ է նշել, որ իրավական համակարգ սահմանելու իրավունքը ներառում է նաև միջազգային պայմանագրերի իրավունքը, որի նորմերի իրականացումը ենթադրում է դրանց՝ ազգային իրավական մակարդակում փոխակերպումն ապահովելու մեթոդների ընտրության իրավունքը:

Միջազգային պարտավորությանը հակասող ներքին իրավունքի՝ օրենքի կամ այլ նորմատիվ ակտի ընդունումը կարող է հիմք հանդիսանալ այլ պետությունների բողոքի, ինչպես նաև հակաքայլերի ձեռնարկման համար:

Պետությունը, իրավունքն ու պետության իրավական համակարգը հանդիսանում են երկրի արտաքին աշխարհի հետ փոխհարաբերությունների և փոխգործակցության հիմնական կառուցակարգերը: Միջազգային հարաբերությունների դերի աճն ու դրանց ազդեցությունը ազգային հասարակությունների կյանքի վրա բերում է նրան, որ ազգային իրավական համակարգերը գնալով ավելի հաճախ կառուցվում են՝ հենց հաշվի առնելով ինչպես սահմանադրական իրավունքի, այնպես էլ՝ միջազգային պայմանագրերի իրավունքի պահանջները:

Միջազգային պայմանագրերի նորմերի և ներպետական իրավունքի նորմերի հարաբերակցության հարցը դիտարկելիս անհրաժեշտ է կարևորել նաև այդ համակարգերի փոխազդեցության որոշ առանձնահատուկ դեպքերը:

Այս առումով առավել բնութագրական է Եվրոպական միության օրինակը: Այսպես, ընդհանրական կանոններով Եվրոպական միության իրավունքի, Եվրոպական միության մասնակից պետությունների ազգային իրավունքի և միջազգային պայմանագրերի իրավունքի հարաբերակցությունը կառուցվում է նույն հիմքերի, նույն փոխհարաբերությունների վրա: Այլ կերպ ասած՝ այստեղ ևս կարելի է նշել Եվրոպական միության իրավունքի, Եվրոպական միության մասնակից պետությունների ազգային իրավունքի նկատմամբ միջազգային պայմանագրերի նորմերի գերակայության մասին:

Առանձնահատկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ միջազգային պայմանագրերի իրավունքի նման՝ Եվրոպական միության և այդ Միության մասնակից պետությունների ազգային իրավական համակարգերի ձևավորումն ավելի հաճախ հիմնվում է պետությունների շահերի հավասարակշռման վրա:

Այս պատճառով Եվրոպական միության հանրային իրավունքի, անդամ պետությունների ազգային իրավունքի և միջազգային պայմանագրերի հարաբերակցությունն ունի առանձնահատուկ բնույթ: Եվրոպական միության իրավունքի համակարգին թերևս ավելի մոտ է միջազգային պայմանագրերի իրավունքի բնույթը, քան՝ ներպետական իրավունքը, քանի որ այն հիմնված է պետությունների շահերի հավասարակշռման վրա, սակայն օժտված է ուղղակի ներգործությամբ և ազգային իրավունքի նկատմամբ բացարձակ գերակայությամբ[1]:

2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՈԴԵԼՈՒՄ

Ժամանակակից իրավական պետությունում սահմանադրական իրավունքի և միջազգային պայմանագրերի իրավունքի փոխհարաբերության հիմնահարցը կարևոր նշանակություն ունի: Մի դեպքում, դա պայմանավորված է աշխարհաքաղաքական գործընթացների խորացման ընթացքով, իսկ մեկ այլ դեպքում՝ մարդու իրավունքները դիտարկվում են որպես միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններով և միաժամանակ ներպետական իրավունքով համընդհանուր պաշտպանության առարկա:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ սահմանադրական իրավունքի և միջազգային պայմանագրերի իրավունքի նորմերի գործառնական կապը բացատրվում է այն հիմնավորմամբ, որ՝ մի կողմից, միջազգային պայմանագրերի և ներպետական իրավունքը կազմում են մեկ միասնական համակարգ, որտեղ միջազգային պայմանագրի նորմերն ուժի մեջ մտնելու պահից ինքնաբերաբար դառնում են ներպետական իրավունքի համակարգի բաղկացուցիչ մաս, մյուս կողմից՝ դրանք տարբեր համակարգեր են, և միջազգային պայմանագրի նորմը կարող է կիրառվել երկրի ներսում միայն հատուկ ներպետական ակտի կամ իմպլեմենտացիայի միջոցով:

Իրավական նորմերի աստիճանակարգության տեսանկյունից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ (Սահմանադրություն, հոդվ. 5, մաս 1), ինչը նշանակում է, որ վավերացման

[1] Մանրամասն տե՛ս **Հարությունյան Ա.Շ.** Եվրոպական միության իրավունքի հիմունքները: Եր., 2011, էջ 243-250:

ենթակա միջազգային պայմանագրերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, իսկ վերջինիս հակասության դեպքում՝ այդպիսի միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել (Սահմանադրություն, հոդվ. 116, մաս 3):

Այս գերակայությունն ապահովվում է նախնական սահմանադրական վերահսկողության միջոցով, երբ՝ մինչև Ազգային ժողովի կողմից վավերացումը, Սահմանադրական դատարանը ստուգում է պայմանագրով ստանձնած պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը:

Միևնույն ժամանակ, վավերացված միջազգային պայմանագրերը կիրառման դեպքում ունեն նախապատվություն օրենքների նկատմամբ, և եթե դրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա գործում են միջազգային պայմանագրի դրույթները (Սահմանադրություն, հոդվ. 5, մաս 3):

Սահմանադրական իրավունքի և միջազգային պայմանագրերի նորմերի փոխգործակցությունն արտահայտվում է նաև մի շարք ուղղություններով, որոնցից առաջնայինը իրավական ինկորպորացիան և տրանսֆորմացիան է, երբ միջազգային պայմանագրերի նորմերը ներառվում են ներպետական իրավական համակարգ՝ ուղղակի հղումների կամ օրենսդրության համապատասխանեցման միջոցով:

Այստեղ կարևոր դեր ունի նաև մեկնաբանական կամ ինտերպրետացիոն փոխգործակցությունը, քանի որ սահմանադրական նորմերը հաճախ բացահայտվում են միջազգային պայմանագրերի իրավունքի և դատական ակտերի, այդ թվում՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայի լույսի ներքո (Սահմանադրություն, հոդվ. 81, մաս 1): Այս ամենը նպաստում է իրավական համակարգերի ոչ միայն ներդաշնակեցմանն ու միասնականացմանը, որտեղ միջազգային պայմանագրերը ծառայում են որպես կողմնորոշիչ սահմանադրական կարգավորումների ու գործընթացների հետագա զարգացման համար:

Հնարավոր իրավական հակասություններից կամ կոլիզիաներից խուսափելու նպատակով կիրառվում են հատուկ կառուցակարգեր, ինչպիսին է համադրելիության կանխավարկածը, որի դեպքում իրավակիրառողը փորձում է գտնել նորմերի և դրանց ներդաշնակ մեկնաբանությունների համադրելիության շրջանակում: Այն դեպքերում, երբ կարևոր միջազգային պայմանագրերով պարտավորությունների ստանձնումն անհնար է գործող Սահմանադրության պայմաններում, պետությունը կարող է դիմել սահմանադրական փոփոխությունների ինստիտուտին: Վերջնարդյունքում, սահմանադրական իրավունքի նորմերի և միջազգային պայմանագրերի հարաբերակցությունը հիմնվում է սահմանադրական ինստիտուտների փոխգործակցության սկզբունքի վրա, ինչը թույլ է տալիս պահպանել պետության ինքնիշխանությունը՝

միաժամանակ կատարելագործելով մարդու իրավունքների պաշտպանության ներպետական համակարգը:

Այս հարաբերակցության գործնական կողմն առավել հստակ արտահայտվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության առանձին հոդվածներում, որոնք սահմանում են միջազգային պայմանագրերի իրավունքի տեղը ներպետական իրավական համակարգում: Մասնավորապես, Սահմանադրության 5-րդ հոդվածի կարգավորումների բովանդակությունից հետևում է, որ վավերացված միջազգային պայմանագրերը հանդիսանում են Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասը, և եթե դրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: Ավելին, Սահմանադրության 81-րդ հոդվածը սահմանում է կարևորագույն հետևյալ կանոնը, ըստ որի՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սահմանադրական դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացված՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Սա նշանակում է, որ միջազգային կազմակերպությունների, հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները դառնում են սահմանադրական նորմերի բովանդակության բացահայտման պարտադիր գործիք:

Փոխգործակցության մեկ այլ կարևոր ձև է նաև սահմանադրական մասնագիտացված դատական վերահսկողությունը, որն իրականացնում է Սահմանադրական դատարանը: Այս գործընթացը երաշխավորում է, որ պետությունը չստանձնի այնպիսի միջազգային պարտավորություններ, որոնք կարող են վտանգել սահմանադրական կարգը կամ ինքնիշխանությունը:

Եթե միջազգային պայմանագիրը ճանաչվում է Սահմանադրությանը հակասող, այն չի կարող վավերացվել, քանի դեռ համապատասխան փոփոխություններ չեն կատարվել հենց Սահմանադրության մեջ: Սա ևս մեկ անգամ ընդգծում է սահմանադրական նորմի նախապատվությունը միջազգային պայմանագրերի նորմի նկատմամբ վերջինիս ներպետականացման փուլում, սակայն վավերացումից հետո այդ նորմերը սկսում են գործել փոխլրացման և ներդաշնակության սկզբունքով:

Այսպիսով, սահմանադրական իրավունքի նորմերի և միջազգային պայմանագրերի հարաբերակցությունը ոչ թե մրցակցային է, այլ փոխգործակցող ու փոխլրացնող: Միջազգային պայմանագրերը հարստացնում են ներպետական իրավունքը նորարարական լուծումներով և պաշտպանության մեխանիզմներով, իսկ Սահմանադրությունը ծառայում է որպես այդ նորմերի զտիչ և իրավական հիմք՝ ապահովելով պետության իրավական ինքնությունը: Այս համակարգված կապը ժամանակակից ինտեգրացիոն գործընթացների համատեքստում

ապահովում է իրավունքի գերակայությունը և նպաստում է պետության կայուն զարգացմանը:

Միջազգային պրակտիկայում սահմանադրական իրավունքի և միջազգային պայմանագրերի իրավունքի փոխգործակցությունն առավել ցայտուն է դառնում մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, որտեղ միջազգային պայմանագրերը հանդես են գալիս որպես «նվազագույն չափանիշներ»: Սա նշանակում է, որ պետությունը պարտավորվում է ապահովել իրավունքների պաշտպանության գոնե այն մակարդակը, որը սահմանված է միջազգային փաստաթղթերով, սակայն Սահմանադրությամբ կարող է սահմանել ավելի բարձր երաշխիքներ:

Այս առումով հատկանշական է միջազգային պայմանագրերի նորմերի առնվազն նվազագույն «սահմանադրականացումը», երբ միջազգային պայմանագրերի իրավունքի սկզբունքները, ինչպիսիք են համաչափությունը կամ իրավական որոշակիությունը, ներթափանցում են ներպետական դատական պրակտիկա և դառնում սահմանադրական արդարադատության անբաժանելի մասը:

Նման փոխգործակցությունը նպաստում է այսպես կոչված «բաց սահմանադրականության» ձևավորմանը, որտեղ պետությունը՝ իր ինքնիշխանության ապահովման պահանջների պահպանման շրջանակում, պատրաստակամ է ընդունել միջազգային իրավակարգի առաջադեմ զարգացումները:

Այսպիսով, ընդհանրացնելով հետազոտման առարկա հիմնախնդիրների պատմահրավական, տեսական և համեմատական վերլուծության ու հետազոտության արդյունքները՝ անհրաժեշտ է կատարել հետևյալ **եզրահանգումները.**

1) Սահմանադրական իրավունքի և միջազգային պայմանագրերի իրավունքի նորմերի հարաբերակցության հիմքում ընկած է փոխլրացման և համակարգային ներդաշնակության սկզբունքը, որը սահմանադրական ժամանակակից կարգավորումների փուլում դուրս է եկել ավանդական «դուալիզմ ընդդեմ մոնիզմի» դիխոտոմիայից (երկճյուղավորում) և այն անհրաժեշտ է ընկալել ոչ թե որպես մրցակցային կամ մեկը մյուսի նկատմամբ ենթակայության, այլ որպես փոխգործակցող, ներդաշնակեցնող և փոխլրացնող համակարգ, այստեղից՝ իրավական պետության կայացման համար անհրաժեշտ է ոչ թե նախապատվությունը տալ համակարգերից մեկին, այլ ապահովել դրանց ներդաշնակ գոյակցությունը՝ հիմնված մարդու իրավունքների գերակայության և պետության ստանձնած միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման վրա:

2) Ներպետական իրավական համակարգում օրենքների նկատմամբ միջազգային պայմանագրի նորմերի գերակայությունը չի ենթադրում ստորադասել Սահմանադրությունը, այլ ընդհակառակը՝ Սահմանադրությունն է հանդիսանում այն իրավական «զտիչը», որը նախնական սահմանադրական վերահսկողության ինստիտուտի միջոցով ապահովում է պետության ինքնիշխանության և սահմանադրական կարգի անխաթարությունը:

3) Միջազգային պայմանագրերի (մասնավորապես՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում) և դրանք մեկնաբանող միջազգային մարմինների պրակտիկայի ինկորպորացիան ազգային սահմանադրական արդարադատության մեջ հանգեցնում է այդ պայմանագրերի նորմերի սահմանադրականացմանը, հետևաբար՝ այսպես կոչված «բաց սահմանադրականության» ձևավորման և պետության ինքնիշխանության ապահովման պահանջների պահպանման համատեքստում նպաստում սահմանադրական նորմերի դինամիկ զարգացմանը՝ չխախտելով ազգային իրավական ինքնությունը:

4) Հայաստանի Հանրապետության սահմանադրական մոդելի պարագայում (հոդվ. 5, 81 և 116) սահմանադրական իրավունքի և միջազգային պայմանագրերի իրավունքի նորմերի միջև հնարավոր իրավական հակասություններից խուսափելու համար իրավակիրառ պրակտիկան առաջնորդվում է համադրելիության կանխավարկածով, երբ ազգային օրենսդրությունը, որքանով դա հնարավոր է, պետք է մեկնաբանվի պետության ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ, ապահովելով Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը, երաշխավորելով միջազգային պայմանագրերի առաջնահերթությունը օրենքների նկատմամբ և միջազգային իրավունքի առաջադեմ պրակտիկան ծառայեցնելով ներպետական մակարդակում մարդու իրավունքների պաշտպանության համակարգային կատարելագործմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրական իրավունքի նորմերի և միջազգային պայմանագրերի իրավունքի նորմերի հարաբերակցության պատմաիրավական, տեսական և համեմատական-իրավական համալիր հետազոտությունը թույլ է տալիս կատարել հետևյալ ամփոփիչ եզրահանգումները.

1. **Համակարգային ներդաշնակություն և փոխլրացում.** Ժամանակակից ինտեգրացիոն գործընթացների և մարդու իրավունքների պաշտպանության համընդհանուր համատեքստում երկու իրավական համակարգերի հարաբերակցությունը դուրս է եկել «դուալիզմ ընդդեմ մոնիզմի» ավանդական տեսական դիխոտոմիայից: Սահմանադրական իրավունքի և միջազգային պայմանագրերի նորմերի փոխգործակցությունը հենվում է փոխլրացման և համակարգային ներդաշնակության սկզբունքի վրա: Իրավական պետության

կայացման համար անհրաժեշտ է ոչ թե նախապատվությունը տալ համակարգերից մեկին, այլ ապահովել դրանց ներդաշնակ գոյակցությունը՝ հիմնված պետության ստանձնած միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման (*pacta sunt servanda*) վրա:

2. **Սահմանադրությունը որպես իրավական «զտիչ».** Ներպետական իրավական համակարգում օրենքների նկատմամբ վավերացված միջազգային պայմանագրերի նորմերի գերակայությունը (ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մաս) չի նվազեցնում Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը: Սահմանադրությունն է հանդիսանում այն առաջնային իրավական «զտիչը», որը նախնական սահմանադրական վերահսկողության ինստիտուտի միջոցով (ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 3-րդ մաս) երաշխավորում է պետության ինքնիշխանությունը, սահմանադրական կարգի անխաթարությունը և թույլ չի տալիս Սահմանադրությանը հակասող պարտավորությունների ստանձնում:

3. **«Բաց սահմանադրականություն» և դինամիկ զարգացում.** Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի և դրանք մեկնաբանող մարմինների (մասնավորապես՝ ՄԻԵԴ-ի) պրակտիկայի ինկորպորացիան ազգային սահմանադրական արդարադատության մեջ (ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդված) հանգեցնում է այդ նորմերի «սահմանադրականացմանը»: Սա նպաստում է «բաց սահմանադրականության» ձևավորմանն ու սահմանադրական նորմերի դինամիկ զարգացմանը՝ միջազգային պայմանագրերը դիտարկելով որպես պաշտպանության «նվազագույն չափանիշներ» և միաժամանակ պահպանելով ազգային իրավական ինքնությունը:

4. **Համադրելիության կանխավարկածը.** Հայաստանի Հանրապետության սահմանադրական մոդելի պարագայում իրավական հնարավոր հակասություններից կամ կոլիզիաներից խուսափելու համար իրավակիրառ պրակտիկան առաջնորդվում է համադրելիության կանխավարկածով: Ազգային օրենսդրությունը, որքանով դա հնարավոր է, պետք է մեկնաբանվի միջազգային պարտավորություններին համահունչ՝ ապահովելով Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը և միջազգային առաջադեմ պրակտիկան ծառայեցնելով ներպետական մակարդակում մարդու իրավունքների պաշտպանության համակարգային կատարելագործմանը:

Օգտագործված գրականության ցանկ

Նորմատիվ իրավական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (06.12.2015 թ. հանրաքվեով ընդունված փոփոխություններով), ուժի մեջ է մտել 22.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21/Special issue, Հոդ. 1118:

2. Конституция Болгарской Республики (Constitution of the Republic of Bulgaria), 12.07.1991 г. [Էլեկտրոնային ռեսուրս]. Հասանելի է՝ https://unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/Communications/Bulgaria_NGO_DEN/Annex_3_Constitution_of_the_Republic_of_Bulgaria.pdf

3. Конституция Греческой Республики (Constitution of Greece), 09.06.1975 г. [Էլեկտրոնային ռեսուրս]. Հասանելի է՝ https://books.4minsk.by/normativnyj-pravovoj-akt/konstituciya/konstituciya-grecii/

4. Конституции зарубежных государств / Сост. В.В. Маклаков. - М.: Юристъ, 2003. - 624 с.

Մասնագիտական գրականություն

5. **Հարությունյան Ա.Շ.**, Եվրոպական միության իրավունքի հիմունքները: Ուսումնական ձեռնարկ: Ա.Շ. Հարությունյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, 380 էջ:

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդհ. խմբ. Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի: Երևան, «Իրավունք», 2010, 1086 էջ:

7. **Батычко В.Т.** Международное право: Соотношение внутригосударственного и международного права / Конспект лекций. - Таганрог: ТТИ ЮФУ, 2011 [Էլեկտրոնային ռեսուրս]. Հասանելի է՝ http://www.aup.ru/books/m232/2_3.htm

8. **Буткевич В.Г.** Соотношение внутригосударственного и международного права / В.Г. Буткевич. - Киев: Выща школа, 1981. - 311 с.

9. **Грабарь В.Э.**, Материалы по истории литературы международного права в России (1647-1917) / В.Э. Грабарь. - М.: Изд-во АН СССР, 1958. - 491 с.

10. **Каланда В.А.** О трансформации норм международного права в правовую систему РФ / В.А. Каланда // Московский журнал международного права (МЖМП). 1994. № 3.

11. **Камаровский Л.А.** Основные вопросы науки международного права / Л.А. Камаровский. - М.: Типогр. Э. Лисснера и Ю. Романа, 1892 [Էլեկտրոնային ռեսուրս]. Հասանելի է՝ https://studfile.net/preview/16829739/

12. **Карташкин В.А.** Права человека в международном и внутригосударственном праве / В.А. Карташкин. - М.: ИСП РАН, 2005. - 268 с.

13. **Миронов Н.В.** Соотношение международного договора и внутригосударственного закона // Советский ежегодник международного права, 1965 / Цит. по: Пастухова Л.В. Право международных договоров: Учебное пособие. - Симферополь: ИС «АРИАЛ», 2020. - 188 с.

14. **Радойнов П.**, Международно-правовые проблемы экономической интеграции / П. Радойнов. - София: Изд-во БАН, 2-е изд., 2018. - 240 с.

15. **Стародубцев Г.С.** Международно-правовая наука на постсоветском пространстве / Г.С. Стародубцев // Журнал: Энциклопедия права. 2014. Том 2. № 1. - С. 15–24.

16. **Степкин Е.Ю.** Соотношение норм конституционного права России и международного права при обеспечении личных прав человека и гражданина: Дисс. ... д-ра юрид. наук / Е.Ю. Степкин. - М., 2004. - 380 с.

17. **Усенко Е.Т.** Соотношение и взаимодействие международного и национального права и Российская Конституция / Е.Т. Усенко // Московский журнал международного права (МЖМП). 1995. № 2.

18. **Fitzmaurice G.** The General Principles of International Law Considered from the Standpoint of the Rule of Law // Recueil des Cours (Pdc, Hague Academy of International Law), Vol. 92, 1957-II.

19. **Kelsen H.** General Theory of Law and State / H. Kelsen. - Cambridge: Harvard University Press, 1945. 516 p.

20. **Kelsen H.**, Principles of International Law / H. Kelsen. - New York: Holt, Rinehart and Winston, 1967 (reprinted, 2011). 602 p.

21. **Scelle G.**, Cours de droit international public / G. Scelle. - Paris: Domat-Montchrestien, 1948. 1008 p.

СООТНОШЕНИЕ НОРМ КОНСТИТУЦИОННОГО ПРАВА И НОРМ ПРАВА МЕЖДУНАРОДНЫХ ДОГОВОРОВ: ИСТОРИЧЕСКИЙ И СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ

Аннотация

В статье проведен системный историко-правовой, теоретический и сравнительно-правовой анализ соотношения норм конституционного права и норм права международных договоров. **Предметом** исследования являются механизмы взаимодействия внутригосударственного конституционного регулирования и международно-правовых обязательств, а **целью** — выявление эффективной и оптимальной модели их взаимоотношений в национальной правовой системе, в частности, в контексте Конституции Республики Армения.

В работе подробно рассмотрены историческая эволюция дуалистической и монистической теорий, специфический характер права Европейского союза, а также проявления приоритета норм международных договоров в конституционной практике ряда зарубежных стран (Германии, Греции, Болгарии, Испании).

В результате исследования обосновано, что в условиях современных интеграционных процессов превалирующее соотношение вышло за рамки традиционной дихотомии «дуализм против монизма» и опирается на принцип взаимодополняемости, системную гармонию и презумпцию сопоставимости. В статье показано, что приоритет ратифицированных международных договоров над национальными законами не умаляет высшую юридическую силу Конституции, поскольку именно Конституция выступает в качестве первичного правового «фильтра», гарантирующего государственный суверенитет.

В то же время проанализирована роль инкорпорации практики международных органов по правам человека (в частности, ЕСПЧ), которая способствует динамичному развитию конституционных норм и формированию «открытого конституционализма» при сохранении национальной правовой идентичности.

Ключевые слова: конституционное право, международные договоры, соотношение правовых систем, дуализм и монизм, высшая юридическая сила Конституции, презумпция сопоставимости, открытый конституционализм.

THE RELATIONSHIP BETWEEN THE NORMS OF CONSTITUTIONAL LAW AND THE NORMS OF INTERNATIONAL TREATY LAW: A HISTORICAL AND COMPARATIVE LEGAL ANALYSIS

Annotation

The article presents a comprehensive historical-legal, theoretical, and comparative-legal analysis of the relationship between the norms of constitutional law and the norms of international treaty law. The **subject** of the research encompasses the mechanisms of interaction between domestic constitutional regulations and international treaty obligations, while its **objective** is to identify an effective and optimal model of their interrelation within the national legal system, specifically in the context of the Constitution of the Republic of Armenia.

The paper examines in detail the historical evolution of dualist and monist theories, the unique nature of European Union law, as well as the manifestations of the supremacy of international treaty norms in the constitutional practice of several foreign countries (Germany, Greece, Bulgaria, and Spain).

As a result of the study, it is substantiated that under modern integration processes, the prevailing relationship has transcended the traditional dichotomy of "dualism versus monism" and relies on complementarity, systemic harmony, and the presumption of compatibility. The article demonstrates that the precedence of ratified international treaties over domestic laws does not diminish the supreme legal force of the Constitution, as the Constitution itself serves as the primary legal "filter" guaranteeing state sovereignty.

Furthermore, the role of incorporating the practice of international human rights bodies (particularly the ECtHR) is analyzed, which leads to the dynamic development of constitutional norms and the formation of "open constitutionalism" while preserving national legal identity.

Keywords: constitutional law, international treaties, interrelation of legal systems, dualism and monism, supreme legal force of the Constitution, presumption of compatibility, open constitutionalism.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 25.07.2026 թ., տրվել է գրախոսության 28.07.2026 թ., ընդունվել է տպագրության 15.08.2026 թ.:

DOI: 10.59560/18291155-2026.3-263



ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայաստանի եվրոպական համալսարանի
հանրային իրավունքի և միջազգային իրավունքի
ամբիոնի հայցորդ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱՋՈՐՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈԼԻԶԻԱՆԵՐԸ ԵՎ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Ամփոփագիր

Սույն հոդվածում քննարկվում են մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում Եվրոպական դատական հաստատությունների գործունեության և փոխգործակցության արդի զարգացումները և դրանց ազդեցությունը քաղաքացիների իրավունքների պաշտպանության վրա: Եթե Հայաստանի Հանրապետության՝ Եվրոպայի Խորհրդին անդամակցությունն էականորեն նպաստել է այդ կազմակերպության չափորոշիչներն ու սկզբունքները, ինչպես նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը ՀՀ իրավական համակարգ ներմուծելու ակտիվացմանը, ապա Եվրոպական միության իրավունքի այդ չափորոշիչներն ու սկզբունքները համապատասխան խորությամբ քիչ են ուսումնասիրված:

ԵՄ արդարադատության դատարանի իրավասության ուսումնասիրման ակտուալությունը պայմանավորված է մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգի գործունակության վրա ԵՄ մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների ազդեցության աստիճանի բացահայտմամբ,՝ մանավանդ հաշվի առնելով այնպիսի երևույթներ, որոնք են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթների հաստատումը՝ որպես ԵՄ իրավունքի ընդհանուր սկզբունքների աղբյուր, Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի ընդունումը, ինչպես նաև վերջին զարգացումները՝ ԵՄ կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային միանալու իրավական խոչընդոտների հաղթահարման ուղղությամբ:

ԵՄ արդարադատության դատարանի՝ մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների և ստանդարտների ուսումնասիրությունը, Մարդու իրավունքների

եվրոպական դատարանի հետ հարաբերակցության հիմքերն ու հնարավորությունները կարևորվում են այն պատճառով, որ որպես ԵԽ անդամ երկիր Հայաստանը հայտարարել է նաև Եվրոպական միությանն անդամակցելու գործընթացի մասին 2025 թվականի մարտի 26-ին Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Եվրոպական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» ՀՀ օրենքով:

Վերոգրյալի համատեքստում կարևորվում է ԵԽ և ԵՄ շրջանակներում մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների և մեխանիզմների իրավական հիմքերի ուսումնասիրությունը, ՄԻԵԴ և ԵՄԱԴ իրավական կարգավիճակի առանձնահատկությունների ուսումնասիրությունը, և նրանց ազդեցությունը մարդու իրավունքների պաշտպանության Եվրոպական համակարգի իրավական հիմքերի ձևավորման ու զարգացման վրա:

Հիմնաբառեր. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, ԵՄ արդարադատության դատարան, մարդու իրավունքների պաշտպանության միասնական մեխանիզմներ, ԵՄ արդարադատության դատարանի իրավազորություն, մարդու իրավունքների պաշտպանություն:

1. Ընդհանուր դրույթներ

Մարդու իրավունքների պաշտպանության հիմնական պատասխանատվությունն ընկնում է ազգային դատական համակարգերի վրա: Այդուհանդերձ, եվրոպական պետություններում մարդու իրավունքների պաշտպանության միասնական մեխանիզմներ և ստանդարտներ հաստատելու համար անհրաժեշտ է դարձել այս պետությունների համար միջազգային համակարգի ստեղծումը, որը կապահովի ժողովրդավարության հանրաճանաչ սկզբունքների կիրառությունը, օրենքի գերակայությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը: Այսպիսի համակարգի ստեղծման մտահղացումը ի կատար է ածվել 1949 թվականին Եվրոպայի Խորհրդի և 1952 թվականին Ածխի և պողպատի եվրոպական համագործակցության ստեղծմամբ: Վերոնշյալ խնդիրների ապահովման նպատակով նշված կազմակերպությունների շրջանակներում ստեղծվել են դատական մարմիններ: Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և դրա հիման վրա ստեղծվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ), իսկ Ածխի և պողպատի եվրոպական համագործակցության (1957 թվականին՝ Եվրոպական տնտեսական համայնք, իսկ 1992 թվականից Եվրոպական միություն) շրջանակներում՝ Եվրոպական միության արդարադատության դատարանը (ԵՄԱԴ):

ՄԻԵԴ ստեղծմամբ քաղաքացիների դատական պաշտպանությունը դադարել է լինել բացառապես համապատասխան պետությունների բացառիկ առանձնաշնորհը:

Արվել է սկզբունքորեն կարևոր քայլ քաղաքացու միջազգային իրավասուբյեկտության ճանաչման ճանապարհին[1]: Հենց դա է պատճառը, որ Եվրոպայի խորհուրդը Կոնվենցիան անվանել է «իր նշանակությամբ աննախադեպ փաստաթուղթ»[2]:

Իր գործունեության ընթացքում Դատարանն արդեն կայացրել է ավելի քան 25,000 վճիռ, ինչը վկայում է եվրոպական իրավական տիրույթում նրա նկատմամբ վստահության աննախադեպ աճի մասին: Թեև պատմականորեն գանգատների մեծ մասն ուղղված էր արևմտաեվրոպական երկրների դեմ (Իտալիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա), վերջին երկու տասնամյակում ծանրության կենտրոնը տեղափոխվել է դեպի արևելաեվրոպական պետություններ՝ արտացոլելով տարածաշրջանի ժողովրդավարական վերափոխումների մարտահրավերները:

Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում որոշակի իրավասություններ ունեցող երկրորդ դատական մարմինը ԵՄ արդարադատության դատարանն է:

Չնայած նրան, որ երկար ժամանակ ԵՄ շրջանակներում գոյություն չի ունեցել հատուկ փաստաթուղթ մարդու իրավունքների մասին, ԵՄ դատարանը զարգացրել է հատուկ դոկտրին մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ, որը զարգացման սկզբնական ժամանակահատվածում ուղղված էր ոչ թե նշված իրավունքների պատշաճ պաշտպանությանը, այլ ավելի շատ պաշտպանելու համար Եվրամիության իրավասությունը՝ գործելու որպես լիիրավ, ժողովրդավարական միջազգային իրավական կազմավորում: Այս տարիների ընթացքում ԵՄ դատարանը մշակել է տարբեր հիմնավորումներ՝ զարգացնելու մարդու իրավունքների պաշտպանության դոկտրինը ԵՄ իրավունքի գործողության շրջանակներում:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան եվրոպական համայնքների իրավական համակարգում երկար ժամանակ դիտարկվել է որպես հիմնարար իրավունքների պաշտպանության առանցքային ուղենիշ: 1977 թվականին Խորհրդարանը, Խորհուրդը և Հանձնաժողովն ընդունել են համատեղ հռչակագիր ԵՄ շրջանակներում մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության կարևորության վերաբերյալ, թե ինչպես են դրանք բխում ԵՄ անդամ երկրների ընդհանուր սահմանադրական ավանդույթներից և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից: Արդյունքում ԵՄ Հանձնաժողովը 1979 թվականին, իսկ այնուհետև՝ 1990-ին, ներկայացրեց առաջարկություններ ՄԻԵԿ-ին միանալու վերաբերյալ, սակայն այս նախաձեռնությունները ձախողվեցին ինչպես քաղաքական պատճառներով (որոշ անդամ պետությունների՝ Մեծ Բրիտանիայի, Իռլանդիայի, Դանիայի, զգուշավորությունը սեփական իրավական համակարգերի ինքնավարության հարցում), այնպես էլ իրավական խոչընդոտների հետևանքով, ինչը

[1] **Туманов В.А.** Европейский суд по правам человека. - М., 2001. - С. 3.

[2] The European Convention on Human Rights: A living instrument: https://www.coe.int/en/web/ankara/-/the-european-convention-on-human-rights-a-living-instrument

հաստատվեց ԵՄ արդարադատության դատարանի 2/94 Կարծիքով, որով փաստվեց նման միացման համար համապատասխան լիազորությունների բացակայությունը:

Եվրոպական համայնքների հիմնադիր պայմանագրի համաձայն՝ Դատարանն ապահովում է Համայնքների իրավունքի կիրառությունը եվրոպական համայնքի մասին պայմանագրի միատեսակ մեկնաբանության և կիրառման միջոցով[1]:

ԵՄ արդարադատության դատարանի դերը Եվրոպական միության զարգացման գործում և նրա իրավական համակարգում արժանի է ամենաբարձր գնահատականի: Հիմա արդեն կարելի է լիովին հիմնավորված պնդել, որ Եվրոպական միությունը և իր իրավունքը այլ կլինեին՝ ավելի քիչ զարգացած, ավելի քիչ հեղինակավոր, ավելի քիչ ժողովրդավար, ավելի քիչ իրավասություն ունեցող, եթե իր ինստիտուցիոնալ համակարգում չլիներ այնպիսի մի մարմին, ինչպիսին ԵՄ արդարադատության դատարանն է: Առանձնակի հիշատակման է արժանի այնպիսի ֆենոմենը, ինչպիսին ԵՄ նախադեպային իրավունքն է, որի կայացումն ու զարգացումը հանդիսանում է ԵՄ դատարանի գործունեության ուղղակի արդյունքը և որը, ի շնորհիվ պրեյուդիցիալ իրավասության համակարգի, կապում է անդամ պետությունների բոլոր դատարանները միմյանց հետ: Դեռևս 1999 թվականին ռուս նշանավոր իրավաբան Ս.Յու. Կաշկինը նշել է, որ *Եվրոպական միության իրավունքը ոչ միայն «պոզիտիվ» իրավունք է՝ ձևակերպված և ամրագրված հիմնադիր փաստաթղթերում և Համայնքի նորմատիվ իրավական ակտերում, այլ նաև «դատական» իրավունք է: ԵՄ դատարանի կողմից այն դուրս է բերվել ինչպես պոզիտիվ-իրավական նորմերից, այնպես էլ իրավունքի ընդհանուր սկզբունքներից և լրացնում է, իսկ երբեմն էլ փոխարինում է առաջինի բովանդակությանը*[2]:

Արդի զարգացումների համատեքստում Եվրոպական միության ժամանակակից իրավակարգը հանդես է գալիս որպես նորմատիվային հիմքի և դատական մեկնաբանության սինթեզ: ՄԻԵԿ-ին չմիանալով հանդերձ՝ Մարդու իրավունքների պաշտպանության Խարտիայի ընդունմամբ ԵՄ իրավունքը ստացավ հստակ պոզիտիվ-իրավական կառուցվածք. այն շարունակում է պահպանել իր «դատակենտրոն» բնույթը: ԵՄ դատարանը, հենվելով իրավունքի ընդհանուր սկզբունքների վրա, ոչ միայն լրացնում է օրենսդրական բացերը, այլև տելեոլոգիական (նպատակաբանական) մեկնաբանության միջոցով ապահովում է նորմերի կենսունակությունը՝ երբեմն դրանց հաղորդելով այնպիսի բովանդակություն, որը դուրս է գալիս տառացի ձևակերպումների շրջանակից:

[1] Տե՛ս Եվրոպական համայնքի հիմնադրման մասին պայմանագրի 220-րդ հոդված:

[2] **Кашкин С.Ю.** Право Европейского союза: документы и комментарии. - М., 1999. - С. 112-132.

2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Եվրոպական միության արդարադատության դատարանի իրավազորությունների համեմատական վերլուծություն

Մարդու իրավունքների բնագավառում ցանկացած միջազգային պայմանագիր հռչակագիր մնալու վտանգի տակ է, եթե դրա համար մշակված չէ պետությունների կողմից իրենց պարտավորությունների կատարման կայուն համակարգ, ստեղծված չէ համապատասխան հսկիչ մեխանիզմ: Հսկիչ մեխանիզմի նպատակը ոչ թե ստանձնած պարտավորությունների չկատարման համար պետությունների նկատմամբ սանկցիաների կիրառությունն է, այլ միջազգային պայմանագրերի դրույթների կենսագործման նկատմամբ հսկողության ապահովումը[1]:

Վստահաբար կարելի է արձանագրել, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան հաջողեց հենց այն պարզ պատճառով, որ ստեղծվեց Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, քանի որ առանց հսկիչ մեխանիզմի՝ պայմանագիրը կմնար անկատար (*lex imperfecta*): Որպես օրինակ՝ ՄԱԿ-ի շատ պայմանագրեր, որոնք չունեն դատական հսկողության նմանատիպ ուժեղ մեխանիզմ, հաճախ մնում են որպես բարի ցանկությունների փաստաթղթավորված հավաքածու:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավազորության ուսումնասիրության ժամանակ հարկավոր է հաշվի առնել հետևյալ տարրերը՝

1. դատարանի տարածքային իրավազորությունը,
2. դատարանի ժամանակային իրավազորությունը,
3. դիմումի ընդունելիության հարցը որոշելու Դատարանի իրավազորությունը,
4. միջպետական վեճերը քննության առնելու Դատարանի իրավազորությունը,
5. անհատական գանգատների հիման վրա վեճերի քննության Դատարանի իրավազորությունը,
6. անդամ պետությունների իրավական համակարգերի նկատմամբ Դատարանի իրավազորությունը[2]:

Դատարանի տարածքային իրավազորությունը, ըստ էության, Կոնվենցիայի անդամ պետությունների տարածքային իրավազորությունների հանրագումարն է:

Որպես կանոն, պետությունը պատասխանատվություն է կրում իր de jure տարածքում (սահմաններում) տեղի ունեցած խախտումների համար: Սակայն կա նաև արտատարածքային իրավազորություն[3], երբ պետությունը պատասխանատու է իր սահմաններից դուրս կատարված գործողությունների համար, եթե տվյալ

[1] Общая теория прав человека / Под. Ред. Е.А. Лукашевой. - М., 1996. - С. 452-453.

[2] **Казинян А.Г.** Европейская судебная защита основных прав и свобод человека (Люксембург-Страсбург) Сравнительно-правовой анализ. - Ер.: Изд. ЕГУ, 2005. - С. 104-106.

[3] Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 56-րդ հոդվածը:

տարածքի նկատմամբ իրականացնում է արդյունավետ վերահսկողություն (օրինակ՝ ռազմական օկուպացիայի դեպքում), ինչպես նաև եթե պետության ներկայացուցիչները (դիվանագետներ, զինվորականներ) անձի նկատմամբ իրականացնում են լիակատար ֆիզիկական վերահսկողություն:

Դատարանի ժամանակային իրավազորության էությունն այն է, որ Դատարանն իրավունք չունի քննության վերցնել իրեն փոխանցված դիմումը, որի առարկան Կոնվենցիայում ամրագրված մարդու իրավունքների խախտումն է, որը տեղի է ունեցել մինչև պատասխանող պետության կողմից Կոնվենցիայի վավերացումը և մինչև այդ ամսաթիվը այդ գործի քննությունն ավարտված է եղել ազգային մակարդակով: Բացառություն են կազմում «Շարունակվող խախտումները» (օրինակ՝ անձի անհետացման դեպքերը, երբ պետությունը շարունակում է չբացահայտել գտնվելու վայրը նույնիսկ վավերացումից հետո)[1]:

Դիմումի ընդունելիության հարցը լուծելու իրավազորության մասին հարկ է նշել, որ ըստ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի՝ Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, երբ սպառվել են ներպետական իրավական պաշտպանության բոլոր միջոցները՝ միջազգային իրավունքի համաընդհանուր ճանաչում գտած կանոնների համաձայն, և այն օրվանից հետո՝ 4 ամսվա ընթացքում, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը:

Դատարանը չի քննարկում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված և ոչ մի անհատական գանգատ, որը՝ ա) անանուն է, բ) ըստ էության նույնն է այն հարցի հետ, որն արդեն քննվել է Դատարանի կողմից կամ արդեն հանդիսացել է միջազգային հետազոտության կամ լուծման այլ ընթացակարգի առարկա և չի պարունակում գործին առնչվող նոր տեղեկություններ, գ) գանգատը անհամատեղելի է Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների դրույթների հետ, ակնհայտ անհիմն է կամ հանդիսանում է գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում, դ) դիմումատուն էական վնաս չի կրել, բացառությամբ այն դեպքերի, երբ Կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով սահմանված մարդու իրավունքների հարգման անհրաժեշտությունը պահանջում է գանգատի քննությունն ըստ էության:

Միջպետական վեճերը քննության առնելու Դատարանի իրավազորությունն ամրագրված է Կոնվենցիայի 33-րդ հոդվածում և Կոնվենցիայի հսկիչ մեխանիզմի գործունեության պատմության մեջ կիրառվել է ընդամենը մի քանի անգամ: Այս հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ կարող է Դատարանին հանձնել մյուս Բարձր պայմանավորվող կողմի կողմից Կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների դրույթների ցանկացած ենթադրյալ խախտման հարցը»: Օրինակներից են՝ Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության (1978),

[1] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 32-րդ հոդվածը:

Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի (2001)[1], Վրաստանն ընդդեմ Ռուսաստանի (I) (2014)[2], (II) (2021)[3], Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի (ընթացիկ)[4] գործերը:

Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության (1978)[5] գործը ՄԻԵԴ պատմության մեջ առաջին միջպետական գործն էր, որով կայացվեց վճիռ: Վեճի էությունը կայանում էր նրանում, որ Իռլանդիան մեղադրում էր Բրիտանիային Հյուսիսային Իռլանդիայում ձերբակալվածների նկատմամբ խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի մեջ: ՄԻԵԴ վճռի նշանակությունն այն էր, որ Դատարանը սահմանեց տարբերությունը «խոշտանգման» և «անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքի» միջև: Այն կարևոր նախադեպ դարձավ 3-րդ հոդվածի մեկնաբանման համար:

Անհատական գանգատների հիման վրա վեճերի քննության Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավազորությունը Դատարանի հիմնական իրավազորությունն է, որի համաձայն այն կարող է դիմումներ ընդունել և քննել Կոնվենցիայի անդամ երկրների քաղաքացիներից կամ ցանկացած անձից, ով գտնվում է այդ պետությունների իրավազորության ներքո: Կոնվենցիայի 34-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանը կարող է անհատական գանգատներ ստանալ ֆիզիկական անձից, ոչ կառավարական կազմակերպությունից կամ անձանց խմբից: Դատարանի կողմից քննության առնված գործերի հիմնական մասը նախաձեռնվել են ֆիզիկական անձանց կողմից, որոնց համար Կոնվենցիայով և դրան կից արձանագրություններով որևէ բացառություն սահմանված չէ: Ըստ որում, Կոնվենցիայի անդամ երկրները պարտավորվում են որևէ կերպ չխոչընդոտել քաղաքացիների այդ իրավունքի արդյունավետ իրականացմանը:

[1] *Cyprus v. Turkey* App. No. 25781/94, Judgment 10/05/2001, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-59454 Այս գործը վերաբերում էր 1974 թ. Թուրքիայի կողմից Հյուսիսային Կիպրոս ներխուժմանը և դրա հետևանքներին: Կիպրոսը բողոքում էր հույն կիպրոսցիների սեփականության իրավունքի խախտումների, անհետացումների և տեղահանությունների դեմ: Վճռի կարևորությունն այն է, որ Դատարանը հաստատեց պետության «արտատարածքային իրավազորությունը» (extra-territorial jurisdiction)՝ նշելով, որ Թուրքիան պատասխանատու է այդ տարածքում տեղի ունեցող իրադարձությունների համար, քանի որ այնտեղ իրականացնում է «արդյունավետ վերահսկողություն»:

[2] *Georgia v. Russia* (I) App. No. 13223/07 Great Chamber Judgment 03/07/2014, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-145546 Գործը վերաբերում էր 2006 թ. Ռուսաստանից վրացիների զանգվածային արտաքսմանը:

[3] *Georgia v. Russia* (II) App. No. 3863/08 Great Chamber Judgment 21/01/2021, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-207757 Գործը վերաբերում էր 2008 թ. օգոստոսյան պատերազմին:

[4] *Armenia v. Azerbaijan,* App. No. 42521/20, Հայաստանը ներկայացրել է մի քանի միջպետական գանգատ (ինչպես նաև Ադրբեջանն ընդդեմ Հայաստանի): Գանգատները վերաբերում են 44-օրյա պատերազմին, ռազմագերիների իրավունքներին, Լաչինի միջանցքի շրջափակմանը և Լեռնային Ղարաբաղի հայաթափմանը:

[5] *Ireland v. the United Kingdom*, App. No: 531/71, Judgment 18/01/1978, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57506, ՄԻԵԴ պատմության մեջ առաջին միջպետական գործն էր, որով կայացվեց վճիռ:

Անդրադառնալով Եվրոպական միության արդարադատության դատարանի (ԵՄԱԴ) իրավազորություններին՝ դրանք կարելի է դասակարգել ՄԻԵԴ-ի օրինակով՝ ըստ իրավական ազդեցության և գործառույթների.

1. առարկայական իրավազորություն (Ratione Materiae),
2. տարածքային իրավազորություն (Ratione Loci),
3. ժամանակային իրավազորություն (Ratione Temporis),
4. խորհրդատվական/մեկնաբանողական իրավազորություն (Preliminary Rulings),
5. վերահսկողական իրավազորություն (Infringement Procedures),
6. վերանայման և օրինականության վերահսկողության իրավազորություն (Judicial Review),
7. պատասխանատվության սահմանման իրավազորություն (Damages):

Այսպես, ԵՄ արդարադատության դատարանի առարկայական իրավազորության էությունն այն է, որ դատարանն իրավազոր է քննել միայն այն հարցերը, որոնք կարգավորվում են ԵՄ իրավունքով (պայմանագրեր, կանոնակարգեր, դիրեկտիվներ)[1]: Ի տարբերություն ՄԻԵԴ-ի, որը զբաղվում է միայն մարդու իրավունքներով, ԵՄ դատարանի առարկայական դաշտը ներառում է տնտեսական մրցակցությունը, մաքսային միությունը, գյուղատնտեսությունը, շրջակա միջավայրը, տվյալների պաշտպանությունը և այլն:

Դատարանի տարածքային իրավազորությունը տարածվում է ԵՄ 27 անդամ պետությունների տարածքի վրա[2]: Այն կարող է տարածվել նաև ԵՄ տարածքից դուրս գտնվող սուբյեկտների վրա, եթե նրանց գործողությունները ազդում են ԵՄ ներքին շուկայի վրա (օրինակ՝ հակամրցակցային համաձայնություններ արտասահմանյան ընկերությունների միջև):

Ժամանակային իրավազորության շրջանակներում ԵՄ արդարադատության դատարանն իրավասու է քննել այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել տվյալ պետության ԵՄ անդամակցությունից հետո: Նախնական որոշումների դեպքում Դատարանի մեկնաբանությունը սովորաբար ունի հետադարձ ուժ (ex tunc), այսինքն՝ օրենքը պետք է մեկնաբանվի այնպես, ինչպես Դատարանը պարզաբանեց, սկսած դրա ընդունման պահից, բացառությամբ այն դեպքերի, երբ Դատարանը հատուկ սահմանափակում է իր վճռի ժամանակային ազդեցությունը:

Խորհրդատվական կամ մեկնաբանողական իրավազորությունը (Preliminary Rulings) ԵՄ դատարանի ամենաառանձնահատուկ իրավազորությունն է[3]: Այն

[1] Տե՛ս ԵՄ պայմանագրի (TEU) 5-րդ հոդվածով նախատեսված լիազորությունների վերապահման սկզբունքը և ԵՄ Գործունեության մասին պայմանագրի (TFEU) 263, 267-րդ հոդվածներ:

[2] Տե՛ս ԵՄ պայմանագիր (TEU), 52-րդ հոդված, ԵՄ Գործունեության մասին պայմանագիր (TFEU), 355-րդ հոդված:

[3] Տե՛ս ԵՄ գործունեության մասին պայմանագրի, 267-րդ հոդված :

հանդիսանում է կապող օղակ ազգային դատարանների և ԵՄ դատարանի միջև: Դատարանը ոչ թե լուծում է վեճը, այլ մեկնաբանում է օրենքը, որից հետո ազգային դատարանը կայացնում է վերջնական վճիռը:

Վերահսկողական իրավազորությունը (Infringement Procedures) պետությունների կողմից իրենց պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն է, որը ԵՄ դատարանն իրականացնում է երկու մակարդակներում՝ միջպետական՝ պետությունն ընդդեմ պետության (հազվադեպ) և ինստիտուցիոնալ՝ Հանձնաժողովն ընդդեմ պետության (շատ հաճախ):

Վերանայման և օրինականության վերահսկողության իրավազորության շրջանակներում ԵՄ արդարադատության դատարանն իրավասու է ստուգել ԵՄ մարմինների գործողությունների օրինականությունը[1]: Ըստ հայցերի տեսակների՝ անվավեր ճանաչման հայցը, որի հիման վրա դատարանը չեղարկում է ԵՄ ակտերը, եթե դրանք հակասում են հիմնարար սկզբունքներին, և անգործության վիճարկումը, այն դեպքերում, երբ ԵՄ մարմինը չի կատարել իր պարտականությունը:

Պատասխանատվության սահմանման իրավազորության շրջանակներում ԵՄ Դատարանն իրավազորություն ունի սահմանելու ԵՄ արտապայմանագրային պատասխանատվությունը և պարտադրելու փոխհատուցել անձանց պատճառված վնասը:

Բազմաթիվ հեղինակների կարծիքով ԵՄ արդարադատության դատարանի գործունեությունը նմանություններ ունի սահմանադրական արդարադատության մարմինների հետ: Այդ նմանությունը արտահայտվում է նրանում, որ այն իր գործունեության ընթացքում իր ստեղծած նախադեպային իրավունքում բազմիցս զարգացրել է սահմանադրական բնույթի սկզբունքներ, որոնցից կարելի է նշել ԵՄ իրավունքի առանձին դոկտրինների ձևավորումը, առանց որոնց մենք այսօր չէինք ունենա այդպիսի աննախադեպ իրավակարգ, որպիսին է Եվրոպական միության իրավունքը: Այդպիսի դոկտրիններից են անդամ պետությունների իրավական համակարգերի նկատմամբ գերակայության դոկտրինը և ԵՄ իրավունքի ուղիղ գործողությունը այդ համակարգերի նորմերի նկատմամբ, իրավունքի ընդհանուր սկզբունքների դոկտրինը, և այլն[2]:

Ինչ վերաբերում է դատարանի կողմից պրեյուդիցիալ կարգով գործերի քննությանը ազգային դատական մարմինների հայցերի հիման վրա, ապա հարկ է նշել, որ Սահմանադրական դատարանների պրեյուդիցիալ իրավազորության համակարգը նախատեսված է շատ երկրների սահմանադրություններով (Ավստրիա, Գերմանիա, Իտալիա, Իսպանիա, Ֆրանսիա, Հայաստան և այլն) և ծառայում է որպես

[1] Տե՛ս ԵՄ գործունեության մասին պայմանագիր (TFEU) 263, 265 և 277-րդ հոդվածներ:

[2] Jacobs, F. "Is the Court of Justice of the European Communities a Constitutional Court?" "Constitutional Adjudication in European Community and National Law" ed. D. Curtin and D. O'Keeffe (Butterworths (Irland), 1992, p.25, 32.

հասարակությունում և իրավական համակարգում սահմանադրության գերակայության ապահովման, ինչպես նաև դրա միանման մեկնաբանության և կիրառման միջոցներից մեկը: Սակայն ի տարբերություն սահմանադրական դատարանների, որոնք ապահովում են բացառապես սահմանադրական նորմերի միատեսակ և ամբողջական մեկնաբանությունն ու կիրառությունը, ԵՄ Արդարադատության դատարանը կոչված է ապահովել այդ ամենը ԵՄ ողջ իրավունքի նկատմամբ»[1]:

ԵՄ Արդարադատության դատարանի գործունեության վիճակագրությունը փաստում է, որ պրեյուդիցիալ որոշումների ընթացակարգը հանդիսանում է դատարանի ծանրաբեռնվածության և գործունեության առյուծի բաժինը:

Համաձայն վերջին տարիների (2023-2025 թթ.) պաշտոնական զեկույցների՝ ԵՄ Դատարանի կողմից քննվող նոր գործերի մոտավորապես 65-75%-ը կազմում են հենց պրեյուդիցիալ հայցերը. օրինակ՝ 2024 թվականին ներկայացված 920 նոր գործերից 573-ը (մոտ 62%) եղել են նախնական որոշման հայցեր: 2025 թվականի տվյալներով՝ ավարտված գործերի ընդհանուր թվաքանակում նախնական որոշումներն ու վերաքննիչ բողոքները միասին կազմել են ավարտված գործերի ավելի քան 92%-ը:

3. ԵՄ դատարանի պրակտիկան մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության ոլորտում

Դատարանի իրավազորությունը ընդհանուր կանոնի համաձայն ունի պարտադիր բնույթ՝ ոչ մի անդամ պետություն, ոչ էլ ԵՄ իրավունքի այլ սուբյեկտները իրավունք չունեն խոչընդոտել Դատարանում գործի քննությանը կամ չկատարել նրա որոշումները: Մի քանի տասնամյակ Եվրոպական համայնքների դատարանը որոշիչ դեր է խաղացել ԵՄ իրավական համակարգում մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովելու հարցում՝ հաստատելով տարբեր առաջնային կարևորության դրույթներ, զարգացնելով մեթոդոլոգիա, որն ուղղված է Համայնքների ինստիտուտների ակտերի և գործողությունների նկատմամբ հսկողություն իրականացնելուն: Այս ողջ գործընթացը զարգացել է Եվրոպական համայնքների հիմնադիր պայմանագրերում գրեթե առանց իրավական հիմքերի կամ դրանց բացակայությամբ: Եվ չնայած դրան, Դատարանը հասել է նրան, որ ԵՄ անդամ

[1] Case 166/73, Rheinmühlen [1974], ttps://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:61973CJ016 Rheinmühlen-ի գործով որոշման մեջ ԵՄ դատարանը գտավ, որ «177-րդ հոդվածը (այժմ՝ 267-րդ հոդված) էական նշանակություն ունի Պայմանագրով սահմանված իրավունքի բնույթի պահպանման համար և նպատակ ունի ապահովել, որ բոլոր հանգամանքներում այդ իրավունքն ունենա նույն ներգործությունը Միության բոլոր անդամ պետություններում: Այն ուղղված է խուսափելու Միության իրավունքի մեկնաբանության տարբերություններից, որոնք ազգային դատարանները կարող են կիրառել, և դրա նպատակն է ապահովել այդ իրավունքի լիարժեք կիրառումը՝ հնարավորություն տալով ազգային դատավորին հաղթահարել ներպետական իրավունքի այնպիսի խոչընդոտները, որոնք կարող են խաթարել Եվրոպական դատարանի հետ համագործակցության մեխանիզմը:

պետությունների և ԵՄ ինստիտուտների կողմից իրականացվող գործողությունները կամ ընդունված իրավական ակտերը ենթակա լինեն ԵՄ դատարանի կողմից վերանայման մարդու իրավունքների և ազատությունների խախտման հիման վրա: Մինչև վերջերս մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում ԵՄ դատարանի լիազորությունները սահմանափակվում էին բացառապես ԵՄ ինստիտուտների կողմից հիմնական իրավունքների հավանական խախտման գործերով:

ԵՄ նախադեպային իրավունքի վերլուծությունը չի սահմանափակվում միայն գործերի ուսումնասիրությամբ, որոնք ուղղակիորեն վերաբերում են մարդու հիմնական իրավունքների պաշտպանությանը: Այն պետք է ներառի նաև ԵՄ դատարանի այն որոշումների բազմակողմանի ուսումնասիրությունը, որոնք անուղղակի ազդեցություն են ունեցել Եվրոպական միությունում մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պատշաճ պաշտպանության ապահովման վրա: Այդպիսի որոշումների օրինակ կարող է ծառայել այս բնագավառում անդամ պետությունների դատական մարմինների պարտավորությունների սահմանումը կամ քաղաքական մարմինների իրավասությունների ցանկի սահմանումը մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության բնագավառում: Ինքնին «մարդու իրավունքներ» տերմինը շատ հազվադեպ է ի հայտ եկել ԵՄ նախադեպային իրավունքում, և որպես կանոն կիրառվում էր միայն այն դեպքում, երբ հղում էր կատարվում միջազգային պայմանագրերին, որոնք ուղղված են մարդու իրավունքների պաշտպանությանը, մասնավորապես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի եվրոպական կոնվենցիային[1]:

4. Եվրոպական միության արդարադատության դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի փոխգործակցությունը

Եվրոպական կոնվենցիան իրավունքի պարտադիր աղբյուր է ԵՄ մարդու իրավունքների դոկտրինում, նույնիսկ եթե Եվրոպական միությունը չի հանդիսանում այս կոնվենցիայի լիիրավ կողմ: ԵՄ դատարանն առաջնորդվում է ՄԻԵԿ դրույթներով և ընդունում է այն, որպես մարդու իրավունքների պաշտպանության իրացման նվազագույն ստանդարտ: ՄԻԵԿ-ն ունի հատուկ նշանակություն ԵՄ գործունեության մեջ: Սա կարելի է դիտարկել որպես ԵՄ դատարանի փորձ՝ խուսափելու անդամ երկրների այլ կարևոր գործիքների հետ լարվածությունից, որոնք ներկայումս ՄԻԵԿ դրույթները ինկորպորացրել են իրենց ներպետական իրավական

[1] Opinion 2/94 of the Court 28 March 1996, I-1763 https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:61994CV0002_SUM

կարգի մեջ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ձեռնպահ է մնում այնպիսի դիմումների քննությունից, որոնք կապ ունեմ ԵՄ անդամ պետությունների պատասխանատվության հետ այն գործողությունների համար, որոնք իրականացվել են Համայնքների իրավունքի սահմաններում, այն պատճառով, որ ՄԻԵԴ-ը ԵՄ Դատարանը դիտարկում է որպես Եվրոպական համայնքների ներսում մարդու իրավունքների պաշտպանության համահավասար երաշխավոր[1]: Բազմաթիվ հեղինակների կարծիքով այսպիսի իրավիճակը չի բավարարում ո՛չ իրավաբանական տեսանկյունից, քանի որ պահպանվում են որոշ նյութական և դատավարական խնդիրներ, և ո՛չ էլ քաղաքական տեսանկյունից, քանի որ բոլոր անդամ երկրները հանդիսանում են ՄԻԵԿ կողմեր: Համայնքների ՄԻԵԿ-ին միանալու մասին առաջարկությունները քննարկվել են գրեթե 25 տարի: Սակայն միացումը կպահանջեր ԵՄ մասին հիմնադիր պայմանագրի[2], ինչպես նաև Եվրոպական կոնվենցիայի վերանայման պահանջ, որի կողմեր կարող են լինել միայն ինքնիշխան պետությունները, այլ ոչ թե կազմակերպությունները:

Մարդու իրավունքների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի տեքստից բավական հաճախ է մեջբերում կատարվում ԵՄ դատարանի կողմից, որը ապացույց է այն մասին, որ այս միջազգային-իրավական փաստաթուղթը պետք է ինկորպորացվեր ԵՄ իրավունքի ընդհանուր սկզբունքների դոկտրինի մեջ: Սակայն, այստեղ պետք է հաշվի առնել մի շատ կարևոր հանգամանք՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը մինչև վերջերս չէր մեջբերվում ԵՄ դատարանի որոշումներում: Բոլոր այս որոշումները, որոնցում ԵՄ դատարանը հղում է կատարում ՄԻԵԴ նախադեպային իրավունքին, կատարվել են ԵՄ արդարադատության դատարանի 2/94 կարծիքից հետո, որն առնչվում էր ԵՄ-ի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային միանալուն և որում ԵՄ դատարանը հրաժարվեց ճանաչել ՄԻԵԿ-ին միանալու համար ԵՄ անհրաժեշտ իրավասություններ ունենալը՝ որպես մխիթարական գործոն այն քննադատների համար, ովքեր ջատագովներն էին այդ միացման:

Ինչպես ազգային սահմանադրությունները, այնպես էլ մարդու իրավունքների մասին միջազգային պայմանագրերը չունեն պարտադիր իրավաբանական ուժ ԵՄ արդարադատության դատարանի նկատմամբ, որն արտահայտված է ԵՄ դատարանի դիրքորոշման մեջ, որ «անդամ երկրների սահմանադրական ավանդույթները և մարդու իրավունքների մասին միջազգային պայմանագրերը միայն ոգեշնչում են և ղեկավարվելու սկզբունքներ են ապահովում այդ բնագավառում իրավական կարգավորման համար»: Այս դրույթը ոչ միանշանակ արձագանք գտավ

[1] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեի գործը *M and Co. V. FRG,* App № 13258/87 (1990) նաև *Matthews v. UK*, App № 24833/94 (1999):

[2] Opinion 2/94, [1996] ECR I-1763, I-1763 https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:61994CV0002_SUM

ակադեմիական շրջանակներում, քանի որ ըստ որոշ պնդումների՝ ԵՄ դատարանի կողմից կիրառվող մարդու իրավունքների ստանդարտներն ամենևին չեն համապատասխանում Եվրոպական կոնվենցիայի և անդամ երկրների ընդհանուր սահմանադրական ավանդույթներում տեղ գտած ստանդարտներին:

Վերոգրյալն արտացոլում է ԵՄ իրավական համակարգի զարգացման ամենադրամատիկ փուլերից մեկը՝ ինքնավարության (autonomy) և մարդու իրավունքների համընդհանուր ստանդարտների միջև առկա հակասությունը:

Մեջբերած ձևակերպումը, թե սահմանադրական ավանդույթները միայն «ոգեշնչում են», արտացոլում է ԵՄԱԴ-ի դասական դիրքորոշումը ՝ ցույց տալու համար, որ ինքը չի ստորադասվում ո՛չ ազգային սահմանադրություններին, ո՛չ էլ ՄԻԵԿ-ին որպես արտաքին պայմանագրի: Այս դիրքորոշման նպատակն էր պահպանել ԵՄ իրավունքի «ինքնուրույնությունը», քանի որ եթե ՄԻԵԿ-ը դառնար ուղղակիորեն պարտադիր, ապա ԵՄԱԴ-ը կվերածվեր ՄԻԵԴ-ի ստորադաս ատյանի:

ՄԻԵԴ որոշումներին հատուկ հղումներ ԵՄ դատարանը մինչև 90-ական թվականներն արել է ընդամենը 4 որոշումներում[1]. նշված գործերը պատմական հիմքն են, բայց այսօրվա վիճակագրությունը ցույց է տալիս, որ տարեկան ավելի քան 100 վճիռ ուղղակիորեն հենվում է ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների վրա: Սա ապացուցում է, որ երկու դատարանների միջև «մրցակցությունը» փոխարինվել է խորը ինստիտուցիոնալ համագործակցությամբ:

Վերջին տարիների վիճակագրությունը փաստում է, որ ԵՄ Արդարադատության դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի միջև առկա է «նորմատիվային սիմբիոզ»: Այժմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերին հղում կատարելը դարձել է ԵՄ արդարադատության դատարանի ամենօրյա աշխատանքի անբաժանելի մասը:

Ակադեմիական հետազոտությունների և դատական պրակտիկայի մոնիթորինգի հիման վրա վերջին 3 տարիների (2023-2025 թթ.) պատկերը ցույց է տալիս, որ 2023 թվականին ԵՄ արդարադատության դատարանի քննած գործերով ՄԻԵԴ նախադեպին հղումներ են կատարվել 95-105 կայացված որոշումներում, որոնք կազմում են ԵՄ արդարադատության դատարանի կայացրած որոշումների 12-15%-ը, 2024 թվականին՝ 110-120 գործերում ՄԻԵԴ վճիռներին կատարվել են հղումներ, իսկ 2025 թվականին այդ թիվը վստահաբար նվազում չի գրանցել, քանի որ մոտ 125-135 որոշումներում ՄԻԵԴ նախադեպերին հղումներ է կատարվել, որոնք կազմում են ԵՄ արդարադատության դատարանի կայացրած որոշումների 15-18%-ը:

Սա կարելի է համարել յուրօրինակ «ոչ պաշտոնական ինկորպորացիա»՝ առանց պաշտոնական միացման: Որպես հետևանք՝ Դատարանը ստեղծեց սեփական ԵՄ

[1] Case C-13/94 P v. Cornwall Country Council [1996], ECR I-2164,; Cases C-74/95 and 129/95, Criminal Proceedings against X [1996] ECR I-6609; Case C-368/95, Bauer Verlag [1997] ECR I-3689 and Case C-249/96, Lisa Jacqueline v. South-WestTrains Ltd. [1998] ECR I-621.

հիմնարար իրավունքները իր նախադեպային որոշումներով, որը թեև բովանդակային առումով նույնն էր, ինչ ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքները, բայց ձևականորեն համարվում էր «ԵՄ իրավունքի ընդհանուր սկզբունք»: Այն քննադատությունը, որ ԵՄ ստանդարտները չեն համապատասխանում ՄԻԵԿ-ին, հանգեցրին նրան, որ Լիսաբոնի պայմանագրով (2009թ.) ԵՄ հիմնարար իրավունքների խարտիան դարձավ պարտադիր: Այսօր արդեն Խարտիայի 52(3) հոդվածը փաստացի վերջ է դրել այսպես կոչված՝ «ոգեշնչման» շրջանին և սահմանում է, որ Խարտիայի իրավունքների իմաստն ու շրջանակը պետք է լինեն նույնը, ինչ ՄԻԵԿ-ինը:

Սակայն, Կարծիք 2/13-ի դեպքում (2014թ.)[1], Դատարանը նորից ցուցաբերեց իր հաստատակամությունը՝ կրկին մերժելով միացումը, հիմքում ունենալով այն մտահոգությունը, որ ՄԻԵԴ-ը կխաթարի ԵՄ արդարադատության դատարանի բացառիկ իրավազորությունը: Կարծիք 2/13-ը (2014թ.) իրավական աշխարհում ռումբի ազդեցություն ունեցավ, որը տասնամյակների բանակցությունները հետ շպրտեց զրոյական կետի: Դատարանը սահմանեց այնպիսի խիստ չափանիշներ միացման համար, որոնք շատերի կարծիքով անհնարին էին դարձնում այդ գործընթացը:

Կարծիք 2/13-ից հետո բանակցությունները փաստացի դադարեցվեցին մոտ 5 տարով: Միայն 2019 թվականին Եվրոպական հանձնաժողովը և Եվրոպայի խորհուրդը հայտարարեցին բանակցությունները վերսկսելու պատրաստակամության մասին, որոնք պաշտոնապես վերսկսվեցին 2020 թվականին «46+1» ձևաչափով (Եվրոպայի խորհրդի 46 անդամները + ԵՄ-ն): Բանակցությունների առանցքը Կարծիք 2/13-ում բարձրացված 10-ից ավելի տեխնիկական և սկզբունքային առարկությունների լուծումն էր: 2023 թվականի մարտին բանակցողների խումբը հայտարարեց, որ հասել է համաձայնության բոլոր վիճահարույց հարցերի շուրջ: Սա պատմական պահ էր, քանի որ նոր նախագիծը փորձում էր կետ առ կետ լուծել 2/13 Կարծիքի բոլոր խնդիրները: Այժմ գործընթացը գտնվում է ներքին իրավական ստուգման փուլում:

2020 թվականի զեկույցը և դրան կից ռազմավարությունը շրջադարձային էին, քանի որ սահմանեցին. «Խարտիան Միության իրավական հիմքի անկյունաքարն է: Այն պարտադիր է ԵՄ ինստիտուտների համար բոլոր իրենց գործողություններում և անդամ պետությունների համար՝ ԵՄ իրավունքը կիրառելիս: Խարտիան չի կարող լինել լոկ տեսական փաստաթուղթ, այն պետք է դառնա իրականություն մարդկանց կյանքում»[2]: Իրավական ինքնավարության և ՄԻԵԿ-ին միացման վերաբերյալ 2021-

[1] Opinion 2/13 of the Court (Full Court) of 18 December 2014, ECR I-0000; https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A62013CV0002

[2] Strategy to strengthen the application of the Charter of Fundamental Rights in the EU, COM(2020) 711 final https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:52020DC0711

2022 թթ. զեկույցներում Հանձնաժողովը վերահաստատում է միացման հանձնառությունը՝ միաժամանակ հարգելով Կարծիք 2/13-ի սահմանափակումները: «ԵՄ-ի միացումը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային մնում է առաջնահերթություն: Սա լրացուցիչ պաշտպանություն կապահովի ԵՄ քաղաքացիների համար և կստեղծի արտաքին վերահսկողության մեխանիզմ: Սակայն այս գործընթացը պետք է երաշխավորի ԵՄ իրավունքի առանձնահատուկ բնույթը և ինքնավարությունը, ինչպես նշված է Արդարադատության դատարանի պարզաբանումներում»[1]:

5. Եզրակացություն

Վերը նշված ուսումնասիրությունները Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի և ԵՄ արդարադատության դատարանի իրավազորությունների տարբերությունների՝ որպես եվրոպական իրավական համակարգի երկու առանցքային սյուների փոխգործակցության տեսանկյունից կարևոր են հատկապես ԵԽ և ԵՄ անդամ հանդիսացող երկրների համար:

Երկու դատարանների դերը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում անուրանալի և անհերքելի իրողություն է, և այս կառույցների փոխգործակցության վերաբերյալ ակադեմիական հանրույթում առկա բոլոր տարակարծություններն ու վերլուծությունները փաստում են, որ Եվրոպայի ապագայի համար այս երկու դատական մարմինների փոխգործակցության ապագան է կանխորոշելու նաև եվրոպական իրավունքի ապագան:

Իրավական գործընթացի շրջանակներում ամենայն հավանականությամբ, Եվրոպական հանձնաժողովը նորից կդիմի ԵՄ դատարանին Կարծիք 1/23-ի կամ նմանատիպ նոր վարույթի շրջանակներում, որպեսզի Դատարանը ստուգի՝ արդյոք նոր, լրամշակված համաձայնագիրը, որով հնարավոր է ԵՄ անդամակցումը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, վերջապես բավարարում է ԵՄ դատարանին:

Այդուհանդերձ, սույն վերլուծության արդյունքում կարելի է հանգել հետևության, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ԵՄ արդարադատության դատարանի իրավազորությունների տարբերությունները ապագայում ևս հնարավորություն չեն ընձեռելու ԵՄ արդարադատության դատարանին ներկայացնելու Կարծիք 2/13-ի սահմանափակումների հաղթահարման վերաբերյալ այլ կարծիք:

Երկու դատարանների փոխգործակցությունն այսուհետ ևս կշարունակվի՝ փաստացի հղումներ կատարելով ՄԻԵԴ վճիռներին սեփական որոշումներում և

[1] 2021 Annual Report on the application of the EU Charter https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:52021DC0819

միևնույն ժամանակ ԵՄԱԴ ավելի շատ կշեշտադրի Խարտիան, որպեսզի ցույց տա, որ ԵՄ-ն ունի պաշտպանության ավելի բարձր մակարդակ, քան ՄԻԵԿ-ը:

Մեր կարծիքով չեն կարող իրավական լուծումներով այս փուլում փարատված համարվել նաև այն մտահոգությունները, որ միացումը կբացառի ՄԻԵԴ վերահսկողությունը ԵՄ միասնական արտաքին և անվտանգության քաղաքականության (CFSP) նկատմամբ:

Չնայած վերոգրյալին, հարկ է նշել նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ԵՄ արդարադատության դատարանի կառուցողական երկխոսությունը կնպաստի մարդու իրավունքների պաշտպանությանը և իրավունքի այս ճյուղի աննախադեպ զարգացմանը, քանի որ այս ոլորտում երկու դատարանների «մրցակցությունը» դրական դեր է կատարում մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության ամենաբարձր ստանդարտների սահմանման ու պահպանության գործում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Туманов В.А.** Европейский суд по правам человека. - М., 2001.
2. **Кашкин С.Ю.** Право Европейского союза: документы и комментарии. - М., 1999.
3. Общая теория прав человека / Под. Ред. Е.А. Лукашевой. - М. 1996.
4. **Казинян А.Г.** Европейская судебная защита основных прав и свобод человека (Люксембург - Страсбург) Сравнительно-правовой анализ. - Ер.: Изд. ЕГУ, 2005.
5. **Jacobs, F.** "Is the Court of Justice of the European Communities a Constitutional Court?" "Constitutional Adjudication in European Community and National Law" ed. D. Curtin and D. O'Keeffe (Butterworths (Irland), 1992.
6. European Commission of Human Rights - *M and Co. V. FRG* App № 13258/87 (9 February 1990), URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-863; Matthews v. UK (18 Fabruary 1999), URL: https://hudoc.echr.coe.int/tur?i=001-58910
7. The European Convention on Human Rights: A living instrument: https://www.coe.int/en/web/ankara/-/the-european-convention-on-human-rights-a-living-instrument
8. ԵՄ գործունեության մասին պայմանգիր (TFEU) URL:https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=CELEX:12012E/TXT:en:PDF
9. ԵՄ պայմանագիր (TEU) URL:https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:12016ME/TXT#d1e32-13-1
10. *Cyprus v. Turkey* App. No. 25781/94, Judgment 10/05/2001, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-59454

11. *Georgia v. Russia* (I) App. No. 13223/07 Great Chamber Judgment 03/07/2014, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-145546

12. *Georgia v. Russia* (II) App. No. 3863/08 Great Chamber Judgment 21/01/2021, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-207757

13. *Ireland v. the United Kingdom* App. No: 531/71, Judgment 18/01/1978, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57506

14. Case 166/73, Rheinmühlen [1974], ttps://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:61973CJ016

15. Opinion 2/13 of the Court (Full Court) of 18 December 2014, ECR I-0000; https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A62013CV0002

16. Opinion 2/94 of the Court 28 March 1996, I-1763 Accession by the Communities to the Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:61994CV0002_SUM

17. Strategy to strengthen the application of the Charter of Fundamental Rights in the EU, COM(2020) 711 final https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:52020DC0711

18. 2021 Annual Report on the application of the EU Charter https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:52021DC0819

ВОЗМОЖНЫЕ КОЛЛИЗИИ ЮРИСДИКЦИЙ СУДА ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА И ЕВРОПЕЙСКОГО СУДА ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА И СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ ИХ ВЗАИМОДЕЙСТВИЯ

Аннотация

В статье рассматриваются современные тенденции развития деятельности и взаимодействия европейских судебных институтов в сфере защиты прав человека, а также их влияние на формирование и функционирование европейской системы правозащиты. Особое внимание уделяется соотношению механизмов Совета Европы и Европейского союза в данной сфере.

Отмечается, что членство Республики Армения в Совете Европы способствовало активной имплементации европейских стандартов, принципов и прецедентного права Европейского суда по правам человека в национальную правовую систему, тогда как правовые механизмы и стандарты Европейского союза исследованы в армянской юридической науке в сравнительно меньшей степени.

Актуальность исследования компетенции Суда Европейского союза обусловлена необходимостью определения его роли в развитии европейской системы защиты прав человека. В данном контексте анализируются значение Европейской конвенции о

защите прав человека и основных свобод как источника общих принципов права ЕС, принятие Хартии Европейского союза об основных правах, а также современные правовые процессы, связанные с перспективой присоединения Европейского союза к Европейской конвенции.

Особое значение имеет также исследование правовых основ взаимодействия Суда Европейского союза и Европейского суда по правам человека, с учетом начатого Республикой Армения процесса сближения с Европейским союзом. В статье анализируется влияние указанных судебных институтов на развитие правовых основ европейской системы защиты прав человека.

Ключевые слова: Европейский суд по правам человека; Суд Европейского союза; единые механизмы защиты прав человека; юрисдикция Суда Европейского союза в сфере защиты прав человека.

POTENTIAL COLLISION OF JURISDICTIONS BETWEEN THE COURT OF JUSTICE OF THE EUROPEAN UNION AND THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS AND CURRENT DEVELOPMENTS IN THEIR COOPERATION

Annotation

This article examines recent developments in the activities and interaction of European judicial institutions in the field of human rights protection, as well as their impact on the effective protection of individuals' rights. While the Republic of Armenia's membership in the Council of Europe has significantly facilitated the incorporation of the organisation's standards and principles into the Armenian legal system, the corresponding standards and principles of European Union law have received considerably less scholarly attention and have yet to be examined in comparable depth.

The study of the human rights protection mechanisms and standards developed within the framework of the Court of Justice of the European Union, as well as the legal foundations and potential forms of its interaction with the European Court of Human Rights, is of particular importance for Armenia. As a member state of the Council of Europe, Armenia has also formally initiated a process aimed at accession to the European Union through the adoption by the National Assembly, on 26 March 2025, of the Law of the Republic of Armenia "On the Launch of the Process of Accession of the Republic of Armenia to the European Union."

Against this background, particular importance should be attached to examining the legal foundations of the principles and mechanisms of human rights protection within the frameworks of the Council of Europe and the European Union, analysing the specific features of the legal status of the European Court of Human Rights and the Court of Justice of the European Union.

Keywords: European Court of Human Rights, Court of Justice of the European Union, unified mechanisms for the protection of human rights, jurisdiction of the Court of Justice of the European Union, human rights protection.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 26.09.2026 թ., տրվել է գրախոսության 27.09.2026 թ., ընդունվել է տպագրության 30.09.2026 թ.:



DOI: 10.59560/18291155-2026.3-282

ՍԱՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռուս-հայկական համալսարանի հայցորդ

«ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ՝ ՈՐՊԵՍ ՀԱՏՈՒԿ ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

Ամփոփագիր

Հոդվածում վերհանվել են «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ գործերի՝ որպես հատուկ հայցային վարույթի վերաբերյալ դատավարական առանձնահատկությունները ներպետական օրենսդրությամբ, որն իրավունքի տեսությունում ուսումնասիրված չէ, մինչդեռ ընտանիքում բռնությունների բացահայտման աճին զուգահեռ անհրաժեշտություն է առաջանում ոչ միայն գիտական ուսումնասիրության առարկա դարձնել, այլ նաև վերհանել իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրները և առաջարկել հնարավոր լուծումներ ընտանիքում բռնությունները կանխարգելելու, առկա վտանգները վերհանելու և արագ չեզոքացնելու համար, քանի որ ընտանեկան բռնությունների հետևանքով ոչ միայն խախտվում են անպաշտպան անձանց իրավունքները, այլ նաև խեղաթյուրվում է հասարակության առանցքային ինստիտուտ հանդիսացող ընտանիքը, որը պետության հիմքն է:

Հոդվածի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է ՀՀ իրավական համակարգում 2018 թվականի հուլիսի 12-ին նշված ինստիտուտի ներդրմամբ և իրավակիրառ պրակտիկայի հնարավոր խնդիրների վերհանմամբ:

Հոդվածում ներկայացվել են օրենսդրական առաջարկներ, որոնք ուղղված են «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և

կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով նախատեսված պաշտպանական որոշման պրակտիկ կիրառելիության արդյունավետությանն ու ՀՀ օրենսդրության կատարելագործմանը:

Հիմնաբառեր. հատուկ հայցային վարույթ, պաշտպանական որոշում, պաշտպանական միջոց, ընտանեկան բռնություն, պատասխանատվություն:

1. Ներածություն

ՀՀ դատարաններում քաղաքացիական գործերի քննության դատավարական հայցային ընթացակարգն իրականացվում է քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական երկու վարույթներով՝ հայցային և հատուկ հայցային:

Օրենսդրական զարգացումների արդյունքում, հատուկ հայցային վարույթը լրացվեց նոր տեսակի քաղաքացիական գործերով, որոնց մի մասը նախկինում դատարանը քննում էր հայցային վարույթի կարգով[1]:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.1-ին գլուխը նվիրված է պաշտպանական որոշման վերաբերյալ գործերի վարույթին, որը դիտարկվում է որպես հատուկ հայցային վարույթ, որը ներպետական օրենսդրությամբ ամրագրվել է միայն 2018 թվականին:

ՀՀ օրենսդրությամբ ամրագրվել են պաշտպանական որոշման վերաբերյալ գործերի վարույթի ընդդատությունը, հայցադիմումին ներկայացվող պահանջները և իրավասու դատարանի կողմից կայացվող որոշումների սպառիչ ցանկը:

Պաշտպանական որոշման վերաբերյալ գործերի դատավարական իրավակարգավորումը սերտ առնչություն ունի իրավունքի այլ ճյուղերի, մասնավորապես, վարչական և քրեական իրավունքի ճյուղերի հետ, ինչն ունի էական նշանակություն ու բխում է միջազգային իրավունքի սկզբունքներից և ուղղված է ընտանիքում բռնության կանխարգելմանն ու ընտանիքի խոցելի անդամի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, քանի որ առանց վարչաիրավական և քրեաիրավական գործիքակազմերի կիրառման միայն քաղաքացիաիրավական կարգավորման դեպքում հնարավոր չէր լինի իրականացնել ընտանիքում բռնության ենթարկված անձի իրավունքների արդյունավետ պաշտպանություն կամ բռնության ենթարկվելու վտանգի արագ կանխարգելում:

[1] Տե՛ս **Դավթյան Ա.,** Քաղաքացիական դատավարություն, արդի հիմնախնդիրներն ու զարգացման ուղիները: Երևան 2024, էջ 73:

2. **Պաշտպանական որոշման վերաբերյալ գործերով վարույթի դատավարական առանձնահատկությունները**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի[1] 234.1-ին հոդվածի համաձայն՝ «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ հայցադիմումը ներկայացվում է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձի բնակության վայրի կամ վերջինիս համաձայնությամբ հայցադիմում ներկայացնող աջակցության կենտրոնի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:

Վերոգրյալ քաղաքացիադատավարական նորմի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ օրենդրությամբ ամրագրված է նշված հատուկ հայցային վարույթի տարածքային ընդդատությունը, այն է՝ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձի բնակության վայրի կամ վերջինիս համաձայնությամբ հայցադիմում ներկայացնող աջակցության կենտրոնի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:

Նշված ինստիտուտի հաջորդ դատավարական առանձնահատկությունը բխում է ՀՀ օրենսդրությամբ ամրագրված այն իրավակարագավորումից, որ պաշտպանական որոշման վերաբերյալ հայցադիմումին ներկայացվում են հատուկ պահանջներ՝ միաժամանակ սահմանելով անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման պարտադիր դրույթ:

Այսպես.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի[2] 234.2-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանական որոշման կայացման վերաբերյալ հայցադիմումի նկատմամբ տարածվում են հայցադիմումի համար սույն օրենսգրքով սահմանված պահանջներն այնքանով, որքանով կիրառելի են սույն գլխով նախատեսված վարույթի նկատմամբ:

Վերոգրյալ քաղաքացիադատավարական նորմի վերլուծությունից հետևում է, որ պաշտպանական միջոց կիրառելու վերաբերյալ որոշման հայց ներկայացնելու համար գործում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված հայցադիմումին ներկայացվող ինչպես ընդհանուր կանոնները, այնպես էլ հատուկ կանոններ, որոնք հստակ ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես, հայցադիմումը ներառում է հայցվորի և պատասխանողի կապի, բռնության

[1] Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է 09.02.2018 թ., ուժի մեջ է մտել 09.04.2018 թ:

[2] Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է 09.02.2018 թ., ուժի մեջ է մտել 09.04.2018 թ:

անմիջականորեն սպառնացող վտանգի առկայությունը հիմնավորող տեղեկատվություն, ինչպես նաև պատասխանողի կանխարգելիչ հաշվառման վերցված լինելու հանգամանքը:

Հատկանշական է այն իրավակարգավորումը, որ հայցադիմումին ներկայացվող պարտադիր պահանջ նախատեսված է «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի վերաբերելի դրույթների ամրագրումը, մինչդեռ հարկ է փաստել, որ որոշ դեպքերում հայցադիմում ներկայացնում են անձինք, ովքեր ֆինանսական հնարավորության բացակայությամբ ինքնուրույն են իրականացնում իրենց իրավունքների պաշտպանությունը, իսկ որոշ դեպքերում անձանց մոտ բացակայում է իրավագիտակցությունը կամ իրավագիտության ոլորտում անհրաժեշտ գիտելիքները, ինչն ինքնին կարող է հանգեցնել նշված օրենսդրական պահանջի արդյունքում արհեստական դժվարությունների առաջացման, քանի որ հայցադիմումին ներկայացվող պահանջների չպահպանման դեպքում հայցադիմումը ենթակա է վերադարձման, որն էլ իր հերթին պահանջում է ժամանակ փոփոխելու և կրկին ներկայացնելու հայցադիմումը, մինչդեռ նշված ինստիտուտի կարևությունը բխում է ժամանակային առումով քննարկվող խնդրի արագ լուծմամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ առաջարկվում է նշված հոդվածը խմբագրել հետևյալ կերպ. «Հայցադիմումում կարող են ներառվել «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի վերաբերելի դրույթները», ինչը հնարավորություն կտա անձի՝ դատարան դիմելու իրավունքի մատչելիության ապահովմանն ու պետության՝ ի դեմս դատարանի արագ արձագանքմանը:

Նշված ինստիտուտի առանձնահատկության ու հրատապ կիրառելիության մասին են վկայում նաև դատավարական ժամկետները. մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրված են հայցադիմումը վարույթ ընդունելու և գործը լուծելու սեղմ ժամկետներ, այն է՝ հայցադիմումը վարույթ ընդունելու եռօրյա ժամկետ, որից հետո գործը քննվում է և որոշում է կայացվում հնգօրյա ժամկետում, ընդ որում, իրավասու դատարանը որոշում կայացնում է առանց դատական նիստ հրավիրելու, ինչն ինքնանպատակ չէ, այլ ուղղված է ընտանիքում հնարավոր բռնության կանխարգելմանն ու պետության արագ արձագանքմանը:

Քննարկվող ինստիտուտի առանձնահատկություններից է նաև դատական ակտի բողոքարկման հնարավորության բացակայությունը:

Մասնագիտական գրականությունում նշվել է բողոքարկման ինստիտուտի կարևորության վերաբերյալ[1]՝ բողոքարկելու իրավունքը դիտարկելով արդար դատաքննության կարևոր բաղադրիչ[2]:

Գտնում ենք, որ վերը նշված առանձնահատկությունը հանդիսանում է բացասական այն հիմնավորմամբ, որ ստացվում է նախ օրենսդիրը, կարևորելով ընտանիքում բռնության կանխարգելումը, պաշտպանական որոշում կայացնելու հնարավորություն է նախատեսել դատարանի կողմից, մյուս կողմից՝ այդ որոշումը բողոքարկելու իրավունք չի վերապահել, ինչը ոչ միայն հակասում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ու ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքին, այլ նաև անձին զրկում է իր իրավունքների արդյունավետ պաշտպանության իրավունքից, այլ կերպ ասած՝ եթե ողջամտորեն ընդունելի է պաշտպանական որոշում կայացնելու վերաբերյալ դատական ակտը բողոքարկման ենթակա չլինելու հանգամանքը, ապա հակառակն ընդունելի չէ, քանի որ ակնհայտ է, որ անձի հայցն ուղղված է ընտանիքում բռնության կանխարգելմանը, որը հնարավոր է իրացնել պետության՝ ի դեմս դատարանի պաշտպանական որոշման վերաբերյալ հայցի բավարարմամբ, և որի մերժումը և դատական վերանայման հնարավորության բացակայությունը կարող է առաջացնել անցանկալի հետևանքներ:

ՀՀ վճռաբեկ դատարանը 01.11.2023 թ. թիվ ԵԴ/22976/02/22 քաղաքացիական գործով իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ օրենսդիրը գործին մասնակցող անձանց վերապահել է առաջին ատյանի դատարանի դատական ակտերի վերաքննության կարգով վերանայման իրավունք՝ պայմանով, որ այդ իրավունքը նախատեսված լինի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Տվյալ դեպքում օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասում թվարկելով առաջին ատյանի դատարանի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերը, միևնույն ժամանակ չի սահմանափակել դրանց շրջանակը՝ նշելով, որ վերաքննության կարգով կարող են բողոքարկվել նաև այլ որոշումներ՝ պայմանով, որ բողոքարկումը նախատեսված լինի օրենքով:

Տվյալ դեպքում ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով, այնպես էլ այլ օրենքով «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանական որոշման բողոքարկում նախատեսված չէ:

[1]Տե՛ս Гражданский процесс / Под ред. Треушникова М.К. - М., 2021, էջ 383-384, 415, 442:

[2] Տե՛ս **Борисова Е.А.** Апелляция в гражданском (арбитражном) процессе. - М., 2008, էջ 3:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ Օրենքով նախատեսված պաշտպանական որոշումը գործին մասնակցող անձինք վերաքննության կարգով բողոքարկելու իրավունք չունեն[1]:

ՀՀ Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1828 որոշմամբ 2026 թվականի մայիսի 19-ին արձանագրել է, որ վիճարկվող՝ Օրենսգրքի 361-րդ հոդվածով սահմանվում է առաջին ատյանի դատարանի այն որոշումների շրջանակը, որոնք ենթակա են վերաքննության կարգով բողոքարկման: Սակայն նշված հոդվածի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված դատական պրակտիկայից հետևում է, որ պաշտպանական որոշման վերաբերյալ գործերով կայացվող դատական ակտերն այդ ցանկում ներառված չեն որպես բողոքարկման ենթակա դատական ակտեր: Ավելին՝ նույն հոդվածը նախատեսում է, որ բողոքարկման ենթակա կարող են լինել նաև «այլ որոշումներ՝ օրենքով սահմանված դեպքերում», այնուամենայնիվ Օրենսգրքի «Հատուկ վարույթներ» բաժնի 27.1-ին գլխում որևէ լրացուցիչ կամ հատուկ կարգավորում պաշտպանական որոշման վերաբերյալ գործերով կայացվող դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ նախատեսված չէ:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ դատական ակտի բողոքարկման իրավունքը դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության սահմանադրաիրավական բովանդակությունը երաշխավորող առանցքային բաղադրիչ է: Արդյունավետ դատական պաշտպանության իրավունքն առաջնահերթորեն ենթադրում է բավարար օրենսդրական երաշխիքների ամրագրում՝ ապահովելու անձի «մուտքը» դատարան, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վերադաս դատական ատյաններ:

ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.4-րդ հոդվածի 3-րդ մասը և 361-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով չեն նախատեսում առաջին ատյանի դատարանի կողմից կայացված պաշտպանական որոշման վերաքննության կարգով բողոքարկման հնարավորություն, ճանաչվել է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին հակասող և անվավեր[2]:

Վերոգրյալի հաշվառմամբ առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածում ավելացնել պաշտպանական որոշում կայացնելու պահանջը մերժելու վերաբերյալ դատական ակտերը բողոքարկելու իրավունքի ամրագրում:

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 01.11.2023 թ. թիվ ԵԴ/22976/02/22 քաղաքացիական գործով որոշումը:

[2] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 19.05.2026 թ. թիվ ՍԴՈ-1828 որոշումը:

3.Պաշտպանական որոշման վերաբերյալ գործերի վարույթի դատական պրակտիկան և կապը իրավունքի այլ ճյուղերի հետ

Պաշտպանական որոշման վերաբերյալ իրավակիրառ պրակտիկան կարող ենք բաժանել 2 խմբի՝ վարչահրավական և քաղաքացիահրավական ուղղվածությամբ, որը դրսևորվում է համապատասխանաբար ընտանիքում բռնության ենթարկված անձի դիմումի հիման վրա իրավասու վարչական մարմնի կողմից վարչական ակտի ընդունմամբ կամ մերժմամբ և անձի հայցի հիման վրա քաղաքացիական դատավարության կարգով իրավասու դատարանի կողմից պաշտպանական որոշում կայացնելով կամ այդպիսի որոշում կայացնելը մերժելով:

Հարկ է փաստել, որ առաջին դեպքում վարչական մարմնի կողմից կայացված վարչական ակտը ենթակա է բողոքարկման վարչական դատավարության կարգով, իսկ երկրորդ դեպքում՝ քաղաքացիական դատարանի կողմից կայացված դատական ակտը բողոքարկման ենթակա չէ:

Հարկ է արձանագրել, որ միևնույն խնդիրը իրավունքի երկու ճյուղերին՝ վարչահրավական և քաղաքացիահրավական, վերապահելը կարծես արդյունավետ լուծում չի հանդիսանում, քանի որ իրավակիրառ պրակտիկայում առկա են հակասություններ, և որոնք մեկնաբանվում են ի վնաս տուժողների, որպիսի պայմաններում օրենսդրական բարեփոխումների արդյունքում քննարկվող խնդրի լուծումը բացառապես իրավունքի մեկ ճյուղին վերապահելն առավել արդյունավետ լուծում կարող է հանդիսանալ, այլ կերպ ասած՝ պաշտպանական որոշում կայացնելու և վերադաս ատյաններում բողոքարկելու հնարավորությունը միայն քաղաքացիահրավական դատարաններին վերապահելը կհանգեցնի որոշակիության և պաշտպանական որոշում կիրառելու կամ չկիրառելու չափորոշիչների հստակեցման, պաշտպանական որոշման հասցեատերերի իրավունքների ու օրինական շահերի հավասարակշռման:

Միաժամանակ, պաշտպանական որոշում կայացնելու վերաբերյալ կայացված վարչական ակտը կամ դատական ակտը հասցեատիրոջ կողմից չկատարելն առաջացնում է քրեական պատասխանատվություն, ինչը, ի թիվս այլի, ուղղված է վարչական կամ դատական ակտի կատարման ապահովմանը:

Սույն աշխատանքի գիտական հետաքրքրության շրջանակներում ուսումնասիրելով քաղաքացիական գործերի դատական պրակտիկան՝ հարկ է դիտարկել, որ այն մտահոգիչ է, քանի որ ներկայացված հայցերը, որպես կանոն, դատարանների կողմից մերժվում են:

Այսպես. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 02.02.2023 թ. թիվ ԵԴ/2232/02/23 որոշմամբ[1] մերժել

[1] Տե՛ս Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 02.02.2023 թ. թիվ ԵԴ/2232/02/23 որոշումը:

է պաշտպանական միջոց կիրառելու վերաբերյալ պահանջն այն հիմնավորմամբ, որ հնարավոր չէ այլ աղբյուրներից ձեռք բերել ապացույցներ, իսկ պաշտպանական որոշում կայացնելու համար գործի քննության ընթացքում առնվազն անհրաժեշտ են ծանրակշիռ փաստեր և դրանք հիմնավորող ապացույցներ, որոնք Դատարանին թույլ կտան եզրահանգումներ կատարել այն մասին, որ առկա են ընտանիքում բռնության ենթարկվածի և նրա խնամքի տակ եղող անձանց պաշտպանելու և ընտանիքում բռնության նոր դրսևորումները կանխարգելելու նպատակով ձեռնարկվելիք գործողություններ իրականացնելու հիմքեր: Այսինքն հայցվորի կողմից չի ներկայացվել որևէ փաստական տվյալ, հիմնավորում, ապացույց, բացակայում են նոր բռնություն գործադրելու կամ նման փորձ կատարված լինելը հիմնավորող փաստեր կամ հանգամանքներ, իսկ ներկայացված ապացույցները թույլատրելի ապացույցներ չեն, ուստի Դատարանը գտել է, որ հայցվորի խնդրարկվող պահանջը բավարարվել չի կարող: Ինչ վերաբերում է հայցվորի ապագայում բռնության նոր դրսևորումները կանխարգելելու մտավախություններին, ապա Դատարանը գտել է, որ միայն մտավախություն ունենալը, առանց բավարար ապացուցողական հիմքի, չի կարող հիմք հանդիսանալ Դատարանի կողմից պաշտպանական որոշում կայացնելու համար:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 01.02.2023 թ. թիվ ԵԴ/2211/02/23 որոշմամբ[1] մերժել է պաշտպանական միջոց կիրառելու վերաբերյալ պահանջը, որում արձանագրվել է, որ փորձագետի եզրակացությամբ չի հիմնավորվում, որ առկա է պաշտպանական որոշում կայացնելու անհրաժեշտություն, քանի որ միայն ապագայում բռնության ենթարկվելու վերաբերյալ ենթադրությունները չեն կարող վկայել ներկա փուլում երեխային հորից պաշտպանելու անհրաժեշտության մասին, քանի որ դրանք ենթադրություններ են և չեն հիմնավորվում որևէ այլ ապացույցով կամ առնվազն ծանրակշիռ փաստարկներով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 03.08.2023 թ. թիվ ԵԴ2/15380/02/23 որոշմամբ[2] ևս մերժվել է պաշտպանական միջոց կիրառելու վերաբերյալ պահանջը, որում արձանագրվել է, որ Դատարան ներկայացված հայցադիմումով չի ներկայացվել որևէ հիմնավոր և վերաբերելի ապացույց պատասխանողի կողմից բռնություն գործադրելու վերաբերյալ: Միաժամանակ, դատարան ներկայացված միակ փաստը հիմնավորող ապացույց է հանդիսանում 30.06.2023 թվականին Ընտանիքում բռնություն

[1] Տե՛ս Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 01.02.2023 թ. թիվ ԵԴ/2211/02/23 որոշումը:

[2] Տե՛ս Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 03.08.2023 թ. թիվ ԵԴ2/15380/02/23 որոշումը:

գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ որոշումը, որ վարչական դատարանի կողմից ճանաչվել է անվավեր:

Վերոգրյալի հաշվառմամբ հարկ է փաստել, որ քաղաքացիական գործերով դատարանների կողմից պահանջվող ապացույցների ծավալը համաչափ չէ պաշտպանական միջոց կիրառելու օրենսդրի նպատակին, քանի որ նշված ինստիտուտի նպատակն ըստ էության ընտանիքում բռնության ենթարկված անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է՝ կանխելով հետագա ընտանեկան բռնություններն ու հնարավոր անդառնալի հետևանքները, որն իրացվում է համարժեք պաշտպանական որոշման կիրառմամբ, ինչը նշանակում է, որ պաշտպանական որոշում կայացնելու վերաբերյալ պահանջով իրավասու դատարան դիմելն արդեն ազդակ է ընտանեկան բռնության գոյության փաստն արձանագրելու համար, հետևաբար նվազագույն ապացույցը նույնիսկ կարող է վկայել պաշտպանական որոշում կիրառելու անհրաժեշտության և հրատապության մասին:

4. Եզրակացություն

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ պաշտպանական որոշման գործերի վարույթի՝ որպես հատուկ հայցային վարույթի ներդրումը ՀՀ իրավական համակարգ ունի կանխարգելիչ գործառույթ և ուղղված է ընտանեկան բռնությունների նախականխմանն ու ընտանիքի խոցելի անդամի իրավունքների պաշտպանությանը, սակայն իրավակիրառ պրակտիկան վկայում է նշված ինստիտուտի ոչ արդյունավետ և ձևական լինելու մասին, քանի որ իրավասու քաղաքացիական դատարանները սահմանել են ապացուցվածության այնպիսի շեմ, որը ողջամտորեն չի կարող հաղթահարվել որևէ անձի կողմից, որի հետևանքով անձի՝ պետության կողմից պաշտպանված լինելու իրավունքն արդյունավետորեն չի իրացվում, ավելին, պաշտպանական որոշում կայացնելու պահանջը մերժելու վերաբերյալ դատական ակտերը վերաքննիչ ատյանի կողմից վերանայման հնարավորության բացակայությունը հանգեցնում է անձանց իրավունքների խախտման, որպիսի պայմաններում առաջարկվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածում ավելացնել պաշտպանական որոշում կայացնելու պահանջը մերժելու վերաբերյալ դատական ակտերը բողոքարկելու իրավունքի ամրագրում:

Հոդվածում առաջ է քաշվել պաշտպանական միջոց կիրառելու վերաբերյալ հայցադիմումին նյերկայացվող իմպերատիվ պահանջ հանդիսացող «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի վերաբերելի դրույթների կիրառման վերաբերյալ իրավանորմի ամրագրման հայեցողական պահանջ, ինչն ուղղված է հայցադիմումին ներկայացվող պահանջների պարզեցմանն ու անձանց դատական պաշտպանության իրավունքի մատչելիության ապահովմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2002 թվականի ապրիլի 26-ին:

2. ՀՀ Սահմանադրություն: Ուժի մեջ է մտել 22.12.2015 թ.:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է 09.02.2018 թ., ուժի մեջ է մտել 09.04.2018 թ:

4. **Դավթյան Ա.,** Քաղաքացիական դատավարություն, արդի հիմնախնդիրներն ու զարգացման ուղիները: Երևան, 2024 թ.:

5. **Борисова Е.А.** Апелляция в гражданском (арбитражном) процессе. - М., 2008.

6. Гражданский процесс / Отв. ред. Ярков В.В. - М., 2022.

7. Гражданский процесс / Под ред. Треушникова М.К. - М., 2021.

8. Гражданский процесс. Хрестоматия / Под ред. М.К. Треушникова. - М., 2005.

9. **Осокина Г.Л.** Иск (теория и практика). - М., 2000.

10. ՀՀ Սահմանադրական դատարանի 2026 թվականի մայիսի 19-ի թիվ ՍԴՈ-1828 որոշումը:

11. ՀՀ Վճռաբեկ դատարանի ԵԴ/22976/02/22 քաղաքացիական գործով 01.11.2023 թ. որոշումը:

12. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 02.02.2023 թ. թիվ ԵԴ/2232/02/23 քաղաքացիական գործով որոշումը:

13. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 01.02.2023 թ. թիվ ԵԴ/2211/02/23 քաղաքացիական գործով որոշումը:

14. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 03.08.2023 թ. թիվ ԵԴ2/15380/02/23 քաղաքացիական գործով որոշումը:

ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ВО ВНУТРИГОСУДАРСТВЕННОМ ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ ДЕЛ ОБ ОХРАННОМ ОРДЕРЕ, ПРЕДУСМОТРЕННОМ ЗАКОНОМ «О ПРЕДОТВРАЩЕНИИ СЕМЕЙНОГО И БЫТОВОГО НАСИЛИЯ И ЗАЩИТЕ ЛИЦ, ПОДВЕРГШИХСЯ СЕМЕЙНОМУ И БЫТОВОМУ НАСИЛИЮ», В КАЧЕСТВЕ ОСОБОГО ИСКОВОГО ПРОИЗВОДСТВА

Аннотация

В статье раскрываются процессуальные особенности дел об охранном ордере в качестве особого искового производства, предусмотренного национальным законодательством, которые до настоящего времени не становились предметом исследования в юридической науке. Между тем по мере роста числа выявляемых случаев домашнего насилия возникает необходимость не только в их научном изучении, но и выявлении существующих проблем правоприменительной практики, а также предложения возможных путей их решения для предотвращения домашнего насилия, выявления существующих угроз и их оперативного устранения, поскольку домашнее насилие не только нарушает права беззащитных лиц, но и разрушает семью, которая является важнейшим институтом общества и основой государства.

Актуальность исследования, представленного в статье, обусловлена введением вышеупомянутого института в правовую систему Республики Армения 12 июля 2018 года и выявлением возможных проблем в юридической практике.

В статье представлены законодательные предложения, направленные на повышение эффективности практического применения охранного ордера, предусмотренного Законом «О предотвращении семейного и бытового насилия и защите лиц, подвергшихся семейному и бытовому насилию», а также на совершенствование законодательства Республики Армения.

Ключевые слова: особое исковое производство, охранный ордер, защитная мера, домашнее насилие, ответственность.

LEGAL REGULATION OF CASES REGARDING THE PROTECTIVE ORDER AS A SPECIAL CLAIM PROCEEDING UNDER THE LAW "ON THE PREVENTION OF FAMILY AND DOMESTIC VIOLENCE AND THE PROTECTION OF PERSONS SUBJECTED TO FAMILY AND DOMESTIC VIOLENCE" BY DOMESTIC LEGISLATION

Annotation

The article reveals the procedural features of cases on the protective order as a special claim proceeding under domestic legislation, which have not been studied in legal theory; meanwhile, in parallel with the increase in the disclosure of domestic violence, there is a need not only to make it a subject of scientific study, but also to highlight existing problems in law enforcement practice and propose possible solutions to prevent domestic violence, identify existing dangers, and quickly neutralize them, since domestic violence not only violates the rights of defenseless individuals, but also distorts the family, which is a key institution of society and the foundation of the state.

The relevance of the study of the article is due to the introduction of the aforementioned institution into the legal system of the Republic of Armenia on July 12, 2018, and the identification of possible problems in legal practice.

The article presents legislative proposals aimed at improving the effectiveness of the practical application of the protective order provided for in the Law "On the Prevention of Family and Domestic Violence and the Protection of Persons Subjected to Family and Domestic Violence" and the improvement of the legislation of the Republic of Armenia.

Keywords: special claim proceedings, protective order, protective measure, domestic violence, responsibility.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 15.06.2026 թ., տրվել է գրախոսության 17.06.2026 թ., ընդունվել է տպագրության 22.09.2026 թ.:



DOI: 10.59560/18291155-2026.3-294

ԲՈՐՅԱ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ
Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ամբիոնի հայցորդ

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ամփոփագիր

Սույն հոդվածում ուսումնասիրվում են անմեղության կանխավարկածի սահմանադրական ամրագրման իրավական նախադրյալներն ու գործառնական նշանակությունը: Հետազոտության նպատակն է պարզաբանել սահմանադրական ամրագրումից բխող՝ օրենսդիր, դատական և հանրային իշխանության մյուս մարմինների պարտականությունները և առաջարկել դրանց պահպանումը գնահատելու չափանիշներ: Համակարգային մեկնաբանության և համեմատական իրավական վերլուծության հիման վրա առանձնացվում են երեք փոխկապակցված նախադրյալներ՝ քրեական հետապնդման ընթացքում հանրային իշխանության լիազորությունները սահմանափակելու, օրենսդրական կարգավորման համար պարտադիր սահմանադրական պահանջներ սահմանելու և անձին մեղավորության կանխակալ վերագրումից ժամանակին պաշտպանելու անհրաժեշտությունը: Հոդվածում ներկայացվում են սկզբունքի՝ օրենսդրական կարգավորմանը, իրավական նորմերի մեկնաբանությանը, սահմանադրական վերահսկողությանը, իրավունքների պաշտպանությանը և հանրային իշխանության մարմինների վարքագծին վերաբերող գործառույթները: Դրանց բովանդակությունը պարզաբանվում է համապատասխան մարմնի կամ պաշտոնատար անձի իրավասության և սկզբունքի պահպանմանն ուղղված պարտականությունների հաշվառմամբ: Դատական ակտերի ու պաշտոնական հաղորդագրությունների գնահատման համար առաջարկվում են սուբյեկտային, փուլային, բովանդակային և լեզվական չափանիշներ: Դրանց կիրառումը ենթադրում է նախ պարզել անմեղության կանխավարկածի կիրառելիությունը, ապա, ըստ գնահատվող ակտի բնույթի, ուսումնասիրել ապացուցման բեռի բաշխումն ու անձի վերաբերյալ ձևակերպումները:

Մասնավորապես, գնահատվում է՝ վերջիններս արտահայտում են դեռևս ապացուցման ենթակա մեղադրանք, թե անձին վերագրում են արդեն հաստատված մեղավորություն: ՄԻԵԴ-ի վճիռների վերլուծությամբ տարբերակվում են տվյալ որոշումն ընդունելու համար ապացույցների բավարարության գնահատումը և մեղավորության վերջնական դատական հաստատումը: Պաշտոնական խոսքի առնչությամբ հիմնավորվում է ձևակերպումները դրանց ամբողջական համատեքստում գնահատելու անհրաժեշտությունը. առանձին բառերի մեխանիկական ստուգումը բավարար չէ սկզբունքի պահպանումը որոշելու համար: Առաջարկվող չափանիշները կարող են կիրառվել դատական ակտերն ու պաշտոնական հաղորդագրությունները նախապատրաստելիս, ինչպես նաև դրանց իրավական գնահատման ընթացքում:

Հիմնաբառեր. անմեղության կանխավարկած, սահմանադրականություն, սահմանադրական ամրագրում, գործառնական նշանակություն, ապացուցման բեռ, կիրառելիության չափանիշներ, պաշտոնական խոսք:

Ներածություն

Անմեղության կանխավարկածի սահմանադրական ամրագրումը պետության մեղադրական լիազորությունների իրականացման համար սահմանում է պարտադիր իրավական սահմաններ: Դրանց հիմքում անձին անմեղ համարելու պահանջն է, քանի դեռ նրա մեղավորությունը չի հաստատվել օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Սահմանադրական այս երաշխիքը պարտադիր է քրեական վարույթն իրականացնող մարմինների և օրենսդրի համար: Օրենսդիրը չի կարող նախատեսել, իսկ իրավակիրառ մարմինը՝ կիրառել այնպիսի կարգավորում, որով ներկայացված մեղադրանքը կնույնացվի անձի մեղավորության հաստատման հետ:

Մեղավորության վերջնական հաստատմանը նախորդող որոշումներն ունեն ինքնուրույն առարկա և իրավական հետևանքներ: Ապացույցների բավարարությունն այդ դեպքում գնահատվում է լուծվող հարցին համապատասխան: Տվյալ որոշման հիմքերը հաստատող եզրահանգումը դեռևս չի լուծում անձի մեղավորության հարցը: Ուստի այդ որոշումների ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտ է պարզել, թե գնահատումը որքանով է պահպանվել մարմնի իրավասության և քննարկվող հարցի սահմաններում, ու արդյոք դրա պատճառաբանությամբ անձին չի վերագրվել արդեն հաստատված մեղավորություն:

Քրեական հետապնդման մասին հանրությանը տեղեկացնելու իրավասությունը պետք է իրականացվի անմեղության կանխավարկածի պահանջների պահպանմամբ: Սկզբունքը չի բացառում մեղադրանքի բովանդակության և վարույթի ընթացքի վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը, սակայն այդ տեղեկություններով

անձին չի կարող վերագրվել արդեն հաստատված մեղավորություն: Անհրաժեշտ է հաշվի առնել տեղեկությունը հաղորդող մարմնի իրավասությունը և վարույթի այն փուլը, որին վերաբերում է հայտարարությունը, քանի որ այդ հանգամանքներն ազդում են արտահայտված դատողությունների իրավական իմաստի վրա:

Սահմանադրական ամրագրման գործնական նշանակությունը բացահայտվում է հանրային իշխանության մարմինների պարտականությունները տարբերակելիս: Օրենսդրի համար սկզբունքը չափանիշ է քրեադատավարական կարգավորումներ սահմանելիս, դատարանի համար՝ համապատասխան նորմերը մեկնաբանելիս և որոշումներ պատճառաբանելիս, իսկ պաշտոնական տեղեկություն հրապարակող մարմնի համար՝ անձին վերաբերող փաստերն ու գնահատականները ներկայացնելիս: Այս պարտականությունների հստակեցումն անհրաժեշտ է սահմանադրական երաշխիքի իրացումը գնահատելու համար: Դրանով է պայմանավորված հետազոտության արդիականությունը. քննության են առնվում այն իրավական պահանջները, որոնց կատարումը պետք է ապահովի անձի պաշտպանությունը մեղավորության կանխակալ վերագրումից:

Հետազոտության նպատակն անմեղության կանխավարկածի սահմանադրական ամրագրման իրավական նախադրյալները բացահայտելն ու այդ ամրագրման գործառնական նշանակությունը պարզաբանելն է: Ուսումնասիրության առարկան սկզբունքից բխող պարտականություններն են՝ իրավական կարգավորման և հանրային իշխանության գործունեության մեջ դրանց դրսևորմամբ: Այդ նպատակով քննվում են սահմանադրական պաշտպանության անհրաժեշտությունը, սկզբունքի գործառույթներն ու դրա պահպանումը գնահատելու հիմքերը: Մեթոդաբանական հիմքը կազմում են համակարգային մեկնաբանությունն ու համեմատական իրավական վերլուծությունը: Սահմանադրական նորմն ուսումնասիրվում է դրա իրացումն ապահովող կարգավորումների հետ միասին, իսկ ՄԻԵԴ-ի իրավական դիրքորոշումներն օգտագործվում են սկզբունքի կիրառելիությունն ու դրանից բխող պահանջների սահմանները պարզաբանելու համար:

1) Սահմանադրական ամրագրման իրավական նախադրյալները

Անմեղության կանխավարկածի սահմանադրական ամրագրումը ստեղծում է սահմանադրական պատնեշ, որը հանրային իշխանությանը թույլ չի տալիս մեղադրանքը վերածել անձի մեղավորության իրավական կամ հանրային կանխակալ հաստատման: Սահմանադրությամբ ամրագրված իրավունքը պարտադիր չափանիշ է նաև օրենսդիր իշխանության համար. քրեական հետապնդման ընթացակարգերը սահմանելիս օրենսդիրը կաշկանդված է հիմնական իրավունքի բովանդակությամբ:

ՀՀ սահմանադրական զարգացման պայմաններում անմեղության կանխավարկածի ամրագրման նախադրյալները ձևավորվել են մի քանի փոխկապակցված շերտերով: *Առաջինն անկախ պետականության և նոր*

սահմանադրական ինքնության ձևավորման պահանջն էր: 1995 թվականի Սահմանադրությամբ Հայաստանը հռչակվեց ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն, ամրագրվեց Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը և դրա նորմերի անմիջական գործողությունը, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան: Այս միջավայրում անմեղության կանխավարկածի սահմանադրականացումը դարձավ նախկին պետականակենտրոն իրավամտածողությունից դեպի անձի իրավունքների գերակայության վրա հիմնված սահմանադրական կարգի անցնելու անհրաժեշտ բաղադրիչ[1]:

Երկրորդ նախադրյալը քրեական հետապնդման և պետական իշխանության նկատմամբ սահմանադրական վերահսկողության անհրաժեշտությունն էր: Անկախության սկզբնական շրջանում վերափոխվում էին արդարադատության և քրեական հետապնդման իրավական ու ինստիտուցիոնալ հիմքերը, ձևավորվում էին նաև նոր սահմանադրական չափանիշներ, որոնցով պետք է սահմանափակվեր հանրային իշխանության միջամտությունն անձի ազատությանը, պատվին, բարի համբավին և իրավական կարգավիճակին: 1995 թվականի Սահմանադրության 39-րդ հոդվածը երաշխավորում էր արդար դատաքննության իրավունքը, 40-րդ հոդվածը՝ իրավաբանական օգնության և պաշտպան ունենալու իրավունքը, իսկ 41-րդ հոդվածը՝ անմեղության կանխավարկածը՝ ներառյալ մեղադրյալի՝ իր անմեղությունը չապացուցելու կանոնը և չփարատված կասկածների մեկնաբանումը հօգուտ մեղադրյալի: Այս ընդգծումներից պարզ է դառնում, որ անմեղության կանխավարկածը սկզբնական սահմանադրական կարգավորմամբ հանդես է եկել ոչ թե միայն որպես մեկ քրեադատավարական կանոն, այլ որպես արդարադատության սահմանադրական երաշխիքների ամբողջական շղթայի մաս[2]:

Երրորդ նախադրյալը միջազգային իրավական պարտավորությունների և մարդու իրավունքների համընդհանուր չափանիշների ներգրավումն էր ազգային իրավակարգում: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 2-րդ մասը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում են անձի անմեղ համարվելու իրավունքը մինչև մեղավորության օրինական ապացուցումը: ՀՀ Սահմանադրության մեջ այս սկզբունքի ամրագրմամբ ներպետական իրավակարգը կապվեց ոչ միայն սեփական

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է հանրաքվեով 1995 թվականի հուլիսի 5-ին, ուժի մեջ է մտել 1995 թվականի հուլիսի 13-ին: Սկզբնական խմբագրություն, հոդվածներ 1, 4, 6 և 41 // ARLIS Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ. Պաշտոնական ինկորպորացիա. URL: https://arlis.am/hy/acts/1

[2] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 1995 թվականի սկզբնական խմբագրություն, հոդվածներ 39–41:

սահմանադրական ինքնության, այլև մարդու իրավունքների միջազգային համակարգի հետ[1]:

Այս նախադրյալը ներառում է միջազգային իրավական չափանիշների սկզբնական ձևավորումը, ինչպես նաև դրանց հետագա զարգացումը միջազգային պայմանագրերի և իրավական մեկնաբանությունների շրջանակում: Քանի որ այդ չափանիշները ձևավորվել և զարգացել են տարբեր ժամանակահատվածներում, դրանց նշանակությունը հարկ է գնահատել սահմանադրական կարգավորումների զարգացման համապատասխան փուլի համատեքստում:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 32 ընդհանուր մեկնաբանությունն անմեղության կանխավարկածի բովանդակությունը բացահայտում է որպես մարդու իրավունքների հիմնարար երաշխիք՝ շեշտելով, որ մեղադրանքի ապացուցման բեռը կրում է մեղադրող կողմը, մեղավորությունը չի կարող կանխակալ ենթադրվել, հանրային մարմինները պարտավոր են ձեռնպահ մնալ մեղավորությունը հաստատող հայտարարություններից, իսկ լրատվամիջոցները պետք է խուսափեն կանխավարկածը խաթարող լուսաբանումից[2]: Այս մեկնաբանությունը կարևոր է նաև ՀՀ Սահմանադրության մեջ սկզբունքի ամրագրման գործառնական իմաստը հասկանալու համար, քանի որ Սահմանադրության մեջ նորմի ամրագրումը պահանջում է ոչ միայն դրա տեքստային ճանաչում, այլև ապացուցման, դատական լեզվի և պաշտոնական հաղորդակցության համապատասխանեցում այդ չափանիշին:

1995 թվականի սահմանադրական ձևակերպումը եռատարր էր: Այն նախատեսում էր, որ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ մինչև դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով մեղավորության ապացուցումը, մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, իսկ չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի: Այս կառուցվածքը սահմանադրական մակարդակում միավորում էր երեք պաշտպանական շերտ՝ կարգավիճակային, ապացուցողական և մեկնաբանական: Կարգավիճակային շերտը պահպանում էր անձի անմեղ համարվելու իրավական վիճակը, ապացուցողականը՝ արգելում ապացուցման բեռի տեղափոխումը

[1] Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևով, հոդված 11, մաս 1 // ARLIS: URL: https://www.arlis.am/hy/acts/1896 : Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2200 Ա (XXI) բանաձևով, ուժի մեջ է մտել 1976 թվականի մարտի 23-ին, հոդված 14, մաս 2 // ARLIS: URL: https://www.arlis.am/hy/acts/18500 : Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, Հռոմ, 4 նոյեմբերի 1950 թ., փոփոխված 11-րդ արձանագրությամբ, հոդված 6, մաս 2 // ARLIS Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, պաշտոնական ինկորպորացիա: URL: https://www.arlis.am/hy/acts/192808

[2] UN Human Rights Committee. General Comment No. 32, Article 14: Right to Equality before Courts and Tribunals and to a Fair Trial. CCPR/C/GC/32. Geneva: United Nations, 23 August 2007. 18 p., para. 30. URL: https://digitallibrary.un.org/record/606075?ln=en

մեղադրյալի վրա, իսկ մեկնաբանականը պահանջում էր չփարատված կասկածները լուծել հօգուտ անձի[1]:

Նշված շերտերի առանձնացումը բացահայտում է սահմանադրական պաշտպանության ամբողջականության պահանջը: Անմեղ համարվելու կարգավիճակի ճանաչումը պետք է ուղեկցվի ապացուցման բեռի պատշաճ բաշխմամբ և չփարատված կասկածների՝ հօգուտ անձի մեկնաբանմամբ: Հակառակ դեպքում կարգավիճակային երաշխիքը կարող է պահպանվել ձևակերպման մեջ, մինչդեռ դրա դատավարական ապահովման պայմանները՝ խաթարվել:

Այս կառուցվածքն ուներ գործառնական նշանակություն նաև օրենսդրության համար: 1998 թվականի քրեական դատավարության օրենսգիրքը, որը մշակվեց և ընդունվեց նոր սահմանադրական միջավայրում, ինկորպորացված խմբագրությունում նպատակների շարքում նախատեսում է, որ ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չկասկածվի, չմեղադրվի և չդատապարտվի, ինչպես նաև ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների կամ իրավունքների սահմանափակման[2]:

2005 թվականի սահմանադրական փոփոխությունների փուլում անմեղության կանխավարկածի տեքստային պահպանումը պետք է ընկալել որպես սկզբունքի սահմանադրական կայունության արտահայտություն: 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 21-րդ հոդվածը կրկին ամրագրում էր նույն եռատարր կառուցվածքը՝ անմեղ համարվելու իրավունք, անմեղությունն ապացուցելու պարտականության բացակայություն և չփարատված կասկածների մեկնաբանում հօգուտ մեղադրյալի[3]:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը և ՄԻԵԴ նախադեպային իրավունքը պետություններից պահանջում են ոչ միայն դատական վերջնական ակտից առաջ անձին մեղավոր չճանաչել, այլև դատական և պաշտոնական ձևակերպումներում չարտահայտել մեղավորության կանխակալ դիրքորոշում[4]:

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 1995 թվականի սկզբնական խմբագրություն, հոդված 41: Տե՛ս ծանոթագրություն 2-ում նշված սկզբնաղբյուրը:

[2] Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, հոդված 2 // ARLIS Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ. Պաշտոնական ինկորպորացիա.
URL: https://www.arlis.am/hy/acts/68011

[3] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ փոփոխություններով, ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ի հանրաքվեով, փոփոխությունները կատարվել են 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով, հոդված 21 // ARLIS Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ. Պաշտոնական ինկորպորացիա. URL: https://www.arlis.am/hy/acts/75780

[4] Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, հոդված 6, մաս 2 (տե՛ս ծանոթագրություն 4): European Court of Human Rights. *Allenet de Ribemont v. France*, application No. 15175/89, judgment of 10 February 1995, §§ 36–38 // HUDOC: URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57914

2015 թվականի սահմանադրական բարեփոխման ընթացքում փոխվեց անմեղության կանխավարկածի տեքստային արտահայտման ձևը, որի ազդեցությունը սկզբունքի բովանդակության վրա անհրաժեշտ է գնահատել սահմանադրական երաշխիքների ամբողջ համակարգի շրջանակում: Գործող Սահմանադրության 66-րդ հոդվածը նախատեսում է միայն հիմնական բանաձևը. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Նախկին տեքստում առկա երկու լրացուցիչ տարրերը՝ մեղադրյալի՝ իր անմեղությունը չապացուցելու կանոնը և չփարատված կասկածների մեկնաբանումը հօգուտ մեղադրյալի, ուղղակիորեն չեն վերարտադրվել 66-րդ հոդվածում[1]:

Այս տեքստային սեղմումը կարող է առաջացնել երկու հակադիր մեկնաբանություն: Առաջին մոտեցման համաձայն՝ եթե Սահմանադրությունն այլևս բացահայտ չի նշում ապացուցման բեռի և կասկածների լուծման կանոնները, ապա այդ բաղադրիչները դուրս են մնում սահմանադրական անմիջական պաշտպանության տեքստային դաշտից և փոխանցվում են ընթացիկ օրենսդրությանը: Երկրորդ մոտեցման համաձայն՝ 2015 թվականի ձևակերպումը չի նեղացնում անմեղության կանխավարկածի սահմանադրական բովանդակությունը, քանի որ դրա բաղադրիչները բխում են ոչ միայն 66-րդ հոդվածից, այլ նաև Սահմանադրության 3-րդ, 61-րդ, 63-րդ, 65-րդ, 67-րդ, 75-րդ, 76-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածների համակարգային կապից[2]:

Առավել հիմնավոր է երկրորդ մոտեցումը: Սահմանադրության 3-րդ հոդվածը հանրային իշխանությունը սահմանափակում է հիմնական իրավունքներով և ազատություններով, 75-րդ հոդվածը պարտադրում է օրենքներով սահմանել հիմնական իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, իսկ 81-րդ հոդվածը պահանջում է հիմնական իրավունքները մեկնաբանել՝ հաշվի առնելով ՀՀ վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Սահմանադրության 66-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի որպես հիմնական բանաձև, որի անհրաժեշտ բաղադրիչները բացահայտվում են Սահմանադրության մյուս երաշխիքների և միջազգային չափանիշների միջոցով[3]: Այս մեկնաբանությունը հիմնվում է նաև Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժի և հիմնական իրավունքների էության

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 2015 թվականի փոփոխություններով, հոդված 66:

[2] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, հոդվածներ 3, 61, 63, 65, 66, 67, 75, 76, 78, 79, 80 և 81:

[3] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, հոդվածներ 3, 5, 66, 75, 80 և 81:

անխախտելիության սկզբունքի վրա: Հետևաբար, անմեղության կանխավարկածի սահմանադրական ձևակերպման համառոտությունը չի կարող հիմք ծառայել անմեղ համարվելու իրավունքի պաշտպանությունն ապահովող ապացուցման կանոններն ու երաշխիքները թուլացնելու համար:

Այս մոտեցման օրենսդրական կոնկրետացումը ներկայացված է ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքում: 2021 թվականի քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածը ոչ միայն կրկնում է անմեղության կանխավարկածի հիմնական բանաձևը, այլև ամրագրում է, որ չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղությանը, մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը կամ աջակցել վարույթն իրականացնող մարմնին, իսկ մեղադրանքի ապացուցման և պաշտպանության փաստարկների հերքման պարտականությունը հանրային քրեական հետապնդման դեպքում կրում են դատախազը և մինչդատական վարույթում նաև քննիչը: Այս օրենսդրական մանրամասնումը պետք է դիտարկել ոչ թե որպես Սահմանադրությանը փոխարինող կարգավորում, այլ որպես Սահմանադրության 66-րդ հոդվածի գործառնական իրականացում[1]:

Այսպիսով, առաջարկում ենք անմեղության կանխավարկածի սահմանադրական ամրագրման նախադրյալները դիտարկել որպես փոխկապակցված հիմքերի համակարգ: Սահմանադրական ինքնության ձևավորումը որոշում է պետության և անձի հարաբերությունների արժեքային ուղղվածությունը, իշխանության սահմանափակման անհրաժեշտությունը՝ պաշտպանության պարտադիր բնույթը, իսկ միջազգային չափանիշների ներգրավումը՝ դրա բովանդակային հենքը: Վերլուծության գիտական արդյունքը այդ նախադրյալների կապի բացահայտումն է սահմանադրական պաշտպանության ամբողջականության պահանջի հետ: Կարգավիճակային, ապացուցողական և մեկնաբանական շերտերի համադրությամբ հիմնավորվում է, որ ձևակերպման փոփոխությունը պետք է գնահատել անձի անմեղ համարվելու իրավունքի իրացման անհրաժեշտ պայմանների պահպանմամբ: Այս հիմքով սահմանադրական զարգացման փուլերը ներկայացվում են որպես երաշխիքի հաստատման, պահպանման և իրականացման պայմանների կատարելագործման փոխկապակցված ընթացք:

2) Սահմանադրական ամրագրման գործառնական ուղղությունները

Անմեղության կանխավարկածի սահմանադրական ամրագրումն ունի գործառնական նշանակության առնվազն հինգ հիմնական ուղղություն: Առաջինն

[1] Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի հունիսի 30-ին, ուժի մեջ է մտել ընդհանուր կարգով՝ 2022 թվականի հուլիսի 1-ից, հոդված 17 // ARLIS Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ. Պաշտոնական ինկորպորացիա. URL: https://www.arlis.am/hy/acts/154763

օրենսդրական ուղղությունն է: Սահմանադրության 75-րդ հոդվածը պարտադրում է, որ հիմնական իրավունքների իրականացման համար օրենքները նախատեսեն արդյունավետ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Սա նշանակում է, որ օրենսդիրը պարտավոր է քրեական դատավարության, ինչպես նաև սկզբունքի կիրառելիության շրջանակում՝ վարչական պատասխանատվության, կարգապահական վարույթների և հանրային տեղեկատվության ոլորտներում նախատեսել այնպիսի ընթացակարգեր, որոնք կբացառեն անձի մեղավորության կանխակալ վերագրումը: Օրենսդրական կարգավորումը չի կարող սահմանափակվել միայն դատավճռի կայացման փուլով, քանի որ անմեղության կանխավարկածի սկզբունքի չպահպանման ռիսկերն առաջանում են նաև ձերբակալման, կալանքի, մեղադրանքի ներկայացման, պաշտոնական հաղորդագրությունների և դատական միջանկյալ ակտերի փուլերում[1]:

Օրենսդրական գործառնական նշանակությունը ներառում է նաև այն, որ ընթացիկ օրենսդրությունը չի կարող սահմանել մեղավորության կանխավարկածներ այնպիսի ձևով, որը փաստացի շրջանցում է Սահմանադրության 66-րդ հոդվածով ամրագրված ապացուցման բեռի տրամաբանությունը: Օրենսդիրը կարող է սահմանել դատավարական պարտականություններ, ժամկետներ, ապացույցների ներկայացման կանոններ, սակայն չի կարող ստեղծել այնպիսի կառուցակարգ, որի արդյունքում անձը պարտավոր է ապացուցել իր անմեղությունը **և** այդ պարտականության չկատարումը դիտարկվի որպես մեղադրանքի ապացուցում: Փաստական կամ իրավական կանխավարկածների առկայությունն ինքնին չի նշանակում սկզբունքի խախտում. դրանք պետք է պահպանվեն ողջամիտ սահմաններում՝ հաշվի առնելով գործի նշանակությունն ու պաշտպանության իրավունքները: Այս սահմանը թույլ է տալիս դատավարական պարտականությունը տարբերակել անմեղությունն ապացուցելու պարտականությունից:

Երկրորդ ուղղությունը մեկնաբանական գործառնական նշանակությունն է: Սահմանադրության 63-րդ հոդվածը երաշխավորում է անկախ և անաչառ դատարանի կողմից գործի արդարացի քննության իրավունքը, իսկ 66-րդ հոդվածը սահմանում է մեղավորության հաստատման բացառիկ դատական ձևը: Այս կապի մեջ դատարանի գործառույթը երկակի է. դատարանը մի կողմից պետք է քննի մեղադրանքի հիմնավորվածությունը, մյուս կողմից՝ իր վարքագծով և ակտերի լեզվով չպետք է նախապես հաստատի այն, ինչը դեռ ենթակա է ապացուցման: «Վարդան Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի» գործով Մարդու իրավունքների եվրոպական

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով // ՀՀՊՏ 2015.12.21, հատուկ թողարկում, հոդ. 1118: ARLIS, գործող պաշտոնական ինկորպորացիա: URL: https://www.arlis.am/hy/acts/102510/latest: Հոդվածներ 66 և 75: European Court of Human Rights. *Engel and Others v. the Netherlands*, applications Nos. 5100/71, 5101/71, 5102/71, 5354/72 and 5370/72, judgment of 8 June 1976, §§ 80–83 // HUDOC: URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57479

դատարանը դատական ձևակերպումները գնահատել է երկու տարբեր դատավարական իրավիճակներում: Կալանքի ժամկետի երկարացման որոշումների վերաբերյալ անմեղության կանխավարկածի խախտում չի արձանագրվել՝ հաշվի առնելով դրանց ամբողջական համատեքստն ու վերաքննիչ դատարանի կատարած ճշտումը: Խախտումը վերաբերում էր գործը դատաքննության նշանակելու որոշման՝ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին անվերապահ ձևակերպմանը, որը հետագայում չէր ճանաչվել որպես սխալ և չէր շտկվել[1]:

Դատական ակտը պետք է գնահատվի *դրա լուծած դատավարական հարցի և օգտագործված լեզվի համադրությամբ:* Եթե դատարանը կալանքի կամ այլ միջանկյալ որոշման մեջ օգտագործում է այնպիսի ձևակերպումներ, որոնց ամբողջական իմաստը արտահայտում է մեղավորության կանխակալ հաստատում, ապա խաթարվում է ոչ միայն ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այլև ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի սահմանադրաիրավական իմաստը: ՄԻԵԴ-ի 2026 թվականի թեմատիկ ուղեցույցում ևս ընդգծվում է, որ խախտման հարցում որոշիչ է ոչ միայն բառացի ձևակերպումը, այլև դատական կամ պաշտոնական խոսքի իրական իմաստը և ստեղծվող տպավորությունը[2]: Այս գործից բխող տարբերակումը կարևոր է սահմանադրական գնահատման համար. *անհաջող բառընտրությունն ու մեղավորության անվերապահ հաստատումը տարբեր իրավական իրավիճակներ են: Կալանքի անհրաժեշտությունը հիմնավորող դատական ակտը պետք է պահպանի հիմնավոր կասկածի և ապացուցված մեղավորության սահմանը:*

Իրավական որոշակիության և համաչափության սկզբունքների հետ կապը նույնպես բացահայտում է սահմանադրական ամրագրման գործառնական արժեքը: Սահմանադրության 78-րդ հոդվածը պահանջում է, որ հիմնական իրավունքների սահմանափակման միջոցները լինեն պիտանի, անհրաժեշտ և համարժեք, իսկ 79-րդ հոդվածը պահանջում է, որ սահմանափակումների հիմքերն ու ծավալը լինեն բավարար չափով որոշակի: Անմեղության կանխավարկածի համատեքստում սա նշանակում է, որ մինչդատական հարկադրանքի միջոցները *պետք է հիմնավորվեն*

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով // ՀՀՊՏ 2015.12.21, հատուկ թողարկում, հոդ. 1118: ARLIS, գործող պաշտոնական ինկորպորացիա: URL: https://www.arlis.am/hy/acts/102510/latest: Հոդվածներ 63 և 66: ՄԻԵԴ, *«Վարդան Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի» (Vardan Martirosyan v. Armenia),* գանգատ թիվ 13610/12, 15.06.2021թ. վճիռ, §§ 80–91, հատկապես §§ 83–86 և 87–91 // ARLIS, հայերեն պաշտոնական տեքստ: URL: https://www.arlis.am/hy/acts/156947 : HUDOC: URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-210404

[2] ՄԻԵԴ, *«Վարդան Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի» (Vardan Martirosyan v. Armenia),* գանգատ թիվ 13610/12, 15.06.2021թ. վճիռ, §§ 80–91, հատկապես §§ 83–86 և 87–91 // ARLIS, հայերեն պաշտոնական տեքստ: URL: https://www.arlis.am/hy/acts/156947 : HUDOC: URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-210404: European Court of Human Rights. Presumption of innocence. Key Theme – Article 6 (criminal), updated 28 February 2026, pp. 2–5: URL: https://ks.echr.coe.int/documents/d/echr-ks/presumption-of-innocence

փվյալ միջոցի համար օրենքով պահանջվող կասկածի, փաստական հիմքերի և վարույթի ապահովման կոնկրետ ու սպուգելի անհրաժեշտության հաշվառմամբ՝ առանց մեղավորության հարցը նախապես լուծելու: Եթե կալանքը, խուզարկությունը, գույքի սահմանափակումը կամ պաշտոնական հաղորդագրությունը հիմնվում են մեղավորության կանխակալ ենթադրության վրա, ապա մեղավորության կանխակալ վերագրումը գնահատվում է Սահմանադրության 66-րդ հոդվածի տեսանկյունից, իսկ միջամտության պիտանիությունը, անհրաժեշտությունը, համարժեքությունը և օրենսդրական հիմքի որոշակիությունը՝ համապատասխանաբար 78-րդ և 79-րդ հոդվածների շրջանակում: Այս պահանջների խախտումները կարող են համընկնել, սակայն մեկը մյուսից ինքնաբերաբար չի բխում[1]:

Սահմանադրական ամրագրումը նաև ազդում է պաշտպանության իրավունքի բովանդակության վրա: Գործող Սահմանադրության 67-րդ հոդվածը մեղադրյալին տալիս է ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացվելու, անձամբ կամ պաշտպանի միջոցով պաշտպանվելու, պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու, վկաներին հարցաքննելու և թարգմանչի ծառայությունից օգտվելու իրավունք: Մեղադրանքի հիմնավորվածությունը ստուգելու առումով այս իրավունքների արդյունավետ իրացումը ենթադրում է անձի՝ անմեղ համարվելու կարգավիճակի պահպանում մինչև մեղավորության վերջնական դատական հաստատումը: Եթե իրավակարգը փաստացիորեն նրան արդեն դիտարկում է որպես մեղավոր, ապա խաթարվում է պաշտպանության այն իրավական ելակետը, ըստ որի մեղադրանքի կողմը պարտավոր է հիմնավորել իր պնդումը, իսկ անձը կարող է վիճարկել դրա ապացուցվածությունը[2]:

Այս պատճառով անմեղության կանխավարկածի սահմանադրական ամրագրումը պետք է դիտարկել նաև որպես պաշտպանության իրավունքի արդյունավետության նախապայման: Մեղադրանքի քննության ընթացքում արդյունավետ պաշտպանությունը ենթադրում է, որ մեղադրանքը դեռ ապացուցման կարիք ունի, դատարանը պահպանում է անաչառությունը, ապացուցման բեռը մեղադրանքի կողմում է, իսկ *մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ չփարատված ողջամիտ կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:* 2021 թվականի

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով // ՀՀՊՏ 2015.12.21, հատուկ թողարկում, հոդ. 1118: ARLIS, գործող պաշտոնական ինկորպորացիա: URL: https://www.arlis.am/hy/acts/102510/latest: Հոդվածներ 66, 78 և 79: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 30.06.2021 թ., ուժի մեջ է մտել ընդհանուր կարգով՝ 01.07.2022 թ., հոդված 17, մասեր 1–4 // ARLIS: URL: https://www.arlis.am/hy/acts/154763 : Տե՛ս նաև օրենսգրքի 18-րդ հոդվածը:

[2] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով // ՀՀՊՏ 2015.12.21, հատուկ թողարկում, հոդ. 1118: ARLIS, գործող պաշտոնական ինկորպորացիա: URL: https://www.arlis.am/hy/acts/102510/latest: Հոդվածներ 63, 66 և 67:

քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասում հատուկ նշվում է, որ մեղադրյալի անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել նաև նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի վրա: Այս նորմը սահմանադրական մակարդակում պետք է ընկալել որպես պաշտպանության իրավունքի և անմեղության կանխավարկածի փոխկապակցվածության գործառնական արտահայտություն[1]: Այս կապով պաշտպանական գործունեությունը մեղադրանքի ստուգման և հակափաստարկների ներկայացման հնարավորություն է, որի իրականացումը չի փոխում ապացուցման բեռի սահմանադրական բաշխումը: Պաշտպանի նախաձեռնությունը կամ առանձին փաստարկի չհաստատվելը չեն կարող փոխարինել մեղադրանքի ապացուցմանը:

Երրորդ ուղղությունը սահմանադրական վերահսկողության նշանակությունն է: ՀՀ սահմանադրական դատարանը 2010 թվականի մարտի 30-ի ՍԴՈ-871 որոշմամբ հիմնավորել է անձի մեղքը բացառապես դատական կարգով հաստատելու և մեղադրյալի վրա անմեղության ապացուցման պարտականություն չդնելու պահանջները: Որոշմամբ արձանագրվել է նաև, որ անմեղության կանխավարկածը չի բացառում անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու իրավասու մարմնի գործունեությունը: Այս իրավական դիրքորոշումները թույլ են տալիս անմեղության կանխավարկածի սահմանադրական ամրագրումը մեկնաբանել որպես իրավական կարգավիճակի պահպանման մեխանիզմ[2]: *Անմեղ համարվելու կարգավիճակն այս իմաստով չի կախված մեղադրյալի մասին վարույթն իրականացնող մարմնի համոզմունքից: Մեղադրանքի քննության հնարավորությունն ու անմեղ համարվելու իրավունքը համատեղ գործում են՝ մինչև պատշաճ դատական ընթացակարգի ավարտը:*

Սահմանադրական վերահսկողության գործառույթը պահանջում է, որ օրենսդրական որևէ լուծում չխաթարի այս կարգավիճակը: Եթե օրենքը կամ դրա մեկնաբանությունը փաստացի հնարավորություն է տալիս մեղադրանքի կողմին խուսափել ապացուցման բեռից, դատարանին՝ կանխակալ ձևակերպել մեղավորության մասին դիրքորոշում, կամ պետական մարմիններին՝ անձին

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով // ՀՀՊՏ 2015.12.21, հատուկ թողարկում, հոդ. 1118: ARLIS, գործող պաշտոնական ինկորպորացիա: URL: https://www.arlis.am/hy/acts/102510/latest : Հոդվածներ 66 և 67: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 30.06.2021 թ., ուժի մեջ է մտել ընդհանուր կարգով՝ 01.07.2022 թ., հոդված 17, մասեր 1–4 // ARLIS: URL: https://www.arlis.am/hy/acts/154763

[2] ՀՀ Սահմանադրական դատարան, 30.03.2010 թ. ՍԴՈ-871 որոշում՝ «Քաղաքացիներ Արամ Սարգսյանի և Կարապետ Ռուբինյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի և 67-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ», պատճառաբանական մասի 5–8-րդ կետեր:
URL: https://www.concourt.am/decision/decisions/633eb3c7b5a67_sdv-871.pdf

ներկայացնել որպես մեղավոր մինչև մեղավորությունը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատելը, ապա այդ իրավիճակը պետք է գնահատվի Սահմանադրության 66-րդ հոդվածի, ինչպես նաև 3-րդ, 63-րդ, 67-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածների համադրմամբ: Սահմանադրական վերահսկողության ընթացքում ստուգվում է նորմի սահմանադրականությունը, մինչդեռ առանձին հաղորդագրության կամ դատական ձևակերպման իրավաչափությունը գնահատվում է դրա համար նախատեսված ընթացակարգով:

Չորրորդ ուղղությունը իրավապաշտպան-ինստիտուցիոնալ նշանակությունն է: Իրավապաշտպան-ինստիտուցիոնալ ուղղության առարկան պաշտպանության կազմակերպումն է: Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջը ենթադրում է, որ մեղավորության կանխակալ վերագրման վերաբերյալ առարկությունը պետք է քննվի իր բովանդակությամբ, իսկ վիճարկվող ձևակերպումը՝ գնահատվի իրավասու մարմնի կողմից: Իրավապաշտպան կառույցները կարող են նպաստել խախտման բացահայտմանը և պաշտպանության միջոցի կիրառմանը, մինչդեռ քրեական մեղավորության հարցը լուծում է իրավասու դատարանը[1]:

Հինգերորդ ուղղությունը հանրային իշխանության վարքագծի կառավարումն է: Անմեղության կանխավարկածի սահմանադրական ամրագրումը պարտադիր է ոչ միայն դատարանների և օրենսդրի, այլև բոլոր այն մարմինների համար, որոնք իրենց խոսքի կամ գործողության միջոցով կարող են անձի վերաբերյալ ձևավորել մեղավորության կանխակալ ընկալում: Եվրոպական Միության 2016/343 դիրեկտիվի 4–6-րդ հոդվածներում հատուկ անդրադարձ է կատարվել մեղավորությանը վերաբերող հանրային հայտարարություններին, անձին մեղավոր ներկայացնող ֆիզիկական սահմանափակումների կիրառմանը, ապացուցման բեռին և կասկածների մեկնաբանմանը[2]: *Հայաստանի իրավակարգում դրա օգտագործումը համեմատական վերլուծության նշանակություն ունի. դիրեկտիվն ինքնին ՀՀ հանրային մարմինների համար անմիջականորեն պարտադիր իրավական հիմք չէ: Դրա պահանջների համադրումը Սահմանադրության 66-րդ հոդվածի հետ թույլ է տալիս տարբերակել պաշտոնական հաղորդակցության, անձի արտաքին ներկայացման և ապացուցման կարգավորման հարցերը:*

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով // ՀՀՊՏ 2015.12.21, հատուկ թողարկում, հոդ. 1118: ARLIS, գործող պաշտոնական ինկորպորացիա: URL: https://www.arlis.am/hy/acts/102510/latest : Հոդվածներ 61, 66 և 75:

[2] European Parliament and Council of the European Union. Directive (EU) 2016/343 of 9 March 2016 on the strengthening of certain aspects of the presumption of innocence and of the right to be present at the trial in criminal proceedings, Articles 4–6 // Official Journal of the European Union, L 65, 11.03.2016, pp. 1–11. EUR-Lex: URL: https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A32016L0343 : Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով // ՀՀՊՏ 2015.12.21, հատուկ թողարկում, հոդ. 1118: ARLIS, գործող պաշտոնական ինկորպորացիա: URL: https://www.arlis.am/hy/acts/102510/latest : Հոդվածներ 66 և 81:

Վերը ներկայացվածի ընդհանրացման արդյունքում առաջարկում ենք ՀՀ իրավակարգի համար տարբերակել անմեղության կանխավարկածի սահմանադրական ամրագրման գործառնական նշանակության հինգ ուղղություն՝ օրենսդրական-նորմաստեղծ, մեկնաբանական, սահմանադրական վերահսկողության, իրավապաշտպան-ինստիտուցիոնալ և հանրային իշխանության վարքագծի կառավարման:

Սահմանադրական ամրագրումը պարտադրում է օրենսդրին պատշաճ բաշխել ապացուցման բեռը, դատարանին՝ պահպանել անաչառություն, չեզոք լեզու և մեղադրանքի ապացուցվածության պատշաճ չափանիշ, դատախազությանը և քննչական մարմիններին՝ խուսափել մեղավորության կանխակալ ներկայացումից, իրավապաշտպան մարմիններին՝ իրենց իրավասության շրջանակում նպաստել խախտումների բացահայտմանն ու պաշտպանության միջոցների կիրառմանը, իսկ հանրային իշխանության բոլոր սուբյեկտներին՝ անձի սահմանադրական կարգավիճակը չաղավաղել սկզբունքի կիրառելիության շրջանակում:

Այսպիսով, առաջարկվող դասակարգումը սահմանադրական ամրագրման գործառնական նշանակությունը բացահայտում է իրավական կանոնի ձևավորման, դրա մեկնաբանության, սահմանադրական վերահսկողության, պաշտպանության կազմակերպման և պաշտոնական վարքագծի միջոցով: Հինգ ուղղությունների գիտական արժեքը դրանց փոխադարձ կապը և գնահատման տարբեր առարկաները որոշելն է: Օրենսդրական երաշխիքի բովանդակությունը, դրա դատական մեկնաբանությունն ու ինստիտուցիոնալ ապահովումը պետք է համադրվեն անձի անմեղ համարվելու կարգավիճակի պահպանման հետ: Այս հիմքով ընդհանուր սահմանադրական պահանջից բխեցվում են հանրային մարմինների կոնկրետ պարտավորությունները՝ մեղադրանքի քննության, ապացուցման և պաշտոնական հաղորդակցության ընթացքում:

3) Կիրառելիության և պաշտոնական խոսքի գնահատման չափանիշները

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի երրորդ մասը սահմանում է, որ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով: Սկզբունքի կիրառելիության շրջանակում դատարանը կամ այլ հանրային մարմին պարտավոր է առաջնորդվել Սահմանադրության 66-րդ հոդվածով՝ անկախ օրենսդրական կարգավորման մանրամասնության աստիճանից: Նախ պետք է որոշվի քրեական մեղադրանքի առկայությունը՝ հաշվի առնելով նաև դրա կոնվենցիոն ինքնավար իմաստը, կամ ավարտված քրեական վարույթի հետ գնահատվող ընթացակարգի բավարար կապը[1]:

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով // ՀՀՊՏ 2015.12.21, հատուկ թողարկում, հոդ. 1118: ARLIS, գործող պաշտոնական ինկորպորացիա: URL: https://www.arlis.am/hy/acts/102510/latest :

Նորմի անմիջական գործողությունը կաշկանդում է հանրային մարմնին, սակայն չի ստեղծում Սահմանադրությամբ կամ օրենքով չնախատեսված լիազորություն:

Նորմի անմիջական կիրառելիության համար առաջարկում ենք ձևակերպել չորս չափանիշ: Առաջին՝ սուբյեկտային չափանիշ. նորմն ուղղակիորեն պարտադիր է հանրային իշխանության բոլոր մարմինների համար՝ դատարան, դատախազություն, քննչական մարմին, ոստիկանություն, կառավարություն, նախարարություն, տեղական ինքնակառավարման մարմին և պաշտոնատար անձ: Երկրորդ՝ փուլային չափանիշ. նորմը գործում է քրեական մեղադրանքի առկայության պահից՝ այն հասկանալով նաև ՄԻԵԿ-ի ինքնավար իմաստով, մինչև մեղավորությունը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատելը, իսկ արդարացումից կամ քրեական հետապնդման դադարեցումից հետո՝ ավարտված վարույթի հետ բավարար կապ ունեցող ընթացակարգերում: Երրորդ՝ բովանդակային չափանիշ. արգելվում է անձին վերագրել մեղավորի կարգավիճակ, քրեական մեղադրանքի ապացուցման բեռը տեղափոխել նրա վրա կամ մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ չփարատված ողջամիտ կասկածները մեկնաբանել նրա դեմ: Չորրորդ՝ լեզվական չափանիշ. պաշտոնական կամ դատական ձևակերպումները՝ գնահատվելով խոսողի կարգավիճակի, վարույթի փուլի և ամբողջական համատեքստի համադրությամբ, չեն կարող մեղադրանքը ներկայացնել որպես հաստատված մեղավորություն:[1]

Դատարանը կարող է այդ չափանիշներով գնահատել կալանքի որոշման լեզուն, դատախազությունը՝ մամուլի հաղորդագրությունը, օրենսդիրը՝ ապացուցման բեռը կարգավորող նորմը, իսկ Սահմանադրական դատարանը՝ այն օրենքները, որոնք կարող են անձի մեղավորության կանխակալ ընկալում ստեղծել: Չորս չափանիշները կիրառվում են փոխկապակցված հաջորդականությամբ. սուբյեկտային և փուլային չափանիշներով որոշվում է պաշտպանության գործողության շրջանակը, իսկ բովանդակային և լեզվական չափանիշներով ստուգվում է դրա պահպանումը:

Հոդվածներ 3, 6 և 66: European Court of Human Rights. *Engel and Others v. the Netherlands*, applications Nos. 5100/71, 5101/71, 5102/71, 5354/72 and 5370/72, judgment of 8 June 1976, §§ 80–83 // HUDOC: URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57479 : European Court of Human Rights. *Allen v. the United Kingdom* [GC], application No. 25424/09, judgment of 12 July 2013, §§ 94, 104 // HUDOC: URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-122859 *: Nealon and Hallam v. the United Kingdom* [GC], applications Nos. 32483/19 and 35049/19, judgment of 11 June 2024, §§ 168–169 // HUDOC: URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-234468

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով // ՀՀՊՏ 2015.12.21, հատուկ թողարկում, հոդ. 1118: ARLIS, գործող պաշտոնական ինկորպորացիա: URL: https://www.arlis.am/hy/acts/102510/latest : Հոդվածներ 3, 66 և 81: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 30.06.2021 թ., ուժի մեջ է մտել ընդհանուր կարգով՝ 01.07.2022 թ., հոդված 17, մասեր 1–4 // ARLIS: URL: https://www.arlis.am/hy/acts/154763 : European Court of Human Rights. Presumption of innocence. Key Theme – Article 6 (criminal), updated 28 February 2026, pp. 2–5: URL: https://ks.echr.coe.int/documents/d/echr-ks/presumption-of-innocence

Սկզբունքի խախտման հարցը լուծելիս անհրաժեշտ է պարզել նաև, թե գնահատվող ակտը ինչ իրավական հարց է լուծում և ինչպես է իր հիմնավորումը կապում քրեական մեղադրանքի հետ:

Կանխարգելիչ նշանակությունը դրսևորվում է մինչև դատական ակտի ընդունումը կամ հաղորդագրության հրապարակումը նույն չափանիշներով դրա հիմնավորումն ու լեզուն ստուգելու հնարավորության մեջ: Խախտման մասին առարկություն ներկայացվելու դեպքում գնահատվում է արդեն ընդունված ակտը կամ տարածված հաղորդագրությունը՝ օրենքով նախատեսված պաշտպանության միջոցի շրջանակում[1]:

Գործող Սահմանադրության 76-րդ հոդվածը նախատեսում է, որ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մի շարք իրավունքներ կարող են ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակվել, սակայն 63-72-րդ հոդվածներում նշված իրավունքներն այդ հոդվածով նախատեսված բացառության մեջ են և չեն կարող կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակվել 76-րդ հոդվածի հիմքով: Քանի որ անմեղության կանխավարկածն ամրագրված է 66-րդ հոդվածում, այն պահպանվում է նույնիսկ այն պայմաններում, երբ պետությունն ունի անվտանգության բարձրացված ռեժիմի անհրաժեշտություն:

ՄԻԵԴ-ը «Ալենե դը Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի» գործով ընդգծել է, որ անմեղության կանխավարկածը կարող է խախտվել նաև պետական պաշտոնատար անձանց հայտարարությունների միջոցով, եթե դրանք անձին ներկայացնում են որպես մեղավոր մինչև դատավճիռը: Այս չափանիշը ՀՀ իրավակարգի համար կիրառելի է Սահմանադրության 81-րդ հոդվածի միջոցով, քանի որ այն պարտադրում է հաշվի առնել ՀՀ վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան[2]:

Այս տեսանկյունից ՀՀ դատական և պաշտոնական պրակտիկայի համար անհրաժեշտ է տարբերակել երեք լեզվական մակարդակ: Առաջինը չեզոք դատավարական լեզուն է՝ «մեղադրվում է», «վերագրվում է», «ըստ մեղադրանքի»: Երկրորդը ռիսկային լեզուն է՝ «կատարել է», «հանցագործության հեղինակն է», «մեղավոր անձը», եթե դեռ չկա օրինական ուժի մեջ մտած դատավճիռ: Երրորդը սահմանադրորեն անթույլատրելի լեզուն է, երբ դատական ակտը կամ պաշտոնական

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով // ՀՀՊՏ 2015.12.21, հատուկ թողարկում, հոդ. 1118: ARLIS, գործող պաշտոնական ինկորպորացիա: URL: https://www.arlis.am/hy/acts/102510/latest : Հոդվածներ 66 և 75:

[2] European Court of Human Rights. Allenet de Ribemont v. France, application No. 15175/89, judgment of 10 February 1995, §§ 36–38 // HUDOC: URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57914: Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով // ՀՀՊՏ 2015.12.21, հատուկ թողարկում, հոդ. 1118: ARLIS, գործող պաշտոնական ինկորպորացիա: URL: https://www.arlis.am/hy/acts/102510/latest: Հոդվածներ 66 և 81:

հայտարարությունը փաստացիորեն լուծում է մեղավորության հարցը: Այս տարբերակմամբ առաջարկում ենք կիրառել դատական և պաշտոնական խոսքի սահմանադրական ստուգման նվազագույն չափանիշ. արդյոք օգտագործված ձևակերպումը պահպանում է մեղադրանքի և մեղավորության սահմանը, թե մեղադրանքը ներկայացնում է որպես հաստատված իրավական փաստ: Չեզոք բառի օգտագործումն ինքնին չի վերացնում կանխակալ իմաստը, իսկ առանձին ռիսկային բառը դեռ չի հաստատում խախտման առկայությունը: Գնահատման համար համադրվում են խոսողի կարգավիճակը, վարույթի փուլը, արտահայտության նպատակը և ամբողջական իմաստը:

Համատեքստի նշանակությունը երևում է նաև «Դակտարասն ընդդեմ Լիտվայի» գործից. դատախազի որոշման մեջ մեղավորության «ապացուցված» լինելու անհաջող ձևակերպումը տվյալ համատեքստում գնահատվել է որպես գործը դատաքննության ուղարկելու համար ապացույցների բավարարության վերաբերյալ դիրքորոշում, և ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում չի արձանագրվել: Իսկ «Էլ Կաադան ընդդեմ Գերմանիայի» գործով այդ դրույթը խախտվել էր, քանի որ պատժի կատարման կասեցումը վերացնելու վարույթում նոր հանցանքը համարվել էր հաստատված՝ մինչև այդ մեղադրանքի վերջնական դատական լուծումը: Երկու իրավիճակների համադրությունը ցույց է տալիս, որ խոսքի իրավական գնահատումը պետք է կապել ակտի լուծած հարցի հետ. ապացույցների բավարարության ստուգումը չի կարող վերածվել մեղավորության հարցի կանխակալ լուծման[1]:

Այսպիսով, սուբյեկտային, փուլային, բովանդակային և լեզվական չափանիշների համադրությամբ առաջարկվում է սկզբունքի կիրառելիության որոշումն ու դրա պահպանման ստուգումն ընդգրկող գնահատման մոտեցում: Դրա գիտական նշանակությունը ընդհանուր սահմանադրական պահանջը որոշակի իրավահարաբերության և պաշտոնական դիրքորոշման հետ կապելն է: Երեք լեզվական մակարդակների տարբերակմամբ առանձնացվում են խախտման հնարավոր ազդակը և դրա իրավական հաստատումը, իսկ որոշիչ է մնում ակտի կամ հայտարարության ամբողջական իմաստը: Այս գնահատումը կիրառելի է նաև արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում և, համապատասխան կապի առկայությամբ, ավարտված քրեական վարույթին հաջորդող ընթացակարգերում:

Եզրակացություն

Կատարված վերլուծությունը վկայում է, որ անմեղության կանխավարկածի սահմանադրական ամրագրումը Հայաստանի Հանրապետության իրավակարգում

[1] European Court of Human Rights. *Daktaras v. Lithuania,* application No. 42095/98, judgment of 10 October 2000, §§ 41–45 // HUDOC: URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-58855 . European Court of Human Rights. *El Kaada v. Germany*, application No. 2130/10, judgment of 12 November 2015, § 37, §§ 52–66 // HUDOC: URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-158492

պայմանավորված է պետության իրավական ինքնության ձևավորման, հանրային իշխանության սահմանափակման և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների ներգրավման փոխկապակցված պահանջներով:

Այսպիսով, կատարված վերլուծության արդյունքները թույլ են տալիս ձևակերպել հետևյալ եզրահանգումները:

1. Անմեղության կանխավարկածի սահմանադրական ամրագրման երեք նախադրյալները կազմում են փոխկապակցված իրավական հիմքերի համակարգ: Անկախ պետականության և նոր սահմանադրական ինքնության ձևավորումն արտահայտում է պետության ու անձի հարաբերությունների արժեքային ուղղվածությունը, քրեական հետապնդման նկատմամբ սահմանադրական վերահսկողությունը՝ իշխանության հայեցողությունը սահմանափակելու պահանջը, իսկ միջազգային չափանիշների և պայմանագրային պարտավորությունների ներգրավումը՝ պաշտպանության բովանդակային հիմքը: Այս համակարգմամբ բացահայտվում է սահմանադրական ամրագրման անհրաժեշտությունը՝ անձի պաշտպանության և այդ պաշտպանությունը սահմանող իշխանության սահմանափակման միասնության մեջ:

2. Անմեղության կանխավարկածի սահմանադրական պաշտպանությունը պետք է գնահատվի կարգավիճակային, ապացուցողական և մեկնաբանական բաղադրիչների ամբողջականությամբ: Անմեղ համարվելու իրավունքի իրացումը պահանջում է մեղադրանքի ապացուցման բեռի պատշաճ բաշխում և չփարատված ողջամիտ կասկածների մեկնաբանում հօգուտ անձի: Ուստի 2015 թվականի փոփոխություններով սահմանադրական ձևակերպման համառոտացումը չի վերացնում այդ բաղադրիչների սահմանադրական նշանակությունը: Սահմանադրության 66-րդ հոդվածի համակարգային մեկնաբանությունը հիմնավորում է դրանց պահպանումը, իսկ ընթացիկ օրենսդրությունը ենթակա է գնահատման հիմնական իրավունքի էության անխախտելիության պահանջով:

3. Առաջարկվող հինգ գործառնական ուղղությունների դասակարգման հիմքը սահմանադրական պահանջի իրականացման եղանակն է: Օրենսդրական-նորմաստեղծ, մեկնաբանական, սահմանադրական վերահսկողության, իրավապաշտպան-ինստիտուցիոնալ և հանրային իշխանության վարքագծի կառավարման ուղղությունների առանձնացմամբ ընդհանուր երաշխիքը կապվում է հանրային մարմինների որոշակի պարտավորությունների հետ: Ուղղությունները կարող են փոխկապակցվել կոնկրետ իրավիճակում՝ պահպանելով գնահատման իրենց առարկան և համապատասխան մարմնի իրավասության սահմանները:

4. Սուբյեկտային, փուլային, բովանդակային և լեզվական չափանիշները ձևավորում են սկզբունքի կիրառելիության ու պահպանման ստուգման հաջորդականություն: Սուբյեկտային և փուլային չափանիշներով որոշվում են պարտավոր մարմինն ու պաշտպանության գործողության շրջանակը:

Բովանդակային և լեզվական չափանիշներով այնուհետև ստուգվում է՝ արդյոք տվյալ նորմը, դատական ակտը կամ պաշտոնական հաղորդագրությունը պահպանում է անձի անմեղ համարվելու կարգավիճակն ու մեղադրանքի ապացուցման պարտականությունը, թե կանխորոշում է մեղավորության հարցի լուծումը:

5. Պաշտոնական խոսքի չեզոք, ռիսկային և սահմանադրորեն անթույլատրելի մակարդակների տարբերակումը հստակեցնում է խախտման ռիսկի և դրա իրավական հաստատման սահմանը: Առանձին բառը կամ ձևակերպումը գնահատման համար ազդակ է, իսկ որոշիչը պաշտոնական դիրքորոշման ամբողջական իմաստն է՝ խոսողի կարգավիճակի, վարույթի փուլի և խոսքի նպատակի համադրությամբ: Առաջարկվող նվազագույն ստուգման չափանիշը մեղադրանքի և հաստատված մեղավորության սահմանի պահպանումն է: Դրա կիրառման արդյունքում պարզվում է՝ ակտը կամ հայտարարությունը վերաբերում է տվյալ փուլում լուծվող հարցին, թե փաստացի փոխարինում է մեղավորության պատշաճ դատական հաստատմանը:

6. Կիրառելիության սահմանների հստակեցումը գնահատման առաջարկված չափանիշների անհրաժեշտ պայմանն է: Քրեական մեղադրանքի առկայությունը որոշելիս հաշվի է առնվում նաև դրա կոնվենցիոն ինքնավար իմաստը. վարույթի վարչական կամ կարգապահական անվանումն ինքնին չի բացառում սկզբունքի կիրառումը: Արդարացումից կամ քրեական հետապնդման դադարեցումից հետո պաշտպանությունը վերաբերում է վարույթի հետ բավարար կապ ունեցող հետագա ընթացակարգերին:

Հետազոտության գիտական արդյունքը նախադրյալների համակարգման, գործառնական ուղղությունների դասակարգման և գնահատման չափանիշների միջև կապի հիմնավորումն է: Դրա կիրառական նշանակությունն արտահայտվում է դատական ակտերի ու պաշտոնական հաղորդագրությունների նախապատրաստման ընթացքում մեղավորության կանխակալ վերագրման կանխմամբ, ինչպես նաև համապատասխան մարմնի իրավասության շրջանակում վիճարկվող ձևակերպումների իրավական գնահատմամբ:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, դատական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունվել է 05.07.1995 թ. հանրաքվեով), սկզբնական խմբագրություն: URL: https://arlis.am/hy/acts/1
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 27.11.2005 թ. հանրաքվեով ընդունված փոփոխություններով:
URL: https://www.arlis.am/hy/acts/75780
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 06.12.2015 թ. հանրաքվեով ընդունված փոփոխություններով:
URL: https://www.arlis.am/hy/acts/102510/latest
4. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 01.07.1998 թ.): URL: https://www.arlis.am/hy/acts/68011
5. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 30.06.2021 թ.): URL: https://www.arlis.am/hy/acts/154763
6. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր: Ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 10.12.1948 թ. 217 Ա (III) բանաձևով:
URL: https://www.arlis.am/hy/acts/1896
7. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր: Ընդունվել է 16.12.1966 թ., ուժի մեջ է մտել 23.03.1976թ.: URL: https://www.arlis.am/hy/acts/18500
8. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա: Ստորագրվել է Հռոմում 04.11.1950 թ., ուժի մեջ է մտել 03.09.1953թ.: URL: https://www.arlis.am/hy/acts/192808
9. European Parliament and Council of the European Union. Directive (EU) 2016/343 of 9 March 2016 on the strengthening of certain aspects of the presumption of innocence and of the right to be present at the trial in criminal proceedings // Official Journal of the European Union. 2016. L 65, 11 March. P. 1–11. URL: https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A32016L0343
10. ՀՀ Սահմանադրական դատարանի 30.03.2010 թ. ՍԴՈ-871 որոշումը՝ քաղաքացիներ Արամ Սարգսյանի և Կարապետ Ռուբինյանի դիմումի հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի և 67-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության վերաբերյալ:
URL: https://www.concourt.am/decision/decisions/633eb3c7b5a67_sdv-871.pdf
11. European Court of Human Rights. *Engel and Others v. the Netherlands*, applications Nos. 5100/71, 5101/71, 5102/71, 5354/72 and 5370/72, judgment of 8 June 1976. URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57479

12. European Court of Human Rights. *Salabiaku v. France*, application No. 10519/83, judgment of 7 October 1988. URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57570

13. European Court of Human Rights. *Allenet de Ribemont v. France*, application No. 15175/89, judgment of 10 February 1995. URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57914

14. European Court of Human Rights. *Daktaras v. Lithuania*, application No. 42095/98, judgment of 10 October 2000. URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-58855

15. European Court of Human Rights. *Allen v. the United Kingdom* [GC], application No. 25424/09, judgment of 12 July 2013. URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-122859

16. European Court of Human Rights. *El Kaada v. Germany,* application No. 2130/10, judgment of 12 November 2015. URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-158492

17. European Court of Human Rights. *Vardan Martirosyan v. Armenia*, application No. 13610/12, judgment of 15 June 2021. URL: https://www.arlis.am/hy/acts/156947 , https://hudoc.echr.coe.int/eng?i=001-210404

18. European Court of Human Rights. *Nealon and Hallam v. the United Kingdom* [GC], applications Nos. 32483/19 and 35049/19, judgment of 11 June 2024. URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-234468

19. UN Human Rights Committee. General Comment No. 32, Article 14: Right to Equality before Courts and Tribunals and to a Fair Trial. CCPR/C/GC/32. Geneva: United Nations, 23 August 2007. 18 p. URL: https://digitallibrary.un.org/record/606075?ln=en

20. European Court of Human Rights. Presumption of Innocence. Key Theme – Article 6 (criminal limb). Updated 28 February 2026. 12 p.
URL: https://ks.echr.coe.int/documents/d/echr-ks/presumption-of-innocence

ПРЕДПОСЫЛКИ КОНСТИТУЦИОННОГО ЗАКРЕПЛЕНИЯ ПРЕЗУМПЦИИ НЕВИНОВНОСТИ И ЕЕ ФУНКЦИОНАЛЬНОЕ ЗНАЧЕНИЕ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Аннотация

В статье исследуются правовые предпосылки конституционного закрепления презумпции невиновности и ее функциональное значение. Цель исследования заключается в раскрытии обязанностей законодательных, судебных и иных органов публичной власти, вытекающих из конституционного закрепления данного принципа, а также в разработке критериев оценки их соблюдения. На основе системного толкования и сравнительно-правового анализа выделяются три взаимосвязанные предпосылки: необходимость ограничения полномочий публичной власти в ходе уголовного преследования, установления обязательных конституционных требований к законодательному регулированию и своевременной защиты лица от преждевременного признания его виновным. В статье рассматриваются функции данного принципа в сфере

законодательного регулирования, толкования правовых норм, конституционного контроля, защиты прав и деятельности органов публичной власти. Их содержание раскрывается с учетом компетенции соответствующего органа или должностного лица и возложенных на них обязанностей по обеспечению соблюдения данного принципа.

Для оценки судебных актов и официальных сообщений предлагаются субъектный, стадийный, содержательный и языковой критерии. Их применение предполагает первоначальное установление применимости презумпции невиновности с последующим анализом распределения бремени доказывания и формулировок, касающихся лица, в зависимости от характера оцениваемого акта. В частности, устанавливается, отражают ли такие формулировки обвинение, которое еще подлежит доказыванию, либо представляют виновность лица как уже установленный факт.

На основе анализа решений Европейского суда по правам человека проводится разграничение между оценкой достаточности доказательств для принятия конкретного решения и окончательным судебным установлением виновности. Применительно к официальным высказываниям обосновывается необходимость оценки используемых формулировок в их полном контексте, поскольку механическая проверка отдельных слов недостаточна для определения соблюдения данного принципа. Предлагаемые критерии могут применяться при подготовке судебных актов и официальных сообщений, а также в процессе их правовой оценки.

Ключевые слова: презумпция невиновности, конституционность, конституционное закрепление, функциональное значение, бремя доказывания, критерии применимости, официальные высказывания.

PREREQUISITES FOR THE CONSTITUTIONAL ENSHRINEMENT OF THE PRESUMPTION OF INNOCENCE AND ITS FUNCTIONAL SIGNIFICANCE IN THE REPUBLIC OF ARMENIA

Annotation

This article examines the legal prerequisites for the constitutional enshrinement of the presumption of innocence and its functional significance. The study aims to clarify the obligations arising from the constitutional recognition of this principle for legislative, judicial, and other public authorities and to propose criteria for assessing compliance with these obligations. Drawing on systematic interpretation and comparative legal analysis, the study identifies three interrelated prerequisites: the need to limit the powers of public authorities in the course of criminal prosecution, to establish binding constitutional requirements for legislative regulation, and to ensure timely protection against the premature attribution of guilt to an individual. The article examines the functions of the principle in legislative regulation, the interpretation of legal norms, constitutional review, the protection of rights,

and the conduct of public authorities. These functions are explained with reference to the competence of the relevant authority or official and their obligations to ensure compliance with the principle.

The article proposes actor-specific, procedural-stage, substantive, and linguistic criteria for assessing judicial decisions and official communications. Applying these criteria requires first determining whether the presumption of innocence is applicable and then, depending on the nature of the act under examination, assessing the allocation of the burden of proof and the language used in relation to the individual concerned. In particular, the assessment considers whether such language refers to an accusation that remains to be proven or presents the individual's guilt as an already established fact.

Based on an analysis of the case law of the European Court of Human Rights, the article distinguishes between assessing the sufficiency of evidence required to adopt a particular decision and the final judicial determination of guilt. With regard to official statements, it substantiates the need to assess the language used within its full context, since a mechanical examination of isolated words is insufficient to determine compliance with the principle. The proposed criteria may be applied when drafting judicial decisions and official communications, as well as in the course of their legal assessment.

Keywords: presumption of innocence, constitutionality, constitutional enshrinement, functional significance, burden of proof, applicability criteria, official statements.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 29.09.2026 թ., տրվել է գրախոսության 01.10.2026 թ., ընդունվել է տպագրության 09.10.2026 թ.:

DOI: 10.59560/18291155-2026.3-317

ՏԱԹԵՎԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի
իրավագիտության ամբիոնի հայցորդ

ՆԵՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՒԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ամփոփագիր

Հոդվածի հետազոտության առարկան ներման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումն է: Հեղինակի նպատակն է վերհանել ներման իրավաչափության պայմաններն ու նպատակը, ինչպես նաև այն տարանջատել հարակից նույնանման ինստիտուտներից (համաներում, պատժից ազատման այլ ձևեր):

Հոդվածի հիմնական դրույթներում քննարկվում են ներման ինստիտուտի տարբեր դրսևորումները՝ որպես պատժից ազատում, իրավական ակտ և հումանիզմի սկզբունքի արտահայտություն: Հեղինակը վերլուծում է ՀՀ Սահմանադրության և «Ներման մասին» ՀՀ օրենքի դրույթները՝ ընդգծելով, որ ներում շնորհելը Հանրապետության նախագահի բացառիկ սահմանադրական լիազորությունն է, որը կապված է դատապարտված անձի կողմից ներման խնդրագիր ներկայացնելու հետ, սակայն Հանրապետության նախագահը դրանով կաշկանդված չէ: Համեմատական-իրավաբանական մեթոդի գործածմամբ փորձ է արվել բացահայտել միջազգային չափանիշներն ու լավագույն փորձը, մասնավորապես՝ ուսումնասիրվել են Դանիայի, Սլովակիայի, Չեխիայի, Հունաստանի, Ճապոնիայի, Նիդերլանդների, Ֆինլանդիայի մոտեցումները:

Հեղինակը հիմնավորել է, որ ներում շնորհելու մասին հրամանագիրն անհատական իրավական ակտ է, որը ենթակա չէ դատական բողոքարկման: Հոդվածում առանձին անդրադարձ է կատարվել նաև ներում շնորհելու նպատակներին՝ եզրահանգելով, որ դրանք են մարդասիրությունը, սոցիալական վերականգնումը, երբեմն՝ քաղաքական իրողությունները:

Մտահանգում է կատարվել այն մասին, որ ինստիտուցիոնալ տեսանկյունից ներումը սահմանվում է որպես սահմանադրաիրավական ինստիտուտ, որը որոշում է պետության գլխի սահմանադրական լիազորության բովանդակությունն ու մեխանիզմը՝ քրեական պատժից ազատելու կամ այն մեղմացնելու համար՝ որպես հումանիզմի և պետական ներման սահմանադրական սկզբունքի դրսևորում:

Հիմնաբառեր. ներում, դատապարտյալ, հանրային շահ, հայեցողություն, սոցիալական վերականգնում, արտադատական ակտ, մարդասիրություն:

Ներման ինստիտուտի սահմանադրաիրավական բնույթի սահմանումը կարևորագույն նշանակություն ունի, քանի որ այն հնարավորություն է տալիս բացահայտել այս ինստիտուտի իրավաչափությունը և նպատակը, ինչպես նաև որոշել դրա կիրառման իրավական հիմքերն ու պայմանները, ինչը կարևոր է ոչ միայն իրավական տեսության, այլև իրավակիրառ պրակտիկայի համար: Այս սահմանումը նաև հնարավորություն է տալիս գնահատել ներման դերի ու նշանակության սահմանները մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության և արդարադատության իրականացման համատեքստում:

Ինչպես իրավացիորեն նշում է Ա.Յա. Գրիշկոն. ««Ներում» տերմինի ստուգաբանությունը հասկանալը թույլ է տալիս որոշել դրա տեղը այլ հարակից ինստիտուտների շարքում (համաներում, պատժից ազատման այլ ձևեր)»[1]:

Ներման իրավական բնույթը բխում է հենց հասկացության բանասիրական իմաստից, որը Է. Աղայանի արդի հայերենի բացատրական բառարանը սահմանում է հետևյալ կերպ. «հանցանքի թողություն տալ, հանցանքը մոռանալ՝ վրայից վերցնել՝ հանել, հանցանքի պատասխանատվությունից՝ պատժից ազատել»:

«Ներում» տերմինը սահմանվում է նաև իրավաբանական գրականության մեջ, այդ թվում՝ սահմանադրական իրավունքում: Իրավական բառարանը ներումը սահմանում է որպես պետության ղեկավարի կողմից քրեական պատժի չեղարկում կամ մեղմացում:

Կ.Մ. Տիշչենկոն ներումը սահմանում է որպես հանցագործություն կատարած անձի ազատում քրեական պատասխանատվությունից, պատժից կամ դատվածությունից, կամ պատժի մեղմացում այն դեպքերում, երբ քրեական իրավունքի ձևական պահանջները խոչընդոտում են մեղմացման որևէ ձևի համապատասխան կիրառմանը[2]:

Հատկանշական է, որ ներման մի շարք գիտական սահմանումներում առկա է մարդասիրության և ողորմածության դրսևորում: Այսպես, Ս.Ա. Ավագյանը ներումը սահմանում է որպես «մարդկայնության բարձրագույն դրսևորում՝ հանցագործության համար դատապարտված կոնկրետ անձի նկատմամբ»[3]:

Ա.Յա. Գրիշկոյի կարծիքով՝ ներումը «հանցագործություն կատարած և դրա համար դատապարտված անձի նկատմամբ հումանիզմի բարձրագույն ձևն է (պատժից վաղաժամկետ ազատման բոլոր տեսակներից)[4]:

[1] **Гришко А.Л.** Помилование осужденных в России: Научно-практическое пособие. - М., 2005. - С. 10.

[2] **Тищенко К.М.** Помилование в уголовном праве. - М., 1994. - С. 18.

[3] **Авакьян С.А.** Конституционное право России. Т. 2. - М., 2006. - С. 330.

[4] **Гришко А.Я.** Помилование осужденных в России: Научно-практическое пособие. - М., 2005. - С.13.

Վերոնշյալ սահմանումները ներումը ներկայացնում են տարբեր դրսևորումներով՝ որպես պատժից ազատում, որպես որոշում (այսինքն՝ իրավական ակտ) և որպես հումանիզմի սկզբունքի ուղղակի արտահայտություն: Սա ցույց է տալիս ներման իրավական բարդ բնույթը և հաստատում այն տարբեր ասպեկտներով դիտարկելու անհրաժեշտությունը:

Ներման իրավունքը սահմանադրական իրավունք է, որը շնորհելու լիազորություն ունի պետության գլուխը, ով պարտավոր է քննարկել ներկայացված ներման յուրաքանչյուր խնդրանք՝ օրենքի պատշաճ ընթացակարգին համապատասխան, ինչը, իհարկե, չի բացառում ներման մերժումը: Այսպիսով, ՀՀ Սահմանադրությունը սահմանում է ոչ թե ներման իրավունքը, այլ ներման խնդրանքի, այսինքն՝ Հանրապետության նախագահին ներման պաշտոնական դիմում ներկայացնելու իրավունքը:

Այստեղ տրամաբանական հարց է առաջանում. կարո՞ղ է արդյոք պետության գլուխը ներում շնորհել՝ անկախ դատապարտված անձի ներման խնդրանքից:

Հատկանշական է, որ «Ներման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում հստակ ամրագրված է, որ հանցագործության համար դատապարտված անձին կարող է ներում շնորհվել, եթե նա ներկայացրել է ներման խնդրագիր:

Միևնույն ժամանակ, տվյալ դեպքում հարց է ծագում՝ արդյո՞ք դատապարտված անձի ներման խնդրանքը չպետք է ծառայի որպես ներման լրացուցիչ հիմք, քանի որ ներման իրավունքի շրջանակներում նախագահը կաշկանդված չէ գործող ներման ընթացակարգով, որը պահանջում է միայն խորհրդատվական դիրքորոշման մշակում, որը պետության ղեկավարը կարող է անտեսել բարձրագույն բարիքի շահերից ելնելով:

Որոշ հեղինակներ կարծում են, որ ներման խնդրանքը ներման ինստիտուտի պարտադիր ատրիբուտն է: Այսպես, Յու.Ա. Դմիտրիևը նշում է, որ «բանասիրական մեկնաբանության համաձայն՝ «ներում» տերմինը ենթադրում է դատապարտված անձի կողմից իրավասու մարմնին ներման նախնական դիմում: Սա իմպերատիվ նորմ է, որը չի նախատեսում այս հարցը լուծելու հնարավորություն՝ առանց շահագրգիռ կողմի մասնակցության»[1]:

Թվում է, թե ներման ժամանակակից ըմբռնումը չի կարող հիմնված լինել դրա բառացի բանասիրական մեկնաբանության վրա, այլ պետք է հաշվի առնվեն ներկայիս սահմանադրական կարիքները և քրեական քաղաքականության նպատակները: Մեր կարծիքով՝ ներում խնդրելու իրավունքը չի նշանակում, որ պետության գլուխը կաշկանդված է ներման խնդրանքով: Այս հասկացությունը ենթակա է առավել լայն մեկնաբանության:

[1] **Дмитриев Ю.А.** Защита конституционных прав граждан в уголовной и конституционной юстиции // Государство и право. 1999. № 6. - С. 39.

Մեր դիտարկմամբ, ներման խնդրանքը միջնորդության ձևով կարող է ներկայացվել երրորդ անձանց կողմից ևս, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի, դատապարտյալների դրական բնութագրի դեպքում՝ որպես խրախուսանքի ձև:

Այդպիսի մեկնաբանություն է առկա նաև իրավաբանական գրականության մեջ. այսպես՝ Ա. Զուբկովան նշում է. «Որոշակի չափով ներումը կարող է նաև ծառայել որպես խրախուսանք՝ որպես նախագահի կողմից կիրառվող խրախուսանքի և ողորմածության բարձրագույն ակտ»[1]:

Ներման նախաձեռնությունը հստակ տարբերակելու համար մենք կառաջարկեինք դատապարտված անձի միջնորդությունն իրավաբանորեն որակել որպես ներման խնդրանք՝ դրանից առանձնացնելով ներման միջնորդությունը որպես խրախուսական միջոց, որը չի մտնում ՀՀ Սահմանադրության 70-րդ հոդվածում նշված սուբյեկտիվ իրավունքի բովանդակության մեջ:

Ներում խնդրելու սուբյեկտիվ իրավունքի կարևորությունը հաստատվում է միջազգային իրավունքի կողմից դրա ճանաչմամբ: 1966 թվականի դեկտեմբերի 16-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ասվում է. «Մահվան դատապարտված յուրաքանչյուր անձ իրավունք ունի խնդրել ներման կամ դատավճռի մեղմացման մասին:

Որոշ հեղինակներ ընդգծում են վերլուծվող իրավունքի բնական, բնատուր բնույթը: Ա.Յա. Գրիշկոն նշում է, որ ներումը «առաջին հերթին մարդու ներման բնական իրավունքի իրականացման ձև է»[2]:

Խոսքի առարկա իրավունքի արժեքը հաստատվում է նաև այն փաստով, որ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ այն որևէ սահմանափակման չի ենթարկվում արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ (76-րդ հոդված): Սա բարձրացնում է ներման իրավունքի խմբային դասակարգման հարցը, որը գիտական ասպեկտում հստակ գնահատական չի ստացել: Որոշ հեղինակներ այս իրավունքը դասակարգում են որպես իրավունքների և ազատությունների իրականացման երաշխիք, ինչն էապես զրկում է այն ինքնուրույն իրավական նշանակությունից: Այսպիսով, Կ.Կ. Գասանովը ներման իրավունքը դասակարգում է որպես սահմանադրական իրավունք, որը նա անվանում է սահմանադրական երաշխիքներ: «Սահմանադրական երաշխիքները հատուկ տեղ են զբաղեցնում դատական պաշտպանության իրավունքի ապահովման գործում, որը պետք է հասկանալ որպես հիմնական օրենքներով նախատեսված

[1] Комментарий к Уголовно-исполнительному кодексу Российской Федерации (постатейный) / Под ред. А.И. Зубкова. - М., 2005. - С. 99.

[2] **Гришко А.Л.** Помилование осужденных в России: Научно-практическое пособие. - М., 2005. - С.93.

իրավական պայմաններ, միջոցներ և մեթոդներ, որոնց միջոցով իրականացվում է խախտված իրավունքների վերականգնումը»[1]:

Դատական պաշտպանության սահմանադրական երաշխիքների շարքում Է.Ի. Ատամանենկոն ներառում է դատապարտված անձի ներման կամ պատժի մեղմացման խնդրանքի իրավունքը[2]:

Ներման իրավունքն ավանդաբար պատկանում է պետության ղեկավարին և բխում է պետության ղեկավարի պաշտոնի յուրահատուկ բնույթից, որը կապված է հանրային իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ: Սակայն պետության ներման գործառույթը չի սահմանափակվում միայն ներմամբ. այն ներառում է նաև համաներումը, որն ունի նմանատիպ նպատակներ: Սակայն համաներումը շնորհվում է հիմնականում խորհրդարանի կողմից, մինչդեռ ներումը պետության ղեկավարին վերապահված արտոնություն է:

Բացառությունները քիչ են: Օրինակ՝ Դանիայում թագավորը կարող է շնորհել և՛ ներում, և՛ համաներում (Սահմանադրության 24-րդ հոդվածի 3-րդ բաժին): Համաներում և ներում շնորհելու իրավունքը պատկանում է Սլովակիայի Հանրապետության նախագահին (Սահմանադրության 102-րդ հոդված) և Չեխիայի Հանրապետության նախագահին (Սահմանադրության 63-րդ հոդված): Իսկ Շվեյցարիայում ներումն ու համաներումն իրականացնում է խորհրդարանը (Սահմանադրության 173-րդ հոդված)[3]:

Մի շարք երկրներում ներում շնորհելու պետության ղեկավարի իրավունքը կարգավորվում է խորհրդատվական լիազորություններ ունեցող այլ մարմինների մասնակցությամբ: Սա բնորոշ է հիմնականում խորհրդարանական երկրներին, որտեղ պետության ղեկավարը գործում է կառավարության և առանձին նախարարների խորհրդով և համաձայնությամբ: Այսպես, Հունաստանում նախագահը ներում է շնորհում արդարադատության նախարարի առաջարկությամբ և հիմնականում դատավորներից կազմված խորհրդի հետ խորհրդակցելուց հետո (Սահմանադրության 47-րդ հոդված), Ճապոնիայում կայսրը ներում է շնորհում կառավարության խորհրդով և հաստատմամբ (Սահմանադրության 7-րդ հոդված), Նիդերլանդներում դատարանի դատավճռով պատժի մեղմացումը կամ չեղարկումը կարող է շնորհվել թագավորի հրամանագրով՝ խորհրդարանի օրենքով որոշված դատարանի առաջարկությամբ: Պորտուգալիայում նախագահը չեղյալ է հայտարարում կամ մեղմացնում է պատիժները՝ լսելով կառավարության կարծիքը (Սահմանադրության 134-րդ հոդված), Ֆինլանդիայում նախագահը ներում է շնորհում

[1] **Гасанов К.К.** Конституционный механизм защиты основных прав человека. - М.: Закон и право, 2004. - С. 269-270.

[2] **Атаманенко Е.И.** Конституционные гарантии прав и свобод человека и гражданина // Конституция, судебная власть и права человека в Российской Федерации. Материалы научно-практической конференции. – Ростов-на-Дону: Изд-во Рост. ун-та, 2006. - С. 150.

[3] Конституции государств Европы. В 3 т. / Под ред. Л.А. Окунькова. - М., 2001.

Գերագույն դատարանի կարծիքը ստանալուց հետո (Սահմանադրության 105-րդ հոդված):

Ներման իրավունքն իրականացվում է Հանրապետության նախագահի կողմից ներման մասին ակտի ընդունմամբ: Ներումներն անհատական իրավական ակտեր են: Դրանք միանգամյա ակտեր են, քանի որ վերաբերում են կոնկրետ դատապարտված անձանց և վերաբերում են դատարանի դատավճռով նշանակված պատիժներին:

Սակայն որոշ հեղինակներ նախագահական ներումները համարում են նորմատիվ իրավական ակտեր: Կ. Միրզաժանովը ներումն անվանում է նորմատիվ ակտ՝ համարելով, որ այս ակտը փոխարինում է պատժի կատարման և դրա դադարեցման ընդհանուր կարգը կարգավորող իրավական նորմին[1]:

Այս դիրքորոշումը տարբերվում է նորմատիվ-իրավական և անհատական-իրավական ակտերի գոյություն ունեցող գիտական չափանիշներից: Ինչպես իրավացիորեն նշում է Գ.Վ. Դեգտյարևը, «ներման ակտերը միշտ անհատական բնույթի են, այսինքն՝ դրանք տրվում են որոշակի անձի կամ մի քանի կոնկրետ անձանց նկատմամբ»: Նմանատիպ դիրքորոշում է արտահայտում նաև Ս.Ա. Ավագյանը, որը ներման մասին նախագահի հրամանագրերը դասակարգում է որպես ոչ նորմատիվ հրամանագրեր, քանի որ դրանք (ոչ նորմատիվ հրամանագրերը) ակտեր են, որոնք «կարգավորում են որոշակի ոչ նորմատիվ հարցեր՝ անհատի և պետական կյանքի համար դրանց կարևորության պատճառով»[2]:

Սակայն, մեր դիտարկմամբ, նշվածը չի հակասում այն փաստին, որ ներումը կարող է լինել կոլեկտիվ բնույթի՝ ենթադրելով անձանց խմբի պատժից ազատում (կամ պատժի մեղմացում), սակայն նույնիսկ կոլեկտիվ ներումը միշտ նպատակային և անհատականացված պետք է լինի:

«Ներման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը կարգավորում է ներում շնորհելու դեպքերը, մասնավորապես՝ առանձնացնելով որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված և ազատազրկման ձևով պատիժ կրող անձին, ինչպես նաև ցմահ ազատազրկման դատապարտված անձին ներում շնորհելու համապատասխանաբար պատժի կեսը փաստացի կրած լինելու և ազատազրկման ոչ պակաս, քան տասնհինգ տարին կրած լինելու կանոնը: Այս օրենքով նաև արգելվում է ներում շնորհել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործության կամ խոշտանգման համար դատապարտված անձին:

Այս դրույթներն արդարացված են թվում ներման ընկալման տեսանկյունից՝ որպես մեղմ պատժի արժանի անձանց նկատմամբ կիրառվող բացառիկ միջոց:

[1] **Мирзажанов К.** Амнистия и помилование в советской уголовной политике. - Ташкент, 1991. - С. 32.
[2] **Авакьян С.А.** Конституционное право России. Т. 2. - М., 2006. - С. 331.

Սակայն կարծում ենք, որ վերը նշված կարգավորումները խիստ խնդրահարույց են Սահմանադրությամբ ամրագրված անձի հիմնարար իրավունքի իրացման տեսանկյունից, քանի որ ներում շնորհելու որոշում կայացնելիս պետության գլուխը չպետք է կաշկանդվի ո՛չ հանցագործության բնույթով և վտանգավորության աստիճանով, ո՛չ պատժի տեսակով և չափով կամ ժամկետով:

Սա հաստատվում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-733 որոշմամբ, համաձայն որի՝ ՀՀ Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «...ներում շնորհելու համար որևէ պարտադիր չափանիշ նախատեսված չէ, այն ամբողջությամբ թողնված է ՀՀ Նախագահի հայեցողությանը.

Նախագահի՝ ներում շնորհելու իրավունքը սահմանափակված չէ ո՛չ դատապարտյալների շրջանակով, ո՛չ հանցագործությունների բնույթով, ո՛չ պատժատեսակներով ու պատժաչափերով»:

2004 թ. օգոստոսի 13-ի ՍԴՈ-502 որոշմամբ ևս ՀՀ Սահմանադրական դատարանն ընդգծել է Հանրապետության Նախագահին վերապահված ներման սահմանադրական լիազորության և, համապատասխանաբար, դատապարտյալների՝ ներում հայցելու իրավունքի բացարձակ բնույթը: Նշված որոշմամբ Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը (Հռոմի 1998 թ. կանոնադրություն) ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանող՝ inter alia, այն հիմքով, որ «Միջազգային քրեական դատարանի՝ որպես ներպետական քրեական իրավազորության համակարգը լրացնող մարմնի, կողմից դատապարտված՝ ՀՀ ընդհանուր իրավազորության ներքո գտնվող անձինք Կանոնադրության (...) պահանջներին համապատասխան զրկվում են ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված ներման իրավունքից» (տե՛ս նշված որոշման 17-րդ կետը):

Լինելով արտադատական գործողություն՝ նախագահի կողմից ներման կամ ներման մերժման որոշումը չի կարող բողոքարկվել դատարան: Այս դիրքորոշումը հաստատվում է նրանով, որ դատապարտված անձն իրավունք ունի միայն ներման խնդրանք ներկայացնել, մինչդեռ ներում շնորհելու իրավունքը պատկանում է Հանրապետության նախագահին:

Ներումը շնորհվում է դատական գործընթացից դուրս և չի ազդում դատավճռի բովանդակության վրա: Ինչպես իրավացիորեն նշում է Ա.Ս. Միխլինը. «ներման էությունն այն է, որ անձի վիճակը մեղմվում է այնպիսի հանգամանքների պատճառով, որոնք չեն ազդում դատավճռի վավերականության և օրինականության վրա»[1]:

Նախագահի ներում շնորհելու լիազորության ամբողջական շրջանակը քննարկելիս պետք է նաև նշել, որ ներման որոշումը չպետք է լինի կամայական: Այն պետք է հիմնված լինի հանրային շահի, իրավական արդարադատության, ինչպես

[1] **Михлин А.С.** Помилование в России // Закон. 2002. № 3. - С. 136.

նաև հանցագործությունից տուժած երրորդ անձանց իրավունքների և օրինական շահերի նկատառումների վրա: Այլ կերպ ասած՝ Նախագահի ներման որոշումը պետք է լինի նպատակային և հավասարակշռված՝ հիմնված գործին առնչվող բոլոր իրավական շահերի հաշվառման վրա: Օրինակ, ներումը չպետք է ազատի անձանց հանցագործության հետևանքով պատճառված վնասի համար փոխհատուցում վճարելուց: Ներումը սահմանադրական և քրեական իրավունքի ինստիտուտ է, որը չի տարածվում քաղաքացիական կամ աշխատանքային հարաբերությունների վրա: Մեղավոր անձանց ներման միջոցով քրեական պատժից ազատելով՝ նախագահը չի մերժում գույքային հայցը, այլ պարզապես չի քննարկում այն: Այս որոշումը չի խոչընդոտում շահագրգիռ կողմերին գույքային հայց ներկայացնել մեղավոր կողմի դեմ:

Հանրապետության նախագահը, մարդասիրական նպատակներով ներում շնորհելով և կոնկրետ անձին ազատելով իր կատարած հանցավոր արարքի համար քրեական պատասխանատվությունից և պատժից, պետք է միաժամանակ կշռադատի մրցակցող սահմանադրական արժեքները և, ելնելով դրանց հավասարակշռությունն ապահովելու նպատակից, թույլ չտա, որ խախտմամբ վտանգվեն այլոց իրավունքները, օրենքը, կարգը և հասարակական անվտանգությունը, որոնք անհրաժեշտ պայման են դրանց իրականացման համար: Հակառակ դեպքում դա կհակասի հասարակական հարաբերությունների կարգավորման արդարության և համաչափության պահանջներին, որոնք բխում են Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության սահմանադրական բնույթից (ՀՀ Սահմանադրության 1-ին հոդված), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավական պետության սկզբունքներին:

Նախագահի՝ ներում շնորհելու լիազորությունը հետապնդում է որոշակի իրավական նպատակներ, որոնք պայմանավորում են այդ լիազորության իրականացման բովանդակությունը: Թեև այդ նպատակներն օրենքով ուղղակիորեն սահմանված չեն, դրանք դրսևորվում են նախագահի գործողություններում: Փորձը ցույց է տալիս, որ ներում շնորհելը պետության ղեկավարի կողմից իրականացվող կամայական գործողություն չէ, այլ հիմնվում է դատապարտված անձին բնութագրող և ներման անհրաժեշտությունը պայմանավորող որոշակի հանգամանքների վրա, ինչպիսիք են դատապարտված անձի դրական վարքագիծը, նրա կամ մերձավոր ազգականների հիվանդությունը և այլն: Ներումը շնորհվում է՝ հաշվի առնելով դատապարտված անձի նախաքննության ընթացքում դրսևորած վարքագիծը, նրա կատարած հանցագործության բնույթն ու տեսակը, դատարանի կողմից նշանակված պատժի տեսակը և չափը, փաստացի կրած պատժի չափը, դատապարտված անձի տարիքն ու սեռը, երեխաների առկայությունը, հասարակությանը և պետությանը մատուցած ծառայությունները, նրա առողջական վիճակը, ինչպես նաև ներման վերաբերյալ որոշման կայացման վրա ազդող այլ էական հանգամանքներ:

Այլ կերպ ասած՝ ներում շնորհելը կրում է ընտրողական բնույթ և իրականացվում է պետության ղեկավարի հայեցողությամբ՝ հաշվի առնելով մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությանն ուղղված նպատակները, ինչպես նաև մարդասիրության և կարեկցանքի նկատառումները: Կարելի է պնդել, որ Նախագահն ունի ներման վերաբերյալ հատուկ քաղաքականություն, որը չի փոխարինում, այլ ճշգրտում է պետության ընդհանուր քրեական քաղաքականությունը:

Քաղաքական մթնոլորտը նույնպես կարող է ազդել այս քաղաքականության բովանդակության վրա: Այսպիսով, Հայաստանի կողմից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան վավերացնելուց հետո և առանց վավերացնելու այդ կոնվենցիային կից մահապատիժը վերացնող արձանագրությունը, ՀՀ նախագահը փաստացի վերացրեց մահապատիժը՝ ներում շնորհելով մահապատժի դատապարտված յուրաքանչյուր անձի: Սա քարոզարշավի նման միջոցառում էր և չէր կարող հիմնված լինել հանցագործության հանգամանքների կամ անհատի անձի վրա: Ըստ էության, նախագահը մտավ դատական համակարգի իրավասության տիրույթ՝ ներումը բացառությունից վերածելով կանոնի: Միևնույն ժամանակ, պետության ղեկավարի այս գործողությունները լիովին սահմանադրական էին և համապատասխանում էին Հայաստանի եվրոպական համայնքին ինտեգրման շահերին:

Ներման ընդհանուր նպատակը կարելի է համարել քրեական պատժի ենթարկված անձի նկատմամբ մարդկայնության և գթասրտության դրսևորումը: Այսպիսով, ներումը պետության ղեկավարի մարդասիրության արտահայտությունն է դատապարտված անձի նկատմամբ, պետության պատժիչ քաղաքականությունը ճշգրտելու միջոց, որն ամբողջովին որոշվում է պետության ղեկավարի կողմից:

Միևնույն ժամանակ, մարդասիրության (մարդկայնության) նպատակը լիովին օրինական է, բխում է ՀՀ Սահմանադրության սկզբունքներից, առաջին հերթին՝ անհատի ինքնիշխանությունից, որն արտահայտված է Սահմանադրության 3-րդ հոդվածում. *«1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:*

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:»:

Ինչպես նշում է Լ.Դ. Վոևոդինը, «Այս սահմանադրական բանաձևի մարդասիրական կողմնորոշումն այն է, որ այն ճանաչում է մարդուն, նրա

իրավունքներն ու ազատությունները որպես բարձրագույն արժեք, և ոչ թե որպես որևէ պետական կամ այլ սոցիալական նպատակների հասնելու միջոց»[1]:

Բնութագրելով ներման մարդասիրական ներուժը՝ Ա.Ա. Անիկինն իրավացիորեն նշում է, որ ներումը «արդարադատություն հաստատելու պետության վերջին միջոցն է, երբ քրեական դատավարության միջոցները չեն կարողանում հաղթահարել կոնկրետ հանգամանքների բարդությունը»:

Ներման հումանիզմը ներառում է նաև արդարադատությունը, որի անհրաժեշտությունը դրսևորվում է քրեական պատասխանատվություն կիրառելու գործընթացում: Ինչպես նշում է Ն.Վ. Էլիզեևան. «...հաճախակի են դեպքերը, երբ կան դատապարտյալի վիճակը մեղմելու հստակ հիմքեր, սակայն օրենքի ֆորմալ որոշակիությունը թույլ չի տալիս փոփոխություն կատարել... Ներումը... ծառայում է որպես արդարադատության հասնելու միակ հնարավոր միջոց նման բարդ իրավիճակներում: Հնարավոր է, որ հենց այս բնութագիրն է, որն արտահայտվում է քրեական իրավունքին բնորոշ ֆորմալ որոշակիությունը հաղթահարելու ունակությամբ, որը տարբերակում է ներումը օրենքով նախատեսված պատժից ազատման այլ տեսակներից»[2]:

Այսպիսով, ներումը հանդես է գալիս որպես պետության և հանցագործության համար դատապարտված անձի միջև հարաբերությունների կարգավորման իրավական միջոց, որը կարող է հետապնդել դատապարտված անձի վերասոցիալականացումն ապահովելու նպատակ և հանդիսանալ գործուն երաշխիք հանցավորի իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացում:

Ներումը կարող է հետապնդել նաև քաղաքական նպատակ, եթե այն բխում է արդիական քաղաքական հարցերը լուծելու անհրաժեշտությունից: Օրինակ՝ քաղաքական նպատակներ առկա են համաներման բազմաթիվ ակտերում, որոնք, ինչպես նշել ենք, իրենց նպատակներով գործնականում չեն տարբերվում ներումից:

Ներման սահմանադրական և իրավական բնույթը չի բացառում դրա կապը քրեական և իրավունքի այլ ճյուղերի հետ: Ինչպես նշում է Օ.Ե. Կուտաֆինը, «Սահմանադրական նորմերն ունեն բարձրագույն իրավական աստիճան և կատարում են կարգավորող ու պաշտպանիչ գործառույթներ: Իրավունքի այլ ճյուղերի նորմերը, մյուս կողմից, կոնկրետացնում և պաշտպանում են սահմանադրական նորմերում արտահայտված վարքագծի ամենակարևոր կանոնները: Հետևաբար, դրանք խմբավորվում են այդ նորմերի շուրջ, որոնք կազմում են սահմանադրական իրավունքի անբաժանելի մասը»: Տ.Ա. Սինցովան իրավացիորեն նշել է, որ «համաներման և ներման ակտերի ստեղծման հետ կապված համապատասխան մարմինների միջև ծագող հարաբերությունները համարվում են պետական-

[1] **Воеводин Л.Д.** Юридический статус личности в России: Учебное пособие. - М.: Изд-во МГУ, 1997. - С.79.
[2] **Елисеева Н.В.** Рецидив среди помилованных и деятельность органов внутренних дел по его предупреждению. Дисс... канд. юрид. наук. - М., 2003. - С. 35-36.

իրավական, քանի որ դրանք առաջացել են սահմանադրության նորմերի իրականացման համար իրավասու մարմնի գործունեության ընթացքում»[1]:

Ն.Դ. Սերգիևսկին, տարբերակելով սահմանադրական և քրեական իրավունքի փոխհարաբերությունները ներման հարցերում, նշել է, որ ներման տեսական հիմքերը գտնվում են պետական իրավունքի ոլորտում, բայց քանի որ ներման առարկան քրեական հետապնդումն է կամ դատարանի դատավճռով նշանակված քրեական պատիժը, ներման հարցը քրեական իրավունքի առարկա է[2]:

Ն.Վ. Օսմոլովսկայան ներումը դասակարգում է որպես միջառարկայական ինստիտուտ՝ ընդգծելով դրա սահմանադրական և իրավական բաղադրիչի առաջնահերթությունը. «Մինչդեռ քրեական պատասխանատվությունից և պատժից ազատման մյուս հիմքերը զուտ քրեաիրավական բնույթի ինստիտուտներ են, համաներումը և ներումը, կախված իրենց ոլորտային պատկանելությունից, բնույթով հստակ համակցված են, որտեղ սահմանադրական իրավունքը խաղում է առաջնային դեր»[3]: Հեղինակի կարծիքով, սա հաստատվում է ներման հստակ քրեաիրավական կարգավորման բացակայությամբ, ինչն այս ինստիտուտին հաղորդում է բացառիկ բնույթ: Ա.Յա. Գրիշկոն նույնպես կարծում է, որ «ներումը, իրավական տեսանկյունից, միջառարկայական ինստիտուտ է»[4]: Սակայն այստեղ պետք է նշել, որ ներումը, որպես այդպիսին, քրեական իրավունքի կարգավորման առարկայից դուրս գտնվող իրավական գործընթաց է:

Այսպիսով, ներումը արդարադատության ակտ չէ, այլ պետական ողորմածության դրսևորում, որն իրականացվում է արտադատական կարգով. այն չի ապաքրեականացնում ներված անձանց կողմից կատարված համապատասխան արարքները: Ներումը, լինելով սահմանադրական իրավունքի ինստիտուտ, կապված չէ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու և պատժի կիրառման հարցերի հետ, որոնք գտնվում են դատական իշխանության իրավասության տիրույթում:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ ինստիտուցիոնալ տեսանկյունից ներումը սահմանադրաիրավական ինստիտուտ է, որը սահմանում է պետության ղեկավարի՝ դատապարտված անձին պատժից ազատելու կամ նշանակված պատիժը մեղմացնելու սահմանադրական լիազորության բովանդակությունն ու իրականացման կարգը՝ արտահայտելով մարդասիրության սկզբունքը և պետության մարդասիրական քաղաքականության դրսևորումներից մեկը:

[1] **Синцова Т.А.** Амнистия и помилование // Правоведение. 1969. № 6. - С. 118.

[2] **Сергиевский Н.Д.** Русское уголовное право. Часть Общая. - СПб., 1904 г. - С. 416.

[3] **Осмоловская Н.В.** Указ. работа. - С. 15.

[4] **Гришко А.Я.** Указ. работа. - С. 27.

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 2015 թ., դեկտեմբերի 6-ի փոփոխություններով:

2. «Ներման մասին» ՀՀ օրենք (ընդունված՝ 2018 թ. մարտի 7-ին):

3. **Հարությունյան Գ.Գ.,** Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները (վերահրատարակություն՝ լրամշակումներով): Երևան, Նժար, 2016:

4. **Авакьян С.А.** Конституционное право России. Т. 2 . - М., 2006.

5. **Атаманенко Е.И.** Конституционные гарантии прав и свобод человека и гражданина // Конституция, судебная власть и права человека в Российской Федерации. Материалы научно-практической конференции. - Ростов на-Дону: Изд-во Рост. ун-та, 2006.

6. **Воеводин Л.Д.** Юридический статус личности в России: Учебное пособие. - М.: Изд-во МГУ, 1997.

7. **Гасанов К.К.** Конституционный механизм защиты основных прав человека. - М.: Закон и право, 2004.

8. **Гришко А.Л.** Помилование осужденных в России: Научно-практическое пособие. - М., 2005.

9. **Дмитриев Ю.А.** Защита конституционных прав граждан в уголовной и конституционной юстиции // Государство и право. 1999. № 6.

10. **Елисеева Н.В.** Рецидив среди помилованных и деятельность органов внутренних дел по его предупреждению. Дисс... канд. юрид. наук. - М., 2003.

11. Комментарий к Уголовно-исполнительному кодексу Российской Федерации (постатейный) / Под ред. А.И. Зубкова. - М., 2005.

12. Конституции государств Европы. В 3 т. / Под ред. Л.А. Окунькова. - М., 2001.

13. **Мирзажанов К.** Амнистия и помилование в советской уголовной политике. - Ташкент, 1991.

14. **Михлин А.С.** Помилование в России // Закон. 2002. № 3.

15. **Осмоловская Н.В.** Указ. работа.

16. **Сергиевский Н.Д.** Русское уголовное право. Часть Общая. - СПб., 1904 г.

17. **Синцова Т.А.** Амнистия и помилование // Правоведение. 1969. № 6.

18. **Тищенко К.М.** Помилование в уголовном праве. - М., 1994.

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВАЯ ПРИРОДА И СУЩНОСТЬ ПОМИЛОВАНИЯ

Аннотация

Предметом исследования статьи является раскрытие конституционно-правового содержания института помилования. Цель автора — выявить условия правомерности и цель помилования, а также отграничить его от смежных институтов (амнистии, иных форм освобождения от наказания). В основных положениях статьи обсуждаются различные аспекты института помилования: освобождение от наказания, правовой акт и выражение принципа гуманизма. Автор анализирует положения Конституции РА и Закона РА «О помиловании», подчеркивая, что помилование является исключительным конституционным полномочием Президента Республики, которое связано с подачей прошения о помиловании осужденным лицом, однако Президент Республики им не связан. С использованием сравнительно-правового метода предпринята попытка выявить международные стандарты и лучшие практики. В частности, изучены подходы Дании, Словакии, Чехии, Греции, Японии, Нидерландов и Финляндии. Автор обосновал, что указ о помиловании является индивидуальным правовым актом, который не подлежит судебному обжалованию. В статье также отдельно рассматриваются цели помилования, и делается вывод, что ими являются человеколюбие, социальная реинтеграция, а иногда — политические реалии. Сделан вывод о том, что с институциональной точки зрения помилование определяется как конституционно-правовой институт, определяющий содержание и механизм конституционного полномочия главы государства по освобождению от уголовного наказания или его смягчению как проявление гуманизма и конституционного принципа государственного прощения.

Ключевые слова: помилование, осужденный, общественный интерес, усмотрение, социальная реинтеграция, внесудебный акт, гуманизм.

THE CONSTITUTIONAL-LEGAL NATURE AND ESSENCE OF PARDON

Annotation

The subject of research in this article is the disclosure of the constitutional and legal content of the institution of pardon. The author's goal is to identify the conditions of lawfulness and the purpose of pardon, as well as to distinguish it from related similar institutions (amnesty, other forms of exemption from punishment).

The main provisions of the article discuss various manifestations of the institution of pardon: as an exemption from punishment, a legal act, and an expression of the principle of humanism. The author analyzes the provisions of the Constitution of the Republic of Armenia and the RA Law "On Pardon," emphasizing that granting a pardon is an exclusive constitutional power

of the President of the Republic, which is connected with the submission of a petition for pardon by the convicted person, though the President of the Republic is not bound by it. Using the comparative-legal method, an attempt has been made to identify international standards and best practices, specifically studying the approaches of Denmark, Slovakia, the Czech Republic, Greece, Japan, the Netherlands, and Finland.

The author substantiates that the decree on granting a pardon is an individual legal act that is not subject to judicial appeal. The article also specifically addresses the purposes of granting a pardon, concluding that they are humanism, social reintegration, and sometimes political realities.

It is concluded that, from an institutional perspective, pardon is defined as a constitutional-legal institution that determines the content and mechanism of the head of state's constitutional power to exempt from or mitigate criminal punishment, as a manifestation of humanism and the constitutional principle of state pardon.

Keywords: pardon, convict, public interest, discretion, social rehabilitation, extrajudicial act, humanity.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 20.07.2026 թ., տրվել է գրախոսության 25.07.2026 թ., ընդունվել է տպագրության 29.07.2026 թ.:

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՐՄԻՆԵ ՏԵՐ-ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 22-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՆԱԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ԴՐԱՆ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 6 մայիսի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի (զեկուցող),
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,
Վլադիմիր Վարդանյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Արմինե Տեր-Ավետիսյանի (այսուհետ նաև՝ Դիմող)

ներկայացուցիչ՝ փաստաբան Ռոբերտ Առաքելյանի,

պատասխանողի՝ Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատասխանող)

ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Մարի Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◊ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◊ 3(124) 2026

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արմինե Տեր-Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի՝ հաշվի առնելով նաև իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, Պատասխանողի գրավոր բացատրությունը, Դատական դեպարտամենտից պահանջված սույն քաղաքացիական գործի նյութերն ու Ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայության տեղեկատվությունը, ինչպես նաև վերլուծելով վիճարկվող և վերաբերելի այլ օրինադրույթներ՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 27-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին:

2. Օրենսգրքի՝ «Քաղաքացիական գործերի տարածքային ընդդատությունը հայցվորի ընտրությամբ» վերտառությամբ 22-րդ հոդվածով սահմանվում է.

«1. Մի քանի պատասխանողների դեմ հայցը հայցվորի ընտրությամբ կարող է ներկայացվել պատասխանողներից որևէ մեկի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վայրի առաջին ատյանի դատարան:

2. Պատասխանողի դեմ, որը չունի հաշվառման վայր, և որի վերջին բնակության վայրն անհայտ է, հայց կարող է ներկայացվել նրա գույքի գտնվելու վայրի դատարան:

3. Կատարման վայրի վերաբերյալ ուղղակի նշում պարունակող պայմանագրից բխող հայցը կարող է ներկայացվել պայմանագրի կատարման վայրի առաջին ատյանի դատարան:

4. Ալիմենտ բռնագանձելու կամ հայրությունը որոշելու վերաբերյալ հայցը կարող է ներկայացվել հայցվորի հաշվառման կամ բնակության վայրի առաջին ատյանի դատարան:

5. Առողջությանը, պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին կամ կերակրողի մահվամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ հայցը կարող է ներկայացվել հայցվորի հաշվառման (գտնվելու) վայրի առաջին ատյանի դատարան կամ վնասը պատճառելու վայրի դատարան:

6. Անշարժ գույքին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ հայցը կարող է ներկայացվել վնասը պատճառելու վայրի առաջին ատյանի դատարան:

7. Ամուսնալուծության վերաբերյալ հայցը կարող է ներկայացվել հայցվորի հաշվառման կամ բնակության վայրի առաջին ատյանի դատարան, եթե պատասխանողն օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ, գտնվում է կալանքի տակ կամ դատապարտված է ազատազրկման հետ կապված պատժի, ինչպես նաև այն դեպքերում, երբ անչափահաս երեխան գտնվում է հայցվորի մոտ:

8. Իրավաբանական անձի դեմ հայցը, որը բխում է նրա ներկայացուցչության կամ մասնաճյուղի գործունեությունից, կարող է ներկայացվել համապատասխան ներկայացուցչության կամ մասնաճյուղի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:

9. Շարժական գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը հայցվորի ընտրությամբ կարող է ներկայացվել նրա հաշվառման (գտնվելու) կամ բնակության վայրի կամ նրա գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան»:

3. Օրենսգրքի վերոնշյալ վիճարկվող դրույթը չի փոփոխվել/լրացվել:

4. Գործի քննության առիթը Դիմողի՝ 2025 թվականի դեկտեմբերի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

5. Սահմանադրական դատարանի դատական կազմը 2026 թվականի հունվարի 22-ի ՍԴԴԿՈ-9 որոշմամբ «Արմինե Տեր-Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21 և 22-րդ հոդվածների, ինչպես նաև 3-րդ գլխի՝ հաշվի առնելով նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել է քննության: Սահմանադրական դատարանի 2026 թվականի մայիսի 6-ի ՍԴԱՈ-65 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը մասամբ՝ Օրենսգրքի 21-րդ հոդվածի և 3-րդ գլխի՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության մասով, կարճվել է:

Ա. Գործի դատավարական նախապատմությունը

6. Դիմողը հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ Հարություն Թորգոմի Աշչյանի, իրավասու մարմին՝ Աջափնյակ վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմին՝ վերջիններիս անչափահաս երեխայի բնակության վայրը մոր՝ Դիմողի բնակության վայրը սահմանելու պահանջի մասին:

7. Դատարանը 2025 թվականի հոկտեմբերի 16-ին կայացրել է «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշում: Նշյալ որոշմամբ Դատարանը մասնավորապես նշել է.

«Երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ հայցերով բացառիկ տարածքային կամ հայցվորի ընտրությամբ ընդդատություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ գլխով սահմանված չէ:

Դատարանը գտնում է, որ երեխայի բնակության վայրը սահմանելու պահանջով ներկայացված հայցը ընդդատյա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հետևաբար, հայցադիմումը ենթակա է վերադարձման»:

8. Վերոնշյալ որոշման դեմ Դիմողի կողմից վերաքննիչ բողոք է ներկայացվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան): Վերաքննիչ դատարանը, քննության առնելով նշված բողոքը, 2025 թվականի նոյեմբերի 24-ին որոշել է ներկայացված բողոքը մերժել՝ Դատարանի՝ 2025 թվականի հոկտեմբերի 16-ի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» թիվ ԵԴ2/10619/02/25 որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

9. Վերաքննիչ դատարանը վերոհիշյալ որոշմամբ նշել է.

«(…) ընդդատության կանոնների խախտմամբ ներկայացված հայցադիմումն ենթակա է վերադարձման: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված է քաղաքացիական գործերի ընդհանուր տարածքային ընդդատությունը, ըստ որի՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան:

Դատարանին, ի թիվս այլնի, հայցադիմումի՝ ընդդատության կանոնների պահպանմամբ ներկայացված լինելու հանգամանքը ստուգելու հնարավորություն ընձեռելու նպատակով օրենսդիրը իմպերատիվ կերպով սահմանել է հայցադիմումում պատասխանողի հաշվառման, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում բնակվելու վայրի հասցեն նշելու պարտականությունը:

Տվյալ դեպքում 10.09.2025 թվականի (փաստ 2), ինչպես նաև հայցադիմումը ներկայացնելու օրվա (փաստ 1) դրությամբ պատասխանողը Ֆրանսիայի Հանրապետությունում բնակվելու, Ֆրանսիայի Հանրապետությունում պատասխանողի բնակության վերջին հայտնի վայրի հասցեի վերաբերյալ փաստական տվյալներ առկա են հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրությունում (փաստ 2) և հայցադիմումում (փաստ 1):

Վերոգրյալ պայմաններում գործը Դատարանին ընդդատյա չլինելու, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման վերաբերյալ Դատարանի պատճառաբանությունը Վերաքննիչ դատարանը գնահատում է իրավաչափ, միևնույն ժամանակ հակառակի վերաբերյալ վերաքննիչ բողոքի փաստարկները սույն որոշման պատճառաբանությունների ուժով անհիմն են»:

Բ. Դիմողի դիրքորոշումները

10. Դիմողը պնդում է, որ թիվ ԵԴ2/10619/02/25 քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 2025 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ կիրառված՝ Օրենսգրքի 21 և 22-րդ հոդվածներով, ինչպես նաև ընդհանրապես Օրենսգրքի 3-րդ գլխով սահմանված նորմերով խախտվել են իր՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված՝ համապատասխանաբար արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները:

11. Ըստ Դիմողի՝ *«ՀՀ ընտանեկան օրենսգրքի վկայակոչված իրավանորմերի և ՔԴՕ 3-րդ գլխով նախատեսված վկայակոչված իրավանորմերի միջև իրավացիորեն կարող ենք արձանագրել, որ առկա են հակասություններ, որոնք արտահայտվում են ՔԴՕ 3-րդ գլխում առկա իրավունքի բացի ձևով, հատկապես՝ իրավունքի բաց, որն առկա է, ըստ իս, ՔԴՕ 21-րդ հոդվածում, ինչպես նաև 22-րդ հոդվածի 4-րդ կամ 7-րդ մասում, քանի որ մի դեպքում ՀՀ ընտանեկան օրենսգիրքը հստակ սահմանում է, որ ծնողների և զավակների համատեղ բնակության վայրի բացակայության դեպքում ծնողների և զավակների իրավունքներն ու պարտականությունները որոշվում են այն պետության օրենսդրությամբ, որի քաղաքացին է երեխան, այդ թվում նաև այն վեճերը, որոնք կապված երեխայի բնակության վայրի սահմանման հետ, իսկ հակառակ դրա, ՔԴՕ 3-րդ գլխում առկա չէ հատուկ կարգավորում, որը թույլ կտա դատարաններին չխախտել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը /օրինականության սկզբունքը/ ՔԴՕ 1-ին հոդվածի 1-ին և 3-րդ հոդվածները, այլ կերպ ասած՝ դատարանները չունեն համապատասխան իրավասություններ կենսագործելու ՀՀ ընտանեկան օրենսգրքի 146-րդ, 148-րդ հոդվածներով սահմանված իրավանորմերը՝ դարձնելով դրանք իմաստազուրկ, առարկայազուրկ»:*

12. Դիմողը գտնում է, որ *«Առնվազն տրամաբանական չէ, որ Օրենսդիրը կկարևորեր ալիմենտ բռնագանձելու, հայրությունը որոշելու, ամուսնալուծության հետ կապված ընտանեկան վեճերով գործերը, սահմանելով դրանց համար հատուկ ընդդատության կանոններ՝ թողնելով այն հարաբերականորեն հայցվորի ընտրությանը, իսկ մյուս դեպքում գիտակցված կհրաժարվեր կարգավորել այնպիսի կարևորագույն հարց, ինչպիսին է երեխայի բնակության վայրի որոշումը: Այլ կերպ ասած՝ պնդում եմ, որ նշված հարցի կապակցությամբ առկա է իրավունքի մասնակի բաց, նկատի ունենալով, որ առկա են ալիմենտ բռնագանձելու, հայրությունը որոշելու, ամուսնալուծության հետ կապված ընտանեկան վեճերով ընդդատության հատուկ կանոններ, իսկ երեխայի բնակության վայրի որոշման հետ կապված գործերով առկա չեն»:*

13. Դիմողը նաև նշում է. *«Սույն գործով ընդդատության կանոնները, ըստ իս, պետք է ավելի լայն և ճկուն մեկնաբանվեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին մասի 8-րդ, 2-րդ, 146-րդ և 148-*

րդ հոդվածների համատեքստում, այլ կերպ ասած՝ հաշվի առնելով, որ գործը երեխայի բնակության վայրը սահմանելուն է վերաբերում, ինչն ուղղակիորեն բխում է երեխայի լավագույն շահերից, դատարանները ընդդատության կանոնները կիրառելիս պետք է առաջնահերթ հաշվի առնեն Երեխայի լավագույն շահերը, և միևնույն ժամանակ, ըստ իս, Բարձր Դատարանի կողմից պետք է ճանաչվի, որ ծնողների և զավակների իրավունքներն ու պարտականությունները որոշելիս Դատարանները քննության ընթացքում ընդդատության կանոնները կիրառելիս պետք է հաշվի առնեն, որ գործը ենթակա է ՀՀ դատարանների կողմից քննության, եթե (I) ծնողներն ու զավակները համատեղ բնակության վայր չունեն, (II) երեխան, ով բովանդակային առումով ծնողների միջև ծագած վեճի օբյեկտն է, Հայաստանի Հանրապետության քաղաքացի է: Նշվածի կիրառմամբ, ըստ իս, համանման քաղաքացիական գործերով ընդդատության հատուկ կանոնների բացը կհաղթահարվի և ոչ իրավաչափորեն չի սահմանափակվի դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները»:

14. Ըստ Դիմողի՝ *«(…) ՔԴՕ 21-րդ, 22-րդ, 203-րդ հոդվածները ամուսնաընտրանեկան վեճեր քննելիս պետք է ավելի լայն մեկնաբանվեն, մասնավորապես՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով, այլ իրավական ակտերով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով՝ ՔԴՕ 203-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում, այն է՝ ընտանեկան վեճեր քննելիս գործի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով նախատեսված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով և սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված առանձնահատկությունները»:*

15. Դիմողն արձանագրում է, որ *«(…) որպես ընդդատության առանձնահատուկ կանոն՝ հաշվի առնելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 148-րդ հոդվածով սահմանված առանձնահատկությունը, Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարաններն իրավասու են քննել այնպիսի ընտանեկան վեճեր, որտեղ (I) դատարանները որոշում են ծնողների և զավակների իրավունքներն ու պարտականությունները, (II) ծնողներն ու զավակները համատեղ բնակության վայր չունեն, նույնիսկ այն դեպքում, եթե պատասխանողի դատավարական կարգավիճակ ունեցող ծնողը Հայաստանի Հանրապետությունում հաշվառման կամ բնակության վայր չունի, և (III) երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է»:*

16. Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթները՝ Օրենսգրքի 21 և 22-րդ հոդվածները, ինչպես նաև ընդհանրապես 3-րդ գլխով սահմանված իրավակարգավորումները՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, չեն հա-

մապատասխանում Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների պահանջներին՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 8-րդ մասի, 146 և 148-րդ հոդվածների համատեքստում:

17. Դիմողը խնդրում է.

«ճանաչել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ, 22-րդ հոդվածները, ինչպես նաև ընդհանրապես 3-րդ գլուխը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, որ.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող Երեխայի շահերին վերաբերող գործերով հայցադիմումը ներկայացվում է երեխայի փաստացի բնակության վայրի ընդհանուր իրավասության դատարան, կամ

2. Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարաններն իրավասու են քննել այնպիսի ընտանեկան վեճեր, որտեղ (I) դատարանները որոշում են ծնողների և զավակների իրավունքներն ու պարտականությունները, (II) ծնողներն ու զավակները համատեղ բնակության վայր չունեն, նույնիսկ այն դեպքում, եթե պատասխանողի դատավարական կարգավիճակ ունեցող ծնողը Հայաստանի Հանրապետությունում հաշվառման կամ բնակության վայր չունի, և (III) երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է»:

Գ. Պատասխանողի դիրքորոշումները

18. Պատասխանողը, ներկայացնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների վերաբերելի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև Օրենսգրքի վիճարկվող դրույթները, արձանագրում է, որ *«(...) երեխայի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական բարեկեցության ապահովումը պահանջում է իրավականորեն հստակ և հիմնավորված որոշում՝ նրանց բնակության և խնամքի կազմակերպման վերաբերյալ: Այդ որոշումը պետք է ընդունվի ոչ թե ծնողական իրավունքների ձևական համադրման, այլ երեխաների շահերի առավել արդյունավետ պաշտպանության տեսանկյունից»:*

19. Պատասխանողը նշում է. *«(...) հաշվի առնելով, որ երեխան հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի և գտնվում է Հայաստանի Հանրապետության իրավազորության ներքո, հետևաբար նրա իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերը ենթակա են կարգավորման և լուծման Հայաստանի Հանրապետության իրավակարգավորումների շրջանակներում»:*

20. Անդրադառնալով վիճարկվող դրույթի իրավական նշանակությանը՝ Պատասխանողը նշում է. *«Թեև ընդդատության ընդհանուր կանոնի համաձայն վեճը ենթակա է քննության պատասխանողի գտնվելու (բնակության) վայրի դատարանում, սակայն փվյալ դեպքում առկա են այնպիսի իրավական և փաստական հանգամանքներ, որոնք հիմնավորում են նաև Հայաստանի Հանրապետության*

դատարանների իրավասությունը: Մասնավորապես, հաշվի առնելով, որ երեխան ՀՀ քաղաքացի է և նրա իրավունքների պաշտպանության հարցը ուղղակիորեն առնչվում է նրա լավագույն շահի ապահովմանը, վեճը կարող է քննվել նաև Հայաստանի Հանրապետության դատարանում, ինչի մասին է վկայում նաև Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/33825/02/20 որոշմամբ ձևավորված նախադեպը»:

21. Պատասխանողը մատնանշում է, որ *«Երեխայի բնակության վայրի որոշման գործերով ընդդատության և կիրառելի իրավունքի հարցերը ենթակա են լուծման գործող իրավակարգավորման համակարգային և նպատակային մեկնաբանության միջոցով՝ հաշվի առնելով ընտանեկան իրավահարաբերությունների առանձնահատկությունները և երեխայի լավագույն շահի գերակայության սկզբունքը»:*

22. Ըստ Պատասխանողի՝ *«(…) առկա հնարավոր անորոշությունը հաղթահարելի է Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/33825/02/20 որոշմամբ, որը կրում է նախադեպային բնույթ և ապահովում է իրավունքի միատեսակ կիրառություն: Վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշմամբ հստակեցվել է համապատասխան նորմերի կիրառման շրջանակը: Հետևաբար, փվյալ պարագայում խոսք չի կարող լինել օրենսդրական բացի կամ դրա հիմքով սահմանադրականության վերաբերյալ հիմնավոր կասկածի մասին, քանի որ իրավական անորոշությունը հաղթահարվել է դատական մեկնաբանությամբ և նախադեպային իրավունքի ձևավորմամբ»:*

23. Պատասխանողը խնդրում է. *«Արմինե Տեր-Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21 և 22-րդ հոդվածների, ինչպես նաև 3-րդ գլխի՝ հաշվի առնելով նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ընդունել որոշում վիճարկվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին»:*

Դ. Սահմանադրական վեճի քննության շրջանակը

24. Սույն գործով սահմանադրաիրավական վեճը հանգում է Օրենսգրքի 22-րդ հոդվածի սահմանադրականության խնդրին այնքանով, որքանով *երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ հայցով հայցվորի ընտրությամբ տարածքային (այլընտրանքային) ընդդատության կանոն նախատեսված չէ:*

Ե. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

25. Սույն դիմումով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք Օրենսգրքի 22-րդ հոդվածն այնքանով, որքանով չի նախատեսում երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ հայցով հայցվորի ընտրությամբ տարածքային (այլընտրանքային) ընդդատության կանոն, համապատասխանում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքին՝ հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանող Սահմանադրության 75-րդ հոդվածի հետ համակցությամբ՝ Սահմանադրության 37-րդ հոդվածով երաշխավորված՝ երեխայի իրավունքների ապահովման համատեքստում:

Զ. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

26. Սահմանադրության՝ **«Ծնողների իրավունքները և պարտականությունները»** վերտառությամբ 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին»:

27. Սահմանադրության՝ **«Երեխայի իրավունքները»** վերտառությամբ 37-րդ հոդվածի համաձայն՝

«1. Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում:

2. Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:

3. Յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին: Մանրամասները սահմանվում են օրենքով:

4. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետության հոգածության և պաշտպանության ներքո են»:

28. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության հիշատակված հոդվածներում արտացոլված իրավակարգավորումները փոխկապակցված են և կազմում են ընտանեկան հարաբերությունների կարգավորման միասնական սահմանադրաիրավական հիմքը՝ ուղղված երեխաների իրավունքների պաշտպանությանը, նրանց կենսական շահերի երաշխավորմանն ու ընտանեկան հարաբերությունների սահմանադրական արժևորմանը:

29. Սահմանադրությունը, ամրագրելով ծնողների իրավունքներն ու պարտականությունները, առաջնորդվում է այն հայեցակարգային մոտեցմամբ, որ *ընտանիքն*

անձի զարգացման բնական և առաջնային միջավայրն է: Սահմանադիրն ընտանիքը դիտարկում է որպես սերունդների շարունակականության ապահովման հիմնարար կառուցակարգ, որտեղ ընտանիքի անդամների փոխադարձ հոգատարությունը հանդիսանում է հասարակական համերաշխության առանցքային տարր:

30. Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողական իրավունքները չունեն բացառապես մասնավոր-իրավական բնույթ: Ծնողների իրավունքը՝ հոգ տանել երեխայի դաստիարակության և զարգացման մասին, միաժամանակ նրանց սահմանադրական պարտականությունն է: Այդպիսով, ծնողավարումը դիտարկվում է որպես հանրային նշանակություն ունեցող սոցիալական գործառույթ, որի լիարժեք իրականացումն ուղղված է երեխայի լավագույն շահի և, համապատասխանաբար, հանրային շահի ապահովմանը:

31. Վերոնշյալի համատեքստում Սահմանադրական դատարանը փաստում է, որ՝

1) երեխայի առողջության, դաստիարակության, կրթության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման երաշխավորման վերաբերյալ սահմանադրաիրավական հրամայականը վկայում է, որ Սահմանադիրը երեխայի իրավունքների սահմանադրաիրավական հայեցակարգը դիտարկում է դրա ամբողջականության մեջ.

2) պետությունը ճանաչում և պաշտպանում է ընտանեկան հարաբերությունների ինքնավարությունը՝ միաժամանակ սահմանելով երեխայի՝ որպես այդ հարաբերությունների շրջանակում առավել խոցելի կողմի պաշտպանության սահմանադրական երաշխիքները:

32. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտանեկան իրավահարաբերությունների կարգավորումները բնութագրվում են ընդգծված զգուշավորությամբ՝ նպատակ ունենալով ապահովելու, մի կողմից՝ ընտանիքի ինքնավարության և, մյուս կողմից՝ պետության՝ երեխայի իրավունքները պաշտպանելու պարտականության միջև սահմանադրական հավասարակշռությունը: Նշվածը ենթադրում է, որ պետության միջամտությունն ընտանեկան հարաբերություններին տեղին է միայն բացառիկ հանգամանքների առկայության պարագայում. օրինակ՝ երբ վտանգված է երեխայի կենսական շահերի ապահովումը, կամ ընտանեկան ինքնավարությունը գործադրվում է հակառակ երեխայի լավագույն շահերի:

33. Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է այն հիմնարար սկզբունքը, համաձայն որի՝ *երեխայի շահերը պետք է լինեն* ***առաջնային նկատառում*** երեխայի կարգավիճակին առնչվող ցանկացած հարցի լուծման ժամանակ՝ արժանանալով առաջնահերթ ուշադրության: Տվյալ սկզբունքը համակարգային նշանակություն ունի ընտանեկան հարաբերությունների կարգավորման ողջ համալիրի համար և պետք է հաշվի առնվի ինչպես ծնողական իրավունքների իրականացման, այնպես էլ հանրային իշխանության մարմինների և, մասնավորապես՝ դատարանների կողմից համապատասխան դատական ակտերի կայացման

գործընթացում, ինչպես նաև օրենսդրի կողմից՝ համապատասխան իրավահարաբերությունների օրենսդրական կառուցակարգման ժամանակ: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ երեխայի իրավունքների ու կենսական շահերի ինարավոր շահարկում ենթադրող ցանկացած ընթացակարգ կամ իրավական կարգավորում պետք է գնահատվի առաջին հերթին երեխայի լավագույն շահերին համապատասխանության տեսանկյունից:

34. Սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի դեկտեմբերի 20-ի ՍԴՈ-1333 որոշմամբ շեշտել է. *«(…) ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասը հանրային իշխանության վրա դնում է հստակ պարտականություն՝ առաջնահերթ ուշադրության արժանացնել երեխայի շահերին՝ նրան վերաբերող հարցերում: Հետևաբար, սահմանադրի նպատակն է երեխային վերաբերող հարցերում տարբեր շահերի առկայության դեպքում առաջնահերթ պաշտպանել երեխայի շահերը, այնուհետև՝ առկա մյուս շահերը, իսկ այդ շահերի հակասության դեպքում հանրային իշխանությունը պարտավոր է պաշտպանել երեխայի շահերը:*

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 37-րդ հոդվածի, մասնավորապես՝ 1-ին և 2-րդ մասերի դրույթները գործում են անմիջականորեն, և դատական պրակտիկան պարտավոր է առաջնորդվել այդ պահանջով»:

35. Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ 2010 թվականի հոկտեմբերի 5-ի ՍԴՈ-919 որոշմամբ արձանագրել է. «*(…) Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված՝ «երեխաների շահեր» հասկացությանը և դրա բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը: Ընդ որում, նշված հասկացությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից:*

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում «ընդ որում» բառակապակցությունից հետո թվարկված պայմանները պարտավորեցնում են դատարաններին երեխայի շահը գնահատելիս հիմք ընդունել այդ պայմանները, ինչպես նաև, առաջնորդվելով իրենց հայեցողական լիազորությամբ, հիմք ընդունել նաև այլ պայմաններ, եթե դատարանի գնահատմամբ այդպիսիք կան»:

36. Անդրադառնալով **«երեխայի լավագույն շահ»** ձևակերպման բովանդակությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ երեխայի լավագույն շահը չի կարող որոշվել ընդհանուր բնույթի իրավական դատողությունների միջոցով և կախված է յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքներից՝ հիմք ընդունելով երեխայի շահերի առաջնայնությունը (Schneider v. Germany, Application no. 17080/07, 15.09.2011, FINAL 15.12.2011, §100):

37. Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը պահանջում է, որ ներպետական իշխանություններն արդարացի հավասարակշռություն հաստատեն երեխայի և ծնողների շահերի միջև՝ սույն գործընթացում **հատուկ ուշադրություն դարձնելով երեխայի լավագույն շահերին, որոնք, կախված իրենց բնույթից և լրջությունից, կարող են գերակշռել ծնողների շահերը** (Rytchenko v. Russia, Application no. 22266/04, 20.01.2011, FINAL 20.04.2011, §39):

38. Վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ **պետության սահմանադրական պարտականությունը՝ երաշխավորելու երեխայի իրավունքները, ենթադրում է անհրաժեշտ նյութաիրավական և դատավարական նախադրյալների ստեղծում: Դա պահանջում է *«երեխայի լավագույն շահերի» առաջնահերթության սկզբունքի անվերապահ կիրառում հանրային իշխանության բոլոր ոլորտներում, ներառյալ՝ օրենսդրական այնպիսի լուծումների նախատեսում, որոնք կապահովեն երեխայի իրավունքներին առնչվող վեճերի արդյունավետ քննություն*:**

39. Սահմանադրության՝ ***«Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը»*** վերտառությամբ 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:*

40. Ժամանակակից իրավական պետության իրավակարգում արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության **առանցքային երաշխիքն** է և իրավունքի գերակայության սկզբունքի **ինստիտուցիոնալ գործիքակազմը**: Այս առումով սույն իրավունքը բնութագրվում է որպես սահմանադրական իրավակարգի նորմատիվ կենսունակությունն ապահովող առանցքային սահմանադրաիրավական արժեք:

41. Արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է նաև գործուն օրենսդրական երաշխիքների առկայություն, որոնք կապահովեն արդարադատության իրական մատչելիությունը: Դատական պաշտպանության արդյունավետությունը պայմանավորված է այնպիսի կազմակերպական կառուցակարգերով, որոնց բացակայության պարագայում Սահմանադրությամբ հռչակված իրավունքները կլինեն պատրանքային՝ զրկված իրացման իրական հնարավորությունից:

42. Սահմանադրական դատարանը գտնում է, որ անձի սահմանադրական իրավունքների համակարգում արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի յուրահատկությունը, ի թիվս այլնի, արտահայտվում է նաև նրանով, որ, այն ինքնուրույն սահմանադրական իրավունք հանդիսանալով հանդերձ, կամրջում է արդար դատաքննության իրավունքն անձի սահմանադրական այլ

իրավունքների դատական պաշտպանության հետ: Հետևաբար՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի անխաթար իրացումը կենսական նշանակություն ունի դրա իրացման միջոցով այլ իրավունքների պաշտպանության երաշխավորման տեսանկյունից:

43. Միևնույն ժամանակ Սահմանադրական դատարանը գտնում է, որ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը կենսագործվում է օրենսդրորեն սահմանված կազմակերպաիրավական ինստիտուտների միջոցով, որոնց շարքում առանցքային են դատական իրավասության սահմանների որոշակիացմանն ուղղված ընթացակարգերը: Դատական իրավասությունը դատավարական իրավունքում դրսևորվում է գործերի ընդդատության ինստիտուտի միջոցով, որն ուղղված է ինչպես դատարանների գործունեության համակարգմանը, այնպես էլ արդարադատության մատչելիության ապահովմանը:

44. Այսպես՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման կառուցակարգային համակարգի առաջնային տարրերից է ընդդատության ինստիտուտը: Վերջինս ուղղակիորեն որոշակիացնում է դատարանի իրավասության շրջանակները՝ համակարգելով արդարադատության իրականացման գործընթացը: Խնդրո առարկա համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տարածքային ընդդատությունը կազմող իրավակարգավորումները բնորոշում են դատարանների միջև գործերի քննության իրավասության տեղաբաշխումը՝ ըստ տարածքային սկզբունքի:

45. Արդարադատության հանրային շահերի տեսանկյունից տարածքային ընդդատության կանոններն ապահովում են արդարադատության իրականացման համակարգվածությունն ու կանխատեսելիությունը, կանխարգելում դատարանի կամայական ընտրությունը՝ ապահովելով դատարանների գործունեության կազմակերպվածությունը, որոնք իրենց համակարգային միասնությամբ խթանում են արդարադատության արդյունավետ իրականացումը:

46. Սահմանադրական դատարանը փաստում է, որ տարածքային ընդդատության կանոններն ապահովում են դատավարության կայունությունն ու կանխատեսելիությունը: Դրանք կոչված են բացառելու դատական իրավասության անորոշությունը, որը կարող է հանգեցնել արդարադատության համակարգային խաթարման և անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից գործի քննության իրավունքի ձախողմանը:

47. Օրենսգրքի՝ **«Քաղաքացիական գործերի ընդհանուր տարածքային ընդդատությունը»** վերտառությամբ 21-րդ հոդվածը սահմանում է տարածքային ընդդատության ընդհանուր կանոնը, այն է՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ

բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

48. Վերոնշյալը Սահմանադրական դատարանին թույլ է տալիս փաստել, որ քաղաքացիական դատավարությունում ընդհանուր տարածքային ընդդատության կանոնը ոչ միայն դատարանների իրավասության բաշխման իրավական մեխանիզմ է, այլև դատավարության կողմերի՝ հայցվորի և պատասխանողի շահերի հավասարակշռման դատավարական գործիք, որի միջոցով օրենսդիրը ձևավորում է այնպիսի դատավարական կառուցակարգ, որը, *մի կողմից*՝ չի խոչընդոտի հայցվորի՝ իր խախտված իրավունքների դատական պաշտպանության իրացմանը, *մյուս կողմից*՝ պատասխանողի համար չի առաջացնի անհամաչափ բեռ:

49. Հայցվորի համար ընդհանուր տարածքային ընդդատության կանոնը դատական պաշտպանության իրավունքի իրացման կազմակերպական նախադրյալ է՝ նկատի ունենալով, որ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է ոչ թե դատարան դիմելու ձևական հնարավորություն, այլ այդ իրավունքի իրական և արդյունավետ իրականացում:

50. Սահմանադրական դատարանը գտնում է, որ ընդհանուր տարածքային ընդդատության կանոնի հիմնական տրամաբանությունը հիմնված է պատասխանողի շահերի պաշտպանության սկզբունքի վրա, որը բխում է այն դատավարական մոտեցումից, որ անձը, որի նկատմամբ ներկայացվում է համապատասխան հայցը, չպետք է ենթարկվի անհամաչափ դատավարական ծանրաբեռնվածության՝ կապված իր իրավունքները տարածքային հեռավորության պատճառով դժվարամատչելի դատարանում պաշտպանելու անհրաժեշտության հետ: Այլ կերպ ասած՝ դատավարական կառուցակարգը պետք է բացառի այնպիսի իրավիճակները, երբ հայցվորը կարող է կամայականորեն ընտրել պատասխանողի համար աշխարհագրորեն առավել դժվարամատչելի դատարան՝ դրանով իսկ ստեղծելով դատավարական ճնշման գործիք:

51. Ըստ այդմ՝ ընդհանուր տարածքային ընդդատության կանոնի հիմքում դրված է շահերի հավասարակշռման սկզբունքը, ըստ որի՝ հայցը հարուցվում է պատասխանողի գտնվելու վայրի դատարանում, քանի որ հայցադիմումի ներկայացումն ինքնին չի կանխորոշում պատասխանողի կողմից իրավախախտում թույլ տալու փաստը կամ հայցապահանջի հիմնավորվածությունը:

52. Հետևաբար՝ պատասխանողի համար հայցվորի բնակության (գտնվելու) վայրի դատարան ներկայանալու դատավարական պարտականություն սահմանելը պետք է լինի հիմնավորված և չհանգեցնի պատասխանողի իրավունքների անհամաչափ սահմանափակման: Հաշվի առնելով, որ դատական պաշտպանության գործընթացը նախաձեռնվում է հայցվորի կողմից՝ սեփական իրավունքների կամ

օրինական շահերի պաշտպանության նպատակով, ապա վերջինս էլ պետք է կրի դրանից բխող դատավարական բեռը:

53. Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ պատասխանողի շահերի պաշտպանության տեսանկյունից ընդհանուր տարածքային ընդդատության կանոնը՝

1) ապահովում է պատասխանողի համար դատավարությանը մասնակցելու իրական հնարավորություն: Եթե գործը քննվում է նրա հաշվառման (գտնվելու) կամ բնակության վայրի դատարանում, ապա վերջինս կարող է առավել հեշտությամբ ներկայանալ դատական նիստերին և օգտվել իր դատավարական իրավունքներից,

2) հանդիսանում է դատավարական հավասարակշռության երաշխիք՝ թույլ չտալով հայցվորին իր նախաձեռնությամբ որոշել դատավարության վայրը:

54. ***Սահմանադրական դատարանը փաստում է, որ քաղաքացիական դատավարությունում ընդհանուր տարածքային ընդդատությունն առանցքային դատավարական ինստիտուտ է, որի միջոցով ապահովվում է հայցվորի և պատասխանողի շահերի արդարացի և հավասարակշռված համադրումը՝ միաժամանակ ծառայելով երկու նպատակների, այն է՝***

1) ապահովել հայցվորի կողմից դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը,

2) պաշտպանել պատասխանողին դատավարական անհամաչափ ծանրաբեռնվածությունից և հնարավոր չարաշահումներից:

55. ***Տարածքային ընդդատության ինստիտուտը ոչ միայն կազմակերպական կանոն է, այլև արդարադատության պատշաճ իրականացման հիմնարար երաշխիք, որի կիրառումը պետք է համահունչ լինի սահմանադրական արժեքների առաջնահերթությանը:***

56. Թեև քաղաքացիական գործերի ընդհանուր տարածքային ընդդատության կանոնն ըստ էության դատավարական օրինաչափություն է, այնուամենայնիվ, առանձին տեսակի իրավահարաբերությունների առանձնահատկություններից բխող քաղաքացիական գործերի պատշաճ քննության անհրաժեշտությունից ելնելով՝ օրենսդիրը սահմանել է նաև հայցվորի ընտրությամբ տարածքային (այլընտրանքային) ընդդատության կանոններ, որոնք նախատեսում են ընդդատության որոշակիացման հատուկ եղանակներ որոշակի բովանդակություն ունեցող հայցերի համար:

57. Այդ առումով **ընդդատության խնդրո առարկա հատուկ կանոնները պայմանավորված են դրանք բնորոշող նյութահիրավական հարաբերությունների և իրավական պաշտպանության ենթակա շահերի յուրահատկություններով, ինչպես նաև այդ գործերի քննության արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ դատավարական կառուցակարգերի ամրագրման նպատակահարմարությամբ:**

58. Փաստորեն օրենսդիրն այլընտրանքային ընդդատության կանոնի սահմանմամբ հայցվորին իրավունք է վերապահում՝

1) պատասխանողի հաշվառման (բնակության, գտնվելու) վայրի դատարանին զուգահեռ՝ **իբրև այլընտրանք,** հայց ներկայացնել օրենքով սահմանված այլ դատարան,

2) ընտրել հնարավոր դատարանը՝ սպառիչ ցանկով սահմանելով կոնկրետ դեպքերի շրջանակը, ինչը ենթադրում է, որ ընդդատության կանոնում հաշվի են առնվում դատական պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հատուկ հանգամանքներ:

59. Օրենսդրական կարգավորումների համակողմանի ուսումնասիրությունը թույլ է տալիս Սահմանադրական դատարանին փաստել, որ **հատուկ հանգամանքով պայմանավորված՝** տեղակայման տեսանկյունից առկա է իրավունքների պաշտպանության համար առավել մատչելի դատարան, քան պատասխանողի հաշվառման (բնակության, գտնվելու) վայրի դատարանն է: Այդպիսի դեպքերում օրենսդիրը հատուկ արտոնյալ պայմաններ է ստեղծում հայցվորների համար այն գործերով, որոնք շոշափում են **քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների առավել էական շահերը,** և որոնք հատուկ հանգամանքների առկայության պատճառով **առաջնակարգ պաշտպանության կարիք ունեն:**

60. Այլընտրանքային ընդդատության կանոնների սահմանման՝ օրենսդրի դիրքորոշումը պայմանավորված է արդարադատության շահերի ապահովման նպատակով և չի կարող մեկնաբանվել որպես կողմերի հավասարության կամ մրցակցության սկզբունքի զիջում, այլ ընդհակառակը՝ ներկայանում է որպես տվյալ սկզբունքների ապահովման երաշխիք:

61. Մասնավորապես, Օրենսգրքի՝ **«Քաղաքացիական գործերի տարածքային ընդդատությունը հայցվորի ընտրությամբ»** վերտառությամբ 22-րդ հոդվածը թվարկում է քաղաքացիական գործերը, որոնց պարագայում հնարավոր են ընդհանուր տարածքային ընդդատության հիմնական կանոնից շեղումներ, և որոնք թույլ են տալիս հայցը ներկայացնել հայցվորի ընտրությամբ համապատասխան դատարան:

62. Վերոնշյալ իրավակարգավորումներով փաստորեն նախատեսվում են ընդհանուր տարածքային ընդդատության կանոնից թույլատրելի բացառություններ, որոնցից յուրաքանչյուրը թելադրված է իրավական պաշտպանության ենթակա որևէ օբյեկտիվ շահով կամ պայմանավորված է որոշակի փաստական հանգամանքների ամբողջությամբ:

63. Միևնույն ժամանակ հիշատակված կարգավորումները թույլ են տալիս Սահմանադրական դատարանին փաստել, որ օրենսդրի կողմից որոշակիացված այլընտրանքային ընդդատության կանոններն օժտված չեն բացարձակ իմպերատի-

վությամբ. դրանց բովանդակային կառուցվածքն ունի ընդգծված հայեցողական բնույթ՝ ընդհանուր կանոնին զուգահեռ նախատեսելով այլընտրանքային դատավարական ճանապարհ, ինչը վկայում է տվյալ իրավակարգավորումների՝ փաստական հանգամանքների հետ համադրման ճկունության և ըստ անհրաժեշտության գործարկման պայմանի մասին:

64. Վերլուծելով Օրենսգրքի 22-րդ հոդվածի բովանդակությունը՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ նշյալ հոդվածի 4 և 7-րդ մասերով սահմանվում են այլընտրանքային ընդդատության կանոններ **ընտանեկան իրավահարաբերություններից բխող առանձին տեսակի վեճերի համար: Այսպես,** Օրենսգրքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով **ալիմենտ բռնագանձելու** կամ **հայրությունը որոշելու** վերաբերյալ հայցը կարող է ներկայացվել հայցվորի հաշվառման կամ բնակության վայրի առաջին ատյանի դատարան: Նույն հոդվածի 7-րդ մասը թույլատրել է **ամուսնալուծության** վերաբերյալ հայցը ներկայացնել հայցվորի հաշվառման կամ բնակության վայրի առաջին ատյանի դատարան, ի թիվս այլնի, նաև այն դեպքում, ***երբ անչափահաս երեխան գտնվում է հայցվորի մոտ:***

65. Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վերոնշված իրավակարգավորումների հիմքում **երեխայի լավագույն շահի գերակայության սկզբունքն է:** Նման պարագայում ընդհանուր տարածքային ընդդատության կանոնից շեղումը նպատակաուղղված է այնպիսի առանցքային սահմանադրական արժեքի երաշխավորմանը, ինչպիսին **երեխայի շահերի բազմակողմանի պաշտպանությունն է:**

66. Վերոնշյալ մոտեցումներն իրենց սահմանադրաիրավական որոշակիացումն ստացել են առաջին հերթին Սահմանադրությամբ՝ Սահմանադրի կողմից դասվելով իրավական պաշտպանության առավել բարձր մակարդակում և ամրագրվելով *Սահմանադրության՝* ***«Ծնողների իրավունքները և պարտականությունները»*** *վերտառությամբ 36-րդ և* ***«Երեխայի իրավունքները»*** *վերտառությամբ 37-րդ հոդվածներում:*

67. Երեխայի լավագույն շահերի ապահովումն ուղղված է Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ երեխայի իրավունքների արդյունավետ իրականացմանը, ինչպես նաև երեխայի զարգացմանը՝ հաշվի առնելով վերջինիս մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի ու դաստիարակության հնարավորությունը, լիարժեք ընտանիքում ապրելը, ծնողների և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը:

68. Ուստի՝ այն դեպքերում, երբ ընդհանուր տարածքային ընդդատության կանոնի պահպանումը կարող է հանգեցնել վերոնշյալ շահերի կենսագործման պայմանների խաթարմանը կամ վատթարացմանը, օրենսդրի կողմից համապատասխան իրավահարաբերությունները կարգավորող հատուկ կանոնների սահմանումը ոչ

միայն իրավաչափ է, այլ նաև սահմանադրական արժեքների պաշտպանության հրամայականի տեսանկյունից՝ անհրաժեշտ:

69. Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական նորմերի օրենսդրական կառուցակարգումն անհրաժեշտ է այնպիսի շահերի առանձնահատկությունների հաշվառմամբ, որոնք կարող են շահարկվել այդ ընթացակարգերի շրջանակներում: Այն դեպքերում, երբ համապատասխան շահերն ակնհայտորեն հավասարակշռման ենթակա չեն, անհրաժեշտություն է առաջանում առավել զգայուն և խոցելի շահերը ենթարկել հավելյալ իրավական պաշտպանության՝ նաև հատուկ իրավակարգավորումների նախատեսմամբ:

70. Սույն գործի դատավարական նախապատմությունը վկայում է, որ «Հայցադիմումը վերադարձնելու մասին» Դատարանի համապատասխան որոշման հիմքում դրվել է հիշյալ քաղաքացիական գործով պատասխանողի վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում հաշվառման կամ բնակության վայրի մասին համապատասխան տեղեկատվության բացակայությունը:

71. Դատարանն արձանագրել է. *«(…) որպես պատասխանողի բնակության հասցե նշվել է՝ ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Սերո Խանզադյան փող., 2 նրբանցք, փուն 16/1, այնինչ հայցադիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ պատասխանողի բնակության հասցեն Ֆրանսիայի Հանրապետություն, քաղաք Փարիզ, Կրիմեի փող., 75019, հոլ 43 հասցեն է:*

Երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ հայցերով բացառիկ տարածքային կամ հայցվորի ընտրությամբ ընդդատություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ գլխով սահմանված չէ»:

72. Սահմանադրական դատարանը գտնում է, որ այնքանով, որքանով հիշյալ քաղաքացիական գործով պատասխանողը (որը, ընդ որում, ըստ Ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայության տեղեկատվության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի է) Հայաստանի Հանրապետությունում հաշվառված չէ, չունի բնակության վայր, և օրենսդրորեն նախատեսված չեն տարածքային ընդդատության այլընտրանքային կանոններ, գործի քննության հնարավորությունը հանգեցրել է իրավական անելանելիության՝ առաջացնելով անձի արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման կառուցակարգային անհնարինության: Մինչդեռ քննարկման առարկա հանդիսացող ընթացակարգերի շրջանակներում երեխայի բնակության վայրի որոշման հարցը ենթակա էր լուծման:

73. Խնդրո առարկա քաղաքացիական գործով ներկայացվել է երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ հայց: **Նախ՝** սույն հայցն ուղղակիորեն առնչվում է երեխայի լավագույն շահերին և բխում է դրանց պաշտպանության սահմանադրական հրամայականից, **երկրորդ՝** ըստ քաղաքացիական գործում առկա

փաստական տվյալների՝ երեխան ներկայումս գտնվում է հայցվորի մոտ, հանգամանք, որը հավելյալ խթանում է հայցվորի դատավարական կարգավիճակի առանձնահատկությունը:

74. Վերոգրյալի համատեքստում՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ *երեխայի լավագույն շահերի ապահովման առաջնահերթությունից բխող երեխայի բնակության վայրի որոշման վերաբերյալ հայցի քննությունը, ըստ էության, արգելափակվում է ընդդատության հատուկ կանոնների բացակայության հետևանքով*՝ խաթարելով երեխայի լավագույն շահերի պաշտպանությունը և անհնարին դարձնելով վերջինիս արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացումը:

75. Այս առումով Սահմանադրական դատարանը փաստում է, որ ընդհանուր տարածքային ընդդատության կանոնին (ըստ պատասխանողի հաշվառման կամ բնակության վայրի) համապատասխան հայց ներկայացնելու պարագայում երեխայի խնամքի կազմակերպման հետ կապված պարտականությունները կարող են հավելյալ ծանրաբեռնվածություն ստեղծել հայցվորի համար:

76. Սահմանադրական դատարանը գտնում է, որ երեխայի բնակության վայրի որոշման վերաբերյալ հայցով տարածքային ընդդատության այլընտրանքային կանոնների սահմանման անհրաժեշտությունն անառարկելի է՝ պայմանավորված իրավական պաշտպանության առանձնահատկություններով և խնդրո առարկա իրավահարաբերությունների շրջանակներում շոշափվող շահերի զգայունությամբ:

77. Տարածքային ընդդատության այլընտրանքային կանոնների առնչությամբ օրենսդրի տրամաբանությունն ու օրենսդրական քաղաքականության ուղենիշները հաշվի առնելով՝ **Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում իրավակարգավորման՝ Սահմանադրությանն անհամապատասխանությունը պայմանավորվում է երեխայի բնակության վայրի որոշման վերաբերյալ հայցի առնչությամբ տարածքային ընդդատության այլընտրանքային կանոնների բացակայությամբ, որի ուժով սույն սահմանադրաիրավական վեճն անմիջականորեն փոխկապակցվում է Սահմանադրության 75-րդ հոդվածի հետ:**

78. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանադրական իրավունքների կենսագործման արդյունավետ կառուցակարգերի սահմանման կենսական նշանակությունը՝ այդ իրավունքների իրացման լավագույն պայմանների ապահովման տեսանկյունից, բարձրացվել է սահմանադրական մակարդակ՝ ամրագրվելով Սահմանադրության 75-րդ հոդվածում՝ այդպիսով վերածվելով իրավունքների իրացման կազմակերպաիրավական ընթացակարգերի սահմանադրականության չափանիշի:

79. Այսպես՝ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ *հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:*

80. Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված այս սահմանադրաիրավական պատվիրանը վկայում է, որ Սահմանադիրը չի բավարարվել լոկ անձին շնորհելով միայն համապատասխան իրավունքներ և ազատություններ, այլև սահմանադրորեն պարտավորեցրել է օրենսդրին՝ ստեղծելու այնպիսի **կազմակերպական և ընթացակարգային միջավայր**, որի պայմաններում այդ իրավունքները և ազատությունները կարող են **իրապես գործել:**

81. Այս առումով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրի սահմանադրաիրավական առաքելության բովանդակային բնորոշիչներից է ոչ միայն ձևական-իրավական կառուցակարգերի օրենսդրական ամրագրումը, այլև այդ կառուցակարգերի գործնական կիրառելիությունն ու իրավունքների իրական հասանելիության ապահովումը:

82. Իրավունքների կենսագործման և պաշտպանության սահմանադրական նպատակներին համարժեք ընթացակարգերն ու կազմակերպաիրավական միջոցների համակարգը կայուն սահմանադրականության երաշխիք են: Ինչպես այն դեպքերում, երբ սահմանված օրենսդրական կառուցակարգերը չեն բնութագրվում պատշաճ արդյունավետությամբ, այնպես էլ այն դեպքերում, երբ դրանք այս կամ այն պատճառով բացակայում են, խաթարվում են անձի իրավունքների երաշխավորման, սահմանադրական պահանջների օրենսդրական կենսագործման հրամայականները՝ հանգեցնելով նաև իրավական պետության հիմնարար սկզբունքների խախտմանը: Ուստի՝ օրենսդրական քաղաքականությունը մշակելիս ու իրականացնելիս անխուսափելիորեն պետք է առաջնորդվել սահմանադրական հիշյալ նպատակների ապահովման գերակայությամբ. հակառակ պարագայում՝ կթիրախավորվի նաև օրենսդիր գործունեության սահմանադրաիրավական այն բարձր առաքելությունը, որին օրենսդիրը կոչված է:

83. Խնդրո առարկա սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանը կարևորում է ոչ միայն իրավունքների իրացման կառուցակարգերի ֆորմալ սահմանման անհրաժեշտությունը, այլ նաև շեշտադրում է այդ կառուցակարգերի գործադրման հետևանքային ազդեցության նպատակայնությունն ու բովանդակային արդյունավետությունը: Հիմնական իրավունքներն ու ազատություններն իրավական համակարգում իրապես արժևորվում են միայն այն դեպքերում, երբ օրենսդրական մակարդակում դրանք ոչ միայն ճանաչվում են, այլ նաև ստեղծվում են դրանց իրացման **իրական, հասանելի և արդյունավետ կազմակերպաիրավական մեխանիզմներ:**

84. Այսպիսով, Սահմանադրության 75-րդ հոդվածի հիմնական ուղերձն այն է, որ օրենսդրի կողմից իրավունքների իրացման համար սահմանված կառուցակարգերը պետք է հագեցած լինեն այդ իրավունքների իրական և արդյունավետ կենսագործման ընթացակարգային գործիքակազմով: Միայն Սահմանադրության 75-րդ հոդվածում արտացոլված սկզբունքի գերակայությամբ առաջնորդվող իրավակարգավումներն են ի զորու իրապես ապահովել անձի համապատասխան իրավունքների կառուցակարգային իրացումը:

85. Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով սույն սահմանադրա- իրավական վեճին՝ ***Սահմանադրական դատարանը փաստում է, որ երեխայի բնակության վայրի որոշման վերաբերյալ հայցի մասով այլընտրանքային ընդդատության կանոնների բացակայությունը բերում է անձի արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման՝ վտանգելով երեխայի լավագույն շահերի պատշաճ ապահովման սահմանադրաիրավական հրամայականի երաշխավորումը: Հիշատակված իրավակարգավորման պայմաններում հայցվորը, որի մոտ գտնվում է երեխան, հարկադրվում է խնդրո առարկա քաղաքացիաիրավական վեճի քննությունն ու լուծումն ակնկալել ընդհանուր տարածքային ընդդատության կանոնների հաշվառմամբ, ինչն անհարկի անբարենպաստ կարգավիճակի մեջ է դնում վերջինիս և որևէ կերպ չի բխում երեխայի լավագույն շահերից: Այդ առումով օրենսդիրն ընտանեկան հարաբերություններից բխող առանձին հարցերի կապակցությամբ (ալիմենտ բռնագանձելու, հայրությունը որոշելու և որոշ դեպքերում նաև ամուսնալուծության վերաբերյալ հայցերով) սահմանել է այլընտրանքային ընդդատության վերաբերյալ համապատասխան կանոններ:***

86. Հաշվի առնելով խնդրո առարկա իրավահարաբերությունների առանձնահատկությունները և դրանց ընդդատության՝ քաղաքացիադատավարական ինստիտուտի հետ համարժեք համադրման անհրաժեշտությունը՝ **Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոնշյալ իրավակարգավորման կառուցակարգումը պետք է հիմնվի երեխայի լավագույն շահերի երաշխավորման սահմանադրահեն գաղափարի վրա, ինչը ենթադրում է, որ երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ հայցը կարող է ներկայացվել հայցվորի հաշվառման կամ բնակության վայրի առաջին ատյանի դատարան, եթե երեխան գտնվում է հայցվորի մոտ:**

87. Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ Օրենսգրքի 22-րդ հոդվածն այնքանով, որքանով չի նախատեսում երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ հայցի՝ հայցվորի ընտրությամբ տարածքային (այլընտրանքային) ընդդատության կանոն այն դեպքում, երբ երեխան գտնվում է հայցվորի մոտ, հակասում է Սահմանադրության 37-րդ

հոդվածի 2-րդ մասին, 61-րդ հոդվածի 1-ին մասին և Սահմանադրության 75-րդ հոդվածին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 170-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածն այնքանով, որքանով չի նախատեսում երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ հայցի՝ հայցվորի ընտրությամբ տարածքային (այլընտրանքային) ընդդատության կանոն այն դեպքում, երբ երեխան գտնվում է հայցվորի մոտ, ճանաչել Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասին, 61-րդ հոդվածի 1-ին մասին և Սահմանադրության 75-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

6 մայիսի 2026 թվականի
ՍԴՈ-1827

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՍԵՐԺ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 361-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 19 մայիսի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող),
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի (զեկուցող),
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,
Վլադիմիր Վարդանյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Սերժ Յովնանեանի (այսուհետ նաև՝ Դիմող)

ներկայացուցիչ՝ փաստաբան Հասմիկ Օհնիկյանի,

պատասխանողի՝ Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատասխանող)

ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Մարի Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Սերժ Յովնանեանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Ուսումնասիրելով դիմումը, Պատասխանողի գրավոր բացատրությունը, Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի կողմից Դատական դեպարտամենտից պահանջված և ստացված՝ էլեկտրոնային եղանակով վարվող թիվ ԵԴ2/7217/02/25 քաղաքացիական գործի նյութերը, սույն գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթն ու դրա հետ փոխկապակցված օրենսդրական այլ դրույթներ՝ Սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 27-ին, ուժի մեջ մտել՝ 2018 թվականի ապրիլի 9-ին:

2. Օրենսգրքի՝ «Բողոքարկման ենթակա որոշումները» վերտառությամբ 361-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Վերաքննության կարգով բողոքարկման են ենթակա առաջին ատյանի դատարանի հետևյալ որոշումները՝

1) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը.

2) հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը.

3) հայցի ապահովման միջոց կիրառելու, հակընդդեմ ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունները մերժելու, հայցի ապահովումը վերացնելու մասին որոշումները.

4) լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին որոշումը, վճռի վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու կամ ուղղում կատարելը մերժելու մասին որոշումները.

5) գործի վարույթը կասեցնելու, գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումները.

6) հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին որոշումը.

7) գործի վարույթը կարճելու մասին որոշումը.

8) դատական տուգանք կիրառելու մասին որոշումը.

9) օտարերկրյա արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը.

10) ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը.

11) ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը հարկադիր կատարման ներկայացնելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը.

12) օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը.

13) կատարողական վաղեմության ժամկետը վերականգնելու միջնորդության քննության արդյունքով կայացված որոշումը.

14) դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը.

15) այլ որոշումներ՝ օրենքով սահմանված դեպքերում»:

3. Վիճարկվող դրույթը փոփոխության է ենթարկվել 2024 թվականի ապրիլի 11-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-193-Ն օրենքով, որի 33-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու» բառերը փոխարինվել են «որոշումը հարկադիր կատարման ներկայացնելու», իսկ 13-րդ կետի «կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված» բառերը՝ «կատարողական վաղեմության» բառերով:

4. Գործի քննության առիթը Սերժ Յովնանեանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ա. Գործի դատավարական նախապատմությունը

5. Հուրի Քէօշկէրեանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ Սերժ Յովնանեանի՝ պաշտպանական որոշում կիրառելու պահանջի մասին:

6. Դատարանը թիվ ԵԴ2/7217/02/25 քաղաքացիական գործով 2025 թվականի հուլիսի 16-ի որոշմամբ հայցադիմումն ընդունել է վարույթ և դատական ակտի հրապարակման օրը նշանակել է 2025 թվականի հուլիսի 21-ին: Դատարանի կողմից նշված որոշումը 2025 թվականի հուլիսի 17-ին ուղարկվել է Սերժ Յովնանեանի հասցեներով, մինչդեռ նշված առաքանիները վերջինիս չեն հանձնվել և հետ են վերադարձվել Դատարան:

7. 2025 թվականի հուլիսի 21-ին Սերժ Յովնանեանի անունից Դատարան է մուտքագրվել գրություն, որով վերջինս, ի թիվս այլնի, նշել է հետևյալը՝

«(…) Դատարանին հայտնում եմ, որ իմ առնչությամբ հարուցված գործի քննության մասին տեղեկացել եմ պատահմամբ, 19.07.2025թ. (ոչ աշխատանքային օր), երբ տեղեկություններ էի փնտրում կնոջս մեկ այլ՝ ամուսնալուծության, երեխայի բնակության վայրն իր բնակության վայրը սահմանելու և ալիմենտ բռնագանձելու

պահանջներով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում հարուցված գործի մասին:

Դատարանին հայտնում եմ, որ ներկայումս գտնվում եմ Լիբանանի Հանրապետությունում, ուստի քաղաքացիական գործի վերաբերյալ ծանուցված չեմ եղել և հնարավորություն չեմ ունեցել իրացնել [Օրենսգրքի] 234.3 հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ հայցադիմումը ստանալու օրվանից եռօրյա ժամկետում պատասխան ներկայացնելու իրավունքը (այլ կերպ՝ լսված լինելու իրավունք):

(…) Քանի որ ծանոթ չեմ դատարան մուտքագրված հայցադիմումին, չունեմ նաև հայցադիմումում տեղ գտած յուրաքանչյուր պնդմանն առանձին անդրադառնալու օբյեկտիվ հնարավորություն (…)»:

8. Դատարանը, քննելով Հուրի Քէօշկէրեանի հայցն ընդդեմ Սերժ Յովնանեանի՝ պաշտպանական որոշում կիրառելու պահանջի մասին, 2025 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ որոշել է հետևյալը.

«1. Հուրի Գևորգի Քէօշկէրեանի հայցն ընդդեմ Սերժ Սեպուհի Յովնանեանի՝ պաշտպանական որոշում կիրառելու պահանջի մասին, բավարարել:

2. Պատասխանող Սերժ Սեպուհի Յովնանեանի նկատմամբ 8 (ութ) ամիս ժամկետով ձեռնարկել հետևյալ սահմանափակումները.

2.1. Արգելել պատասխանող Սերժ Սեպուհի Յովնանեանին 2000 մետր հեռավորությունից ավելի մոտենալ Հուրի Գևորգի Քէօշկէրեանին և նրա որդուն՝ 10.07.2019թ. ծնված անչափահաս Էդըն Սերժի Յովնանեանին,

2.2. Արգելել Սերժ Սեպուհի Յովնանեանին այցելել Երևան քաղաքի Գ. Հովսեփյան 56/7 շենքի թիվ 21 բնակարան:

2.3. Արգելել Սերժ Յովնանեանին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել Հուրի Գևորգի Քէօշկէրեանի և 10.07.2019թ. ծնված անչափահաս Էդըն Սերժի Յովնանեանի հետ:

3. Սերժ Սեպուհի Յովնանեանից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրք:

4. Որոշման պատճենները տրամադրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանությանը, Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը և խնամակալության և հոգաբարձության մարմին:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման»:

9. Դատարանի 2025 թվականի հուլիսի 21-ի «Պաշտպանական միջոց կիրառելու մասին» որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Սերժ Յովնանեանը՝ ի թիվս այլնի, նշելով հետևյալը. «(…) Սերժ Սեպուհի Յովնանեանը հայցի հարուցման պահին գտնվել է Լիբանանի Հանրապետությունում և սույն քաղաքացիական գործի մասին տեղեկացել է պատահմամբ այն ժամանակ, երբ

հաջորդ աշխատանքային օրը՝ 21.07.2025թ. սահմանված էր որպես դատական ակտի հրապարակման օր /գործի նյութերում չի կարող լինել քաղաքացիական գործի մասին [Սերժ Յովնանեանի] կողմից պատշաճ ծանուցված լինելու փաստը հավաստող ապացույց/»:

10. Վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2025 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ Սերժ Յովնանեանի անունից ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել է հետևյալ պատճառաբանությամբ. «*Տվյալ պարագայում բողոքարկվել է Դատարանի՝ 21.07.2025թ. «Պաշտպանական որոշում կիրառելու մասին» դատական ակտը, որը բողոքարկման ենթակա լինելու մասին որևէ դրույթ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերը նշված [Օրենսգրքի 361-րդ] հոդվածով նախատեսված չէ, այսինքն՝ առկա է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու օրենսդրական արգելք»:*

11. Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2025 թվականի օգոստոսի 20-ի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել Սերժ Յովնանեանը՝ ի թիվս այլնի, նշելով հետևյալը.

- «21.07.2025թ. կայացված Պաշտպանական որոշումը, որի դեմ բերվել էր վերաքննիչ բողոք (…) կայացվել էր առանց գործի քննության վերաբերյալ [Սերժ Յովնանեանի] ծանուցումն ապահովելու, առանց պատշաճ դատական պաշտպանության հնարավորություն ընձեռելու (…)»,

- «Այնուամենայնիվ, գործի քննության մասին պատշաճ ծանուցված չլինելու հանգամանքը վերջինիս զրկել է իր իրավունքների արդյունավետ պաշտպանությունից և թույլատրելի ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից»,

- «[Վերաքննիչ դատարանը] հաշվի չի առել այն իրողությունը, որ (…) [վերաքննիչ] բողոքը ներկայացվել է պատասխանողի կողմից, ում նկատմամբ կայացվել է մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները սահմանափակող Պաշտպանական որոշում՝ դրանց հնարավոր խախտումներով»:

12. Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը 2025 թվականի սեպտեմբերի 25-ի որոշմամբ Սերժ Յովնանեանի կողմից Վերաքննիչ դատարանի 2025 թվականի օգոստոսի 20-ի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել է:

Բ. Դիմողի դիրքորոշումները

13. Դիմողը նշում է, որ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերի շրջանակը սահմանող՝ Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասում բացակայում է պաշտպանական միջոց կիրառելու մասին որոշումը, ընդ որում՝ սահմանվող որոշումների ցանկը սպառիչ չէ: Դիմողի դիտարկմամբ՝ Օրենսգրքի 361-

րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի իրավակարգավորումն ուղղակիորեն վկայում է, որ վերաքննության կարգով բողոքարկելիությամբ կարող են օժտված լինել նաև տվյալ դրույթում չհիշատակվող, սակայն օրենքով սահմանված այլ ակտեր ևս:

14. Դիմողը, մեջբերելով Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից թիվ ԵԴ/22976/02/22 քաղաքացիական գործով պաշտպանական որոշման դատական կարգով անբողոքարկելիության վերաբերյալ արտահայտված դիրքորոշումները, գտնում է, որ վիճարկվող դրույթի նման մեկնաբանումը հակասում է Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված արդար դատաքննության իրավունքին, ինչպես նաև «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 8-րդ հոդվածի 7-րդ մասին, ըստ որի՝ պաշտպանական որոշման դիմումին ներկայացվող պահանջները, դրանք քննելու կարգը, դատարանի կողմից ընդունվող ակտերը, դրանք բողոքարկելու կարգը և պաշտպանական որոշման դադարման հիմքերը նախատեսվում են Օրենսգրքով:

15. Դիմողն ընդգծում է, որ պաշտպանական որոշման բողոքարկման կարգի՝ քաղաքացիադատավարական օրենսդրությամբ սահմանելու պահանջի՝ Օրենքի վերոնշյալ դրույթում ամրագրված լինելը փաստում է, որ օրենսդիրը պաշտպանական որոշումը համարել է բողոքարկելի դատական ակտ:

16. Մասնավորապես՝ Դիմողը նշում է. «(…) Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասը չունի ուղղակի նշում պաշտպանական որոշումը վերաքննության կարգով բողոքարկելի դատական ակտ լինելու մասին, այնուամենայնիվ, այնքանով, որքանով նման հնարավորությունը նախատեսված է Օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասով, իսկ Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը սահմանում է այլ օրենքներով նախատեսված որոշումների բողոքարկման հնարավորություն, յուրաքանչյուր ոք իրավունք ունի բողոք ներկայացնել իր իրավունքները սահմանափակող պաշտպանական որոշման դեմ առնվազն վերաքննիչ բողոք ներկայացնելու **ընդհանուր կարգի և ժամկետների վկայակոչմամբ»:**

17. Բացի այդ, Դիմողն ընդգծում է, որ պաշտպանական միջոցներից երկուսը՝ նախազգուշացում կիրառելու մասին որոշումը և անհետաձգելի միջամտության որոշումը, ի տարբերություն պաշտպանական որոշման, բողոքարկելի են, մինչդեռ պաշտպանական որոշման իրավական հետևանքներն առավել տևական և կայուն են: Մասնավորապես՝ Դիմողը նշում է, որ «(…) առավել մեղմ հետևանքներ առաջացնող պաշտպանության երկու որոշումների բողոքարկելի լինելը, իսկ երրորդի՝ պաշտպանական միջոցի ոչ բողոքարկելի լինելը, առնվազն չի կարող դիտվել որպես նպատակ, որին ձգտել է օրենսդիրը խնդիրը կարգավորելիս: (…) Նման օրենսդրական բացը կարող է առաջացնել բացառապես մեկ, այն է՝ պաշտպանական

որոշումների բողոքարկումը Օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով իրականացնելու իրավական հետևանք:

Հակառակ մեկնաբանությունը, ըստ որի՝ դատարանի ընդունած պաշտպանական որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չէ, ոչ միայն հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, այլև ստեղծում է անդառնալի հետևանքներ»:

18. Ամփոփելով վերոնշյալը՝ Դիմողը եզրահանգում է, որ Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությունը, ըստ որի՝ այն բացառում է առաջին ատյանի դատարանի կողմից կայացված՝ Օրենքով նախատեսված պաշտպանական որոշումների դեմ վերաքննության կարգով բողոք ներկայացնելու հնարավորությունը, հակասում է Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին:

Գ. Պատասխանողի դիրքորոշումները

19. Ըստ Պատասխանողի դիրքորոշման՝ վիճարկվող դրույթը պետք է ենթարկվի լայն մեկնաբանման՝ ներառելով այն բոլոր դեպքերը, երբ այլ օրենքներով կա՛մ ուղղակիորեն նախատեսված է որոշակի դատական ակտի՝ դատական կարգով բողոքարկելիություն, կա՛մ առնվազն հնարավոր է կատարել համապատասխան ենթադրություն՝ դրա բողոքարկելիության մասին՝ հաշվի առնելով համապատասխան ակտի բնույթը և դրանով վրա հասնող իրավական հետևանքները: Պատասխանողն արձանագրում է, որ պաշտպանական որոշումների բողոքարկելիությունն ուղղակիորեն նախատեսված է Օրենքում:

20. Այս համատեքստում Պատասխանողն ընդգծում է, որ «(…) պաշտպանական որոշումները (…) առաջացնում են անձի հիմնարար իրավունքների ոլորտում էական և տևական միջամտություն, չեն կարող դիտարկվել որպես բողոքարկման ոչ ենթակա միջանկյալ դատական ակտեր: Հետևաբար, օրենսդրի իրական կամքը ուղղված է դրանց նկատմամբ անմիջական բողոքարկման հնարավորության ապահովմանը՝ որպես Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով երաշխավորված՝ արդար դատաքննության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտ պայման»:

21. Պատասխանողը նաև նշում է, որ պաշտպանական որոշումների բողոքարկելիության անհրաժեշտությունը բխում է նաև այդ որոշումների առանձնահատկություններից այնքանով, որքանով դրանք ուղղված են ընտանիքում բռնության կանխարգելմանը, բռնության ենթարկված անձանց պաշտպանությանն ու ընտանիքում համերաշխության վերականգնմանը: Ավելին՝ խնդրո առարկա որոշումներն ունեն երկարաժամկետ իրավական հետևանքներ: Այս իմաստով՝ սույն որոշումների անբողոքարկելիությունը կհակասի Սահմանադրության 61 և 63-րդ

հոդվածներին՝ զրկելով անձին իր գործի վերանայման հնարավորությունից և խոչընդոտելով անձի իրավունքների լիարժեք իրացումը:

22. Արդյունքում՝ Պատասխանողը գտնում է, որ իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող դրույթին տրված մեկնաբանությունը չի բխում այդ իրավադրույթի նպատակներից և դրա առնչությամբ առկա՝ օրենսդրի կամքից. «(…) պաշտպանական որոշումները ենթակա են բողոքարկման՝ կիրառելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր դրույթները, ինչն ապահովում է անձի արդար դատաքննության իրավունքը»:

23. Ամփոփելով վերոգրյալը՝ Պատասխանողը եզրակացնում է, որ վիճարկվող դրույթը համապատասխանում է Սահմանադրությանը:

Դ. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

24. Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակում վիճարկվող իրավադրույթի սահմանադրականությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք դատարանի կողմից կայացված պաշտպանական որոշումների վերաքննության կարգով բողոքարկման հնարավորության բացառումը համապատասխանում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ դատական պաշտպանության և դրա բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքին՝ հաշվի առնելով նաև հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգերի և ընթացակարգերի առկայության՝ Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված սահմանադրաիրավական պահանջը:

Ե. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

25. Սահմանադրության՝ «Սահմանադրական կարգի հիմունքները» վերտառությամբ 1-ին գլխի՝ «Ընտանիքի պաշտպանությունը» վերնագրված 16-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են:

26. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 16-րդ հոդվածը լոկ հռչակագրային բնույթ չունի, և այն ուղղված է համապատասխան սոցիալական, իրավական և կազմակերպական մեխանիզմների ստեղծմանը: Մասնավորապես՝ նշված դրույթը սահմանում է պետության դրական

պարտավորությունները՝ ուղղված ընտանիքի, մայրության և մանկության պաշտպանության ապահովմանը: Ուստի՝ օրենսդիրը պետք է նախատեսի այնպիսի իրավակարգավորումներ, որոնք կամրապնդեն «ընտանիք» ինստիտուտը, կապահովեն երեխաների լավագույն շահերի պաշտպանությունը, կերաշխավորեն մայրության սոցիալական և իրավական պաշտպանությունը:

27. Միաժամանակ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ «ընտանիք» ինստիտուտի պաշտպանության սահմանադրական սկզբունքը չի կարող մեկնաբանվել որպես անհատական իրավունքների կամ ազատությունների անհամաչափ սահմանափակման հիմք: Պետության միջամտությունն ընտանեկան կյանքին տեղին է միայն այն դեպքերում, երբ դրա բացակայությունը կարող է վտանգել ընտանիքի անդամների, երեխաների իրավունքներն ու շահերը, ինչպես նաև վերջիններիս անվտանգությունը:

28. Նշված սահմանադրական պարտավորության իրականացման շրջանակում օրենսդիրն Օրենքով նախատեսել է ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման և այդպիսի բռնության ենթարկված անձանց պաշտպանության իրավական կառուցակարգ, որի առանցքային բաղադրիչներից են պաշտպանության միջոցները: Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների տեսակները, որպիսիք են՝

1) նախազգուշացումը.

2) անհետաձգելի միջամտության որոշումը.

3) պաշտպանական որոշումը:

29. Օրենսդրի կողմից սահմանված այդ միջոցները նպատակաուղղված են ապահովելու ընտանեկան հարաբերություններում անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Դրանք դասակարգված են ըստ իրավասահմանափակիչ ազդեցության աստիճանի և կիրառման անհրաժեշտության: Օրենսդրական կարգավորումներից հետևում է, որ յուրաքանչյուր միջոց ունի ինքնուրույն գործառույթ և կիրառման առանձնահատուկ հիմքեր: Այսպես՝ նախազգուշացումը հանդիսանում է նվազագույն միջամտության միջոց, որը կրում է կանխարգելիչ բնույթ և կիրառվում է այն դեպքերում, երբ առկա է բռնության մեկանգամյա դրսևորում, և բացակայում է դրա կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգը: Այն ուղղված է իրավախախտ վարքագծի՝ մասնավորապես բռնության կրկնման կամ շարունակման կանխմանը՝ անձին իրազեկելով հնարավոր իրավական հետևանքների մասին՝ առանց էականորեն սահմանափակելու նրա իրավունքները:

30. Ի տարբերություն նախազգուշացման միջոցի՝ անհետաձգելի միջամտության որոշումը կիրառվում է այն դեպքերում, երբ առկա է բռնության

դրսևորում, ինչպես նաև բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգ, և պահանջվում է ոստիկանության իրավասու ծառայողի կողմից անհապաղ միջամտություն՝ պաշտպանելու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի կյանքն ու առողջությունը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ միջոցը նախատեսում է արդեն կոնկրետ սահմանափակումների կիրառում՝ ուղղված ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի վարքագծի սահմանափակմանը և այդ բռնությանը ենթարկված անձի անվտանգության ապահովմանը:

31. Ինչ վերաբերում է պաշտպանական որոշմանը, ապա այն առավել ինտենսիվ և երկարաժամկետ իրավական ազդեցություն ունեցող պաշտպանության միջոց է, որը կիրառվում է ոչ միայն առկա վտանգը վերացնելու, այլև ընտանեկան և կենցաղային բռնության հետագա դրսևորումները կանխելու, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի կայուն պաշտպանությունն ապահովելու նպատակով:

32. Օրենսդրական կարգավորումներից հետևում է, որ անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների միջև առկա է բովանդակային որոշակի նմանություն՝ կիրառվող սահմանափակումների մասով: Երկու միջոցներն էլ ներառում են բռնություն գործադրած անձի բնակության վայրից հեռացում, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի հետ հաղորդակցման արգելք, տեղաշարժման առումով որոշակի սահմանափակումներ, ինչպես նաև այլ անհրաժեշտ միջոցներ, որոնք ուղղված են ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի անձնական անվտանգության ապահովմանը: Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ նշված միջոցները տարբերվում են իրենց իրավական բնույթով, կիրառման ընթացակարգով և նպատակով: Մասնավորապես՝ անհետաձգելի միջամտության որոշումը կրում է հրատապ, ժամանակավոր և կանխարգելիչ բնույթ, ընդունվում է վարչական կարգով և նպատակ ունի անհապաղ արձագանքել առկա վտանգին: Մինչդեռ պաշտպանական որոշումը կայացվում է դատական կարգով, ունի առավել երկարաժամկետ ազդեցություն և ուղղված է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի իրավունքների կայուն պաշտպանությանը: Բացի այդ, պաշտպանական որոշումը, ի տարբերություն այլ միջոցների, բռնություն գործադրած անձի համար կարող է ներառել ոչ միայն սահմանափակումներ, այլև որոշակի պարտականություններ, օրինակ՝ նյութական պարտավորությունների կատարումը, այն է՝ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածի հետ կիսելու իրենց համատեղ անչափահաս կամ չափահաս անաշխատունակ երեխաների, ինչպես նաև իրենց համատեղ խնամքի տակ գտնվող անձանց խնամքի ծախսերը, ինչը վկայում է այս պաշտպանության միջոցի ավելի ընդգրկուն և համալիր բնույթի մասին:

33. Վերոնշյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտանեկան բռնության կանխարգելման և տուժած անձանց պաշտպանության նպատակով օրենսդրի կողմից ներդրված պաշտպանության միջոցների համակարգը կառուցված է համաչափության սկզբունքի հիման վրա՝ ապահովելով տարբեր աստիճանի միջամտություն՝ կախված վտանգի բնույթից և ինտենսիվությունից, իսկ պաշտպանական որոշումն այդ համակարգում առավել խիստ և երկարաժամկետ իրավական ազդեցություն ունեցող պաշտպանության միջոց է:

34. Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ օրենսդիրը, իրականացնելով Սահմանադրության 16-րդ հոդվածից բխող պարտականությունները, ոչ միայն նախատեսել է ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ոլորտում պաշտպանության միջոցների համակարգ, այլև որոշ դեպքերում ապահովել է դրանց իրավական վերահսկողությունը՝ բողոքարկման կառուցակարգերի նախատեսմամբ:

35. Սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ նախազգուշացումը և անհետաձգելի միջամտության որոշումը հանդիսանում են վարչական ակտեր, որոնք կայացվում են իրավասու մարմնի՝ մասնավորապես ոստիկանության կողմից և անմիջականորեն առնչվում են անձանց իրավունքների սահմանափակմանը: Նկատի ունենալով դրանց նկատմամբ արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման անհրաժեշտությունը՝ օրենսդիրը հստակ նախատեսել է դրանց բողոքարկման հնարավորությունը՝ ինչպես վերադասության կարգով, այնպես էլ դատական կարգով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգերի շրջանակում:

36. Մասնավորապես՝ նախազգուշացման դեպքում օրենսդիրը նախատեսել է մեկամսյա ժամկետում վերադասության կարգով բողոքարկման հնարավորություն, ինչպես նաև դատական բողոքարկման իրավունք՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոններով: Իսկ անհետաձգելի միջամտության որոշման պարագայում օրենսդիրը, հաշվի առնելով տվյալ միջոցի հրատապ և ինտենսիվ բնույթը, նախատեսել է գործի քննության սեղմ ժամկետներ և արագացված ընթացակարգեր, ինչպես նաև ամրագրել է, որ տվյալ որոշման բողոքարկումը չի կասեցնում որոշման կատարումը: Հատկանշական է, որ անհետաձգելի միջամտության որոշման դատական բողոքարկումը կարգավորվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի «Հատուկ վարույթներ» բաժնում: Այդ կարգավորումներից բխում է, որ դատարանը նման գործերով կայացնում է գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ սեղմ ժամկետներում, այն է՝ հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ 48 ժամվա ընթացքում, և այդ ակտը ենթակա է վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկման:

37. Այսպիսով, նախազգուշացման և անհետաձգելի միջամտության միջոցների պարագայում մի կողմից՝ ոստիկանության կողմից կայացված վարչական ակտերը կարող են դառնալ դատական վերահսկողության առարկա, իսկ մյուս կողմից՝ այդ վերահսկողության արդյունքում կայացվող դատական ակտերը ենթակա են վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկման: Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պաշտպանության վերոնշյալ երկու միջոցների պարագայում օրենսդիրը ձևավորել է այնպիսի իրավական կառուցակարգ, որի շրջանակում ապահովվում է ինչպես վարչական ակտերի օրինականության ստուգման մեխանիզմը, այնպես էլ անձանց իրավունքների լիարժեք և բազմաստիճան դատական պաշտպանությունը:

38. Մինչդեռ պաշտպանական որոշման պարագայում օրենսդիրը, Օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսելով բլանկետային իրավակարգավորում, սահմանել է, որ պաշտպանական որոշման վերաբերյալ դիմումների ներկայացման, դրանց քննության, դատական ակտերի կայացման և դրանց բողոքարկման կարգը նախատեսվում է Օրենսգրքով: Այսինքն՝ օրենսդիրը պաշտպանական որոշման հետ կապված դատավարական ընթացակարգի ամբողջական կարգավորումը վերապահել է Օրենսգրքին՝ հաշվի առնելով տվյալ միջոցի բնույթը և դրա կիրառման առանձնահատկությունները:

39. Օրենսգրքի համապատասխան դրույթներից հետևում է, որ պաշտպանական որոշման վերաբերյալ գործերը քննվում են հատուկ հայցային վարույթի կարգով: Այս վարույթը բնութագրվում է արագացված ընթացակարգերով, դատարանի ակտիվ («ex officio») դերակատարությամբ և գործի քննության սեղմ ժամկետներով, ինչն ուղղված է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի իրավունքների արդյունավետ և անհապաղ պաշտպանությանը: Մասնավորապես՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է եռօրյա ժամկետում, իսկ այն քննում և դրա վերաբերյալ որոշում է կայացնում հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելու պահից՝ հնգօրյա ժամկետում՝ առանց դատական նիստ հրավիրելու, միաժամանակ կաշկանդված չլինելով կողմերի ներկայացրած ապացույցներով և օժտված լինելով իր նախաձեռնությամբ գործի փաստական հանգամանքները պարզելու հնարավորությամբ:

40. Տվյալ վարույթի շրջանակում դատարանը հայցադիմումի քննության արդյունքով կայացնում է որոշում, որով կա՛մ բավարարում է հայցը և կիրառում պաշտպանական միջոցներ, կա՛մ մերժում այն, կա՛մ մասնակի է հայցը բավարարում՝ սահմանելով համապատասխան սահմանափակումներ: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բովանդակային առումով տվյալ դատական ակտով դատարանը, ըստ էության, ամբողջական լուծում է տալիս հայցվորի կողմից

բարձրացված պահանջին: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված դատական պրակտիկայից հետևում է, որ օրենսդիրն Օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանել է եզրափակիչ դատական ակտերի տեսակները, որոնց թվում պաշտպանական որոշման վերաբերյալ գործերով կայացվող դատական ակտերն ուղղակիորեն նշված չեն: Փաստորեն, օրենսդիրը, մի կողմից, տվյալ ակտին բովանդակային առումով վերագրել է դատարանի առջև բարձրացված հարցն ըստ էության լուծող եզրափակիչ դատական ակտի բնույթ՝ հաշվի առնելով նաև դրանց առաջացրած իրավական հետևանքները և անձանց իրավունքների վրա դրանց անմիջական ազդեցությունը, իսկ մյուս կողմից՝ այն չի դասակարգել որպես եզրափակիչ դատական ակտ՝ դատավարական կարգավորումների տեսանկյունից: Իսկ Օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվել է, որ միջանկյալ դատական ակտեր են համարվում այն բոլոր որոշումները, որոնք ներառված չեն տվյալ հոդվածի 2-րդ մասով նախատեսված եզրափակիչ դատական ակտերի շրջանակում: Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված դատական պրակտիկայի համաձայն՝ օրենսդրական նման կառուցակարգից բխում է, որ դատական ակտի՝ եզրափակիչ դատական ակտերի ցանկում չընդգրկվելն ինքնին հանգեցնում է նրան, որ այդ դատական ակտը դիտարկվում է որպես միջանկյալ դատական ակտ:

41. Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ վիճարկվող՝ Օրենսգրքի 361-րդ հոդվածով սահմանվում է առաջին ատյանի դատարանի այն որոշումների շրջանակը, որոնք ենթակա են վերաքննության կարգով բողոքարկման: Սակայն նշված հոդվածի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված դատական պրակտիկայից հետևում է, որ պաշտպանական որոշման վերաբերյալ գործերով կայացվող դատական ակտերն այդ ցանկում ներառված չեն որպես բողոքարկման ենթակա դատական ակտեր: Ավելին՝ նույն հոդվածը նախատեսում է, որ բողոքարկման ենթակա կարող են լինել նաև «այլ որոշումներ՝ օրենքով սահմանված դեպքերում», այնուամենայնիվ Օրենսգրքի «Հատուկ վարույթներ» բաժնի 27.1-ին գլխում որևէ լրացուցիչ կամ հատուկ կարգավորում պաշտպանական որոշման վերաբերյալ գործերով կայացվող դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ նախատեսված չէ:

42. Այսպիսով, Օրենսգրքի վերաբերելի կարգավորումների, ինչպես նաև այդ կարգավորումների վերաբերյալ ձևավորված դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը չի նախատեսել հստակ և ուղղակի կարգավորում առավել ինտենսիվ և երկարաժամկետ իրավական ազդեցություն ունեցող պաշտպանության միջոցներից պաշտպանական որոշման բողոքարկման վերաբերյալ՝ ի տարբերություն նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումների: Վերոնշյալից հետևում է, որ թեև օրենսդիրը, Օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասով ձևականորեն

նախատեսելով պաշտպանական որոշման վերաբերյալ գործերով կայացվող դատական ակտերի բողոքարկման կարգի սահմանման հնարավորություն քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ, այդուհանդերձ՝ Օրենսգրքի իրավակարգավորումների շրջանակում նման բողոքարկման հստակ և ուղղակի ընթացակարգ չի նախատեսել: Ավելին՝ Օրենսգրքի 234.4-րդ հոդվածի 3-րդ մասով օրենսդիրը սահմանել է, որ պաշտպանական որոշման վերաբերյալ գործերով հայցադիմումի քննության արդյունքում դատարանի կայացրած դատական ակտերն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման կարգավորումը պայմանավորված է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց անհապաղ պաշտպանության անհրաժեշտությամբ, և այդ առումով խնդրահարույց չէ պաշտպանական որոշման վերաբերյալ գործերով կայացվող դատական ակտերի՝ հրապարակման պահից ուժի մեջ մտնելու կարգավորումը: Սահմանադրական դատարանի գնահատմամբ խնդրահարույց է նման դատական ակտերի բողոքարկման հնարավորություն չնախատեսելը, որպիսի իրավիճակում էլ չի ապահովվում վերադաս դատական ատյանի կողմից դրա օրինականության ստուգման արդյունավետ հնարավորությունը:

43. Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ պաշտպանական որոշման «վերանայման» միակ հնարավորությունը դրսևորվում է դրա վերացման հատուկ կառուցակարգի միջոցով, որը կարող է նախաձեռնվել բռնություն գործադրած անձի դիմումի հիման վրա, այն էլ, եթե ապացուցվում է, որ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ է ձեռնարկում, որոնք ուղղված են ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից պաշտպանական որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելուն: Սակայն այս կառուցակարգը չի ապահովում վերադաս դատական ատյանի կողմից դատական ակտի վերանայման, որպիսի հիմքով և առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատական սխալների վերացման հնարավորություն, ուստի՝ այն չի կարող հանդիսանալ դասական իմաստով դատական ակտի բողոքարկման մեխանիզմ: Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը տվյալ ինստիտուտի շրջանակում սահմանել է դատարանի կողմից կիրառվող սահմանափակումների ժամկետայնության սկզբունքը՝ նախատեսելով, որ պաշտպանական որոշումը գործում է օրենքով սահմանված որոշակի ժամկետով:

44. Այսպիսով, վերոգրյալ իրավակարգավորումներից հետևում է, որ օրենսդիրը ձևավորել է տարբեր մոտեցումներ պաշտպանության տարբեր միջոցների բողոքարկման հարցում: Մասնավորապես՝ մի կողմից՝ նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումների պարագայում նախատեսվել է ինչպես վարչական, այնպես էլ դատական բողոքարկման հստակ և աստիճանակարգված

համակարգ, որի շրջանակում ոստիկանության կողմից կայացված ակտերը կարող են դառնալ դատական վերահսկողության առարկա, իսկ դրանց վերաբերյալ կայացված դատական ակտերը՝ վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկման և քննարկման ենթակա, մյուս կողմից՝ պաշտպանական որոշման պարագայում, թեև այն հանդիսանում է առավել ինտենսիվ և երկարաժամկետ իրավական ազդեցություն ունեցող պաշտպանության միջոց և կայացվում է անմիջականորեն դատարանի կողմից, օրենսդիրը դրա բողոքարկման որևէ դատավարական կառուցակարգ չի նախատեսել: Այս համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պաշտպանական որոշման դեպքում իրավական պաշտպանության հնարավորությունները փաստացի սահմանափակվում են երկու տարբերակով՝ կա՛մ օրենքով նախատեսված կոնկրետ դեպքում դիմել դրա վերացման պահանջով, կա՛մ սպասել դատարանի կողմից սահմանված ժամկետի լրանալուն, որի ավարտով որոշումը կկորցնի իր իրավական ուժը:

45. Բացի այդ, Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ պաշտպանական որոշումների վերաքննության կարգով բողոքարկման հնարավորության հարցի առնչությամբ առկա է Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորած իրավակիրառ պրակտիկա: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը թիվ ԵԴ/22976/02/22 քաղաքացիական գործով 2023 թվականի նոյեմբերի 1-ի որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ Օրենքով նախատեսված պաշտպանական որոշումը գործին մասնակցող անձինք վերաքննության կարգով բողոքարկելու իրավունք չունեն, և պատճառաբանել է, որ «(…) օրենսդիրը գործին մասնակցող անձանց վերապահել է առաջին ատյանի դատարանի դատական ակտերի վերաքննության կարգով վերանայման իրավունք՝ պայմանով, որ այդ իրավունքը նախատեսված լինի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Տվյալ դեպքում օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասում թվարկելով առաջին ատյանի դատարանի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերը, միևնույն ժամանակ չի սահմանափակել դրանց շրջանակը՝ նշելով, որ վերաքննության կարգով կարող են բողոքարկվել նաև այլ որոշումներ՝ պայմանով, որ բողոքարկումը նախատեսված լինի օրենքով:

(…) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով, այնպես էլ այլ օրենքով «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանական որոշման բողոքարկում նախատեսված չէ»:

46. Ավելին՝ ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 2026 թվականի մարտի 13-ի ՍԴԴ-10 գրության՝ Վերաքննիչ

քաղաքացիական դատարանի նախագահին իր՝ 2026 թվականի ապրիլի 14-ի ԴԴ-2Ա-Ե-6874/26 գրությամբ հայտնել է, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի՝ թիվ ԵԴ/22976/02/22 քաղաքացիական գործով 2023 թվականի նոյեմբերի 1-ի որոշման կայացումից հետո դատական պրակտիկան ստացել է միասնական և հետևողական բնույթ, և ուսումնասիրված բոլոր համապատասխան գործերով վերաքննիչ բողոքների ընդունումը մերժվել է այն հիմքով, որ պաշտպանական որոշումները վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չեն՝ անկախ բողոքում բարձրացված հիմնավորումներից, այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքի խախտման վերաբերյալ:

47. Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 2026 թվականի ապրիլի 17-ի ՍԴԴ-20 գրությանն առ այն, թե «(…) արդյո՞ք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.1 գլխով նախատեսված՝ պաշտպանական որոշումների վերաքննության կարգով բողոքարկման հնարավորության հարցի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 2023 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԴ/22976/02/22 որոշումից հետո ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից արտահայտվել է այդ որոշմամբ արտահայտված դիրքորոշումից տարբերվող դիրքորոշում, մասնավորապես այն դեպքերի համար, երբ դատավարության մասնակիցները վերաքննիչ բողոքում բարձրացրել են առաջին ատյանի դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ թույլ տալու հանգամանքը», Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահն իր 2026 թվականի ապրիլի 23-ի թիվ ՎԴ-1 Ե-6452 պատասխան գրությամբ նշել է, որ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.1-ին գլխով նախատեսված պաշտպանական որոշումների վերաքննության կարգով բողոքարկման հնարավորության հարցի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը թիվ ԵԴ/22976/02/22 քաղաքացիական գործով 01.11.2023 թվականին կայացված որոշմամբ արտահայտված դիրքորոշումից տարբերվող այլ դիրքորոշում չի հայտնել»:

48. Ելնելով վերոնշյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող դրույթով բարձրացված հարցի վերաբերյալ իրավակիրառ պրակտիկան ձևավորել է այն մոտեցումը, համաձայն որի՝ պաշտպանական որոշման վերաբերյալ առաջին ատյանի դատարանի դատական ակտերը, որոնք միջանկյալ դատական ակտեր են, չեն հանդիսանում վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտեր:

49. Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանը, ուսումնասիրելով Օրենսգրքի 234.3-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումները, արձանագրում է, որ օրենսդիրը պաշտպանական որոշման վերաբերյալ գործերի քննության համար սահմանել է արագացված ընթացակարգ: Մասնավորապես՝

կարգավորումներից բխում է, որ դատարանը հայցադիմումը քննում է առանց դատական նիստ հրավիրելու և որոշում է կայացնում հնգօրյա ժամկետում՝ հայցադիմումը վարույթ ընդունելու պահից սկսած, իսկ պատասխանող կողմին վերապահված է հայցադիմումի պատասխան ներկայացնելու հնարավորություն՝ հայցադիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում: Փաստորեն, նման կառուցակարգի պայմաններում պատասխանողի դատավարական պաշտպանության հիմնական և, ըստ էության, միակ ձևը հանդիսանում է գրավոր դիրքորոշման՝ հայցադիմումի պատասխանի ներկայացումը, քանի որ դատական նիստի բացակայությունը բացառում է բանավոր լսումների միջոցով իր դիրքորոշումը ներկայացնելու հնարավորությունը:

50. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև օրենսդրի կողմից այս հատուկ հայցային վարույթի կապակցությամբ սահմանված սեղմ ժամկետները նպատակաուղղված են ապահովելու տվյալ կատեգորիայի գործերի արագ և օպերատիվ քննությունը՝ հաշվի առնելով դրանց բնույթը և պաշտպանական որոշման միջոցով ենթադրվող անհապաղ միջամտության անհրաժեշտությունը, այնուամենայնիվ, նման սեղմ ժամկետների պայմաններում չի բացառվում այնպիսի իրավիճակի առաջացումը, երբ մինչև պաշտպանական որոշման կայացումը պատասխանողը պատշաճ կերպով չծանուցվի հայցադիմումի մասին կամ փաստացի հնարավորություն չունենա իրացնելու օրենքով իրեն վերապահված՝ հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքը: Ստացվում է, որ նման իրավիճակում պաշտպանական որոշումը կարող է կայացվել առանց պատասխանող կողմի՝ գործի շրջանակներում լսված լինելու իրավունքի արդյունավետ ապահովման, ինչը, իր հերթին, կարող է հանգեցնել դատավարության կողմերի «զենքերի հավասարության» սկզբունքի խախտման: Նման պայմաններում Սահմանադրական դատարանը փաստում է, որ թեև օրենսդիրը նախատեսել է պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխան ներկայացնելու հնարավորություն, սակայն վերոնշյալ պայմաններում այդ իրավունքի իրացումը կարող է կրել ձևական բնույթ և չապահովել արդյունավետ դատական պաշտպանության պահանջներին համարժեք իրականացում: Հետևաբար՝ նույնիսկ այն դեպքերում, երբ թույլ է տրվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ, վիճարկվող իրավակարգավորման պայմաններում բացակայում է այնպիսի դատավարական գործիքակազմ, որի միջոցով հնարավոր կլիներ բողոքարկել տվյալ դատական ակտը և հասնել թույլ տրված խախտման վերացման:

51. Ավելին՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև ընդգծել, որ պաշտպանական որոշումների՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չլինելու իրավակարգավորման պայմաններում՝ այդ որոշումների նկատմամբ չի կարող կիրառվել նաև նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման

ինստիտուտը, քանի որ վերջինս, ըստ Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի, կիրառելի է բացառապես բողոքարկման ենթակա դատական ակտերի նկատմամբ: Նշված նորմի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը վերանայման այս բացառիկ մեխանիզմը կապել է դատական ակտի բողոքարկելի լինելու հանգամանքի հետ՝ այն դիտարկելով որպես լրացուցիչ երաշխիք արդեն իսկ բողոքարկման հնարավորությամբ ապահովված դատական ակտերի համար:

52. Այսպիսով, պաշտպանական որոշումների՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չլինելու իրավակարգավորման պայմաններում տվյալ դատական ակտերը՝ որպես անձի իրավունքների նկատմամբ առավել ինտենսիվ սահմանափակումներ նախատեսող դատական ակտեր, միաժամանակ զուրկ են ինչպես վերաքննության կարգով բողոքարկման, այնպես էլ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման հնարավորությունից: Նման պայմաններում անձը փաստացի զրկվում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցներից ոչ միայն այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանի կողմից թույլ են տրվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալներ, այլև այն իրավիճակներում, երբ պաշտպանական որոշման կայացումից հետո ի հայտ են գալիս նոր հանգամանքներ, կամ բացահայտվում են նոր երևան եկած հանգամանքներ, որոնք գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

53. Սահմանադրական դատարանը, վիճարկվող դրույթը գնահատելով Օրենսգրքի 27.1-ին գլխով նախատեսված իրավակարգավորումների համատեքստում, ինչպես նաև հաշվի առնելով ձևավորված իրավակիրառ պրակտիկան, արձանագրում է, որ պաշտպանական որոշումների վերաբերյալ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի բողոքարկման որևէ կառուցակարգ նախատեսված չէ:

54. Այս համատեքստում պաշտպանական որոշումների անբողոքարկելիությունն ուղղակիորեն փոխկապակցվում է անձի արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի հետ, մասնավորապես՝ վերջինիս բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքի մասով:

55. Սահմանադրության՝ «Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը» վերտառությամբ 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

56. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատական ակտի բողոքարկման իրավունքը դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության սահմանադրաիրավական բովանդակությունը երաշխավորող

առանցքային բաղադրիչ է: Արդյունավետ դատական պաշտպանության իրավունքն առաջնահերթորեն ենթադրում է բավարար օրենսդրական երաշխիքների ամրագրում՝ ապահովելու անձի «մուտքը» դատարան, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վերադաս դատական ատյաններ: Արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը, բովանդակելով արդար դատաքննության իրավունքի հետագա կենսագործումը երաշխավորող անհրաժեշտ, բավարար և հասանելի կազմակերպաիրավական միջոցների առկայության հրամայականը, առնչվում է արդարադատության իրականացման ֆորմալ-կառուցակարգային առանցքին:

57. Դատական պաշտպանության արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է, որ պոզիտիվ իրավունքում նախատեսված լինեն համապատասխան և այդ իրավունքին համարժեք կազմակերպաիրավական արդյունավետ կառուցակարգեր, հակառակ պարագայում՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքը, չունենալով իրացման իրական հնարավորություն, կկրի լոկ հռչակագրային բնույթ:

58. Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում բազմիցս անդրադարձել է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանը՝ ի թիվ այլնի, արձանագրելով նաև, որ.

- «(...) սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է (դատական բողոքարկումը (...): Վերջինս նաև անձի իրավունքների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականություն է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում՝ դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործումը» (2011 թվականի փետրվարի 8-ի ՍԴՈ-936 որոշում),

- «Դատական բողոքարկման ինստիտուտն այն առանցքային իրավական գործիքակազմն է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը, որպիսի պայմաններում դատավարության կողմը կարող է ակնկալել իր իրավունքներին և օրինական շահերին առնչվող դատական ակտի վերանայում վերադաս դատարանի անկախ դատավորի կամ դատավորների կազմի կողմից: Այս իմաստով՝ դատական բողոքարկման իրավունքի առանցքային գործառույթը հանգում է, ի թիվս այլնի, նաև նրան, որ դատական բողոքարկմամբ համապատասխան սխալները շտկելու հնարավորություն ընձեռելը նպաստում է նաև արդարադատության համակարգի նկատմամբ հանրության վստահության

բարձրացմանն այն հաշվառմամբ, որ անձը ձեռք է բերում վերադաս դատարանում իր նկատմամբ կայացված դատական ակտի վերաքննության իրական հնարավորություն՝ վերջնարդյունքում ակնկալելով ստանալ օրինական և հիմնավորված դատական ակտ» (2024 թվականի ապրիլի 16-ի ՍԴՈ-1725 որոշում),

- «39. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ բողոքարկման իրավունքը գործում է օրենսդրի կողմից նախանշված ակտերի նկատմամբ՝ սահմանափակվելով վերջիններիս օրենսդրական շրջանակներով, ինչը, ի թիվս այլնի, ուղղված է իրավակարգում իրավական կայունությանն ու դատական պաշտպանության պատշաճ և արդյունավետ ապահովմանը:

40. Վերոնշյալից ելնելով՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ ***բողոքարկման ենթակա ակտերի շրջանակի օրենսդրական որոշակիացումը, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց մեկնաբանումն ու կիրառումը, մշտապես պետք է խարսխվեն մարդու իրավունքների պաշտպանության, դատական պաշտպանության արդյունավետության ապահովման և արդար դատաքննության իրավունքի կենսագործման վրա:*** *Հետևաբար՝ բողոքարկման իրավունքի սահմանափակումները (թե՛ օրենսդրական մակարդակում, և թե՛ իրավակիրառ պրակտիկայում), հետապնդելով իրավական պետության գաղափարաբանությանը համահունչ իրավաչափ նպատակներ, պետք է լինեն սահմանադրաչափ»* (2025 թվականի նոյեմբերի 11-ի ՍԴՈ-1802 որոշում):

59. Վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն սահմանադրաիրավական վեճի առարկան պաշտպանական որոշումների դատական կարգով բողոքարկման օրենսդրական արգելքով պայմանավորված՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքի սահմանափակումն է: Նշված սահմանափակումը պայմանավորված է քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ նման որոշումների բողոքարկման կառուցակարգերի և ընթացակարգերի բացակայությամբ:

60. Նշվածի առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Սահմանադրության 75-րդ հոդվածն ունի յուրօրինակ սահմանադրաիրավական վերահսկողական դեր. այն օրենսդրի գործունեության համար չափանիշ է և թույլ է տալիս գնահատել՝ արդյո՞ք օրենսդրական մակարդակում իրականում ապահովվում է իրավունքի իրացումը, թե՞ օրենսդիրը միայն ձևականորեն է այն ճանաչում: Հիմնական իրավունքներն ու ազատություններն իրավական համակարգում արժեք ունեն միայն այն դեպքում, երբ օրենքը ոչ միայն ճանաչում է դրանք, այլ նաև ստեղծում է դրանց իրական, արդյունավետ և հասանելի իրացման կազմակերպական ու ընթացակարգային մեխանիզմներ:

61. Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի «արդյունավետ դատական պաշտպանության իրավունք» ձևակերպումը հանդես է գալիս ոչ միայն որպես նպատակ, այլև որպես իրավական կարգավորման գնահատման օբյեկտիվ չափանիշ: Օրենսդիրը չի սահմանափակվում իրավունքների իրացման ֆորմալ հնարավորության ստեղծմամբ, այլև պարտավոր է ապահովել այնպիսի կարգավորում, որը հանգեցնում է իրավունքի փաստացի, իրական և գործնական իրացմանը:

62. Տվյալ իրավիճակում պաշտպանական որոշումների բողոքարկման համար անհրաժեշտ կառուցակարգերի և ընթացակարգերի փաստացի բացակայությունը բերում է անձի արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի խախտման:

63. Սահմանադրական դատարանը գտնում է, որ պաշտպանական որոշումների առնչությամբ բողոքարկման հնարավորություն չնախատեսելը սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց է՝ հատկապես հաշվի առնելով, որ Օրենքով հստակ արտահայտվել է օրենսդրի կամքը, ըստ որի՝ նման որոշումների բողոքարկման կարգը պետք է սահմաներ Օրենսգրքով: Միևնույն ժամանակ, չնայած օրենսդրի նման կամարտահայտմանը՝ Օրենսգրքում չեն սահմանվել համապատասխան ընթացակարգային կարգավորումներ, որոնք կապահովեին այդ իրավունքի գործնական իրացումը: Արդյունքում՝ նշվածը հանգեցրել է այնպիսի իրավիճակի, որ դատարանի կողմից նման գործերով կայացվող դատական ակտերի բողոքարկման իրավունքը փաստացի զուրկ է իրացման կառուցակարգային հնարավորությունից, որպիսի պայմաններում պաշտպանական որոշումների իրավասահմանափակիչ հետևանքները գործնականում դառնում են անհաղթահարելի:

64. Սահմանադրական դատարանը կարևորում է նաև այն հանգամանքի արձանագրումը, որ պաշտպանական որոշման բողոքարկման իրավունքի կրողը ոչ միայն ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրող անձն է, որի իրավունքները պաշտպանական որոշմամբ սահմանափակվում են, այլ նաև ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձը, որի պաշտպանական որոշում կայացնելու վերաբերյալ հայցը դատարանի կողմից կարող է մերժվել կամ մասնակի բավարարվել: Նման դեպքերում վերջինս ևս փաստացի զրկվում է այդ դատական ակտը բողոքարկելու և իր իրավունքների առավել բարձր մակարդակի պաշտպանություն հայցելու կառուցակարգային հնարավորությունից, ինչը համահունչ չէ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված կամ այդպիսի սպառնալիքի պայմաններում գտնվող անձանց պատշաճ պաշտպանության ապահովման իրավաչափ նպատակին:

65. Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանը փաստում է, որ վիճարկվող՝ Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով և «Հատուկ վարույթներ» բաժնի «Պաշտպանական որոշման վերաբերյալ գործերի վարույթը» 27.1-ին գլխով սահմանված իրավակարգավորումներով օրենսդիրը ոչ միայն չի նախատեսել պաշտպանական որոշումների բողոքարկման հնարավորություն, այլև չի ամրագրել որևէ բացառություն, որը հնարավորություն կտար վերաքննության կարգով վերանայելու տվյալ դատական ակտերն այն դեպքում, երբ բողոք բերող անձի կողմից կհիմնավորվեր արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալի առկայությունը:

66. Այս առումով Սահմանադրական դատարանը, հարկ համարելով քննարկվող իրավակարգավորումները համադրել Օրենսգրքի այլ դրույթների հետ, արձանագրում է, որ օրենսդիրը որոշ դեպքերում, նույնիսկ սահմանելով դատական ակտերի բողոքարկման ընդհանուր արգելք կամ սահմանափակ հնարավորություն, նախատեսել է այդ արգելքից և սահմանափակումներից բացառություններ: Մասնավորապես՝ որոշ դեպքերում դատարանի դատական ակտերը, թեև ընդհանուր կանոնով ենթակա չեն բողոքարկման և օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, կամ որոնց բողոքարկելիությունը սահմանափակված է, այնուամենայնիվ կարող են դառնալ վերաքննության առարկա այն դեպքում, երբ բողոք բերող անձը հիմնավորում է, որ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ (օրինակ՝ Օրենսգրքի 305-րդ հոդվածի 4-րդ մաս և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ 372-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ, 345.5-րդ հոդվածի 4-րդ մաս): Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման մոտեցումը նպատակաուղղված է ապահովելու արդար դատաքննության իրավունքի նվազագույն երաշխիքները նույնիսկ այնպիսի վարույթների դեպքում, որտեղ առաջնահերթ է գործի արագ լուծումը:

67. Միևնույն ժամանակ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պաշտպանական որոշումների դեպքում օրենսդիրը չի նախատեսել որևէ համանման բացառություն: Իսկ նման իրավակարգավորումը հանգեցնում է նրան, որ անձը զրկվում է ոչ միայն դատական ակտի վերանայման հնարավորությունից, այլև արդյունավետ դատական պաշտպանության միջոցներից օգտվելու հնարավորությունից նույնիսկ այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանի կողմից թույլ են տրվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող խախտումներ:

68. Վերոգրյալ վերլուծությունների համատեքստում Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասը, համաձայն որի՝ որևէ

նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը, արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող՝ Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասը, որն ամրագրում է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա առաջին ատյանի դատարանի դատական ակտերի շրջանակը, պաշտպանական որոշումների վերաքննության կարգով բողոքարկման հարցի համատեքստում համակարգային փոխկապակցվածության մեջ է գտնվում նույն Օրենսգրքի 234.4-րդ հոդվածի 3-րդ մասի հետ: Նշված դրույթների համակցված իրավակարգավորումը հանգեցնում է այնպիսի իրավիճակի, որի պայմաններում բացառվում է առաջին ատյանի դատարանի կողմից կայացված պաշտպանական որոշումների վերաքննության կարգով բողոքարկելու որևէ հնարավորություն:

69. Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 234.4-րդ հոդվածի 3-րդ մասը և 361-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով չեն նախատեսում առաջին ատյանի դատարանի կողմից կայացված պաշտպանական որոշման վերաքննության կարգով բողոքարկման հնարավորություն, չեն ապահովում Սահմանադրության 75-րդ հոդվածով պահանջվող՝ իրավունքների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի առկայությունը և հանգեցնում են Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի խախտման:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64, 68 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.4-րդ հոդվածի 3-րդ մասը և 361-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով չեն նախատեսում առաջին ատյանի դատարանի կողմից կայացված պաշտպանական որոշման վերաքննության կարգով բողոքարկման հնարավորություն, ճանաչել Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

19 մայիսի 2026 թվականի
ՍԴՈ-1828



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՍՏՈՐՋՐՅԱ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՅՈՒՆԵՍԿՕ-Ի 2001 ԹՎԱԿԱՆԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 26 մայիսի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող),
Արտակ Զեյնալյանի
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի (զեկուցող),
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,
Վլադիմիր Վարդանյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2001 թվականի

կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2026 թվականի մարտի 19-ի N 312-Ա որոշմամբ հավանություն է տվել «Ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2001 թվականի կոնվենցիան վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2026 թվականի մարտի 20-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ կոնվենցիան, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2001 թվականի կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ընդունվել է 2001 թվականի նոյեմբերի 2-ին Փարիզում՝ ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության ապահովման և ամրապնդման նպատակով:

2. «Ստորջրյա մշակութային ժառանգություն» նշանակում է մարդկային գոյության բոլոր այն հետքերը, որոնք ունեն մշակութային, պատմական կամ հնագիտական բնույթ, և որոնք առնվազն 100 տարվա ընթացքում պարբերաբար կամ անընդհատ մասամբ կամ ամբողջությամբ գտնվել են ջրի տակ (հոդված 1, կետ 1):

3. Կոնվենցիայի անբաժանելի մաս է կազմում «Ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողության վերաբերյալ կանոնները» վերտառությամբ Հավելվածը:

4. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

4.1. ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության ոլորտում համագործակցել այն պետությունների հետ, որոնք համաձայնել են, որ սույն Կոնվենցիան պարտադիր է իրենց համար, և որոնց համար սույն Կոնվենցիան գործում է (այսուհետ՝ Կողմ պետություններ) (հոդված 2, կետ 2),

4.2. պահպանել ստորջրյա մշակութային ժառանգությունն ի շահ մարդկության՝ Կոնվենցիայի դրույթների համաձայն (հոդված 2, կետ 3),

4.3. Կոնվենցիային և միջազգային իրավունքին համապատասխան՝ առանձին կամ մյուս Կողմ պետությունների հետ, ըստ անհրաժեշտության, ձեռնարկել բոլոր համապա-

տասխան միջոցները, որոնք անհրաժեշտ են ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության համար՝ այդ նպատակով Հայաստանի Հանրապետության տրամադրության տակ գտնվող լավագույն իրագործելի միջոցների օգտագործմամբ և Հայաստանի Հանրապետության կարողություններին համապատասխան (հոդված 2, կետ 4),

4.4. երաշխավորել, որ դուրս բերված ստորջրյա մշակութային ժառանգությունն ի պահ կհանձնվի, կպահվի և կկառավարվի այնպես, որ ապահովվի դրա երկարաժամկետ պահպանումը (հոդված 2, կետ 6),

4.5. ստորջրյա մշակութային ժառանգությունը չշահագործել առևտրային նպատակով (հոդված 2, կետ 7),

4.6. ապահովել, որ ծովային ջրերում գտնվող բոլոր մասունքների նկատմամբ ցուցաբերվի պատշաճ հարգանք (հոդված 2, կետ 9),

4.7. օգտագործել Հայաստանի Հանրապետության տրամադրության տակ գտնվող լավագույն իրագործելի միջոցները՝ կանխելու կամ մեղմելու ցանկացած վնասակար ազդեցություն, որը կարող է առաջանալ Հայաստանի Հանրապետության իրավազորության ներքո իրականացվող գործողություններից՝ պատահականորեն ազդելով ստորջրյա մշակութային ժառանգության վրա (հոդված 5),

4.8. պատասխանատվություն կրել բացառիկ տնտեսական գոտում և մայրցամաքային շելֆում ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության համար՝ համաձայն Կոնվենցիայի (հոդված 9, կետ 1, պարբերություն 1),

4.9. որպես Համակարգող պետություն՝ իրականացնել Խորհրդակցություն տրամադրող պետությունների, այդ թվում՝ Համակարգող Հայաստանի Հանրապետության կողմից համաձայնեցված պաշտպանության միջոցառումներ, եթե Խորհրդակցություն տրամադրող պետությունները, այդ թվում՝ Համակարգող Հայաստանի Հանրապետությունը, չեն համաձայնել, որ այդ միջոցառումներն իրականացնի մեկ այլ Կողմ պետություն, ինչպես նաև տրամադրել բոլոր անհրաժեշտ թույլտվությունները նման համաձայնեցված միջոցառումների համար՝ համաձայն Կանոնների, եթե Խորհրդակցություն տրամադրող պետությունները, որոնց թվում է նաև Համակարգող Հայաստանի Հանրապետությունը, չեն համաձայնում, որ այդ թույլտվությունները տրամադրի մեկ այլ Կողմ պետություն (հոդված 10, կետ 5, ենթակետեր «ա և բ»),

4.10. պատասխանատվություն կրել, Շրջանում գտնվող ստորջրյա մշակութային ժառանգությունը պաշտպանելու համար՝ Կոնվենցիային և «Ծովային իրավունքի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի 149-րդ հոդվածին համապատասխան, իսկ երբ Հայաստանի Հանրապետության որևէ քաղաքացի կամ Հայաստանի Հանրապետության դրոշը կրող որևէ նավ հայտնաբերի Շրջանում գտնվող ստորջրյա մշակութային ժառանգություն կամ մտադիր լինի իրականացնել դրան ուղղված գործողություններ, ապա պահանջել, որ Հայաստանի Հանրապետության

քաղաքացին կամ նավապետը Հայաստանի Հանրապետությանը հաղորդի նման հայտնաբերման կամ գործողության մասին (հոդված 11, կետ 1),

4.11. ծանուցել Միջազգային ծովի հատակի մարմնի գլխավոր տնօրենին և գլխավոր քարտուղարին Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին կետով նշված հայտնաբերման կամ գործողության մասին, որ հաղորդվել է Հայաստանի Հանրապետությանը (հոդված 11, կետ 2),

4.12. ապահովել, որ ինքնիշխան անձեռնմխելիությամբ օժտված, ոչ առևտրային նպատակներով գործող Հայաստանի Հանրապետության ռազմանավերի և այլ պետական նավերի կամ ռազմական օդանավերի շահագործումը կամ շահագործման հնարավորությունները չխաթարող համապատասխան միջոցների ընդունմամբ դրանք, որքանով դա ողջամիտ և իրագործելի է, համապատասխանեն Կոնվենցիայի 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածների դրույթներին (հոդված 13),

4.13. ձեռնարկել միջոցներ՝ կանխելու ապօրինի արտահանված և (կամ) դուրս բերված ստորջրյա մշակութային ժառանգության՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելը, առուվաճառքը կամ տիրապետումն այն դեպքում, երբ դուրսբերումը հակասում է Կոնվենցիային (հոդված 14),

4.14. ձեռնարկել բոլոր իրագործելի միջոցները՝ ապահովելու համար, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետության դրոշը կրող նավերը Կոնվենցիային չհամապատասխանող եղանակով չզբաղվեն ստորջրյա մշակութային ժառանգության դեմ ուղղված որևէ գործողությամբ (հոդված 16),

4.15. կիրառել պատասխանատվության միջոցներ՝ Կոնվենցիան իրականացնելու համար ձեռնարկված միջոցները խախտելու համար, ինչպես նաև ապահովել, որ խախտումների համար կիրառվող պատասխանատվության միջոցները լինեն համարժեք խստության, որ արդյունավետորեն ապահովեն Կոնվենցիայի դրույթներին համապատասխանությունը և կանխեն խախտումները՝ անկախ դրանց կատարման վայրից, ինչպես նաև զրկեն խախտողներին իրենց ապօրինի գործողություններից բխող որևէ օգուտից (հոդված 17, կետեր 1 և 2),

4.16. համագործակցել մյուս Կողմ պետությունների հետ՝ ապահովելու Կոնվենցիայի 17-րդ հոդվածի համաձայն կիրառված պատասխանատվության միջոցների իրականացումը (հոդված 17, կետ 3),

4.17. ծանուցել, Գլխավոր տնօրենին և ցանկացած այլ պետությանը, որն ունի ստուգելի, հատկապես՝ մշակութային, պատմական կամ հնագիտական կապ տվյալ ստորջրյա մշակութային ժառանգության հետ, Կոնվենցիայի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից իրականացված՝ ստորջրյա մշակութային ժառանգության ցանկացած բռնագրավման մասին (հոդված 18, կետ 3),

4.18. ստորջրյա մշակութային ժառանգությունը բռնագրավելու դեպքում ապահովել, որ դրա տնօրինումը ծառայի հօգուտ հանրային շահի՝ հաշվի առնելով պահում և հետա-

զոտություն իրականացնելու անհրաժեշտությունը, ցրված հավաքածուները կրկին որպես մեկ ամբողջություն հավաքելու անհրաժեշտությունը, հանրային մատչելիության, ցուցադրության և կրթության ապահովման անհրաժեշտությունը, ինչպես նաև ցանկացած պետության շահերը, որը տվյալ ստորջրյա մշակութային ժառանգության նկատմամբ ունի ստուգելի, հատկապես՝ մշակութային, պատմական կամ հնագիտական կապ (հոդված 18, կետ 4),

4.19. համագործակցել և փոխադարձ օգնություն ցույց տալ Կողմ պետություններին՝ Կոնվենցիայի շրջանակներում ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության և կառավարման ոլորտում, այդ թվում՝ համագործակցել, եթե դա իրագործելի է, տվյալ ժառանգության քննության, պեղումների, փաստաթղթավորման, պահման, ուսումնասիրության և հանրահռչակման ոլորտներում (հոդված 19, կետ 1),

4.20. փոխանակել տեղեկություններ մյուս Կողմ պետությունների հետ ստորջրյա մշակութային ժառանգության վերաբերյալ, այդ թվում՝ ժառանգության հայտնաբերման, ժառանգության գտնվելու վայրի, Կոնվենցիային հակասող եղանակով կամ այլ կերպ միջազգային իրավունքի խախտմամբ պեղված կամ դուրս բերված ժառանգության, վերաբերելի գիտական մեթոդաբանության ու տեխնոլոգիաների, ինչպես նաև տվյալ ժառանգությանն առնչվող իրավական զարգացումների վերաբերյալ՝ այնքանով, որքանով դա համապատասխանում է Կոնվենցիայի նպատակներին (հոդված 19, կետ 2),

4.21. Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմ պետությունների միջև կամ ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Կողմ պետությունների միջև փոխանակվող այն տեղեկությունները, որոնք վերաբերում են ստորջրյա մշակութային ժառանգության հայտնաբերմանը կամ գտնվելու վայրին՝ այնքանով, որքանով դա համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, պահել գաղտնի և վերապահել Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին այնքան ժամանակ, քանի դեռ այդ տեղեկությունների բացահայտումը կարող է վտանգել կամ այլ կերպ սպառնալ տվյալ ստորջրյա մշակութային ժառանգության պահպանությանը (հոդված 19, կետ 3),

4.22. ձեռնարկել, բոլոր իրագործելի միջոցները՝ տարածելու տեղեկություններ, այդ թվում՝ համապատասխան միջազգային տվյալների բազաների միջոցով, եթե հնարավոր է, այն ստորջրյա մշակութային ժառանգության մասին, որը պեղվել կամ դուրս է բերվել Կոնվենցիային հակասող եղանակով կամ այլ կերպ միջազգային իրավունքի խախտմամբ (հոդված 19, կետ 4),

4.23. ձեռնարկել, բոլոր իրագործելի միջոցները՝ բարձրացնելու հանրային իրազեկության աստիճանը ստորջրյա մշակութային ժառանգության արժեքի և նշանակության, ինչպես նաև Կոնվենցիայի շրջանակներում դրա պահպանության կարևորության վերաբերյալ (հոդված 20),

4.24. համագործակցել մյուս Կողմ պետությունների հետ ստորջրյա հնագիտության,

ստորջրյա մշակութային ժառանգության պահպանության համար տեխնիկական միջոցների կիրառման ոլորտում վերապատրաստման, ինչպես նաև համաձայնեցված պայմաններով ստորջրյա մշակութային ժառանգությանը վերաբերող տեխնոլոգիաների փոխանցման ապահովման հարցում (հոդված 21),

4.25. ստեղծել իրավասու մարմիններ կամ անհրաժեշտության դեպքում ուժեղացնել արդեն գոյություն ունեցողները՝ նպատակ ունենալով նախատեսել ստորջրյա մշակութային ժառանգության գույքացուցակի ստեղծումը, պահպանումն ու թարմացումը, ստորջրյա մշակութային ժառանգության արդյունավետ պաշտպանությունը, պահումը, հանրահռչակումը և կառավարումը, ինչպես նաև հետազոտությունն և կրթումը՝ Կոնվենցիայի պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով, ինչպես նաև Գլխավոր տնօրենին հաղորդել ստորջրյա մշակութային ժառանգության հետ կապված Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների անուններն ու հասցեները (հոդված 22),

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2001 թվականի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

26 մայիսի 2026 թվականի
ՍԴՈ-1829

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՐՄԱՆՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 237-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՎԵՐՋԻՆԻՍ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 26 մայիսի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող),
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի (զեկուցող),
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,
Վլադիմիր Վարդանյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Արմանուշ Հարությունյանի (այսուհետ նաև՝ Դիմող),
ներկայացուցիչ՝ փաստաբան Լարիսա Բաղդասարյանի,
պատասխանողի՝ Ազգային ժողովի (այսուհետ՝ Պատասխանող)
ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Մարի Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արմանուշ Հարությունյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասի՝ հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում վերջինիս տրված մեկնաբանությունը, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված, ինչպես նաև գործում առկա այլ փաստաթղթերը, նյութերը, Պատասխանողի գրավոր բացատրությունը, վերլուծելով վիճարկվող և վերջինիս հետ փոխկապակցված այլ օրինադրույթներ՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Տ**.

1. Արմանուշ Հարությունյանի դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2026 թվականի հունվարի 19-ին, որով Դիմողը խնդրել է.

«(...) Որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի՝ *այն մասով, որ մասով օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածով չի նախատեսել ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ դիմումով պահանջը՝ որպես հատուկ վարույթի կարգով քննության ենթակա գործ*՝ ՀՀ Սահմանադրության 60-61-րդ, 63-րդ, 75-րդ և 78-79-րդ հոդվածների համապատասխանության հարցը:

(...) Որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ *այն մասով, որ մասով թիվ ՇԴ/0851/02/25 քաղաքացիական գործով ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 16.06.2025 թվականի որոշմամբ և թիվ ՇԴ/0851/02/25 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.07.2025 թվականի որոշմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման դիմումով պահանջը հատուկ վարույթի կարգով քննության ենթակա գործ չի դիտարկվել*՝ ՀՀ Սահմանադրության 60-61-րդ, 63-րդ, 75-րդ և 78-79-րդ հոդվածների համապատասխանության հարցը»:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 27-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից:

Օրենսգրքի՝ ***«Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ դատարանի կողմից քննվող գործերը»*** վերտառությամբ 237-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է.

«3. Դատարանն օրենքով նախատեսված դեպքերում քննում է իրավաբանական նշանակություն ունեցող այլ փաստեր»:

Հիշյալ դրույթը չի փոփոխվել և/կամ լրացվել:

3. Գործի քննության առիթը Արմանուշ Հարությունյանի՝ Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

4. Սահմանադրական դատարանի դատական կազմի՝ 2026 թվականի հունվարի 22-ի ՍԴԴԿՈ-10 որոշմամբ Արմանուշ Հարությունյանի դիմումի հիման վրա գործն ընդունվել է քննության:

5. Սահմանադրական դատարանի՝ 2026 թվականի փետրվարի 6-ի ՍԴԱՈ-14 աշխատակարգային որոշմամբ գործի դատաքննությունը նշանակվել է 2026 թվականի ապրիլի 14-ին:

6. Սահմանադրական դատարանի՝ 2026 թվականի ապրիլի 3-ի ՍԴԱՈ-43 աշխատակարգային որոշմամբ գործի քննության ժամկետը երկարաձգվել է, գործի դատաքննությունը հետաձգվել է և նշանակվել 2026 թվականի մայիսի 19-ին:

7. Սահմանադրական դատարանի՝ 2026 թվականի մայիսի 20-ի ՍԴԱՈ-81 աշխատակարգային որոշմամբ, հաշվի առնելով, որ 2026 թվականի մայիսի 19-ին նշանակված հիշյալ գործի դատաքննությունը չի կայացել, գործի դատաքննությունը նշանակվել է 2026 թվականի մայիսի 26-ին:

8. Սահմանադրական դատարանի՝ 2026 մայիսի 26-ի ՍԴԱՈ-91 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի, 237-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ հաշվի առնելով նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը, մասերով, կարճվել է:

Գործի դատավարական նախապատմությունը

9. *Թիվ ՇԴ/0851/02/25 քաղաքացիական գործի* դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով Արմանուշ Հարությունյանի կողմից

ներկայացված դիմումը՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման պահանջի մասին, 2025 թվականի հունիսի 16-ին որոշել է.

«Արմանուշ Հուլյանոսի Հարությունյանի կողմից ներկայացված՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման պահանջի մասին դիմումի ընդունումը մերժել:

(...)»:

Դիմումին կից ներկայացվել են նաև 26.02.2020 թ. տեղեկանքը Հովհաննես Վոլոդյայի Ավետիսյանի մահվան ակտի գրանցման վերաբերյալ, որի համաձայն՝ նա մահացել է 02.12.2015 թ., ինչպես նաև Հովհաննես Վոլոդյայի Ավետիսյանի վերաբերյալ համապատասխան տվյալների մուտքագրմամբ Ժառանգական գործերի շտեմարանում արդյունք չգտնվելու մասին՝ համապատասխան կայքից արտահանված նյութը (https://www.e-notary.am/inheritCases):

Դատարանի վերոնշյալ որոշման մեջ նշված է.

«(...) Դատարանը եզրահանգում է, որ հատուկ վարույթի կարգով կարող է քննվել միայն սեփականության իրավունքով գույքի տիրապետմանը վերաբերող փաստի հաստատման վերաբերյալ այնպիսի գործ, որում առկա չէ որևէ անձի ուղղված նյութաիրավական պահանջ, փաստացի առկա չեն հակադիր շահերով օժտված կողմեր, առկա չէ իրավունքի մասին վեճ, ինչպես նաև դիմողն ունի համոզմունք, որ որևէ այլ անձ վիճելի գույքի վերաբերյալ հավակնություն չունի և բացառվում է իրավունքի վերաբերյալ վեճի ծագման հնարավորությունը կամ սեփականատերն անհայտ է:

Արմանուշ Հուլյանոսի Հարությունյանը հատուկ վարույթի կարգով քննության նպատակով Դատարան է ներկայացրել դիմում՝ Դատարանից խնդրելով Անշարժ Գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքը:

Տվյալ դեպքում դիմող Արմանուշ Հարությունյանը հատուկ վարույթով քննության համար Դատարան է ներկայացվել դիմում՝ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով՝ Դատարանից խնդրելով Անշարժ Գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքը:

Վերոգրյալը հիմք ընդունելով՝ Դատարանը, սույն գործով դիմումի ընդունելության հարցը որոշելու նպատակով առերևույթ ուսումնասիրելով դիմումը և կից փաստաթղթերը, արձանագրում է, որ դիմող Արմանուշ Հարությունյանն իր դիմումում շարադրել է փաստական հանգամանքներ այն մասին, որ Գյումրու քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 29.11.2024 [1994] թ. թիվ 29 որոշմամբ Անշարժ Գույքը հատկացվել է քաղաքացի Հովհաննես Վոլոդիայի Ավետիսյանին: Անշարժ Գույքի նկատմամբ Հովհաննես Վոլոդիայի Ավետիսյանի սեփականության իրավունքը չի գրանցվել: 2002 թ. Հովհաննես Ավետիսյանն Անշարժ Գույքը տրամադրել է Արմանուշ

Հարությունյանին, իսկ որոշ ժամանակ անց Հովհաննես Ավետիսյանը Անշարժ Գույքը 3.500 ԱՄՆ դոլարով վաճառել է Արմանուշ Հարությունյանին: Անշարժ Գույքի արժեքը վճարելուց հետո Արմանուշ Հարությունյանը Անշարժ Գույքը իրենն է համարել և շուրջ 20 տարի բնակվում է այդ գույքի հասցեում: Դիմող Արմանուշ Հարությունյանը դիմումին կից Դատարան է ներկայացրել նաև արխիվային տեղեկանք այն մասին, որ Գյումրու քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 29.11.2024 [1994]թ. թիվ 29 որոշմամբ Անշարժ Գույքը հատկացվել է քաղաքացի Հովհաննես Վոլոդիայի Ավետիսյանին:

Այսպիսով, դիմումում Արմանուշ Հարությունյանի կողմից վկայակոչված փաստերից և դիմումին կից վերջինիս կողմից Դատարան ներկայացված փաստաթղթերից ուղղակիորեն հետևում է, որ դիմողին հայտնի է եղել այն հանգամանքը, որ Անշարժ Գույքի նկատմամբ իրավունքներ կրող անձ է հանդիսացել Հովհաննես Ավետիսյանը, և դիմողը կարող էր կանխատեսել սույն գործով իրավունքի մասին վեճի ծագման հնարավորությունը: Ավելին, նույնիսկ այն դեպքում, եթե Հովհաննես Ավետիսյանը չի վիճարկում դիմողի կողմից վիճելի գույքը բարեխիղճ, բացահայտ, տասը տարի անընդմեջ, որպես սեփական գույք տիրապետելու փաստերը, նշվածը չի բացառում իրավունքի մասին վեճի առկայությունը: Այլ կերպ ասած, անկախ գործի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր փաստերի անվիճելի լինելու հանգամանքից, չի կարող բացառվել իրավունքի մասին վեճի հնարավորությունը:

Դատարանն արձանագրում է, որ սույն գործով առկա են հակադիր շահերով օժտված կողմեր՝ դիմողը և Հովհաննես Ավետիսյանը՝ ում Գյումրու քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 29.11.2024 [1994]թ. թիվ 29 որոշմամբ հատկացված է եղել Անշարժ Գույքը: Ուստի Դատարանի գնահատմամբ տվյալ դեպքում իրականում առկա է իրավունքի մասին վեճ, ընդ որում էական չէ, թե արդյոք հակադիր շահով օժտված կողմը ընդունում է դիմողի վկայակոչած փաստերը, թե՝ ոչ, կարևոր է, որ վերջինս դիմումի նկատմամբ առարկելու իրավունք ունի:

Վերը նշվածից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ դիմողի կողմից ներկայացված պահանջը կարող է քննվել միայն հայցային վարույթի կարգով, քանի որ վիճելի գույքի նկատմամբ հնարավոր հավակնություններ ունեցող անձը դիմողին հայտնի է, ուստի ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունք ապահովելու անհրաժեշտությունից և դատական ռեսուրսներն արդյունավետ կերպով օգտագործելու պահանջից ելնելով՝ դիմողն իր իրավունքների դատական պաշտպանությունը պետք է նախաձեռնի և իրականացնի ընդհանուր հայցային վարույթի կարգով՝ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման պահանջ ներկայացնելով տվյալ գույքի նկատմամբ հնարավոր հավակնություններ ունեցող անձի նկատմամբ, ուստի Դատարանը գտնում է, որ դիմողի պահանջը հատուկ վարույթի կարգով քննվել չի կարող:

Բացի այդ, Դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածով թվարկված են հատուկ վարույթի կարգով քննության ենթակա գործերը, սակայն նշված նորմով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին գործերի հատուկ վարույթի կարգով քննության ընթացակարգ նախատեսված չէ:

Դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի բովանդակությունից, ինչպես նաև թիվ ԵԿԴ/2333/02/16 քաղաքացիական գործով 27.07.2021 թ. կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանությունից հետևում է, որ ի թիվս այլ փաստերի, հատուկ վարույթի կարգով կարող է հաստատվել նաև անշարժ գույքը տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ որպես սեփական գույք տիրապետելու փաստը:

Տվյալ դեպքում դիմող Արմանուշ Հարությունյանը Դատարան ներկայացված դիմումով խնդրել է ոչ թե հաստատել Անշարժ Գույքը տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ որպես սեփական գույք իր կողմից տիրապետելու փաստը, այլ Դատարանից խնդրել է ճանաչել իր սեփականության իրավունքը Անշարժ Գույքի նկատմամբ՝ Անշարժ Գույքը տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ որպես սեփական գույք իր կողմից տիրապետելու փաստը ներկայացնելով որպես գոյություն ունեցող և իր պահանջի հիմք հանդիսացող փաստացի տվյալներ:

Վերը նշված պատճառաբանություններից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ սույն գործը քաղաքացիական դատավարության կարգով (հատուկ վարույթի կարգով) քննության ենթակա չէ, ուստի, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված իրավակարգավորումը, Դատարանը գտնում է, որ սույն դիմումի ընդունումը պետք է մերժել: Ընդ որում, Դատարանի այս որոշումը չի կարող ընկալվել որպես անձի՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակում, այն հաշվառմամբ, որ դիմողը զրկված չէ հայցային վարույթով դատարան դիմելու և իր իրավունքները պաշտպանելու հնարավորությունից»:

10. Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, քննության առնելով թիվ ՇԴ/0851/02/25 քաղաքացիական գործով Դատարանի՝ 2025 թվականի հունիսի 16-ի որոշման դեմ Արմանուշ Հարությունյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը, 2025 թվականի հուլիսի 29-ին որոշել է.

«1. Արմանուշ Հարությունյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը մերժել: Թիվ ՇԴ/0851/02/25 քաղաքացիական գործով ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 16.06.2025 թվականի «Դիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

(…)»:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի հիշյալ որոշման մեջ նշված է.

«Քննարկվող պարագայում հայցվորը հատուկ վարույթի շրջանակներում դիմում ներկայացնելով Դատարան խնդրել է անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքը:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ներկայացված դիմումի ուսումնասիրությունից հետևում է, որ դիմողը Դատարան է դիմել դիմումի միջոցով, այսինքն՝ վերջինս ակնկալում է գործի քննության իրականացում կա՛մ հատուկ վարույթի, կա՛մ դատավարական օրենսգրքով նախատեսված այլ վարույթի կարգով, սակայն ոչ հայցային վարույթի կարգով:

(…)

Տվյալ դեպքում, դիմողը ներկայացրել է «ձեռքբերման վաղեմության ուժով ՀՀ, ք Գյումրի, Անի թաղամաս, 9-րդ փողոց, շենք 5, թիվ 38 բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու» պահանջ, և վերաքննիչ բողոքում փաստարկել է, որ սեփականության իրավունքի երեք իրավազորություններին վերաբերող գործերը հանդիսանում են իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր, որոնք քննվում են հատուկ վարույթի կարգով, իսկ ձեռքբերման վաղեմության հիմքով անշարժ գույքի տիրապետման ճանաչումը հանդիսանում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստ, որի ճանաչման պայմաններում դիմողը կարող է անշարժ գույքի նկատմամբ ձեռք բերել սեփականության իրավունք:

(…)

Այսպիսով, վերոգրյալից հետևում է, որ քաղաքացիական դատավարության հատուկ վարույթը գործերի քննության այնպիսի դատավարական ընթացակարգ է, որն իրավունքի մասին դատարանի քննությանը ենթակա վեճի բացակայությամբ ուղղված է քաղաքացիների օրենքով պահպանվող և իրավական բնույթ ունեցող շահերի պաշտպանությանը: Ընդ որում, իրավաբանական փաստերը նյութական իրավունքի նորմերի կողմից արժևորվող այն հանգամանքներն ու իրադարձություններն են, որոնց առկայության կամ բացակայության հետ նույն նյութական իրավունքի նորմերը կապում են որոշակի իրավական հետևանքներ՝ քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների ծագման, փոփոխման կամ դադարման հետ: Մասնավորապես՝ դատարանն իրավունք ունի քննել իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման վերաբերյալ դիմումը, եթե փաստը դիմողի համար ունի իրավաբանական նշանակություն, այսինքն՝ տվյալ կոնկրետ դեպքում կարող է իրավական հետևանքներ առաջացնել, փոփոխել, դադարեցնել անձնական կամ գույքային իրավունքներ: Միևնույն ժամանակ, որպես իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերի տեսակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանում է հատուկ վարույթի կարգով

այնպիսի գործ քննելու դատարանի պարտականությունը, որը վերաբերում է սեփականության իրավունքով գույքի տիրապետմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետից բխում է, որ հատուկ վարույթի կարգով հաստատման է ենթակա սեփականության իրավունքով գույքի տիրապետման փաստը, այսինքն, արդեն իսկ ծագած սեփականության իրավունքով գույքի տիրապետման փաստը, այլ ոչ թե անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման/ծագման փաստի հաստատումը: Այսինքն, հատուկ վարույթի կարգով կարող է հաստատվել սեփականության իրավունքով գույքի տիրապետման փաստն այն դեպքում, երբ այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքն արդեն իսկ գոյություն ունի, սակայն իրավատերը քաղաքացիաիրավական շրջանառությունում հնարավորություն չունի հանդես գալու որպես գույքի սեփականատեր ինչ-ինչ պատճառներով /օրինակ, սեփականության իրավունքի առկայության մասին վկայող փաստաթղթի ոչնչացում, կորուստ, վնասում և այլն/, մինչդեռ Դատարանն այս ընթացակարգով չի հաստատում սեփականության իրավունքի ծագումը: Իրավական իմաստով սեփականության իրավունքով գույքի տիրապետման փաստը հաստատելու կառուցակարգը կիրառվում է այն դեպքերում, երբ անհրաժեշտ է իրավաբանորեն արձանագրել իրավական վիճակը, սակայն այս դատավարական կառուցակարգը կիրառելի չէ նոր իրավունքի ստեղծման համար:

Ուստի, սեփականության իրավունքով գույքի տիրապետմանը վերաբերող դիմումները, որոնք բովանդակային առումով կապված են ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման հետ, կարող են ներկայացվել անշարժ գույքը տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ որպես սեփական գույք տիրապետելու փաստերի հաստատման համար:

Այսինքն, դատարանի կողմից հատուկ վարույթի կարգով քննվող գործերի թույլատրելի շրջանակում անշարժ գույքի նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ձեռքբերման վաղեմության ուժով **ճանաչելու** վերաբերյալ գործերը ներառված չեն: Այլ կերպ ասած՝ գործող դատավարական օրենսդրությամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը **ճանաչելու** վերաբերյալ պահանջները կարող են ներկայացվել միայն ընդհանուր հայցային վարույթի կարգով:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ դիմողը ներկայացրել է այնպիսի պահանջ, որն իր հերթին չի հանդիսանում հատուկ վարույթի կարգով քննարկման ենթակա, քանի որ այդպիսի պահանջով գործի տեսակ նախատեսված չէ հատուկ վարույթի կարգով քննարկման ենթակա գործերի ցանկում: Ընդ որում, նման իրավաչափ եզրահանգման է եկել նաև Դատարանը:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը հանգում է ամփոփիչ հետևության առ այն, որ վերաքննիչ բողոքում բերված պնդումներն ու փաստարկները չեն ծառայում Դատարանին վերագրված դատական սխալների առկայությունն արձանագրելու բողոք բերած անձի նպատակին, հետևաբար վերաքննիչ բողոքը բավարարվել չի կարող: Այսպիսով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ Վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ որոշումը թողնելով օրինական ուժի մեջ»:

Դիմողի դիրքորոշումները

11. Դիմողը, ներկայացնելով թիվ ՇԴ/3260/02/22 և ՇԴ/0851/02/25 քաղաքացիական գործերի դատավարական նախապատմությունները, մասնավորապես, նշում է. «Թիվ ՇԴ/3260/02/22 քաղաքացիական գործով (...) Դատարանը 27.10.2023 թվականի վճռով գտել է, որ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման պահանջը պետք է ներկայացվի վեճի առարկա անշարժ գույքի գրանցված սեփականատիրոջ դեմ, որպիսի պայմաններում միայն դատարանը հնարավորություն կունենա պատշաճ կերպով գնահատել կողմերի դրսևորած վարքագիծը՝ բարեխղճության ծագման փաստի հաստատման տեսանկյունից: ***<u>Նշվածը վերաբերում է այն դեպքերին, երբ անշարժ գույքը ունի գրանցված սեփականատեր և, ըստ այդմ, կողմերի միջև առկա է իրավունքի մասին վեճ: Դատարանի համոզմամբ, այլ է իրավունքի պաշտպանության եղանակը, երբ գույքը չունի գրանցված սեփականատեր, որպիսի պայմաններում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հնարավորություն է ընձեռել նման իրավահարաբերության մասնակիցներին իրենց իրավունքների պաշտպանությանը հետամուտ լինել հատուկ վարույթների միջոցով</u>»***:

12. Դիմողը հավելում է. **«Հաշվի առնելով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով արձանագրված պատճառաբանությունները՝** (...) **05.06.2025թ. <u>հատուկ վարույթով</u> դիմում է ներկայացրել Դատարան՝ Բնակարանի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման պահանջով»:**

13. Դիմողը նշում է. «Թիվ ՇԴ/0851/02/25 քաղաքացիական գործով Դատարանը 16.06.2025 թվականին կայացրել է որոշում Դիմումի ընդունումը մերժելու մասին՝ արձանագրելով, որ Արմանուշ Հարությունյանի կողմից վկայակոչված փաստերից և դիմումին կից վերջինիս կողմից Դատարան ներկայացված փաստաթղթերից ուղղակիորեն հետևում է, որ դիմողին հայտնի է եղել այն հանգամանքը, որ ***Անշարժ Գույքի նկատմամբ իրավունքներ կրող անձ է հանդիսացել Հովհաննես Ավետիսյանը, և դիմողը կարող էր կանխատեսել սույն գործով իրավունքի մասին վեճի ծագման*** հնարավորությունը: Ավելին, նույնիսկ այն

դեպքում, եթե Հովհաննես Ավետիսյանը չի վիճարկում դիմողի կողմից վիճելի գույքը բարեխիղճ, բացահայտ, տասը տարի անընդմեջ, որպես սեփական գույք տիրապետելու փաստերը, նշվածը չի բացառում իրավունքի մասին վեճի առկայությունը: (...) Դատարանը գտել է, որ դիմողի կողմից ներկայացված պահանջը ***կարող է քննվել միայն հայցային վարույթի կարգով*** (...):

Դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածով թվարկված են հատուկ վարույթի կարգով քննության ենթակա գործերը, **սակայն նշված նորմով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին գործերի հատուկ վարույթի կարգով քննության ընթացակարգ նախատեսված չէ»:**

14. Դիմողը նշում է նաև, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը 29.07.2025 թ. որոշմամբ իր վերաքննիչ բողոքը մերժել է՝ պատճառաբանելով, որ դատարանը հատուկ վարույթի ընթացակարգի շրջանակներում չի հաստատում սեփականության իրավունքի ծագումը, այլ միայն կարող է արձանագրել իրավական վիճակը:

15. Դիմողը, մեջբերելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և Օրենսգրքի համապատասխան դրույթները, այդ թվում՝ Օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասը **(«Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ դատարանն օրենքով նախատեսված դեպքերում քննում է իրավաբանական նշանակություն ունեցող այլ փաստեր ևս»)**, ընդգծում է. «(...) **հատուկ վարույթի կարգով քննության ենթակա գործերում՝ քննության առարկա է հանդիսանում միայն դիմողի որևէ գույքային կամ ոչ գույքային իրավունքի ճանաչումը, փոփոխումը և դադարումը: Սակայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասը և նույն օրենսգրքի 237-րդ հոդվածի 2-րդ մասը չի սահմանում, որ դատարանը քննում է այն գործերը, որոնք վերաբերում են գույքի սեփականության իրավունքի ճանաչմանը, օրենսդրի կողմից հատուկ շեշտադրում է կատարվել՝ այն գործերը, *որոնք վերաբերում են շարժական գույքը փիրազուրկ ճանաչելու և դրա նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ գործերին և սեփականության իրավունքով գույքի փիրապետմանը՝ թողնելով իրավական անորոշություն նշված գործերի քննության կապակցությամբ, թե արդյո՞ք նշված գործերի մեջ ենթադրվում է նաև անշարժ գույքի սեփականության իրավունքի ճանաչման պահանջը ձեռքբերման վաղեմության ուժով՝ որպես իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման վերաբերյալ հատուկ վարույթի գործ»:**

16. Դիմողը նշում է. «(...) *մի դեպքում Դատարանը, քննության առնելով Արմանուշ Հարությունյանի հայցային վարույթով ներկայացված հայցապահանջը՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու*

*պահանջով, վերջինիս հայցը մերժել է և փաստել է, որ Արմանուշ Հարությունյանը ընտրել է սխալ դատական պաշտպանության եղանակ՝ հաշվի առնելով, որ չունի շահագրգիռ անձի հետ վեճ՝ հայցային վարույթով նման պահանջ ներկայացնելիս **և պետք է պահանջը ներկայացներ հատուկ վարույթի շրջանակներում**, իսկ երբ Արմանուշ Հարությունյանը դիմել է դատական պաշտպանության հատուկ վարույթի շրջանակներում՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ դիմումի պահանջով, վերջինիս դիմումի ընդունումը մերժվել է Դատարանի կողմից»*:

17. Դիմողը հավելում է. «**Այն, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված գործերը թերի են սահմանված, արձանագրել է նաև Վճռաբեկ դատարանը, 27.07.2021 թվականի որոշմամբ թիվ ԵԿԴ/2333/02/16 քաղաքացիական գործով, անդրադառնալով դատական կարգով հաստատման ենթակա իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի շրջանակին՝ նշելով, որ թեև ինչպես Նախկին օրենսգրքով, այնպես էլ՝ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված է այդ փաստերի հնարավոր շրջանակը, սակայն այն սպառիչ չէ, և *դատարանն օրենքով նախատեսված դեպքերում կարող է քննել իրավաբանական նշանակություն ունեցող այլ փաստերի հաստատման վերաբերյալ դիմումներ: Նման օրինակ կարող է հանդիսանալ անշարժ գույքի սեփականատեր չհանդիսացող անձի կողմից համապատասխան դիմումի ներկայացումը դատարան՝ անշարժ գույքը տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ որպես սեփական գույք տիրապետելու վերաբերյալ փաստերի հաստատման մասին: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերը թվարկված հանգամանքներն իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր են, որոնց միաժամանակյա առկայությունը հանգեցնում է տվյալ անշարժ գույքի նկատմամբ շահագրգիռ սուբյեկտի սեփականության իրավունքի ծագմանը***: (…)

Այսինքն՝ թիվ ՇԴ/0851/02/25 քաղաքացիական գործով Արմանուշ Հարությունյանի դիմումը ընդունումը մերժվելիս և վերջինիս դատարան դիմելու իրավունքը սահմանափակվելիս հաշվի չի առնվել դատահրավական պրակտիկայում Վճռաբեկ դատարանի վերը նշված գործով վկայակոչված իրավական դիրքորոշումները, որով անձի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման պահանջը դիտարկվել է որպես հատուկ վարույթով ընդունելի պահանջ այն դեպքերում, երբ իրապես անշարժ գույքը սեփականատեր չունի և որևէ այլ անձ նշված գույքով ենթադրյալ հավակնություններ չունի և առկա չէ իրավունքի մասին վեճ, ինչը որ սույն դեպքում և առկա է: (…)»:

18. Դիմողը եզրահանգում է. «*Նման պայմաններում գտնում եմ, որ սահմանափակվել է Դիմողի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով*

*երաշխավորված արդար դատաքննության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքները, քանի որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 186-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված փիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման դատական պաշտպանության կառուցակարգը լիարժեք չի նախատեսել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասով և նույն օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ին 2-րդ մասերով և առաջնահերթ տարբերակված մոտեցում է դրսևորել փիրազուրկ շարժական գույքի և փիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ գործերի քննության միջև՝ **չնախատեսելով փիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ գործերի հատուկ վարույթ**, մյուս դեպքում տարբերակված մոտեցում է դրսևորել անշարժ գույքի սեփականության իրավունքի **փիրապետման**՝ որպես հատուկ վարույթով նախատեսված իրավաբանական փաստի հաստատման վերաբերյալ գործի և անշարժ գույքի սեփականության իրավունքի **ճանաչման**՝ որպես իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման վերաբերյալ գործերի միջև, ինչն ակնհայտորեն սահմանափակում է դատական պաշտպանություն հայցող անձի՝ սույն դեպքում Դիմողի արդար դատաքննության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքները, ինչպես նաև սահմանափակել՝ Դիմողի սեփականության իրավունքի ճանաչման և պաշտպանության իրավունքների իրացումը, **քանի որ մի դեպքում շահագրգիռ անձին օրենսդիրը տվել է իրավունք իր՝ անշարժ գույքի փիրապետման փաստի հաստատման պահանջով հատուկ վարույթով դիմելու, իսկ մի դեպքում՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի ճանաչման պահանջով հատուկ վարույթով դիմելու իրավունք չի նախատեսել,** նման պայմաններում առաջանում է իրավական անորոշություն, անհամաչափություն և ոչ արդարացված մոտեցում, **<u>այդ թվում օրենսդրական բաց, որը համահունչ չէ ՀՀ Սահմանադրության 60-61-րդ, 63-րդ, 75-րդ և 78-79-րդ հոդվածներին՝ հաշվի առնելով, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված նշված միջոցը պիտանի և անհրաժեշտ չէ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար, քանի որ նման օրենսդրական մեկնաբանման և կիրառման արդյունքում էականորեն խաթարվում է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ պահանջով անձի՝ արդար դատաքննության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքները՝ հատուկ վարույթի գործերով նշված գործերի չնախատեսմամբ</u>»:**

Պատասխանողի դիրքորոշումները

19. Ազգային ժողովը, վկայակոչելով Սահմանադրության 60, 61, 63, 75, 78 և 79-րդ հոդվածները, մեջբերելով վիճարկվող դրույթներով սահմանված և այլ վերաբերելի իրավակարգավորումներ, Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի վերաբերելի որոշումներում արտացոլված իրավական դիրքորոշումները, մասնավորապես, նշում է. «(...) Դատավարության օրենսգրքի 238-րդ հոդվածում պարունակվող բառերի և արտահայտությունների մեկնաբանությունը, **հաշվի առնելով այդ ամբողջ հոդվածի** (Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերի տարածքային ընդդատությունը), **գլխի** (Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերի վարույթը), **բաժնի** (Հատուկ վարույթներ) **կարգավորման համատեքստը**, ցույց է տալիս, որ անշարժ գույքը սեփականության իրավունքով տիրապետելու փաստը հաստատելու վերաբերյալ գործերը, որպես իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր և դրանց հաստատման ընթացքը քննվում են հատուկ վարույթի շրջանակներում: Հետևաբար անձը զրկված չէ՝ գույքի փաստացի տիրապետման հանգամանքի՝ որպես իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պահանջով հատուկ վարույթի շրջանակներում դիմում ներկայացնելու իրավունքից: Ասվածից բխում է, որ սույն դեպքում անձը քննարկվող գույքի տիրապետման փաստի հաստատման պահանջով իրավունք ունի դիմելու դատարան, որի հաստատման պարագայում վերջինս ձեռք կբերի սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմության հիմքով):

(...)

(...) Դիմողը, վիճարկվող դրույթի շրջանակներում զրկված չի եղել ներկայացնելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման դիմում, որտեղ կարող էր նշել, **թե ինչ նպատակի համար է նրան անհրաժեշտ տվյալ փաստի հաստատումը (այն է՝ սեփականության իրավունքի ձեռքբերում (ձեռքբերման վաղեմություն))**, որի հաստատման արդյունքում անձը ձեռք կբերեր սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն)՝ իր կողմից տիրապետվող գույքի նկատմամբ:

Ասվածից բխում է, որ **իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման հանգամանքից կարող են ծագել իրավունքներ,** որը սույն դեպքով **անձի ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերումն է:** Այստեղ խոսքը չի վերաբերում արդեն իսկ գոյություն ունեցող սեփականության իրավունքով գույքի տիրապետմանը (Դատավարության օրենսգրքի հոդված 237, մաս 2, կետ 8), այլ **տվյալ դեպքում անձի մոտ ծագում է սեփականության իրավունքը**՝ Դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով՝ **փաստերի հաստատման արդյունքում, երբ դատարանը հաս-**

տատում է այնպիսի փաստ, որի հետևանքով անձի մոտ ծագում է գույքային իրավունք: Սեփականության իրավունքը ինքնին չի հանդիսանում փաստ, այլ՝ որոշակի փաստերի հաստատումն ու ամրագրումն է հանգեցնում սեփականության իրավունքի ծագմանը:

(…)

(…) Դիմողի կողմից վիճարկվող իրավադրույթների համակարգային համատեքստում ակներև է այն հանգամանքը, որ չկա որևէ արգելք, անձի կողմից տվյալ գույքի փաստացի տիրապետման փաստի ուժով, տվյալ գույքի նկատմամբ ձեռք բերել սեփականության իրավունք՝ հատուկ վարույթի շրջանակներում:

Վերոնշյալի լույսի ներքո կարելի է արձանագրել, որ վիճարկվող դրույթներն իրենց իրավակարգավորիչ դերով ոչ միայն չեն սահմանափակում անձի սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքները, այլև հանդիսանում են արդյունավետ երաշխիքներ դրանց պատշաճ իրացման համար: Մասնավորապես, վիճարկվող դրույթների ուժով անձը հնարավորություն է ստանում ձեռքբերման վաղեմության ուժով ձեռք բերել սեփականության իրավունք՝ այդպիսով անխոչընդոտ կերպով իրացնելով իր սահմանադրական իրավունքները»:

20. Պատասխանողը հավելում է. «(…) հատուկ վարույթի շրջանակներում անձը զրկված չէ փաստի հաստատման ուժով ձեռք բերել սեփականության իրավունք: Այլ կերպ՝ վիճարկվող դրույթները թույլ են տալիս անձի կողմից գույքի փաստացի տիրապետման փաստի հաստատումը:

Տվյալ դեպքում հաստատված փաստը կարող է հետագայում հիմք հանդիսանալ իրավունքի առաջացման համար, և այդ դեպքում դատարանը **ոչ թե ճանաչում է իրավունքը, այլ միայն հաստատում է փաստը**:

(…)

Ուստի, եթե իրավունքի վեճը փաստացի բացակայում է, եթե հատուկ վարույթով հաղթահարվելու է իրավական անորոշությանը, ապա տվյալ դեպքում ձեռքբերման վաղեմության ուժով անձի սեփականության՝ որպես հետևանք ծագող իրավունքը հանդիսանում է անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքի, այդ թվում՝ սեփականության իրավունքի պատշաճ իրացման համար կարևոր երաշխիք: Ընդ որում, նշված պայմանների առկայությունը կամ բացակայությունը գնահատվում է դատարանի կողմից՝ այդ մասին կայացնելով դատական ակտ: Ինչն էլ իր հերթին ինքնանպատակ չէ, քանի որ անձի կողմից կոնկրետ գույքի տիրապետումը, դրա բացահայտ կերպով լինելը, անձի բարեխիղճ լինելը, գույքի տիրապետման անընդհատությունը գնահատողական իրավական կատեգորիաներ են և դատարանն այս պայմաններում իրականացնում է իրավական որակավորում, որոշելով քննարկվող փաստի և այլ անձի իրավունքների միջև առերևույթ փոխադարձ կապի առկայությունը կամ բացակայությունը»:

21. Պատասխանողը գտնում է, որ «(...) օրենսդիրը քննարկվող իրավակարգավորումը սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառ պրակտիկայի ձևավորումը և այդպիսի ընթացակարգի սահմանումը եղել է օրենսդրի նպատակը, **մասնավորապես՝ փաստի հաստատման հիմքով օրենսդրական կառուցակարգերի համատեքստում ապահովված է ձեռքբերման վաղեմության հիմքով ծագող սեփականության իրավունքի արդյունավետ իրացումը**»:

22. Պատասխանողը պնդում է, որ տվյալ դեպքում օրենքի բացը հաղթահարելու անհնարինություն առկա չէ, քանի որ վիճարկվող դրույթների համատեքստում անձը հատուկ վարույթի շրջանակներում հնարավորություն ունի գույքը տիրապետելու փաստի հաստատման պահանջով դիմելու դատարան, որի հաստատման արդյունքում ձեռք բերել ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք:

23. Պատասխանողը խնդրում է սույն գործով ընդունել որոշում՝ վիճարկվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

Սահմանադրական վեճի քննության շրջանակը

24. Սույն գործով սահմանադրական վեճը հանգում է Օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանության սահմանադրականությանը, որի համաձայն՝ դատարանի կողմից հատուկ վարույթի կարգով քննվող քաղաքացիական գործերի թույլատրելի դատավարական շրջանակում տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչելու վերաբերյալ քաղաքացիական գործերն ուղղակիորեն ներառված չլինելու հետևանքով գործող դատավարական օրենսդրությամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ պահանջները կարող են ներկայացվել միայն ընդհանուր հայցային վարույթի կարգով:

25. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն սահմանադրական վեճը դիտարկել իրավակիրառ պրակտիկայում ձևավորված այն մեկնաբանության պայմաններում, որ տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք ձեռք բերելու վերաբերյալ դիմումները քննվում են հատուկ վարույթի կարգով՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման շրջանակներում:

Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

26. Օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասի՝ հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում վերջինիս տրված մեկնաբանությունը, Սահմանադրությանը համապատասխանությունը գնահատելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ներքոնշյալ հարցադրմանը.

- արդյո՞ք վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված վերոնշյալ մեկնաբանությունը չի խախտում Դիմողի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը՝ Սահմանադրության 60-րդ հոդվածով ամրագրված սեփականության իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության հնարավորության ապահովման համատեքստում:

Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

27. Սահմանադրական դատարանը սույն գործով վերահաստատում է սեփականության իրավունքի վերաբերյալ իր՝ 2018 թվականի հոկտեմբերի 30-ի ՍԴՈ-1432 որոշման շրջանակում արտահայտած դիրքորոշումն առ այն, որ սեփականության իրավունքը՝ որպես ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության պայմաններում անձի իրավունքների ու ազատությունների երաշխավորման բնութագրիչ, միաժամանակ նաև՝ որպես մասնավոր և հանրային իրավահարաբերությունների կարգավորման կառուցակարգ, ունի սահմանադրաիրավական կարևոր նշանակություն (կետ 4.1):

28. Սեփականության իրավունքի պաշտպանության՝ Հայաստանի Հանրապետության իրավակարգում ունեցած ընդգծված կարևորությունն արձանագրված է, առաջին հերթին, Սահմանադրության՝ սահմանադրական կարգի հիմունքների ներքո արտացոլված՝ *«Սեփականության երաշխավորումը»* վերտառությամբ 10-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

29. Սեփականության հիմնական իրավունքի պաշտպանության նպատակով սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքներն ամրագրված են նաև Սահմանադրության 60-րդ հոդվածում:

30. Սահմանադրական դատարանը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս անդրադարձել են սեփականության իրավունքի բովանդակությանը, այդ համատեքստում՝ «օրինական ակնկալիք» եզրույթի բովանդակության բացահայտմանը:

31. Սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի մարտի 18-ի ՍԴՈ-741 որոշմամբ արձանագրված է. «(...) Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում

սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք» (8-րդ կետ):

32. Սահմանադրական դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1142 որոշման 14-րդ կետում արձանագրված է, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները:

33. Սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 6-ի ՍԴՈ-1326 որոշմամբ արձանագրված է. «(...) սեփականության իրավունքի պաշտպանության իրավունքն անձի մոտ ծագում է երկու պարագայում, երբ.

- անձի սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է,

- անձինք օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք» (6-րդ կետ):

34. Սահմանադրական դատարանն իր՝ 2017 թվականի հունվարի 31-ի ՍԴՈ-1340 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում նշել է. «(...) Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված դրույթները կազմում են սեփականության իրավունքի հիմնական բովանդակությունը՝ ամրագրելով այն իրավազորությունները, որոնցից յուրաքանչյուր ոք անարգել պետք է կարողանա օգտվել սեփականության հիմնական իրավունքն իրականացնելիս, այսինքն՝ անձը պետք է առանց որևէ խոչընդոտի կարողանա իրականացնել *սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու իրավունքը, օգտագործելու իրավունքը, տնօրինելու իրավունքը, ինչպես նաև ժառանգելու իրավունքը*: Միևնույն ժամանակ, սահմանադիրը նշված իրավունքների իրականացումը երաշխավորելու՝ պետության պոզիտիվ պարտականության կատարումը պայմանավորում է **բացառապես օրինական հիմքերով ձեռք բերված սեփականությամբ**: Հետևաբար, միայն օրինական հիմքով ձեռք բերված սեփականության դեպքում անձը հանրային իշխանություններից կարող է պահանջել սեփականության հիմնական իրավունքի մաս կազմող՝ վերը նշված իրավունքների իրականացման երաշխավորում» (6-րդ կետ):

35. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերելի դիրքորոշումները ևս վկայում են, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իր գույքից անարգել օգտվելու

իրավունքի իմաստով գույք է համարվում նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (Trgo v. Croatia, գանգատ թիվ 35298/04, 11.06.2009, Final 11.09.2009, § 44):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «գույքը» կարող է լինել «գոյություն ունեցող սեփականությունը» կամ «ակտիվները», ներառյալ՝ պահանջները, որոնց առնչությամբ դիմումատուն կարող է վիճարկել, որ առնվազն ունի սեփականության իրավունքից անարգել օգտվելու «օրինական ակնկալիք» (J. A. Pye (Oxford) Ltd and J. A. Pye (Oxford) Land Ltd v. The United Kingdom, գանգատ թիվ 44302/02, 30.08.2007, § 61): «Ակնկալիքը» համարվում է օրինական, եթե այն հիմնված է օրենսդրական դրույթի կամ քննարկվող գույքի վերաբերյալ իրավական ակտի վրա (Saghinadze and others v. Georgia, գանգատ թիվ 18768/05, 27.05.2010, Final 27.08.2010, § 103):

36. Պետության պոզիտիվ պարտավորությունն է երաշխավորել ինչպես արդեն իսկ օրենքով սահմանված կարգով ճանաչված սեփականության իրավունքի արդյունավետ իրացումը, այնպես էլ անձի՝ օրենքի ուժով սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիքի անխոչընդոտ կենսագործումը, ինչի հետ խաչվում է նաև ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման ինստիտուտը:

37. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ***«Սեփականության իրավունք ձեռք բերելու հիմքերը»*** վերտառությամբ 172-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ նշված օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչպես նաև այն գույքի, որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի նկատմամբ սեփականության իրավունքը նա կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմքերով:

38. Որպես սեփականության իրավունքի ձեռքբերման ինքնուրույն հիմք՝ օրենսդիրը դիտարկում է նաև ***ձեռքբերման վաղեմությունը***:

Օրենսգրքի՝ ***«Ձեռքբերման վաղեմություն»*** վերտառությամբ 187-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք:

39. Սահմանադրական դատարանն իր՝ 2006 թվականի նոյեմբերի 21-ի ՍԴՈ-667 որոշմամբ, անդրադառնալով ձեռքբերման վաղեմության ինստիտուտի իրավական բովանդակությանը, արձանագրել է. «Ձեռքբերման վաղեմության հիմքով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման համար

պահանջվում է այդ գույքի՝ որպես սեփական ունեցվածքի բարեխիղճ, բացահայտ, անընդմեջ, տևական տիրապետում:

Այս նախապայմանները բացառում են ուրիշի գույքը որպես սեփականություն ձեռք բերելու հնարավորությունը, որին տիրապետողը տիրապետում և օգտագործում է, մասնավորապես, վարձակալության, պահատվության կամ այլ պայմանագրերի հիման վրա, թեկուզև՝ բարեխիղճ, բացահայտ, անընդմեջ և երկարատև, սակայն իր պայմանագրային պարտավորությունների գիտակցմամբ այն համարելով ուրիշի գույք և այն տիրապետելով ոչ որպես սեփական գույք: Այն կոչված է պաշտպանելու գույքի բարեխիղճ տիրապետողի իրավունքները: ՀՀ քաղ. օր.-ի 187 հոդվածը չի խոչընդոտում սեփականության իրավունքի ճանաչմանն ու պաշտպանությանը: Այն նախատեսում է դատական կարգով գույքի բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետողի՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հնարավորություն»:

40. Ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է վերը թվարկված վավերապայմանների *միաժամանակյա* առկայությունը:

41. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռքբերման վաղեմության ուժով գույքը ձեռք բերած անձի մոտ ծագում է այդ իրավունքի պետական գրանցման պահից:

42. Այսպիսով, ձեռքբերման վաղեմությունը հնարավորություն է ընձեռում անշարժ գույքի սեփականատեր չհանդիսացող քաղաքացուն կամ իրավաբանական անձին ժամանակի ընթացքում գույքի նկատմամբ ձևավորված փաստացի տիրապետությունը, եթե այն ապահովված է *կայունությամբ, զերծ է իրավական միջամտությունից և երրորդ անձանց շրջանակներում ճանաչելի է սոցիալական վարքագծով,* փոխակերպել սեփականության իրավունքի:

Ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման իրավական հնարավորությունը սերտորեն փոխկապակցված է գույքը տիրապետողի՝ վերջինիս տիրապետմանն ուղղված վարքագծի հետ, քանզի այդ ինստիտուտի կիրառմամբ անձը (գույքը տիրապետողը) կարող է ձեռք բերել սեփականության իրավունք, եթե դրսևորել է օրենքով սահմանված համապատասխան վարքագիծ: Այնուամենայնիվ, նշված ինստիտուտի կիրառումը պետք է իրականացվի քաղաքացիաիրավական հարաբերությունների համապատասխան մասնակիցների շահերի ողջամիտ հավասարակշռվածության ապահովման պայմաններում, որպեսզի երաշխավորվի նաև գույքի նկատմամբ գրանցված սեփականության իրավունք ունեցող անձանց իրավական պաշտպանությունը, իսկ անշարժ գույքի տիրազուրկ լինելու

պարագայում առանձնակի կարևորվում են նաև քաղաքացիա-դատավարական արդյունավետ ընթացակարգերի սահմանումն ու կիրառումը:

43. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրական դատարանն իր՝ 2018 թվականի հունիսի 19-ի ՍԴՈ-1420 որոշմամբ, մասնավորապես, արձանագրել է.

«(…)

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և իր ծանրությամբ չհանգեցնի իրավունքի էության խախտման» (4.1-ին կետ):

44. Վերոնշյալի համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ***«Տիրազուրկ գույք»*** վերտառությամբ 178-րդ հոդվածի համաձայն՝ «1. Տիրազուրկ է համարվում այն գույքը, որը չունի սեփականատեր, կամ որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից:

(…)

3. Տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել ձեռքբերման վաղեմության ուժով (հոդված 187): Սույն նորմը չի կիրառվում ինքնակամ կառույց հանդիսացող անշարժ գույքի նկատմամբ:

4. Տիրազուրկ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու հիմքերն ու կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ***«Դատարան դիմելու իրավունքը»*** վերտառությամբ 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենսգրքով սահմանված կարգով դիմելու դատարան՝ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

Օրենսգրքի 2-րդ բաժինը սահմանում է առաջին ատյանի դատարանում վարույթների տեսակներն ու դրանց իրականացման ընթացակարգերը, մասնավորապես՝ առաջին ատյանի դատարանում գործերի քննության ընդհանուր կարգը (հայցային վարույթ), հատուկ հայցային վարույթները և հատուկ վարույթները:

45. Վճռաբեկ դատարանը թիվ ԵՄԴ/3384/02/15 քաղաքացիական գործով 2016 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ, *անդրադառնալով հայցային վարույթի և հատուկ վարույթի կարգով գործերի քննության առանձնահատկություններին*, նշել է.

«(...) յուրաքանչյուր քաղաքացիական գործի հարուցման հիմքը հայցի կամ դիմումի առկայությունն է, հետևաբար շահագրգիռ անձը քաղաքացիական դատավարության կարգով իր իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանությունն իրականացնում է դատարան կամ հայց, կամ դիմում ներկայացնելով: Ընդ որում, կախված այն հանգամանքից, թե քաղաքացիական գործի հարուցման հիմքում ընկած է դիմումը, թե հայցադիմումը, օրենսդիրն առանձնացրել է հատուկ և հայցային վարույթները, որոնք միմյանցից էականորեն տարբերվում են և ունեն գործերի քննության իրենց բնորոշ առանձնահատկություններ: Ըստ այդմ էլ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ դրանցից յուրաքանչյուրին: Այսպես, հայցային վարույթը քաղաքացիական դատավարության հիմնական տեսակն է, քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, հողային, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ իրավահարաբերություններից ծագող սուբյեկտիվ իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին վերաբերող վեճերի քննությանն ու լուծմանն ուղղված դատարանի գործողությունը, որը կարգավորվում է քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերով: Իրավունքի պաշտպանության հայցային վարույթում առկա են՝

1) կողմի՝ խախտված կամ վիճարկվող իրավունքից ծագող և օրենքով սահմանված որոշակի կարգով քննության ենթակա նյութաիրավական պահանջ, այսինքն՝ հայց,

2) սուբյեկտիվ իրավունքի մասին վեճ,

3) հակադիր շահերով օժտված երկու կողմեր, որոնք օժտված են նաև իրենց իրավունքները և օրինական շահերը դատարանում պաշտպանելու որոշակի լիազորություններով:

Մինչդեռ հատուկ վարույթի կարգով դատարանը հաստատում է քաղաքացիների կամ կազմակերպությունների գույքային կամ անձնական ոչ գույքային իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարման հիմք հանդիսացող իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը, քաղաքացու որոշակի իրավական վիճակը կամ նրան պատկանող իրավունքը: Հատուկ վարույթը բնորոշվում է հետևյալ հատկանիշներով՝

1) այստեղ իրավունքի մասին վեճ չկա, քանի որ դիմողն այլ անձանց որևէ նյութաիրավական պահանջ չի ներկայացնում,

2) հատուկ վարույթին բնորոշ է ոչ թե վեճի բացակայությունն ընդհանրապես, այլ դատական մարմինների քննությանն օրենքով հանձնված իրավունքի մասին վեճի բացակայությունը,

3) հատուկ վարույթում դատարանի լուծմանը ենթակա իրավունքի մասին վեճ չկա, ուստի այստեղ չկան նաև հայցվոր ու պատասխանող, այստեղ կան միայն դիմողներ և շահագրգիռ այլ անձինք,

4) հատուկ վարույթում չկա նաև հայց:

Այսպիսով հատուկ վարույթի գործերով բացակայում է իրավունքի մասին վեճը, իսկ շահագրգիռ անձն էլ որևէ մեկի դեմ որևէ պահանջ չի ներկայացնում: Այսինքն՝ հատուկ վարույթի գործերով բացակայում է դատարանի քննությանը ենթակա (նրա լուծմանը հանձնված) իրավունքի մասին վեճը»:

46. Թիվ ԵԴ/3061/02/19 քաղաքացիական գործով 2021 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է.

«(...) հատուկ վարույթի, այդ թվում նաև՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի քննության գործերի հիմնական նպատակն այնպիսի փաստերի վեր հանումը և հաստակեցումն է, որոնց հետ օրենսդիրը կապում է դիմումատուի որոշակի իրավունքների և պարտականությունների ծագումը, փոփոխումը և դադարումը: Այլ կերպ ասած՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի քննության գործերի (հատուկ վարույթ) վարույթը կոչված է վերացնել այն փաստական հանգամանքների անորոշությունը, որոնք անմիջականորեն կապված են դիմողի՝ օրենքով պաշտպանվող շահերի հետ: Ըստ այդմ էլ՝ այդ վարույթում ենթակա չէ քննության որևէ նյութաիրավական պահանջ, այլ՝ տվյալ վարույթում հաստատման են ենթակա այնպիսի փաստեր, որոնք անհրաժեշտ են դիմումատուին՝ օրենքով իրեն վերապահված իրավունքը լիարժեք իրականացնելու համար: Հատուկ վարույթի վերջնական նպատակը նույնպես նյութական իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է, բայց այդ նպատակն այս վարույթում իրականացվում է ոչ թե

խախտված կամ վիճարկվող իրավունքը վերականգնելու միջոցով, ինչպես դա կատարվում է հայցային վարույթում, այլ՝ իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը, քաղաքացիների որոշակի իրավական վիճակը, քաղաքացիների կամ իրավաբանական անձանց այս կամ այն իրավունքը հաստատելու միջոցով, որի հիման վրա դիմողը հնարավորություն է ստանում իրավասու մարմիններում (ոչ դատական) իրացնել իր իրավունքները և օրինական շահերը: Հատուկ վարույթին բնորոշ է ոչ թե վեճի բացակայությունն ընդհանրապես, այլ՝ իրավունքի մասին վեճի բացակայությունը: Դատարանը հետևություններ չի անում դիմողի խնդրանքով հաստատված փաստերից բխող իրավունքների և պարտականությունների մասին: Այդ փաստերի հիման վրա ծագող իրավունքների իրականացման հարցը լուծում են իրավասու անձինք և մարմինները՝ սոցիալական ապահովության, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և այլ մարմինները: Հատուկ վարույթի կարգով քննվող գործերով հնարավոր է ծագի համապատասխան փաստի հաստատման վերաբերյալ վեճ, նկատի ունենալով, որ յուրաքանչյուր փաստի հաստատումն իր հերթին պահանջում է համապատասխան ապացույցների կազմ»:

47. Վերոնշյալի համատեքստում, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ 1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ուժը կորցրել է 09.04.2018 թ.)՝ ***«Գույքը տիրազուրկ ճանաչելու գործերի վարույթը»*** վերտառությամբ 33-րդ գլխի ներքո արտացոլված 186-րդ հոդվածով սահմանված էր.

«(…) Անշարժ գույքը տիրազուրկ ճանաչելու վերաբերյալ դիմումը տրվում է այդ գույքի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան»:

Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ դատարանի կողմից քննվող գործերին վերաբերում էր 1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածը:

48. Օրենսգրքի՝ ***«Հատուկ վարույթի կարգով քննվող գործերը»*** վերտառությամբ 236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Դատարանը հատուկ վարույթի կարգով քննում է հետևյալ գործերը.

1) իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերը.

2) շարժական գույքը տիրազուրկ ճանաչելու և դրա նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ գործերը.

(…)»:

49. Օրենսգրքի՝ ***«Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ դատարանի կողմից քննվող գործերը»*** վերտառությամբ 237-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հաստատում է այն փաստերը, որոնցից կախված է, ի թիվս այլնի, *քաղաքացիների գույքային իրավունքների*

ծագումը: Օրենսգրքի հիշյալ հոդվածի 2-րդ մասով սահմանված է իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ դատարանի քննությանը ենթակա գործերի շրջանակը: Օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *դատարանն օրենքով նախատեսված դեպքերում քննում է իրավաբանական նշանակություն ունեցող այլ փաստեր*:

50. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անշարժ գույքը տիրազուրկ ճանաչելու և դրա նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ գործերը հատուկ վարույթի կարգով քննվող գործերի շարքում թեև ուղղակիորեն ամրագրված չեն, իրավակիրառ պրակտիկայում դրանք դիտարկվում են որպես իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման շրջանակներում քննվող գործեր՝ Օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասի համատեքստում դիտարկվելով որպես *«այլ փաստեր»*:

51. Այսպես՝ *Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/2333/02/16 քաղաքացիական գործով 2021 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ արձանագրել է*. «Անդրադառնալով դատական կարգով հաստատման ենթակա իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի շրջանակին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև ինչպես Նախկին օրենսգրքով, այնպես էլ՝ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված է այդ փաստերի հնարավոր շրջանակը, սակայն այն սպառիչ չէ, և դատարանն օրենքով նախատեսված դեպքերում կարող է քննել իրավաբանական նշանակություն ունեցող այլ փաստերի հաստատման վերաբերյալ դիմումներ: Նման օրինակ կարող է հանդիսանալ անշարժ գույքի սեփականատեր չհանդիսացող անձի կողմից համապատասխան դիմումի ներկայացումը դատարան՝ անշարժ գույքը տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ որպես սեփական գույք տիրապետելու վերաբերյալ փաստերի հաստատման մասին: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերը թվարկված հանգամանքներն իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր են, որոնց միաժամանակյա առկայությունը հանգեցնում է տվյալ անշարժ գույքի նկատմամբ շահագրգիռ սուբյեկտի սեփականության իրավունքի ծագմանը: Ընդ որում, այն դեպքում, երբ նշված փաստերի հաստատման վերաբերյալ դիմումը հատուկ վարույթի կարգով քննելիս վեճ է ծագում իրավունքի մասին, դատարանը պարտավոր է դիմումը թողնել առանց քննության: Վճռաբեկ դատարանը միաժամանակ հարկ է համարում հավելել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի հիմքով շահագրգիռ անձի դատական պաշտպանության իրավունքը կարող է իրականացվել թե ընդհանուր հայցային, և թե հատուկ վարույթի կարգով: Հատուկ վարույթի կարգով դատական պաշտպանության իրավունքի իրականացումն այս դեպքում կարող է կենսագործվել իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վարույթում՝ անշարժ գույքը տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ որպես սեփական գույք

տիրապետելու մասին փաստերի հաստատման դիմումի ներկայացմամբ և քննությամբ: Նման կառուցակարգը պետք է կիրառելի լինի բոլոր այն դեպքերում, երբ շահագրգիռ անձը համոզմունք ունի առ այն, որ որևէ այլ անձ տվյալ գույքի վերաբերյալ հավակնություն չունի և բացառվում է իրավունքի վերաբերյալ վեճի ծագման հնարավորությունը կամ սեփականատերն անհայտ է:

Հակառակ պարագայում, ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունք ապահովելու անհրաժեշտությունից և դատական ռեսուրսներն արդյունավետ կերպով օգտագործելու պահանջից ելնելով՝ շահագրգիռ անձն իր իրավունքների դատական պաշտպանությունը պետք է նախաձեռնի և իրականացնի ընդհանուր հայցային վարույթի կարգով՝ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման պահանջ ներկայացնելով տվյալ գույքի նկատմամբ հնարավոր հավակնություններ ունեցող անձանց նկատմամբ»:

52. Հաշվի առնելով խնդրո առարկա հարցի համատեքստում Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշումը՝ տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման վերաբերյալ գործերով փաստերի հաստատումը, որոնցից կախված է օրենքով նախատեսված՝ քաղաքացիների գույքային իրավունքների ծագումը, դատարանի կողմից ենթակա է քննության հատուկ վարույթի կարգով՝ Օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան[1]:

Այսպիսով, *ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178 և 187-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում և կարգով՝ անձը կարող է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք ձեռք բերել տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ, եթե ձեռքբերման վաղեմության շրջանակներում անշարժ գույքի սեփականատեր չհանդիսացող քաղաքացու կամ իրավաբանական անձի՝ այդ գույքի տիրապետումը համապատասխանի օրենքով նախատեսված պահանջներին, այն է՝ տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետի այդ գույքը որպես իր սեփականը*, որպիսի փաստերի հաստատումն իրականացվում է Օրենսգրքի 236 և 237-րդ հոդվածներով՝ հատուկ վարույթի կարգով քննվող՝ *իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերով:*

Հետևաբար՝ տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք ձեռք բերելու հնարավորությունն իրավակիրառ պրակտիկայում իրացվում է Օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասին

[1] Օրենսգրքի 237-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի առնչությամբ իրավակիրառ պրակտիկան զարգացել է այն ուղով, որի պայմաններում նշված դրույթը մեկնաբանվում և կիրառվում է այնպես, որ հատուկ վարույթի կարգով հաստատման է ենթակա արդեն իսկ ծագած սեփականության իրավունքով գույքի տիրապետման փաստը, այլ ոչ թե անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման/ծագման փաստը:

համապատասխան՝ *չշեղվելով մարդու իրավունքների գերակայությունը երաշխավորող սահմանադրական հունից:*

53. Փաստորեն, օրենսդրական *գործող կարգավորումների պայմաններում փիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք ձեռք բերելու հավակնություն ունեցող անձը, հատուկ վարույթի կարգով դիմում ներկայացնելով, կարող է պահանջել՝ այդ գույքը որպես իր սեփականը փասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ փիրապետելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատում, որոնց միաժամանակյա առկայությունը հանգեցնելու է նշված անշարժ գույքի նկատմամբ շահագրգիռ անձի սեփականության իրավունքի ծագմանը:*

54. Վերոնշյալի լույսի ներքո անդրադառնալով սույն գործին՝ Սահմանադրական դատարանը փաստում է.

Վերաքննիչ քաղաքացիական դատարանը (թիվ ՇԴ/0851/02/25 քաղաքացիական գործով) 2025 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ արձանագրել է. «Ուստի, սեփականության իրավունքով գույքի տիրապետմանը վերաբերող դիմումները, որոնք բովանդակային առումով կապված են ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման հետ, կարող են ներկայացվել անշարժ գույքը տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ որպես սեփական գույք տիրապետելու փաստերի հաստատման համար:

Այսինքն, դատարանի կողմից հատուկ վարույթի կարգով քննվող գործերի թույլատրելի շրջանակում անշարժ գույքի նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ձեռքբերման վաղեմության ուժով **ճանաչելու** վերաբերյալ գործերը ներառված չեն: Այլ կերպ ասած՝ գործող դատավարական օրենսդրությամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը **ճանաչելու** վերաբերյալ պահանջները կարող են ներկայացվել միայն ընդհանուր հայցային վարույթի կարգով»:

55. Վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ Օրենսգրքի 237-րդ հոդվածի վերաբերյալ վերոնշյալ մեկնաբանության առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գույքի տիրապետմանը վերաբերող դիմումները, որոնք բովանդակային առումով կապված են ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման հետ, ներկայացվում են անշարժ գույքը տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ որպես սեփական գույք տիրապետելու իրավաբանական նշանակության փաստերի հաստատման գործերի քննության կարգով՝ հատուկ վարույթի շրջանակներում:

56. Միևնույն ժամանակ, Դիմողի՝ դիմումի խնդրամասում արտացոլված խնդրանքը՝ *«անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքը»* ձևակերպվելու արդյունքում մերժվել է այն

պատճառաբանությամբ, որ «դատարանի կողմից հատուկ վարույթի կարգով քննվող գործերի թույլատրելի շրջանակում անշարժ գույքի նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչելու վերաբերյալ գործերը ներառված չեն: Այլ կերպ ասած՝ գործող դատավարական օրենսդրությամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ պահանջները կարող են ներկայացվել միայն ընդհանուր հայցային վարույթի կարգով», ինչի առնչությամբ հարկ է նշել, որ *գործող դատավարական օրենսդրությամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ պահանջները չեն կարող ներկայացվել ընդհանուր հայցային վարույթի կարգով, երբ առկա չէ նյութահիրավական վեճ*:

57. Վերաքննիչ քաղաքացիական դատարանի հիշյալ մեկնաբանությունից հետևում է, որ տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչելու վերաբերյալ գործերը, ներառված չլինելով դատարանի կողմից հատուկ վարույթի կարգով քննվող գործերի թույլատրելի դատավարական շրջանակում, ենթակա չեն քննության հատուկ վարույթի կարգով:

Միաժամանակ, հայցային վարույթի կարգով գործերի քննությանը ներհատուկ հատկանիշի՝ նյութահիրավական վեճի բացակայության պայմաններում դրանք, փաստորեն, չեն կարող քննության ենթակա լինել նաև հայցային վարույթների շրջանակում:

58. Սահմանադրական դատարանը գտնում է, որ **տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման վերաբերյալ գործերով դատարան դիմող անձի պահանջի ձևակերպման ոչ բավարար հստակությունը դիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելիս, ինքնին, չի կարող դառնալ դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման հիմք. դատարանների կողմից պահանջի ձևակերպման մասով ձևապաշտական մոտեցման որդեգրումը խաթարում է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի սահմանադրական բովանդակությունը:** *Այն դեպքերում, երբ դիմումի բովանդակությունից ակնհայտ է, որ անձը փաստացի պահանջում է վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար օրենքով նախատեսված պարտադիր պայմանների միաժամանակյա առկայության հաստատում, դատարանը դիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելիս իր սահմանադրական առաքելության շրջանակներում պետք է առաջնորդվի դիմումի իրական նպատակով և դիմումի բովանդակության, նյութական պահանջի էության բացահայտմամբ, այլ ոչ թե պահանջի բառացի ձևակերպման թերություններով: Դատավարական ձևի գերակայությունը իրավունքի նկատմամբ չի կարող դիտարկվել որպես արդարացված*

սահմանափակում, առավել ևս, երբ խոսքը վերաբերում է անձի՝ ***արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքին:***

59. Տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչումն իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի, այն է՝ տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ անձի կողմից որպես իր սեփական գույքը տիրապետելու փաստերի հաստատման ուժով այդ իրավունքի ճանաչմանն ուղղված հատուկ ընթացակարգի վերջնարդյունք է. ուստի՝ գույքային իրավունքի ճանաչումը որևէ պարագայում չի նույնացվում իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման հետ, և գույքային իրավունքի ճանաչումը ներառում է մի շարք իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատում, առանց որոնց հնարավոր չէ լուծել այդ իրավունքի ճանաչման հարցը: Հետևաբար՝ Օրենսգրքի 236 և 237-րդ հոդվածներով՝ անշարժ գույքը տիրազուրկ ճանաչելու և դրա նկատմամբ Դիմողի կողմից սեփականության իրավունք ձեռք բերելու վերաբերյալ գործերը՝ հատուկ վարույթի կարգով քննվող գործերի շարքում նախատեսված չլինելու պայմաններում Վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանության շրջանակներում փորձ է արվել երաշխավորելու ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված նյութական իրավունքի դատավարական (ընթացակարգային) պաշտպանության կառուցակարգ՝ նշված իրավունքի արդյունավետ իրացման և դատական պաշտպանության միջոցով ապահովման համար: Նման պայմաններում իրավակիրառ պրակտիկայում տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման վերաբերյալ գործերով դատարան դիմող անձի կողմից՝ *«անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով իր սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի»* ձևակերպմամբ հատուկ վարույթի կարգով դատարան ներկայացված դիմումը վարույթ ընդունելը ձևականացված մոտեցմամբ մերժելը խոչընդոտում է նշված նյութական իրավունքի արդյունավետ իրացմանը դատական պաշտպանության միջոցով:

60. Դատարանների կողմից դիմումի պահանջի ձևակերպման շուրջ ձևական մոտեցման որդեգրումը փաստացի հանգեցնում է անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման: Հետևաբար՝ իրավակիրառ պրակտիկայում պահանջի հստակ ձևակերպման մասով խիստ ձևականացված մոտեցման դրսևորումը չպետք է վերածվի նյութական իրավունքի իրացման արգելքի:

61. *Տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման վերաբերյալ գործերով դատարանը հատուկ վարույթի կարգով իրավաբանական նշանակություն ունեցող այլ փաստերի*

շարքում իրավասու է քննելու նաև օրենքով նախատեսված պարտադիր պայմանների՝ անշարժ գույքը փասը փարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ որպես սեփական գույք փիրապետելու հանգամանքների համակցված առկայության հաստատման վերաբերյալ դիմողի պահանջը:

Միևնույն ժամանակ, իրավակիրառ պրակտիկան պետք է զարգանա նյութական իրավունքի նկատմամբ դատավարական ձևականության գերակայության հաղթահարման միտումով՝ ապահովելով դիմումը վարույթ ընդունելու փուլում ներկայացված պահանջի բովանդակային գնահատումը: Այն դեպքերում, երբ դիմումի էությունից ակնհայտ է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք ձեռք բերելու նպատակով ներկայացված պահանջը, թեև ձևակերպված է որպես ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման պահանջ, այնուամենայնիվ, ըստ էության ենթադրում է ձեռքբերման վաղեմության իրավական նախադրյալների՝ նշված իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի միաժամանակյա հաստատման անհրաժեշտություն, դատարանները պետք է առաջնորդվեն դիմումի նյութական նպատակով՝ հաղթահարելով պահանջի ձևակերպման խստությունը և ապահովելով դրանց ըստ էության քննությունը՝ երաշխավորելով դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումը: Ընթացակարգային որևէ խոչընդոտ չի կարող գերակայել արդարադատության շահին:

62. Հաշվի առնելով ողջ վերոգրյալը՝ *Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերով դատարան դիմող անձի պահանջի ձևակերպման ոչ բավարար հստակությունը դիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելիս, ինքնին, չի կարող դառնալ անձի դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման հիմք, որպիսի պայմաններում դատարանը պետք է առաջնորդվի դիմումի բուն էությամբ:*

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին և 4-5-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման

վերաբերյալ գործերով դատարան դիմող անձի պահանջի ձևակերպման ոչ բավարար հստակությունը դիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելիս, ինքնին, չի կարող դառնալ անձի դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման հիմք, որպիսի պայմաններում դատարանը պետք է առաջնորդվի դիմումի բուն էությամբ:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասը Դիմողի նկատմամբ կիրառվել է վերոնշյալ մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

26 մայիսի 2026 թվականի
ՍԴՈ-1830

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԱՍԻԱՅՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ» ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 16 հունիսի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող),
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի (զեկուցող),
Արթուր Վաղարշյանի,
Վլադիմիր Վարդանյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Ասիայում մշակութային ժառանգության դաշինքի» կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2026 թվականի ապրիլի 20-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ կանոնադրությունը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Ասիայում մշակութային ժառանգության դաշինքի» (այսուհետ՝ ԱՄԺԴ) կանոնադրությունն ընդունվել է 2023 թվականի ապրիլի 24-ին: ԱՄԺԴ նպատակն է Ասիայում մշակութային ժառանգության պահպանության և օգտագործման կարողությունների բարելավումը, տնտեսության, հասարակության, մշակույթի, զբոսաշրջության և շրջակա միջավայրի պահպանության զարգացմանը համընթաց՝ Ասիայում մշակութային ժառանգության երկարաժամկետ պահպանության համակարգումը, ասիական երկրների միջև միջանձնային կապերի ընդլայնումը, ասիական քաղաքակրթությունների փոխանցման դյուրացումը և Ասիայի համար ընդհանուր ապագա ունեցող համայնքի ձևավորումը:

2. ԱՄԺԴ-ն բաղկացած է Ընդհանուր ժողովից, Խորհրդից, Գիտական կոմիտեից և Քարտուղարությունից:

3. ԱՄԺԴ-ն իրականացնում է հետևյալ գործունեությունը.

- աջակցություն համատեղ նախագծերի իրականացմանը Ասիայում մշակութային ժառանգության պահպանության և կառավարման ոլորտում՝ ներառյալ, սակայն չսահմանափակվելով հետևյալ ոլորտներով՝ հնագիտություն, ժառանգության օբյեկտների պահպանություն և վերականգնում, միջթանգարանային փոխանակում, Համաշխարհային մշակութային ժառանգության անվանակարգում, պահպանություն և կառավարում, մշակութային արժեքների ապօրինի ներմուծման, արտահանման և սեփականության փոխանցման կանխարգելում մշակութային արժեք հանդիսացող կորած օբյեկտների վերադարձի և փոխհատուցման դյուրացում,
- համաժողովների, ֆորումների և մշակութային ժառանգության ոլորտում այլ միջոցառումների կազմակերպում,
- մասնագիտական վերապատրաստման և կարողությունների զարգացմանն ուղղված համագործակցության խթանում,
- փոխանակման ծրագրերի և համագործակցության արդյունքների և ձեռքբերումների ներկայացում և տարածում:

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ 2024 թվականի նոյեմբերի 26-ին Սահմանադրական դատարանը քննության է առել «Մշակութային ժառանգության ասիական դաշինք» կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը (ՍԴՈ-1763): Համաձայն հիշյալ կանոնադրության 2-րդ հոդվածի՝ Մշակութային ժառանգության ասիական դաշինքը (ՄԺԱԴ) հանդիսանում է կամավոր մասնակցության, հավասարության, փոխադարձ հարգանքի և փոխադարձ շահի սկզբունքների հիման վրա ասիական երկրների կողմից ստեղծված միջկառավարական **համագործակցության մեխանիզմ**:

5. Քննության առարկա սույն կանոնադրությունը ենթարկվել է մասնակի փոփոխությունների՝ պայմանավորված, ի թիվս այլնի, այն հանգամանքով, որ ներկայիս բովանդակությամբ կանոնադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ ԱՄԺԴ-ն կամավոր մասնակցության, հավասարության, փոխադարձ հարգանքի և փոխադարձ շահի սկզբունքների հիման վրա ասիական երկրների կողմից ստեղծված միջկառավարական **կազմակերպություն** է:

Ուստի՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը ԱՄԺԴ կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելիս պարտավորությունների սահմանադրականությունը գնահատում է ԱՄԺԴ միջազգային հանրային իրավասուբյեկտության նոր կարգավիճակով պայմանավորված իրողության լույսի ներքո:

6. Կանոնադրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

- պահպանել Կանոնադրության պահանջները և հարակից նորմերն ու կանոնները և կատարել ԱՄԺԴ կայացրած որոշումները (հոդված 9, մաս 1),
- պաշտպանել ԱՄԺԴ շահերը և օրինական իրավունքները (հոդված 9, մաս 2),
- նախաձեռնել ԱՄԺԴ միջոցառումների կազմակերպումը, մասնակցել դրանց և նպաստել դրա ամրապնդմանն և զարգացմանը (հոդված 9, մաս 3),
- աշխատել ԱՄԺԴ համաշխարհային տեսանելիության մեծացման ուղղությամբ (հոդված 9, մաս 4),
- նշանակել մասնագիտացված մարմին՝ ընթացիկ գործունեության իրականացմանն աջակցելու նպատակով Քարտուղարության հետ հաղորդակցությունն ապահովելու համար (հոդված 9, մաս 5):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Ասիայում մշակութային ժառանգության դաշինքի» կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

16 հունիսի 2026 թվականի
ՍԴՈ-1831



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

1996 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՅԻ 11-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 16 հունիսի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող),
Արտակ Զեյնալյանի (զեկուցող),
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,
Վլադիմիր Վարդանյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1996 թվականի մայիսի 3-ին ստորագրված՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 11-րդ հոդվածում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2026 թվականի ապրիլի 18-ի N 511-Ա որոշմամբ հավանություն է տվել 1996 թվականի մայիսի 3-ին ստորագրված «Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 11-րդ հոդվածը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված խարտիայի 11-րդ հոդվածում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2026 թվականի ապրիլի 20-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ խարտիան, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան (այսուհետ նաև՝ Խարտիա) ստորագրվել է 1996 թվականի մայիսի 3-ին՝ մարդու իրավունքների արմատական պաշտպանության և ազատության ամրապնդման միջոցով՝ Եվրոպական խորհրդի անդամների միջև ընդհանուր ժառանգություն հանդիսացող գաղափարների և սկզբունքների պահպանմանը և իրագործմանը, ինչպես նաև իրենց տնտեսական և սոցիալական զարգացմանը նպաստելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության կողմից Խարտիան ստորագրվել է 2001 թվականի հոկտեմբերի 18-ին և վավերացվել է 2003 թվականի դեկտեմբերի 25-ին՝ Ազգային ժողովի Ն-064-3 որոշմամբ՝ կից հայտարարությամբ (ՍԴՈ-460), Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004 թվականի մարտի 1-ից:

Խարտիան ստորագրելիս Հայաստանի Հանրապետությունը հայտարարել է, որ առաջնորդվելով Խարտիայի 3-րդ Մասի Ա հոդվածի 1-ին կետի բ) և գ) ենթակետերի դրույթներով՝ իրեն պարտավորված է համարում 1, 5, 6, 7, 8, 17, 18, 19, 20, 22, 24, 27 և 28-րդ հոդվածներով, ինչպես նաև 2-րդ հոդվածի 1, 2, 3, 4, 5 և 6-րդ կետերով, 3-րդ հոդվածի 1-ին կետով, 4-րդ հոդվածի 2, 3, 4 և 5-րդ կետերով, 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, 14-րդ հոդվածի 2-րդ կետով և 15-րդ հոդվածի 2 և 3-րդ կետերով:

3. Սահմանադրական դատարանն իր՝ 2003 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-460 որոշմամբ արձանագրել է. «Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայում ամրագրված իրավունքները համահունչ են ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու և քաղաքացու համապատասխան իրավունքներին: Հայաստանի Հանրապետության օրենսդրական

համակարգը պարունակում է իրավական անհրաժեշտ նախադրյալներ նշված իրավունքները Հայաստանում բնակվող կամ նրա իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր անձին երաշխավորելու համար»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոհիշյալ նկատառումը համահունչ է հիմնական իրավունքների ու ազատությունների և միջազգային իրավական պրակտիկայի՝ Սահմանադրության 81-րդ հոդվածով սահմանված սկզբունքներին:

4. Կառավարության 2026 թվականի ապրիլի 18-ի N 511-Ա որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կողմից Խարտիայի 11-րդ հոդվածը վավերացվելու է կից հայտարարությամբ, ըստ որի՝ համաձայն Խարտիայի 3-րդ Մասի Ա հոդվածի 1-ին կետի «բ» և «գ» ենթակետերի՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է կապված լինել Խարտիայի 11-րդ հոդվածով:

5. Խարտիայի 11-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությունն առողջության պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով պարտավորվում է, ուղղակիորեն կամ պետական կամ մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցելով, ձեռնարկել համապատասխան միջոցներ, որոնք, *inter alia,* ուղղված կլինեն հնարավորին չափ վերացնելու վատառողջության պատճառները, ապահովելու խորհրդատվական և կրթական հնարավորություններ՝ առողջությանը նպաստելու և առողջության հարցերում անհատի պատասխանատվությունը խրախուսելու նպատակով, հնարավորին չափ կանխելու համաճարակային, տեղական (էնդեմիկ) և այլ հիվանդությունները, ինչպես նաև դժբախտ պատահարները:

6. Սահմանադրական դատարանը Խարտիայի 11-րդ հոդվածով ստանձնվելիք պարտավորությունները դիտարկում է ՍԴՈ-460 որոշմամբ արդեն իսկ ուսումնասիրված դրույթների համատեքստում:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համաձայն Խարտիայի 5-րդ Մասի Ը հոդվածի՝ Խարտիայի դրույթները չպետք է վնասեն ներպետական օրենսդրության կամ ցանկացած երկկողմ կամ բազմակողմ պայմանագրի, կոնվենցիայի կամ համաձայնագրի դրույթների, որոնք ուժի մեջ են կամ կարող են ուժի մեջ մտնել, համաձայն որոնց՝ ավելի բարենպաստ վերաբերմունք կտրամադրվի պաշտպանված անձանց:

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Խարտիայի 11-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության ստանձնվելիք պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 25-րդ հոդվածի 1-ին մասին և 86-րդ հոդվածի 7, 8 և 16-րդ մասերով սահմանված՝ պետության քաղաքականության հիմնական նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1996 թվականի մայիսի 3-ին ստորագրված՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 11-րդ հոդվածում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

16 հունիսի 2026 թվականի
ՍԴՈ-1832

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան — 16 հունիսի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող),
Արտակ Զեյնալյանի
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի (զեկուցող),
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,
Վլադիմիր Վարդանյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Արտաքին գործերի նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանի,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◊ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◊ 3(124) 2026

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2025 թվականի նոյեմբերի 21-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև Ղազախստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետությունում Ղազախստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների շենքերի կառուցման համար հողատարածքների փոխադարձ տրամադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2026 թվականի ապրիլի 23-ի N 548-Ա որոշմամբ հավանություն է տվել «2025 թվականի նոյեմբերի 21-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև Ղազախստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետությունում Ղազախստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների շենքերի կառուցման համար հողատարածքների փոխադարձ տրամադրման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2026 թվականի ապրիլի 27-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև Ղազախստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետությունում Ղազախստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների շենքերի կառուցման համար հողատարածքների փոխադարձ տրամադրման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2025 թվականի նոյեմբերի 21-ին Աստանա քաղաքում՝ երկու երկրների միջև դիվանագիտական

ներկայացուցչությունների գտնվելու և աշխատանքի պատշաճ պայմաններն ապահովելու նպատակով:

2. Ըստ Համաձայնագրի՝

1) Հայկական Կողմը Ղազախական Կողմին քառասունհինը (49) տարի ժամկետով օգտագործման է տրամադրում Երևան քաղաքում՝ Ծովակալ Իսակովի պողոտա 17/1 գտնվող՝ շինություններից և տարանցիկ հաղորդակցուղիներից ազատ 0,33 հա ընդհանուր մակերեսով հողատարածք՝ Ղազախական կողմի հաշվին Ղազախստանի Հանրապետության դեսպանության շենքերի և շինությունների կառուցման նպատակով: Հողատարածքի վարձավճարի չափը կազմում է տարեկան մեկ դրամ (հոդված 1),

2) Ղազախական Կողմը Հայկական Կողմին քառասունհինը (49) տարի ժամկետով օգտագործման է տրամադրում Աստանա քաղաքում՝ Արգանատի փողոց, տարածք 24/2 գտնվող՝ շինություններից և տարանցիկ հաղորդակցուղիներից ազատ 0,33 հա ընդհանուր մակերեսով հողատարածք՝ Հայկական Կողմի հաշվին Հայաստանի Հանրապետության դեսպանության շենքերի և շինությունների կառուցման նպատակով: Հողատարածքի վարձավճարի չափը կազմում է տարեկան մեկ տենգե (հոդված 2):

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

3.1. երաշխավորել, որ Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված հողատարածքը տրամադրվի պարտքերից, երրորդ կողմերի իրավունքներից ազատ, չգրավադրված և որևէ այլ կերպով չծանրաբեռնված, ինչը կխոչընդոտի Համաձայնագրի նպատակներով դրանց օգտագործումը (հոդված 3),

3.2. երաշխավորել, որ Համաձայնագրի 2-րդ հոդվածում նշված հողատարածքը կօգտագործվի միայն Համաձայնագրով նախատեսված նպատակներով (հոդված 4),

3.3. Համաձայնագրին համապատասխան տրամադրված հողատարածքը չընդլայնել, չվաճառել, չծանրաբեռնել, որպես սեփականություն՝ չփոխանցել, վարձակալության կամ ենթավարձակալության չհանձնել երրորդ կողմի՝ առանց Ղազախական Կողմի հստակ արտահայտված գրավոր համաձայնության (հոդված 5, պարբերություն 1),

3.4. Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետներում ապահովել Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված շենքերի, շինությունների սեփականության իրավունքի և հողատարածքների օգտագործման իրավունքի իրավաբանական ձևակերպումը, ինչպես նաև իրականացնել համապատասխան փաստաթղթերի

միաժամանակյա փոխանակում՝ փոխհամաձայնեցված ժամկետներում (հոդված 6),

3.5. սեփական միջոցների հաշվին ապահովել ինժեներական ցանցերի և հաղորդակցուղիների (ջրամատակարարում, ջերմամատակարարում, գազատար, կոյուղի, էլեկտրաէներգիա, կապ և այլն) մոտեցումը մինչև Ղազախական Կողմին տրամադրված հողատարածքի սահմաններ, ինչպես նաև կատարել այդ հաղորդակցուղիների միացումը քաղաքային ցանցերին (հոդված 8):

4. Համաձայնագրով նախատեսվում է, որ՝

4.1. դիվանագիտական ներկայացուցչությունների շենքերի և շինությունների կառուցումը Համաձայնագրի 1-ին և 2-րդ հոդվածներում նշված հողատարածքներում կարող է իրականացվել միայն ընդունող պետության օրենսդրության պահանջներին համապատասխան շինարարության կամ վերակառուցման թույլտվություն ստանալուց հետո (հոդված 9),

4.2. հողատարածքները և դրանց վրա կառուցված շենքերն ու շինություններն ազատվում են ընդունող պետության կողմից սահմանվող բոլոր տեսակի հարկերից, վճարներից և այլ պարտադիր վճարումներից՝ բացառությամբ հողատարածքի օգտագործման վարձավճարի (հոդված 10, պարբերություն 1),

4.3. հողատարածքն օգտագործող Կողմը շենքերի և շինությունների, ինժեներական հաղորդակցուղիների շահագործումը և բոլոր տեսակի վերանորոգումները, հողատարածքների պահպանումը կատարում է իր հաշվին (հոդված 10, պարբերություն 2),

4.4. կոմունալ ծառայությունների (գազամատակարարում, էլեկտրականություն, ջերմամատակարարում, ջրամատակարարում, կոյուղի, տարածքի մաքրում և նմանատիպ այլ ծառայություններ), բոլոր տեսակի կապի ծառայությունների, ինչպես նաև Համաձայնագրի 1-ին և 2-րդ հոդվածներում նշված անշարժ գույքի վերանորոգման և պահպանման համար վճարումը կատարվում է ընդունող պետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների և նրանց աշխատակիցների համար գործող նորմատիվներով և սակագներով՝ ընդունող պետության արժույթով (հոդված 10, պարբերություն 3):

5. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից և կնքվում է քառասունինը (49) տարի ժամկետով (հոդված 13, պարբերություն 1):

6. Համաձայնագրի գործողությունն ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ քառասունիննամյա ժամանակահատվածներով, եթե Կողմերից մեկը

դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին չի ծանուցում Համաձայնագրի գործողությունը չերկարաձգելու իր մտադրության մասին ոչ ուշ, քան ընթացիկ քառասունիննամյա ժամանակահատվածի ավարտից մեկ տարի առաջ: Այդ դեպքում Համաձայնագրի գործողությունը դադարում է այդպիսի ծանուցումն ստանալու ամսաթվից (հոդված 13, պարբերություն 2):

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2025 թվականի նոյեմբերի 21-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև Ղազախստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետությունում Ղազախստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների շենքերի կառուցման համար հողատարածքների փոխադարձ տրամադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

16 հունիսի 2026 թվականի
ՍԴՈ-1833

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔՆԱՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 123-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍՆ ԱՅՆՔԱՆՈՎ, ՈՐՔԱՆՈՎ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՏԱՐԲԵՐ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԳՈՐԾԵՐԸ ՄԵԿ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՄԻԱՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 16 հունիսի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող),
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի (զեկուցող),
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,
Վլադիմիր Վարդանյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Քնարիկ Սահակյանի (այսուհետ նաև՝ Դիմող),
ներկայացուցիչ՝ փաստաբան Մերի Կարապետյանի,
պատասխանողի՝ Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատասխանող)
ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Մարի Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քնարիկ Սահակյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով չի նախատեսում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տարբեր դատավորների վարույթում գտնվող փոխկապակցված գործերը մեկ վարույթում միացնելու ընթացակարգ, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված, ինչպես նաև գործում առկա այլ փաստաթղթերը, Պատասխանողի գրավոր բացատրությունը, վերլուծելով վիճարկվող և վերջինիս հետ փոխկապակցված այլ օրինադրույթներ՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Քնարիկ Սահակյանի դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2026 թվականի ապրիլի 1-ին, որով Դիմողը խնդրել է.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասը այնքանով, որքանով չի նախատեսում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տարբեր դատավորների վարույթում գտնվող փոխկապակցված գործերը մեկ վարույթում միացնելու ընթացակարգ ի խախտումն ՀՀ սահմանադրության 1-ին, 75-րդ, 79-րդ հոդվածների ճանաչել ՀՀ սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված արդյունավետ դատական պաշտպանության և 63-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված արդար դատաքննության իրավունքներին հակասող»:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 27-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին:

3. Օրենսգրքի՝ *«Մի քանի գործեր կամ հայցապահանջներ միացնելը և առանձնացնելը»* վերտառությամբ 123-րդ հոդվածի 2-րդ, 2.1-2.3-րդ, 3 և 4-րդ մասերով սահմանվում է.

«*2. Առաջին ատյանի դատարանն իրավունք ունի մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը մեկ վարույթում միացնելու իր վարույթում քննվող մի քանի միատեսակ գործեր, որոնցով գործին մասնակցող անձինք լրիվ կամ մասնակի համընկնում են, եթե դրանց միջև առկա է փոխադարձ*

կապ, ու դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել գործերի առավել արագ և արդյունավետ լուծումը:

2.1. Քաղաքացիական գործի հարուցումից հետո մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը կողմերը կարող են ներկայացնել հակակոռուպցիոն դատարանի տարբեր դատավորների վարույթներում գտնվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մի քանի գործերը մեկ վարույթում միացնելը թույլատրելու մասին միջնորդություն:

2.2. Հակակոռուպցիոն դատարանի տարբեր դատավորների վարույթներում գտնվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մի քանի գործերը մեկ վարույթում միացնելը թույլատրելու մասին միջնորդությունը ներկայացվում է միացման ենթակա գործերով հայցն առավել վաղ վարույթ ընդունած դատավորին, իսկ եթե հայցերը վարույթ են ընդունվել նույն օրը՝ առավել վաղ մուտքագրված գործը քննող դատավորին:

2.3. Գործերը կարող են միացվել մեկ վարույթում, եթե դրանց միջև առկա է փոխադարձ կապ, դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել գործերի առավել արագ և արդյունավետ լուծումը, և միացման ենթակա բոլոր գործերով դեռևս չեն կայացվել ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումներ:

(...)

3. Առաջին ատյանի դատարանն իրավունք ունի մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առանձին վարույթներում առանձնացնելու միացված պահանջներից մեկը կամ մի քանիսը:

4. Գործերը միացնելու կամ պահանջներն առանձին վարույթներում առանձնացնելու մասին առաջին ատյանի դատարանը կայացնում է որոշում»:

4. Օրենսգրքի վերոնշյալ հոդվածը լրացվել է՝

1) 2021 թվականի հունվարի 19-ի ՀՕ-36-Ն օրենքով՝ 1.1-ին մասով,

2) 2025 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-81-Ն օրենքով՝ 2.1-2.11-րդ մասերով:

5. Սահմանադրական դատարանի դատական կազմի 2026 թվականի ապրիլի 14-ի ՍԴԴԿՈ-27 որոշմամբ Քնարիկ Սահակյանի դիմումի հիման վրա գործն ընդունվել է քննության:

6. Սահմանադրական դատարանի 2026 թվականի մայիսի 6-ի ՍԴԱՈ-68 աշխատակարգային որոշմամբ գործի դատաքննությունը նշանակվել է 2026 թվականի հունիսի 16-ին:

Գործի դատավարական նախապատմությունը

7. Քնարիկ Արմենի Սահակյանը 2025 թվականի սեպտեմբերի 25-ին հայցադիմում է ներկայացրել Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ Արմեն Աղասու

Արշակյանի, իրավասու մարմին՝ Լոռու մարզի Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմին՝ երեխայի բնակության վայրը մոր բնակության վայրում որոշելու և ալիմենտ բռնագանձելու պահանջների մասին: Դատարանի (դատավոր՝ Բակուր Գրիգորյան) 2025 թվականի հոկտեմբերի 1-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ (թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործ):

8. Արմեն Աղասու Արշակյանի ներկայացուցիչը 2025 թվականի սեպտեմբերի 26-ին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Դիմողի, իրավասու մարմին՝ Լոռու մարզի Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմին՝ ամուսնալուծության և երեխայի բնակության վայրը հոր բնակության վայրում սահմանելու պահանջների մասին: Դատարանի (դատավոր՝ Գնել Զաքարյան) 2025 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ (թիվ ԼԴ/1216/02/25 քաղաքացիական գործ):

9. Դիմողի ներկայացուցիչը 2025 թվականի հոկտեմբերի 6-ին ներկայացրել է հակընդդեմ հայցադիմում ընդդեմ Արմեն Աղասու Արշակյանի, իրավասու մարմին՝ Լոռու մարզի Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմին՝ երեխայի բնակության վայրը մոր բնակության վայրում որոշելու և ալիմենտ բռնագանձելու պահանջների մասին:

10. 2025 թվականի հոկտեմբերի 7-ին թիվ ԼԴ/1216/02/25 քաղաքացիական գործով հայցվոր Արմեն Աղասու Արշակյանի ներկայացուցիչը ներկայացրել է միջնորդություն և հայտնել, որ մեկ այլ՝ թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործով 2025 թվականի հոկտեմբերի 1-ին Դատարանը վարույթ է ընդունել Դիմողի հայցն ընդդեմ Արմեն Արշակյանի՝ երեխայի բնակության վայրը մոր բնակության վայրում սահմանելու և ալիմենտ բռնագանձելու պահանջների մասին:

11. Դատարանը 2025 թվականի հոկտեմբերի 7-ին «Հակընդդեմ հայցը վերադարձնելու մասին» որոշմամբ Դիմողի հակընդդեմ հայցադիմումը վերադարձրել է՝ արձանագրելով հետևյալը.

«(...) հակընդդեմ հայցով ներկայացվել են ոչ դրամական պահանջներ, սակայն հակընդդեմ հայցվորը չի նշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ հակընդդեմ պահանջը վարույթ ընդունելու համապատասխան իրավական հիմքը:

Դատարանը նաև կարևորում է այն հանգամանքը, որ թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործով 01.10.2025 թվականի որոշմամբ Դատարանը /դատավոր՝ Բ.Գրիգորյան/ վարույթ է ընդունել Քնարիկ Սահակյանի հայցն ընդդեմ Արմեն Արշակյանի՝ երեխայի բնակության վայրը մոր բնակության վայրում սահմանելու և ալիմենտ բռնագանձելու պահանջների մասին:

Այսինքն, մինչև սույն գործով հակընդդեմ պահանջ ներկայացնելը՝ Քնարիկ Սահակյանն արդեն իսկ նույն պահանջներով հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Արմեն Արշակյանի:

Դատարանն արձանագրում է, որ սույն գործով և թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործով Կողմերը նույնն են, նույն առարկան է, միևնույն փաստական հիմքերով»:

12. Դատարանի 2025 թվականի հոկտեմբերի 7-ի «Հակընդդեմ հայցը վերադարձնելու մասին» որոշման դեմ Դիմողը վերաքննիչ բողոքը էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել է Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան):

13. Վերաքննիչ դատարանը 2025 թվականի հոկտեմբերի 15-ին կայացրել է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և գրավոր ընթացակարգով քննելու մասին որոշում: Վերաքննիչ դատարանը 2025 թվականի հոկտեմբերի 28-ին որոշել է.

«1. Քնարիկ Արմենի Սահակյանի անունից բերված վերաքննիչ բողոքը մերժել: ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴ/1216/02/25 քաղաքացիական գործով 07.10.2025 թվականի՝ «Հակընդդեմ հայցը վերադարձնելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

(...)»:

14. Վերաքննիչ դատարանն իր՝ 2025 թվականի հոկտեմբերի 28-ի որոշմամբ նաև արձանագրել է. *«(...) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 10-րդ կետերի հիմքով հակընդդեմ հայցը վերադարձնելով, Դատարանը ճիշտ եզրահանգում է կատարել: Նախ՝ Բողոք բերած անձը որևէ կերպ չի պատճառաբանել Դատարանի հետևությունների անհիմն լինելը՝ դատավարական առումով, այլ փաստարկել է երեխայի լավագույն շահի խախտման հնարավորությունը՝ կրկին չհիմնավորելով այն: Մինչդեռ, Բողոք բերած անձը չի ժխտում այն ակնառու փաստերը, որ թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործով 01.10.2025 թվականի որոշմամբ դատարանը վարույթ է ընդունել Քնարիկ Սահակյանի հայցն ընդդեմ Արմեն Արշակյանի՝ երեխայի բնակության վայրը մոր բնակության վայրում սահմանելու և ալիմենտ բռնագանձելու պահանջների մասին: Հետևաբար, մինչև սույն գործով հակընդդեմ պահանջ ներկայացնելը՝ Քնարիկ Սահակյանն արդեն իսկ երեխայի բնակության վայրի հետ կապված նույն պահանջով հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Արմեն Արշակյանի: Արդյունքում, քանի որ թիվ ԼԴ/1216/02/25 քաղաքացիական գործով հայցադիմումը դատարանի վարույթ է ընդունվել ավելի վաղ, քան թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործով Քնարիկ Սահակյանի հայցադիմումը, նաև՝ անվիճելի է այն հանգամանքը, որ հակընդդեմ հայցը ներկայացվել է թիվ ԼԴ/1216/02/25 քաղաքացիական գործով, ընդ որում, երկու քաղաքացիական գործով էլ, երեխայի բնակության վայրը որոշելու պահանջով, նույնն*

են կողմերը, հայցի առարկան, փաստական հիմքերը, հետևաբար, հիմնավոր է Դատարանի եզրահանգումն առ այն, որ ներկայացված հակընդդեմ հայցադիմումը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝ հայցադիմումին ներկայացվող պահանջներին, և ենթակա է վերադարձման:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն փաստարկին, որ երկու գործերով թեև կողմերը նույնն են, սակայն հայցադիմումների փաստերը տարբերվում են միմյանցից, հայցի առարկան նույնպես, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Արմեն Աղասու Արշակյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Քնարիկ Արմենի Սահակյանի, իրավասու մարմին՝ Լոռու մարզի Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմին, 14.07.2022 թվականին ծնված Դանիել Արմենի Արշակյանի բնակության վայր Արմեն Աղասու Արշակյանի բնակության վայրը սահմանելու մասին, իսկ թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործով Քնարիկ Արմենի Սահակյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Արմեն Աղասու Արշակյանի, իրավասու մարմին՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմին, Դանիել Արմենի Արշակյանի (ծնված՝ 14.07.2022 թվականին) բնակության վայրը Քնարիկ Արմենի Սահակյանի բնակության վայրով սահմանելու մասին: Հետևաբար վերաքննիչ բողոքի սույն փաստարկը նույնպես անհիմն է»:

15. ԼԴ/1216/02/25 քաղաքացիական գործով Դիմողը 2025 թվականի հոկտեմբերի 28-ին կրկին ներկայացրել է հակընդդեմ հայցադիմում ընդդեմ Արմեն Աղասու Արշակյանի և Անահիտ Ղուլյանի, իրավասու մարմին՝ Լոռու մարզի Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմին՝ երեխայի բնակության վայրը մոր մոտ որոշելու պահանջի մասին: Դատարանն իր՝ 2025 թվականի նոյեմբերի 3-ի «Հակընդդեմ հայցը վերադարձնելու մասին» որոշմամբ արձանագրել է.

«Պատասխանողի ներկայացուցիչը ներկայացնելով նոր հակընդդեմ հայցապահանջ, ներկայացրել է ոչ դրամական մեկ պահանջ՝ երեխայի բնակության վայրը մոր մոտ որոշելու մասին:

Դատարանը կրկին անգամ ընդգծում է այն հանգամանքը, որ թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործով Դատարանի /դատավոր՝ Բ.Գրիգորյան/ վարույթում արդեն իսկ քննվում է Քնարիկ Սահակյանի հայցն ընդդեմ Արմեն Արշակյանի՝ երեխայի բնակության վայրը մոր բնակության վայրում սահմանելու և ալիմենտ բռնագանձելու պահանջների մասին:

Այսինքն, հակընդդեմ հայցադիմումով մեկ ոչ դրամական պահանջը չներկայացնելով (ալիմենտ բռնագանձելու մասին) փորձել է պատրանք ստեղծել թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործով ներկայացրած պահանջից տարբերվելու վերաբերյալ»:

16. Դատարանի 2025 թվականի նոյեմբերի 3-ի «Հակընդդեմ հայցը վերադարձնելու մասին» որոշման դեմ Դիմողը ներկայացրել է վերաքննիչ բողոք: Վերաքննիչ դատարանը, գրավոր ընթացակարգով քննության առնելով նշյալ բողոքը, 2025 թվականի նոյեմբերի 24-ին որոշել է.

«1. Քնարիկ Սահակյանի անունից ներկայացված վերաքննիչ բողոքը մերժել:

2. Թիվ ԼԴ/1216/02/25 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 03.11.2025 թվականի «Հակընդդեմ հայցը վերադարձնելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

(...)»:

17. Վերաքննիչ դատարանը 2025 թվականի նոյեմբերի 24-ին որոշմամբ արձանագրել է. *«ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը սույն գործով 28.10.2025 թվականի որոշմամբ արձանագրել է, որ «մինչդեռ, Բողոք բերած անձը չի ժխտում այն ակնառու փաստերը, որ թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործով 01.10.2025 թվականի որոշմամբ դատարանը վարույթ է ընդունել Քնարիկ Սահակյանի հայցն ընդդեմ Արմեն Արշակյանի՝ երեխայի բնակության վայրը մոր բնակության վայրում սահմանելու և ալիմենտ բռնագանձելու պահանջների մասին: Հետևաբար, մինչև սույն գործով հակընդդեմ պահանջ ներկայացնելը՝ Քնարիկ Սահակյանն արդեն իսկ երեխայի բնակության վայրի հետ կապված նույն պահանջով հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Արմեն Արշակյանի: Արդյունքում, քանի որ թիվ ԼԴ/1216/02/25 քաղաքացիական գործով հայցադիմումը դատարանի վարույթ է ընդունվել ավելի վաղ, քան թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործով Քնարիկ Սահակյանի հայցադիմումը, նաև՝ անվիճելի է այն հանգամանքը, որ հակընդդեմ հայցը ներկայացվել է թիվ ԼԴ/1216/02/25 քաղաքացիական գործով, ընդ որում, երկու քաղաքացիական գործով էլ, երեխայի բնակության վայրը որոշելու պահանջով, նույնն են կողմերը, հայցի առարկան, փաստական հիմքերը, հետևաբար, հիմնավոր է Դատարանի եզրահանգումն առ այն, որ ներկայացված հակընդդեմ հայցադիմումը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝ հայցադիմումին ներկայացվող պահանջներին, և ենթակա է վերադարձման»:*

18. Դիմողի ներկայացուցիչը 2025 թվականի հոկտեմբերի 9-ին միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ խնդրելով թույլատրել թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործի միացումը թիվ ԼԴ/1216/02/25 քաղաքացիական գործին:

19. Դատարանի 2025 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ կասեցվել է թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործի վարույթը մինչև ԼԴ/1216/02/25 քաղաքացիական գործով կայացվելիք եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

20. Կասեցման որոշման դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել Դիմողի և Արմեն Արշակյանի ներկայացուցիչները:

21. Վերաքննիչ դատարանը 2025 թվականի դեկտեմբերի 5-ին որոշել է.

«1. Քնարիկ Սահակյանի և Արմեն Արշակյանի վերաքննիչ բողոքները բավարարել: ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ «Քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» 06.11.2025թ. թիվ ԼԴ/1214/02/25 որոշումը վերացնել:

(...)»:

22. Դատարանը 2026 թվականի դեկտեմբերի 2-ին որոշել է.

«Թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործով դիմել Սահմանադրական դատարան՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ և 2.1-ից 2-11-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 75-րդ հոդվածներին համապատասխանությունը որոշելու հարցով:

Քաղաքացիական գործի վարույթը կասեցնել՝ մինչև Սահմանադրական դատարանի կողմից դիմումի կապակցությամբ վերջնական որոշում կայացնելը:

(...)»:

23.Սահմանադրական դատարանը 2026 թվականի մարտի 3-ի ՍԴԱՈ-30 աշխատակարգային որոշմամբ որոշել է.

«««ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասի և 2.1–2.11-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել»: Սահմանադրական դատարանը նշյալ որոշմամբ արձանագրել է. *«(...) Դիմողը չի պահպանել Սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված եռօրյա ժամկետը, հետևաբար՝ հիշյալ ժամկետից դուրս իրավասու չէ դիմելու Սահմանադրական դատարան»:*

24. Դատարանը 2026 թվականի մարտի 23-ին կայացրել է «Գործերը մեկ վարույթում միացնելը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին» որոշում, համաձայն որի՝

«Թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործով ըստ հայցի Քնարիկ Արմենի Սահակյանի ընդդեմ Արմեն Աղասու Արշակյանի, իրավասու մարմին՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմին՝ երեխայի բնակության վայրը մոր բնակության վայրում որոշելու և ալիմենտ բռնագանձելու պահանջների մասին, հայցվորի ներկայացուցչի ներկայացրած միջնորդությունը՝ գործերը մեկ վարույթում միացնելը թույլատրելու մասին, մերժել:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ»:

25. Դատարանն իր՝ 2026 թվականի մարտի 23-ի որոշմամբ նաև արձանագրել է.

«(...) առաջին ատյանի դատարանի տարբեր դատավորների վարույթում քննվող գործերը մեկ վարույթում միացնելը թույլատրելու դատավարական ինստիտուտ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ, ուստի միջնորդությունը հնարավոր չէ բավարարել»:

Դիմողի դիրքորոշումները

26. Դիմողը, ներկայացնելով բարձրացված հարցադրման կապակցությամբ ներպետական իրավակարգավորումները, Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերելի իրավական դիրքորոշումները, գտնում է, որ վիճարկվող նորմում առկա ենթադրյալ օրենսդրական բացը հանգեցնում է Սահմանադրության 75-րդ հոդվածի խախտման, քանզի գործող դատավարական մեխանիզմները չեն ապահովում իր՝ Սահմանադրությամբ երաշխավորված արդար դատաքննության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքների իրացման հնարավորությունը:

27. Դիմողը նշում է. *«(...) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասը, որպես ընդհանուր կանոն, թույլ է տալիս մեկ վարույթում միացնել միայն նույն դատավորի վարույթում գտնվող գործերը:*

Միաժամանակ, նույն հոդվածի 2.1-ից 2.11-րդ մասերով օրենսդիրը նախատեսել է տարբեր դատավորների վարույթում գտնվող գործերի միավորման հնարավորություն, սակայն ***բացառապես Հակակոռուպցիոն դատարանում քննվող՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերի շրջանակում»:***

28. Դիմողը գտնում է, որ օրենսդիրը, մի կողմից՝ ընդունել է, որ տարբեր դատավորների վարույթում գտնվող գործերի միջև կարող է առկա լինել այնպիսի փոխադարձ կապ, որը օբյեկտիվորեն պահանջում է դրանց համատեղ քննություն, սակայն, մյուս կողմից՝ նման հնարավորություն չի նախատեսել ընդհանուր իրավասության դատարաններում քննվող գործերի համար: Արդյունքում ձևավորվում է իրավական կարգավորման բաց, որի պայմաններում նույնիսկ այն դեպքերում, երբ գործերը վերաբերում են նույն կողմերին, նույն առարկային, ունեն փոխադարձաբար բացառող պահանջներ, և դրանց առանձին քննությունը կարող է հանգեցնել հակասական դատական ակտերի, դատարանը զրկված է գործերը մեկ վարույթում միացնելու իրավական հնարավորությունից:

29. Դիմողը նշում է, որ սույն գործով *«(...) այդ բացը հանգեցրել է նրան, որ նույն կողմերի միջև նույն առարկայով ընթանում են զուգահեռ դատական վարույթներ, ինչը ստեղծում է միմյանց հակասող դատական ակտերի կայացման իրական վտանգ»:* Դիմողը պնդում է նաև, որ *«Սույն օրենսդրական բացը չի կարող հաղթահարվել այլ*

դատավարական միջոցներով, ինչի մասին վկայում են գործի փաստական հանգամանքները:

Մասնավորապես, դիմողը ձեռնարկել է գործերը մեկ վարույթում միացնելու նպատակով օրենքով նախատեսված բոլոր հնարավոր միջոցները, այդ թվում՝ ներկայացրել է համապատասխան միջնորդություններ, ինչպես նաև փորձել է հակընդդեմ հայցի միջոցով ապահովել վեճի համատեղ քննությունը, սակայն նշված միջոցները չեն հանգեցրել գործերի միավորմանը՝ պայմանավորված գործող իրավակարգավորումների սահմանափակ բնույթով:

Բացի այդ, դատարանը մերժել է գործերի միացման միջնորդությունը՝ հղում կատարելով իրավական կարգավորման բացակայությանը, իսկ փվյալ որոշումը ենթակա չէ արդյունավետ բողոքարկման, քանի որ մերժման հիմքում ընկած է ոչ թե փաստական կամ հայեցողական գնահատում, այլ իրավական նորմի բացակայություն:

Ավելին, դատավարական նորմերի կիրառումը օրենքի անալոգիայով բացառված է, ինչի պայմաններում առկա օրենսդրական բացը չի կարող լրացվել իրավակիրառ պրակտիկայի միջոցով»:

30. Ամփոփելով իր դիրքորոշումները՝ Դիմողը գտնում է. *«(...) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածը, այնքանով, որքանով չի նախատեսում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տարբեր դատավորների վարույթում գտնվող փոխկապակցված գործերը մեկ վարույթում միացնելու հստակ և արդյունավետ ընթացակարգ, չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 1-ին, 75-րդ և 79-րդ հոդվածների պահանջներին և հանգեցնում է 61-րդ և 63-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտման»:*

Պատասխանողի դիրքորոշումները

31. Պատասխանողը, ներկայացնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Սահմանադրական դատարանի վերաբերելի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև Օրենսգրքի վիճարկվող դրույթը, արձանագրում է, որ *«(...) Օրենսգրքի 123-րդ հոդվածի համակարգային կառուցվածքը բացառում է այնպիսի մեկնաբանություն, ըստ որի տարբեր դատավորների վարույթներում գտնվող գործերի միավորումը արգելված է: Ընդհակառակը՝ նույն հոդվածի 2.1-2.11-րդ մասերով նախատեսված հատուկ ընթացակարգը ուղղակի ապացույցն է օրենսդրի կամքի՝ ապահովելու տարբեր վարույթներում գտնվող փոխկապակցված գործերի միավորման գործնական իրականացման մեխանիզմը»:*

32. Պատասխանողը գտնում է, որ *«(...) վիճարկվող նորմը պարունակում է գործերի միավորման համար անհրաժեշտ իրավական չափանիշներ, սահմանում է*

դրա նպատակը, կիրառման նախադրյալները և դատավարական ընթացակարգը: Հետևաբար, իրավակարգավորման այնպիսի բաց, որը կբացառեր դատարանի կողմից փոխկապակցված գործերի համատեղ քննության հնարավորությունը կամ կստեղծեր իրավական անորոշություն, առկա չէ: Ընդհակառակը, օրենսդիրը դատարանին վերապահել է գնահատողական իրավասություն՝ յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքներից ելնելով որոշելու՝ արդյոք գործերի միավորումը կհամապատասխանի արդարադատության արդյունավետ իրականացման նպատակին»:

33. Պատասխանողը նշում է. *«(…) եթե դատարանը կոնկրետ գործով չի կիրառել իրեն վերապահված այդ լիազորությունը կամ այն կիրառել է ոչ պատշաճ ձևով, ապա առաջացած խնդիրը վերաբերում է ոչ թե օրենսդրական բացին կամ վիճարկվող նորմի սահմանադրականությանը, այլ դրա կիրառման իրավաչափությանը և ձևավորված իրավակիրառ պրակտիկային: Նման հարցերը ենթակա են լուծման վերադաս դատական ատյաններում բողոքարկման ընթացակարգերի շրջանակում»:*

34. Ըստ Պատասխանողի՝ *«(…) երեխայի բնակության վայրի որոշման գործերով հարցերը կարող են լուծվել գործող իրավակարգավորման համակարգային և նպատակային մեկնաբանության միջոցով՝ հաշվի առնելով ընտանեկան իրավահարաբերությունների առանձնահատկությունները և երեխայի լավագույն շահի գերակայության սկզբունքը: Հետևաբար, տվյալ դեպքում բացակայում են այնպիսի նախադրյալներ, որոնք կարող էին վկայել իրական օրենսդրական բացի և դրա արդյունքում՝ սահմանադրահիրավական խնդրի առկայության մասին»:*

35. Պատասխանողը փաստում է, որ *«(…) վիճարկվող կարգավորումը չի պարունակում իրավակարգավորման այնպիսի բաց, որը կբացառեր դատարանի կողմից փոխկապակցված գործերի արդյունավետ քննության հնարավորությունը կամ կհանգեցներ իրավական անորոշության: Օրենսդիրը նախատեսել է համապատասխան դատավարական մեխանիզմներ և դատարանին վերապահել է անհրաժեշտ հայեցողական լիազորություն՝ յուրաքանչյուր գործի առանձնահատկություններից ելնելով գնահատելու գործերի միավորման նպատակահարմարությունը: Հետևաբար, Դիմողի բարձրացրած հարցերը վերաբերում են ոչ թե վիճարկվող նորմի սահմանադրականությանը, այլ դրա կիրառման գործնական շրջանակին, կոնկրետ հանգամանքներին և իրավակիրառ պրակտիկային, ինչը դուրս է սահմանադրական վերահսկողության շրջանակից»:*

36. Պատասխանողը գտնում է, որ *«Օրենսգրքի 123-րդ հոդվածով օրենսդիրը նախատեսել է փոխկապակցված գործերի մեկ վարույթում միավորման դատավարական ինստիտուտ, սահմանել դրա կիրառման նախադրյալներն ու նպատակները, ինչպես նաև դատարանին վերապահել համապատասխան հայեցողական լիազորություն՝ յուրաքանչյուր կոնկրետ գործի*

առանձնահատկություններից ելնելով գնահատելու գործերի համատեղ քննության նպատակահարմարությունը: Հետևաբար, վիճարկվող կարգավորումը չի կարող դիտարկվել որպես արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման համար անհրաժեշտ դատավարական մեխանիզմների բացակայություն»:

37. Պատասխանողը խնդրում է. «*«Քնարիկ Սահակյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով չի նախատեսում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տարբեր դատավորների վարույթում գտնվող փոխկապակցված գործերը մեկ վարույթում միացնելու ընթացակարգ, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ընդունել որոշում՝ վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին»:*

Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

38. Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ներքոնշյալ հարցադրմանը.

- արդյո՞ք Օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով չի նախատեսում քաղաքացիական գործերի առավել արագ և արդյունավետ լուծման նպատակով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տարբեր դատավորների վարույթում գտնվող մի քանի միատեսակ քաղաքացիական գործերը մեկ վարույթում միացնելու հնարավորություն այն դեպքում, երբ տվյալ գործերով գործին մասնակցող անձինք լրիվ կամ մասնակի համընկնում են, և դրանց միջև առկա է փոխադարձ կապ, համահունչ է Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի սահմանադրաիրավական բովանդակությանը՝ հաշվի առնելով նաև Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված՝ հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգերի և ընթացակարգերի առկայության պահանջը:

Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

39. Սահմանադրական դատարանն իր՝ 2026 թվականի մայիսի 6-ի ՍԴՈ-1827 որոշմամբ արձանագրել է, որ *Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է այն հիմնարար սկզբունքը, համաձայն որի՝ երեխայի շահերը պետք է լինեն առաջնային նկատառում՝ երեխայի կարգավիճակին առնչվող ցանկացած հարցի լուծման ժամանակ՝ արժանանալով առաջնահերթ ուշադրության: Տվյալ սկզբունքը համակարգային նշանակություն ունի ընտանեկան հարաբերությունների*

կարգավորման ողջ համալիրի համար և պետք է հաշվի առնվի ինչպես ծնողական իրավունքների իրականացման, այնպես էլ հանրային իշխանության մարմինների և, մասնավորապես՝ դատարանների կողմից համապատասխան դատական ակտերի կայացման գործընթացում, ինչպես նաև օրենսդրի կողմից՝ համապատասխան իրավահարաբերությունների օրենսդրական կառուցակարգման ժամանակ: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ երեխայի իրավունքների ու կենսական շահերի հնարավոր շահարկում ենթադրող ցանկացած ընթացակարգ կամ իրավական կարգավորում պետք է գնահատվի առաջին հերթին երեխայի լավագույն շահերին համապատասխանության տեսանկյունից:

40. Վերոնշյալի համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ **պետությունը, սահմանադրորեն ստանձնելով երեխայի իրավունքների պաշտպանության և երաշխավորման պարտականություն, պարտավոր է ձևավորել այնպիսի իրավական և ինստիտուցիոնալ նախադրյալներ, որոնք կապահովեն երեխայի զարգանալու հնարավորությունն անվտանգ, կայուն և բարենպաստ կենսամիջավայրում՝ երեխային վերաբերող բոլոր որոշումներում կարևորագույն նշանակություն վերապահելով «երեխայի լավագույն շահերի առաջնահերթության» սկզբունքին, այդ թվում՝ քաղաքացիական դատավարության շրջանակներում երեխայի շահերին առնչվող վեճերի վերաբերյալ գործերի քննության ընթացակարգերում, քանզի երեխայի պատշաճ կենսապահովման և զարգացման կայուն միջավայրի ձևավորումն անմիջականորեն պայմանավորում է նրա ֆիզիկական, հոգեբանական, հուզական, սոցիալական և մտավոր լիարժեք զարգացման հնարավորությունը**:

41. Հետևաբար՝ երեխայի շահերին առնչվող վեճերով դատավարական ընթացակարգերի ձևավորումն ու կիրառումը չպետք է հանգեցնեն միևնույն փաստական հիմքերով կամ նույն սուբյեկտային կազմով գործերի անհարկի տարանջատված քննության, ինչն օբյեկտիվորեն կարող է վտանգել դատական քննության օպերատիվությունն ու երեխայի շահերի արդյունավետ պաշտպանությունը:

42. Սահմանադրության՝ **«Սահմանադրական կարգի հիմունքները»** վերտառությամբ 1-ին գլխում ամրագրված՝ **«Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները»** վերնագրով 3-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանադրական իրավակարգի հիմնարար դրույթներից է, որով մարդը, նրա իրավունքներն ու ազատությունները ճանաչվում են հանրային իշխանության գործունեության առանցքային արժեբանական հիմք: Նշված նորմի բովանդակային վերլուծությունից բխում է, որ հանրային իշխանության բոլոր մարմինների գործունեությունը պետք է կառուցվի մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների

և ազատությունների ճանաչման, հարգման և **արդյունավետ պաշտպանության** սկզբունքի վրա:

43. Սահմանադրական վերոնշյալ դրույթն արտահայտում է իրավական պետության հայեցակարգի առանցքային գաղափարներից մեկը, ըստ որի՝ պետությունը կրում է իրավունքների ճանաչման, երաշխավորման և պաշտպանության սահմանադրական պարտականություն: Միևնույն ժամանակ, հիշատակված նորմում օգտագործված *«հարգում»* և *«պաշտպանություն»* եզրույթներն ունեն տարբեր, սակայն փոխկապակցված իրավական բովանդակություն: «Հարգելու» պարտականությունը ենթադրում է ձեռնպահ մնալ անձի հիմնարար իրավունքների անհամաչափ կամ կամայական միջամտությունից, մինչդեռ «պաշտպանելու» պարտականությունը ենթադրում է իրավական այնպիսի մեխանիզմների ստեղծում, որոնք կապահովեն իրավունքների արդյունավետ իրացումը և խախտված իրավունքների վերականգնումը:

44. Այս առումով Սահմանադրական դատարանը գտնում է, որ հանրային իշխանության սահմանադրական պարտականությունը ներառում է ոչ միայն իրավունքների խախտումից զերծ մնալու պահանջ, այլ նաև այդ իրավունքների պաշտպանությունը երաշխավորող գործուն և արդյունավետ ընթացակարգերի ձևավորման և զարգացման անհրաժեշտություն:

45. Հիշատակված դիրքորոշումն իր ինստիտուցիոնալ և գործնական արտահայտությունն է գտել նաև արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների բովանդակությունը բացահայտող սահմանադրական կարգավորումներում (Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներ): Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով (ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-873, ՍԴՈ-1037, ՍԴՈ-1127, ՍԴՈ-1192, ՍԴՈ-1257) հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների երաշխավորման անհրաժեշտությանը՝ ընդգծելով դրանց կարևորությունը դատաընթացակարգային համապատասխան բնագավառներում:

46. Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը և արդար դատաքննության իրավունքը գտնվում են գործառութային և բովանդակային սերտ փոխկապակցվածության մեջ՝ կազմելով իրավական պետության և մարդու իրավունքների պաշտպանության համակարգի հիմնարար առանցքներից մեկը:

47. Վերոնշյալի համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի էությունը հանգում է նրան, որ յուրաքանչյուր անձ պետք է ունենա ոչ միայն դատարան դիմելու հասանելիություն, այլև իր խախտված կամ վիճարկվող իրավունքների իրական,

գործնական և արդյունավետ վերականգնման հնարավորություն: Այս իրավունքը պահանջում է այնպիսի դատական համակարգի առկայություն, որն ունակ է ապահովելու իրավունքի խախտման կանխարգելումը, դադարեցումը և վերականգնումը, հետևաբար՝ դատական պաշտպանության արդյունավետությունը գնահատվում է ոչ միայն դատարանի մատչելիությամբ, այլև դատական պաշտպանության գործնական կարողունակությամբ, դատական ակտերի կատարելիությամբ և իրավունքի վերականգնման փաստացի հնարավորությամբ:

48. Անդրադառնալով Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերով երաշխավորված իրավունքների իրացմանը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ միայն դատական պաշտպանության իրավունքի գործադրմամբ է հնարավոր հասնել արդար դատաքննության իրավունքի կենսագործմանը, և, միաժամանակ, միայն գործի արդարացի քննության պայմաններում է ապահովվում դատական պաշտպանության իրավունքի կենսական հատկանիշը՝ արդյունավետությունը:

49. Սահմանադրական դատարանը փաստում է, որ՝

1) Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների գործնական իրականացման առանցքային ձևերից է քաղաքացիական դատավարությունը, որի շրջանակներում, ի թիվս այլնի, ապահովվում է անձանց՝ մասնավոր իրավահարաբերություններից բխող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի դատական պաշտպանությունը.

2) քաղաքացիական արդարադատությունը հանդես է գալիս որպես սահմանադրական արժեքների իրացման մեխանիզմ, որի շրջանակներում գործնական արտահայտություն են ստանում իրավունքի գերակայության, դատական պաշտպանության արդյունավետության և արդար դատաքննության սահմանադրաիրավական հրամայականները. քաղաքացիական արդարադատության գործառութային նշանակությունը նաև այն է, որ ապահովում է ոչ միայն մասնավոր շահերի արդյունավետ պաշտպանությունը, այլև հանրային իրավակարգի կայունությունն ու հասարակական հարաբերությունների կանխատեսելի իրավակարգավորման զարգացումը՝ դատարանին վերապահելով իրավական «հակամարտությունների» վերջնական և պարտադիր լուծման սահմանադրական առաքելություն:

50. Անդրադառնալով սույն սահմանադրական վեճին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի՝

1) «Դատարան դիմելու իրավունքը» վերտառությամբ 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմելու դատարան՝ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով

սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար».

2) «Վարույթն առաջին ատյանի դատարանում» վերտառությամբ 2-րդ բաժինը սահմանում է առաջին ատյանի դատարանում վարույթների տեսակներն ու դրանց իրականացման կանոնակարգված ընթացակարգերը, մասնավորապես՝ առաջին ենթաբաժինը նվիրված է առաջին ատյանի դատարանում գործերի քննության ընդհանուր կարգին (հայցային վարույթին), որտեղ ամրագրված 123-րդ հոդվածը սահմանում է մի քանի գործեր կամ հայցապահանջներ միացնելու և առանձնացնելու քաղաքացիադատավարական կարգը:

51. Քաղաքացիական դատավարությունում մի քանի գործեր կամ հայցապահանջներ միացնելու և առանձնացնելու դատավարական ինստիտուտները քաղաքացիական դատավարությունում հանդես են գալիս որպես ճկուն դատավարական մեխանիզմներ, որոնք նպատակաուղղված են դատական պաշտպանության լիարժեքության, դատավարական տնտեսվարության և արդարադատության պատշաճ իրականացման ապահովմանը: Նշված ինստիտուտների միջոցով դատարանին վերապահվում է փոխկապակցված պահանջների համատեղ քննության կամ, անհրաժեշտության դեպքում, առանձին վարույթներում դրանց առանձնացման իրավասություն՝ հաշվի առնելով գործի փաստական և իրավական հանգամանքների համակարգային կապը և դատավարության արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը:

52. Անդրադառնալով մի քանի գործերի միացման ինստիտուտին՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ խնդրո առարկա գործերի համատեղ քննությունը՝ մեկ դատական վարույթի շրջանակներում, միտված է դատավարական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, գործերի առավել արագ և համակողմանի քննության ապահովմանը, տարբեր դատավորների կողմից միևնույն փաստերի կապակցությամբ տարբեր, առանձին դեպքերում՝ իրարամերժ գնահատականներ տալու, այդպիսով միմյանց հակասող դատական ակտեր կայացնելու բացառմանը, որը վերջնարդյունքում երաշխավորում է անձի արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրորեն երաշխավորված իրավունքների ապահովումը:

53. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի՝ ***«Մի քանի գործեր կամ հայցապահանջներ միացնելը և առանձնացնելը»*** վերտառությամբ 123-րդ հոդվածի վիճարկվող 2-րդ մասը սահմանում է, որ *առաջին ատյանի դատարանն իրավունք ունի մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը մեկ վարույթում միացնելու իր վարույթում քննվող մի քանի միատեսակ գործեր, որոնցով գործին մասնակցող անձինք լրիվ կամ մասնակի*

համընկնում են, եթե դրանց միջև առկա է փոխադարձ կապ, ու դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել գործերի առավել արագ և արդյունավետ լուծումը:

54. Սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենսդիրը մի քանի գործերի միացումը հնարավոր է համարել միայն այն դեպքում, երբ դրանց միջև առկա է **բավարար փոխկապակցվածություն**: Վերջինս բնորոշվում է հետևյալ զուգակցված չափանիշներով՝

1) կողմերի ամբողջական կամ մասնակի համընկնում,

2) վիճելի իրավահարաբերությունների, պահանջի առարկայի կամ պահանջների հիմքում ընկած փաստական հանգամանքների ընդհանրություն, որոնք թույլ են տալիս արձանագրել գործերի միատեսակություն:

55. Ընդ որում՝ պահանջների փոխկապակցվածությունը կարող է արտահայտվել նաև ապացուցողական բազայի ընդհանրությամբ կամ այնպիսի հանգամանքով, երբ մեկ պահանջի լուծումը կարող է կանխորոշիչ նշանակություն ունենալ մյուս պահանջի քննության և լուծման համար: Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր գործով ներկայացված հայցապահանջը նույնիսկ համատեղ վարույթի պայմաններում պահպանում է իր ինքնուրույն դատավարական նշանակությունը, և դատարանը պարտավոր է յուրաքանչյուր պահանջի վերաբերյալ արտահայտել հստակ և պատճառաբանված իրավական դիրքորոշում:

Ավելին, օրենսդիրը միատեսակ գործերի միացման հնարավորությունը պայմանավորել է հստակ ընդգծված նպատակով. այն է՝ դրանց համատեղ քննությամբ ապահովել գործերի առավել արագ և արդյունավետ լուծում:

56. Օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն **առաջին ատյանի դատարանին** վերապահել է նույն դատավորի վարույթում քննվող մի քանի միատեսակ գործերը մեկ վարույթում միավորելու դատավարական իրավասություն, իսկ նույն հոդվածի 2.1-2.11-րդ մասերով՝ **հակակոռուպցիոն դատարանի** տարբեր դատավորների վարույթներում գտնվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մի քանի գործերը մեկ վարույթում միավորելու դատավարական իրավասություն:

57. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ՝

1) Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի՝ **«Մի քանի հայցերով գործերի միացումը և առանձնացումը»** վերտառությամբ 82-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. *«1. Վարչական դատարանն իրավունք ունի գործի քննության յուրաքանչյուր փուլում մեկ վարույթում միացնելու միևնույն առարկային վերաբերող մի քանի գործ, այդ թվում՝ վարչական դատարանի տարբեր դատավորների վարույթում գտնվող գործեր, եթե դրանց միջև առկա է փոխադարձ կապ, և դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել գործերի առավել արագ և արդյունավետ լուծումը»:*

2) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի՝ **«Քրեական վարույթների միացումը և անջատումը»** վերտառությամբ 10-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է. *«4. Նույն դատարանի մեկից ավելի դատավորների մոտ գտնվող վարույթները միացվում են տվյալ դատարանի նախագահի որոշմամբ՝ դատավորներից մեկի դիմումի հիման վրա: Վարույթները միացնելու դեպքում մեղադրանքը քննում է այն դատավորը, որը քրեական գործն ավելի վաղ է ընդունել վարույթ»:*

58. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել նաև, որ փոխկապակցված գործերի մեկ վարույթում քննության նպատակը պայմանավորված է ոչ միայն դատավարական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և ողջամիտ ժամկետում գործերի քննության ապահովման անհրաժեշտությամբ, այլև նույն դատարանի տարբեր դատավորների կողմից միևնույն փաստական հանգամանքներին տարբեր, երբեմն նաև իրարամերժ իրավական գնահատականներ տալու ռիսկի բացառմամբ: Հակառակ դեպքում կարող է վտանգվել դատական ակտերի հեղինակությունը, խաթարվել իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքները, ինչպես նաև հանգեցնել նույն փաստերի վերաբերյալ միմյանց հակասող, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի առկայությունը, ինչն անհամատեղելի է իրավական պետության սկզբունքների հետ:

59. Ելնելով վերը նշվածից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը թե՛ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում, թե՛ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում, ինչպես նաև Օրենսգրքի՝ հակակոռուպցիոն դատարանի տարբեր դատավորների վարույթներում գտնվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերին վերաբերող՝ գործերի (վարույթների) միավորման և առանձնացման դատավարական իրավասության կարգավորման, դրա իրականացման կարգն ու պայմանները սահմանելիս առաջնորդվել է միևնույն դատավարական տրամաբանությամբ՝ հետևողականորեն ամրագրելով տարբեր դատավորների վարույթում գտնվող, սակայն փոխկապակցվածությամբ բնութագրվող գործերի միավորման դատավարական կառուցակարգը՝ որպես միատեսակ հանգամանքների վերաբերյալ միասնական իրավական գնահատականի ապահովման և հակասական դատական ակտերի կայացման վտանգի նվազեցման ինստիտուցիոնալ երաշխիք:

60. Այս համատեքստում քաղաքացիական դատավարության գործող կարգավորման առանձնահատկությունը, ըստ որի՝ գործերի միացման հնարավորությունը սահմանափակված է **նույն դատավորի** վարույթում գտնվող գործերով, Սահմանադրական դատարանի գնահատմամբ, որևէ կերպ չարդարացված, նեղ և ձևական մոտեցում է՝ համեմատած այն օրենսդրական

լուծումների հետ, որոնք թույլ են տալիս միացնել նաև տարբեր դատավորների վարույթում քննվող փոխկապակցված գործերը:

61. Սահմանադրական դատարանը գտնում է, որ քաղաքացիական դատավարությունում տարբեր դատավորների վարույթում գտնվող փոխկապակցված գործերի միացման կառուցակարգի բացակայությունը հանգեցնում է դատավարական ընթացակարգերի անհամաչափ սահմանափակման և չի բխում դատական պաշտպանության արդյունավետության սահմանադրական հրամայականից:

62. Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ միատեսակ հանգամանքների վերաբերյալ միասնական իրավական դիրքորոշման ձևավորման, դատավարական արդյունավետության բարձրացման, ինչպես նաև դատավարական ընթացակարգերի հստակեցման միջոցով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների ծանրաբեռնվածության նվազեցման ու դատական ռեսուրսների նպատակային բաշխման ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ արդարացված է գործերի առավել արդյունավետ և արագ քննության կազմակերպումը՝ միաժամանակ երաշխավորելով անձանց՝ գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքն ու դատական ակտերի բովանդակային միասնականությունը:

63. Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ *հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:* Սահմանադրաիրավական այս պատվիրանը վկայում է, որ Սահմանադիրը չի բավարարվել անձին շնորհելով միայն համապատասխան իրավունքներ և ազատություններ, **այլև պարտադրել է օրենսդրին ստեղծել այնպիսի կազմակերպական և ընթացակարգային միջավայր, որի պայմաններում այդ իրավունքները և ազատությունները կարող են իրապես գործել:**

64. Կազմակերպական կառուցակարգերը վերաբերում են այն ինստիտուցիոնալ համակարգին, որի միջոցով իրավունքը կյանքի է կոչվում: Դրանք ներառում են իրավունքի իրացման համար պատասխանատու մարմինների ստեղծումը, այդ մարմինների իրավասությունների հստակ սահմանումը, ենթակայության, վերահսկողության և պատասխանատվության մեխանիզմների ձևավորումը և այլն: Այս առումով օրենսդիրը հանդես է գալիս ոչ միայն որպես կարգավորող, այլ նաև որպես հանրային իշխանության կազմակերպիչ՝ ապահովելով իրավունքների իրականացման պատշաճ գործիքակազմ:

65. Ընթացակարգերը հանդես են գալիս որպես իրավունքի կենսագործման առանցք: Այս առումով անառարկելի է, որ սահմանադրորեն երաշխավորված իրավունքները կորցնում են իրենց արժեքը, եթե դրանց իրացումը կախված է կամայական և անորոշ ընթացակարգերից, կամ պարզապես բացակայում են համապատասխան ընթացակարգերը:

66. Անդրադառնալով սույն սահմանադրաիրավական վեճին՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ՝

1) տվյալ իրավիճակում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տարբեր դատավորների վարույթում գտնվող մի քանի միատեսակ քաղաքացիական գործերը, որոնցով գործին մասնակցող անձինք լրիվ կամ մասնակի համընկնում են, եթե դրանց միջև առկա է փոխադարձ կապ, ու դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել գործերի առավել արագ և արդյունավետ լուծումը, մեկ վարույթում միացնելու անհրաժեշտ կառուցակարգերի և ընթացակարգերի փաստացի բացակայությունը բերում է անձի արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների խախտման,

2) սույն գործով վտանգվում է երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերն առաջնահերթ ուշադրության արժանացնելու՝ Սահմանադրի անվերապահ պահանջի կենսագործումը:

67. Սահմանադրական դատարանը սույն գործով արձանագրում է, որ Դատարանի վարույթում են գտնվում.

1) Քնարիկ Արմենի Սահակյանի հայցադիմումն ընդդեմ Արմեն Աղասու Արշակյանի, իրավասու մարմին՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմին՝ երեխայի բնակության վայրը մոր բնակության վայրում որոշելու և ալիմենտ բռնագանձելու պահանջների մասին (դատավոր Բ. Գրիգորյան, **քաղաքացիական գործ թիվ ԼԴ/1214/02/25**),

2) Արմեն Աղասու Արշակյանի հայցադիմումն ընդդեմ Քնարիկ Արմենի Սահակյանի, իրավասու մարմին՝ Լոռու մարզի Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմին՝ ամուսնալուծության և երեխայի բնակության վայրը հոր մոտ որոշելու պահանջների մասին (դատավոր Գ. Զաքարյան, **քաղաքացիական գործ թիվ ԼԴ/1216/02/25**):

68. Դատարանը թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործով 2026 թվականի մարտի 23-ի «Գործերը մեկ վարույթում միացնելը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին» որոշմամբ արձանագրել է.

«(...) առաջին ատյանի դատարանի տարբեր դատավորների վարույթում քննվող գործերը մեկ վարույթում միացնելը թույլատրելու դատավարական ինստիտուտ ՀՀ

քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ, ուստի միջնորդությունը հնարավոր չէ բավարարել»:

69. Դիմումի, ինչպես նաև թիվ ԼԴ/1214/02/25 և ԼԴ/1216/02/25 քաղաքացիական գործերի ուսումնասիրությունից Սահմանադրական դատարանին պարզ է դառնում, որ Դատարանում միաժամանակ տարբեր դատավորների վարույթներում քննվող քաղաքացիական գործերով (1) կողմերը նույնն են, (2) ներկայացված են երեխայի բնակության վայրը որոշելու, (3) ալիմենտ բռնագանձելու, (4) ամուսնալուծության պահանջներ, որոնք չեն կարող դիտարկվել որպես միմյանցից մեկուսացված հայցապահանջներ, քանզի անմիջականորեն փոխկապակցված են երեխայի կենսապահովման, կայուն սոցիալական միջավայրի, պատշաճ խնամքի և համակողմանի զարգացման հիմնարար իրավունքների հետ:

70. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման փոխկապակցված պահանջների քննությունը տարբեր դատավորների վարույթներում, երբ դրանց հիմքում ընկած փաստական հանգամանքներն ու իրավական հարցերն էապես համընկնում են, ստեղծում է դատավարական անելանելի իրավիճակ: Այն ոչ միայն պարունակում է միմյանց հակասող դատական ակտերի կայացման իրական վտանգ, այլև հանգեցնում է վեճի լուծման անհարկի ձգձգումների, ինչն ուղիղ բացասական ազդեցություն է գործում երեխայի հոգեբանական ու սոցիալական բարեկեցության վրա՝ վտանգելով նրա լավագույն շահերի արդյունավետ իրացումը:

71. Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ Օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով չի նախատեսում քաղաքացիական գործերի առավել արագ և արդյունավետ լուծման նպատակով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տարբեր դատավորների վարույթներում գտնվող մի քանի միատեսակ քաղաքացիական գործերը մեկ վարույթում միացնելու հնարավորություն այն դեպքում, երբ տվյալ գործերով գործին մասնակցող անձինք լրիվ կամ մասնակի համընկնում են, և դրանց միջև առկա է փոխադարձ կապ, հակասում է Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին՝ համակցված 75-րդ հոդվածի հետ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 170-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով չի նախատեսում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տարբեր դատավորների

վարույթներում գտնվող մի քանի միատեսակ քաղաքացիական գործերը մեկ վարույթում միացնելու հնարավորություն այն դեպքում, երբ տվյալ գործերով գործին մասնակցող անձինք լրիվ կամ մասնակի համընկնում են, և դրանց միջև առկա է փոխադարձ կապ, ճանաչել Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին՝ համակցված 75-րդ հոդվածի հետ, հակասող և անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

16 հունիսի 2026 թվականի
ՍԴՈ-1834



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ, «ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՕՐԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԵՎ «ՆՈՐ ՈՒԺ» ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 259-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 4 հուլիսի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող),
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի (զեկուցող),
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (բանավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողների՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի (ներկայացուցիչներ՝ փաստաբան Արամ Վարդևանյան, փաստաբան Էդուարդ Հովհաննիսյան, Գոհար Մելոյան),

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◊ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◊ 3(124) 2026

«Միասնության թևեր» կուսակցության (ներկայացուցիչներ՝ կուսակցության նախագահ Արմեն Գալստյան, Լիպարիտ Դրմեյան, Նարեկ Բալաբեկյան),
«Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցության (ներկայացուցիչներ՝ փաստաբան Տարոն Բաղդասարյան, փաստաբան Լևոն Բաղդասարյան),
«Բարգավաճ Հայաստան» կուսակցության (ներկայացուցիչներ՝ փաստաբան Արամ Օրբելյան, Վահե Գրիգորյան, Էլինար Վարդանյան),
«Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցության (ներկայացուցիչներ՝ փաստաբան Վահագն Մարտիրոսյան, փաստաբան Լուսինե Զեյնալյան),
«Հայաստան» կուսակցությունների դաշինքի (ներկայացուցիչներ՝ Արծվիկ Մինասյան, փաստաբան Հովհաննես Խուդոյան, փաստաբան Տաթևիկ Սողոյան),
«Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության (ներկայացուցիչ՝ Լիդա Զաքարյան, փաստաբան Ռուբեն Հարությունյան)
(այսուհետ նաև՝ Դիմողներ),

պատասխանողի՝

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ ԿԸՀ կամ Պատասխանող) (ներկայացուցիչներ՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Վահագն Հովակիմյան, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ Նունե Հովհաննիսյան, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար Արմեն Սմբատյան),

գործով որպես
հարակից պատասխանողներ
ներգրավված՝

ՀՀ Դատախազության (ներկայացուցիչներ՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Լիլիթ Գրիգորյան, ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի

օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Արմեն Փանոսյան),
ՀՀ ներքին գործերի նախարարության (ներկայացուցիչներ՝ ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Ղազարյան, ՀՀ ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության պետ Ռուսլան Մարանդյան, ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության միգրացիայի և քաղաքացիության ոլորտի քաղաքականության իրականացման վարչության պետ Իրինա Մկրտչյան),
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի (ներկայացուցիչներ՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ Արմեն Ասատրյան, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի արդարադատության շահերի դեմ ուղղված, ինչպես նաև իրավապահ մարմինների ծառայողներին վերագրվող հանցագործությունների քննության վարչության պետ Գեղամ Մարգարյան, նույն վարչության պետի տեղակալի պաշտոնակատար Սուրեն Հարությունյան),

գործով որպես երրորդ անձ ներգրավված «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (ներկայացուցիչներ՝ Սրբուհի Գալյան, Սուրեն Գրիգորյան, Արուսյակ Ջուլհակյան),

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց ««Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի, «Միասնության թևեր» կուսակցության, «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցության, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության, «Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցության, «Հայաստան» կուսակցությունների դաշինքի և «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության դիմումների հիման վրա՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի

հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 259-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» գործը:

1. Գործի քննության առիթը «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի, «Միասնության թևեր» կուսակցության, «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցության, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության, «Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցության, «Հայաստան» կուսակցությունների դաշինքի և «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության 2026 թվականի հունիսի 19-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

2. 2026 թվականի հունիսի 21-ին ընդունվել են Սահմանադրական դատարանի ՍԴԱՈ-109, ՍԴԱՈ-112, ՍԴԱՈ-115, ՍԴԱՈ-118, ՍԴԱՈ-121, ՍԴԱՈ-124 և ՍԴԱՈ-127 աշխատակարգային որոշումները Սահմանադրական դատարանի դատավոր Ա. Զեյնալյանի՝ վերոնշյալ դիմումների հիման վրա գործերի քննությանը մասնակցելու անհնարինության մասին՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

3. 2026 թվականի հունիսի 21-ին ընդունվել են Սահմանադրական դատարանի ՍԴԱՈ-110, ՍԴԱՈ-113, ՍԴԱՈ-116, ՍԴԱՈ-119, ՍԴԱՈ-122, ՍԴԱՈ-125 և ՍԴԱՈ-128 աշխատակարգային որոշումները Սահմանադրական դատարանի դատավոր Վ. Վարդանյանի՝ վերոնշյալ դիմումների հիման վրա գործերի քննությանը մասնակցելու անհնարինության մասին՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

4. Սահմանադրական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 21-ի ՍԴԱՈ-111, ՍԴԱՈ-114, ՍԴԱՈ-117, ՍԴԱՈ-120, ՍԴԱՈ-123, ՍԴԱՈ-126 և ՍԴԱՈ-129 աշխատակարգային որոշումներով վերոնշյալ դիմումների հիման վրա գործերն ընդունվել են քննության, և ՍԴԱՈ-130 աշխատակարգային որոշման 1-ին կետին համապատասխան՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի, «Միասնության թևեր» կուսակցության, «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցության, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության, «Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցության, «Հայաստան» կուսակցությունների դաշինքի և «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության դիմումների հիման վրա՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 259-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ գործերը միավորվել են մեկ վարույթում:

Սահմանադրական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 21-ի ՍԴԱՈ-130 աշխատակարգային որոշման 2-6-րդ կետերին համապատասխան՝ որոշվել է

միավորված գործի դատաքննությունն սկսել 2026 թվականի հունիսի 26-ին, միավորված գործով նշանակել զեկուցող, միավորված գործի դատաքննությունն անցկացնել բանավոր ընթացակարգով, միավորված գործը քննելիս որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, որպես հարակից պատասխանողներ՝ ՀՀ դատախազությանը, ՀՀ ներքին գործերի նախարարությանը և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին:

5. Սահմանադրական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 21-ի ՍԴԱՈ-131 աշխատակարգային որոշմամբ միավորված գործով դատավարությանը որպես երրորդ անձ ներգրավվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը:

6. Սահմանադրական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 22-ի ՍԴԱՈ-132 աշխատակարգային որոշմամբ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից, ՀՀ դատախազությունից, ՀՀ դատական դեպարտամենտից, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեից, ՀՀ քննչական կոմիտեից, ՀՀ ներքին գործերի նախարարությունից, ՀՀ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովից պահանջվել են այդ մարմինների իրավասությանն առնչվող՝ Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին վերաբերող փաստաթղթեր ու տեղեկատվություն:

7. Սահմանադրական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 23-ի ՍԴԱՈ-134 աշխատակարգային որոշմամբ վերոնշյալ գործով ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից պահանջվել է տեղեկատվություն 2025 և 2026 թվականների որոշակի ժամանակահատվածներում ՀՀ սահմանը հատած՝ ՀՀ քաղաքացու անձնագիր և/կամ նույնականացման քարտ ունեցող 18 տարին լրացած անձանց թվերի վերաբերյալ:

Ուսումնասիրելով դիմումները, դիմող և պատասխանող կողմերի ներկայացուցիչների, հարակից պատասխանողների ներկայացուցիչների, երրորդ անձի բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը և նյութերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

8. Ազգային ժողովի հերթական ընտրություններն անցկացվել են 2026 թվականի հունիսի 7-ին՝ Սահմանադրության 91-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Ընտրական օրենսգիրք, ընդունվել է 25.05.2016 թ., ստորագրվել՝ 28.05.2016 թ., ուժի մեջ է մտել 01.06.2016 թ.) 16-րդ հոդվածին և 18-րդ հոդվածի 1-ին և 2.1-ին մասերին համապատասխան՝ քվեարկությունը կազմակերպելու և քվեարկության արդյունքներն ամփոփելու նպատակով Հանրապետության տարածքում կազմավորվել է 2005 ընտրական տեղամաս և սահմանվել 2005 տեղամասային կենտրոններ, որոնցից 9-ը՝ քրեակատարողական հիմնարկներում (հիմք՝ Ընտրական օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մաս և 18-րդ հոդվածի 1-ին մաս):

Ընտրական օրենսգրքի 36-րդ հոդվածին և 44-րդ հոդվածի 5 և 6-րդ մասերին համապատասխան՝ գործել է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ և տեղամասային ընտրական հանձնաժողովներ:

Հայաստանի Հանրապետությունում գործել է ընդամենը 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ 10-ը՝ Երևան քաղաքում և 28-ը՝ ՀՀ մարզերում:

Ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել և վերահսկել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

9. 2026 թվականի հունիսի 14-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմել է արձանագրություն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ:

Համաձայն նշված արձանագրության՝

- ընտրողների ընդհանուր թիվը կազմում է 2.503.990,
- քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը՝ 1.476.769,
- տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացված ինքնաասոնձվող դրոշմանիշների ընդհանուր թիվը՝ 2.605.100,
- տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացված համարակալված կտրոնների ընդհանուր թիվը՝ 204.000,
- ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոնների ընդհանուր թիվը՝ 1.470.790,
- ընտրողներից ստացված համարակալված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը՝ 2.298,
- ընտրողներից ստացված կտրոնների ընդհանուր թիվը՝ 1.473.088,
- չօգտագործված համարակալված կտրոնների ընդհանուր թիվը՝ 202.121,
- չօգտագործված ինքնաասոնձվող դրոշմանիշների ընդհանուր թիվը՝ 1.127.734,
- անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 16.210,
- անճշտությունների գումարային չափը՝ 4.331:

Կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը, ըստ վերոհիշյալ արձանագրության, հետևյալն է.

Ռեֆորմիստների կուսակցություն՝ 1.425,

«Բոլորին դեմ եմ» ժողովրդավարական կուսակցություն՝ 21.181,

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինք՝ 340.006,

Հայաստանի շնորհապետական կուսակցություն՝ 30.642,

«Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցություն՝ 25.551,

«Միասնության թևեր» կուսակցություն՝ 33.537,

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ 58.287,

«Ազգային - ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն՝ 5.481,

«Քոչարի ազգային վերածնունդ և ազգի զարթոնք» կուսակցություն՝ 1.986,

«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն՝ 3.143,

«Հանրապետություն» կուսակցություն՝ 15.808,

Քրիստոնեա - ժողովրդավարական կուսակցություն՝ 2.671,

«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն՝ 5.269,

«Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցություն՝ 25.758,

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 726.819,

«Հայաստան» կուսակցությունների դաշինք՝ 144.983,

«Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցություն՝ 6.754,

«Լուսավոր Հայաստան» կուսակցություն՝ 7.439:

10. ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի թիվ 259-Ա որոշմամբ մանդատների բաշխմանը մասնակցում են՝

1. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը՝ 726.818 (49.7466%),

2. «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքը՝ 340.006 (23.2715%),

3. «Հայաստան» կուսակցությունների դաշինքը՝ կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը 144.983 (9.9233 %):

Մանդատները բաշխվել են հետևյալ կերպ՝

1) «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 64 մանդատ.

2) «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինք՝ 29 մանդատ.

3) «Հայաստան» կուսակցությունների դաշինք՝ 12 մանդատ:

11. Դիմողների դիրքորոշումները

Սույն գործով Դիմողների հիմնական փաստարկները հանգում են հետևյալին.

11.1. «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինք

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքը (այսուհետ սույն կետում նաև՝ Դիմող) իր դիմումով խնդրել է.

«**անվավեր ճանաչել** Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի **«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 259-Ա որոշումը** և

1) **անվավեր ճանաչել** ընտրությունների արդյունքները,

կամ,

2) անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները և **սահմանել մանդատների բաշխման կարգը**,

կամ

3) **նշանակել** ընտրությունների երկրորդ փուլ»:

ա. Դիմողը, մասնավորապես, նշում է, որ քաղաքական ուժերի միջև մրցակցությունը չի իրականացվել հավասար պայմաններում: Մասնավորապես՝ ըստ Դիմողի՝ ընտրություններից անմիջապես առաջ իրականացված պետական միջամտությունները, պետական ռեսուրսների կիրառման ձևերը և պետական կառավարման համակարգի առանձին գործողությունները փաստացի նպաստել են իշխող քաղաքական ուժի դիրքերի ամրապնդմանը:

բ. Անդրադառնալով սույն թվականի ապրիլ ամսին Ընտրական օրենսգրքում կատարված համապատասխան փոփոխություններին՝ կապված կուսակցությունների դաշինքի անվանման մեջ անձնանուն օգտագործելու արգելքի և քվեաթերթիկի ձևի, լրացման կարգի և անվավեր ճանաչման հիմքերի հետ Դիմողը նշում է, որ ընտրական մրցակցության կանոնները չեն կարող փոփոխվել այնպես, որ գործող քաղաքական մեծամասնությունն ստանա ընթացակարգային կամ տեղեկատվական առավելություն մյուս մասնակիցների նկատմամբ: Նման միջամտությունը, ըստ Դիմողի, խաթարում է քաղաքական ուժերի հավասար հնարավորությունները, քանի որ ընտրական գործընթացի կանոնները փաստացի գործարկվել են ոչ թե չեզոք և կանխատեսելի միջավայր ապահովելու, այլ կոնկրետ քաղաքական մրցակցության պայմանների վրա ազդելու տրամաբանությամբ:

գ. Անդրադառնալով սույն թվականի մարտի 5-ին Կառավարության որոշմամբ կենսաթոշակների բարձրացման հարցին և դրան հակառակ՝ Ազգային ժողովի 2025 թվականի դեկտեմբերի 3-ի նիստին վարչապետ Ն. Փաշինյանի կողմից կենսաթոշակները չբարձրացնելու վերաբերյալ ներկայացված դիրքորոշմանը՝ Դիմողը պնդում է, որ այդ հանգամանքը խնդրահարույց է այն պատճառով, որ այն իրականացվել է հերթական ընտրությունների նշանակման մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն՝ արդեն մեկնարկած ընտրական գործընթացի պայմաններում, և ուղղված է եղել լայն, սոցիալապես զգայուն և ընտրական վարքագծի վրա ազդեցության տեսանկյունից առանձնապես խոցելի ընտրողների խմբին: Դիմողի պնդմամբ՝ ընտրությունների անմիջական համատեքստում նման միջոցառում իրականացնելն օբյեկտիվորեն կարող է ձևավորել գործող իշխանության օգտին նյութական և քաղաքական առավելություն՝ խախտելով մյուս քաղաքական ուժերի հետ հավասար մրցակցության պայմանները: Բացի դրանից, ըստ Դիմողի, կենսաթոշակների բարձրացումը նշված համատեքստում պետք է որակվի ոչ թե որպես չեզոք սոցիալական միջոցառում, այլ

պետական ֆինանսական և վարչական ռեսուրսի չարաշահմամբ իրականացված ընտրական միջամտություն:

դ. Անդրադառնալով քաղաքական մրցակցության անհավասար պայմաններին՝ Դիմողը նշում է, որ չնայած այն հանգամանքին, որ Ս. Կարապետյանի առաջնորդած ուժն ընտրական գործընթացի սուբյեկտ է, ինչն առնվազն ենթադրում է մրցակցության պայմանների հավասարության ապահովում, այդ թվում՝ Սահմանադրության 7-րդ հոդվածի առումով, ողջ ընտրական գործընթացի ընթացքում Ս. Կարապետյանը զրկված է եղել այդ հնարավորությունից, քանի որ վերջինիս նկատմամբ կիրառվել են ազատության սահմանափակում ենթադրող խափանման միջոցներ: Այդ առնչությամբ Դիմողը գտնում է, որ խափանման միջոցը չպետք է իրացվի նաև անձի քաղաքական իրավունքների սահմանափակման նպատակով, և դրա կիրառման հարցը լուծելիս պետք է հաշվի առնվեն նման տվյալները: Դիմողը պնդում է, որ ներկայումս կիրառված խափանման միջոց տնային կալանքը, ի թիվս այլնի, զրկում է Ս. Կարապետյանին նաև քաղաքական իրավունքների լիարժեք իրացման հնարավորությունից:

ե. Դիմողը նշում է, որ Ազգային ժողովի հերթական ընտրության ողջ գործընթացում խաթարվել է Սահմանադրության 7-րդ հոդվածը, որը երաշխավորում է ընտրությունների հավասարության և օրինականության սկզբունքը, քանի որ վարչապետի կողմից թեև ներկայացվել է արձակուրդում գտնվելու որոշում, սակայն իրականում չի ապահովվել վարչապետի՝ որպես պետական բարձրագույն պաշտոնատար անձի կարգավիճակի և իշխող կուսակցության քարոզարշավի ընթացքում պատգամավորի թեկնածուի միջև փաստացի տարանջատումը: Դիմողը գտնում է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ցուցակի՝ ավելի քան 90 տոկոսի պետական և հանրային հատվածի աշխատողներից, այդ թվում՝ պետական ծառայողներից, պետական պաշտոնատար անձանցից և Ազգային ժողովի գործող պատգամավորներից կազմված լինելու պայմաններում անուղղակիորեն ստեղծվել է միջավայր, որ վարչական ռեսուրսն օգտագործվի կազմակերպված եղանակով և ունենա զանգվածային բնույթ: Նշված հանգամանքը, ըստ Դիմողի, որևէ իրավիճակում չէր կարող չազդել ընտրությունների արդյունքների վրա:

զ. Դիմողը նշում է, որ արձանագրվել է փաստ, որ իշխող քաղաքական ուժի նախընտրական միջոցառումներին ներգրավվել են պետական և հանրային հատվածի ներկայացուցիչներ, իսկ առանձին դեպքերում՝ նաև ուսումնական հաստատությունների աշխատակիցներ և աշակերտներ: Ըստ Դիմողի՝ հանրային ծառայության և պետական համակարգի մարդկային ռեսուրսը չի կարող ծառայեցվել որևէ կուսակցության քարոզչական նպատակներին, իսկ դրա օգտագործումը մեկ քաղաքական ուժի օգտին խախտում է ընտրություններին մասնակցող ուժերի

հավասար հնարավորությունները, քանի որ մյուս մասնակիցները չեն տիրապետում նույն վարչական, կազմակերպչական և ինստիտուցիոնալ ռեսուրսներին:

է. Դիմողը պնդում է, որ ընտրական գործընթացի փուլում, այդ թվում՝ քվեարկության օրը, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց կողմից մշտապես և համակարգված օգտագործվել է վարչական ռեսուրս և պաշտոնեական դիրք:

ը. Դիմողը պնդում է, որ առկա են տեսանյութեր, որ, օրինակ՝ կրթական հաստատությունների ներկայացուցիչներն ուսումնական հաստատությունում իրենց ունեցած աշխատանքային պարտականություններն ստորադասել են նախընտրական քարոզարշավին մասնակցելուն, ինչը զուգորդվել է ուսումնական գործընթացի խաթարմամբ՝ դասաժամերի կրճատ տևողությամբ անցկացմամբ, ինչպես նաև աշակերտների՝ որպես երեխաների լավագույն շահի և կրթության իրավունքի ոտնահարմամբ և քաղաքական գործընթացներում վերջիններիս ներգրավմամբ:

Դիմողը նշում է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից քարոզարշավի ընթացքում կիրառվել է նաև վարչական ռեսուրս, մասնավորապես՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության ներքո գտնվող «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի աշխատակիցների կողմից փակցվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական պաստառը՝ կուսակցության ընտրական ցուցակը գլխավորող անձի նկարով:

թ. Դիմողը նշում է, որ իր ներկայացրած մի շարք դիմումների առնչությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ցուցաբերել է անգործություն և իրականացրել ոչ պատշաճ վարչարարություն, ինչն առանձին կերպով և համակցության մեջ ևս չի համապատասխանում Սահմանադրության 7-րդ հոդվածին: Ըստ Դիմողի՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը չի կիրառել Ընտրական օրենսգրքով իրեն ընձեռված վերահսկողական գործիքակազմը, չի ապահովել պատշաճ լսվելու իրավունքը մի շարք դիմումների առնչությամբ՝ սահմանափակվելով դիմումները ՀՀ գլխավոր դատախազությանը վերահասցեագրելով, ինչով խուսափել է խախտումներին անմիջապես արձագանքելու իր պոզիտիվ պարտականությունից:

ժ. Վկայակոչելով թիվ ՎԴ/9260/05/26 վարչական գործի շրջանակներում Վարչական դատարանի կողմից կայացված դատական ակտի բովանդակությունը՝ Դիմողը նշում է, որ դատարանը հաստատված է համարել խախտման օբյեկտիվ գոյությունը, սակայն հայցի մերժումը հիմնավորել է բացառապես դատական վերահսկողության սահմաններով դիտարկելով ԿԸՀ հայեցողական լիազորությունը: Միաժամանակ Դիմողը վկայակոչել է նաև թիվ ՎԴ/9807/05/26 վարչական գործով կայացված դատական ակտի բովանդակությունը և նշել, որ Վարչական դատարանի կողմից փաստացի չի հերքվել վարչական ռեսուրսի չարաշահման դեպքը, ավելին՝ արձանագրվել է, որ նկարագրված դեպքը ենթադրում է ինչպես ընտրական

օրենսդրության խախտում, այն է՝ վարչական ռեսուրսի չարաշահում, այնպես էլ հանցանքի տարրեր՝ քարոզչություն կատարելուն հարկադրելու մասով:

ժա. Դիմողը նշում է, որ ընտրական գործընթացի փուլում խախտվել են ազատ և հավասար ընտրական իրավունքի սկզբունքների տարրերը նաև այնքանով, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի հարյուրավոր շտաբների ներկայացուցիչների նկատմամբ բազմաթիվ քրեական գործեր են հարուցվել այնպիսի խափանման միջոցների կիրառմամբ, ինչպիսիք են կալանքը, տնային կալանքը և վարչական հսկողությունը: Ըստ Դիմողի՝ անկախ համապատասխան քրեական վարույթների բովանդակային գնահատականից՝ դրանց կիրառման ծավալը, ժամանակագրությունը և ընտրական գործընթացի ընթացքում առաջացրած հետևանքներն էականորեն ազդել են իր կողմից նախընտրական գործունեություն իրականացնելու հնարավորությունների վրա, ինչի արդյունքում խաթարվել է ընտրություններին մասնակցող սուբյեկտների միջև հավասար քաղաքական մրցակցության միջավայրը, որը սահմանադրական նշանակություն ունեցող հանգամանք է՝ ընտրությունների արդյունքների օրինականության գնահատման տեսանկյունից:

ժբ. Անդրադառնալով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և ՀՀ քննչական կոմիտեի գործողություններին՝ կապված այնպիսի տեսանյութերի և ձայնագրությունների հրապարակման հետ, որտեղ հանրայնացվում են որոշակի գաղտնալսումներ՝ ի հիմնավորումն ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից՝ ընտրակաշառք տալու, ստանալու, ինչպես նաև հավաքին մասնակցելու նպատակով անձանց նյութապես շահագրգռելու դեպքեր բացահայտելուն, որոնք պարտադիր ուղեկցվում են «Ուժեղ Հայաստան» կուսակցության հետ իբրև առնչություն ունենալու վերաբերյալ գրառումներով, Դիմողը նշում է, որ առկա են բավարար հիմքեր պնդելու, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն, դուրս գալով նախընտրական գործընթացում պետական մարմիններից պահանջվող առավելագույն զսպվածության և քաղաքական չեզոքության շրջանակներից, փաստացի իրականացրել է ընտրական գործընթացի նկատմամբ անուղղակի և ոչ իրավաչափ միջամտություն՝ ազդելով ընտրողների քաղաքական կամքի ազատ ձևավորման և արտահայտման գործընթացի վրա: Նման վարքագիծը, ըստ Դիմողի, անհամատեղելի է ազատ, արդար և մրցակցային ընտրությունների միջազգային չափանիշների, ինչպես նաև պետական իշխանության մարմինների կողմից հավասար և անկողմնակալ վերաբերմունքի սկզբունքի հետ:

ժգ. Դիմողը պնդում է, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ձայնագրությունների հրապարակումից հետո իշխող քաղաքական ուժի տարբեր ներկայացուցիչներ, այդ թվում՝ Ազգային ժողովի նախագահը, Ազգային ժողովի պատգամավորներ, վարչապետի աշխատակազմի ղեկավարը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը, իրենց ֆեյսբուքյան հարթակներով անմիջապես

անդրադառնում են այդ նյութերին՝ տարածելով և մեկնաբանելով դրանք՝ կրկին լրջագույնս խախտելով անմեղության կանխավարկածը: Ըստ Դիմողի՝ իշխող քաղաքական ուժն իրավապահ մարմնի, սույն դեպքում՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներգրավմամբ զբաղվում է իր վերաբերյալ ոչ օրինաչափ հակաքարոզչություն իրականացնելով, ինչը խաթարում է ընտրությունների ազատության և հավասարության սկզբունքները:

ժդ. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի 2026 թվականի մայիսի 20-ի գրության առնչությամբ Դիմողը նշում է, որ նույնիսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փաստացի ճանաչել է իրավապահ մարմինների հաղորդագրություններում ընտրություններին մասնակցող կուսակցությունների կամ դաշինքների անվանումների հիշատակման վտանգավորությունը՝ այն դիտարկելով որպես հավասար հնարավորությունների սկզբունքի խաթարման ռիսկ: Այնուամենայնիվ, Դիմողի պնդմամբ, չնայած ԿԸՀ-ի կողմից նման կանխարգելիչ դիրքորոշման արտահայտմանը, իրավասու մարմինների հետագա վարքագիծը փաստացի չի համապատասխանել այդ պահանջին: Դիմողը գտնում է, որ ԿԸՀ նշված գրությունը լրացուցիչ հաստատում է, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և այլ իրավասու մարմինների գործողությունները պետք է գնահատվեն ոչ միայն անմեղության կանխավարկածի խախտման, այլև վարչական ռեսուրսի օգտագործմամբ ընտրական գործընթացին ոչ իրավաչափ միջամտության տեսանկյունից: Այդ վարքագիծը, Դիմողի պնդմամբ, խաթարել է ընտրական մրցակցության հավասարությունը, վնասել է կոնկրետ քաղաքական ուժի հեղինակությունը, ազդել է ընտրողների կամքի ազատ ձևավորման վրա և հակասել է ԿԸՀ-ի կողմից նույն հարցով նախապես արտահայտված կանխարգելիչ դիրքորոշմանը:

ժե. Դիմողը նշում է, որ Ազգային ժողովի հերթական ընտրությունը նշանակվելուց հետո՝ 2026 թվականի փետրվարի 7-ից սկսած, գործող վարչապետի վերաբերյալ հնչել են մի շարք արտաքին քաղաքական գործիչների հրապարակային աջակցական հայտարարություններ, որոնք պետք է գնահատվեն որպես ընտրական տեղեկատվական միջավայրի վրա ազդած գործոն, ինչը նպաստել է գործող իշխանության համար լրացուցիչ քաղաքական և հոգեբանական առավելության ձևավորմանը և խաթարել է ընտրողների ազատ կամքի ձևավորման չեզոք պայմանները:

ժզ. Վկայակոչելով թիվ ՎԴ/8592/05/26 վարչական գործով կայացված դատական ակտի բովանդակությունը՝ Դիմողը նշում է, որ դատարանի կողմից հաշվի չի առնվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական հոլովակի պարբերական ցուցադրության հարցն այն համատեքստում, որ ատելության խոսք տարածող և դատարանի կողմից ազատ, խաղաղ և առողջ ընտրական

միջավայրի հետ անհամատեղելի խոսույթը պարբերաբար ցուցադրվել է հեռուստատեսությամբ: Արդյունքում, Դիմողի պնդմամբ, չնայած իր կողմից ձեռնարկված միջոցներին և իրավասու մարմինների կողմից կանխարգելման իրական հնարավորություններին և կառուցակարգերին, դրսևորվել է այնպիսի ազդեցություն, որն անխուսափելիորեն ազդեցություն է թողել ընտրողների կամքի արտահայտման վրա:

ժէ. Դիմողը նշում է, որ նախընտրական քարոզչությունն ուղեկցվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից այնպիսի տեսալսողական նյութերի տարածումով, որոնց բովանդակությունն ամբողջությամբ պարունակել է վիրավորական և զրպարտչական բնույթի արտահայտություններ՝ ուղղված ընդդիմադիր քաղաքական ուժերին, այդ թվում՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքին: Նման տեղեկատվական ազդեցությունը, ըստ Դիմողի, կարող էր ձևավորել ընտրողի կամքը ոչ թե ազատ և տեղեկացված ընտրության, այլ վախի, մոլորության կամ կանխակալ վերաբերմունքի հիման վրա, որը սահմանադրաիրավական առումով խաթարում է ընտրողի ազատ կամարտահայտության երաշխիքը:

ժը. Դիմողը պնդում է, որ Հանրային հեռուստաընկերությունը փաստացի գրաքննություն է իրականացրել նախընտրական քարոզչության գրեթե բոլոր մասնակիցների նկատմամբ՝ բացառությամբ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության: Նման վարքագիծը, Դիմողի պնդմամբ, հատկապես անընդունելի է Հանրային հեռուստաընկերության պարագայում՝ հաշվի առնելով վերջինիս՝ Հանրային հեռարձակող հանդիսանալու և դրանով պայմանավորված՝ նաև առավել լայն լսարան և ընտրազանգվածի վրա մեծ ազդեցություն ունենալու հանգամանքը: Ըստ Դիմողի՝ համապատասխան բովանդակությամբ նյութերի հեռարձակումը հակասում է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հեռարձակողների կողմից ընտրական օրենսդրությամբ առաջնորդվելու, անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն ներկայացնելու, հավասար և ոչ խտրական պայմաններ ապահովելու օրենսդրորեն սահմանված պահանջներին և խաթարում է ընտրողների իրավունքը՝ ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների և նրանց նախընտրական ծրագրերի վերաբերյալ ճշտված և հավաստի տեղեկատվություն ստանալու առնչությամբ:

ժթ. Ընտրողների նույնականացման տեխնիկական սարքերի տվյալների և ձեռքով մուտքագրված տվյալների մեծածավալ կիրառման հարցի առնչությամբ Դիմողը նշում է, որ ԿԸՀ-ն սահմանափակվել է այն փաստով, որ ձեռքով մուտքագրումն օրենքով թույլատրված է, և դրանով ավարտել է իր քննությունը և որևէ գնահատական չի տվել, թե արդյոք ձեռքով մուտքագրման նման ծավալը՝ տվյալ ընտրությունների և դրանց արդյունքների կոնկրետ համատեքստում, համատեղելի էր

ընտրողների նույնականացման գործընթացի ամբողջականությունն ու ստուգելիությունն ապահովելու՝ պետության պոզիտիվ պարտականության հետ և հենց դրա համադրումը Սահմանադրության 7-րդ հոդվածի պահանջներին:

ի. Դիմողը պնդում է, որ ընտրություններին մասնակցել են հազարավոր անձինք, որոնց տվյալները պահվել են գաղտնի, քվեարկության վայրը պահվել է գաղտնի, և հասանելի տեղեկատվություն առկա չի եղել: Այս կապակցությամբ Դիմողը գտնում է. «(...) վերահսկողական մեխանիզմների բացակայությունը նման ընտրության կազմակերպման և դրա հետևանքով հստակ տեղամասերում և ընտրատարածքներում արդյունքները պետք է գնահատվեն Սահմանադրական դատարանի կողմից, այդ թվում դիտարկելով դրանք Սահմանադրության 7-րդ հոդվածի համապատասխանության մասով»:

իա. Ըստ Դիմողի՝ ընտրական իրավունքի համակարգված խախտումների մասին են վկայում նաև այն մեծաքանակ տեսանյութերը, որոնցից ակնհայտ են դառնում զինվորներին սպաների կողմից ուղղորդելու, քվեատուփերում արդեն իսկ պատրաստի ծրարները վերցնելու և տարածքային հանձնաժողովի կողմից իրենց հանձնված ծրարն առանց բացելու աղբարկղը նետելու, ինչպես նաև սպաների կողմից անմիջապես քվեարկության տուփի մոտ քվեարկությանը հետևելու փաստերը: Բացի դրանից, Դիմողի պնդմամբ՝ արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ քվեարկության օրն առողջական խնդիրներ ունեցող կամ տարեց անձանց ուղեկցել են հենց համայնքապետարանի աշխատակիցները, կամ նրանց օգնություն է ցուցաբերել մեկ այլ տարեց անձ, ինչպես նաև գրանցվել են ընտրողի գաղտնի և ազատ կամքի արտահայտմանը միջամտելու այլ դեպքեր, որոնք չեն արժանացել պատշաճ կանխարգելման և վերահսկողության:

իբ. Դիմողը նշում է, որ շուրջ 7000 անձի՝ քվեարկելու ընտրատեղամասը փոխելու դիմումները մերժվել են ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից, ինչի արդյունքում նշված անձինք զրկվել են Սահմանադրությամբ ամրագրված իրենց ընտրական իրավունքի իրականացման հնարավորությունից ընդհանրապես:

իգ. Դիմողը պնդում է, որ շուրջ 637 ընտրական տեղամասերում իրականացված վերահաշվարկների արդյունքները ցույց են տալիս, որ սկզբնական արձանագրություններում առկա են եղել այնպիսի սխալներ և անհամապատասխանություններ, որոնք հանգեցրել են ոչ միայն «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքին տրված ձայների թվաքանակի փոփոխության և ավելացման, այլ նաև այլ ընդդիմադիր կուսակցությունների և դաշինքների օգտին տրված ձայների վերանայման, որպիսի իրավիճակում հիմնավոր կասկած է առաջանում ընտրությունների արդյունքների ամբողջական ճշգրտության և հավաստիության նկատմամբ:

Միաժամանակ Դիմողը գտնում է, որ ԿԸՀ-ն կայացրել է ամենաինտենսիվ միջամտությունը ենթադրող երկու որոշում. 35/65 և 10/51 ընտրական տեղամասերի արդյունքներն ընդհանրապես ճանաչվել են անվավեր, իսկ դրանց հիմքում դրված խախտումների՝ ընտրությունների արդյունքների վրա ազդելու հանգամանքի գնահատում չի իրականացվել: Այս համատեքստում Դիմողը պնդում է, որ եթե ընտրական գործընթացի կազմակերպական բնույթի խախտումները կարող են հանգեցնել ընտրական տեղամասի արդյունքներն ամբողջությամբ անվավեր ճանաչելուն, ապա նույնաբնույթ կամ համադրելի խախտումների առկայությունն այլ ընտրական տեղամասերում չէր կարող մնալ առանց պատշաճ իրավական գնահատականի և արդյունավետ քննության:

իդ. Դիմողի պնդմամբ՝ քվեարկության օրը մի շարք ընտրատեղամասերում արձանագրվել են ընտրողների կամքի ազատ ձևավորման և արտահայտման գործընթացին միջամտության (օրինակ՝ ընտրողներին ցուցումներ տալ, նրանց ընտրական վարքագիծն ուղղորդել և այլն), ինչպես նաև քարոզչության իրականացման դեպքեր (օրինակ՝ ընտրողների հետ նպատակային շփումներ և այլն), որոնք հակասում են ազատ ընտրությունների սկզբունքին և խաթարում ընտրողի քաղաքական կամքի ազատ և չհարկադրված արտահայտման սահմանադրական երաշխիքները:

իե. Դիմողը նշում է, որ քվեարկության ընթացքում արձանագրվել են մի շարք հանգամանքներ, որոնք վտանգել են քվեարկության գաղտնիության սկզբունքի արդյունավետ իրացումը: Մասնավորապես՝ ըստ Դիմողի՝ արձանագրվել են քվեախցիկների ոչ պատշաճ կահավորման և տեղադրման դեպքեր, երբ քվեախցիկների կառուցվածքը, դիրքը կամ տեխնիկական առանձնահատկությունները չեն ապահովել ընտրողի կամարտահայտության լիարժեք գաղտնիությունը: Ավելին, Դիմողի պնդմամբ, արձանագրվել են դեպքեր, երբ քվեաթերթիկը դրվել է ծրարի մեջ, իսկ ծրարն ունեցել է թափանցիկություն, ինչը թույլ էր տալիս տեսնել, թե անձն ում է ընտրել:

իզ. Դիմողը պնդում է, որ արձանագրվել են դեպքեր, երբ ընտրողներին տրամադրված քվեաթերթիկների փաթեթներում բացակայել են առանձին քաղաքական ուժերին վերաբերող քվեաթերթիկներ, կամ դրանց քանակը եղել է ակնհայտ անհավասար, որպիսի խախտումները սահմանափակում են ընտրողների ազատ ընտրության հնարավորությունը, խաթարում ընտրական իրավունքի հավասարության սկզբունքը և կասկածի տակ են դնում քվեաթերթիկների իսկությունն ու ընտրական գործընթացի օրինականությունը:

Բացի դրանից, Դիմողի պնդմամբ՝ քվեարկության ընթացքում արձանագրվել են ընտրողների նույնականացման տեխնիկական միջոցների աշխատանքի

խափանումներ, ինչպես նաև ժամանակային անհամապատասխանություններ և ընթացակարգային այլ թերություններ:

Դիմողը նշում է, որ արձանագրվել են նաև դեպքեր, երբ քվեատուփերը չեն եղել պատշաճ կերպով կապարակնքված, կամ կիրառվել են անվտանգության ոչ լիարժեք միջոցներ, այսինքն՝ միայն ինքնակպչուն ժապավենով է կնքված եղել քվեատուփը, սակայն օրենքի պահանջով դրա կապարակնքումն ապահովված չի եղել. անգամ մի տեղամասում դա նկատվել է ընտրությունների ավարտից 1 ժամ առաջ:

իէ. Ընտրական հանձնաժողովների գործունեության և արհեստավարժության հետ կապված խնդիրների առնչությամբ Դիմողը նշում է, որ ԿԸՀ-ն սեփական նախաձեռնությամբ փաստացի անվավեր է ճանաչել երկու ընտրական տեղամասերում ընտրության արդյունքները, սակայն իր լիազորություններից որևէ մեկը չի իրացրել հենց նշված և դիմումում ներկայացված այլ դեպքերով, որը ևս փաստում է Սահմանադրության 7-րդ հոդվածի համատեքստում կանխատեսելիության, միասնական մոտեցման բացակայությունը:

իը. Դիմողը նշում է, որ Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից տարբեր ընտրատեղամասերում արձանագրված խախտումների նկատմամբ ցուցաբերվել է ոչ միասնական և ոչ հետևողական մոտեցում, ինչն ինքնին կասկածի տակ է դնում ընտրական վարչարարության կանխատեսելիությունն ու իրավական որոշակիությունը:

իթ. Դիմողը պնդում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026 թվականի հունիսի 14-ի թիվ 258-Ա որոշմամբ ձևականորեն անդրադարձել է դիմումում ներկայացված մի շարք փաստարկների, սակայն չի իրականացրել այնպիսի ամբողջական գնահատում, որը պահանջվում է Ընտրական օրենսգրքի 101-րդ հոդվածով: Ըստ Դիմողի՝ ԿԸՀ-ն պարտավոր էր ոչ միայն ստուգել՝ առանձին դրվագն ինքնին արդյունքի վրա թվային ազդեցություն ունեցե՞լ է, թե՞ ոչ, այլև գնահատել խախտումների բնույթը, տարածվածությունը, պարբերականությունը, կազմակերպվածությունը, փոխկապակցվածությունը և դրանց կուտակային ազդեցությունն ընտրական գործընթացի օրինականության և հանրային վստահության վրա: Այդ որոշման եզրահանգումը, որը կապված է 2026 թվականի հունիսի 14-ի թիվ 259-Ա որոշման հետ, կառուցված է խախտումների մեկուսացված և տեխնիկական գնահատման վրա:

լ. Դիմողը նշում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտել է, որ 2026 թվականի ապրիլի 7-ի օրենսդրական փոփոխությունները չեն ազդել քաղաքական մրցակցության վրա, քանի որ դրանք ընդունվել են մինչև ընտրություններին մասնակցելու մասին դիմումները ներկայացնելու ժամկետի սկիզբը: Այս մեկնաբանությունը, Դիմողի պնդմամբ, ոչ իրավաչափորեն նեղ է: Ըստ Դիմողի՝ ընտրական գործընթացի հավասարության գնահատման համար որոշիչ չէ

միայն այն հանգամանքը, թե փոփոխությունն ընդունվել է առաջադրման ժամկետի սկզբից առաջ, թե հետո, այլ որոշիչ է այն, թե արդյո՞ք փոփոխությունը կատարվել է արդեն նշանակված ընտրությունների պայմաններում, արդյո՞ք այն ունեցել է կոնկրետ քաղաքական ուժի նկատմամբ ուղղվածություն, և արդյո՞ք այն ազդել է ընտրողների իրազեկվածության, քվեաթերթիկի լրացման կարգի ընկալման և անվավեր քվեաթերթիկների թվի աճի վրա:

Միաժամանակ Դիմողն ընդգծում է, որ այս ընտրություններում անվավեր քվեաթերթիկների թիվը գրեթե քառապատկվել է նախորդ՝ 2021 և 2018 թվականներին տեղի ունեցած ընտրությունների համեմատ, ինչը հիմնավորում է այն մտահոգությունները, որ օրենսդրական փոփոխությունների և դրանց վերաբերյալ ընտրողների ոչ բավարար իրազեկման միջև առկա է անմիջական կապ, որն էական ազդեցություն է ունեցել ընտրողների կամարտահայտման արդյունավետ իրացման վրա և էական ազդեցություն է ունեցել ընտրությունների արդյունքների վրա:

լա. Ըստ Դիմողի՝ ԿԸՀ-ն չի պարզել և գնահատել՝ արդյո՞ք տարբեր քաղաքական ուժերի նկատմամբ կիրառվել են նույն չափանիշները, արդյո՞ք քրեական վարույթների հրապարակային լուսաբանումը և ընտրություններին մասնակցող ուժերի անվանումների շրջանառությունը նպաստել են անհավասար մրցակցային միջավայրի ձևավորմանը, ինչպես նաև արդյո՞ք այդ գործողությունները համադրված վարչական ռեսուրսի և քարոզչական միջավայրի հետ կարող էին ազդել ընտրողների կամքի ձևավորման վրա:

լբ. Դիմողը գտնում է, որ ԿԸՀ-ն մի կողմից ընդունել է, որ նախընտրական քարոզչությունը չի կարող ուղեկցվել ատելության, բռնության կոչերով և սպառնալիքներով, մյուս կողմից՝ փաստացի հրաժարվել է գնահատել դիմումում ներկայացված քարոզչական նյութերի բովանդակությունը՝ այն համարելով հնարավոր գրաքննության ռիսկ: Նման մոտեցումը, ըստ Դիմողի, չի համապատասխանում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պարտականությանը:

լգ. Դիմողը նշում է, որ ԿԸՀ-ն չէր կարող թիվ ՎԴ/9915/05/26 վարչական գործով կայացված վճռի առկայությունը ներկայացնել որպես ընտրությունների ընդհանուր արդյունքների օրինականության բավարար հիմնավորում:

Դիմողը պնդում է, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության՝ թիվ 10/51 և թիվ 35/65 ընտրատեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչվելու հետևանքով 213 ձայնի կորուստը վճռորոշ նշանակություն ունի վերջինիս համար օրենքով սահմանված 4% անցողիկ շեմը հաղթահարելու հարցում, հետևաբար՝ խախտումները հատում են արդյունքների վրա ազդեցության շեմը: Ընդ որում՝ Դիմողի պնդմամբ՝ խախտումները վերաբերում են միայն երկու ընտրատեղամասերի, և չկան

փաստական կամ իրավական հիմքեր՝ պնդելու, որ այդ խախտումների հետևանքները հնարավոր չէ շտկել մասնակի վերաքվեարկությամբ: Ավելին, Դիմողը գտնում է, որ խախտումների հետևանքները շտկելու համար անհրաժեշտ է կազմակերպել վերաքվեարկություն հենց այն ընտրատեղամասերում, որտեղ արձանագրվել են խախտումները:

լդ. Դիմողը նշում է, որ ԿԸՀ-ն, թեև իրավասություն չուներ սեփական նախաձեռնությամբ անվավեր ճանաչելու թիվ 10/51 և թիվ 35/65 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքները, այնուամենայնիվ, կիրառել է Ընտրական օրենսգրքի 101-րդ հոդվածը՝ անվավեր ճանաչելով այդ տեղամասերում քվեարկության արդյունքները: Դիմողի պնդմամբ՝ ԿԸՀ-ն եզրակացրել է, որ չեն եղել այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների ընդհանուր արդյունքի վրա: Այդ եզրակացությունը, ըստ Դիմողի, տրամաբանորեն անհամատեղելի է ԿԸՀ նախորդ գործողությունների հետ, քանի որ առանձին տեղամասերի արդյունքներն անվավեր ճանաչելով՝ ԿԸՀ-ն արդեն իսկ ընդունել է այդ տեղամասերում արձանագրված խախտումների էական բնույթը:

Դիմողը պնդում է, որ ԿԸՀ-ն չուներ վերահսկողական իրավասություն՝ սեփական նախաձեռնությամբ անվավեր ճանաչելու ընտրական տեղամասերի արդյունքները: Հետևաբար՝ ըստ Դիմողի՝ Սահմանադրական դատարանը պետք է բովանդակային գնահատական տա ԿԸՀ նման որոշման իրավաչափությանը և հանգի այն հետևության, որ նման լիազորության լայն մեկնաբանմամբ և ընտրական գործընթացի վերահսկողության կանխատեսելիությունը խաթարող եղանակով իրականացումը չէր կարող չհանդիսանալ Սահմանադրության 7-րդ հոդվածով ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքների ակնհայտ խախտում: Դիմողի պնդմամբ՝ ակնհայտ է նաև, որ եթե իրապես ԿԸՀ-ն օժտված է նման լիազորությամբ, ապա Սահմանադրական դատարանը պետք է գնահատի՝ որքանո՞վ է ողջամիտ այն իրավիճակը, երբ ընտրությունների արդյունքների ամփոփումից և նույն արդյունքների վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշումից հետո ԿԸՀ-ն դեռևս վեցամսյա ժամկետում կարող է վերանայել տարածքային ընտրական հանձնաժողովի ցանկացած որոշում: Նման մոտեցումը, ըստ Դիմողի, ընտրական գործընթացը վերածում է անվերջանալի գործընթացի և առաջացնում հակասահմանադրական անորոշություն:

Բացի դրանից, Դիմողը նաև նշում է, որ եթե տեղամասային մակարդակում կազմակերպական բնույթի խախտումները բավարար չափով լուրջ էին այդ տեղամասերի արդյունքներն ամբողջությամբ անվավեր ճանաչելու համար, ապա ԿԸՀ-ն պարտավոր էր նույն վերլուծական չափանիշը կիրառել նաև իր դիմումի նկատմամբ, որը փաստագրել էր նույն կամ ավելի մեծ ծավալի խախտումներ

հարյուրավոր տեղամասերում, այլ ոչ թե այն մերժել՝ որևէ ազդեցության բացակայության մասին ընդհանրական եզրակացությամբ:

լե. Դիմողը պնդում է, որ ԿԸՀ-ն չի կատարել իր պոզիտիվ պարտականությունը՝ ապահովելու ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության, քաղաքական ուժերի հավասարության և ընտրողների կամքի ազատ արտահայտման երաշխիքների արդյունավետ պաշտպանությունը: Այդ բացթողումը, ըստ Դիմողի, ինքնուրույն հիմք է ԿԸՀ թիվ 259-Ա որոշումը վիճարկելու և Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու համար:

Դիմողի պնդմամբ՝ ԿԸՀ-ի կողմից բավարար միջոցներ չեն ձեռնարկվել այլ անձի փոխարեն քվեարկության դեպքերի բացահայտմանն ուղղված: Դիմողը նշում է, որ ընտրողների ստորագրված ցուցակների մատչելիությունը և դրա հրապարակումն ուղղված են նման դեպքերի բացահայտմանը: Միաժամանակ Դիմողը պնդում է, որ ընտրողների ստորագրված ցուցակների մատչելիությունը սահմանափակված է եղել ՀՀ տարածքից դուրս գտնվող անձանց կողմից հասանելիության մասով, ինչը որևէ բացատրության կամ պարզաբանման չի արժանացել:

լզ. Դիմողը նշում է, որ մի շարք ընտրախախտումների վերաբերյալ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքն իր իրավունքների պաշտպանության համար հայցադիմումներ է ներկայացրել Վարչական դատարան, որոնց հիման վրա հարուցվել են թիվ ՎԴ/9921/05/26, ՎԴ/9920/05/26, ՎԴ/9919/05/26, ՎԴ/9918/05/26, ՎԴ/9917/05/26, ՎԴ/9916/05/26 վարչական գործերը, որոնք, սակայն, քննության չեն առնվել Վարչական դատարանի կողմից. դրանց մի մասը վերադարձվել է, այնուհետև կրկին ներկայացվել՝ թերությունները շտկված, սակայն կրկին ներկայացված հայցադիմումները վարույթ ընդունելը մերժվել է: Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին թվով երեք որոշումներ (թիվ ՎԴ/9920/05/26, թիվ ՎԴ/9918/05/26 և թիվ ՎԴ/9916/05/26) բողոքարկվել են ՀՀ վերաքննիչ վարչական դատարան, դրանք ընդունվել են վարույթ, սակայն առկա չէ դատական ակտ: Ըստ Դիմողի՝ նշված գործերից որևէ մեկով Վարչական դատարանը չի իրականացրել ներկայացված ընտրական խախտումների ըստ էության քննություն և չի գնահատել դրանց ազդեցությունն ընտրությունների արդյունքների վրա, ինչը, հետևաբար, կարող է և պետք է հաղթահարվի արդեն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում:

Դիմողը եզրահանգում է, որ ընտրախախտումների վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմքերը և հիմնավորումները բավարար են պնդելու, որ դրանց մի մասը եղել է կազմակերպված, մի մասը՝ զանգվածային, մի մասը՝ կրկնվող, իսկ որոշ մասեր կրել են պարբերական բնույթ, և դրանց համադրումը վկայում է նշվածների միջև համակարգային այնպիսի փոխկապակցվածության մասին, որի պայմաններում խախտվում են Սահմանադրության 7-րդ հոդվածով ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները:

11.2. «Միասնության թևեր» կուսակցություն

«Միասնության թևեր» կուսակցությունը (այսուհետ սույն կետում նաև՝ Դիմող) իր դիմումով խնդրել է.

«(...)

2. Անվավեր ճանաչել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի N 258-Ա և N 259-Ա որոշումները:

3. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքները»:

ա. Ըստ Դիմողի՝ իր կողմից ներկայացված փաստական տվյալները վկայում են վարչական ռեսուրսի համատարած և համակարգային օգտագործման մասին: Մասնավորապես՝ արձանագրվել են պետական և համայնքային աշխատողների ներգրավում քարոզարշավին, կրթական հաստատությունների աշխատակիցների մասնակցություն քաղաքական միջոցառումներին, համայնքային կառույցների օգտագործում ընտրական նպատակներով, պետական ազդեցության լծակների կիրառմամբ ընտրողների մոբիլիզացիա: Դիմողի գնահատմամբ՝ նման գործողությունները հակասում են ընտրական հավասարության սկզբունքին և խաթարում են քաղաքական մրցակցության արդար բնույթը:

Դիմողը հատկապես խնդրահարույց է համարում այն հանգամանքը, որ որոշ հրապարակումներում արձանագրվել է իշխող ուժի քարոզարշավին դպրոցների, մանկավարժների և աշակերտների մասնակցության փաստը՝ դասապրոցեսի կամ աշխատանքային ժամերի համատեքստում: Բացի դրանից, ըստ Դիմողի՝ որոշ տեղական ինքնակառավարման մարմիններ, որտեղ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու անդամները կազմել են մեծամասնություն և ընտրել համայնքի ղեկավար, նախընտրական քարոզարշավի ընթացքում կամ դրան անմիջապես նախորդող ժամանակահատվածում անհատույց գործարքներ են կնքել մի շարք քաղաքացիների հետ կամ տրամադրել փոխադրամիջոցների և անշարժ գույքի հարկի գծով արտոնություններ:

բ. Դիմողի ներկայացրած նյութերից հետևում է, որ ընտրողների նկատմամբ կիրառվել են ուղղակի և անուղղակի ճնշումներ, վախի մթնոլորտ, մասնակցության վերահսկման մեխանիզմներ, սոցիալական և աշխատանքային կախվածության գործոններ: Դիմողը նշում է, որ նման պայմաններում քաղաքացիների ընտրությունը չի կարող դիտվել որպես լիովին ազատ կամարտահայտության արդյունք և նման մեխանիզմները, եթե հաստատվում են ներկայացվող ապացույցներով, իրենց բնույթով ուղղված են ոչ միայն առանձին ընտրողների կամքի վրա ազդելուն, այլև ընտրական գործընթացում վախի, կախվածության և վերահսկելիության մթնոլորտ ձևավորելուն:

Դիմողի գնահատմամբ՝ ընտրողը, որը համոզված է, որ իր քվեարկությունը կարող է վերահսկվել, այլևս չի կարող լիարժեքորեն օգտվել գաղտնի, ազատ և անձնական կամարտահայտության իրավունքից: Մասնավորապես՝ Դիմողի պնդմամբ՝ արձանագրվել են պնդումներ այն մասին, որ քաղաքացիներին պարտադրել կամ ուղղորդել են մասնակցել իշխող ուժի քարոզչական հավաքներին, չմասնակցել ընդդիմադիր քաղաքական ուժերի հանդիպումներին, ինչպես նաև քվեարկության օրը կատարել իշխանական ուժի օգտին քվեարկության ապացուցման գործողություններ, այդ թվում՝ քվեաթերթիկի լուսանկարման միջոցով:

Բացի դրանից, Դիմողը նշել է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչները և հատկապես կուսակցության պատգամավորի թեկնածու Ն. Փաշինյանը նախընտրական քարոզարշավի գրեթե ողջ ընթացքում ատելության խոսույթ է տարածել ընդդիմադիր գործիչների նկատմամբ:

Դիմողը, անդրադառնալով սոցիալական և աշխատանքային կախվածության օգտագործման հարցին, հատկանշական է համարում ընտրությունները նշանակելուց հետո Կառավարության 2026 թվականի մարտի 5-ի 244-Ն որոշումը, որով ավելացվեցին կենսաթոշակների չափերը 10,000 ՀՀ դրամով, հաջորդիվ հանրային ծառայողներին տրվող պարգևավճարները (այսպես կոչված՝ պիլոտային պարգևավճարները), որոնք էապես ավելացնում են հանրային ծառայողների վարձատրությունը՝ առանց հստակ երաշխիքների և ստեղծում կախվածություն իշխող ուժից:

գ. Դիմողը մատնանշում է, որ ընտրական գործընթացի ընթացքում իշխող քաղաքական ուժը փաստացի օգտվել է պետական իշխանության ինստիտուցիոնալ առավելություններից, ինչը հանգեցրել է քաղաքական մրցակցության անհավասար պայմանների ձևավորմանը: Արդյունքում՝ քաղաքացիների համար հաճախ խառնվել են պետական գործունեության, պաշտոնական հաղորդակցության և կուսակցական քարոզչության սահմանները:

Դիմողը ներկայացրել է նաև փաստեր, համաձայն որոնց՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորի թեկնածու Ն. Փաշինյանը նախընտրական քարոզչության ընթացքում ընտրողներին բաժանել է սննդամթերք և այլ ապրանքներ՝ խախտելով բարեգործության արգելքը, իսկ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզարշավի ընթացքում «սրտիկներով կապույտ մեքենաների» օգտագործումը, ըստ Դիմողի, հանգեցրել է Կառավարության 2005 թվականի նոյեմբերի 24-ի N 2137-Ն որոշմամբ հաստատված՝ տրանսպորտային միջոցներում գովազդի տեղադրման կարգի խախտման:

դ. Դիմողը նշում է, որ ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հավասարությամբ հանդես չի եկել նախընտրական քարոզարշավի ժամանակ և գտնվել է մրցակցությունից դուրս: Մասնավորապես՝ «Քաղաքացիական

պայմանագիր» կուսակցության նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանում ներառված են 130 անշարժ գույքեր, որոնք «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը հանձնվել են անհատույց, մինչդեռ Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների համաձայն՝ հիշատակված անշարժ գույքերը պետք է արտացոլված լինեին հայտարարագրում՝ շուկայական արժեքով: Ըստ Դիմողի՝ ներկայացված արժեքները ոչ միայն չեն համապատասխանում գործող շուկայական արժեքներին, այլև հաճախ էականորեն տարբերվում են շուկայական արժեքից: Ընդ որում՝ այդ 130 միավոր անշարժ գույքերի անհատույց օգտագործումը նաև բացառել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հարկային պարտավորությունների կատարումը, ինչը չէր բացառվի վարձակալության դեպքում:

ե. Դիմողը նշում է, որ մի շարք ընտրատեղամասերում տեղամասային արձանագրություններով և ԿԸՀ ամփոփ տվյալներով արձանագրվել են էական տարբերություններ: Դիմողի գնահատմամբ՝ ընտրողի քվեն կարող է կորցնել իր իրավական արժեքը ոչ միայն այն դեպքում, երբ ընտրողին ճնշում են կամ կաշառում, այլև այն դեպքում, երբ նրա տված քվեն արձանագրությունից մինչև վերջնական ամփոփում ընկած ճանապարհին սխալ է հաշվարկվում, նվազեցվում կամ այլ կերպ չի արտացոլվում պաշտոնական արդյունքներում:

զ. Դիմողը նշում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026 թվականի հունիսի 14-ի N 258-Ա որոշմամբ արձանագրել է, որ թիվ 10/51, 12/13 և 35/65 ընտրատեղամասերում ընտրության արդյունքների անվավեր ճանաչումը չի ազդում ընտրության արդյունքների վրա: Ըստ Դիմողի՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դա եզրակացրել է առանց բավարար չափով վերլուծություն կատարելու և անվավերության ազդեցության չափը գնահատելու:

Դիմողի պնդմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը հաջորդիվ հանդես է եկել հայտարարությամբ, որով արձանագրել է.«Հավասար ընտրական իրավունքի տեսանկյունից ևս խնդիրը ակնհայտ է: Վերաքվեարկությունը կարող է խախտել ընտրողների հավասարությունը, քանի որ ընտրողների մեկ խումբը հայտնվում է մյուսներից էապես տարբեր ելակետային պայմաններում»: Դիմողը գտնում է, որ նման հետևությունը ոչ այլ ինչ է, քան օրենքի կամայական մեկնաբանում, քանի որ վերաքվեարկության միջոցով արդյունքները շտկելու անհնարինության դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը չուներ հայեցողություն և չէր կարող ընդունել այլ որոշում, քան Ազգային ժողովի ընտրություններն անվավեր ճանաչելու և ընտրությունների վերաքվեարկություն նշանակելու մասին:

է. Դիմողը, անդրադառնալով ընտրական բողոքների արդյունավետ քննությանը որպես սահմանադրական պահանջ, ինչպես նաև վկայակոչելով Սահմանադրական դատարանի՝ 2003 թվականի ապրիլի 16-ի ՍԴՈ-412 որոշմամբ

արտահայտած իրավական դիրքորոշումը, գտնում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փաստացի չի իրականացրել իր ներկայացրած՝ վարչական ռեսուրսի կիրառման, նախընտրական հիմնադրամի չափը գերազանցված լինելու, ընտրողների կամարտահայտության վրա ազդեցության, ընտրակաշառքի հատկանիշներ պարունակող գործողությունների և արձանագրությունների անհամապատասխանությունների վերաբերյալ փաստարկների ամբողջական քննություն, ինչը հակասում է Սահմանադրական դատարանի ՍԴՈ-412 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմանը:

Հավելելով՝ Դիմողը նշում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, հակասելով Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 15-րդ մասին, 2026 թվականի հունիսի 14-ին կայացրել է առանձին որոշում՝ N 258-Ա որոշումը, որով անդրադարձել է իր ներկայացրած դիմումին: Մինչդեռ նման որոշում ընդունելու լիազորություն, ըստ Դիմողի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ո՛չ Ընտրական օրենսգրքով, ո՛չ էլ որևէ այլ օրենքով չի ունեցել, քանի որ Ընտրական օրենսգրքի 75 և 95-րդ հոդվածների ուժով միակ որոշումը, որը ԿԸՀ-ն կայացնում է ընտրությունների ամփոփման փուլում, 95-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հինգ որոշումներից մեկն է: Դիմողի պնդմամբ՝ հենց այդպես է հաստատված եղել նաև նիստի օրակարգը, որում ներառված է եղել մեկ հարց: Տվյալ դեպքում, ըստ Դիմողի, ԿԸՀ-ն իր դիմումին պետք է անդրադառնար 2026 թվականի հունիսի 14-ի N 259-Ա որոշմամբ, ինչը չի արել:

11.3. «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցություն

«Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցությունը (այսուհետ սույն կետում նաև՝ Դիմող) իր դիմումով խնդրել է.

«Անվավեր ճանաչել 2026 թվականի հունիսի 07-ին տեղի ունեցած ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 14.06.2026 թվականի թիվ 259-Ա որոշումը և ընտրությունների արդյունքները»:

ա. Ըստ Դիմողի՝ նախընտրական, ընտրական և հետընտրական գործընթացներում տեղի են ունեցել ընտրախախտումներ, որոնք կրել են կազմակերպված, զանգվածային և պարբերաբար կրկնվող բնույթ, ավելին՝ առկա են զգալի չափով հաստատված անճշտություններ: Խախտումների համադրումը վկայում է դրանց միջև համակարգային փոխկապակցվածության մասին, որոնք հիմք են տալիս փաստելու, որ նշված ընտրությունները չեն արտահայտում ընտրողի իրական կամքը և ընտրությունների իրական արդյունքները: Նշվածի արդյունքում խախտվում են Սահմանադրության 1-ին, 2, 7 և 8-րդ հոդվածները, Ընտրական օրենսգրքի 3, 4, 6, 19 և 23-րդ հոդվածները:

բ. 2026 թվականի Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության և քվեարկության ընթացքում հանրային տիրույթում, զանգվածային լրատվության միջոցներով, սոցիալական հարթակներով, քաղաքական ուժերի պաշտոնական հաղորդագրություններով և քաղաքացիների հրապարակային ահազանգերով տարածվել են բազմաթիվ տեղեկություններ, որոնք փաստում են պետական և համայնքային կառույցների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև վարչական այլ լծակների համակարգային ներգրավման մասին ընտրական գործընթացներում (օրինակ՝ Մարտունի համայնքում և Ստեփանավան քաղաքում)՝ հօգուտ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (նշված քաղաքական ուժը ընտրական գործընթացների ընթացքում հանդիսացել է իշխող ուժ):

Հանրային տիրույթում լայնորեն տարածվել են տեղեկություններ, որ տարբեր համայնքների ղեկավարներ, վարչական շրջանների ղեկավարներ, մարզային և համայնքային պաշտոնատար անձինք ուղղակի կամ անուղղակի մասնակցել են ընտրական գործընթացներին՝ ազդեցություն գործադրելով ընտրողների կամքի ձևավորման վրա (օրինակ՝ Վարդենիկ, Թեղուտ և Մեծավան համայնքներում):

Հրապարակվել են տեղեկություններ քվեարկության ընթացքում տեղի ունեցած մի շարք այլ խախտումների վերաբերյալ, այդ թվում՝

- նույն անձի կողմից բազմակի քվեարկության կասկածների,
- ընտրողներին որոշակի քաղաքական ուժի օգտին ուղղորդելու,
- ընտրողներին ամբողջական կամ հավասար քանակությամբ քվեաթերթիկներ չտրամադրելու,
- ընտրատեղամասերում քաղաքական քարոզչություն իրականացնելու,
- ընտրողների ցուցակներում փաստացի չբնակվող կամ մահացած անձանց ընդգրկված լինելու,
- ընտրատեղամասերի տարածքներում պաշտոնատար անձանց անթույլատրելի ներկայության և ազդեցության վերաբերյալ:

Վերոնշյալ տեղեկությունները վերաբերում են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի և համայնքների՝ Գեղարքունիքի, Լոռու, Արմավիրի, Արագածոտնի և այլ վարչատարածքային միավորների, ինչպես նաև ընտրական գործընթացի տարբեր փուլերի՝ նախընտրական քարոզչությունից մինչև քվեարկության օրը: Դրանք ներառում են պետական և համայնքային կառավարման տարբեր մակարդակների պաշտոնատար անձանց գործողություններ, կրթական հաստատությունների ներգրավում, ընտրողների ուղղորդման, վարչական ազդեցության մասին բազմաթիվ հաղորդումներ:

գ. Մի շարք դեպքերում գործադիր իշխանության ներկայացուցիչները հանրային միջոցառումներին և քաղաքացիների հետ հանդիպումներին մասնակցել են այնպիսի խորհրդանշաններով և տարբերանշաններով, որոնք նույնացվում են

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզչության հետ: Այդ համատեքստում առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ պաշտոնատար անձինք հանդես են եկել Հայաստանի Հանրապետության քարտեզի պատկերով կրծքանշաններով, որոնք իշխող քաղաքական ուժի կողմից նախընտրական քարոզչության ընթացքում ներկայացվել են որպես այսպես կոչված «Իրական Հայաստանի» խորհրդանիշ: Հաշվի առնելով այդ խորհրդանիշի քաղաքական բովանդակությունն ու օգտագործման համատեքստը՝ ակնհայտ է, որ պետական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից դրա կիրառումը չէր կարող ընկալվել բացառապես որպես չեզոք կամ պետական նշանակության գործողություն, այլ պարունակում էր հստակ ընտրական ենթատեքստ:

Նման պայմաններում պետական իշխանության ներկայացուցիչների կողմից քաղաքական բովանդակություն ունեցող խորհրդանիշների օգտագործումը, հատկապես այն ժամանակահատվածում, երբ պաշտոնական նախընտրական քարոզչությունը դեռևս չէր սկսվել, ազդել է ընտրողների քաղաքական ընկալումների և նախապատվությունների ձևավորման վրա՝ վերջիններիս համար ստեղծելով նախնական և կանխակալ պատկերացումներ քաղաքական գործընթացի մասնակիցների վերաբերյալ: Ավելին, այդ ազդեցությունն իրականացվել է այն փուլում, երբ ընտրողները դեռևս հնարավորություն չեն ունեցել ծանոթանալու ընտրություններին մասնակցող մյուս քաղաքական ուժերի ծրագրերին, գաղափարախոսությանը և քաղաքական առաջարկներին, ինչը կարող էր խաթարել քաղաքական մրցակցության հավասար պայմանները:

դ. Դիմողը նշում է, որ Կառավարության կողմից իրականացվել է կենսաթոշակների, նպաստների և սոցիալական վճարների բարձրացում ընտրություններին անմիջապես նախորդող ժամանակահատվածում, մասնավորապես՝ Կառավարության 2026 թվականի մարտի 5-ի թիվ 244-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել Կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1489-Ն որոշման մեջ, որն ուժի մեջ է մտել 2026 թվականի ապրիլի 1-ին: Նշված որոշմամբ ընտրություններից 2 ամիս առաջ, իսկ քարոզարշավից մոտ մեկ ամիս առաջ Կառավարությունն ընդունել է սոցիալական վճարների բարձրացմանն ուղղված որոշում:

Կառավարության կողմից ընտրություններից օրեր առաջ իրականացվել է պարտքերի ներման գործընթաց, մասնավորապես՝ Կառավարության 2026 թվականի մայիսի 27-ի թիվ 748-Ա որոշմամբ Կառավարությունը ներել է Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2326-Ն որոշմամբ սահմանված որոշ կատեգորիայի անձանց պարտավորություններ, որոնց պարտքը չի գերազանցել 5.000.000 ՀՀ դրամը:

Կառավարության այս որոշումներն ընտրողի իրական կամքի վրա իշխանական լիազորությունների օգտագործմամբ ազդեցության գործադրում է: Նշված փաստերն ազդել են ընտրության արդյունքների վրա և կրել են հստակ մեխանիզմով կազմակերպված զանգվածային բնույթ (շահառուների ահռելի քանակ), որով անհավասար պայմաններ են ստեղծել մնացյալ քաղաքական ուժերի համար:

ե. Ընտրական գործընթացի ընթացքում և դրանից հետո արձանագրվել են մի շարք հանգամանքներ, որոնք առերևույթ հիմք են տալիս կասկածի տակ դնելու ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների, մասնավորապես՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ինչպես նաև իրավապահ մարմինների անկախությունը, անաչառությունը և քաղաքական չեզոքությունն ընտրական գործընթացների նկատմամբ:

2026 թվականի մայիսի 20-ին նախընտրական քարոզչության ընթացքում գործող իշխանության ղեկավարի՝ ընտրություններին մասնակցող իշխող քաղաքական ուժի առաջնորդ Ն. Փաշինյանի կողմից հրապարակային հայտարարություններ են հնչեցվել այն մասին, որ մոտ ապագայում ՀՀ ազգային անվտանգության ծառայության մարմինների կողմից հաղորդում է ներկայացվելու և իրականացվելու են գործողություններ, որոնք առնչվելու են ընդդիմադիր քաղաքական ուժի՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակի պատգամավորի թեկնածու Ա. Թևանյանի նկատմամբ պետական դավաճանության համար քրեական հետապնդում հարուցելուն և ձերբակալելուն:

Տվյալ հայտարարությունից անմիջապես հետո՝ 2026 թվականի մայիսի 23-ին, ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից նշված անձը ձերբակալվել է՝ նույն բնույթի մեղադրանքների կամ կասկածների շրջանակներում, որոնց մասին նախապես հրապարակային հայտարարել էր իշխող քաղաքական ուժի առաջնորդը:

Ընտրությունների ավարտից անմիջապես հետո քրեական հետապնդում է նախաձեռնվել ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերից մեկի՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գ. Ծառուկյանի նկատմամբ: Ըստ հրապարակային տեղեկությունների՝ այդ գործընթացը ժամանակային առումով համընկնում է այն փուլին, երբ տվյալ քաղաքական ուժը վիճարկել է ընտրությունների արդյունքները և դիմել է ընտրական մարմիններին՝ ձայների վերահաշվարկի պահանջով:

զ. Նախընտրական քարոզչության ընթացքում հանրային լայն արձագանք է ստացել վարչապետի՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորի թեկնածու Ն. Փաշինյանի մասնակցությամբ տեղի ունեցած միջադեպի տեսագրությունը, որում արձանագրված է վերջինիս անմիջական շփումն իրեն մոտեցած կնոջ հետ: Տեսանյութից երևում է, որ վարչապետը կնոջ նկատմամբ դրսևորում է ակնհայտ ագրեսիվ, ճնշող և նվաստացնող վարքագիծ՝ կիրառելով

սպառնալիքի, վախի և թշնամանքի տարրեր պարունակող արտահայտություններ, ինչպես նաև ֆիզիկական միջամտություն և քաշքշուկի տարրեր պարունակող գործողություններ:

Հաշվի առնելով խոսքի հեղինակի պաշտոնական կարգավիճակը, միջադեպի հանրային բնույթը, քաղաքացու նկատմամբ դրսևորված ագրեսիվ և ֆիզիկական ներգործության տարրեր պարունակող վարքագիծը, դրա լայն տարածումը տեղեկատվական հարթակներում, ինչպես նաև ընտրական գործընթացի ակտիվ փուլում տեղի ունենալու հանգամանքը՝ տվյալ գործողություններն ապացուցում են այն փաստը, որ վերջինս ազդում է ընտրողների ազատ կամարտահայտման վրա՝ նպաստելով վախի, սպառնալիքի և ատելության մթնոլորտի ձևավորմանը, ինչն անհամատեղելի է ազատ, արդար և ժողովրդավարական ընտրությունների հիմնարար սկզբունքների հետ:

2026 թվականի մայիսի 18-ին Ազգային ժողովի հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում Երևանի Արաբկիր վարչական շրջանում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից անցկացվող քարոզչական հանդիպման ժամանակ տեղի է ունեցել միջադեպ վարչապետ՝ նախընտրական քարոզչություն իրականացնող պատգամավորի թեկնածու Ն. Փաշինյանի և Արցախի հեղափոխական կուսակցության նախագահ Ա. Օսիպյանի միջև:

Միջադեպից անմիջապես հետո Ա. Օսիպյանը ձերբակալվել է: Նրա նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, այդ թվում՝ նախընտրական քարոզչությանը խոչընդոտելու, խուլիգանության և բռնություն գործադրելու հրապարակային կոչերի հատկանիշներով, իսկ դատարանի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը, որից հետո վերջինիս կալանք խափանման միջոցը փոխարինվել է:

Նկարագրված հանգամանքների համակցությունը վկայում է, որ նախընտրական քարոզչության ընթացքում պաշտոնատար անձի կողմից կիրառվել է ագրեսիվ և սպառնալիք պարունակող քաղաքական խոսույթ, որն էական ազդեցություն է ունեցել ընտրողների ազատ կամարտահայտման միջավայրի վրա, սահմանափակել քաղաքական բազմակարծության մթնոլորտը և որոշ ընտրողների մոտ առաջացնել իրենց քաղաքական դիրքորոշումն ազատորեն արտահայտելու կամ ընդդիմադիր քաղաքական ուժերին աջակցելու հետ կապված վախեր ու զսպվածություն:

է. Ընտրական գործընթացի օրինականության գնահատման տեսանկյունից առանձնակի նշանակություն ունի այն փաստը, որ ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, նախքան քվեարկության օրը պաշտոնապես իրազեկված է եղել ընտրական գործընթացի վրա էական ազդեցություն ունեցող բազմաթիվ

խախտումների մասին, սակայն չի ձեռնարկել այնպիսի արդյունավետ և համարժեք միջոցներ, որոնք կարող էին կանխել կամ վերացնել դրանց հետևանքները:

Նշվածն էական նշանակություն ունի ընտրությունների արդյունքների իրավաչափության գնահատման համար, քանի որ վերահսկող մարմնի իրազեկված լինելու, սակայն արդյունավետ արձագանք չցուցաբերելու պայմաններում արձանագրված խախտումները շարունակել են գործել մինչև քվեարկության ավարտը՝ թողնելով ազդեցություն ընտրողների ազատ կամարտահայտության և ընտրությունների վերջնական արդյունքների վրա:

ը. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել թիվ 10/51, 12/13 և 35/65 ընտրատեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչել: Նշվածի հետևանքով արձանագրված անճշտությունների ընդհանուր թիվը կազմել է 3395, ինչը կազմում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից վերջնական ամփոփմամբ արձանագրված 4331 անճշտությունների ճնշող մեծամասնությունը: Այսինքն՝ ընդհանուր անճշտությունների քանակը կազմում է 4331: Չնայած այն հանգամանքին, որ վերոնշյալ ընտրատեղամասերում արձանագրված խախտումներն ու անճշտություններն իրենց ծավալով էական ազդեցություն են ունեցել ընդհանուր արդյունքների հավաստիության և ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության վրա, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը չի ընդունել վերաքվեարկություն նշանակելու մասին որոշում:

Իրավունքի գերակայության, համաչափության և արդյունավետ իրավական պաշտպանության սկզբունքներից բխում է, որ ընտրական մարմինը պարտավոր էր ընտրել այն միջոցը, որը նվազագույն չափով կսահմանափակեր ընտրական իրավունքները և առավելագույն չափով կապահովեր ընտրողների իրական կամքի բացահայտումը: Տվյալ դեպքում մասնակի վերաքվեարկությունը հանդիսանում էր հենց այդպիսի միջոց՝ առավել համաչափ, նպատակային և արդյունավետ իրավական արձագանք:

Հետևաբար՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի այն պատճառաբանությունը, թե վերաքվեարկությունը կարող էր առաջացնել տակտիկական քվեարկության կամ ընտրողների անհավասարության ռիսկեր, չի համապատասխանում իրավական հիմնավորվածության, փաստական որոշակիության և համաչափության պահանջներին: Այն հիմնված է վերացական ենթադրությունների վրա և չի կարող արդարացնել այն իրավիճակը, երբ ընտրությունների վերջնական արդյունքները պահպանվել են՝ չնայած այն հանգամանքին, որ արձանագրված անճշտությունների ճնշող մեծամասնությունը կենտրոնացած է եղել հենց այն ընտրատեղամասերում, որոնց արդյունքներն անվավեր են ճանաչվել: Նման պայմաններում վերաքվեարկությունից հրաժարումը ոչ թե պաշտպանել է ընտրական գործընթացի ամբողջականությունը, այլ խորացրել է

կասկածները ընտրությունների արդյունքների իսկության, ընտրողների իրական կամքի արտացոլման և ընտրական վարչարարության արդյունավետության վերաբերյալ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից արտահայտված տվյալ մոտեցումը, ըստ էության, չի համադրվում և հակասում է հենց իր կողմից վկայակոչված՝ Վենետիկի հանձնաժողովի զեկույցում ամրագրված սկզբունքներին:

Նման պայմաններում հաշվի առնելով, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից փաստացի խեղաթյուրվել է Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումը, հարկ է փաստել, որ տվյալ ձայների հաշվարկման արդյունքում դրանք փաստացի էական ազդեցություն կարող էին ունենալ ընտրությունների իրական արդյունքների վրա, մասնավորապես, մի մասը կունենար երկու տոկոս, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը կունենար չորս տոկոս, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը կունենար սահմանադրական մեծամասնություն, այսինքն՝ 3 տեղամասերի անվավերությունը և դրանց վերաքվեարկությունը չապահովելը հանգեցրել են այնպիսի անճշտությունների քանակի, որի արդյունքում առկա չէ ընտրությունների իրական պատկերը հասկանալու հնարավորություն:

Մյուս կողմից՝ հաշվի առնելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մտավախությունները տակտիկական քվեարկության մասով՝ վերջինս պարտավոր էր զսպել այդ ռիսկերը և անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները: Նման պայմաններում հատկանշական է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը խախտել է ընտրողների մի զանգվածի իրավունքները՝ ապահովելով այլ ընտրազանգվածի իրավունքի պաշտպանությունը, սակայն այստեղ անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցադրմանը՝ արդյո՞ք առկա չէ այլ մեխանիզմ՝ երաշխավորելու բոլոր անձանց իրավունքների ապահովումը: Նշված իրավիճակում այդ մեխանիզմը նոր ընտրությունների նշանակումն է, որով չի լինի տակտիկական քվեարկության ռիսկ, որը բարձրաձայնվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից և կապահովվի յուրաքանչյուր ընտրողի ընտրական իրավունքի իրացումը:

Նշվածի արդյունքում առկա չէ ընտրությունների իրական պատկերը, խախտվել են ընտրողների իրավունքները, ինչպես նաև կուսակցությունների՝ իրենց հավանական ընտրողների ձայների ստացումը, որն էական ազդեցություն է թողել ընտրության արդյունքների վրա և հանգեցրել է Սահմանադրության 7-րդ հոդվածի խախտմանը:

Այս առումով առկա է այնպիսի իրավիճակ, երբ Հայաստանի Հանրապետության 3395 ընտրող-քաղաքացի զրկված է իր պասիվ ընտրական իրավունքն իրացնելու հնարավորությունից, իսկ այդ իրավունքի վերականգնման համար չի տրվել վերաքվեարկությանը մասնակցելու հնարավորություն՝ խախտելով Ընտրական օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասը:

թ. 2026 թվականի փետրվարի 7-ից՝ Ազգային ժողովի ընտրություններ նշանակելու մասին հրամանագրի ուժի մեջ մտնելու պահից, ՀՀ ողջ տարածքում առերևույթ ընտրական իրավախախտումների վերաբերյալ ստացված հաղորդումների և ձեռք բերված տվյալների հիման վրա նախաձեռնվել է ընդհանուր առմամբ 115 քրեական վարույթ: Նշված վարույթների քանակական ցուցանիշները, տարածքային ընդգրկվածությունը և դրանցում ներգրավված քաղաքական սուբյեկտների շրջանակը վկայում են, որ արձանագրված խախտումները չեն կրել մեկուսացված կամ պատահական բնույթ, այլ ունեցել են կազմակերպված, համակարգված և համապետական դրսևորումներ: Այդ հանգամանքը, իր հերթին, հիմնավոր կասկածի տակ է դնում ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահությունը, ինչպես նաև ընտրողների ազատ կամարտահայտման պայմանների ապահովվածությունը:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի, ՀՀ ներքին գործերի նախարարության քրեական ոստիկանության և ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացված լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվել են «Ուժեղ Հայաստան» կուսակցության (և «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի) անունից հանդես եկող թեկնածուների, տարածքային պատասխանատուների, համակիրների ու նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից ընտրողներին նյութապես շահագրգռելու, ընտրակաշառք տրամադրելու, ինչպես նաև նրանց ազատ կամարտահայտման վրա ապօրինի ազդեցություն գործադրելու կազմակերպված, բազմաշերտ, համակարգված և քողարկված մեխանիզմներ: Այս համակարգային իրավախախտումները կրել են փոխլրացնող բնույթ և արձանագրվել են Հայաստանի Հանրապետության մի շարք մարզերում (օրինակ՝ Լոռու, Շիրակի, Կոտայքի, Արմավիրի մարզերում) և Երևան քաղաքում:

Իրավապահ մարմինները փաստական տվյալներ են ձեռք բերել նաև այն մասին, որ կուսակցության ներկայացուցիչն այլ անձանց հետ կազմակերպել է արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիներին ընտրություններին մասնակցելու և իրենց կուսակցության օգտին քվեարկելու պայմանով ընտրակաշառք տալու և Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու (այդ թվում՝ ճանապարհածախսի (տոմսերի) փոխհատուցման) գործընթաց: Այս վարույթով դատարան են ներկայացվել կալանքի միջնորդություններ, 1 անձ գտնվում է կալանքի տակ:

Համակարգային խախտումների շարքում առանձնանում է ընտրական վարչարարության գործիքների առերևույթ չարաշահումը: «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի կողմից նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, օգտվելով հանձնաժողովի անդամներ առաջադրելու իր իրավասությունից, նախապատվությունը տվել է այն անձանց, որոնք պաշտոնական վարձատրությունից բացի, պարտավորվել են ապահովել ինչպես իրենց անձնական

քվեն, այնպես էլ իրենց կողմից ներգրավված կոնկրետ թվով այլ ընտրողների քվեարկությունը տվյալ դաշինքի օգտին: Այդպիսով, հանձնաժողովի անդամի կարգավիճակը և դրա դիմաց նախատեսված վարձատրությունը փաստացի օգտագործվել են որպես քվեներ ձեռք բերելու, ընտրողների կամքի վրա ազդելու և ընտրական գործընթացի ներսում քաղաքական աջակցություն ապահովելու գործիք:

ՀՀ իրավապահ մարմինների կողմից իրականացված ընդգրկուն օպերատիվ-հետախուզական և քննչական միջոցառումների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները վկայում են, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչների, պատգամավորի թեկնածուների, ակտիվ համակիրների, ինչպես նաև նրանց հետ ուղղակի կամ անուղղակի փոխկապակցված անձանց գործունեության մեջ առկա են տարածքային մեծ ընդգրկվածություն ունեցող, բազմաձև և համակարգված բնույթ կրող առերևույթ ընտրական իրավախախտումներ (օրինակ՝ Կոտայքի, Արարատի, Վայոց ձորի Լոռու, Տավուշի մարզերում): Համաձայն քրեական վարույթների նյութերի՝ ընտրողների կամարտահայտման վրա ազդելու նպատակով կիրառվել են տարաբնույթ ապօրինի մեխանիզմներ, որոնց թվում են ընտրողների ուղղակի նյութական շահագրգռումը, ձայների կազմակերպված գնումը, կուսակցական զանգվածային հավաքներին քաղաքացիների մասնակցության ուղղակի ֆինանսավորումը, ինչպես նաև նախընտրական գրասենյակներում ձևական զբաղվածության հաստիքների ստեղծման միջոցով ընտրակաշառքի քողարկումը:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և ՀՀ ազգային անվտանգության ծառայության իրականացրած միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Հայաստան» կուսակցությունների դաշինքի գործունեության շրջանակներում տեղի է ունեցել ֆինանսական միջոցների ուղղակի բաշխում ընտրողներին: Դրանից բացի, արձանագրվել են ընտրական իրավունքի տրամաբանությունից դուրս գտնվող ակնհայտ ապօրինի խոստումներ և հատուկ հավաքների կազմակերպում, որոնցում նպատակային կերպով ներգրավվել է զինվորականությունը:

«Հայաստան» կուսակցությունների դաշինքի կողմից հատուկ թիրախավորման է ենթարկվել ընտրական հանձնաժողովների անդամների ինստիտուտը: Հանձնաժողովի անդամությունը և դրա դիմաց նախատեսված վարձատրությունն օգտագործվել են որպես քվեներ ձեռք բերելու ուղղակի միջոց: Հարուցված քրեական վարույթների շրջանակներում դատարանի որոշումներով իրականացված խուզարկությունների արդյունքում հայտնաբերվել և առգրավվել են էլեկտրոնային կրիչներ, համակարգիչներ, գաղտնալսող միջոցներ հայտնաբերող սարքավորում, ինչպես նաև վարույթի համար ապացուցողական նշանակություն ունեցող անհերքելի փաստաթղթեր ու սևագրություններ ապօրինի գումարային շարժերի, ընտրողների

ցուցակների և քաղաքացիներին տարբեր տեսակի օգնություններ տրամադրելու վերաբերյալ:

Նշված հանգամանքները, թեև յուրաքանչյուրն առանձին վերցված ենթակա են ինքնուրույն իրավական գնահատման, իրենց ամբողջության մեջ ձևավորում են փոխկապակցված փաստական պատկերի տարրեր: Դրանք միավորվում են ընդհանուր ժամանակային շրջանակով, վերաբերում են նույն ընտրական գործընթացին, առնչվում են նույն քաղաքական մրցակցային միջավայրին և, ըստ էության, ուղղված են եղել ընտրողների քաղաքական կամքի ձևավորման, արտահայտման կամ դրա վրա ազդեցություն գործադրելու գործընթացներին:

ժ. Ընտրական գործընթացի ընթացքում առերևույթ խախտվել են Սահմանադրության 7 և 8-րդ հոդվածներով ամրագրված՝ ազատ ընտրությունների, քաղաքական բազմակարծության, գաղափարախոսական բազմազանության և բազմակուսակցական համակարգի հիմնարար սկզբունքները:

Նախընտրական քարոզչության ընթացքում լայնորեն օգտագործվել են պետական և համայնքային կառավարման համակարգի հետ առնչվող ազդեցության լծակները, այդ թվում՝ համայնքների ղեկավարների հեղինակությունն ու ազդեցությունը համայնքների բնակչության նկատմամբ, ինչպես նաև կրթական և սոցիալական նշանակության հաստատությունների՝ մանկապարտեզների, դպրոցների, քոլեջների և բուժհաստատությունների աշխատակիցների ներգրավումը քաղաքական միջոցառումներին: Գործով առկա ապացույցներով հաստատվում է, որ նախընտրական քարոզչության ընթացքում կիրառվել է վարչական ռեսուրս, որի շրջանակներում պետական և համայնքային համակարգերի աշխատակիցները ներգրավվել են քաղաքական միջոցառումներում: Այս հանգամանքը խախտել է ընտրական գործընթացի հավասարության, ազատության և արդարության սկզբունքները, ընտրողների կամքի ձևավորման վրա գործադրել է անթույլատրելի ազդեցություն և իր ծավալներով ու բնույթով էական ազդեցություն է ունեցել ընտրությունների վերջնական արդյունքների վրա:

Ընտրական գործընթացին նախորդող ժամանակահատվածում իրականացվել են այնպիսի գործողություններ, որոնք իրենց բովանդակությամբ և նպատակով ունեցել են քաղաքական և քարոզչական բնույթ, սակայն իրականացվել են նախընտրական քարոզչության պաշտոնական ժամանակահատվածից դուրս:

Համայնքների ղեկավարների և նրանց ազդեցության շրջանակում գտնվող անձանց կողմից ընտրողների նկատմամբ ուղղորդման կամ ճնշման գործադրումը հատկապես խնդրահարույց է այն պատճառով, որ այդ անձինք համայնքներում օժտված են հանրային իշխանության որոշակի լծակներով և հասարակական ազդեցությամբ: Հետևաբար՝ նրանց արտահայտած քաղաքական պահանջները կամ ակնկալիքները քաղաքացիների կողմից կարող են ընկալվել ոչ թե որպես սովորական

քաղաքական կոչ, այլ որպես իշխանության ներկայացուցչի կողմից հնչեցված պարտադրանք կամ ակնարկ, որը չկատարելը կարող է առաջացնել քաղաքացիների անհանգստություն, կախվածության կամ հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ մտավախություններ:

ժա. Առաջնային իրավական և փաստական նշանակություն ունի նաև գործադիր իշխանության ղեկավարի՝ ՀՀ վարչապետի հրապարակային հայտարարությունն այն մասին, որ արձանագրված խախտումները «ազդել են ընտրությունների արդյունքների վրա», և որ առանձին քաղաքական ուժեր քվեարկության շեմը չպետք է հաղթահարեին: Սահմանադրական իրավունքի տեսանկյունից, երբ պետության բարձրագույն քաղաքական պաշտոնյան հրապարակայնորեն ընդունում է, որ իրավախախտումներն ունեցել են որոշիչ և արդյունք ձևավորող ազդեցություն, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների արդյունքների սովորական ամփոփումը վերածվում է իրավական ձևականության: Այս պարագայում արձանագրվում է արդյունքների և ժողովրդի իրական կամքի միջև առկա ակնհայտ խզումը:

ժբ. Առավել վտանգավոր և սահմանադրական կարգի հիմքերը խարխլող դրսևորում է քվեարկության գաղտնիության բացարձակ սկզբունքի դեմ ոտնձգությունը: Ալավերդի քաղաքում և Սյունիքի մարզի Գորիս համայնքում արձանագրված դեպքերը, երբ ընտրողներից պահանջվել է քվեախցիկում լուսանկարել քվեարկած քվեաթերթիկը և ներկայացնել որպես կատարված նյութական կամ այլ պարտավորության ապացույց, հանդիսանում են կամքի ազատ արտահայտման նկատմամբ ապօրինի վերահսկողության և հոգեբանական հարկադրանքի դասական օրինակ:

Քվեարկության գաղտնիությունն ընտրողի պաշտպանության հիմնական իրավական երաշխիքն է արտաքին ճնշումներից և հետապնդումներից: Այս սկզբունքի վերացումը կամ դրա նկատմամբ վերահսկողության սահմանումը ոչ միայն խախտում է Ընտրական օրենսգրքի 6-րդ հոդվածի պահանջները, այլև հարկադրանքի միջոցով ամբողջությամբ կաթվածահար է անում ընտրության «ազատ» լինելու հայեցակարգային էությունը, քանի որ վախի կամ պարտավորվածության տակ գտնվող ընտրողն ի վիճակի չէ իրացնելու իր սահմանադրական ազատությունը:

Լուսանկարումը վերահսկվող քվեարկության (controlled voting) ապացույց է: Եթե ընտրողը պարտավոր է ապահովել իր քվեարկության տեսանելիությունը երրորդ անձանց համար, ապա քվեարկության գաղտնիության սահմանադրական երաշխիքը (Սահմանադրության 48-րդ հոդված) ամբողջությամբ ոչնչանում է: Գաղտնիության սկզբունքի խախտումն ավտոմատ կերպով հանգեցնում է ընտրության ազատության կորստին, քանի որ ընտրողը գիտակցում է, որ իր քվեն այլևս անոնիմ չէ, և դրան կարող են հետևել անձնական, տնտեսական կամ այլ բացասական հետևանքներ:

ժգ. Առանձնահատուկ և մանրամասն ուշադրության է արժանի ընտրողներին հավաքագրելու նպատակով տրված ոչ իրավաչափ և ապօրինի խոստումների փաստը: «Հայաստան» կուսակցությունների դաշինքի ակտիվ համակիրները, ընտրություններում կոնկրետ ձայներ ապահովելու հստակ պայմանով, Ռուսաստանի Դաշնությունում բնակվող, սակայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երկու ամուսինների տվել են ակնհայտ ապօրինի խոստում: Տրված խոստման բովանդակության համաձայն՝ ընտրությունների ավարտից անմիջապես հետո՝ սկսած 2026 թվականի հունիսի 8-ից, «Հայաստան» կուսակցությունների դաշինքի ղեկավարությունը պարտավորվել է օգտագործել իր ունեցած քաղաքական կապերը և ամբողջությամբ լուծել թմրամիջոց պահելու ծանր հանցագործության համար Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմինների կողմից դատապարտվող նրանց որդիներին պատժից ազատ արձակելու և Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու հարցը: Այս հանգամանքն ընտրողների կամքի վրա ազդելու նպատակով արդարադատության ոլորտում ապօրինի միջամտության խոստումների կիրառման ուղղակի ապացույց է:

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի կողմից կիրառված քաղաքական տեխնոլոգիաները և նախընտրական մանիպուլյացիաները դուրս են եկել իրավական բոլոր սահմաններից՝ հարվածելով պետականության հիմքերին: Ռուսաստանի Դաշնությունում թմրամիջոցների պահման համար դատապարտված անձանց պատժից ազատ արձակելու և Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու վերաբերյալ վերջիններիս ծնողներին տրված պաշտոնական, գրավոր խոստումները, որոնք ձևակերպվել են կոնկրետ ստորագրված հուշագրերի տեսքով, արդարադատության իրականացման և պետության ինքնիշխան գործառույթների ոլորտում ապօրինի միջամտության խոստման միջոցով ընտրակաշառքի տրամադրման աննախադեպ դրսևորում են:

Քաղաքական ուժը չի կարող իրեն վերապահել արդարադատության իրականացման, քրեական պատժի կրման կամ միջազգային իրավական օգնության ոլորտում որոշումներ կայացնելու իրավասություն: Նման խոստումները հանրության գիտակցության մեջ խարխլում են պետության՝ որպես իրավական ինստիտուտի հանդեպ վստահությունը և ընտրությունները վերածում են ապօրինի արտոնությունների սակարկության հարթակի:

ժդ. Սույն գործի առանցքային իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք արձանագրված խախտումները կարող էին էական ազդեցություն ունենալ ընտրությունների վերջնական արդյունքների վրա:

Այս առումով միջազգային ընտրական իրավունքը ձևավորել է «էական ազդեցության» չափանիշը, որի էությունն այն է, որ եթե խախտումների ծավալը, բնույթը, տարածվածությունը և ինտենսիվությունն այնպիսին են, որ օբյեկտիվ և

անաչառ դիտորդի մոտ ողջամիտ կասկած են առաջացնում ընտրությունների արդյունքների արժանահավատության նկատմամբ, ապա այդ ընտրությունների արդյունքները չեն կարող համարվել ժողովրդի ազատ կամարտահայտության արտացոլում:

Եթե ընտրական գործընթացի ընթացքում միաժամանակ առկա են եղել վարչական ռեսուրսի համակարգային կիրառման բազմաթիվ փաստեր, ընտրակաշառքի վերաբերյալ հարյուրավոր քրեական վարույթներ, բազմաթիվ մեղադրյալներ, ընտրողների նկատմամբ ճնշումների և ազդեցությունների մասին հաղորդումներ, ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության էական անկում, ապա անհնար է վստահությամբ պնդել, որ ընտրությունների արդյունքները ձևավորվել են բացառապես ժողովրդի ազատ կամարտահայտության արդյունքում:

Ավելին, ընտրական գործընթացի նկատմամբ վստահության կորուստն ինքնին սահմանադրական խնդիր է: Սահմանադրությունը պաշտպանում է ոչ միայն ընտրությունների տեխնիկական արդյունքը, այլև այդ արդյունքի նկատմամբ հանրային վստահությունը:

Անդրադառնալով թվաբանական հաշվարկին՝ հարկ է նկատել, որ փաստացի անճշտությունների քանակն ընտրությունների արդյունքների վրա էական ազդեցություն ունեցող հանգամանք է, քանի որ հենց դրա արդյունքում կարող էր տեղի ունենալ մանդատների քանակի փոփոխություն, որը կարող էր ազդել խորհրդարանում քվեարկության արդյունքների վրա կամ կարող էր հնարավորություն տալ այլ քաղաքական ուժերի՝ ստանալու ավելի մեծ քանակի քվե՝ ապահովելով կոնկրետ տոկոսային հարաբերակցություն:

Դիմողը գտնում է, որ առկա են բավարար հիմքեր, թե՛ արձանագրված խախտումների, որոնք էական ազդեցություն են ունեցել ընտրության արդյունքների վրա, թե՛ թվաբանական հաշվարկի մասով, ընտրության արդյունքներն ամբողջությամբ անվավեր ճանաչելու համար:

11.4. «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը (այսուհետ սույն կետում նաև՝ Դիմող կամ ԲՀԿ) իր դիմումով խնդրել է.

««Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 13-րդ մասով սահմանված լիազորությամբ **անվավեր ճանաչել Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշում(ներ)ը և**

1) անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները, կամ

2) որպես այլընտրանք անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները և սահմանել մանդատների բաշխման կարգը՝ ապահովելով Դիմողի կողմից մանդատների ստացումը»:

ա. Դիմողը, մասնավորապես, նշում է, որ Ընտրական օրենսգրքի 48.1-ին հոդվածը, որը ԿԸՀ-ն կիրառել է իր կողմից սեփական նախաձեռնությամբ թիվ 35 և թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 11-ի N 10-Ա և N 8-Ա որոշումները վերանայելու մասին թիվ 254-Ա և թիվ 255-Ա որոշումներով (այսուհետ՝ թիվ 254-Ա և թիվ 255-Ա որոշումներ)՝ անվավեր ճանաչելով թիվ 35/65 և 10/51 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ոչ միայն չի տալիս նման որոշում կայացնելու հնարավորություն, այլև սահմանափակում է վերջինիս լիազորությունները բացառապես տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումների վերանայմամբ, ինչը, մասնավորապես, պետք է դրսևորվեր բացառապես վերաբերելի տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից քվեարկության արդյունքների վրա ազդեցություն չունենալու վերաբերյալ որոշումների վերացմամբ՝ առանց ընտրական տեղամասի արդյունքներին անդրադառնալու, ինչի հիման վրա արդեն իսկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները կարող էին ինքնուրույն անվավեր ճանաչել (կամ չճանաչել) քվեարկության արդյունքները, իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարող էր այդ հարցին անդրադառնալ արդեն իսկ նշված որոշումների (եթե կկայացվեր որոշում) վերանայման շրջանակներում կամ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին որոշումներով՝ կայացնելով Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը: Նշված մեկնաբանությունը, ըստ Դիմողի, համահունչ է Սահմանադրության 194-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումներին: Այնինչ, Դիմողի պնդմամբ, ԿԸՀ-ն համապատասխան դրույթը կիրառել է այն մեկնաբանությամբ, որ ինքն իրավունք ունի ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի փոխարեն անվավեր ճանաչելու (այն էլ առանց բողոքի՝ ինքնուրույն, իր հայեցողությամբ) քվեարկության արդյունքները, որն ակնհայտորեն դուրս է սահմանադրական կարգավորումների շրջանակից: Այս կապակցությամբ Դիմողը նաև նշում է, որ ՀՀ դատարանները, մերժելով համապատասխան հայցերը Ընտրական օրենսգրքի 48.1-ին հոդվածին նույնպես տվել են նման լայն մեկնաբանություն, որը հակասում է նույն սահմանադրական օրենքի 194-րդ հոդվածին և Սահմանադրության 6-րդ հոդվածով սահմանված՝ օրինականության սկզբունքին:

բ. Դիմողը պնդում է, որ Ընտրական օրենսգրքի 48.1-ին հոդվածի՝ Սահմանադրությանը համահունչ մեկնաբանությունը պետք է նախատեսի (ենթադրի), որ ԿԸՀ-ն չունի քվեարկության արդյունքները վերանայելու լիազորություն:

Մասնավորապես՝ ըստ Դիմողի՝ ԿԸՀ-ն ընտրական տեղամասի՝ ընտրությունների արդյունքների անվավեր ճանաչման՝ խմբագրման լիազորություն չունի, քանի որ, նախ՝ բացակայում է համապատասխան իրավադրույթը, և, երկրորդ՝ նման պարագայում Ընտրական օրենսգրքի 48.1-ին հոդվածով սահմանված լիազորության իրականացման ժամկետով պայմանավորված՝ կարող է ստեղծվել իրավիճակ, երբ ԿԸՀ-ն անգամ Սահմանադրական դատարանի՝ ընտրությունների արդյունքներով վեճերի վերաբերյալ որոշման հրապարակումից հետո (որը տեղի է ունենում ընտրությունների արդյունքներն ամփոփելուց հետո գրեթե 20 օր անց) 3-4 ամիս անց անվավեր ճանաչի բազմահազար բնակիչներ ունեցող ընտրական տեղամասի արդյունքները, որի արդյունքում ստեղծվի ոչ լեգիտիմ և ոչ լեգալ, Սահմանադրությամբ հռչակված սկզբունքներին հակասող պետական կառավարման համակարգ:

Դիմողը գտնում է, որ ԿԸՀ-ի կողմից կիրառված և ընտրությունների արդյունքների վրա ուղղակիորեն ազդած լիազորությունը և Ընտրական օրենսգրքի 48.1-ին հոդվածին ՀՀ դատարանների կողմից տրված մեկնաբանությունը հակասում են Սահմանադրության 6-րդ հոդվածով սահմանված՝ օրինականության սկզբունքին և 194-րդ հոդվածի 4-րդ մասին, քանի որ օրենքի չափազանց ընդարձակ մեկնաբանության արդյունքում ԿԸՀ-ին տրվում է այնպիսի լիազորություն, որն Ընտրական օրենսգրքով իրեն տրված չէ:

գ. Դիմողը նշում է, որ քվեարկության արդյունքներն անվավեր են ճանաչվել ոչ իր և ոչ էլ իր օգտին քվեարկած անձանց մեղքով, այլ ԿԸՀ, տեղամասային ընտրական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ ՏԸՀ) և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ ԸԸՀ) կողմից իրենց պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով: Մինչդեռ, Դիմողը պնդում է, որ մի կողմից ընտրական հանձնաժողովի կողմից իր պարտականությունների ոչ պատշաճ կատարման (որը դրսևորվել է 20:00-ից հետո ընտրական տեղամաս մուտք գործել և քվեարկել թույլատրելու ձևով), ապա ՏԸՀ-ի կողմից դրան տրված և արդյունքում անվավեր ճանաչված գնահատականի և նման գործիքակազմի կիրառումից հետո ԿԸՀ-ի կողմից վերաքվեարկություն անցկացնելու որոշում չընդունելու պատճառով բացասական հետևանքները կրում է բացառապես Դիմող քաղաքական ուժը և նրա օգտին քվեարկած բոլոր անձինք, քանի որ հենց այդ ընտրական տեղամասերի արդյունքների անվավեր ճանաչվելու արդյունքում է, որ, պայմանավորված անճշտությունների քանակի ավելացմամբ և Դիմողի օգտին քվեարկությունների թվի նվազմամբ, ինքը զրկվում է Ազգային ժողովի մանդատների բաշխմանը մասնակցելու երաշխիքից, քանի որ, նախքան ԿԸՀ-ի կողմից թիվ 254-Ա և թիվ 255-Ա որոշումների ընդունումը, երաշխավորված էր իր՝ մանդատների բաշխմանը մասնակցելը, իսկ այդ որոշումների ընդունումից հետո երաշխավորված էր մանդատների բաշխմանը մասնակցելու հնարավորությունը՝ պայմանավորված օրենսդրական

կարգավորումների ուժով վերաքվեարկություն անցկացնելու իմպերատիվ պահանջով պայմանավորված, քանի որ ակնհայտ է, որ վկայակոչված երկու ընտրական տեղամասերում ընտրությունների արդյունքների անվավեր ճանաչումը և դրա հիմքն էական ազդեցություն են ունեցել ընտրությունների արդյունքների վրա՝ ուղղակիորեն պայմանավորելով իր՝ Ազգային ժողովում ներկայացվածությունը կամ դրա բացառումը՝ հանգեցնելով ընտրողների՝ իշխանության իրացման ձևավորման սահմանադրական երաշխիքի, Ազգային ժողովի ձևավորման սկզբունքների, 58500 ընտրողի ակտիվ ընտրական իրավունքի և իր՝ պասիվ ընտրական իրավունքի խախտման՝ պետական մարմինների կողմից իրենց լիազորությունների ոչ պատշաճ իրականացման արդյունքում:

դ. Դիմողը գտնում է, որ ԿԸՀ-ն սխալ է հաշվել և, ըստ այդմ, սխալ է գնահատել իր իսկ կողմից կայացված թիվ 254-Ա[2] և թիվ 255-Ա որոշումների հետևանքները: Մասնավորապես՝ ըստ Դիմողի՝ խնդրո առարկա որոշումների կիրառման և դրա արդյունքում վերաքվեարկություն անցկացնելու որոշում չընդունելու հետևանքով ակնհայտորեն խախտվել են Սահմանադրության 2-րդ հոդվածով նախատեսված իշխանության ձևավորման, ընտրությունների՝ ազատ (արդար) և ուղղակի անցկացման սկզբունքները, Ազգային ժողովում բազմակարծության, ավելի մեծ թվով ներկայացվածության հնարավորությունը, իր և իր օգտին քվեարկած անձանց իրավունակության դրսևորման բարձրագույն միջոցը՝ քվեն, որոնցով պայմանավորված՝ հիմնավոր, օբյեկտիվ և փաստարկված կերպով կասկածի տակ է դրվել ընտրությունների արդյունքների ամփոփման օրինականությունը: Նշված որոշումը, Դիմողի պնդմամբ, հակասում է նաև Ընտրական օրենսգրքի 95 և 101-րդ հոդվածներով սահմանված կարգավորումներին:

Դիմողը նաև նշում է, որ ԿԸՀ-ն Ընտրական օրենսգրքի 48.1-ին հոդվածի լայն և հակասահմանադրական մեկնաբանության արդյունքում իրեն վերապահել է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի փոխարեն ընտրության քվեարկության արդյունքները (ընդ որում՝ որևէ բողոքի բացակայության պայմաններում) անվավեր ճանաչելու իրավասություն և դրանից հետո էլ, երբ ակնհայտ է եղել որ այդ որոշումներն ազդում են ընտրության արդյունքների վրա (մինչև համապատասխան որոշումների կայացումը ԲՀԿ-ն ստանում էր 4 տոկոս ձայն, իսկ դրանցից հետո՝ չի ստանում) վերաքվեարկություն նշանակելու կամ ընտրություններն ամբողջությամբ անվավեր ճանաչելու փոխարեն որոշում է ընդունել մանդատներ բաշխելու մասին՝ գործընթացից բացառելով ԲՀԿ-ին:

ե. Դիմողը նշում է, որ նախընտրական քարոզարշավի ընթացքում ՀՀ վարչապետ և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորի

[2] Դիմումում Դիմողը վկայակոչել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 256-Ա որոշումը, սակայն, ըստ էության, նկատի է ունեցել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 254-Ա որոշումը:

թեկնածու Ն. Փաշինյանի կողմից բռնության կոչեր պարունակող, վիրավորական, անձանց պատիվն ու արժանապատվությունը վիրավորող, իրական սպառնալիքներ, ատելության և բռնության կոչեր պարունակող արտահայտությունների հնչեցումը հանգեցնում է «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» կոնվենցիայի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պահանջի խախտման, այն է՝ վերջինիս կողմից օգտագործվում են հոգեբանական, ֆիզիկական, կրոնական հարկադրանքի մեթոդներ, բռնության կոչեր, բռնության կիրառման սպառնալիքներ, ինչն էլ աներկբայորեն համարվում է նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտում:

զ. Անդրադառնալով ԲՀԿ ընտրական ցուցակի պատգամավորի թեկնածու Ա. Թևանյանին առաջադրված մեղադրանքին և նրա՝ կալանքի տակ գտնվելու հանգամանքներին՝ Դիմողը նշում է, որ եթե նշված անձի վերաբերյալ չլիներին իրականությանը չհամապատասխանող և որպես վարչապետ հանդես եկող Ն. Փաշինյանի հայտարարությունները, ապա առնվազն ակնհայտ է, որ 2026 թվականի մայիսի 21-ից քրեադատավարական հարկադրանքի ենթարկված անձի կողմից քարոզարշավին ամբողջությամբ մասնակցելու դեպքում առավել քան հավանական է և փաստացի երաշխավորված է, որ Դիմողը կստանար ավելի քան 153 ձայնով ավելի, քան արձանագրված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ 2026 թվականի հունիսի 14-ի թիվ 258-Ա որոշմամբ:

Դիմողի պնդմամբ՝ տվյալ գործընթացն ուներ մեկ նպատակ՝ խաթարել իր արդյունավետ մասնակցությունն ընտրություններին, իսկ ԿԸՀ-ն, ունենալով նման խախտումը կասեցնելու գործիք, կրավորական տարբերակով տվել է իր համաձայնությունը (նման ոճով բոլոր դիմումներն առանց բացառության հաստատվել են ԿԸՀ-ի կողմից): Ընդ որում՝ Դիմողը նշում է, որ այդ որոշումներից որևէ մեկը չի պարունակում հիմնավորում, որը հնարավորություն կտար արդյունավետ պաշտպանվելու:

է. Անդրադառնալով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ նաև՝ ՀՌՀ) կողմից Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա տրված եզրակացությանը՝ Դիմողը պնդում է, որ ԿԸՀ-ն ընդամենը վերարտադրել է ՀՌՀ եզրակացությունը՝ չանդրադառնալով դրանում արձանագրված ակնհայտ խախտման փաստին և գնահատականին: Մասնավորապես՝ ըստ Դիմողի՝ ԿԸՀ-ն չի կատարել ընտրությունների արդյունքների վրա ՀՌՀ-ի կողմից արձանագրված խախտումների ազդեցությունը գնահատելու իր լիազորությունը, հիմք է ընդունել ՀՌՀ-ի կողմից իր լիազորություններից չբխող եզրակացությունը, որով, ըստ էության, հերքվել է հենց ՀՌՀ-ի կողմից ազատության ու հավասար մրցակցության

խախտման պայմաններում դրանց ազդեցությունն ընտրությունների արդյունքների վրա:

Այս կապակցությամբ Դիմողը նաև նշում է, որ ԿԸՀ-ն ՀՌՀ-ի կողմից արձանագրված համապատասխան խախտմանը որևէ գնահատական չի տվել, չի պատճառաբանել, այնինչ ակնհայտ է, որ նշված խախտումներն այլ խախտումների հետ համատեղ ակնհայտ ազդել են ընտրության արդյունքների վրա:

ը. Դիմողը, վկայակոչելով 2025 թվականի դեկտեմբերի 3-ին Ազգային ժողովում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից գրանցված պատգամավորի թեկնածու, վարչապետի կողմից թոշակները չբարձրացնելու վերաբերյալ ընդդիմության հարցերի կապակցությամբ ներկայացված դիրքորոշմանը և, դրան հակառակ՝ 2026 թվականի փետրվարի 25-ին թոշակների բարձրացման մասին հայտարարությանը, որը հաջորդել է Ազգային ժողովի հերթական ընտրությունը 2026 թվականի հունիսի 7-ին նշանակելու մասին ՀՀ նախագահի հրամանագրին (նույն թվականի փետրվարի 6), նշում է, որ որևէ հիմնավորում և պատճառաբանություն, քան նախընտրական շրջանում ընտրական գործընթացների վրա ազդելը, այլ իրողություն չի կարող ունենալ, քանի որ երեք ամսվա տարբերությամբ որևէ պետություն չի կարող արձանագրել այնպիսի տնտեսական աճ, որը թույլ կտա կայացնել իրար տրամագծորեն հակառակ որոշումներ, ինչով իսկ ակնհայտ է դառնում, որ կենսաթոշակների բարձրացումը միտված է եղել բացառապես կենսաթոշակառու հանդիսացող և նրանց հետ փոխկապակցված անձանց՝ իշխող քաղաքական ուժի օգտին քվեարկել շահագրգռելուն: Ընդ որում՝ Դիմողը պնդում է, որ թոշակների աճը նախատեսվել է ոչ թե պետական բյուջեի (որտեղ ավելացումը նախատեսված չի եղել), այլ Կառավարության լիազորությունների շրջանակներում:

Վարչական ռեսուրսի կիրառման և այլ խախտումների համատեքստում Դիմողը նաև անդրադարձել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորի թեկնածու, Թալինի համայնքապետի կողմից 11.5 միլիոն դրամի օգնություն տրամադրելու, նույն կուսակցության քարոզչական բովանդակությամբ պատկերներ պարունակող ավտոբուսի՝ Կառավարական տուն 1 հասցեի կայանատեղիում մեծ հաճախականությամբ կայանված լինելու, Կապան քաղաքում (մայիսի 9-ին), Վանաձոր քաղաքում (մայիսի 20-ին) և Երևան քաղաքում (հունիսի 5-ին) կազմակերպված նախընտրական հանրահավաքների՝ «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից կատարված դրոնների շոուով ուղեկցվելու և հենց նույն ժամանակահատվածում՝ մայիսի 16-ին, Ուսանողների և երիտասարդների օրվա կապակցությամբ նույն կազմակերպության կողմից Հանրապետության հրապարակում կազմակերպված համերգային միջոցառումը ևս դրոնների շոու-միջոցառմամբ ուղեկցվելու (նշված միջոցառման ժամանակ տեսանելի են եղել ՔՊ-ի

նախընտրական նշանները), իշխող քաղաքական ուժի ղեկավարման ներքո գտնվող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների՝ անգամ աշխատանքային ժամերին նախընտրական քարոզարշավով և իշխող քաղաքական ուժի պաստառներն Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 2.1-ին մասով արգելված վայրերում՝ առևտրի կետերում փակցնելով զբաղված լինելու, ինչպես նաև 2026 թվականի մայիսի 28-ին (նախընտրական քարոզարշավի ընթացքում) «Խաղաղություն», «Տեր եմ խաղաղությանը» կարգախոսներով հանդես եկող կուսակցության ղեկավարի կողմից ռազմական շքերթ անցկացնելու հանգամանքներին:

թ. Դիմողը նշում է, որ վարչապետ և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորի թեկնածու Ն. Փաշինյանի հայտարարությունների, շարունակական, վերջինիս կողմից չդադարող վիրավորանքի և ատելության խոսքի, զրպարտությունների և իրականությանը չհամապատասխանող հանրային զգայուն թեմաների վերաբերյալ հայտարարությունները բացառել են հավասար ու ազատ պայմաններում նախընտրական քարոզչությունը, որից զատ ազատությունից զրկված Ա. Թևանյանը և իր գլխավորած քաղաքական ուժը, որը ներկայացված է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախընտրական ցուցակում, ի զորու չեն եղել ամբողջությամբ ներգրավված լինել նախընտրական քարոզչությանը, մինչդեռ առնվազն ողջամիտ կասկածի շեմից վեր է, որ եթե վարչական ու վերահսկողական լծակներով օժտված իշխող քաղաքական ուժի կողմից կատարված խախտումները շարունակական և այս ծավալների ու բնույթի չլինեին, ապա ԲՀԿ-ն միանշանակ կունենար շատ ավելի մեծ թվով կողմ քվեարկության արդյունքներ, քան արձանագրված է ԿԸՀ որոշմամբ:

Դիմողը եզրահանգում է, որ Ազգային ժողովի՝ 2026 թվականի հունիսի 7-ին տեղի ունեցած ընտրությունների նախընտրական քարոզարշավի փուլը, արդյունքներն ու դրա ամփոփումը՝ որպես վերջնարդյունք, չեն ապահովել Սահմանադրության 2-րդ հոդվածով նախատեսված՝ ժողովրդի իշխանության իրացման լեգիտիմ, օրինական, ազատ ու հավասար սկզբունքները, մասնավորապես՝ ամբողջ քարոզարշավն ուղեկցվել է իշխող քաղաքական ուժի պատգամավորի թեկնածուի կողմից ատելության ու բռնության կոչեր, հանրային զգայուն թեմաներում իրականությանը չհամապատասխանող տվյալներ ներկայացնելով: Դիմողը նաև նշում է, որ վկայակոչված խախտումները թե՛ առանձին-առանձին, թե՛ մեկ միասնության մեջ կրում են էական բնույթ, և դրանք ուղղակիորեն անդրադարձել են ընտրությունների արդյունքների և մանդատների բաշխման վրա, իսկ ԿԸՀ-ն չի ձեռնարկել միջոցներ դրանք վերացնել փորձելու առնչությամբ՝ անտեսելով ավելի քան 58 500 անձի ազատ կամահայտնությունը՝ որպես ժողովրդի իշխանության իրացման բարձրագույն և սահմանադրական միջոց:

11.5. «Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցություն

«Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցությունը (այսուհետ սույն կետում նաև՝ Դիմող) իր դիմումով խնդրել է.

«(...) լուծել ՀՀ Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքներով ընդունված ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի N 259-Ա որոշման հետ կապված վեճը, մասնավորապես՝

Անվավեր ճանաչել ՀՀ ԿԸՀ 2026 թվականի հունիսի 14-ի N 259-Ա որոշմամբ արձանագրված ընտրության արդյունքները և սահմանել մանդատների բաշխման կարգը»:

ա. Դիմողը, վկայակոչելով իրավասու մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում և Երևան քաղաքում արձանագրված՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության և «Հայաստան» կուսակցությունների դաշինքի կողմից ընտրական հանցագործությունները, մասնավորապես, ընտրակաշառքի, ընտրողների նյութական շահագրգռման, ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելու և ընտրական գործընթացի վրա ապօրինի ազդեցության մի շարք դեպքերը, գտնում է, որ ԿԸՀ 2026 թվականի հունիսի 14-ի N 259-Ա որոշումը, ըստ էության, սահմանափակվել է քվեարկության արդյունքների թվաբանական ամփոփմամբ և չի պարունակում համարժեք պատճառաբանություն այն մասին, թե ինչպես է ԿԸՀ-ն գնահատել իրավապահ մարմինների կողմից արդեն իսկ հրապարակված ընտրական հանցագործությունների վերաբերյալ տվյալները, դրանց հնարավոր ազդեցությունն ընտրական միջավայրի վրա, ընտրողների ազատ կամարտահայտության վրա և ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրային վստահության վրա:

Դիմողի պնդմամբ՝ ԿԸՀ-ն պարտավոր չէր փոխարինել քրեական հետապնդման մարմիններին, սակայն պարտավոր էր իր սահմանադրական և ընտրահիրավական լիազորությունների շրջանակներում գնահատել՝ արդյոք պաշտոնապես արձանագրված ընտրակաշառքի, նյութական շահագրգռման, ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելու և ընտրողների վարքագծի ապօրինի ուղղորդման դեպքերը կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա: Ըստ Դիմողի՝ նման գնահատման բացակայությունը խնդրո առարկա թիվ 259-Ա որոշումը դարձնում է թերի պատճառաբանված և սահմանադրորեն խոցելի:

Դիմողը նշում է, որ ԿԸՀ-ն փաստացի հրաժարվել է իրականացնել ընտրությունների օրինականության վերաբերյալ իր գնահատողական պարտականությունը և հանդես է եկել որպես արդյունքների մեխանիկական

հաշվարկող մարմին, ինչը հակասում է Սահմանադրության 2 և 7-րդ հոդվածների պահանջներին:

բ. Դիմողը նշում է, որ ներկայացված պաշտոնական տվյալները վկայում են, որ ընտրակաշառքի և ընտրողների նյութական շահագրգռման դեպքերը չեն ունեցել միայն տեղային կամ մեկուսացված բնույթ: Ըստ Դիմողի՝ դրանք դրսևորվել են բազմաստիճան սխեմաներով՝ ընտրողների հավաքագրում, ցուցակագրում, վճարումների քողարկում, ֆինանսական հոսքերի միջնորդավորում, շտաբային կամ աշխատանքային հարաբերությունների օգտագործում, վստահված անձանց և հանձնաժողովի անդամների ինստիտուտների ներգրավում, ընտրողների տեղափոխման և վերահսկողության մեխանիզմներ: Նման պայմաններում, Դիմողի պնդմամբ, խախտվում է Սահմանադրության 7-րդ հոդվածի բուն էությունը, քանի որ ընտրողն այլևս հանդես չի գալիս որպես ինքնիշխան կամքի ազատ կրող, այլ դառնում է կազմակերպված նյութական և սոցիալական ազդեցության օբյեկտ:

գ. Դիմողը գտնում է, որ սույն պարագայում խնդիրը ոչ թե այն է, որ ընտրություններում եղել են առանձին խախտումներ, այլ այն, որ պաշտոնական տվյալների համակցությունը ցույց է տալիս ընտրողների կամքի ձևավորման միջավայրի համակարգային թունավորում՝ փողի, սոցիալական կախվածության, շտաբային վերահսկողության և կազմակերպված ապօրինի ազդեցության միջոցով: Այդպիսի միջավայրում ձևավորված խորհրդարանական արդյունքը, ըստ Դիմողի, չի կարող առանց սահմանադրական խիստ ստուգման համարվել ժողովրդի անխաթար կամքի արտահայտություն: Ուստի՝ Դիմողի պնդմամբ՝ վիճարկվող որոշման սահմանադրականությունը պետք է գնահատվի ոչ միայն ընտրական օրենսդրության տեխնիկական պահանջների, այլ նաև Սահմանադրության 2-րդ հոդվածով ամրագրված՝ ժողովրդաիշխանության սկզբունքի տեսանկյունից:

դ. Դիմողը նշում է, որ սույն գործով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 14-րդ մասի կիրառման նախադրյալներն առկա են, քանի որ խախտումները կրել են կազմակերպված, զանգվածային, կրկնվող և պարբերական բնույթ, ինչպես նաև ունեցել են համակարգային փոխկապակցվածություն: Դիմողը գտնում է, որ նշված հանգամանքների համադրումը խախտել է Սահմանադրության 7-րդ հոդվածի բուն էությունը, քանի որ ազատ ընտրության սկզբունքը ենթադրում է ոչ միայն գաղտնի քվեարկության հնարավորություն, այլ նաև ընտրողի կամքի ձևավորման ազատ միջավայր:

Այս առումով Դիմողը պնդում է, որ Սահմանադրական դատարանի առջև բարձրացված հարցը ոչ միայն այն է, թե որքա՞ն ձայն է փոխվել, այլ նաև այն, թե արդյո՞ք ընտրությունների իրական արդյունքը հնարավոր է արժանահավատորեն պարզել՝ հաշվի առնելով խախտումների ծավալը, բնույթը, տարածվածությունը և փոխկապակցվածությունը:

ե. Ըստ Դիմողի՝ Պատասխանողը կարող է պնդել, որ քանի դեռ քրեական վարույթներն ավարտված չեն, ընտրությունների արդյունքները չեն կարող անվավեր ճանաչվել, սակայն այդ մոտեցումն անհիմն է, քանի որ Սահմանադրական դատարանը չի հաստատում քրեական մեղավորությունը, այլ գնահատում է ընտրությունների սահմանադրական լեգիտիմությունը: Դիմողի պնդմամբ՝ քրեական վարույթների անավարտությունը չի կարող կասեցնել կամ չեզոքացնել ընտրությունների սահմանադրական վերահսկողությունը:

Դիմողը նշում է, որ Պատասխանողը կարող է նաև պնդել, որ ընտրությունները պետք է գնահատել տեղամասային խախտումների տրամաբանությամբ, սակայն սույն գործով խախտումները չեն սահմանափակվում առանձին տեղամասերով՝ դրանք վերաբերում են ընտրողների կամքի ձևավորման ամբողջ միջավայրին, քաղաքական մրցակցության հավասարությանը և ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահությանը: Հետևաբար՝ ըստ Դիմողի՝ առանձին տեղամասային վերաքվեարկությամբ դրանց հետևանքները վերացնել հնարավոր չէ:

Դիմողը գտնում է, որ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 3 ընտրատեղամասի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչվելուց հետո վերաքվեարկություն չնշանակելու հանգամանքը թեև հիմնավորվում է և գնահատվում իրավաչափ, սակայն քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելուն զուգահեռ պետք է նաև սահմաններ մանդատների բաշխման կարգ:

11.6. «Հայաստան» կուսակցությունների դաշինք

«Հայաստան» կուսակցությունների դաշինքը (այսուհետ սույն կետում նաև՝ Դիմող) իր դիմումով խնդրել է.

«Անվավեր ճանաչել 2026թ. հունիսի 7-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի թիվ 259-Ա որոշումը»:

ա. Ընտրությունների ընթացքում առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի ներդրումն օգտագործվել է որպես վարչական ռեսուրսի չարաշահման գործիք՝ խախտելով Սահմանադրության 7-րդ հոդվածով երաշխավորված՝ հավասար և ազատ ընտրական իրավունքի սկզբունքները:

բ. 2025 թվականի դեկտեմբերի 3-ին վարչապետն Ազգային ժողովի ամբիոնից հայտարարեց, որ կենսաթոշակների բարձրացում չի սպասվում, և այդ ֆինանսական միջոցները (ամսական շուրջ 10,400 ՀՀ դրամ) ուղղվելու են 2026 թվականի հունվարից ներդրվող՝ առողջության համընդհանուր ապահովագրության համակարգին, մինչդեռ, 2026 թվականի մարտի 5-ին՝ Ազգային ժողովի ընտրությունների նշանակումից ընդամենը մեկ ամիս անց, Կառավարությունն

ընդունեց որոշում, որով 2026 թվականի ապրիլի 1-ից (քվեարկությունից 2 ամիս առաջ) աննախադեպ չափով բարձրացրեց կենսաթոշակներն ու նպաստները:

գ. 2026 թվականի ապրիլի 9-ին՝ Ազգային ժողովի հերթական ընտրություն նշանակելու մասին ՀՀ նախագահի հրամանագրի հրապարակումից երկու ամիս անց, Կառավարությունն ընդունել է N 468-Լ որոշումը՝ «Ագրոպարենային ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը հաստատելու մասին»: Տվյալ որոշմամբ Կառավարությունը սահմանել է գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների ամբողջական կամ մասնակի սուբսիդավորում, ինչը գործնականում նշանակում է գյուղատնտեսությամբ զբաղվող քաղաքացիների համար զրոյական տոկոսադրույքով վարկային միջոցների հասանելիություն անմիջապես նախընտրական փուլում:

դ. Մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում, ինչպես նաև ընտրության և դրան նախորդող օրը քննչական մարմինները ծառայողական պարտականությունների կատարման պատրվակով զբաղվել են բացահայտ հակաքարոզչությամբ ընտրություններին մասնակցող ուժերի դեմ, ինչպես նաև ապօրինի միջամտությամբ քարոզչական նյութեր են մատակարարել, որն օգտագործվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչների կողմից:

Դեռևս մինչև նախընտրական քարոզչության սկիզբը նկատվել է, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն իր գործունեության վերաբերյալ հանրային հաշվետվություններ ներկայացնելիս հստակ թիրախավորում է ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած քաղաքական ուժերին: Այսպիսի վարքագիծը դրսևորվել և պահպանվել է ընտրական ողջ գործընթացում: Քաղաքական ուժերին թիրախավորել է նաև ՀՀ քննչական կոմիտեն:

ՀՀ հակակոռուպցիոն և քննչական կոմիտեները հնարավորություն են ունեցել իրենց պարտականությունների կատարումն իրականացնել առանց նախընտրական քարոզչությանը միջամտելու, սակայն նույնիսկ զգուշացումից հետո հրաժարվել են պահպանել չեզոքությունը:

ե. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացրած նախընտրական հիմնադրամի հաշվետվությունը պարունակում է ակնհայտ կասկածելի գործարքներ, որոնք վկայում են, որ կուսակցությունը փաստացի իրականացրել է հայտարարագրվածից զգալիորեն ավելի մեծ ծախսեր՝ խախտելով Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները: Մասնավորապես՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հայտարարագրել է ավելի քան 70 անշարժ գույքի վարձակալության պայմանագրեր՝ որպես «փաստացի ծախս» նշելով «0,00» ՀՀ դրամ, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ դրանք իրականում անհատույց կամ արտոնյալ պայմաններով տրամադրված ծառայություններ են,

որոնք, ըստ օրենքի, պետք է ներառվեին հիմնադրամի ծախսերում՝ իրենց իրական շուկայական արժեքով: Տվյալ պայմանագրերում որպես «շուկայական արժեք» նշված թվերն էականորեն տարբերվում են իրականությունից, քանի որ համացանցում՝ անշարժ գույքի վարձակալության կայքերում, Երևանի և մարզերի գրասենյակային տարածքների վարձակալության ընթացիկ գների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ կուսակցության կողմից նշված գնահատականներն արհեստականորեն աղավաղված են ֆինանսական վերահսկողությունից խուսափելու և իրական ծախսերը ստվերելու նպատակով:

զ. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզարշավն աչքի է ընկել Հայաստանի Հանրապետության խոշոր քաղաքներում և մայրաքաղաքում ամփոփիչ հանրահավաքներին իրականացված թանկարժեք կահավորանքով և դրոնների շոուներով: Դրոնների շոուներ անցկացվել են Կապանում, Գյումրիում, Գավառում, Վանաձորում, Իջևանում, Եղեգնաձորում, Արտաշատում, Աբովյանում և Երևանում:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից ընդհանուր հանրահավաքների կազմակերպչական աշխատանքների, ներառյալ՝ տեխնիկայի, դրոն շոուի և շրջիկ պիկապների համար ընդհանուր հայտարարագրվել է 214.000.000 (երկու հարյուր տասնչորս միլիոն) ՀՀ դրամ:

Համեմատության համար հարկ է նշել, որ «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից, որը թե՛ պետական գնումների ոլորտում, թե՛ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության միջոցառումների կազմակերպման հիմնական մատակարարն է, առանց դրոնների շոուների մեկ միջոցառման կազմակերպումը տատանվում է 30-130 միլիոն ՀՀ դրամի սահմաններում (համաձայն www.armeps.am կայքում առկա տեղեկատվության):

Չի կարող 9 քաղաքներում անցկացված մեծ հանրահավաքների կազմակերպման ծախսը, ներառյալ՝ լուսաձայնային տեխնիկան, բեմերի կոնստրուկցիաների լոգիստիկ և հավաքման ծախսերը, դրոնների շոուն՝ շրջիկ պիկապների հետ միասին, արժենալ 214.000.000 (երկու հարյուր տասնչորս միլիոն) ՀՀ դրամ:

է. Քարոզարշավի պաշտոնական մեկնարկին նախորդող ժամանակահատվածում արձանագրվել են թաքնված քարոզչության դեպքեր: 2026 թվականի ապրիլի 19-ին Գյումրիում և ապրիլի 25-ին Երևանում իրականացված՝ «Խաղաղության ձայնը» խորագրով համերգները, որոնք իմաստային առումով նույնացել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ «Տե՛ր կանգնիր խաղաղությանը» կարգախոսի հետ, փաստացի հանդիսացել են իշխող ուժի քարոզարշավի բաղադրիչ: Տվյալ փաստը կասկածից վեր է դասվում այն հանգամանքով, որ միջոցառումների ընթացքում ելույթ է ունեցել վարչապետը՝ իր անձնական երաժշտական խմբի՝

«Վարչաբենդ»-ի հետ, ինչը ոչ միայն միջոցառումը վերածել է քաղաքական քարոզչության, այլ նաև՝ ընկալվել որպես այդպիսին:

Միջազգային հայտնի արտիստների ներգրավումը վկայում է, որ համերգների իրական ծախսերը հասել են մի քանի հարյուր միլիոն դրամի, որոնք, սակայն, չեն արտացոլվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական հիմնադրամի հաշվետվությունում: Նշված համերգի ահռելի ծախսերը թաքցվել են մասնավոր կազմակերպության կողմից կատարված լինելու հիմնավորմամբ: Իշխող ուժի կողմից «Ֆասթ Բանկ» ՓԲԸ միջոցով այդ ծախսերի ստվերայնացումը ոչ միայն խախտում է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված՝ իրավաբանական անձանցից նվիրատվություն ստանալու արգելքը, այլև խաթարում է ընտրությունների ազատ և հավասար լինելու սահմանադրական սկզբունքը, քանի որ ընդդիմադիր ուժերը հայտնվել են մրցակցային անհավասար պայմաններում՝ չունենալով նմանօրինակ անօրինական ֆինանսավորման և վարչական ռեսուրսի հասանելիություն: Այս առնչությամբ իր մտահոգությունն է հայտնել Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունը:

ը. 2026 թվականի մայիսի 28-ին Երևանում անցկացված պետական զորահանդեսը քարոզարշավի փուլում օգտագործվել է իշխող կուսակցության քաղաքական օրակարգը սպասարկելու համար:

Զորահանդեսի կազմակերպման ծախսերն իրականացվել են ՀՀ պաշտպանության նախարարության միջոցներից, որի համար նույն «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ից ՀՀ ՊՆ-ՀՄԱԾՁԲ-26-12/1 ծածկագրով կատարվել է «Հրատապ մեկ անձից գնում» 419,638,800.00 (չորս հարյուր տասնինը միլիոն վեց հարյուր երեսունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամի չափով:

Նմանատիպ միջոցառման արտաքին կազմակերպչական ծախսերն առերևույթ չէին կարող գերազանցել 30 միլիոն ՀՀ դրամը: Հետևաբար՝ զորահանդեսի միջոցառման կազմակերպչական ծախսերի մեծությունը կարելի է բացատրել հետևյալ կերպ. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից 9 քաղաքներում «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ի իրականացրած 330 միլիոն ՀՀ դրամ շուկայական արժեքով դրոնների շոուի դիմաց իրականում փոխհատուցվել է պետական բյուջեից՝ զորահանդեսի հրատապ մեկ անձից գնման շրջանակներում:

Նշվածը վկայում է, որ իշխող կուսակցությունը պետական միջոցները և պետական մարմինների գործունեությունը դիտարկել է որպես իր նախընտրական շտաբի գործիքակազմի անբաժանելի մաս՝ խախտելով Սահմանադրության 7-րդ հոդվածով ամրագրված՝ հավասար և ազատ ընտրությունների սկզբունքը:

Պետական միջոցառման՝ որպես քաղաքական բանավեճի գործիք օգտագործումն ուղղակիորեն հակասում է Վենետիկի հանձնաժողովի ուղեցույցներին, ըստ որոնց՝ իշխանությունները պետք է խուսափեն քարոզարշավի

ընթացքում այնպիսի միջոցառումներից, որոնք նպատակ ունեն ստեղծելու դրական ընկալում իշխող կուսակցության նկատմամբ:

թ. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզարշավի համար կատարված փաստացի ծախսերը վարչական ռեսուրսի չարաշահման և թափանցիկության բացակայության պայմաններում առերևույթ առնվազն հիսուն տոկոսի չափով գերազանցել են օրենքով թույլատրված՝ 800 միլիոն ՀՀ դրամի շեմը, որից մի մասը՝ զորահանդեսի ֆինանսավորումը, իրականացվել է պետական բյուջեից:

Տվյալ դեպքում առկա է ոչ թե աննշան կամ տեխնիկական բնույթի շեղում, այլ այնպիսի ծավալի գերազանցում, որը պատշաճ վարչարարության և օրենքի պահանջների հետևողական կիրառման պայմաններում կարող էր հանգեցնել ընտրություններին մասնակցող քաղաքական ուժի ընտրական ցուցակի գրանցման ուժը կորցրած ճանաչելու հարցի առաջադրմանը:

Մինչդեռ իրավասու մարմինների կողմից չի իրականացվել ներկայացված տեղեկությունների լիարժեք, արդյունավետ և անաչառ քննություն, որի հետևանքով չեն կիրառվել այն իրավական մեխանիզմները, որոնք օրենսդիրը նախատեսել է ընտրական մրցակցության հավասար պայմանների պահպանման և ընտրական գործընթացի ֆինանսական թափանցիկության ապահովման նպատակով:

Այս հանգամանքն էական նշանակություն ունի ընտրությունների արդյունքների սահմանադրականության գնահատման տեսանկյունից, քանի որ վերաբերում է ոչ միայն քարոզչության ֆինանսավորման կանոնների պահպանմանը, այլև ընտրական գործընթացին մասնակցող սուբյեկտների իրավական կարգավիճակի օրինականությանը:

ժ. Նախընտրական քարոզարշավի ժամանակ արձանագրվել են բազմաթիվ դեպքեր (օրինակ՝ Վերին Արտաշատում, Արթիկ և Մարտունի համայնքներում), երբ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչության բազմամարդությունն ապահովելու համար, հատկապես մարզային այցերին և հանրահավաքներին ներգրավվել են պետական և համայնքային մարմինների ծառայողներ, ինչպես նաև պետական և համայնքային ենթակայության կրթական հաստատություններում դասավանդողներ և սովորողներ, ներառյալ՝ անչափահասներ: Ներգրավումը եղել է ինչպես աշխատանքային օրվա ավարտից հետո, այնպես էլ աշխատանքային ժամերին:

Հայաստանի Հանրապետությունում հանրային և քաղաքացիական ծառայողների ներգրավվածությունը նախընտրական քարոզչությանն օրենսդրական մակարդակով բավարար հստակությամբ և կանխատեսելիությամբ կանոնակարգված չէ: Ներպետական օրենսդրությունը կամ առնվազն դրա կիրառության բացակայությունը չի ձևավորում այն հստակ սահմանը, թե հանրային ծառայողը որ

պահից է հանդես գալիս «անձնական» կարգավիճակով, ինչը հնարավորություն է տալիս իրավասու մարմնին՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, և իրավապահ համակարգին ակնհայտ խախտումների պարագայում հրաժարվել վարչական քննությունից կամ քրեական վարույթի նախաձեռնումից:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընտրությունների նախընտրական քարոզարշավի ժամանակ վարչական ռեսուրսի կիրառման համար որևէ պաշտոնատար անձի նկատմամբ որևէ վարույթ չի հարուցվել, և որևէ պատասխանատվության միջոց չի կիրառվել: Նշվածն ակնառու ցուցանիշ է, թե իշխանություններն ինչպիսի լայն թողտվություն են վայելել վարչական ռեսուրս կիրառելու հարցում:

ժա. Դիմողի կողմից իրականացված մշտադիտարկման փաստացի տվյալների համակարգային վերլուծությունը ցույց է տվել, որ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ «Լուրեր» լրատվական հաղորդաշարի եթերում առկա է տևողության ակնհայտ անհամաչափություն: Մշտադիտարկման ենթարկված ժամանակահատվածի միջին վիճակագրական տվյալների համաձայն՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը հատկացված եթերաժամանակն ավելի քան երեք անգամ գերազանցել է ընդդիմադիր «Հայաստան» կուսակցությունների դաշինքին տրամադրված ժամանակը:

Բացի դրանից, «Լուրեր» լրատվականի պաշտոնական Telegram (Տելեգրամ) հարթակում արտատպվել են բացառապես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզարշավը լուսաբանող ռեպորտաժներն ու նյութերը, իսկ «Հայաստան» կուսակցությունների դաշինքի վերաբերյալ որևէ անդրադարձ նշված՝ պետականորեն կառավարվող թվային հարթակում չի տեղադրվել:

Թեև արձանագրված խախտումների առնչությամբ բողոք է հասցեագրվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին՝ պահանջելով հարուցել վարչական վարույթ, կարգավորող մարմնի որդեգրած ձևական մոտեցումն ու անգործությունն էապես չեն փոխել իրավիճակը:

Հանրային հեռուստատեսության ակնհայտ կողմնակալ լուսաբանման մասին արձանագրվել է նաև Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության եզրակացությամբ, որի համաձայն՝ վերջինս «ցուցաբերել է ակնհայտ կողմնակալություն՝ հօգուտ իշխող կուսակցության, ինչը հակասում է նրա իրավական պարտավորություններին և հանրային առաքելությանը»:

ժբ. Քվեարկության օրվանից երկու օր առաջ Դիմողի կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել դիմում այն մասին, որ տարբեր ընտրական հանձնաժողովների անդամներ, որոնք առաջադրված են եղել իշխող քաղաքական ուժի կողմից, մասնակցել են նախընտրական քարոզչությանը՝ հրապարակայնորեն

արտահայտելով աջակցություն տվյալ քաղաքական ուժին և ներգրավվելով քարոզչական գործունեության մեջ:

Չնայած ներկայացված տեղեկություններին և կից ապացույցներին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը չի ձեռնարկել անհապաղ միջոցներ՝ ներկայացված փաստերի ստուգման և իրավական գնահատման ուղղությամբ: Փոխարենը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հայտնել է, որ տվյալ հարցին կանդրադառնա միայն քվեարկությունից հետո՝ պատճառաբանելով, որ ընտրություններից առաջ համապատասխան անդամների լիազորությունների դադարեցումը կարող է խոչընդոտել ընտրական հանձնաժողովների աշխատանքը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալ դիրքորոշման հետևանքով այն անձինք, որոնց նկատմամբ առկա էին ընտրական օրենսդրության խախտման վերաբերյալ հիմնավոր պնդումներ, շարունակել են իրականացնել ընտրական վարչարարություն, մասնակցել քվեարկության կազմակերպմանն ու արդյունքների ամփոփմանը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, տեղեկացված լինելով հնարավոր խախտումների մասին և ունենալով իրավիճակին միջամտելու լիազորություններ, փաստացի հրաժարվել է ընտրական գործընթացի ընթացքում ապահովել ներկայացված խախտումների արդյունավետ և ժամանակին քննությունը:

Խնդիրը սահմանափակված չէ առանձին հանձնաժողովների անդամների հնարավոր իրավախախտ վարքագծով, քանի որ տվյալ դեպքում առկա է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անգործությունը, որի հետևանքով չեն գործադրվել ընտրական գործընթացի օրինականությունը, անկողմնակալությունը և հանրային վստահությունը պահպանելուն ուղղված վերահսկողական լիազորությունները: Նման պայմաններում ընտրական վարչարարության նկատմամբ հանրային վստահությունն էապես խաթարվել է, իսկ ընտրական գործընթացի մասնակիցների հավասարության սկզբունքը՝ վտանգվել:

ժգ. «Հայաստան» կուսակցությունների դաշինքի կողմից կազմակերպված՝ ընտրողների ցուցակների և տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից վարվող մասնակցության մատյանների ուսումնասիրության շրջանակներում վերլուծվել են շուրջ 340 ընտրական տեղամասերի փաստաթղթեր, ինչը կազմում է Հայաստանի Հանրապետության 2005 ընտրական տեղամասերի զգալի մասը: Արդյունքում արձանագրվել է, որ պաշտոնապես ընտրությանը մասնակցած համարված ընտրողների թվի և մասնակցության մատյաններում փաստացի առկա ստորագրությունների թվի միջև առկա է էական տարբերություն: Մասնավորապես՝ ուսումնասիրված տեղամասերում հայտնաբերվել է ավելի քան 27,000 դեպք, երբ ընտրողների մասնակցությունը հաշվառվել է, սակայն համապատասխան ստորագրությունը մասնակցության մատյանում բացակայում է:

Նշված անհամապատասխանությունը չի կարող գնահատվել որպես տեխնիկական կամ պատահական բնույթի վրիպում, քանի որ սույն պարագայում խոսքը վերաբերում է հազարավոր դեպքերի, որոնք արձանագրվել են տարբեր ընտրական տեղամասերում և ունեն համակարգային բնույթ: Ընդ որում՝ այդ արդյունքն ստացվել է ոչ թե բոլոր տեղամասերի, այլ դրանց միայն մի մասի ուսումնասիրության արդյունքում, ինչը լրացուցիչ հիմք է տալիս կասկածի տակ դնելու ընտրողների մասնակցության վերաբերյալ պաշտոնական տվյալների ամբողջական և հավաստի լինելը:

Ներկայացված անհամապատասխանությունները չեն արտացոլում խնդրի ողջ ծավալը, քանի որ ընտրողների մասնակցության վերաբերյալ ամբողջական ստուգում իրականացնելը փաստացի անհնար է դարձել այն պատճառով, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պատշաճ կերպով չի հրապարակել ընտրողների ստորագրված ցուցակների մի մասը: Արդյունքում՝ «Հայաստան» կուսակցությունների դաշինքը զրկված է եղել բոլոր ընտրական տեղամասերի վերաբերյալ համապարփակ համեմատական ուսումնասիրություն իրականացնելու հնարավորությունից:

Ժդ. «Հայաստան» կուսակցությունների դաշինքի կողմից դիմումում ներկայացված փաստերը և ապացույցները վկայում են ոչ թե ընտրական գործընթացում տեղ գտած առանձին կամ պատահական բնույթի խախտումների, այլ ընտրությունների ողջ ընթացքում դրսևորված համակարգային խնդիրների մասին, որոնք էական ազդեցություն են ունեցել ընտրական գործընթացի ազատության, հավասարության, մրցակցայնության, թափանցիկության և արդյունքների արժանահավատության վրա:

Հետևաբար՝ առկա են բավարար հիմքեր՝ եզրահանգելու, որ ընտրական գործընթացը չի համապատասխանել ազատ, արդար և մրցակցային ընտրությունների սահմանադրական չափանիշներին, իսկ արձանագրված խախտումների ամբողջությունը կասկածի տակ է դնում պաշտոնապես հրապարակված ընտրությունների արդյունքների արժանահավատությունն ու դրանց համապատասխանությունը ժողովրդի ազատ կամարտահայտությանը:

11.7. «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցություն

«Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցությունը (այսուհետ սույն կետում նաև՝ Դիմող) իր դիմումով խնդրել է.

«(...)

2. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի 2026թ. հունիսի 7-ի ընտրությունների արդյունքներն ամփոփելու վերաբերյալ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 14.06.2026թ. N 259-Ա որոշումը և

Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի 2026թ. հունիսի 7-ի ընտրությունների արդյունքները»:

Դիմողը նշում է, որ 2026 թվականի հունիսի 7-ին Հայաստանի Հանրապետությունում կայացած Ազգային ժողովի ընտրությունները զուգորդվել են քաղաքացիների ընտրական իրավունքի այնպիսի լայնամասշտաբ և համատարած խախտումներով, որոնք էականորեն փոխել են ընտրությունների պատկերը՝ կասկածի տակ դնելով քվեարկության արդյունքում ձևավորված իշխանության լեգիտիմությունը: Իր խնդրանքի հիմքում Դիմողը դրել է, մասնավորապես, հետևյալ փաստարկները.

ա. անդրադառնալով պետական կենսաթոշակների բարձրացմանը՝ Դիմողը նշում է, որ իշխող քաղաքական ուժի ղեկավարը նախքան ընտրական գործընթացներ սկսելը հստակ դիրքորոշում ուներ այն մասին, որ թոշակառուն չգիտի 10400 ՀՀ դրամն արդյունավետ ծախսելու ձևը, և դրա համար թոշակ բարձրացնելու կարիք չկա, սակայն ընդամենը մի քանի ամիս անց, երբ արդեն սկսվել էին ընտրական գործընթացները, թոշակառուն արդեն «միանգամից սովորեց արդյունավետ ծախսել 10400 ՀՀ դրամը», և նույն անձը՝ վարչապետ Փաշինյանը, որը նաև կառավարող կուսակցության անունից ակտիվ քարոզարշավ էր ծավալում, որոշեց բարձրացնել կենսաթոշակները: Ընդ որում՝ Դիմողի պնդմամբ՝ կենսաթոշակների բարձրացումը հաջորդել է Ազգային ժողովի հերթական ընտրությունը 2026 թվականի հունիսի 7-ին նշանակելու մասին ՀՀ նախագահի հրամանագրին: Ըստ Դիմողի՝ ակնհայտ է, որ իր այս քայլով իշխող ուժն էականորեն բարելավեց իր նախընտրական դիրքերը մյուս կուսակցությունների համեմատ, որոնք օբյեկտիվորեն զրկված են պետական բյուջեի միջոցով նախընտրական սոցիալական ծրագրեր իրականացնելու հնարավորությունից: Հավելելով՝ Դիմողը պնդում է, որ նշված փաստը չի վրիպել նաև միջազգային դիտորդների աչքերից:

բ. Դիմողը նշում է, որ մամուլը ողողված է նյութերով այն մասին, որ Ն. Փաշինյանի հանրահավաքին կիրառվել է լայնամասշտաբ վարչական ռեսուրս. ներգրավվել են դպրոցի տնօրենները, ուսուցիչները, անգամ աշակերտները, համայնքային կազմակերպությունների աշխատողները և այլն: Ընդ որում՝ Դիմողի պնդմամբ՝ այս ամենը կազմակերպվել է նաև դասերի հաշվին և աշխատանքային ժամերին: Դիմողը նշում է, որ նմանատիպ խախտումներն այնքան մասշտաբային են եղել, որ անգամ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն է դրանց արձագանքել: Բացի դրանից, Դիմողն ընդգծում է, որ միջազգային դիտորդական կազմակերպությունները ևս արձանագրել են վարչական ռեսուրսի կիրառման փաստը:

գ. Դիմողը գտնում է, որ վարչական ռեսուրսն օգտագործվել է նաև այլ ընդդիմադիր ուժերի վերաբերյալ հասարակության մոտեցումները փոխելու համատեքստում՝ անմեղության կանխավարկածի բացառիկ խախտումներով:

Մասնավորապես՝ Դիմողի պնդմամբ՝ տարածվել են ենթադրյալ ընտրակաշառք տալու վերաբերյալ ձայնագրություններ, որոնք ակնհայտորեն նախաքննական գաղտնիք են պարունակում: Ընդ որում՝ Դիմողը նշում է, որ այս ձայնագրությունները տարածել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն իր պաշտոնական կայքէջի միջոցով:

դ. Դիմողը պնդում է, որ Ն. Փաշինյանը հնչեցրել է ընդդիմադիր ուժերի ղեկավարներին ձերբակալելու հայտարարություններ և ահաբեկել է ընդդիմադիր հայացքներ ունեցող քաղաքացիներին՝ հայտարարելով, որ եթե իրենց չընտրեն, պատերազմ կլինի՝ հստակեցնելով կամ նախանշելով պատերազմի սկիզբը՝ սեպտեմբեր ամիսը: Նման հռետորաբանությունը, մի կողմից՝ ահաբեկում է հասարակությանը պատերազմով, մյուս կողմից՝ մնացած բոլոր ընդդիմադիր կուսակցությունների համար ստեղծում է անհավասար մրցապայքար ընդդիմադիր դաշտում, քանի որ ազդում է ընդդիմադիր ուժերի վերաբերյալ հասարակական ընկալման վրա:

ե. Դիմողը նշում է, որ իշխող քաղաքական ուժի կողմից իրականացված քարոզարշավը լայնորեն լուսաբանվել է ինչպես Հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով, այնպես էլ իշխանական կուսակցության հետ ասոցացվող լրատվամիջոցներով, մինչդեռ ընդդիմադիր ուժերը չեն ունեցել լուսաբանման հավասար հնարավորություններ, նրանք չեն լուսաբանվել, այդ թվում՝ Հանրային հեռուստատեսությամբ՝ բացառությամբ պաշտոնական եթեր տրամադրելու խիստ սահմանափակ դեպքերի: Ընդ որում՝ Դիմողի պնդմամբ՝ այս փաստն արձանագրվել է նաև ԵԱՀԿ դիտորդների կողմից, որոնք քննադատել են Հանրային հեռուստաընկերության աշխատանքը: Որպես անհավասար լուսաբանման ամենացայտուն օրինակ՝ Դիմողը ներկայացրել է նախընտրական քարոզչության վերջին օրը՝ հունիսի 5-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչապետի թեկնածու Ն. Փաշինյանին Հանրային հեռուստաընկերության եթեր հրավիրելու փաստն այն դեպքում, երբ կուսակցությունների ցուցակների առաջին համարների մասնակցությամբ Հանրայինի գլխավոր բանավեճը տեղի էր ունեցել նախօրեին՝ հունիսի 4-ին:

զ. Մեջբերելով Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված իրավակարգավորումը՝ Դիմողն ընդգծում է, որ Ն. Փաշինյանի ամբողջ քարոզարշավը զուգորդվել է տարբեր տեսակի սննդամթերք բաժանելով, և դա արվել է ակնհայտ, ավելին՝ լայնորեն լուսաբանվել է, սակայն որևէ պատկան մարմին որևէ գործողություն չի կատարել ընտրական օրենսդրության պահանջները պահպանելու ուղղությամբ:

է. Դիմողը նշում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անվավեր է ճանաչում իր իսկ կողմից ընտրություններն ակնհայտ խախտումով կազմակերպելու պատճառով ընտրատեղամասի քվեարկության արդյունքները և հայտարարում, որ չի

լինելու վերաքվեարկություն, այսինքն՝ իրեն ժողովրդավար հռչակած պետությունում զինվորը զրկվում է ընտրելու իրավունքից, քանի որ իրեն սահմանված ժամին ուղղակի թույլ չեն տվել գնալ ընտրատեղամաս, իսկ քաղաքացին զրկվում է սահմանված ժամին իր կատարած քվեարկությունից, որովհետև զինվորին «ստիպել են» ընտրական օրենսդրության խախտումներով քվեարկել: Այս կապակցությամբ Դիմողը պնդում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուղղակի չունի լիազորություն՝ քաղաքացուն զրկելու իր քվեից որևէ պարագայում, իսկ սույն դեպքում՝ իր իսկ կողմից իր լիազորությունները պատշաճ չիրականացնելու արդյունքում:

ը. Դիմողն արձանագրում է, որ քվեարկության օրը 79.125 քաղաքացու տվյալներ հնարավոր չի եղել նույնականացնել տեխնիկական սարքի միջոցով, և դրանք մասնագետի կողմից ստեղնաշարով մուտք են արվել տեխնիկական սարքավորման մեջ: Այս թիվը, ըստ Դիմողի, կազմում է տպված քվեարկության կտրոնների հինգ տոկոսից ավելին, ինչն արդեն այնպիսի մասշտաբային խնդիր է, որը պետք է հանգեցնի ընտրությունների արդյունքների անվավերության:

Միաժամանակ Դիմողը նշում է, որ ազատ ընտրության իրավունքը մասսայաբար խախտվել է զինվորների և տարեցների դեպքում:

Դիմողի պնդմամբ՝ համացանցում բազմաթիվ են այնպիսի տեսանյութերը, որոնցից ակնհայտ է, որ քաղաքացին իր կամքով չի ունեցել ընտրելու հնարավորություն, և նրան ուղղորդել է այլ անձ, ինչպես նաև տարածվել են տեսանյութեր, որ մեկից ավելի անձ է մտնում քվեախցիկ, բացի դրանից, արձանագրվել են նաև քվեախցիկից դուրս քվեարկության դեպքեր:

թ. Դիմողը նշում է, որ ձևական առումով ուղղակի ընտրական իրավունքի պահանջը թվում է, թե պահպանված է, սակայն բովանդակային առումով քաղաքացիների ուղղակի ընտրական իրավունքը խախտվել է տարբեր դրվագներով. քաղաքացիներին ենթադրաբար ստիպել են լուսանկարել քվեաթերթիկը կամ դուրս բերել որոշ ընդդիմադիր ուժերի քվեաթերթիկները: Նման միջոցների կիրառման արդյունքում, ըստ Դիմողի, ընտրողներն անմիջականորեն չեն ընտրել իրենց նախընտրած քաղաքական ուժին, այլ ներկայացել են ընտրատեղամաս ենթադրաբար մեկ այլ անձի՝ իրենց վերադասի կամ վերադասի վերադասի կամքը կատարելու համար:

ժ. Դիմողը պնդում է, որ ընտրողների կամքի վրա ազդեցությունները եղել են մասսայաբար, որոնք արտահայտվել են ինչպես քվեախցիկից դուրս քվեարկություն կատարելով, մեկից ավելի անձ քվեախցիկում գտնվելով, այնպես էլ այս կամ այն կուսակցության քվեաթերթիկը դուրս բերելով, որպիսի փաստերով մամուլը ողողված է: Բացի դրանից, Դիմողի պնդմամբ՝ եղել է տեղամաս, որի կահավորումն արդեն իսկ բացառել է գաղտնի քվեարկության հնարավորությունը, քանի որ քվեախցիկը դրված է եղել թափանցելի պատուհանի անմիջապես դիմաց, և ընտրողը հնարավորություն է

ունեցել ցույց տալու պատուհանից այն կողմ գտնվող անձին, թե ում օգտին է քվեարկել:

ժա. Դիմողն արձանագրում է, որ 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններում անվավեր է ճանաչվել 17.097 քվեաթերթիկ, ինչը նշանակում է, որ նույն քանակի քաղաքացիների ընտրական կամքը չի ծառայել իր նպատակին: Այս քանակը, ըստ Դիմողի, արդեն իսկ հուշում է, որ եղել է ընտրողների կամքի նկատմամբ էական միջամտություն: Համեմատության համար Դիմողը նշում է, որ թե՛ 2018 և թե՛ 2021 թվականների Ազգային ժողովի ընտրություններում անվավեր քվեաթերթիկների շեմը չի հատել 5000-ի սահմանը:

Միաժամանակ Դիմողը պնդում է, որ առկա են եղել կրկնաքվեարկության դեպքեր և այլ խախտումներ (օրինակ՝ քվեարկության գաղտնիության խախտման, ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելու, ընտրակաշառք տալու, ընտրատեղամասում սառը զենք կրելու, մեկ հասցեի վրա 300 անձ գրանցելու և այլ դեպքեր):

12. Պատասխանողի դիրքորոշումները

2026 թվականի հունիսի 27-ին Սահմանադրական դատարանում սույն միավորված գործով բանավոր ընթացակարգով դատական նիստի շրջանակներում պատասխանող ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչը (այսուհետ նաև՝ ԿԸՀ ներկայացուցիչ) ներկայացրել է ներքոնշյալ դիրքորոշումները.

ա. ԿԸՀ ներկայացուցիչը գտնում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» N 259-Ա որոշումը՝ Ազգային ժողով ընտրվելու և մանդատների բաշխման մասին, իրավաչափ է և կայացվել է Ընտրական օրենսգրքի պահանջների պահպանմամբ:

բ. ԿԸՀ ներկայացուցիչը նշել է, որ 2026 թվականի հունիսի 14-ին ԿԸՀ կազմած արձանագրությունն ստորագրել են ԿԸՀ բոլոր անդամները:

գ. ԿԸՀ ներկայացուցիչը գտնում է, որ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչել կարելի է միայն այն պարտադիր պայմանով, որ թույլ տրված խախտումները բացառեն ընտրության իրական արդյունքները ճշգրտորեն որոշելու հնարավորությունը:

դ. Անդրադառնալով Դիմողների այն պնդմանը, ըստ որի՝ ընտրական գործընթացի ընթացքում արձանագրվել են վարչական ռեսուրսի կիրառման և պետական իշխանության ներկայացուցիչների ներգրավվածության բազմաթիվ դեպքեր, որոնք իրենց բնույթով կարող էին ազդել ընտրողների ազատ կամարտահայտության վրա և խաթարել ընտրական գործընթացի հավասար ու մրցակցային բնույթը, ԿԸՀ ներկայացուցիչը նշում է, որ Սահմանադրության 2-րդ

հոդվածի 2-րդ մասը շեշտում է ընտրությունների ազատության սկզբունքը, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր ընտրող ազատ է կատարելու ինքնուրույն ընտրություն՝ ելնելով թեկնածուներից, իր համակրանքից կամ հակակրանքից, իր քաղաքական կամ տնտեսական շահերից: Հայաստանի Հանրապետության ողջ ընտրական կառուցակարգն ուղղված է ընտրությունների ազատության ապահովմանը: Մասնակցությունն ընտրություններին կամավոր է: Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու ընտրողին քվեարկելու որևէ թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին կամ դեմ, ինչպես նաև հարկադրելու ընտրողին մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություններին: Ոչ ոք չի կարող հարկադրանքի որևէ եղանակով ընտրողից բացահայտել, թե ինչպես է ընտրողը մտադիր քվեարկելու կամ ինչպես է քվեարկել:

ե. Անդրադառնալով «պետական իշխանության ներկայացուցիչների ներգրավվածության բազմաթիվ դեպքերին»՝ ԿԸՀ ներկայացուցիչը նշում է, որ Ընտրական օրենսգրքով հստակ և աներկբա սահմանված են այն պաշտոնատար անձինք, որոնք չեն կարող առաջադրվել պատգամավորի թեկնածու, և նշված ցանկը սպառիչ է: Նույն իրավանորմերով սահմանվում է նաև պարտադիր կանոն, ըստ որի՝ թեկնածու առաջադրված հանրային ծառայության մեջ գտնվող պատգամավորի թեկնածուները նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկի օրվանից մինչև քվեարկության օրն օրենքի ուժով ազատվում են իրենց ծառայողական պարտականությունների կատարումից:

Վերոգրյալով պայմանավորված՝ ԿԸՀ ներկայացուցիչը գտնում է, որ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց որպես թեկնածու Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելը չի կարող գնահատվել որպես Ընտրական օրենսգրքի պահանջների խախտում:

զ. Դիմողների կողմից մատնանշված՝ քաղաքական մրցակցությանը պետական, մասնավորապես՝ իրավապահ մարմինների միջամտության հարցի առնչությամբ ԿԸՀ ներկայացուցիչն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ ԿԸՀ 20.05.2026 թ. 01/11/717-2026 և 01/11/718-2026 գրություններով մատնանշվել է նախընտրական քարոզչության ժամանակահատվածը և քվեարկության ու դրան նախորդող օրն Ընտրական օրենսգրքով նախատեսված եղանակներով քարոզչության արգելքի մասին՝ խնդրելով կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով հնարավորության դեպքում իրավապահ մարմինների կողմից տարածվող հաղորդագրություններում զերծ մնալ ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների անվանումները հիշատակելուց: Նման ձևակերպումն արվել է հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԿԸՀ-ն անթույլատրելի է համարում այլ պետական մարմինների գործունեությանը

միջամտելը, և ԿԸՀ դիրքորոշման ներքո իրավապահ մարմինների գործունեությունն իրականացնելու կապակցությամբ իր խնդրանքի կատարումն ակնկալվել է տվյալ իրավապահ մարմնի լիազորությունների և գործառույթների՝ օրենքով սահմանված կանոնակարգումների շրջանակներում: Համապատասխան իրավապահ մարմինները պատասխանել են նշված գրություններին՝ ընդգծելով. «Նման հրապարակումների նպատակը համապետական ընտրություններին ընդառաջ ընտրական գործընթացների օրինականության ապահովմանը նպաստելն է, կոռուպցիոն բնույթի ընտրական հանցագործությունների կանխարգելումը, ինչպես նաև հասարակության իրավագիտակցության և հանրային վստահության բարձրացումն իրավապահ մարմինների գործունեության նկատմամբ»: Միաժամանակ ԿԸՀ-ն կարևորում է ընտրական գործընթացի քաղաքական ուժ հանդիսացող մասնակիցների կողմից ընտրական գործընթացներում ներգրավվելու բարձր պատասխանատվության գիտակցումը, և այդ առումով հարկ է համարում նաև նկատել, որ, ինչպես նշվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի գրությամբ՝ «եթե նախընտրական գործընթացներին մասնակցող քաղաքական ուժը կամ դրա ներկայացուցիչը նախընտրական ժամանակահատվածում կատարում է քրեորեն պատժելի արարք, ապա պետք է գիտակցի և, հետևաբար, կրի այն ռիսկը, որ իր հանցավոր վարքագիծը ցանկացած փուլում կարող է բացահայտվել և հրապարակայնացվել»:

ԿԸՀ ներկայացուցիչը նշում է, որ համակարծիք չէ այն ներկայացված իրավական հիմնավորումների ու պնդումների հետ, համաձայն որոնց՝ ընտրական օրենսդրական փոփոխություններն ազդեցություն են ունեցել քաղաքական մրցակցության վրա, կամ այն պնդմանը, որ անվավեր քվեաթերթիկների թիվը գրեթե քառապատկվել է, ինչը հիմնավորում է այն մտահոգությունները, որ օրենսդրական փոփոխությունների և դրանց վերաբերյալ ընտրողների ոչ բավարար իրազեկման միջև առկա է անմիջական կապ, որն էական ազդեցություն է ունեցել ընտրողների կամքի ազատ և արդյունավետ արտահայտման իրավունքի իրացման վրա, ինչպես նաև Դիմողների ներկայացրած այն եզրահանգմանը, ըստ որի՝ 2026 թվականի ապրիլի 7-ին ընդունված նույն օրենսդրական փաթեթով փոփոխության են ենթարկվել նաև քվեաթերթիկի ձևին, լրացման կարգին և անվավեր ճանաչման հիմքերին վերաբերող դրույթները: Միաժամանակ քաղաքացիների պատշաճ իրազեկման և փոփոխությունների վերաբերյալ լայնածավալ տեղեկատվական աշխատանքի բացակայության պայմաններում ընտրողների զգալի մասը չի ունեցել բավարար տեղեկացվածություն նոր կարգավորումների վերաբերյալ:

է. ԿԸՀ ներկայացուցիչն արձանագրում է, որ ԿԸՀ դիրքորոշումն օրենսդրական փոփոխությունների ազդեցության վերաբերյալ արտահայտված է ԿԸՀ 14.06.2026 թ. N 258-Ա որոշմամբ: Ինչ վերաբերում է այն պնդմանը, ըստ որի՝ նույն օրենսդրական փաթեթով քվեաթերթիկի ձևին, լրացման կարգին և անվավեր ճանաչման հիմքերին

վերաբերող դրույթների փոփոխության արդյունքում «անվավեր քվեաթերթիկների թիվը գրեթե քառապատկվել է», ապա ԿԸՀ ներկայացուցիչը հարկ է համարում ընդգծել, որ Ընտրական օրենսգրքի համաձայն՝ 2016 թվականից մինչ օրս գործում է առանձին քվեաթերթիկներով քվեակարգը, որը երբևէ փոփոխության չի ենթարկվել: Իսկ ինչ վերաբերում է «անվավեր ճանաչման հիմքերին վերաբերող դրույթները» փոփոխվելուն, ապա ԿԸՀ ներկայացուցիչը նշում է նաև, որ տեղամասային ընտրական հանձնաժողովները քվեարկության արդյունքների ամփոփման նիստում քվեաթերթիկների տեսակավորումն իրականացրել են Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան:

ը. ԿԸՀ ներկայացուցիչը, անդրադառնալով Դիմողների՝ վարչական ռեսուրսի օգտագործման վերաբերյալ հարցադրումներին, գտնում է, որ օրենսդիրը որոշակի կատեգորիայի անձանց ոչ թե արգելում է ընդհանրապես քարոզչություն կատարելը, այլ այդ կապակցությամբ սահմանում է որոշակի կանոն: Մասնավորապես՝ անմիջականորեն ընտրողների կողմից ընտրված պատգամավորները, համայնքների ղեկավարները և ավագանու անդամները կարող են իրականացնել քարոզչություն, բացառությամբ իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս: Հետևապես՝ ակնհայտ է, որ պաշտոնատար անձինք, այդ թվում՝ քաղաքական պաշտոն զբաղեցնողները, Ընտրական օրենսգրքով սահմանված սահմանափակումների հաշվառմամբ, ազատ են իրականացնելու նախընտրական քարոզչություն:

ԿԸՀ ներկայացուցիչը եզրահանգում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներին, ինչպես նաև որոշակի հստակ նշված աշխատակիցներին արգելված չէ նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝ օրենքով նախատեսված որոշակի և հստակ սահմանափակումների պահպանման պայմանով: Համապատասխան սահմանափակումներ նախատեսող նորմերով արգելքներն ուղղակիորեն սահմանվում են միմիայն այն դեպքերի համար, երբ նախընտրական քարոզչությունն ու ցանկացած բնույթի քարոզչական նյութի տարածումն իրականացվում են տվյալ անձանց լիազորություններն իրականացնելիս: Ընդ որում՝ օրենքը նշված գործունեությունը կամ գործողությունները տվյալ անձանց կողմից իրականացվելու սահմանափակում է նախատեսում հենց այդ իրավասություններն իրականացնելիս, այսինքն՝ օրենքն արգելում է պաշտոնատար անձին նախընտրական քարոզչության իրականացման և պաշտոնական լիազորությունների իրականացման մեկտեղումը, սակայն օրենքը չի արգելում անձանց՝ իրականացնելու որևէ կուսակցության օգտին նախընտրական քարոզչություն միայն այն պատճառով, որ տվյալ անձը միևնույն ժամանակ հանդիսանում է պաշտոնատար անձ: Հետևապես՝ ԿԸՀ ներկայացուցիչը գտնում է, որ

վերոնշյալ կանոնների պահպանմամբ ինքնին նախընտրական քարոզչական հավաքին ներկա գտնվելու հանգամանքը չի կարող որակվել որպես վարչական ռեսուրսի օգտագործման արգելքի խախտում:

թ. Ինչ վերաբերում է «Հայաստան» կուսակցությունների դաշինքի դիմումում «Ա. Ինստիտուցիոնալ վարչական ռեսուրսի չարաշահումներ» բաժնում որպես պետության չեզոքության արգելքի խախտումներ ներկայացվող առողջության համընդհանուր ապահովագրության ներդրման, կենսաթոշակների բարձրացման, ագրոպարենային ոլորտի վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրերին, ԿԸՀ ներկայացուցիչը հայտնում է, որ ԿԸՀ-ն կարևորում է հիշատակել Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2016 թվականին ընդունված՝ «Ընտրական գործընթացների ընթացքում վարչական ռեսուրսների չարաշահման կանխարգելում և արձագանքում» համատեղ ուղեցույցում նշված դիրքորոշումը, որ ընտրությունների ժամանակահատվածում պետք է շարունակվի կառավարության բնականոն աշխատանքը:

ԿԸՀ ներկայացուցիչն ակնհայտ է համարում այն, որ ընդհանուր առմամբ վարչական ռեսուրսի օգտագործումն ինքնին չի համարվում չարաշահում, եթե այն իրականացվում է օրենքի շրջանակներում, չի միջամտում նախընտրական քարոզչությանը և ուղղված է պետական մարմինների անմիջական գործառույթների իրականացմանը: Միևնույն ժամանակ նույնիսկ օրինական գործողությունները կարող են գնահատվել որպես վարչական ռեսուրսի չարաշահում, եթե դրանց իրական նպատակը որևէ թեկնածուի կամ քաղաքական ուժի համար ընտրական առավելություն ստեղծելն է: Այդ պատճառով վարչական ռեսուրսի օգտագործմանը գնահատական տալիս կարևոր է ոչ միայն գործողության իրավական ձևը, այլև դրա բովանդակությունը, համատեքստը և ազդեցությունն ընտրական գործընթացի վրա:

ժ. ԿԸՀ ներկայացուցիչը հարկ է համարում հաշվի առնել, որ ընտրական գործընթացները չպետք է հանդիսանան հանրային իշխանության մարմինների գործունեության խաթարման պատճառ, և ընտրական փուլում ևս հանրային իշխանության մարմինները պետք է շարունակեն պատշաճորեն իրականացնել իրենց գործառույթները: Այս տեսանկյունից վարչական ռեսուրսի օգտագործման արգելքի խախտում չեն կարող գնահատվել հետևյալ դրսևորումները.

- իշխանության գործունեության մասին հանրության իրազեկումը.

- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընթացիկ աշխատանքի, իրականացրած ծրագրերի և ապագա նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը պաշտոնական աղբյուրներով չի համարվում վարչական ռեսուրսի չարաշահում, եթե այն չի պարունակում քարոզչական կոչեր կամ որևէ թեկնածուի կամ կուսակցության օգտին քվեարկելու հորդորներ,

- պաշտոնատար անձանց մասնակցությունը նախընտրական միջոցառումներին: Հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք, բացառությամբ Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասով նշված անձանց, կարող են մասնակցել նախընտրական գործունեությանը, եթե չեն իրականացնում իրենց լիազորությունները կամ հանդես չեն գալիս ի պաշտոնե: Միաժամանակ պաշտոնեական լիազորությունների, ծառայողական տրանսպորտի, շենքերի կամ այլ պետական ռեսուրսների օգտագործումը քարոզչական նպատակներով անթույլատրելի է:

- Հավասար հասանելիություն հանրային ռեսուրսներին: Հանրային ռեսուրսներից օգտվելը, պետական և համայնքային հիմնարկների կողմից տարածքների, սարքավորումների կամ այլ միջոցների տրամադրումը թեկնածուներին և քաղաքական ուժերին թույլատրելի է, չի կարող դիտարկվել որպես վարչական ռեսուրսի օգտագործման արգելքի խախտում, եթե այն իրականացվում է բոլոր մասնակիցների համար հավասար և ոչ խտրական պայմաններով:

- Սոցիալական ծրագրերի իրականացում: Կենսաթոշակների, նպաստների, բյուջետային աշխատողների աշխատավարձերի վճարումը կամ ենթակառուցվածքային ծրագրերի իրականացումը չեն համարվում վարչական ռեսուրսի չարաշահում, եթե դրանք նախատեսված են ընդունված բյուջեով և իրականացվում են պետական քաղաքականության շրջանակներում, այլ ոչ թե ընտրողների վրա ազդելու նպատակով:

ժա. ԿԸՀ ներկայացուցիչը, խոսելով Դիմողների՝ նախընտրական քարոզչության ժամանակ ատելության խոսքի, բռնության կոչերի, բռնության կիրառման սպառնալիքների մասին, նշում է, որ ԿԸՀ-ն իր 14.06.2026 թ. N 258-Ա որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ «խոսքի ազատությունը բարձրագույն արժեք է, որի պահպանումը հատկապես կարևոր է քարոզարշավների ժամանակ, այդուհանդերձ, արձանագրում է, որ այն չի կարող մեկնաբանվել որպես բացարձակ իրավունք: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդգծում է, որ թեկնածուների կողմից հնչեցվող խոսքում, հրապարակային ելույթներում և այլ քարոզչական նյութերում հնարավոր քրեական պատասխանատվության հանգեցնող կոչերն ու հայտարարությունները ենթակա են գնահատման իրավապահ մարմինների կողմից և կարող են հանդիսանալ այլ վարույթների առարկա»:

ժբ. Ինչ վերաբերում է Դիմողների այն փաստարկին, որ քվեարկությանը մասնակցած 79.125 ՀՀ քաղաքացու դեպքում անձնագրերը մուտքագրվել են մասնագետի կողմից ստեղնաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու արդյունքում, ԿԸՀ ներկայացուցիչը հարկ է համարում ընդգծել՝ Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե ընտրողի կողմից

ներկայացված անձը հաստատող փաստաթուղթը տեխնիկական սարքավորման կողմից չի ընթերցվում, կամ ընտրողը ներկայացրել է անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթ, ապա մասնագետը ստեղնաշարով ներմուծում է ներկայացված փաստաթղթում ամրագրված անձնագրի կամ նույնականացման քարտի համարը տեխնիկական սարքավորման մեջ:

ԿԸՀ ներկայացուցիչը պնդում է, որ Ընտրական օրենսգիրքը միանշանակ հնարավոր և թույլատրելի է համարում մասնագետի կողմից ստեղնաշարի միջոցով անձը հաստատող փաստաթղթի տվյալների ներմուծում տեխնիկական սարքավորման մեջ: Ավելին, տեխնիկական սարքավորման ծրագիրը պարունակում է համապատասխան ծրագրային լուծում, որի պարագայում անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղնաշարի միջոցով ներմուծելիս միանում է ձայնային ազդանշան, իսկ Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովը, եթե տեխնիկական սարքավորումն անխափան աշխատել է քվեարկության ընթացքում, ապա Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորման միջոցով տպում է տեղեկանք, որում նշվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի և ընտրական տեղամասի համարները, տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների հերթական համարը համապատասխան ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում: Տեղեկանքը պետք է պարունակի նշում այն ընտրողների վերաբերյալ, որոնց գրանցումն իրականացվել է անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղնաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու միջոցով: Առկա չէ որևէ տեղամաս, որտեղ տեխնիկական սարքավորման միջոցով չի տպվել տեղեկանք, ինչպես նաև առկա չէ որևէ դիմում, որ նշված տեղեկանքը չի տրամադրվել իրավասու սուբյեկտներին:

ժգ. Անդրադառնալով Դիմողների այն փաստարկին, ըստ որի՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական շտաբների համար անհատույց տրամադրված տարածքները հայտարարագրերում ներառվել են շուկայականից էականորեն ցածր արժեքներով, և եթե դրանց իրական շուկայական արժեքը ներառվեր հայտարարագրերում, ապա կգերազանցվեր Ընտրական օրենսգրքով սահմանված նախընտրական հիմնադրամի սահմանաչափը, ԿԸՀ ներկայացուցիչը հայտնել է, որ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը 13.06.2026 թ. ԿԸՀ-ին ներկայացրած եզրակացությամբ փաստել է, որ ընտրություններին մասնակցած բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված՝ նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել, և դրանք

համապատասխանում են Ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:

Ժդ. ԿԸՀ ներկայացուցիչը, վկայակոչելով Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 15-րդ մասը, արձանագրում է, որ ԿԸՀ-ի կողմից «Միասնության թևեր» կուսակցության դիմումը՝ ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջով, ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակում քննարկելը և 14.06.2026 թ. N 258-Ա որոշմամբ այդ դիմումում նշված հանգամանքներին անդրադառնալն իրավաչափ է, բխում է Ընտրական օրենսգրքի պահանջներից:

Ժե. Անդրադառնալով «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի դիմումում նշված այն պնդմանը, համաձայն որի՝ ԿԸՀ-ն չի գնահատել անվավեր քվեաթերթիկների աննախադեպ թիվը, անճշտությունների չափը, վերահաշվարկներով բացահայտված անհամապատասխանությունները, առանձին տեղամասերում արդյունքների անվավեր ճանաչման փաստերը և դրանց համակցված ազդեցությունը ընտրողի կամքի ազատ արտահայտման ու արդյունքների վստահելիության վրա, ԿԸՀ ներկայացուցիչը հարկ է համարում նշել, որ անվավեր քվեաթերթիկների քանակի համեմատաբար ավելի բարձր լինելու փաստը զուտ թվային ցուցանիշ է: Այս հարցը գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք առանցքային հանգամանքներ.

- փոխվել են տեղամասում քվեաթերթիկների վավերականությանը ներկայացվող պահանջները և դրանց տեսակավորման կարգը: Մասնավորապես՝ մինչև 2026 թվականի ապրիլ ամիսն անցկացվող ընտրությունների ժամանակ տեղամասում քվեարկության արդյունքներն ամփոփելիս չսահմանված նմուշի քվեաթերթիկները հաշվի չէին առնվում և չէին հաշվարկվում, իսկ նոր կարգավորումների «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի (ՀՕ-95-Ն) համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է տեղամասում քվեարկության արդյունքներն ամփոփելիս սահմանված նմուշի մարված քվեաթերթիկները հաշվարկել որպես անվավեր, ինչն էլ արձանագրվել է:

ԿԸՀ ներկայացուցիչն արձանագրում է, որ տոկոսային արտահայտությամբ անվավեր քվեաթերթիկների ցուցանիշը էականորեն չի տարբերվում վերջին ընտրություններից: Օրինակ՝ Երևանի ավագանու 2023 թվականի ընտրություններում անվավեր քվեաթերթիկների ցուցանիշը կազմել է 1.06%, իսկ 2026 թվականի Ազգային ժողովի ընտրություններում՝ 1.15%: Այսինքն՝ աճը կազմել է ընդամենը 0.09 տոկոսային կետ:

Ժզ. ԿԸՀ ներկայացուցիչը հայտնում է նաև, որ ընտրական տեղամասերում ընտրողների մասնակցությունը գրանցվում է երկու անկախ մեխանիզմներով, որոնք

նախատեսված են որպես փոխադարձ վերահսկողության գործիք՝ հնարավոր խախտումները բացահայտելու նպատակով, այլ ոչ թե զուտ թվաբանական տարբերություններ արձանագրելու համար:

Օրենսդրությունն ինքնին չի դիտարկում տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների և ստորագրությունների թվերի հնարավոր տարբերությունը որպես իրավական խնդիր, և դա չի հաշվարկվում որպես անճշտություն: Նույնիսկ եթե առանձին տեղամասերում նման տարբերություններ արձանագրվել են, դա ինքնին չի կարող գնահատվել որպես քվեարկության արդյունքների վրա ազդեցություն ունեցող հանգամանք:

Բոլոր 1996 ընտրական տեղամասերում կիրառված տեխնիկական սարքավորումների միջոցով տպվել է համապատասխան տեղեկանքը, որը յուրաքանչյուր տեղամասի համար պարունակել է արդեն իսկ նշված տվյալները: Միաժամանակ հրապարակվել են ընտրողների ստորագրած ցուցակները, որոնց միջոցով հնարավոր է պարզել, թե կոնկրետ որ ընտրողներն են ստորագրել և մասնակցել քվեարկությանը:

ԿԸՀ ներկայացուցչի դիտարկմամբ՝ չի ներկայացվել նույնիսկ մեկ կոնկրետ դեպք, փաստ, որ անձը չի մասնակցել ընտրությանը, սակայն նրա մասնակցությունը գրանցվել է: Նման ուսումնասիրություն իրականացնելու հնարավորություն ունեցել են ինչպես Դիմողները, այնպես էլ յուրաքանչյուր ոք, ով ցանկացել է իրականացնել ընտրական գործընթացի հանրային վերահսկողություն: Չի բացառվում, որ առանձին տեղամասերում գրանցվել են դեպքեր, երբ ընտրողը գրանցվել է տեխնիկական սարքավորման միջոցով և շրջանցել է հաջորդ քայլը և չի ստորագրել ընտրողների ցուցակում ու անմիջապես մոտեցել է քվեաթերթիկների համար պատասխանատու հանձնաժողովի անդամին և ստացել քվեաթերթիկներն ու անցել է քվեախցիկ՝ քվեարկելու: Սակայն, եթե նույնիսկ նման դեպքեր եղել են, դրանք կարող էին լինել բացառապես եզակի դեպքեր և չեն կարող ազդել ընտրությունների արդյունքների վրա:

ԿԸՀ ներկայացուցիչը գտնում է, որ թեև նման բացթողումներն արդարացված չեն, այնուամենայնիվ, դրանք չեն կարող զուտ մեխանիկական թվաբանական տարբերությունների հիման վրա որակվել որպես ընտրախախտումներ կամ առավել ևս՝ որպես ընտրության արդյունքների վրա ազդեցություն ունեցած հանգամանքներ: Դրանք առավելագույնը կարող են գնահատվել որպես ընթացակարգային կամ ձևական բնույթի բացթողումներ: Ցանկում ներառված են նաև 10/51 ընտրական տեղամասի տվյալները, մինչդեռ այդ տեղամասի քվեարկության արդյունքները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել են անվավեր: Ավելին, այն հանգամանքը, որ այդ տեղամասում քվեարկել են զինվորականներ, դիմումատուին հայտնի էր: ԿԸՀ ներկայացուցիչը պնդում է, որ Դիմողը նաև տեղյակ

էր, որ զորամասերում կազմվող ընտրողների ցուցակները հրապարակման ենթակա չեն, հետևաբար՝ իր կողմից հաշվարկված ստորագրությունների թվի մեջ այդ տվյալները չէին կարող ներառված լինել:

ԿԸՀ ներկայացուցիչը, վերոգրյալի հաշվառմամբ, գտնում է, որ ներկայացված թվերը և ենթադրյալ տարբերությունների ներկայացումը կարող են ունենալ երկու հնարավոր բացատրություն.

- կամ ներկայացված տվյալները բավարար չափով ստուգված, ճշգրտված և վերլուծված չեն եղել, որ հնարավոր լիներ ներկայացվել որպես ապացույց Բարձր դատարանում,
- և/կամ դրանք ներկայացնելն ունեցել է առավելապես հանրային և քաղաքական ազդեցություն գործադրելու նպատակ՝ փորձելով ձևավորել ընտրական տեղամասերում զանգվածային խախտումների կամ, դիմումատուի ձևակերպմամբ, «կեղծիքների» վերաբերյալ հանրային տպավորություն:

ժէ. ԿԸՀ ներկայացուցիչը, խոսելով «Միասնության թևեր» կուսակցության դիմումում բերված տվյալների մասին, նշել է.

- 34/63 ընտրական տեղամասում «Միասնության թևեր» կուսակցությունն ստացել է 9 ձայն: Նշված տեղամասի արդյունքները ենթարկվել են վերահաշվարկի, որի արդյունքում կուսակցության ստացած ձայների թիվը չի փոփոխվել: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած թե՛ նախնական, թե՛ վերջնական աղյուսակավորումներում նշված է նույն՝ 9 ձայնը:
- 6/9 ընտրական տեղամասում նախնական աղյուսակավորման համաձայն՝ «Միասնության թևեր» կուսակցությունն ստացել է 23 ձայն: Տեղամասը ենթարկվել է վերահաշվարկի, որի արդյունքում կուսակցության ստացած ձայների թիվն ավելացել է 1-ով և կազմել 24 ձայն: Վերջնական աղյուսակավորման մեջ նույնպես նշված է 24 ձայն:
- 22/10 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների ամփոփման արձանագրության համաձայն՝ «Միասնության թևեր» կուսակցությունը ստացել է 5 ձայն: Նույն ցուցանիշն արտացոլված է թե՛ նախնական, թե՛ վերջնական աղյուսակավորումներում՝ 5 ձայն:
- 6/19 ընտրական տեղամասում «Միասնության թևեր» կուսակցությունն ստացել է 19 ձայն: Տեղամասի արդյունքները ենթարկվել են վերահաշվարկի, որի արդյունքում կուսակցության ստացած ձայների թիվը չի փոփոխվել: Թե՛ նախնական, թե՛ վերջնական աղյուսակավորումներում նշված է նույն՝ 19 ձայնը:

ժը. ԿԸՀ ներկայացուցիչը, անդրադառնալով վերահաշվարկներին, արձանագրել է, որ, ընդհանուր առմամբ, 2005 ընտրական տեղամասերից 637-ում (կամ տեղամասերի շուրջ 32 տոկոսում) իրականացվել է քվեարկության արդյունքների վերահաշվարկ: Բոլոր այն տեղամասերում, որտեղ որևէ կուսակցություն կամ դաշինք

ներկայացրել է վերահաշվարկի պահանջ, վերահաշվարկ իրականացվել է: Մասնավորապես՝ Երևան քաղաքում 478 տեղամասերից 319-ում (կամ տեղամասերի շուրջ 67 տոկոսում) իրականացվել է վերահաշվարկ: ԿԸՀ մոտեցումն ու հորդորը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին եղել է հետևյալը. ինչպես իրենց նախաձեռնությամբ, այնպես էլ ցանկացած շահագրգիռ անձի կողմից ներկայացված թեկուզ փոքրագույն կասկածի դեպքում հնարավոր անճշտությունները կամ կասկածները չպետք է անտեսվեն, և անհրաժեշտության դեպքում պետք է իրականացվի վերահաշվարկ:

ժթ. Վերահաշվարկների ամբողջ ընթացքը բոլոր 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում հեռարձակվել է առցանց, եղել է բաց և թափանցիկ, հրապարակվել են նաև վերահաշվարկների վերաբերյալ արձանագրությունների տվյալները: Ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկի աշխատանքներին ներկա են գտնվել և հետևել են վստահված անձինք, դիտորդներ, ԶԼՄ ներկայացուցիչներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային քննարկումների ընթացքում լայն արձագանք էր ստացել թիվ 12/20, 27/07, 27/26 և 38/53 ընտրական տեղամասերի տվյալների սխալ մուտքագրման հանգամանքը, ԿԸՀ ներկայացուցիչն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ այդ ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքները վերահաշվարկվել են, և վերահաստատվել են արձանագրված արդյունքները:

ԿԸՀ ներկայացուցիչն արձանագրում է, որ ընդամենը 4 տեղամասերում նախնական մուտքագրման ընթացքում տեխնիկական վրիպակ է եղել՝ տվյալների մեկ տողով վեր կամ վար մուտքագրելու հետևանքով, բայց սխալ հաշվարկի մասին խոսք լինել չի կարող: Քվեարկության նախնական արդյունքներն ամփոփելուց հետո բոլոր 2005 ընտրական տեղամասերի արձանագրությունները, այդ թվում նաև 637 վերահաշվարկվածներինը, մեկ առ մեկ ստուգվել են:

ԿԸՀ ներկայացուցիչը հատկանշական է նաև համարում այն, որ այս ընտրությունների ընթացքում առաջին անգամ կիրառվել է Ընտրական օրենսգրքով ԿԸՀ-ին վերապահված՝ վերահաշվարկ պահանջելու լիազորությունը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պահանջով վերահաշվարկ է իրականացվել 59 ընտրական տեղամասերում: Վերահաշվարկ պահանջելու հիմք են հանդիսացել ոչ միայն ԿԸՀ-ի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված հանգամանքները (մասնավորապես՝ մեծ թվով անճշտություններ, քվեարկությանը մասնակցած ընտրողների և վավեր ու անվավեր քվեաթերթիկների թվերի անհամապատասխանություններ, անվավեր քվեաթերթիկների բարձր տոկոս և այլն), այլև ԿԸՀ-ում քաղաքական ուժերից ստացած դիմումները:

Այսպիսով, ԿԸՀ ներկայացուցիչն արձանագրում է, որ վերջնական արձանագրություններում և վերջնական աղյուսակավորման մեջ արտացոլված

տվյալներն արժանահավատ և ճշգրտված արդյունքներ են, իսկ Բարձր դատարան ներկայացված դիմումներում, ինչպես նաև այլ հրապարակումներում առկա չէ որևէ տվյալ, փաստ կամ հանգամանք, որը կարող էր կասկածի տակ դնել դրանց հավաստիությունը:

ի. ԿԸՀ ներկայացուցիչը հայտնում է, որ Ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները ԿԸՀ սահմանած կարգով մուտքագրում է համակարգիչ՝ հատուկ համակարգչային ծրագրի միջոցով, և քվեարկության ավարտից հետո ընդամենը մի քանի ժամվա ընթացքում 2005 ընտրական տեղամասերում մշակվել է շուրջ 1.5 միլիոն քվեաթերթիկ, իսկ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում նույն ժամանակահատվածում մուտքագրվել է շուրջ 70 000 տվյալ:

ԿԸՀ ներկայացուցիչը հավելում է, որ թե՛ տեղամասային, թե՛ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում այդ աշխատանքներն իրականացվել են երկար, բարդ և աննախադեպ ծանրաբեռնված աշխատանքային օրվա ավարտից անմիջապես հետո: Նման պայմաններում մարդկային գործոնով պայմանավորված առանձին վրիպակների հնարավորությունը բացառել հնարավոր չէ:

Միաժամանակ ԿԸՀ ներկայացուցիչն ընդգծում է, որ հետագայում իրականացված վերահաշվարկների, ճշգրտումների և տվյալների վերամուտքագրման արդյունքում բոլոր հնարավոր վրիպակները շտկվել են:

ԿԸՀ ներկայացուցիչն ընդունելի չի համարում Բարձր դատարանում որպես հիմնավորում այնպիսի հանգամանքներ ներկայացնելը, որոնք հետագայում ամբողջությամբ շտկվել են և որևէ ազդեցություն չեն ունեցել ընտրությունների արդյունքների վրա: Ավելին, նման փաստարկների շահարկումը անտեսում և ստվերում է ընտրական հանձնաժողովների հազարավոր անդամների կողմից իրականացված ծավալուն, պատասխանատու և չափազանց ծանր աշխատանքը, որի արդյունքում ընտրությունների արդյունքները սահմանված ժամկետներում և օրենքով նախատեսված կարգով ամփոփվել են:

Անդրադառնալով ԿԸՀ-ի կողմից որևէ տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու և դրանից հետո վերաքվեարկություն նշանակել-չնշանակելու հարցերին՝ ԿԸՀ ներկայացուցիչը պարզաբանում է, թե ինչու է ԿԸՀ-ն հատուկ ուսումնասիրել թիվ 10/51 և 35/65 ընտրական տեղամասերի քվեարկության օրինականությունը: 2026 թվականի հունիսի 7-ի Ազգային ժողովի հերթական ընտրությունների քվեարկության ավարտից անմիջապես հետո, ինչպես նաև հաջորդ երկու օրերին մամուլում և սոցիալական ցանցերում երեք տեղամասերում զինվորների

քվեարկության հետ կապված տարբեր պնդումներ և հանգամանքներ էին հրապարակվում: Դրանք էին թիվ 10/51, 20/56 և 35/65 տեղամասերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրապարակված հնարավոր խախտումների մասին պնդումները կարող էին ստվերել ողջ ընտրությունների արդյունքները, ԿԸՀ-ն ուսումնասիրել է վերը նշված երեք ընտրական տեղամասերի քվեարկության կազմակերպման ընթացքը՝ հնարավոր խախտումները բացահայտելու և գնահատելու նպատակով: Արդյունքում երկուսի՝ թիվ 10/51 և 35/65 ընտրական տեղամասերի պարագայում խախտումների առկայությունը հաստատվել է. մի դեպքում՝ քվեարկությունն օրենքով նախատեսվածից 1 ժամ 22 րոպե, իսկ մյուս դեպքում՝ 3 ժամ 38 րոպե ավելի երկար է տևել: Իսկ թիվ 20/56 ընտրական տեղամասի դեպքում քվեարկությունն ավարտվել է հունիսի 7-ին՝ ժամը 20:22-ին, ինչը ԿԸՀ-ի կողմից գնահատվել է իրավաչափ:

Արդյունքում՝ ԿԸՀ 11.06.2026 թ. թիվ 254-Ա և թիվ 255-Ա որոշումներով անվավեր ճանաչվեցին թիվ 10/51 և 35/65 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները: Թիվ 12/13 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքներն անվավեր են ճանաչվել թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ:

ԿԸՀ ներկայացուցիչը գտնում է, որ վերոնշյալ երեք ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու հանգամանքը Դիմողների կողմից ներկայացվում է աղճատված, իրական փաստերի և հանգամանքների հետ կապ չունեցող փաստարկների ու պնդումների լույսի ներքո:

իա. ԿԸՀ ներկայացուցիչը պնդում է, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության՝ ԿԸՀ-ին վերաբերող փաստարկները, դրանց կցված թվային տվյալներն իրականության հետ կապ չունեն, անհիմն են և կեղծ, և հավելում, որ թիվ 254-Ա և թիվ 255-Ա որոշումները ԿԸՀ-ն ընդունել է հունիսի 11-ին, այդ ժամանակ վերահաշվարկի գործընթացը դեռևս շարունակվում էր, այն ավարտվել է հաջորդ օրը՝ հունիսի 12-ին՝ ժամը 14:00-ին: Այսինքն՝ նախորդ օրը որոշումներ կայացնելիս «վերահաշվարկի արդյունքներ», որպես այդպիսին, ոչ ԿԸՀ-ն և ոչ էլ որևէ մեկը չի ունեցել և չէր էլ կարող ունենալ: Վերահաշվարկի, ըստ այդմ նաև՝ ընդհանուր ընտրությունների արդյունքների ճշգրտված ամբողջական տվյալները մուտքագրվել և հանրագումարի են բերվել հունիսի 12-ի երեկոյան՝ ժամը 23:00-ի սահմաններում:

ԿԸՀ-ն հունիսի 11-ի թիվ 254-Ա և թիվ 255-Ա որոշումները կայացրել է, քանի որ խնդրո առարկա ընտրական տեղամասերում քվեարկության ընթացքում Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կոպիտ խախտման փաստեր են արձանագրվել, որոնց պարագայում քվեարկության օրինական, իրական արդյունքները հնարավոր չէ պարզել: Վարչական դատարանի որոշումներով ևս հաստատվել է ԿԸՀ թիվ 254-Ա և թիվ 255-Ա որոշումների իրավաչափ լինելը:

ԿԸՀ ներկայացուցիչը գտնում է, որ Դիմողների այն մոտեցումը, որ թիվ 10/51 և 35/65 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները պետք է բացառապես համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներն անվավեր ճանաչեին, չի բխում Ընտրական օրենսգրքի կարգավորումներից: Օրենսդիրը հստակ տարանջատել է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների այն որոշումները, որոնք ԿԸՀ-ն իրավունք չունի վերահսկողության կարգով և իր նախաձեռնությամբ վերանայելու, դրանք տեղական ինքնակառավարման մարմինների (բացառությամբ Երևանի ավագանու) ընտրությունների արդյունքներով ընդունված, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակները, թեկնածուներին գրանցելու, գրանցումը մերժելու, գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումներն են:

ԿԸՀ ներկայացուցիչը նաև հայտնում է, որ նշված երեք ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին որոշումները և կից նյութերը ուղարկվել են դատախազություն:

ԿԸՀ ներկայացուցիչն արձանագրում է, որ թիվ 10/51, 12/13 և 35/65 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու որոշումներն իրավաչափ են և բխում են Ընտրական օրենսգրքի պահանջներից:

Հետևապես՝ ԿԸՀ ներկայացուցիչը գտնում է, որ ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելուց հետո դրանցում անվերապահորեն վերաքվեարկություն նշանակելու՝ Դիմողների պահանջը փաստարկված չէ, հիմնավոր չէ և հակասում է Ընտրական օրենսգրքին, քանզի առանձին տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու համար անհրաժեշտ է, որ դրանցում տեղի ունեցած խախտումները ԿԸՀ-ն գնահատի որպես ընտրությունների արդյունքների վրա ազդող:

ԿԸՀ ներկայացուցիչն արձանագրում է, որ ընտրությունների արդյունքներով անճշտությունների թիվը կազմել է 4331 (չորս հազար երեք հարյուր երեսունմեկ), որից 3395-ը (երեք հազար երեք հարյուր իննսունհինգ) անվավեր ճանաչված երեք ընտրական տեղամասերի քվեարկության մասնակիցների թվերի հանրագումարն է: Կողմ քվեարկված քվեաթերթիկների 1 456 740 (մեկ միլիոն չորս հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր քառասուն) և 4331 (չորս հազար երեք հարյուր երեսունմեկ) անճշտությունների հանրագումարը կազմում է 1 461 071 (մեկ միլիոն չորս հարյուր վաթսունմեկ հազար յոթանասունմեկ), որի չորս տոկոսը կազմում 58 442,84 (հիսունութ հազար չորս հարյուր քառասուներկու ամբողջ ութսունչորս հարյուրերորդական): Այսինքն՝ անցողիկ շեմը հաղթահարելու նպատակով կուսակցությունները պետք է ստանային առնվազն 58 443 (հիսունութ հազար չորս հարյուր քառասուներեք) քվե, իսկ կուսակցությունների դաշինքներն այս դեպքում անցողիկ շեմը կարող էին հաղթահարել առնվազն 116 886 (հարյուր տասնվեց հազար

ութ հարյուր ութսունվեց) քվեի պարագայում: Նշված թվային տվյալներով անցողիկ շեմը հաղթահարում են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքը և «Հայաստան» կուսակցությունների դաշինքը:

ԿԸՀ ներկայացուցիչը պնդում է, որ երեք ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքների անվավեր ճանաչելու թվային ազդեցությունը գնահատելու համար ընդհանուր անճշտությունների թվից պետք է հանել երեք ընտրական տեղամասերի քվեարկության մասնակիցների թիվը, որը կազմել է 3395 (երեք հազար երեք հարյուր իննսունհինգ): Արդյունքում՝ անճշտությունների թիվն առանց երեք ընտրական տեղամասերի անվավեր ճանաչման ազդեցության կկազմեր 936 (ինը հարյուր երեսունվեց): Կողմ քվեարկված քվեաթերթիկների 1 456 740 (մեկ միլիոն չորս հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր քառասուն) և 936 (ինը հարյուր երեսունվեց) անճշտությունների հանրագումարը կազմում է 1 457 676 (մեկ միլիոն չորս հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր յոթանասունվեց): Այս դեպքում չորս տոկոսի անցողիկ շեմը կազմում է 58 307,04 (հիսունութ հազար երեք հարյուր յոթ ամբողջ չորս հարյուրերորդական) քվե, իսկ 8 տոկոսը՝ 116 614,08 (հարյուր տասնվեց հազար վեց հարյուր տասնչորս ամբողջ ութ հարյուրերորդական) քվե: Նշված թվային տվյալների պարագայում անցողիկ շեմը կրկին հաղթահարում են միայն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքը և «Հայաստան» կուսակցությունների դաշինքը, քանի որ նրանց հաջորդ ամենաշատ քվե ստացած «Բարգավաճ Հայաստան» կուսակցության կողմ ձայների թիվը կազմում է 58 287 (հիսունութ հազար երկու հարյուր ութսունյոթ) և չի բավարարում անցողիկ շեմը հաղթահարելու համար:

ԿԸՀ ներկայացուցիչը գտնում է, որ ԿԸՀ-ի կողմից որևէ տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելուց հետո անհրաժեշտ է գնահատել, թե տվյալ խախտման իրավական հետևանքներից որն է իրականում ունակ վերականգնելու ընտրողների ազատ, հավասար և իրական կամարտահայտությունը: Ընտրական վեճի նպատակը չի կարող լինել միայն խախտմանն արձագանքելը՝ անկախ այդ արձագանքի հետևանքներից: Ընտրական վեճի լուծման նպատակը պետք է լինի ընտրողների իրական կամքի պաշտպանությունը, ընտրությունների արդյունքի լեգիտիմության ապահովումը և այնպիսի միջոցի ընտրությունը, որը չի ստեղծում ավելի մեծ աղավաղում, քան այն խախտումը, որի հետևանքն անհրաժեշտ է վերացնել:

ԿԸՀ ներկայացուցիչը պնդում է, որ վերաքվեարկություն նշանակելը չի կարող դիտվել որպես քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մեխանիկական հետևանք: Վերաքվեարկությունն իրավաչափ և հիմնավորված կարող է լինել միայն այն դեպքում, երբ կոնկրետ պայմաններում կարող է ապահովել ընտրությունների

իրական արդյունքը՝ ազատ և հավասար ընտրական իրավունքի սկզբունքների հաշվառմամբ: Եթե վերաքվեարկությունը տեղի է ունենալու այնպիսի պայմաններում, որտեղ ընտրողների կամքի ձևավորման միջավայրն արդեն փոփոխված է, ընտրությունների համընդհանուր արդյունքը հայտնի է, ընտրողների որոշակի խումբ հայտնվում է մյուս ընտրողներից էապես տարբեր տեղեկատվական և քաղաքական ազդեցության պայմաններում, իսկ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացրած տեղեկատվության համատեքստում ընտրական գործընթացում առկա ապօրինի կամ կոռուպցիոն ազդեցության մեխանիզմներն ամբողջությամբ չեն չեզոքացվել, և դրանց մեծածավալ լինելու պայմաններում առկա է դրանց կրկնության ռիսկ, ապա անհրաժեշտ է գնահատել՝ արդյոք որոշակի տեղամասերում ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչվելուց հետո այնտեղ վերաքվեարկություն նշանակելը կարող է ուղղված լինել անձանց ընտրական իրավունքի պաշտպանությանը, թե՝ ոչ:

ԿԸՀ ներկայացուցիչը շեշտում է, որ երբ քվեարկությանը մասնակցած ընտրողներն իրենց քվեն տվել են այն պահին, երբ ընտրությունների արդյունքը հայտնի չէր, իսկ հետագայում միայն որոշ տեղամասերի ընտրողներ պետք է քվեարկեն արդեն հայտնի ընդհանուր արդյունքի պայմաններում, առաջանում է ազատ և հավասար ընտրական իրավունքի իրացման խնդիր: Քվեարկությանը մասնակցած ընտրողները գործել են անորոշության պայմաններում. նրանք չգիտեին ընտրությունների վերջնական արդյունքը, և դա կախված էր իրենց քվեից: Անհայտ էին նաև ընտրվող ուժերի հարաբերակցությունը, ձայների տարբերությունը, մանդատների հնարավոր բաշխումը կամ իրենց ձայնի կոնկրետ հաշվարկային ազդեցությունը վերջնական արդյունքի վրա: Մինչդեռ վերաքվեարկության մասնակից ընտրողներն արդեն կարող են կանխատեսել, թե քանի ձայն է անհրաժեշտ ընտրությունների արդյունքը փոխելու կամ, տեղին է ասել՝ խմբագրելու համար: Նման պայմաններում վերաքվեարկությունն այլևս չի կարող լինել նույն ընտրության բնական շարունակությունը, այլ կվերածվի երկրորդային, հաշվարկված և թիրախավորված քաղաքական գործընթացի՝ հանգեցնելով, ինչպես ընդունված է ասել՝ տակտիկական քվեարկության (tactical voting):

ԿԸՀ ներկայացուցիչը գտնում է, որ խնդիրը չի լուծվում միայն այն հանգամանքով, որ քվեարկությունը կմնա գաղտնի: Գաղտնի քվեարկությունը պաշտպանում է քվեի չբացահայտումը, բայց չի չեզոքացնում այն քաղաքական, տեղեկատվական միջավայրը, որի պայմաններում ընտրողը պետք է գնա քվեարկության: Ընտրությունը կարող է լինել գաղտնի, բայց միաժամանակ չլինել ազատ, եթե ընտրողի կամքի ձևավորման պայմաններն արդեն կառուցված են հայտնի արդյունքի, թիրախային մոբիլիզացիայի և կոնկրետ ձայների հաշվարկի շուրջ: Հետևաբար՝ ազատ ընտրական իրավունքի գնահատման ժամանակ պետք է

դիտարկել ոչ միայն քվեախցիկի գաղտնիությունը, այլ նաև այն, թե ընտրողն ինչպիսի միջավայրում է:

ԿԸՀ ներկայացուցիչը պնդում է, որ եթե հիմնական քվեարկությանը մասնակցած ընտրողներն իրենց կամքն արտահայտել են անորոշության պայմաններում, իսկ հետո առանձին տեղամասում կամ ընտրատարածքում հայտնի արդյունքի պայմաններում նշանակվում է վերաքվեարկություն, ապա այդ վերաքվեարկությունը կարող է երկրորդային և հաշվարկված ազդեցություն ունենալ արդեն օրինական ճանապարհով արտահայտված ընտրողների կամքի վրա: Այսինքն՝ հարցը միայն այն չէ, թե արդյոք վերաքվեարկության մասնակիցը կարող է քվեարկել. հարցը նաև այն է, թե արդյոք վերաքվեարկության միջոցով չի խաթարվում մնացած ընտրողների արդեն օրինական արտահայտած կամքը:

ԿԸՀ ներկայացուցիչը, մեջբերելով Վենետիկի հանձնաժողովի մոտեցումը, նշում է, որ ընտրությունների արդյունքների չեղարկման հիմնական չափանիշը պետք է լինի այն, թե արդյոք խախտումները կարող էին ազդել ընտրությունների արդյունքի վրա: Արդյունքների ամբողջական կամ մասնակի չեղարկումը, ինչպես նաև դրանից բխող հետագա միջոցները պետք է դիտվեն որպես բացառիկ և համաչափ միջամտություններ: Ընտրական մարմինը պարտավոր է ընտրել այնպիսի միջոց, որն անհրաժեշտ է, համաչափ և նվազագույն միջամտությամբ պաշտպանում է ընտրողների իրական կամքը: Եթե տեղամասի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելը չի փոխում հաղթողին, մանդատների բաշխումը, ընտրական շեմի հաղթահարման հարցը կամ առաջացնում ընտրությունների այլ իրավական հետևանք, ապա այդ դեպքում վերաքվեարկությունը կարող է չծառայել վերջնական իրավական արդյունքի վերականգնմանը, այլ միայն ստեղծել նոր քաղաքական և իրավական ռիսկեր:

ԿԸՀ ներկայացուցիչը, մեջբերելով նաև միջազգային համեմատական փորձը, նշում է, որ տարբեր երկրներում ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելը կամ ընտրական խախտումների արձանագրումը միշտ չէ, որ ինքնաբերաբար հանգեցրել է վերաքվեարկության: Որոշ դեպքերում կիրառվել է վերահաշվարկ կամ մանդատների բաշխման վերանայում, որոշ դեպքերում՝ ավելի լայն ընտրական գործընթացի վերսկսում, իսկ որոշ դեպքերում՝ մասնակի վերաքվեարկություն, բայց միայն այն դեպքում, երբ այն համարվել է անհրաժեշտ և համաչափ: Այս փորձից բխող հիմնական սկզբունքն այն է, որ իրավասու մարմինը պետք է ընտրի ամենաարդյունավետ և համաչափ միջոցը:

ԿԸՀ ներկայացուցիչն արձանագրում է, որ եթե նույնիսկ որոշ ընտրական միավորների նախնական արդյունքների իմացությունը կարող է ազդել դեռ չքվեարկած ընտրողների վարքագծի վրա, ապա առավել ևս ակնհայտ է, որ ամբողջ ընտրությունների արդյունքի հայտնի լինելու պայմաններում առանձին երեք

տեղամասերում վերաքվեարկությունը կարող է չվերարտադրել սկզբնական ազատ և հավասար ընտրական միջավայրը: Այդ դեպքում ընտրողները և քաղաքական ուժերը գործում են արդեն հայտնի արդյունքի, հայտնի ձայների տարբերության և կոնկրետ հաշվարկային նպատակի պայմաններում, ինչն առաջացնում է տակտիկական քվեարկության օբյեկտիվ ռիսկ: Հետևաբար՝ երբ արդեն հայտնի է ամբողջ ընտրական արդյունքը, առանձին տեղամասում վերաքվեարկության տակտիկական ազդեցության ռիսկը միանշանակ է և ակնհայտ:

ԿԸՀ ներկայացուցիչը վերոնշյալի համատեքստում գտնում է, որ ԿԸՀ-ն որևէ տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելուց հետո պետք է ոչ թե անմիջապես անցնի վերաքվեարկության նշանակմանը, այլ նախ բովանդակային գնահատի մի քանի փոխկապակցված հանգամանքներ: Գնահատումը ցույց է տալիս, որ վերաքվեարկությունը տեղի է ունենալու արդեն հայտնի արդյունքի պայմաններում, ստեղծելու է տակտիկական քվեարկության ռիսկ, վերաքվեարկության մասնակիցները գտնվելու են այլ տեղեկատվական և քաղաքական պայմաններում, և նման պայմաններում վերաքվեարկությունը չի կարող համարվել ազատ և հավասար ընտրական իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց: Նման պայմաններում վերաքվեարկություն չնշանակելը չի նշանակում ընտրական խախտումներն անտեսել: Ընդհակառակը՝ վերաքվեարկություն չնշանակելով՝ ԿԸՀ-ն ընտրել է այնպիսի միջոց, որը չի առաջացնի ընտրությունների արդյունքների աղավաղում համընդհանուր արդյունքների համատեքստում:

ԿԸՀ ներկայացուցիչը հաստատում է, որ նման իրավիճակում ԿԸՀ-ն պարտավոր էր առաջնորդվել ոչ թե մեխանիկական վերաքվեարկություն նշանակելու տրամաբանությամբ, այլ Սահմանադրությամբ երաշխավորված ազատ և հավասար ընտրության ապահովման նպատակով, Սահմանադրական դատարանի՝ արդյունքի վրա ազդեցության և օրինական քվեարկած ընտրողների իրավունքների պաշտպանության չափանիշներով, համաչափության ու նվազագույն անհրաժեշտ միջամտության սկզբունքներով՝ հաշվի առնելով Սահմանադրության 194-րդ հոդվածով իրեն տրված մանդատը՝ որպես անկախ պետական մարմին կազմակերպել ընտրություններ և վերահսկողություն իրականացնել դրանց օրինականության նկատմամբ:

ԿԸՀ ներկայացուցիչն արձանագրում է, որ ԿԸՀ գնահատականը, ըստ որի՝ թիվ 10/51, 12/13 և 35/65 ընտրական տեղամասերում քվեարկության ընթացքում տեղի ունեցած խախտումները չեն ազդել 2026 թվականի հունիսի 7-ին տեղի ունեցած ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրությունների արդյունքների վրա, միանշանակ հիմնավոր է:

Ամփոփելով՝ պատասխանող ԿԸՀ ներկայացուցիչը գտնում է, որ ԿԸՀ վիճարկվող որոշումն իրավաչափ է, կայացվել է Ընտրական օրենսգրքի պահանջների

պահպանմամբ, ուստիև՝ խնդրում է ներկայացված դիմումները մերժել, իսկ ԿԸՀ 14.06.2026 թ. թիվ 259-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

13. Հարակից պատասխանողների դիրքորոշումները

13.1. ՀՀ դատախազության դիրքորոշումները

2026 թվականի հունիսի 27-ին Սահմանադրական դատարանում սույն միավորված գործով բանավոր ընթացակարգով դատական նիստի շրջանակներում հարակից պատասխանող՝ ՀՀ դատախազության ներկայացուցիչը ներկայացրել է ներքոնշյալ դիրքորոշումները.

ա. ՀՀ դատախազության ներկայացուցիչը ներկայացնում է Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին առնչվող հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման և լուծման, քրեական վարույթների քննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության շրջանակներում իրականացված միջոցառումների ընթացքի և արդյունքների մասին տեղեկատվություն, համաձայն որի՝ 2026 թվականի հունիսի 24-ի դրությամբ մշակված տվյալների համաձայն՝ ՀՀ դատախազության ստորաբաժանումների դատախազների կողմից հսկողություն է իրականացվել 2026 թվականի հունիսի 7-ի Ազգային ժողովի հերթական ընտրությունների գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հանրապետության նախաքննության մարմիններում ստացված 423 հաղորդման քննարկման և լուծման օրինականության նկատմամբ: Նշված հաղորդումները ստուգվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 178 և 179-րդ հոդվածներով սահմանված կարգով:

բ. ՀՀ դատախազության ներկայացուցիչը նշում է, որ հաղորդումների քննարկման արդյունքում նախաձեռնվել է 332 քրեական վարույթ, որից 7-ը՝ դատախազի հանձնարարությամբ: 91 հաղորդման քննարկման արդյունքում քրեական վարույթ չի նախաձեռնվել: Քննված քրեական վարույթներով դատախազների կողմից հանրային քրեական հետապնդում է հարուցվել 391 անձի նկատմամբ, այդ թվում՝ նախընտրական քարոզչություն կատարելուն խոչընդոտելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 211-րդ հոդվածով), ընտրողի ընտրական իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածով), հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելու կամ դրան օժանդակելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածով), ինչպես նաև փողերի լվացման համար, մեկից ավելի անգամ քվեարկելու փորձի համար (ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածով), քվեարկության գաղտնիությունը խախտելու, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունը խախտելու փորձի համար (ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով), ընտրակաշառք տալու կամ դրան հանցակցելու համար, ինչպես նաև

ընտրակաշառք տալու կամ դրան հանցակցելու և փողերի լվացման համար (ՀՀ քրեական օրենսգրքի 219-րդ հոդվածով), ընտրակաշառք ստանալու կամ դրան հանցակցելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 218-րդ հոդվածով), բարեգործության արգելքը խախտելու կամ դրան հանցակցելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածով):

գ. ՀՀ դատախազության ներկայացուցիչը հավելում է, որ քննարկվող ժամանակահատվածում ձերբակալվել է 370 անձ, որից 74-ը՝ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով, 296-ը՝ ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար: Ձերբակալվածներից միայն 8-ն են ազատ արձակվել՝ կասկածը չհիմնավորվելու հիմքով: Մեղադրյալներից 86-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, մյուս մեղադրյալների նկատմամբ ընտրվել են այլընտրանքային խափանման միջոցներ (տնային կալանք՝ 61, վարչական հսկողություն՝ 26):

Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունների՝ հիմնավոր կասկածի բացակայության հիմքով մերժման դեպքերի վերաբերյալ ՀՀ դատախազության ներկայացուցիչը նշել է, որ կայացված բոլոր դատական ակտերը գտնվում են բողոքարկման փուլում, առկա են նաև դատախազի կողմից ներկայացված բողոքները բավարարելու դեպքեր: Միևնույն ժամանակ վերջինս հարկ է համարել նշել նաև, որ առկա են դեպքեր, երբ նույն վարույթի շրջանակներում միևնույն փաստական տվյալներով տարբեր անձանց վերաբերյալ ներկայացված միջնորդությունների քննարկման արդյունքում կայացվել են իրարից տարբերվող դատական ակտեր:

դ. ՀՀ դատախազության ներկայացուցիչը հայտնում է, որ պատգամավորի 18 թեկնածուների վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվել քրեական հետապնդում հարուցելու և ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու վերաբերյալ միջնորդություններ, որոնցից 15 անձի վերաբերյալ միջնորդությունները բավարարվել են, 3-ը դեռևս չեն քննարկվել: Պատգամավորի 11 թեկնածուի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանքը, 3-ի նկատմամբ՝ տնային կալանքը, 1-ի նկատմամբ՝ վարչական հսկողություն: 5 մեղադրյալի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

ե. 29 քրեական վարույթ 107 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ հանձնվել է իրավասու դատարան: Դրանք են՝ 19 քրեական վարույթ՝ 87 անձի վերաբերյալ ընտրակաշառք տալու, ընտրակաշառք ստանալու, բարեգործության արգելքը խախտելու, ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելու, հավաքին մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելու մեղադրանքով, 1 քրեական վարույթ՝ 3 անձի վերաբերյալ ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելու, դրա փորձի և նախապատրաստության մեղադրանքով, 2 քրեական

վարույթ՝ 5 անձի վերաբերյալ բարեգործության արգելքը խախտելու և դրան օժանդակելու մեղադրանքով, 2 քրեական վարույթ՝ 7 անձի վերաբերյալ հավաքին մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելու մեղադրանքով, 1 քրեական վարույթ՝ 1 անձի վերաբերյալ խուլիգանության, բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, նախընտրական քարոզչություն կատարելուն խոչընդոտելու մեղադրանքով, 1 քրեական վարույթ՝ 2 անձի վերաբերյալ խմբի կազմում, գույքը վնասելու կամ ոչնչացնելու և բռնություն գործադրելու սպառնալիքով ընտրողի ընտրական իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելու մեղադրանքով, 1 քրեական վարույթ՝ 1 անձի վերաբերյալ շանտաժի միջոցով հավաքին մասնակցելուն հարկադրելու մեղադրանքով, 2 քրեական վարույթ՝ 2 անձի վերաբերյալ հավաքներին մասնակցելու համար նյութապես շահագրգռելու մեղադրանքով:

զ. ՀՀ դատախազության ներկայացուցիչը նշում է նաև, որ 18 քրեական վարույթ կարճվել է, որից 13-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի բացակայությունը հաստատվելու, 5-ը՝ անձի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշում կայացվելու հիմքով:

է. ՀՀ դատախազության ներկայացուցիչը, անդրադառնալով Սահմանադրական դատարանում ստացված դիմումներում և Դիմողների ներկայացուցիչների ելույթներում բարձրացված մի շարք հարցերի, որոնք կարող են առնչվել ՀՀ դատախազության սահմանադրական գործառույթների իրականացմանը, հարկ է համարել նշել, որ 2026 թվականի հունիսի 7-ին կայացած Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ Կենտրոնական ընտրական և տեղամասային ընտրական հանձնաժողովներից ՀՀ դատախազություն է ստացվել 10 գրություն՝ 14 հաղորդումների վերաբերյալ: Նշված հաղորդումներից 2-ում առկա են եղել տեղեկություններ հանցագործության հատկանիշներ պարունակող ենթադրյալ արարքների կատարման, մասնավորապես՝ կրթական, մշակութային հաստատությունների աշակերտներին հավաքին մասնակցելուն հարկադրելու ենթադրյալ դեպքերի վերաբերյալ: Նշված հաղորդումներով նախաձեռնվել է 2 քրեական վարույթ, կատարվում է նախաքննություն:

ը. ՀՀ դատախազության ներկայացուցիչը հավելում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից դատախազությունում ստացված գրություններից 2-ը վերաբերել են ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելուն, որոնց քննարկումն ընթացքի մեջ է. «(...) դասղեկի կողմից աշակերտներին հավաքին մասնակցելուն հարկադրելու վերաբերյալ «Միասնության թևեր» կուսակցության ներկայացուցչի կողմից ներկայացված դեպքի վերաբերյալ հանցագործության մասին հաղորդման քննարկման արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, կատարվում է նախաքննություն»:

թ. ՀՀ դատախազության ներկայացուցիչը, խոսելով դիմողների ներկայացուցիչների կողմից նշված՝ բարեգործության արգելքը խախտելու, այդ թվում՝ սոցիալական աջակցության տրամադրման, կենսաթոշակների բարձրացման, առողջության համընդհանուր ապահովագրության, հանրային գույքը քարոզչական նպատակներով օգտագործելու, ընտրողներին առավելություններ խոստանալու և տրամադրելու, պարգևավճարներ տրամադրելու, ընտրական իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելու, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների աշխատակիցների կողմից քարոզարշավի ընթացքում օրինական հավաքներին մասնակցելուն հարկադրելու, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ դեպքերին՝ նշում է, որ դրանց վերաբերյալ ներկայացվել է 36 հաղորդում, որոնց քննարկման արդյունքում քրեական վարույթներ չեն նախաձեռնվել, քանի որ դրանցում նշված տեղեկատվությանը ողջամտորեն հնարավոր չի եղել տալ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական: Միաժամանակ նշված հաղորդումներից 13-ը դրանցում առկա տեղեկությունները ստուգելու համար ուղարկվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու լիազորություն ունեցող մարմիններին:

ժ. ՀՀ դատախազության ներկայացուցիչը նշում է, որ տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչների կողմից ատելության խոսք, ինչպես նաև բռնության կոչեր տարածելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է 2 հաղորդում, որոնց քննարկման արդյունքում վարույթ չի նախաձեռնվել, քանի որ հաղորդմամբ չեն փաստվել հանցագործության հատկանիշներ պարունակելու վերաբերյալ տվյալներ:

ժա. ՀՀ դատախազության ներկայացուցիչը, ամփոփելով խոսքը, արձանագրում է, որ ներկայացված դիմումներում առկա մի շարք պնդումների համաձայն՝ պետական մարմինները պատշաճ չեն արձագանքել առանձին փաստերի և չեն ապահովել դրանց կապակցությամբ համապատասխան ընթացակարգերի իրականացումը, սակայն նշված հարցերի լուծման համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված են հստակ կառուցակարգեր, և կողմերը զրկված չեն այդ ընթացակարգերի շրջանակներում իրենց իրավունքների պատշաճ պաշտպանության հնարավորությունից:

13.2. ՀՀ ներքին գործերի նախարարության դիրքորոշումները

2026 թվականի հունիսի 27-ին Սահմանադրական դատարանում սույն միավորված գործով բանավոր ընթացակարգով դատական նիստի շրջանակներում հարակից պատասխանող՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ներկայացուցիչը ներկայացրել է ներքոնշյալ դիրքորոշումները.

ա. ընտրողների ցուցակներին առնչվող հարցերի վերաբերյալ նշում է, որ ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջներին համահունչ՝ ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից ձեռնարկվել են ընտրողների ռեգիստրը վարելուն, ընտրողների ցուցակների ճշգրիտ կազմմանը, առկա հնարավոր թերությունները հայտնաբերելուն և շտկելուն ուղղված, ինչպես նաև այլ անհրաժեշտ միջոցառումներ՝ օրենսդրի կողմից թույլատրված գործիքակազմի ողջ ծավալով: Ընդ որում՝ այդ աշխատանքներն ուղեկցվել են իրավասու մարմինների, այդ թվում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ՀՀ արդարադատության, պաշտպանության, արտաքին գործերի, աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության նախարարությունների, դատական դեպարտամենտի, ազգային անվտանգության ծառայության հետ արդյունավետ համագործակցությամբ: Այս համատեքստում ՀՀ ՆԳՆ ներկայացուցիչն անհրաժեշտ է համարում շեշտել, որ ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից իրականացված գործառույթների արդյունքում իրավասության շրջանակներում պատշաճ կերպով երաշխավորվել է «մեկ անձ - մեկ հաշվառում – մեկ ընտրական տեղամաս» սկզբունքի ապահովումը, այդ թվում՝ օրենքի պահանջով հրապարակման ոչ ենթակա ցուցակների պարագայում:

ՀՀ ՆԳՆ ներկայացուցիչը նաև հավելում է, որ Ընտրական օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով ընտրողների ցուցակներ կազմում են նաև քրեակատարողական հիմնարկների պետերը, ձերբակալվածներին պահելու վայրերի ղեկավարները և զորամասերի հրամանատարները: Այս դրույթը, բնականաբար, հստակորեն իրացվում է պրակտիկայում:

Միաժամանակ Ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 12-րդ մասը նախատեսում է, որ զորամասերում հաշվառված ընտրողների թիվը, զորամասերում կազմվող ընտրողների ցուցակները հրապարակման ենթակա չեն, դրանցից քաղվածքներ չեն կատարվում: Նշված ցուցակների պարագայում ևս առկա են գործուն կառուցակարգեր, որոնք երաշխավորում են Ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթն առ այն, որ ընտրողը կարող է ընդգրկվել ընտրողների միայն մեկ ցուցակում և միայն մեկ անգամ: Այս առնչությամբ համապատասխան պարզաբանումները ևս ներկայացվել են Բարձր դատարանին:

բ. ՀՀ ՆԳՆ ներկայացուցիչը, խոսելով ենթադրյալ խախտումների մասին, ըստ որի՝ մերժվել են շուրջ 7.000 անձի՝ ըստ գտնվելու վայրի ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու համար ներկայացված դիմումները, անհրաժեշտ է համարել ընդգծել, որ մերժումների առկայությունն ինքնին որևէ կերպ չի կարող վկայել ընտրական օրենսդրության խախտման մասին, առավել ևս, որ նման խախտում պարզապես չի եղել: Այս առումով հարակից պատասխանող ՀՀ ՆԳՆ ներկայացուցիչը նշում է, որ նման դատողություններ հնարավոր կլիներ անել ոչ թե սոսկ մերժումների

քանակական հատկանիշի հաշվառմամբ, այլ այդ մերժումների նպատակային, ոչ իրավաչափ բնույթի ընդգծմամբ: Մինչդեռ նման որևէ փաստարկ ներկայացված չէ, և հետևապես՝ Դիմողներին առաջադրվող՝ ապացուցման համար անհրաժեշտ նվազագույն ապացուցողական շեմը, հարակից պատասխանող ՀՀ ՆԳՆ ներկայացուցչի դիտարկմամբ, հաղթահարված չէ: Այս հարցի կապակցությամբ անհրաժեշտ է համարում նշել նաև, որ մերժման որոշումները վերջնական չեն, և օրենքով նախատեսված է դրանց բողոքարկման արդյունավետ կառուցակարգ: Ավելին, այս որոշումները որևէ կերպ չեն ազդել ընտրելու իրավունքի երաշխավորման վրա:

գ. ՀՀ ՆԳՆ ներկայացուցիչը հավելում է, որ ըստ գտնվելու վայրի ընտրացուցակներում ընդգրկվելու վերաբերյալ բավարարվել է 22.734 քաղաքացու դիմում: Քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակներում ընդգրկվելու մասին տրամադրվել է 1.172 տեղեկանք: Ընտրողների ցուցակներում, ընտրողների ռեգիստրում, այդ թվում՝ քվեարկության օրը կազմվող լրացուցիչ ցուցակներում ընդգրկելը մերժելու վերաբերյալ ակտերն անվավեր ճանաչելու և նշված ցուցակներում ընդգրկելուն պարտավորեցնելու վերաբերյալ պահանջներով հայցերի քանակը կազմել է 294, որից բավարարվել է ընդամենը 5-ը, որից էլ 3-ը բեկանվել և կարճվել է վերադաս ատյանի կողմից: Մյուսների մասով կամ հայցադիմումի ընդունումը մերժվել է՝ համապատասխան դատական ատյանին ընդդատյա չլինելու հանգամանքով պայմանավորված, կամ հայցը չի բավարարվել:

դ. Անդրադառնալով առանձին հասցեներում այլ անձանց հաշվառումների վերաբերյալ ներկայացված հարցին՝ ՀՀ ՆԳՆ ներկայացուցիչն արձանագրում է, որ ՀՀ ոլորտային օրենսդրությամբ սահմանված չէ մեկ հասցեում հաշվառվող անձանց առավելագույն շեմ, հետևապես՝ բարձրացված հարցը որևէ պարագայում չի կարող որակվել որպես ընտրական գործընթացում դրսևորված խախտում:

Ինչ վերաբերում է անճշտությունների մասով ներկայացված հարցերին, մասնավորապես՝ բացակայող անձանց վերաբերյալ տվյալների առկայությանը, սեփականատիրոջն անհայտ անձանց հաշվառմանը՝ ՀՀ ՆԳՆ ներկայացուցիչը շեշտում է, որ հնչեցված բոլոր ահազանգերով կատարվել են առանձին ուսումնասիրություններ, և չի հայտնաբերվել որևէ ոչ իրավաչափ իրավիճակ:

ե. Անդրադառնալով քվեարկությանը մասնակցած 79125 ՀՀ քաղաքացու դեպքում անձը հաստատող փաստաթղթի տվյալները մասնագետի կողմից ստեղնաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելուն՝ ՀՀ ՆԳՆ ներկայացուցիչն անհրաժեշտ է համարել նշել, որ տեխնիկական սարքավորման կիրառմամբ ընտրողի նույնացումը, ինչպես արձանագրել է նաև ԿԸՀ ներկայացուցիչը, նախատեսվել է որպես ընտրողի նույնացման հավելյալ գործիքակազմ: Սարքավորման առկայության կամ բացակայության պարագայում էլ

ընտրողի նույնացման հիմնական գործիքակազմը շարունակում է մնալ անձը հաստատող փաստաթղթի միջոցով անձի նույնացումը տեղում: Ընդ որում՝ հարակից պատասխանող ՀՀ ՆԳՆ ներկայացուցչի պնդմամբ՝ նշված թիվը Հայաստանի ընտրությունների պատմության ընթացքում արձանագրված ամենացածր թիվն է:

զ. Անդրադառնալով ընտրություններին առնչվող իրավախախտումներին՝ ՀՀ ՆԳՆ ներկայացուցիչը նշում է, որ Բարձր դատարանի պահանջով ՀՀ ՆԳՆ կողմից պաշտոնական գրությամբ ներկայացվել է ամփոփ տեղեկանք, արձանագրվել են բոլոր հայտնի դեպքերը և ձեռնարկվել անհրաժեշտ միջոցներ, ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը նախընտրական քարոզարշավի մեկնարկից մինչև գործընթացի ավարտը ՀՀ ողջ տարածքում իրականացրել է հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներ՝ իր իրավասության սահմաններում օպերատիվ կերպով արձագանքելով բոլոր իրավախախտումներին և պատահարներին:

է. Անդրադառնալով ընտրական գործընթացին ներգրավված սուբյեկտների նկատմամբ տարբերակված մոտեցման հարցին՝ ՀՀ ՆԳՆ ներկայացուցիչը հայտնում է, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանությունն ընտրական գործընթացին ներգրավված բոլոր սուբյեկտների նկատմամբ մշտապես ցուցաբերել է հավասարակշռված մոտեցում, ներառյալ՝ հավաքների պատշաճ սպասարկման համատեքստում և իր իրավասության շրջանակներում, կոնկրետ իրավիճակի գնահատմամբ, ձեռնարկել համարժեք գործողություններ: Հակառակի մասին պնդումները պարզապես պատշաճորեն չփաստարկված ենթադրություններ կամ վերացական բնույթի դատողություններ են:

ը. ՀՀ ՆԳՆ ներկայացուցիչը, ամփոփելով խոսքը, նշում է, որ ՀՀ ներքին գործերի նախարարությունն ընտրական գործընթացում առաջնորդվել է բացառապես համապատասխան հարաբերությունները կանոնակարգող իրավական կարգավորումներով՝ իր լիազորությունների շրջանակներում ապահովելով ինչպես ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի պատշաճ իրացումը, այնպես էլ ընտրախախտումների կանխման, հայտնաբերման և դրանց բացահայտման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը:

13.3. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի դիրքորոշումները

2026 թվականի հունիսի 27-ին Սահմանադրական դատարանում սույն միավորված գործով բանավոր ընթացակարգով դատական նիստի շրջանակներում հարակից պատասխանող՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչը ներկայացրել է ներքոնշյալ դիրքորոշումները.

ա. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչը նշում է, որ Դիմողների ներկայացրած պնդումների զգալի մասը հիմնված է ոչ թե անմիջականորեն հաստատված փաստերի, այլ ենթադրությունների, գնահատողական

դատողությունների և քաղաքական բնույթի եզրահանգումների վրա, մինչդեռ սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանի գնահատման առարկան ոչ թե տարբեր քաղաքական սուբյեկտների ընկալումներն ու ենթադրություններն են, այլ այն հարցը, թե արդյո՞ք առկա են բավարար, արժանահավատ և վերաբերելի տվյալներ, որոնք կհաստատեն իրավապահ մարմինների, այդ թվում՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ընտրական գործընթացին այնպիսի ապօրինի միջամտության փաստ, որը կարող էր ազդեցություն ունենալ ընտրողների ազատ կամարտահայտության կամ ընտրությունների արդյունքների վրա:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչն արձանագրում է, որ ներկայացված չեն տվյալներ, որոնք կվկայեն, որ որևէ ընտրող իր քաղաքական ընտրությունը կատարել է իրավապահ մարմնի հրապարակումների, քրեական վարույթների կամ այլ գործողությունների ազդեցության ներքո, ինչպես նաև չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնք կհաստատեն, որ նշված հանգամանքներն ազդեցություն են ունեցել ընտրությունների արդյունքների վրա:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչը գտնում է, որ Դիմողների ներկայացրած պնդումների հիմքում փաստացի դրված է այն տրամաբանությունը, որ ընտրական գործընթացի ընթացքում կամ դրան նախորդող ժամանակահատվածում քրեական վարույթների նախաձեռնումը, ապացուցողական և վարութային այլ գործողությունների իրականացումը, խափանման միջոցների կիրառումը կամ հանրային հաղորդակցումն ինքնին պետք է դիտարկվեն որպես քաղաքական գործընթացներին միջամտության դրսևորում, որպիսի մոտեցումը չի բխում իրավական պետության հիմնարար սկզբունքներից:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչը նշում է նաև, որ իրավապահ մարմիններն օրենքով պարտավոր են արձագանքել ենթադրյալ հանցագործության վերաբերյալ յուրաքանչյուր հաղորդմանը, իրականացնել անհրաժեշտ համապատասխան գործողություններ, ինչպես նաև ապահովել քրեական վարույթի բնականոն ընթացքը՝ անկախ վարույթով անցնող անձանց քաղաքական հայացքներից կամ ընտրական գործընթացին նրանց մասնակցությունից, և հավելում, որ հակառակ մոտեցումը կնշանակեր, որ ընտրություններին մասնակցող անձինք կամ քաղաքական ուժերի ներկայացուցիչները փաստացի կստանային քրեական արդարադատությունից ժամանակավոր անձեռնմխելիություն, որպիսի մոտեցումը չի բխում ո՛չ Սահմանադրությունից, ո՛չ էլ որևէ օրենսդրական կարգավորումից:

բ. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչը, անդրադառնալով Դիմողների կողմից օգտագործված՝ «վախի մթնոլորտ», «քաղաքական հետապնդման ընկալում», «թիրախավորում», «հակաքարոզչական գործունեություն», «ընտրողների վրա ազդեցություն» և նմանատիպ այլ ձևակերպումներին, ընդգծում է, որ ներկայացված չեն այնպիսի փաստական տվյալներ, որոնք թույլ կտային հաստատել,

որ որևէ քրեական վարույթ նախաձեռնվել է օրենքով չնախատեսված հիմքով, որևէ խափանման միջոց կիրառվել է քաղաքական պատկանելության պատճառով, որևէ քննչական գործողություն կատարվել է քաղաքական նպատակադրումներով, կամ որևէ պաշտոնատար անձ իրականացրել է կոնկրետ քաղաքական ուժի օգտին կամ դեմ ուղղված քարոզչություն: Փաստացի ներկայացված են եզրահանգումներ, սակայն եզրահանգումները չեն կարող փոխարինել ապացույցներին: Մասնավորապես՝ անդրադառնալով «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի ներկայացրած դիմումին՝ նշում է, որ մի կողմից՝ առկա է պնդում այն մասին, թե իրավապահ մարմինների գործողությունների արդյունքում ձևավորվել է համընդհանուր վախի և սպառնալիքի մթնոլորտ, որն ազդեցություն է ունեցել քաղաքական գործընթացներին մասնակցող անձանց և ընտրողների վարքագծի վրա, մյուս կողմից՝ նույն քաղաքական ուժի լիազորված ներկայացուցիչը «Շանթ» հեռուստաընկերության «Հեռանկար» հաղորդմանը մասնակցելիս, այնուհետև հաղորդման տեսաձայնագրությունն իր ֆեյսբուքյան էջում տարածելիս հրապարակայնորեն նշել է, որ իրենց ընտրողները «չվախեցան, չմանիպուլացվեցին, չնահանջեցին»: Հետևաբար՝ նույնիսկ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի ներկայացուցչի սեփական հրապարակային գնահատականից չի բխում, որ ենթադրյալ ճնշումները կամ ազդեցության փորձերը հանգեցրել են ընտրողների կամքի ձևավորման կամ քաղաքական վարքագծի փոփոխության: Այս հանգամանքը ևս վկայում է, որ ներկայացված պնդումները հիմնված են առավելապես ենթադրությունների և գնահատողական դատողությունների, այլ ոչ թե փաստացի ազդեցությունը հաստատող ապացույցների վրա:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչն արձանագրում է, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատումը պետք է իրականացվի բացառապես նրա իրավասությունների, գործառույթների և գործունեության նպատակների համատեքստում: Դրանցից դուրս կատարվող մեկնաբանությունները չեն արտացոլում իրավապահ գործունեության իրական բնույթը: Պետական մարմինների գործունեությունը գնահատվում է օրենքով վերապահված լիազորությունների օրինական, պատշաճ և արդյունավետ իրականացման տեսանկյունից:

գ. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչը, վկայակոչելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքը, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքը, «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումները, նշում է նաև, որ պահպանելով քաղաքական չեզոքության և գործունեության հրապարակայնության սկզբունքները՝ ընտրական գործընթացներում արձանագրված և իր ենթակայությանը վերապահված ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ հրապարակումներ

կատարելիս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն հետապնդել է բացառապես իրավական և կանխարգելիչ նպատակներ: Այդ հրապարակումները, ինչպես նաև հանրային իրազեկմանն ուղղված այլ միջոցառումները նպատակ են ունեցել կանխելու և նվազեցնելու կոռուպցիոն բնույթի ընտրական հանցագործությունները, ինչպես նաև բարձրացնելու հանրային իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակը: Ընդ որում՝ խոսքը վերաբերում է ոչ թե ենթադրյալ կամ վերացական կանխարգելիչ ազդեցությանը, այլ փաստացի արձանագրված արդյունքներին: Մասնավորապես՝ տարբեր քրեական վարույթների շրջանակներում իրականացված ապացուցողական և վարութային այլ գործողությունների արդյունքում ստացվել են տվյալներ, համաձայն որոնց՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի հրապարակած տեսանյութերին և հաղորդագրություններին ծանոթանալուց հետո մի շարք անձինք հրաժարվել են իրենց առաջարկված կամ նախապես քննարկված ապօրինի գործողություններին մասնակցելուց:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչը պնդում է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում արձանագրված փաստական տվյալները վկայում են, որ հրապարակումներից հետո տարբեր անձինք քննարկել են ընտրակաշառքի տրամադրումից կամ ընտրական բնույթի այլ ենթադրյալ ապօրինի գործողություններից հրաժարվելու հարցերը՝ գիտակցելով պատասխանատվության անխուսափելիության հանգամանքը: Արձանագրվել են նաև խոսակցություններ, որոնցից ակնհայտ է դարձել, որ հանցավոր խմբի անդամները հրապարակումների արդյունքում ստիպված են եղել վերանայել իրենց գործողությունների եղանակները, փոխել նախկինում կիրառվող մեխանիզմները կամ մշակել դրանց քողարկման նոր տարբերակներ: Հետևաբար՝ տարբեր քրեական վարույթներով ստացված տվյալները, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցչի գնահատմամբ, փաստում են, որ դրանք ծառայել են ընտրական հանցագործությունների կանխարգելման, ընտրողների ազատ ընտրության պաշտպանության և ընտրական գործընթացի օրինականության ապահովման լեգիտիմ նպատակներին: Այդ իսկ պատճառով վիճարկվող հրապարակումները պետք է գնահատվեն որպես իրավապահ մարմնի կողմից իրականացված կանխարգելիչ գործունեության բաղադրիչ, որի արդյունավետությունը հաստատվում է նաև գործի նյութերում առկա փաստական տվյալներով:

դ. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցչի դիտարկմամբ՝ հրապարակումների արդյունքում արձանագրվել են ոչ միայն առանձին անձանց վարքագծի փոփոխություններ, այլև ընտրական իրավախախտումների վերաբերյալ հանրային իրազեկվածության և իրավապահ մարմինների հետ համագործակցության մակարդակի էական աճ: Մասնավորապես՝ հրապարակումներից հետո նկատելիորեն ակտիվացել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի թեժ գիծ ծառայությանը

հասցեագրված ահազանգերը, որոնց միջոցով քաղաքացիները հաղորդել են ընտրական գործընթացում հնարավոր իրավախախտումների, ընտրակաշառքի առաջարկների, ընտրողների վրա ապօրինի ազդեցության փորձերի և այլ նմանատիպ դեպքերի վերաբերյալ տվյալներ:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչը նշում է, որ արձանագրվել են դեպքեր, երբ քաղաքացիները ենթադրյալ ընտրական հանցագործությունների վերաբերյալ տեղեկություններ են ներկայացրել նույնիսկ հրապարակված տեսանյութերի մեկնաբանությունների բաժնում՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ուշադրությունը հրավիրելով իրենց հայտնի հանգամանքների վրա: Նույն ժամանակահատվածում զգալիորեն ակտիվացել է նաև օպերատիվ նշանակություն ունեցող տվյալների ստացումը, ինչը հնարավորություն է տվել իրավապահ մարմիններին առավել արագ արձագանքելու ընտրական գործընթացում առկա ռիսկերին, ստուգել ստացված տեղեկությունները և անհրաժեշտության դեպքում ձեռնարկել օրենքով նախատեսված միջոցներ:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցչի գնահատմամբ՝ վերոգրյալ հանգամանքները վկայում են, որ հրապարակումները գործնականում ծառայել են ոչ միայն տեղեկատվական, այլև կանխարգելիչ նպատակների իրականացմանը՝ խթանելով քաղաքացիների իրավագիտակցությունը, ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վերահսկողությունը և իրավապահ մարմինների հետ համագործակցությունը:

ե. Անդրադառնալով այն պնդմանը, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն նախընտրական գործընթացի ընթացքում հրապարակային հաղորդագրություններում չպետք է հիշատակեր քաղաքական ուժերի անվանումները՝ հարակից պատասխանողի ներկայացուցիչը նշում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել իրավապահ մարմնի կողմից իրականացվող հանրային իրազեկման նպատակն ու նշանակությունը: Ընտրական բնույթի ենթադրյալ հանցագործություններն իրենց բնույթով այնպիսի արարքներ են, որոնց արդյունավետ կանխարգելումը պահանջում է ոչ միայն դրանց բացահայտում և քրեադատավարական արձագանք, այլև հասարակության իրազեկում նման երևույթների վերաբերյալ:

Կանխարգելիչ գործառույթը չի կարող արդյունավետ իրականացվել այնպիսի տեղեկատվության միջոցով, որն ամբողջությամբ զրկված է կոնկրետությունից և հնարավորություն չի տալիս հանրությանը հասկանալու, թե ինչպիսի վարքագծի, ինչպիսի մեխանիզմների, ինչպիսի հանգամանքների մասին է խոսքը, կամ ինչպիսի գործողություններ են գտնվում իրավապահ մարմնի ուշադրության ներքո:

զ. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչը, անդրադառնալով Դիմողների այն պնդմանը, ըստ որի՝ որոշ հրապարակված ձայնագրություններում կամ տեսանյութերում ուղղակիորեն չի հիշատակվել որևէ քաղաքական ուժի

անվանում, մինչդեռ հրապարակումներին ուղեկցող հաղորդագրություններում նշվել են քաղաքական ուժերի կամ դաշինքների անվանումներ, անհրաժեշտ է համարել ընդգծել, որ իրավապահ մարմնի կողմից հրապարակվող հաղորդագրությունների նպատակը եղել է հանրությանը ներկայացնել ոչ միայն առանձին զրույցների բառացի բովանդակությունը, այլ նաև այն փաստական հանգամանքները, որոնց առնչությամբ իրականացվել է համապատասխան քրեական վարույթը: Այն դեպքերում, երբ վարույթի շրջանակներում առկա տվյալները վերաբերել են ընտրական գործընթացում ներգրավված կոնկրետ անձանց, խմբերի կամ քաղաքական ուժերի հետ ենթադրյալ կապերին, այդ հանգամանքի արտացոլումը հաղորդագրության տեքստում պայմանավորված է եղել հանրությանը ներկայացվող տեղեկատվության ամբողջականությունն ապահովելու անհրաժեշտությամբ: Բացի դրանից, քաղաքական կուսակցությունների անվանումները հանդիսացել են քրեական վարույթներով պարզված փաստական տվյալներ և այլ էական հանգամանքների հետ միասին հրապարակվել են բացառապես կոռուպցիոն բնույթի ընտրական հանցագործությունների կանխարգելման նպատակով:

է. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչը, անդրադառնալով Դիմողների կողմից վիճարկվող հրապարակված նյութերում առկա առանձին արտահայտությունների հրապարակման անհրաժեշտությանը, դրանք բնութագրելով որպես իրավական նշանակություն չունեցող կամ վիրավորական բնույթի արտահայտություններ, նշում է, որ հրապարակված նյութերը հանդիսացել են ամբողջական խոսակցությունների կամ դրանց այն հատվածների մաս, որոնք, ըստ քննության նյութերի, պարունակել են ենթադրյալ հանցավոր արարքի հանգամանքներ, մեխանիզմներ կամ դրանց վերաբերյալ նշանակություն ունեցող տվյալներ: Հենց այդ պատճառով հրապարակված նյութերում ներառվել են նաև այն արտահայտությունները, որոնք անմիջականորեն նախորդել կամ հաջորդել են քննության համար նշանակություն ունեցող հաղորդակցությանը և կազմել են համապատասխան խոսակցության անբաժանելի համատեքստը: Միաժամանակ հրապարակման նպատակով իրականացվել են նյութերի ընտրություն և առանձնացում՝ հնարավորինս բացառելով այն հատվածները, որոնք չեն առնչվել քննության առարկա հանգամանքներին կամ անմիջական կապ չեն ունեցել հրապարակվող փաստական տվյալների հետ:

ը. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչն արձանագրում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից ստացված գրությունը պարունակում է հաղորդակցման քաղաքականության վերաբերյալ առաջարկություններ և դիտարկումներ, այն ինքնին չի հաստատում որևէ ապօրինի միջամտության, քաղաքական կողմնակալության կամ ընտրական իրավունքի խախտման փաստ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր գրության մեջ վկայակոչել է

Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի դրույթները, որով սահմանվում են նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները, որպիսի իրավակարգավորումները չեն կարող վերաբերել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի լիազորությունների իրականացմանը, այդ թվում՝ հանցագործությունների կանխարգելման գործառույթին, քանի որ այն որևէ առնչություն չունի նախընտրական քարոզչության հետ՝ ո՛չ իրավական, ո՛չ տրամաբանական և ո՛չ էլ լեզվաբանական իմաստով:

թ. Անդրադառնալով Դիմողների այն պնդմանը, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի հրապարակումներով խախտվել է անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչը հարկ է համարել արձանագրել, որ այդ պնդումները զուրկ են բավարար փաստական և իրավական հիմքերից, քանզի վիճարկվող հրապարակումներում չեն նշվել մեղադրյալների կամ քրեական վարույթներին ներգրավված այլ անձանց անհատականացնող տվյալներ, չեն ներկայացվել կոնկրետ անձինք՝ որպես հանցանք կատարած կամ մեղավոր ճանաչված անձինք. ինքնին քաղաքական կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի անվան հիշատակումը չի կարող նույնացվել որևէ անձի մեղավորության մասին հայտարարության հետ, և հետևաբար՝ չի կարող դիտարկվել որպես անմեղության կանխավարկածի խախտում: Ավելին, հրապարակումների ընդհանուր բովանդակությունից ակնհայտ է, որ խոսքը վերաբերում է քրեական վարույթի շրջանակներում ստուգվող տվյալներին, քննության առարկա հանգամանքներին և ենթադրյալ իրավախախտումների վերաբերյալ տեղեկություններին, այլ ոչ թե դատարանի իրավասությանը վերապահված՝ անձի մեղավորության վերաբերյալ վերջնական գնահատականներին:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչն ակնհայտ է համարում այն, որ կոռուպցիոն ընտրական հանցագործությունների վերաբերյալ հարցերը ներկայացնում են բացառիկ հանրային հետաքրքրություն, հետևաբար՝ Դիմողների կողմից վկայակոչվող անմեղության կանխավարկածի վերաբերյալ նկատառումները, հարակից պատասխանողի ներկացացուցչի գնահատմամբ, չեն կարող գնահատվել մեկուսացված կերպով՝ անտեսելով հանրության՝ տեղեկացված լինելու իրավունքը, ինչպես նաև պետության օրինական շահը՝ կանխելու ընտրական բնույթի հանցագործությունները, պաշտպանելու ընտրողների ազատ ընտրությունը և ապահովելու ընտրական գործընթացի օրինականությունը:

ժ. Ինչ վերաբերում է Դիմողների այն պնդմանը, թե իբրև կոնկրետ քաղաքական ուժերի նկատմամբ ցուցաբերվել է ակնհայտ ընտրովի մոտեցում՝ վարույթներ նախաձեռնելու, ինչպես նաև նախաձեռնված վարույթներով իրականացված դատավարական գործողությունների մասով, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչը պնդում է, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն իր

լիազորություններն իրականացրել է բացառապես օրենքով սահմանված հիմքերի և ընթացակարգերի շրջանակում, և մասնավորեցնում, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը պայմանավորված է կատարված, նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունների վերաբերյալ ստացված տվյալների առկայությամբ, իսկ քրեական վարույթի շրջանակում գործողությունները կատարվում են առերևույթ հանցանքի մասին հաղորդումների, ինչպես նաև քրեական վարույթով ձեռք բերված փաստական տվյալների և ապացույցների հիման վրա:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչը հայտնում է, որ ընտրական գործընթացին մասնակցել են 19 քաղաքական ուժ, մինչդեռ ընտրակաշառքի կամ կոռուպցիոն բնույթի այլ ընտրական հանցագործությունների վերաբերյալ օպերատիվ տվյալներ, հաղորդումներ և այլ տեղեկություններ ստացվել են ոչ բոլորի վերաբերյալ: Այս պայմաններում իրավապահ մարմնի արձագանքը պայմանավորված է եղել ոչ թե համապատասխան քաղաքական ուժերի կարգավիճակով կամ քաղաքական դիրքորոշումներով, այլ բացառապես ստացված տվյալների առկայությամբ և դրանց իրավական գնահատման անհրաժեշտությամբ: Հենց տվյալների առկայությունն է հանդիսացել իրավապահ մարմնի միջամտության և համապատասխան գործընթացների նախաձեռնման իրավական նախապայմանը. հակառակ մոտեցումը կնշանակեր, որ իրավապահ մարմինը պետք է առանց որևէ փաստական հիմքի, հաղորդման կամ օպերատիվ տվյալների նախաձեռներ միջոցառումներ՝ առանձին քաղաքական ուժերի կամ դրանց ներկայացուցիչների նկատմամբ: Նման գործելակերպը ոչ միայն հակասում է օրինականության սկզբունքին, այլև հենց այդ դեպքում կարող էր առաջանալ քաղաքական շարժառիթներով թիրախավորման և անհիմն միջամտության վերաբերյալ հարցադրում:

ժա. Ամփոփելով՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչը նշում է, որ քննարկվող դեպքերում վարույթների նախաձեռնումը և դրանց շրջանակներում իրականացված գործողությունները պայմանավորված են եղել ոչ թե քաղաքական ընտրողականությամբ, այլ կոնկրետ փաստական տվյալների առկայությամբ, որոնց ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն պարտավոր էր արձագանքել օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, որը և կատարել է:

14. Որպես երրորդ անձ ներգրավված «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դիրքորոշումները

Սահմանադրական դատարանում սույն միավորված գործով բանավոր ընթացակարգով դատական նիստի շրջանակներում որպես երրորդ անձ ներգրավված «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչը

(այսուհետ նաև՝ Երրորդ անձի ներկայացուցիչ) ներկայացրել է ներքոնշյալ դիրքորոշումները.

ա. Երրորդ անձի ներկայացուցիչը գտնում է, որ սույն գործով իրավական գնահատման առանցքում պետք է դրվի ոչ թե զուտ այն հարցը, թե արդյո՞ք ընտրական գործընթացում առանձին խախտումներ առկա են, թե՞ ոչ, այլ այն հարցը, թե արդյո՞ք այդ խախտումները՝ իրենց բնույթով, ծավալով և ազդեցությամբ, կարող էին ազդել ընտրությունների արդյունքի վրա և կասկածի տակ դնել ընտրողների կամքի ընդհանուր արտահայտումը:

բ. Երրորդ անձի ներկայացուցիչը նշում է, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ ՀՀ արդարադատության նախարարին ուղղված՝ 2026 թվականի հունիսի 15-ի պաշտոնական գրությունից պարզ է դառնում, որ 2026 թվականի հունիսի 7-ին կայացած Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական ժամանակահատվածում ստացվել են կոռուպցիոն բնույթի ընտրական հանցանքների վերաբերյալ բազմաթիվ հաղորդումներ, և նախաձեռնվել են շուրջ 122 քրեական վարույթներ: Դրանք առնչվում են տարբեր քաղաքական ուժերի հետ կապվող ենթադրյալ գործողությունների, այդ թվում՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի, «Հայաստան» կուսակցությունների դաշինքի և «Բարգավաճ Հայաստան» կուսակցության շրջանակներում արձանագրված ենթադրյալ դեպքերի հետ:

գ. Երրորդ անձի ներկայացուցիչը գտնում է, որ երբ ընտրական գործընթացի ժամանակ արձանագրվում են ընտրակաշառքի, ընտրողների հավաքագրման, ցուցակագրման, միջնորդների ներգրավման, տեղական ազդեցություն ունեցող անձանց օգտագործման, ֆինանսական հոսքերի քողարկման և ընտրողների կամքի վրա անթույլատրելի ազդեցության առերևույթ դեպքեր, ապա խոսք է գնում ընտրական իրավունքի բուն էության դեմ ուղղված երևույթների մասին:

Ներկայացված տվյալներով խոսվում է ընտրողների նախնական հավաքագրման, նրանց քաղաքական նախասիրությունների ճշտման, ընտանիքի անդամների կամ ազդեցության շրջանակում գտնվող անձանց հաշվառման, միջնորդների միջոցով պայմանավորվածությունների ձևավորման, ինչպես նաև որոշ դեպքերում ընտրակաշառքի խոստումը կամ տրամադրումը աշխատանքային հարաբերությունների ներքո քողարկելու մասին:

Երրորդ անձի ներկայացուցիչը պնդում է, որ եթե վերոնշյալը հաստատվում է քրեական վարույթների արդյունքում, ապա պետք է ստանա համապատասխան իրավական գնահատական: Ընտրակաշառք տված, ընտրողին «գնելու» փորձ կատարած, միջնորդներ ներգրաված, թաքնված ֆինանսական սխեմաներով ընտրողի կամքի վրա ազդելու փորձ կատարած ցանկացած անձ կամ քաղաքական ուժ պետք է կրի համապատասխան իրավական և քաղաքական պատասխանատվություն: Այդպիսի գործելակերպը պետք է հանրայնորեն

դատապարտվի, որովհետև այն խաթարում է ընտրությունների նկատմամբ վստահությունը և վնասում է ժողովրդավարական ինստիտուտները:

Երրորդ անձի ներկայացուցիչը նշում է. «Քրեական վարույթների առկայությունը և ընտրական կոռուպցիայի վերաբերյալ առերևույթ դեպքերը կասկածները պետք է ստանան իրենց ընթացքը քրեաիրավական հարթությունում», բայց Սահմանադրական դատարանի առջև դրված հարցն այլ է. արդյո՞ք Դիմողներն ապացուցել են, որ իրենց կողմից բարձրացված առերևույթ խախտումները՝ իրենց ծավալով, բնույթով և ազդեցությամբ, կարող էին ազդել ընտրությունների արդյունքի վրա այն աստիճան, որ այլևս հնարավոր չլինի վստահել ընտրողների կամքի ընդհանուր արտահայտմանը: Երրորդ անձի ներկայացուցիչը պնդում է, որ ժողովրդավարական կարգին վնաս հասցնելու փորձերը հաղթահարվել են հենց ժողովրդի կողմից: Ժողովուրդն իր ընտրությամբ թույլ չի տվել, որ այդ խախտումներն էական ազդեցություն ունենան ընտրությունների արդյունքի վրա:

Երրորդ անձի ներկայացուցիչը գտնում է, որ առանձին դրվագների հիման վրա փորձ է արվում կասկածի տակ դնել ողջ հանրապետական ընտրության արդյունքը. տեղային կամ կոնկրետ խախտումը չի կարող ինքնաբերաբար տարածվել բոլոր ընտրատեղամասերի, բոլոր ընտրողների և ողջ ընտրական արդյունքի վրա:

Ըստ Երրորդ անձի ներկայացուցչի՝ հակառակ մոտեցումը վտանգավոր կլինի հենց ժողովրդավարության համար: Դա կնշանակի, որ առանձին անձանց կամ խմբերի ենթադրյալ ապօրինի վարքագծի պատճառով կարելի է զրոյացնել նաև այն քաղաքացիների կամքը, որոնք ընտրական գործընթացին մասնակցել են օրինական ճանապարհով: Այդպիսի մոտեցումը կդառնա ոչ թե ընտրական իրավունքի պաշտպանություն, այլ օրինական քվեարկած քաղաքացիների իրավունքի խախտում: Եթե խախտումները տեղային են, անհատականացված չեն, կամ դրանց ազդեցությունը վերջնական արդյունքի վրա ապացուցված չէ, ապա ընտրությունների ամբողջական անվավեր ճանաչումը կլինի անհամաչափ միջոց: Այն կհակասի ինչպես Վենետիկի հանձնաժողովի վկայակոչած բացառիկ միջոցի (ultima ratio) սկզբունքին, ապացուցման բեռի, արդյունքի վրա ազդեցության և նվազագույն միջամտության սկզբունքներին, այնպես էլ Սահմանադրական դատարանի 2003 թվականի մարտի 24-ի ՍԴՈ-408 որոշման մեջ արտահայտված այն մոտեցմանը, որ խախտումների գնահատման արդյունքում չի կարող ոտնահարվել օրինական ճանապարհով իրենց ընտրությունը կատարած ընտրողների իրավունքը:

դ. Անդրադառնալով քաղաքական խոսքի թույլատրելիության հարցին՝ Երրորդ անձի ներկայացուցիչը նշում է, որ դիմումներում ներկայացված բոլոր դատողությունները կապված են եղել ոչ թե քաղաքացիներին վիրավորելու, թիրախավորելու և վերոնշյալ վարքագծին նմանվող երևույթների հետ, այլ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչապետի թեկնածուի քաղաքական խոսքի հետ:

Քաղաքական խոսքը, հատկապես նախընտրական քարոզարշավի ընթացքում, գտնվում է արտահայտման ազատության առավել բարձր պաշտպանության ներքո: Ընտրությունները հենց այն ժամանակահատվածն են, երբ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ պետք է ապահովվի կարծիքների, քննադատության, քաղաքական գնահատականների և նույնիսկ սուր կամ չափազանցված ձևակերպումների ազատ շրջանառությունը:

Երրորդ անձի ներկայացուցիչը պնդում է, որ քաղաքական խոսքի անընդունելիությունը, կոշտությունը կամ նույնիսկ վիրավորական ընկալումը դեռ չի նշանակում ընտրական իրավունքի այնպիսի խախտում, որը կարող է հանգեցնել ընտրությունների արդյունքների անվավեր ճանաչմանը: Ընտրությունների անվավերության համար անհրաժեշտ է ոչ թե խոսքի քաղաքական կամ բարոյական գնահատական, այլ հստակ ապացույցներ, որ դրանք ազդել են ընտրությունների արդյունքների վրա:

Դիմողները նման ապացույցներ չեն ներկայացնում. չի ներկայացվում, թե ո՛ր կոնկրետ արտահայտությունը ո՛ր ընտրողների վրա է ազդել, ի՛նչ ձևով է զրկել նրանց ազատ կամարտահայտումից, քանի՛ քվեի վրա է ազդել, և ինչպե՛ս կարող էր փոխել ընտրությունների վերջնական արդյունքը կամ մանդատների բաշխումը: Հետևապես՝ Երրորդ անձի ներկայացուցիչը գտնում է, որ Դիմողները չեն կարող սահմանափակվել այն պնդմամբ, որ նախընտրական խոսքը եղել է կոշտ, սուր, ցնցող կամ քաղաքականապես անընդունելի: Նրանք պետք է ապացուցեն, որ այդ խոսքը կոնկրետ ընտրողների կողմից ընկալվել է որպես իրենց ուղղված իրական սպառնալիք կամ հարկադրանք, ազդել է նրանց ընտրական վարքագծի վրա և իր ծավալով կարող էր փոխել ընտրությունների վերջնական արդյունքը:

ե. Անդրադառնալով վարչական ռեսուրսի ենթադրյալ օգտագործման և «սոցիալական կաշառքի» վերաբերյալ Դիմողների պնդումներին՝ Երրորդ անձի ներկայացուցիչը նշում է, որ եթե Դիմողները հղում են անում առանձին դեպքերի, օրինակ՝ պետական կամ համայնքային աշխատակցի մասնակցություն քարոզչական գործողությանը, կրթական հաստատության աշխատակցի կամ աշակերտի ներկայություն քարոզարշավային միջոցառմանը, պաստառների տեղադրում, հավաքի կազմակերպչական աջակցություն կամ աշխատանքային կամ դասաժամի ենթադրյալ օգտագործում, ապա նրանք պետք է ապացուցեն ոչ միայն այդ դրվագի փաստը, այլև դրա կազմակերպված, զանգվածային բնույթը և ընտրությունների վերջնական արդյունքի վրա ազդեցությունը: Առանձին դրվագները չեն կարող փոխարինել այդ ապացուցմանը: Այդ հատվածական դրվագներն առանձին քննության կարող են ենթարկվել այն տեսանկյունից՝ արդյո՞ք կոնկրետ

աշխատակիցները գործել են իրենց նախաձեռնությամբ, աշխատանքային ժամին, ծառայողական հանձնարարությամբ կամ համայնքային ռեսուրսների օգտագործմամբ:

Ավելին, եթե խոսքը վերաբերում է աշակերտների մասնակցությանը, ապա այդ անձինք, որպես կանոն, ընտրողներ չեն, և Դիմողները պետք է առավել ևս բացատրեն, թե այդ հանգամանքը ինչպես է ազդել ընտրողների քվեի կամ ընտրությունների վերջնական արդյունքի վրա:

Երրորդ անձի ներկայացուցիչը հավելում է, որ չնայած վերոնշյալ դեպքերի դրվագային բնույթին, անգամ այդպիսի պայմաններում առանձին քննարկման և գնահատման հարց է, թե արդյո՞ք կոնկրետ աշխատակիցների կողմից թույլ տրված խախտումները որքանով են վերագրելի այս կամ այն քաղաքական ուժին՝ կարող են ընկալվել որպես հենց այդ ուժի կողմից վարչական ռեսուրսի չարաշահման դրսևորում:

զ. Անդրադառնալով Դիմողների՝ պետության չեզոքության սկզբունքի խախտման և «սոցիալական կաշառքի» առկայության մասին պնդմանը՝ հղում կատարելով առողջապահության համընդհանուր ապահովագրության ներդրմանը, կենսաթոշակների և նպաստների բարձրացմանը, ինչպես նաև գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման վերաբերյալ Կառավարության որոշումներին՝ Երրորդ անձի ներկայացուցիչը նշում է, որ ընտրությունների անցկացումը չի կարող հիմք հանդիսանալ պետության սահմանադրական պարտականությունների կատարումը դադարեցնելու կամ հետաձգելու համար: Հետևաբար՝ Կառավարությունը նախընտրական շրջանում չի դադարում իրականացնել իր գործառույթները: Կառավարությունը շարունակում է իրականացնել իր քաղաքականությունը իր ծրագրին համապատասխան, որը ներառում է նաև 2026 թվականը, որը և համընկել է ընտրությունների հետ: Այդպիսի քաղաքականության իրականացումն ինքնին չի կարող համարվել վարչական ռեսուրսի չարաշահում միայն այն պատճառով, որ այն ժամանակագրորեն համընկել է ընտրական շրջանի հետ, և Սահմանադրության կամ օրենքի մակարդակով որևէ արգելք չկա այս առումով:

Երրորդ անձի ներկայացուցիչը գտնում է, որ վերոնշյալ փաստերը վկայում են, որ խոսքը ոչ թե ընտրությունների նախաշեմին ընդունված մեկանգամյա որոշումների, այլ տարիներ շարունակ իրականացվող պետական սոցիալական քաղաքականության մասին է:

Հետևաբար՝ միայն այն հանգամանքը, որ այդ քաղաքականության հերթական փուլը համընկել է ընտրությունների ժամանակահատվածին, ինքնին չի կարող վկայել պետության չեզոքության սկզբունքի խախտման կամ, առավել ևս, «սոցիալական կաշառքի» մասին:

Ինչ վերաբերում է ընտրություններին մասնակցող ուժերի ֆինանսական թափանցիկության հարցին, ապա Երրորդ անձի ներկայացուցիչը նշում է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը 2026 թվականի մայիս-հունիս ամիսներին անհատույց օգտագործման իրավունքով ստացել է 129 տարածք: Նշված տարածքների օգտագործման արժեքը հաշվարկվել և ներառվել է նախընտրական հիմնադրամի ծախսերի կազմում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման 10-րդ գլխի 89-րդ կետի պահանջներին համապատասխան: Համապատասխան հաշվարկները և հիմնավորումները սահմանված կարգով ներկայացվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողով, հետևաբար՝ կուսակցության կողմից անհատույց օգտագործման իրավունքով ստացված տարածքների արժեքի հաշվարկը և հաշվառումը կատարվել են գործող իրավական կարգավորումներին լիարժեք համապատասխանությամբ:

Ինչ վերաբերում է նախընտրական քարոզչության իրականացման նպատակով կազմակերպված մշակութային միջոցառումների անցկացման հետ կապված ծախսերին՝ Երրորդ անձի ներկայացուցիչը հայտնում է, որ կուսակցությունը նման միջոցառումների կազմակերպումն ամբողջությամբ արտապատվիրակել է համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպություններին: Այդ ծառայությունների դիմաց կատարված բոլոր վճարումները պատշաճ կերպով արտացոլվել և ներառվել են նախընտրական հիմնադրամի հաշվետվություններում: Միաժամանակ նախընտրական քարոզչության նպատակներով որևէ ֆիզիկական անձ կուսակցությանն անհատույց կամ հատուցելի ծառայություններ չի մատուցել:

է. Անդրադառնալով կուսակցության նախընտրական հիմնադրամից արված որոշ ծախսերին, մասնավորապես՝ դրոններով ներկայացմանը՝ Երրորդ անձի ներկայացուցիչն արձանագրել է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը «Դոմինո Վիեդո Փրոդաքշն» կազմակերպությունից ձեռք է բերել ծառայությունների փաթեթ, որի շրջանակներում նաև քարոզչության ընթացքում նախընտրական հանդիպումների ժամանակ կազմակերպվել է ինը դրոն շոու: Ծառայությունների փաթեթի ընդհանուր արժեքը կազմել է 264 մլն ՀՀ դրամ: Երրորդ անձի ներկայացուցիչը գտնում է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը գործել է օրենսդրական կարգավորումներին համապատասխան՝ բացառելով նախընտրական հիմնադրամի սահմանաչափի գերազանցումը:

ը. Ինչ վերաբերում է վարչական ռեսուրսի համակարգային օգտագործման մասին պնդումներին, Երրորդ անձի ներկայացուցիչը նշում է, որ այս հատվածական դրվագներն առանձին քննության կարող են ենթարկվել այն տեսանկյունից՝ արդյո՞ք կոնկրետ աշխատակիցները գործել են իրենց նախաձեռնությամբ, աշխատանքային ժամին, ծառայողական հանձնարարությամբ կամ համայնքային ռեսուրսների օգտագործմամբ: Բայց անգամ այդպիսի հարցերի քննարկման պայմաններում դեռ չի

կարելի խոսել ընտրողների կամքի ընդհանուր պատկերի աղավաղման մասին, և պատասխան չկա այն հարցին, թե ինչու պետք է մեկ կամ մի քանի նման դրվագի հիմքով անվավեր ճանաչվի ամբողջ ընտրությունը:

թ. Անդրադառնալով Դիմողների կողմից վիճարկվող ընտրական գործընթացին նախորդող փուլում կատարված օրենսդրական փոփոխություններին, մասնավորապես՝ կուսակցությունների դաշինքի ձևաչափով ընտրություններին մասնակցելու դեպքում անձնանուն կիրառելն արգելող, քվեաթերթիկի ձևին և լրացման կարգին վերաբերող փոփոխություններին, ինչպես նաև նրան, որ դրանց վերաբերյալ ընտրողների ոչ բավարար իրազեկումը հանգեցրել է անվավեր քվեաթերթիկների թվի էական աճի՝ Երրորդ անձի ներկայացուցիչը գտնում է, որ այս փաստարկի նկատմամբ անհրաժեշտ է տարբերակել երկու հարց: Առաջին՝ արդյո՞ք տվյալ օրենսդրական փոփոխությունն իրավական առումով վիճարկելի է: Երկրորդ՝ արդյո՞ք այդ փոփոխությունը ազդել է ընտրությունների վերջնական արդյունքի վրա: Ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու համար բավարար չէ զուտ պնդել, որ օրենսդրական փոփոխությունը կուսակցությանը անհարմարություն է պատճառել կամ քաղաքականապես իր օգտին չէր: Անհրաժեշտ է ապացուցել, որ այդ փոփոխության պատճառով ընտրողների կամքի արտահայտումը խաթարվել է այն աստիճան, որ վերջնական արդյունքը կարող էր այլ լինել: Նույնը վերաբերում է անվավեր քվեաթերթիկների թվի վերաբերյալ փաստարկին. անվավեր քվեաթերթիկների թիվը կարող է լինել քննության առարկա, սակայն այդ թիվն ինքնին դեռ ցույց չի տալիս, թե այդ քվեաթերթիկներն ում օգտին կլինեին, ինչպիսի ազդեցություն կունենային ձայների հարաբերակցության վրա և արդյոք կարող էին փոխել մանդատների բաշխումը:

ժ. Ինչ վերաբերում է Ս. Կարապետյանի նախընտրական քարոզարշավին լիարժեք մասնակցելու հնարավորության սահմանափակման հարցին, Երրորդ անձի ներկայացուցիչը գտնում է, որ այն կարող է ունենալ առանձին իրավական նշանակություն քրեական վարույթի, խափանման միջոցի իրավաչափության կամ անձի իրավունքների անհատական պաշտպանության հարթությունում, սակայն Սահմանադրական դատարանի սույն վարույթում հարցն այլ է. արդյո՞ք այդ հանգամանքն ապացուցված կերպով կարող էր էական ազդեցություն ունենալ ընտրությունների վերջնական արդյունքի վրա: Այս առումով էական է, որ Դիմողի փաստարկները չեն հիմնավորում այնպիսի սահմանափակումների առկայությունը, որոնք փաստացի անհնարին էին դարձրել Ս. Կարապետյանի կողմից քաղաքական դիրքորոշումների, ուղերձների փոխանցումը հանրությանը: Անգամ անազատության կամ սահմանափակ պայմաններում գտնվելու ժամանակահատվածում չի հիմնավորվել, որ նա զրկված է եղել իր քաղաքական թիմի կամ հնարավոր ընտրողների հետ հաղորդակցվելու բոլոր արդյունավետ միջոցներից: Ավելին, եղել են

դեպքեր, երբ նշված անձը, գտնվելով անազատության մեջ, կարողացել է ուղերձ հղել իր համակիրներին: Երրորդ անձի ներկայացուցիչը հայտնում է, որ Ս. Կարապետյանի նկատմամբ ազատության սահմանափակումների վերանայումից հետո, երբ վերջինս շարունակել է գտնվել տնային կալանքի տակ, հնարավորություն է ունեցել ակտիվորեն ներգրավվելու քաղաքական գործընթացում և փաստացի մասնակցել է քարոզարշավին:

ժա. Անդրադառնալով Դիմողների կողմից բարձրացված՝ իրավապահ համակարգի կողմնակալության մասին պնդմանը՝ Երրորդ անձի ներկայացուցիչը գտնում է, որ եթե որևէ հրապարակում խախտել է անմեղության կանխավարկածը, վնասել է անձի պատիվը և բարի համբավը կամ դուրս է եկել քրեական վարույթի հանրային հաղորդակցության թույլատրելի սահմաններից, կարող է առաջացնել առանձին իրավական հետևանքներ, բայց ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ է ապացուցել, որ այդ հրապարակումներն ունեցել են որոշիչ ազդեցություն:

ժբ. Ինչ վերաբերում է Դիմողների կողմից բարձրացված՝ Հանրային հեռուստաընկերության և տեսալսողական մեդիայի խնդրին՝ պնդելով, որ Հանրային հեռարձակողը չի ապահովել հավասար և անկողմնակալ տեղեկատվական միջավայր, պարբերաբար ցուցադրել է Հակակոռուպցիոն կոմիտեի հրապարակած ձայնագրությունը՝ այն ասոցացնելով հենց դաշինքի հետ, և դրանով ազդել է ընտրողների կամքի վրա, Երրորդ անձի ներկայացուցիչը հայտնում է, որ այս պնդումները միակողմանի են ներկայացնում իրավիճակը, քանի որ եղել են նաև հակառակ իրավիճակներ, օրինակ՝ ՀՀ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (ՀՌՀ) նաև հայտնաբերել է դեպքեր և նախազգուշացումներ է տվել որոշ հեռուստաընկերությունների, որոնք գերազանցել են համապատասխանաբար «Բարգավաճ Հայաստան» և «Ուժեղ Հայաստան» քաղաքական ուժերին նվիրված լրատվական լուսաբանման՝ օրենքով թույլատրելի սահմանաչափը:

Երրորդ անձի ներկայացուցիչը համարում է, որ Դիմողների ներկայացրած պնդումները, նույնիսկ եթե առաջացնում են լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտություն, ինքնին չեն ապացուցում ընտրությունների արդյունքի աղավաղում: Չի ներկայացվում, թե այդ եթերաժամանակի տարբերությունը քանի ընտրողի քվեարկության վրա է ազդել, ինչպես է փոխել ձայների հարաբերակցությունը և ինչու պետք է հանգեցնի ամբողջ ընտրությունների անվավերության:

ժգ. Երրորդ անձի ներկայացուցիչը գտնում է, որ Դիմողները չեն ապացուցում, որ վարչապետի մամուլի ասուլիսի, բանավեճի, քարոզարշավի ընթացքում արված կոշտ քաղաքական հայտարարություններն ու բացասական բնույթի հրապարակային արտահայտություններն ունեցել են այնպիսի հարկադրող, սպառնալից կամ այլ

ազդեցություն, որի արդյունքում ընտրողների կամքի ընդհանուր արտահայտումն աղավաղվել է: Չի ներկայացվում, թե կոնկրետ որ ընտրողների վրա, ինչ ծավալով և ինչ արդյունքով է ազդել այդ խոսքը: Դիմողների կողմից ներկայացված վարչապետի մամուլի ասուլիսի, բանավեճի կամ քարոզարշավի ընթացքում հնչած կոշտ քաղաքական հայտարարությունների վերաբերյալ նյութերը պետք է գնահատվեն հենց այս չափանիշով: Քաղաքական պայքարի ընթացքում գործածված սուր, քննադատական կամ բացասական արտահայտությունները կարող են Դիմողների համար լինել անընդունելի կամ վիրավորական, սակայն դրանք ինքնին չեն ապացուցում ընտրողների կամքի խաթարման առկայությունը:

ժդ. Երրորդ անձի ներկայացուցիչը նշում է, որ Դիմողները փորձում են առանձին տեղամասային խնդիրները ներկայացնել որպես ընդհանուր համակարգային խախտումների շղթա, սակայն չեն ներկայացնում այնպիսի հստակ և համոզիչ հաշվարկ, որը ցույց կտար, որ այդ խախտումները փոխում են ընտրությունների ընդհանուր պատկերը: Եթե որևէ տեսանյութ իսկապես վկայում է կոնկրետ տեղամասում ընթացակարգային խախտման մասին, իրավական արձագանքը պետք է լինի համաչափ և հասցեական: Դա կարող է լինել կոնկրետ դրվագի ստուգում, վերահաշվարկ, կոնկրետ անձի գործողության իրավական գնահատական, բայց դրանից չի բխում, որ պետք է չեղարկվի ամբողջ ընտրությունը, և զրոյացվեն նաև այն քաղաքացիների քվեները, որոնք որևէ կապ չեն ունեցել այդ դրվագների հետ:

ժե. Երրորդ անձի ներկայացուցիչը գտնում է, որ ընտրությունների արդյունքների անվավեր ճանաչումը չի կարող դիտվել որպես ընտրական գործընթացում յուրաքանչյուր խախտման կամ յուրաքանչյուր վիճարկելի հանգամանքի ավտոմատ հետևանք: Անվավեր ճանաչումը բացառիկ միջոց է, որը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ առկա են հստակ հաստատված, իրավաբանորեն փաստարկված և վերջնական արդյունքի վրա ազդելու իրական հնարավորություն ունեցող խախտումներ: Այսինքն՝ Դիմողները պետք է ապացուցեն ոչ միայն ենթադրյալ խախտումների փաստը, այլ նաև դրանց ծավալը, համակարգվածությունը, հասցեատերերին, ընտրողների կամքի վրա ազդեցության մեխանիզմը և վերջնական արդյունքի հետ պատճառական կապը:

Երրորդ անձի ներկայացուցիչն անհրաժեշտ է համարում նշել, որ ընտրությունների գործընթացում ներգրավված են եղել դիտորդներ, վստահված անձինք, ընտրական հանձնաժողովի ընդդիմադիր անդամներ, և այդ շրջանակներից առկա չէ էական պնդում առ այն, որ ընտրությունների ընթացքում տեղի է ունեցել 27.000 ընտրողի քվեի խեղաթյուրում, թեկուզև կարող են լինել տեխնիկական խնդիրներ՝ ցուցակների հետ կապված: Նույնիսկ եթե խոսվում է ենթադրյալ խնդիրների մասին, ապա դրանք վերաբերում են 400 տեղամասի, և պետք է

գնահատվի հենց այդ տեղամասերի փաստական և իրավական պատկերը: Երրորդ անձի ներկայացուցչի գնահատմամբ՝ Սահմանադրական դատարանի դիրքորոշումների տրամաբանությամբ՝ որևէ ընտրատեղամասում կամ տարածքում կատարված խախտումները չեն կարող հիմք հանդիսանալ այլ տեղամասերում նմանատիպ խախտումների մասին ենթադրություններ անելու համար: Յուրաքանչյուր խախտում պետք է լինի կոնկրետ, իրավաբանորեն փաստարկված և արդյունքի վրա ազդեցություն ունեցող:

ժզ. Անդրադառնալով այն պնդմանը, համաձայն որի՝ ԿԸՀ-ն իրավասու չէր կայացնելու թիվ 254-Ա և թիվ 255-Ա որոշումները և անվավեր ճանաչել թիվ 10/51 և 35/65 ընտրական տեղամասերի արդյունքները, Երրորդ անձի ներկայացուցիչն անհրաժեշտ է համարում նշել, որ այս հարցի քննարկումը դուրս է Բարձր դատարանի քննարկման շրջանակներից, ինչը նախատեսվել է հենց Բարձր դատարանի՝ նախկինում կայացրած որոշումներով (ՍԴՈ-1606, ՍԴՈ-1028, ՍԴՈ-1364), քանի որ նշված որոշումները վիճարկվել են դատական կարգով և Վարչական դատարանի թիվ ՎԴ/9914/05/26 և ՎԴ/9915/05/26 վճիռներով թողնվել ուժի մեջ:

Երրորդ անձի ներկայացուցիչն արձանագրում է, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը նույնացնում է երկու տարբեր իրավական հարց՝ առանձին ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչման հիմքը և Ազգային ժողովի ընտրությունների համապետական արդյունքի վրա այդ անվավեր ճանաչման հնարավոր ազդեցությունը: Թիվ 12/13, 10/51 և 35/65 ընտրական տեղամասերի արդյունքների անվավեր ճանաչմամբ իրավականորեն հաստատվել է, որ այդ տեղամասերում քվեարկության իրական արդյունքը հնարավոր չէ պարզել: Դրանցից երկուսի՝ թիվ 10/51 և 35/65 տեղամասերի մասով ԿԸՀ թիվ 255-Ա և թիվ 254-Ա որոշումները վիճարկվել են Վարչական դատարանում, իսկ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պահանջները թիվ ՎԴ/9915/05/26 և ՎԴ/9914/05/26 գործերով մերժվել են: Հետևաբար՝ այս փուլում իրավական ելակետը ոչ թե այն է, թե նշված տեղամասերում որ քաղաքական ուժը որքան ձայն էր ստացել, այլ այն, որ այդ ձայները՝ որպես քվեարկության իրական արդյունք, հայտնի և հաշվառելի չեն: Քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչված տեղամասում մասնակիցների թիվն արձանագրվում է որպես անճշտությունների գումարային չափ, իսկ արձանագրության մյուս ցուցանիշները, բացառությամբ անճշտությունների չափի, արձանագրվում են 0: Այսինքն՝ օրենքը նման իրավիճակի համար նախատեսում է ոչ թե անվավեր ճանաչված արձանագրություններից առանձին թվերի ընտրովի վերականգնում, այլ ամբողջական զրոյացում և մասնակիցների թվի տեղափոխում անճշտությունների դաշտ:

Երրորդ անձի ներկայացուցիչը եզրահանգում է, որ եթե տեղամասի արդյունքն անվավեր է ճանաչվել այն պատճառով, որ քվեարկության իրական արդյունքը

հնարավոր չէ պարզել, ապա նույն անվավեր ճանաչված արձանագրությունից չի կարող վերցվել միայն Դիմողին ձեռնտու թիվը և ներկայացվել որպես հաստատված, իրավականորեն հաշվառելի քվե: Այդպիսի մոտեցումը հակասում է անվավեր ճանաչելու բուն հետևանքին և ընտրական օրենսդրությամբ նախատեսված հաշվարկային մեխանիզմին: Այս նույն տրամաբանությունն է դրված նաև Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի հիմքում. խնդրո առարկա 259-Ա որոշման մեջ ԿԸՀ-ն մեջբերել է 95-րդ հոդվածի 4-րդ մասի կանոնը, ըստ որի՝ մանդատների բաշխմանը մասնակցում են այն կուսակցությունները և դաշինքները, որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի համապատասխան տոկոսը: Այսինքն՝ անճշտություններն օրենքով ոչ թե անտեսվում են, այլ ներառվում են արդյունքը հաշվարկող հայտարարի մեջ: Հետևաբար՝ ազդեցության հարցը պետք է գնահատվի ոչ թե ենթադրությամբ, թե անվավեր ճանաչված տեղամասերում ընտրողներն իրականում ինչպես էին քվեարկել, այլ օրենքով սահմանված բանաձևով:

Երրորդ անձի ներկայացուցիչը նշում է, որ երբ տեղամասի արդյունքները ճանաչվել են անվավեր այն հիմքով, որ այդ տեղամասում քվեարկության իրական արդյունքն այլևս չի կարող հավաստիորեն պարզվել, իրավական խնդիրն այլևս «սկզբնական» վիճակի ամբողջական վերականգնումը չէ, քանի որ դա ուղղակի հնարավոր չէ, այլ այն հետևանքի ընտրությունը, որն ամենաքիչն է վնասում ընտրական իրավունքի սահմանադրական սկզբունքներին: ԿԸՀ 2026 թվականի հունիսի 14-ի N 259-Ա որոշմամբ արդեն հրապարակվել են համապետական արդյունքները, մանդատների բաշխմանը մասնակցող ուժերը և մանդատների բաշխումը: Եթե դրանից հետո առանձին տեղամասի ընտրողը կրկին քվեարկում է, նա այլևս չի գտնվում 2026 թվականի հունիսի 7-ի ընտրողի վիճակում. նա գիտի ամբողջ հանրապետության արդյունքները, գիտի անցողիկ շեմի հաշվարկային նշանակությունը և գիտի, որ իր քվեն գործնականում պատասխանելու է ոչ թե 18 քաղաքական ուժերի միջև ազատ ընտրության սկզբնական հարցին, այլ Դիմողի՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության՝ Ազգային ժողով անցնելու/չանցնելու հարցին: Նույն պատճառով տեղամասային վերաքվեարկությունը չի կարող համարվել «խախտումների հետևանքները շտկող» միջոց: Երրորդ անձի ներկայացուցիչը փաստում է, որ նույն եզրահանգումը վերաբերում է նաև բոլոր 2005 ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու տարբերակին:

ԺԷ. Ամփոփելով իր դիրքորոշումները՝ Երրորդ անձի ներկայացուցիչը խնդրում է մերժել սույն միավորված գործով Դիմողների դիմումներով ներկայացված պահանջները և Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումը թողնել ուժի մեջ:

15. Դիտորդական առաքելությունների կարծիքները

Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության՝ 2026 թվականի հունիսի 7-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների վերաբերյալ նախնական եզրակացություններում (կազմվել է ընդհանուր նախաձեռնության արդյունքում, որում ներգրավված են ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ), ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովը (ԵԱՀԿ ԽՎ), Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ) և Եվրոպական խորհրդարանը (ԵԽ)), մասնավորապես, նշված է (https://odihr.osce.org/sites/default/files/documents/official_documents/2026/06/ARM%20Parliamentary%202026_PS_08.06.2026_ARM.pdf). «2026 թվականի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունները ընտրողներին ապահովել են քաղաքական այլընտրանքների միջև իրական ընտրություն կատարելու հնարավորությամբ՝ ընդհանուր առմամբ լավ կազմակերպված գործընթացի պայմաններում: Քարոզարշավի ընթացքում արձանագրվել է արտերկրից ուղղակի ճնշում՝ առևտրային սահմանափակումների խստացման և անվտանգության սպառնալիքների տեսքով, որը նպատակ ուներ հօգուտ ընդդիմադիր ուժերի ոչ պատշաճ կերպով ազդել ընտրողների վրա: Քարոզարշավն աչքի է ընկել բարձր առճակատմամբ և պառակտող հռետորաբանությամբ, ինչպես նաև ձայների գնման և ընտրական այլ խախտումների վերաբերյալ մեղադրանքներով, որոնք հանգեցրել են ընդդիմության թեկնածուների և ակտիվիստների նկատմամբ բազմաթիվ քրեական վարույթների հարուցմանը, ինչի հետևանքով ընդդիմության բազմաթիվ աջակիցներ ձեռնպահ են մնացել քարոզարշավին ակտիվ մասնակցելուց: Այս հանգամանքները, ինչպես նաև պետական հատվածի աշխատակիցների նկատմամբ իշխող կուսակցության միջոցառումներին մասնակցելու նպատակով գործադրված ճնշումները և վերջերս ներդրված սոցիալական և տնտեսական միջոցառումները մտահոգություններ են առաջացրել քարոզչություն իրականացնելու հնարավորությունների հավասարության առնչությամբ: Իրավական դաշտը ստեղծում է ժողովրդավարական ընտրությունների անցկացման ամուր հիմք, իսկ ընտրական վարչարարությունը վայելել է շահագրգիռ կողմերի վստահությունը: Նախընտրական ֆինանսավորման նկատմամբ անբավարար վերահսկողությունը և կարգավորումը սահմանափակել են թափանցիկությունը և հանրային վերահսկողության հնարավորությունները: Անկողմնակալ և վստահելի տեղեկատվություն ստանալու ընտրողների հնարավորությունների վրա բացասաբար են ազդել բևեռացված մեդիա միջավայրը, կողմնակալ լրատվական լուսաբանումը և մանիպուլյատիվ բովանդակության կիրառմամբ պառակտող առցանց քարոզարշավը: Ընտրության

օրվա գործընթացները՝ դիտարկված ընտրատեղամասերի ճնշող մեծամասնությունում, ստացել են առավելապես դրական գնահատական:

Ընտրություններն անցկացվել են բազմակարծիք և խիստ բևեռացված միջավայրում: (…)

(…) Ընտրությունների վարչարարությունը իրականացնող մարմինը ապահովել է տեխնիկական նախապատրաստական աշխատանքների իրականացումը պրոֆեսիոնալ և արդյունավետ կերպով և վայելել է շահագրգիռ կողմերի վստահությունը իր տեխնիկական կարողությունների նկատմամբ: (…) Չնայած գործընթացի ընդհանուր հասանելիության բարելավմանն ուղղված ջանքերին՝ բազմաթիվ ընտրական տեղամասեր շարունակում էին մնալ ոչ հասանելի հաշմանդամություն ունեցող ընտրողների համար:

(…) ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն տեղական մակարդակում վարչական ռեսուրսների համակարգային չարաշահում չի արձանագրել, սակայն դիտարկել և ստացել է բազմաթիվ հաղորդումներ, որոնցից մի քանիսը գնահատել է որպես արժանահավատ, իշխող կուսակցության նախընտրական միջոցառումներին մասնակցելու նպատակով ընտրողների նկատմամբ ճնշումների վերաբերյալ: Այս հանգամանքը, ինչպես նաև վերջերս ներդրված կամ նախաձեռնված սոցիալական և տնտեսական միջոցառումներն առավելություն են ստեղծել իշխող կուսակցության համար և խաթարել են քարոզչություն իրականացնելու հավասար հնարավորությունները, ինչը հակասում է ԵԱՀԿ պարտավորություններին: Միևնույն ժամանակ, առկա էին մի քանի պնդումներ, ըստ որոնց՝ որոշ տնտեսական դերակատարներ ճնշում են գործադրել ընտրողների վրա՝ ի շահ ընդդիմադիր կուսակցությունների: Հնչել են բազմաթիվ մեղադրանքներ ընտրակաշառքների և ընտրական այլ խախտումների վերաբերյալ, որոնք իշխանություններն ակտիվորեն քննության են առել: Սակայն այդ քննությունները հիմնական ընդդիմադիր կուսակցությունների կողմնակիցների և թեկնածուների մոտ ձևավորել են օրենքի ընտրովի կիրառման ընկալում և մտահոգություններ առաջացրել քարոզարշավի հետագա ընթացքի վերաբերյալ:

Առցանց քարոզչությունը բավականին լայնորեն տարածված էր, սակայն դրա կարգավորումը սահմանափակվում էր միայն քարոզչական բովանդակության և վճարովի քաղաքական գովազդը նշելու պահանջներով, ինչը սահմանափակում էր թափանցիկության և վերահսկողության հնարավորությունները: Առցանց քարոզարշավն իր բնույթով եղել է առճակատային և պառակտող՝ ուղեկցվելով կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից միմյանց հասցեին օտարերկրյա միջամտության և օտար պետությունների հետ կապերի վերաբերյալ փոխադարձ մեղադրանքներով: Որոշ թեկնածուներ և երրորդ կողմ հանդիսացող օգտատերերի հաշիվներ իրենց քաղաքական մրցակիցներին վարկաբեկելու

նպատակով տարածել են արհեստական բանականությամբ ստեղծված մանիպուլյատիվ բովանդակություն, որը հետագայում լայնորեն տարածվել է առցանց հարթակներում: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն արձանագրել է կեղծ և ոչ իրական հաշիվների կողմից Կառավարության և ընտրական գործընթացի վարկաբեկման նպատակով տարածված մանիպուլյատիվ և կեղծ բովանդակություն, թեև դա նախընտրական քննարկումներում նշանակալի դեր չի խաղացել: Սա համահունչ է փաստերի ստուգմամբ զբաղվող մի շարք կազմակերպությունների եզրակացությունների հետ, որոնց համաձայն զգալիորեն աճել են համակարգված ապատեղեկատվական գործողությունները, որոնք, ըստ այդ կազմակերպությունների, գալիս էին արտերկրից: (…)

(…)

Ընտրության օրն անցել է կազմակերպված և հանգիստ, չնայած իշխանությունների կողմից հաղորդված ընտրական իրավախախտումների վերաբերյալ մի շարք քրեական մեղադրանքներին և քննություններին: Ընտրատեղամասերի բացման և քվեարկության գործընթացները, դիտարկումների ճնշող մեծամասնության շրջանակներում՝ գնահատվել են դրական: (…)

(…)

Ձայների հաշվարկը դրական է գնահատվել դիտարկված 158 ընտրատեղամասերից 144-ում և ընդհանուր առմամբ եղել է թափանցիկ, արդյունավետ ու կանոնակարգված: Ընտրական գործընթացի մասնակիցների ներկայացուցիչները ներկա են եղել բոլոր դիտարկված հաշվարկների ընթացքում, իսկ քաղաքացիական դիտորդները՝ դիտարկումների գրեթե կեսում: ՄԸԴԱ-ի դիտորդները կարողացել են առանց սահմանափակումների հետևել ձայների հաշվարկի գործընթացին, իսկ ՏԸՀ-ները լիարժեք համագործակցել են նրանց հետ:

(…)

ՄԸԴԱ-ի դիտորդները դրական են գնահատել արդյունքների ամփոփման գործընթացը 50 դիտարկումներից 43-ում: Սակայն ամբողջ երկրի տարածքում գործող 38 ԸԸՀ-ներից 11-ում ԿԸՀ-ի կողմից ԸԸՀ-ներին տրված բանավոր ցուցումների հիման վրա կիբեռանվտանգության նկատառումներով ՄԸԴԱ-ի դիտորդներին արգելվել է հետևել տվյալների մուտքագրման գործընթացին, ինչը սահմանափակել է գործընթացի թափանցիկությունը: Ընտրական նյութերի ընդունման և արդյունքների ամփոփման գործընթացը գնահատվել է որպես կազմակերպված, մասնագիտական և արդյունավետ, սակայն դիտորդները նաև արձանագրել են գերբեռնվածություն և գործընթացի իրականացման ձգձգումներ, ինչպես նաև նշել, որ որոշ ԸԸՀ-ների տարածքները լիովին հարմարեցված չեն եղել այդ նպատակների համար: (…)

(…)»:

ԱՊՀ դիտորդական առաքելությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունները գնահատել է բաց և մրցակցային՝ անցկացված Սահմանադրությանն ու Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան:

16. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սահմանադրական դատարանը սույն գործով անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ներքոնշյալ հանգամանքներին.

ա. արդյոք ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակի պատգամավորի թեկնածուների և ընտրական գործընթացի առանձին մասնակիցների նկատմամբ նախաձեռնված քրեական վարույթներն ազդել են ընտրությունների ընդհանուր արդյունքների վրա.

բ. արդյոք ընտրությունների և դրան նախորդող ժամանակահատվածում տեղ է գտել վարչական ռեսուրսի ոչ իրավաչափ օգտագործում, այդ թվում՝ Կառավարության կողմից տնտեսական և սոցիալական ծրագրեր/միջոցառումներ իրականացնելու դրսևորումներով.

գ. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն չնշանակելը՝ ընտրությունների ընդհանուր արդյունքի վրա ազդեցության հարցի համատեքստում.

դ. արդյոք նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեղի են ունեցել բռնության կոչեր, սպառնալիքներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքի վրա,

ե. արդյոք Սահմանադրական դատարան ներկայացված դիմումներում նշված՝ Դիմողների գնահատմամբ այլ իրավախախտումների առնչությամբ փաստերն ու փաստարկներն ունեն ապացուցողական նշանակություն:

17. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

17.1. Ժողովրդավարական պետությունում հանրային իշխանության յուրաքանչյուր դրսևորում իր լեգիտիմությունն ստանում է բացառապես ժողովրդից, իսկ իշխանության գործադրման իրավաչափությունը պայմանավորված է ժողովրդական մանդատի առկայությամբ:

Ժողովրդավարության համակարգում ընտրությունները կատարում են առաջնային/հիմնարար գործառույթներ:

Նախ՝ դրանք ապահովում են իշխանության լեգիտիմությունը. Ժողովրդավարական պետությունում իշխանությունը պետք է վայելի հասարակության վստահությունը և բխի քաղաքացիների ազատ կամարտահայտությունից:

Ընտրությունների միջոցով ձևավորված իշխանությունն օժտվում է ժողովրդական մանդատով, ինչը նրան հաղորդում է իրավաքաղաքական լեգիտիմություն:

Երկրորդ՝ ընտրությունները քաղաքական պատասխանատվության և հաշվետվողականության կարևորագույն գործիք են: Որոշակի պարբերականությամբ ընտրությունները հնարավորություն են տալիս հանրությանը՝ գնահատելու իշխանության գործունեությունը, վերահսկելու հանրային կառավարման արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում իրականացնելու իշխանության խաղաղ ու սահմանադրական եղանակով փոփոխություն: Ընտրությունները ոչ միայն իշխանության ձևավորման, այլև դրա սահմանափակման և վերահսկման միջոց են:

Երրորդ՝ ընտրությունները նպաստում են քաղաքական բազմակարծության և հասարակական շահերի ներկայացուցչության ապահովմանը: Ժողովրդավարական պետությունը ենթադրում է հասարակության ներսում գոյություն ունեցող տարբեր սոցիալական, քաղաքական և գաղափարական խմբերի շահերի արտահայտման հնարավորություն: Ընտրական գործընթացն ստեղծում է մրցակցային քաղաքական միջավայր, որում տարբեր քաղաքական ուժեր հնարավորություն են ստանում ներկայացնելու սեփական ծրագրային մոտեցումները՝ հավակնելով ժողովրդի վստահության քվեին:

17.2. Ժողովրդավարական ընտրությունները պետության ժողովրդավարական բնութագրիչի անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայմանն են: Ընտրությունները կարող են իրական ժողովրդաիշխանության արտահայտություն լինել այն դեպքում, երբ դրանք անցկացվում են իրավունքի գերակայության, քաղաքական բազմակարծության, խոսքի ազատության, անկախ դատական իշխանության և մարդու հիմնարար իրավունքների/ազատությունների պաշտպանության պայմաններում: Հակառակ պարագայում՝ ընտրական գործընթացը կարող է վերածվել ժողովրդավարական լեգիտիմության պատրանքի: Ընտրական գործընթացում պատշաճ վարչարարությունը, ընտրական վեճերի արդյունավետ դատական վերահսկողությունը, ընտրական գործընթացի թափանցիկությունը, քաղաքական մրցակցության հավասար պայմանների ապահովումը և ընտրական իրավախախտումների կանխարգելումն այն ինստիտուցիոնալ նախադրյալներն են, որոնց բացակայության պայմաններում ժողովրդաիշխանության սկզբունքն առնվազն կարող է վերածվել սոսկ հռչակագրային դրույթի:

17.3. Ժողովրդավարության երաշխավորումը հանդես է գալիս որպես կայուն, լեգիտիմ և իրավական ու ժողովրդավարական պետության կառուցման անփոխարինելի նախապայման, իսկ ընտրությունները՝ որպես ժողովրդաիշխանության նյութականացման, հանրային իշխանության լեգիտիմացման և սահմանադրական ժողովրդավարության կենսունակության ապահովման հիմնարար կառուցակարգ:

17.4. Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Սահմանադրությունն ամրագրում է ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքները, որոնք եզրագծում են ընտրական իրավահարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման կառուցակարգերը:

Ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի ուժով Հայաստանի Հանրապետությունն ունի իր քաղաքացիների (բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի)՝ որոշ սահմանադրաիրավական պայմանների առկայության պարագայում ընտրելու և ընտրվելու իրավունքն ապահովելու պարտականություն: Սահմանադրության 48-րդ հոդվածի համաձայն՝ ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքով օժտված են Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Նույն հոդվածի ուժով Ազգային ժողովի պատգամավոր ընտրվելու իրավունքով օժտված է քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

Սահմանադրության նույն հոդվածով սահմանվում է նաև, որ ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

Հավասար ընտրական իրավունքի սկզբունքի էությունը «մեկ ընտրող՝ մեկ ձայն» բանաձևի ապահովումն է, ինչը ենթադրում է պետության պարտականությունը՝ արդյունավետ ընթացակարգերի և կառուցակարգերի միջոցով բացառելու կրկնակի/բազմակի քվեարկությունների հնարավորությունը, ինչպես նաև ապահովելու մասնակցային հավասար հնարավորություններ ընտրական գործընթացին մասնակից քաղաքական միավորների համար:

Հավասար ընտրական իրավունքի՝ հնարավորությունների հավասարության տարրը բացահայտվել է Սահմանադրական դատարանի 2012 թվականի մայիսի 31-ի ՍԴՈ-1028 որոշմամբ, որում, մասնավորապես, նշվել է. «(...) հնարավորությունների հավասարությունը հավասար ընտրական իրավունքի կարևոր բաղադրատարրերից է: Վերջինս իր հերթին ներառում է, մասնավորապես, այնպիսի պայմաններ,

ինչպիսիք են լրատվամիջոցների կողմից լուսաբանումը, ռադիոյի և հեռուստատեսության եթերաժամերի տրամադրումը, ընտրարշավի անկաշկանդ իրականացումը, խոսքի և արտահայտվելու ազատության երաշխավորումը, ընտրարշավի ֆինանսավորման թափանցիկությունը և այլն»:

Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ՝ «(...) վերահաստատում է իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ ընտրական գործընթացի սուբյեկտներին հավասար հնարավորությունների ընձեռումը սերտորեն առնչվում է ընտրողների կարծիքի ձևավորմանը և ենթադրում պետական մարմինների չեզոքություն՝ նախընտրական քարոզչության, զանգվածային լրատվամիջոցների լուսաբանումների նկատմամբ: Սակայն ընտրական գործընթացների կազմակերպման և անցկացման միջազգային իրավական չափանիշների անվերապահ պահպանման անհրաժեշտությունից ելնելով, սույն գործով հարկ է նշել, որ նախընտրական քարոզչության իրականացման արդարության և ազատության սկզբունքը չի կարող մեկնաբանվել այնքան տարածական, որ բացառվի խոսքի, տեղեկատվության ազատության, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների՝ սեփական տեսակետ ունենալու և այն ներկայացնելու իրավունքի իրականացումը» (10.06.2007 թ., ՍԴՈ-703):

Ազատ ընտրական իրավունքի սկզբունքը պահանջում է, որ պետությունն ապահովի ընտրողի կամքն ազատորեն ձևավորելու և այն արտահայտելու, ընտրողի քաղաքական կամքի ձևավորման ցանկացած ոչ իրավաչափ միջամտությունը բացառելու, ընտրական գործընթացում մրցակից քաղաքական միավորների կողմից իրենց ծրագրերի և գաղափարների ներկայացման և ընտրողների հետ հաղորդակցվելու հարցերում պետական իշխանության մարմինների չեզոքության, ազատ ընտրության այլ բաղադրիչների իրավական կառուցակարգերի ներդրումը և դրանց արդյունավետ գործարկումը:

Ընտրությունների իրական ժողովրդավարական բնույթը խեղաթյուրվում է, երբ ընտրողի կամքը ձևավորվում և արտահայտվում է արտաքին ազդեցությունների պայմաններում: Իշխանության լեգիտիմությունը կարող է բխել ընտրողի՝ բացառապես ինքնուրույն, գիտակցված, անկաշկանդ կամահայտնությունից, ինչին նպաստում է նաև ընտրողի նկատմամբ հոգեբանական հարկադրանքը բացառող առողջ քաղաքական միջավայրի առկայությունը:

Ուղղակի ընտրական իրավունքի սկզբունքի պահանջն է, որ Հայաստանի Հանրապետությունում Ազգային ժողովը, տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ համայնքների ավագանիների կողմից ընտրվող համայնքների ղեկավարների, ընտրվեն ուղիղ և անմիջականորեն՝ ընտրողների կողմից:

Քվեարկության գաղտնիության սկզբունքի համաձայն՝ պետության պարտականությունն է ապահովել, որ քվեարկության ժամանակ ընտրողի

քաղաքական կամքի արտահայտումը տեղի ունենա գաղտնիության պայմաններում և երաշխիքներով:

17.5. Սահմանադրական դատարանն ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճի քննության առանձնահատկությունների թվին է դասել.

«(…)

- ընտրություններն անվավեր ճանաչելու կամ չճանաչելու որոշումը յուրաքանչյուր դեպքում կախված է կոնկրետ հանգամանքներից և պետք է հաշվի առնել իրավաբանորեն փաստարկված խախտման լրջությունն ու ծանրությունը, խախտումների ընդգրկման ծավալը, խախտումներ կատարելու միջոցներն ու ձևերը,

- (…) գործեր քննելիս՝ սահմանադրական դատարանը պետք է ելնի ոչ միայն Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների պաշտպանության, այլև ընտրական գործընթացի, ողջ ընտրական համակարգի հուսալիության ու վստահելիության հանգամանքից՝ օրենսդրությանը համապատասխան այն կազմակերպելու և անցկացնելու առումով,

- ընտրական իրավունքների ապացուցված խախտումները կարող են հիմք հանդիսանալ ընտրությունների արդյունքները վերանայելու համար, սակայն այդ վերանայման էական բովանդակությունը պետք է կազմի այն հարցի պատասխանը, թե արդյո՞ք առկա իրավախախտումներն այնպիսի ընդգրկում ունեն, որ կարող են կասկածի տակ դնել ամբողջ ընտրությունների արդյունքները և վավերությունը,

- որևէ ընտրատեղամասում կամ տարածքում կատարված խախտումները չեն կարող հիմք հանդիսանալ այլ տեղամասերում նմանատիպ խախտումների մասին ենթադրություններ անելու կամ վստահության աստիճանը կասկածի տակ դնելու համար: Ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու հիմք կարող են հանդիսանալ միայն իրավաբանորեն փաստարկված այն կոնկրետ խախտումները, որոնք էական ազդեցություն են ունեցել կամ կարող էին ունենալ ընտրությունների վերջնական արդյունքների վրա,

- ընտրությունների արդյունքները կարող են անվավեր ճանաչվել, եթե (…) ընդհանուր արդյունքն աղավաղված է» (24.03.2003 թ., ՍԴՈ-408):

17.6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության համար անհրաժեշտ է.

- նկատի ունենալ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով,

- հստակ պատկերացնել դատական յուրաքանչյուր ատյանի իրավազորության շրջանակները,

- օրենքով սահմանված ժամկետներում և կարգով իրականացնել ընտրական իրավունքի պաշտպանությանն ուղղված միջոցներն այն դատարանում, որն ունի համապատասխան իրավազորություն,

- հաշվի առնել, որ ընտրական իրավունքի դատական պաշտպանության հարցերով Սահմանադրական դատարանը ոչ թե այլ դատարանների նկատմամբ վերադաս դատարան է, այլ իրականացնում է Սահմանադրությամբ իրեն վերապահված կոնկրետ իրավասություն:

17.7. Սահմանադրական դատարանի 2021 թվականի հուլիսի 17-ի ՍԴՈ-1606 որոշմամբ ընդգծվել է, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէ և չի կարող փոխարինել ընտրական վարչարարության մարմիններին, դատարաններին և իրավապահ համակարգի օղակներին, որոնց՝ ընտրական իրավախախտումների դեմ պայքարի արդյունավետությունն ուղղակիորեն կախված է նաև օրենքով նախատեսված կարգով ու համապատասխան իրավունքներով օժտված ընտրական գործընթացին մասնակից քաղաքական ուժերի ու նրանց ներկայացնող կամ նրանց կողմից առաջադրված հազարավոր իրավասուբյեկտների կողմից իրենց՝ Ընտրական օրենսգրքով վերապահված ընթացակարգային իրավունքների լիարժեք իրացումից: Սահմանադրական դատարանի որոշման իրավական հիմք կարող է հանդիսանալ բացառապես նշված սուբյեկտների իրավաչափ գործողության արդյունքում ձևավորված ապացուցողական նշանակության իրավական փաստերի համակցության համադրված գնահատումը (10.7-րդ կետ):

17.8. Սահմանադրական դատարանը հիշյալ որոշմամբ գտել է, որ Սահմանադրական դատարանում այս տեսակի վեճերով դիմումներին առաջադրված ընտրական իրավունքի՝ օրենսդրությամբ նախատեսված իրավական պաշտպանության միջոցները բարեխղճորեն սպառելու պայմանից շեղումները թույլատրելի են միայն այն դեպքերում, երբ դիմողի կամ երրորդ անձի դիրքորոշման հիմքում վկայակոչված հանգամանքն ակնհայտորեն կվկայի Սահմանադրության 7-րդ հոդվածով ամրագրված սկզբունքներից որևէ մեկի խախտման մասին:

Ամեն դեպքում, Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված վեճերով դիմողը պարտավոր է ապահովել իր պահանջի համար հիմք ծառայող հանգամանքների ապացուցման համար անհրաժեշտ նվազագույն ապացուցողական շեմը: Այլապես՝ Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով այս տեսակի վեճի քննության համար ժամանակի սղությունը, դատավարության մասնակից իրավասուբյեկտների հնարավոր ընդարձակ կազմը, ուսումնասիրության և քննության համար ներկայացվող նյութերի և տեղեկատվության՝ այլ տեսակի գործերի և դատավարությունների համեմատ բազմակի ավել ծավալը, բազմաշերտ իրավահարաբերությունների առկայությամբ հնարավոր հարցադրումների և քննության ենթակա հարցերի հնարավոր մեծ շրջանակը, ինչպես նաև

արդարադատության կազմակերպման համար կարևորություն ունեցող այլ խնդիրներ, չի կարող թույլ տալ սույն տեսակի վեճի լուծման համար առնվազն prima facie կարևորություն չունեցող հանգամանքների կամ դրանց առկայության կամ բացակայության վերաբերյալ փաստարկումների prima facie հիմնավորվածության բացակայության պայմաններում քննությամբ վտանգել նման վեճերին առաջադրվող ժամկետային սահմանափակումների նպատակը, այն է՝ ժողովրդավարական գործընթացի (ազատ ընտրությունների) արդյունքի օր առաջ կենսագործումն ու սահմանադրական կայունությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ընտրախախտումների առկայության հնարավորության կամ դրանց ազդեցության մասին ենթադրությունները, ինչպես նաև նման ընտրախախտումների դրվագային դրսևորումները չեն կարող բավարար լինել Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված վեճերով դիմողին առաջադրվող ապացուցման շեմը բավարարված համարելու դատողության, հետևաբար՝ Սահմանադրական դատարանի կողմից այդ հանգամանքը քննության առարկա դարձնելու համար:

Միևնույն ժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 10-րդ մասի վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանը նշել է, որ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճի լուծման դեպքում նախատեսվել է հատուկ կանոն, ըստ որի՝ դիմող կողմի ներկայացրած տեղեկությունները համարվում են հավաստի, որը գործում է բացառապես ներքոնշյալ երկու նախապայմանների միաժամանակյա առկայության պարագայում.

- պատասխանող կողմը հրաժարվում է դրանց վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտելուց,

- դրանք չեն հերքվում Սահմանադրական դատարանի կողմից ձեռք բերված, տվյալ գործով որոշում ընդունելու համար էական նշանակություն ունեցող այլ ապացույցներով:

Այսինքն՝ նշված երկու նախապայմաններից նույնիսկ մեկի բացակայության պարագայում չի գործում դիմող կողմի ներկայացրած տեղեկությունների հավաստիության կանխավարկածը: Միևնույն ժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 11-րդ մասին համապատասխան՝ այն դեպքում, երբ պատասխանող կողմն ընդունում է այն հանգամանքները, որոնցով դիմող կողմը հիմնավորում է իր պահանջներն ու առարկությունները, ապա դիմող կողմն ազատվում է այդ հանգամանքների վերաբերյալ հետագայում ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությունից (10.3-րդ կետ):

17.9. Սահմանադրական դատարանը սույն որոշման 17.7-17.8-րդ կետերում հիշատակվածը կիրառելի է համարում նաև սույն գործով:

18. Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Բարգավաճ Հայաստան» կուսակցության՝ «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 95-րդ հոդվածի 4-րդ մասի՝ անճշտությունների թվի գումարման մասով՝ Սահմանադրության 2-րդ հոդվածին, 7-րդ հոդվածին և 89-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ միջնորդությունը, 2026 թվականի հունիսի 29-ի ՍԴԱՈ-141 աշխատակարգային որոշմամբ մերժել է այն հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրության՝ «Օրինականության սկզբունքը» վերտառությամբ 6-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրական դատարանի լիազորությունները սահմանված են Սահմանադրության 168-րդ հոդվածով, որի 1-ին մասի ուժով, ի շարս այլնի՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը՝ Սահմանադրության 169-րդ հոդվածով նախատեսված համապատասխան սուբյեկտների դիմումի հիման վրա: Մասնավորապես՝ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք Սահմանադրական դատարան կարող են դիմել անհատական դիմումների հիման վրա՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանը փաստում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքն սպառիչ կարգավորում է այն դեպքերը, երբ համապատասխան գործերի քննության ընթացքում Սահմանադրական դատարանը կարող է անդրադառնալ համապատասխան գործերով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի

դրույթների սահմանադրականության հարցին, մասնավորապես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածի 9-րդ մասով, 78-րդ հոդվածի 7-րդ մասով, 82-րդ հոդվածի 13-րդ մասով նախատեսված դեպքերում:

Ավելին, Սահմանադրական դատարանը 2021 թվականի հուլիսի 17-ի ՍԴՈ-1606 որոշմամբ ընդգծել է. «(...) ընտրական իրավունքը կարգավորող իրավական նորմերի սահմանադրականության ստուգումը Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված վեճի շրջանակում կարող է հանգեցնել ընտրական իրավունքի նորմերի կայունության վտանգավոր միջամտության՝ ընտրական գործընթացների ավարտից հետո նորմը հակասահմանադրական ճանաչելու հետևանքի հետադարձորեն կիրառմանն ընտրական գործընթացի կամ դրա արդյունքների նկատմամբ Սահմանադրական դատարանում գործով որոշում կայացնելու դեպքում կամ տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանը, որն այն չուներ կիրառման՝ ընտրական գործընթացի պահին: Իսկ եթե Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված վեճի վերաբերյալ գործերով ընտրական իրավունքի նորմերի սահմանադրականության ստուգման մասին Սահմանադրական դատարանի որոշման ազդեցությունը չի տարածվելու մինչ այդ տեղի ունեցած ընտրության և դրա արդյունքների նկատմամբ, ապա Սահմանադրական դատարանը չի տեսնում այս դեպքում այն նպատակահարմարությունը, որ ընտրական իրավունքի նորմերի սահմանադրականության ստուգումը տեղի ունենա Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված վեճի վերաբերյալ գործերով, քանի որ նույն ստուգման հնարավորությունը ոչ պակաս արդյունավետությամբ ապահովված է նաև Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված Սահմանադրական դատարանի լիազորությունների իրականացման գործերով:

Վերոնշյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն ընդգծում է վերացական սահմանադրական վերահսկողության դիմումներով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու իրավասություն ունեցող հանրային իշխանության մարմինների դերակատարությունը՝ ընտրական գործընթացների մեկնարկից ժամանակային «ապահով տարածության» պահպանմամբ Սահմանադրական դատարանում սահմանադրականության ստուգման առարկա դարձնել նախորդ ընտրությունների արդյունքում տեղ գտած ենթադրյալ խնդրահարույց կարգավորումները՝ դրանով իսկ ապահովելով ամեն հաջորդ ընտրական գործընթացի համար «սերտած դասերի» բարեբեր արդյունքը»»:

Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ խնդրո առարկա գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականության հարցին անդրադառնալու իրավասություն Սահմանադրական դատարանին վերապահված չէ:

Սահմանադրական դատարանը վերոնշյալը վերաբերելի է համարում սույն գործին:

19. Մի շարք Դիմողներ փաստարկներ են ներկայացրել ընտրությունների և նախորդող ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող թեկնածուների և ընտրական գործընթացի այլ մասնակիցների նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու և հարկադրանքի միջոցների՝ իրենց գնահատմամբ անհամաչափ կիրառման մասին՝ նշելով դրանց անհիմն լինելն ու քաղաքական նպատակներ հետապնդելը, ինչը հանգեցրել է հնարավորությունների հավասարության սկզբունքի խախտման:

19.1. Սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ ընտրական գործընթացի մասնակիցների վարքագծում՝ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված հանցակազմի տարրերի առկայության կամ բացակայության գնահատումը, այդ համատեքստում՝ քրեական հետապնդումների հարուցումն ու հարկադրանքի միջոցների կիրառումը, իրավասու մարմինների իրավասության տիրույթում է, ուստի՝ նշված գործողությունների օրինականության, իրավաչափության գնահատումը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:

Ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի կամ ընտրական գործընթացի այլ մասնակցի նկատմամբ իրավասու մարմինների կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի հիման վրա օրենքով սահմանված կարգով հանրային քրեական հետապնդում հարուցելու քրեադատավարական գործիքակազմը նպատակ է հետապնդում ապահովելու ընտրական գործընթացի օրինականությունը: Միաժամանակ, քրեադատավարական գործիքակազմի/կառուցակարգերի կիրարկման արդյունքում քաղաքական հակառակորդների «չեզոքացումը», ապահովելով «սառեցնող ազդեցություն» (chilling effect), կարող է հանգեցնել հնարավորությունների անհավասարության, ազատ մրցակցային պայմանների խաթարման, քաղաքական բազմակարծության դրսևորումները զսպելուն՝ ազդելով ընտրողի կամահայտնության վրա:

19.2. Խնդրո առարկա հարցի համատեքստում իրավասու մարմինների կողմից Սահմանադրական դատարանին է տրամադրվել հետևյալ ամփոփ տեղեկատվությունը.

- ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից տրամադրված ամփոփ տեղեկանքի համաձայն՝ 2026 թվականի մայիսի 8-ից մինչև 2026 թվականի հունիսի 6-ը նախընտրական քարոզարշավի ընթացքում ՀՀ տարածքում արձանագրվել է ընտրություններին առնչվող առերևույթ հանցագործության 114 դեպք (ըստ օպերատիվ ամփոփագրերի):

2026 թվականի հունիսի 7-ին կայացած Ազգային ժողովի հերթական ընտրությունների ընթացքում ՀՀ տարածքում արձանագրվել է ընտրություններին առնչվող առերևույթ հանցագործության 126 դեպք (ըստ օպերատիվ ամփոփագրերի):

Արձանագրված բոլոր դեպքերը ներկայացվել են նախաքննության մարմին:

- ՀՀ քննչական կոմիտեի կողմից տրամադրված ամփոփ տեղեկանքի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 210-224.1-ին և 229-236-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ նախաձեռնվել է 212 քրեական վարույթ, որից 166-ի նախաքննությունը շարունակվում է, 9-ն ուղարկվել է դատարան, 16-ի վարույթը կարճվել է, 3-ն ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե, և 18 վարույթ միացվել է:

Հիշյալ 212 քրեական վարույթների շրջանակներում հանրային քրեական հետապնդում է հարուցվել 141 անձի նկատմամբ:

141 մեղադրյալներից 21-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, 21-ի նկատմամբ՝ տնային կալանքը, 7-ի նկատմամբ՝ վարչական հսկողությունը, 1-ի նկատմամբ դաստիարակչական հսկողությունը, 87-ի նկատմամբ՝ բացակայելու արգելքը, 4 մեղադրյալի նկատմամբ կայացվել է ձերբակալման որոշում, որոնք դեռ չեն հայտնաբերվել:

212 քրեական վարույթներից 9-ը՝ 16 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

- ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից տրամադրված ամփոփ տեղեկանքի համաձայն՝ 2026 թվականի հունիսի 7-ին նշանակված Ազգային ժողովի հերթական ընտրությունների առնչությամբ 2026 թվականի փետրվարի 7-ից ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննվել է ընդհանուր 156 քրեական վարույթ (որից՝ 125-ը նախաձեռնվել են ստացված հաղորդումների հիման վրա, 29-ն անջատվել են այլ քրեական վարույթից, 2-ն ստացվել են նախաքննական այլ մարմնից)՝ ընտրակաշառք տալու և ստանալու, ընտրակաշառքի միջնորդության, ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելու, ինչպես նաև դրանց համակցությամբ ընտրական իրավունքի իրականացումը խոչընդոտելու, հավաքին մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելու դեպքերի առթիվ:

- ՀՀ գլխավոր դատախազության կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ 2026 թվականի հունիսի 24-ի դրությամբ մշակված տվյալների համաձայն՝ ՀՀ դատախազության ստորաբաժանումների դատախազների կողմից հսկողություն է իրականացվել 2026 թվականի հունիսի 7-ի ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրությունների գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ ՀՀ նախաքննության մարմիններում ստացված 423 հաղորդման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 178 և 179-րդ հոդվածներով սահմանված կարգով քննարկման և լուծման օրինականության նակատմամբ:

Հաղորդումների քննարկման արդյունքում նախաձեռնվել է 332 քրեական վարույթ, որից 7-ը՝ դատախազի հանձնարարությամբ: 91 հաղորդման քննարկման արդյունքում քրեական վարույթ չի նախաձեռնվել: Քննված քրեական վարույթներով դատախազների կողմից հանրային քրեական հետապնդում է հարուցվել 391 անձի նկատմամբ: Մեղադրյալներից 86-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, մյուս մեղադրյալների նկատմամբ ընտրվել են այլընտրանքային խափանման միջոցներ:

Պատգամավորի 18 թեկնածուների վերաբերյալ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվել քրեական հետապնդում հարուցելու և ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու վերաբերյալ միջնորդություններ, որոնցից 15 անձի վերաբերյալ միջնորդությունները բավարարվել են, 3-ը դեռևս չեն քննարկվել: Պատգամավորի 11 թեկնածուի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանքը, 3-ի նկատմամբ՝ տնային կալանքը, 1-ի նկատմամբ՝ վարչական հսկողություն: 5 մեղադրյալի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: 29 քրեական վարույթ 107 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ հանձնվել է իրավասու դատարան:

19.3. ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ 2026 թվականի հունիսի 14-ի թիվ 258-Ա որոշման համաձայն՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ նախընտրական քարոզչության ընթացքում քրեական հետապնդում հարուցելը, ինչպես նաև ազատության սահմանափակումն ինքնին չեն կարող գնահատվել ազդեցություն ընտրության արդյունքների վրա»:

19.4. Հաշվի առնելով վերոնշյալը՝ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների և ընտրական գործընթացի այլ մասնակիցների նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելը և հարկադրանքի միջոցներ կիրառելը՝ քանակական ցուցիչով պայմանավորված, կարող էին ընտրողի կամահայտնության վրա ազդեցություն ունեցող գործոն լինել: Միաժամանակ, հանրային քրեական հետապնդման՝ օրենսդրությամբ կանխորոշված նպատակներից զատ այլ, այդ թվում՝ քողարկված քաղաքական նկատառումներով, հարուցման յուրաքանչյուր դեպք կարող է գնահատման առարկա դառնալ՝ ելնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքներից:

Բոլոր դեպքերում, իրավապահ մարմիններին օրենքով վերապահված գործառույթների իրականացումը չի կարող կախվածության մեջ դրվել ընտրությունների և վերջիններիս նախորդող ժամանակահատվածից, ինչպես նաև համապատասխան վարույթով անցնող անձի քաղաքական հայացքներից: Մյուս կողմից, խնդրո առարկա հարցի համատեքստում քրեական արդարադատության գործիքակազմը կիրառելիս պետք է բացառվեն օրենքից չբխող հայեցողական դրսևորումները:

19.5. «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության և «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության դիմումներում հիշատակված անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանվածության հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանը շեշտադրում է հանրային իշխանության մարմինների, դրանց պաշտոնատար անձանց կողմից անմեղության կանխավարկածի անտեսմամբ իրականացված գործողությունների և/կամ հայտարարությունների անթույլատրելիությունը, հատկապես՝ ընտրությունների և դրան նախորդող ժամանակահատվածում: Հանրային իշխանության մարմինների, դրանց պաշտոնատար անձանց ցանկացած գործողություն և/կամ հայտարարություն, որն այս հասարակական/քաղաքական «զգայուն» շրջանում կանխորոշում է անձի մեղավորությունը, խաթարում է ազատ և արդար ընտրությունների սահմանադրական երաշխիքները:

19.6. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ձևավորել է կայուն նախադեպային պրակտիկա առ այն, որ անմեղության կանխավարկածը կարող է խախտվել ոչ միայն դատավորի կամ դատարանի, այլև պետական իշխանության այլ մարմինների կողմից: Միաժամանակ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 2-րդ կետը չի կարող արգելել իշխանություններին հանրությանը տեղեկացնել ընթացիկ քրեական քննությունների մասին, սակայն դա պետք է իրականացվի անհրաժեշտ զսպվածությամբ և զգուշավորությամբ՝ հարգելով անմեղության կանխավարկածը: Հատկանշական է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից անմեղության կանխավարկածի խախտում են դիտարկվել ոստիկանության բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից անձի մեղավորության վերաբերյալ հայտարարությունները, ինչը, նախ՝ հանրությանը դրդում էր համապատասխան անձին համարել մեղավոր, և երկրորդ՝ կանխորոշում էր փաստերի գնահատումն իրավասու դատարանի կողմից (Allenet de Ribemont v. France, Application no. 15175/89, 10.02.1995, § 36, § 38, § 41):

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված անմեղության կանխավարկածը 6-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվող արդար քրեական դատաքննության բաղադրիչ տարրերից է: Այն կխախտվի, եթե հանցագործության մեջ մեղադրվող անձի վերաբերյալ պետական պաշտոնատար անձի հայտարարությունն արտահայտի կարծիք, որ տվյալ անձը մեղավոր է, մինչդեռ նրա մեղավորությունը դեռևս օրենքով սահմանված կարգով ապացուցված չէ: Նույնիսկ պաշտոնական մեղավորության հաստատման բացակայության պայմաններում

բավական է, որ առկա լինեն այնպիսի դատողություններ կամ ձևակերպումներ, որոնք վկայում են, որ պաշտոնատար անձը մեղադրյալին դիտարկում է որպես մեղավոր (Daktaras v. Lithuania, Application no. 42095/98, 10.10.2000, Final 17.01.2001, § 41):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է պետական պաշտոնյաների կողմից այն արտահայտությունների բառերի ընտրության կարևորությունը, որոնք նրանք հնչեցնում են նախքան անձին հանցագործության համար մեղավոր ճանաչելն ու դատապարտելը: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ նշված դրույթի կիրառման նպատակների համար կարևոր է համապատասխան արտահայտությունների փաստացի իմաստը, այլ ոչ դրանց բառացի ձևը (Lavents v. Latvia, Application no. 58442/00, 28.11.2002, Final 28.02.2003, § 126):

19.7. Սահմանադրական դատարանը նկատում է, որ ընտրությունների ամբողջ ժամանակահատվածում ընտրողները գտնվում են տեղեկատվական ակտիվ հոսքերի ազդեցության ներքո, և վերջիններիս կամքի ձևավորման վրա ազդեցություն են ունենում ինչպես հանրային իշխանության մարմինների և դրանց պաշտոնատար անձանց հայտարարությունները, այնպես էլ դրանց լուսաբանման եղանակները՝ լրատվամիջոցներով և սոցիալական ցանցերով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անմեղության կանխավարկածի երաշխավորման համատեքստում նշել է, որ լրատվամիջոցներով համապատասխան ագրեսիվ արշավը որոշ դեպքերում կարող է խոչընդոտել գործի արդար քննությանը՝ ազդելով հանրային կարծիքի և դրանով իսկ ամբաստանյալի մեղավորության հարցով դատարանի որոշման վրա (Kuzmin v. Russia, Application no. 58939/00, 18.03.2010, Final 04.10.2010, § 62):

19.8. Սահմանադրական դատարանը, նկատի առնելով վերոնշյալը, ինչպես նաև նշելով, որ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի թեկնածուի կամ ընտրական գործընթացի այլ մասնակիցների մեղավորության վերաբերյալ հրապարակային հայտարարությունները կարող են վտանգել վերջիններիս հանրային հեղինակությունը, բացասական վերաբերմունք ձևավորել համապատասխան քաղաքական ուժի (կուսակցությունների դաշինքի) կամ անձի նկատմամբ, միաժամանակ, արձանագրում է, որ քրեական վարույթներով անցնող համապատասխան անձանց անմեղության կանխավարկածի հարցի՝ բովանդակային առումով քննարկումը, ելնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքներից, դուրս է սույն վեճի շրջանակից:

20. Կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների թեկնածուների, ընտրական գործընթացի մասնակից քաղաքական ուժերի աջակիցների/համախոհների նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հաղորդագրությունների համատեքստում «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն», ինչպես նաև «Հանուն Հանրապետության ժողովրդավարության

պաշտպանների դաշինք» կուսակցությունները ներկայացրել են փաստարկներ ընտրական գործընթացի շրջանակներում մի շարք կոռուպցիոն հանցագործությունների և ընտրությունների արդյունքի վրա դրանց, իրենց գնահատմամբ, ազդեցության վերաբերյալ:

20.1. Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանը, նախ ընդգծում է, որ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին, որը դրա միակ աղբյուրն ու կրողն է: Ամբողջ հանրային իշխանությունը սերում է ժողովրդի կամքից և գոյություն ունի միայն նրա կամքի ներքո և գործում է հանուն նրա: Ազգային ժողովի ընտրությունները ժողովրդաիշխանության իրականացման առաջնային և անմիջական ձևերից են. ժողովուրդը շնորհում է հանրային իշխանություն, նորոգում դրա լեգիտիմությունը և հաշվետու պահում դրա կրողներին: Ընտրական գործընթացում, դրա մասնակիցների առումով, առաջին խոսքը քաղաքական ուժերինն է. դրանք են առաջադրում թեկնածուներ, վարում քարոզարշավը և ձևավորում այն այլընտրանքները, որոնց միջև ձևավորվում է ժողովրդի քաղաքական կամքը: Այս իրողության բերումով ընտրությանը մասնակից քաղաքական ուժերը վայելում են ամուր սահմանադրական երաշխիքներ (խոսքի ազատություն, գործելու ազատություն, հավասար եթերաժամանակ և այլն), ինչի «գինը» այդ քաղաքական ուժերի համար սահմանադրական արժեքներին հավատարմության ներհատուկ, անբաժանելի և սակարկման ոչ ենթակա պարտականությունն է, ոչ թե նշված արժեքների նկատմամբ ոտնձգությունից զուտ պասիվ ձեռնպահ մնալը, այլ ակտիվ, գործուն անհանդուրժողականությունը դրանց սպառնացող ցանկացած վտանգի նկատմամբ:

Ժողովրդի կամքի աղավաղումն ընտրողներին կաշառելու միջոցով ուղիղ հարված է նրա իշխանության իրականացման սկզբունքին, ձևավորվող իշխանության լեգիտիմությանը և ունակ է հիմնովին վարկաբեկել հանրության աչքերում սահմանադրական ժողովրդավարության բուն գաղափարը: Ուստի՝ սկզբունքային նշանակություն ունի այն, որ ընտրությունների յուրաքանչյուր մասնակից զգա համապատասխան գործընթացի բարեվարքության ապահովման բեռի ողջ ծանրությունը:

20.2. Նշված բեռն առաջին հերթին կրում է պետությունը (Davydov and Others v. Russia, Application no. 75947/11, 30.05.2017, Final 13.11.2017, § 285): Սակայն ընտրական իրավունքի նկատմամբ երկարաժամկետ առկախված ընտրական կոռուպցիայի տարբեր դրսևորումների բերումով, երբ Հայաստանն առերեսվել է համատարած ընտրական կոռուպցիայի տասնամյակների և դրա նկատմամբ ընդգծված հանդուրժողականության, առաջին հերթին, հանրային իշխանության մարմինների կողմից, քաղաքական ուժերը չեն կարող թաքնվել պետության պոզիտիվ պարտավորությունների հետևում և ծածուկ օգտվել ընտրական կոռուպցիայի

պտուղներից լոկ այն պատճառով, որ ընտրակեղծարարության դեմ պայքարում պետությունը շարունակական ձախողում է ունեցել այն արմատախիլ անելու հարցում: Սա վերաբերում է ոչ միայն Ազգային ժողովում մեծամասնություն ունեցող, այլև հավասարապես ընտրություններին մասնակից բոլոր քաղաքական ուժերին:

20.3. Սահմանադրական դատարանը, որևէ հետևություն չանելով ընտրական գործընթացի շրջանակներում առերևույթ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաղորդված դեպքերում ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի, դրանց ղեկավարների կամ համակիրների ներգրավվածության վերաբերյալ, արձանագրում է, որ Հայաստանն ունի տասնամյակների համատարած ընտրական կոռուպցիայի ծանր սոցիալական ժառանգություն: Սահմանադրական դատարանն այս իրավիճակն ընտրական գործընթացի որևէ մասնակցի չի վերագրում, փոխարենը՝ մատնանշում է համակարգային խնդրի առկայությունը:

Նախընտրական քարոզչության ողջ ժամանակահատվածում (բայց ոչ միայն) իրավապահ մարմինները հրապարակայնորեն և բազմիցս տեղեկացրել ու զգուշացրել են ընտրական միջավայրում ընտրակաշառքի մասին, հրապարակել գաղտնալսված խոսակցություններ և ընտրողներին կոչ արել չներգրավվել հանցավոր գործունեության մեջ: Այդ առնչությամբ ընտրական գործընթացի մասնակից մի շարք քաղաքական ուժեր որևէ պահի հրապարակայնորեն կոչ չեն արել ընտրողներին մերժել իրենց օգտին կաշառելու ցանկացած փորձ, չեն սահմանազատվել հրապարակված դեպքերից և չեն գործակցել իրավապահ մարմինների հետ համապատասխան պրակտիկայի դեմ: Այդ կրավորականությունը սահմանադրական արժեքների նկատմամբ հավատարմությունից բխող, ընտրական գործընթացի մասնակից յուրաքանչյուր քաղաքական ուժից ակնկալվող ակտիվ անհանդուրժողականության հակապատկերն է:

20.4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առանձին դեպքերով կամ անձանց առնչությամբ ՀՀ դատախազության, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի, ՀՀ քննչական կոմիտեի, այլ իրավապահ մարմինների գործողությունները պետք է պայմանավորված լինեն նշված մարմինների առջև դրված խնդիրները լուծելու լեգիտիմ անհրաժեշտությամբ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավապահ մարմինները, քրեական վարույթի նպատակների տեսանկյունից անհրաժեշտության բացակայության դեպքում, առնվազն մինչև ընտրության օրը ներառյալ պետք է ձեռնպահ մնան հայտնաբերված ենթադրյալ հանցավոր արարքների և դրանց ենթադրյալ կատարողների մասին հաղորդագրություններում ընտրությունների մասնակից քաղաքական ուժի անվանումը հիշատակելուց:

20.5. Թեև ընտրական գործընթացի շրջանակներում մի շարք կոռուպցիոն հանցագործությունների առնչությամբ իրավապահ մարմինների

հաղորդագրությունների, դրանցում հիշատակված վարույթների, վերջիններում ներգրավված սուբյեկտների մեծաթիվությունը (ընտրակաշառքների մասով) առաջին հայացքից կարող է վկայել ընտրողի կամքի ազատ ձևավորման վրա էական ազդեցության մասին, այդուհանդերձ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալը բավարար հիմք չէ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 14-րդ մասի իրավակարգավորման համատեքստում ընտրությունների վերջնարդյունքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ վերջնական եզրահանգում անելու համար:

21. Ընտրությունների և դրան նախորդող ժամանակահատվածում վարչական ռեսուրսի ոչ իրավաչափ օգտագործման հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանը 2021 թվականի հուլիսի 17-ի ՍԴՈ-1606 որոշման վերաբերելի հատվածին համահունչ վերստին արձանագրում է, որ ընտրությունների ժողովրդավարական բնույթը երաշխավորելու համար նախևառաջ անհրաժեշտ է ապահովել դրանց անցկացումը համընդհանուր, հավասար, ազատ ընտրական իրավունքի, գաղտնի և ուղղակի քվեարկության, օրենսդրությամբ սահմանված պարբերականության գաղափարասկզբունքային հենքի խստիվ պահպանմամբ: Միաժամանակ, կարևոր է նաև ընտրություններում «արդար մրցակցային» միջավայրի ապահովումը: Ընտրական գործընթացներում վարչական ռեսուրսի չարաշահումը, խաթարելով ընտրություններում «առողջ մրցակցության» գաղափարը, անառարկելիորեն խարխլում է նաև Սահմանադրությամբ երաշխավորված ընտրական ընդհանուր սկզբունքների կենսագործումը:

21.1. Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) 2013 թվականի CDL-AD(2013)033 զեկույցում վարչական ռեսուրսը ներկայացրել է իբրև ընտրությունների ընթացքում գործող պաշտոնատար անձանց, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների՝ մարդկային, ֆինանսական, նյութական և այլ ռեսուրսները, հանրային զանգվածային լրատվության միջոցների նկատմամբ նրանց ունեցած վերահսկողության հանգամանքը, ինչպես նաև իրենց դիրքով պայմանավորված՝ հանրային օբյեկտների և ռեսուրսների նկատմամբ ունեցած հասանելիությունը, ինչը կարող է վերածվել քաղաքական կամ այլ ձևաչափի աջակցության:

«Ընտրական գործընթացների ընթացքում վարչական ռեսուրսների չարաշահումը կանխելու և դրան արձագանքելու վերաբերյալ» Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 2016 թվականին ընդունված համատեղ ուղեցույցում (CDL-AD(2016)004) ընդգծվում է, որ՝ «(...) իրավական կարգավորումները պետք է հստակ պահանջներ նախատեսեն քաղաքացիական ծառայողների համար, այն է՝ ընտրական գործընթացների ամբողջ ընթացքում իրենց պաշտոնեական

պարտականություններն իրականացնելիս գործել անաչառ: Ավելին, իրավական կարգավորումները պետք է երաշխավորեն քաղաքացիական ծառայության չեզոքությունը՝ արգելելով քաղաքացիական ծառայողներին քարոզչական գործունեություն իրականացնել իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս, ինչպես այն դեպքում, երբ իրենք թեկնածու են հանդիսանում, այնպես էլ այն դեպքում, երբ աջակցում են թեկնածուներին: Իրավական կարգավորումները պետք է հստակ նորմեր նախատեսեն այն մասին, թե ինչպես և երբ կարող է քարոզչություն իրականացվել, ինչպես նաև ընտրություններին մասնակցող որոշակի պաշտոնատար անձանց լիազորությունների կասեցման կամ հրաժարականի ներկայացման հնարավորություն նախատեսեն»: Ուղեցույցը չի բացառում պաշտոնատար անձ թեկնածուների կողմից ընտրություններին մասնակցելու և քարոզչություն իրականացնելու հնարավորությունն աշխատանքային ժամերից դուրս և առանց վարչական ռեսուրսների չարաշահման:

21.2. Ժողովրդավարական պետությունում հանրային իշխանությունը պարտավոր է պահպանել ինստիտուցիոնալ չեզոքություն և հավասար վերաբերմունք ցուցաբերել ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների նկատմամբ: Այն դեպքում, երբ պետական ապարատը, պաշտոնատար անձինք կամ հանրային միջոցները ներգրավվում են որոշակի քաղաքական ուժի և/կամ թեկնածուի օգտին, տեղի է ունենում վերոնշյալ սկզբունքի խախտում: Նման պայմաններում հանրային իշխանությունը դադարում է հանդես գալ որպես քաղաքական մրցակցության անաչառ երաշխավոր՝ դառնալով նշված մրցակցության անմիջական մասնակից:

21.3. Վարչական ռեսուրսի ոչ իրավաչափ օգտագործման վտանգավորությունը պայմանավորված է նաև նրանով, որ այն խաթարում է հավասար ընտրական իրավունքի սկզբունքը: Այն դեպքերում, երբ առանձին քաղաքական ուժեր այլոց համեմատ հնարավորություն են ստանում օգտվելու հանրային ռեսուրսներից, ապա ձևավորվում է անհավասար մրցակցային միջավայր, որտեղ ընտրությունների արդյունքը պայմանավորվում է ոչ թե քաղաքացիների ազատ կամահայտնությամբ, այլ իշխանական լծակների անհավասար բաշխմամբ, ինչի արդյունքում խաթարվում է ընտրությունների ժողովրդավարական լեգիտիմությունը:

Վարչական ռեսուրսի ոչ իրավաչափ օգտագործումը սերտորեն առնչվում է նաև ընտրությունների ազատության սկզբունքի հետ: Ազատ ընտրությունների գաղափարը ենթադրում է, որ ընտրողներն իրենց որոշումը կայացնում են առանց հարկադրանքի, ճնշման կամ կախվածության, մինչդեռ վարչական ռեսուրսի ոչ իրավաչափ օգտագործումն ի զորու է ստեղծել այլ իրավիճակ:

21.4. Վարչական ռեսուրսի չարաշահումը հանգեցնում է հանրային իշխանության «կուսակցականացման»: Պետական ապարատը և համապատասխան ռեսուրսները, որոնք պետք է ծառայեն ամբողջ հասարակությանը, սկսում են

սպասարկել որոշակի քաղաքական շահեր՝ արդյունքում խախտելով հանրային իշխանության լեգիտիմության հիմքը, քանզի պետությունը կորցնում է իր՝ համընդհանուր շահերի ներկայացուցչի կարգավիճակը՝ վերածվելով քաղաքական պայքարի մասնակիցներից մեկի գործիքի:

21.5. Սահմանադրական դատարանի 2021 թվականի հուլիսի 17-ի ՍԴՈ-1606 որոշմամբ արձանագրված է, որ վարչական ռեսուրսի չարաշահումներն ընտրական գործընթացներում խաթարում են ժողովրդավարական ընտրությունների անցկացման հիմքերը, քանզի չեն երաշխավորում՝

- բոլոր թեկնածուների համար հավասար պայմաններ. վերջիններս պետք է հավասար հնարավորություն ունենան իրենց թեկնածությունն առաջադրելու և հավասարությունը երաշխավորող միջավայրում «ազատ մրցակցելու»,

- հավասար վերաբերմունք տարբեր թեկնածուների հանդեպ. առանձին ինստիտուտների հետ հարաբերվելիս թեկնածուները պետք է արժանանան նույնական վերաբերմունքի, օրինակ՝ զանգվածային լրատվական միջոցների հասանելիությունը բոլորին,

- ընտրողների կարծիք ձևավորելու ազատությունը. ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի պետք է զերծ լինի ցանկացած ճնշումից, ինչի լավագույն երաշխիքը պետական իշխանության «չեզոքությունն» է, որը պետք է արտահայտվի ընտրողի ազատ կամքի ձևավորման գործընթացում ցանկացած տեսակի «միջամտող» վարքագծի բացառմամբ,

- ընտրական գործընթացում անաչառության սկզբունքի պահպանումը. պետական իշխանության կողմից ընտրությունների կազմակերպումը պետք է լինի առանց իշխող կուսակցության համար առավելությունների տրամադրման:

21.6. Վարչական ռեսուրսի չարաշահման դեմ պայքարը ժողովրդավարական պետության պահպանման, հանրային իշխանության լեգիտիմության ապահովման և ժողովրդի ինքնիշխան կամքի անաղարտ արտահայտման կարևորագույն նախապայմաններից է: Ընտրական օրենսգրքով և վերաբերելի այլ օրենքներով ամրագրված համապատասխան կարգավորումները մշտապես պետք է զարգանան վարչական ռեսուրսի օգտագործման արգելքի երաշխիքների ամրապնդման միտումով, իսկ ընտրական գործընթացի համապատասխան դերակատարները բացառեն նման վարքագիծը՝ երաշխավորելով ժողովրդավարության շարունակական զարգացման անվերապահ հանձնառության կատարումը:

21.7. Սույն գործով Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ 2021 թվականի հուլիսի 17-ի ՍԴՈ-1606 որոշմամբ կատարված արձանագրումն առ այն, որ՝ «վարչական ռեսուրսի կիրառման դրսևորումները ընտրական գործընթացներում կարող են լինել ինչպես զանգվածային, այնպես էլ սահմանափակ: Այս առումով Սահմանադրական դատարանի գնահատմամբ էական չէ կիրառված

ռեսուրսների քանակական բնութագիրը, քանզի մի դեպքում վարչական ռեսուրսի մեկանգամյա կիրառումն անգամ՝ կախված դրա բնույթից, կարող է հանգեցնել համակարգային խնդրի, մեկ այլ դեպքում՝ առանձին դրվագներով վարչական ռեսուրսի կիրառումը, այնուամենայնիվ, կարող է և չհանգեցնել ընտրությունների ելքի վրա որևէ էական ազդեցության (այլ է խնդիրը, որ հանրային իշխանության մարմինները պետք է համարժեք իրավական գնահատականի արժանացնեն յուրաքանչյուր դեպք և կիրառեն պատասխանատվության համաչափ միջոցներ): Խնդրո առարկա հարցի շրջանակներում առավելապես գնահատման ենթակա են վարչական ռեսուրսների օգտագործման որակական բնութագրիչները, քանզի յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է գնահատել դրանց ազդեցությունն ընտրությունների ընդհանուր արդյունքների վրա: Այս տեսանկյունից Սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել վարչական ռեսուրսների չարաշահման բովանդակությունը, շարունակականությունը, ապա նաև դրա հետևանքներն ընտրական գործընթացի վերջնական արդյունքի վրա»:

21.8. Ընտրությունների և դրան նախորդող ժամանակահատվածում վարչական ռեսուրսի ոչ իրավաչափ օգտագործման վերաբերյալ համապատասխան Դիմողների պնդումների առնչությամբ, որոնց համաձայն՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության, ի մասնավորի՝ նաև ՀՀ վարչապետի կողմից նախընտրական քարոզչության մեկնարկից առաջ և ընթացքում կիրառվել է վարչական ռեսուրս՝ այդպիսով ակնհայտ առավելություն ձեռք բերելով մյուս կուսակցությունների և դաշինքների նկատմամբ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դրանք առավելապես վերաբերում են ընտրություններից առաջ իրականացված սոցիալ-տնտեսական միջոցառումներին, հանրային ծառայողների՝ նախընտրական գործընթացներին անմիջական մասնակցությանը կամ ներգրավմանը, պետական և համայնքային կառույցների ներգրավվմանը, կրթական հաստատությունների և ուսումնական համակարգի օգտագործմանը:

Ի հիմնավորումն իրենց դիրքորոշումների՝ Դիմողները ներկայացրել են համապատասխան տեսանյութեր, ինչպես նաև վկայակոչել են համապատասխան դատական ակտեր:

21.9. Սահմանադրական դատարանը 2017 թվականի ապրիլի 28-ի ՍԴՈ-1364 որոշմամբ փաստել է. «(…) ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանել է նաև նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումների դեպքում վարչական կամ դատական կարգով խնդրի լուծման համապատասխան ընթացակարգեր: Սահմանադրական դատարանը, բազմիցս անդրադառնալով այս խնդրին, շեշտել է, որ նման ընթացակարգերը, որոնք անմիջականորեն առնչվում են ընտրություններին մասնակցող պատգամավորի թեկնածուների կամ կուսակցությունների ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու խնդրին, պետք

է օրենքով սահմանված կարգով բողոքարկվեն և լուծում ստանան մինչև քվեարկության օրը:

Սույն գործի քննությունը վկայեց, որ դիմողն օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում տվյալ խնդրի առնչությամբ որևէ իրավաչափ գործողություն չի իրականացրել, և գործում առկա չէ ապացուցողական նշանակություն ունեցող որևէ փաստական հիմք /մասնավորապես՝ դատական ակտ/ հակառակը վկայելու կամ այդ հարցով դիմողի իրավունքների պաշտպանությանը խոչընդոտելու մասին: Նման բնույթի ենթադրյալ խախտումներն իրավասու մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով համարժեք իրավական գնահատական պետք է ստանան, մասնավորապես նաև այն գործերով, որոնք դեռևս քննության առարկա են իրավապահ մարմինների կողմից»:

21.10. Սահմանադրական դատարանը, ուսումնասիրության առարկա դարձնելով մի շարք վերաբերելի դատական ակտեր, արձանագրում է.

21.10.1. ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/9807/05/26 վարչական գործով 12.06.2026 թ. կայացված վճռով մերժել է «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի հայցն ընդդեմ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ Պատասխանողի՝ Հայցվորի կողմից 23.05.2026 թվականի դիմումը ՀՀ գլխավոր դատախազությանը վերահասցեագրելու ձևով դրսևորված գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին՝ մասնավորապես՝ արձանագրելով.

«(…) օրենսդիրը չի սահմանել վարչական մարմնի պարտադիր և միակ վարքագիծը: Ընդհակառակը, նորմում օգտագործված «դիմում է իրավասու մարմիններ ... կամ կիրառում նախազգուշացում» ձևակերպումը նախատեսում է իրավական արձագանքի երկու ինքնուրույն տարբերակներ, որոնցից յուրաքանչյուրն ինքնին իրավաչափ է և ուղղված է նույն իրավական նպատակի իրագործմանը՝ նախընտրական քարոզչության օրինականության ապահովմանը և խախտումների կանխմանը:

Հետևաբար, իրավադրույթի կառուցվածքային վերլուծությունից բխում է, որ ընտրական հանձնաժողովին վերապահված է եղել ընտրություն կատարելու հնարավորություն՝ կախված կոնկրետ գործի փաստական հանգամանքներից, հնարավոր խախտման բնույթից և ընտրված միջոցի արդյունավետությունից: (…)

(…)

(…) Նախընտրական քարոզչության ընթացքում հնարավոր խախտումները կարող են էապես տարբերվել իրենց բնույթով և վտանգավորության աստիճանով: Որոշ դեպքերում խախտումը կարող է վերացվել նախազգուշացման միջոցով, մինչդեռ այլ դեպքերում հաղորդված տեղեկությունները կարող են պարունակել վարչական կամ քրեական իրավախախտումների հատկանիշներ, որոնց ստուգումը պահանջում է իրավապահ մարմինների մասնակցություն: Նման իրավիճակներում իրավասու

մարմիններին դիմելը հանդիսանում է ոչ թե բացառություն, այլ հենց օրենքով նախատեսված արձագանքման համապատասխան ձև:

Հետևաբար, «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի համակարգային մեկնաբանությունից հետևում է, որ Օրենսդիրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին վերապահել է հայեցողական լիազորություն՝ կոնկրետ գործի հանգամանքներից ելնելով ընտրելու օրենքով նախատեսված մի քանի իրավաչափ արձագանքներից մեկը: Ընդ որում, այդ հայեցողությունը ենթակա է իրավական սահմանափակումների և դատական վերահսկողության, սակայն իրավասու մարմիններին դիմելու տարբերակի ընտրությունն ինքնին չի կարող գնահատվել որպես հայեցողության սխալ իրականացում, քանի որ այն ուղղակիորեն նախատեսված է նույն իրավադրույթով և հանդիսանում է ընտրական հանձնաժողովի հսկողական լիազորությունների իրականացման օրինական ձև:

Տվյալ դեպքում, Պատասխանողին ներկայացված՝ 23.05.2026թ.-ի դիմումով հաղորդվել էր, որ նախընտրական քարոզչության ընթացքում ուսուցիչները, դպրոցականները և համայնքապետարանի աշխատակիցները ներգրավված են եղել քարոզչական գործընթացում: Նման տեղեկությունները, իրենց բնույթով, կարող էին առնչվել ինչպես «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածով արգելված վարչական ռեսուրսների օգտագործմանը, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի 211-րդ հոդվածով նախատեսված՝ քարոզչություն կատարելուն հարկադրելու հնարավոր դեպքերին, եթե ներգրավվածությունը պայմանավորված լիներ ծառայողական ազդեցությամբ, պաշտոնեական ենթակայությամբ կամ կախվածության հարաբերություններով:

Այս պայմաններում Դատարանը գտնում է, որ Պատասխանողի կողմից ընտրված լուծումը լիովին համապատասխանում է օրենքով ուրվագծված հայեցողության սահմաններում և ուղղված է եղել հենց այն նպատակին, որը կանխորոշված է «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասով, այն է՝ նախընտրական քարոզչության օրինականության ապահովումը, հնարավոր խախտումների կանխումը և դրանց պատշաճ ստուգման կազմակերպումը:

Ընդ որում, նման ընտրությունը չի կարող դիտվել որպես հայեցողության չօգտագործում: Ընդհակառակը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, գնահատելով ստացված տեղեկությունների բնույթը, իրացրել է իրեն վերապահված ընտրության իրավունքը՝ դիմելով այն մարմնին, որն օժտված է անհրաժեշտ գործիքակազմով՝ հաղորդման մեջ ներկայացված հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ստուգումն ապահովելու համար:

ՀՀ գլխավոր դատախազությանը դիմելը հանդիսանում է հենց այն իրավական հետևանքներից մեկը, որն ուղղակիորեն նախատեսված է «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասով, ուստի չի կարող համարվել օրենքով չնախատեսված միջոցի կիրառում կամ իրավասության սահմաններից դուրս գործողություն»:

21.10.2. ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/8999/05/26 վարչական գործով 13.06.2026 թ. կայացված վճռով մերժել է «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի հայցն ընդդեմ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ հայցվորի կողմից 21.05.2026 թվականին ներկայացված դիմումը ՀՀ գլխավոր դատախազությանը վերահասցեագրելու ձևով դրսևորված պատասխանողի գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին՝ մասնավորապես՝ արձանագրելով.

«(…)

Նախընտրական քարոզչության կազմակերպումն ու իրականացման վերաբերյալ վերոգրյալ արգելքների և սահմանափակումների չպահպանումը և խախտումը, ըստ էության, հանդիսանում են նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումներ, իսկ նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորությունը վերապահված է ընտրական հանձնաժողովներին, որոնք կարգի խախտման դեպքերում օժտված են հայեցողական լիազորությամբ. դիմում ներկայացնել իրավասու մարմիններ դրանք կանխելու նպատակով կամ կիրառել նախազգուշացում խախտում թույլ տված թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ՝ տալով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:

(…)

Նկարագրված ենթադրյալ իրավախախտումը Դատարանի համոզմամբ իրականացված և ավարտված խախտում է, որը վերացնելու հնարավորությունը բացակայում է: Ինչպես նշվեց վերը, նկարագրված ենթադրյալ իրավախախտումը կայանում է ոչ թե «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական նյութը՝ պաստառները փակցնելու կարգին առաջադրվող պահանջներին (պաստառները արգելված վայրում փակցնել, պաստառների՝ սահմանված չափերին և ձևին չհամապատասխանել) չհամապատասխանելու, այլ այդ պաստառները նախընտրական քարոզչության սահմանված կարգով արգելված անձանց կողմից փակցված լինելու մեջ, որպիսի պաստառի փակցման փաստով ենթադրյալ խախտումն ավարտվել է, իսկ պաստառի՝ փակցնելու կարգին առաջադրվող պահանջներին (պաստառները արգելված վայրում փակցնել, պաստառների՝ սահմանված չափերին և ձևին չհամապատասխանել) չհամապատասխանելու հարցի վերաբերյալ վեճի բացակայության պայմաններում, զուտ պաստառի հեռացումը չի

կարող որակվել որպես ենթադրյալ խախտման՝ վարչական ռեսուրսի կիրառման, վերացում:

Արգելված մարդկային ռեսուրսների օգտագործմամբ պաստառ փակցնելու ենթադրյալ խախտումը իր բնույթով բացառում է տվյալ խախտումի վերացումը՝ պաստառի՝ փակցնելու կարգին առաջադրվող պահանջներին (պաստառները արգելված վայրում փակցնել, պաստառների՝ սահմանված չափերին և ձևին չհամապատասխանել) համապատասխանելու պարագայում:

Ըստ այդմ, հաշվի առնելով, որ պատասխանողի կողմից նախազգուշացում կիրառելու լիազորությունը պայմանավորված է բացառապես խախտումը կամ դրա հետևանքները վերացնելու նախադրյալով, ինչը «վարչական ռեսուրսի կիրառում» խախտման պարագայում ըստ էության բացառվում է (վարչական ռեսուրսի կիրառմամբ խախտումն ավարտվում է և դրա հետևանքների վերացումը գործնականում չի կարող կատարվել, քանզի այն ազդեցությունը, հետևանքը, որը պետք է առաջանար դրա հետևանքով, արդեն իսկ վրա է հասել), Դատարանը գտնում է, որ քննարկվող խախտման պայմաններում խախտում թույլ տված թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ նախազգուշացում կիրառելու հայեցողական լիազորության իրականացումը չի կարող լինել այն պիտանի, անհրաժեշտ և չափավոր լուծումը:

(…)

Ասվածի համատեքստում, Դատարանի համոզմամբ իրավական գնահատման ենթակա է ոչ միայն քարոզչական գործողության արտաքին դրսևորումը, այլև այն կազմակերպական և ծառայողական մեխանիզմը, որի միջոցով այդ գործողությունը կատարվել է:

(…)

Նշվածից հետևում է, որ պատասխանող վարչական մարմինը, հայցվոր կողմի դիմումը ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկելով և իր՝ իրավասու մարմին դիմելու լիազորությունը իրացնելով, ընտրել է քննարկվող նորմով իրեն վերապահված հայեցողական լիազորություններից այն տարբերակը, որը հանդիսացել է տվյալ պարագայում պիտանի, անհրաժեշտ, իրավաչափ և նպատակային լուծումը»:

21.10.3. ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/9260/05/26 վարչական գործով 06.06.2026 թ. կայացված վճռով մերժել է «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի հայցն ընդդեմ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, երրորդ անձ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նկատմամբ նախազգուշացում չկիրառելու ձևով դրսևորված անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին՝ մասնավորապես՝ արձանագրելով.

«(…) գործի նյութերով չի հիմնավորվում, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հայեցողությունը տվյալ դեպքում զրոյացված է, և որ օրենքով նախատեսված այլընտրանքային միջոցներից միայն նախազգուշացումն է հանդիսացել իրավաչափ լուծում: (…) Դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ դատական վերահսկողությունը չի նույնանում վարչական մարմնի փոխարեն նպատակահարմարության գնահատում կատարելու հետ, դատարանի խնդիրն է ստուգել վարչական մարմնի գործողության, անգործության կամ վարչական ակտի իրավաչափությունը, այլ ոչ թե որոշել, թե տվյալ քաղաքական կամ ընտրական գործընթացի շրջանակում արձագանքման որ միջոցն է առավել նպատակահարմար, եթե այդ միջոցների ընտրությունը օրենքով վերապահված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Այս համատեքստում Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախազգուշացում չկիրառելու հանգամանքն ինքնին չի կարող գնահատվել որպես ոչ իրավաչափ, եթե օրենքը վերջինիս թույլ է տալիս ընտրել նաև այլ միջոց, իսկ գործով չի հաստատվում, որ այդ այլ միջոցի ընտրությունը կամ նախազգուշացում չկիրառելը ակնհայտորեն դուրս է եկել օրենքով նախատեսված հայեցողության սահմաններից»:

21.10.4. «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի՝ ՀՀ վարչական դատարան ներկայացված մի շարք հայցադիմումներ վերադարձվել են/ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

21.11. ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026 թվականի հունիսի 14-ի թիվ 258-Ա որոշման շրջանակներում անդրադառնալով վարչական ռեսուրսի չարաշահման հարցին, արձանագրել է. «Ակնհայտ է, որ ընդհանուր առմամբ վարչական ռեսուրսի օգտագործումն ինքնին չի համարվում չարաշահում, եթե այն իրականացվում է օրենքի շրջանակներում, չի միջամտում նախընտրական քարոզչությանը և ուղղված է պետական մարմինների անմիջական գործառույթների իրականացմանը: Միևնույն ժամանակ, նույնիսկ օրինական գործողությունները կարող են գնահատվել որպես վարչական ռեսուրսի չարաշահում, եթե դրանց իրական նպատակը որևէ թեկնածուի կամ քաղաքական ուժի համար ընտրական առավելություն ստեղծելն է: Այդ պատճառով վարչական ռեսուրսի օգտագործմանը գնահատական տալիս՝ կարևոր է ոչ միայն գործողության իրավական ձևը, այլև դրա բովանդակությունը, համատեքստը և ազդեցությունը ընտրական գործընթացի վրա: Հարկ է հաշվի առնել, որ ընտրական գործընթացները չպետք է հանդիսանան հանրային իշխանության մարմինների գործունեության խաթարման պատճառ և ընտրական փուլում ևս հանրային իշխանության մարմինները պետք է շարունակեն պատշաճորեն իրականացնել իրենց գործառույթները: Այս տեսանկյունից Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ

վարչական ռեսուրսի օգտագործման արգելքի խախտում չեն կարող գնահատվել հետևյալ դրսևորումները.

- իշխանության գործունեության մասին հանրության իրազեկումը,

- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընթացիկ աշխատանքի, իրականացված ծրագրերի և ապագա նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը պաշտոնական աղբյուրներով չի համարվում վարչական ռեսուրսի չարաշահում, եթե այն չի պարունակում քարոզչական կոչեր կամ որևէ թեկնածուի կամ կուսակցության օգտին քվեարկելու հորդորներ,

- պաշտոնատար անձանց մասնակցությունը նախընտրական միջոցառումներին: Հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք, բացառությամբ՝ Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասով նշված անձինք, կարող են մասնակցել նախընտրական գործունեությանը, եթե չեն իրականացնում իրենց լիազորությունները կամ հանդես չեն գալիս ի պաշտոնե: Միաժամանակ, պաշտոնեական լիազորությունների, ծառայողական տրանսպորտի, շենքերի կամ այլ պետական ռեսուրսների օգտագործումը քարոզչական նպատակներով անթույլատրելի է:

- Հավասար հասանելիություն հանրային ռեսուրսներին: Հանրային ռեսուրսներից օգտվելը, պետական և համայնքային հիմնարկների կողմից տարածքների, սարքավորումների կամ այլ միջոցների տրամադրումը թեկնածուներին և քաղաքական ուժերին թույլատրելի է, չի կարող դիտարկվել որպես վարչական ռեսուրսի օգտագործման արգելքի խախտում, եթե այն իրականացվում է բոլոր մասնակիցների համար հավասար և ոչ խտրական պայմաններով:

- Սոցիալական ծրագրերի իրականացում: Կենսաթոշակների, նպաստների, բյուջետային աշխատողների աշխատավարձերի վճարումը կամ ենթակառուցվածքային ծրագրերի իրականացումը չեն համարվում վարչական ռեսուրսի չարաշահում, եթե դրանք նախատեսված են ընդունված բյուջեով և իրականացվում են պետական քաղաքականության շրջանակներում, այլ ոչ թե ընտրողների վրա ազդելու նպատակով»:

21.12. Վերոգրյալի լույսի ներքո Սահմանադրական դատարանը շեշտում է, որ վարչական ռեսուրսի ոչ իրավաչափ օգտագործման հարցի համատեքստում գնահատում իրականացնելիս իրավակիրառը չի կարող սահմանափակվել միայն այն հարցով՝ արդյո՞ք վարչական (պետական կամ համայնքային) ռեսուրսն օգտագործվել է ընտրությունների ընթացքում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ գնահատումը պետք է հիմնված լինի մի շարք փոխկապակցված չափանիշների վրա, որոնք հնարավորություն են տալիս պարզելու՝ արդյո՞ք տեղի է ունեցել հանրային իշխանության անթույլատրելի ներգործություն ընտրական գործընթացի նկատմամբ,

որը խախտում է ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքները: Մասնավորապես՝ գնահատման առարկա պետք է դառնան.

ռեսուրսի բնույթը. առաջին հերթին անհրաժեշտ է բացահայտել, թե օգտագործված միջոցն իր բնույթով վարչական ռեսուրս է, թե՝ ոչ: Այդ նպատակով անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք օգտագործվել են պետական կամ համայնքային ֆինանսական միջոցները, գույքը, հանրային տեղեկատվական կամ կազմակերպչական հնարավորությունները, պաշտոնեական հեղինակությունը, ներգրավվել են հանրային ծառայողներ և այլն: Եթե կիրառված միջոցը բխում է անձի պաշտոնեական կարգավիճակից կամ առհասարակ հանրային իշխանությունից, ապա այն կարող է գնահատվել որպես վարչական ռեսուրս.

սուբյեկտային չափանիշը. անհրաժեշտ է պարզել, թե ո՞վ է օգտագործել տվյալ ռեսուրսը: Այդ առումով գնահատման տիրույթում են հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք կամ այն անձը, որը փաստացի գործել է նրանց հանձնարարությամբ.

նպատակային չափանիշը. սույն չափանիշն առանցքային է խնդրո առարկա հարցի համատեքստում: Իրավակիրառը պետք է պարզի՝ արդյո՞ք ռեսուրսն օգտագործվել է կուսակցության կամ որևէ դաշինքի ընտրական հաջողությունն ապահովելու նպատակով: Եթե հանրային միջոցն օգտագործվել է բացառապես ծառայողական կամ հանրային գործառույթի իրականացման նպատակով, ապա վարչական ռեսուրսի չարաշահման մասին պնդումը դառնում է առարկայազուրկ.

ազդեցության գնահատումը. իրավակիրառը պետք է գնահատի, թե խնդրո առարկա վարքագիծը որքանո՞վ է ազդել ընտրողի ազատ ընտրության հնարավորության վրա, մասնավորապես՝ ստեղծվե՞լ է արդյոք ճնշող միջավայր, ընտրողները զգացե՞լ են արդյոք կախվածություն պաշտոնատար անձից, ծառայողներն արդյոք հարկադրվա՞ծ են եղել մասնակցել քարոզչությանը, ընտրողի վրա գործադրվե՞լ է արդյոք հոգեբանական կամ վարչական ազդեցություն.

հավասարության չափանիշը. անհրաժեշտ է պարզել՝ կոնկրետ քաղաքական ուժն արդյո՞ք ստացել է չհիմնավորված առավելություն, իսկ մյուս ուժերը զրկվել են հավասար մրցակցային հնարավորություններից, արդյո՞ք խախտվել է ընտրական մրցակցության հավասարակշռությունը և այլն.

վարչական ռեսուրսի օգտագործման և ընտրական գործընթացի վրա դրա ազդեցության միջև պատճառահետևանքային կապի առկայության գնահատում. իրավակիրառը պետք է բացահայտի ազդեցության ծավալը, դրա տարածվածությունը, ընտրողների շրջանակը, գործողության ինտենսիվությունը, հնարավոր ազդեցությունն ընտրության արդյունքների կամ ընտրական միջավայրի վրա: Ընդ որում՝ պարտադիր չէ հիմնավորել, որ հենց տվյալ գործողության պատճառով է փոխվել ընտրությունների վերջնարդյունքը. բավարար է հաստատումն

առ այն, որ այն օբյեկտիվորեն ունակ էր խաթարելու ընտրական գործընթացի ազատությունն ու հավասարությունը:

Վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանը շեշտադրում է, որ նույնիսկ այն դեպքում, երբ առանձին խախտումը չի ազդել ընտրությունների վերջնական արդյունքի վրա, այն կարող է էականորեն նվազեցնել ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահությունը, խաթարել պետական մարմինների քաղաքական չեզոքության ընկալումը և վտանգել ընտրությունների լեգիտիմությունը, հետևաբար՝ իրավակիրառը պետք է գնահատի ոչ միայն խախտման անմիջական հետևանքները, այլև դրա ազդեցությունն ընտրական գործընթացի արդարության, թափանցիկության և հանրային վստահության վրա՝ իր պատճառաբանված դիրքորոշումն ամփոփելով համապատասխան ակտում:

21.13. Անդրադառնալով «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի, «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցության, «Միասնության թևեր» կուսակցության, «Հայաստան» կուսակցությունների դաշինքի և «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության ներկայացրած փաստարկներին առ այն, որ «Ազգային ժողովի հերթական ընտրություն նշանակելու մասին» Հայաստանի Հանրապետության նախագահի թիվ ՆՀ-21-Ն հրամանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2026 թվականի փետրվարի 7-ից Կառավարությունն իրականացրել է սոցիալական և տնտեսական մի շարք միջոցառումներ, որոնք, Դիմողների գնահատմամբ, վարչական ռեսուրսի չարաշահման մասնավոր դրսևորումներ են, Սահմանադրական դատարանը նկատում է, որ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) և Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ)՝ 2016 թվականին ընդունված՝ «Ընտրական գործընթացների ընթացքում վարչական ռեսուրսների չարաշահումը կանխելու և դրան արձագանքելու վերաբերյալ» CDL-AD(2016)004 համատեղ ուղեցույցի համաձայն՝ իրավական համակարգը պետք է ապահովի արդյունավետ կառուցակարգեր՝ պետական մարմիններին արգելելու անարդարացիորեն օգտվել իրենց դիրքից՝ ընտրական քարոզչության նպատակով պաշտոնական հանրային միջոցառումներ անցկացնելով, ներառյալ՝ բարեգործական միջոցառումները կամ այն միջոցառումները, որոնք նպաստում կամ հակառակ են գործում որևէ քաղաքական կուսակցության կամ թեկնածուի: Ավելի կոնկրետ՝ խոսքը վերաբերում է այն միջոցառումներին, որոնք ենթադրում են հատուկ միջոցների (պետական կամ տեղական բյուջեի), ինչպես նաև ինստիտուցիոնալ ռեսուրսների (աշխատակազմ, տրանսպորտային միջոցներ, ենթակառուցվածք, հեռախոսներ, համակարգիչներ և այլն) օգտագործում: Սա չի խոչընդոտում գործող թեկնածուներին՝ առաջադրվելու ընտրություններում և քարոզչություն իրականացնելու

աշխատանքային ժամերից դուրս՝ առանց վարչական ռեսուրսների օգտագործման: Ընտրական շրջանում Կառավարության առօրյա աշխատանքը պետք է շարունակվի: Այնուամենայնիվ՝ վարչական ռեսուրսի չարաշահումը կանխելու և ընտրական մրցակցության ընթացքում հավասար պայմանները չխախտելու համար իրավական հարթությունում պետք է ամրագրվի, որ քարոզարշավի ընթացքում չպետք է արվեն էական հայտարարություններ, որոնք կապված են կամ ուղղված են տվյալ կուսակցության կամ թեկնածուի նկատմամբ բարենպաստ ընկալում ստեղծելուն: Սա չի վերաբերում չնախատեսված հանգամանքներով պայմանավորված անհրաժեշտ հայտարարություններին, ինչպիսիք են երկրում կամ տարածաշրջանում տնտեսական և/կամ քաղաքական զարգացումները, օրինակ՝ բնական աղետից կամ ցանկացած տեսակի արտակարգ իրավիճակներից հետո, որոնք պահանջում են անհապաղ և հրատապ գործողություններ, որոնք չեն կարող հետաձգվել:

21.14. Խնդրո առարկա հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանը նկատում է, որ թեև նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Կառավարության՝ սոցիալ-տնտեսական միջոցառումներ իրականացնելու քաղաքականության համատեքստում օրենսդրական սահմանափակումներ նախատեսված չեն Կառավարության բնականոն աշխատանքն ապահովելու նկատառումով, այդուհանդերձ, Կառավարության հիշյալ միջոցառումները չպետք է պարունակեն քարոզչության տարրեր, ուղեկցվեն ընտրողներին ուղղված նախընտրական խոստումներով կամ քարոզչական այլ գործողություններով, ինչը կարող է ազդել ընտրողների ազատ կամահայտնության վրա:

Սոցիալ-տնտեսական միջոցառումների իրականացումը պետք է զերծ լինի քարոզչական բովանդակությունից և ուղղված լինի բացառապես պետական քաղաքականության իրականացմանը՝ բացառելով ընտրական գործընթացի վրա ներազդելու, իշխող քաղաքական ուժի կողմից ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու միտումները: Հակառակ պարագայում՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Կառավարության կողմից սոցիալ-տնտեսական միջոցառումների իրականացումը կարող է դիտարկվել որպես վարչական ռեսուրսի չարաշահման մասնավոր դրսևորում՝ հնարավորությունների հավասարության սկզբունքի խախտման ռիսկով:

21.15. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել պետության մի քանի միջոցառումներ, որոնց կատարումը կամ իրականացումը կարող է ողջամիտ բաժանարար գիծ հանդիսանալ պետության, այդ թվում՝ սոցիալական քաղաքականության, մի կողմից՝ լեգիտիմ իրականացման ու լուսաբանման, իսկ մյուս կողմից՝ դրանց քողի տակ վարչական ռեսուրսի չարաշահման և համապատասխանաբար՝ կուսակցական քարոզչության միջև, մասնավորապես՝

- համապետական մակարդակով՝ ձեռնպահ մնալ սոցիալական ծրագրերի իրականացմանն ուղղված ծախսերի այնպիսի ավելացումներից, որոնք ընտրության օրվան մոտ լինելու, նախապես հայտարարված ծրագրերին էականորեն հակասելու և այլ հանգամանքների համադրման լույսի ներքո կարող են ողջամտորեն գնահատվել որպես «սոցիալական կաշառք»,

- տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակով՝ իշխող քաղաքական ուժին կամ վերջինիս հետ քաղաքական դաշինք կազմած ուժը ներկայացնող համայնքի ղեկավարներին ձեռնպահ մնալ այնպիսի արտոնություններ տրամադրելուց, որոնք ընտրության օրվան մոտ լինելու և այլ հանգամանքների համադրման լույսի ներքո կարող են ողջամտորեն գնահատվել որպես «սոցիալական կաշառք»:

21.16. Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն որոշման նախորդ կետում վկայակոչված միջոցառումները հնարավորություն կտան բարձրացնելու ընտրությունների արդյունքների նկատմամբ ընտրողների վստահությունը՝ հստակ ջրբաժան անցկացնելով նախորդ ընտրությունների արդյունքում ժողովրդի մանդատը հայցելիս տրված խոստումների փաստացի իրագործման և նոր ընտրություններում ընտրողների կամքը ձևավորելուն ուղղված ոչ իրավաչափ գործողությունների միջև:

21.17. Սահմանադրական դատարանը, արձագանքելով Դիմողների այն պնդումներին, որ վարչական ռեսուրսի կիրառումը վճռորոշ ազդեցություն է ունեցել ընտրությունների արդյունքների վրա, կարևոր է համարում նկատել, որ ընտրական գործընթացի կամ իրավունքի այս կամ այն ենթադրյալ խախտման ազդեցության վճռորոշ աստիճանի մասին հնարավոր է խոսել բացառապես այն դեպքերում, երբ դրանք ուղիղ պատճառահետևանքային կապի մեջ են գտնվում ընտրությունների արձանագրված արդյունքների հետ, կամ այդ կապը միջնորդավորված է ընտրական այլ խախտումներով:

21.18. Վերոշարադրյալի լույսի ներքո հաշվի առնելով վկայակոչված դատական ակտերով Դիմողների մատնանշած առանձին փաստարկներին Վարչական դատարանի կողմից տրված իրավական գնահատականները և նկատի ունենալով, որ Սահմանադրական դատարանում դատական ակտերի իրավաչափությունը քննության առարկա չի կարող դառնալ՝ Սահմանադրական դատարանն այդ մասով Դիմողների կողմից վկայակոչված փաստարկներին չի անդրադառնում:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը փաստում է, որ վարչական ռեսուրսի կիրառման այլ դրսևորումների մասով սույն գործով դատավարության մասնակիցների կողմից համապատասխան վարույթներ չեն հարուցվել: Նման պայմաններում Սահմանադրական դատարանը գտնում է, որ թեև սույն գործով ներկայացված առանձին փաստարկներ, ըստ էության, վկայում են վարչական ռեսուրսի ոչ իրավաչափ օգտագործման մասին, սակայն, որպես այդպիսին, դրանք

կրում են դրվագային/հատվածական բնույթ: Ավելին, սույն գործով չի հիմնավորվում, որ վարչական ռեսուրսը Երրորդ անձի կողմից օգտագործվել է կազմակերպված եղանակով, և դրա օգտագործումը կրել է զանգվածային բնույթ. ուստի՝ վարչական ռեսուրսի ոչ իրավաչափ օգտագործման դեպքերի համադրումը հիմք չի տալիս փաստելու դրա ազդեցությունն ընտրությունների վերջնարդյունքի վրա:

22. Մի շարք Դիմողների կողմից բարձրացված՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն չնշանակելու հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանը նախ՝ արձանագրում է.

թիվ ՎԴ/9915/05/26 վարչական գործով 2026 թվականի հունիսի 13-ին ՀՀ վարչական դատարանը վճռել է. «1. ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցության հայցն ընդդեմ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, երրորդ անձինք Ուժեղ Հայաստան դաշինքի, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և Հայաստան դաշինքի՝ 11.06.2026 թվականի թիվ 255-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել: (…)»:

թիվ ՎԴ/9914/05/26 վարչական գործով 2026 թվականի հունիսի 14-ին ՀՀ վարչական դատարանը վճռել է. «1. Բարգավաճ Հայաստան» կուսակցության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի, երրորդ անձինք՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, «Հայաստան» դաշինք, «Ուժեղ Հայաստան» դաշինք՝ 11.06.2026թ. թիվ 254-Ա որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, մերժել: (…)»:

Վարչական դատարանի հիշյալ վճիռներն օրինական ուժի մեջ են մտել հրապարակման պահից, վերջնական են և վերանայման ենթակա չեն:

22.1. Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ վերաքվեարկություն նշանակելու լիազորությունը բխում է ընտրական գործընթացի օրինականության և ընտրողների ազատ կամարտահայտության հավաստիության ապահովման սահմանադրական հրամայականից: Այդ լիազորությունն իր բնույթով վերահսկողական և վերականգնողական է, քանի որ ուղղված է ընտրական խախտումների հետևանքների վերացմանը և ընտրողների իրական կամքի արտահայտման հնարավորության վերականգնմանը, իսկ դրա իրացման ընթացքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրականացնում է նաև իրավազորական գնահատում՝ որոշելով, թե արդյոք առկա խախտումները պահանջում են նոր քվեարկության անցկացում:

22.2. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքվեարկությունն ինքնանպատակ չէ, այլ կիրառվում է որպես միջոց՝ ընտրողների կամքի հավաստի արտահայտումն ապահովելու համար, երբ այլ՝ ավելի մեղմ միջոցներով հնարավոր չէ վերացնել արձանագրված խախտումների ազդեցությունը:

Այսպիսով, վերաքվեարկությունը չի կարող նշանակվել յուրաքանչյուր արձանագրված խախտման պարագայում, այլ միայն այն դեպքերում, երբ առկա խախտումները կարող են ազդել ընտրության ընդհանուր արդյունքի վրա, և դրանց հետևանքով հնարավոր չէ հավաստիորեն բացահայտել ընտրողների իրական կամարտահայտությունը:

22.3. Ազգային ժողովի ընտրությունները բացառիկ բարդության և ծավալի բազմաշերտ գործընթաց են, որում ներգրավված են եղել ավելի քան 1,4 միլիոն ընտրողներ, կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ) և դրանց ընտրական ցուցակների թեկնածուներ, տեղամասային ընտրական հանձնաժողովների հազարավոր անդամներ, դիտորդներ, վստահված անձինք, ինչպես նաև ընտրությունների արդյունքները պարզելու, մշակելու և արձանագրելու մի ամբողջ շղթա: Այդ առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ նշված գործընթացում, հատկապես դրա առավել տեխնիկական փուլերում թույլ տրված զուտ սխալը կամ խախտումն ինքնին չի վկայում ընտրությունների անարդարության մասին, եթե պահպանվել են ընտրական վարչարարության հավասարության, թափանցիկության, անաչառության և անկախության ընդհանուր սկզբունքները: Ազատ ընտրությունների գաղափարը վտանգվում է միայն այն դեպքում, երբ առկա են ընթացակարգային այնպիսի խախտումների վերաբերյալ ապացույցներ, որոնք ընդունակ են խաթարելու ժողովրդի կամքի ազատ արտահայտումը, օրինակ՝ ընտրողների կամքի կոպիտ աղավաղման միջոցով, և երբ համապատասխան բողոքները ներպետական մակարդակում արդյունավետ քննության չեն արժանանում (Davydov and Others v. Russia, Application no. 75947/11, 30.05.2017, Final 13.11.2017, §287): Այդ մասշտաբի գործընթաց վարող մարմիններից կատարյալ լուծում ակնկալելը կլիներ չափազանց և անիրագործելի բեռ:

Ո՛չ Սահմանադրությունը, ո՛չ էլ Եվրոպական կոնվենցիան չեն պահանջում, որ բոլոր ձայներն ընտրության արդյունքի առումով անպայման հավասար կշիռ ունենան, ոչ էլ, որ բոլոր թեկնածուները հաղթանակի հավասար հնարավորություններ ունենան. ոչ մի ընտրական համակարգ չի կարող բացառել «կորած ձայներ» (Mathieu-Mohin and Clerfayt v. Belgium, Application no. 9267/81, 02.03.1987, §54, Partija «Jaunie Demokrāti» and Partija «Mūsu Zeme» v. Latvia (dec.), nos. 10547/07, 34049/07, 29.11.2007):

Եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը տարածվում է ընտրությունների արդյունքների վերանայման կարգի վրա, ներառյալ՝ ձայների հաշվարկի և արդյունքների վավերացման հետ կապված վեճերը (Kovach v. Ukraine, Application no. 39424/02, 07.02.2008, Final 07.05.2008, § 55), և քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումները պետք է արտացոլեն ընտրողների կամքը բացահայտելու իրական անհնարինությունը (Riza and Others v. Bulgaria, Application no. 48555/10, 48377/10, 13.10.2015, Final 13.01.2016,

§§ 174-176, Kerimova v. Azerbaijan, Application no. 20799/06, 30.09.2010, Final 30.12.2010, §§ 47-48):

22.4. Վերաքվեարկություն նշանակելու հարցը պետք է գնահատվի համաչափության սկզբունքի լույսի ներքո, քանի որ ընտրական գործընթացում ցանկացած միջամտություն պետք է լինի անհրաժեշտ և համարժեք հետապնդվող նպատակին: Քվեարկության արդյունքների անվավեր ճանաչումը կամ վերաքվեարկության նշանակումն ընտրական գործընթացին առավել ինտենսիվ միջամտություն է, ուստի՝ դրանք կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ խախտումների հետևանքները հնարավոր չէ վերացնել ավելի մեղմ միջոցներով:

Տվյալ դեպքում թիվ 20/13 ընտրական տեղամասում քվեաթերթիկների փաթեթից բացակայում էին կուսակցություններից մեկի անվանումով քվեաթերթիկները: Թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ 2026 թվականի հունիսի 12-ի «Սեփական նախաձեռնությամբ թիվ 12/13 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին» N 14-Ա որոշմամբ անվավեր է ճանաչել Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված թիվ 12/13 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները: Թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հիշյալ որոշումը վարչական կամ դատական կարգով չի բողոքարկվել:

Թիվ 10/51 և 35/65 ընտրական տեղամասերում քվեարկությունը շարունակվել է սահմանված ժամկետի ավարտից հետո, ինչով պայմանավորված՝ խախտվել է քվեարկության հավասարությունն ու միաժամանակությունը երաշխավորող կանոնը, և այդ տեղամասերի ընտրողների կամքն այլևս հնարավոր չէ առանձնացնել սահմանված ժամկետից դուրս «ընդունված» ձայներից:

22.5. Վերաքվեարկություն նշանակելու իրավական կառուցակարգերը նախատեսված են Ընտրական օրենսգրքի՝ «Քվեաթերթիկները: Ընտրությունների արդյունքների ամփոփումը» վերտառությամբ 17-րդ գլխում: Մասնավորապես՝ Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասը, որը վերաբերում է Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներն ամփոփելիս կայացվելիք որոշումներին, սահմանում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նույն օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում ամփոփում է ընտրությունների արդյունքները և ընդունում, ի թիվս այլնի, առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին որոշում: Նույն հոդվածի 2-րդ մասի ուժով տվյալ որոշումը Կենտրոնական հանձնաժողովն ընդունում է Ընտրական օրենսգրքի 101-րդ հոդվածով նախատեսված դեպքերում:

Ընտրական օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին, եթե այդ միջոցով հնարավոր է շտկել այդ խախտումների հետևանքները: Եթե այդ միջոցով հնարավոր չէ շտկել այդ խախտումները, ապա Ազգային ժողովի ընտրություններն անվավեր են ճանաչվում, և նշանակվում է Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկություն:

Վերոնշյալ իրավանորմով նախատեսված վերաքվեարկություն անցկացնելու ընթացակարգի առնչությամբ Ընտրական օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված իրավանորմի հիպոթեզը հստակ սահմանում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ինչպես առանձին ընտրական տեղամասերում, այնպես էլ Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկություն անցկացնելու մասին որոշում կարող է ընդունել միայն այն դեպքում, երբ ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել Ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ նշված իրավանորմի հիպոթեզում ամրագրված չափանիշը վերաբերում է ոչ թե առանձին ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների հնարավոր խեղաթյուրմանը, այլ ընտրությունների ընդհանուր արդյունքի վրա դրանց հնարավոր ազդեցությանը:

Նշված իրավանորմից բխում է նաև, որ նման խախտումների առկայության պարագայում Ընտրական օրենսգրքի իմպերատիվ պահանջն այն է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝

- կամ առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին որոշում է ընդունում,

- կամ էլ, եթե այդ միջոցով հնարավոր չլինի շտկել խախտումները, Ազգային ժողովի ընտրություններն անվավեր է ճանաչում և նշանակում է Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկություն:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ տվյալ պարագայում վերաքվեարկություն նշանակելը չի գտնվում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հայեցողական լիազորության շրջանակում: Օրենսդիրը սահմանել է հստակ պահանջներ, որոնց առկայության դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է գործել օրենքով նախատեսված կարգով:

Տվյալ իրավանորմի իմպերատիվ բնույթը, ըստ որի՝ ընտրությունների արդյունքների վրա հնարավոր ազդեցություն ունեցող խախտումների հետևանքներն առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկության միջոցով շտկելու

անհնարինության դեպքում ընտրություններն անվավեր են ճանաչվում, և նշանակվում է Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկություն, վկայում է այն մասին, որ օրենսդրի կողմից շեշտադրվել է ոչ թե առանձին ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների, այլ ընտրությունների ընդհանուր արդյունքի վրա այդ խախտումների հնարավոր ազդեցությունը: Հետևաբար՝ վերաքվեարկություն նշանակելու հարցը որոշելիս իրավական նշանակություն ունի խախտումների հնարավոր ազդեցության գնահատումն ընտրությունների ընդհանուր արդյունքի վրա, այլ ոչ միայն առանձին ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների հավաստիության տեսանկյունից:

22.6. Առանձին ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչումն ինքնին չի ենթադրում վերաքվեարկություն նշանակելու անվերապահ պարտականություն: Վերաքվեարկությունը բացառիկ միջոց է:

22.7. Սահմանադրական դատարանը կարևորում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընտրական գործընթացի տարբեր փուլերում իրականացվող լիազորությունների հստակ տարբերակումը: Մասնավորապես՝ Ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով և 101-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգավորումները կիրառվում են ինքնուրույն՝ իրենց նպատակային և համակարգային կապի համատեքստում: Հետևաբար՝ Ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով նախատեսված լիազորության իրացումն ինքնաբերաբար չի հանգեցնում 101-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավակարգավորման կիրառմանը:

22.8. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, 2026 թվականի հունիսի 11-ին ընդունելով թիվ 254-Ա և թիվ 255-Ա որոշումները, իրացրել է իր վերահսկողական գործառույթից բխող լիազորությունները՝ նախատեսված Ընտրական օրենսգրքի 48.1-ին հոդվածով և 51-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված պահին մի շարք ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկն ավարտված չէր, ընտրությունների արդյունքները դեռևս ամփոփված չէին, դրանք ամփոփվել են 2026 թվականի հունիսի 14-ին: Իսկ ընտրությունների արդյունքների ամփոփման փուլում, որպեսզի կիրառվեին Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 101-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները, պարտադիր կարգով պետք է առկա լինեին Ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ինչը չի ապացուցվել գործի քննության ընթացքում:

Այդ համատեքստում անդրադառնալով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի թիվ 254-Ա և թիվ 255-Ա որոշումներում արտահայտված այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ թիվ 35/65 և թիվ 10/51 ընտրական տեղամասերում

քվեարկության ընթացքում տեղի են ունեցել Ընտրական օրենսգրքի պահանջների այնպիսի խախտումներ, որոնք կարող էին էապես ազդել քվեարկության արդյունքների վրա, և որոնց պայմաններում հնարավոր չէ պարզել քվեարկության իրական արդյունքները, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված հիմնավորումները վերաբերում են բացառապես տվյալ ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների հավաստիությանը: Մինչդեռ վերաքվեարկություն նշանակելու համար, ինչպես արդեն նշվեց, օրենքով նախատեսված չափանիշը պահանջում է գնահատել, թե արդյոք արձանագրված խախտումները կարող էին ազդեցություն ունենալ ընտրությունների ընդհանուր արդյունքի վրա:

22.9. Անդրադառնալով «Բարգավաճ Հայաստան» կուսակցության այն փաստարկներին, ըստ որոնց՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից արդյունքների ամփոփման արդյունքում ակնհայտ է դառնում, որ Դիմող կուսակցությանը պակասում էր 153 կողմ քվեաթերթիկ Ազգային ժողովում ներկայացված լինելու և մանդատների բաշխմանը մասնակցելու համար, որը վերջինս կունենար, եթե Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներով թիվ 10/51 և թիվ 35/65 ընտրական տեղամասերի արդյունքներն անվավեր ճանաչված չլինեին, և ողջամտորեն կարող էր ունենալ, եթե Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կայացներ որոշում, որով թիվ 10/51 և թիվ 35/65 ընտրական տեղամասերում կանցկացվեր վերաքվեարկություն, Սահմանադրական դատարանը նշում է, որ քանի դեռ թիվ 10/51 և թիվ 35/65 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքները վերջնականապես չէին որոշվել և ամփոփվել, հնարավոր չէ բավարար աստիճանի որոշակիությամբ եզրահանգել, թե այդ տեղամասերում ընտրողների կամարտահայտության արդյունքում քվեների ինչպիսի քանակական բաշխում կլիներ: Հետևաբար՝ ենթադրական բնույթ է կրում այն պնդումը, որ նշված տեղամասերում վերաքվեարկության անցկացումը կհանգեցներ Դիմող կուսակցության կողմից առնվազն 153 լրացուցիչ ձայներ ստանալուն և, որպես հետևանք, Ազգային ժողովում ներկայացված լինելու համար անհրաժեշտ ընտրական շեմի հաղթահարմանը:

Ուստի՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ներկայացված փաստարկը ինքնին չի կարող բավարար հիմք հանդիսանալ ընտրությունների ընդհանուր արդյունքի վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համապատասխան որոշումների հնարավոր ազդեցության վերաբերյալ հետևության համար:

22.10. Անհրաժեշտ է հստակ տարբերակել, որ Ընտրական օրենսգիրքը վերաքվեարկություն նշանակելու համար որպես հիմք նախատեսում է նույն օրենսգրքի խախտումների, այլ ոչ թե քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու որոշման հնարավոր ազդեցությունը ընտրությունների ընդհանուր արդյունքների վրա: Այսինքն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը

սահմանված կարգով ընտրությունների արդյունքներն ամփոփելիս պետք է գնահատեր ոչ թե իր կողմից 2026 թվականի հունիսի 11-ի թիվ 254-Ա և թիվ 255-Ա որոշումների հնարավոր ազդեցությունը ընտրությունների ընդհանուր արդյունքների վրա, այլ Ընտրական օրենսգրքի տարատեսակ խախտումների ազդեցությունը:

22.11. Այսպիսով, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026 թվականի հունիսի 11-ի թիվ 254-Ա և թիվ 255-Ա որոշումներով գործել է իր վերահսկողական գործառույթի շրջանակներում, իսկ դրա արդյունքում որոշ ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելն ինքնին ուղղված է եղել հայտնաբերված խախտումների հետևանքների վերացմանը՝ բացառելու դրանց ազդեցությունը քվեարկության ընդհանուր արդյունքների վրա:

22.12. Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներն ամփոփելիս թիվ 35/65 և թիվ 10/51 ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու, իսկ դրա անհնարինության դեպքում Ազգային ժողովի ընտրություններն անվավեր ճանաչելու և Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկություն նշանակելու հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանը փաստում է, որ սույն գործի քննությամբ չի հիմնավորվել ընտրությունների արդյունքներն ամփոփելիս ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված այնպիսի խախտումների արձանագրումը, որոնք կարող էին ազդել ընտրությունների ընդհանուր արդյունքների վրա և, հետևաբար՝ հիմք հանդիսանալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից վերաքվեարկություն նշանակելու համար, իսկ թիվ 35/65 և թիվ 10/51 ընտրական տեղամասերում հայտնաբերված խախտումների ազդեցությունը ընտրությունների արդյունքների վրա վերացվել էր թիվ 35 և թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների համապատասխան որոշումներն անվավեր ճանաչելու միջոցով:

22.13. Սահմանադրական դատարանն ընդգծում է, եթե վերաքվեարկությունն անցկացվում է այնպիսի պայմաններում, երբ ընտրողներն արդեն տեղեկացված են քվեարկության նախնական արդյունքների մասին, ապա այն դադարում է ծառայել ընտրողների սկզբնական կամքի վերարտադրմանը և կարող է վերածվել նոր իրավաքաղաքական իրավիճակում նոր կամարտահայտության:

22.14. Վերաքվեարկության վերականգնողական նպատակն է համապատասխան ընտրողներին վերադարձնել կամքի այնպիսի ազատ արտահայտումը, որը նրանց դեպքում սահմանափակվել է թույլ տրված խախտումների պատճառով, ընդ որում՝ մնացած ընտրազանգվածի քվեարկության պայմաններին հավասար պայմաններում: Առանձին ընտրական տեղամասերով սահմանափակված քվեարկությունը, որն անցկացվելու էր համապետական ընտրությունների արդյունքներն հայտնի դառնալուց հետո, և որից ակնհայտորեն կախված էր 4 տոկոսանոց շեմի հաղթահարումը, հետևաբար՝ խորհրդարանի կազմը, չէր կարող վերարտադրել այդ պայմանները: Այն մեծ հավանականությամբ այդ գործընթացում

ներգրավված ընտրողներին կապահովեր ոչ թե իրենց կորցրած ձայնը, այլ մեկ այլ՝ վճռորոշ ձայն, որը տրվելու էր քվեարկության արդյունքների դասավորության լիակատար իմացությամբ և քարոզչական ռեսուրսների այնպիսի կենտրոնացման պայմաններում համապատասխան տեղամասերի նկատմամբ, որը բացակայում էր քվեարկության օրը: Նման քվեարկությունն ապահովելու էր ոչ այնքան ընտրական իրավունքի հավասարությունը, որքան ի զորու կլիներ գլխովին շրջելու այն ի վնաս մնացյալ՝ ավելի քան 1.4 միլիոն ընտրողների:

Այն ընտրական տեղամասում, որտեղ քվեաթերթիկների փաթեթից բացակայում էին համապատասխան կուսակցության անվանումով քվեաթերթիկները, վավեր քվեարկություն ընդհանրապես տեղի չի ունեցել. թերությունը պայմանավորված է ընտրական վարչարարության գործոնով:

Ինչ վերաբերում է այն երկու ընտրական տեղամասերին, որտեղ քվեարկությունը շարունակվել է սահմանված ժամկետից հետո, ապա օրինական և ապօրինի կերպով ձևավորված/ստեղծված քվեաթերթիկները, խառնվելով քվեատուփերում, քվեարկության գաղտնիության ուժով ֆիզիկապես տարանջատելի չեն. հետևաբար՝ նման պայմաններում զատելի կամ ճշգրիտ հաշվարկն անհնարին է:

22.15. Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ համապատասխան ընտրական տեղամասերում վերաքվեարկությունը նշված տեղամասերում քվեարկած ընտրողներին ոչ թե կապահովեր ընտրության օրվա դրությամբ նրանց կամարտահայտության վերականգնման հնարավորություն, այլ արտոնյալ՝ ընտրության ողջ արդյունքը կանխորոշող ձայն՝ մնացյալ ավելի քան 1,4 միլիոն ընտրողների ձայներից յուրաքանչյուրի կշռից անհամեմատ բարձր կշռով: Օրենսդրի որոշումը՝ վերաքվեարկությունը պայմանավորել դրա իրական պաշտպանության կարողությամբ, հաստատում է հավասարակշռություն՝ ավելի քան 4000 ընտրողների ընտրական իրավունքին միջամտության և ավելի քան 1.4 մլն ընտրողների ընտրական իրավունքի հավասարության բաղադրիչի միջև, որը կամայական գնահատական չէ, իսկ ուժի մեջ մնացող համապետական արդյունքը փաստական առումով արժանահավատ է: Առկա չէ որևէ այնպիսի սխալ, որի արդյունքում համապետական ընտրությունների արդյունքներով ժողովրդի կամքի ազատ արտահայտված լինելը կասկածի տակ կառնվեր:

22.16. Համապետական վերաքվեարկության հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանը նշում է, որ ժողովրդի կամքը համապետական մակարդակում պարզվել է առանց որևէ իրական խոչընդոտի, իսկ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելն արդարացված է միայն ընտրողների կամքը պարզելու իրական անհնարինությամբ, իսկ նման անհնարինություն մնացած ընտրական տեղամասերում, որտեղ անցկացվել է վերահաշվարկ, առկա չէ (էական խախտումներ չկան): Ավելի քան 1,4 միլիոն ընտրողի օրինական արտահայտած

կամքը մի քանի ընտրական տեղամասերով սահմանափակված թերությունների պատճառով անվավեր ճանաչելը և ամբողջ ժողովրդի առջև կրկին քվեարկության խնդրի առաջադրումը կլինեին որևէ իրավաչափ նպատակին բացահայտորեն անհամաչափ և ընտրական գործընթացի պահանջած կայունությանը հակասող միջոց:

23. «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի, «Միասնության թևեր» կուսակցության, «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցության, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության, «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակ-ցության կողմից բարձրացված՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորի թեկնածու և ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի կողմից բռնության կոչերի, սպառնալիքների և, որպես հետևանք՝ ատելության մթնոլորտ ձևավորելու հարցի առնչությամբ՝ ընտրողների ազատ կամահայտնության վրա ազդեցության համատեքստում, Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ 2021 թվականի հուլիսի 17-ի ՍԴՈ-1606 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ նախընտրական քարոզչությունը չի կարող ուղեկցվել ատելության, բռնության կոչերով և սպառնալիքներով (եթե անգամ այդ սպառնալիքն իրական չէ), որոնք խաթարում են խաղաղ և առողջ սոցիալական միջավայրը, և քաղաքական ուժերն ու դրանց ներկայացուցիչները պետք է նախընտրական քարոզչության ընթացքում դրսևորեն առավելագույն զսպվածություն, քաղաքական կոռեկտություն՝ բացառելով ատելության, բռնության ցանկացած կոչ ու սպառնալիք և արժանապատվությունը նվաստացնող ցանկացած վարքագիծ:

Սահմանադրական դատարանն իր հիշյալ որոշմամբ ընդգծել է գործուն միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը հայաստանյան քաղաքական խոսքում՝ ատելության, բռնության, վիրավորանքի և արժանապատվությունը նվաստացնելու կասկած հարուցող խոսքի և վարքագծի որևէ դրսևորում, ներառյալ նաև նախընտրական քարոզչության ժամանակ հնչեցվող խոսքում բացառելու նպատակով՝ նշելով, որ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի կողմից իրականացվող նախընտրական քարոզչությունն ուղղված է ընտրողների վստահությունը ձեռք բերելուն (ամրապնդելուն), և այդ գործընթացում առանցքային դեր պետք է կատարի տնտեսական, սոցիալական, պաշտպանական և այլ բնագավառներում քաղաքական ուժերի ծրագրային դրույթների մասին ընտրողների իրազեկումն ու այդ դրույթների առարկայական քննարկումը՝ չբացառելով նախընտրական քարոզչության ժամանակ սուր քննադատական խոսքը, որը, սակայն, չպետք է ուղեկցվի ատելության, բռնության, վիրավորանքի և արժանապատվությունը նվաստացնելու կասկած հարուցող խոսքով և վարքագծով (10.6-րդ կետ):

23.1. Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/8592/05/26 վարչական գործով սույն թվականի մայիսի 31-ի վճռի շրջանակում եզրակացրել է. «(...) նախընտրական քարոզչության ընթացքում օգտագործված արտահայտությունները /սույն վարչական գործի շրջանակներում ներկայացված տեսանյութերում օգտագործված/ դուրս են քաղաքական քննադատության և ընդունելի քաղաքական բանավեճի սահմաններից,

- դրանք օբյեկտիվորեն կարող են ընկալվել այլ համատեքստում, քան ամրագրված է Պատասխանողի [Կենտրոնական ընտրական հանձնաժողովի] որոշմամբ,

- ՍԴՈ-1606 որոշմամբ ամրագրված չափանիշների համաձայն՝ նման խոսույթը համատեղելի չէ ազատ, խաղաղ և առողջ ընտրական միջավայրի հետ,

- Պատասխանողը չի իրականացրել ներկայացված արտահայտությունների բավարար և ամբողջական գնահատում»:

23.2. Վերոնշյալի համատեքստում Սահմանադրական դատարանի կողմից հայաստանյան քաղաքական, ներառյալ՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հնչեցվող խոսքում վերոնշյալ դրսևորումները բացառելուն ուղղված գործուն միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության կարևորությունն ընդգծելուն հակառակ, Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ 2026 թվականի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող առանձին քաղաքական ուժերի առաջնորդների/ներկայացուցիչների խոսքը/հռետորաբանությունը եղել է անընդունելի կոպիտ, հանրային բարոյական տեսանկյունից՝ խիստ դատապարտելի, իսկ դրա ազդեցությունը՝ ցնցող: Խոսքի ազատությունը, որն իր՝ գնահատողական դատողություններ անելու բաղադրիչում առավել պաշտպանված է քաղաքական գործընթացների պարագայում, առավել զսպող պետք է լինի իշխանություն ունեցող քաղաքական ուժի պարագայում՝ թույլ չտալով, որ քաղաքական հակառակորդների, հատկապես՝ ընդդիմության քննադատությունը վերածվի անձնական բնույթի թշնամանքի՝ ժողովրդավարական հասարակությունում ոչ անհրաժեշտ դրսևորումների: Այնուամենայնիվ, այդ առնչությամբ, ընտրողների կամքի և ընտրությունների արդյունքի վրա հիշյալ խոսքի/հռետորաբանության ազդեցության գնահատման և հաշվարկի գիտականորեն հիմնավորված մեթոդների բացակայության պայմաններում Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ խոսքի/հռետորաբանության՝ ընտրությունների ընդհանուր արդյունքների վրա ազդեցությունը փաստելու համար բավարար հիմքեր առկա չեն:

24. Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատություն իրականացնելիս չի կարող գործել բացարձակ իրավաքաղաքական վակուումում և անտեսել այն իրողությունները, որ ժամանակակից ժողովրդավարական

պետություններում ընտրական գործընթացներն առավել հաճախ սկսել են ուղեկցվել դրանց նկատմամբ արտաքին ազդեցության, տեղեկատվական միջավայրի մանիպուլիացիայի և թվային տեխնոլոգիաների չարաշահման հետ կապված նոր մարտահրավերներով:

Սույն գործի քննության ընթացքում ևս Դիմողները վկայակոչել են նման բնույթի մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ տարբեր պետությունների պաշտոնատար անձանց կողմից կատարված հրապարակային հայտարարություններ, որոնք առնչվել են Հայաստանի Հանրապետությունում անցկացվող ընտրություններին կամ դրանց հնարավոր արդյունքներին և պարունակել են Հայաստանի Հանրապետության նկատմամբ հետագա քաղաքական, տնտեսական, խրախուսող կամ պատժող բնույթի գնահատականներ կամ ակնարկներ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտրական գործընթացները Հայաստանի Հանրապետությունում ուղեկցվել են զգալի արտաքին ուշադրությամբ և օտարերկրյա քաղաքական գործիչների ակտիվ հայտարարություններով, որոնք, անկախ իրենց բնույթից և ազդեցության աստիճանից, չէին կարող ամբողջությամբ դուրս մնալ ընտրական գործընթացների մասնակիցների, պետական մարմինների, տնտեսվարողների և ընտրողների ուշադրությունից: Միաժամանակ, Սահմանադրական դատարանը փաստում է, որ ընտրությունների կազմակերպման և անցկացման համար պատասխանատու պետական մարմինների լիազորությունները սահմանափակված են Հայաստանի Հանրապետության իրավազորության շրջանակներով և նման հայտարարություններին պատշաճ արձագանքել չեն կարող: Հայաստանի Հանրապետության պատմության մեջ նմանօրինակ օտարերկրյա հետաքրքրվածությունն ընտրական գործընթացների նկատմամբ աննախադեպ է եղել, ինչը ՀՀ պետական մարմիններից պահանջել է ՀՀ օրենսդրությամբ ընձեռված գործիքակազմով հսկայական ջանքեր ձեռնարկել նման օտարերկրյա հետաքրքրվածությունը միջամտության չվերածելու համար:

Առանձնակի մտահոգության առարկա են դարձել ապատեղեկատվական բնույթի գործողությունները, մասնավորապես՝ տեղեկատվական միջավայրում արհեստական բանականության գործիքների կիրառմամբ խորքային կեղծիքի (deep fake) տեխնոլոգիաներով ստեղծված նյութերի տարածումը: Նման նյութերը կարող են ձևավորել իրականության խեղաթյուրված ընկալում, առաջացնել վախի, անորոշության կամ սպառնալիքի զգացողություն, հատկապես թվային գրագիտության համեմատաբար ցածր մակարդակ ունեցող ընտրողների շրջանում:

Սահմանադրական դատարանը, ընդգծելով, որ սույն գործի շրջանակներում չի գնահատում վերը նշված երևույթների փաստացի առկայությունը կամ դրանց ազդեցության աստիճանն ընտրությունների արդյունքների վրա, և այդ հարցերը դուրս են սույն վեճի շրջանակներից, միաժամանակ, գտնում է, որ նշված

մարտահրավերները պետք է հաշվի առնվեն ընտրական օրենսդրության, ընտրական գործընթացների պաշտպանության կառուցակարգերի և պետական ինստիտուտների կարողությունների հետագա կատարելագործման ընթացքում:

25. Դիմումներում նշված մյուս հանգամանքների և վերջիններիս առնչությամբ ներկայացված փաստարկների (մասնավորապես՝ շուրջ 7000 անձի՝ քվեարկելու տեղամասը փոխելու դիմումների մերժում ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից, քվեարկությանը մասնակցած 79125 ՀՀ քաղաքացու դեպքում անձը հաստատող փաստաթղթի տվյալները՝ մասնագետի կողմից ստեղնաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծում, ընտրություններին մասնակցած ընտրողների և ընտրողների ցուցակներում առկա ստորագրությունների թվերի միջև տարբերություններ, քվեարկության ծրարների լուսաթափանց լինելը, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական հիմնադրամից թույլատրելի ծախսերի առավելագույն չափի գերազանցում, նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի և թեկնածուների համար լուսաբանման անհավասար պայմաններ, քվեարկության ուղղորդում, զորամասերում հաշվառված ընտրողների (զինծառայողների) մասնակցությանն առնչվող տվյալների գաղտնիություն և այլն)՝ քննության առարկա գործի լուծման համար նշանակության հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով սույն որոշման 17.7-17.8-րդ, ինչպես նաև 26.4-րդ կետերում արտահայտված դիրքորոշումները, փաստում է, որ դրանց մի մասն ունեցել է դրվագային կամ եզակի դրսևորումներ, կամ համապատասխան պնդումները հիմնված են սոսկ ենթադրությունների և փաստական որևէ հենք չունեցող կասկածների վրա կամ վերաբերում են օրենսդրական կարգավորումներին և այլն:

25.1. Մասնավորապես՝ սույն գործով հարակից պատասխանողի՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ներկայացուցիչը, անդրադառնալով շուրջ 7.000 անձի՝ ըստ գտնվելու վայրի ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու համար ներկայացված դիմումները մերժելու հարցին, ընդգծեց, որ մերժումների առկայությունն ինքնին որևէ կերպ չի կարող վկայել ընտրական օրենսդրության խախտման մասին, առավել ևս, երբ նման խախտում չի եղել: Ըստ ՆԳՆ ներկայացուցչի՝ նման դատողություններ հնարավոր կլիներ անել ոչ թե սոսկ մերժումների քանակական հատկանիշի հաշվառմամբ, այլ մերժումների նպատակային, ոչ իրավաչափ բնույթի ընդգծմամբ: Մինչդեռ նման որևէ փաստարկ ներկայացված չէ և, հետևապես՝ Դիմողներին առաջադրվող՝ ապացուցման համար անհրաժեշտ նվազագույն ապացուցողական շեմը, հարակից պատասխանողի դիտարկմամբ, հաղթահարված չէ: ՆԳՆ ներկայացուցիչը նշեց նաև, որ մերժման որոշումները վերջնական չեն, և օրենքով նախատեսված է դրանց բողոքարկման

արդյունավետ կառուցակարգ: Ավելին, այդ որոշումները որևէ կերպ չեն ազդել ընտրելու իրավունքի երաշխավորման վրա:

25.2. Անդրադառնալով քվեարկությանը մասնակցած 79125 ՀՀ քաղաքացու դեպքում անձը հաստատող փաստաթղթի տվյալները՝ մասնագետի կողմից ստեղնաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու հարցին՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ներկայացուցիչը նշեց, որ տեխնիկական սարքավորման կիրառմամբ ընտրողի նույնացումը, ինչպես արձանագրել է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչը, նախատեսվել է որպես ընտրողի նույնացման հավելյալ գործիքակազմ: Սարքավորման առկայության կամ բացակայության պարագայում ևս ընտրողի նույնացման հիմնական գործիքակազմը շարունակում է մնալ անձը հաստատող փաստաթղթի միջոցով անձի նույնացումը տեղում: Ընդ որում՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ներկայացուցչի պնդմամբ՝ նշված թիվը Հայաստանի ընտրությունների պատմության ընթացքում արձանագրված ամենացածր թիվն է:

25.3. Ընտրություններին մասնակցած ընտրողների և ընտրողների ցուցակներում առկա ստորագրությունների թվերի միջև տարբերությունների հարցի առնչությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչը, նկատելով, որ «Հայաստան» կուսակցությունների դաշինքի դիմումին կից ներկայացված նյութերում առկա ֆայլում ներառված են 340 ընտրական տեղամասերի վերաբերյալ տվյալներ՝ քվեարկությանը մասնակցած ընտրողների և ընտրողների ցուցակներում առկա ստորագրությունների թվերի միջև տարբերությունների մասին, և ըստ ներկայացված հաշվարկի՝ քվեարկությանը մասնակցած ընտրողների և ստորագրությունների թվերի միջև առկա է ընդհանուր 27814 տարբերություն, այսինքն՝ ստորագրությունների թիվը ներկայացված է այդքանով պակաս, մասնավորապես, նշեց, որ ցանկում ներառված 340 ընտրական տեղամասերից 86-ում քվեարկել են զորամասի ընտրողների ցուցակում ընդգրկված ընտրողներ: Այդ տեղամասերի համարների, ինչպես նաև քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի հրապարակայնացման սահմանափակումներն ու արգելքը սահմանված է Ընտրական օրենսգրքով: Ընդհանուր տարբերությունից պետք է հանել զինվորական ցուցակներով քվեարկողների թիվը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչը նշեց, որ ներկայացված ֆայլում առանձին սյունակներով նշված են յուրաքանչյուր տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը, ստորագրությունների թիվը և դրանց տարբերությունը: Սակայն 340 տեղամասերից 105-ի դեպքում ստորագրությունների թվի սյունակը դատարկ է, մինչդեռ «Ավելներ» սյունակում նշված է ենթադրյալ տարբերության թիվ: Այնուամենայնիվ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ուսումնասիրվել և վերլուծվել են նաև այդ տեղամասերի տվյալները: Պարզվել է, որ ներկայացված տվյալների զգալի մասը

չի համապատասխանում իրականությանը: Որոշ դեպքերում դրանք ընդհանրապես չեն համապատասխանում փաստացի ստորագրությունների թվին կամ նույնիսկ մոտ չեն իրական տվյալներին, իսկ որոշ դեպքերում առկա տարբերությունները զգալիորեն փոքր են ներկայացվածից: Օրինակ՝ 36/31, 29/18, 3/28, 29/3, 16/3, 29/7, 12/44, 29/25, 26/37, 18/4, 38/9, 24/41, 15/21, 29/50, 25/3, 29/29, 17/42, 30/22, 16/39, 3/26, 23/3, 26/35, 15/44, 32/3, 17/1, 26/9, 36/22, 30/21, 18/16, 24/37, այն է՝ 30 տեղամասերի վերաբերյալ դիմողի կողմից ներկայացված ստորագրությունների թվերը սխալ են հաշվված: Հենց այս տեղամասերն են առանձնացվել և ներկայացվել, քանի որ, ըստ Դիմողի, դրանք առավել մեծ թվով տարբերություններ ունեցող տեղամասերն են (57-ից մինչև 800 և ավելի): Միայն նշված տեղամասերի վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից կատարված ստուգումների և ճշգրտումների արդյունքում ներկայացված տարբերությունը նվազում է ավելի քան 8000-ով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչը հավելեց, որ Դիմողն իր հաշվարկներում օգտագործել է ոչ թե ԿԸՀ կողմից հրապարակված վերջնական աղյուսակավորված, այլ նախնական տվյալները: Օրինակ՝ 3/26 տեղամասում վերջնական աղյուսակավորման մասնակիցների թիվը տեղադրելու դեպքում տարբերությունը դառնում է ոչ թե 199, ինչպես ներկայացված է, այլ 2: Հաշվարկն իրականացնելիս հաշվի չի առնվել նաև, որ բացի զորամասերում կազմված ցուցակներից, կան նաև այլ ցուցակներ՝ ձերբակալված անձանց պահելու վայրում (ՁՊՎ) շրջիկ արկղով քվեարկության ընտրողների ցուցակները, որոնք ևս հրապարակման ենթակա չեն: Օրինակ՝ 9/30 տեղամասին (որը տեղ է գտել ներկայացված ցանկում) կցված է եղել Երևան քաղաքի ՁՊՎ-ն՝ շրջիկ արկղով քվեարկություն կազմակերպելու համար, և կազմակերպված շրջիկ արկղով քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակը, սահմանված կարգի համաձայն, չի սքանավորվել և չի հրապարակվել: Հանձնաժողովի հրապարակած աղյուսակներում երևում է, որ այդ տեղամասում քվեարկել է 54 անձ: Ընդհանուր առմամբ՝ 24 ժամվա ընթացքում շուրջ 120 հազար էջ ընտրողների ցուցակներ են սքանավորվել և տեղադրվել ԿԸՀ կայքում: Հանձնաժողովը շարունակաբար ստուգել, վերլուծել է սքանավորված ցուցակները, իսկ թերությունների հայտնաբերման դեպքում դրանք շտկվել են:

25.4. «Բարգավաճ Հայաստան» կուսակցության՝ քվեարկության ծրարների լուսաթափանց լինելուն առնչվող փաստարկի առնչությամբ Սահմանադրական դատարանը նկատում է, որ Սահմանադրական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 29-ի ՍԴԱՈ-140 աշխատակարգային որոշմամբ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության՝ ապացույց պահանջելու և փորձաքննություն նշանակելու վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է մասնակի՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից պահանջվել է հնարավորինս սեղմ ժամկետում Սահմանադրական

դատարան ներկայացնել յուրաքանչյուր տարածքային ընտրական հանձնաժողովից 2026 թվականի հունիսի 7-ին տեղի ունեցած Ազգային ժողովի հերթական ընտրությունների համար տպագրված քվեարկության ծրարի 5 օրինակ, ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկի օրինակ: Այդ առնչությամբ չի հիմնավորվել, որ քվեարկության ծրարներն այն աստիճանի լուսաթափանց են, որի պայմաններում կխախտվի քվեարկության գաղտնիությունը՝ ընտրությունների վերջնարդյունքի վրա ազդեցության առումով:

25.5. «Հայաստան» կուսակցությունների դաշինքի և «Միասնության թևեր» կուսակցության դիմումներով բարձրացված՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական հիմնադրամից թույլատրելի ծախսերի առավելագույն չափը գերազանցելու հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանը նկատում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ 2026 թվականի հունիսի 14-ի թիվ 258-Ա որոշմամբ արձանագրված է. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է նաև Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության 2026 թվականի հունիսի 13-ի «Ազգային Ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքների մասին» եզրակացությունը, համաձայն որի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը համադրելով բանկերից ստացված տեղեկանքները կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված հայտարարագրերի, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի հետ՝ փաստում է, որ «Բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված՝ նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին»: Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունում Ազգային ժողովի խմբակցությունների կողմից [«Հայաստան» խմբակցության մասով] վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունում նշանակված աուդիտորների կողմից ևս որևէ առարկություն կամ դիմում չի ներկայացվել»:

Անդրադառնալով այն փաստարկին, ըստ որի՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական շտաբների համար անհատույց տրամադրված տարածքները հայտարարագրերում ներառվել են շուկայականից

էականորեն ցածր արժեքներով, և եթե դրանց իրական շուկայական արժեքը ներառվեր հայտարարագրերում, ապա կգերազանցվեր Ընտրական օրենսգրքով սահմանված նախընտրական հիմնադրամի սահմանաչափը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչը, հիմք ընդունելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ 2022 թվականի հունիսի 17-ի «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը, նրանց ներկայացվող պահանջները և աուդիտի իրականացման շրջանակները սահմանելու մասին» N 02-Ն որոշման 10-րդ գլխի 89-րդ կետը (Անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու շուկայական արժեքը որոշելիս, որպես շուկայական արժեք, հիմք է ընդունվում տվյալ անշարժ գույքի կադաստրային արժեքի 2.5 տոկոսը՝ հաշվարկված տարեկան կտրվածքով), գտել է, որ հայտարարագրերում արտացոլված՝ ընտրական շտաբների համար անհատույց տրամադրված տարածքների արժեքները հիմնված են եղել օբյեկտիվ, ստուգելի և իրավական հիմք ունեցող մեթոդաբանության վրա:

Միաժամանակ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչը նշել է, որ ընտրական օրենսդրությունը չի սահմանում ընտրական շտաբների համար տրամադրված տարածքների շուկայական արժեքի որոշման որևէ պարտադիր կամ բացառիկ մեթոդաբանություն, չի պահանջում անկախ գնահատողի պարտադիր եզրակացություն և չի նախատեսում շուկայական արժեքի հաշվարկման որևէ բանաձև: Հետևաբար՝ հայտարարատուն իրավունք ուներ կիրառելու իրավական հիմք ունեցող և ստուգելի ցանկացած ողջամիտ մեթոդաբանություն, որը հնարավորություն կտար որոշելու անհատույց տրամադրված տարածքների արժեքը: Կիրառված մեթոդաբանությունը հիմնված է ոչ թե կամայական մոտեցման, այլ օրենսդրությամբ նախատեսված և կիրառվող հաշվարկային մեթոդի վրա:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչը նշել է նաև, որ շուկայական արժեքը գնահատողական կատեգորիա է և իր բնույթով բացարձակ կամ միակ հնարավոր մեծություն չէ: Նույն անշարժ գույքի վերաբերյալ կարող են ստացվել տարբեր արդյունքներ՝ պայմանավորված գնահատողների մեթոդաբանությամբ, ժամանակահատվածով, ինչպես նաև այլ գործոններով: Ուստի՝ այն հանգամանքը, որ դիմումներում ներկայացվել են պնդումներ, որ պետք է այդ տարածքներն «ավելի բարձր» գնահատվեին, ինքնին դեռևս չի նշանակում, որ հայտարարագրերում արտացոլված արժեքները սխալ են կամ չեն համապատասխանում օրենքի պահանջներին: Հայտարարագրերին կից ներկայացված՝ ծախսերը հիմնավորող փաստաթղթերը վկայում են, որ կուսակցությունը չի թաքցրել անհատույց տրամադրված տարածքները, դրանք ամբողջությամբ արտացոլել է հայտարարագրերում, ներկայացրել է համապատասխան պայմանագրերը և արժեքների հաշվարկման հիմքերը: Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն իր հերթին գործել է Ընտրական օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, և

հաշվի առնելով, որ ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերի կողմից ներկայացվել են Ընտրական օրենսգրքով պահանջվող բոլոր անհրաժեշտ տվյալները, տեղեկատվությունը և դրանք հիմնավորող փաստաթղթերը, ունեցել է բավարար իրավական հիմքեր ներկայացված հայտարարագրերն ընդունելու և դրանք օրենքի պահանջներին համապատասխան համարելու համար:

25.6. Առանձին Դիմողների կողմից բարձրացված՝ նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի և թեկնածուների համար լուսաբանման անհավասար պայմանների հարցի առնչությամբ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի՝ 2026 թվականի հունիսի 24-ի տեղեկանքի համաձայն՝ «2026 թվականի մայիսի 8-ից հունիսի 5-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքների ամփոփումը և եզրակացությունը Հանձնաժողովը հրապարակել է 2026 թվականի հունիսի 12-ին ընդունված «Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը հրապարակելու մասին» թիվ 69-Ա որոշմամբ»:

Ըստ այդմ՝ «(...) հավասար պայմանների ապահովման սկզբունքի խախտում պետք է դիտարկել լրատվական հաղորդման ընթացքում կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական քարոզչության վերաբերյալ անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվության ներկայացման պահանջի խախտման՝ Հանձնաժողովի կողմից արձանագրված դրվագները, որոնց տրվել է համապատասխան իրավական գնահատական: Լրատվական թողարկումներում անկողմնակալ տեղեկատվության ներկայացման օրենսդրական պահանջի խախտումը հանգեցնում է ընտրական օրենսդրության հիմնարար սկզբունքներից մեկի՝ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև հավասարության սկզբունքի խախտմանը, քանի որ կողմնակալ լուսաբանումը կամ ոչ օբյեկտիվ գնահատականները հասարակության համար ձևավորում են կանխակալ պատկերացումներ՝ խաթարելով ազատ և հավասար մրցակցային միջավայրը»:

Նշված ամփոփ տեղեկանքի համաձայն՝ «մշտադիտարկման և ընտրական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության շրջանակում Հանձնաժողովը հարուցել է յոթ վարչական վարույթ, որոնցից հինգը՝ սեփական նախաձեռնությամբ, իսկ երկուսը՝ ստացված բողոքների հիման վրա»:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի որոշումներով երկու ընկերությունների նկատմամբ հարուցված վարչական վարույթները կարճվել են, չորս ընկերությունների նկատմամբ կիրառվել է գրավոր նախազգուշացում, մեկ ընկերության նկատմամբ՝ տուգանք և գրավոր նախազգուշացում:

Նշված ամփոփ տեղեկանքի համաձայն՝ ««Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 55-րդ հոդվածի համաձայն՝ տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջների խախտման համար նախատեսված վարչական տույժերը չեն կիրառվում Հանրային հեռարձակողի նկատմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մշտադիտարկման արդյունքներով արձանագրված խախտման հատկանիշների վերաբերյալ Հանձնաժողովը երկու գրություն է հասցեագրել Հանրային հեռարձակողի խորհրդին: Դրանցից մեկը վերաբերել է Հանրային հեռարձակողների լրատվական հաղորդումներում ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական քարոզչության վերաբերյալ անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվության ներկայացման պահանջի առերևույթ խախտմանը, իսկ մյուսը՝ քվեարկության օրը քարոզչական բնույթ կրող նյութ հեռարձակման առերևույթ փաստին»:

Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության՝ 2026 թվականի հունիսի 7-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների վերաբերյալ նախնական եզրակացություններում, այդ առնչությամբ, մասնավորապես, նշված է. (...) ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից իրականացված լրատվամիջոցների մոնիտորինգը ցույց է տվել, որ լրատվամիջոցների մեծ մասն օգտագործվել է ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից՝ փոխադարձ վիրավորանքները և պառակտող քարոզչական հռետորաբանությունը տարածելու նպատակով՝ քիչ ուշադրություն դարձնելով նրանց ծրագրերի բովանդակային վերլուծությանը: Հանրային հեռուստաընկերությունը կատարել է յուրաքանչյուր կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) 90 րոպե անվճար եթերաժամ տրամադրելու վերաբերյալ իր իրավական պարտավորությունը, սակայն միաժամանակ ցուցաբերել է ակնհայտ կողմնակալություն՝ հօգուտ իշխող կուսակցության, ինչը հակասում է նրա իրավական պարտավորություններին և հանրային առաքելությանը: Մի շարք մասնավոր լրատվամիջոցներ բացասական լույսի ներքո են ներկայացրել կառավարությանը և բարենպաստ լուսաբանում են ապահովել ընտրված ընդդիմադիր կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի քննության ընթացքում չի ապացուցվել այն հանգամանքը, որ նախընտրական քարոզչության՝ լրատվամիջոցներով անկողմնակալ և հավասարակշռված լուսաբանման պահանջների արձանագրված խախտումները՝ գնահատված իրենց ամբողջության մեջ, ընտրողների քաղաքական կամքի ազատ ձևավորման վրա ունեցել են այնպիսի ազդեցություն, որը կարող էր կասկածի տակ դնել ընտրությունների արդյունքի իսկությունը կամ ընտրողների իրական կամքի արտահայտումը: Միաժամանակ,

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ, մասնավորապես, Հանրային հեռուստաընկերության լրատվական-վերլուծական հաղորդումներում ընտրական գործընթացի մասնակից առանձին քաղաքական ուժերի, թեկնածուների վերաբերյալ լուսաբանումները չպետք է լինեն կողմնակալ՝ ապահովելով հավասար մրցակցային պայմաններ ընտրական գործընթացի մասնակից բոլոր քաղաքական ուժերի համար:

25.7. Սահմանադրական դատարանը նկատում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ 2026 թվականի հունիսի 14-ի N 258-Ա որոշմամբ, ի թիվս այլնի, արձանագրված է. «Թվով 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից և ոչ մեկում չի ստացվել դիմում՝ տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին:

(...)

Թվով 2005 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններից միայն թվով 607 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում կատարվել են թվով 1218 գրառումներ, իսկ 1398 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում որևէ գրառում առկա չէ»:

25.8. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողները չեն հաղթահարել իրենց պահանջների համար հիմք ծառայող հանգամանքների ապացուցման համար անհրաժեշտ նվազագույն ապացուցողական շեմը: Ընտրախախտումների տեղ գտած լինելու հնարավորության կամ դրանց ազդեցության մասին ենթադրությունները, ինչպես նաև նման ընտրախախտումների դրվագային դրսևորումները չեն կարող բավարար լինել Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված վեճերով դիմողին առաջադրվող ապացուցման շեմը հաղթահարված համարելու դատողության, հետևաբար՝ Սահմանադրական դատարանի կողմից այդ հանգամանքը քննության առարկա դարձնելու համար:

26. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանն ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

1) Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումը թողնել ուժի մեջ.

2) անվավեր ճանաչել Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումը և

ա. անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները,

բ. անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները և սահմանել մանդատների բաշխման կարգը,

գ. նշանակել ընտրությունների երկրորդ փուլ:

26.1. Սահմանադրական դատարանի կողմից Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումն ուժի մեջ թողնելը ենթադրում է, որ Սահմանադրական դատարանը գործի քննության արդյունքում հանգում է այն եզրահանգման, որ համապատասխան խախտումները կա՛մ չեն ապացուցվել, կա՛մ իրենց ծավալով և ազդեցությամբ չեն կարող կասկածի տակ դնել ընտրությունների սահմանադրական լեգիտիմությունը: Սահմանադրական դատարանը շեշտում է, որ նշված որոշման ընդունումը չի ենթադրում ընտրական գործընթացի կատարյալ լինելու արձանագրում, քանզի յուրաքանչյուր ընտրական գործընթաց գործնականում կարող է ուղեկցվել առանձին իրավախախտումներով: Սահմանադրական դատարանի խնդիրն է գնահատել՝ արդյո՞ք արձանագրված խախտումները կարող էին ազդել ընտրությունների վերջնարդյունքի վրա՝ խաթարելով ժողովրդի իրական կամարտահայտությունը:

26.2. Սահմանադրական դատարանի կողմից Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելը ենթադրում է սահմանադրական արդարադատության մասնագիտացված մարմնի ամենախիստ միջամտությունը: Բարձր դատարանը փաստացի արձանագրում է, որ հանրային իշխանության ներկայացուցչական մարմնի ձևավորումը տեղի է ունեցել այնպիսի պայմաններում, որոնք չեն համապատասխանում ժողովրդավարական ընտրությունների սահմանադրական չափանիշներին, հետևաբար՝ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու նպատակը հանրային իշխանության լեգիտիմության վերականգնումն է: Ժողովրդավարական պետությունում իշխանության օրինականությունը բխում է ոչ թե ընտրությունների ձևական առումով անցկացումից, այլ քաղաքացիների ազատ կամարտահայտության իսկությունից, և եթե այդ իսկությունը կասկածի տակ է դրվում, ապա իշխանության լեգիտիմությունը ևս դառնում է վիճելի:

26.3. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը նախատեսում է Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու տարբեր իրավական հետևանքներ, որոնք ևս արտահայտում են սահմանադրական համաչափության գաղափարը. եթե խախտումների բնույթն այնպիսին է, որ հնարավոր չէ վերականգնել ընտրությունների արդյունքները, ապա Սահմանադրական դատարանն անվավեր է ճանաչում ընտրությունների արդյունքները:

Այն դեպքերում, երբ առկա ապացույցների հիման վրա հնարավոր է արժանահավատորեն որոշել ընտրողների իրական կամքը, Սահմանադրական դատարանը սահմանում է մանդատների բաշխման կարգը: Սա հնարավորություն է տալիս խուսափելու նոր ընտրությունների անցկացումից՝ միաժամանակ վերականգնելով ընտրողների իրական կամարտահայտության արդյունքները: Այդ

առումով Սահմանադրական դատարանը չի իրականացնում քաղաքական գնահատում կամ ընտրական գործընթացի նոր կազմակերպում, այլ, ըստ էության, վերականգնում է այն իրավական վիճակը, որը պետք է գոյություն ունենար ընտրական իրավունքի խախտումների բացակայության պայմաններում:

Նշված տրամաբանության շարունակությունն է Սահմանադրական դատարանի կողմից Ազգային ժողովի ընտրությունների երկրորդ փուլ նշանակելը: Այդ դեպքում Սահմանադրական դատարանի միջամտությունը պետք է հասցվի նվազագույնի՝ միաժամանակ լինելով արդյունավետ. եթե ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու փոխարեն սահմանադրական օրինականությունը հնարավոր է վերականգնել երկրորդ փուլ անցկացնելու միջոցով, ապա նախապատվությունը տրվում է այդ լուծմանը՝ պահպանելով ընտրական գործընթացի շարունակականությունն ու ընտրողների արդեն արտահայտած կամքի այն ծավալը, որը չի ձևախեղվել իրավախախտումների հետևանքով:

26.4. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 14-րդ մասի իրավակարգավորման համատեքստում ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ է երկու պայմանի միաժամանակյա առկայություն՝ «ընտրախախտումներն ունեցել են կազմակերպված, զանգվածային, կրկնվող կամ պարբերական բնույթ», և «դրանց համադրումը վկայում է վերջիններիս միջև համակարգային այնպիսի փոխկապակցվածության մասին, որի պայմաններում խախտվում են Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 14-րդ մասի իրավակարգավորումը սահմանում է ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու բացառիկ հիմք՝ ընտրությունների իրական արդյունքները պարզելու անհնարինության պայմաններում: Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ ընտրությունների սահմանադրականությունը գնահատվում է ոչ միայն վերջնական թվաբանական արդյունքներով, այլև ամբողջ ընտրական գործընթացի որակական բնութագրերով: Այդ առումով օրենսդիրը սահմանել է մի քանի փոխկապակցված պայմաններ, որոնց միաժամանակյա առկայության պայմաններում է Սահմանադրական դատարանն իրավասու անվավեր ճանաչելու ընտրությունների արդյունքները:

Նախ՝ Սահմանադրական դատարանը պետք է սպառած լինի ապացույցներ ձեռք բերելու համար օրենքով նախատեսված բոլոր հնարավոր միջոցները: Սույն գործիքակազմը կիրառելի է միայն այն պարագայում, երբ Սահմանադրական դատարանի կողմից որպես հավաստի գնահատված ապացույցները վկայեն, որ ընտրախախտումներն ունեցել են կազմակերպված, զանգվածային, կրկնվող կամ

պարբերական բնույթ: Դրանցից յուրաքանչյուրն ունի ինքնուրույն իրավական նշանակություն: Կազմակերպված բնույթը մատնանշում է, որ խախտումները չեն եղել ինքնաբուխ կամ պատահական, այլ տեղի են ունեցել որոշակի համակարգված մեխանիզմի շրջանակներում: Զանգվածային բնույթը վերաբերում է խախտումների տարածական կամ քանակական ընդգրկմանը, իսկ կրկնվող կամ պարբերական բնույթը վկայում է դրանց շարունակական ու համակարգային բնույթի մասին:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի հուլիսի 17-ի ՍԴՈ-1606 որոշմամբ արձանագրված է, որ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու՝ հիշյալ բնութագրիչներն օբյեկտիվորեն անհրաժեշտ է դիտարկել համակցության մեջ՝ վերհանելով դրանց համակարգային փոխկապակցվածությունը՝ պարզելու՝ արդյոք դրանք իրենց տեսակով և հատկանիշներով էական բնույթ կրել են, թե ոչ, այսինքն՝ արդյոք իրենց քանակական և որակական ցուցիչներով եղել են այնպիսին, որ գնահատելով դրանք ողջ ընտրական գործընթացի տիրույթում՝ անվիճելիորեն կարելի է փաստել, որ ազդել են ընտրությունների ելքի վրա՝ խաթարելով Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական իրավունքի որևէ սկզբունք (10.3-րդ կետ):

Ողջ վերոգրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողների կողմից ՀՀ Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների գործընթացում օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում չեն արձանագրվել ու բողոքարկման առարկա դարձել իրավախախտումների վերաբերյալ ապացուցողական նշանակություն ունեցող այնպիսի փաստեր, որոնք ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համար կարող էին հիմք ծառայել Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի այլ կետով որոշում կայացնելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62, 63 և 77-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 259-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

4 հուլիսի 2026 թվականի
ՍԴՈ-1835



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ՔԱՂԱՔ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 7 հուլիսի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող, զեկուցող),
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,
Վլադիմիր Վարդանյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարար
Գևորգ Պապոյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2025 թվականի դեկտեմբերի 21-ին քաղաք Սանկտ Պետերբուրգում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Ինդոնեզիայի

Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2026 թվականի ապրիլի 30-ի N 575-Ա որոշմամբ հավանություն է տվել «2025 թվականի դեկտեմբերի 21-ին քաղաք Սանկտ Պետերբուրգում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Ինդոնեզիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2026 թվականի մայիսի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Ինդոնեզիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2025 թվականի դեկտեմբերի 21-ին քաղաք Սանկտ Պետերբուրգում՝ Կողմերի[3] միջև ապրանքների առևտուրը ազատականացնելու և պարզեցնելու, այդ թվում՝ սակագնային և ոչ սակագնային խոչընդոտների նվազեցման միջոցով, տնտեսական և առևտրային փոխգործակցությանն աջակցելու, ինչպես նաև առևտրի ընդլայնումը խրախուսելու նպատակով:

2. Համաձայնագրի հավելվածները և առդիրները կազմում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

Համաձայնագիրը կազմված է հետևյալ հավելվածներից՝ Հավելված 1. «Սակագնային պարտավորությունների ժամանակացույցներ», Հավելված 2. «Առանձին արտադրատեսակներին առնչվող հատուկ կանոններ», Հավելված 3. «Ծագման սերտիֆիկատ», Հավելված 4. «Ծագման հայտարարագիրը», Հավելված 5.

[3]Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը (այսուհետ՝ ԵԱՏՄ անդամ պետություններ) և Եվրասիական տնտեսական միությունը (այսուհետ՝ ԵԱՏՄ)՝ ԵԱՏՄ-ի մասին պայմանագրից բխող իրենց համապատասխան իրավասությունների շրջանակներում գործելով համատեղ կամ առանձին՝ մի կողմից, և Ինդոնեզիան՝ մյուս կողմից, այսուհետ առանձին՝ Կողմ, իսկ միասին՝ Կողմեր:

«Մրցակցային մարմինների պաշտոնական վեբ կայքերը», Հավելված 6. «Արբիտրաժի կանոնակարգ», Հավելված 7. «Արբիտրների վարքագծի կանոնները»:

3. ՍԱԳՀ-ի[4] (1994 թվական) I հոդվածը, XI հոդվածը և դրանց բացատրական ծանոթագրությունները, VIII հոդվածը, ինչպես նաև ԱՀԿ համաձայնագրին[5] համապատասխան կիրառվող՝ ՍԱԳՀ-ի (1994 թվական) I և VIII հոդվածներով սահմանված պարտավորություններից ցանկացած բացառություն, ազատում և հրաժարում և ՍԱԳՀ-ի (1994 թվական) III հոդվածին համապատասխան այդպիսի ռեժիմ տրամադրելուց ցանկացած բացառություն, ազատում և հրաժարում ընդգրկված են Համաձայնագրում և կազմում են դրա մասը:

ԱՀԿ համաձայնագրի 1Ա հավելվածում ներկայացված «Առևտրի դյուրացման մասին» համաձայնագրի I բաժինը և «Ներմուծման լիցենզավորման մասին[6]» համաձայնագրի 1-3-րդ հոդվածները, ՍԲՍ համաձայնագիրը[7] և ԱՏԽ համաձայնագրի[8] 2-10-րդ հոդվածները և 3-րդ հավելվածը ներառվում են Համաձայնագրում և կազմում են դրա մասը, իսկ Համաձայնագրի 6-րդ գլխի նպատակներով ԱՏԽ համաձայնագրի 1-ին հավելվածում նշված եզրույթները և դրանց սահմանումները ներառվում են Համաձայնագրի 6-րդ գլխում և կազմում են դրա մասը:

4. Տարեկան հավասար փուլեր անցկացնելու նպատակով սակագնային նվազեցման առաջին փուլը տեղի է ունենում Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվին, իսկ հետագա տարեկան նվազեցումները տեղի են ունենում յուրաքանչյուր հաջորդ տարվա հունվարի 1-ին (հավելված 1, բաժին Ա, պարբերություն 2):

Կողմերը Համաձայնագրով ստեղծում են ազատ առևտրի գոտի՝ Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի (1994 թվական) XXIV հոդվածին համապատասխան:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

[4] **«ՍԱԳՀ 1994»** նշանակում է 1994 թվականի Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագիրը և դրա բացատրական ծանոթագրությունները՝ նշված ԱՀԿ համաձայնագրի 1Ա հավելվածում:

[5] **«ԱՀԿ համաձայնագիր»** նշանակում է «Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ի Մարաքեշի համաձայնագիր:

[6] **««Ներմուծման լիցենզավորման մասին» համաձայնագիր»** նշանակում է ԱՀԿ համաձայնագրի 1Ա հավելվածում ներառված «Ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի մասին» համաձայնագիր:

[7] **«ՍԲՍ համաձայնագիր»** նշանակում է «Սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների իրականացման մասին» համաձայնագիրը՝ ԱՀԿ համաձայնագրի 1Ա հավելվածին համաձայն:

[8] **«ԱՏԽ համաձայնագիր»** նշանակում է «Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագիրը՝ ԱՀԿ համաձայնագրի 1Ա հավելվածին համաձայն:

5.1. մյուս Կողմի ապրանքների համար ապահովել ազգային ռեժիմ՝ ՍԱԳՀ-ի (1994 թվական) III հոդվածին, այդ թվում՝ դրա բացատրական ծանոթագրություններին համապատասխան (հոդված 2.3),

5.2. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության սակագնային անվանացանկի ցանկացած փոփոխություն կատարվի՝ առանց խաթարելու Համաձայնագրի 1-ին հավելվածին համապատասխան սահմանված սակագնային զիջումները (Սակագնային պարտավորությունների ժամանակացույց), ընդ որում՝ ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի և Ինդոնեզիայի առևտրի դասակարգման այդպիսի փոփոխությունը կատարվում է համապատասխանաբար՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Ինդոնեզիայի կողմից (հոդված 2.4, պարբերություն 2),

5.3. Համաձայնագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում նվազեցնել կամ վերացնել մյուս Կողմի ծագում ունեցող ապրանքների համար կիրառվող մաքսատուրքերը՝ Համաձայնագրի 1-ին հավելվածում (Սակագնային պարտավորությունների ժամանակացույցներ) նշված սակագնային պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության ժամանակացույցին համապատասխան (հոդված 2.5, պարբերություն 1),

5.4. Համաձայնագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում մյուս Կողմի ծագում ունեցող ապրանքի համար չավելացնել գործող մաքսատուրքը կամ ընդունել նոր մաքսատուրք, որը գերազանցում է Համաձայնագրի 1-ին հավելվածում (Սակագնային պարտավորությունների ժամանակացույցներ) նշված սակագնային պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության ժամանակացույցում սահմանված մակարդակը (հոդված 2.5, պարբերություն 2),

5.5. եթե կոնկրետ ապրանքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության կողմից կիրառվող մաքսատուրքի առավել բարենպաստության ռեժիմով (այսուհետ Համաձայնագրի 2-րդ գլխում՝ ԱԲՌ) սահմանված դրույքաչափն ավելի ցածր է, քան Համաձայնագրի 1-ին հավելվածում (Սակագնային պարտավորությունների ժամանակացույցներ) նշված սակագնային պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության ժամանակացույցով նախատեսված մաքսատուրքի դրույքաչափը, ապա՝ մյուս Կողմի ծագում ունեցող ապրանքի նկատմամբ կիրառել ավելի ցածր դրույքաչափ և ԱԲՌ-ի դրույքաչափի փոփոխությունները հրապարակել համացանցում (հոդված 2.5, պարբերություն 3),

5.6. Համաձայնագրի 2.6-րդ հոդվածով սահմանված կարգով՝ ապահովել սակագնային պարտավորությունների կատարման արագացումը կամ բարելավումը (հոդված 2.6),

5.7. ներմուծման կամ արտահանման հետ կապված Հայաստանի Հանրապետության կողմից կիրառվող վճարների և գանձումների վերաբերյալ

տեղեկություններն անմիջապես տեղադրել համացանցում (հոդված 2.7, պարբերություն 2),

5.8. Համաձայնագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում՝ չընդունել կամ չպահպանել մյուս Կողմի ապրանքի ներմուծման կամ մյուս Կողմի տարածքի համար նախատեսված ապրանքի արտահանման կամ արտահանման նպատակով վաճառքի որևէ արգելք կամ սահմանափակում՝ բացառությամբ ԱՀԿ-ի շրջանակներում նրա իրավունքներին և պարտավորություններին համապատասխանող դեպքերի, և այդ նպատակով ՍԱԳՀ-ի (1994 թվական) XI հոդվածը և դրա բացատրական ծանոթագրությունները ներառվում են Համաձայնագրում և կազմում են դրա մասը (հոդված 2.9),

5.9. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության՝ «Ներմուծման լիցենզավորման մասին» համաձայնագրի 1-3-րդ հոդվածներով սահմանված ներմուծման լիցենզավորման ընթացակարգերն իրականացվեն թափանցիկ և կանխատեսելի ձևով և կիրառվեն «Ներմուծման լիցենզավորման մասին» համաձայնագրին համապատասխան և այս նպատակով «Ներմուծման լիցենզավորման մասին» համաձայնագրի 1-3-րդ հոդվածներն ինկորպորացվում են Համաձայնագրում և կազմում են դրա մասը (հոդված 2.10, պարբերություն 1),

5.10. Կողմի պահանջի դեպքում՝ հնարավորության սահմաններում ողջամիտ ժամկետներում տրամադրել ներմուծման լիցենզավորման Հայաստանի Հանրապետության ընթացակարգերի իրականացման վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո մյուս Կողմին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության գործող ներմուծման լիցենզիաների մասին, եթե դրանք առկա են, և ծանուցման մեջ ներառել «Ներմուծման լիցենզավորման մասին» համաձայնագրի 5-րդ հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշված տեղեկությունները (հոդված 2.10, պարբերություններ 2 և 3),

5.11. ընդունել ապրանքափոխանակության օգտագործումը որպես միջազգային առևտրի այլընտրանքային մեխանիզմ, որը կարող է դյուրացնել առևտրային շրջանառությունը՝ խթանելով տնտեսական զարգացումը (հոդված 2.11, պարբերություն 1),

5.12. ձգտել նպաստել Հայաստանի Հանրապետության մասնավոր հատվածների միջև ապրանքափոխանակության գործարքների իրականացմանը (հոդված 2.11, պարբերություն 2),

5.13. պահանջի դեպքում փոխանցել և տրամադրել ապրանքափոխանակության կառավարման, այդ թվում՝ գործող օրենքների և կարգավորումների վերաբերյալ տեղեկություններ (հոդված 2.11, պարբերություններ 3),

5.14. ճանաչել արտոնյալ պայմաններով առևտրի վերաբերյալ տվյալների նշանակությունը՝ Համաձայնագրի իրականացման վերլուծությունը ճշգրտորեն

կատարելու համար, ինչպես նաև համագործակցել՝ Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմի միջև ապրանքների առևտրին վերաբերող տվյալների պարբերական փոխանակումն ապահովելու նպատակով (հոդված 2.12, պարբերություն 1),

5.15. Համաձայնագրի 3-րդ գլխով նախատեսված Ծագման կանոնները կիրառել միայն Համաձայնագրով սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ տրամադրելու նպատակներով (հոդված 3.1),

5.16. Համաձայնագրի 3.17-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նշված Ծագման ապացույցներից որևէ մեկը ներկայացվելու դեպքում՝ մյուս Կողմի ծագում ունեցող ապրանքների համար, Հայաստանի Հանրապետություն ներմուծման ժամանակ տրամադրել սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ. չնայած վերոհիշյալին՝ Համաձայնագրի 3.18-րդ հոդվածում (Ծագման ապացույց ներկայացնելուց ազատելը) նշված դեպքերում ծագում ունեցող ապրանքների համար տրամադրել սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ՝ առանց Համաձայնագրի 3.17-րդ հոդվածում նշված որևէ փաստաթղթի ներկայացման անհրաժեշտության (հոդված 3.17),

5.17. ծագման ապացույց չպահանջել ծագում ունեցող ապրանքների ներմուծման համար սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ ստանալու համար այն դեպքում, երբ մաքսային արժեքը չի գերազանցում 200 (երկու հարյուր) ԱՄՆ դոլարը կամ Հայաստանի Հանրապետության արժույթով համարժեք գումարը՝ պայմանով, որ տվյալ ներմուծումը չի կազմի մեկ կամ մեկից ավելի խմբաքանակների մաս, որոնք ողջամտորեն կարող են դիտարկվել որպես Ծագման ապացույց ներկայացնելուց խուսափելու նպատակով նախաձեռնված կամ իրականացված միջոց (հոդված 3.18),

5.18. որպես արտահանող Կողմ՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինն ապահովի, որ Ծագման հավաստագրերը տրամադրվեն ձևաչափին համապատասխան և լրացվեն պատշաճորեն՝ Համաձայնագրի 3-րդ հավելվածով (Ծագման հավաստագիր) սահմանված պահանջներին համապատասխան (հոդված 3.19, պարբերություն 5),

5.19. ապահովել, որ ներկայացված Ծագման հավաստագրերի իսկությունը հնարավոր լինի ստուգել Համաձայնագրի 3.31-րդ հոդվածում (Էլեկտրոնային տվյալների շտեմարանների օգտագործումը) նշված էլեկտրոնային տվյալների շտեմարանների օգտագործմամբ (հոդված 3.19, պարբերություն 7),

5.20. որպես ներմուծող Կողմ՝ ծագում ունեցող ապրանքների համար սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ տրամադրել այն դեպքերում, երբ հաշիվ-վավերագիրը տրվում է Կողմում կամ Համաձայնագրի Կողմ չհանդիսացող պետությունում գրանցված անձի կողմից՝ պայմանով, որ այդպիսի ապրանքները համապատասխանեն Համաձայնագրի 3-րդ գլխի պահանջներին (հոդված 3.25, պարբերություն 1),

5.21. Համաձայնագրով նախատեսված սակագնային առանձնաշնորհումների ռեժիմը կիրառել Համաձայնագրի 3-րդ գլխի պահանջները բավարարող՝ ծագում ունեցող ապրանքների նկատմամբ (հոդված 3.26, պարբերություն 1),

5.22. որպես ներմուծող Կողմ՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները ծագում ունեցող ապրանքների համար տրամադրեն սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ, եթե՝ ներմուծվող ապրանքները բավարարում են Համաձայնագրի 3.3-րդ հոդվածում (Ծագման չափորոշիչներ) նշված ծագման չափորոշիչները, կատարվել են Համաձայնագրի 3.15-րդ հոդվածում (Խմբաքանակի անմիջական փոխադրումը) նշված խմբաքանակի անմիջական փոխադրման պահանջները, և ներմուծվող ապրանքների ծագումը հաստատվում է Ծագման ապացույցով՝ Համաձայնագրի 3-րդ գլխով նախատեսված պահանջների համաձայն (հոդված 3.26, պարբերություն 2),

5.23. եթե ներմուծման պահին խմբաքանակի անմիջական փոխադրման համապատասխան Ծագման ապացույց կամ փաստաթղթային ապացույց չի ներկայացվել, ապա որպես ներմուծող Կողմ սահմանել կիրառելի ԱԲՌ մաքսատուրք կամ պահանջել ներմուծված ապրանքների մասով ապահովման վճարում, եթե կիրառելի է (հոդված 3.26, պարբերություն 4),

5.24. Համաձայնագրի 3.27-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նշված դեպքերից որևէ մեկի առկայության դեպքում՝ որպես ներմուծող Կողմ՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները մերժեն սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը (հոդված 3.27, պարբերություն 2),

5.25. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նշանակի լիազորված մարմնին և ստուգող մարմնին կամ պահպանի դրանք (հոդված 3.28),

5.26. Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց առաջ մյուս Կողմին՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջոցով տրամադրել Համաձայնագրի 3.29-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված տեղեկությունները (հոդված 3.29, պարբերություն 1),

5.27 անթուղթ առևտրի հետագա խթանման համար ձգտել էլեկտրոնային տվյալների փոխանակման հայեցակարգի հիման վրա ներդնել Ծագման մասին տվյալների փոխանակման էլեկտրոնային համակարգ (այսուհետ՝ ԾՏՓԷՀ) և ապահովել դրա գործունեությունը (հոդված 3.32, պարբերություն 1),

5.28. Հայաստանի Հանրապետության կողմից ԾՏՓԷՀ-ի ներդրման դեպքում՝ Համաձայնագրի 3.26-րդ հոդվածի (Սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը) 2-րդ պարբերության «գ» ենթապարբերության համաձայն ապրանքների ծագումը հաստատելու համար՝ որպես ներմուծող Կողմ՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները չպահանջեն Ծագման

հավաստագրի բնօրինակը, դրա պատճենը կամ ոչ թղթային, այլ էլեկտրոնային ձևաչափով տրված Ծագման հավաստագիրը (հոդված 3.32, պարբերություն 4),

5.29. Համաձայնագրի 3.33-րդ հոդվածով սահմանված կարգով իրականացնել ծագման ստուգում (հոդված 3.33),

5.30. ստուգման պահանջին ի պատասխան՝ որպես արտահանող Կողմ՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության ստուգման մարմինը հստակորեն նշի՝ արդյոք Ծագման ապացույցը հավաստի է, և (կամ) ապրանքները կարող են համարվել ծագում ունեցող, այդ թվում՝ ապրանքներն արտադրողի և (կամ) արտահանողի կողմից ստացված անհրաժեշտ փաստաթղթային ապացույցը տրամադրելով, ինչպես նաև ապահովել, որ վճարված մաքսատուրքերը կամ ապահովման միջոցը փոխհատուցվի, եթե ստուգման ընթացակարգերի իրականացումից ստացված արդյունքներով հաստատվում և հստակ նշվում է, որ ապրանքները որակվում են որպես ծագում ունեցող, և որ Համաձայնագրի 3-րդ գլխի մյուս բոլոր պահանջները բավարարվել են (հոդված 3.33, պարբերություն 6),

5.31. Համաձայնագրի 3.34-րդ հոդվածով սահմանված նպատակով և կարգով անցկացնել ստուգայցեր (հոդված 3.34),

5.32. Համաձայնագրի 3 և 4-րդ գլխի համաձայն տրամադրված բոլոր տեղեկությունները դիտարկել որպես գաղտնի՝ համապատասխան օրենքների և կարգավորումների համաձայն, և ապահովել, որ այդ տեղեկությունները չբացահայտվեն առանց դրանք տրամադրած անձի կամ Կողմի մարմնի թույլտվության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք բացահայտելը կարող է անհրաժեշտ լինել դատական վարույթի համատեքստում (հոդվածներ 3.35 և 4.9),

5.33. Համաձայնագրի 3-րդ գլխի հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների և կարգավորումների խախտման համար նախատեսել քրեական կամ վարչական պատժամիջոցներ (հոդված 3.36),

5.34. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային ընթացակարգերը համապատասխանեն Համաձայնագրի 4-րդ գլխի 4.1-ին հոդվածով (Գործողության ոլորտը) սահմանված նպատակներին (հոդված 4.2, պարբերություն 1),

5.35. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային ընթացակարգերը հնարավորության դեպքում և Հայաստանի Հանրապետության մաքսային օրենքների և կարգավորումների շրջանակներում հիմնված լինեն Համաշխարհային մաքսային կազմակերպության չափանիշների և առաջարկվող գործելակերպերի վրա (հոդված 4.2, պարբերություն 3),

5.36. ձգտել վերանայել Հայաստանի Հանրապետության մաքսային ընթացակարգերը՝ առևտուրը դյուրացնելու նպատակով դրանք պարզեցնելու համար (հոդված 4.2, պարբերություն 4),

5.37. հնարավորության սահմաններում Հայաստանի Հանրապետության մաքսային օրենքները և կարգավորումները հրապարակել անգլերենով և ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները նշանակեն կամ ունենան մեկ կամ մեկից ավելի հարցումների իրականացման կենտրոններ՝ շահագրգիռ անձանց կողմից մաքսային հարցերի վերաբերյալ հարցումներն ուսումնասիրելու նպատակով, և այդ հարցումների իրականացման կետերի մասին տեղեկությունները հրապարակեն համացանցում (հոդված 4.3, պարբերություններ 1 և 2),

5.38. համապատասխանաբար Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Ինդոնեզիայի Հանրապետության մաքսային և ակցիզային հարցերով գլխավոր տնօրինության, Ֆինանսների նախարարության միջոցով մյուս Կողմին ուղարկել հարցումների իրականացման նշանակված կենտրոնների կոնտակտային տվյալները (հոդված 4.3, պարբերություններ 3),

5.39. սահմանել կամ շարունակել կիրառել ապրանքների բացթողումն արագացնելուն ուղղված մաքսային ընթացակարգեր՝ Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմի միջև առևտուրը դյուրացնելու նպատակով, համաձայն որի՝ նախատեսել ապրանքների բացթողում ժամանումից հետո հնարավորինս սեղմ ժամկետներում, սակայն սովորական հանգամանքներում՝ մաքսային հայտարարագրի գրանցումից հետո 24 (քսանչորս) ժամը չգերազանցող ժամկետում՝ պայմանով, որ բավարարվել են բոլոր նորմատիվ պահանջները, և մինչև ապրանքների ժամանումը սահմանել և պահպանել մաքսային տեղեկությունների էլեկտրոնային ներկայացման և մշակման հնարավորությունը՝ ժամանելուն պես ապրանքների բացթողումն արագացնելու նպատակով (հոդված 4.4),

5.40. Համաձայնագրի 4.5-րդ հոդվածի 7-րդ պարբերությամբ, 6.11, 7.14 և 8.11-րդ հոդվածներով, 9.20-րդ հոդվածի 7-րդ պարբերությամբ, 9.23, 10.6, 11.9 և 14.5-րդ հոդվածներով սահմանված նպատակներով և կարգով ստեղծել կամ նշանակել կապի ապահովման կենտրոն(ներ) (հոդված 4.5, պարբերություն 7, հոդվածներ 6.11, 7.14, 8.11, հոդված 9.20, պարբերություն 7, հոդվածներ 9.23, 10.6, 11.9 և 14.5),

5.41. մաքսային ընթացակարգերն իրականացնելու նպատակով կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ Համաշխարհային մաքսային կազմակերպության և այլ միջազգային կազմակերպությունների կողմից առաջարկված համապատասխան չափանիշների և լավագույն գործելակերպերի համաձայն (հոդված 4.6),

5.42. Համաձայնագրի 5-րդ գլխով այլ բան նախատեսված չլինելու դեպքում կիրառել հակագնագցման, փոխհատուցման և համընդհանուր պաշտպանական միջոցներ՝ համաձայն ՍԱԳՀ-ի (1994 թվական) VI և XIX հոդվածների,

Հակագնագցման համաձայնագրի[9], ՍՓՄ համաձայնագրի[10] և «Պաշտպանական միջոցների մասին» համաձայնագրի (հոդված 5.1, պարբերություններ 1),

5.43. Համաձայնագրի 5-րդ գլխով կարգավորվող հարցերի շուրջ Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմերի միջև բոլոր պաշտոնական հաղորդակցությունների և փաստաթղթերի փոխանակումը կատարել Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմերի իրավասու մարմինների միջև՝ պահպանելով Համաձայնագրի 5.2 հոդվածով սահմանված հաղորդակցության պահանջները (հոդված 5.2),

5.44. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության քննություն իրականացնող մարմինը գաղտնի տեղեկություն տրամադրող շահագրգիռ կողմերից պահանջի ներկայացնել դրա ոչ գաղտնի ամփոփագիրը (հոդված 5.4),

5.45. Կողմի հետ առևտրի պաշտպանական միջոցների շուրջ համագործակցությունն իրականացնել լավագույն գործելակերպ հանդիսացող երկխոսության ձևով՝ ներգրավելով Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմի իրավասու մարմինների համապատասխան մակարդակի ներկայացուցիչներ (հոդված 5.5, պարբերություն 1),

5.46. ցանկացած վարույթի շրջանակներում, որի ընթացքում Հայաստանի Հանրապետության քննություն իրականացնող մարմինը որոշում է իրականացնել պատասխանող կողմի կողմից տրամադրված տեղեկությունների տեղում ստուգում, ապահովել, որ Հայաստանի Հանրապետության քննություն իրականացնող մարմինը յուրաքանչյուր պատասխանողի անհապաղ տեղեկացնի իր մտադրության մասին՝ Համաձայնագրի 5.6-րդ հոդվածով սահմանված կարգով (հոդված 5.6),

5.47. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության քննություն իրականացնող մարմինը յուրաքանչյուր ընթացիկ քննության կամ ուսումնասիրության համար վարի ոչ գաղտնի նիշք, որը պարունակում է յուրաքանչյուր ընթացիկ քննության կամ ուսումնասիրության փաստաթղթաբանության կազմում առկա բոլոր ոչ գաղտնի տեղեկությունները՝ հնարավորության սահմաններում առանց բացահայտելու գաղտնի տեղեկությունները (հոդված 5.7, պարբերություն 1),

5.48. քննության կամ ուսումնասիրության փաստաթղթաբանության կազմում առկա բոլոր ոչ գաղտնի տեղեկությունների ոչ գաղտնի նիշքը ժամանակին հասանելի դարձնել շահագրգիռ կողմերին՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմի օրենքներով և կարգավորումներով սահմանված ընթացակարգերը, ինչպես նաև ապահովել, որ Հայաստանի Հանրապետության քննություն

[9] **«Հակագնագցման միջոցների մասին» համաձայնագիր»** նշանակում է ԱՀԿ համաձայնագրի 1Ա հավելվածում ներառված «1994 թվականի Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի VI հոդվածի իրականացման մասին» համաձայնագիր:

[10] «**ՍՓՄ համաձայնագիր»** նշանակում է «Սուբսիդիաների և փոխհատուցման միջոցների մասին» համաձայնագիրը՝ ԱՀԿ համաձայնագրի 1Ա հավելվածի համաձայն:

իրականացնող մարմինը ժամանակին հնարավորություն ընձեռի էլեկտրոնային ձևով ներբեռնել քննության և ուսումնասիրության փաստաթղթաբանության կազմում առկա ոչ գաղտնի փաստաթղթերը (հոդված 5.7, պարբերություն 2),

5.49. քննությանը մասնակցող շահագրգիռ կողմերին տրամադրել յուրաքանչյուր ընթացիկ քննության կամ ուսումնասիրության փաստաթղթաբանության կազմում առկա փաստաթղթերի թարմացված ցանկը, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային ձևով (հոդված 5.7, պարբերություն 3),

5.50. ժամանակավոր հակագնագցման կամ փոխհատուցման միջոցների սահմանումից անմիջապես հետո կամ ցանկացած պարագայում հակագնագցման կամ փոխհատուցման միջոցների վերաբերյալ վերջնական որոշման կայացումից առաջ բոլոր շահագրգիռ կողմերին հայտնել բոլոր էական փաստերը, որոնք կազմում են համապատասխանաբար ժամանակավոր կամ վերջնական միջոցներ կիրառելու որոշման հիմքը՝ ներառելով Համաձայնագրի 5.9-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված տեղեկությունները (հոդված 5.9, պարբերություն 1),

5.51. դրական որոշման դեպքում, որով նախատեսվում է վերջնական տուրքի սահմանում կամ գնային պարտավորության ընդունում, ապահովել, որ քննության վերաբերյալ հանրային ծանուցումը պարունակի, կամ էլ առանձին հաշվետվությամբ տրամադրվի բոլոր համապատասխան տեղեկությունները՝ փաստական հանգամանքների և իրավունքի հարցերի ու հիմքերի վերաբերյալ, որոնց արդյունքում սահմանվում են վերջնական միջոցները, կամ ընդունվում է գնային պարտավորությունը, իսկ գաղտնի տեղեկությունները փաստական հանգամանքների վերաբերյալ համապատասխան տեղեկությունների մաս կազմելու դեպքում Համաձայնագրի 5.10-րդ հոդվածով նախատեսված բացահայտման պարտավորությունն ապահովել, որ կատարի քննություն իրականացնող մարմինը՝ բացահայտելով այդ տեղեկությունների ոչ գաղտնի ամփոփագրերը, և ապահովել, որ նման ծանուցումը կամ հաշվետվությունը պարունակի Համաձայնագրի 5.10-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները (հոդված 5.10),

5.52. Համաձայնագրի 5.11-րդ հոդվածով սահմանված կարգով՝ ընդունել շրջանցման գործելակերպերը կանխելու կարևորությունը և համաձայնել համագործակցել մինչև շրջանցումը կանխելու նպատակով քննության իրականացումը (հոդված 5.11),

5.53. Համաձայնագրի 5.13 և 5.14-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ համապատասխանաբար կիրառել համընդհանուր և երկկողմ պաշտպանիչ միջոցներ (հոդվածներ 5.13 և 5.14),

5.54. Համաձայնագրի 6-րդ գլուխը կիրառել ԱՏԽ համաձայնագրի 1-ին հավելվածով սահմանված կարգով այն չափանիշների, տեխնիկական կանոնակարգերի ու համապատասխանության գնահատման ընթացակարգերի

պատրաստման, ընդունման և կիրառման նկատմամբ, որոնք կարող են ազդել Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմի միջև ապրանքների առևտրի վրա, բացառությամբ պետական մարմինների՝ արտադրության կամ սպառման պահանջների համար պետական մարմինների կողմից կազմված գնման մասնագրերի և Համաձայնագրի 7-րդ գլխում (Սանիտարական և բուսասանիտարական միջոցառումները) սահմանված սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների (հոդված 6.3),

5.55. ապահովել Համաձայնագրի 6.7-րդ հոդվածով սահմանված համապատասխանության գնահատման իրականացումը (հոդված 6.7),

5.56. ապահովել Համաձայնագրի 6.9, 7.10, 9.22 և 11.5-րդ հոդվածներով և Համաձայնագրի 13-րդ գլխով սահմանված թափանցիկության պահանջների կատարումը (հոդվածներ 6.9, 7.10, 9.22, 11.5 և գլուխ 13),

5.57. Համաձայնագրի 7-րդ գլուխը կիրառել բոլոր սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների (այսուհետ՝ ՍԲՍ) նկատմամբ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող են ազդել Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմի միջև առևտրի վրա (հոդված 7.1),

5.58. եթե Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմի միջև շրջանառվող կենդանիների կամ բույսերի առողջությունը կամ արտադրանքի անվտանգությունը հաստատելու համար անհրաժեշտ է անվտանգությունը հաստատող փաստաթուղթ (հավաստագիր), ապա որպես արտահանող Կողմ՝ ապահովել ներմուծող Կողմի պահանջներին համապատասխանությունը, իսկ որպես ներմուծող Կողմ հանդես գալու պարագայում՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության ներմուծման պահանջները կիրառվեն համամասնորեն և առանց խտրականության այնքանով, որքանով անհրաժեշտ է մարդու, կենդանիների կամ բույսերի կյանքը կամ առողջությունը պաշտպանելու համար՝ հաշվի առնելով միջազգային չափանիշները, ուղեցույցները կամ առաջարկությունները (հոդված 7.8, պարբերություն 1),

5.59. համաձայնել, որ կենդանիների կամ բույսերի առողջությունը կամ արտադրանքի անվտանգությունը հաստատող փաստաթղթերի (հավաստագրերի) ձևերի հաստատման ընթացակարգերն իրականացվեն և ավարտվեն առանց անհարկի ձգձգման, և առևտուրը դյուրացնելու նպատակով խթանել կենդանիների կամ բույսերի առողջությունը կամ արտադրանքի անվտանգությունը հաստատող փաստաթղթերի (հավաստագրերի) մասով էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառումը (հոդված 7.8, պարբերություններ 2 և 3),

5.60. Համաձայնագրի 8-րդ գլուխը կիրառել Հայաստանի Հանրապետության կողմից ընդունված կամ կիրառված այն միջոցների նկատմամբ, որոնք ազդում են էլեկտրոնային միջոցներով իրականացվող առևտրի վրա, բացառությամբ՝ պահվող կամ մշակվող տեղեկությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կողմից

կամ Հայաստանի Հանրապետության անունից հավաքված կամ փոխանցված տեղեկությունների կամ այդ տեղեկությունների հետ կապված միջոցառումների, այդ թվում՝ դրանց հավաքման, պահման, մշակման կամ փոխանցման հետ կապված միջոցառումների և պետական գնումների (հոդված 8.2),

5.61. չժխտել, որ էլեկտրոնային ստորագրություններն ունեն նույն իրավական ուժն ու վավերականությունը, ինչ ոչ էլեկտրոնային ստորագրությունները, եթե Հայաստանի Հանրապետության օրենքներով ու կարգավորումներով այլ բան նախատեսված չէ, և ձգտել փոխադարձաբար ճանաչել էլեկտրոնային ստորագրությունները, որտեղ կիրառելի են, և խրախուսել իսկության էլեկտրոնային հաստատման փոխգործակցող համակարգի կիրառումը (հոդված 8.4, պարբերություններ 1 և 4),

5.62. ընդունել ապրանքների ներմուծման, արտահանման կամ տարանցիկ փոխադրման համար անհրաժեշտ թղթային ձևերի և փաստաթղթերի վերացման կարևորությունը և ձգտել ապրանքների ներմուծման, արտահանման կամ տարանցիկ փոխադրման համար անհրաժեշտ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից տրամադրվող կամ վերահսկվող փաստաթղթերի ձևերը հանրությանը հասանելի դարձնել էլեկտրոնային ձևաչափով (հոդված 8.5, պարբերություններ 1 և 2),

5.63. ձգտել ընդունել էլեկտրոնային ձևաչափով ներկայացվող՝ ապրանքների ներմուծման, արտահանման կամ տարանցիկ փոխադրման համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից տրամադրվող կամ վերահսկվող փաստաթղթերը՝ որպես այդ փաստաթղթերի թղթային տարբերակի իրավական համարժեք, ինչպես նաև ձգտել իրականացնել այնպիսի նախաձեռնություններ, որոնցով նախատեսվում է անթուղթ առևտրի իրականացում՝ հաշվի առնելով միջազգային կազմակերպությունների կողմից հաստատված մեթոդները և առաջարկությունները (հոդված 8.5, պարբերություններ 3 և 4),

5.64. օրենքներով կամ կարգավորումներով այլ բան նախատեսված չլինելու դեպքում չժխտել էլեկտրոնային պայմանագրի իրավական ուժը և իրավաչափությունը[11] բացառապես այն հիմքով, որ պայմանագիրը կնքվել է էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ (հոդված 8.6),

5.65. ընդունել էլեկտրոնային առևտրից օգտվողների անձնական տվյալների պաշտպանության տնտեսական և սոցիալական առավելությունները և էլեկտրոնային առևտրի նկատմամբ սպառողների վստահության բարձրացման գործում դրա կատարած ներդրումը (հոդված 8.7, պարբերություն 1),

[11] Ավելի ստույգ՝ էլեկտրոնային պայմանագիր է համարվում այն պայմանագիրը, որը կնքվել է հաղորդագրությունների փոխանցման ավտոմատացված համակարգի հետ փոխգործակցությամբ:

5.66. ընդունել կամ կիրառել այն միջոցները, որոնք ապահովում են էլեկտրոնային առևտրից օգտվողների անձնական տվյալների պաշտպանությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին և կարգավորումներին համապատասխան (հոդված 8.7, պարբերություն 2),

5.67. ձգտել կիրառել այն միջոցները, որոնք թույլ են տալիս ստանալ անհատի համաձայնությունն էլեկտրոնային առևտրի իրականացման նպատակով իր անձնական տվյալների անդրսահմանային փոխանցման համար՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով և կարգավորումներով սահմանված դեպքերի (հոդված 8.7, պարբերություն 4),

5.68. ընդունել կամ կիրառել միջոցներ՝ ուղղված մոլորեցնող, խարդախ և խաբեությամբ իրականացվող առևտրային գործունեության արգելմանը, որոնք վնաս կամ հնարավոր վնաս են պատճառում էլեկտրոնային առևտրում ներգրավված սպառողներին (հոդված 8.8, պարբերություն 2),

5.69. ընդունել սպառողների պաշտպանության Հայաստանի Հանրապետության համապատասխան գերատեսչությունների կամ այլ համապատասխան մարմինների միջև համագործակցության, այդ թվում՝ օրենքների և կարգավորումների, լավագույն գործելակերպերի վերաբերյալ տեղեկությունների փոխանակման, ինչպես նաև էլեկտրոնային առևտրի մասով սպառողների իրավունքների խախտման՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համապատասխան դեպքերի շուրջ համագործակցության կարևորությունը (հոդված 8.8, պարբերություն 7),

5.70. ձգտել սպառողների համար ապահովել իրավական պաշտպանության միջոցներ այն անցանկալի առևտրային էլեկտրոնային հաղորդագրություններ ուղարկողների նկատմամբ, որոնք չեն կատարել Հայաստանի Հանրապետության օրենքներին և կարգավորումներին համապատասխան անցանկալի առևտրային էլեկտրոնային հաղորդագրությունների քանակը նվազեցնելու նպատակով ընդունված կամ կիրառված միջոցները (հոդված 8.9, պարբերություն 2),

5.71. վերահաստատել Համաձայնագրի 9.3-րդ հոդվածի 2 և 3-րդ պարբերություններով նշված միջազգային համաձայնագրերով սահմանված Հայաստանի Հանրապետության հանձնառությունները (հոդված 9.3),

5.72. մյուս Կողմի քաղաքացիների համար ԹՐԻՓՍ[12] համաձայնագրի 3 և 5-րդ հոդվածներով սահմանված մտավոր սեփականության պաշտպանության առումով տրամադրել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար ապահովվող ռեժիմից ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, ինչպես նաև մյուս Կողմի քաղաքացիների համար ԹՐԻՓՍ համաձայնագրի 4 և 5-րդ հոդվածներով սահմանված մտավոր սեփականության պաշտպանության առումով ապահովել ցանկացած այլ երկրի

[12] «**ԹՐԻՓՍ [TRIPS] համաձայնագիր»** նշանակում է «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» համաձայնագիր՝ ԱՀԿ համաձայնագրի 1Գ հավելվածին համաձայն:

քաղաքացիների համար ապահովվող ռեժիմից ոչ պակաս բարենպաստ ռեժիմ (հոդվածներ 9.4 և 9.5),

5.73. ապահովել Համաձայնագրի 9.6-րդ հոդվածով սահմանված հեղինակային իրավունքների և հարակից իրավունքների, Համաձայնագրի 9.8-9.11-րդ հոդվածներով սահմանված ապրանքային նշանների, Համաձայնագրի 9.12-րդ հոդվածով սահմանված ապրանքների աշխարհագրական նշումների[13] և ծագման տեղանունների, Համաձայնագրի 9.14-րդ հոդվածով սահմանված բույսերի տեսակների, Համաձայնագրի 9.15-րդ հոդվածով սահմանված արտոնագրերի, Համաձայնագրի 9.16-րդ հոդվածով սահմանված արդյունաբերական նմուշների, Համաձայնագրի 9.17-րդ հոդվածով սահմանված ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների համարժեք, պատշաճ ու արդյունավետ պաշտպանություն՝ Համաձայնագրի համապատասխան հոդվածներով սահմանված կարգով (հոդվածներ 9.6, 9.8-9.11, 9.12, 9.14, 9.15, 9.16 և 9.17),

5.74. ՄՀԻՊ-ի[14] և ՄԿՀՊ-ի[15] համաձայն սահմանել պատշաճ և արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ՝ արդյունավետ տեխնոլոգիական միջոցառումների շրջանցումը կանխելու համար և ապահովել իրավունքների կառավարման տեղեկությունների պաշտպանությունը (հոդված 9.7, պարբերություններ 1 և 2),

5.75. ընդունել գենետիկական ռեսուրսների, ավանդական գիտելիքների և մշակութային ինքնաարտահայտման ավանդական ձևերի ներդրումը գիտական, մշակութային և տնտեսական զարգացման գործում, ինչպես նաև դրանց աղբյուրի կամ ծագման երկրի ճանաչման կարևորությունը (հոդված 9.13, պարբերություն 1),

5.76. Հայաստանի Հանրապետության համապատասխան իրավունքների և կարգավորումների և Փարիզյան կոնվենցիայի 10bis հոդվածի համաձայն՝ ապահովել անբարեխիղճ մրցակցությունից պաշտպանությունը (հոդված 9.18),

5.77. ապահովել մտավոր սեփականության իրավունքների իրականացման համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքներին և կարգավորումներին, այն միջազգային համաձայնագրերին, որոնց կողմ են Հայաստանի Հանրապետությունը և մյուս Կողմը, ինչպես նաև ԹՐԻՓՍ

[13] Համաձայնագրի **9.12-րդ հոդվածի** նպատակներով **«աշխարհագրական նշումներ»** նշանակում է նշում, որով այդ ապրանքը սահմանվում է որպես որևէ Կողմի տարածքի կամ այդ տարածքում գտնվող շրջանի կամ տեղանքի ծագում ունեցող, այն դեպքում, երբ այդ ապրանքի տվյալ որակը, համբավը կամ մյուս հատկանիշները հիմնականում պայմանավորված են դրա աշխարհագրական ծագմամբ՝ ԹՐԻՓՍ համաձայնագրի 22-րդ հոդվածին համապատասխան:

[14] ՄՍՀԿ-ի՝ «Հեղինակային իրավունքի մասին» 1996 թվականի դեկտեմբերի 20-ի պայմանագիր **(այսուհետ՝ ՄՀԻՊ)**:

[15] Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ)՝ «Կատարումների և հնչյունագրերի մասին» 1996 թվականի դեկտեմբերի 20-ի պայմանագիր **(այսուհետ՝ ՄԿՀՊ)**:

համաձայնագրին, մասնավորապես՝ դրա 41-61-րդ հոդվածներին (հոդված 9.19, պարբերություն 1),

5.78. իրավատերերին հնարավորություն ընձեռել կիրառելու քաղաքացիական, վարչական և դատական, այդ թվում՝ քրեական ընթացակարգեր, որոնք վերաբերում են մտավոր սեփականության իրավունքների իրականացումն ապահովելուն և ձգտել ապահովել մտավոր սեփականության իրավունքների իրականացումը թվային միջավայրում (հոդված 9.19, պարբերություններ 2 և 3),

5.79. Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների և կարգավորումների և միջազգային համաձայնագրերի համաձայն, որի կողմն են Հայաստանի Հանրապետությունը և մյուս Կողմը, ապահովել մաքսային միջոցների արդյունավետ իրականացումը կեղծ ապրանքային նշան ունեցող ապրանքների[16] և հեղինակային իրավունքի խախտմամբ ստացված ապրանքների[17] նկատմամբ (հոդված 9.20, պարբերություն 1),

5.80. ապահովել, որ այն պահանջները, որոնց կատարումն անհրաժեշտ է իրավատիրոջ կողմից՝ հնարավոր կեղծ ապրանքային նշան ունեցող ապրանքների կամ հեղինակային իրավունքի խախտմամբ ստացված ապրանքների բացթողումը կասեցնելու ընթացակարգեր սկսելու համար, անհիմն կերպով չխոչընդոտեն տվյալ ընթացակարգերի կիրառումը, և ընդունել այնպիսի ընթացակարգեր, որոնք իրավատիրոջը, որն օրինական հիմքեր ունի կասկածելու, որ տեղի է ունենում կեղծ ապրանքային նշան ունեցող ապրանքների, հեղինակային իրավունքի խախտմամբ ստացված ապրանքների ներմուծում, հնարավորություն են տալիս դիմում ներկայացնելու մաքսային մարմիններ՝ պահանջելով մտավոր սեփականության իրավունքների իրականացմանն ապահովող միջոցներ ձեռնարկել, եթե տվյալ ներմուծմամբ այն երկրի օրենքների և կարգավորումների համաձայն, որտեղ գտնվում են ապրանքները, խախտվում են մտավոր սեփականության իրավունքները (հոդված 9.20, պարբերություններ 2 և 3),

5.81. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններն իրավատիրոջը հայտնեն առնվազն տվյալ ապրանքների հայտարարատուի

[16] Համաձայնագրի **9. 20-րդ հոդվածի** նպատակներով «կեղծ ապրանքային նշան ունեցող ապրանքներ» նշանակում է ապրանքներ, ներառյալ՝ փաթեթվածքը, որոնց վրա առանց թույլտվության պատկերված է այդպիսի ապրանքների համար օրինական գրանցված ապրանքային նշանի հետ նույնական ապրանքային նշան կամ այնպիսի ապրանքային նշան, որն իր հիմնական բնութագրերով հնարավոր չէ տարբերել այդպիսի ապրանքային նշանից՝ այդպիսով, ներմուծման երկրի օրենսդրության համաձայն, խախտելով տվյալ ապրանքային նշանի իրավատիրոջ իրավունքները:

[17] Համաձայնագրի **9. 20-րդ հոդվածի** նպատակներով **«հեղինակային իրավունքի խախտմամբ ստացված ապրանքներ»** նշանակում է ապրանքներ, որոնք արտադրության երկրում առանց իրավատիրոջ կամ նրա կողմից պատշաճ ձևով լիազորված անձի համաձայնության ստեղծված կրկնօրինակներ են, և որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կրկնօրինակվել են որևէ առարկայից այն դեպքում, երբ այդ կրկնօրինակի ստեղծումը, ներմուծման երկրի օրենսդրության համաձայն, կհամարվեր հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքի խախտում:

անվանումը և նրան նույնականացնող այլ լրացուցիչ տեղեկություններ, ինչպես նաև ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններն առնվազն հայտարարատուին տեղեկացնեն արգելանքի վերցված ապրանքների մասին, ներառյալ՝ իրավատիրոջ անունը [անվանումը] և նրան նույնականացնող այլ լրացուցիչ տեղեկություններ (հոդված 9.20, պարբերություն 4),

5.82. ընդունել, որ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը և իրականացումը պետք է նպաստեն տեխնոլոգիական նորարարությունների առաջխաղացմանը և տեխնոլոգիաների փոխանցմանը և տարածմանը, տեխնոլոգիական գիտելիքներ ստեղծողների և դրանցից օգտվողների փոխադարձ շահերին և իրականացվեն սոցիալական և տնտեսական բարեկեցության համար նպաստավոր ձևով, ինչպես նաև պետք է նպաստեն մտավոր սեփականության իրավատերերի իրավունքների և օգտվողների օրինական շահերի ու հանրային շահի միջև պատշաճ հավասարակշռություն ապահովելուն (հոդված 9.25, պարբերություն 1),

5.83. Համաձայնագրի 10-րդ գլխով սահմանված կարգով՝ խթանել համագործակցությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում, ստեղծել ավելացված արժեքի նոր շղթաներ, խթանել կայուն զարգացումը և համագործակցությունը առևտրի ոլորտում, խթանել համատեղ ծրագրերի իրականացումը, որոնք փոխշահավետ կերպով նպաստում են տնտեսական աճին, ապահովել Համաձայնագրի իրականացումը՝ նպատակ ունենալով առավելագույնս օգտագործել դրա առավելությունները, խթանել առևտրի դյուրացման ուղիները, նպաստել կայուն ներառական տնտեսական աճին և բարգավաճմանը (գլուխ 10),

5.84. համաձայնել, որ Համաձայնագրի 11.3-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված հակամրցակցային գործելակերպերն անհամատեղելի են Համաձայնագրի պատշաճ գործողության հետ (հոդված 11.3, պարբերություն 1),

5.85. Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների և կարգավորումների համաձայն՝ ձեռնարկել (**այն**[18]) հակամրցակցային գործելակերպերը կանխելուն և վերացնելուն ուղղված բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք ազդում են Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմի միջև առևտրի վրա (հոդված 11.3, պարբերություն 2),

5.86. Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների և կարգավորումների համաձայն՝ ապահովել, որ **այն**[19] իրականացնի ձեռնարկու-

[18] Համաձայնագրի **11. 3-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում** առկա է թարգմանչական սխալ, մասնավորապես՝ անգլերեն բնօրինակ տեքստում բացակայում է **«այն»** բառը:

[19] Համաձայնագրի **11. 3-րդ հոդվածի 3-րդ պարբերությունում** առկա «այն» դերանունը թարգմանված է անգլերեն «it» դերանունից և վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը:

թյունների համակենտրոնացման գնահատում՝ մրցակցության պաշտպանության համար անհրաժեշտ ծավալով (հոդված 11.3, պարբերությունն 3),

5.87. Համաձայնագրի դրույթների մեկնաբանման և կիրառման հետ կապված բոլոր վեճերի կարգավորման կամ դրանից խուսափելու համար առաջնորդվել Համաձայնագրի 12-րդ գլխով, ինչպես նաև 6 և 7-րդ հավելվածներով սահմանված կարգով (գլուխ 12),

5.88. կրել Հայաստանի Հանրապետության նշանակած արբիտրի ծախսերը, սեփական ծախսերը և դատական ծախսերը, իսկ վեճի մյուս Կողմի հետ այլ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում արբիտրաժային կոլեգիայի նախագահի և վարույթն իրականացնելու հետ կապված մյուս ծախքերը կրել վեճի մյուս Կողմի հետ՝ հավասար չափերով (հոդված 12.18),

5.89. Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների և կարգավորումների համաձայն ապահովել, որ Համաձայնագրով կարգավորվող հարցին առնչվող ընդհանուր կիրառության Հայաստանի Հանրապետության միջոցներն անհապաղ հրապարակվեն, այդ թվում՝ հնարավորության դեպքում՝ համացանցում կամ հասանելի դարձվեն այնպիսի եղանակով, որով մյուս Կողմին և շահագրգիռ անձանց կտրվի դրանց ծանոթանալու հնարավորություն (հոդված 13.2, պարբերություն 1),

5.90. առավելագույն հնարավոր չափով մյուս Կողմին ծանուցել ցանկացած միջոցի մասին, որը, Հայաստանի Հանրապետության կարծիքով, կարող է էականորեն ազդել Համաձայնագրի գործողության վրա կամ այլ կերպ էականորեն ազդել մյուս Կողմի՝ Համաձայնագրով սահմանված շահերի վրա (հոդված 13.3, պարբերություն 1),

5.91. հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության օրենքներով և կարգավորումներով նախատեսված կարգով բողոքարկման կամ հետագա վերանայման հնարավորությունը՝ ապահովել, որ այդ որոշումը կատարվի տվյալ վարչական միջոցի հետ կապված գերատեսչության կամ մարմնի կողմից կամ կարգավորի նրա գործունեությունը (հոդված 13.5, պարբերություն 3),

5.92. հաստատել մյուս Կողմի նկատմամբ Հայաստանի Հանրապետության առկա իրավունքներն ու պարտավորությունները՝ ԱՀԿ համաձայնագրի և դրա հիման վրա կնքված այլ համաձայնագրերի, ինչպես նաև[20] ցանկացած այլ միջազգային համաձայնագրի համաձայն, որի կողմ է Հայաստանի Հանրապետությունը և մյուս Կողմը (հոդված 14.6, պարբերություն 1),

[20] Համաձայնագրի **14. 6-րդ հոդվածի 1-ին պարբերությունում** առկա է թարգմանչական սխալ, մասնավորապես՝ անգլերեն **«and»** շաղկապը կարծում ենք պետք է թարգմանվեր **«և»** կամ **«ինչպես նաև»,** մինչդեռ թարգմանվել է **«ինչպես»**:

Պարտավորությունը ներկայացված է համապատասխան շտկմամբ:

5.93. Համաձայնագրի դրույթները մեկնաբանելիս հաշվի առնել Համաձայնագրի 14.9, 14.10 և 14.11-րդ հոդվածներով սահմանված բացառությունները (հոդվածներ 14.9, 14.10 և 14.11),

5.94. Համաձայնագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում, եթե Համաձայնագրին համապատասխան մյուս Կողմը տրամադրում է տեղեկություն և այդ տեղեկությունը սահմանում է որպես գաղտնի, ապա ստանալով տեղեկությունը՝ պահպանել այդ տեղեկության գաղտնիությունը, օգտագործել այն միայն տեղեկություն տրամադրող Կողմի կողմից նշված նպատակներով և չբացահայտել այն՝ առանց տեղեկություն տրամադրող Կողմի հատուկ գրավոր թույլտվության (հոդված 14.12, պարբերություն 2),

5.95. եթե Հայաստանի Հանրապետության ժամանակացույցով այլ բան նախատեսված չէ, ապա մաքսատուրքերի նվազեցման կամ վերացման նկատմամբ, Համաձայնագրի 2.5-րդ հոդվածին (Մաքսատուրքերի նվազեցում և վերացում) համապատասխան, կիրառել Համաձայնագրի 1 հավելվածի Ա բաժնի 3-րդ պարբերությամբ սահմանված փուլային կատեգորիաները (հավելված 1, բաժին Ա, պարբերություն 3),

5.96. ադվալորային մաքսատուրքի դեպքում մաքսատուրքերի դրույքաչափերը միջանկյալ փուլերում կլորացնել մինչև տասնորդական՝ ըստ Համաձայնագրի 1-ին հավելվածի Ա բաժնի 4-րդ պարբերության բանաձևի, իսկ ոչ ադվալորային մաքսատուրքի դեպքում կամ մաքսատուրքի ոչ ադվալորային մասի դեպքում մաքսատուրքի դրույքաչափերը կլորացնել մինչև հազարերորդական՝ օգտագործելով նույն բանաձևը (հավելված 1, բաժին Ա, պարբերություն 4),

5.97. որպես բողոք ներկայացնող կողմ՝ պատասխանատու լինել վեճերի կարգավորման վարույթի նյութատեխնիկական ապահովման, մասնավորապես՝ լսումների կազմակերպման համար, եթե այլ բան համաձայնեցված չէ (հավելված 6, պարբերություն 3):

6. Համաձայնագրի 14.13-րդ **հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ Համաձայնագրի 14.13**-րդ **հոդվածով այլ բան նախատեսված չլինելու դեպքում Համաձայնագրում ոչինչ չի վերաբերում հարկային միջոցներին:**

Համաձայնագրի 1-ին հավելվածի Դ բաժնում նշված «TRQ»-ների[21] դեպքում Եվրասիական տնտեսական միությունը տարեկան տրամադրում է անմաքս քվոտա Ինդոնեզիայի Հանրապետության ծագում ունեցող ապրանքների՝ Համաձայնագրի 1-ին հավելվածի Դ բաժնում նշված քանակի համար:

[21] **«TRQ»** նշագրով նշված սակագնային դիրքերում դասակարգված ծագում ունեցող ապրանքների սակագնային քվոտան կիրառվում է Համաձայնագրի 1-ին հավելվածի Դ բաժնին համապատասխան:

7. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ սույն գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում Համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանության և դրա բնօրինակ տեքստերի միջև ի հայտ էին եկել տասնյակ անճշտություններ, թարգմանչական անհամապատասխանություններ և այլն: Սահմանադրական դատարանը գտնում է՝ թեև թարգմանչական անհամապատասխանություններն ու անճշտությունները բովանդակային առումով խնդիր չեն հարուցում Պայմանագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության բացահայտման տեսանկյունից, այդուհանդերձ, կարող են որոշակի խնդիրներ առաջացնել Պայմանագրի մեկնաբանման և կիրառման ներպետական գործընթացներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2025 թվականի դեկտեմբերի 21-ին քաղաք Սանկտ Պետերբուրգում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Ինդոնեզիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

7 հուլիսի 2026 թվականի
ՍԴՈ-1836



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԴՈՒՇԱՆԲԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿԵԼԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Երևան — 28 հուլիսի 2026 թվականի

Սահմանադրական դատարանը՝ կազմով.
դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող),
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Վլադիմիր Վարդանյանի (զեկուցող),
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի՝ Կառավարության (այսուհետ նաև՝ Դիմող)
ներկայացուցիչ՝ Ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

Կառավարության՝ 2026 թվականի մարտի 27-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումի հիման վրա դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2025 թվականի հոկտեմբերի 10-ին Դուշանբեում ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների իրավասու մարմինների կողմից միջազգային վերահսկելի մատակարարման կազմակերպման և իրականացման կարգի մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Ուսումնասիրելով վերոնշյալ պայմանագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների իրավասու մարմինների կողմից միջազգային վերահսկելի մատակարարման կազմակերպման և իրականացման կարգի մասին» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) ստորագրվել է 2025 թվականի հոկտեմբերի 10-ին Դուշանբեում՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների (այսուհետ՝ Կողմեր) իրավասու մարմինների կողմից միջազգային վերահսկելի մատակարարման (այսուհետ՝ ՄՎՄ) կազմակերպման և իրականացման կարգը սահմանելու նպատակով:

2. Պայմանագիրն ստորագրվել է Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության կողմից:

3. Կառավարությունն իր՝ 2026 թվականի մարտի 26-ի N 337-Ա որոշմամբ հավանություն է տվել «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների իրավասու մարմինների կողմից միջազգային վերահսկելի մատակարարման կազմակերպման և իրականացման կարգի մասին» պայմանագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

4. Սահմանադրական դատարանի 2026 թվականի ապրիլի 14-ի ՍԴԱՈ-56 աշխատակարգային որոշմամբ գործն ընդունվել է քննության, որոշվել է գործի դատաքննությունն սկսել 2026 թվականի մայիսի 26-ին, գործով զեկուցող նշանակել Սահմանադրական դատարանի դատավոր Վ. Վարդանյանին և գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով:

5. Հաշվի առնելով գործով զեկուցողի առաջարկությունն առ այն, որ առկա է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ գործի վարույթը կասեցնելու հիմք, մասնավորապես՝ անհրաժեշտություն է առաջացել սույն պայմանագրի ճշգրտված պաշտոնական տեքստը ստանալու և լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու, Սահմանադրական դատարանի 2026 թվականի մայիսի 26-ի ՍԴԱՈ-88 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը կասեցվել է՝ մինչև կասեցման հիմքերի վերանալը:

6. 2026 թվականի հունիսի 17-ին Դիմողը Սահմանադրական դատարան է ներկայացրել Պայմանագրի հայերեն պաշտոնական տեքստի լրամշակված տարբերակը, սակայն դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ոչ բոլոր խնդիրներն են շտկվել ներկայացված պաշտոնական տեքստում, ինչից հետո զեկուցող դատավորի 2026 թվականի հունիսի 24-ի ՍԴԴ-28 գրությամբ պահանջվել է և Դիմողի ներկայացուցչի 2026 թվականի հունիսի 29-ի գրությամբ ներկայացվել է Պայմանագրի հայերեն պաշտոնական տեքստի լրամշակված տարբերակը:

7. Սահմանադրական դատարանն իր՝ 2026 թվականի հուլիսի 8-ի ՍԴԱՈ-162 աշխատակարգային որոշմամբ որոշել է վերսկսել սույն գործի վարույթը և դատաքննությունը նշանակել 2026 թվականի հուլիսի 28-ին՝ ժամը 11:00-ին:

8. Ուսումնասիրելով Պայմանագրի դրույթները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Պայմանագրի 3-րդ հոդվածը հռչակում է ***մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պահպանումը, ՄՎՄ-ին մասնակցող անձանց անվտանգության պաշտպանության ապահովումը, Կողմերի ազգային օրենսդրության պահպանումը, ՄՎՄ-ի իրականացման ընթացքում վերահսկելի օբյեկտի պահպանվածության և դրա նկատմամբ հսկողության ապահովումը,*** ինչպես նաև ***ՄՎՄ-ի կազմակերպման և իրականացման ընթացքում խորհրդապահության ապահովումը*** որպես Պայմանագրի հիմնական սկզբունքներ, իսկ Պայմանագրի 4-րդ հոդվածը սահմանում է ՄՎՄ-ների իրականացման ընթացքում

իրավասու մարմինների հիմնական խնդիրները, այն է՝ ***հանցագործությունների հայտնաբերումը, կանխումը, կանխարգելումը և բացահայտումը,*** ինչպես նաև ***դրանք նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերումն ու պարզումը, միջտարածաշրջանային, միջազգային հանցավոր կապերի, ուղիների և վերահսկելի օբյեկտների տեղափոխման երթուղիների հայտնաբերումը, մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների, հասարակության, ազգային անվտանգության, պետության համար սպառնալիք առաջացնող իրադարձությունների կամ գործողությունների վերաբերյալ տեղեկատվության ստացումը, հանցավորության դեմ պայքարի հարցում աջակցությունը՝ միջազգային պայմանագրերին համապատասխան:***

9. *Վերլուծելով Պայմանագրի հիմնական սկզբունքները և Պայմանագրով ամրագրված ՄՎՄ-ների իրականացման ընթացքում իրավասու մարմինների հիմնական խնդիրները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Պայմանագրում ամրագրված պարտավորությունների ծավալն ու բովանդակությունը պետք է գնահատվեն և մեկնաբանվեն նշված սկզբունքների և մատնանշված խնդիրների համակարգային համադրության լույսի ներքո:*

10. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը՝ փոխադարձության հիման վրա, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

10.1. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի Կողմերի հետ փոխհարաբերություններում միջազգային վերահսկելի մատակարարումը դիտարկել իբրև ***օպերատիվ-հետախուզական միջոցառում***, *այն է՝ Կողմերի իրավասու մարմինների կողմից վերահսկվող՝ Կողմերի տարածքով վերահսկելի օբյեկտների տեղափոխում՝ հանցագործությունները հայտնաբերելու, դրանք նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց պարզելու, մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների և հասարակության, ազգային անվտանգության, պետության համար սպառնալիք առաջացնող իրադարձությունների կամ գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով* (հոդված 1),

10.2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ սահմանել Պայմանագրի իրագործման համար պատասխանատու իրավասու մարմինների ցանկը և այն ուղարկել ավանդապահին՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցման հետ միաժամանակ, իսկ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների փոփոխությունների դեպքում՝ այդ մասին մեկ ամսվա ընթացքում ծանուցել ավանդապահին (հոդված 2, կետ 2),

10.3. ապահովել, որ ՄՎՄ-ի իրականացման ժամանակ ՀՀ իրավասու մարմինների փոխգործակցությունը մյուս Կողմերի իրավասու մարմինների հետ իրականացվի Պայմանագրին համապատասխան, իսկ Պայմանագրով, ինչպես նաև ՀՀ և մյուս Կողմերի միջև հարաբերությունների նկատմամբ կիրառվող միջազգային պայմանագրերով չկարգավորվող հարցերը լուծվեն ՀՀ և համապատասխան շահագրգիռ Կողմի ազգային օրենսդրությանը համապատասխան (հոդված 2, կետ 3),

10.4. ապահովել, որ ՄՎՄ-ի իրականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից ուղարկվող հարցումը պարունակի Պայմանագրի 7-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տեղեկատվությունը, ստորագրված լինի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի ղեկավարի կամ նրա տեղակալի կողմից, հավաստվի ՀՀ զինանշանի պատկերով կնիքով և ուղարկվի գրավոր, այդ թվում՝ տեքստի փոխանցման տեխնիկական միջոցների օգտագործմամբ (հոդված 7, կետեր 2 և 3),

10.5. որպես տարանցման պետություն ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը.

10.5.1. օպերատիվ կերպով տեղեկացնի ուղարկման պետության և նշանակման պետության իրավասու մարմիններին վերահսկելի օբյեկտի տարանցիկ ընդունման փաստի, դրա տեղափոխման և ուղեկցման երթուղու, պաշտպանության լրացուցիչ միջոցներ կիրառելու մասին, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, կազմակերպի և անցկացնի լռելյայն հսկողության օպերատիվ-հետախուզական և այլ միջոցառումների (համալիր) համակցություն՝ փաստաթղթավորման տեխնիկական միջոցների կիրառմամբ (հոդված 8, կետ 1, ենթակետ «ա»),

10.5.2. շահագրգիռ պետական մարմինների հետ համաձայնեցմամբ՝ ապահովի վերահսկելի օբյեկտի անվտանգ տեղափոխումը երթուղով (հոդված 8, կետ 1, ենթակետ «բ»),

10.5.3. ՄՎՄ-ին Կողմի իրավասու մարմնի աշխատակցի կամ Կողմի իրավասու մարմիններին խորհրդապահական աջակցություն ցուցաբերող անձի մասնակցության դեպքում ձեռնարկի վերջիններիս անվտանգության, աջակցության խորհրդապահության, միջոցառման կոնսպիրատիվության ապահովմանն ուղղված անհրաժեշտ միջոցներ (հոդված 8, կետ 1, ենթակետ «գ», հոդված 5-ի «գ» և «դ» կետերի համադրությամբ),

10.5.4. Պայմանագրի 9-րդ հոդվածով նախատեսված ՄՎՄ-ի դադարեցման հիմքերից մեկի առկայության դեպքում ուղարկման և նշանակման պետության իրավասու մարմիններին անհապաղ ծանուցի ՄՎՄ-ի դադարեցման մասին (հոդված 8, կետ 1, ենթակետ «դ»),

10.6. որպես նշանակման պետություն՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը.

10.6.1. օպերատիվ կերպով տեղեկացնի ուղարկման պետության և տարանցման պետության իրավասու մարմիններին վերահսկելի օբյեկտի ընդունման և ուղեկցման փաստի, ինչպես նաև պաշտպանության լրացուցիչ միջոցների կիրառման մասին (հոդված 8, կետ 2, ենթակետ «ա»),

10.6.2. կազմակերպի և անցկացնի օպերատիվ-հետախուզական և այլ միջոցառումների (համալիր) համակցություն՝ ուղղված վերահսկելի օբյեկտի տեղափոխման և հանցավոր գործունեությանն առնչություն ունեցող անձանց նկատմամբ լռելյայն հսկողությանը (հոդված 8, կետ 2, ենթակետ «բ»),

10.6.3. ՄՎՄ-ին Կողմի իրավասու մարմնի աշխատակցի կամ Կողմի իրավասու մարմիններին խորհրդապահական աջակցություն ցուցաբերող անձի մասնակցության դեպքում ամբողջ ծավալով ապահովի նշված անձանց անվտանգությունը, աջակցության խորհրդապահությունը, կոնսպիրատիվությունը, միջոցառումից նշված անձանց անվտանգ դուրսբերումը՝ առանց վտանգելու նրանց կյանքն ու առողջությունը (հոդված 8, կետ 2, ենթակետ «գ», հոդված 5-ի «գ» և «դ» կետերի համադրությամբ),

10.6.4. պարզի հանցավոր խմբի անդամների (մատակարարման կազմակերպիչների, առաքիչների, բեռն ստացողների) ինքնությունը, Հայաստանի Հանրապետությունում իրականացնի նրանց ձերբակալումը և վերահսկելի օբյեկտի առգրավումը (հոդված 8, կետ 2, ենթակետ «դ»),

10.6.5. ՄՎՄ-ի հետ կապված դատավարական որոշումների ընդունման մասին ժամանակին ծանուցի ուղարկման պետության և տարանցման պետության իրավասու մարմիններին (հոդված 8, կետ 2, ենթակետ «ե»),

10.6.6. Պայմանագրի 9-րդ հոդվածով նախատեսված ՄՎՄ-ի դադարեցման հիմքերից մեկի առկայության դեպքում ուղարկման պետության և տարանցման պետության իրավասու մարմիններին անհապաղ ծանուցի ՄՎՄ-ի դադարեցման մասին (հոդված 8, կետ 2, ենթակետ «զ»),

10.7. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները ՄՎՄ-ի արդյունքները ձևակերպեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմերի կողմից այլ բան չի համաձայնեցվել (հոդված 10, կետ 2),

10.8. որպես տարանցման կամ նշանակման պետություն՝ երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններն ապահովեն որպես հանցագործության կատարման միջոց օգտագործվող, այդ թվում՝ քրեական գործերով իրեղեն ապացույցներ հանդիսացող տրանսպորտային միջոցների վերադարձն ուղարկման պետություն ՄՎՄ-ի դադարեցումից հետո՝ ուղարկման պետության հաշվին, եթե Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմերի կողմից այլ բան չի համաձայնեցվել (հոդված 12),

10.9. որպես տարանցման կամ նշանակման պետություն՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները, ըստ Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմերի նախնական պայմանավորվածության, ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ ՄՎՄ-ի իրականացման ժամանակ օգտագործվող՝ տեղեկատվության լռելյայն ստացման (արձանագրման) միջոցները Հայաստանի Հանրապետություն անարգել ներմուծելու և արտահանելու, ինչպես նաև դրա ավարտից հետո դրանք ՄՎՄ-ի նախաձեռնողին վերադարձնելու համար (հոդված 13),

10.10. ինքնուրույն կրել Պայմանագրի իրականացման ընթացքում առաջացող ծախսերը, եթե Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմերի կողմից այլ կարգ չի համաձայնեցվում (հոդված 15):

11. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2025 թվականի հոկտեմբերի 10-ին Դուշանբեում ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների իրավասու մարմինների կողմից միջազգային վերահսկելի մատակարարման կազմակերպման և իրականացման կարգի մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

28 հուլիսի 2026 թվականի
ՍԴՈ-1837

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ««ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» 1994 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Երևան 15 սեպտեմբերի 2026 թվականի

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող),
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի (զեկուցող),
Վլադիմիր Վարդանյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Կառավարության,

ներկայացուցիչ՝ Աշխատանքի և բարեկեցության նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

Կառավարության՝ 2026 թվականի հունիսի 23-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումի հիման վրա դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2025 թվականի հունիսի 5-ին ստորագրված ««Բնակության պետությունից դուրս գտնվող աշխատողների հետ արտադրությունում դժբախտ պատահարների քննության կարգի մասին» 1994 թվականի դեկտեմբերի 9-ին ստորագրված համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2026 թվականի հունիսի 18-ի N 848-Ա որոշմամբ հավանություն է տվել 2025 թվականի հունիսի 5-ին ստորագրված ««Բնակության պետությունից դուրս գտնվող աշխատողների հետ արտադրությունում դժբախտ պատահարների քննության կարգի մասին» 1994 թվականի դեկտեմբերի 9-ին ստորագրված համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Սահմանադրական դատարանի 2026 թվականի հուլիսի 8-ի ՍԴԱՈ-163 աշխատակարգային որոշմամբ գործն ընդունվել է քննության, որոշվել է գործի դատաքննությունն սկսել 2026 թվականի սեպտեմբերի 15-ին, գործով զեկուցող նշանակել Սահմանադրական դատարանի դատավոր Ա. Վաղարշյանին և գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով:

Ուսումնասիրելով վերոնշյալ արձանագրությունը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Բնակության պետությունից դուրս գտնվող աշխատողների հետ արտադրությունում դժբախտ պատահարների քննության կարգի մասին» 1994 թվականի դեկտեմբերի 9-ին ստորագրված համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ նաև՝ Արձանագրություն) ստորագրվել է 2025 թվականի հունիսի 5-ին Դուշանբե քաղաքում:

Արձանագրության նպատակն է արդիականացնել և լրացնել «Բնակության պետությունից դուրս գտնվող աշխատողների հետ արտադրությունում դժբախտ պատահարների քննության կարգի մասին» 1994 թվականի դեկտեմբերի 9-ին ստորագրված համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ վերջինիս ձևակերպումները համապատասխանեցնելով ժամանակակից իրողություններին և ոլորտում առկա միտումներին, ելնելով Համաձայնագրում կիրառվող տերմինների

հստակեցման, ինչպես նաև համապատասխան տեխնոլոգիական և արտադրական ի հայտ եկող ռիսկերի հասցեագրման անհրաժեշտությունից:

2. Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1995 թվականի մարտի 10-ից: Վերջինս սահմանում է Համաձայնագրի Կողմերի տարածքներում գործուղման մեջ ժամանակավորապես գտնվող աշխատողների հետ արտադրությունում տեղի ունեցած դժբախտ պատահարների քննության կարգը: Համաձայնագիրը տարածվում է Կողմերի՝ անկախ սեփականության ձևերից ձեռնարկությունների, հաստատությունների և կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց վրա, որոնց հետ աշխատողը գտնվում է աշխատանքային հարաբերությունների մեջ:

3. Քննության առարկա Արձանագրությունը բաղկացած է նախաբանից և 2 հոդվածներից, ինչպես նաև Н-1М ձևի «Ակտ արտադրությունում դժբախտ պատահարի մասին» պարունակող Հավելված 1-ից և «Արտադրությունում դժբախտ պատահարի մասին Н-1М ձևի ակտը լրացնելու կարգի մասին ցուցումները» պարունակող Հավելված 2-ից:

Արձանագրությամբ փոփոխություններ են կատարվում Համաձայնագրի 2-րդ հոդվածում (սահմանվում են Համաձայնագրում կիրառվող հասկացությունները), 3-րդ հոդվածի առաջին մասում, 5-րդ հոդվածի 4-րդ նախադասության մեջ, հավելվածում, դառնալով Համաձայնագրի 1-ին հավելված, ինչպես նաև Համաձայնագիրը լրացվում է նոր 8.1-ին հոդվածով և 2-րդ հավելվածով: Վերջինս հանդիսանում է արտադրությունում դժբախտ պատահարի մասին Н-1М ձևի ակտը լրացնելու կարգի մասին ցուցումներ:

Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն այն ստորագրած Կողմերի կողմից կատարվելու մասին երրորդ ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից, իսկ ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար Արձանագրությունն ուժի մեջ է մտնում համապատասխան ծանուցումներն ավանդապահի կողմից ստանալու օրվանից (հոդված 2):

4. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը ի հավելումն նախկինում Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների՝ փոփոխության արդյունքում ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

4.1. ապահովել, որ յուրաքանչյուր դժբախտ պատահարի քննությունը, այդ թվում վնասվածքի մասին հաղորդման կարգը, քննության հանձնաժողովի ձևավորումը, դրա աշխատանքի կազմակերպումը, դրանց հետ կապված ձեռնարկությունների,

առողջապահության հաստատությունների, պետական հսկողության ծառայությունների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ու պաշտոնատար անձանց ծագած պարտականությունները, քննության կազմակերպման հետ կապված այլ հարցերի լուծումը իրականացվի այն ձեռնարկության կողմից, որտեղ տեղի է ունեցել դժբախտ պատահարը, դժբախտ պատահարի պահին տուժողի գտնվելու վայրի՝ ՀՀ համապատասխան նորմատիվ ակտերով սահմանված կարգով (Արձանագրության հոդված 1, կետ 2, Համաձայնագրի հոդված 3, մաս 1),

4.2. ապահովել, որ դեպի ծառայողական գործուղման վայր (ներառյալ տարանցումը) մեկնելիս և վերադառնալիս մյուս Կողմի ձեռնարկության աշխատողի հետ տեղի ունեցած դժբախտ պատահարի մասին տեղեկություն ստանալու դեպքում՝ ՀՀ աշխատանքի պաշտպանության մասին օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողության և հսկողության պետական մարմինը՝ ՀՀ տարածքում դժբախտ պատահարը տեղի ունենալու պարագայում, համապատասխան տեղեկատվությունն ուղարկի այն Կողմի աշխատանքի պաշտպանության մասին օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողության և հսկողության պետական մարմին, որի տարածքում գտնվում է տուժողի գործատուն (Արձանագրության հոդված 1, կետ 4, Համաձայնագրի նոր հոդված 8.1, մաս 1),

4.3. ապահովել, որ տեղի ունեցած դժբախտ պատահարի մասին տեղեկատվությունն ստացած՝ ՀՀ աշխատանքի պաշտպանության մասին օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողության և հսկողության պետական մարմինը ձեռնարկի դժբախտ պատահարի քննության նկատմամբ հսկողությանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ (Արձանագրության հոդված 1, կետ 4, Համաձայնագրի նոր հոդված 8.1, մաս 3):

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին, ինչպես նաև կնպաստեն բնակության պետությունից դուրս գտնվող աշխատողների առողջության պահպանմանը և դրա հետ կապված այլ հիմնական իրավունքների պաշտպանությանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2025 թվականի հունիսի 5-ին ստորագրված ««Բնակության պետությունից դուրս գտնվող աշխատողների հետ արտադրությունում դժբախտ պատահարների քննության կարգի մասին» 1994 թվականի դեկտեմբերի 9-ին ստորագրված համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

15 սեպտեմբերի 2026 թվականի
ՍԴՈ-1838



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Երևան 15 սեպտեմբերի 2026 թվականի

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող),
Արտակ Զեյնալյանի (զեկուցող),
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,
Վլադիմիր Վարդանյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Կառավարության,

ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

Կառավարության՝ 2026 թվականի հունիսի 26-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումի հիման վրա դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2026 թվականի փետրվարի 5-ին ստորագրված «Ծառայությունների առևտրի և ներդրումների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2026 թվականի հունիսի 25-ի N 890-Ա որոշմամբ հավանություն է տվել «2026 թվականի փետրվարի 5-ին ստորագրված «Ծառայությունների առևտրի և ներդրումների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Ծառայությունների առևտրի և ներդրումների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև» համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2026 թվականի փետրվարի 5-ին՝ տեխնոլոգիայի փոխանցումը խթանելու և ծառայությունների առևտուրն ու ներդրումներն ընդլայնելու նպատակով:

2. Համաձայնագրի կատարման համար պատասխանատու մարմիններն են ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ՀՀ կադաստրի կոմիտեն, ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, ՀՀ միջուկային անվտանգության կոմիտեն, ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեն, ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ

մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովը, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը և Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակը:

3. Համաձայնագիրն ունի 9 հավելված. Հավելված I. «Ծառայությունների առևտրի մասով Արաբական Միացյալ Էմիրությունների հատուկ պարտավորությունների ժամանակացանկ», Հավելված II. «Ծառայությունների առևտրի մասով Հայաստանի Հանրապետության հատուկ պարտավորությունների ժամանակացանկ», Հավելված III. «ԱՄԷ-ի ԱԱԲՌ բացառությունների ցանկ», Հավելված IV. «Հայաստանի Հանրապետության ԱԱԲՌ բացառությունների ցանկ», Հավելված V. «Ֆինանսական ծառայություններ», Հավելված VI. «Հեռահաղորդակցության ծառայություններ», Հավելված VII. «Կոլեգիայի ընթացակարգային կանոններ», Հավելված VIII. «Կոլեգիայի անդամների և սույն համաձայնագրի շրջանակներում վեճերի կարգավորման վարույթներում ներգրավված այլ անձանց վարքագծի կանոնակարգ», Հավելված IX. «Էներգետիկ ռեսուրսների ոլորտ»:

4. Ըստ Համաձայնագրի 7.1-ին հոդվածի՝ Համաձայնագրի հավելվածներն[22] ու ծանոթագրությունները կազմում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

5.1. ստեղծել ծառայությունները և ներդրումները ներառող ազատ առևտրի գոտի՝ Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի (ԾԱԳՀ) V հոդվածին համապատասխան (հոդված 1.2),

5.2. հաստատել մյուս Կողմի նկատմամբ Հայաստանի Հանրապետության առկա իրավունքներն ու պարտավորությունները՝ ԱՀԿ համաձայնագրի և այլ համաձայնագրերի համաձայն, որոնց կողմ են երկու Կողմերն էլ (հոդված 1.4, պարբերություն 1),

5.3. Համաձայնագրի և այլ համաձայնագրերի միջև, որոնց կողմ են երկու Կողմերն էլ, որևէ անհամապատասխանության դեպքում անհապաղ խորհրդակցել մյուս Կողմի հետ՝ երկուստեք բավարարող լուծում գտնելու նպատակով (հոդված 1.4, պարբերություն 2),

[22] Ավելի ստույգ՝ Համաձայնագրի և Հավելվածների դրույթների միջև ցանկացած անհամապատասխանության դեպքում գերակայում են Համաձայնագրի դրույթները, եթե Հավելվածում հստակորեն այլ բան նշված չէ:

5.4. հրապարակել կամ այլ կերպ հանրայնացնել Հայաստանի Հանրապետության այն օրենքները, կանոնակարգերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային համաձայնագրերը, որոնք կարող են ազդել Համաձայնագրի գործողության վրա (հոդված 1.6, պարբերություն 1),

5.5. չհակասելով Համաձայնագրի 1.7-րդ հոդվածին՝ ողջամիտ ժամկետում պատասխանել կոնկրետ հարցերի և պահանջի դեպքում մյուս կողմին տրամադրել տեղեկություններ Համաձայնագրի 1.6-րդ հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված հարցերի վերաբերյալ (հոդված 1.6, պարբերություն 2),

5.6. Հայաստանի Հանրապետության օրենքներին և կանոնակարգերին համապատասխան՝ պահպանել մյուս Կողմի կողմից որպես գաղտնի սահմանված տեղեկությունների գաղտնիությունը (հոդված 1.7, պարբերություն 1),

5.7. Հայաստանի Հանրապետության Հատուկ պարտավորությունների ժամանակացանկում սահմանել Հայաստանի Հանրապետության կողմից Համաձայնագրի 2.5, 2.6 և 2.7-րդ հոդվածներին համապատասխան ստանձնած հատուկ պարտավորությունները (հոդված 2.3, պարբերություն 1),

5.8. բացառությամբ Համաձայնագրի IV հավելվածում (Հայաստանի Հանրապետության ԱԱԲՌ բացառությունների ցանկ) պարունակվող՝ Հայաստանի Հանրապետության ԱԱԲՌ բացառությունների ցանկով նախատեսված դեպքերի՝ անմիջապես և անվերապահորեն ծառայությունների մատուցմանն առնչվող բոլոր միջոցների առնչությամբ մյուս Կողմի ծառայություններին ու ծառայություն մատուցողներին տրամադրել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը Հայաստանի Հանրապետությունը տրամադրում է կողմ չհանդիսացող ցանկացած պետության համանման ծառայություններին և ծառայություն մատուցողներին (հոդված 2.4, պարբերություն 1),

5.9. Համաձայնագրի 2.4-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված պարտավորությունները չկիրառել նույն հոդվածի 2-րդ պարբերությունում սահմանված դեպքերի նկատմամբ (հոդված 2.4, պարբերություն 2),

5.10. Համաձայնագրի 2.1-ին հոդվածում պարունակվող «ծառայությունների առևտուր» սահմանման մեջ նշված մատուցման եղանակների միջոցով շուկայի հասանելիության առնչությամբ մյուս Կողմի ծառայությունների և ծառայություն մատուցողների նկատմամբ կիրառել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը նախատեսված է Հատուկ պարտավորությունների Հայաստանի Հանրապետության ժամանակացանկում համաձայնեցված և նշված ժամկետներով, սահմանափակումներով ու պայմաններով (հոդված 2.5, պարբերություն 1),

5.11. Եթե որևէ Կողմ շուկայի հասանելիության մասով պարտավորություն է ստանձնում 2.1-ին հոդվածի (i) պարբերության մեջ պարունակվող «ծառայությունների

առևտուր» սահմանման մեջ նշված մատուցման եղանակի միջոցով ծառայության մատուցման կապակցությամբ, և եթե կապիտալի միջսահմանային տեղաշարժն ինքնին ծառայության էական մաս է, ապա այդ Կողմը դրանով պարտավոր է թույլատրել կապիտալի այդպիսի տեղաշարժը: Եթե Կողմը շուկայի հասանելիության մասով պարտավորություն է ստանձնում 2.1-ին հոդվածի (iii) պարբերության մեջ պարունակվող «ծառայությունների առևտուր» սահմանման մեջ նշված մատուցման եղանակով ծառայություն մատուցելու առնչությամբ, ապա նա դրանով պարտավորվում է թույլ տալ կապիտալի հարակից փոխանցումները դեպի իր տարածք:

5.12. Հատուկ պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության ժամանակացանկում ներառված ծառայությունների ոլորտների կապակցությամբ և հաշվի առնելով դրանում սահմանված ցանկացած պայման ու վերապահում՝ ծառայությունների մատուցմանն առնչվող բոլոր միջոցների առնչությամբ մյուս Կողմի ծառայություններին ու ծառայություն մատուցողներին տրամադրել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը Հայաստանի Հանրապետությունը տրամադրում է իր սեփական համանման ծառայություններին և ծառայություն մատուցողներին (հոդված 2.6, պարբերություն 1),

5.13. պահպանել կամ հնարավորինս շուտ ստեղծել դատական, արբիտրաժային կամ վարչական տրիբունալներ կամ ընթացակարգեր, որոնք ազդեցության ենթարկված ծառայություն մատուցողի պահանջով ապահովում են ծառայությունների առևտրին առնչվող վարչական որոշումների արագ վերանայում և հիմնավորված լինելու դեպքում՝ իրավական պաշտպանության համապատասխան միջոցներ, իսկ եթե այդպիսի ընթացակարգերն անկախ չեն այն մարմնից, որին վերապահված է նշված վարչական որոշումը, ապա ապահովել, որ ընթացակարգերը փաստացի նախատեսեն օբյեկտիվ և անկողմնակալ վերանայում (հոդված 2.9, պարբերություն 2, ենթապարբերություն «ա»),

5.14. նպատակ ունենալով ապահովելու, որ որակավորման պահանջներին և ընթացակարգերին առնչվող միջոցները, տեխնիկական ստանդարտները և լիցենզավորման պահանջները ծառայությունների առևտրի համար չստեղծեն անհարկի խոչընդոտներ, փորձել ապահովել, որ այն ոլորտներում, որտեղ հատուկ պարտավորություններ են ստանձնվել, այդ միջոցները հիմնված լինեն օբյեկտիվ և թափանցիկ չափորոշիչների վրա, ինչպիսիք են ծառայություն մատուցելու իրավասությունը և կարողությունը, չլինեն պարտավորություններով ավելի ծանրաբեռնող, քան անհրաժեշտ է ծառայության որակն ապահովելու համար, և լիցենզավորման ընթացակարգերի դեպքում որպես այդպիսին չսահմանափակեն ծառայության մատուցումը (հոդված 2.9, պարբերություն 4),

5.15. այն ոլորտներում, որտեղ մասնագիտական ծառայությունների

վերաբերյալ հատուկ պարտավորություններ են ստանձնվել, նախատեսել համապատասխան ընթացակարգեր մյուս Կողմի մասնագետների կոմպետենտությունը ստուգելու համար, ինչպես նաև մյուս Կողմի հետ համատեղ ուսումնասիրել ներպետական կարգավորման կանոնների շուրջ բանակցությունների արդյունքները՝ համաձայն ԾԱԳՀ-ի VI.4 հոդվածի՝ դրանք Համաձայնագրի 2-րդ գլխում ներառելու նպատակով (հոդված 2.9, պարբերություններ 6 և 7),

5.16. չհամաձայնել ճանաչմանն այնպիսի ձևով, որը կհամարվի մյուս Կողմի և կողմ չհանդիսացող պետությունների միջև խտրական միջոց՝ ծառայություն մատուցողներին թույլտվություն տրամադրելու, նրանց լիցենզավորման կամ հավաստագրման ստանդարտների կամ չափորոշիչների կիրառման հարցում, կամ ծառայությունների առևտրի թաքնված սահմանափակում (հոդված 2.10, պարբերություն 3),

5.17. համաձայնել հնարավորության դեպքում խրախուսել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող համապատասխան մարմիններին, որոնք պատասխանատու են պրոֆեսիոնալ և մասնագիտական որակավորումների տրամադրման և ճանաչման համար, որ ամրապնդեն համագործակցությունը և ուսումնասիրեն համապատասխան պրոֆեսիոնալ և մասնագիտական որակավորումների փոխադարձ ճանաչման հնարավորությունները և հետամուտ լինեն Կողմերի համար փոխադարձ կարևորություն ունեցող ծառայությունների ոլորտներին առնչվող լիցենզավորման և հավաստագրման փոխադարձաբար ընդունելի ստանդարտներին և չափորոշիչներին (հոդված 2.10, պարբերություն 4),

5.18. սահմանափակումներ չկիրառել Հայաստանի Հանրապետության հատուկ պարտավորություններին վերաբերող ընթացիկ գործարքների համար կատարվող միջազգային փոխանցումների և վճարումների նկատմամբ՝ բացառությամբ Համաձայնագրի 2.14-րդ հոդվածով (Վճարային հաշվեկշռի պաշտպանության նպատակով կիրառվող սահմանափակումները) նախատեսված հանգամանքների առկայության դեպքերի (հոդված 2.11, պարբերություն 1),

5.19. ձգտել խուսափել վճարային հաշվեկշռի պաշտպանության նպատակով սահմանափակումներ կիրառելուց (հոդված 2.14, պարբերություն 1),

5.20. մյուս Կողմի հետ ծառայությունների առևտրի հետագա ազատականացման նպատակով համաձայնել մյուս Կողմի հետ համատեղ վերանայել իրենց Հատուկ պարտավորությունների ժամանակացանկերը և իրենց ԱԱԲՌ բացառությունների ցանկերը՝ հաշվի առնելով ծառայությունների ազատականացման ցանկացած զարգացում, որը տեղի է ունենում ԱՀԿ-ի հովանավորության ներքո իրականացվող շարունակական աշխատանքի արդյունքում (հոդված 2.16, պարբերություն 1),

5.21. հաստատել գրավիչ ներդրումային միջավայրը խթանելու և ապրանքների

ու ծառայությունների առևտուրն ընդլայնելու Հայաստանի Հանրապետության ցանկությունը և ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ խրախուսելու և դյուրացնելու առևտուրը և ապահովելու բարենպաստ պայմաններ՝ երկու երկրների միջև երկարաժամկետ տնտեսական զարգացման և առևտրի բազմազանեցման համար (հոդված 3.2),

5.22. բացառությամբ այն դրույթների, որոնց համաձայն իրավունքներն ու պարտավորությունները նաև տրամադրվում կամ սահմանվում են ԱՀԿ համաձայնագրի շրջանակներում, ապահովել, որ Համաձայնագրում որևէ դրույթ չկիրառվի հարկման միջոցի նկատմամբ, ինչպես նաև ապահովել, որ Համաձայնագրում որևէ դրույթ չազդի որևէ Կողմի՝ որևէ հարկային կոնվենցիայով նախատեսված իրավունքների և պարտավորությունների վրա (հոդված 4.3),

5.23. ձգտել համաձայնություն ձեռք բերել Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման վերաբերյալ և համագործակցության միջոցով գործադրել հնարավոր բոլոր ջանքերը՝ միմյանց գործունեության վրա հնարավոր ազդեցություն ունեցող ցանկացած հարցում փոխադարձաբար բավարարող լուծում գտնելու համար (հոդված 5.2),

5.24. նշանակել կոնտակտային անձ՝ Համաձայնագրի 5-րդ գլխի շրջանակներում նախաձեռնված ցանկացած վեճի մասով Կողմերի միջև հաղորդակցությունը հեշտացնելու համար, ինչպես նաև ապահովել, որ Համաձայնագրի 5-րդ գլխի համաձայն ներկայացված ցանկացած պահանջ, ծանուցում, գրավոր հայտարարություն կամ այլ փաստաթուղթ մյուս Կողմին տրամադրվի այդ Կողմի նշանակած կոնտակտային անձի միջոցով (հոդված 5.4),

5.25. ապահովել Համաձայնագրի 5.6-րդ հոդվածով սահմանված խորհրդակցություններին ներկայացվող պահանջների կատարումը (հոդված 5.6),

5.26. ապահովել, որ բարի ծառայություններ, միջնորդություն կամ հաշտարարություն ներառող վարույթները և այդ վարույթների ընթացքում Կողմերի արտահայտած կոնկրետ դիրքորոշումները լինեն գաղտնի և չսահմանափակեն որևէ Կողմի իրավունքները Համաձայնագրի 5-րդ գլխի համաձայն ցանկացած հետագա վարույթում կամ Կողմերի կողմից ընտրված որևէ հարթակում իրականացվող ցանկացած այլ վարույթում (հոդված 5.7, պարբերություն 2),

5.27. Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չլինելու դեպքում մյուս Կողմի հետ հավասարապես կրել կոլեգիայի աշխատանքի հետ կապված ծախսերը և դրա վարույթների իրականացման հետ կապված մյուս ծախսերը, ինչպես նաև կրել կոլեգիայի վարույթների մասով Հայաստանի Հանրապետության սեփական ծախքերն ու իրավաբանական ծախսերը (հոդված 5.27),

5.28. ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Համաձայնագրի 5.28-րդ հոդվածով սահմանված փոխհամաձայնեցված լուծումը համաձայնեցված ժամկետում

իրականացնելու համար (հոդված 5.28, պարբերություն 3),

5.29. որպես իրագործող Կողմ՝ ոչ ուշ, քան համաձայնեցված ժամկետի ավարտին, մյուս Կողմին գրավոր տեղեկացնել փոխհամաձայնեցված լուծման իրականացման համար ձեռնարկված ցանկացած միջոցի մասին (հոդված 5.28, պարբերություն 4),

5.30. նշանակել կոնտակտային անձ՝ Համաձայնագրին վերաբերող ցանկացած հարցով Կողմերի միջև պաշտոնական հաղորդակցությունն ապահովելու և դյուրացնելու համար (հոդված 6.2, պարբերություն 1),

5.31. իրականացնել համապատասխան միջոցներ՝ առանձին կամ միասին խոշոր օպերատոր հանդիսացող մատակարարների կողմից հակամրցակցային գործելակերպում ներգրավվելը կամ այն շարունակելը կանխելու նպատակով (Հավելված VI, հոդված 2, պարբերություն 1),

5.32. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային հեռահաղորդակցության ցանցերի կամ ծառայությունների մատակարարները ձեռնարկեն համապատասխան քայլեր՝ պաշտպանելու, inter alia՝ անհատների անձնական կյանքը՝ կապված անձնական տվյալների մշակման և տարածման հետ, անհատական գրառումների գաղտնիությունը, և հեռահաղորդակցության ծառայություններ մատուցողների և վերջնական օգտագործողների կամ նրանց վերաբերող առևտրային առումով զգայուն տեղեկությունների գաղտնիությունը, ինչպես նաև երաշխավորել, որ հեռահաղորդակցության ծառայություն մատուցողի կողմից ստացված տվյալներն ու տեղեկությունները կօգտագործվեն միայն այդ ծառայությունները մատուցելու նպատակով (Հավելված VI, հոդված 4, պարբերություն 1),

5.33. ապահովել Համաձայնագրի Հավելված VI-ի 5-րդ հոդվածով սահմանված համընդհանուր ծառայությանը ներկայացվող պահանջների կատարումը (Հավելված VI, հոդված 5),

5.34. ապահովել Համաձայնագրի Հավելված VI-ի 6-րդ հոդվածով սահմանված լիցենզավորման ընթացակարգի պահպանումը (Հավելված VI, հոդված 6),

5.35. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության հեռահաղորդակցության ծառայությունների կարգավորող մարմինը առանձին լինի հիմնական հեռահաղորդակցության ծառայությունների ցանկացած մատուցողից և հաշվետու չլինի նրան, ինչպես նաև ապահովել, որ Հայաստանի Հանրապետության կարգավորող մարմնի որոշումները և դրա կողմից կիրառվող ընթացակարգերը լինեն անկողմնակալ շուկայի բոլոր մասնակիցների համար (Հավելված VI, հոդված 7),

5.36. ապահովել, որ հեռահաղորդակցությունների բնագավառում սահմանափակ ռեսուրսների, այդ թվում՝ հաճախականությունների, թվերի և սերվիտուտի բաշխման և դրանք օգտագործելու Հայաստանի Հանրապետության

ընթացակարգերն իրականացվեն օբյեկտիվ, ժամանակին, թափանցիկ և ոչ խտրական ձևով, ինչպես նաև հրապարակել բաշխված հաճախականությունների միջակայքերի ընթացիկ իրավիճակի մասին տեղեկությունները (Հավելված VI, հոդված 8, պարբերություն 1),

5.37. ոչ պետական ռադիոէլեկտրական հեռահաղորդակցության ծառայությունների համար տիրույթ հատկացնելիս ձգտել, որպես կանոն, հիմնվել շուկայական մոտեցումների վրա՝ ամբողջությամբ հաշվի առնելով հանրային շահերը (Հավելված VI, հոդված 8, պարբերություն 2),

5.38. հեռահաղորդակցության բնագավառում ծագած վեճերը լուծել Համաձայնագրի Հավելված VI-ի 9-րդ հոդվածով սահմանված կարգով (Հավելված VI, հոդված 9),

5.39. ապահովել հանրային հեռահաղորդակցության ցանցերի և ծառայությունների հասանելիության և դրանց օգտագործման վերաբերյալ պայմանների մասին համապատասխան տեղեկությունների հանրամատչելի լինելը, ներառյալ՝ սակագները և ծառայությունների այլ պայմաններ ու դրույթներ, նման ցանցերի և ծառայությունների տեխնիկական միջերեսների մասնագրերը, այդպիսի հասանելիությանն ու օգտագործմանը վերաբերող ստանդարտների մշակման և ընդունման համար պատասխանատու մարմինների մասին տեղեկությունները, տերմինալի կամ այլ սարքավորումների հանրային հեռահաղորդակցության ցանցին միացման նկատմամբ կիրառելի պայմանները և առկայության դեպքում՝ ծանուցումները, թույլտվությունները, գրանցման կամ լիցենզավորման պահանջները (Հավելված VI, հոդված 10),

5.40. չխոչընդոտել հանրային հեռահաղորդակցության ծառայություններ մատուցողներին ճկուն կերպով ընտրելու իրենց ծառայությունները մատուցելու համար օգտագործվող տեխնոլոգիաները, ներառյալ առևտրային շարժական անլար ծառայությունները՝ հանրային քաղաքականության օրինական շահերը բավարարելու համար անհրաժեշտ պահանջներին համապատասխան, պայմանով, որ նման ընտրությունը սահմանափակող որևէ միջոց չի մշակվում, ընդունվում կամ կիրառվում այնպես, որ ստեղծվեն ավելորդ խոչընդոտներ առևտրի համար (Հավելված VI, հոդված 11, պարբերություն 1),

5.41. ապահովել Համաձայնագրի Հավելված VII-ում ամրագրված Կոլեգիայի ընթացակարգային կանոնների պահպանումը (Հավելված VII):

5.42. Համաձայնագրի 1.7-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանվում է, որ Համաձայնագրի որևէ դրույթով չի կարող նախատեսվել Կողմի կողմից այնպիսի գաղտնի տեղեկություններ հրապարակելու պահանջ, որոնց հրապարակումը կխոչընդոտի Կողմի օրենքի կատարման ապահովումը կամ որևէ այլ կերպ կհակասի հանրային շահին, կամ ինչը կարող է սահմանափակել որևէ տնտեսավարող

սուբյեկտի իրավաչափ առևտրային շահերը:

6. Համաձայնագրի 3.3-րդ և 6.1-ին հոդվածներով Կողմերը ստեղծում են Ներդրումների հարցերով Արաբական Միացյալ Էմիրություններ-Հայաստանի Հանրապետություն խորհուրդ (Խորհուրդ), ինչպես նաև Համատեղ կոմիտե:

7. Համաձայնագրով սահմանվում է, որ մենաշնորհների և ծառայության բացառիկ մատուցողների մասով Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները կարգավորվում են ԾԱԳՀ-ի VIII հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերով, որոնք ներառվում են Համաձայնագրում և վերջինիս մասն են կազմում, իսկ բիզնես գործելակերպերի մասով Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները կարգավորվում են ԾԱԳՀ-ի IX հոդվածով, որը ներառվում է Համաձայնագրում և վերջինիս մասն է կազմում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2026 թվականի փետրվարի 5-ին ստորագրված՝ «Ծառայությունների առևտրի և ներդրումների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

15 սեպտեմբերի 2026 թվականի
ՍԴՈ-1839



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՆ ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ԹՐԱՄՓԻ ՈՒՂԻ՝ ՀԱՆՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԳԱՎԱՃՄԱՆ» ՆԱԽԱԳԾԻ (ԹՐԻՓՓ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Երևան — 15 սեպտեմբերի 2026 թվականի

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող),
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի (զեկուցող),
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,
Վլադիմիր Վարդանյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Կառավարության,

ներկայացուցիչ՝ Արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

Կառավարության՝ 2026 թվականի հուլիսի 17-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումի հիման վրա դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2026 թվականի հունիսի 1-ին Վաշինգտոնում և 2026 թվականի հունիսի 4-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» նախագծի (ԹՐԻՓՓ) վերաբերյալ ռազմավարական համագործակցության մասին շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2026 թվականի հուլիսի 16-ի թիվ 1042-Ա որոշմամբ հավանություն է տվել 2026 թվականի հունիսի 1-ին Վաշինգտոնում և 2026 թվականի հունիսի 4-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» նախագծի (ԹՐԻՓՓ) վերաբերյալ ռազմավարական համագործակցության մասին շրջանակային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» նախագծի (ԹՐԻՓՓ) վերաբերյալ ռազմավարական համագործակցության մասին շրջանակային համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2026 թվականի հունիսի 1-ին Վաշինգտոնում և 2026 թվականի հունիսի 4-ին Երևանում՝ միջազգային, միջպետական և տարածաշրջանային խաղաղությանը, տնտեսական բարգավաճմանը, տրանսպորտային և հաղորդակցական կապերի զարգացմանը, առևտրի ընդլայնմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների (յուրաքանչյուրը առանձին՝ Կողմ, իսկ միասին՝ Կողմեր) միջև տնտեսական համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը նպաստելու նպատակով:

2. Դիմումին կից ներկայացված՝ Արտաքին գործերի նախարարության՝ Համաձայնագրի վավերացման արտաքին քաղաքական նպատակահարմարության վերաբերյալ եզրակացության համաձայն՝ Համաձայնագիրը «կարգավորում է «ԹՐԻՓՓ զարգացման ընկերության» (ԹԶԸ [«**ԹԶԸ**» նշանակում է ԹՐԻՓՓ-ի զարգացման ընկերություն՝ ԹԶԸ ԱՄՆ-ի և Հայաստանի միջև ստեղծվելիք համատեղ ձեռնարկություն, որը Հայաստանում պետք է հիմնադրվի որպես բաժնետիրական ընկերություն]) հիմնադրման և գործունեության հետ կապված հարաբերությունները, այդ թվում՝ հատուկ մեխանիզմների ձևավորումը, բաժնեմասերի բաշխումը, ԹՐԻՓՓ ծրագրի զարգացման, կառուցապատման և կոնցեսիոն իրավունքների իրականացումը, հարկային և մաքսային վարչարարության կազմակերպումը, ինչպես նաև կարգավորիչ բնույթի այլ կարևոր հարցեր:

(…)

Համաձայնագրով ամրագրվում է, որ Հայաստանի Հանրապետությունը լիիրավ կերպով պահպանում է իր ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը և իրավազորությունը ԹՐԻՓՓ նախագծի այն հատվածների նկատմամբ, որոնք գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքում: Այս համատեքստում Հայաստանը շարունակելու է իրականացնել իր լիիրավ իրավազորությունը պետական սահմանի կառավարման, սահմանային վերահսկողության, մաքսային վարչարարության և Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող բոլոր մաքսային գործընթացների նկատմամբ»:

3. Համաձայնագրով, մասնավորապես, սահմանված է.

- Ամերիկայի Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության նպատակն է, որ ԹՐԻՓՓ-ը նպաստի տարածաշրջանային խաղաղությանը, կայունությանը, բարգավաճմանը և ինտեգրմանը, ինչպես նաև ստեղծի առանցքային առևտրային ուղի ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Ամերիկայի Միացյալ Նահանգների համար նոր շուկաներ բացելու համար, և տնտեսական օգուտներ ստեղծի հայաստանյան ընկերությունների համար ԹՐԻՓՓ-ի կառուցման և գործարկման ընթացքում,

- Ամերիկայի Միացյալ Նահանգները և Հայաստանի Հանրապետությունը ճանաչում են, որ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև խաղաղության հետագա ինստիտուցիոնալացումը, այդ թվում՝ միջպետական սահմանների սահմանազատումն ու սահմանագծումը, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորումը, ԱՄՆ-ի կայուն ներգրավվածությունը և տարածաշրջանային համագործակցությունն ու կայունությունը կնպաստեն ԹՐԻՓՓ-ի հաջողությանը,

- Կողմերը ճանաչում են, որ Հայաստանը լիակատար ինքնիշխանություն, տարածքային ամբողջականություն և իրավազորություն է պահպանում Հայաստանի ինքնիշխան տարածքում ԹՐԻՓՓ-ի իրականացման բոլոր գոտիների նկատմամբ, և հաստատում են, որ Համաձայնագիրը և ԹՐԻՓՓ-ը կոչված են ծառայելու որպես առանցքային մեխանիզմներ հանուն խաղաղ և ինքնիշխան Հայաստանի,

- ԹՐԻՓՓ-ը միտված է Հայաստանի տարածքում անխոչընդոտ, բազմամոդալ տարանցիկ փոխկապակցվածություն ապահովելուն՝ նպաստելով տարածաշրջանային խաղաղությանը, կայունությանը և ինտեգրմանը՝ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և իրավազորության նկատմամբ լիակատար հարգանքի հիման վրա, միաժամանակ կապելով Ադրբեջանի հիմնական մասը և նրա Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը և հանդիսանալով կենսական օղակ Տրանսկասպյան առևտրային երթուղու համար, և ակնկալելով, որ ԹՐԻՓՓ-ը կստեղծի փոխադարձ օգուտներ Հայաստանի Հանրապետության համար՝ միջազգային և ներպետական կապակցվածության զարգացման առումով:

4. Համաձայնագրի նպատակը և Կողմերի քաղաքականությունն է խորացնել Կողմերի միջև տնտեսական համագործակցությունը՝ ԹՐԻՓՓ-ի իրականացման և դրա հաջողության ապահովման նպատակով՝ Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետում նշված գործիքների ներդրմամբ: Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված է. «Կողմերը նախատեսում են, որ ԹՋԸ ԱՄՆ-ը [«ԹՋԸ ԱՄՆ» նշանակում է առևտրային կազմակերպություն, որը պետք է հիմնադրվի Դելավեր նահանգում որպես Միացյալ Նահանգների գործակալություն հանդիսացող Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման ֆինանսական կորպորացիային (ԶՖԿ) ամբողջությամբ պատկանող դուստր ձեռնարկություն] և Հայաստանը համատեղ հիմնադրեն ԹՋԸ անվա[նմա]մբ համատեղ ձեռնարկություն, որտեղ ԹՋԸ ԱՄՆ-ն կունենա 74% վերահսկիչ մասնակցություն, իսկ Հայաստանը՝ 26% մասնակցություն: Կողմերը լրացուցիչ նախատեսում են, որ ԹՋԸ-ն կաջակցի ԹՐԻՓՓ-ի իրականացմանը: ԹՋԸ-ի ստեղծման նպատակով Կողմերը նախատեսում են, որ ԹՋԸ ԱՄՆ-ն և Հայաստանը ստորագրեն երկու առանձին փաստաթուղթ՝ ա) ԹՋԸ-ի կանոնադրությունը և բ) Բաժնետիրական համաձայնագիրը [«Բաժնետիրական համաձայնագիր» նշանակում է Միացյալ Նահանգների և Նյու Յորք նահանգի օրենսդրությամբ կարգավորվող առևտրային փաստաթուղթ, որը կարգավորելու է ԹՋԸ-ի Բաժնետերերի որոշակի իրավունքները և պարտավորությունները, և ԹՋԸ-ի կառավարմանը և ղեկավարմանը առնչվող հարցերը]»:

5. Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3 և 4-րդ կետերով սահմանված է. «3. Կողմերը նախատեսում են, որ Բաժնետերերը նախնական 49-ամյա ժամկետի ավարտից հետո հնարավորություն ունենան փոխադարձ համաձայնությամբ երկարաձգելու 6-րդ հոդվածի 2-րդ կետում նշված իրավունքները ևս 50 տարով: Այդ դեպքում Հայաստանի մասնակցությունը ԹՋԸ-ում պետք է ավելանա մինչև 49%, և ժամկետի երկարաձգումը պետք է հանդիսանա Հայաստանի կողմից ԹՋԸ-ում իր մասնակցության նման ավելացման դիմաց միակ հատուցումը: Հայաստանի համար սեփականության բաժնեմասի ավելացումը պետք է լինի ԹՋԸ ԱՄՆ-ի կողմից ժամկետի երկարաձգման դիմաց միակ հատուցումը:

4. Կողմերի կողմից նախատեսվում է, որ Բաժնետերերը, ըստ անհրաժեշտության, ԹՋԸ-ի կանոնադրությամբ և Բաժնետիրական համաձայնագրով պետք է սահմանեն որոշումների կայացման հատուկ մեխանիզմներ՝ փոխադարձ համաձայնություն պահանջող և Կողմերին վերապահված հարցերի համար, որոնց մանրամասները կսահմանվեն ԹՋԸ-ի կանոնադրությամբ և (կամ) Բաժնետիրական համաձայնագրով»:

6. Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրով ստանձնում է ներքոնշյալ պարտավորությունները.

6.1. Միացյալ Նահանգների հետ համագործակցել ԹՐԻՓՓ-ի իրականացումը հնարավոր դարձնելու ուղղությամբ՝ միջազգային, միջպետական և ներպետական տրանսպորտային փոխկապակցվածության, տարածաշրջանային և համաշխարհային առևտրի ընդլայնման, ինչպես նաև տարածաշրջանում խաղաղության, կայունության և բարգավաճման ամրապնդման նպատակով (հոդված 2, կետ 2),

6.2. Միացյալ Նահանգների հետ համագործակցել ԹՐԻՓՓ-ի ստեղծման ուղղությամբ, և ապահովել, որ երկու Կողմերն ունենան ուղղակի շահագրգռվածություն ԹՐԻՓՓ-ի հաջողության ապահովման գործում (հոդված 3, կետ 1),

6.3. ԹՋԸ-ի կամ դրա հատուկ նշանակության կազմակերպությունների [«Հատուկ նշանակության կազմակերպություն (ՀՆԿ)» նշանակում է ԹՋԸ-ի կողմից հիմնադրվելիք դուստր կազմակերպություն՝ ԹՐԻՓՓ-ի կոնկրետ ուղղության իրականացման նպատակով] կողմից անհրաժեշտ գործարքների կնքմանն աջակցելու նպատակով համաձայնել բացառություններ նախատեսել բաժնետիրական ընկերությունների, գնումների և պետություն-մասնավոր գործընկերության ձևավորման վերաբերյալ Հայաստանի օրենսդրությամբ, ինչպես նաև համաձայնել, որ այդ բացառությունները, ըստ անհրաժեշտության, կնշվեն Բաժնետիրական համաձայնագրում և (կամ) ԹՋԸ-ի կանոնադրության մեջ (հոդված 3, կետ 6),

6.4. ընդունել, որ ԹՋԸ ԱՄՆ-ն մշտապես կհանդիսանա Միացյալ Նահանգների սեփականությունը և կգտնվի նրա վերահսկողության ներքո, և որ որևէ երրորդ կողմ

չի կարող ձեռք բերել ԹՋԸ ԱՄՆ-ի նկատմամբ սեփականության իրավունքներ (հոդված 3, կետ 7),

6.5. ընդունել, որ Համաձայնագրի 3-րդ հոդվածի 4 և 5-րդ կետերին համապատասխան՝ ԹՋԸ-ն յուրաքանչյուր ՀՆԿ-ի ստեղծման և դրանում ունեցած իր բաժնեմասնակցության միջոցով իրեն վերապահելու է որոշակի հարցերի առնչությամբ որոշումների կայացման լիազորությունը, որոնք որոշվելու են ԹՋԸ-ի կողմից (հոդված 4, կետ 2),

6.6. համաձայնել, որ ԹՋԸ-ն լիազորված կլինի ընտրելու ՀՆԿ-ների կողմից ստեղծվող յուրաքանչյուր ԹՐԻՓՓ ծրագրի նախագծին աջակցող երրորդ կողմերի, ներառյալ այն երրորդ կողմերին, որոնք հանդես են գալիս որպես տվյալ ԹՐԻՓՓ նախագծի կոնցեսիոներ, հովանավորներ, օպերատորներ, կապալառուներ, ինչպես նաև ԻՄԾ (ինժեներական, մատակարարման և շինարարական) ծառայություններ մատուցողներ (հոդված 4, կետ 3),

6.7. Համաձայնագրի 4-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխանող և ԹՋԸ-ի կողմից հաստատված ՀՆԿ-ի հետ կնքել կոնցեսիոն կամ այլ համաձայնագրեր՝ համաձայն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 4 և 5-րդ կետերի (հոդված 4, կետ 4),

6.8. նշանակել պատասխանատու բարձրաստիճան կոնտակտային անձի՝ առաջնորդելու Հայաստանի կառավարության ներգրավվածությունը Համաձայնագրի, ԹՋԸ-ի կանոնադրության և Բաժնետերերի համաձայնագրի կատարման ու իրականացման գործընթացներում՝ Հայաստանի պետական մարմինների միջև արդյունավետ համակարգումն ապահովելու նպատակով (հոդված 5, կետ 1),

6.9. Համաձայնագրի նպատակների իրականացման համար ապահովել համապատասխան օրենսդրության ընդունումը, փոփոխությունը, պահպանումն ու կիրարկումը, ինչպես նաև ԹՋԸ-ի և դրա ՀՆԿ-ների համար լիցենզիաների, թույլտվությունների, համաձայնությունների ժամանակին տրամադրումը և կարգավորիչ ընթացակարգերի իրականացումը (հոդված 5, կետ 2),

6.10. հաստատել, որ ՀՀ Սահմանադրությանը համապատասխան՝ Հայաստանի օրենսդրության հետ որևէ հակասության դեպքում կկիրառվի Համաձայնագիրը (հոդված 5, կետ 5),

6.11. ձեռնարկել Հայաստանի օրենսդրությանը համապատասխանող բոլոր անհրաժեշտ միջոցները և հնարավորինս սեղմ ժամկետներում ապահովել, որ ԹՐԻՓՓ-ի իրականացման տարածքների երկայնքով գտնվող հողերը հանդիսանան կամ կարողանան դառնալ Հայաստանի սեփականությունը և ապահովել, որ այդ հողերը զերծ լինեն ցանկացած ծանրաբեռնվածությունից կամ երրորդ անձանց իրավունքներից, ինչպես նաև կրել այդ գործընթացների հետ կապված բոլոր ֆինանսական ծախսերը (հոդված 6, կետ 1),

6.12. ԹՋԸ-ի հիմնադրումից և ԹՐԻՓՓ-ի իրականացման յուրաքանչյուր գոտին որոշելուց հետո ԹՋԸ-ին տրամադրել 49 (քառասունինը) տարի նախնական ժամկետով հողօգտագործման բացառիկ իրավունքներ, կառուցապատման իրավունքներ, հարակից թույլտվություններ և մյուս բոլոր իրավունքները, որոնք համատեղ կորոշվեն Հայաստանի կառավարության և ԹՋԸ-ի կողմից՝ համապատասխան ԹՐԻՓՓ ծրագրի արդյունավետ զարգացման, շահագործման և (կամ) պահպանման համար, ըստ կիրառելիության, և այդ իրավունքները լրիվությամբ փոխանցելի կլինեն ՀՆԿ-ներին (հոդված 6, կետ 2),

6.13. համաձայնել, որ ԹՋԸ-ին թույլատրվում է մշակել կոնցեսիայի մանրամասն պայմանները, որոնք կիրազեկեն կոնցեսիոների ընտրությունը՝ Համաձայնագրի 4-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով (հոդված 6, կետ 3),

6.14. համաձայնել շարունակել մնալ ցանկացած կոնցեսիայի միակ տրամադրողը և, որպես այդպիսին, չհամարել, որ ԹՋԸ-ն ամբողջությամբ կամ մասամբ ստանձնել է Հայաստանի պարտավորությունները, ինչպես նաև չհամարել, որ ԹՋԸ-ն հանդիսանում է կոնցեսիոներ կամ ստանձնել է ՀՆԿ-ների կամ կոնցեսիոներների որևէ պարտավորություն որևէ կոնցեսիայի շրջանակներում (հոդված 6, կետ 4),

6.15. իրականացնել արդյունավետ սահմանային կառավարում և, ՀՀ ներպետական օրենսդրությանը և միջազգային համաձայնագրերին համապատասխան, շարունակել պատասխանատու լինել և տրամադրել համապատասխան ենթակառուցվածքներ անվտանգության և իրավապահ գործունեության, սահմանային վերահսկողության և սահմանային անվտանգության, մաքսային և միգրացիոն վերահսկողության, հարկերի և տուրքերի՝ պետական բյուջե փոխանցման, պետական տեղեկատվական համակարգերի, ինչպես նաև պետական վարչական գործառույթների և վերահսկողության համար (հոդված 8, կետ 1),

6.16. գործադրել ՀՀ լավագույն ջանքերը՝ սահմանային անվտանգության և մաքսային հսկողության ժամանակակից ընթացակարգեր ընդունելու, պահպանելու և դրանք օպտիմալացնելու համար՝ միաժամանակ պահպանելով Հայաստանի ինքնիշխանությունն ու իրավազորությունը, օգտագործելով թվային գործիքներ՝ ԹՋԸ-ի կամ դրա ՀՆԿ-ների և ԹՐԻՓՓ-ի փոխգործակցելիությունը տարածաշրջանային տարանցիկ ցանցերի հետ արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով: Սա կարող է ներառել այնպիսի քայլերի ձեռնարկում, որոնք անհրաժեշտ են ԹՐԻՓՓ նախագծերի մաքսային և միգրացիոն գործառնությունների «ֆրոնտ օֆիս-բեք օֆիս» («ընդունարան»-«գրասենյակ») գործառնական մոդելի ներդրման համար՝ ԹԻՇ-ին և Համատեղ հռչակագրի սկզբունքներին համապատասխան (հոդված 8, կետ 2),

6.17. համաձայնել օգտվել մասնավոր օպերատորների («ֆրոնտ օֆիս») ծառայություններից՝ ԹՐԻՓՓ-ի իրականացման գոտիների համապատասխան

սահմանային անցակետերում հաճախորդների հետ անմիջական շփում պահանջող ծառայություններ մատուցելու համար՝ Հայաստանի և ԹՋԸ-ի փոխադարձ համաձայնությամբ (հոդված 8, կետ 3),

6.18. ԹՋԸ-ի կողմից՝ որպես Հայաստանի ռեզիդենտից ԹՋԸ ԱՄՆ-ին՝ որպես Միացյալ Նահանգների ռեզիդենտի բաշխված շահաբաժինները Հայաստանում ազատել հարկումից՝ պայմանով, որ ԹՋԸ ԱՄՆ-ի վերջնական սեփականատերը Միացյալ Նահանգների կառավարությունն է (հոդված 9, կետ 1),

6.19. համաձայնել, որ ԹՋԸ-ն ՀՆԿ-ների կողմից ԹՋԸ-ին բաշխված շահութաբաժինների մասով Հայաստանում հարկ չի վճարելու, ինչպես նաև համաձայնել, որ ԹՋԸ-ն ԹՋԸ-ի կամ ՀՆԿ-ի բաժնետոմսերի օտարման դեպքում Հայաստանում կապիտալի շահույթի հարկ չվճարի (հոդված 9, կետեր 2 և 3),

6.20. համաձայնել, որ ԹՋԸ-ն և ՀՆԿ-ները Հայաստանում որևէ հարկ չեն վճարելու Համաձայնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված՝ Հայաստանի կառավարության կողմից ԹՋԸ-ին կամ ԹՋԸ-ի կողմից ՀՆԿ-ներին իրավունքների փոխանցման գործարքների համար (հոդված 9, կետ 4),

6.21. ձգտել ամերիկյան Կողմի հետ համաձայնության հասնել Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման վերաբերյալ և բոլոր հնարավոր ջանքերը գործադրել՝ համագործակցության ու խորհրդակցությունների միջոցով դրա իրականացման վրա հնարավոր ազդեցություն ունեցող ցանկացած հարցի փոխադարձաբար ընդունելի լուծմանը հասնելու նպատակով (հոդված 10, կետ 1):

7. Համաձայնագրի 3-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ Կողմերին վերապահված հարցերը վերաբերում են հետևյալին, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ բաժնետերերի մասնակցություն (այդ թվում՝ ԹՋԸ-ի նկատմամբ վերահսկողության փոփոխություն, ԹՋԸ-ի բաժնետոմսերի փոխանցումներ, ՀՆԿ-ների հիմնադրում և դրանց նկատմամբ սեփականություն), որոշակի խոշոր պայմանագրային և ֆինանսական գործարքներ կնքելու մասին որոշումներ, կոնցեսիոն իրավունքների շնորհում և կոնցեսիոն համաձայնագրերի վերջնական պայմանների սահմանում, ինչպես նաև Համատեղ հռչակագրին, ազգային անվտանգությանը վերաբերող և քաղաքական բնույթի այլ հարցեր: ՀՆԿ-ների մակարդակում համանման բնույթի հարցերը նույնպես պետք է դիտարկվեն որպես փոխադարձ համաձայնություն պահանջող Կողմերին վերապահված հարցեր, որոնց մանրամասները կսահմանվեն ԹՋԸ-ի կանոնադրությամբ և (կամ) Բաժնետիրական համաձայնագրով:

8. Համաձայնագրի 6-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված է, որ Համաձայնագրի ոչ մի դրույթ չի խոչընդոտում Հայաստանի ինքնիշխան տարածքում

որևէ անձի կողմից այնպիսի ենթակառուցվածքի կառուցմանը և շահագործմանը, որը ԹՐԻՓՓ նախագիծ չէ:

9. Համաձայնագրի 7-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանը պահպանում է իր լիազորությունները Հայաստանի ինքնիշխան տարածքում, և Հայաստանի իշխանությունները գործելու նախապատվություն ունեն ԹՐԻՓՓ-ի իրականացման գոտիներում արտակարգ բոլոր իրավիճակների առաջացման դեպքում, ինչպես նաև Հայաստանը պետք է ունենա ԹՐԻՓՓ-ի իրականացման տարածքների ենթակառուցվածքային անվտանգության պլանները հաստատելու իրավունք, իսկ այդ պլաններում մասնավոր անվտանգության անձնակազմի ներգրավման դեպքում այդ անձնակազմը ենթակա կլինի հայաստանյան արտոնագրման պահանջներին:

10. Համաձայնագրի 8-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ Հայաստանը պահպանում է լիակատար ինքնիշխանություն և իրավազորություն իր սահմանների և մաքսային գործառնությունների նկատմամբ, և ունի իր սահմանային հսկողության բոլոր կետերում ֆիզիկական ներկայություն պահպանելու իրավունք:

11. Համաձայնագրի 8-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ Կողմերը մտադիր են միասին գործել՝ ապահովելու, որ ԹՐԻՓՓ-ի իրականացման տարածքներում սահմանային անվտանգությանն առնչվող բոլոր գործընթացներն ու ընթացակարգերն իրականացվեն ԹՐԻՓՓ-ի բարեհաջող իրագործմանը նպաստող եղանակով՝ Հայաստանի օրենսդրությամբ թույլատրելի շրջանակներում:

12. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ ինքնիշխան պետության հայեցակարգին, 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2026 թվականի հունիսի 1-ին Վաշինգտոնում և 2026 թվականի հունիսի 4-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» նախագծի (ԹՐԻՓՓ) վերաբերյալ ռազմավարական համագործակցության մասին շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

15 սեպտեմբերի 2026 թվականի
ՍԴՈ – 1840

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Երևան 15 սեպտեմբերի 2026 թվականի

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող, զեկուցող),
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,
Վլադիմիր Վարդանյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Կառավարության,

ներկայացուցիչ՝ Աշխատանքի և բարեկեցության նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

Կառավարության՝ 2026 թվականի հուլիսի 9-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումի հիման վրա դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի բնակարանային ապահովման և հիփոթեքային շուկայի զարգացման ծրագիր» ֆինանսական համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2026 թվականի հուլիսի 9-ի N 1003-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի բնակարանային ապահովման և հիփոթեքային շուկայի զարգացման ծրագիր» ֆինանսական համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի բնակարանային ապահովման և հիփոթեքային շուկայի զարգացման ծրագիր» ֆինանսական համաձայնագիրը (այսուհետ՝ նաև Համաձայնագիր) ստորագրվել է 2026 թվականի ապրիլի 29-ին և ապրիլի 30-ին՝ փախստականների համար բնակարանային հասանելիության և հիփոթեքային շուկայի զարգացմանն առնչվող մի շարք խնդիրներ լուծելու նպատակով:

2. Համաձայնագրով Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ կամ ՎԶՄԲ) համաձայնել է Համաձայնագրի 1-ին առդիրում նկարագրված ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորմանն աջակցելու նպատակով Հայաստանի Հանրապետությանը տրամադրել երկու հարյուր քառասուն միլիոն ԱՄՆ դոլար ($ 240,000,000) գումարով վարկ (ֆինանսավորման ոչ արտոնյալ մասը), որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով (Վարկ): Ինչպես նաև Բանկը համաձայնել է Համաձայնագրի շրջանակում որպես համալիր վարկային գործառնության մաս Հայաստանի Հանրապետությանը տրամադրել լրացուցիչ միջոցներ՝ քսանչորս միլիոն չորս հարյուր հազար ԱՄՆ դոլար ($ 24,400,000), որը կազմում է ֆինանսավորման արտոնյալ մասը:

Հայաստանի Հանրապետությանը տրամադրվելու է նաև տասը միլիոն ԱՄՆ դոլար ($ 10,000,000) գումար որպես դրամաշնորհ՝ Ծրագրի շրջանակում գործողությունների ֆինանսավորմանն աջակցելու համար:

Բանկը, ի թիվս այլնի, համաձայնել է Ազգային հիփոթեքային ընկերությանը (ԱՀԸ) տրամադրել տասը միլիոն ԱՄՆ դոլար ($ 10,000,000) գումարի վարկ[23]՝ Ծրագրի II մասի իրականացման համար, Վարկային համաձայնագրում սահմանված պայմաններով (ինչպես սահմանված է Համաձայնագրում) և Հայաստանի Հանրապետության երաշխիքով՝ Երաշխիքային համաձայնագրով սահմանված կարգով (ինչպես սահմանված է Ընդհանուր պայմաններում):

Վարկի Փակման ամսաթիվը 2030 թվականի դեկտեմբերի 31-ն է, իսկ մասհանումների վերջնաժամկետը սահմանվում է Փակման ամսաթվից հետո չորս ամիսը:

3. Համաձայնագիրն ունի դրա անբաժանելի մասը կազմող հինգ առդիր և մեկ հավելված՝ **ԱՌԴԻՐ 1.** «Ծրագրի նկարագրություն», **ԱՌԴԻՐ 2**. «Ծրագրի կատարում», **ԱՌԴԻՐ 3.** «Պարտավորության հետ կապված ամորտիզացիոն մարման ժամանակացույց» և **ԱՌԴԻՐ 4.** «Կատարողականի վրա հիմնված պայմաններ», **ԱՌԴԻՐ 5.** «Բացառված գործողությունների ցանկ» **և ՀԱՎԵԼՎԱԾ:**

Ծրագրի նպատակն է բարելավել փախստականների համար բնակարանային ապահովման լուծումների հասանելիությունը և նպաստել հիփոթեքային շուկայի ընդլայնմանը:

Ծրագիրը կազմված է երեք մասերից. **<u>Մաս I.</u>** «Բնակարանային սուբսիդիաներ և աջակցություն ինստիտուցիոնալ զարգացմանը», **<u>Մաս II.</u>** «Բնակարանային ֆինանսավորման շուկայի զարգացում», **<u>Մաս III.</u>** «Ծրագրի կառավարում, հաղորդակցություն, մոնիթորինգ և գնահատում»:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

4.1. Բանկին վճարել սկզբնավճար՝ ֆինանսավորման ոչ արտոնյալ մասի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդի (0.25%) չափով (հոդված II, բաժին 2.03),

4.2. Բանկին վճարել ֆինանսավորման ոչ արտոնյալ մասի չառհանված գումարի տարեկան մեկ տոկոսի մեկ քառորդի (0.25%) չափով պարտավորության վճար, (հոդված II, բաժին 2.04),

4.3. Բանկին վճարել տոկոսադրույք, որը ֆինանսավորման ոչ արտոնյալ մասի առհանված գումարի Բազային տոկոսադրույքաչափի և Փոփոխական սպրեդի հան-

[23] ԱՀԸ-ի հետ վարկային Համաձայանագիրը և Երաշխիքային համաձայնագիրը ներկայացված են դիմումին կից:

րագումարն է, կամ այնպիսի դրույքաչափ, որը կարող է կիրառվել Փոխարկումից հետո՝ Ընդհանուր պայմանների 3.02(ե) բաժնի համաձայն (հոդված II, բաժին 2.05),

4.4. յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ին և օգոստոսի 1-ին՝ սկսած 2036 թվականի փետրվարի 1-ից մինչև 2054 թվականի փետրվարի 1-ը, մարել Ֆինանսավորման ոչ արտոնյալ մասի մայր գումարը 2.63% մասնավճարով, իսկ 2054 թվականի օգոստոսի 1-ին՝ 2.69% մասնավճարով (հոդված II, բաժիններ 2.06, 2.07 և առդիր 3),

4.5. հայտարարել Ծրագրի նպատակին Հայաստանի Հանրապետության հանձնառության մասին և այդ նպատակով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) միջոցով իրականացնել Ծրագրի I և III մասերը՝ Ընդհանուր պայմանների V հոդվածի դրույթների և Համաձայնագրի 2-րդ առդիրի համաձայն (հոդված III, բաժին 3.01),

4.6. Ծրագրի իրականացման ընդհանուր պատասխանատվությունը վերապահել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (ԱՍՀՆ)-ին՝ Ծրագրի ընդհանուր վերահսկողության և համակարգման, և Ծրագրի I և III մասերի ընդհանուր իրականացման, մոնիթորինգի և գնահատման պատասխանատվությամբ (առդիր 2, բաժին I, մաս Ա, կետ 1),

4.7. չհակասելով վերոնշյալ Համաձայնագրի 2-րդ առդիրի I բաժնի Ա մասի 1-ին կետի դրույթներին՝ ԱՍՀՆ-ի միջոցով Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ ուշ, քան իննսուն (90) օրվա ընթացքում ստեղծել Ղեկավար կոմիտե, որն իր գործունեությունը կշարունակի Ծրագրի իրականացման ողջ ընթացքում Բանկի հետ համաձայնեցված լիազորությունների շրջանակով՝ Բանկին բավարարող կազմով, լիազորություններով և ռեսուրսներով, որի կազմում կլինեն Հայաստանի Հանրապետության բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի (ԲԱԾ) իրականացման գործընթացում և բնակարանային ապահովման ոլորտներում ներգրավված նախարարությունների և գերատեսչությունների և ԱՀԸ-ի ներկայացուցիչներ, և որը պատասխանատու կլինի միջգերատեսչական բարձր մակարդակի համակարգման և ռազմավարական իրականացման ընդհանուր դիտարկման գործառույթների համար, որոնք բոլորը հանգամանորեն նկարագրվում են Ծրագրի գործառնական ձեռնարկում (ԾԳՁ) (առդիր 2, բաժին I, մաս Ա, կետ 2, ենթակետ ա),

4.8. չհակասելով Համաձայնագրի 2-րդ առդիրի I բաժնի Ա մասի 1-ին կետի դրույթներին՝ ԱՍՀՆ-ի միջոցով ստեղծել և այնուհետև Ծրագրի իրականացման ողջ ընթացքում պահպանել Ծրագրի իրականացման թիմ (ԾԻԹ), որը պատասխանատու կլինի Ծրագրի իրականացման և մոնիթորինգի համար՝ Բանկին բավարարող կազմով, գործառույթներով, կադրային ապահովմամբ, նյութական միջոցներով և այլ ռեսուրսներով, որոնք հանգամանորեն նկարագրված են ԾԳՁ-ում (առդիր 2, բաժին I, մաս Ա, կետ 2, ենթակետ բ),

4.9. Ծրագրի պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով՝ Բանկի համար ընդունելի պայմաններով և ԾԳՁ-ով սահմանված առավել մանրամասն կարգով ԱՀԸ-ի հետ համաձայնեցնել գործունեությունը Հայաստանի Հանրապետության և ԱՀԸ-ի միջև Ծրագրի, այդ թվում՝ իրենց համապատասխան Մասերի իրականացման շուրջ համակարգման, հաշվետվությունների ներկայացման և համագործակցության մեխանիզմների ու ընթացակարգերի առնչությամբ, ներառյալ՝ ըստ անհրաժեշտության, ընտրված մասնակից ֆինանսական հաստատությունների (ՄՖՀ-ներ) և ԲԱԾ-ի համապատասխան Շահառուների համար բնապահպանական և սոցիալական պահանջներին համապատասխանություն, ինչպես սահմանված է համապատասխանաբար Ֆինանսական համաձայնագրի և Վարկային համաձայնագրի բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլաններից (ԲՍՀՊ) յուրաքանչյուրով, այդ թվում՝ ՄՖՀ-ների, իսկ կիրառելիության դեպքում նաև Ընդունելի հիփոթեքային վարկերի ստուգումը, վերահսկողությունը և մոնիթորինգը, ինչպես նաև հակակոռուպցիոն ուղեցույցի պահպանումը (առդիր 2, բաժին I, մաս Ա, կետ 3),

4.10. ԱՍՀՆ-ի միջոցով պատրաստել և ընդունել Ծրագրի գործառնական ձեռնարկ (ԾԳՁ)՝ Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ, որը բաղկացած է Ծրագրի I և III մասերի իրականացման և ինստիտուցիոնալ մանրամասն մեխանիզմներից, որը ներառում է Համաձայնագրի 2-րդ առդիրի I բաժնի Բ մասի 1-ին կետով նախատեսված ընթացակարգերը, և Ծրագիրն իրականացնել ԾԳՁ-ի համաձայն (առդիր 2, բաժին I, մաս Բ, կետեր 1 և 2),

4.11. առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության՝ չփոխանցել, չփոփոխել, չեղյալ չհայտարարել ԾԳՁ-ն կամ չհրաժարվել դա կիրառելուց կամ չթույլատրել փոխանցել, փոփոխել, չեղյալ հայտարարել ԾԳՁ-ն կամ հրաժարվել դա կիրառելուց կամ դրա որևէ դրույթից (առդիր 2, բաժին I, մաս Բ, կետ 3),

4.12. Ծրագրի 1.1-ին մասի նպատակներն ապահովելու համար Հայաստանի Հանրապետության սոցիալական աջակցության ծրագրի (ՍԱԾ) Շահառուներին և ԲԱԾ Շահառուներին համապատասխանաբար Դրամական փոխանցումներ և Հիփոթեքային սուբսիդիաներ տրամադրել ընտրված ՄՖՀ-ներին ուղղակի վճարման միջոցով՝ Բանկի համար ընդունելի և ԾԳՁ-ում մանրամասն ներկայացված համապատասխանելիության չափորոշիչների և ընթացակարգերի համաձայն (առդիր 2, բաժին I, մաս Գ, կետ 1),

4.13. ապահովել, որ յուրաքանչյուր Դրամական փոխանցում լինի Բանկի համար ընդունելի գումարով, և ՍԱԾ մեկ Շահառուի հաշվով դրամական փոխանցման դեպքում՝ հարյուր քսանհինգ ($125) ԱՄՆ դոլարը չգերազանցող գումարով (առդիր 2, բաժին I, մաս Գ, կետ 3),

4.14. ապահովել, որ յուրաքանչյուր Դրամական փոխանցման գումար վճարվի դրա նախատեսված՝ ՍԱԾ համապատասխանելի Շահառուին (առդիր 2, բաժին I, մաս Գ, կետ 4),

4.15. ապահովել, որ Դրամական փոխանցումները տրամադրվեն և օգտագործվեն Համաձայնագրի դրույթների և Հակակոռուպցիոն ուղեցույցների դրույթների համաձայն՝ նախատեսված նպատակների համար (առդիր 2, բաժին I, մաս Գ, կետ 5),

4.16. Ծրագրի 1.2-րդ մասի նպատակներն ապահովելու համար ԲԱԾ Շահառուներին Հիփոթեքային սուբսիդիաներ տրամադրել ընտրված ՄՖՀ-ներին ուղղակի վճարում կատարելու միջոցով՝ Բանկի համար ընդունելի և ԾԳՁ-ում մանրամասն ներկայացված համապատասխանելիության չափորոշիչների և ընթացակարգերի համաձայն (առդիր 2, բաժին I, մաս Դ, կետ 1, ենթակետ ա),

4.17. ապահովել, որ յուրաքանչյուր Հիփոթեքային սուբսիդիայի գումար վճարվի նախատեսված ընդունելի ՄՖՀ-ին՝ դրա նախատեսված համապատասխանելի ԲԱԾ Շահառուի անունից (առդիր 2, բաժին I, մաս Դ, կետ 1, ենթակետ դ),

4.18. ապահովել, որ Հիփոթեքային սուբսիդիաները տրամադրվեն և օգտագործվեն Համաձայնագրի դրույթների և Հակակոռուպցիոն ուղեցույցների դրույթների համաձայն՝ նախատեսված նպատակների համար (առդիր 2, բաժին I, մաս Դ, կետ 1, ենթակետ ե),

4.19. յուրաքանչյուր ՄՖՀ-ի հետ ԲԱԾ Մասնակցության համաձայնագիր կնքել ԾԳՁ-ում սահմանված պայմաններով և Բանկի համար ընդունելի համապատասխանելիության չափորոշիչների և ընթացակարգերի համաձայն և իրականացնել յուրաքանչյուր ՄՖՀ-ի կողմից ԲԱԾ Մասնակցության յուրաքանչյուր համաձայնագրի պայմանների կատարման մոնիթորինգ (առդիր 2, բաժին I, մաս Դ, կետ 2, ենթակետ ա),

4.20. ԲԱԾ Մասնակցության յուրաքանչյուր համաձայնագրի շրջանակում Հայաստանի Հանրապետության իրավունքներն իրականացնել այնպես, որ պաշտպանվեն Հայաստանի Հանրապետության և Բանկի շահերը և իրագործվեն Ֆինանսավորման նպատակները (առդիր 2, բաժին I, մաս Դ, կետ 2, ենթակետ բ),

4.21. ապահովել, որ ԲԱԾ Մասնակցության յուրաքանչյուր համաձայնագիր կնքվի Բանկի հաստատած պայմաններով, որոնք կներառեն Համաձայնագրի 2-րդ առդիրի I բաժնի Դ մասի 2-րդ կետի գ ենթակետում սահմանված պայմանները (առդիր 2, բաժին I, մաս Դ, կետ 2, ենթակետ գ), բացառությամբ այն դեպքի, երբ Բանկն այլ համաձայնության է գալիս, չփոխանցել, չփոփոխել, չեղյալ չհամարել կամ չհրաժարվել ԲԱԾ Մասնակցության որևէ համաձայնագրից կամ դրա որևէ դրույթից (առդիր 2, բաժին I, մաս Դ, կետ 2, ենթակետ ե),

4.22. Ծրագրի 1.2-րդ մասի պատշաճ իրականացումն ապահովելու համար՝ երաշխավորել, որ ՄՖՀ-ի և ԲԱԾ Շահառուի միջև ցանկացած ընդունելի հիփոթե-

քային վարկ կնքվի ԾԳՁ-ում սահմանված պայմաններով և համապատասխանելիության չափորոշիչներով և ընթացակարգերով, որոնք ընդունելի են Բանկի համար, իսկ ՄՖՀ-ն իրականացնի Ընդունելի հիփոթեքային յուրաքանչյուր վարկի պայմաններին ԲԱԾ յուրաքանչյուր Շահառուի համապատասխանության մոնիթորինգ, և յուրաքանչյուր Ընդունելի Հիփոթեքային վարկով սահմանված իր իրավունքներն իրականացնի այնպես, որ պաշտպանի Հայաստանի Հանրապետության և Բանկի շահերը և իրագործի Ֆինանսավորման նպատակները (առդիր 2, բաժին I, մաս Ե, կետ 1),

4.23. ապահովել, որ ՄՖՀ-ն կատարի Համաձայնագրի 2-րդ առդիրի I բաժնի Ե մասի, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված իր պարտավորությունները (առդիր 2, բաժին I, մաս Ե, կետեր 2 և 3),

4.24. ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ ուշ, քան ինը (9) ամսվա ընթացքում վարձել, այնուհետև Ծրագրի իրականացման ամբողջ ժամկետում պահել Բանկին բավարարող փորձ, որակավորում և լիազորությունների շրջանակ ունեցող՝ ստուգումներ իրականացնող գործակալ (Ստուգումներ իրականացնող գործակալ)՝ տվյալների և մեկ կամ ավելի ԿՀՊ-ների կատարումը հիմնավորող այլ ապացույցներ ստուգելու և դրանց մասով համապատասխան առհանումներ առաջարկելու համար՝ ըստ կիրառելիության, և ապահովել, որ Ստուգումներ իրականացնող գործակալը՝ ստուգման գործընթացը (գործընթացները) իրականացնի Ստուգումների իրականացման գործելակարգի համաձայն, և Հայաստանի Հանրապետությանը և Բանկին ներկայացնի ստուգման համապատասխան հաշվետվությունները՝ սահմանված ժամկետում և Բանկին բավարարող ձևով ու բովանդակությամբ (առդիր 2, բաժին I, մաս Զ),

4.25. ապահովել, որ Ծրագիրն իրականացվի Բնապահպանական և սոցիալական ստանդարտների համաձայն՝ Բանկի համար ընդունելի ձևով (առդիր 2, բաժին I, մաս Է, կետ 1),

4.26. չսահմանափակելով Համաձայնագրի 2-րդ առդիրի I բաժնի Է մասի 1-ին կետը՝ ապահովել, որ Ծրագիրն իրականացվի ԲՍՀՊ-ի համաձայն՝ Բանկի համար ընդունելի ձևով, և այդ նպատակով ապահովել, որ իրականացվեն Համաձայնագրի 2-րդ առդիրի I բաժնի Է մասի 2-րդ կետով սահմանված գործողությունները (առդիր 2, բաժին I, մաս Է, կետ 2),

4.27. ապահովել, որ ձեռնարկվեն Համաձայնագրի 2-րդ առդիրի I բաժնի Է մասի 4-րդ կետում սահմանված բոլոր միջոցառումները (առդիր 2, բաժին I, մաս Է, կետ 4),

4.28. սահմանել, հանրայնացնել, վարել և գործարկել բողոքների լուծման հասանելի մեխանիզմ՝ Ծրագրի հետևանքով տուժած անձանց մտահոգությունները և բողոքներն ստանալու և դրանց կարգավորումը դյուրացնելու և անհրաժեշտ ու համապատասխան բոլոր միջոցները ձեռնարկելու համար՝ այդ մտահոգություններին

և բողոքներին լուծում տալու կամ լուծումը դյուրին դարձնելու համար՝ Բանկի համար ընդունելի ձևով (առդիր 2, բաժին I, մաս Է, կետ 5),

4.29. ապահովել, որ Ծրագրի շրջանակում բոլոր մրցութային փաստաթղթերը և շինարարական կապալի պայմանագրերը ներառեն կապալառուների, ենթակապալառուների և տեխնիկական հսկողություն իրականացնող սուբյեկտների պարտավորությունները՝ ԲՍՀՊ-ի և դրանում նշված բնապահպանական և սոցիալական գործիքների համապատասխան ասպեկտներին համապատասխանեցնելու մասով, և ընդունելու և գործողության մեջ դնելու վարքագծի կանոններ, որը պետք է տրամադրվի բոլոր աշխատողներին և ստորագրվեն նրանց կողմից՝ մանրամասնելով բնապահպանական, սոցիալական, առողջապահական և անվտանգության ռիսկերը, ինչպես նաև սեռական շահագործման և չարաշահման, երեխաների դեմ սեռական ոտնձգության և բռնության ռիսկերը, որոնք կիրառելի են նշված պայմանագրերի համապատասխան պատվիրված կամ կատարված շինարարական աշխատանքների նկատմամբ (առդիր 2, բաժին I, մաս Է, կետ 6),

4.30. Բանկին ներկայացնել Ծրագրի յուրաքանչյուր հաշվետվություն յուրաքանչյուր [օրացուցային կիսամյակի] ավարտից ոչ ուշ, քան քառասունհինգ (45) օր հետո՝ ներառելով [օրացուցային կիսամյակը] (առդիր 2, բաժին II, կետ 1),

4.31. Համաձայնագրի 1-ին առդիրում նկարագրված գործողություններին առնչվող ցանկացած տեղեկություն, հաշվետվություն կամ փաստաթուղթ տրամադրելիս ապահովել, որ այդ տեղեկությունները, հաշվետվությունը կամ փաստաթուղթը չներառեն Անձնական տվյալներ, բացառությամբ՝ Համաձայնագրով այլ բան հստակ պահանջվելու կամ թույլատրվելու կամ Բանկի կողմից հստակ պահանջվելու դեպքի (առդիր 2, բաժին II, կետ 2),

4.32. չհակասելով Համաձայնագրի 2-րդ առդիրի III բաժնի Ա մասի դրույթներին՝ չկատարել առհանում նախքան Ստորագրության ամսաթիվը կատարված վճարումների համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հիսուներկու միլիոն ութ հարյուր ութսուն հազար ԱՄՆ դոլարը ($ 52,880,000) չգերազանցող ընդհանուր գումարի չափով առհանումները կարող են կատարվել մինչև այդ ամսաթիվը, սակայն 2025 թվականի հունվարի 15-ից ոչ ուշ կատարված վճարումների համար՝ 1-ին կատեգորիայով սահմանված Ընդունելի ծախսերի մասով՝ գումարների վճարման մասին Բանկին բավարարող ստուգման հաշվետվություն ներկայացնելուց հետո, կամ Ֆինանսավորման հաշվից, եթե միայն յուրաքանչյուր առհանում չի կատարվում հավասարաչափ հիմունքով (pari passu) և հատկացված Ֆինանսավորման ոչ արտոնյալ մասի և հատկացված Ֆինանսավորման արտոնյալ մասի գումարների 90.8%-9.2% հարաբերակցությամբ, ինչպես նաև առհանում չկատարել 2-րդ կատեգորիայով սահմանված վճարումների համար, որոնց առհանման հայտ է ներկայացվել, եթե միայն Հայաստանի Հանրապետությունը ԲԱԾ-ի Մասնակցության գործող

որևէ համաձայնագիր չի փոփոխել Հակակոռուպցիոն ուղեցույցները ներառելու և Համաձայնագրի 2-րդ առդիրի Դ բաժնի պահանջին համապատասխանություն ապահովելու համար (առդիր 2, բաժին III, մաս Բ, կետ 1, ենթակետեր ա, բ, գ),

4.33. չհակասելով Համաձայնագրի 2-րդ առդիրի III բաժնի Ա մասի դրույթներին՝ առհանում չկատարել 4-րդ կատեգորիայով սահմանված վճարումների համար, որոնց մասով առհանման հայտ է ներկայացվել, եթե միայն Հայաստանի Հանրապետությունը չի ներկայացրել Բանկին բավարարող ապացույց առ այն, որ յուրաքանչյուր ԿՀՊ-ի մասով ընդունելի ծախսերը Հայաստանի Հանրապետության կողմից համապատասխանելի շահառուներին կատարվել են Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենքների և կարգավորումների և դրանցում սահմանված ընթացակարգերի համաձայն, և Հայաստանի Հանրապետությունը Բանկ է ներկայացրել իր ձևով և բովանդակությամբ Բանկի համար ընդունելի ապացույց՝ պահպանելով Ստուգումների իրականացման գործելակարգերում սահմանված պահանջները, հաստատելով Համաձայնագրի 4-րդ առդիրում սահմանված համապատասխան ԿՀՊ-ի կատարումը, ինչպես նաև առհանում չկատարել 2-րդ կատեգորիայով սահմանված վճարումների համար, եթե միայն Հայաստանի Հանրապետությունը ԲՍՀՊ-ի դրույթների համաձայն բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգ (ԲՍԿՀ) չի ստեղծել (առդիր 2, բաժին III, մաս Բ, կետ 1, ենթակետեր դ, ե),

4.34. մինչև մասհանման վերջնաժամկետը Հայաստանի Հանրապետության կողմից Բանկին բավարար ապացույց չներկայացնելու դեպքում՝ առ այն, որ 4-րդ կատեգորիայի հետ կապված ԿՀՊ-ները կատարվել են, Բանկից ծանուցվելուց անմիջապես հետո Բանկին վերադարձնել այդ 4-րդ կատեգորիայի հետ կապված Ֆինանսավորման առհանված մնացորդը (առդիր 2, բաժին III, մաս Բ, կետ 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի բնակարանային ապահովման և հիփոթեքային շուկայի զարգացման ծրագիր» ֆինանսական համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

15 սեպտեմբերի 2026 թվականի
ՍԴՈ-1841

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◊ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◊ 3(124) 2026

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ



ՍԴ ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՄԻԵԴ-Ի՝ ԲԱՐՁՐ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՑԱՆՑԻ ԽՈՐՀՐԴԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախագահի հրավերով 2026 թվականի հունիսի 4-5-ը Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական Նաիրա Հովհաննիսյանը՝ որպես ՍԴ կողմից ՄԻԵԴ Բարձր դատարանների ցանցի համակարգող, Ստրասբուրգում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, մասնակցել է Բարձր դատարանների ցանցի տարեկան համաժողովին:

«Բիզնես և մարդու իրավունքներ» խորագիրը կրող համաժողովի ընթացքում քննարկվել են ազգային դատարանների դերակատարությունը բիզնես շահերի և մարդու իրավունքների պաշտպանության հավասարակշռության ապահովման գործում, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության արդի մարտահրավերները, շրջակա միջավայրի պաշտպանության և կորպորատիվ պատասխանատվության հիմնահարցերը:

Համաժողովին հաջորդել են «Թվայնացում. արհեստական բանականության գործիքներ, տեղեկատվական տեխնոլոգիաների լուծումներ՝ փաստաթղթերի կառավարման և գործերի մշակման համար» թեմայով աշխատանքային քննարկումները: ՍԴ նախագահի խորհրդական Նաիրա Հովհաննիսյանը ներկայացրել է ՀՀ Սահմանադրական դատարանի փորձը նշված ուղղություններով՝ անդրադառնալով դատարանում կիրառվող թվային գործիքներին և փաստաթղթերի կառավարման ու գործերի մշակման ոլորտում ներդրված լուծումներին:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ, Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Հ. ՆԱՋԱՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81 (189)
E-mail: armlaw@concourt.am
https://www.concourt.am

Вестник Конституционного Суда Республики Армения N 3(124)2026
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 3(124)2026
Bulletin de l a Cour constitutionnelle de la République d'Arménie N 3(124)2026

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am
www.concourt.am